Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

էլ. փոստ՝ ***info@armin.am***

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ԵՐԿԵՐ

Երևան
«Սովետական գրող»
1987

ԳՄԴ 84.21
Ի 755

Կազմեց և վերջաբանը գրեց՝
ԱՎԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆԸ

Իսահակյան Ավ.
Ի 755 Երկեր /կազմ. և վերջ. գրեց Ավիկ Իսահակյանը.— Եր.: Սովետ. գրող, 1987, 888 էջ։

Գրքում տեղ են գտել Ավետիք Իսահակյանի բանաստեղծությունները, լեգենդները, պոեմները, արձակ բանաստեղծությունները, գեղարվեստական արձակը, հատվածներ հիշատակարանից, բանաստեղծի նամակները և հուշերը։

ԳՄԴ 84.21

Ի $\frac{4702080206\ (11)}{70Ե\ (01)\ 87}$ 5.88

© «Սովետական գրող» հրատարակչություն, կազմելու, վերջաբանի և ձևավորման համար, 1987

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ցաված սիրտքս երգեր հյուսեց,
Երգեց անուշ ու տխուր,
Վիշտքս հալվեց, արցունք հոսեց,
Վճիտ, ինչպես ջինջ աղբյուր։

Հավքերի պես երգերս թռան,
Հովերի հետ գնացին,
Արցունքներքս ցողեր դառան,
Վարդի ծոցում շողացին։

Անցան օրեր — եկավ մահը,
Սառ հողի տակ քուն մտա.
Իմ արցունքով շաղաղ վարդը
Չվաք ձգեց իմ վրա։

Հովերն եկան, շիրմիս վրա
Տխուր երգեր երգեցին,—
Ա՜խ, իմ անուշ, իմ վաղուցվա
Հյուսած երգերս երգեցին...

1891,
Ալեքսանդրապոլ

Ամեն գիշեր իմ պարտեզում
Լալկան ուռին, հեզ ուռին
Վշտաառաջեր լաց է լինում,
Լաց է լինում իմ ուռին։

Եվ սրբում է առավոտու
Կույս արևը նազելի
Հուր ծամերով հեզ ուռենու
Արցունքները բյուրեղի...

1891,
Ալեքսանդրապոլ

Արևն իջավ սարի գրիվուն,
Դար ու դաշտում լույս չկա,
Հալք ու թրոչուն մրտան խոր քուն,—
Ա՜խ, ինձ համար քուն չկա։

Լուսնյակն ընկավ երթկից ներս,
Կըշևարն նլավ երկընքում,
Զով հովերն էլ մրթընշողես
Աստղերի հետ են գրրցում։

Սիրո՛ւն աստղե՛ր, անուշ հովե՛ր,
Ցարբս ո՞ւր է՝ էս գիշեր.
Գարդ երկընքի նրմշուն աչե՛ր,
Ցարիս տեսա՞ք էս գիշեր։

Լուսը բացվավ, դուռը բացվավ,
Ամպ ու գամպ է,— Բոն կուգա.
Ալ ձին եկավ, անուշը եկավ,
Ա՜խ, յարս ո՞ւր է, ատուն չի գա...

1891 դեկտեմբերի 4,
Էջմիածին

Անհուն հթերրց, ատաղձ՝ կ լուսափայլ,
Ցոր դու տեսնում ես մեր ոչնչություն,
Երկրային կյանքի խավարն ու մրռալլ,
Անմեղ զոհերի հառաչն ու արյուն,—

Նրսեմանում է հայացքրդ փայլուն,
Ճնշում է և քեզ թախիծ գառնագին,
Դու աղոթում ես և լուռ արտասվում.
— Օ՜, նախանձում եմ ես քո արցունրին։

1891 դեկտեմբերի 4,
Էջմիածին

Թե՛ դեպի կյանքը, թե՛ դեպի մարդի՛կ
Շողավոր, պայծառ հավատով զինված
Ես ողջունեցի... և վեհ, գեղեցիկ
Զգացմունքներով սիրտս դղրդաց։

Ես ծունկ չոքեցի ալեկոծ կյանքի
Սեղանի առաջ անվեհեր հոգով
Ոտք դրի ուղին նոր մարդարեի,
Եվ ազատության, վեհության երգով։

Եվ ես գնում եմ նոր, հեռո՜ւ ափեր։
Եվ այս կենդիոներն — ճակատիս պսակ,
Անխոս վկա են, որ վիշտ, տանջանքներ
Ես ճաշակել եմ, որպես հաղթանակ...

1891 դեկտեմբերի 22,
Էջմիածին

Ա՜խ, ուռենի, վշտիս ընկե՛ր,
Գթոտ երկրի հառաչանք.
Ցփոր վերաս դողդոջ ստվեր
Անհույս սրտիս սփոփանք։

Անամպ երկի՛նք, սիրուն գիշե՛ր,
Լուսնի շողե՛ր ու աստղե՛ր.
Ես տխուր եմ, սփոփեցեք
Մոայլ սիրտս վշտաբեկ։

1892,
Էջմիածին

Գիշերները՝ աստղ ու լուսին
Վար կիջնեին երկնքէն,
Ու հեքիաթներ ինձ կասեին
Կախարդական, ոսկեղեն։

Գառների հետ լուսածագին
Նկար սարը, ջա՛ն աղջիկ,
Ինձ քաշեցիր, դրիր անպին
Կրծքիդ վրա գեղեցիկ։

Այնտեղ շքեղ՝ ես ապրեցա
Երազներով երշանիկ.
Սերքդ դավեց ինձ, սևաչյա՛,—
Ես չոքացա, ա՜խ, աղջիկ...

1892 մարտի 9,
Էջմիածին

Հոգի կաւաամ, հոգի տո՛ւր ինձ,
Իմ նազելի աշագեղ։
Սիրտս — սև արտ, սերդ — ալ վարդ,
Թո՛ղ բողբոջի նա այնտեղ.
Սիրտը — գիշեր, սերդ — վառ աստղ,
Թո՛ղ շողշողա նա այնտեղ...

1892 հունվարի 14,
Իգդիր

Բալես ունի հնդու-մաթա,
Ոսկի օրոցք, ատլաս ծածկոցք.
Պուպո՛ւշ դարդար, նրխշուն բալա,
Պաճիկ կենես... օր-որ, լա, լա,
Նանիկ կենես, նանի՛, դա՛ր-դա՛ր.
Աչքդ ու ունքդ — աստղ ու կամար։

Ցորեկ եղավ, ոչխարն եկավ,
Աղիդ բալես քընած մընաց.
Վեր ել, բալա, անուշ ճըղա,
Տիտիկ արա, ծիծիկ մամա՛,
Պիծիկ-միծիկ տուտիկ արա՛.
Հո՛պպա, բալիկ, քունդ անուշ.
Շաքար ու նո՛ւշ, թուշդ անուշ։

1892 մարտի 12,
Ալեքսանդրապոլ

Սաղիկ էի նորաբողբոջ,
Սարի լանջում, երկնի տակ.
Ինձ կըդյութեր առվի խոխոջ,
Ինձ կողջուներ արեգակ։

Օխտը սարով հեռո՞ւ քեզնից,
Քու շքվաքով ապրում եմ, յա՛ր.
Օխտը տարով բաժան քեզնից,
Քու կարոտով էրվում եմ, յա՛ր.
Դարդիս դարման, յարիս մահլամ,
Կյանք ու տրեն յարըս ո՞ւր է։

Գիշեր-ցերեկ գրկված քընից՝
Ծով է կըարում աչքըս ճամփին,
Բալի ղարիբ մի ճամփորդից
Կարոտ յարիս խաբարն առնիմ.
Դարդիս դարման, յարիս մահլամ,
Թագ ու պսակ յարըս ո՞ւր է։

Օխտը տարի ծում ու պասով,
Օր ու արև սևցուցի, յար.
Բալի Մըշու Սուլթան զորքով՝
Իմ մուրազս տար ինձի, յար։
Դարդիս դարման, յարիս մահլամ,
Թև ու թիկունք յարըս ո՞ւր է...

1892 մարտի 23,
Ապարան

Ես ծերացա... մի՛ զարմանար,
Որ ես թեև դեռահաս,
Թեև դեմքըն իմ վշտահար
Նոր է գգվում աղվամազ։

Մի՛ զարմանար... մտքով արդեն
Ես մեր կյանքը ապրեցի.
Ցնորքներում, որպես կյանքում,
Ես կավեցի, սիրեցի։

Եվ ցնորքում ի՞նչ տագնապով
Ես կյանքն էի ընդգրկում.
Եվ գրկեցի. ի՞նչ — արյան ծով,
Լոկ գոյության մաքառում։

1892 ապրիլի 27,
Ալեքսանդրապոլ

Սի՛րտ իմ, սպասի՛ր, գուցե արշալույս
Ողջունե երկինք, գուցե մանուշակ
Շա՛ղ տա բյուրեղներ, գուցե մի նոր լույս
Հալածե մութը, գուցե հաղթանակ
Տանիս կռվի մեջ — մի՛ հուսահատվիր.
Ապրի՛ր մինչ կա կյանք, մինչ նորոգ հույսի
Կախարդ հորիզոն... Սի՛րտ իմ վշտակի՛ր,
Ինչո՞ւ ես հեծում, մի՞թե ամեհի
Օձն է ճնշում քեզ — կասկածը անհույս,
Զանձրույթը դաժան... մի՞թե խորտակվեց
Սերը սրբազան — երկինքը հոգուս...
— Տանջվի՛ր, հուսա՛...

1892 մայիսի 4,
Ալեքսանդրապոլ

Մի՞թե պիտի թոռմին, թոշնին
Վարդ ու շուշան խնկաբույր,
Անդորր լռեն թռչունների
Վառ մեղեդին,
Ակն — աղբյուր։

Մի՞թե պիտի, չքնաղ ընկե՛ր,
Կյանքի անուշ հույզերից
Կուրծքդ հանգչի,— լուռ դադարիս
Սառն ու անկյանք
Շիրմի տակ...

Մի՞թե պիտի փոշի դառնան
Այդ աչքերդ կենդանաբար,
Ուր շողում են հույս ու անուշիկ—
Սիրո աստղեր
Ինձ համար։

Մի՞թե պիտի վառ ծպիտդ
Եվ արցունքիդ ծիածան
Ինչպես երազ անդարձ մարին
Խոնավ հողում
Հավիտյան։

Օ, ի՞նչ ,— մի՞թե, մի՞թե, հոգյա՞կ,
Պիտի անհետ մոռացվիս,
Զյունի շերտեր վրադ դիզվին,
Փոշիդ տանի
Ցուրտ քամին...

1892 մայիսի 5,
Վաղարշապատ

Հոգնած եմ, անտա՛ռ, հոգնա՛ծ, ուժասպառ,
Խորտակված կրծքումս էլ չի բրոնկվում
Հոգիս թրջոցող սերը բոցավառ...
Ա՜խ, մայրի անտառ, քո մենիկ գրկում
Քընել եմ ուզում — անհո՛գ ու անդո՛ր-
Եվ թո՛ղ քո անո՛ւշ, թովիչ սոսափյուն
Խոնջացած հոգուս մրմնջա օրո՛ր.
Եվ առվի խոխո՛ջ, ծառերի սավե՛ր
Կախարդեն ուշքս ինքնամոռացմա՛ն
Ջրքնա՛ղ երազով...

1892 մայիսի 10

Շուշան աղջի՛կ, քու գերին եմ,
Կալ ու կապված անշղթա.
Սիրտս վառվավ սիրուդ բոցեն,
Պապաք-ծարավ էրվեցա։
Իսկ Շուշանը գավը ուսին
Դեպի ձորն է թռչկոտում,
Աչք չի քցում խեղճ տըղին։

Սով-աչերիդ ծով-կարոտով
Նվաբդ եղա, ման եկա.
Օրերս անցան ախ ու վախով,
Ես հալ ու մաշ թել դարձա։
Իսկ Շուշանը ագբրազովին
Կուրծքը՝ արձակ, հուսքն՝ արձակ,
Վարդ երևան է լվանում։

Էս քարի պես ժեռ է հոգիդ,
Էս ալրի պես՝ լուռ ու մութ.
Էրվեց, մոխիր դառավ գերիդ,
Ա՜խ, Շուշա՛ն ջան, ա՜խ, անգո՛ւթ...
Իսկ Շուշանը գավը ուսին՝
Ջուլալ ջուրն է տուն տանում,
Աչք չի քցում խեղճ տըղին։

1892 հունիսի 6,
Կարս

ԻՄ ՓԵՐԻՆ

(Ծիրանի ավանդավեպ)

Կեա-գիշերին, գետի ափին
Ես նստած եմ սիրտավառ.
Գետն հոսում է, և հուսանքին
Ես նայում եմ միալար։

— Ո՞վ է՝ անդորր, լուռ գիշերով
Մենությունը խոսվում.
Շուշան-կրծքով, լույս թևերով
Նիրհած գետը վրդովում։

Ո՞վ է հագած լուսնի շողեր՝
Շքեղ կանգնում առաջիս.
Սև մազերին գոհար-ցողեր՝
Հուր շշնջում ականջիս։

Ո՞վ է ծագող լուսերի հետ
Սաղիկները համբուրում.
Երազի պես ցնդում անհետ
Մշուշային փրփուրում։

Նա փերին է զմրուխտ գետի,
Ցնորքներիս սիրելին.
Դիցուհին է իմ վառ սրտի,
Վառ երգերիս նազելին։

Եվ մինչև լույս գետի ափին
Ես նստած եմ քարացած.
Գետն հոսում է, և հոսանքին
Ես նայում եմ շվարած...

1892 հունիսի 6,
Արգինա

Կուզե՞ս լինիմ վշտի ցողեր՝
Աչերիդ մեջ շող ցայտեմ.
Լուռ գիշերվա անուշ հովեր՝
Փունջ ծամերդ փայփայեմ։

Կուզե՞ս լինիմ վարդ-նազելի՝
Կրծքիդ վրա վառվռիմ.
Արշալույսի շողեր ոսկի
Դեմքիդ վրա փայլփլիմ։

Կուզե՞ս լինիմ ծառ ու ծաղիկ՝
Քեզ գրկումս նինջ սփռեմ.
Թալուկ սավեր, թովիչ թռչնիկ,
Որոր ասեմ, օրորեմ։

Ինչ որ ցանկաս՝ կուզե՞ս լինիմ,
Լինիմ երկինք ու երկիր,
Լինիմ ծով, ժայռ, արև, լուսին,
Միա՛յն, միա՛յն ինձ սիրի՛ր...

1892 հուլիսի 21,
Հառիճ

Ցուրտ է օրը — բո՛ւք ու խավա՛ր,
Քամին շաչում, շառաչում.
Ա՜խ, իմ սիրտը՝ խե՜ղճ, վշտահա՜ր,
Տխուր-մրմո՛ւնջ, լո՜ւռ ու մունջ։

Լռեց քամին. շողով շաղով
Շողաց արև, փայլեց օր,—
Իսկ դու ե՞րբ պիտ ժպտաս անամպ,
Իմ խղճուկ սի՜րտ վիրավոր...

1892 հոկտեմբերի 4,
Էջմիածին

— Պարզըկա գիշե՜ր...
Աստղերն երկնքում լուռ պսպղում են,
Շողերը լուսնի դիպել են սարի
Ջյունոտ կողերին — կողերը ցոլում,
Պեծին են տալիս։

Քամին ցրտաշունչ
Ծները փռած փնչում է, ֆոչում,
Երկիրը սառած ճաքում-ճաքճքում,
Ջյան հատիկներով կուրծքը քարափի
Ցնծում ու ծնծկո՛ւմ...

Անծա՛յր ճանապարհ...
Առա՛ջ եմ գնում — ո՞ւր,— ես չըգիտեմ,
Սառո՛ւյց ու ձմե՛ռ,
Առաջ եմ գնում անհո՛ւյս, անքնկե՛ր,
Քամի ու դիշե՛ր...
— Ա՛խ, ինչ հանկարծ հույսըս շողշողար,—
Նա ինձ ողջունե՛ր...

1892 դեկտեմբերի 13,
Թիֆլիս

ԱՆՏՈՒՆ ԳԻՇԵՐՆԵՐ

Անտուն գիշերնե՛ր,
Անքուն գիշերնե՛ր,
Քուրի՛կ, քեզ համար,
Այրված քո սիրով,
Կարոտիդ հրով,
Ես շա՛տ լացեցի,
Ես շա՛տ տանջվեցի—
Անտուն գիշերնե՛ր
Անքուն գիշերնե՛ր...

1893

Քնքուշ հովի՛կ, իմ նազելուց
Քաղցր բուրմունք հետը բե՛ր,
Վիշտս ու ցավըս շո՛ւտ փարատի՛ր,
Սիրո բարև հետը բե՛ր։
— Շո՛ւտ, մատռվակ, ոսկի թասով,
Վարդի գուլնով գինի բեր։

Անուշ իսոքեր սիրուս սրտի
Պարտեզներից քաղի՛ր, բե՛ր.
Ջերմ համբույրի, ծով-կարոտի
Մաղիլ-ծուղկունք հետը բե՛ր։
— Շո՛ւտ, մատռվակ, ոսկի թասով,
Նռան փայլով գինի՛ բեր...

1893

Գիշերն եկավ, աստղերն էլան,
Լուսնյակն անուշ ցոլցըլաց,
Մազկունքն ամեն նո՛ր քուն մտան
Ամպի ցողով, լուսնի շողով
Հարհանդ-մարմանդ քուն մտան։

Դուք է՛լ քնեք, ոսկի աստղեր,
Վարդ ու բլբո՛ւլ, քուն եղե՛ք,
Օրոր-ծովե՛ր, շորոր-հովե՛ր,
Անո՛ւշ-անո՛ւշ քուն եղե՛ք։
— Իմ սար-դարդե՛ր, իմ ծով-ցավե՛ր,
Դուք էլ մո՛ւշ,մո՛ւշ քուն եղե՛ք։

1895,
Ալեքսանդրապոլ

— Սի՛րտըս երկինք է...
Ամեն արարած
Աստղ ունի այնտեղ—
Գահ ունի այնտեղ։

— Սի՛րտըս երկինք է...
Բո՛ւյր կուտա ծաղկին,

Սեր գուտա կույսին,
Կյանք կուտա անկյանք,
Չոր անապատին—
Ամայի սրտին...
— Սիրտըս երկինք է...

1893 փետրվարի 4,
Թիֆլիս

Ես երգիչ եմ — երկնի թիթեռ,
Ես գանձ չունիմ — լե՛ռ ու բե՛ռ.
Ես սիրում եմ ծաղիկ, աղջիկ,—
Ծաղկի բուրմունք, կույսի սեր.
Ես սիրում եմ մրմունջ — տրտունջ,
Տանջված սրտի երգ ու վերք։

1893 ապրիլի 3,
Աեյքսանդրապոլ

Ընկե՛ր. միշտ հառա՛ջ,
Մի՛ հուսահատվիր
Փոթորկի դիմաց,
Ծով-անապատում.
Անհաղթ հավատով
Կռվի՛ր ու տանջվի՛ր,—
Թո՛ղ հոգիդ հանգչի
Կատաղի կռվում...
— Ընկե՛ր, միշտ հառա՛ջ,
Մի՛ հուսահատվիր.
Շողում է հույսը
Վառ հորիզոնում...

1893 հուլիսի 21,
Սև ծովի վրա

Մութը գրկած գետ ու գետին
Հով ու ալիք կըշնչեն.
Երկինք գրկած աստղ ու լուսին,
Արտերն անդորր կըննջեն։

Սիրտս, սիրտս թույլ կգարկե,
Սեր ու երգեր է՛լ չկան.
Նոր էր ծլել, արև սիրեց,
Արև-աշեր է՛լ չկան։

Վառ աստղերը երկնից ընկան,
Վարդ ու շուշան թառամեց.
Ա՜խ, իմ կյանքս, անուշ կյանքս,
Կտոր-կտոր փշրվեց...

Հովն ու ալիք կուգան, կերթան,
Ցաված սիրտս կշոյեն,
Ու իմ սիրուս մրմունջներից
Տխուր երգեր կհյուսեն...

1893 հուլիսի 24,
Ղազարապատ

ԲԻՆԳՅՈԼ

Շընկշընկալով հովն է փըչում
Ջով Բինգյոլի լանջերից.
Գոչգոչալով ուղխն է վազում
Խոր Բինգյոլի ձորերից։

Հորուտ-Մորուտն ծաղկանց ծովում
Բուրում է բույր ու երգեր.
Շուխիկ-Հուրին լըճի ծոցում
Լողանում է անընկեր։

Հրեշտակը երկրի կյանքից
Դյուքված, ապշած լիուլի՛,
Վայր է ընկնում աստղոտ երկնից—
Ընկնում գիրկը Բինգյոլի։

Փերուզ-երկինքն հրեշտակին
Կարեկցում է, ցավակցում.—
— «Ա՜խ, ափսո՜ս քո անմահ կյանքին,
Որ չըփայլեց դրախտում...»

Բյուրեղ լըճից ցողն է ելնում
Նիրծանի ժըպիտով.
Ծաղիկների ջինջ բողբոջում
Հանդ է առնում շողալով։

Զմրուխտ-երկիրն հրեշտակին
Հոգջունում է, փաղաքշում.
— «Ա՜խ, երնե՜կ քո մատաղ կյանքին,
Որ պիտ ծաղկի Բինգյոլում»։

Վառ անուրջում ուղխն է մնջում,
Սփռում են սեզ ու արոտ,
Բլբուլների հույլքն է շնչում,
Շնչում է սե՛ր ու կարո՜տ։

Անո՜ւշ-անո՜ւշ հովն է փչում
Ջով Բինգյոլի լանջերից,
Ոլոր-մոլոր ուղխն է փախչում
Խոր Բինգյոլի ձորերից...

1893 հուլիսի 29,
Վիեննա

Հովերն առան սա՛ր ու դարե՛ր,
Ամպերն եկան, մութն ընկավ,
— Անգին մերի՛կ, հերիք հուսաս,
Քո շողշողուն աստղն ընկավ։
Լա՛ց, մերիրկ ջան, որ էլ չե՛մ գա,
Վերքը սրտիս՝ ոուն չե՛մ գա։

Կաթիլ-կաթիլ ոսկն է ցողում
Սև ու պղտոր երկնքեն.
Մաղիկ-մաղիկ վերքս է ծորում
Իմ անգյուման, սե՛ սրտեն։
Լա՛ց, մերիկ ջան, որ էլ չե՛մ գա,
Վերքըս խորն է, ճար չըկա...

Անգութ կյանքում վերք ստացա
Սրտանց սիրած ընկերես.
Անխիղճ կյանքում վերք ստացա
Անուշ սիրած քուրիկես։
Լա՛ց, մերիրկ ջան, որ էլ չե՛մ գա,
Ապիզ բալեդ էլ չըկա՜...

1893 օգոստոսի 3,
Գալիցիա

Մենակ, անընկեր ձեր գիրկն եմ ընկել,
Կենսական ծովի ահեղ պտույտներ,
Սիրտս լի՛ հույսով,
Լի՛ ցնորքներով
Ես պիտի պատռեմ ձեր հզոր կուրծքը,
Ես պիտի թռչեմ դե՛պ սուրբ օրրանը
Իմ վե՛հ խոհերի,
Վա՛ռ ձգտումների։
Պտո՛ւյտք, կատաղի՛ր, ալի՛ք, շտապի՛ր,
Օ՛, սիրտ իմ, սիրտ իմ,— տոկա՛ ու կանգնի՛ր
Ժայռի պես ամո՛ւր,
Ցողի պես մաքուր...

Քող անծիր ծովը նոա, փրփրի,
Թիսպոտ երկինքը կայծակներ շա՛ղ տա,
Եվ թող փարոսը մշուշում թաղվի,
Փրկարար ափը աչքիս չերևա՝
Չեմ հուսահատվի։

— Չէ՞ որ դուք միայն
Վսեմ իդեալնե՛ր,
Կուսական հոգու
Նվիրական սե՛ր,
Չէ՞ որ դուք միայն, երկնային ուժե՛ր,
Ինձ սուր եք տալիս անհաղթ կռվելո՛ւ,
Ինձ թև եք տալիս անխոնջ թռչելո՛ւ,
Ինձ հույս ե՛ք տալիս անվերջ տոկալու...

1893 օգոստոսի 7,
Վիեննա

Տիեզերքի պերճ հյուսվածքն եմ,
Իմ մեջ երկինքն է երգում.
Բռնկում է սիրո հրդեհն,
Վշտի հեղեղն աղմկում...

Եթե հոգուս ճոխ երգերից
Մի մեղմ հնչյուն, նազելի՛ս,
Քո ականջը միայն շոյե,—
Հիացքներով կրդյութվիս։

Եթե սիրուս վառ հրդեհից
Մի նսեմ կայծ, սևաչյա՛,
Վառ սրտումդ միայն շողա,—
Բուռն հույզերով կայրվիս։

Եթե վշտիս ջերմ հեղեղից
Մի ջինջ կաթիլ, սիրելի՛ս,
Ջքնաղ կրծքիդ միայն ծորե,—
Բյուր վշտերով կլցվիս։

Տիեզերքի պերճ հյուսվածքն եմ,
Իմ մեջ երկինքն է երգում,
Բռնկում է սիրո հրդեհն,
Վշտի հեղեղն աղմկում...

1893 օգոստոսի 28,
Վիեննա

Դա՛ղջիս լացեք, սարի սրմբուլ,
Ալվան-ալվան ծաղիկներ.
Դա՛ղջիս լացեք, բաղի բլբո՛ւլ,
Ամպշող երկնուց զով-հովեր...

Երկինք-գետինք գլխուս մթնան,
Անտուն-անտեր կուլամ ես.
Յարիս տարա՛ն — ջանիս տարա՛ն,
Հոնգո՛ւր-հոնգո՛ւր կուլամ ես...

Ա՜խ, յարս ինձի հանեց սրտեն,
Անճար թողեց ու գընաց.
Սրտիս սավդեն — խորունկ յարեն
Անդեզ թողեց ու գընաց։

Դա՛ղջիս լացեք, սարի սրմբուլ,
Ալվան-ալվան ծաղիկներ,
Դա՛ղջիս լացեք, բաղի բլբուլ,
Ամպշող երկնուց զով-հովե՛ր...

1893 օգոստոսի 29,
Վիեննա

Էս ճամփեն ոլոր-մոլոր,
Սև ծովի բոլոր կերթա,—
Շուշան յարս ինձի թողել՝
Էն տղի հետ ո՞ւր կերթա։

Ա՜խ, ճամփեն — մահի բերան,
Օձի պես գալար կերթա.
Ջոլերի մեջ, անգերեզման,
Ծովն է լալիս իմ վրա։

Սեգ աբրիվը աչքս է կոցում,
Աչքս կարոտ՝ Շուշանին.
Ինքնաթիռը սիրտս է հանում,
Սիրտս ծարավ՝ Շուշանին։

Ու ճամփեն, մութ-մութուն,
Սև ծովի բոլոր կերթա.
Շուշան յարս ձեռքերն արյուն՝
Ին ոգի հետ հարս կերթա։

1893 սեպտեմբերի 2,
Պրագա

ՄԱՅՐԻԿԻՆ

Հայրենիքիս հեռացել եմ,
Խեղճ պանդուխտ եմ, տուն չունիմ,
Ալիզ մորս բաժանվել եմ,
Տրխուր-տրրտում, քուն չունիմ։

Սարին կուգաք, նիշուն հավքե՛ր,
Ա՜խ, իմ մորքս տեսել չի՞ք.
Սովին կուգաք, մարմանդ հովե՛ր,
Ախոր բարև բերել չի՞ք։

Հավք ու հովեր նկան կըշտիս,
Անձին դիպան ու անցան.
Պապակ-սրրտիս, փուփագ-սրրտիս
Անխոս դիպան ու անցա՜ն։

Ա՜խ, քո տեսքին, տեսուշ լեզվին
Կարոտցել եմ, մայրի՛կ ջան.
Երնե՛կ, երնե՛կ, երազ լինիմ,
Թրռնիմ մատդդ, մայրի՛կ ջան։

Ինչ քունքդ դա, լուս գիշերով
Հոգիդ գըրկեմ, հոգիքդ առամ.
Սրրտիդ կրպնիմ պատ դարոտով,
Լա՜մ ու խընդա՜մ, մայրի՛կ ջան...

1893 սեպտեմբերի 8,
Դրեզդեն

Մաճկալ ես, բեզարած ես,
Առը շատ տո՛ւր, շո՛ւտ արի.
Ծովի պես քրտնած ես,
Եղնեքն արձկի՛, տուն արի։

Կաթի սերը քաշել եմ,
Դրել եմ հովին՝ սառի.
Ալ գոգնոցս կապել եմ,
Ալրի թաղան, թը՜ռռ, արի։

Տեղ եմ գըցել շվաքում,
Ջամին կուգա, դով կանի.
Լուսնի շողքն է մեր ծոցում,
Ջաղ տո՛ւր, շատ ա՜ռ — շուտ ա՛ռ։

Դաղրած, բեզարած յա՛ր ջան.
Ամպերն եկան, դե՛հ արի.
Բեզարած չանիկ գուրբան,
Ծրտից թե առ, թե՛զ արի...

1893 սեպտեմբերի 21,
Օրեր-Հոլց

Գիշերն նկավ, գով-հովն ընկավ,
Աստղունք լուսնին ձայն տվին.
Լուսնյակն ելավ, մով-ծովն ընկավ,
Հավքերն ինձի ձայն տվին։

Ես վեր ելա ոգի առած՝
Զարկի սրտիս լարերին.
Սիրտս խնդաց, կուրծքս թնդաց—
Եվ լարերը խզվեցին...

— Միայն սիրո լարը մնաց
Սրտիս անհուն խորքերում,
Ու վառ սիրո երգը շողաց
Կյանքիս ամեն ծալքերում...

1893 օգոստոսի 5,
Արգինա

Կենսական ծովի հուլքերի միջին
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր.
Կայծակն է զարկում իմ վեհ ճակատին,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր։
Հողմ ու փոթորիկ շուրջըս են հածում,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր։
Գոռ ալիքները կուրծքս են ծեծում,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր։
Ինձնի՛ց բռնեցեք, խորտակվող մարդիկ,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր,
Ձեր խարիսխները ոտքիս տակ ձգեք,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր։

1894 մայիսի 29,
Լայպցիգ

Ապրում եմ մենակ, մարդկանց մեջ օտարչ
Նրանց աչքերը ինձ չեն ողջունում.
Մարդկանց սրտերը փակ են ինձ համար
Եվ նրանց հոգին ձայնըս չի լսում...

Իմ ընկերները — իմ խոր մտքերն են,
Որ վեհ թևերով անհունն են պատում.
Այն վառ աստղերը — գրքոտ աչքերն են,
Որ վրշտիս ժամին ինձ քաղցր են ժպտում...

1894 նոյեմբերի 3,
Լայպցիգ

Մայրս տեսավ ինձ շա՜տ տխուր,
Շա՜տ հուսահատ, մեկուսի.
Գիրկն առավ, սրտին կպա՝
Ու լցվեցի, ու լացի։
Ա՜խ, մերիկ ջան, մեկ նայի՛, տե՛ս,
Սիրտս խորունկ վերք ունի.
Ձեռքդ մեկ դի՛ր,— ա՜խ, չէ, ձեռդ
Անջնջելի կարնոտի։

Ա՜խ, մերի՛կ ջան, կուզեմ քնեմ,
Ա՜խր բալադ հոգնա՜ծ է.
Երկրի ծոցում հանգիստ քնեմ,
Բալադ անչա՜փ հոգնա՜ծ է...

1894 դեկտեմբեր,
Լայպցիգ

Երազ տեսա — ձեր տան առաջ
Զուլալ աղբյուր կըբխեր.
Ձենը մեղմիկ, քաղցրակարկաչ,
Ջորս դին ծո՜ւփ-ծո՜ւփ ծաղկունք էր։

Ջուր խմելու դուռդ եկա,
Պապակ էի ու ծարավ,
Ջինջ աղբյուրը, մեկ էլ տեսա,
Ցամաք կտրավ, քար դառավ։

Քրնից գարթնա,— սիրտս էր տրտում.
Ա՜խ, էս շա՜տ վատ երազ է.—
Մարմնն՝ ես եմ, աղբյուրը՝ դուն.
Սիրդ ինձ համար ցամաքել է։

1894 Նոյեմբերի 16,
Լայպցիգ

Փշե-պսակը ճակտիս կրդնեմ
Ու ջինջ սրտով ամբոխի մեջ,
Ու վեհ մտքերով նրա վրան
Կրթափառեմ ո՞ր-մոլո՞ր
Երկրի բոլոր ոլորտում...

— Եվ ի՞նչն է իմ նպատակը,—
Աստղատ, վսեմ ապագան,
Որ վառ, պայծառ կըշողա
Պղտոր կյանքի ափերից
Խորին, կապույտ հեռվում...

1895 Հունիսի 10,
Վարշավա

Անհուն երկնում աստղերն անշեջ,
Գիտե՛մ, շա՜տ են ինձ սիրում.
Վարդ-արշալույսն ամպերի մեջ
Ամենից շուտ ինձ է գըրկում.
Ե՛ս էլ, ե՛ս էլ ձեզ իմ սրտում
Գրկած, պատած պաշտում եմ.
Դուք իմ սերն եք, իմ ընկերն եք,
Ես ձեր երգող շողիկն եմ։

— Ա՜խ, մենք շա՜տ խորն ենք,
Շատ բա՜րձր ու պայծառ.
Եվ մեզ համար
Երբե՜ք, երբե՜ք մահ չըկա...

1895 Հունիսի 13,
Կիև

Լուսե գիշերին հեռու տեղից
Մի երգ հասավ իմ սրտին,
Այն ա՞ռ սիրտն էր՝ սեր ու թախիծ
Ոերկց, փարեց իմ սրտին։

Կարոտներով հյուսված երազ
Բուրեց երդը թախծագին,—
Ե՛կ, ընկե՛ր իմ, անհայտ, անհաս,
Սուրբ սեր ծփաց իմ հոգին։

1895 Հունիս,
Ալեքսանդրապոլ

Նայում են ցոլուն աստղերը անշեջ
Լուռ անապատին քնքուշ հայացքով.
Եվ ծավալվում է մրոայլ հոգուս մեջ
Լուռ անապատը խո՜ր դաղտնիքներով։

Եվ նրա անհուն, հավիրժ դոզանքում
Վեհ լրության մեջ մրտորում եմ ես;
Հոգիս այրում են և թեավորում
Այն վառ աստղերը պատգամների պես...

1895 Հունիս,
Անի

Շղարշ-ամպերն երկինքն առան,
Լուսնակն անդորր կշողա,
Լռիկ ճահճում հարհանդ-մարմանդ,
Նուրբ եղեգը կդողա։

Արագիլը՝ մենակ ու լուռ,
Եղեգնի մոտ կքայլի.
Կմտորե՝ խոր ու տխուր,
Ճահիճն ադոտ կփայլի։

Մոայլ ափին մենակ նստած՝
Սիրտս անուշ կթախծի.
Եվ անուրջում միտքս թաղված՝
Քունն աչերիս կհանգչի...

1895 հունիսի 29,
Անի

Թափվեցին տերևներն աշնան ծառերից՝
Թոշնա՛ծ ու դալո՛ւկ։
Թափվեցին երգերս բեկված իմ սրտից՝
Տրտո՛ւմ ու թալո՛ւկ։

Թափվեցին աստղերն անհուն երկնքից՝
Տխո՛ւր ու անփա՛յլ։
— Թափվեցե՛ք, արցունքներս, հոգուս խորքերից՝
Անհո՛ւյս ու մոա՛յլ...

1895,
Ղազարապատ

— Քընքուշ լուսնի շուշան-փոշին
Մաղեց հեզ գետի վրա.
Մեղմիկ խըշշաց ցորեն, ցողուն,
— Սիրտս անդո՞ր կրծրփա։

Ուռիները նազա՞ն-ծածա՞ն,
Տերևները կըշընչեն,
Միտ ու ծիծեռ հուզքի վրան
Վառ երազում կընընջեն...

Լուռ կրծորե աստղը շողե՞ր
Ու ծըղրիդը կրծըղրա.
Քամին կիրգի գաղտնի երգե՞ր,—
— Միտքս հեռո՞ւ կըսըլանա...

Լուսնակն անցավ,— մութը մըթին
Մաղեց հեղ գետի վրա...
Ծանըր խըշշաց լացող ուռին,
— Սիրտս տրխո՞ւր կըհնա...

1895 սեպտեմբերի 14,
Հոռոմոս — Անի

Հեռո՞ւ ափերում միտքս թափառեց
Ազատ ու մենակ թևերը փռած.
Ժպիտն աստղավառ, կընճիռը մրռայլ,
Ինչպես ստվերներ մըտքիս հետ ընկած.
Հեռո՞ւ ափերում, ժայռերի կըրծքին
Շաչում էր, ծեծկում ծովը մթագին.
Եվ անդունդներից արշավում քամին
Հըպարտ հակատիս։
Անտառը կաղնի խըշշում էր այնտեղ
Հին-հին դարերի, դալար աղգերի
Անցքերից շըքեղ։

Այնտեղ ցոլում էր հրկինքը լազվարթ,
Եվ լաղուրի մեջ՝ վրէիա ու գրվարթ՝
Հոդիս վառվում էր — բոցերի ծով էր...
Այնտեղ երդեցի խոհերս անհուն,
Որ ստվերի պես շաղ էի տալիս
Հեռո՛ւ ափերում...
Եվ ստեղծեցի ջրքնաղ մի աշխարհ,
Ուր հզորն ու վեհ և գեղեցկությունն
Իշխում են անմահ, վառվում են պայծառ.
— Այդպես երգեցի հեռո՛ւ ափերում
Թևերս՝ արծակ,
Ազա՛տ ու մենակ...

1896 հունվարի 2.

Վառ արևի շողքը խաղաց
Լուսագեմին իմ ճակտին.
Աղունիկն էլ թռավ, եկավ,
Նստավ բանտիս լուսամուտքին։

Ա՛խ, շա՛տ սրտանց կարոտցեր եմ
Աղունիկիս, արևիս.
Ե՞րբ պիտ ոտքերն ընկնիմ, գրկեմ
Աղունիկիս, արևիս...

1896,
Երևան

Մռայլ բանտիս նեղ լուսամուտքից
Աստղեր տեսա հեկաշյա,
Որ սրգավոր ու թախծալից
Նայում էին ինձ վրա։

Մայրս, քույրս միտս բերվան,
Որ հայրերիս տարբ հաղում,
Ինձ կըհիշեն ու լուռ կուլան
Աստղերի հետ հե՛ղ, աքքառ՛ում...

1896,
Երևան

Ամպի մոմը բեկավ ծովը՝
Շափաղ գիրավ քարափին.
Կրշանկրշանկա աստան-հովը.—
Ես նրստեր եմ ծովափին։

Վազեց մայրամն գուման-սարեն,
Սովում լոգցավ ու ապծավ,
Վազեց ադրեկս ֆրշնամու գեմ՝
Դիշեր անցավ, լրդարձավ։

Ջա՛ն, մարդ՛ գան, ասա՛՝ էսոր
Աղբերս ո՞ր ա,— չի՞ա տեսեր,
Նեղն է՞ ընկեր, հասնիմ էնոր,
Մեջքս գեմ տամ քանց ժեռ-գեռ...

1896 հունիս,
Երևան

Բանտս բացե՛ք, ազատ թրռնեմ,
Ազա՛տ գոնե մեկ-մի օր.
Մութ ժեռերի մարալի հետ
Ընկնիմ մենակ սար ու ձոր։

Վառ արևի շողքը բալգավ
Անհագ խմեմ ու ծրծեմ.
Անո՛ւշ երգով սիրտս բանամ
Լալ ու լաղուր երկնի գեմ։

Զառ ու զարբաբ ծաղկանց միջով
Լուռ ծրմակի խորքն ընկնիմ.
Ա՜խ, աղբո՜ւր ջան, քու նանիկով
Գըրկեմ վարդերն ու մեռնիմ...

1897 մարտ,
Երևան

Բանտիս վըրա, սըրտիս վըրա
Արծիվն երեք փաթ տըվավ,
Թափ-ծափ տալով թևերն հըսկա,
Կանչեց բանձըր ու թըռավ։

— Հե՜յ, Արազը՝ ծըփանք տալով,
Արտուտների հետ կուգա.
Ալագյազը ծաղկունքներով,
Զառ ու զըմրուխտ, ալվալա։

Երթամ, զարնեմ կուրծքս Արազին,
Անուշ ու զով ջուր խըմեմ,
Ալագյազի թևքին նըստիմ,
Ապա՜ռ, հըպա՜ռ երգս ասեմ...։

1897 մարտ,
Երևան

Սոսիները կըսոսափին
Լուռ ու անդորը գիշերին,
Մոքերն հոգումս կըմըրըկին—
Մոքերս անա՜փ ու անչա՜փ...

Եվ ահա՜ հեռվում
Մեգը մեկնավ գետից գետին,
Շողքը առավ կուրծքն ամպին—
Շողքը զառ-վառ ու ոսկի...

... Բայց ես ոգի եմ.
Դալուկ աստղեր, թալուկ լուսին
Վա՜ռ փոշու մեջ հալվում են,
Լեռները լուռ նիրհում են։

... Բա՜յց ես ցընորք եմ.
Թըռնում եմ հեռո՜ւն,
Ոտքիս տակ առուն խոխոջ կուտա՜,
Սի՜րտըս, սի՜րտըս բողբոջ կուտա՜։

... Ա՜խ, ի՜նչ վըսեմ են—
Երկինք — լազվարթ, երկի՜ր — լաջվարդ,
Լե՜ռ, ձոր — թուխ, մութ,
Ծո՜վեր — կապուտ...
Միածանը շավա՜ղ, շափա՜ղ։

... Ա՜խ, ի՜նչ չըքնաղ են—
Աստղե՜ր-զվարթ, Աստղիկն — ալ-վարդ,
Մե՜գը — փըրփո՜ւր,, ծեգը — պուրպո՜ւր,
Երգը — անո՜ւշ, վերքը — քնքո՜ւշ,
Աչերն անհուն ծով ու ծավի.
— Բայց ես թափառել կուզեմ,
— Բայց ես արտասվել կուզեմ...

1897 մարտի 14,
Երևան

Մութ անտառով լուռ ման կուգամ,
Բուն ու ագռավ ինձ կըսեն.
— «Ա՜խ, խեղճ տղա, ի՜նչ տըխուր ես.
Դուն հիվանդ ես...» ինձ կըսեն։

Մութ անտառով լուռ ման կուգամ,
Ցող կըշաղի ծառերեն.
— «Ա՜յ խեղճ տըղա, վերքըդ խորն է
Վըրաղ կուլանք...» ինձ կըսեն։

Քամին փչեց ու ծաղիկին
Տերևները վար թափեց.
— «Ա՛յ խեղճ աղջա՛, տերևնելն են...
Քու մահիճն ու գիրկդ մեն...»

1897

Անհա՛յտ, անորո՛շ, անձնա՛ տենչերով
Զգում է հոգիս հեռո՛ւ, շատ հեռո՛ւ.
Տխուր ու մաղթ» ինչպես մշուշ-ծով,
Խուլ հնչեցնում է ափերի վրա.
Եվ ինչպես երազ — և՛ կա, և՛ չկա...

1897,
Ալեքսանդրապոլ

Արտուտն՝ ուսին, վարդը՝ սրտին,
Գարունն եկավ, չա՛ն գարուն,
Տուղտը՝ ծոցին, աստղը՝ ճակտին,
Գարունն եկավ, չա՛ն գարուն...

Արտուտն անուշ երգում է սեր,
Սիրտս լո՛ւռ է, քանց ձմեռ,
Էս ի՞նչ կարմիր վառ արև՛ է,
Սիրտս մո՛ւթն է, քանց դիշեր։

1897

Աշնան պղտո՛ր, պղտո՛ր ամպեն
Արցունքի պես թուն կրգա.
Ա՛խ, ո՞ւր կերթա իմ սև ճամփեն,
Ա՛յ բախտ, մի՞թե վերջ չկա։

Արդյոք վշտոտ, չոր պուխպա
Ո՞ւրտեղ պիտի քուն մտնի.—
Սիրած, վարտա սրտի՞ վրա,
Թե՞ դաշտի մեջ ամայի...

Ա՛խ, աչքերս ո՞վ պիտ ծածկե,—
Անգին մա՞յրս՝ համբույրով,
Թե՞ ձյունն ու հող՝ քամին ծեծկե
Տատրակների վույ-վույով։

1897,
Հոփե

«Ա՛խ, կանանչեր, դուք աչերես եկամ,
Յարաք բալես ե՞ր կելեի բանտեն...»

Մորս խոսքերը

Կրունկները շարա՛ն-շարա՛ն
«Կը՛ռռ, կը՛ռռ» կանչին ու եկան.
«Գարունն եկա՛վ, գարունն եկա՛վ»
Անուշ կանչին ու եկան...

— «Ջա՛ն, ջա՛ն, մեռնիմ ձեր ձենիկին,
Ա՛յ կռունկներ, ներխշուններ,
Յարա՛ք տեսա՞ք իմ բալիկին,
Յարա՛ք խաբար չե՞ք բերել։

Բալես կապին, բանտը դրին,
Տարին եկավ, բոլորավ,
Խաբար չունիմ, դադար չունիմ,
Աչքս ճամփեն ծով կրտրավ։

Գարունն եկավ,— արևերես
Ելան ծիլ ու ծաղիկներ.
Ա՛խ, ցարաք ե՞ր ազիզ բալես
Կեչնի բանտեն, կրունկնե՞ր...

Կռունկները շարա՜ն-շարա՜ն
«Կռ՜ռռ, կռ՜ռռ» կանչին ու եկան,
«Գարունն եկա՜վ, գարունն եկա՜վ»...
Անուշ կանչին ու անցան...

1897,
Ալեքսանդրապոլ

Պա՜ղ-պա՜ղ փչեց աշնան քամին,
Ուռիները դող առան.
Տերևները՝ շոր ու դեղին
Տխո՜ւր, տխո՜ւր վար ընկան։

Մենակ ագռավն ծառի ճյուղին
Լուռ ծրվարեց սև հագած.
Ա՜խ, մեկ էլ ես ձևորս ծոցիս՝
Աչքս ձեր դրան մնաց։

1897,
Ալեքսանդրապոլ

Սև միզարքս ճոճք եմ արեր,
Ճոճքն եմ կապեր ծառերեն.
Լալե՜ն, լալե՜ն քուն է մըտեր
Իմ որը բալեն, իմ լալեն.
Նանիկ էրա՜, նանի՜, դա՜ր-դա՜ր,
Դարդեր ունիմ, քանց ծով ու սար։

Չար թշնամու հրրեն, թրրեն
Փախած, ընկած սար ու քար,
Քեզի հար լուս սրտիս վրրեն
Գրրկած լացի սար ու քար։
Օ՜ր-ո՜ր, բալաս, օ՜ր-ո՜ր նանի,
Քամբախտ մերրդ չարրդ տանի։

Սիծրս կրրծքիս կրպած, ցամքած,
Է՛լ կաթ չունիմ քեզ տալու.
Սոված, ծարավ թափրս կրտրած
Օրորելու ու լալու...
Օ՜ր-ո՜ր, նանի, մի՜ լա, մի՜ լա,
Իմ մեկուճար ազիզ բալա։

Ցորեկ եղավ, հիմի հանդեն
Կրթանն եկավ, մերը ո՞ւր ա.
Վա՜խ, մեր հոտը էն-դուշմանը
Ջարկեց, տարավ, ուր ա՞, չրկա։
Նանիկ էրա՜, մի՜ լա, մի՜ լա,
Սև օրերիս նրխշուն լալա.

Բռնավորը թուրը քաշեց,—
Արուն կապեց սար ու ձոր,
Կարմիր-կարմիր արցունք թափեց
Մեր վաթանի սար ու ձոր.
Իմ աչքի լուս բալեն դուն ես,
Սև սարերի լալեն դուն ես։

1897 մայիս,
Ալեքսանդրապոլ

Ամպի փեշով մեկ հավք անցավ,
Անուշ կանչեց իր յարին.—
Անուշ ձենով սիրտրս լրցվավ.
Ցարրս անցավ, կուժն ուսին։

Էս աղբուրը դրլդրլալով
Քարփեն ծո՜ւփ-ծո՜ւփ կրփրովի.
Ծով-ծամերրդ ալի՜ք-ալի՜ք
Մարմար կրրծքիդ կրփովի։

Ա՜խ, նազիկ չան, եղնիկ-աղջիկ,
Նարին կուրծքդ թող պագեմ
Սիրքս-քոց է, սիրաքս խոց է,
Վառ-պաշիրդ դաքման են։

Չէ՞ որ, յա՜ր չան, դոմբրդ կերթա,
Կուրծքդ նիխշուն, շարմդղուն
Հող ու մոխիր պիտի դառնա,
Ջուր թե՞ չ՝ նա իրնայում...

1897 Հունիսի 15,
Մարմաշենի վանք

Ա՜խ, ալ-վարդի, սիրո վարդի
Ջո՜ր փշերը մնացին...
Էն փշերը մատաղ սիրտքս
Քցքրեցին ու կերա՜ն.
Կարմիր-կանաչ իմ օրերքս
Սիրո աղով անացան...
Ա՜խ, ափսո՜ս իմ գարուն կյանքիս
Սո՜ւր փշերը մընացին...

1897 Հունիսի 23,
Ալեքսանդրապոլ

Շարա՜ն-շարա՜ն ամպերն եկան,
Ա՜խ, մուժն առավ իմ ճամփեն.
Ո՞ւրտից կուգամ, ո՞ւրտեղ կերթամ,
Միտքս՝ շըվար, ու չիտեմ։

Էս ի՞նչ կըսկիծ սիրտքս ծեծկեց,
Քուրի՛կ, քեզնեն հեռու կերթամ։
Վարդի փուշը սիրտքս ծակեց,
Դարդը սըրտիս խոլոր կիրթամ։

Սար ու ձորեր ձունն է իշեր,
Քամին պա՛ղ-պա՛ղ կըփըշե.
Ես՝ մենակ եմ, ես՝ անբնկեր,
Քամին ճակտիս կըփըշե։

Շարա՜ն-շարա՜ն ամպերն եկան.
Ա՜խ, մուժն առավ իմ ճամփեն.
Ո՞ւրտից կուգամ, ո՞ւրտեղ կերթամ,
Միտքս՝ շըվար, ու չիտեմ։

1897 Հունիսի 20,
Ալեքսանդրապոլ

Ա՜խ, իմ սիրտքս, վա՜խ, իմ սիրտքս
Օրուց-մանկուց հալավ-մաշավ...

Աշխարհ մտա, վարդ սիրեցի,
Անսեր վարդը սիրտքս ծակեց.
Մենակ ապրա, արուն լացի,
Աստղս էլ երկնում թառամեց...

— Սո՜վ, սիրտքդ բա՜ց,— բա՜ց խորն ու լայն,
Շա՜տ դաղրած եմ, ծոցդ կուգամ...

1897 Հունիսի 28,
Ալեքսանդրապոլ

Ա՜խ, իմ ճամփես մոլոր գընաց,
Անտակ ծովին դեմ առա.
Վա՜խ, իմ սիրքս անցա՜վ գընա՜ց,
Ետ կանչելու ճար չկա։

Դումանն եկավ, ծովը ծածկեց,
էն խաս հավքերն ի՞նչ եղան.
Դարդը եկավ, սիրտըս ծակեց.
էն ալ-վարդերս ի՞նչ եղան։

Ա՜խ, խաս հավքերն ծովում խեղդվան,
Ագռավն վըրես կրդռռա,
Սիրուն զառ-վառ վարդերն թոռման,
Բլբուլս անթև կըսրգա...

1897 Հուլիսի 24,
Հարիճ

Յարըս նստել վանքի դըռան
Նուռ ու խնձոր կըծախե.
Հարս ու աղջիկ քովը կուգան,
Էժան կուտա, կըբաշխե։
Ա՜խ, յարս ինձեն խռովել է,
Ինձի շատ թանկ կծախե։

Ես ո՞նց անեմ... դարդիս դարման
Յարիս նուռն ու խնձորն է.
Ինչ որ ունիմ, յարիս կուտամ,
Թաք ուրիշին չըծախե։

1897 սեպտեմբեր,
Բագրան

Եղնիկները լուսաբացին
Սուր ժեռերով անցկեցան,
Փրփրած լճին մեղմ նայեցին,
Լռիկ-մնջիկ անցկեցան։

Ա՜խ, իմ սերս՝ կանանչ-կարմիր,
Դառավ ինձի ցավ ու ցեց.
Ա՜խ, իմ կյանքս՝ զառ-վառ կարմիր,
Վիշտս կերավ ու մաշեց։

Ես ի՞նչ անեմ, ես ո՞ւր չըվիմ—
Ընկնիմ չոլերն ամայի.—
Երնե՞կ մեռնիմ, ու սիրտս ուտեն
Գել ու գազան ամեհի։

Ա՜խ, եղնիկներ, դադար չունեմ,
Սիրտս՝ կրակ վառ-վառման,
Մարդիկ կուգան, ինձ կնայեն,
Լռիկ-մնջիկ կանց կենան...

1897 հոկտեմբերի 26,
Ալեքսանդրապոլ

Սև աչերեն շա՛տ վախեցի՛ր,—
Էն մութ, անծեր դիշեր է.
Մութըն ա՛հ է, չարքեր շա՛տ կան,—
Սև աչերը մի՛ սիրե։

Տե՛ս իմ սիրտըս — արուն-ծով է.
Էս չարքերը զարկեցին.
Էն օրվանեն դադար չունիմ,—
Սև աչերը մի՛ սիրե...

1897 հոկտեմբերի 25,
Ալեքսանդրապոլ

Սուր սարերը ձունն է պատեր,
Քամին փըչեց ուշ-աշնան,
Նըխշուն հավքեր շարա՜ն շարքեր՝
Տաք ու հեռո՜ւ տեղ կերթան։

Սիրուն Դալքե՞ր, էդ ո՞ւր կերթաք,
Ինձի մենակ կը թողնեք.
Էս ցուրտ աշնան՝ սառտերի տակ,
Անտուն-անտեր կը թողնեք...
Գոնե սիրտս էլ՝ խե՛ղճ, վիրավո՛ր,
Ձեզ հետ վերցրե՛ք-ու տարե՛ք։

Ա՛խ, մեր աշխարհն սառն է, սառուց,
Ցուրկ եմ սիրու արեւից.
Ցարս էլ-ինձնից կրես դարձուց,—
Չըքվիմ, կորիմ էստեղից...

1897 հոկտեմբերի 27.
Ալեքսանդրապոլ

Թե՛ մարդ, թե՛ հավք ընկեր ունի,
Ես հա՛մ անտուն չոր գլուխ եմ,
Հա՛մ էլ սիրտս մեծ ցավ ունի,—
Մեծ էս-տարեն, խորն էս ծորեն։

Դուն է՛լ կասես — «կորի՛, գընա՛»,
Ա՛խ, ո՞ր չըքվիմ, ո՞ւմ քովն-երթամ...
Էս ցավն ախըր քեզնեն առա,
Դեղի համար ո՞ւմ քովն-երթամ...

1897 Նոյեմբերի 26,
Ալեքսանդրապոլ

Շառաչելով՝ մի զառաստղիկ
Երկրի կրծքին վայր ընկավ.
Քայց երկիրը մնաց լռիկ,
Աստղն էլ լռեց-ու հանգավ։

Իմ վառ սիրս բոցով-երգով
Սրտես սուրաց, սիրտդ ընկավ,
Սիրտդ մնաց մունջ-անվրդով,
Սակայն... սիրս չհանգավ...

1897 Նոյեմբերի 26.
Ալեքսանդրապոլ

— Էդ ի՞նչ կըրակ կանես, մերի՛կ,
— «Բալաս, վերքիդ դեղ կեփեմ»։
— Ա՛խ, իմ վերքը սիրտս է, մերի՛կ,
Դեղ ու դարմանդ ի՞նչ անեմ։

Սրտիս վերքը խորն է, մերի՛կ,
Լավի դարձի հույս չըկա.
Մի՛ քըրքըրիր սիրտս, մերի՛կ,
Խոր-խոցերուս ճար չըկա։

1897, Մեհ.
Ալեքսանդրապոլ

Էս քարափի տակ խորունկ փորեմ,
Թաղեմ սիրտս ցավով լի.
Մեծ քարափն էլ վերան շրջեմ,—
Թաղեմ սիրտս սիրով լի...

Ա՛խ, շա՛տ վաղուց սիրտս առա,
Ընկա մարդկանց դուռն-երթիկ.
Ցավիս դեղ-ճար շա՛տ խնդրվա,
Մարդիկ փակին դուռն-երթիկ։

Է՞հ, ի՞նչ անեմ, սիրան ի՞նչ արեմ է,
Ասի՝ թաղեմ, թող մեռնի.
Չէ՞ որ մարդիկ է՛լ սիրտ չունին,
Անսիրտ մարդը ցավ չունի։

Էս քարփի տակ խորունկ փորեմ,
Թաղեմ սիրտս ցավով լի.
Մեծ քարափն էլ վերան շրջեմ,—
Մանր լինի, դուրս չելնի...

1897 դեկտեմբերի 11,
Ալեքսանդրապոլ

Ո՞ւր եք կորեր, գարնան օրեր,
Էն զով սարի հովն ո՞ւր է.
Կանչեմ, արի՛ք, նշխուն հավքե՛ր,
Ալ-շրթունքով վարդն ո՞ւր է։

Էս քարափեն աղբուր կուգար,
Կաքավն էստեղ երգ կասեր.
Խոր ծմակեն մարալն կուգար,
— Սիրտս ուրախ կզարներ։

Հիմի ցուրտ է, ձունն է եկեր,
Ջորս դիս ձմեռ ու սառույց.
Ա՜խ, է՛լ չկան արև-օրեր,
Սիրտս էլ սառեր է վաղո՜ւց...

1897 դեկտեմբերի 11,
Ալեքսանդրապոլ

Լուսինն, ինչպես քընհատ կարապ,
Ծով-երկընքում կըլողա.
Լուսնի բակը, ինչպես փըրփուր
Թույլ ու թալուկ կըշողա։

Ձայն-ձուն չըկա, սիրտս է միայն—
Մեծ լըռության վեհ լեզուն՝
Տիեզերքը գըրկած համայն—
Ձանգի նըման զողանջում...

1898

Ծովի ծոցից վայրի մի բադ
Թըռավ, նըստավ ժեռ ափին.
Երգեց հըպա՛րտ, երգեց զըվա՛թթ,
Լուռ օրորեց իմ հոգին...

Երնե՛կ, ես էլ քեզ պես, ա՜խ, բա՛զ,
Լինիմ անվիշտ ու վայրի.
Երգեմ զըվարթ, թըռնիմ ազատ՝
Իշխան լազուր վայրերի...

1898

Դուման դառավ ծովը բոլոր,
Երկնուց բռնած մուժն առավ.
— Ի՞նչ ման կուգամ միտքս մոլոր,
Սիրտս խոլոր, խոժոռ ցավ։

Ծո՛վ, քեզի տամ հիվանդ սիրտս,
Կուզես լավցու, թե խեղդե.
Մենակ խաբար տուր խեղճ մորս,
Անգութ յարիս չանիծե...

1898,
Օդեսա

Դարդը հետս է, հետքս կուգա,
Ուր որ կերթամ — դադար չունիմ.
Ազիզ լարն էլ, որ ճար չանեմ,
Ո՞վ կա դարման դարդոտ սրտին։

Հեռո՜ւ, հեռո՜ւ, հազար ծովեր,
Գլուխս առնիմ, երթամ, կորիմ.
Ցավքս հովին ու ծովին տամ,
Երկրե-երկիր երթամ, կորիմ...

Սիրտս ու աշխարհ — դարդ ու դուման,
Ա՜խ, ուր կերթամ — դադար չունիմ.
Ջոր գլուխքս չլում թողնեմ,
Անգաթ, անդարձ երթամ, կորիմ...

1898,
Օդեսա

Ա՜խ, մեր սիրտը լիքը դարդ, ցավ,
Օր ու արև չըտեսանք.
Վա՜խ, մեր կյանքը սևով անցավ,
Աշխարհից բան չիմացանք։

Հարուստ մարդիկ կուտեն-խմեն
Աշխարհի ճոխ սեղանից.
Մենք աշխարհի խորթ տըղերքն ենք,
Մեզ փայ չըկա աշխարհից։

Խեղճ աղքատի հոգին դուրս գա,
Քարից-հողից հաց քամե.
Բեռով հացը հարբստին տա,—
Հարուստն իշխե, վայելե։

Խեղճ աղքատը դառը դատի,—
Դատարկ նըստի... է՜յ աշխարհ,
Էլ ինչո՞ւ ես քարը թողնում
Քարի վըրա, քար-աշխարհ։

Ա՜խ, մեր սիրտը լիքը դարդ, ցավ,
Օր ու արև չըտեսանք.
Վա՜խ, մեր կյանքը սևով անցավ,
Աշխարհից բան չիմացանք։

1898,
Օդեսա

Դարդը սրտիս համփա ընկա,
Ու մարդ չուզեց հետս գար.
Ո՞վ ջան, խո՜ր ծով, դիրկդ եկա,
Սրտիս ընկեր, սիրտ չկար։

Էս աշխարհում շա՜տ ման եկա,
Ծեռը գրկի ու լացի.
Ո՞վ ջան, մե՜ծ ծով, դիրկդ եկա,
Ա՜խ, կարոտ եմ ծով-սրտի։

Մեր սրտերով քացվենք իրար,
Տեսնենք ո՞ւմ մեջ շատ դարդ կա.
Ա՜խ, քու սիրտն էլ ինչքա՜ն դառն է,
Իմ սրտիս պես շատ թույն կա...

1898,
Օդեսա

Երազիս մեջ ծովը տեսա,
Ծովը լազո՜ւր ու անդո՜ր,
Մենակ, մենակ, ափի վրա
Ընկած էի վիրավոր...

Ծովն էր հեռում մեզմ ու թալուկ՝
Մառմունքի մեջ անծայր։
Եվ խոսում էր վերքըս խորունկ,
Իսկ ես՝ անհույս, ես՝ անճար։

Եվ հոգուս մեջ մի ձայն ծորեց,
Մի ձայն՝ քնքուշ, սուրբ սրտից.—
Ա՜խ, այն՝ մայրս էր, կանչում էր ինձ
Հայրենիքիս ափերից...

1898,
Օդեսա

Ինչպե՜ս կուզեմ սիրտս թաղեմ
Ծովի մռայլ, մութ խորքում.
Քեզնից հեռո՜ւ, վիշտս պահեմ
Գաղտնի տեղում՝ շա՜տ թաքուն։

Ծովը միայն վիշտս իմանա,
Ծովը շա՜տ մեծ սիրտ ունի.
Սրտանց կուլա սիրուս վրա,
Հոգու խորքից կհուզվի...

1898,
Օդեսա

Լավ օրերիս երգը մոռցած
Ուրտից հանկարծ հիշեցի.
Հուզեց, այրեց սիրտըս մարած
Երգը սիրած վաղեմի։

Եվ ուզեցա ծովափն ելնեմ,
Հեռո՜ւ, հեռո՜ւ մարդկանցից.
Մենակ ընկնեմ վայրի ափին
Եվ լամ անհո՜ւյս, թախծալի՜ց...

1898,
Օդեսա

Ծովն ալեկոծ, սանձակոտոր,
Իր քար շրթերն է կրծում.
Ա՜խ, իմ վիշտը՝ մի չար ուրուր,
Սիրտս է անդուլ քրցրցում։

Գնա՜մ, գնա՜մ, կորչեմ անդարձ,
Փոթորիկի մեջ ընկնեմ,
Անդունդներին խեղճ սիրտըս տամ,
Չար ուրուրից ազատվեմ։

Թող ինձ ծովը նետե ափին,
Ափին հեռո՜ւ, հեռավո՜ր,
Սիրտըս անվիշտ՝ անզարթ քնիմ
Ափին մենա՜կ, մենավո՜ր...

1898,
Օդեսա

Հոգնած ծովը՝ փրփուր բերնին՝
Ափին ընկած կըհևա,
Ժեռ ափերից մեզը մթին
Ծովի վրա կըսողա։

Վերքը սրտիս՝ անքուն-անտուն,
Կյանքից հեռու եմ փախել,
Կուզեմ ապրեմ վայրի ափում՝
Ապրեմ մենակ, անընկեր։

Աստղունք մեկ-մեկ հլան-քաղման
Երկնի փիրուզ-աքոռքում,
Աստղերի պես երգիս հլան
Հոգուս մռայլ խորքերում։

Սրտիս լարերն տրտում-տրտունջ
Թոշնած կյանքիս երգեցին.
Հովը սուրաց մունջ ու մրմունջ,
Աստղունք վրաս լուռ լացին։

1898,
Օդեսա

Սիրեցի՛ր, յարը տարան.
Յարա տրվին ու տարան.
— Էս ի՞նչ զուլում աշխարհ է,
Սիրտս պոկեցին, տարան։

Ցավը խորն է, ճար չկա,
Ճար կա, ճար անող չկա.
— Էս ի՞նչ զուլում աշխարհ է,
Սրտացավ ընկեր չկա։

Լա՛վ օրերիս գնացի՞ն,
Ափսո՛ս ասին, գնացի՞ն.
— Էս ի՞նչ զուլում աշխարհ է,
Սև դարդերս մնացին...

1898,
Օդեսա

— Սիրո՛ւն աղջի՛կ, երկիր լինիմ,
Դուն ի՞նչ կըլնիս։

— Սիրո՛ւն ուզա, դարուն կըլնիմ,
Քեզ զարդարիմ։

— Անո՛ւշ աղջիկ, երկինք լինիմ,
Դուն ի՞նչ կըլնիս։

— Անո՛ւշ ուզա, արև կըլնիմ,
Սիրտդ վառեմ...

1898,
Օդեսա

Մատաղ սիրտս խաս-բաղի պես
Ծառով, ծաղկով կանանչ էր.
Քիրս էլ նազան բլբուլի պես
Սրտումս անուշ կըկանչեր։

Ինձի ասիր, աղջի՛կ սիրուն,
— Քու բլբուլին զարմացը եմ.
Ուշքս է տարվեր վարդիդ սիրուն,
Մի հատիկ վարդ քո՛ղ քաղեմ...

Սիրտս Քնդաց, ջահել էի,
Անուշ լեզվեն շո՛ւտ խաբվա.
Ասի՝ բաղս մատաղ քեզի,—
Սև աչերեն շա՛ւտ խաբվա...

Ու անգութը բաղս մըտավ,
Ա՜խ, տըրտրեց ծաղկունքիս,
Խեղճ բլբուլիս բրռնեց, տարա՛վ,
Կոտրեց նո՛ւռս, չինարիս...

1898 օգոստոսի 2,
Օդեսա

Սև-մութ աճպեր ճակտիդ ոիզվան,
Դուման հազար, Ալագյա՛զ,
Սրտումս արև էլ չի ծաղկում,
Սիրտս է՛լ դուման, Ալագյա՛զ։

Զառ փեշերդ անցա, տեսա,
Առանց դարդի սիրտ չըկար,
Ա՜խ, իմանաս, չա՜ն Ալագյազ,
Իմ դարդիս պես դարդ չկար...

— Է՜յ Մանթաշի նըխշուն հավքե՜ր,
Իմ դարդըս որ ձերն եղներ,
Ձեր էդ զառ-վառ, խաս-փեսուրներ
Կսենային, քանց գիշեր։

— Է՜յ Մանթաշի մարմանդ հովե՜ր,
Իմ դարդըս որ ձերն եղներ,
Ձեր ծաղկանուշ բուրմունքն անուշ
Թույն ու տոթի կփոխվեր։

— Հե՜յ վա՜խ... կոտրան իմ թևերս,
Ընկա գիրկըդ, Ալագյա՜զ.
Ա՜խ, մեծ սըրտիդ սեղմեմ սիրտս,
Լամ, արուն լամ, Ալագյա՜զ...

1898 օգոստոսի 23,
Օդեսա

Ես որ մեռնիմ՝ ինձ կթաղեք
Ալագյազի լանջերում,
Որ Մանթաշից հովերը գան,
Վրաս հեսան ու երթան։

Գերեզմանիս շուրջ դին փովին
Ցորեն արտերն ու ցոլան,
Եվ ուռիներն՝ մաղերն արձակ,
Վրաս ընկնին, անուշ լան...

1898 նոյեմբեր,
Օդեսա

Ես որ մեռնիմ ու իմ վերջից,
Եթե մի վարդ դուրս ծլեր,
Եվ ընկերքս հեռու տեղից
Գար՝ շիրիմքս այցելեր,

Եթե նրա խոր աչերից
Մի ցող վարդիս մեջ ծորեր,—
Այն սուրբ ցողը սիրտս կերթար,
Վերքըս խորունկ՝ կըբուժեր։

1898,
Օդեսա

Քեզ չըտեսնել՝ ուխտել էի,
Բայց, ա՜խ, նորից հանդիպա.
— Քուրի՜կ, վերքըս լավ է հիմի,
Մի սև սպի տեղը կա։

Էն սև սպին սև ամպի պես
Սևցուց դեմքը արևի.
Ու ման կուգամ սև շուքի պես
Սարե՜ր, ձորե՜ր ամայի...

1899 հունվար,
Ալեքսանդրապոլ

Լու գիշերին մտքիս դիմաց
Շա՜տ սովերներ ժողվեցան.—
Ընկերներս՝ մեռած, կորած,
Հոգուս խորքով անց կացան։

Նրանց աչքերն՝ անհույս-անսեր,
Արտիս խորքը նայեցին,—
Ասա՛ վերջի՛-պես սիրտս գաց էր,
Նրանց տրտնջաց-առավեցին...

1899,
Ալեքսանդրապոլ

Ընկերներքս վաղ են վերել,
Սիրող սրտերն հոգ են դառել.
Չոր ծառի պես ես եմ կեցել,
Ընկերներքս հոգ են դառել։

Անգին մայրքս, ա՜խ, մեջքը կոր,
Անկուշտ հողին աչքն է գցել,
Աղիզ մորքս կյանքն է հատել.
Չոր ծառի պես ի՞նչ եմ կեցել։

Մառչա-ծալված անթեր մրնաց,
Մել ու ճյոտքս գարնան չորցան,
Դարդի որդն էլ սիրտս է կրծել,
Չոր ծառի պես ի՞նչ եմ կեցել։

Մի՛ վրուալիր, է՛յ մաշված սիրտ,
Աշնան քամին հիմի կըգա.
Մառդ արմատով կաանի կերթա,
Աշնան քամին հիմի կըգա...

1899,
Բաքու

Գիտե՛մ, երկիրդ շա՜տ գարեր հետո
Եվ պիտի սատա, ճեղք-ճեղք պատռվի.
Եվ այն սառցե-սառի մութ վիհերի մեջ

Մարդկությունը ողջ՝ մեռնի ու թաղվի—
Ա՜խ, սիրտը գո՜նե տխեղերքի մեջ
Հավերժ-տրտսփե՜ր...

1899

Գերեզմանքս անհայտ լինի,
Վերաս քամին շառաչե.
Վերաս խա՜չ, քա՜ր թող չլինի,
Մենակ ուռին հառաչե։

Ա՜խ, աշխարհում մարդկանց ձեռեն
Խաչեր շա՜տ եմ, շատ տարել.
Ու վաղո՜ւց էլ սրտիս վրեն
Կան շա՜տ ծանրը, սև քարեր...

1899

Արևելքից մի հավք եկավ
Ոսկի հակինթ թևերով,—
Վառ-պրկի խորքից եկավ
Աշխարհով մեկ՝ ձայն տալով.

— «Ես եմ կյանքը.— կյանքն է երաղ
Մեծ քնի մեջ աշխարհի.
Մարդն է ոգի, մարդն է դողանք
Մեծ զանգի մեջ աշխարհի»։

Եվ իմաստուն հավքը ճախրեց,
Թռավ դեպի արևմուտք.
Եվ թևաթափ լուռ մխրճվեց
Մահվան ծոցումն ամառվա...

1899,
Ղազարապատ

Դու նրխշուն նուռ՝ գառը վրադ,
Ես քո թուփն եմ, շուքիդ մեջ.
Դու քնքուշ վարդ՝ վառը վրադ,
Ես տերևդ եմ փրշիդ մեջ։

Վախենամ՝ թե մի օր էլ գան,
Քեզի քաղեն ու տանին.
Ես թուփ-տերև մընամ, չորնամ,
Զարկե գետին ցուրտ քամին...

1899

Այս ուռու տակ մենք երգեցինք
Սիրո չքնաղ երգերից.
Մենք երգեցինք ու շնչեցինք
Բուրմունք, ժըպիտ ու թախիծ։

Այս ուռու տակ, ընկե՛ր անգին,
Դու ինձ սիրել խոստացար.
Անցան տարիք,— չորցավ ուռին,
Ու դու էլ ինձ մոռացար...

1899

Այն վառ աստղերը, որ ջինջ երկնքից
Իմ սրտի խորքում բուրմունք են ծորում,
Լուռ ասում են ինձ.
— «Տես մեզ.— մենք անվերջ, անհուն երկնքում
Միշտ թափառում ենք.

Ի՞նչպես կարող է վեհ, վսեմ ոգին
Կապվի, շղթայվի
Իր ստրուկների և տերերի հետ.
Ելե՛լ և թափառի՛ր, ո՛վ ազատ ոգի...»
— Այսպես են խոսում վառ աստղերն ինձ հետ...

1899

Աղբյուրի մեջ մի մարալ
Շուքն է տեսել եղնիկին—
Ու ման կուգա միալար
Մուրիկ-մուրիկ եղնիկին։

Այն երդնիկն էլ երազին
Մարալի ձայնն է լսել.—
Ու ման կուգա մարալին
Մուրիկ-մուրիկ զօր-գիշեր...

1899,
Հաստիճ

Ա՜խ, ես սիրու ճամփի ափում
Մենակ բուսած վայրի վարդ եմ.
Անց ու դարձի փոշին ծփուն
Վերաս իջած, կորած վարդ եմ։

Սիրունները՝ պարտեզների
Քնքուշ պահած վարդն են սիրում.
Ես հուր-վարդն եմ ժեռ սարերի՝
Սերս հասած արևներում։

Անց ու գարձող ինձ չի նայում,
Իսկ ես սիրու ծով-ծարավ եմ.
Մարավ սիրտս փշեր թուսցուց,
Հիմա ջարդ եմ ու նախատնձ եմ...

1899

Ա՜խ, անհուն սեր ես ունեի սրտիս մեջ,
Եվ վառ հավատ ու բյուր հույսեր ունեի,
Բարձրաթռիչ, ինչպես արծիվ վեհափառ,
Կրսուրայի զառ թևերով երկնի մեջ.

Ես ունեի չքնաղ ցնորք իմ հոգում,
Կրսիգայի մարդկանցից վե՜ր, երկրից վե՜ր.
Սավառնաթև, ինչպես արծիվ սևաթույր,
Շքեղ ցնորք ես ունեի՝ իմ հոգում.

Բայց ցնորքս մնաց մենակ կյանքիս մեջ,—
Քանզի մարդիկ, որ դժմիտ են ու գաժան,
Խորտակեցին, հոշոտեցին իմ սիրտը
Եվ ցնորքը սոսկ թողին ինձ կյանքի մեջ...

1899

Կուզեի լինել գարնանՁ արևգակ,
Չքնաղ վարդերով կուրծքդ պճնեի,
Անդորր սրտիդ մեջ վառնի կրակ,
Մութ ապերդդ մեջ պայծառ շողայի։

Կուզեի լինել երգող շատրվան
Եվ երազներդ լուռ դրդռնի,
Կամ թե՝ շողշողուն ուղի ծիածան,
Շուշան ճակատիդ պսակ հյուսեի։

Կուզեի լինել աչքդ ծովի։
Եվ ոտներիդ տակ մեղմիկ հնայի,
Կամ թե՝ լեռների բարձունքը հովի,
Փարթամ մագերդ շոյելու գայիս։

Կուզեի լինել երկինք աստղավառ
Քեզ, ինչպես երկրի շուրջը, պատեի
Հազար ու հազար աչքերով գոհար,
Քեզ՝ դյութված, արբած հավերժ նայեի։

1899,
Ալեքսանդրապոլ

Ա՜խ, մի սիրտ լիներ մաքուր սիրով լի,
Որ հիմանդ սիրտս սիրով բարուրեր,
Իր ջերմ գրկի մեջ քընքուշ գորգուրեր
Իմ հիմանդ բալաս...

Ա՜խ, ապիդ բալա՛, ա՜խ, ինչո՞ւ, ինչո՞ւ
Քու սերը հանգավ, երգերդդ մարան,
Գարուն օրերում, ծաղկունքդդ թոշնան,
Իմ հիմանդ բալա՜ս...

1899 ապրիլի 17.
Ալեքսանդրապոլ.

Ի՜նչ օրի հասա, սև օրի հասա,
Որ ստոր մարդուն գլուխ ծռեցի.
Գլուխս չըլներ ուսերիս վրա,
Քան թե՝ ամարդին գլուխ ծռեցի։

Ի՜նչ էլ որ լինեմ, ի՜նչ էլ որ լինեմ,
Անտուն էլ լինեմ,— մարդ եմ նաբեց ես.
Ինչո՞ւ ուրիշին գլուխ խոնարհեմ,
Ո՞վ որ լինի նա, ո՞վ որ լինեմ ես։

Ի՞նչ էլ որ լինի, մարդ պիտի հոգով,
Ազատ ու հպարտ միշտ պիտի լինի.
Ճակատը բարձրից պարզ ու բաց նայի,
Ի՞նչ էլ որ լինի, ի՞նչ էլ որ լինի...

1899 հունիս,
Սարիղամիշ

Հոգնած նայում եմ քեզ, մելամաղձոտ,
Հայրենի ճահիճ, իմ սիրած մարմանդ.
Ա՜խ, ինչպե՜ս լուռ ես, ինչպե՜ս վե՜հ ու լո՜ւռ.
Ա՜խ, ինչպե՜ս կուրծքդ հեռում է հարհանդ.
Եվ եղեգներդ՝ տրտում ու տխուր,
Անդաստաններիդ հետ ինձ ողջունում են։

1899 հունիսի 23,
Սարիղամիշ

— Մայրի՜կ, նայիր, արևն ի՞նչպես
Դեղնել է, ցուրտ է ի՞նչպես.
Լույս չի տալիս, ու նայի՛ր, տես՝
Ջորա դին՝ դալուկ աշնան պես։
Եվ սար ու ձոր՝ լուռ-սևավոր,
Անտառ, առու սուգ կանեն։
Գարուն օրով այս ի՞նչ ցավով
Երկինք-երկիր մեռել են։

— Ա՜խ, սիրելիս, դաշտ ու անտառ
Գարնան գրկում նոր ծաղկան։
Վառ արևն էլ, տե՛ս ի՞նչ պայծառ,
Ու ցավ չունին, բալա ջան։

Ավա՜ղ... մենակ սիրտդ է մեռել,
Ու սրտիդ մեջ — ամեն բան.
Սիրո ցավով սիրտդ է մեռել,
Դալար կյանքդ, բալա ջան...

1899 հունիսի 23,
Սարիղամիշ

Կյանքըս դալար ու լալազար,
ոսկի օրերս ո՞ւր գընացին.
Իմ գարունքվա, զառ գարունքվա
վառ ծաղիկներս ո՞ւր գընացին.
Սրտիս լարերն մեկ-մեկ կըտրան,
բլբուլներըս ո՞ւր գընացին.
Երաղներըս կանանչ-կարմիր,
արեգակներս ո՞ւր գընացին։

Գոհար-աստղունք իմ սըրտի մեջ
շողք տըվեցին ու շո՜ւտ մարան,
Հովերի հետ վարդեր գրգվող
խաս թևերըս մատաղ կոտրան.
Խորունկ սիրտըս հուր-հընոց էր,
սերս ու երգըս բոցի նըման,
Հիմի կյանքըս մութ ու ձըմեռ,
արեգակներս ո՞ւր գընացին։

Սըրտի մեջն է կյանքը մարդուս,
սիրտն որ կոտրավ, կյանքն ի՞նչ պետք է.
Սերըս մարավ, աստղը սրտիս,
աստղըս մարավ, սիրտն ի՞նչ պետք է.
Աղիզ մի սիրտ սերըս կուզեր,
փուչ աշխարհը անկամորդ է.
Մանկուց ապրա ծարավ-պապակ,
— արեգակներս ո՞ւր գընացին։

Ա՜խ, աշխարհը տուն է սըգի,
հիմքը նըրա մահի վըրա.

Մարդն հոգիներն խեղճ ճիճու է,
հողի վրա միշտ պիտ սողա.
Թե թագավոր անհաղթ լինի,
սերևի պես միշտ պիտ դողա,
Խելքը մարդուս ցավ ու ցնց է,
— արիգակներս ո՞ւր գընացին։

Ա՜խ, սարեսար ու դարբնդար՝
Դարդըս առնիմ, մենակ մանդամ,
Ու ծովնծով էս աշխարհով
շրվաքի պես տրխուր մանդամ.
Ընկեր գրանիմ, սիրաբս բանամ,
դարդըս ասեմ, ու կուշտ մի լամ,
Ընկերներըս վա՜ղ են մեռել...
— արեգակներս ո՞ւր գընացին...

Երթամ, մըտնիմ անապատը,
ժեռ քարերը սիրեմ, գըրկեմ,
Սև քարերին դլուխըս չոր
թեքեմ անհույս, խոր միտք անեմ.
Ու պատանքըս հետըս մանտամ,
գերեզմանըս ինքըս փորեմ,
Կյանքըս թըռավ, օրըս հասավ,
— արեգակներս ո՞ւր գընացին...

1899 օգոստոսի 15,
Ալեքսանդրապոլ

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԶԱՆԳ

... Եվ ես ապատում և անապատում
Լուռ թափառում եմ՝ հոգիս ծանրացած
Անլույծ խոհերով, վշտով անպատում
Եվ տենչանքներով տիեզերատարած,
Եվ հանկարծորեն՝ պարզ ու աննսեմ,
Ես իսկ զգում եմ, տեսնում եմ ահա—
Տիեզերքը ողջ — մի մեծ, անհուն զանգ.
Եվ հոգիս — նրա լեղվակը վսեմ։

Եվ հրաշքներով, վեհ լռության մեջ
Տիեզերքն անծիր՝ զողանջում է խոր
Երգն անհունության, և հավերժության,
Եվ ճշմարտության, և գեղեցկության։
Եվ զողանջում է տիեզերքն ամեն—
Եվ իմ հոգումն է, իմ ոգին է այն,
Որ զողանջում է — ես մարգարե եմ...

Եվ ահա այնտեղ ամբոխն է ծփում
Ծանր ու թանձր՝ օվկիանի նման.
Եվ գո՜րշ, հարթ՝ է նա — զանգված մի հսկա։
Եվ հոգուս խորքից բարբառ եմ լսում—
Ղողանջը զանգի տիեզերական։
Եվ դեպի ամբոխն իջնում եմ ահա
Նո՛ր կտակներով, նո՛ր պատգամներով։
Դեպ նրա հոգին գահավիժում եմ՝
Նրան խայթելու, և քարոզելու,
Ե՛վ արտասվելու, և՛ այրվելու...

1899 սեպտեմբեր,
Ալեքսանդրապոլ

Տարիներ հետո քեզ տեսա նորից,
Սիրտըս արտասվեց, բայց ժպտացի ես,
Նույն աղջիկն էիր՝ լքնաղ բոլորից,
Հոգուս մտերիմ, հարազատ այնպի՜ս։

Աչքերդ մեղմով հանգչեցին վերաս,
Ես հպարտ ու վես անցա քո մոտով.
Շուրջըս ծածանվեց լուսեղեն երազ.
Եվ ես նայեցի անզուսպ կարոտով։

Սուտ է, նազելիս, չի զատել երբեք,
Երբեք չի զատել մեզ կյանքը դաժան.
Քո՜ւյր իմ, ամոթիր սիրտըս վշտալեկ,
Տե՛ս, քոնն եմ ես միշտ, քո՛նն եմ հավիտյան։

1900,
Ալեքսանդրապոլ

Ուրտեղ սիրուն կին կտեսնեմ,
կնոջանան դարդերըս.
Ու երբ անուշ երգ կլսեմ,
կըխորանան դարդերըս.
Սահման չունին, դարման չունին,
դադար չունին, չունին վերջ,
Ա՜խ, ծովեն՝ խոր, սարեն՝ ծանըր,
իմ դարդե՜ըս, դարդերը՜ս...

Զառ հուլսերով, անմահ սիրով
ես քեզ խորունկ սիրեցի.
Առաջ ու երկինք — սերս ու սիրտըս,
ոտներդդ տակ փըռեցի.
Սեր չըտվիր, ու աշխարհեն
սիրտըս կըտրավ, Շո՛ւշան ջա՛ն,
Ա՜խ, զմրուխտե, ա՜խ, զմրուխտե
իմ հուլսե՜ըս, իմ սերըս...

Կարոտ կեցա կնոջ սիրուն—
սրտի ոսկի արևին,
Գապակ կեցա մութ սարերին,
բաշը փըրփուր նրժույգին.
Կյանքըս անցավ թևերը թափ,
սիրտը կոտրած սապի պես,
Ա՜խ, մահվան պես, սև մահվան պես,
իմ դարդե՜ըս, դարդերըս...

1900,
Ղազարապատ

Այսօր ձեր տուն մեծ խնջույք կա,
Դու կըբուրես վարդի պես.
Ջորս բոլորըդ հարուստ տղա,
Դու կըփայլես աստղի պես։

Ձեր տան առաջ՝ ձյուն ու գիշեր,
Ա՜խ, ես կանգնել կըդողամ.
Դու դահճի պես ա՛լ ես հագել,—
Ալըդ շողքն է իմ սրյան...

1900,
Ցյուրիխ

Բարև կուտամ, լեռ առնի,
Ոտքիդ կոխած հողն եմ, յար.
Սիրտըս անիծիզ մի՛ ճմլի,
Չէ՞ որ միչին դուն ես, յար։

Քանց սարյակի թևը սև
Իմ աչքերը շա՛տ են սև,
Աչքն էլ սրտի հայլին է,
Չէ՞ որ սիրտս էլ շա՛տ է սև՝։

1900

Դու գնացիր,— ես մնացի
Բյուր մարդկանց մեջ մեն-մենակ,
Սրտիս խորքում դառն լացի,
Խավարն իջավ կըրծքիս տակ։

Թափառում եմ փողոց-փողոց
Այս ծովածուփ քաղաքում.
Ջսպված ցավից՝ շրթներս խոց,
Եվ աստղ չկա իմ հոգում...

1900,
Փարիզ

Է՜յ դու, մահվան անմահ աշխարհ,
Գերեզմանի պես տխուր.
Բախա ես կբռել մարդուս համար,
Ջնդան ամուր, ամրակուռ։

Է՜յ գուլում բախտ, դու առյուծ ես,
Խեղճ եղնիկ եմ ճանկիդ մեջ.
Ինձ քարեքար հերիք պարնես,
Սիրտս քամես ճանկիդ մեջ։

Ո՞ւմ գանգատվիմ, դիվան կանչեմ,
Քո ճանկերեն ազատվիմ.
Ձեռք ու ոտքս անտես շղթա,—
Ու ելք չունիմ, հույս չունիմ։

Ինչքա՜ն կանչեմ ու աղաչեմ,
Վերջն էլ պիտի, փուչ-աշխարհ,
Մի բուռ հողով բերանս ծեփես,
Ցավի, մահի սև-աշխարհ...

1900

Է՜յ, ջան-Հայրենիք, ինչքա՜ն սիրուն ես,
Սարերդ կորած երկնի մոմի մեջ.
Ջրերդ անո՜ւշ, հովերդ անո՜ւշ,
Մենակ բալեքդ արուն-ծովի մեջ։

Քու հողին մեռնեմ, անգի՜ն Հայրենիք,
Ա՜խ, քիչ է, թե որ մի կյանքով մեռնեմ,
Երնեկ ունենամ հազար ու մի կյանք,
Հազա՜րն էլ սրրտանց քեզ մատաղ անեմ։

Ու հազար կյանքով քու դարդին մեռնեմ,
Բալիդիդ մատա՜ղ, մատա՜ղ քու սիրուն.
Մենակ մի կյանքը թո՜ղ ինձի պահեմ,—
Է՜ն էլ՝ քու փառքի գովքը երգելուն,—

— Որ արտուտի պես վե՜ր ու վե՜ր ճախրեմ
Նոր օրվա ծեգիդ, ազի՜զ Հայրենիք,
Ու անո՜ւշ երգեմ, բա՜րձր ու զիլ գովեմ
Կանաչ արերդ, ազա՜տ Հայրենիք...

1900,
Ժընև

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՅԱԹԻՆԵՐ

Սիրելի՜ք, մնա՜ք բարով,
Ճամփո՜րդ եմ, մնա՜ք բարով.
Ով գիտե՝ ետ գամ, չըգամ,
Ողջությամբ մնա՜ք բարով։

Վարդը նո՜ր էր, կոկոն դարձավ,
Կոկոնի մեջ էլ թառամավ.
Սիրտս քեզնով նոր պիտ բացվեր,
Թոռոմելը քեզնից եզավ...

Ձեռ ու ոտս կապեցին,
Բանտը դրին, կողպեցին.
Ո՛չ թողեցին գանգատվիմ,
Ո՛չ էլ լեզուս կըտրեցին։

Հոգուտ մեռնիմ, մեղք չունիմ,
Երդնի արի, մեղք չունիմ,
Աչքս տեսավ, սիրտս ուզեց,
Ախր ես ի՞նչ մեղք ունիմ։

Ա՜խ վաթա՜ն ջան, մնալով,
Պանդուխտ հողում մնալով,
Ջիվան կյանքս մաշեցի,
Քեզնից հեռո՜ւ մնալով։

Լաց կուլամ սգվորի պես,
Դարդերս մենձ բեռի պես,
Թափս կտրավ, վար ընկա
Աշունքվա խազալի պես...

1900

Իրիկունն եկավ, անե-տուն մտավ,
Վառեց ճրագներ՝ կարմիր ու պայծառ.
Բարի երեկոն, ա՜խ, ինձ տես չեկավ,
Ու տունս մնաց սրտիս պես խավար։

Տուն դարձան հանդից հարևան, գլխից,
Ուրախ բոլորան հացի սեղանին.
Դուն ո՜ւր մնացիր, իմ ապիկ կարիճ,
Աչքս ծով դարձավ քու անուշ ճամփին։

Գիշերն էլ եկավ, ու բնաձնելուն
Բերեց երազներ՝ նխշուն ու զառ-վառ.
Ա՜խ, ես մնացի մենակ ու անքուն,
Երազս դուն ես, ու դուն էլ չեկար։

1900,
Ժընև

Զայնս հնչում է խավարի խորքից,—
Գրքա՜, հայտնվի՛ր, սո՛ւրբ ճշմարտություն.
Ես քեզ եմ փնտրել իմ կյանքի շեմքից,
Եվ տե՛ս, քարացա անհուն տանջանքում։

Բյուր ուղիներով ես դիմեցի քեզ,
Քո հետքն ու շուքը նույնիսկ չըգտա.
Տե՛ս, սրտության մեջ, մոլորության մեջ
Ջախջախվեց կյանքիս... ու դու չե՞ս գրքա...

Հոգնած եմ հիմա, անուժ ու հիվանդ,
Բայց հավատում եմ — ունիս գոյություն.
Բայց էլ չըմնաց մի ուղի անհայտ.—
Ա՜խ, երևացի՛ր, մեծ ճշմարտությո՛ւն...

Եվ ես ուժ կառնիմ, կըդառնանդվիմ,
Ցույցս կըվերցնեմ և ճամփա կընթամ,
Լույսըդ կաչեռեմ խավար աշխարհին,
Մոլոր մարդկության վե՛հ կյանքըս կուտամ...

1900,
Ցյուրիխ

Զարս արբում, սև է անցնում,
Հույսս է վաղվան օրվան վըրա.
Վաղվան օրն էլ սև-ամպի պես
Եկավ, նստավ սըրտիս վըրա.
Հիմա դարձել, ափսո՜ս կասեմ.
Անցած օրին երեկ կուտամ.
Ափսո՜ս կասեմ դալար կյանքիս,
Որ շուտ ընկավ չարքաշ ճամփա։

Ու օրերիս քարավանը
Տըխուր-տրտում առաջ կերթա.
Հաղար ցավով, մարդկանց ցավով
Ծանրը բեռնած ճամփա կ'երթա.
Ա՜խ, օրերիս քարավանը
Աչքը՝ կարոտ, սիրտը՝ կարոտ.
Ու աշխարհիս ցավով բեռնած
Էս աշխարհով կ'անցնի, կ'երթա.

Ու մի օր էլ չոր չոլի մեջ
Քարավանս կիջնի՛ դադրած,
Վար կըդնեն մեջքի բեռը
— Կյա՜նքս, կյա՜նքս մոխիր դառած.
Ա՜խ, օրերիս քարավանը
Աչքը՝ փափագ, սիրտը՝ պապակ,
Փուչ աշխարհիս ցավով բեռնած
Էս աշխարհով կ'անցնի, կ'երթա.

Քարավանս երբ որ իջնի,
Ես ինձ ու ինձ հաշիվ կանեմ.

Թե ա՞ր հասա, թե ի՞նչ ուզա,
թեղա՞ւ եկա էս մեծ Համփեն.
Շա՞տ դարբեցա, շա՞տ չարչարվա,
հոգիվ ամեհ, շահդա ի՞նչ էր.
Ամբը ինչո՞ւ ոտ գըրեցի
էս սուր ու փուշ, դժվար Համփեն։

Նովին ընկած մարդու նման
նամարդ օձից կախ ենք քնիկ.—
Նամարդ օձը էս աշխարհն է,
— ու աշխարհին աչք ենք գըցել.
Ե՞խ, աշխարհից մի հույս չկա.
Ճիճուներդ ենք կերաղոր.
Մի բուռ հողն է բաժին մեր՝
թե ուր գնանք աշխարհին էլ։

Ա՜խ, մեզ ինչ՝ հոգ պիտ գառնաք,
ի՞նչքան ոգրտեր հոգ են գարձեր,
Ապիզ ոգրտեր, խորունկ սրտեր
սիրով վառվեր, հոգ են գարձեր.
Ձեր բալերը, ընկերներս,
մեր ոգրտերին նշան, թիրան.
Ա՜խ, ամենքն էլ էս աշխարհի
անգամի վառվող հոգ են գարձեր...

Էս աշխարհը արունքոտ է,
ո՞չ գոթի ունի, ո՞չ խիղճ ունի,
Է՜հ, աշխարհն էլ ցավող չ՚ունի,
մահացու է ու վերջ ունի.
Ու մեզի պես հոգնելն է,
ու մեզի պես մաշկտացու.
Մեր գերեզմանն ինքն է հիմի,
ու գերեզման ինքն էլ ունի։

Հոգաբ ա՞խտ ծաղկանացը,
նոգաբ չունին,— ոչիսի թոռմին.
Մով ծաղիքը, մով տարիքը
սև ծրմի պես պիտի անցնի՞ն.
Վաս ասեր պիտի մարի,
դառ տառաչիսն հոգա՞ր ափսոս.

Հրեղեն ձին, բլբո՜ւլ, մարա՜լ,
հե՜յվախ, պիտի մեռնի՞ն, անցնի՞ն։

Թե աշխարհը, թե ամեն մարդ
ծանոթ — եկամ, մեռնիք — կ՚երթա.
Թե անցորդ ենք, շտապաշ համփարդ
երերմընի, փըշի վըրա,
Ո՞ւմ հարցանենք՝ մեզի ասա,
— էս երա՞ղ է, թե ոչիսի բան,
Որ մենք եկանք, հիմի կ՚երթանք.
— խաբա՜ք չըկա, խաբա՜ք չկա։

Է՜յ անցավոր, ցավի աշխարհ,
ցավերդ բաբանա մեկ-մեզի կ՚ելթանք.
Ինչո՞ւ եկանք, ինչո՞ւ կ՚երթանք.
մեզ հարցրեք, մենք խաբար ուզանք.
Յավերու տակ մեռա՞նք, մեռա՞նք.
երնե՜կ էնոր, որ չի զգա.
Հազար ափսո՜ս, որ ծընվել ենք,
չըծնվածին երնե՜կ գուռանք։

Ա՜խ, խոր կրրգամ, որ աշխարհում
մարդն է մենակ, որ գաթդ ունի.
Մարդու վերքը, մարդու ցավը
ո՞չ տակ ունի, ո՞չ չափ ունի.
Է՜յ անցավոր, անսիրտ աշխարհ,
քեզի հազար երնե՜կ կուտանք,
Որ չես զգա քու մեծ վերքը,
որ տակ չունի, որ չափ չունի։
Մեր խնդիր երգն է մենակ մարդը
անմրխիթար սրտոր համար.
Մեր խնդրի երգն է քու մեծ վերքի
խոր մրմունը, ունայն աշխարհ.
Ցրտերի պես եկա՞նք-կ՚երթանք,
երազի պես դուն էլ կ՚երթաս,
Մարդաս ինչանքն էլ ցավիդ երգն է,
մարդաս երգ է, երգ-աշխարհ...

1900 հունիս,
Ֆյոնախտ

Սալոն ձորերում, կրովի ձորերում
Հայդուկն է ընկել խոր վերքը սրբտին,—
Վերքը վարդի պես բացված, կարմրբուն,
Ու ձեռքն է դրցել կոտրած հրացանին։

Արևոտ դաշտերում ծրղրիդն է ծրղրում,
Հայդուկն է ընկել մահվան խոր քնով.
Հայդուկը հոգում երազ է տեսնում,—
Հայրենի աշխարհն աշա՛ռ, ապահո՛վ...

Տեսնում է... արտում հովն է շընկշընկում,
Փայլուն դերանդին ղընգում է անո՛ւշ.
Ու փոցխ են քաշում սիրուն աղջըկունք՝
Հայդուկի վրրա երգելով անո՛ւշ...

Սալոն ձորերում ամպեր են անցնում,
Հայդուկի վրրա արծիվն է գալիս.
Ա՜խ, սև աչերը արծիվն է հանում.
Հայդուկի վրրա ամպերն են լալիս...

1900 սեպտեմբերի 19.
Քյուտահիա

Իմ այրող վշտից սիրտս է մաշվել,
Կյանքս է մաշվել, էլ ի՞նչս մնաց,
Լամ ու արցունքս ապի-ծով դառնա,—
Միայն թե մայրս վիշտս չիմանա։

Ա՜խ, գլուխս առնիմ, ընկնիմ սարերը,
Զարկե՛մ քարե-քար, զարկեմ քարե-քար.
Սիրտս դայլերին թող բաժին դառնա,
Միայն թե մայրս մահս չիմանա։

1900 նոյեմբեր,
Ցյուրիխ

Տխո՛ւր, գլխակո՛ր, սիրտս դարդի ծով,
Նստել եմ շըվար՝ Արաղի ափին.
Սև ագռավն եկավ սև ամպի փեշով.
Գլխիս փաթ տվավ Արաղի ափին։

Ջահելությունըս անցա՛վ, սև անցա՛վ
Արաղի գարնան մութ ջրերի պես.
Շաչով, շառաչով անցավ, շո՛ւտ անցավ
Էս վարար, ելման գիլ ջրերի պես։

Կրռավե՛, ագռա՛վ, չոր գլուխըս լա՛ց.
Սիրտըս ամայի — աշխարհն ամայի.
Տե՛ս, աչերս լցվել ու ամպ են դարձել,
Բայց լա՛լ, սրտանց լա՛լ չեմ կարող հիմի...

1901,
Վիեննա

ԱՐԱՋԻՆ

Մեր սարերեն, խո՛ր ձորերեն
Պրղատո՛ր-պրղատո՛ր կուգաս, Արա՛զ,
Մեր սրտերեն, խո՛ր աչքերեն
Արուն քամեր, կերթա՛ս, Արա՛զ...
Մեր սարերեն, մո՛ւթ ձորերեն
Ոլո՛ր-մոլո՛ր կերթաս, Արա՛զ,
Ա՜յ, սարե՛ր, ջան սարե՛ր,
Ալմաստի՛ սարեր...

Քանի՞ հարուր-հարուր տարի
Մեր սրտերեն ելեր, կերթաս.
Մեր դարդերով, մեր ցավերով
Խոլո՛ւ-մոլո՛ր կերթաս, Արա՛զ.
Մեր սարերեն, մո՛ւթ ձորերեն
Մեր դարդերով կերթա՛ս, Արա՛զ,
Ա՜յ սարեր, Հայ-սարե՛ր,
Ջան անո՛ւշ սարեր...

Ու դարերով, մեր դարդերով
Էս աշխարհի քաք-ապառած,
Անդուք խրղճին միշտ դարձնելով՝
Տրխուր-տրտում կեցքիս, Արա՜զ...
Մեր սարերեն, խոր ձորերեն
Արուն քամեր, կուգա՜ս, Արա՜զ.
Ա՜յ սարե՜ր, ջա՜ն ձորե՜ր,
Ջավահի՜ր սարե՜ր...

Ա՜խ, աշխարհը անխղճմտանք
Քեզ չի գրքա, ազիզ-Արա՜զ,
Քու բողոքին, քու մորմոքին
Չի էլ լսի, արնոտ Արա՜զ...
Մեր սարերեն, խոր սրտերեն
Տրխուր-տրտում կերքիս՜ս, Արա՜զ.
Ա՜յ սարե՜ր, Հայ ձորեր,
Զմրուխտի սարե՜ր.

Դուն էլ, Արա՜զ, մեր արունով
Էս աշխարհի խրղճի վրա
Գիզվի՜ր, դարձի՜ր սև-դառըն ծով,—
Թո՜ւյն ու արո՜ւն, ազիզ-Արա՜զ...
Մեր սարերեն, մեր սրտերեն
Արուն քամեր, կերքիս՜ս, Արա՜զ.
Ա՜յ սարեր, Հայ սարե՜ր,
Ջա՜ն, անուշ սարե՜ր,
Ալմաստի սարե՜ր...

1901,
Վիեննա

Ժեռ, սև քարը սրտիս վրա
Գերեզմանիս մութ խորքում,
Դարգի սարը սրտիս վրա՝
Քնել էի հողի քուն։

Գարունն եկավ, Շուշանս եկավ
Տատրակի հետ ձայն տվավ,
Տատրակս եկավ, քարիս նստավ,
Ինձի անուշ ձայն տվավ։

«Ե՜լ, ազիզ ջան, Արփաչայի
Ուռիները ծաղկել են.
Ուռիներեն ճյուղը եմ բերել՝
Քեզի իրենց կանչում են։

— «Ե՜լ, ազիզ ջան, գարունն եկավ
Ալ-բալ հագան սար ու ձոր.
Քեզի շաղաղ վարդ եմ բերել,
Նրանք, մանգ գանք սար ու ձոր։

«Ե՜լ, ազիզ ջան, հովն է բուրում,
Գառն ու ոչխար ապն հյան.
Ալագյազը սկսան է քացել.
Ալագյազին տես նպանք»...

Ա՜խ, ժեռ-քարը սրտիս վրա,
Հոր, հին վերքը սրտիս մեջ.
Ու վեր էլնել հս չըկրցա,—
Սերն էր մեռել սրտիս մեջ։

1901,
Ցյուրիխ

Երազիս տեսա, որ ծովի ափին
Ես ընկած էի խոր վերքը սրտիս.
Եվ ալիքները մեզմ ծփում էին՝
Անուշ օրորով ինձ անդորր տալիս։

Երազիս տեսա, որ ընկերներս
Ուրախ երգելով անցան ծովափով.
Սակայն... ոչ մեկը ինձ ձայն չտվեց,
Իսկ ես լուռ էի մահվան խոր վշտով...

1901,
Ցյուրիխ

Դեպի անապատ հոդմը կըսուրա,
Խոր լռության մեջ կանցնի, կմարի.
Դեղին քարերն իմ շիրմի վրա
Կըբուսնի մենակ տատասկը վայրի։

Եվ անապատում, և հավերժական
Անուրջում հոգիս կըլսե, կզգա
Ղողանջը զանգի տիեզերական
Եվ մեղմ կըդգվե տատասկին դժնյա...

1901 մայիսի 26,
Լեզո (Վենետիկ)

... Եվ ո՜ւշ գիշերին հոգնած մի ալիք
Լացով, հառաչով եկավ ու ընկավ
Գիրկը մայր-երկրի...
Ա՜խ, ճակատս հոգնած ո՞վ շոյե պիտի.
Եվ ո՞ւմ սիրտն է բաց — այս հեռո՜ւ, օտա՜ր
Ափում ինձ համար...

1901 հունիսի 2,
Վենետիկ

Սամբերդ հյուսել՝
Կանդնել ես կալը,
Օրըս սև արել՝
Կապել ես սալը։

Փշերն ինձ թողիր,
Դու չուղիր վարդը,
Դու միայն տրցիր
Էս դժար դարդը։

Սարեսար արիր,
Ու դադար չունիմ,
Դարդամահ արիր,
Անունիդ մեռնիմ...

1901 սեպտեմբերի 12,
Բասել

Կյանքի ժրտրից մտա անապատ.
Գիշերը նկով, բաղմեց փառավոր,
Եվ հոգնած հոգիս մեղմիկ ու հանդարտ
Գիշերը գրկեց...
Աստղերը երկնի անհուն խորքերից
Անհուն հայացքով զարթնեցին նորից։
Եվ խաղաղ, անդուր մի խոր լռություն
Սուրբ անապատում փռվեց, ծավալվեց.
Պահ՝ խորհրդավոր և հանդիսավոր—
Եվ հոգիս հալվեց վեհ լռության մեջ...

1902

Անտուն թռչնակս, իմ խեղճ, տխուր երգ,
Դու խղճալ Քեզ իմ սիրող սրտիս.
Գլուխ գնելու մեկ տեղ դու երբեք,
Գիտեմ, չես գտնի, ինչքան թափառես։

Այս փուշ աշխարհում, քար-սրտերի մեջ,
Երգ ի՛մ, քեզ համար վայել վայր չկա,
Դու՝ օտար թռչուն, ժեռ քարերի մեջ,
Դու՝ կյանք, դու՝ տանջանք — շուրջդ անդգա...

1902

Եվ ճամփեքի մեջ, անապի դաշտում
Մենակ, անընկեր, ընկած եմ մոլոր.
Չորս կողմից հողմը փերեսս է շաղում,
Եվ հոգիս խոժոռ, և ձիրաքս խոժոռ։

Սիրտս գթով լի՝ մարդկանց մեջ մտա,
Բայց ողջույնի տեղ կռվի կոչ տվին.
Կյանքի գոռ կռիվ՝ կատաղի, դժնյա,
Ուր որ ամենքը ամենքի ընդդեմ
Դաշույն են սրում՝ սիրտ փոխարեն։

Եվ կյանքի կռվից վիրավոր, հաղթված
Ընկած եմ հիմա ոչ ոքում վաղի.
Շուտով կտեսնեն աչքերս սառած,
Բայց նրանց խիղճը երբեք չի խայթվի...

1902

Սարի հովի պես ամպերի փեշով
Արծրվի թևին դարկեմ ու երթա՛մ.
Ջինջ աղբյուրի պես դալուկ անտառով
Չոր տերևները գրկեմ ու երթա՛մ...

Ա՛խ, կյանքիս թռչնից ու ցընորքներից
Գնացին աշնան հավքերի նման,
Դու էլ ծաղրեցիր վատ արցունքներիս,—
Սիրուս հրապը ոչրամ ու երթա՛մ...

Վարդի ու դալնան անուշիկ երգեր
Կյանքի ափերից զըլզըլա՛ն, կուգա՛ն...
Է՛հ, բավական է... Ես վաղ եմ հանգել,
«Մնաք բարև» մրմնջա՛մ, երթա՛մ...

1902

Ամեհն անցավ, եկավ գարուն,
Հալով բանձրիկ սարերու ձուն.
Ճամփա բացվավ դարիրներուն։
Իմ զարիրին խաբար չի կա.
Աչքս ճամփին՝ դաղար չկա։

Զարիր երկիր՝ ամպ ու մշուշ,
Իմ զարիրի սիրտն է քըրքուր,
Ամ կիսոխի՝ քրտա ու փուշ...
Հերիք մնա՛ա, դարձի վաքման,
Իմ ախպե՛ր ջան, ազիզ յա՛ր ջան։

Ջուրն է պրծել՝ կուգա սարեն,
Սարեն, ձորեն... իմ աչքեն...
Մի՛ նորոգիր սրտիս յարեն։
Դարձի վաքման, հոգն անուշ է,
Հոգն անո՛ւշ է, ջուրն անո՛ւշ է...

1902,
Բասեն

Էս ինչն է ամպում վիլ թևին կուտա,
Գարնան գոլքասան արտո՞ւտն է նիշուն
Ու ձենը ինչո՞ւ զարհուրիկ կուգա,—
Վա՛խ, էս ագռավն է գլխիս պտտվում։

Ես ուրտեղ կերթամ՝ դու հետս կուգաս,
Ինձեն ի՞նչ կուզես, ա՛յ գոլում ագռավ,
Երազիս մեջն էլ վրաս կը՛դառնաս,
Ինձեն ի՞նչ կուզես, սեռաբ՛ռա տգռավ։

Արդյոք չլինի՞, որ դու էլ գիտես,
Թե ծաղիկ սիրտը դարդամահ մեռավ.—
Ազիզ մեռելը քրքրե՞լ կուգես,
Ջիվան մեռելը, ա՛յ իմ բախտ-ագռավ...

1902,
Բասեն

Է՛յ կանանչ ախպեր, դու բարով եկար,
Դո՛ւ բարով եկար, իմ կանանչ ախպեր։

Մով մանուշակով ծաղկուն սարերեն
Արտուտն ու արոս ինձի ձեն տվին,
Ու գարնան անուշ արևն ոսկեղեն
Ինձի ձեն տվին՝ սար ու ձոր ելնիմ։
Ծրանի՞կ ձեզի, սարեր ու ձորեր,
Նիշուն հագել եք գարնան զուքսերով.
Ա՜խ, սիրտս մեռավ ծով-դարդերի մեջ,
Գարնան զուքսերին մնաց կարոտով։
Է՛յ սարեր, ձորեր, դուք առաջվանն եք,
Ջրեր կլկլան, դուք առաջվանն եք,
Լոկ մենակ ես եմ փոխվել ու չորցել,
Բլբո՛ւլ ու բաղեր, դուք առաջվանն եք,
Ա՜խ, ես եմ փոխվել ու աշխարհի մեջ
Հիվանդ ու անհույս ճամփորդ եմ դառել,
Ու անդարձ ճամփով կերթամ մթի մեջ,
Արև-արեգակ, դուք առաջվանն եք...

Է՛յ կանանչ ախպեր, կուզաս գալ-տարի
Ու գերեզմանս մամռով կզուքես,
Իմ կանանչ ախպեր, գալդ միշտ բարի,
Խնդճ գերեզմանս մաքեդ չգցես...

1902,
Կաղզվան

Նարկա եղա սիրեկանիս պռակին՝
Ուրախ դեմքով, կրծքիս ծաղիկ արնավառ,
Որ ինձ տեսներ, իրեն ուտեր գայրագին՝
Թե գրուժն իր՝ արժեք չունի ինձ համար,
Աչքիս նայեր, կարդար անհույս իմ հոգին,
Խիղճը խոցվեր, իրեն դահիճ միշտ զգար։

1902,
Բաքու

Եվ վաղո՜ւց, վաղո՜ւց խոր քուն է մբռնած
Կյանքի տաղտուկից հոգնած իմ հոգին.
Սակայն տեսնում է մի մե՛ծ, վեհ երազ
Իմ ցի՛նչ ու մաքուր, իմ խորունկ հոգին։

Տեսնում եմ ահա՛, որ բարձունքներից
Իջնում է մի կույս լաջո՛ւր թևերով,
Որ զարթնեցրեն, թրոցնե հոգիս
Երկնի համբույրով, ասուղների բույրով։

Ե՛վ տիվ, և՛ գիշեր ես սպասում եմ,
Թե ահա կըգա կույսը դյութական,
Որ զարթնած հոգով երգեմ վեհորեն
Երազս չքնաղ, մարգարեական...

1902,
Բաքու

Արադի ափին բոստանս լինի,
Սալվի ուռ տընկեմ, վարդեր ու յասա.
Հով ուռենու տակ քողտիկս լինի,
Օջախիս միջին կրակ բոցկլտաս։

Ու սրտով սիրած Շուշանս լինի,
Օջախիս կողքին գուրգուրենք իրար.—
Արադի ափին բոստանս լինի,
Ծով-քրտինք թափեմ Շուշիկիս համար։

1902,
Բաքու

Թափ կուտամ թևերս և կըսավառնեմ
Այս զազիր, նանիր երկրից դեպի վեր.
Այն վառ աստղերը համբուրել կուզեմ
Եվ սուրա՜լ, ճախրե՜լ աստղերից աստղեր։

Թա՜փ կուտամ թևերս և կըսավառնեմ
Խորքերը դեպի մեծ տիեզերքի.—
Աբեներ խըլեմ — պատգամներ վըսեմ
Մի ազա՜տ, պայծա՜ռ, մի նորո՜գ կյանքի։

Թա՜փ կուտամ թևերս և կըսավառնեմ
Ջերծ ձեր օրենքից, բըռունցքից դաժան.—
Իմ անհատական ոլորտը կուզեմ,
Ուր կամքըս լինի օրենքըս միայն...

1902 փետրվար,
Ախալցխա

Հոգիս մըռայլ էր.մըրրկի նըման,
Եվ ծանր էր վիշտըս, և ես քուն մտա,
— Ինձ տանում էին դեպի կախաղան,
Եվ խոժոռ ճակտիս սլըսակ տատասկյան։

Եվ խոսքըս մութն էր, և խոսքըս՝ հըրդեհ,
Ես փշրում էի սըրտերը մարդկանց.
Եվ խոսքըս մութն էր, և խոսքըս՝ հըրդեհ,
Ես այրում էի սըրտերը մարդկանց։

Ինձ տանում էին դեպի կախաղան
Սըվիններով տակ պինավառ գոթքի.
Եվ հետևում էր ամբոխն ինձ անձայն,
Ամբոխը հոգու և նանիր խոսքի...

Ինձ բարձրացրին դեպի կախաղան
Եվ ճակտիս՝ ցնորք և վսեմ պսակ,
Ամբոխը սակայն թշվառ և ունայն
Խուրձն սողում էր իմ ոտների տակ...

1902 փետրվար,
Ախալցխա

Էս ջինջ աղբյուրն է՝ ուրախ, կարկաչուն,
Վարդերի միջով ձորն ի վար կերթա,—
— Ա՜խ, էս իմ յարն է՝ սիրուն, քըշքշուն,
Ուրիշ տըղի հետ պըսակի կերթա...

Դու պըսա՞կ կերթաս քո նոր յարի հետ,
Բարով վայելես, իմ ազիզ քուր ջան,—
Ես էլ յար ունիմ հեռո՜ւ տեղերում,
Նոր սիրուս հիմի զուգվիմ, տես կերթամ։

Սև ձիս կընստիմ ու սև գիշերին
Ասպարեզս կապած, կերթամ յարիս քով.
Իմ սիրըս հիմի մեջ քոլին, չոլին
Ինձի կըսպասե սիրտը կարոտով։

Հե՜յ, փոթորանքն է իմ հարսը՞ ազիզ,
Վիշապ-քամին է յարըս աննման.
Կերթամ սիրվելու, սիրելու նըրան
Ու տաք գըրկի մեջ մեռնելու կերթամ...

Էս իմ բարդիքն են, անուշ կըխըշան,
Ու ձայնը կ'երթա հեռո՜ւ, շա՜տ հեռո՜ւ,
Ա՜խ, շա՜տ կըլսես էս ձայնը, մեր ջան,
Բայց բալիդ ձայնը էլ չես լսելու...

Կընկնիմ չոլի մեջ հեռո՜ւ, անգյուման,
Ավազների մեջ. բարկ արևի տակ.
Ա՜խ, ձիս կըփոքն ինձի գնդեցման,
Ու քուն կըմբռնեմ դարդիս հետ մենակ...

1902 հուլիս,
Նարինջամիշ

Վառ երկինքը լուռ գիշերով
Երկրի կուրծքը համբուրեց.
Աստղ-աչերը լցվան սիրով,
Սվկիանոսը խոր երգեց։

Ո՞ւր է փախչում հոգիս անհուն
Այս աշխարհիս իրերից.
Եվ իրերի անդրաշխարհում
Ի՞նչ է պարում, տենչում նա
Միայն ես էլ չեմ հասկանում ինձ,
Եվ ես էլ ինձ չհասկացա։

1902 օգոստոս,
Հարս

— «Որսկան ախպեր, սարեն կուգաս,
Սարի մարալ կըփընտրես.
Ասա՛, յարա՞ք դուն չըտեսար
Իմ մարալըս, իմ բալես.

Դարդի ձեռքեն սարերն ընկավ,
Իմ արևս, իմ բալես.
Գըլուխն առավ, քարերն ընկավ
Իմ ծաղիկըս, իմ լալես...

— «Տեսա, քուրի՛կ, ներքշուն բալեդ
Կարմիր-կանանչ է կապեր,
Սիրած յարի համբուրի տեղ
Սըրտին վարդեր են ծըլեր».

— Որսկան ախպե՛ր, ասա, յարաբ
Ո՞վ է, հարսը իմ բալես,
Ով է գըրկում չոր գըլուխը
Իմ մարալես, իմ լալես։

— Տեսա, քուրի՛կ, դարդոտ բալեդ
Քարն է դըրեր բարձի տեղ.
Անուշ քընով տաք գընդակն է
Կըրծքում գըրկեր յարի տեղ.

Սարի մարմանդ հովն է շոյում
Ճակտի փունջը մարալիդ,
Ծաղիկներն են վըրան սըգում,
Ագիզ բալիդ, խեղճ լալիդ»...

1902 նոյեմբերի 19,
Բալախանի

ԱՆԴԱՐԶ ԳՆԱՑԱԾ

Ամպերն են իջնում բարձր քերծերից,
Թոչնակըս ինչո՞ւ այսքան ուշացավ,
Դողում է սիրտս մռայլ կասկածից,
Ու մութը քանի գնաց, թանձրացավ։
Եվ ճեղքելով ամպ ու մշուշ՝
Անգղն եկավ՝ ճանկերն արյուն...

Ու մութը քանի գնաց, ծանրացավ,
Սիրտս հուսահատի՝ բոլոր է տխուր.
Իմ խեղճ թռչնակս, ապրելը, ի՞նչ եղավ,
Վայում է քամին դաշտերում թափուր։
Եվ ճեղքելով մլայն ու մուժ՝
Անգամ նկատի՝ կատուն ապշած...

1903

Ես գիտե՛մ, գիտե՛մ, որ կյանքիս շնչիցդ
Խոր տառապանքն է ինձ բաժին ընկել,
Եվ թե՝ առանց վիշտ, և՛ թույն, և՛ թախիծ
Անկարելի է անհունը գրկել։

Թո՛ղ վիշտս լինի անեզր ու հոմեր,
Ես չեմ երկնչում դժխեմ տանջանքից.
Միայն թե մնա հավատս անեղծ
Թե՛ դեպի մութը և թե՛ դեպի ինձ։

Եվ առագաստներս ես լա՛յն կբանամ,
Կլողամ վերն՝ հուսանքին ընդդիմ.
Այրված հոգուցս նո՛ր խոսքիր դիտում,
Ինչպես բյուրեղներ, մաքո՛ւր ու վեհ մ...

1903 հունվար

Է՛լ ինչո՞ւ երգեմ.— ապրանս օգներում
Արևով լի լցված սիրտս, խնդմ սիրալր
Մարում, հանդչում է ճնշված կրծքի տակ.
Մեծ է տանջանքս... աչքերիս առաջ
Ողջ կյանքն է ընկած, ինչպես պա՛տ դիակ...

1903

Լքում եմ ղողանջն տիեզերական,
Ոգիս բացվում է անծիր թևերով.
Անծիր թևերս գրկում են համայն
Աշխարհն-աշխարհ և ծովերն-ծով։

— Բացե՛ք դարպասներն ձեր պալատների,
Ոգու հարության լույսն եմ ձեզ բերում,
Ես եմ գնիչուք անուրանների,
Եվ վառ ճառագայթ մրապյալ ամպերում։

Եվ մարդարեի հուրն է իմ կրծքում,
Սուրը իմ ձեռքում, բարբառս՝ ազատ.
Եվ ինձ Հովիտյան անմահ եմ զգում,
Եվ երկրի վերա քայլերս՝ հաստատ...

1903

Մնացի կարոտ իմ հայրենիքին,—
Օտար աշխարհում, լուռ թափառական.
Կարոտ մայրենի սրտագին խոսքին,
Մնացի մենակ, խեղճ որբի նման։

Իմ սիրտն այնտեղ է, ուր ասուղամերկ
Լեռներն են կանգնել հագած կուռ զրահ,
Ուր եղջերուն է ոստում քարից քարե,
Արծիվը ճախրում վիհերի վրա։

Իմ սիրտն այնտեղ է, ուր նախնիքը մեր
Կերտել են շքեղ կոթողներ հովերի,
Ուր ժողովուրդը վսեմ վեպը մեր
Պատմում է դարձյալ հավատով անշեջ։

Մա՛յր իմ ժողովուրդ, դեպի քեզ կըգամ,
Կըգամ դեպի քեզ, հայրենի՛ աշխարհ.
Ինչ որ վեհ ունիմ, սիրով ձեզ կըտամ,
Եվ սիրտս, կյանքս միայն ձեզ համար։

1903

Մշուշն եկավ, թեը փռեց,
Ծովը ծածկեց, մեր՛կ ջան,—
Ա՜խ, իմ դարդը ուրուրի պես
Սիրտս կերավ, մեր՛կ ջան...

Կուզեմ չքվիմ, կուզեմ կորիմ,
Փոքրիկի մեջն ընկնիմ.—
Փոքրիկին խեղճ սիրտս ասեմ,
Չար ուրուրեն ազատվիմ։

Ու դիա՛ս ըմ՛ռ, մեր՛կ ջան,
Ծովը նետե ժեռ ափին.—
Սիրտս՝ հարհանգ, սիրտս՝ անդարդ
Ընկնում էն լո՛ւռ, լե՛ռ ափին...

1903

Լազուր երկնքով ամպեր են անցնում,
Ու սալվի ուռին կուլա գետափին.
Ամպերի շուքը դաշտանքն է ծածկում,
Սիրտս կրծում է կսկիծը խորին...

Վառ արևն հանգավ սարերի հետքում,
Մութը թևերը փռեց ամեն ոլոր.
Անցյուման դարդը սիրտս է մաշում,
Ա՜խ, ծաղիկ թառամ, ընկե՛ր իմ անգին...

Ո՞ւր ես, հոգի ջան, չկա՞ս դու հիմա,—
Հողերուն հավասար ու անգերեզման.
Ա՜խ, քամին հիմա վերադ կըսգա,
Դու չե՞ս իմանում, ազի՛ղ ընկեր ջան...

1903

Ես ձեզ ասում եմ՝ կըգա ձեզու սով,
Եվ դո՛ւք կըբաղցեք ձեր ունգանի մոտ,
Կընկնեք մուրալու հագրած որկորով՝
Հերիզեն խոսքի, վեհ խոսքի կարոտ։

Լրբենի հարյուր սրհամարձեցիք
Ոգու վառ գանձերը — հիսար ու երազանք,
Նյութի տաճարում արված զոհեցիք՝
Մոռացած անմահ, անհունի աննշանք։

Դուք, որ հեղնեցիք ուժն ստեղծագործ՝
Ձեր նյութի հանդեպ կըգա ձեզու սով.
Եվ մուրացկի պես փշրանքի համար
Ծարավ ու նոթի կանցնեք ծովի ծով...

1903,
Բաքու

ԸՆԿԵՐԻՍ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Ա՜խ, նորից եկավ լալազար գարուն,
Թավշյա դալարով շնչեցին արտեր.
Նորից ծաղկեցին աղբյուրաց-արուն,
Հազար բուրմունքով հազարան-վարդեր.
Ավա՜ղ, նա, որին շա՜տ էր նըմանում
Գարունը սիրուն, նա չկա հիմա.
Նրա հետ մեռավ սեր ու խնդություն,
Նրա հետ մեռավ երգը գարունքվա։

Եվ քարե-արգունքով կուրծքս իմ ծեծում
Ու չեմ հասկանում, մի՞թե մեռար դու,
Դո՛ւ, որ երգ էիր, աշխույժ ու կրքոտ,
Ինչպես ես մնում սառ հողերի տակ,
Ինչպես չես ելնում, արևը երգում.
Այդպես լո՛ւռ, անշարժ մինչև ի՞րբ մնաս
Գարնան զարդերին համբր, անտարբեր,
Դո՛ւ կյանք, դո՛ւ երազ, իմ անո՛ւշ ընկեր...

1903,
Բաքու

Ի՞նչ ես գաղազում, ի՞մ վիրավոր սիրտ,
Որ գաղազում ես, ի՞նչ պիտի անես.
Աշխարհը իրեն ճամփով կընթանա,
Դո՛ւ խեղճ, դո՛ւ անզոր, ի՞նչ պիտի անես։

Մարդն այս աշխարհում, ինչպես մի թռչուն
Անդուռ ու անել մեծ վանդակի մեջ.—
Սի՛րտ իմ, գաղազիս, ի՞նչ պիտի անես
Անդուռ ու անել այս վանդակի մեջ։

Մարդ ծընած օրից գերեզմանի հետ
Շղթայված է պիրկ, ո՛ւր էլ որ երթա.—
Սի՛րտ իմ գաղազիս, ի՞նչ պիտի անես,
Ո՞ւր պիտի թռնես թևերիդ շղթա։

Տոկա՛, համբերիր, ի՛մ վիրավոր սիրտ,
Վրճիտ հայացքով աշխարհին նայի՛ր.
Աշխարհը իրեն ճամփով կընթանա.
Է՛յ, վիրավոր սի՛րտ, դու մի՛ գաղազիր...

1903,
Ալեքսանդրապոլ

Այս ցինջ գիշերիս անո՛ւշ կըքաշան
Մարմանդ հովերով իմ սոսինարը,
Ու երազներով սիրտ հուշերը
Չարդված արտիս մեջ շարեշար գայթեան։

Անցա՛վ, ըքաշա՛վ բուլբը իմ արտից,
Մարան հրգերս՝ շքե՛ղ, մարգարտյա՛,
Ա՛խ, զարուն-սիրտս է՛լ հա չի դառնա,
Ինչքա՛ն հեռու են կյանք, աշխարհն ինձնից։

Սիրուն առըվա ջրերը Գիմա
Մակում է սիրտս անհուն տանջանքով։
Թոշնան վարդերս զառ կոկոններով.—
Ա՛խ, զարուն-սիրտս է՛լ հա չի դառնա...

1903,
Ալեքսանդրապոլ

ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՁԱՆԳ

Ազատության Ձա՛նգ, դու վե՛հ դողանջե՛
Կովկասյան վսե՛մ, վե՛ս բարձունքներից,
Ինչպես մրրիկ՝ շաչե՛, շառաչե՛,
Մինչև սիգապանծ ազատն Մասիս։

Անհագ վրեժի և ըմբոստացման,
Ե՛վ բուռն ցասման բարբառը հնչե՛,
Ժողովուրդների անվա՛խ, ինքնիշխա՛ն,
Դաշն ազատական խրոխտ դողանջե՛։

Լեռներից խրճիթ, և ձորերից-ձոր,
Եվ արտերից սիրտ ճայնդ փո՛ղ թռչի,
Եվ ընդվզումի պատգամդ հզոր
Հավիտյան անդուռ երթք փո՛ղ չհանգչի։

Ըմբոստ ոգինե՛ր, թե առե՛ք, հասե՛ք,
Եվ զանգահարեք ամո՛ւր, մինչև մեռ՛ա.
Ձանգն ազատության զանգահարեցի՛ք
Կովկասի համար հանո՛ւր, ընդվզեցո՛ւր։

Եվ որտա՛, Ձա՛նգ, և արթնացրո՛ւ
Դարավոր նիրհից Մասիսն ու Կապրեկ,
Թափ տո՛ւր թևերդ, արծի՛վ լեռներո՛ւ,
Քընած առյուծնե՛ր, բաշերդ թոթվե՛ք։

Եվ բավական է՝ անարդ լծի տակ
Մենք ստրուկ մնանք՝ ձեռներիս շղթա,
Կապանք փշրելու մեզ թո՛ւյն ու կրակ,
Մեզ ուժ և կորով, վրեժ որտա՛.

Եվ մեզ ամենքիս մրոնչա՛, կոչե՛
Մահվան ու փառքի դաշտը պայքարի.
Սրբազան ռազմի շեփորը զոչե՛,
Ընդդեմ բռնության, ամբարիշտ Չարի։

Եվ ազատության նորոգ արևի
Ոսկի ներբողերդ, Ձա՛նգ, գրվարթ հընչե՛.
Բյուր զագաթներից ազատ Կովկասի
Սուրբ եղբայրության տոնին մեզ կանչե՛։

1903,
Ղազարապատ

ԻՄ ԱՂՈԹՔԸ

Սիրտս ահա — դատարկ անոթ,
Լցրու նրան, ո՛վ բնություն,
Քո ուժերով, քո զորությամբ,
Իմաստությամբ ստեղծագործ։
Սրտիս խորքով հավատում եմ

Քո գեղասքանչ հրաշքներին,
Անհունության, հավերժության,
Իմաստության քո անսահման,
Ո՛վ բնություն աստվածային։

1903,
Դիլիջան — Սևան

Եվ սերդ սիրտս կարևոր խոցեց,
Վերջիս այս, քո՛ւյր իմ, դեզ-դարման չկա.
Սիրուս արցունքով աշխարհ թաթախվեց,
Բայց ո՛ւ մնացիր օտա՛ր, անըզգա...

Եվ ո՛ւր լինում եմ, քո սերն եմ երգում,
Սիրտս դեպի քեզ թռչում է հավերժ.
Ուրիշին գրկած՝ ես քեզ եմ զգում,
Ուրիշի գրկում,— բայց քանի՜ եմ հավե՛րժ...

Եվ դու հավիտյան անհաս աստղի պես
Ինձնից հեռո՛ւ ես, ինձնից հեռո՛ւ ես...

1903

Նորից եկան գարնան անո՛ւշ օրերը,
Ցուպս առնիմ, ընկնիմ սար ու ձորերը.—
Սիրտս կուզե հեռո՛ւները սավառնել,
Նո՛ր ուղիներ, նո՛ր աշխարհներ թափառել։

Սեգ ժայռերի վայրի, խոլոր բարձունքներ
Վարդեր քաղեմ ու ճակատս պրսակեմ.
Սարերն ի վեր ամպերի պես բարձրանամ,
Արծվի հետ այրված կուրծքս հովին տամ։

Արևն ելավ ոսկի հոսքերով ոսկիին,
Զառ հավքերը թիար ամո՜ւշ ցոլն տվին,
Սիրտս զվարթ՝ արտոտի արևս թլուվիում՝
Գեղի արև, դնար ճոնիր է թիրանում

Եղնիկները ցողաշաղաղ սարն նայան,
Նրանց հետքից թռչկոտելով սարն երթամ.
Խարույկի շուրջ, հովիվների, հոտի քով,
Սեբս երգեմ՝ քաղցրը շլվին ծոր տալով։

Որտեղ մբռնի, այնտեղ քնիմ միայնակ,
Վառ աստղերի, կապույտ երկնի ծածկի տակ.
Ուրինելը հովիվի հետ միասին
Ինձ գուրգուրող օրոր կասեն՝ որ քնիմ։

Եվ ծեգը ինձ հանգստության ձեն կրտա.
Կուրծքս լիքը թարմ բուրմունքով կլվենդա...
Ու կարկաչուն աղբյուրների ցողերով
Կբլվաշվիմ և կրճատվեմ նոր ճանփով։

Կերթամ հետո՝ անապատներ ու ծոփեր,
Կբթափառեմ անհայտ վայրեր, աշխարհներ.
Ուրիշ ազգեր, ուրիշ սրբեր տեսնելու
Եվ ամենը հասկանալու, երգելու։

Եվ բընության հրաշքները կբանեմ,
Նրա լեզուն, հաղար տեսակ, կբլսեմ.
Ուրիշ երկինք, ուրիշ աստղեր գրկելու...
Եվ ամենը խորն զգալու, երգելու...

Է՛յ դու, ածղին, թափառական, վսեմ կյանք,
Հեռուների, անհունների իմ տենչանք.
Քո շնորհիվ հրեղե՛ն եմ, թեավոր,
Աշխարհն իմս է, գրչիս տակն եմ ու հղոր...

1903
Օդեսա

Ա՛խ, սիրտս անմեր ու սիրտս անմեր
Որբուկի նման,
Չոր-գիշեր կուլա, բո՛ւն-գաղար չունի.
Ու ինչպես մորը, հարազատ մո՛ր,—
Սիրուս կրկանչի,
Որ գիրկդն ընկնի, ցավ-կարոտն առնի...

Սեբս մեներ է ու կանանչ մեներ,
Է՛լ հետ չի դառնա,—
Իմ խե՛ղճ, իմ ո՛ որ սիրտ, ինչքա՜ն մորմոքես,
Է՛լ քեզ գուրգուրող ու քեզ գուրգուրող
Աղիզ մեր չկա,
Ու նանիկ ասող, որ անո՜ւշ բնիս...

Ա՛խ, առանց ծաղկի ու առանց վարդի
Իմ կարոտն անցավ,
Ու խեղճ բլբուլս շա՜տ կանուխ լռեց.
Էն սե՛ ուրուրը ու սե՛ ուրուրը
Չոր գլխովս անցավ,
Բլբուլս ահռելի թևերը թափեց...

Է՛խ, իմ գարաքաշ ու իմ գարաքաշ
Չոր գլուխս առնեմ,
Գա՛մ թափառելու ափերդ, Արա՛զ.
Քարի-արցունքս, արուն-արցունքս
Չբերուդ խառնեմ,
Լա՛մ թափառելով ափերդդ, Արա՛զ...

1903
փետրվարի 25

Էն ամպի նման խաղ դրոտանով—
Սիրտս դարդով լի՝ կբռվի դրնաքի.
Էն ամպի նման ժեռուտ սարերով,
Քուրի՛կ ջան, քեզնից հետո՛ւ գընացի...

Էլ մի՛ որոնիր քո ազիզ յարին
Կրակից ետ դարձող կրակիճների մեջ,
Մենակ փընարիր դո՛ւ իմ քաջ սևուկին
Անաչք խրրխրնչող՝ լուռ դաշտերի մեջ...

Էլ մի՛ որոնիր քո ազիզ յարին
Իմ ընկերների ուրախ խրնչույքում.
Բանձրիկ սարերից սոնացող քամին
Վրաս մի բուռ հոգ կրոցն դաշտում...

Ու օտար մայրիր ինձի տես կուգան,
Սև հոգիս վրա արցունք կրթափեն.
Ա՜խ, օտար քուրիր ինձի տես կուգան
Ու վրաս անո՜ւշ ծաղկունք կրթափեն...

1903 հուլիսի 16,
Ղազարապատ

Օտա՜ր, ամայի՛ ճամփեքի վրա
Իմ քարավանքս մեղմ կրդոդանչե.
Կանգնի՛ր, քարավանս, ինձի կրթվա,
Թե հայրենիքիս ինձ մարդ կրկանչեն

Բայց լուռ է շուրջբս ու շրշուկ չրկա
Արևա՜ռ, անդո՛ր այս անապատում.
Ա՜խ, հայրենիքքս ինձ խորթ է հիմա,
Ու քնքուշ սերքս ուրիշի գրկում։

Կրնոջ համբույրին է՛լ չեմ հավատա,
Շուտ կրմոռանա նա վառ արցունքներ.
Շարժվի՛ր, քարավանս, ինձ ո՞վ ձայն կրտա,
Գիտցի՛ր, լուսնի տակ չրկա ուխտ և սեր։

Գրնա՛, քարավանս, ինձ հետդ քա՜շ տուր
Օտար ամայի ճամփեքի վրա.
Ուրտեղ կհոգնիս՝ դրլուիքս վար դիր
Ժեռ-քարերի մեջ, փրշերի վրա...

1903 հուլիսի 31,
Ղազարապատ

ԵՐՈՒՇԻԿԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Կապույտ լեռների լանջերի վրա
Մուգ անտառներն են մեղմօրոր նիրհում,
Ժայռոտ ափերին ծովն է փիրուզյա
Իր ոսկեճաճանչ քղանցքը փռում։

Նազելի աղջիկ, մանուկ, մանկական,
Խավարի միջով փայլնցիր, անցար.
Հոգիդ երազի ջինջ երգի նման,
Ե՛վ սուրբ, և՛ մաքուր, շողացիր, անցար։

Ոչ ոք չտեսավ քո քնքուշ հոգին,
Թռա՛ր, գնացի՛ր հեռու աստղի պես.
Հեռու աստղի պես, քույրիկ իմ անգին,
Ձգում ես հավերժ սիրտս դեպի քեզ...

1903 օգոստոսի 19,
Սևան

Մենակ մանկության օրերն են անո՛ւշ,
Գողտրիկ ու բուրյան, չրքնա՛ղ ոսկեփա՛յլ.
Եվ այնուհետև մեր կյանքը անհույս
Գահավիժում է անդունդը մրոտայլ։

Ու մեկիկ-մեկիկ մեր կյանքի ծառից
Եվ վայր են ընկնում, քրշվում հողմավար
Մեր լավ տենչերը, սերը ծաղկալից,
Վառ համբույրների գարունը պայծառ։

Եվ ո՞վ սիրտ ունի մերկ ծառի նրման՝
Կանգնել աշխարհի հողմերին պատվար—
Կյանքի ձանձրույթին, ծաղրանքին մարդկանց,
Իշխող բբռունցքին՝ չոր հացի համար...

Ավա՜ղ, լուսնի տակ ե՛վ բան չկա,
Ամեն ի՛նչ կոպիտ, բիրտ, անասնական.
Անլույսի, անմարմին, անկիրք սեր չկա,
Ա՜խ, մաքուր սերը երազ է միայն։

Ես շա՜տ եմ լացել սուրբ սիրու համար
Եվ ես լավ գիտեմ գինը ամենի—
Սիրն է անկումը մեր ստոլվածության։
Շըրջմոլիկ հուրը կրակերի ճահճի։

Եվ ո՞վ կարող է օտարին սիրել
Կամ մերձավորին՝ անհան, անտահման.
Ուրիշին սիրել իրենից ավել-
Ընկերին սիրել — պատրանք է միայն։

Եվ ո՞վ կարող է ուրիշին ըզգալ,
Որպես իր նը, հասկանալ նրան.
Ա՜խ, մենք ապրում ենք անծանոթի իրար,
Օտա՜ր ու հեռո՜ւ՝ աստղերի նման։

Բայց բյուր երանի, ով երազ ունի
Իր հոգու անհուն սրբության խորքում. —
Մի շրջեղ երազ, որով նա կապրի
Աշխարհից հեռո՜ւ, բյուրեղ բարձունքում։

1903 դեկտեմբեր,
Ալեքսանդրապոլ

Անուն բամու պես վաղ գուշակ, գիտե՞ս,
Ես շատ եմ ծնծղել ու դու չես բացել։
Սարերն եմ քնկել վշտից խելագար
Ժայռերին զարկվել ու շատ եմ լացել։

Սարերն են վկա, որ օրից մի օր
Վատ չեմ խոսացել, գանգատվել բնչից։
Ավա՜ղ, լցրել եմ լացով սար ու ձոր,
Բայց չեմ գանգատվել, բամբասել բեզնից։

1904

Շատ մի՛ տխրիր, շատ մի՛ խնդար, սիրելիս,
— Այս աշխարհում և ոչ մի բան հիմք չունի։
Վաղանցուկ են, կան ու չկան, սիրելիս,
Բոլոր իրերն ու աստղերը անհունի։

Լայնսիրտ եղիր, ոգին երազ համարել,
— Այս աշխարհում և ոչ մի բան միտք չունի։
Լայը՝ ժրպիտ ու սերը՝ ցավ համարել,
Թե որ ապրես, կյանքդ ինչո՞ւ համար է։

Ախ, մի՛ տխրիր, վիշտը կանցնի,— այդ ոչինչ,
— Այս աշխարհում և ոչ մի բան գին չունի։
Շատ մի՛ հրճվիր, սերն էլ կանցնի, բայց ոչինչ,
Կյանքն էլ կանցնի,— այդ որ ոչինչ ու ոչինչ։

1904

ՀԻՆ ԵՐԳԵՐԻՑ

Ա՜խ, հեռվից հեռո՜ւ թո՜ղ ծունր իջած
Նայեմ վառ դեմքիդ շքնա՜ղ, լուսազգյաց.
Դո՜ւ այնպես սիրո՜ւն,— վարդարույր գարո՜ւն,
Եվ աչերիդ մեջ կյանքն է շողշողում։

Իսկ ես հոգնա՜ծ եմ, անտո՜ւն ու մենա՜կ,
Մի աղքատ շրջիկ՝ ձեր պատերի տակ.
Ա՜խ, թե լինեի՜ ես հարուստ տղա,
Իսկ դու մի խղճո՜ւկ, կորա՜ծ երեխա...

Իմ տաք գրկի մեջ քեզ կրգրվեի,
Եվ կօրորեի ու քուն կրտրվի.—
Դո՛ւ ես իմ սրտի քնքո՛ւշ թռգուին,
Երգիս, երազիս չքնա՛ղ դեցուին...

1904

Լեռները՝ դալար, հալարա հարթանքով
Շարվել են շուրջը այնպի՛ս յո՛ւր, լայնո՛ւր.
Գարունն է բուրում այնտեղ վարդերով
Եվ զողանջում են ակներ ու աղբյուր։

Աստղերն են երգում սրտիս խորքերում,
Հոգիս լցվում է դարնան բույրերով.
Գարնան բույրերով երգերս են զնգում,
Եվ արտասվում եմ՝ քեզ երազելով...

1904

Վարդի շրթունքդդ, աղջի՛կ ալագեղ,
Համբույրի համար հասել է ահա.
Օ՜, մի՛ արձակիր մաղիրդդ շքեղ
Հոգնած, ջարդված իմ կրծքի վրա։

Գարունը վաղուց գնաց իմ սրտեն,
Եվ սիրաբս հիմա՝ ծանրը, վրշտահար,—
Վարդի շրթունքդդ հասել է արդեն
Հնչուն համբույրի, բայց ոչ ինձ համար...

1904,
Նոր-Նախիջևան

Ա՜խ, իմ սիրուս վառ գարունը թոշնեցավ,
Ջառ վարդերս կոկոններում մընացին.
Դալար սրտիս սուրբ արշունքը քարացավ
Ու ծանրացավ սրտիս վրա գառնագին։

Մեռի՛ր, գընա՛... առանց քեզ էլ կյանքը կա,
Ուրիշ վարդեր կըշոշոշան գարունքին.
Ուրիշ շրթներ գուցե վաղը կամ հիմա
Կրհամբուրեն քո սիրածին կաթոգին...

1904,
Նոր-Նախիջևան

Մեկը չեղավ, որ իմանար վշտերս,
Քնքուշ ձեռքով դարման աներ վերքերիս.
Մեկը չեղավ, որ գուրգուրեր վարգերս,
Անուշ բույր տար, վարդի գույն տար երգերիս։

Կյանքս կտամ սրտից բխած համբույրին,
Ա՜խ, թե մեկը ինձ հասկանա՞ր ու սիրե՞ր։
Ի՞նչ կա երկրում և՛ արրազան, և՛ անգին,
Քան թե զոհվել, քան թե լինել անձնվեր։

Բայց ես կյանքում շա՜տ սիրեցի ու լացի,—
Մեկը չեղավ, որ ամոքեր վշտերս,
Սիրող սրտի ծարավ, ծարավ մնացի,
Մեկը չեղավ, որ գուրգուրեր վարգերս...

1904,
Նոր-Նախիջևան

Քաղած վարդը թըփին հետ չի գա նորից.
Հետ չի գա հալված ժամն անցած օրից։

Անցած կյանքըդ հիմա երազ է, մշուշ,
Վիշան ու սերդ անուշ՝ հուշեր են ընդուշ։

Սիրտդ մաքուր պահիր ու բարի աչո,
Որ ամպ չընստի հուշերիդ վրա։

Մի՛ վռազիր... մահին կհասնիս վաղ-ուշ,
Չեզածի պես կանցնին և՛ երազ, և՛ հուշ...

1904,
Մոսկվա

Հասակդ՝ սոս, քայլվածքդ՝ սեգ,
Քեզ սիրում եմ բյուր անգամ.
Թող համբուրեմ մազերդ մեկ-մեկ,
Մեջքիդ բոլոր փաթութ գամ։

Կարոտը ինձ խենթ դարձրեց,
Փոթորկի չափ խելագար.
Խենթ բոցերում ես ծով-ծարավ՝
Թափառում եմ սար ու քար։

Այրվում եմ ես արևի պես,
Հուր ու կրակ եմ անշեջ,
Թող գրկիդ մեջ հոգիս տամ ես,
Սերըս քամեմ հոգուդ մեջ...

1904,
Թիֆլիս

Նման գայլերի խըմբին ամեհի,
Ջըմռան գիշերին ոռնում է քամին.
Եվ իմ պարտեզում — մռա՛յլ, ամա՛յլ,
Խեղճ ուռիներիս ջարդում է քամին։

Ա՜խ, մանկուց լացեց քո սերը, սի՛րտ իմ,
Ոչ ո՛ք չհասկացավ երազդ աղվոր.
Զուր մի՛ որոնիր սիրտ իմ մտերիմ,—
Ծնվել է ոգին հավերժ մենավոր։

Հանի՛ր քո սերը սըրտիցըդ անհույս,
Այդ խորթ, ապօրեն զավակն աշխարհի,—
Զգի՛ր այս դաժա՛ն, մո՛ւթ գիշերին գո՛ւրս՝
Յուրա բամու բերան... Թո՛ղ երթա տարի...

Թո՛ղ լա, հեծեծա, սերըս՝ որբ, անմա՛յր,
Եվ քամին լացը նրա թո՛ղ տանի
Այնկոծ ծովեր, անապատ մի վայր,
Սակայն մարդո՛ւ մոտ... երբեք չընտանի...

Ոռնում է քամին, վայում դըժնդակ
Մռայլ գիշերին ձյուն-ձմեռնային.
Եվ սերըս ջարդված ուռիների տակ
Մեռնում է մենակ.— թո՛ղ երթա՝ մեռնի...

1904,
Ալեքսանդրապոլ

Արարչագործ աստգի առաջ
Վըշտոտ սիրտըս քացեցի.
Հավիրժության աչքի առաջ
Անհույս ու խորթ լացեցի.—

«Ո՞ւր ես վանում ամբ երկրի հետ,
Ինչ է երանելի երազում,
Ի՞նչ ես կրակել մի նյութի հետ,
Դարձրել մահին հրպատակ»...

Եվ մրոայլվեց աչքն արևի.
«Ո՛վ մարդ», դարձավ ինձ ասեց.
«Ես էլ քեզ պես մահվան գերի,
Խարխափում եմ մթի մեջ.
Աշխարհներ են ծրնչում, մեռնում
Շուրջս անհա՛յտ, անհամա՛ր
Ո՞վ է ստեղծում, ո՞վ է քանդում,
Ինչո՞ւ համար, ո՞ւմ համար.—
Հարցիս չկա պատասխան.
Անթիվ դարե՛ր, կուգա՛ն, կերթա՛ն,
Հարցիդ չի դա պատասխան»...

1904,
Ալեքսանդրապոլ

Դո՛ւ անցորդի պես քեզ միայն ըզգա՛
Եվ որպես ճամփորդ՝ այս երկրի վրա.
Աղա՛տ հայացքով նայի՛ր ամենին
Եվ անվերջ քայլիր քո անհայտ ուղին։
Սիրաբդ սրբազան վրշտով թաթախի՛ր,
Հեռավոր ափեր գընա՛, թափառի՛ր.
Անհագ որոնի՛ր մի վեհ ընկերի,
Սիրիր, բայց սիրուն մի՛ լինիր գերի.
Սիրի՛ր, բայց և թո՛ղ, և նորից գընա՛
Ապատ ու մենակ՝ — աշխարհիս վրա։
Եվ երազ մի վա՛ռ, ղքեղ, սուրբ և վեհ
Այս հողի-երկրից հոշիդ թրջնև.—
Կարոտով ձրգտիր աստղերին անշեջ
Եվ մեռի՛ր աստղե-ոլորտների մեջ...

1904 հունվարի 31,
Նոր-Նախիջևան

Ինչպես ուշ աշնան
Ծաղկունքը թոշնան,
Ինչպես ցուրտ ձմռան
Աղբյուրը լռեց
Սառույցների տակ,—
Այնպես էլ, ավա՛ղ,
Կյանքս թառամեց,
Եվ երբոս ուրախ
Լռեց կրծքիս տակ...

1904 ապրիլի 30,
Մոսկվա

Փիշերն երազով, զօրը կարոտով՝
Նազելի տեսքիդ մընացի անհաս.
Աշխարհը հարբեց քո անուշ հոտով,
Մենակ ես քեզնից մընացի անմաս։

Ա՜խ, գոնե տեղը վարդեր ուղարկի՛ր,
Համբուրեմ, գընեմ մարած աչքերիս.
Գոնե վարդերիդ փշերն ուղարկիր,—
Համբուրեմ, զրգվեմ սիրավառ սրտիս...

1904 հուլիսի 22,
Ալեքսանդրապոլ

Զմրուխտյա երգեր, երազներ շքեղ,
Գարնան վարդի հետ եկան, գնացին.
Համբույր ծաղկաբույր և սեր հրաշագեղ
Գարնան հովի հետ եկան, գնացին։

Ուրիշի նման բույն չշինեցիր,
Կյանքի մրրիկով զարկված թռչուն,
Ու հիմա մենակ ու որբ մնացիր,
Եվ թարմ տարիներդ եկան, գնացին։

Անտուն մնացիր ու թափառական,
Ընկեր, բարեկամ եկան, գնացին,
Մոլոր ճամփեքում մնացիր մոլոր,
Քարավան, երամ եկան, գնացին։

Ու հիմա աշնան մեգի մեջ խավար,
Ականջդդ հառած սրտիդ լուռ լացին,
Օտար ափերում կանգնել ես շվար,
Ինչ որ ունեիր, անդա՛ռձ գնացին...

1904 սեպտեմբերի 20

Մռայլ ամպերից, հրդոր կայծակով
Սիրտը շանթահար մի մրրիկահավ
Սովափի խոժոռ ժայռերին ընկավ։
Եվ ընկավ ծածկվեց հողով ու քարով,
Թավ մամուռ պատեց նրա շիրիմին,
Եվ տարիք անցան համբր շարքերով։

Բայց երբ երկնքում էրար դեմ ու դեմ
Ամպերն են իրանվում և որոտում են՝
Հուզված սրտերում կրակ ու կայծակ,—
Նա լուռ հիշում է, որ տարիք առաջ
Իրեն սրտումն էլ տենչ կար ու կրակ,
Որոտ ու գայրույթ և սեր ու շառաչ...

1904 հոկտեմբեր,
Մոսկվա

Եվ անապատից, հեռո՛ւ ծովերից
Եվ դարբասներից, թե խուլ բանտերից
Լսում եմ անվե՛րջ, գիշեր ու ցերեկ
Ողբ ու հեծեծանք մի՛շտ, ամենուրեք.
Տեսնում եմ արցունք ժրպտի հետ հյուսված,
Հոգի հետ արյուն — վի՛շտ համատարած...

Եվ ծով-արցունքներն ոնծայր աշխարհի
Ամեն խորշերից, ամեն սրբատերից
Կաթիլ ու կաթիլ հավաքվում, գալիս,
Թափվում են վրշտոտ, խոցված սրտիս մեջ...

1904 հոկտեմբերի 7,
Թիֆլիս

Երկինքն հիասքանչ, շրջեալ, լուսալից,
Հոգիս արթնացուց լրոությյան երդով.
Եվ այս տաղտուկից, կյանքի անձուկից
Թռավ առավ հոգիս երազ-թևերով։

Եվ տիեզերական խորությունների
Անճառ վայրերում հոգիս սավառնեց
Եվ խորախորհուրդ, վեհ գաղտնիքների
Անխոս բարբառին լուռ ունկընդրեց։

Եվ տեսավ նրա ափերը անծիր,
Անսահմանության սարսափն ահավոր.
Աստղի քարվանների, բույլեր ցանուցիր,
Ուժերի հախուռն հորձանքը հրդեհ։

Եվ երկյուղածին հոգիս հաղորդվեց
Հավիտենության խոհերին վրսեմ,
Անմահ էության հալվեց ու ծուվեց,
Ինչպես մի հընչյուն, հյուսվի մի նրսեմ...

1904 հոկտեմբերի 7,
Թիֆլիս

Նրանք իմ կյանքը հրաշ դարձուցին—
Կուսական մաքուր աչերը անո՛ւշ.
Ցամաքած սիրտս նորից լացուցին,
Հոգիս վառեցին երգերով քնքո՛ւշ,
Շուրջս փռեցին ասպղիկ ու ծաղիկ—
Կուսական մաքուր աչերը անո՛ւշ...

1904 հոկտեմբերի 14—16
Թիֆլիս

Քո՛ւյր իմ նազելի, նայիր քո դիմաց՝
Վիրավոր, ավեր սիրտս եմ բացել.
Ա՜խ, նրվիրական ինձ քո դիրքը բաց
Եվ գուրգուրիր ինձ, ես շատ եմ լացել...

Քնքուշ ձեռներով աչերդս սրբիր,
Մի՛ թող ինձ լալու — ես շա՜տ եմ լացել,
Ճակատիս մռայլ՝ մշուշը ցրիր,
Եվ գուրգուրիր ինձ, ես շա՜տ եմ լացել...

1904 հոկտեմբերի 16,
Թիֆլիս

Անապատում, միրամի մեջ մի բեկվին
Շողքն է տեսել մի աղջկա գեղեցիկ
Եվ փընտրում է հոգեսրլա՛ց, տենչագին
Ցավ-կարոտով ա՛յն աղջկան գեղեցիկ։

Եվ ծարավուտ անապատում Հրաավոտ,
Տատասկներում, արևի տակ բոցափայլ
Փնտրում է նա՛ նրան անվե՛րջ, անդադա՛ր
Եվ մեռնում է վեհ սիրո մեջ հոգեկմայլ։

Եվ բրնի մեջ — անկարելի, անվախճան,
Տեսնում է նա այնպի՛ս բերո՛ւշ ու սիրուն
Շողքը լքնազ՝ այն նազելի աղջկան
Եվ փընտրում է նրան հավիրժ երազում...

1904 հոկտեմբերի 17

Հիմա հեռավոր, վեհ Հիմալայան
Այն երկնասլաց, վեհ բարձունքներում.
Հախուրքն, ինչպես ալեկոծ օվկիան,
Հոծ, սոսկալիքիբար ամպերն են եռում։

Եվ մրրրկահույզ ամպրոպն է պայթում
Ժայռերին խոժոռ, ահեղաղղորդ,
Բուրքն, խոլական կայծակն է ճայթում.
— Եվ Հիմալայը կանգնած է խրոխտ...

Եվ պայքարի մեջ այդ որոտընդոստ.
Այնտեղ է այժմ և հոգիս ըմբոստ...

1905 հունվարի 1

Բաղերը վայրի թռան շվարած.—
Ո՞վ է արշավում մռայլ գիշերով.
Մրրրկի նման նժույգին նստած—
Ես եմ սլանում նիրհած դաշտերով։

Թռնիմ խոր երկինք, դեպ աստղերն անշեջ
Եվ սիրտս բանամ անհունության դեմ.
Ես սուզվել կուզեմ գոռ ամպերի մեջ
Եվ կայծակներով զարկվել կուզեմ։

Գրքե՛ր ու նանիթ մատիկաց-ցից հետո՛,
Վախկո՛տ, նենգամի՛տ, կեղծ ու գայլաձան,
Ստոր ու սարսափ աշխարհից հետո՛,
Նյութին մեջտ գրգիռ, ապա՛հ սատկյան։

Աշխարհը չարժե քո արտասուքին,
Եվ կինն ու ընկեր՝ գգվանքիդ այդ ծով,—
Անապատ գնա՛ — սիրի՛ր վագրերին,
Եվ այրվիր անմահ արևի սիրով...

1905

Կյանքի կովում ամենքը դեմ ամենքին՝
Սուր են սրում ամենքը դեմ ամենքին։

Սուրն իմ ձեռքից՝ կռվի հանած ընկավ վար,
Ես չեմ կարող մոռնել պայքար անպղար—
Խլել բերանից արնոտ հացը աղքատի,
Վառ քրտինքը ծծել տանջված ճակատի...

Սուրն իմ ձեռքից՝ կռվի հանած ընկավ վար.
Ես չեմ կարող մոռնել պայքար ինձ համար...

1905

Քնքո՛ւշ տատրակս, դու անծանոթի,
Դու օտարի պես մոտովս անցար։
Ա՜խ, ի՜նչ եղավ քեզ, որ հուր կարոտի
Սրցունքներդ ա՛յսպես շուտով մոռացար։

Գնա՛, մոռացի՛ր, և՛ բախտաբ-քեզ հետ,
Հյուսի՛ր քո բույնը՝ ում հետ որ կուզես.
Թռի՛ր ու գնա և մի՛ նայիր հետ,
Թող տանս մնա թափուր՝ սրտիս պես։

Թո՛ղ տրտմես մեջ կրակ չհուրհրա,
Մարած սրտիս մեջ թող ոնա քամին։
Թո՛ղ վաղի քամին շոր գլխես փրա,—
Ես չեմ հավատում կնոջ երդումին...

1905

Լուռ պարտեզում սրբատաշրոփ, սիրատենչ
Իմ նազելուն սպասում եմ այս գիշեր.
... Շշշուկ ընկավ ահա վարդի, ծաղկանց մեջ.
Սրսիփացին շուրջս մետաքս զառ փնչիր.
Իմ նազելուս շունչը քնքուշ ինձ շոյեց,
Կարոտավառ հպարտ կրծքին գրոմնցի.
Սով-մազերի բույրը անո՛ւշ ծավալվեց,
Ասուղ-աչերին համբույրներքս վառեցի.
Շրթներիցքս ալ-արյունը կռմկալեց
Եվ բախտավոր, և երջանիկ լացեցի...

— Վա՛յ, քեզ, Իշխան, գլխարքնեքի խանձ սրդա,
Ոչ ո՛ք չունիս, ոչ ո՛ք չկա՝ քեզ մոտ գա...

1905,
Ալեքսանդրապոլ

Իմ հոգին տարագիր մի Իշխան՝
Մրրկով գարնված, թեսթափ.
Հողմերն են հեզ գլխես շառաչում,
Եվ ուրիշ անհասանում և՛ անտի։

Դու բյուրեղ բարձունքում մի երազ՝
Լուսաղարդ և՛, քնքուշ, և՛ գոլտրիկ,
Մի երազ սրբափայլ և անհաս,
Հավիտյան հեռավոր մի աստղիկ։

Ա՜խ, նայիր մի անգամ ինձ վրա
Քո անդորը և քո խոր աչքերով.
Հայացքիդ ծոլի մեջ դէթ մի պահ
Թող հանգչեմ սրախս հոգ-անկիրով։

Իմ հոգին վիրավոր մի թռչուն,
Ցունի բույն, չունի քուն ու անդորր.
Հողմերն են հեգ գլխիս շառաչում,
Եվ ուղիս սև ու մութ և մոլոր...

1905,
Ալեքսանդրապոլ

Միշտ զգում եմ ես, որ մի հեռավո՛ր,
Օտա՛ր աշխարհում ինձ պես վշտաշոր
Մի սիրտ է այրվում՝ անհայտ, մենավո՛ր
Եվ երազում է, թախծում ինձ համար։

Եվ թվում է ինձ, որ սուրբ համբույրով
Ես փայփայում եմ ձեռները նրա.
Եվ գուրգուրում եմ, գրգվում կարոտով՝
Քնքուշ գլուխը իմ կրծքի վրա...

1905,
Ալեքսանդրապոլ

Եղբայրությանն կամ թե սիրո
Խոսքը ես ձեզ չեմ ավետում,—
Պատգամները չարի, բարվո
Ձեր ոտների տակն եմ նետում։

Կյանքն է պայքա՛ր՝ դաս ու դաժա՛ն,
Ճգմի՛ր մարդուն և թռի՛ր վե՛ր.
Իրավունքը ուժն է միայն,

Վա՜յ հաղթվածին, հազա՛ր վայիր։
Տեր կամ ըստրուկ պիտի լինիս,—
Ճշմարտություն չկա ուրիշ։

Չես սպանի, քեզ կսպանեն,
Դու սպանի՛ր, քեզ չսպանեն։
Լուծ կամ լծկան պիտի լինիս,—
Ճշմարտություն չկա ուրիշ։

Անիծվիս, մա՛րդ, որ հույզդ է մարդ.—
Բախտդ կռվով կռի՛ր ինքդդ։
Մո՛ւրճ կամ զնդա՛ն պիտի լինիս.—
Ճշմարտություն չկա ուրիշ։

1905,
Ալեքսանդրապոլ

Եվ արծիվ մի սև իջավ սրբարշավ,
Իջավ Երկնքից և կուրծքս փշրեց
Եվ սիրտս կլուցեց, և սիրտս տարավ
Դեպի վե՛հ լեռներ, ժայռեր բարձրաբերձ։

Եվ նետեց սիրտս վառ լազուրի մեջ,
Խրոխտ բարձունքին հզոր լեռների,
Եվ շուրջս այն օրից լսում եմ անշեջ՝
Շառաչումները արծվի թևերի...

1905,
Կարս

Եւ կուզեի արևավառ
Անապատը ամայի,—
Ուր մեն-մենակ և վշտաշոր
Թափառեի ու լայի։

Աշխարհից գուրս ու պրտարաց—
Ինապատում ամայի
Տաք ժայռերը ամուր գրկած՝
Համբուրեի ու լայի...

1905,
Մրին

Կնոջն ուզեցի հավասար նորից,
Լալ ու երգել առաջվա նման.
Բայց արյունոտվեց խնկե սիրալս նորից.
Եվ որբ մնացի, և թափառական։

Սի՛ր, մնաս բարով, էլ քեզ չեմ նայի,
Չեմ բախի դուրդ ունայն քամու պես.
Բայց կուզենայի հավիտյան լայի,
Եվ շրջամաքեր արյունքդ սրտես։

1905,
Թիֆլիս

Առավոտն ցավ ճանաչում
Արտուան ուրախ ճախրում է վեր.
Ցավ ու խավար չի ճանաչում՝
Երգում է լույս, երգում է սեր։

Իսկ իմ սիրտը տխուր ու սև՝
Շուրջս՝ ավեր ու ցավեր.
Եվ իմ վշտոտ գլխի վերև
Արտուան ուրախ երգում է սեր...

1905 հուլիսի 15

Անհուն վրեժի և ատելության
Դրժոխքն է այրում թունոտ իմ հոգին.
Եվ ես չեմ բերում խոսքը հաշտության,
Որ ծանր է նստում գրկվածի ուսին։

Անհուն վրեժի և ատելության
Պատգամն եմ վառում ես ձեր սրտերում.
Եվ ձեզ ասում եմ՝ ո՛վ դու գնդատի,
Դո՛ւ, որ թշվառ ես, անտուն, անտիր.
Դո՛ւ, որ քո ձեռքին կռել ես շղթա,
Դո՛ւ, որ քրտինքդ՝ դառն ծավոցած
Նզովք ես շինել, և լուծ քո վրա—
Ես քո ժանիքը սրում եմ հիմա։

Կանգնեցնում եմ բազուկդ ահա,
Ինչպես ոխակալ օձն անապատի.
Եվ քո քարացած բրոնցքում հիմա
Ես սուրն եմ դնում ահեղ հրշմարտի։

Եվ քո սրտի մեջ վառում եմ ահա
Հուրն ազատության և իրավունքի.—
Կանգնեցնում եմ բազուկդ ահա՛,
Ինչպես ոխակալ օձն անապատի...

1905 հուլիսի 22,
Զազարապատ

Է՛յ դու, ջահել, հպարտ հաստակ,
Անցար ոսկի ամպի պես.
Քեզ հետ տարար երգիր ու սեր,
Տարար գարունն իմ սրտես։

Քար կրսեղմեմ սրտիս հիմա,
Կեչնեմ սարերը լաչ...—
Ա՜խ, լայ՝ ինչպա՞ն, ինչպա՞ն կարչես.
Անցածն էլ էստ չի դարձ...

1905 սեպտեմբերի 2,
Ախալքալաք

Թռած սիրտ դառ թևերով՝
Ես քեզ տեսա աստղերի մեջ,
Աչերդ լի արտեսով,
Դեմքդ՝ շո՛ղ-շո՛ղ լույսով ամշեց։

Գիշերն՝ անքուն, ցերեկն՝ երգով,
Գերին դառա քո դռնակի,
Ոտքիդ կոխած շոր տեղերով
Բուրմունք առա մանուշակի։

Սիրտս դողաց, սիրտս մարավ
Ձայնիդ բաղցրօրոր հովերե՞ն.
Իմ ոդջ կյանքը երաղ դառավ
Մաղերիդ ծո՛ւփ-ծո՛ւփ ծուվերե՞ն...

1906

Իմ սիրտն այնտեղ է — հայրենի հղոր
Լեռների գլխին, արծիվների մոտ,
Որ ամպերի հետ՝ խրոխտ, ահավոր
Նետում է, շնչում կայծակ ու որոտ։

Դո՛ւք ըմբոստ քաջեր, ռազմիկներ վսեմ,
Անհաղթ իշխողներ մահին ու կյանքին,
Ձեզ հետ է հոգիս, և նեբբաղում եմ
Եվ երկրպագում ձեր լուսե ուղին։

Դո՛ւք հայրենիքի խիզախ ոգիներ,
Ձեր սպառազեն կուռ բռունցքներում
Սուրբ իրավունքի և ազատության
Անշիջանելի հուրն է բռընկվում։

Իշե՛ք, մրրիկներ, դա՛շտն ի վար իջեք,
Մարդկության մրուր-նողկանքը սրբեք,
Փշրե՛ք շղթաներ, լծերը ամեն,
Որ կաշկանդել են ազնիվ մեր հոգին.
Անմահ մեր մտքի թևերը բացե՛ք,—
Պայթե՛ք, կայծակներ, պայթե՛ք խստագին։

1906 հունվար

Գագաթներին մով սարերի
Թափառեցի սերբս լալով.
Լացրս քամին զով սարերի
Լսեց, տարավ թևին տալով։

Ու լրսում են լուռ գիշերին
Լացրս հիմա ամենուրեք.
Միշտ ծեծում է դուռդ քամին,
Բայց չես լրսում նրան երբեք...

1906,
Ալեքսանդրապոլ

Հովը բարակ կրշնկշնկա՜,
Վարդը անուշ կրբուրե,—
Տար վարդի մոտ սերդ քնքուշ,
Գիրկդ առ ու համբուրե։

Ու մի. օր էլ հովը կուգա,
Քեզ կբռնեսրե, չի զանի.—
Խելքդ ժողվե, դու օրն ապա,
Ինչ որ լինի — թող լինի։

1906,
Արիքանդրապոլ

Ագռավների գորշ թևերով
Աշունն եկավ միջոցներ.
Սաղիկ-սարե՛ր, երթաք բարով,
Դո՛ւք էլ, զանգակ-ազդյուններ։

Ունայն քամին դուռս է ծեծում
Դալուկ ձեռքով կմախքի.—
— «Ե՛լ, դուռդ բաց, դուր ես հեծում.
Տերն է եկել աշխարքի։

Տերևները, կանկնի՛ր, թափ տամ,
Գյանքիդ աշունն է հիմի։
Երազներդ ցրվեմ, երթամ,—
Այս է ուզին ամենի...»։

1906,
Կալարաբատ

ՀԱՅԻ ԵՐԳԸ

Գովք եմ երգում ցամաք հացին,
Փշրանքներին շոր հացի,—
Փշրանքներին, որ մնացին
Լի աշխարհից փայ ինձի...
Արյուն ու քրտինք ծով-ծով թափեցի,
Ոսկի արտերում արևի բոցին,
Եվ անձրևի չափ արցունք թափեցի
Ու արյուն-քրտինք՝ ի սեր շոր հացին։

Կարիս մինչին շեկշ-շեղջ ցորեն,
Քյոխվեն եկավ, խարջ ու խարաչ
Հաշվեց, չափեց, քաշեց, տարավ
Իմ աչքի լուս-ոսկի ցորեն.
Ագան եկավ, ոտքը պարկեց,
Հաշվեց, չափեց, քաշեց, տարավ
Իմ աչքի լուս-ոսկի ցորեն.
Խաչ ու տերտեր, աղքատ, աշուղ,
Բոշա, գերվիշ, հավք ու թռչուն՝
Ամենքն եկան, իրենցն առան,—
Ես մնացի աղքատ նորեն,—
Ձեռքս ծռցիս՝ մերկ ի մորեն.
Ձեռքս ծռցիս՝ կուտ կըմուրամ
Իմ քրտինքով շեղջած ցորենեն.
Հերի՛ք մնանք աղքատ ու դուրկ,
Մեր խեղճ խելքի կորածն ենք մենք.
Մենք ենք գատել, մերն է հացը,
Մեր քրտինքի տերը մենք ենք.
Մենք ենք լցրել ամբար, մառան
Աղին, խանին, իշխանին.
Մենք մեր ձեռքով լուծ ենք շինել՝
Լուծ ենք դրել մեր վզին...

Ե՛լ, աշխատավոր, ստրուկ ժողովո՛ւրդ,
Եվ լուծդ քցի՛ր, եղի՛ր ինքնիշխան.
Քրտինքիդ տերը մենակ դու եղի՛ր,
Մեկեն կրկորչեն աղա, խան, իշխան.
Ազատություն է հացն այս աշխարհում,
Երգեցե՛ք գովքը ձեր հալա՛լ հացին։
Հացն է, իմացե՛ք, ազատությունը,
Երգեցե՛ք գովքը ձեր հալա՛լ հացին.
Առա՛ջ գնացեք, աշխատավորնե՛ր,
Երգելով գովքը ձեր աղա՛ս հացին.
Հացն է լո՛ւյս ու կե՛նք, ուժ ու իրավունք,
Երգեցե՛ք գովքը ձեր արդա՛ր հացին,
Ձեր ազատության՝ ձեր հալա՛լ հացին...

1906 փետրվարի 6

Լեռների լանջում, ծանրը հովի տակ
Ես թաղված էի՝ մեռա՛ծ, մոռացվա՛ծ.
Ու վաղո՛ւց, վաղո՛ւց անհա՛յտ, լո՛ւռ, մենա՛կ
Ես նընջում էի հոգուս մեջ ամփված։
Եվ հանկարծ մի օր լսեցի հեռվից
Մարտահրավերը վեհ ազատության,
Ըմբոստ ամբոխի ձայնը մրրկալից,
Երգե՛ր մարտական, շեփո՛ր ռազմական,
Վառ դրոշակի խրոխտ ծածանում,
Զենքի շառաչյո՛ւն, ձիերի դոփյուն,
Քայլե՛ր ան՞ական
Հողիս մոտեցան,
Եվ դողաց ահա՛,
Եվ թեթևացավ
Հողը իմ վրա.
Եվ սիրտս լցվեց այրվող արյունով,
Ուզեցի ելնել, նժույգն ամեհի
Եբթանե՛լ, թրոնե՛լ, շառաչե՛լ զենքով,
Կռվե՛լ ու մեռնե՛լ դաշտերում ռազմի...

1906,
Կարս

Յա՛ր, աշխարդ արևգական
շողքով վառված ծովի նման,
Աբրեշումե մաղերդ արձակ
ծո՛ւփ-ծո՛ւփ կըտան հովի նման,
Վար կընայես խղճուկ գևրուդ
պարզ երկընքի մռայի նման,
Սիրտս կայրես քնքուշ շնչով՝
անմարելի բովի նման։

Յա՛ր, աչքերիս լուսը մարավ
քո կարոտով-սիրով լալեն,

Ողջ աշխարհի մալը կրտամ,
չեմ զըրկվի անգին լալեն,
Յա՛ր, գութ արա, կյանքիս գընով
թող մի քաղեմ թըշիդ լալեն,
Շեմքդ եմ ընկած, յա՛ր, խիղճ արա,
հողդ եմ լիզում սովի նման։

Յա՛ր, թե մեռնիմ ոտներիդ տակ,
շահին-շահի թսիրտ է ինձի.
Փիշըդ քսվի գիրեզմանիս՝
փափագելի բախտ է ինձի.
Վըրաս թե լաս, արտասուքդ
անմահական դեղ է ինձի,
Սիրտըս նորեն կալեկոծվի
Հնդստանու ծովի նման...

1906 սեպտեմբերի 21,
Ղազարապատ

Ա՜խ, սար ու ձոր կարմիր-կանանչ
Արևի տակ կըշողա.
Արար-աշխարհ շողք ու ճաճանչ,
Մութն է թեզի, խե՛ղճ տղա...

Շաղաղ-վարդի հոտն է գալիս,
Սիրը պուտ-պուտ կըխաղա,
Դու քո գարուն կյանքն ես լալիս,
Վա՛յ քեզ, հիվանդ, խեղճ տղա...

1907

Արծի՛վ սևաթույր, արծի՛վ լեռների,
Հանդիստ ու հրպարտ ճախրում ես բարձրում,
Ա՜խ, նայի՛ր՝ սիրտս — շրջթայված, գերի
Մարդկանց օրենքով, ստրուկ աշխարհում։

Ազատ միտք ու խոսք, աղա՜ տ երգ ու սեր
Ողջ բրոնաբարված ծաղրով անհամբույր.
Թևերը հոգուս — ստվերոտ երազներ,
Թոշնած, խորտակված, արծի՛վ սևաթույր...
Խրի՛ր ճիրաններդ, արծի՛վ լեռների,
Կրծքիս մեջ վշտոտ ու սիրտս հանի՛ր
Թրացբրու Մասիս — գահույքն աստղերի
Բարձրը և հեռու աշխարհից նանիր.
Եվ թաղիր սիրտս — ըմբո՜ստ, վիրավո՛ր,
Լեռնագագաթին՝ վրսե՛մ ու հզո՛ր,
Արծի՛վ սևաթույր, արծի՛վ լեռների...

1907 հունվար

ՄԵՂՔԻ ԵՎ ԶՂՋՄԱՆ ԵՐԳԵՐ

I

Արևի ոսկին ծով-մալերիդ մեջ,
Գարունը ծաղկած՝ այտերիդ վրա,
Ժպտուն աստղերը՝ աչերումդ անշեջ։
Վարդի ճոխ բուրմունք շրթունքիդ ցայտուն,
Թավիշ դեղձերը վառ կրծքիդ վրա,
Աշխույժ թռչնի պես՝ սիրտդ թռվռուն։

Դո՛ւ, անուշաբույր, կախարդիչ մարմին,
Դո՛ւ, պուրպուր գինի՝ շքեղ, դյութական,
Թո՛ղ քեզնով հարբիմ ու գիրկդ մեռնիմ.—
Վայելքը անմահ կմնա միայն...

II

Բարվոք է գուցե, թեկո՛ւզ և իրավ
Ջսպել կրքերը, տիրել կրքերին.
Սակայն ավելի գեղեցիկ է, լա՛վ,—
Ազա՜ տ, սանձարձա՜ կ թողնել կրքերին։

Արա՜, ի՛նչ կուզես, ի՛նչ որ կարող ես,
Գարտքն ու բարին սո՛ւտ են ու պատիր.—
Սիրի՛ր այն, ինչ որ կյանք է տալիս քեզ.
Ինչ որ վիշտ ու մահ — հեռացի՛ր, ատի՛ր։

Կյանքից դուրս չկա՛ ոչ մի գրություն.
Ոչի՛նչ էիր դուն, ոչի՛նչ պիտ դառնաս.—
— Կընոջով, երգով, գինով արբի՛ր գուն,
Արբի՛ր, որ մահն ու աշխարհը մոռնաս...

III

Ա՜խ, երազ-սիրո հոգիս ծարավոտ՝
Սրտիցի սահայն շրթունքը մեղքի.
Հոգիս տենչացող գեղեցկին անտուտ,
Բայց թաթախվելի դարշ ճահճում կյանքի։

Չբլտա մի տեղ անմարմին մի հին,
Սերս կորցրի պտղոտ գրկի մեջ.
Ինչ որ ունեի — և վսեմ, անգին,
Ոչջր ապատվեց անհուն կրքի մեջ...

IV

Բարձր լեռների արծիվը մեկ-մեկ
Ագահ ադոավից ցածր կրթոնի,
Սակայն դաշտերի ագռավը երբեք
Հզոր թռիչքին նրա, չի հասնի։

Ինչքան թաթախվիմ գարշ ճահճում կյանքի,
Հոգիս չի զարթնի վսեմ երազից.
Չի կորչում մթնում շողն արևագալի,
Բարձունքն ես դիտեմ, կրճախրեմ նորից։

V

Ջինջ ծովակի մեջ կա մի լուս կղզի,
Մենավոր, անդորր ժայռերն մի գահ,
Ուր քաղցր է հնչում զողանջը զանգի,
Եվ փռվում մեղսոտ աշխարհի վրա։

Եվ լուռ կզրոս մեջ կա նվիրական
Հինավուրց քարայր, մի վեհ սրբավայր.
Այնտեղ պիտ գնամ, լամ, քավեմ, ողբամ
Հոգիս մեղավոր և բազմաչարչար։

Եվ պիտի ծեծեմ կուրծքս քարերին,
Եվ պիտի հեծեմ ցնորքս անբիծ,
Եվ պիտի գտնեմ սերը երկնային,
Որ հոգիս այրե և մաքրե նորից...

1907,
Թիֆլիս

Ապրած իմ կյանքից՝
Մի սուրբ երազի
Բուրմունքը մնաց
Սրտումս անմոռաց—
Այն՝ որ ջերմ լացի՝
Առանց տանջանքի,
Խորունկ սիրկոյի՝
Առանց տենչանքի...

1907,
Թիֆլիս

Ո՞ւմ սիրտն է հեծում մբուռյլ կիշերին
Զրմռան հողմերից ծեծվա՛ծ, տատապա՛ծ.—
Այս գայլն է թրչվառ՝ լեռան լանջերին
Դառն հեծեծում ցրտահա՛ր, քաղցա՛ծ...

Մենավո՛ր, խրդճո՛ւկ, դու վիրավոր սի՛րտ,
Ես է՛լ քեզ նման մենակ եմ ու խե՛ղճ,
Մարդն էլ քեզ պես է, ո՛վ խոշտանգված սի՛րտ,
Այս ցավի, մահի սև աշխարհի մեջ։

Այս ցավի, մահի դաժան աշխարհում
Մեր բախտը մենք է՝ անհույս ու թրչվառ,
Իմ սիրտն էլ քեզ հետ կյանքն է անիծում,
Սրի՛, լանջ մեկեղ, իմ խե՛ղճ դայլ-եղբայր...

1907,
Երևան

Շափա՛ղ կուտաս բազի միջին,
Ա՛յ կարմիր վա՛րդ, շազի միջին.
Բուրմունքի պես հյուսվում ես վեր
Իմ զառ ու լալ խազի միջին.

Խելքս է տարվել քո ալ-վարդին,
Ճար չես անում իմ ծով-դարդին.
Բլբուլի պես թռնիմ քեզ մոտ,
Կարոտել եմ ծոցիդ վարդին։

1907 մարտի 21,
Վիեննա

Սազկից հյուսված դու երազ,
Սրտես թռար գնացիր,
Սերս թողիր անմուրազ,
Ու վերքի պես մնացիր։

Վառ շողքերես ի՞նչ մնաց,
Սիրտս արյուն է քամում,
Զեռքովդ անգութ տրորած
Ծաղիկներս՝ տուր քամուն։

Ամպերն արցունք են ցողում
Անհույս, անլույս իմ ճամփես.
Մութը սիրտս է սքողում
Ճամփես անդարձ՝ սիրույս պես...

1908

Անմահ արևի վառ գգվանքի տակ
Փռված հոլանի՝ ծովն է շողշողում.
Լեռների գլխին բյուրեղյա պսակ,
Շուրջը ամպերի երամն է լողում։

Ու կռունկների քաջվանը նորից
Անուշ կարկաչով գարունն է բերում.
Ջերմ շունչն է եկնում տա՜ր, փխրուն հողից,
Ժայռի ծերպերից մեխակն է բուրում։

Եվ դողանչում է անտառը դալար,
Քաղցր դայլայլում թփից մի թռչուն.—
Սիրտս ցնծում է, հազար ու հազար
Երգով ու շողքով գարնան դեմ թռչում։

Թռչում եմ արագ թևին հովի հետ,
Հզոր կաղնու մեջ ճռում եմ հպարտ.
Ծաղկի, եղնիկի, թիթևունիկի հետ
Ծաղկում եմ, շնչում, ուսումնասիրում ազատ։

Ծովն է սրտիս մեջ ծփում երաղով,
Ջրում եմ ես ինձ առվի, ժայռի հետ.
Տիեզերքը մեծ՝ լցվում է ինձնով,
Մեկ եմ դառնում ինձ երկրի, երկնի հետ։

Անհուն հիացքով սիրտս է դարկում,
Խորին ցնծությամբ ողջունում եմ ես
Եվ օրհներգում եմ և գրկախառնվում
Մեծ և անսահման բնությանն հավերժ...

1908

Ո՛չ իշխանություն, ո՛չ կռիվ, ո՛չ կին
Չեն հափշտակում հիվանդ իմ հոգին։
Ողանչն է միայն ձիգ բարավանի
Հեռավոր, անհայտ ճանապարհների
Հրապույրներով դյութում իմ հոգին
Թափառումների տենչով անմեկին...

1908

Լուսնակ կիշեր, լույս-ուրբ։
Շղարշային ու սնդուս.
Շշնջում են իրարու
Բարգիներս հինավուրց։

Եվ կարծես թե՝ հեռավոր
Այն օրերն են շշնջում,
Երբ քո սիրով բռնկտավոր՝
Տանջվում էի առյորուն։

Շշնջացե՛ք հավիտյան
Հին սոսափով դյութական.
Բարգիներս հինավուրց,
Շշնջացե՛ք հավիտյան...

1908,
Ալեքսանդրապոլ

Դու մեռնեցիր ինձ, չբկանչեցիր ետ։
Եվ անցան տարուր, տարիներ տխուր.
Եվ հեռվից վախով, հուշերիդ թափուր,
Նայում էի քեզ, մենակ վշտիս հետ։

Օրերս շքեղ շրացան անհետ,
Բայց մի վայրկյանը բա՜ ինչպարզ դրեցի,
Մի վայրկյանը սոսկ՝ իրիրին ու անհուն
Ժամանակս անցած՝ կդարձնե՜ ինձ հու։

1908,
Ալեքսանդրապոլ

Գարունն եկավ կարմիր-կանանչ,
Արշալույսով, ծիածանով.
Գարունն, հագած շողք ու ճաճանչ,
Գոգն ու ծոցը ծաղիկներով։

Ականջներին թռչունների
Հազար բույրով սեր շշնջաց.—
Աշխարհ թնդաց երգով սիրո,
Ավա՜ղ... գարունն ինձ բան չասաց։

Սիրտս բացի գարնան դիմաց՝
Շողքի, ոսկի, անուշ գարնան.—
Ավա՜ղ... սիրտս դատարկ մընաց՝
Մուրացկանի ափի նման...

1908,
Ղազարապատ

ԴՈՒ ՉԵՍ ՀԱՍԿԱՆՆԱ

Չեմ տեսնում շքեղ զարդերը դարնան,
Վշտից խավարեց գոհարն աչքերիս.
Ծանրացավ աշխարհն ուսերիս վրա,
Ջուր ես հարցնում պատճառը վշտիս։

Ես՝ զավակ ճնշված ու դժբախտ ազգի,
Որ արյունով է իր ուղին թրջում.
Որ դարե՜ր, դարե՜ր թափը իր բազկի
Շղթան է կրծում ժանգոտ, շառաչուն։

Շղթան շառաչուն, ծանրը ու ժանգոտ,
Ինձ տապալել է, կաշկանդել գետնին.
Ինձ տրորում են անցնող ու դարձող,
Դո՜ւ մի կարեկցիր իմ անհուն վշտին։

Իմ մոր սուրբ խոսքը — ծաղրի նշավակ,
Իմ հայրենիքը — սիրտս ու հոգիս—
Եվ հոշոտում են, պղծում ոտնատակ,
Դու չես ըմբռնի անգունդը վշտիս...

Ես՝ զավակ ճնշված ու փոքրիկ ազգի,
Սրտիս արյունով մեծ վիշտս եմ գրում.
Վերքը անդարման իմ հայրենիքի
Իմ բյուր խոցոտված սրտումս եմ կրում։

Սիրե՜լ, երազե՜լ, թռչել եմ ուզում,
Բայց շղթան ինձ պինդ գամել է գետնին.
Կուռ լուծը ազգիս՝ ուսերս է փշրում,
Չես կարող հասնել իմ անափ վշտին։

Տիեզերական դայրույթով, թույնով
Արդ՝ ես ինքս ինձ խայթում եմ ահա՜,
Թո՜ղ մեռնիմ, կորչիմ անհետ, անանուն,
Իմ անհույս վիշտը դու չես հասկանա...

1908,
Թիֆլիս

Երազիս տեսա, որ մայրս՝ թշվառ,
Նեն պատերի տակ, մեծ փողոցներում,
Ա՜յնպես դողդոջուն, հիվանդ ու անճար,
Անց ու դարձողին ձեռն էր կարկառում։

Երազիս տեսա, որ իմ մայրը՝ ծեր,
Ցնցոտիներով պատած մուրացկան,
Եվ մարդիկ՝ անգութ, անտարբեր, անտեր,
Չրոնում էին և հրում նրան։

Եվ երազիս մեջ ես դառնալ լացի,
Ու ցավից պարթնած՝ լաց եղա անքուն.—
Ա՜խ, որքա՜ն մայրեր՝ խեղճ, առանց հացի,
Մեր շուրջն են դողում ու մենք չենք ղգում...

1908,
Թիֆլիս

Լա՜ց, իմ նազելիս, լա՜ց դա՜ռն ու անհո՜ւն,
Աշխարհի վերքին չկա դեղ-դարման.
Ի՞նչ է մեր կյանքը — բոց մի փայփլուն՝
Հողմերի առջև ահեղ բնության։

Ե՛վ սեր ու երգեր, և՛ փառք ու հանճար
Սին պատրանքներ են մահը մոռնալու,
Եվ մարդը՝ զմբախտ, անզոր ու անճար՝
Ենված է մահին պատառ դառնալու։

Հավիտենական, անծիր, անսահման
Նավարների մեջ, կյա՜նք, դու ես մի լույս,
Որ մի պահ շողաս, մարիս Հավիտյան,—
Լա՜ց, իմ նազելիս, լա՜ց դա՜ռն ու անհո՜ւյս։

Իմ սիրտը՝ նման բացված խոր վերքի,
Որ տիեզերական կսկիծն է լալիս.
Լալիս է դարեր առանց արցունքի,—
Ա՜խ, հեգ գլուխդ դի՜ր վշտոտ կրծքիս։

Դի՜ր անհույս սրտիս գլուխդ ու լաց,
Ամենքի բախտը լա՜ց, իմ նազելի՜ս.
Լա՜ց,— և արցունքդ դեռ չըցամաքած՝
Դուռդ կբախեն մահը, նազելի՜ս...

1908,
Թիֆլիս

ՄԱՀԸ

Անտես, անձայն
Մի քարավան
Գիշեր ու զօր
Կերթա՜, կերթա՜...
Ողջ աշխարքը
Կքարոզե,
Փոշի կանե,
Քամուն կուտա։

Եվ հավիտյան
Կերթա՜, կերթա՜...

1908 հունիսի 24,
Ղազարապատ

Երազիս տեսա՝ օրո՜ր ու շորո՜ր
Քարվանն էր անցնում զնգալով անո՜ւշ։
Սարերի փեշով ոլո՜ր ու մոլո՜ր
Քարվանն էր անցնում զնգալով անո՜ւշ։

Նազելիս տեսա ուրախ, շողշողուն,
Հարսի քողերով, ոսկի շորերով.
Ու ոտներն ընկա կարոտով վառման,
Ա՜խ, քարվանն անցավ սրտիս վրայով։

Ճամփու փոշու մեջ անտերունչ, անտեր,
Ընկած էի ես ջարդված ու անհույս,
Ու հեռուներից լսում էի դեռ
Անցնող քարվանի զողանջը անո՜ւշ...

1908 հունիսի 26,
Ղազարապատ

Հեռավոր ծովի լուսկ ափերում,
Խոր վերքը սրտիս, ընկած էի ես.
Անգրոն էր ժայռին կտուցը սրում,
Շուրջս ամայի՝ գերեզմանի պես։

Եվ տեսնում էի դմբուխտ ջրերով
Մի նավ էր սահում օրոր ու շորոր.
Բախտի հովերով, ծուփ-ծուփ թևերով՝
Գրգվելով նիրհած ալիքներն անդորր։

Եվ երգում էին ոսկեղեն նավում,
Երբեմն ուրախ՝ անունքս տալիս,
Բայց մեկը տխուր ինձ էր երազում,
Անուշ աչերով վրաս էր լալիս...

1908 հուլիս,
Զազարապատ

Ես աշխարհի մեջ երազն եմ սիրել—
Քո շուշան հոգին, քո հոգին քնքուշ,
Եվ չեմ տենչացել երբեք քեզ տիրել—
Քո շուշան հոգին, քո հոգին քնքուշ։

Աղբյուրի նման արցունք եմ ցողում՝
Քո համփու վրա վարդեր վառելով,
Անձնազոհ մոր պես սրտագին դողում՝
Քո բախտի համար լռե այրվելով։

Երբ գիշեր կուգա, դու կրմտնիս քուն,
Քո շնչքն է, քուրի՛կ, իմ բարձը քնքուշ,
Իմ սուրբ երազն է — շքե՛ղ, շողշողո՛ւն,
Աչերդ՝ պայծա՛ռ, աչերդ՝ անո՛ւշ։

1909

Անհայտ ծովերի լազվարթ ափերում
Լուսեղեն մի բախտ միշտ կանչում է ինձ.—
Ես դեգերեցի մոտիկն ու հեռուն,
Չըգտա նրան, որ կանչում է ինձ։

Բայց հոգիս չունի ոչ մի հանգրվան,
Նորից թռվում է ինձ ոսկե հեռուն,—
Զմրուխտ երազնե՛ր,— անհաս հավիտյան,
Զմրուխտ հեքիաթնե՛ր, ձեզ չեմ հավատում...

Եվ հոգիս հոգնած նիրհում է հիմա,
Մի՛ արթնացրու, երազում է նա...

1909

Մշուշը ծածկեց գաշտերը անծիր.—
Դալուկ ճակատս դի՛ր այրող բարձին,
Եվ թո՛ղ ինձ մենակ, և դուռս գոցի՛ր,
Ես չեմ կարոտնա քո վերադարձին։

Իմ երազների ասուղները գոհար՝
Մի պայծառ երկինք շուրջս են տարածում.
Իմ ոգու հանդեպ՝ մահը հաղթահար.
Իմ ոգին հավերժ՝ չունի մահացում։

Եվ անարգում եմ աշխարհքը համայն,
Ուր ամեն մի մարդ — մի ձև անցավոր,
Ուր ամեն մի կյանք՝ թշվառ և ունայն,
Գաղափարն՝ անզոր, և նյութը՝ հրզոր։

Մընչո՛ւշ, դու ծածկի՛ր աշխարհքը անծիր.—
Թո՛ղ, դարման մի՛ դիր իմ խորունկ խոցին.
Եվ թո՛ղ ինձ մենակ, գնա՛, հեռացի՛ր,—
Ես չեմ հավատում քո լաց ու կոծին...

1909,
Թիֆլիս

Ո՞րտեղ է ընկած
Այն քարը հիմի,
Որ հողիս վրա
Շիրիմ պիտ լինի։

Իմ թափառ կյանքում,
Մարդ ի՞նչ իմանա,
Չէ՞մ նստել, թախծել
Այդ քարի վրա...

1909,
Երևան

Անգիր, և՛ անհայտ, և՛ անհիշատակ՝
Ամայի դաշտում մի գերեզման կա.—
Ո՞վ է հող դառնում այդ լուռ քարի տակ,
Ո՞վ է լաց եղել այդ քարի վրա։

Համբր քայլերով դարերն են անցնում,
Արտույտն երգում է իր գովքը գարնան,
Շուրջը ոսկեղեն արտերն են ծփում,—
Ո՞վ է երազել և սիրել նրան...

1909 օգոստոսի 2,
Ղազարապատ

Վայում է քամին՝ ցուրտ, ձմեռնամուտ,
Ջոր տերևները շուրջս է գիգում.
— Ո՞վ է իմ սիրտը տրորում անգութ,
Սև մազերիս մեջ ճերմակ է հյուսում։

Ցյունը պատանքով ճամփես է ծածկում,
Սիրտս գերեզման՝ մոայլ և անհույս,
... Հատ-հատ իմ թաղման զանգերն են զարկում,
Ու մի սիրտ վրաս լալիս է քնքուշ...

1910

Վտարված եմ ես
Հայրենի երկրից.
Մի անհայտ ուղի
Լուռ տանում է ինձ։

Ո՞ւր եմ գնում ես,
Ո՞ւր պիտի հանգչիմ,
Ո՞ւր պիտի լինի
Կայանը վերջին։

Ցյունն եկավ, ծածկեց
Ուղի ու կածան.
Որոնց ոիրել եմ,
Ինձ օտար դարձան։

Ա՜խ, չար բախտիս դեմ
Իմ խավար հեռվում
Մի աղոտ ճրագ
Արդյոք չի՞ վառվում։

Վայում է քամին,
Խիստ բուք է հիմի.
Թող իմ թշնամին
Անտուն չլինի...

1910,
Հասան-Դալա

Զգիտեմ, թե ո՞ւր
Անհայտ, հեռավոր
Մի սիրտ կա տխուր,
Մենակ, մենավոր.

Նա է՝ ուշ գիշեր
Իմ դուռը ծեծում,
Նա է՝ միշտ անտես,
Կրծքիս հեծեծում...

1910,
Թիֆլիս

Ո՞ւմ հետ եմ անհույս
Լալիս, հառաչում,
Ո՞ւմ ճակտի վերա
Իմ ձեռքն է հանգչում։

Աշխարհն՝ հավիտյան
Մահվան բերանում,
Եվ մահը նրան
Ծամում է, ծամում։

Լալիս է աշխարհն
Իմ սիրող գրկում.
Համայն աշխարհի
Բախտն եմ ես ագում...

1911,
Թիֆլիս

Փրփուր բաշերով ծովը ամենի
Ծեծում է ժեռուտ ափերն ամայի։

Ինձ համար չկա այլևս գաղտնի,—
Եվ աշխարհն անհուն՝ նպատակ չունի։

Կռվում է սիրտը ամեն մի վայրկյան՝
Դաժան կամքի դեմ ահեղ բնության։

Ողջը՝ երազ է, ողջը՝ նենգապլում,
Եվ աշխարհն իրոք չունի գոյություն։

Ես միայն, ես կամ, և ուրիշ ոչ ոք,
Երջանկությունը ամենարթի է լոկ։

Եվ աշնան հողմը իմ գլխի վրա
Թող հիմա վայրագ շաչե ու ոռնա...

1911,
Պրինկիպո (Կ. Պոլիս)

Ամեն գարունքին՝
Արագիլն ուրախ կիջներ մեր ծառին.
Մանուկ ականջիս բարձրը կրկանչեր,—
«Դուրս արի խաղանք, ծաղիկ եմ բերել»։

Ամեն գարունքին՝
Արագիլն ուրախ կիջներ մեր ծառին.
Պատանի սրտիս բարձրը կրկանչեր,—
«Դուրս արի՝ թռչինք, երազ եմ բերել»։

Ամեն գարունքին՝
Արագիլն ուրախ կիջնի մեր ծառին.
Ու նորեն կերթա, ու նորեն կուգա,
Բայց, ա՜խ, ինձ համար էլ երազ չկա...

1911,
Իզմիր

Կեռասենին ծաղկեց կրկին,
Ծավալվեց բույր ու զեփյուռ.
Բլբուլն երգեց վարդի գրկին,
Կարկաչեցին ակն-աղբյուր։

Իր լարն ունի թուփ ու թռչուն,
Ամեն մի ծիլ ու ծաղիկ,
Բյուր-բյուր լարով գարնան լեզուն
Նորից խոսեց զեղեցիկ։

Ես լսում եմ ու հավատում
Նորից գարնան հնքիաթին.
— Ո՞վ էր՝ հնչեց իմ հին արտում
Սիրո զմրուխտ մեղեդին...

1911,
Կ. Գոլիս

Կըտեսնեմ ահա,— լուռ երեկոյին
Բարակ ծուխ կելնի իմ հոր օջախեն.
Եվ ուռիներս մարմանդ կօրորվին,
Ցորիրը կերգե անտես խորշերեն...

Մեղմ հրազի տակ նստել է տխուր
Սերունի մայրս՝ մանկիկս գրկին.—
Մուշ-մուշ քնել է մանկիկս՝ անգորը.
Ու ագռաթ կանե մայրիկս՝ լռին.—

«Ամենեն առաջ թո՛ղ ինքը հասնի
Ամեն հիվանդի, հեռո՛ւ ճամփորդի,
Ամենեն հետո թո՛ղ ինքը հասնի
Քե՛զ, իմ խեղճ որդի՛, իմ պանդուխտ որդի»։

Անո՜ւշ ծուխ կելնի իմ հոր օջախեն,
Մայրս կաղոթե՝ մանկիկս գրկին.
Ցորիրը կերգե անտես խորշերեն
Եվ ուռիներս մարմանդ կօրորվին...

1911 օգոստոսի 13,
Կ. Գոլիս

Դուռը ափ առած՝ կրծեծի քամին
Ու շեմքիս վրա տխուր կհառաչի,
Բայց ես մենակ չեմ. մի ձայն մտերիմ
Ինձ անո՜ւշ, անո՜ւշ, անո՜ւշ կըկանչե։—
Այդ՝ ձեր մրմունջն է, հայրենի ջրե՜ր,
Այդ՝ թոթովանքդ է, իմ սիրուն մանկի՜կ.
Իմ վառ, զմրուխտյա հայրենի ջրե՜ր,
Իմ պայծառ, սիրուն, իմ անգին մանկի՜կ...

1911 հոկտեմբերի 24,
Կ. Գոլիս

Հայրենի գետի զմրուխտ ափերին
Մեր հին տնակն է կքել մենավոր.
Ա՜խ, ես հեռավոր ճանապարհներին
Քայլում եմ հիմա մենակ ու մոլոր։
Շաչում է արեգ՝ իմ գլխի վրա
Աշնան ցուրտ քամին այս մութ գիշերին...
Վառվո՞ւմ է արդյոք օջախս հիմա
Հայրենի գետի զմրուխտ ափերին...

1911 դեկտեմբեր,
Կ. Գոլիս

Քո ունքերդ, իմ սիրելիս,
Կեռ են դահճի թրի նման։

Աշխարհը՝ սուտ երազ ու սին,
Թող, որ խմեմ, իմ սիրելիս
Շրթունքներիդ կարմիր գինին,—
Գլուխս զարկ դահճի նման...

Քո ունքերդ, իմ սիրելիս,
Կեռ են դահճի թրի նման։

1912 հունվարի 25,
Իզմիր

Մեղմիկ քայլում է երեկոն քնքուշ,
Ծովը մետաքսե քղանցքն է փռել,
Նոճիներն ափից շրշում են անուշ,
Ճայերն այրերում նիրհել են, լռել։

Երկինքն ու ծովը գրկել են իրար,
Մակույկս է սահում, չգիտեմ թե ուր.
Իսկն ու երազը ձուլվել են իսպառ,
Ոչինչ չի տենչում իմ հոգին տխուր։

Բախտը ձգել է ինձ օտար հեռուն,
Հայրենի ափերն կորել են անդարձ.
Մակույկս եմ հանձնել բախտի հովերուն.—
Եվ ենչել կուզեմ, ա՛խ, շա՛տ եմ հոգնած։

1912 ապրիլի 16,
Գրինիչիպո

Ոսկի թիթեռնե՛ր — ոսկեհուր աստղե՛ր—
Սո՛վ Մարմարայի — լուսեղեն անո՛ւշ.
Գինով գիշերնե՛ր, լուսնի վառ շողե՛ր,
Մույգ նոճիների դյութական մրմո՛ւնջ...

Հուշերը նորից սիրտս են տանջում,
Լուսեղեն երա՛ղ, որ հիմա չկա.
Հոգիս մենավոր, վաստակած թռչուն,
Խավար ու խորին ծովերի վրա...

Մի երգ գիտեի՝ անո՛ւշ, ոսկեշո՛ւնչ,
Լուսեղեն երա՛ղ՝ հեռո՛ւ, հեռավո՛ր.
Ա՛խ, նոճիների դյութական մրմունջ,
Օրորե՛ք մեղմիկ՝ հոգիս վիրավոր...

1912 հուլիսի 16,
Կ. Պոլիս

Ո՞ւրտեղ պիտի հանգչի մի օր
Գլուխս անտուն, թափառական.
— Անապատո՞ւմ՝ շոր ու տոչոր,
Թե ծովափին ալեծածան։

Վերա՞ս պիտի ձրգե՞ քամին
Անուշ հողը մեր դաշտերի,
Պիտի բերե՞ արցունքդ անգին,
Ի՞մ հեռավոր, ի՞մ սիրելի...

1912 օգոստոսի 8,
Վիեննա

Մաղկունքը դարնան
Ինձ վառ սեր բերին։

Մաղկունքը գարնան
Սիրուս հետ թոշնան։

Ու շիրմիս վրան
Կրքացվին նորեն

Մաղկունքը գարնան...

1912 սեպտեմբեր,
Ցյուրիխ

Բախտը ինձնից թռավ, գնաց
Վերջալույսի շողերի պես.
Հույսը միայն մոտքս մնաց,
Մոտքս մնաց անուշ մոր պես։

Եկեք, փռվեք դաշտ ու հովիտ,
Արշալույսի վառ ճառագայթներ,
Հարցնեմ՝ ասեք — ո՞ւր են, չըկան
Մեր ընկերներ ու ճառագայթներ։

Ո՞ւր գնացիք, օրեր շքեղ,
Սեր ու խնդում, երգ ու երազ.
Արդ մահն է իր նետերն ահեղ
Ամեն կողմից լարել վիրաս։

Ո՞ւր գնացիք, աշնան քամու
Բերանն ընկած տերևի պես.
Մի՞թե նորից չեք դառնալու
Գարնան ղվարթ շրեթի պես։

1912,
Ցյուրիխ

Կարծես՝ երեկ էր,
Ես մանուկ պայծառ,
Թռվռում էի դալար ծառն ի վեր։
Եվ սակայն այսօր մոայլ է հոգիս.
Ճնշում է մի ձեռք հոգնած ուսերիս։

Բայց դեռ երեկ էր՝
Սրտով սիրավառ
Ես փնջում էի երաշ ու երգեր։
Եվ այսօր արդեն անցել եմ ուղիս.
Ձերմակն է հյուսվում իմ սև մազերիս։

Երեկ դարուն էր,
Աշուն է այսօր.
Ե՞րբ դեղին դարձաք,
Կանա՞չ տերևներ...

1912 հոկտեմբերի 21,
Ցյուրիխ

Ցյուն է գալիս, ու թախծալիր
Ծածկում դաշտերն ամայի.—
Քնքո՛ւշ, քնքուշ ինձ սիրեիր,
Ու նոր մեռած լինեի...

Հեկեկայի արտիս արտում
Անունդ անո՛ւշ ու աղվոր.
Ու ձյունը դար մե՛ղմ ու արտո՛ւմ,
Ծածկեր շիրմս հեռավոր...

1913,
Ժընև

Հայրենի աղբյո՛ւր,
Երգերս վքճիտ
Հյուսել կուգայի
Բյուրեղ կարկաչիդ։

Ես հիմա այնպե՛ս
Հոգնած եմ ու լուռ,—
Դո՛ւ հավերժ կերգես,
Հայրենի աղբյո՛ւր...

1913 մայիսի 31,
Կոլոնժ

Աշո՛ւն է, քամի...
Տերևներն մի-մի,
Արցունքի նման
Դողացին, ընկան...

Փչում է, ասես,
Ունայնության պես,
Քամին ամեհի
Ճամփում ամայի։

Սմքել է հոգիս
Մռայլ գիշերիս,—
Չգիտեմ մահից,
Թե՞ կյանքի ահից...

Եվ դեղին փոշին
Ելնում է իմ հին
Ապրած օրերից,
Եվ ծածկում է ինձ...

1913 օգոստոսի 6,
Կոլոնժ

Ամեն գարունքին վառ ծաղկունների հետ
Նա սպասում էր իր կորած ոգուն.
Ծաղկունքն են թոշնում վառ գարունքի հետ,
Նա սպասում է նորից իր որդուն։

Ա՜խ, ո՞ր քարի տակ, ո՞վ դիտեն, ո՞ր տեղ,
Ննջում է հիմա նրա սիրելին.
Ծաղկունքը անուշ, ծաղկունքը շքեղ—
Բուրում են, թոշնում անհայտ շիրիմին։

1914

Լորենների տակ,
Մտորում եմ լուռ.
Հեռուն մի ջութակ
Հեծում է տխուր։

Մութի մեջ, ասես,
Իմ բախտի վրա
Անուշիկ մոր պես
Ակտաստվում է նա։

Անոդոր մի ձեռք
Ծանրացավ վրաս,
Փշրեց սեր ու երգ,
Գարուն ու երազ...

Լորենների տակ
Մորմոքում եմ լուռ.
Հեռու մի ջութակ
Լալիս է տխուր...

1914 մայիս,
Բեռլին

Առավոտ պահին
Դալար դաշտերում
Իմ մանկանս հետ
Պառկած եմ անում։

Ծաղիկների հետ
Խոսում է տղան,
Որոնց հետ ե՛ս էլ
Զրույց եմ արած։

Վայրկյանը՝ ծանր,
Օրերը՝ թեթև,
Տարիներն անցան
Իրարու ետև։

Ու աշխարհն աչքիս
Դառնում է երազ.
Երեկ ես էի,
Այսօր՝ երեխան։

Եվ վաղը, ասես,
Մի աչք մթագնած
Լուռ գերեզմանից
Հառել է վրաս...

1914 հունիս,
Բեռլին

Հիվանդ ու մենակ
Պառկած եմ մահճում,
Բարձս գլխիս տակ—
Կրակ վառվում։

Դուրսը, չգիտեմ,
Անձրև՞ է գալիս,
Թե՞ գլխիս վերև
Խեղճ մայրս է լալիս...

Ու դողդոջ մի ձեռք,
Ինձ կըթվա թե
Դալուկ երեսիս
Հով կըթափթփե...

1915 դեկտեմբերի 17,
Բեռն

I

Եղբարս որդու՝
ԹՈՒԱՀԱԿ ԻՍՍԱՀԱԿՅԱՆԻ
նիշատակին

Ծառիս վրա մի գորշ թռչուն՝
Կտուցն առած թևի տակ՝
Կուչ է եկել ու հառաչում,
Ա՜յնպես տխուր ու անհույս,
Ասես՝ առել բերել է ինձ
Վերջին խոսքը սիրելուս...

Ու լսում եմ խոսքը տրտում,
Սրտիցս արյուն է կաթում...

II

Միշտ երկրի երկիր,
Ինձանից հեռու,
Թափառում էիր,
Երբ ողջ էիր դու։

Բայց մոտը եկար
Քո մեռած օրեր.
Հիմա անբաժան
Շրջում ես ինձ հետ։

III

Մաղում է անձրև
Սրտամա՛շ, տրտո՛ւմ.
Անձրև՝ ու անձրև՝
Դանդա՛ղ, անդադրո՛ւմ։

Ա՜խ, հիմի, հիմի
Ի՞նչ ցուրտ է ու թաց
Մութում քո շիրմի,
Իմ սրտիս սիրա՛ծ...

Հոգուս մեջ դարձյալ
Դու մի այրող վերք.
Ես քեզ մոռանալ
Չեմ կարող երբե՛ք։

Ու աշնան մեկում
Կանգնել եմ անհույս,
Անհույս հևիհևում
Անունքդ անո՛ւշ...

IV

Աչքս ճամփիդ ծռվացած՝
Կարոտդ սիրտս էր այրում.
Այցի եկար դու հանկարծ
Ինձ այս օտար աշխարհում։

Դեմքդ քնքուշ ժպիտով,
Ինչպես մանուկ երեկվա,
Գիրկս ընկար կարոտով,
Իմ անուշիկ երեխա՛...

Այդ ինչքա՜ն ես մեծացել,
Պարթևական ի՞նչ հասակ.
Ի՞նչ շքեղ ես, գեղեցիկ,
Գարնան կանաչ արևգակ...

Հաղթանակից ես եկել,
Ոսկեզրահ, քաջաձի,
Ա՜խ, քեզ շա՜տ եմ կարոտել,
Մոտս կեցի՛, մի դարձի...

Սո՜ւտ է, հոգի՛ս, թե հիմի,
Մարմարե ձյունն է ծածկում
Հողաթումբը քո շիրմի.—
Դու իմ մոտս ես, իմ գրկում։

Ճակտիդ վրա, աստղի պես,
Պստի՛կ, պստի՛կ մի վերք կա...
Թո՛ղ համբուրեմ՝ լավանա,
Դու, իմ կորած երեխա՛...

1916,
Ժքեն

Պատերազմ ահեղ,
Աշխարհահեղեղ...

Իմ հա՛յ ժողովուրդ,
Քաջ հայրերիդ պես
Կռվում ես և դու,
Սակայն չգիտես՝
Ո՞վ է թշնամիդ.
Եվ հիմա դժնյա
Այս ճգնաժամիդ
Կանգնել ես մենակ

Վեհ քարերիդ մեջ,
Սեգ լեռներիդ տակ՝
Եվ որդեկորույս,
Եվ ուշեմոլոր...

1916,
Ժընև

ԵՐԱԶ

Օտար երկիր էր գնացել որդին,
Եվ անցել էին տարիներ տրտում.
Մայրն սպասում էր տենչալի դարձին,
Եվ այսօր որդին ուրախ դարձավ տուն։

Իրար գիրկ ընկան անհուն կարոտով
Եվ համբուրվեցին երկար ու երկար.
Լաց եղան մեռած հորը հիշելով
Եվ ցնծության մեջ մոռացան աշխարհ։

Վառեցին նորից օջախն հայրենի,
Խրճիթը լցվեց խնդությամբ անդորը.
Խոսեցին անցած օրերի մասին,
Ապա քուն մտան անհոգ, բախտավոր։

Երբ մայրը զարթնեց, սոսկումով տեսավ—
Օջախը՝ հանգած, խրճիթն՝ ամայի.
Եվ որդի՛ն, որդի՛ն, կաթոգին որդի՛ն
Նորից բանտի մեջ՝ զարկված շղթայի...

1916 հուվարի 4,
Ժընև

Օրերն հալվում են օրերի նման,
Եվ ամեն վայրկյան մեռնում է ներկան.
Ապրած օրերս — սուզվող քաքավան
Անհունության մեջ հավիտենական։

Ոսկի մանկության ոսկի հեքիաթով
Մի վառ աշխարհ կար՝ չքե՛ղ, դյութակա՛ն.
Մարեց, չքացավ երազն հոգեթով
Ոչնչության մեջ հավիտենական։

Արևն հոգուս մեջ՝ մի բուրն աճյուն
Եվ լալով կյանքը՝ չընչին և ունայն,
Գնում եմ սահա սրտարեկ հանգչում
Փոշիների մեջ հավիտենական...

1916 հունիսի 14,
Ժընև

Գառն ու տրտում
Օր ու գիշեր,
Իմ հեգ սրտում
Անհույս վշտեր։

Հայրենի տուն՝
Ավար, ավեր,
Արյո՛ւն, արյո՛ւն.
Անհուն ցավեր։

Սուրբ մանկիկնե՛ր,
Մեր մայր ու քույր
Հրին, ջրին
Ու սրին կուր։

Կսկի՛ծ, կսկի՛ծ,
Այսքան կսկի՛ծ,
Ի՞նչպես տանիմ
Այսքան կսկի՛ծ...

1916 հուլիսի 8,
Ֆոքոն

Գետակի վրա
Թեքվել է ուռին.
Ու նայում է լուռ
Վազող ջրերին։—

... Երազ-աշխարհում
Ամեն բան հավետ
Գալիս է, գնում
Ու ցնդում անհետ։

Եվ գլուխը կախ՝
Նա լաց է լինում.—
Ջրերը ուրախ՝
Գալիս են, գնում...

1916 սեպտեմ, Լոի 25,
Թողոն

Քո կարոտած հայրենիքի
Սոսենու պես՝ սլացիկ.
Մազեր ունիս ոսկի հասկի,
Ու աչերդ մեղեսիկ։

Դու կըսիրես մարդաբիտներ,
Եվ ադամանդը կատես.
Պարանոցիդ ինչ է վայել,
Թեև մանուկ, լավ գիտես...

Երբ շրթունքով երազաբույր
Մեղմ կհպվիս շրթունքիս,
Ա՜խ, ասես թե՝ մի կոշտ ու կուռ
Ձեռք կդիպչի բաց վերքիս։

Ու մի թախիծ խոժոռագեմ
Ինձ կպատեն սև ու մութ.—
Ես հոգնած եմ, ես հիվանդ եմ,
Դու՝ ոսկեղեն մի արտուտ...

1917,
Ժընև

Ամեն անգամ, երբ նայում եմ
Երեխայիս խաղերին,
Թե ինչ սիրով փարվել է նա
Քարին, ջրին ու հողին,—

Խոսք եմ խոսում իմ սրտի հետ.
— Է՜յ իմաստուն մանկություն,
Ունայն բան է խելքը մարդուս
և գործերը մեծանուն։

Դատարկ ձայն է քաջի համբավ,
Գանձ ու պատիվ հանապազ,
Դո՜ւ ես ոսկին, ո՜վ մանկություն,
Դո՜ւ իսկական լույս-երազ։

Ա՜խ, երանեկ թե մանկությունդս
Հանկարծ դառնար զար նորեն,
Գլխիս վառվեր մանկության օրվա
Արեգակդս ոսկեղեն։

Անուշ մորդս ոտների տակ
Թավռալի, խաղալի,
Փառք ու հանճար չարժեն խաղին
Մի ծաղկաբույր տղայի։

Իմ սո՛ւրբ մանկիկ, թո՛ղ համբուրեմ
թաթիկներդ ցեխոտած,
Դու՝ կյանք ու սի՛ր, ծափ ու ծիծա՛ղ,
ուրախության դո՛ւ աստված...

1917,
Ժընև

Նա մի փոքրիկ աղջիկ է՝
Լուսափթիթ աղավնի,
Կհանդիպեմ ամեն օր,
Խելքս գլուխս կտանի։

Ո՞ւրկից կրգա, չգիտեմ,
Ո՞վ է, ի՞նչ է, ո՞ւր կերթա.—
Կուզեմ ընկնեմ նոանն,
Երթամ, ուր որ նա կերթա։

1917,
Ժընև

ԵՐԿՈՒ ԹՌՉՈՒՆ

Կեռասենու ճյուղերին երկու թռչուն դարունքին
Կբխոսեին անուշիկ, ու մեկն ասաց այն մեկին.
— Մի՛վ-ծի՛վ, սիրուն սիրունիկ՝ ես քեզ տեսա, երբ դու նո՛ր
Մայրիկիդ հետ թև եկած՝ կբթուշեիր ասր ու ձոր.
Այն օրվանեն իմ սիրտը քնքուշ թևիդ հետ տարար...
— Մի՛վ-ծի՛վ, խոսեց մյուսը, սակայն ես քեզ չեմ ճանչնար.
Միայն ձայնդ ծանոթ է, վաղուց ծանոթ, բարեկամ,
Լսած լինիմ, ասես թե՝ երազիս մեջ մանկական։
— Մի՛վ-ծի՛վ, ասաց մեկելը, այդ խեղճ սիրտս է, իմ անո՛ւշ,
Որ շեմքիդ տակ կուչ եկած՝ սերըս կերգե մինչև լույս...
— Մի՛վ-ծի՛վ, հնչեց մյուսը, ու պատասխան չտալով՝

Քնքուշ կտցեց մի կեռաս թելիկ-մելիկ նազանքով։
— Մի՛վ-ծի՛վ, խոսեց մեկելը, ես քեզ վաղուց կըսիրեմ.
Թո՛ղ որ թռչիմ մոտիկդ, տոտիկներդ համբուրեմ,
Թեդ ձգե իմ թևին, թռչինք, երթանք հեռունե՛ր.
Ես տեսել եմ, ես գիտեմ հեռուն ոսկի աշխարհներ,
Ուր ո՛չ մարդ կա, ո՛չ ուրուր,— տարի բոլոր վառ գարուն,
Հույս-աղբյուրներ շողշողուն, զան պարտեզներ դալարուն.
Այնտեղ շինենք մեր բույնը, երգենք մեր սերն ու կարոտ...—
Ու իր տեղեն թիռ առավ, թռավ նստավ նրա մոտ։
Իսկ մյուսը լուռ ու մունջ, թելիկ-մելիկ նազանքով
Քնքուշ կտցեց մի կեռաս, աչքի ծայրով նայելով...
Մեկ էլ... Իրար թև-թևի, անո՛ւշ-անո՛ւշ ծլվլան՝
Ծափիկ տվին ու թռա՛ն, ծափիկ տվին ու թռա՛ն...

1917 հունվարի 25,
Ժընև

Ցերեկվա ոսկի լույսերը մեռան,
Ծածկել է թևը մթին լռության
Անտառ, լեռ ու ձոր։
Քնել են անդորր՝
Ուղիներ փոշոտ, կամուրջ սալհատակ՝
Անդուլ ծեծկըված կուռ ոտների տակ։

Սակայն մի հառաչ խորունկ, սրտագին՝
Լսում եմ անքուն այս խուլ գիշերին
Հեռու մի տեղից.
— Քո խոցված կրծքից,
Իմ սո՛ւրբ հայրենիք՝ անարատ զոհի,
Վեհ գաղափարի, պայքարի, մահի,—
Խոսում ես հավե՛տ
Խոցված սրտիս հետ...

1917 հունվարի 28,
Ժընև

ԿՏԱԿ

Սիրուն մանկի՛կ, ես գնում եմ, դու գալիս ես այս աշխարհ.
Ճշմարիտն ես փորձով գիտեմ ու խոսքերս մի՛ մոռնար։

Կյանքն է՝ ամպի փախչող ստվեր, վայրկյանն է միշտ
իրական.
Բախտի կռանը կամքն է թեև, բայց դիպվածն է տիրական։

Զգացմունքն է գերիշխանը, խելքը՝ նրա լոկ ծառան.
Բայց դո՛ւ խելքդ վրադ պահի՛ր, ինչպես պողպատ կուռ
վահան։

Մի՛ հավատար ստվերներին, հենվի՛ր միայն քեզ վրա,
Ատելու չափ սի՛րիր մարդկանց, բայց լավություն միշտ արա։

Եվ լայն օրում՝ թե՛ ընկերներ, թե բարեկամ ճանաչի՛ր.
Իսկ նեղ օրում՝ ընկերների ո՛չ որոնիր, ո՛չ կանչիր։

Խաղերով լի այս աշխարհում խաղդ եթե տանուլ տաս,
Զվարթ եղի՛ր, ու այդպիսով բախտի վրա կբխնդաս։

Անվախ ու վեհ դեկդ վարե անծանոթին դեմ-դիմի.
Անզգալի առաջ գնա՛, ինչ որ լինի՛, թո՛ղ լինի։

Լսի՛ր, տղա՛ս, ինձ կթաղես անհայտ մի տեղ, աննշան,
Որ չիմանան, մարդիկ չգան՝ շիրմիս քարը զողանան։

1917 հոկտեմբերի 1,
Ժընև

Հայոց գեղջուկի ծավալուն արտե՛ր,
Ավետարանի էջերի նման
Խնկաբո՛ւյր, օծո՛ւն, հավե՛րժ սրբազան,
Թշնամու սրով հասկաբեկ արտե՛ր։

Խորան մնացիք՝ անուշ, ամայի,
Ակոսներիդ մեջ մորթեց մաճկալին,
Մանուկ հուսալին, անխոնջ աճալին
Դարերի դժխեմ ոսոխն ամենի։

Հայոց գեղջուկնե՛ր, եղբայրնե՛ր հոգուս,
Ձեր արյունապանդ արտերի վրա
Դրախտի փառքով պիտի հուրհրա
Մեր ազատության ոսկի արշալույս։

Դուք եք տյաբվեան մեր դատն լացը,
Սուրբ նահատակնե՛ր ատածս սեղանի,
Դո՛ւք, անմահ սերմեր մեռնող ցորենի,
Դո՛ւք եք վաղորդյան մեր արդար հացը,—

Հայոց գեղջուկնե՛ր, եղբայրնե՛ր հոգուս...

1917 դեկտեմբերի 15,
Ժընև

Ձյունն է եկել ծածկել հիմա
Ճերմա՛կ, ճերմա՛կ խաղաղությամբ
Դաշտեր, գյուղեր սիրուր, ավեր
Հայրենիքիս...

Անհո՛ւն, անծիր տառապանքով,
Ձարհուրանքով, եղեռններով
Հազար ու բյուր, հազար ու բյուր,
Մայր ու մանուկ, եղբայր ու քույր
Մեռան իրենց արյունի մեջ—
Ձարհուրանքով, եղեռններով,
Անհո՛ւն, անծիր տառապանքով։

Եվ ձյունն հիմա ծածկել է լուռ
Ոսկորները նրանց անթաղ
Ճերմա՛կ, ճերմա՛կ խաղաղությամբ...

1918

Ա՜խ, ասացին ինձ, թե մեռել ես դու,
Մեռել ես վաղուց, մայրի՛կ, իմ հոգիս...
Մեռել ես, չլկաս... Ծածկել է հավետ
Անհուն խավարը դեմքդ թախծանուշ.
Ու հոգ ես դառնում... Ավա՜ղ, այսուհետ
Քեզ չեմ տեսնելու, մայրի՛կ իմ քնքուշ...

Սակայն հանապազ, ինձ հետ անբաժան՝
Մի անհայտ տեղից, ինձ այնպես մոտիկ,
Գիշեր ու ցերեկ, ու ամեն մի ժամ,
Ամեն մի վայրկյան անծայր կարոտով,
Աչերդ լեցուն սիրով ու գթով՝
Անթարթ, անքթիթ հառել ես վրաս,
Սրտով, սրտակից,
Մի՛շտ նայում ես ինձ, մի՛շտ նայում ես ինձ,
Մայրի՛կ, իմ հոգիս...

1918,
Կուցեռն

Թռչուններն ուրախ՝
Նորեկ գարունքին
Սիրով, սրտագին,
Խոսում են կրկին։

Ա՜խ, կար ժամանակ,
Ես ա՜յնպես ներհուն,
Իմանում էի
Հավքերի լեզուն։

Բայց սին ու դժնյա
Խաղերից կյանքիս
Օր-օրի վրա
Նանրացավ հոգիս։

Եվ հիմա նրանց
Լեզուն իմացուն,
Լեզուն երազի,
Էլ չեմ հասկանում...

1918 մայիս,
Ժընև

Քայլում եմ մենակ անտառի խորքում,
Դեղին տերևը թափվում է վերաս.
Ո՛չ վիշտ եմ ազում, ո՛չ սեր եմ երգում,—
Իմ հոգում շլկա ո՛չ ասող, ո՛չ երազ։

Եվ մրմրվում եմ անտառում խավար,
Չեմ տենչում գտնել դարձի արահետ.
Տերևների պես ծնծվա՜ծ, հողմավա՜ր,
Գնում եմ կորչիմ տերևների հետ...

Եվ մահվան հանդեպ կանգնել եմ ահա՛,
Զեռքով եմ անում, կանչում եմ՝ թո՛ղ գա...

1918 դեկտեմբերի 19,
Ժընև

Մի թռչուն եկավ
Երազի միջից,
Եվ ծարավ հոգուս
Շշնջաց մեղմիկ
Անունդ անուշ,
Իմ սիրուն մանկի՛կ։

Երգից աչերդդ՝
Գեղջուհու ու անբիծ,
Սուրբ խոսքեր ասաց
Մի քնքուշ որդին,
Իմ չքնաղ մանկի՛կ,
Նազելի մանկի՛կ...

1919 Հունվարի 25,
Լոզան

Ուրիշների շրերն ընկած՝ գնացի,
Հրամաններ կատարելով գնացի,
Շատ չանցավ, որ սրտիս հետ ընթանամ,
Աշխարհի հետ թավալվելով գնացի...

1919,
Ժընև

ԱՌԱՋԻՆ ԱՐՑՈՒՆՔՆԵՐԸ

Գարնան արևը անհուն համբույրով
Դուրս կոչեց կյանքի ծլին ու ծաղկին,
Եվ մանուշակը կապույտ աչերով
Անմեղ, միամիտ ժպտաց ամենքին։

Եկավ գեփյուռը, շշնջաց նրա
Կույս ականջներին և սահեց գնաց,
Եկավ թիթեռը, թռռաց նրա
Նազելի գլխում և թռավ գնա՛ց։

Եվ մանուշակը նրանց հանիշ
Մնաց նայելով... խաբող ցնորքներ.
Եվ ընկան նրա աչքերից անբիծ
Առաջին սիրո մաքուր արցունքներ։

1919,
Ժընև

Լուռ է ու խավար,
Ասես՝ ողջ աշխարհ
Դարձել է միայն
Անհյուծ գաղափար։

Բայց հանկարծ մի ձայն
Ականջումս հնչեց.
Այդ մա՞յրս էր արդյոք
Իմ բախտը հիշեց
Իր սուրբ աղոթքում.
Թե՞ իմ վաղուցվա
Սերս էր կաթոգին,
Անունս ակամա
Դողաց շրթունքին...

1919,
Ժընև

Ահա նորեն գարուն եկավ.
Օ՜, կտրեցե՛ք, օ՜, կտրեցե՛ք
Լեզուները թռչունների,
Որ չհանդգնեն երգել անհոգ
Երգերն իրենց տարփանքների՝
Մեր մորթված մանուկների
Ցլիվ եղած նշխարների
Փոշու վրա, որոնց պիտի
Ծածկեն անգութ ծաղիկները՝
Լի՛ բ, անզգա...

1919 Հունվարի 29,
Ժընև

Հայրենիքից հեռու, մի օր,
Եթե մահը զարկե ինձ,
Միևնույն է՝ թաղվիմ ուր որ,—
Մեր մոր գրկումն եմ նորից։

Սակայն, քաղցր է ննջել դաշտում.
Խնձորենու շուքի տակ,
Որ գարունքին շիրմիս ծուփ գան
Ծաղիկները սպիտակ։

Եվ ամառը՝ աղջիկները
Վրաս կանգնեն երգելով.
Քաղեն, լցնեն գոգն ու ծոցը
Կարմի՛ր, կարմի՛ր խնձորով։

Եվ աշունքին՝ սիրուս նման
Մեռած, լացած մի երազ՝
Տերևները գալուկ, դեղին,
Իջնին, մեռնին իմ վերան։

Երբ ձմեռ գա՝ լռիկ ու հեզ,
Բյուրեղները ճյուղերեն
Շիրմիս կաթեն արցունքի պես՝
Մենության մեջ ձյունեղեն։

1919 մայիսի 25,
Ժընև

Ես հովիկ լինեի,
Դու՝ նաղուկ ցարաս.
Գգվեի կարոտով
Վարսերդ սնդուսի։

Ես եղնիկ լինեի,
Դու՝ աղբյուր պաղպաջուն.
Խմեի համբույրդ
Շրթերով տոչորուն։

Ես թիթեռ լինեի,
Դու՝ կարմիր բոց-կրակ,
Կիզվեի գրկիդ մեջ,
Մեռնեի ոտքիդ տակ։

1919 հունիսի 9,
Ժընև

Զորահավաք էր։ Շտապ տուն եկավ
Զինվորի զգեստ հագած մի տղա.
— Մայրի՛կ, ինձ օրհնի՛ր,— պատանին ասավ,—
Ես էլ կռվի դաշտ գնալու եղա...

Ուշաթափ ընկավ խեղճ մայրը թշվառ,
Եվ երբ ուշքն եկավ նորեն իր վրան,
Գրկեց զավակին պինդ, կարոտավառ,
Որպես թե վաղուց չէր տեսել նրան։

— Ա՜խ, ի՜նչ ուրախ եմ, փա՜ռք քեզ, ասաված իմ,
Որ ողջ ետ դարձավ իմ անուշ որդին...

1919 հունիսի 19,
Ժընև

Գրկիր ինձ մեղմիկ,—
Քո կախարդ գրկում
Ես զգում եմ ինձ
Իմ հայրենիքում։

Ծիծաղում ես դու՝
Ուրախ ու անմեղ,
Մեր դրան, ասես,
Աղբյուրն է բյուրեղ։

Շշնջո՞ւմ ես դու
Այնպե՞ս հեզ, անուշ.
Ասես, մեր դաշտի
Հովիկն է քնքուշ։

Ու երբ խաղում ես
Իմ մազերիս հետ,—
Վառ մանկություն
Ինձ գառնում է նաև։

1919 հունիսի 23,
Ժընև

Այցի եմ դալիս քեզ մոտ ես հաճախ,
Նստում եմ դեմդդ՝ հանգիստ ու խաղաղ.
Զրույց ենք անում երկա՞ր միասին,
Հազար նյութերի, հարցերի մասին։

Եվ սիրո մասին խոսում ենք նույնպես,
Բայց խիստ անտարբեր ձևանում եմ ես,
Վրադ չեմ նայում, չեմ լսում ստեպ,
Որպես թե անհույզ, սառն եմ քո հանդեպ։

Բայց հալվում եմ ես սիրուց բոցակեզ.
Ուզում եմ գրկել ու համբուրել քեզ.
Հազիվ զսպում եմ մբրրիկը սրտիս,
Ա՜խ, սակայն հոգիս բևեռնա է գալիս...

1919 նոյեմբեր,
Ժընև

Մարգարիտնե՛ր վրդիվ շուրջ՝
Տրտում փայլով ու քնքո՛ւշ.
Մարմարեղեն վրդիվ շուրջ՝
Մարգարիտնե՛ր թափծանո՛ւշ։

Արցունքներս են իմ սիրուս՝
Տխո՛ւր, տխո՛ւր, դալկահար.
Արցունքնե՛րս իմ անհույս—
Վրդիվ բոլոր շարիշար...

1919 նոյեմբերի 23,
Ժընև

ՆՈՐ ՏԱՐՈՒ ԳԻՇԵՐԸ

Գիշերվա կեսին զանգակատունից
Հնչեց նոր տարվա ժամը ցնծալից։
Անցավ հին տարին, անցել է ինչպես
Մի հավերժություն մինչև այս րոպես,
Մի հավերժություն անհուն, անսահման,
Որ չքացել է ոչընչի նման։

Եվ բեռնավորված հույսով ու վախով՝
Մեռավ հին տարին իր հետ թաղելով
Ապտրանքները իմ երաշանքի,
Որ շինել էի միշտ ժամանակի
Քանդվող ծովափին...

Եվ ի՞նչ կա այսօր,
Կանգնել եմ մենակ և ուղեմոլոր՝
Ու միտք եմ անում — չըքացավ անդարձ
Հրճվանքը կյանքիս, և՛ վիշտը մնաց
Սրտիս հատակում, ինչպես սև մբրուր...

Կանգնել եմ հիմա անհույս և թափուր՝
Աչքերս սուզած խավար անհայտում
Գալիք օրերի,— ականջ եմ դընում

Զանգակատունից խորին գիշերին
Նոր տարվա ժամի հընչող զարկերին,
Որ ինչպես սրբի հարվածներ բեկ-բեկ
Կտրում են կյանքիս թելերը մեկ-մեկ...

1920 դեկտեմբերի 31,
Ժընև

Աշնան ծաղիկնե՞ր,
Դալո՛ւկ ու տխո՛ւր,
Դողդոջում եք հեզ
Դաշտերում թափուր։

Ձեր աչերի մեջ
Արցունք կա տրտում,
Ուշացած երազ
Ձեր քնքուշ սրտում։

Շուտով կըշաչե
Հողմը բքաբեր,
Կըթոշնիք չապրած,
Աշնան ծաղիկնե՞ր...

1921 մարտի 4,
Ժընև

Սիրածներիս կորուստի հետ
Չհաշտվեցի ես երբեք,
Անհրաժեշտի իմաստի հետ
Չհաշտվեցի ես երբեք։
Իզուր ինչքան միտքըս չանաց
Սրտիս մի խոսք հասկացնել,—
Իրերի հոսման փաստի հետ
Չհաշտվեցի ես երբեք։

1921

Հարևանիս որդին մեռավ՝
Քսան տարու տղա.
Նոր էր ինձնից գիրք փոխ առավ,
Առո՛ւյգ, առո՛ղջ տղա։

Բիլ գիշեր է գարնանային՝
Լուսնով, բույրով օծուն.
Կութնել եմ ես պատշգամին՝
Միտքս ցավով խոցուն։

Աչքս եմ հառել պատուհանին
Մահով մթնած խուցի.
Մոմն է վառվում լուռ սնարին,
Դալուկ, առանց բոցի։

Եվ դիտում եմ, անհագ դիտում՝
Շուրջս լցված մահով.
Զարհուրանքն է հոգիս պատում
Անէության ահով։

Եվ աշխարհն է մեռել դառնում՝
Ընկած սրտիս վրա.
Եվ լուսինը — դալուկ մի մոմ՝
Լուռ սնարին նրա...

1921,
Վենետիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Դու, երկնամերձ իմ հայրենիք, դո՛ւ, հինավուրց ի՛մ Հայաստան,
Անմահ բանի սպասարկու, խորհուրդ խորին, ի՛մ Հայաստան,
Դո՛ւ, ալեոր տեսիլների աստեղազօծ ի՛մ Հայաստան,
Եվ նոր խոսքի ավետաբեր, հազարավերք ի՛մ Հայաստան։

Սաղավարտներ դրած կանգնած քո լեռներդ կուռ երկաթի,
Աբորնները արյունազանգ՝ արդարության ցորեն արտի.
Երդիկներիդ ծուխերն անուշ՝ նվիրական նավասարդի,
Հին օրերի երգ սրբազան, սեղան զոհի, ի՜մ Հայաստան։

Քո գետերդ՝ տեղ սուրացող, ազատատենչ, կամուրջ քանդող,
Քաղաքներիդ մոխիրներից ծլած վարդերն արյուն-բուրող.
Շարականները՝ հոգեբուխ, շինականիդ երգը՝ լացող.
Հին սերերի, նոր կարոտի ոսկի բամբիռ, ի՜մ Հայաստան։

Դստրիկները քո փափկատուն՝ անապատի գայլերին կեր,
Որբուկները՝ մերկ ու ծարավ, սովալլուկ, մահի ընկեր.
Բախտիդ վրա՝ ծափ ու ծիծաղ, սփոփանքի ունայն խոսքեր,
Նոր հույսերի, նոր երգերի երազաբույր ի՜մ Հայաստան։

Բարեկամներից վաճառված, անիրավված ի՜մ հայրենիք,
Ոսոխներիդ կըրունկի տակ ավերակված ո՜րբ հայրենիք,
Սարսափներով, եղեռններով հավերժացած հի՜ն հայրենիք,
Արյունիդ մեջ սուրբ իրավունք, հոգիդ արև, ի՜մ Հայաստան։

Կըռունկները՝ համբավ տանող՝ պանդուխտներիդ աշխարհալած,
Նահատակված տաճարներիդ գմբեթները երկնասլաց,
Մագաղաթներդ արյունաներկ՝ ձայն հեծության, հառաչանաց,
Հընուց ուխտի վրկայական, ավանդատուն, ի՜մ Հայաստան։

Սիրանավոր քաջ-Մասիսդ՝ սպարապետ քեզ պահապան,
Սերունկները՝ ճակատագրիդ ճամփաների սուրբ օրհնաբան,
Նոյ-Նահապետ աստվածատես՝ ածուներիդ վեհ այգեպան,
Մանուկներիդ ու կույսերիդ արյան հընձան, ի՜մ Հայաստան։

Արդարախոս ու մեծասքանչ քո հին լեզվով օրհնեցըված,
Լուսավորչի լույս կանթեղով երկինքներդ լուսերանգված,
Անճառելի ու դարերի տանջանքներով հոդեացած,
Հըրաշափառ քո Հարությամբ՝ նորամանուկ ի՜մ Հայաստան։

1921,
Վենետիկ

Թարթիչներդ շուք կտան
Դեմքիդ վրա թավիշն.
Սիրտս շուքի տակ անուշ՝
Եվար մտած կերաղեն։

Թաթիկներդ լուսեղեն—
Լույս թռչնիկներ հեքիաթի.—
Ճանճանչներով ոսկեգին
Բույն կհյուսեն նոր բախտի։

Զմրուխտ թասով գինի ես,
Բույրդ աշխարհ է առել,
Շուրթս վառվեց շրթներդիդ,
Աշխարհիս տերն եմ դառել։

1922,
Վենետիկ

Սառերի վրա աշունը դալուկ
Հրծծում է մեղմիկ մի դեղին նրվագ՝
Թախծոտ ու անո՜ւշ...

Լեռների վրա ձյունել է բարակ,
Ուր, կարծես, իրենց փնտուրը քնքուշ,
Նետել են դաղթող հավքերը ճերմակ...

Ի՞նչ ես սպասում, սի՜րտ իմ ծարավի,
Սերերիդ անցած չըկա՜ վերադարձ.
Նստի՜ր մենկուսի բաժակիդ առաջ,
Հուշե՜ըդ գգվիր և լա՜ց մենկուսի...

1922,
Հռոմ

Մեղեդիներով գարունն է փթթել,
Անհուն հայացքով ժպտում է արև.
Կարծես՝ դաշտերը թուխպը չի պատել,
Չի կախվել ծառից մահադույն տերև։

Պառկել է մեջքին ծովը անդորրիկ,
Լայն-լայն բացել է աչքերը ծավի,
Կարծես՝ չի պայթել այնտեղ փոթորիկ,
Եվ հետքն իսկ չկա բեկված մի նավի։

Մանուկներն ուրախ՝ դալար մարգերում
Երգում են, պարում՝ գիրկ գրկի փարած.
Կարծես՝ աշխարհում չի թափվել արյուն,
Չի եղել երբեք լաց ու կոտորած...

1922,
Վենետիկ

ՊՈՄՊԵՅԻ ՄԵՋ

Ինչպես իմ հոգին՝ անհույս ու խավար,
Անհունության մեջ՝ մռայլ, անսահման,
Գուղձն այս հողեղեն — երկիրը թշվառ,
Եվ աննպատակ, անդուլ, անկայուն,
Ի՞նչ է թափառում, ո՞ւր է թռչում նա,
Որպես կույր թռչուն անպունդի վրա...

Դո՛ւ, արյան անոթ, սարսափի հովի՛տ,
Ուր կյանքն է կյանքին սնունդ հանապազ,
Ատում եմ ես քո խորհուրդը դժմիտ։
Եվ գիտեմ՝ մի օր պիտի չքանաս,
Ինչպես մի երազ՝ չծնված ընավ,
Բեկվի՛ր իսկ այսօր, ո՞վ ոճրաբեր նավ։

Ո՛վ ունայն դաղտնիք, սատեղծո՛ղ անպոթ.
Որ շինում ես միշտ՝ քանդելու նորից
Ծիր-կաթինները, անհունները մութ,—
Դու չե՛ս դերազանց իմ խեղճ հյուլեից։

Ես՝ սիրտ ղգացող, ես՝ խորհող ոգի,
Դու մինչդեռ՝ հորձանք անմիտ տարերքի։
Եվ հիմա ծանր վրեժոգի հսկա
Իջել ես, կրքել ուսերիս վրա...

1922,
Պոմպեյ

Ասում են, թե՝ դու այնպես
Մոռացել ես ինձ, այնպես,
Որ երբ անունս են տալիս,
Հազիվ միտքդ եմ գալիս։

Բայց, նազելի՛ս, ձեր բակում
Այն լորին է դեռ ծաղկում,
Որի քնքուշ բույրի մեջ
Քեզ գրկեցի սիրատենչ։

Ու գրկիս մեջ այսօր դեռ
Կիզող կրակ է վառվել,
Իսկ երբ անունդ են տալիս,
Սիրտս արյուն է լալիս։

Ա՜խ, իրա՞վ է՝ դու այնպես
Մոռացել ես ինձ, այնպես,
Որ երբ անունս են տալիս,
Հազիվ միտքդ եմ գալիս...

1923,
Վենետիկ

Լուսնյակ գիշերին քայլում եմ մենակ,
Նիրհել են դաշտեր, լեռներ ու ծմակ։

Լճակներն անթարթ ու բաց աչերով
Քնել են անդո՛ղր, անհո՛ւյզ, անխոո՛վ։

Առանց դարմանի այրո՛ղ ցավ ու վերք
Ճակատիս գրեց մի չարաղետ ձեռք։

Դառնությունները վերաս ծանրացան,
Մնացին վերաս, օրեցօր շատացան։

Լուսնյակ գիշերին շրջում եմ անքուն,
Ցավերդս անգութ սիրտս են կեղեքում։

1923,
Վենետիկ

Կուզենայի, երբ կրկին
Գամ հոգնաբեկ ուխտավոր
Նվիրական քո շեմքին,—
Տեսնել այնպես նորից քեզ,
Ինչպես տեսա, սիրելի,
Սիրելի քեզ սրտակից։

Շնորհներով կուսական,
Աչերիդ մեջ նվիրում,
Խոստումներով դյութական.
Ճակատդդ՝ լույս ու ճաճանչ,
Եվ ժպիտով հոգեթով
Եվ ձայնիդ մեջ՝ սիրո կանչ։

Շուրջդդ՝ գարնան բույր ու ցող,
Շուրջդդ՝ կայլակաչ ու կանանչ,
Եվ երազներս ոսկեշող։

1925 հոկտեմբերի 22,
Վենետիկ

Ո՛վ, նկան ազգեր և քո շառաչին
Խառնեցին իրենց երգերը շնչին։

Եվ հիմա նրանք Հավիտյան լռել,
Անցել են անդարձ, դարձել առասպել։

Բայց դու, անտաբբեր, երգում ես կրկին
Բյուր դարեր Երգած քո երգերը հին։

Կրգան նոր երգով ազգեր նորանոր,
Կերգեն ու կանցնեն ազգեր բյուրավոր։

Եվ կանհետանան անտապանագիր,
Եվ նրանց հիշող չի մնա մեկ հոգի։

Բայց դու, անփոփոխ, կերգես վերստին
Բյուր դարեր երգած քո երգերը հին։

Եվ սակայն մի օր, նման մարդկության,
Կբլռես և դու, անդարձ, Հավիտյան։

1925 հոկտեմբերի 23,
Վենետիկ

Մի մրահոն աղջիկ տեսա
Ռիալտոյի կամուրջին,
Հորդ մազերը — դեռ գիշերվա,
Եվ հակինթներ՝ ականջին։

Աչքերը սև — արևներ սև,
Արևների պես անշեջ,
Գալարում էր մեջքը թեթև
Ծաղկանկար շալի մեջ։

Աչքս դիպավ աչքի բոցին,
Ու գուխքս կախեցի.
Ժպտաց ժպտով առեղծվածի,
Հավերժական կանացի։

Միամիտ չեմ՝ հավատամ քեզ.
Տառապանքս փորձ ունի. —
Մի մրահոն կույս էր քեզ պես,
Կոտրեց սիրտս պատանի...

1925· դեկտեմբեր,
Վենետիկ

ԱՆԻ

Այստեղ երկնել են նախնիները իմ,
Դարձել է այստեղ նյութը գաղափար,
Հագել է այստեղ երազը մարմին,
Ջքնաղ երազը, որ չունի կոպար։

Անի՛, դու չես լոկ հողեղեն մի գանձ,
Դո՛ւ, ինքդ ես ոգին — մի ողջ ժողովուրդ,
Ամեն ձև այստեղ ոճ է գերազանց,
Ամեն ինչ այստեղ — իմաստ ու խորհուրդ։

Ես հոգուս աչքով՝ անցած ու նեյլկա
Վիճակդ եմ տեսնում՝ հենված մի այուի,
Որ մարտնչելով դարեր ուրնկա.
Մեռնում է կանգնած, եթե մահ ունի։

Սաղավարտակիր, ձեռքիս տեգ ու նետ,
Կանգնել եմ բարձր բուրգիդ կատարին,
Ռատանիկներիդ, ռամիկներիդ հետ
Լսում ենք վառված սեգ զորավարին։

Տաճաստաններից, խուժանը վայրագ
Հորդել է, եկել — հեղեղ դայրագին,
Ուզում է, Անի՛, ընկճել լուծի տակ
Քո ստեղծագործ, թեավոր ոգին։

Խաժամուժ, խուժան՝ անծայր, անքանակ,
Դարեր խուժում են — խժդուժ, խոլարշավ,
Ճըչում խժաձայն, դնում են բանակ
Քո ցորենաշատ դաշտերում անբավ։

Եվ որոտում է շեփորը ռազմի,
Կռվում ենք մտած արյուն ու քրտինք,
Դարեր կռվում ենք ատամ ատամի,
Մեռնում ենք կանգնած, եթե մահ ունինք...

Քո հին թշնամին, Անի՛, չե՞ս տեսնում,
Խուժել է նորից քո դաշտերի մեջ,
Բայց վառվում է դեռ մեր ակութներում
Հինավուրց ուխտի կրակը անշեջ։

Դո՛ւ, հին դրոշակ, դո՛ւ, բազին փառքի,
Հենվել եմ նորից քո անմահ այուին.
Եվ սպասում եմ, և դարեր ուրքի
Քո իրավարեր շեփորիդ ձայնին...

1926,
Վենետիկ

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ

Ակութներից հին Հայրենի
Ցուխն է ելնում բարի,
Ուղիներով ազատության
Թռչում ես դու արի։

Սալամբակ թռչում ես դու
Նոր օրերի աստղին,
Հավատարիմ քեզ ուժ տվող
Հին օրերի հոգին։

Խոչ ու խութերն թշնամական
Թռիչքդ չեն կասում,
Աշխարհաչափ ճշմարտության
Նոր խոսքեր ես ասում։

Դո՜ւ, հին երկիր, նոր ու պայծառ,
Ի՜մ ժողովուրդ, ի՜մ հայ,
Արևաթև անմահ թռչուն՝
Հուր ու սրից ծնած...

1926 ապրիլի 25,
Վենետիկ

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ

Պիտի փարվիմ չքնաղ լանջիդ՝
Գարնան վարդով ցնծո՜ւն.
Եվ մայրական անհուն շնչիդ՝
Ցորեն արտով ծրփո՜ւն։

Կանչում ես ինձ լուսաբարբառ
Քո սիրազեղ կոչով՝
Դեմքդ եմ տեսնում՝ նոր ու պայծառ,
Քո հնագեղ ոճով։

Վա՜ռ ու հզո՜ր քո ապագան
Կայծակում է իմ դեմ.
Դո՜ւ, հավերժող իմ Հայաստան,
Անուն քա՜ղցր ու վսե՜մ։

1926 ապրիլի 25,
Վենետիկ

ՌԱՎԵՆՆԱՅՈՒՄ

Արարատի ծեր կատարին
Դար է եկել, վայրկյանի պես,
Ու անցել։

Անհուն թվով կայծակների
Սուրն է բեկվել ադամանդին,
Ու անցել։

Մահախուճապ սերունդների
Աչքն է դիպել լույս գագաթին,
Ու անցել։

Հերթը հիմա քոնն է մի պահ.
Դու էլ նայիր սեգ ճակատին,
Ու անցիր...

1926 հունիսի 8,
Վենետիկ

Ամոթ եմ դնում հայրենական հարկը հին,
Հին որմերը խոսում են ինձ հոգեթով.
Աչքս եմ նետում մորս նստած անկյունին,—
— Ո՞ւր է մայրս ստեղծագործ իր ժպտով։

Իշնում եմ լուռ երազանքի պարտեզն իմ,
Ուր թախծեցի, մտորեցի, երգեցի.
Չկա՜ բարդիս, ուրիս չկա՜ մտերիմ,
Որոնց հետ ես հասակ առա, ծաղկեցի։

Շրջում եմ լուռ՝ աչքս հառած ամենքին,
Փողոցներում, շուկաներում մարդաշատ,
Չկա մի դեմք վաղուց սիրած սրտացին.
Ո՞ւր գնացին սիրելիներս հարազատ։

Այցելում եմ գերեզմանոցն ամայի,—
Մամռոտ քարեր, եղծված գրեր, բեկված հող,
Ա՜խ, ընկերներ իմ խանդավառ օրերի,
Ես մնացի ձեր անունը հեծեծող։

Վիշտն է խեղդում հոգիս լքված, տրտմասուգ
Թափառում եմ ուղիներում մեկուսի.—
Երգն եմ լսում մանուկների կենսասույգ,
Է՜յ, ողջո՛ւյն քեզ, նոր առավոտ նոր հույսի։

Վառ ընձյուղներ արևատենչ, սիրաբաղձ,
Որ փայլում եք ցողով, շողով անվրդով,
Անցե՛ք կյանքի սարիորներով ուսաբարձ,
Անցե՛ք ուրախ՝ ավայտանքիս վրայով։

1926 հունիսի 27,
Վենետիկ

Ինչո՞ւ, ինչո՞ւ հիմա այսպես
Չար ես այսպե՛ս, չար ինձ հետ,
Որ նամակներս ու պատկերս
Ուղարկեցիր ողջը հետ։

Խստապահանջ խնդրում ես ինձ
Նամակներդ ետ դարձնել.
Կատարում եմ ասպետորեն
Քմայքներիդ այս խաղն էլ։

Բայց համբույրներն այն սրտագող,
Որ ինձ տվիր ու առար,
Թնավ երբեք դու չես կարող
Ո՛չ ստանալ, ո՛չ հետ տալ։

Նրանք պիտի վառվեն անշեջ,
Պիտի կիզեն քո հոգին,
Ինչպես որ միշտ այրում են ինձ
Երջանկությամբ ցավագին։

1926 հուլիսի 24,
Վենետիկ

ՀԱՅՐԵՆԻ ԾՈՒԽԸ

Հայրենի՛ հողի վրա եմ նորից,
Նորից մանկական աչքով տեսնում եմ՝
Հավերժից դիտող աստղերն հրեղեն,
Հրաշք է դառնում աշխարհն ինձ նորից։

Ուրախ քրքիջով վազում է կայտառ
Իմ հին խաղընկեր գետակը փայլուն,
Տեսնում եմ նրա ղմրուխտ հայելում
Ծաղկի պես ցնծուն՝ պատկերս պայծառ։

Կապույտ երեկոն ա՜յնքան է խաղաղ,
Երգում է ծառից մի հավք սրտագոհ,
Տեսնում եմ՝ հայրս բարի, մտախոհ,
Սանոթ շավիղով քայլում է դանդաղ։

Ինձ տուն է կանչում ձայնը մայրենի,
Խաղրս թողնում եմ. երեկո է ուշ.
Գգվում է մայրս, ժպտում է քնքուշ,
Մի արևի պես, որ նման չունի։

Վառվել է նորից օջախն հինավուրց,
Ելնում է ծուխը անուշ խրնկի պես.
Խոսում են մերոնք... բայց ենջում եմ ես,
Հոգիս պարուրած հեքիաթի ու անուրջ։

Ոչինչ չեմ տեսնում այս ծխից ավել,
Ոչինչ, դատարկված այս մերկ աշխարհում.
Ո՛չ կին երազած, պանծալի անուն,
Ո՛չ դանձ աշխարհի — այս ծուխից ավել։

Կուզեի նստել այս սուրբ ծխի տակ
Ու տեսնել նորից հոգով մանկական՝
Հարազատներս, որ հիմա չկան,
Եվ հրաշք նորից — աշխարհ բովանդակ...

1926,
Երևան

Աչքերդ՝ սև-հոսք,
Հոգիս են կիզում,
Մազերդ՝ սև-սոսք,
Սիրտս են թրատում։

Վիշտս է ծփում
Սիրուս պես վարար,
Քո ուղին ծածկում՝
Դավաճան ու չար,—

Ուղիդ արյունոտ,
Որ տանում է քեզ
Ուրիշների մոտ,
Ուրիշների մոտ...

1927,
Երևան

Վերջին հրաժեշտ քո ցնորքի,
Գրոհ ավիր կյանքիս վերջին,
Ջեռիդ անհուն բաժակ ոսկի՝
Արբեցումի հրով վերջին։

Սեպ մազերդ օձախոիվ
Հեքիաթային ուշիս վերջին.
Անհագ հոգիս լցվեց լիով
Մահաբերուն սիրով վերջին։

Արյունս հեմի աչքս առած՝
Դեմդ եմ կանգնել դողով վերջին.
Սիրտս փոված՝ սիրուդ առաջ,
Մահ, խաչեցիր սրով վերջին...

1927 ապրիլի 18,
Երևան

— Ի՞նչ ես լալիս, անգի՛ն ընկեր,
Հարցրի լացող ընկերիս.—
Թե ինձ համար ես լաց լինում,
ամոքվեցի ես արդեն.
Թե քեզ համար,— արի՛ հարբենք,
ու վշտերդ կցնդեն։
Թե լալիս ես մարդու համար,
ողջ տառապող աշխարհի,—
Ե՛կ, միասին նստենք ու լանք
անհուն ցավը բոլորի...

1928,
Երևան

Վերջալույսին ոսկեշող,
Դաշտերում ծաղկած
Շրջում էի մենավոր,
Հոգիս անդորրած։

Մոռացված մի երգ հին
Լսեցի հանկարծ,
Այնքա՛ն, այնքա՛ն մտերիմ՝
Սիրած ու ապրած։

Աղջիկ, տղա՝ թև թևի՝
Անցան ծաղկազարդ,
Ամբողջ սլացք, տենչ ու բոց,
Երգելով զվարթ։

Այդ երգը, սի՛րտ, գիտես դու,
Երգել եմ և ես,
Երբ որ պատանի էի՝
Հրավառ ու վեհ։

Վերադարձան հոգուս մեջ
Սիրելի դեմքեր,
Այս աշխարհից հեռացած
Եվ մեռած սիրեր։

Մինչև խորին ուշ գիշեր
Դաշտերում թափուր
Ուրուների հետ անթիվ
Շրջում եմ տխուր...

1928,
Երևան

Հեռու անտառում ծաղկում է հպարտ,
Ցնծում է զվարթ այն կաղնին հիմա,
Որ պիտի դառնա դագաղիս մի օր։
Եվ մահիս մոտ է, մոտիկ է ա՛յնքան,
Որ ամեն անգամ հոգուս ականջով
Լսում եմ կաղնու սոսափյունը խոր...

1928 մայիսի 28,
Երևան

Երկու մանուկ՝ տղա-աղջիկ,
Խաղում էին դաշտերում։
Երկու ընկեր՝ տղա-աղջիկ՝
Դպրոց էին ըշտապում։

Երկու սրտեր հանդիպեցին
Շշուկի մեջ ծառուղու.
Երազեցին և թախծեցին,
Եվ սիրեցին իրարու։

Երկու շիրիմ իրար մոտիկ
Նոճիների ստվերում։
Երկու մանուկ՝ տղա-աղջիկ,
Խաղ են անում դաշտերում...

1929 հունվարի 6,
Երևան

Ծաղկավառ ուղին գնում է կրկին,
Ուր լույս-թևերով ճախրում էի ես՝
Երազելով քեզ, հավերժական կին։

Ծաղկավառ ուղին գնում է կրկին...
Եվ նրա ափին կանգնել եմ մոլոր
Եվ բեկված կյանքով, տխուր-տխրագին։

Ծաղկավառ ուղին գնում է կրկին,
Եվ լույս-թևերով ճախրում են նրանք՝
Երազելով քեզ, հավերժական կին...

1929,
Երևան

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ

Ցորենի ծփուն արտերի նկրին
Կանգնել խորհում եմ արտիս մեջ լռին.—

Մի՞թե դու չէիր, հայրենի՛ք իմ հեգ,
Որ տայգաներից, մթին յուրդերից,
Հորդացող-եկող ելուզակների
Բյուր նիզակ ու տեգ
Սրտիդ մեջ մխված՝ ընկել էիր խեղճ,
Քառուղու վրա բախվող ազգերի,
Դաժան դարերի մղձավանջի մեջ,
Սմբակների տակ խոլ նժույգների.

Եվ սրում էին ճիշով խնդագին
Անդղներն իրենց կաուցները վեհ
Քո արևակեզ ժայռերի վրա՝
Հոշոտելու քեզ...
Եվ սակայն հիմա
Դու նորից ծաղկել, ցնծում ես նորից,
Ելնում է ծուխը խրճիթներից հին,
Ուր մայրըս անուշ օրորել է ինձ,
Իմաստավորել մանուկ իմ հոգին
Քո հզոր լեզվով, երկի՛ր կաթոգին։
Այնքա՜ն ժամանակ, որ պիտի հնչեկ
Սևահոդզգ հին՝ քո կոլիճ որդին,
Եվ դուստերդ վառ՝ սերբդ պիտ երգեն,
Դու պիտի ծաղկի՛ս, երկի՛ր հայրական,
Քո ոգով, ոճով և բարձրագլուխ,
Դու պիտի հնչե՛ս, հնչես հաղթական,
Իմ հին հայ լեզու՝ քա՛ղցր ու սրտաբո՛ւխ։

1929 հունիս,
Լենինական

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Հուրհրում էր արևն ուրախ,
Գետն էր գնում քաղցրակարկաչ.
Ջորս դիս՝ գարնան կարմիր ծիծաղ,
Վարդեր կարմիր, կարմիր կակաչ։

Արտույտն երգով ճախրում էր վեր.
Արոտներում խրխինջ ու կանչ.
Ջորս դիս՝ գարնան կանանչ թևեր,
Կանանչ հովեր, ծո՜վեր կանանչ։

Մեր մանկական ճիչն էր թնդում
Դաշտերի մեջ ցոլաթաթախ.
Խայտում էինք զմրուխտ գետում,—
Եվ ղնգում էր արևն ուրախ...

1930,
Փարիզ

Տիեզերքն այս անսահման
Իր ծանրությամբ ահագին
Կախված է սոսկ մի մազից,—
Եվ այդ մազն է իմ հոգին։

1932,
Փարիզ

Արևի տակ սոսկ մի օր է լինելու,
Որ ինձ համար բախտավոր է լինելու,
Բայց այդ օրը զգալու չեմ ես, ավա՜ղ,
Որովհետև մեռած օրս է լինելու։

1932,
Փարիզ

— Ի՞նչ պիտ լինեմ կյանքից հետո,
Հարցում արի ես բնության։
— Ինչ որ էիր կյանքից առաջ,—
Այսպես տվեց ինձ պատասխան։

1932,
Փարիզ

Երազիս մեջ Անին տեսա,—
Տեսա մեռած մայրիկիս.
Ինչպես մանուկ գիրկն ընկա,
Համբուրեցի մայրիկիս։

Ախ, մայրիկ իմ, ես հիվանդ եմ,
Ես անհույս եմ, ասացի,
Ես վերք ունեմ անբուժելի՝
Անծիր թախիծն աշխարհի։

Միտքն անզոր է, կամքն՝ անհագուրդ,
Սերը՝ պատիր ու պատրանք.
Բախտը շար է, կյանքն՝ անխորհուրդ,
Մահը՝ անհուն զարհուրանք։

Ես հոգնած եմ, կուզեմ հանգչել,
Հավերժ լռգամ, չխորհեմ,
Մայրիկ, մայրիկ, հանվեցրու ինձ,
Մածկիր վերաս, որ նիրհեմ։

Մղձավանջ է աշխարհն հանուր,
Եվ խոլական զառանցում,
Մարդն ստվեր է, և ճիգն իզուր,
Ամեն քայլը՝ մահացում...

1932 մայիսի 9—11,
Փարիզ

Սավառնում ես ցնծությամբ վառ՝
Քո սիրո հետ պուրակի մեջ։

Հավերժական լռում ես քեզ
Եվ քո հուրը հավերժ անշեջ։

Սգավորներ՝ ծանր ու դանդաղ՝
Տանում են լուռ մի սև դագաղ։

Մի օր էլ քեզ պիտի տանեն
Այսպես լռիկ ու տրտմասուգ,

Եվ քեզ նման այս պուրակում
Պիտ հուրհրա մի անմահ լույս...

1933 հունվար-փետրվար,
Փարիզ

Ա՜խ, երանի չծնվեի,
Չլսեի
Հովիվների երգերը ջինջ
Եվ մայրական խոսքերը սուրբ։
Չբտեսնեի
Չքնաղ դեմքը իմ տիրուհու
Եվ աշխարհքը հրաշագեղ։
Ա՜խ, երանի չծնվեի,
Չլսեի, չբտեսնեի—
Չըմեռնեի...

1935,
Փարիզ

Երբ մանուկ էի, ընկերներիս հետ
Գյուղի կալերում, դաշտերում ծաղկած,
Ճիպոտներն իրրև նժույգներ հեծած,
Մտրակում էինք և սլանում խենթ
Դե՛պ հեքիաթային աշխարհներ հեռու,
Եվ շրջում էինք կախարդ, հմայուն
Այն վայրերի մեջ՝ անհայտ, անանուն։
Երբ հասակ առա, նստեցի հաճախ
Երկաթուղիներ և շոգենավեր,
Անցա երկրներ, կտրեցի ծովեր,
Տեսա պերճ վայրեր, քաղաքներ չքնաղ.
Բայց ավա՜ղ, երբե՛ք-երբե՛ք չըհասա՝
Իմ ճիպոտ-ձիով ոտք դրած չքեղ
Աշխարհներն հեռու և հեքիաթագեղ։

1935,
Փարիզ

ՍՖԻՆՔՍ

Տիեզերքը մեծ սֆինքս է անհուն.
Անսկիզբ է նա, ժամանակից դուրս,
Եվ հավերժ անմահ։
Հարցեր է տալիս ամեն մարդու նա
Իր ծագման մասին և իր էության,
Կյանքի և մահվան...
Եվ եթե նրան չպատասխանես,
Անգութ լկանքով կբլափե նա քեզ
Վայրագ վագրի պես։

1935 ապրիլի 25,
Փարիզ

ՊԱՏՄԻՉՆԵՐԸ ԵՎ ՄԵՐ ԳՈՒՍԱՆՆԵՐԸ

Նվեր մեր ժողովրդական վեպի՝
«Սասունցի Դավիթ»-ի հազարամյակին։

Հոյակապ հին վանքերի մութ խուցերում, մենության մեջ
Միայնները մեր վշտահար, մեղմ կանթեղի լույսով անշեջ,
Շխարով, մի կում ջրով և ճգնությամբ գիշերն անքուն,
Մտությունը մեր գրեցին մագաղաթի վրա դժգույն—
Աններբ, նախճիրները հորդաների արյունարբուշտ,
Զումը հայրենիքի և ոսոխի սուրը անկուշտ։
Գրեցին լալահառաչ դժխեմ բախտը Հայաստանի
Ուսացին արդարո Ֆյան մի խուլ ստոծու դատաստանի։

Գեղջուկի պարզ խրճիթում, սուրբ օջախի շուրջը նստած՝
Աններբը մեր խանդավառ, առջևները գինի և հաց,
Երգեցին հաղթանակը դյուցազնների մեր մեծազոր
Պատրեցին պարտությունը ոսոխների մեր բյուրավոր։

Եվ հյուսեցին պատմությունը հավերժացող ժողովուրդի,
Վառ հավատով փառքերը մեր ավանդեցին որդոց որդի.
Տեսան շքեղ մեր ապագան, անընկճելի ազատ ոգին,
Հայրենիքի սիրո համար միշտ բարձրացած Թուր-Կայծակին։

1939 օգոստոսի 3,
Ծաղկաձոր

Ա՜խ, մի անգամ ոսկետերև աշունքին
Անցնում էի ծայրամասով քաղաքի,
Տեսա երեք երիտասարդ դասաբներ՝
Խիճուտ ափին քաղցրամրմունջ գետակի,
Մորթում էին քսանի չափ գառնուկներ։
Երկու գառի գլուխն արդեն կտրած էր,
Իր արյան մեջ թպրտում էր մեկը դեռ,
Իսկ դասաբը ծխամորճը շրթունքին,
Չորրորդ գառին՝ աղիողորմ լացի մեջ՝
Գետնին սեղմել՝ սպանում էր նոանդով.
Մյուս գառները զարհուրանքից կարկամած՝
Նայում էին խոր ու անթարթ աչքերով
Մորթվող եղբորն ու դասաբի դանակին,
Եվ ողջ մարմնով դողում էին, սրսփում.
Բայց մանավանդ տատիկները նրանց նուրբ
Դողո՜ւմ էին, դողո՜ւմ էին սաստկագին...

1939 սեպտեմբերի 18,
Երևան

ՆՈՐ ՏԱՐՎԱ ԱՌԱՎՈՏՅԱՆ

Այս նոր տարվա առավոտ,
Երբ որ քնից զարթնեցի,
Ավա՜ղ, մերոնք միասս ընկան,
Եվ սուրբ պահեր հիշեցի։—

Տեսա գյուղի տունը մեր...
Ջրաղացի ձայնն անո՜ւշ.
Մեր մեծ թոնիրը վառ էր...
Նորահացի հոտն անո՜ւշ։

Հայրըս եկել քաղաքից՝
Քույրիկիս ու ինձ համար
Բերել էր թանկ նվիրներ—
Նոր զգեստներ ծաղկավառ։

Բռնած հորըս ձեռներից՝
Քույրիկս ու ես թռվռուն
Շրջում էինք բերկրալից
Արփաչայի ափերում։

Ա՜խ, այն օրը հիշեցի,—
Հավերժական տխուր պահ,—
Օտար երկիր գնացի,
Էլ մայրիկիս չտեսա։

Մայրս սեղմած ինձ կրծքին՝
Լաց էր լինում սրտաբաց,
Համբուրում էր կարոտով,
Ու չէր թողնում, որ գնամ։

Ձիս բայլում էր գլխահակ
Մտերիս հետ թախծալից,
Ու տանում էր ինձ հեռու
Մանկության սուրբ վայրերից։

Եվ քայլ առ քայլ՝ մարում էր
Ջրաղացիս ձայնն անուշ,
Բայց ես լսում էի դեռ
Խեղճ մայրիկիս լացն անհույս։

Այս նոր տարվա առավոտ,
Երբ որ քնից զարթնեցի,
Ավա՜ղ մերոնք միտս ընկան
Եվ սրտիս մեջ լացեցի...

1940 հունվարի 1,
Երևան

ՈՂՋՈՒՅՆ ԱՄԵՆՔԻՆ

Ամսավերջին ապրիլի
Միտքս խոցուն՝ ելա դաշտ,
Բնությունը գրկեց ինձ,
Ինչպես մի մայր սիրաշատ։

Շուրջս փռվել էր հրաշք,
Առավոտն էր բողբոջում,
Նժույգի պես ոսկեբաշ
Արեգակն էր վրնջում։

Հավքերն ուրախ երգեցին,
Ինձ ժպտացին ծիլ ու սեզ,
Որ իրենց պես սրտապահ,
Զվարթ լինեմ իրենց պես։

Ի՞նչպես խայտում են, խնդում,
Ծփծփում են թևաբախ,
Ուլեր, գառներ լուսագեղմ
Եվ թռչունները չքնաղ։

Եվ ծաղիկներ, թիթեռներ,
Եվ զեփյուռներ քաղցրաբույր,
Ծիծեռնակներ սրաթև,
Եվ դայլայլող ակն-աղբյուր։

Ու սրտիս մեջ մեկը ինձ
Խոսք է ասում մտերիմ,—
«Կանգնի՛ր, ո՛վ մարդ, և սիրով՝
Ողջագուրիր ամենքին։

Գլուխդ բա՛ց, ողջունի՛ր
Եղնիկներին, ծառերին,
Թռչուններին, թիթերին,
Առվակներին, գառներին։

Նրանք հավերժ հարազատ
Եղբայրներն են քո խոնարհ,
Մնած-սնած մի մորից՝
Քույրիկները քո բարի։

Սունը իջի՛ր երկյուղած,
Եվ այս մամոռոտ ժայռը մեծ
Խոնարհ սրտով համբուրի՛ր—
Նա եղբայրն է քո երեց»։

1940, գարուն

Ամառվա կապույտ, անդորր գիշերին,
Ժայռի կատարին նստել եմ մենակ՝
Հայացքս հառած նիրհ մտած ծովին։

Լո՜ւռ է ամեն ինչ և ամենուրեք.
Ժամանակն՝ անշարժ, և դզլ ալիքները
Լցված խորաշրջաց, խորին լռությամբ։

Պա՛հ երանավետ և նվիրական,
Անհուն լռություն տիեզերական։

Ե՛ս տեսնում եմ ինձ, Ես լսում եմ ինձ,
Ե՛ս զգում եմ ինձ, ճանաչում եմ ինձ։

1940 օգոստոս,
Սևան-Երևան

Մի երեխա քնից զարթնել
Լաց էր լինում ադիոդորմ։
Սրտի ուղած բաներն ամեն
Տեսել էր նա պիրճ երազում,
Եվ զարթնելով բոլորը մեկ
Կորցրել էր, ու սրտաբեկ
Հիմա նստել, լաց էր լինում։

Լաց մի՛ լիներ, տղաս, զուր տեղ,
Երիտասարդ կյանքդ ամբողջ—
Այդ երազը հրաշագեղ—
Դեռ առաջդ է լուսաբողբոջ։
Ապա ես ի՞նչ անեմ, տղաս,
Որ կորցրել եմ անվերադարձ
Ամեն, ամեն բան աշխարհում,
Եվ չունեմ էլ ո՛չ մի երազ
Իմ մթնացող օրվա առաջ...

1940 հունիսի 24,
Բորժոմ

ԲԻՆԳՅՈԼ

Երբ բաց եղան գարնան կանաչ դռները,
Քնար դառան աղբյուրները Բինգյոլի.
Շարվեն շարան անցան զուգված ուղտերը,
Յարս էլ գնաց յայլաները Բինգյոլի։

Անգին յարիս լույս երեսին կարոտ եմ,
Նազուկ մեջքին, ծով-ծամերին կարոտ եմ.
Քաղցր լեզվին, անուշ հոտին կարոտ եմ,
Սև աչքերով էն եղնիկին Բինգյոլի։

Պա՛ղ-պա՛ղ ջրեր, պապակ շուրթքս չի բացվի.
Ծուփ-ծուփ ծաղիկներ, լացող աչքս չի բացվի.
Դեռ չտեսած յարիս,— սիրտս չի բացվի,
Ինձ ի՞նչ, ավա՜ղ, բլբուլները Բինգյոլի։

Մոլորվել եմ, ճամփանիրին ծանոթ չեմ,
Բյուր լճերին, գետ ու քարին ծանոթ չեմ.
Ես պանդուխտ եմ, էս տեղերին ծանոթ չեմ,
Քույրիկ, ասա, ո՞րն է ճամփան Բինգոլի։

1941 հունվարի 19,
Երևան

ՈՒԱՉՄԱԿՈՂ

Գիշեր է մռայլ, ամպամած գիշեր։
Հոգմեր են փչում, շաչում են հոգմեր
Դավանան հոնքից մեր նենգ թշնամու
Մեր նվիրական դաշտերի վրա։
Գոռ ալիքներն են լեռնանում ընդառաջ
Մեր խռովահույզ ժողովրդի վրա։

Է՛յ ազատ Մասիս, երկնասույզ գահեր,
Է՛յ երկաթակուռ խրոխտ գագաթներ,
Շանթե՞ր եք զոռում, սուրե՞ր եք կռում,
Հրեղեն ցասում ընդդեմ թշնամուն։

Էյհե՛յ, լսեցեք. վեհ հայրենիքի
Կարիճ զավակներ, ժողովուրդներ քաջ,
Ելե՛ք, զարթնեցե՛ք, կանգնեցե՛ք ոտքուն.
Գիտցե՛ք, քնում են գիտերն ու քամին,
Սակայն չի քնում, երբեք թշնամին։
Ահա՛ ոճրամիտ մեր ոսոխը չար
Շղթա է բերում, լուծ ու խլապանքներ՝
Ընկճելու ազատ մեր եղբայրներին
Եվ անարգելու հայրենիքը մեր։

Էյհե՛յ, լսեցեք, ձայն տվեք իրար,
Ամե՞նքդ եք ոտքի, մարդ քնած չկա՞.
Շտ՛ա հագեք-կապեք զենքեր ու զրահ,
Գոտեպնդվեցե՛ք ատելությամբ վառ,
Գոտեպնդվեցե՛ք անձնազոհ կամքով,
Գոտեպնդվեցե՛ք ահեղ վրեժով,

Շտապե՛ք ուրեմն, հայորդիներ հզոր,
Խոլ վրնջացե՛ք. նժույգներ խիզախ,
Մրրիկի նման պարկեցե՛ք շեփոր,
Գնա՛ռ ռազմի դաշտ, դեպ հերոսացում,
Գնա՛ռ ռազմի դաշտ՝ ասելիք դրոշի տակ
Գնա՛ռ բարձր եղբ մահի ու փառքի,
Վանեցե՛ք հեռու թշնամուն վայրագ,
Մեր խրճիթներից, մեր հնձաններից,
Մեր ագռ ու էրից վանեցե՛ք հեռու
Հավիտյան դիտ հոգեներին մեր,
Հզոր և ազատ ե հավիտյան կանգնած՝
Մեր խլնալների սուրբ սրբի տակ։

Գնա՛ռ ռազմի դաշտ, դեպ հերոսացում,
Գնա՛ռ բարձունքը մեծ Հաղթանակի։

1941 հունիսի 26,
Էջմիածին

ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ԵՐԳԸ

I

Թռչնիկները գեղեցիկ՝
Լուսաբացին շողշողուն
Իրենց հույզերը մաքուր
Երգում էին, գեղգեղում։

Ա՜խ, ի՞նչ բարի քաղցրությամբ
Ձեր խոսքերը սրտագին
Ամոքեցին, գթվեցին
Վշտի հովիտ իմ հոգին։

Այն բազուկը, որ կամի
Ձեզ հարվածել, սպանել՝
Թո՛ղ հավիտյան կարկամի,
Նվիրական գուսաններ։

1941 հուլիսի 5—6,
Էջմիածին

II

Յոթ-ութ տարեկան մի փոքրիկ աղջիկ
Մի անդամ մենակ խաղում էր դաշտում։
Ոսկի մի թիթեռ ծաղիկից ծաղիկ
Նրա առաջին թռչում էր, խայտում։

Աղջիկն ուզում էր թիթեռին բռնել.
Ա՜խ, այնպե՜ս, այնպես թռչում էր մոտիկ,
Հենց բավական էր, որ ձեռքը մեկներ,
Ի՞նչ գրավիչ էր, ի՞նչքան գեղեցիկ։

Բայց մեկ էլ անսպա, մատների միջից
Փախչում էր սրաց՝ թիթեռը կայտառ.
Ընկերների պես խաղալով նոցից
Նրանք վազելիս ու մատն անուտառ։

Ծառից ծառ անվերջ, ծառերի նուռ
Թիթեռը կախարդ թռչում էր, թռչում.
Կրկին վազում էր աղջիկն հևիհև.
Մինչև որ խավարն իջավ անտառում։

Աղջիկը հոգնած՝ մի փշակի մոտ
Կուչ եկավ, քնեց մինչև լուսաբաց.
Գյուղը դառնալու ճամփա որոնեց,
Բայց դարձյալ ծառեր՝ անտառ անթափանց։

Երեք օր մնաց անտառում մենակ,
Ուտում էր թթեր, պտուղներ վայրի.
Փնտրում էր դարձի ուղի շարունակ,
Գիշերը քնում փշակում ծառի։

Գրկիցների հետ հայրը մտատանջ,
Ցերեկներն՝ անդադար, գիշերներն՝ անքուն,
Որոնումներով գտան աղջկան,
Գրկից գիրկ տալով ուրախ դարձան տուն։

Մայրը խելահեղ, լուցով խնդրելն
Գրկեց համբուրեց կորած աղջկան.
«Ասա՛, հոգյա՛կ իմ, անտառում մթին,
Շատ չվախեցա՞ր»— Գայթակղեց նրան։

«Ո՛չ, անպի՛ն մայրիկ, ես բոլորովին
Չէի վախենում, միայն այն պատճառով,
Որ թռչունները միշտ երգում էին»,—
Ասաց աղջիկը ճշմարիտ սրտով։

1941 հուլիսի 11,
Էսենտուկի

Երբ որ մահս գա՝
Կուզեի լինեի
Նորեկ գարունքվա
Ծաղրողուն մի պահ.—

Առաջին բացվող
Վարդին ժպտալի,
Սուզվեի ապա
Մութ անհունի մեջ։

1943

Եւ դառնար հիմա հաբակրս մատաղ,
Լինեի նորից այն խենթ ոգեատենին,
Երգը՝ շրթունքիս, և սիրտս ուրախ,
Սաեմեի նորից հորքս կապույտ ձին,
Եվ խոլ ձորերով, կատարներով վեհ,
Սուրող գետերի զառաջունի հետ
Թռչեի լքնաղ իմ սիրածին տես,
Որպես մի վառված անվնաս ասպետ։

1942

ՍԻՐԵԼԻ ՀԵՐՈՍ Ս. Գ. ՁԱՔԻՅԱՆԻ ԱՆՄԱՀ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Հերոսական ընկերներով միասին
Կայծակի պես դու շանթեցիր թշնամուն,
Իդեալների վեհ գրոշը քո ձեռին,
Քաշի մահով ընկար պատվի սուրբ դաշտում։

Քո սիրելի հայրենիքում նորապատ,
Որ քեզ տվեց դյուցազնի կամք ու կորով,
Ամեն մի սիրտ մորմոքում է քեզ համար,
Եվ գլուխներն խոնարհում են հարգանքով։

Քո ճակատը՝ հազիանակով պսակված,
Մեր պատմության մեջ բայլում ես դու փառքով.
Եվ ահա՛ մեր ճակատները խոնարհած
Գործիդ հանդեպ բարձրանում են պարծանքով։

Մեր ցասումը, մեր վրեժը, ո՛վ հերոս,
Քո երկաթե բազուկիդ մեջ դու տարար,
Եվ զարկեցիր ննեգ թշնամուն բարբարոս,
Ոսոխի դեմ դարձար վճռական ու պատվար։

Քե՛զ հավերժ փառք... հանգչի՛ր խաղաղ ու անդորր.
Նոր հերոսներ կկայծակեն քո հետքով.
Հայաստանը կբողբոջի նորից նոր,
Կգարդարե քո շիրիմը վարդերով։

1942 ապրիլի 4,
Երևան

ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Մեր նահատակաց Գ. Թորամանյանի
հիշատակին

Հայրենի դաշտում քայլում եմ մենակ.
Աշուն է արդեն, և ձյունը նորեկ
Ծածկել է լանջերը սեգ Արարատի.
Հողմը սասակաշունչ՝ հսկա մի բարդի

Կորաթիկնել է ոգեշի նման
Հայկ նահապետի։

Սակայն իմ առաջ գլուխներ են անա՝
Պատմության ահեղ հողմերին ընկճած՝
Ցյուններն հոլանդաց ինն ավերակի։

Դո՛ւք դարերի մեջ՝ դժար ու դաժան,
Իրք ամենայն ինչ ընկած էր տարտամ,
Դո՛ւք, ով երկնային գիտելիքներ ու վեհ,
Մնացիք ամբողջ, մնացիք անսասան՝
Բռնակալների հարության ընդդեմ։
Իմ ժողովուրդը՝ դատեցված շղթայի,
Նշխարներդ սուրբ, քարերդ մատաղ
Պաշտեց, դարձրեց հավատով անշեջ։
Դո՛ւք, հզոր որմեր, [illegible] խրոխտ,
Նրա հոգու հետ խոսեցիք հոգով
Մեր քաջակորով նախահայրերի.
Խոսեցիք լեզվով անհուն գեղեցկի,
Եվ ներդաշնակի, և բացարձակի։

Դո՛ւք, վեհ վկաներ մեր անմահ փառքի,
Մեր ստեղծագործ ոգու, հանճարի.
Բնկորների մեջ ձեր նվիրական
Ինչպես մանուկը՝ աշխարհից լրված,
Մայրական գրկում տեսավ նա իրեն
Պաշտպանված ամուր, պարիսպներով կոփ։

Ոգով ներշնչված սուրբ քարերիդ մեջ՝
Իմ ժողովուրդը՝ հիացքով արդար,
Մարմինը տեսավ իր երկնասլաց
Վսեմ խոհերի, վեհ գաղափարի,
Եվ իրեն բարձր զգաց ոսոխից,
Հպարտ և հզոր. և դուռեպնդվեց
Իր անպարտելի, լուսաբաղձ հոգու
Հավերժի համար՝ անհաշտ պայքարի։

1942 նոյեմբերի 2,
Երևան

ԺՈՂՈՎՐԴԻ ԵՐԳԸ

Սյունաց բարձր լեռներում այդ շանթերն են բոցկլտում,
Հանդ ու ձորեր թնդում են որոտալից շաչյունով։
Դավիթ-Բեկի քաջերի վառ թրերն են կայծակում,
Ամեն մի սիրտ թնդում է նժույգների դոփյունով։

Մեր դարավոր ցասումի, մեր վրեժի օրն արդար
Դավիթ-Բեկը մեզ բերեց ազատության պատգամով.
Մեր գետերը փրփրաբաշ, մեր դաշտերը ծաղկավառ
Կարմրեցին, ցնծացին մեր թշնամու արյունով։

Դավիթ-Բեկի քաջերի սուրն ու թուրը հրդեղեն
Կոտորեցին, շարդեցին մեր թշնամուն չարաղետ.
Դրրոշները թո՛ղ ծփան, զանգերը թո՛ղ զողանջեն,
Թո՛ղ քուն մտնեն աներկյուղ մեր մանուկներն այսուհետ։

Դավիթ-Բեկը ծունր իջավ, երբ ոչ եկավ Հայաստան,
Ուխտեց փշրել մեզ գերող կապանքներն ու կուռ շղթան,
Ուխտեց ջնջել թշնամուն, փրկել ոչխարն Հայաստան,
Ու կատարեց ուխտը սուրբ... Հանգի՛ր, հազա՛ր փառք նրան։

Թո՛ղ անձնուրաց ուխտ կապեն մեր թոռները քաջածին,
Դավիթ-Բեկի թուրը վեհ շրժանգոտի հավիտյան,
Շողա, շաչե, երբ խուժե մեր սուրը հողը թշնամին,
Որ ծուխն անուշ բարձրանա մեր անեղծ հավիտյան։

1943,
Երևան

ՔԱՅԼԵՐԳ

(Դավիթ-Բեկից)

Ելե՛ք, հայեր, ելե՛ք, քաջեր,
Հագեք կապեք զենք ու սապար.
Ձիերն հեծեք, թուրք լեկք
Սարերն ի վեր, ձորերն ի վար։

Հայրենիքի սիրո համար,
Արիության դրոշի տակ,
Դավիթ-Բեկը առաջում է մեզ
Դեպի կռիվ ու հաղթանակ։

Ազատ ապրել, փառավոր մեռնել
Մեր լեռներին երդվեցե՛ք.
Մերկացրե՛ք թրերը կուռ,
Մեր հայրերի վրեժ առե՛ք։

Ժողովրդի սիրո համար,
Ազատության դրոշի տակ,
Դավիթ-Բեկը առաջում է մեզ
Դեպի կռիվ ու հաղթանակ։

Արծիվների կանչն ենք լսում...
Առա՛ջ, առա՛ջ կռվի սուրբ դաշտ,
Զար ու դաժան թշնամու դեմ
Դեպի կռի՛վ, կռի՛վ անհաշտ։

Մեր քույրերի արյանի համար,
Անմահության դրոշի տակ,
Դավիթ-Բեկը առաջում է մեզ
Դեպի կռիվ ու հաղթանակ։

1943,
Երևան

ԹԱՄԱՐԱՅԻ ԵՐԳԸ

(Դավիթ-Բեկի ճառագայթ. վիրաբեր)

Ա՜խ, գգվեցիր ինձ քո հզոր կրծքին,
Հազար սիրելի, իմ սեր, Դավիթ-Բեկ,
Էլ ո՞ւր թողիր ինձ մենակ, վշտագին,
Արցունքներիս հետ տխուր, սրտաբեկ։

Երբ անքուն աչքս խփում եմ մի պահ,
Հասակդ եմ տեսնում, գեղեցիկ ազնիվ,
Թռչում եմ նորից նեղության վրա,
Անունդ եմ էնտչում, ա՜խ, իկար, խղճալ։

Քարվանների հետ նամակ ճամփեցի,
Վրդովմունքով լցված, արտով վ. ոսկեհար,
Քո պատասխանին կարոտ մնացի,
Մնացի լքված ու անմխիթար։

Քո Հայաստանի լեռներից խոժոռ
Գուսանների նման, փառաշուք երգեցին,
Երգեցին թշնամի դարկերն ահավոր,
Անդունդներ թաղող հրնգեն քո ոգին։

Օ՜, նախանձում եմ, անհուն նախանձում
Քեզնից զոր-գիշեր անչքաբաց թշնամի,
Դե՜հ, բավական է, թուրդ պատյան դիր,
Արի, մեռնում եմ՝ աչքս ճամփեքիդ։

1943,
Երևան

ԳԱՅԱՆԵԻ ԵՐԳԸ

(Շանուրյանի հուշանվեր)

Խոստացել էիր, իմ թաղ ու պատի,
Այսօր ինձ մոտ գալ՝ սիրո վարդերով.
Ընկերներիդ հետ թառաք ու հասաք
Նժույգ ձիերով, խրոխտ լեռներով։

Մայր Հայրենիքի սերը քեզ կանչեց,
Թաց հանեց ժայռից սմբակը ձիուդ,
Քառասուն թրի մեջ թուրդ շառաչեց,
Արևը մարեց հազար թշնամուդ։

Խոսք տվիր գալու զարնանն ինձ այցի,
Մաղթել են արդեն ամեն թուփ ու ծառ,
Փրկության համար սուրբ Հայաստանի,
Հիանամ, սիրելիս, խոսքդ մոռացար։

Եկ գոնե մի պահ, իմ կարիճ իշխան,
Շրջենք երկուսով ծաղկած արտերով,
Եկ՝ սրբեմ թուրդ մազիս մետաքսով,
Ախ, մի՛ թող այրվեմ սիրուդ կրակով։

1943,
Երևան

ԳԵՐՄԱՀՈՒ ԵՐԳԸ

Ցատաք աշխարհում ատրուպ ու գեղի,
Թռամեց, անցավ իմ կյանքը ճատաղ,
Ա՜խ, ո՞չ մայր տեսա, ո՞չ ախր ընկերի,
Սրտիս մեջ՝ արցունք, աչքիս մեջ՝ ծիծաղ։

Անոթի, ծարավ, օտարի դռան
Տընեցի անխոնջ, անդուլ, տանջալից։
Սփոփանք զուտ երազում միայն,
Ի՛վ տուն հայրենի, և՛ հաց մոր ձեռքից։

Արծի՛վ, ա՜խ արծիվ, թոցրո՛ւ ինձ քեզ հետ,
Տա՛ր ինձ հարազատ դաշտերն հեռավոր,
Մեր արևի տակ, ա՜խ, մի վայրկյան գեթ,
Շունչ առնեմ ազատ, մեռնեմ բախտավոր։

1945,
Երևան

ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱՍԵՐ ՕՐԸ

(9 մայիսի 1945)

Մեր սուրը փառքով դրեցինք պատյան,—
Մեծ հաղթանակի օրն է ցնծալից.
Պարավից մահաշունչ ասոնը գաման,
Երգեր են հնչում զվարթ սրտերից։

Հոծ փողոցներում պղմուկ ու ցասաք,
Հոսում են մարդիկ ծպտված, ծիծաղով,
Մի մարդ սեղան է քացել տան առաջ,
Լցրել թասերը ոսկեփայլ գինով։

Եվ անցորդներին կանչում է, խնդրում,—
Եղբայրնե՛ր, որդուս կենացը խմե՛ք։
Հերոս է ցրդիս, հաղթեց թշնամուն,
Ձեր որդիների կենացն էլ խմենք։

Խմում են խինդով, ցնծում երջանիկ,
Եվ զարկում նորից գավաթներն իրար։
Նրանց մեջ մի հայր ասում է մեղմիկ,—
Է՛ս էլ իմ որդուս հանգստյան համար։

Գլխարկներն իսկույն հանում են նրանք,
Խոր ակնածանքով լռում են մի պահ.
Խմում են անձայն զոհվածի համար
Եվ գեղում գինին սուրբ հացի վրա։

1945,
Երևան

ԻՄ ԾԻՐՎԱՆՆԱՆ

Ես ապրում եմ մեն-մենավոր
Ձյա լանիստ անտառում,
Իմ հյուղակն է թավուտի մեջ,
Ուր երգում է տինջ առուն։

Ես խորհում եմ ներսենձնացած
Լռության մեջ գերանդորը,
Հոգիս՝ զվարթ, սիրտս՝ հանգիստ,
Ձերծ կրքերից բռնավոր։

Եվ բնության ծիրերից դուրս,
Անհունի մեջ անուրջի,
Ես ապրում եմ հավերժարար
Առանց վշտի ու տենչի։

1946

Ամեն ինչ ունայն, երազ անցավոր,
Ասող էլ որ լինես՝ պիտ հանգչիս մի օր։
Ոչինչ է մարդը՝ փոշի փոշու մեջ,
Իր ցավը, սակայն, ոսկեղերքից մեծ։

1947 նոյեմբերի 9,
Երևան

ԱՎԼԱԿԻՆ

Կյանքիդ ուղին լինի պայծառ,
Ամեն քայլդ՝ ազնիվ, արդար։
Լինես խոհուն, լինես դիտուն,
Եվ ունենաս սիրտ զգայուն։
Լինես բարի և անբասիր,
Ընկերներիդ սրտով սիրես,
Երբ քեզ տեսնեն՝ ուրախանան։
Միշտ օգնելու լինես պատրաստ՝
Տանջվող մարդուն և ընկերին։
Անդավաճան, անհուն սիրով
Հայրենիքիդ լինես պաշտպան.
Եթե նրա սիրո համար
Մի սիրալի գործ կատարես—
Զբոնխորտաս, լինես խոնարհ,
Եվ իր պարտքը ճիշտ կատարած
Մարդու նման՝ խիզճդ անդորր,
Ապրես ուրախ և բախտավոր։
Եվ մեն-մենակ, տարին մի օր
Այցի ելնես մամոտ շիրմիս,
Կանգնես լռիկ, խորհես մի պահ,
Իմ կաթոգին սիրած ապա։

1954 նոյեմբերի 27,
Երևան

Մեր կյանքի առեն վայրկյանը անցնող՝
Թեթև, բայց անբուժ վերք է տալիս մեզ,
Իսկ վերջին, վերջին վայրկյանը առնող
Մի կուռ հարվածով ավարտում է մեզ։

1955

Շա՜տ եմ տանջվել այս աշխարհում,
Շա՜տ եմ լացել այս աշխարհում.
Այն աչքերը, որ չեն լացել,
Բան չեն տեսել այս աշխարհում։

1955

Տիեզերքի սահմանների դուրս գալի,
Ժամանակից, օրենքներից բնության
Անջատվելի, հեռանալի, փախչելի։
Ուժի-նյութի, կյանքի-մահի հարցերից
Ազատվելի, ազատություն չնչելի...

1955 հունիս,
Երևան

Ա՜խ, ինչքա՜ն, ինչքա՜ն կուզեի լինել
Զինվոր հասարակ.
Հայության բոլոր ոսոխների դեմ կռվեի անդուլ
Անիի հզոր պարիսպների տակ։

Եվ հուր վրեժով
Զարկեի դարե՛ր, զարկեի դարե՛ր
Եվ բյուր վերքերով
Ընկնեի վանի պարիսպների տակ.
Սիրաս խաղաղվեր, հանգչեի հանգիստ
Անիի անմահ պարիսպների տակ...

1955 դեկտեմբերի 12

<Դ. ՂԵՄԻՐՃՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ>

Դուրսը բուք է խիստ, գիշեր, ցուրտ ձմեռ.
Ծքեղ դահլիճում ջերմ ու լուսավառ,
Պարում են, երգում, կատակում զվարթ։
Բայց դո՛ւ, ընկե՛ր իմ, պառկել ես անզարդ,
Սառը հողի տակ,
Ցաղաբի եզրում,
Եվ բուքն է հիմա ձյունաթաղ դաշտում
Քաղցած գայլի պես
Քո գերեզմանի վրա կաղկանձում...

1956

ՇՈՊԵՆԻ ԹԱՂՄԱՆ ՋԱՅԼԵՐԳԸ

Մի շքեղ, սիրուն երիտասարդի
Թաղման թափորն էր։
Սգանվագը հնչում էր տխուր.
Գնում էինք լուռ,
Դանդաղ, մտազբաղ՝
Եվ նվագի մեջ լսվում էր, կարծես,
Հուսաբեկ ձայնը թշվառ աղջկի.—
«Լացե՛ք իմ վրա,
Լացե՛ք ձեր վրա.
Ողբանք միասին
Մարդկության վրա,
Որ կա, և չկա...»։

1956

Մարդու անչանգն է՝ հավիտյան ապրել
Եվ լինել աստված փլեկլրոշին,
Ամենակարող, ամենահզոր
Եվ ամենագնա։

1957 օրոտոտ,
Երևան

ՊՈԵՄՆԵՐ

ԱԼԱԳՅԱԶԻ ՄԱՆՏՈՆՆԵՐ

Բաբե կուտամ, չես առնի,
Սոմիպ կախած նոպն եմ, յա՛ր,
Սիրտս, անիծեմ, մի՛ նմի,
Չէ՛ որ միջին դուն ես, յա՛ր։

ԻՄ ԲԱԽՏԻՆ

Էս գիշե՛ր, ամպհով գիշե՛ր,
Կարոտ աչքիս քուն չի գա,
Էս վշտեր, մրմուռ-հուշեր
Իմ սև սրտիս վազ չեն գա...

Շա՛տ եմ լացել,— իմ աչքերեն
Քունը վազուց է թռել.
Շա՛տ եմ լացել, յա՛ր, քու սիրեն,
Սիրտս իսոր վերք է դառել։

Իմ չոր գլո՛ւխ, քուն չունիս,
Դարդոտ գլո՛ւխ, ուուն չունիս,
Արար-աշխարհ ման կուգաս,
Սիրած գրկում քուն չունիս...

ՆԱԽԵՐԳ

Ալագյազը՝ աստղերի մեջ՝
Ադամանդե Ղագը գլխին՝
Սարերեն վեր, ամպերեն վեր,
Թիկն է տվել զմրուխտ-գահին։

Սինամ-հավքի թևեր ունիմ,
Լանջիս կերմամ Ալագյազ,
Ճակատս ասպազի պատկ ունիմ,
Աչքս միչին — գառ երազ։

Աչքս միչին դյաքա ունիմ,
Վարդ ու բրուլ, սեր ու սազ,—
Սրի գիրկս, մարմար Զարոս,
Ռանինը, երիտանք Ալագյազ։

ԱՐԱԳԱԾԻՆ

Գու, Արագա՛ծ, արմատա վահան
Կայծակեղեն թրերի,
Գագաթներդ՝ բյուրեղ վրան
Թափառական ամպերի։

Սեպ ժայռերդ՝ արծվի բույն,
Լճակներդ՝ լույս-փերուզ.
Առուներդ՝ մեղքիդ փայլուն
Պերճ գոտիներ ոսկեհյուս։

Աղբյուրներդ դիշեր ու զօր
Եռալի բռնված իրար հետ,
Վտակներդ՝ կիլ ու գոր
Սրբեշումն փնչերեզ։

Թիթեռներդ՝ հուր-հրվռին
Թռչող-ճախրող ծաղիկներ.
Ջառ ու զարմանք երազներին
Պոկված ծվեն-ծվիկներ։

Երանավա՛ռ գո՛ւն թագուհի,
Բուրումների գո՛ւն աղբյուր,
Ծաղիկներդ հազար գույնի,
Հազար անուն, հազար բույր։

ՄԱՆԹԱՇԻՆ

Է՛յ, Մանթաշ երազ-հովի՛տ,
Գո՛հ, գնչուխատ օրորո՛ց.
Ծաղիկներդ լուսաշ ֆիլի՝
Վրան մեղաշս — վառ ծածկոց։

Աղբյուրներդ՝ բյուրեղ ասեղ,
Հովերդ անուշ կրվրան,
Սառցամի թռչիչ երգեր,
Հովերդ անուշ կորոնեն։

Հուր-հավքերդ՝ թևերն սրծաղ,
Կառուցներդ՝ լաչ-մարջան,
Ինձ երպատմեն ոսկի հեքիաթ
Աշխարհներեն զյուլիանան։

Ալմաստ առուն՝ մոր ալես սեր ուն՝
Նանիկ կասե, օրո՛ր, օ՛ր...
Անուշ նանին գառ մանկության,
Նանի՛, նանի՛, օրո՛ր, օ՛ր...

Ա ԵՐԳ

I

Գաշտի դյուզացին կանաչ զարունին
Հոտ ու նախիրով սարն է բարձրացել
Ու սարի բերբի, քարի լանջերին
Խրճիթ է շինել, վրան է դարկել։

Կտրիճ հովիվներն ու նախարապաններ,
Առաջներն առած կովերն ու ոչխար,
Կրվարեն հետո՛ւ, դալար արոտներ
Ու հետ կբերեն՝ կթելու համար։

Գառնարած ագերը, պատիկ հոտաղներ,
Առվակի վրա, մոտիկ ձորակում,
Կարածայնեն գառներ ու հորթեր
Ու խաղ կըխաղան մինչև իրիկուն։

Ժրաչան կանայք, առավոտուն վաղ,
Թոնիր կըվառեն, շտապ կըթխեն,
Խնոցիները կըշրջեն ուրախ,
Ծաղկի պես հոտով կարագ կըշինեն։

Աբեհամատին բոխարիկներեն
Իրիկվա նման խաղաղ ծուխ կելնի.
Սարվորներն հոգնած՝ սեղան կընստեն,
Ու հարհա-ս-մարմանդ բուն անո՞ւշ կիջնի։

II

Ջառ Մանթաշի ծաղկուտ լանջին
Պատիկ քոռիկդ է կանգնած,
Թիթեռներին, հովիկներին
Գիշեր-ցերեկ դուռդ բաց։

Քու գառնիդ ուլերիդ հետ
Դեմդ կուգան վազելով.
Ու կըմայեն քու նունդ,
Երբ որ աղբյուր դուն կելթաս։
Սափորն ուսիդ՝ ծերծերուն,
Երբ որ ձորը դուն կերթաս։

III

Արևի պես, սիրուն Ջարոս,
Շափաղ տալով դուն կուգաս,
Էն մութ ձորին, իմ խոր սրտին,
Շողեր տալով դուն կուգաս։

Ալ-վարդերը՝ կրծքիդ վրան,
Լույս ցողերը՝ ոտներիդ,
Հովերը հետ ծամնրդ թռա՞ն,
Մեռնիմ թուր-թուր ունքերիդ։

Աբի՛ մոտս, կոնիկ աղջի՛կ,
Աղբար-աղբարհ թո՛ղ, արի.
Նստ մի՛ անիր, կազիդ մատաղ,
Անանդ որանեն վազն արի։

IV

Շարմաղ Ջարոն ձորի միջին
Վարդ կրփնչիր շոշղոլում,
Ալ-շրթունքին, լալ-շրթունքին
Մեկ էլ նստավ գառ մեղուն։

«Հանգիստ թող ինձ, նաղիկ աղջի՛կ,
Կըվախենաս, թե կծեմ,
Քու շրթունքեն լիկ-մնջիկ
Անուշ մեղր կըծծեմ»։

«Հուր վարդերեն հարյուր անգամ՝
Շրթիդ ալը բաց ունի.
Վառ վարդերեն հազար անգամ՝
Շրթիդ լալը բույր ունի»։

Վա՛յ ինձ, ինձեն բյուր-բյուր անգամ՝
Մեղուն արբ ու հարգ ունի...

V

Դու նստել ես աղբյուր-ակին,
Ծաղը ծամերդ կըթրջի.
Նուռ շրթունքիդ, նուշ թշերիդ
Շաղը ջուրը կըպայլի։

Քու մաշերդ վրիդ բոլոր,
Վզիդ բոլոր ոլորուն.
Ինձ արել ես թիթեռ մոլոր,
Սիրիդ բոլոր մոլորուն։

Քու աչերդ՝ պայծառ ազգյուր,
Ուրկից սերդ կը ծագի,
Քան զով երկինք՝ ջինջ ու մաքուր
Ա՜խ, սիրտս սիրուդ պատրաստ է։

Ձեր Թոչանքին չեմ գիմանար,
Մայի աչե՞ր, ծով աչե՞ր,
Սիրտս կ՚առնի, սիրտս կուտա,
Նուռ պաչ իսկեմ, նուշ պաչե՞ր...

Ու շրթունքդ բաժակ արիր՝
Ոսկեջրած, հակինթով,
Ինձ խմեցի պես հարբեցրիր
Սիրու գինով հոգեթով...

VI

Էդ համբույրը, որ ինձ տվիր,
Ինպես անո՞ւշ-մեղո՞ւշ էր.
Էդպես պտուղ ծառ ու ծաղիկ,
Ծով ու ցամաք չէ ծլել։

Էդ համբույրը, որ ինձ տվիր,
Տանիմ աշխարհս ման տամ.
Ինչքան դառն սրտեր տեսնեմ՝
Տամ, հոգն առնին, անուշնան։

VII

Փեսաներնը պայծառ ոսկով՝
Հալբերն ուրախ ծափ կուտան
Ու կարոտի, սիրու խոսքով
Իրար քնքո՞ւշ ձեն կուտան։

Հուլերն անո՞ւշ
Ցույր կը բերեն
Դրախտական
Դաշտերեն...

Վառ հնիլաթի է շորս գիս փռված.
Գինու գաւաթը կը հասին,
Համբույրնիրդ՝ գինով վառված՝
Բլբուլի պես կը հանին։

Հոգիս հարբած
Քու համբույրեն՝
Երգս ծփաց
Ձեր իրեն։

VIII

Քու աչերդ՝ հրե՛լեն ծով.—
Ծովերի պես մաղեր ունիս,
Սիրտս՝ նավակ, սիրդդ՝ խենթ հով.—
Հովերի պես նաղեր ունիս։

Դու գիշերը՝ վարդի երազ,
Հոգիս գրկած, վառ հոգիս,
Դու ցերեկը՝ ոսկի երազ,
Իմ գրկի մեջ, նազելի՛ս։

IX

Հե՜յ Արազած, ալ-լալ նազել՝
Ո՞ւր կը թռնիս իմ Երգիս պես.
Սրտիս խորքեն ելել-կանգնել
Երկինք կերթաս իմ սիրուս պես։

Քո լալազար, ծիծղուն ծաղիկնիր
Իմ վարդ-սերեն բույր կառնին.
Ձառ Մանթաշի թև ու թռչունք
Իմ բլբուլեն ձեն կառնին,
Հեյ ջա՛ն, հա ջա՛ն, ցողն ու ակունք
Սրտիս խորքեն ծին կառնին։

Բ ԵՐԳ

I

Աղոթրանեն ցոլաց արև,
Սուսան սարի հովն ընկավ,
Արտուտն երգով սուրաց վերև,
Շաղաղ վարդի հոտն ընկավ։

Փրփուր կտրած առուն կուգա՝
Այրին, ժայռին ձեն տալով.
Եղնիկ Զարոն ձորը կուգա՝
Մել-ծաղկունանց շողք տալով։

Եռ գնացե՛ք, քար ու քուա,
Վարդե՛ր, ճամփա ցույց տվեք,
Փուշ ու մացառ, մեկդի քաշվեք,
Նազան Զարոն մոտս գա.
Առու, փեշերդ գում արա,
Թողե՛ք Զարոն դիրկս գա։

II

Մվար մտած քարերի մեջ
Սիրամարգներ բյուր-հաղար,
Ասես, իրենց պոչերով պերճ
Զարդարել են դաշտ ու սար։

Ու անտեղյակ մահին-չարին՝
Հավքերն ուրախ սեր կերգեն.
Հարբած կերգեն իրենց յարին,
Ձեն կշտանար երգելեն։

Լույս ծաղկունքին մեղմ փարվելով,
Ինչպես ոսկի լարերին,
Հովեր կացնին բարակ հեով,—
Երազ երգեր կըլսվին։

III

Թեքս անցած՝ Զարոն սիրուն՝
Կիջնենք ձորը Մանթաշի,
Քնքուշ թախիծ լույս-աչերում՝
Զարոն անուշ կխոսի։
— Նայի՛ր, այնտեղ, դալար գրկում
Մի լճակ կա կապտաշյա.
Մի ուռենի՝ լալկա՛ն, տրտո՛ւմ,
Ափի վրա կճոճա։
Մի սիրաշար սիրտ կա թաղված
Էդ ծառի տակ մենավոր.
Երթանք այնտեղ, սիրուն տղաս,
Պատմեմ անցքը սգավոր...

IV

ԼՃԱԿԻ ՓԵՐԵՆ

— Լճակի տփին դարունքվա մի օր
Մի հոգիով տղա նստել է մոլոր.
Գարդուն սրնգով երգել է անուշ,
Ու գուրս է ելել մի աղջիկ քնքուշ.
Մի հրաշք-աղջիկ՝ մազերը ոսկի,
Աչերը խորունկ՝ նման լճակի։
Ասել է տղին.— «Ա՛յ սիրուն տղա,
Պատվերդ տեսա ալիքի վրա,
Ջրերի տակին ծալնիկդ առա
Ու գերիդ դարա...
Արի քեզ տանեմ, հատակում շքեղ
Ես ամրոց ունեմ՝ փէրուզ ու բյուրեղ.
Սպասիդ կանգնած անհամար ծառա,
Հրեղեն ձիեր, զմրուխտե զրահ։
Ու իրար գրկում կընթանք գինի,
Մեր անուշ սիրուն մեռնում չի լինի։
Արի՛ ինձ պաշե՛, քեզ շա՛տ կըսիրեմ,
Գրկի՛ր ինձ, թե չէ, տե՛ս, լաց կըլինեմ...»։

Ու լիքը փերին սուզվել է նորեն,
Վառված պատանին՝ նրա եռանեն...

V

Մեր մանկությունը հոգի հետով
Երազի մեջ կլսաՀի,
Ալիքների շուշան թևով
Լճի վրա սնդուսի։

Ծաղկոնանց պես աստղերն նշան,
Ընցուղ ափին շողերի,
Գլուխս դրած ծնկիդ վրան,
Բայրը կառնեմ աստղերի։

Փունջ ծամերդ ծուփի նման
Ճակատս վրա կրվռվին,
Ծփծփալեն համբույր կուտան
Ու խենթի պես էլ ցոնին։

Գ ԵՐԳ

I

Երեկոյան ճաղկոտ սարին
Հովիվն հոտը առնէ կըբերի.
Հոդնած հոտը արոտներեն
Քնքուշ յարիս քուն կրբերի։

Էսօր յարս շա՜տ է խաղցել
Արեգակի շողերի հետ.
Արևի պես շա՜տ է խաղցել
Շող-մատներով իմ սրտի հետ։

Շող մատներով, վարդ մատներով
Իմ սրտի հետ շա՜տ է խաղցել.
Հիմի հոգնել, եղնիկի պես,
Թևիս տակին կուչ է եկել։

Հոգնած հոտը ծաղիկներեն
Սիրուն յարիս քուն կրբերի,
Ցողյուրների, թիթեռների
Երազներով քուն կրբերի։

II

Երկինքն՝ անամպ, անուշ լուսին
Աստղերի մեջ ման կուգա.
Հարսանները սոսի՜ն-սոսի՜ն,
Հովը հովտում՝ կըհնա։

Հավքերն եկան թևին տալով
Երամ-երամ իրանց տուն.—
— Էս ի՜նչ լավ է, իրարու քով
Նստինք, խոսինք ես ու դուն։

Աստղի ցոլքով դիշերն իջավ,
Թողեց մաճկալն արորը.
Դար ու դարափ խոր քուն մտավ,
Հոտը իջավ մութ ձորը։
— Տե՜ս, էն հավքը, ի՜նչ մեղրաձոր
Ձենը ձգեց, Զարո՜ ջան,
Քոնի ձորն է ձենը էնոր,
Դուն երգդ ասա, սիրո՜ւն ջան...

III

ԶԱՐՈՅԻ ԵՐԳԸ

— Կոպերն իջան լուռ գիշերվա,
Սարին, ձորին քերթին քուն.
Դո՜ւ, լուսա-արև հոգուս վրա,
Դո՜ւ, միշտ արթուն իմ հոգում։

Քո աչերդ հուր ու սաթի,
Սիրտս առել են, տարել
Լուսա-աշխարհներ զառ հեքիաթի,
Հեռո՜ւ աստղեր, հեռուներ...

Է՛յ ջան, հազար ինձ երանի,
Սիրտս թիռ-թիռ կրճախրի,
Քաղեմ, շարեմ աստղերն երկնի՝
Քեզի գոտի գոհարի։

Մարմանդ կուգա քարակ քամի,
Սեզ ու արտա իրար կանի.
Թո՛ղ Գյուսերս քանդեմ՝ ապա՛ս,
Կրծքիդ վրա թել-թել ածի...

IV

Ու Գամբուրեց ինձ մեղմով,
Այնպե՞ս մեղմով, սիրով լի,
Ասես, դեմքիս վրայով
Սահեց թևը բլբուլի...

V

— Երբ փոքր էի, տատիկս ինձի
Հեքիաթ կասեր, որ քնեմ,
Ջունս չի գա, հեքիաթ ասա՛,
Հեքիաթ ասես՝ կրքնիմ...

VI

ՀԵՔԻԱԹԸ

— Գլուխդ դի՛ր ուսիս վրա, նազենի,
Մի վաղուցվա հեքիաթ ասեմ, լիս ակա.
— Կլինի, չլինի, ժամանակով կլինի
Մի իշխանի կտրիճ, մատաղ մի տղա։

Օրվա մեկը իշխանազուն այս տղան
Ընկերներով որսի ելավ գաշտ, անտառ,
Ու զատվելով բռնեց անծուկ մի կածան՝
Պրպտելով ամեն մի քար ու մացառ։

Մեկ էլ հանկարծ թփի տակեն մի եղնիկ
Դուրս ծլկվեց նետի նման ու թռավ,
Ու պըչկ եկան քերծենները ալացիկ,
Կտրիճ տղան պրծակեց ձին պարշավ։

Խեղճ եղնիկը փախավ մոտավ մի խրճիթ,
Ու երևաց շեմքի վրա մի աղջիկ.
Այնքա՞ն սիրուն, այնքա՞ն նազիկ ու վճիտ,
Արշալույսի ծիրանե-ծաղիկ ու շողիկ։

— Թողած երեն ու եղջերուն սարերի,
Խեղճ եղնիկիս ինչո՞ւ այսպես վախ կուտա...

— Զինա՛ղ աղջիկ, դու մոռա՞կ ես, թե փերի,
Որ եղնիկով որսկանի պիտի կրոբսես.
Ես տղան եմ անբ-իշխանի այս երկրի,
Զերբդ տո՛ւր ինձ, հետդ չենք տա եղնիկին,
Երթանք հորս ապարանքը մարմարի.

Ես՝ քո փեսան, դուն՝ իմ հարսը, իմ անգին.
Սրտիս վրա կապրիս բախտավոր ու գվարթ,
Ու կըշտանիս ասա՛ ու դուրդ գլեսաներ,
Շուրջդ — անուշ շատրվաններ, հազար-գույնզգույն
Բլբուլի պես կըկեղգնեն նազիշներ...

Աղջիկն ասաց — Ինչիս է պետք դունձ ու ոսկի.
Այս սարերի քաջ հովիվի հարսն եմ ես.
Նրա գրկում միայն երջանիկ ու սիրտ կա.
Ու թագուհի չլինի թագիս պես...

— Հղոր աղջի՛կ, քեզ կըսիրեմ, թե չկաս,
Քեզ կըառնեմ, կըփախցնեմ ես բռնի։
— Դուն իշխան ես, ապա՛, ինչ որ կըցանկանաս.
Բայց իմացի՛ր, սերը սիրով կըլինի...

Տղան խնդրեց ու պատասխան աղջկան.
— Ես ծեր հորս մեկ տղան եմ, միենուն՝ որ,
Եղջի արի, ա՛յ դու, անբո՛ւթ, աննմա՛ն,
Ես առանց քեզ խեղճ ազքատ եմ ու անճար։

Աղջիկն հեգարտ՝ ու շտապով սլաստասխան
Սարի դալար արտերը ալը կածեր.
Մեկ էլ տղան փչեց վոգը որսական,
Թռան եկան ընկերները ու ծառաներ։

Տղան ասաց ընկերներին մոլորուն.
— Ապարանքս այս խրճիթն է այսուհետ,
Ու իմ բախտը՝ այս աղջկա ձեռքերում.
Վերադարձեք ու ձիս տարեք ձիթի հետ։
Իմ վրանս խփե՛ք սրա դռան դիմ,
Եվ հոգս ասեք, որ ես էլ տուն չեմ դառնա.
Ինքնակալոս այսուհետ նստի՛, կշտանամ,
Մինչև որ ինձ այս աղջիկը մեղքանա...

VII

Ուսիս վրա գլուխն հենած
Ջարոս անուշ կքնի.
Ու հեքիաթս էլ կիսատ մնաց։—
Սիրու հեքիաթը վերջ չո՛ւնի...

Դ ԵՐԳ

I

Լեռան լանջին կա հինավուրց
Մի վանք մամռոտ, փլատակ.
Հավաքվել են առասպուց
Սարվորները նրա տակ։

Վարդավառի տոնն է այսօր,
Քողք են կապել սարվորներ,
Ձի կբխաղցնեն վանքի բոլոր
Ջենք ու զարդով կտրիճներ։

Սարվոր կանայք խոտով-ցախով
Բորբոքել են վառ օջախ.
Համով-հոտով, օրհնած ազով
Կեփեն ուխտած, սուրբ մաուազ։

II

Ընկեր-ազգեր սեղի վրա
Ուրախ սեղան են նստած,
Կարմիր գինին կրհուրհրա,
Կրթշթշա խորոված։

Ու սարն ի վեր ձենն է ձգել
Ջուռնան՝ բանձրիկ ու հզոր,
Դավուլն ահեղ՝ ժաժք է ձգել,
Թինդ ու դղորդ սար ու ձոր։

Ու մի կարիճ թռավ տեղեն
Որոտալի ծափերի մեջ.
Խենթ տրընկին սկսավ մեկեն,
Պարեց, պարեց ու չհոգնեց։

III

Դաղար կառնի դավուլ-ջուռնան
Ու փողն անո՛ւշ կհնձկլտա,
Ինչպես քաղած վարդի վրան
Բլբուլն անհույս լաց կուլա։

Ու մի տղա՝ կրծքի վրա
Սիրով զարկված գլուխը կախ՝
Նրանի մեջ, ասես, թե՝ նա
Երկնց մեղմիկ մի տխուր տաղ։

IV

ՏՂԱՅԻ ՏԱՂԸ

— Սիրելի՛ս, մի հատիկ ես,
Աշխարքի մեջ մի հատիկ ես,
Ես մեռնիմ — քեզի մատաղ,
Դուն ծաղկի՛ր — մի հատիկ ես։

Սիրելի՛ս, մի արունք է,
Մի կյանք կարես — մի արունք է.
Թե մի մատաղ սրտիկ կոտրես,
Սիրելի՛ս, յոթն արունք է։

Ա՜խ, աղջի՛կ, արտի միջին,
Ջա՛ն աղջիկ, վարդի միջին.
Ջրթ տարի քեզ սիրել եմ
Սիրտս սև դարդի միջին։

V

Սրագածը իրար վրա
Իր պերճ գորգերն է փռել,
Պերճ գորգերով քար ու քուա
Ջյոշքերի պես զառ-դուգել։

Զմրուխտեղեն թասերի մեջ
Ինչպես ոսկի գինիներ,
Կըշողշողան ու կըտան պեծ
Անկ-աղբյուրներ, լճակներ։

Վառ վարդերի տոնն է այսօր,
Հարս ու աղջիկ զարդարուն՝
Պտույտ կուգան օրոր-շորոր
Վարդափթիթ լանջերում։

Ու աղավնի կըթոցնեն
Ջյունների պես սպիտակ.
Իրար վրա ջուր կըցտնեն
Աղբյուրներեն անապակ։

Նազիկ-հավքերն անո՜ւշ կերգեն,—
Ո՞վ կիմանա էդ լեզուն.—
Ով լացել է սիրու վերքեն,
Թոչուն դառել երաշխում։

Աղջիկները փունջ կըհյուսեն
Եվ վարդերով՝ շաղերով.
Իրենց արտի սերը կասեն
Հուր-հավքերի տոպերով։

VI

ԱՂՋԻԿՆԵՐԻ ԵՐԳԵՐԸ

Ա

Սարի սրին ձյուն կըշողա,—
Սիրտս էրվեց քու սերեն.
Սարերն ելնեմ, կարոտ ապա՛,
Էրված սրտիս ձյուն բերեմ։

Բարև տարև՛ք, ծաղիկ, հովե՞ր,
Կանանչ-կտրիճ էն տղին,
Տարի բոլոր քեզ չեմ տեսել,
Մեռնիմ ես քո տեսնողին։

Ա՜խ, երանի զմրուխտ-թռչուն,
Զմրուխտ-երազ լինեի,
Թռվռայի բարձրիկ անքուն,
Աչքերդ անուշ պաշնեի։

Բ

Մեր բաղի խաս բլբուլին
Տըվի կարոտս՝ տանի,
Որ երգով տանի, տանի
Սրտով սիրած իմ յարին։

Մեր ձորի զուլալ առվին
Տըվի արցունքս՝ տանի,
Որ լացով տանի, տանի
Անգութ, անսեր իմ յարին։

Մեր սարի քարակ հովին
Տըվի հյուսերս ծուփ-ծուփ,
Որ տանի՞, տանի՞, տանի՞
Հեռո՜ւ. հեռո՜ւ իմ յարին։

VII

Վանքի դռան՝ գով շվաքին,
Նստել է կուլը մի աշուղ.
Զրույց կանե սազը կրծքին,
Սազը կուլա սրտաբուխ։

ԱՇՈՒՂԻ ԶՐՈՒՅՑԸ

— Քերթի վրա կար մի բերդ,
Էն բերդի մեջ մի աղջիկ.
Ինքը՝ հրաշք-գեղեցիկ,
Սիրտը՝ կարծր քարի փերթ։

Ով որ անցավ էս գեհով
Էդ գեղեցկի ոտքն ընկավ.
Սիրե՞ց, սիրե՞ց ու մեռավ՝
Վառված սիրու հրդեհով։

Եկա՞ն, եկա՞ն կարոտով,
Եկողն էլ ետ չդառավ,
Ու ո՞չ մեկն էլ սեր չառավ—
Ավա՞ղ, մեռան կարոտո՞վ։

Ու մի կտրիճ խթեց ձին,
Անցավ մի օր էդ բերդով,
Անցավ հպարտ, անվրդով
Ու չնայեց գեղեցկին։

Աղջիկը նրան ձայն տվեց.
Կանչեց, լացեց, որ ետ դար.
Ու երբ չեկավ, խելագար՝
Բուրգեն իրան վար նետեց։

Քերթի վրա կար մի բերդ,
Էն բերդի մեջ մի աղջիկ.
Ինքը՝ հրաշք-գեղեցիկ,
Սիրտը՝ քնքո՜ւշ վարդի թերթ։

VIII

Վանքի առաջ աղջիկ-տղա
Պար են բռնել, կլանին,
Ու մի աղջիկ, ու մի տղա
Սիրու խոսքով կկռվին։

Պարողները՝ ուրախ-կվարթ
Նրանց վեհին ծոր կուտան,
Ու կրծքերին՝ ծաղիկ ու վարդ՝
Պար կըդառնան, ծափ կուտան։

IX

ՊԱՐԵՐԳԸ

ՏՂԱՆ.— Ա՜յ սիրուն աղջիկ,
Դրախտի ծաղի՜կ,
Դուրս արի, տեսնեմ՝
Տեսքիդ կարոտ եմ։

ԽՈՒՄԲԸ.— Ջա՜ն վարդավառ,
Վարդավառ,
Մեր դռանը՝
Ոսկի ծառ։

ԱՂՋԻԿԸ.— Ա՜յ խելառ տղա՜,
Վարդերի վրա
Իսկի չե՞ս ընկել,
Երազ չե՞ս տեսել։

ԽՈՍՔԸ.— [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

ՆՈՍՔԸ.— [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

ԱՆԷՆԸ.— [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

ԵՎ ՄԻՆ.— [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

X

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

Ծի՜վ-ծի՜վ հավքեր կատաղ-կոցի,
Ծաղկունքի մեջ քուն մտան.
Հավքերի պես ե՛կ, ծոց-ծոցի,
Ի՛մ հազար սեր սիրելիան,
Խմենք երկնի մեղրագինին,
Ծաղկունքի մեջ քուն մտնենք.
Լուռ նայելով վառ աստղերին՝
Աստղերի մեջ քուն մտնենք։

Իրար գրկած՝ ես ու դուն՝
Երազներով հավերու,
Հավերժ թռինչը ես ու դուն՝
Աստղերին աստղ, ու հեռո՜ւ...

Ե ԵՐԳ

I

Ամպն է կախել շուրթը տրտում,
Ի՞նչ խավար է էս գիշեր.
Մենը կուց-կուց իմ խեղճ սրտում
Արուն կուլա էս գիշեր։

Անգութ վարդը ծոցն է դոցել,
Փուշն է բացել էս գիշեր.
Խեղճ բլբուլի սիրտն է խոցել,
Արուն կուլա էս գիշեր։

Ու էս գիշեր ասաց մի դայծառ
Տխուր կանչեց, վար ընկավ.
Ա՜խ, էն սիրու աստղն էր պայծառ,
Սրտիս երկնուց վար ընկավ...

II

Շող-շափաղին եկա, կանգնա
Իմ Զարոյի դռան դեմ,
Դուռն էր գոցած, ու ձեն տվի,
Ձենիս վրա չառա ձեն։

Քու զառանցդ ինձ որ տեսան՝
Տխուր ձենով ճայնեցին.
Աբդյոք ցավս դուք իմացա՞ք,
Չա՛ն, չա՛ն, մեռնիմ ձեր ձենին։

Ասեք Ջարարիս՝ դուռը բանա,
Միրտս ընկավ ցավ ու ցեց.
Դիշերըս գեշ երազ տեսա,
Տեսա սերս սուգի մեջ...

III

Երազիս մեջ ինձ տեսա՝
Ոսկի ալիք ցոլալիս.
Մի աղի հետ յարիս տեսա՝
Ոսկի նավով ման գալիս։

Ցարս կրծքին ծաղկունք ուներ,
Վարդը նրան նվիրեց.
Աբդյոք չքնի՞, օրոր հովի՞ր,
Ցարս սիրտս խոսք ավեց։

Տղան մայրիս մանյակ ուներ՝
Ցարիս վզին էլ տրավ.
Աբդյոք չքնի՞, շորոր հովի՞ր,
Իմ եղնիկին յար արավ։

Ցարս նրա գրկում տեսա՝
Համբույր կառներ ու ֆուտար.
Ա՜խ, ինձ ավելի մեռած տեսա՝
Ուրին վրաս լուռ կուլար...

IV

Կանգնել եմ մոլոր՝ քողիկիդ առջև,
Շվաքիդ մատաղ, դուռդ բաց արա,
Մեկ շողդ տեսնեմ, դուն իմ վառ արև,
Ճշխարհը անցավ իմ գլխի վրա։

Սիրտս այրված աչքիդ հրով,
Մի կաթիլ ջուր տա՛ր պատակ շրթունքիս.

Սիրտս դարձրած ունքերիդ թրով,
Մի կտոր դեղ տա՛ր անդարման վերքիս։

Երկնքի ամպը իր լեռը ունի,
Հանգստի մի այր՝ ճամփորդող քամին.
Ո՞ւր տանիմ, ասա՛, խեղճ սերս հիմի,
Դուռդ բաց արա՛,— մեռնիմ քու շնին...

V

Սրտիս միջին սերդ տարար,
Տեղը խորունկ վերք մնաց,
Խորունկ վերքս թողիր անհար,
Ինձ ո՞ւմ թողիր, ո՞ւր կերթաս։

Գերեզմանս գեթ փորեիր
Վերքիս նման՝ խորն, անտակ,
Քու ձեռներով ինձ թաղեիր
Լճի ափին, ծառի տակ.—
Ինձ թաղեիր շա՜տ խորն ու մութ
Նոր երթայի՞ր, է՛յ անգութ...

ՎԵՐՋԵՐԳ

Ով կյանք ունի, դարդ էլ ունի,
Դարդին դարման յար էլ ունի.
Մենակ ես եմ անբախտ ծնվել,
Սիրտս դարդոտ ու ճար չունի։

Ով սեր ունի, յար էլ ունի,
Նազան սրտում տեղ էլ ունի,
Մենակ ես եմ սեռ ծնվել,
Սերս կուլա ու բույն չունի...

Մեզը առավ դար ու դուրան,
— Ապիզ մերի՛կ, դուռը բա՛ց,
Չու որդին եմ, խոցված կուզամ,
Ցնո՛ւշ մերի՛կ, գիրկդ բա՛ց...

1895—1917,
Մանթաշ — Ս. Մարտին

ԱԲՈՒ-ԼԱԼԱ ՄԱՀԱՐԻ

Աբու-Լալա Մահարին,
Հռչակավոր բանաստեղծը Բաղդադի,
Տասնյակ տարիներ ապրեց
Խալիֆաների հոյակապ քաղաքում,
Ապրեց փառքի և վայելքի մեջ,
Հզորների և մեծատունների հետ սեղան նստեց,
Գիտունների և իմաստունների հետ վեճի մտավ,
Սիրեց և փորձեց ընկերներին,
Եղավ ուրիշ-ուրիշ ազգերի հայրենիքներում,
Տեսավ և դիտեց մարդկանց և օրենքները։
Եվ նրա խորաթափանց ոգին ճանաչեց մարդուն,
Ճանաչեց և խորագին առեց մարդուն
Եվ նրա օրենքները։

Եվ որովհետև չուներ կին և երեխաներ,
Բոլոր իր հարստությունը բաժանեց աղքատներին,
Առավ իր ուղտերի փոքրիկ քարավանը՝ պաշարով ու
պարենով,
Եվ մի գիշեր, երբ Բաղդադը քուն էր մտել
Տիգրիսի նոճիաձաձկ ափերի վրա,—
Գաղտնի հեռացավ քաղաքից...

ԱՌԱՋԻՆ ՍՈՒՐԱՀ

Եվ քարավանը Աբու-Լալայի՝
աղբյուրի նման մեղմ կարկաչելով՝
Քայլում էր հանդիստ, նիրհած գիշերով,
հնչուն զանգերի անուշ ղողանջով։

Հավասար քայլով չափում էր ճամփան
այն քարավանը ոլոր ու մոլոր,
Եվ ղողանջները ծորում քաղցրալուր՝
ողողում էին դաշտերը անդորր։

Մեղկ փափկության մեջ Բաղդադն էր նիրհում
ցիննաթի շքեղ, վառ երազներով,
Գյուլստաններում բլբուլն էր երգում
գաղելներն անուշ՝ սիրո արցունքով։

Շատրվանները քրքջում էին
պայծառ ծիծաղով ադամանդեղեն,
Բույր ու համբույր էր խնկարկվում շորս կողմ
խալիֆաների քյոշքից լուսեղեն։

Գոհար աստղերի քարավանները
թափառում էին երկնի ճամփեքով,
Եվ ղողանջում էր ողջ երկինքն անհուն՝
աստղերի շքեղ, անշեջ դաշնակով։

Մեխակի բույրով հովն էր շշնջում
հեքիաթներն հազար ու մի գիշերվա,
Արմավն ու նոճին անուշ քնի մեջ
օրորվում էին ճամփեքի վրա։

Եվ քարավանը՝ օրոր ու շորոր,
զնգում էր առաջ ու ետ չէր նայում.
Անհայտ ուղին էր Աբու-Լալային
բյուր հրապույրով կանչում, փայփայում։

— Գնա՛, միշտ գնա՛, իմ քարավանս,
և քայլի՛ր մինչև օրերիս վերջը,—
Այսպես էր խոսում իր սրտի խորքում
Աբու Մահարին, մեծ բանաստեղծը։

Գնա՛ մենավոր վայրերը թափուր,
աղատ, կույս և սուրբ զմրուխտյա հեռուն.
Դեպի արևը ալացիր անդուլ,
և սիրտս այրիր արևի սրտում։

Ա՜խ, մնաք բարով չեմ ասում ես ձեզ,
իմ հոր գերեզման, օրոցք մայրական,
Իմ հոգին հավերժ խռով է ձեզ հետ,
հայրենական հարկ, հուշեր մանկական։

Ես շատ սիրեցի իմ ընկերներին,
և բոլոր մարդկանց մոտիկ ու հեռու,
Իժ դարձավ խայթող իմ սիրը հիմա,
թույն-ատելությամբ սիրաբս է եռում։

Ատում եմ, ինչ որ սիրել եմ առաջ,
ինչ որ տեսել եմ մարդկային հոգում,
Մարդկային հոգում՝ զազիր ու նանիր՝
համբել եմ հազար կարշանք ու նողկում։

Բայց ամենից շատ ատում եմ հազար
ու մեկերորդը-կեղծիքը հոգու,
Որ զարդարում է անմեղ սրբերի
լուսապսակով երեսը մարդու։

Մարդկային լեզու, դու որ երկնային
բույրով ու թույրով, շղարշով պայծառ
Ծածկում ես մարդու դժոխքը հոգու,
ոգե՞լ ես արդյոք ճշմարիտ մի բառ։

Իմ սեգ քարավան, գնա՛, մխրճվի՛ր
անապատի մեջ՝ վայրի ու բոցոտ,
Եվ իշանիր այն պղնձացած,
շեկ ժայռերի տակ, գազանների մոտ։

Խփե՛մ վրանս, օձ-կարիճների
բքների գլխին վրանս խփեմ,
Այնտեղ թյուր անգամ ես ապահով եմ,
քան թե մարդկանց մոտ, կեղծ ու ժպտադեմ։

Քան ընկերի մոտ, ա՜խ, որի կրծքին
դնում էի ես գլուխս սիրով,

Կուրծքը ընկերի, որ շղարշում է
անդարձ դորստի անդունդը ստով։
Այնքան ժամանակ, որքան արևը
կայրե Սինայի սնարները վեռ
Եվ անապատի դեղին շեղջերը
հորձանքներ կտան ալիքների պես,—

Ես չեմ կամենա ողջունել մարդկանց,
նրանց սեղանից պատառ չեմ կտրի,
Գազանների մոտ հացի կնստեմ,
ողջույնը կառնեմ բորենիների։

Եվ գազանները թող ինձ հոշոտեն,
վայրագ հողմերը շաչեն ինձ վրա,
Եվ այսպես, մինչև օրերիս վերջը,
քարավանս անդարձ, գնա՛ ու գնա՛...—

Եվ վերջին անգամ Աբու Մահարին
ետ դարձավ նայեց նիրհած Բաղդադին,
Գարշանքով շրջեց ճակատը կնճռոտ
և փարվեց ուղտի թավ պարանոցին։

Սիրով գուրգուրեց, ջերմ շրթունքներով
համբուրեց ուղտի աչքերը վեհիտ,
Եվ թարթիչներից նրա կախվեցին
անզուսպ արցունքի երկու այրող շիթ։

Անուշ մրմունջով, նիրհած դաշտերով
մեղմ օրորվում էր ձիգ քարավանը,
Գնում էր առաջ, դեպի անապատ,
անհայտ ափերը, կույս-հեռաստանը։

ԵՐԿՐՈՐԴ ՍՈՒՐԱՀ

Եվ ոլորվում էր այն քարավանը
սեգ սրամավների շարքերի միջով,
Փոշի էր հանում,— փոշու քարավան,
որ վառում էր լուռ՝ խորշակն հուր շնչով։

— Քայլի՛ր, քարավա՛ն, ի՞նչ ենք թողել մենք,
որ կարոտանքով ցանկանք մեր դարձը,—
Այսպես էր խոսում իրեն սրտի հետ
Աբու Մահարին, մեծ բանաստեղծը։

— Թողել ենք այնտեղ կի՞ն-աստվածային,
սե՞ր-եջանկություն, անհուն երազա՞նք.—

Քայլի՛ր, կանգ մի՛ առ, թողել ենք միայն
շղթա ու կապանք, կեղծիք ու պատրանք։

Եվ կինն ի՞նչ է որ... խորամանկ, խաբող,
առնախանձ մի սարդ, հավերժ նանրամիտ,
Որ հացդ է սիրում, համբույրի մեջ սուտ
և քո գրկի մեջ գրկում ուրիշին։

Խարխուլ մակույկով հանձնվի՛ր ծովին,
քան թե հավատա կնոջ երդումին.
Նա՝ կավատ, վարար, մի չքնաղ դժոխք,
Նրա բերանով Իբլիսն է խոսում։

Դու երազել ես աստղը հեռավոր,
հրեշտակաթև շուշանն ըսպիտակ,
Որ քո վերքերին բալասան լինի,
ոսկեշող երազ կյանքի ցավի տակ,

Դու տենչացել ես լույս-ափերի մեջ
քեզ իրեն կանչող աղբյուրի երգին,
Եվ անմահության ցողն ես երազել
և անուշ լացել երկնային կրծքին,—

Բայց սերը կնոջ՝ տոչորված հոգուդ,
աղ-ջուր է տալիս, որ միշտ ծարավնաս,
Հուր տարփանքի մեջ հաղթական կնոջ
մարմինը լիզես և չըհագենաս։
Ո՜հ, կնոջ մարմի՛ն, պապշոտ, օձեղեն,
դիվական անոթ ոճիրների շար,

Դո՛ւ, որ մսեղեն դառն հաճույքով
արիը հոգու դարձնում ես խավար։

Առում եմ սերը՝ մահի պես անդութ,
հավիտյան այրող, խոցող գաղտնաբար,
Այդ քաղցր թույնը, որով արբողը
սարսուկ է դառնում և կամ բռնակալ։

Ո՛վ սեր, բնության դու խոշտանգիչ կամք,
ենոյ ու դավադիր ոգի աննահանջ,
Դո՛ւ, թոհուբոհի ընդերք մոլեգնած,
արյուն ցավատանջ, արյան մղձավանջ։

Առում եմ կնոջ՝ տարերքը կրքի,
միշտ բնդմնավորող եղեռնը անսանձ,
Աղբյուրն անսպառ, որ կուտակում է
աշխարհի վրա սիրվը չարության։

Առում եմ նորից սերն ու կնոջը,
իր համբույրները շողում ու դժնյա,—
Փախչում եմ նրա ճահիճ-մահիճից,
և անիծում եմ երկունքը նրա։

Երկունքը դաժան և հավերժական,
որ հեղեղում է վտառն իժերի,
Որոնք խայթում են, հոշոտում իրար,
աստղերն են պղծում տուփանքով ժահրի։

Սրիկա է նա, ով հայր է լինում,
ով երանավետ ծոցից ոչնչի՝
Գոյության կոչում թշվառ հյուլեին
և գլխին վառում գեհենն այս կյանքի։

— Իմ հայրը իմ դեմ մեղանչեց,
սակայն՝ չմեղանչեցի ես ոչ ոքի դեմ,—

---

* Այս խոսքերը գրված են բանաստեղծի շիրիմի վրա։

Այս իմ կտակը թող գրվի շիրմիս,
եթե լուսնի տակ մի խորշ պիտ գտնեմ։

Այնքան ժամանակ, որ ծովը պիտի
փաթաթվի Հեշազի ափերն զմրուխտյա,
Ես ետ չեմ դառնա կնոջ մոտ երբեք,
ես չեմ կարոտնա թռվչանքին նրա։

Կըգգվեմ վայրի տատասկը դժնի
և կըհամբուրեմ փշերը նրա,
Գլուխս կդնեմ այրվող ժայռերին
և կբլամ նրանց ջերմ կրծքի վրա։—

Եվ քարավանը մեղմիկ կարկաչով
շափում էր ուղին ոլոր ու մոլոր,
Դեպի երազուն և կապույտ հեռուն
հոսում էր առաջ հանգիստ ու անդորր։

Ջանգակներն, ասես, հեկեկում էին
և ծորում հատ-հատ հնչուն արցունքներ,
Քարավանն, ասես, լալիս էր անուշ,
ինչ որ Մահարին սիրել, լքել էր։

Եվ զեփյուռների սրինգները մեղմ
գեղգեղում էին շարքիներն անուշ
Սիրո վերքերի, վշտոտ կարոտի
և երազական թախծանքի քնքուշ։

Եվ Աբու-Լալան խորհում էր մռայլ,
և նրա վիշտը անհունի նման,
Ինչպես իր ուղին, որ գալարվում է,
ձգվում է անծայր ու չունի վախճան։

Հյուսվելով անծիր ճանապարհի հետ՝
լուռ թախծում էր նա ցերեկ ու գիշեր,
Հայացքը հառած անհայտ աստղերին,
հոգու մեջ դառն ու ցավոտ հուշեր։

Եվ ետ չէր նայում անցած ճամփեքին,
և չէր ափսոսում թողած-լքածին,
Ոչուչն չէր վերցնում, ոչուչն չէր տալիս
անցնող ու դարձող քարավաններին։

ԵՐՐՈՐԴ ՍՈՒՐԱՀ

Եվ քարավանը Աբու-Լալայի
աղբյուրի նման մեղմ կարկաչելով,
Հանգիստ, միաչափ քայլում էր առաջ
հեզ լուսնկայի շողերի միջով։

Եվ լուսինն, ինչպես ջեննեթի մատաղ
փերիի կուրծքը՝ շքեղ, լուսավառ՝
Մերթ ամաչելով պահվում էր ամպում
և մերթ թրթռուն փայլում էր պայծառ։

Նիրհ էին մտել ծաղկունքը բուրյան՝
ագամանդներով, շքեղ գինդերով,
Սիածանաթև հավքերը իրար
գուրգուրում էին քնքուշ մրմունջով։

Մեխակի բույրով հովն էր շշնջում
հեքիաթներն հազար ու մի գիշերվա,
Արմավն ու նոճին անուշ քնի մեջ՝
օրորվում էին ճամփեքի վրա։

Հովի զրույցին ունկն դնելով
Աբու Մահարին խոսում էր անձայն.—
— Աշխարհն էլ, ասես, մի հեքիաթ լինի՝
անսկիզբ, անվերջ, հրաշք դյութական։

Եվ ո՞վ է հյուսել հեքիաթն այս վսեմ,
հյուսել աստղերով, բյուր հրաշքներով,
Եվ ո՞վ է պատմում բյուր-բյուր ձևերով՝
անգամ ու անխոնջ՝ այսպես թռվչանքով։

Ակզբեր են հկել, ապագեր գնացել,
և չեն ըմբռնել իմաստը նրբա.
Բանաստեղծներն են հասկացել դույզն ինչ
և թոթովում են հնչյուններն անմահ

Ոչ ոք չի լսել սկիզբը նրբա,
և չի լսելու վախճանը նրբա,
Ամեն հնչյունը գարեր է ապրում,
ամեն հնչյունին վերջ, սկիզբ չկա։

Բայց ամեն մի նոր ծնվածի համար
նորից է պատմվում հեքիաթն այս շքեղ,
Նորից սկսվում և վերջանում է
ամեն մի մարդու կյանքի հետ մենակեղ։

Կյանքը երազ է, աշխարհը՝ հեքիաթ,
աղջիկ, սերունդներ — անցնող քարավան,
Որ հեքիաթի մեջ, վառ երազի հետ,
շրջում է անտես դեպի գերեզման։

Կույր ու գուլ մարդի՛կ, առանց երազի,
առանց լսելու հեքիաթն այս վսեմ,
Իրար կոկորդից պատռում եք հանում
և ոչնչանում աշխարհն՝ ահավոր ջնջված։

Ձեր օրենքները — լուծ ու խարազան,
և անեղք մի ցանց խոշտանգող սարդի,
Եվ որոնց ժահրով թունավորում եք
երբեք բերքի, անուրջը վարդի։

Նկնկի՛ մարդիկ, փոշի կրպառնան
ձեր վառ սրտերը, ձեր գործերը չար,
Եվ ժամանակի ձեռքը անտարբեր
կքսրբե-կավլի պիղծ հետքերը ձեր։

Եվ ունայնաշունչ հողմը կքշաշի
ձեր ոսկորների քարերի վրա,
Իսկ վայելելու դուք միշտ ապիկար՝
երազն այս շքեղ, հեքիաթն այս ոսկյա։—

Գոհար աստղերի քարավանները
թափառում էին երկնի ճամփեքով,
Եվ դողանջում էր ողջ երկինքն անհուն՝
աստղերի պայծառ, անշեջ զընգոցով։

Եվ արար-աշխարհ լցված էր, դյութված
բյուր նվագներով հավերժ երկնային,
Եվ անուրջներում նա վերասլաց
լսում էր հոգով վսեմ երգերին։

— Գնա՛, քարավան, մեղմ հնչյուններդ
հյուսելով երկնի լույս-զողանջի հետ,
Վիշտս տո՛ւր հովին, քայլի՛ր բնության
ծոցը մայրական և մի՛ նայիր ետ։

Տա՛ր ինձ լուսազգեստ, օտար մի եզերք,
հեռու, հեռավոր, մենավոր ափեր-
Սուրբ մենակություն, դո՛ւ, իմ օազիս,
դո՛ւ, երազների աղբյուր զովարեր։

Լռության երկինք, խոսիր դու ինձ հետ
աստղերիդ լեզվով և ամոքիր ինձ,
Գուրգուրիր հոգիս՝ աշխարհից խոցված,
մարդուց խայթված վիրավոր հոգիս։

Իմ մեջ այրվում է մի անհագ կարոտ,
կարեկից մի սիրտ՝ լացող հավիտյան.
Եվ իմ հոգում կա մի շքնաղ երազ,
և՛ սուրբ սրտաստուք, և՛ սեր անանձնական։

Ոգիս ազատ է, ես չեմ հանդուրժում
իմ վրա իշխող ո՛չ մի զորության,
Ո՛չ օրենք, սահման, ո՛չ ճակատագիր,
ո՛չ շար ու բարի, և ո՛չ դատաստան։

Իմ գլխի վերև չպետք է լինի
ո՛չ մի հովանի, ո՛չ մի իրավունք,
Եվ իմ կամքից դուրս ամեն ինչ բանտ է,
և՛ սարկացում, և՛ բռնադատում։

Ես կուզեմ լինել անսահման աղատ,
անպարտք, անիշխան, այլև անասուած,
Հոգիս տենչում է միայն, միմիայն՝
մեծ ազատության՝ անհուն, անտարած։—

Եվ քարավանը հյուսվում էր առաջ,
և նրա վերև շողում էին վառ
Մանկան ժպիտով աստղերը աղատ,
այն հավերժափայլ աչքերը գոհար։

Եվ կանչում էին նրան կաթոգին
լույս թարթումները ոսկի աստղերի,
Եվ հոգին լցնում վսեմ զողանջով
երկնքի հաղար բյուրեղ զանգերի։

Վճիտ գիշերին դյութական ցոլքով
փայլում էր ուղին փիրուզյա հեռվում,
Եվ քարավանը՝ օրոր ու շորոր,
քայլում է անդորր փիրուզյա հեռուն...

ՉՈՐՐՈՐԴ ՍՈՒՐԱՀ

Գիշերն ահարկու՝ և՛ սև, և՛ հսկա
մի չղջիկի պես թևերը փռեց,
Անծիր թևերը իջան, ծածկեցին
քարավանն, ուղին և դաշտերն անափ։

Եվ հորիզոնից մինչև հորիզոն
երկինքը լցվեց մռայլ ամպերով.
Չկին շողշողում լուսինն ու աստղեր.
խավարն՝ ասես թե՝ պատած խավարով։

Եվ հողմերն ահեղ՝ նժույգների պես՝
սանձարձակ, վայրի արշավում էին,
Հրմանքներ տալով, և հողն ու փոշին
այրված դաշտերից խառնում ամպերին։

Ե՛վ մահասարսուռ շառաչում էին,
և՛ աղաղակում հաղար ձայներով,
Ասես, վիրավոր գազաններ էին,
մոնչում-ոռնում հողմի բերանով։

Նեղ ձորերի մեջ գալարվում էին
և արմավենու անտառներում կույս
Հեծեծում էին հողմերը տխուր,
որպես թե՝ մի սիրտ լաց լիներ անհույս։

— Գնա՛, քարավա՛ն, հողմերի դիմաց
աննկուն քայլիր աշխարհի հզրը.—
Այսպես էր խոսում իր սրտի խորքում
Աբու-Մահարին, մեծ բանաստեղծը։

«Շաչեցե՛ք գլխիս, ամենի հողմեր,
դո՛ւք, մրրիկնե՛ր, պայթեցե՛ք գլխիս,
Ես քաց ճակատով ձեր դեմն եմ կանգնած,
ես վախեցող չեմ, զարկեցե՛ք ճակատիս։

Ես ետ չեմ դառնա ժանտ քաղաքները,
ուր բազմաժխոր կրքերն են եռում,
Ոռոտաններն արյան, ուր մարդը դաժան
իր նմաններին է միշտ պատառում։

Ի՛մ անտուն գլուխ, տուն չես դառնա դու,
ինքդ մարեցիր երդեզ հայրենի,
Վա՛յ նրան, ով որ տուն ու տեղ ունի,
կապված է շան պես իրեն տան շեմին։

Արշավե՛ք հողմեր, իմ հոր տան վերա,
քանդե՛ք, ավերե՛ք հիմերը նրա,
Եվ փոշին ցրե՛ք մեծ աշխարհով մեկ,—
անծայր ճամփան է իմ տունը հիմա։

Մենակությունն է իմ սերը հիմա,
երկինքն աստղաբիր-վրանս հայրական,

Եվ քարավանն է ընկերս հիմա,
և իմ հանգիստը՝ ուղիս սանկայան։

Դո՛ւ, կախարդ ուղի, հավիտյան անհայտ,
հավիտյան դյութող իմ նոր հայրենիք,
Տա՛ր ինձ, իմ սիրտը՝ հավիտյան լացող՝
այնտեղ, ուր բնավ չեն եղել մարդիկ։

Մարդկանց մոտ պետք է ալալուրջ լինես,
միշտ ոտքի վրա և սուրը՝ ձեռին,
Որ քեզ ատեն, քեզ չհոշոտեն
թե՛ բարեկամքդ և թե՛ թշնամիդ։

Բարեկամներից հեռու տա՛ր դու ինձ,
որոնք անկշտում մժղուկների պես
Հետևում են քեզ, երբ արյուն ունես,
իսկ երբ ցամաքես՝ կմոռանան քեզ։

Իմ խոր վերքերը ո՞վ կնյութեր ինձ,
թե չլինեին ընկեր, բարեկամ,
Որոնք համբույրով սիրտս բացեցին,
որոնք համբույրով խայթեցին նրան։

Բյուր կեղծիք ունի իր ակունքի մեջ
համբույրը մարդկանց, համբույրն ընկերի,
Որով որսում է զաղտնիքը սրտիդ
և դարձնում է քեզ հավիտյան գերի։

Ի՞նչ է ընկերը և բարեկամը՝
նենգ ու դրուժան, շարակամ ու վատ։
Իմ հոգում մնում սիրտ մի երկինք,
մի վառ արևգակ, և՛ սեր, և՛ հավատ։

Բարեկամն ի՞նչ է — լավիդ նախանձող,
քայլիդ խուզարկու, բամբասող, ագահ.
Սանոմ՝ շները չեն հաչում վրադ,
ծանոթ մարդիկ են հաչում քո վրա։—

Հողմերն անհեթեթ ջինների նման՝
Աբու-Վալայի խոժոռուն դեմքին
Քրքջում էին, ծափ տալիս, ծաղրում
և ապարոշից քաշքշում ուժգին։

Եվ քաղաքներից կախ էին ընկնում,
և աչքերի մեջ Աբու-Վալայի
Շաղ էին տալիս բուսերով փոշի
և կտրում թելը նրա խոհերի։

ՉԻՆԳԵՐՈՐԴ ՍՈՒՐԱՀ

Եվ քարավանը ճեղքելով վստահ
մրրկապարը վայրագ ջիններ,
Անչեղ ու անվախ ձգվում էր առաջ
դողանջյուններով հուզված զանգերի։

— Ի՞նչ է ընկերը...— կրկնում էր անդուլ
զայրացած սրտում Աբու Մահարին.—
Ցցիդ մեջ սև օձ, մահիճդ պղծող...
Թո՛ւ, քարավա՛ն, ընկեր մտերիմ։

Եվ ուր որ կերթաս, այնտեղից նորեն
դեռ ու դեռ, առանց հանգրվան,
Իմ բարի ճամփա, տար ինձ, կորցրու,
չքվիմ, տանջանքս մարդիկ չիմանան։

Եվ ի՞նչ ենք թողել, ի՞նչ կա մեր ետև,
որ մեզ պատրանքով ետ կանչեն նորից.
Փա՞ռք, գա՞նձ, օրենքնե՞ր և իշխանությո՞ւն...
Թոիր, հեռացիր բոլոր-բոլորից։

Եվ ի՞նչ է փառքը.— այսօր քեզ մարդիկ
եղջյուրներից վեր կբարձրացնեն,
Վաղը նույն մարդիկ սմբակների տակ
ճմլելու համար քեզ վար կընկնեն։

Ի՞նչ է պատիվը, հարգանքը մարդկանց,
— լոկ ոսկուց — վախից հարգ են մատուցում,

Իսկ երբ սայթաքես, մուճակիդ փոշին
մեծ մարդ է դառնում և քեզ հարվածում։

Եվ ի՞նչ է գանձը, որով հիմարը
տիրում է մարդկանց, և՛ հանճար, և՛ սեր,—
Բյուրավորների քամված արյունը,
մեռելների միս, որբի արցունքներ։

Ի՞նչ է ամբոխը — մեծ հիմարն է նա,
ոգին հալածող և տաքը չարի,
Բռնության խարիսխ, և՛ սուր երկսայրի,
և՛ զայրույթի մեջ գազան վիթխարի։

Ի՞նչ է համայնքը — թշնամու բանակ
և անհատն այնտեղ անշղթա գերի,
Ե՞րբ է հանդուրժել հոգու թռիչքին
և սլացումին վսեմ մտքերի։

Նողկալի համայնք, հեղձուցիչ օղակ,
քո լավն ու վատը — ահեղ խարազան,
Մի անհուն մկրատ բոլորին խուզող՝
միահավասար և միանման։

Ատում եմ, ավաղ, և՛ հայրենիքը—
պերճ արոտավայրը հարեւանների ցոփ,
Որի հողն արնոտ՝ անգուլ հերկողը
չոր քար է կրծում իր հացի հանդեպ։

Ի՞նչ է օրենքը,— մարդկանցից օրհնած,
բիրտ ուժեղների այդ սուրը դաժան,
Անզորի գլխին կախված հավիտյան,
խեղճին խողխողող, հզորին պաշտպան։

Ե՛վ իրավունքը, և՛ օրենքները
բոլոր զայրույթով ատում եմ, ատում,
Գարշ իրավունքով բռնաբարում են
և գարշ օրենքով լկում ու մորթում։

Ցանկն անգամ ահա՛ ատում եմ, ատում
իշխանությունը — սերունդներ լափող,
Անհագ վաշխառու, անկուշտ ձրիակեր,
պատերազմների հավերժ հերյուրող։

Անցած դարերի, գալիք դարերի
մեջ դահիճն է նա և մեծն ավազակ,
Իր անցած ուղին՝ ոճիր ու նախճիր,
սարսափներ վիժող, ոիսակալ ոհմակ։

Նա հրեշի պես կրծքիս է նստել,
բռունցքն է ահեղ սեղմել ճակատիս,
Եվ ամեն քայլիս շղթա է դարկել,
փականք է դրել լեզվիս ու մտքիս։

Նա փշրում է միշտ մեր ուսերը վար,
ամենուր հասնում, ճզմում է մարդուն,
Եվ իրավունքի դաժան անունով
բյուր կառափներից բուրդեր է կերտում։

Եվ ամեն ինչ է իշխանությունը—
իրավունք, օրենք և արդարություն.
Նա ինքն է խիղճը և չարն ու բարին,
իսկ դու գերեզման, դու՝ ոչնչություն։

Եվ նզովում եմ իշխանությունը՝
հազարաճիրան մոլի բորենին.
Իր ամեն քայլը՝ արյունի հնձան,
ուր տրորում է ծերին, մանուկին։

Ասիկա՞ր մարդիկ, ստրուկ ու վախկոտ,
ո՞վ տվեց սուրը նմանիդ ձեռին,
Ո՞վ տվեց նրան վրեժի իրավունք
իշխել, խողխողել իր նմաններին։

Տա՛ր ինձ, քարավան, իժերին հանձնիր,
թաղիր հեգ սիրտս ավազների տակ,
Տա՛ր ինձ, ազատիր իշխանությունից,
ազատիր նրբա հովանուց վայրագ։—

Խոլ կայծակները հրեղեն սրով
Ծիծաղում էին վաշտերն ամպերի
Եվ արշավասույր՝ փշրվում էին
Լեռնակ լուսերին հեռու լեռների։

Եվ մրրիկները մոնչում էին,
սրընթաց ու նոնին շաչում, շառաչում.
Եվ քարավանը կամուրջ քանդելով
և քառատրոփ վազում էր, թռչում։

Վազում էր, թռչում. զրնգ, հա զրնգ,
փոշու ամպերով ծածկելով ճամփեն,
Ահա, փախչում էր շար իշխանության
քինոտ բռունցքից, որ չհասնի իրեն։

ՎԵՑԵՐՈՐԴ ՍՈՒՐԱՌ

Եվ միշտ բարի արևի տակ
խփում բուրում էին նարգիս ու ծաթոր,
Եվ քարավանը փոշու մեջ կորած՝
քայլում էր դանդաղ, հոգնած, քրտնաթոր։

— Թռի՛ր, քարավան, խորշակ ու մրրիկ
ճեղքելով մութ ավազի ծոցը.—
Այսպես էր խոսում զայրացած սրտում
Աբու Մահարին, մեծ բանաստեղծը։

— Թող անապատի բոց հողմն իմ դեմ գա,
ավազի վրայից հեռբերս ջնջի,
Թող մարդը երբեք տեղս չգտնի,
իմ չնչած օդը մարդը չքաշի։

Տեսնում եմ ահա շեկ առյուծներին՝
դիշերն շեղջերից աչքիս են նայում,
Տեսնում եմ նրանց, որոնց ոսկեղեն
քաշերից հոգիս վայրենի է պոկում։

Սրի՛ք, կանչում եմ, ես փախչողը չեմ.
սրի՛ք, լափեցե՛ք սիրտս վիրավոր,
Ես ետ չեմ դառնա մարդու մոտ երբեք.
դուռը չեմ բախի մարդու նենգավոր։

Մարդիկ ի՞նչ են որ... դիմակված գներ,
ծանիքներ ունեն, անտես ճիրաններ,
Սմբակներ ունեն և որոճող են
և նրանց լեզուն՝ թունավոր սուսեր։

Եվ ո՞վ են մարդիկ... աղվեսների հոտ,
խամոլ անհուն, ուրացող, մատնիչ,
Անկումիդ ուրախ, արյունները լակող,
գազան մանկասպան, և դահի՛ճ, դահի՛ճ։

Աղքատության մեջ՝ քծնի, վաճառվող,
թշվառության մեջ՝ վախկոտ, դավաճան,
Հարստության մեջ՝ լկտի, շարախինդ,
և՛ վրիժառու, և՛ ամբարտավան։

Զոհվում է լավը վատերի համար,
և վատն ու չարը լկում են, տանջում
Մի բուռ լավերին այս վատ աշխարհում,
և կյանքի արտում որոմն է աճում։

Նզովում եմ ձեզ, հեռավո՛ր մարդիկ,
ձեր չարն ու բարին, կրոնները ձեր,
Որոնք միմիայն շղթա են կռում
և ստրկության կոփում զնդաններ։

Ապիրատ աշխարհ, ուր հզոր ոսկին
դարձնում է զոռին՝ ազնիվ բարեհույս,
Ապուշին՝ հանճար, վախկոտին՝ կտրիճ,
ագեղին՝ չքնաղ և պոռնիկին՝ կույս։

Մարդկային աշխարհ, արյան բաղանիք,
ուր թույլն՝ հանցավոր և հզորն՝ արդար,
Ուր մարդը տխեղծ՝ ինչ որ անում է
այս դարշ աշխարհում՝ սոսկ նյութի համար։

Սոսկ շահի համար, շահին միշտ գերի,
աստվածացնող թաթը եղեռնի,
Ահա մարդը միշտ — պատկերն աստծու,
սակայն իրապես վիժվածք շեյթանի։

Համրելով մեկ-մեկ անթիվ քայլերը
իմ քարավանի, իմ անծայր ճամփու,
Անթիվ քայլերը չեն հասնում չափին
մի օրում գործած հանցանքին մարդու։

Ասում եմ ահա և՛ արևելքին,
հյուսիս, հարավին, և՛ արևմուտքին,
Որոնց հողմերը իրար հետ նեղհակ՝
լսում են մեկտեղ իմ արդար խոսքին։

Տարե՛ք, տարփողե՛ք խոսքս հրեղեն,
որ ծովերից ծով աշխարհներ լսեն,
Թե ավելի վատ, ավելի դաղիր՝
քան մարդը դաժան — այդ մարդն է նորեն։

Այնքան ժամանակ, որքան աստղերը
անշեջ թարթում են լուռ անապատին,
Եվ դալարվում են շեղջերն ավազի,
շչում ու ճչում նման օձերին—

Փախի՛ր, քարավան, այդ պոռնկությանն
լպիրշ ու արբշիռ ցոփ խնջույքներից,
Կեղծի, կեղեքման հրապարակներից
և վաճառանքի սլիգծ շուկաներից։

Համայնքից փախի՛ր, փախի՛ր վրեժից,
մարդկանց արյունոտ արդարությունից,
Փախի՛ր կնոջից, սիրուց, ընկերից,
շնչահեղձ փախի՛ր մարդու ստվերից։

Գնա՛, քարավան, ներքաններիդ տակ
տրորիր, նոխիր օրենք, իրավունք,
Եվ ուղիներիդ փոշիով ծածկիր
թե՛ չարն ու բարին, թե՛ իշխանություն։

Եվ թող հոշոտեն ինձ վագր ու առյուծ,
բոցոտ հողմերը շալեն ինձ վրա,—
Եվ այսպես, մինչև օրերիս վերջը,
քարավանս անդարձ, գնա՛ ու գնա՛...—

Իրենց աղեղի պարանոցները՝
ուղտերը լարած նետերի նման,
Ձիլ վազում էին, և իրենց հետքից
թողնելով փոշու անծայր քարավան։

Ձիլ վազում էին խանձված դաշտերով
դեպի անհայտը, դեպի հեռատան,
Սքողում էին հողի թուխպերով
անծիր դաշտերը, ավան ու ոստան։

Կարծես՝ վախեցած փախչում էր արագ՝
առանց հանգրվան, Աբու Մահարին,
Կարծես՝ օրենքը, կինն ու համայնքը
նրան կրընկոխ հետևում էին։

Եվ քարավանը զրընգ, սրընթաց,
առանց նայելու անցնում էր անդարձ
Բուրգերի տակով մեծ քաղաքների՝
հայի ու կրքի ժխորով լցված։

Վազում էր հապճեպ՝ անգիտության մեջ
դարեր քարացած գյուղերի մոտով,
Վազում էր, սուզվում հեռուների մեջ՝
ոսկեհոս աստղի անդուսպ կարոտով։

Քարավանն հետոտ օրեր-գիշերներ
լափում էր ուղին ոլոր ու մոլոր,
Եվ խռով հոգով Աբու Մահարին
խորհում էր ցասկոտ՝ ճակատը խոլոր։

Նոյ քարավանը նրա խոհերի՝
բաղեների պես ծնծկված մրրկով,
Սլանում էին՝ խռիվ ու ցրիվ՝
մի լույս-հանգրվան գտնելու հնքով։

Եվ լալիս էր նա առանց արցունքի,
և նրա վիշտը նման անհունի,
Ինչպես իր ուղին, որ գալարվում է՝
անծայր օձի պես, և վախճան չունի։

Եվ ետ չէր նայում անցած ճամփեքին
և չէր ափսոսում թողած, անցածին.
Ողջույն չէր վերցնում, ողջույն չէր տալիս
եկող ու անցնող քարավաններին։

ՑՈԹԵՐՈՐԴ ՍԱՒՐԱՀ

Եվ քարավանը Աբու-Լալայի
Արաբստանի մեծ անապատի
Դարբասների մոտ ծունկ իջավ հոգնած...

Հորիզոնները հրդեհվում էին
իրենց ամայի, ազատ ափերում,
Մութն հավաքում էր քղանցքը թավշյա,
բոցերով բոսոր երկինքն էր ծփում։

Եվ Աբու-Լալան նստեց մենավոր՝
հակինթյա ժայռին գլուխը հենած,
Հայացքը սուզած դյուցազական հեռուն,
և հաշտ ու ալյոնտ, հոգին անդորրած։

— Ո՜հ, ի՜նչ ազատ եմ, անպարփակ ազատ.
մի՞թե կարող է այս մեծ սահարան
Պարուրել, գրկել իր ծիրերի մեջ
ազատությունը՝ անհուն, անսահման։

Ո՞չ մի մարդկային աչք ինձ չի տեսնի,
չի հասնի ո՞չ մի մարդկային բազուկ
Ո՜վ ազատություն, դու դրախտային
չքնաղ վարդերի լուսեղեն բուրմունք։

Քո պերճ վարդերով դո՞ւ պսակիր ինձ,
վառի՞ր իմ հոգում ջահերդ հուր-հրան,

Ո՜վ ազատություն, դու դրախտային
լույս-բլբուլների անմահ Ալ-Կորան։

Ջքնաղ առապար, դու իմաստության
ոսկեգեղեն աշխարհ, հազար ողջույն քեզ,
Անարատ բաղին, ուր մարդը մարդուն
չի ատել բնավ, հար օրհնյալ լինեա։

Տարածվի՛ր անծիր, փռվի՛ր աշխարհ
դեղին ծովերը աղգեների վրա,
Ծածկիր ողջ մարդկանց, քյոշք ու խրճիթներ,
գյուղ ու շահաստան, շուկա ու կլա։

Վիշտ հողմիդ հետ ազատությունը
թող գահակալե աշխարհը հանուր,
Եվ ոսկեվառ վսեմ արևը՝
ազատությունը աշխարհասիրուհ։

Հազար ու հազար հրաշալիքներով
և հրաբորբոք հրապույրներով
Նեմս-արևն ելավ՝ շքեղ, լուսավառ,
վարդի, անդուսի բյուր պարույրներով։

Եվ վեհ արևի ջահերի ներքո
փռվեց, ծավալվեց ծիրն անապատի,
Վառ-վառ հուրհրաց, ինչպես տիտանյան
հսկա առյուծի ոսկեփառ մորթի։

— Սալա՛մ քեզ, արև՛, շյուքը բյուրաբյուր,
դու աստծուց հզոր, դու կյանքի աղբյուր,
Դու, իմ անմահ մայր, մայրական դու գիրկ,
դու միակ բարի, դու միակ [illegible]։

Տիեզերական դու բաժակ անհուն՝
ոսկի արբեցման և երանության
Դու հրճվանքի, հրապույրների
հրեղեն գինու անհուն օվկիանոս։

Տի՛զերական հաղարահանդես
դու մեծ խլրտանք, բարի՛ արիգակ,
Ահա իմ հոգին — մի ծարավ բողբոջ,
թափի՛ր նրա մեջ գինիդ անապակ։

Քո երջանկությամբ, քո իմաստությամբ,
քո հավերժությամբ հարբեցրո՛ւ ինձ,
Տո՛ւր ինձ անցյալի անդաբիթ մոռացում,
լույս անուրջներում քո բազմանալիս։

Հարբեցրո՛ւ ինձ, հարբեցրո՛ւ ինձ,
քո անմահ գինով հարբեցրո՛ւ ինձ,
Մոռանամ մարդուն, սուտն ու մահացուն,
մոռանամ հավերժ չարիքն ու թախիծ։

Քո վսեմությամբ հարբեցրո՛ւ ինձ,
հարբեցրո՛ւ ինձ լույս-հիացքներով,
Խավարների դեմ անհաղթ ախոյան,
չարությունների մայր, ուրախության ծով։

Դու միակ բարի, դու միակ իմ սեր,
դու միայն սո՛ւրբ, սո՛ւրբ, մայրա՛կան դու գիրկ,
Դու հավետ գթոտ, մահը խորտակող,
դու գերահրաշ, միակ գեղեցիկ։

Ես սիրում եմ քեզ, ես սիրում եմ քեզ,
հրակոծ սիրով ինքիր, խոցիր ինձ,
Եվ ոսկեճաճանչ վարսերդ շքեղ
փռիր ինձ վրա, և գուդդուրիր ինձ։

Եվ արյունոտիր իմ շրթունքները
համբույրիդ խայթով քո հրդեհակեզ,
Երջանկասփյուռ քո լույս-գիրկը բաց,
ես սիրաբորբոք թռչում եմ դեպ քեզ։

Եվ թող խլանան իմ ականջները՝
աղմուկն աշխարհի չլսեմ հավետ,
Հավետ կուրանամ աշխարհի համար,
մարդկանց տեսնելու այլ չնայեմ եռ։

Դեպի արևը դարեր ու դարեր
թռի՛ր, սլացի՛ր, ազնիվ քարավան,
Նրա լուսեղեն, բոցեղեն գլխում,
որ արևանամ և հավերժանամ։

Ա՜հ, իմ մայր-արև, քո ոսկեփրփուր
ծիրանիդ շքեղ ձգի՛ր ուսերիս,
Որ ես հաղթական, լույս փառքերիդ մեջ
սրարբած սուրամ դեպի, դեպի քեզ։

Դու աստծուց հզոր, դու միակ իմ սեր,
դու միակ իմ մայր, մայրական դու գիրկ,
Դու միայն բարի, դու միայն սո՛ւրբ, սո՛ւրբ,
դու գերահրաշ, միակ գեղեցիկ...

ՎԵՐՋԻՆ ՍՈՒՐԱՀ

Եվ ուղտերն, իրրև ոսկի մակույկներ,
հույլ ալիքները ծով-անապատում
Ճեղքելով արագ սլանում էին
դեպի բոցավառ, լուսավառ հեռուն։

Եվ ոչ մի սամում հրաշունչ թնով
չէր կարող հասնել նրանց արշավին,
Նրանց թռիչքին չէր կարող հասնել
սլացքը նետի վայրի բեղվինի։

Վուհադիներից գով սյուքն էր բերում
վառ բաբիղները այրող կարոտի,
Դալլալում էին կաթնաղյուրները
նրազներն իրենց կուսական սրտի։

Եվ հեքիաթների լույս փերիները
մայր-սամավենու քնքուշ սոսյունով
Համբույր ու ողջույն ուղարկում էին
և կանչում նրան գաղտնի խոսքումով։

Բայց Աբու-Հալան չէր ուզում լսել
սիրտ սղջուցնին, գողտրիկ սոսավին,
Թռչում էր անհաղ՝ դեպի արևը,
և ինքն էլ պայծառ՝ նման արևին։

Իսկ սերաբենները նոր սոսիներով
բյուր պատրանքների, հրապույրների՝
Թոցնում էին կախարդված հոգին
ոսկի թևերով լույս-անուրջների։

Ուղտերը արձակ պարուսաններով
հուժկու, մոլեգին, այնպես խոլաբար
Սլանում էին, ճախր էին առնում
հրեղեն թափով, խենթ ու խելագար։

Եվ արեգական վառ ցնցուղի տակ
բոցկլտում էին ուղտերը զվարթ.
Եվ բարձրաղղանջ կայլակում էին
գոնդալներն ազատ, ցնծուն լուսազարդ։

Աբու Մահարին արծվի նման
աչքերն անբիծ՝ արևին հառած,
Թռչում էր աննինջ հոգին լուսարբած
և երանության շահերով վառված։

Նրա ետևում լոկ անապատն էր
փռված հոլանի՝ լույսերի ծոցում,
Իսկ գլխի վերև արևն էր նազում
շափյուղյա վարսերն անծիր տարածում։

Եվ ոսկեփրփուր ծիրանին ուսին
Աբու Մահարին, մեծ բանաստեղծը,
Թռչում էր անգուլ՝ հաղթական ու վեհ,
դեպի արևը, անմահ արևը...

1909,
Ղազարապատ

ՍԱՍՍՈՒ ՄՀԵՐ

ՎԻՊԵՐԳ

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

Ելավ քաջ Դավիթ՝ իշխան Սասունա,
Կբռիվ խոյացավ ի Մսրա վերա։
Ու նրա ետևուց խանդութ մեծ Տիկին
Լիր-լրումն առավ,
Լույս աշխարհ բերավ
Մեկ արու զավակ՝ տեր ու ժառանգին
Հոջանց աթոռքին, Սասմա աշխարքին։

Ու հետուց ավանդ սուրբ սովորութքով
Ժողվեցան եկան Ջոջանց Տան պետեր,
Մանկան բարուրի բինդերու փոխան
Գութանի շղթան փաթթեցին վրան,
Ու ասին իրար Ակնանց ավագներ,—
— Թե կուրենց ազան կապանքն երկաթին,
Նա ազատ կուզե ու կրնա ձեռնել,
Նա մեր ցեղեն է՝ առյուծ հոր որդին։

Մանուկն էր. ճըչաց, ճըկեց ձեռն ու ոտ,
Կոտրեց շղթայի ամեն հոդն ու զոդ։
Համբավը տարան կռվի դաշտ՝ Դավթին.
Ու պատգամ հասմեց Դավիթ խանդութին.

— Իմ ակն-արեգակ հորըս անունով
Իմ կորյուն որդուս

Կանչեցեք Մահեր,
Նա պիտի դառնա մեր աշխարհին տեր,—
Ով զերկաթն իշխե՝ իշխանն է մարդու։

Ու շաբ օրն հասավ՝
Մահացավ Դավիթ՝ գյուցապլն-առյուծ,
Մահացավ խանդութ սրտի կսկիծուց.
Մնաց որբ-մանուկ, անհեր ու անմեր
Իրենց մեկ հատիկ զավակը՝ Մահեր։

Ու Դավթի եղբայր, ճնճղապտորիկ,
Ելավ, սիրացավ Սասման անառիկ,
Տեր դարձավ Դավթի զանձին ու կայքին,
Որ պահե, շահե Սասմա ժառանգին։

Մահեր թեև դեռ տղա էր ակար,
Իրեն ուժի տեր Սասուն մարդ չկար։
Հոր նման պարթև, աչքերն՝ ակն-արև,
Հայացքն արծվենի, ճակատն՝ արքենի,
Մազերը՝ բոց-հուր,
Մեջք ու բազուկներ՝ պողպատիկ ու կուռ։
Յոթ մարդու կերը կուտեր մեկ ժամով,
Ով տարավ կաճեր՝ նա կաճեր ժամով։
Վեհ էր բնությունը, խրոխտ ու ըմբոստ,
Հրով, խանդով վառ.
Ջայրությունքի պահին՝ մթար ու մլար,
Հանց որ Նեմրութ սար։

Սասմա սեպ սարեր ոտներն անդունդին,
Գլուխն՝ երկնքին, ամպին ու շանթին,
Կրվազեր Մահեր շանթի հետևն,
Փետուր կպոկեր արծվի թևեն։

Հորեղբայրն ասավ Մահերին մեկ օր.
— Գյուղի հուտաղներ կերցրին բոլոր
Մեր հանդն ու ածու. գընա, ակը տու,
Բան արա, որդի, պարապ մի՛ նստի։

Ու կելներ Մահեր առավոտ լուսին,
Կրկապեր ուսին
Գոմշենի մախաղ՝ հացով ու թացով,
Կերթար ժուռ կուգար Սասմա դար-դուրան,
Կրհսկեր Սասմա հանդ ու հանդաստան։

Սասմա դար-դուրան՝ աղբյուր հաղարան,
Նման սուրացող սեգ առյուծներուն՝
Բաշերն արծաթի՝ փռած քերծերուն։

Կրթիկներ Մահեր աղբրանց ակին,
Ողջ հացը կուտեր մեկ բրդում արած,
Ու օրը բոլոր կրմնար քողցած։

Իրկուն տուն դարձին կասեր հորեղբոր.
— Էսօր էլ օրրս անցավ անորթի։
— Ինչո՞ւ, այ որդի,
Սասմա մեր հանդեր լիքն են սինձ, բանջար,
Քաղե՛, կե՛ր, ինչո՞ւ կմնաս անճար։

Կելներ Մահեր
Գուշպերու մեջ կրսողոսկեր,
Ու վայրենի մեղուներու
Խորիսխն ազնիվ կրհավաքեր.
Կուտեր Մահեր ու կուժովնար։
Կրմաղցեր քերծերն ի վեր,
Արծիվներու վեհ բներեն
Կրհավաքեր ձվերն ամեն,
Ժեռ քարերը իրար կուտար,
Բոց կրհաներ ժեռեն գնար,
Կրակ կաներ, կրխորովեր
Արծվի ձվեր,
Կուտեր Մահեր ու կուժովնար։
Կոլորտեր որսի համար
Շամբերու մեջ Անկղա գետի,
Անտառներով մութ ու մըլար,
Առանց հունի, արահետի,

Ու կրվարդեր հովերու տակ
Փապերու մէջ ու վիհերու,
Նաեւ ընկած կրքնկեւթ
Վարազներու խէնթ գիհերուն
Կեղեր Մհեր լեռներու վէհ,
Հանց սուր աշտեհ,
Կատաղ ու քէջ, ամէնաքերձ,
Որ չի հասնիր վիթն իր ուռով,
Հավիշն իր թեւով.
Ու կրձէներ խանդով իրարու,
Ամբոխի պես,
Ապառ ու վեհ։

Գոռուն-գոչունով Անառակա բաշեն
Մեկ հեղ մեկ վեմ-քար
Փլել ու կուգար
Ջոջանց ոչխարի փաթաթի վրեն։

Մհեան էր. վազեց, թիկունքը հզոր
Քարին դեմ տվավ. քարը կանգ առավ,
Ու մինչև հոգը
Կրմնա կանգուն՝ փարաշի գլխուն։

Իրկուն ուուն դարձին՝ ասավ հորեղբոր.
— Սասմա մեռ քարեր չեղքերու նման
Տրրեխներն ոտքս՝ մաշեցին, կերան։

— Կարկրտի, հաշի, ասավ նեղսրտած
Ճնճղաձորիկ։
Քրքմնջաց Մհեր ու լարեց անար
Աղեղն հոնքերու՝ հորեղբոր վրա։

— Էս դեռեն մեկ ար փորձանք պիտի գա,
Քաջ է ասդահա, վիշապ զարհուրելի
Չի չեն ասատի. ոչ էլ իրատի։
Ահը սիրտն առած
Խոսեց կնոջ հետ ճնճղաձորիկը

Ու խորհուրդ արին,
Որ մեկ պատճառով, հնար-հնճարով,
Վանեն Մհերին
Տնեն ու տեղեն
Դավով ու խաբով, մեկ անդարձ ճամփով,
Վտարեն իսպառ Սասունա հողեն։
Որ իրենց որդին՝ Փոքրիկ-Ճնճղդիկ,
Որ գիր կըսորվեր Մարութա սուրբ վանք,
Դարձնեն տեր-ժառանգ
Ազնանց աթոռքին,
Իշխան տիրական Սասմանց աշխարքին։

Ելան ճամփեցին ջոջ-Վիրգոյի հետ
Մանուկ Մհերին, պարեն-պաշարով,
Կապուտկոզի քիրդ,
Խանդութի հոր քով։

— Քո ջոջ պապ, Մհեր,—
Հորեղբայրն ասավ,—
Քո կարոտն ունի,
Գնա, մարդիկ տես, աշխարհ պտըտի,
Բան սովրի, ոլորի։

Ու եկավ Մհեր, հասավ Կապուտկոզ,
Իրեն պապի հոզ։
Յոթ տարի բոլոր մնաց պապանց տուն։
Միունդ կըխաղար քեռիներու հետ,
Կեղներ որսասար,

Ու նրանց հավասար՝
Կոիվ կըմտներ՝ հագած ճոշ-ասպար։

Եղավ որ պապը օրն հասավ, մեռավ։
Ու Թեա-Թորոս՝ անդրանիկ քեռին,
Կանչեց Մհերին, ծաղրերես ասավ.
— Տո՛, տխմար Մհեր, դու չըգիտե՞ս որ
Քո հոր բոին էր Սասունը հզոր.
Քո հայրը ուներ տըկերով ոսկի,
Հողեր ու գյուղեր, ավան ու ապատ,

Հուր-Հրեղեն ձին,
Ու Թուր-Կայծակին։
Դու հիմի անհող քաշ գար մեր դառ՝ն.
Հորեղբայրդ ուտե քո հոգդ գանձք,
Դու օտար երկիր մաշես քո ոնձք։
Վա՛յ Ջոջանց խնջառ, մուխդդ չմարի։

Մհերն էր, եկավ,
Լախտը ձեռքն առավ,
Ճամփան ուռքն առավ,
Վարգից ու հասավ Բանձրաթոռ Սասուն։
Որ եկավ Սասուն, ծուռը իշավ գետին,
Համբուրեց հողը Սասմա աշխարքին.
Ու սուրաց հանց նեռ՝ գնա Ռայուժարքերդ.
Աղնանց հնուց երդ։

Իրիկնաժամին մտավ գարբասն հոր,
Ու լցված սրտով ասավ հարգարար.—
— Ես լինե՛մ Սասմա ժառանգ ու իշխան,
Ինձ էսպես ձգես ուրիշի դռա՝ն...

Խոսքը դեռ բերնին՝ ճընճղափորիկ
Ոտ զարկեց տափին,
Գոռաց անաբիկ.
— Անիծվի էն մարդ, որ մեծ-սիրտ որքին
Թեի տակ կառնի ի վեր աշխարհին։
Լախտն առավ Մհեր, որ զարկեր նրան,
Ձեռը չգնաց հորեղբոր վրան։
Գազազեց սատանի ճընճղափորիկ,
Գոռաց անատիկ,
Ու մահակն առավ,
Սեծեց Մհերին, անեն դուրս արավ։
Ետ դառավ Մհեր, որ զարկե նրան,
Նորեն Մհերի ձեռքը չգնաց
Հորեղբոր վրան։
Ու եկավ գնաց լարով, լաց-աչքով,

Եկավ հոր ու մոր գերեզմանի քով,
Թողություն խնդրեց հորին ու մորին,
Հեռացավ Սասմա հողին ու ջրին։

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Մհեր զուրկ ու մերկ, ծարավ, անոթի
Ու վտարանդի,
Հեռուն աչքն առավ։
Ճամփան ուռքն առավ,
Գնաց ու հասավ Ճապաղջուրի դաշտ.
Որ եկավ հասավ Ճապաղջուրի դաշտ,
Տեսավ՝ ամառվա շոգին-կրակին
Նստել է ծառի քաղցրիկ շվաքին
Հարուստ մարդու մին կնոջ հետ մեկտեղ,
Կըխմե գինին, կուտե ձքվածեղ.
— Բարով քեզի, բարին քեզի,
Մհեր ասավ,
Անոթի եմ, հաց տուր ուտեմ։
Հարուստն ասավ.— Ճրտս գնա,
Խիճերն հանե, քաղհան արա,
Քրտինք թափե, հաց կուտամ՝ կե։

Եկավ Մհեր ճորտերու քով.
Տեսավ՝ ճորտեր
Եղունգներով, ատամներով
Խիճ կըհանեն արտի հողեն,
Արտ կըմաքրեն գուլձեն, կոշտեն,
Մոլախոտեն։
Ինքն էլ նման ձեռնեց գործին,
Մենակաձրիկ, ստեղծագին,
Մեջքակոտոր ու քրտնաթոր,
Գատեց, բռնավ մինչև իրիկուն։
Եղավ իրկուն,
Ճորտերու հետ դառ ու դարդած
Ետավ մեկ հյուղ՝ գիշ ու խոտիվոր.

Իրար վրա եղան ծվար։
Մեկ աստուճ հաց տրվին՝ ուտի,
Մեկ չոր խշտի՝ պառկի, քընի։

Մահը պառկեց, քուն չըտարավ.
Աչք չըփակեց ու ողջ գիշեր
Աշխարհի բան միտք կաներ միտք
Ջոջանց Մահը.

— Ոամիկ շարադատ
Ջոր կուտե,
Հարուստ պարապ-մարդ
Մեղր կուտե։

Առտուն կանուխ ճորտեր բոլոր
Ելան ոտքի,
Անխոս, անձեն կանգնան բանի։
Ու համբերեց մեկ-երկու օր,
Վրա երեքին
Խոսեց Մահը մեջ իր մտքին,
— Էս էլ կյանք չէ.
Էս շար մահ է,
Հացն ու ջուրը էս պիղծ տեղի—
Օձու լեղի...

Լախտը ձեռքն առավ,
Ճամփան ոտքն առավ,
Գընաց ու մտավ Ոստանա քաղաքը։
Ու մեկ փոնապան
Մահերին առավ իրեն ձեռքի տակ։
Մահը օր բոլոր ջուր, փայտ կըկըրեր
Ու գիշերն անքուն՝ ալուր կըմաղեր,
Խմոր կըշաղեր, խմոր կըգնդեր,
Գլուխը բարձին, աչքը շըկպած՝
Կըկանգներ ոտաց։
Իր բաժին հացը չէր քավե իրեն,
Հաց կառներ կուտեր ձեռք ընկած տեղեն։

Փոնապան տեսավ,
Բարկացավ, ասավ.
— Տո, ծակաշք, ծակփոր.
Սասունա վիշապ.
Ի՞նչ մնաց՝ ծախեմ,
Կերար ողջ-բոլոր։
Աչքերը Մահը խոտորեց վրան,
Վախեն ձեն ու ձայն կտրեց փոնապան,
Ու հացերն առավ, փակի տակ դրավ։
Մահը մեկ մատով փականք կըկոտրեր,
Հացերը կուտեր։
Փոնապան նորեն սաստեց ու ասավ։
— Մահ՛ը, դու ինչո՞ւ փականք կըկոտրես,
Հացերը կուտես։
Ուրիշի հացին իրավունք չունես,
Օրե՛նք կա, օրե՛նք,
Պատի՛ժ կա, պատի՛ժ։

Պողպատ իր ուսեր վեր քաշեց Մահը,
Ասավ զարմացած.
— Էդ պատիժ, օրենք ես չեմ հասկանա։
Բա, էս օրե՞նք է՝
Դըժվար բաները ես եմ անում,
Համով բաները դու ես ուտողը,
Թե գանձ կապողը։

Ու Ոստան քաղքեն Մահը
Սիրտը խոլոր՝ շըվեց գընաց,
Եկավ հասավ Լաթարա հող,
Մտավ մեկ գյող։

Ռեսն էր. առավ վեստ Մահերին,
Հանց որ ճորտի, հացափորի,
Ճամփեց կոռի,
Ճամփեց կոռի դաշտն ու մերին
Ու այգեստան ավատի տան։
Օրն է հասել,

Գեղջուկ, ռամիկ սրան են հնձել,
Հունձք փնջել, բերել կալսել,
Ու կալի մեջ դիպել շեղջ-շեղջ
Ցոլցլալեն ոսկի ցորենն։
Եկավ հեռվեն մեկ ծեր գուսան,
Ձեռքին քընար՝ զանգ մի հագած,
Եղջյուրներեն երեք հատ լար
Քաշած՝ ի վար։

Բարև տվավ, նստավ խուրձին,
Զարկեց դաշն պիրկ բարեբուն,
Փառքը երգեց ավուր հացին.

Փա՛ռք տվեք հացին,
Ապա աստծուն.
Հացն է աշխարքիս
Իսկն սղատության։

Ասենք բարի սրտով
Ռամկին արև շատ-
Պահող-շահողին
Աշխարհ-արարատ։

Գովքն արեք ռամկին,
Ռամկի սուրբ գործին,
Ձեր ապատության,
Ձեր արդար-հացին։

Շարան-շարան երկնուց իջան
Հավք ու թռչուն,
Ցլվլացին շուրջը կալին
Ու բաժիններն առան թռան։

Եկավ իշխան էն արտատեր,
Կիսնց տարավ ցորենի շեղջ.
Իրար հետուց եկան հասան
Թե՛ գեղապետ, թե՛ խանութպան,
Առան տարան բեռով-թեռով,

Հարկի դիմաց, վաշխ ու պարտքին
Իր աչքի լույս ցորեն-ոսկին։
Բան չըմնաց խեղճ ռամիկին—
Լոկ ծեղ ու կուտ կապատակին։

Էն որ տեսավ՝ կրակ ու բոց
Բռնկեցավ Մհերի ծոց.
Ախ կրքաշեր օր ու գիշեր
Ու կըխորհեր մոայլ Մհեր.
— Ռամիկ, մշակ,
Դուք կըլցնեք
Մառան, մարագ
Հոր ու հնձան
Թե՛ իշխանին, թե՛ մեծատան,
Որ անոթի, մերկ ի մոքին
Մնաք նորին։

Ոտը կանգնեց, ասավ.— Մհե՛ր,
Հարկ տուր հիմի,
Գլխահարկ տուր թագավորի
— Ի՞նչ հարկ, ի՞նչ կատ,
Ի՞նչ թագավոր,
Պա՞տք է տվել, կուզե հիմի,—
Ասավ խիզախ Մհերն Ազնաձոր
Ու բերդի պես կանգնավ, մնաց։

Ոտը ձգեց, ձեռին եկան
Գեղ-գեղովի, հորտ ու մշակ,
Ուսերով վար՝ փոկ ու Հոպան,
Անթիրու տակ՝ բիր ու մահակ։

— Կապե՛ք, ասավ, կապե՛ք ձեռ-ոտ,
Երկաթ զարկեք, տարեք ձորք
Մութ բռնատուն։

— Վա՛յ ձեզ, հորատեք խեղճ ու տխմար,—
Ինձ զորավիգ կանգնելու տեղ
Ոտիին դեմ ձեր հոգեստ։

Վերցրել եք զեն՝
Թափվել վրաս, հանց ձեր ահեղ
Թշնամու դեմ...
Մեկդի՛ քաշվեք, մեկդի՛ հիմի,
Ճամփա՛ տվեք, թող տեսը դա,
Թագավորի հարկը տանի...
Ասավ Մահը,
Ու անառիկ բերդի նման
Կանգնավ մնաց։
Գեղ-գեղովի ձեռք դարկեցին
Մահը բռնեն.
Մահը հոնքեր ժողվեց իրար,
Լախտը փաթաթեց,
Ծայրը լախտին դիպավ սանդին,
Աղաստանդը փրթավ տեղեն,
Թռավ գնաց՝ կրակ կտրած,
Ու կբթոնի մինչև հիմի։
Շորշոփն հզոր՝ լարած լախտին,
Շանթի նման փռեց գետին,
Փռեց գետին գեղապետին
Յոթըն օրվա մեռելի պես։

Գեղ-գեղովի էս որ տեսան,
Գումար փախան, եղան ցրիվ,
Հանց չոր խոտիվ քամու բերան,
Սերպ ու ծործոր շունչերն առան։

Նլավ Մահը սիրտը խոլոր,
Միտքը՝ մոլոր,
Ճամփա ընկավ,
Ճամփան տեսավ՝
Սարի կանանչ մարմանդներով,
Ջորի մարմանջ աղբյուրներով,
Վայրի հավքեր ուրախ-զվարթ
Կբթոնեին, ծափ կուտային,
Տաղով-խաղով, ուրախ-զվարթ։
Մահը դարձավ՝ նրանց ասավ.

— Երանի՛կ ձեզ, վայրի հավքեր,
Դուք օրհնած եք, մարդն անիծած,
Ազատ, անպարտ,
Ընկերներով ու ախպոր պես
Կապրիք անհոգ ու սեր կանեք,
Ո՛չ արտատեր կըճանչնաք,
Ո՛չ հարկ ու կոռ, ո՛չ թագավոր,
Երանի՛կ ձեզ, վայրի հավքեր...

Անձնահոգ Մահը
Ջվեց ու հասավ Պղնձե-քաղաք։
Պղնձե-քաղքի պարիսպներ ու դուռ
Պինդ-պղնձակուռ.
Կամուրջ, բուրգ ու բերդ՝
Պինդ-պղնձակերտ։
Ժուռ եկավ քաղքի գոհհ ու փողան
Հաղար մանեման.
Կանգ առավ մոլոր մեջ պրդոտային
Առջև փառանցփառ մեկ ապարանքին.
Տեսավ՝ վարպետներ բանձրիկ պատերեն
Կրկանչեն ամուր.
— Էհե՛յ, քար բերեք,
Շաղախ ու խիպար։
Բանվորներ՝ առած ուսերնին, մեջքին
Քարեր ահագին, դույլեր ահագին,
Ու սանդուխներով ոլոր-ոլորուն,
Կելնեն ու կիջնեն,
Ծնկներով՝ դեղև,
Սրտով՝ հեհեհ։
Ու տեսավ Մահը մեկ տղա բանվոր՝
Քարը շալակին բանձրաքաշ տեղեն
Վար ընկավ գետին ու եղավ ցրեխ
Գլուխն ու ըղեղ...

Էս որ տեսավ Աղնանց Մահը,
Հանց փոթորանք ծովու վրա,
Որ հաղարան վագրերու պես,

Կրմանա ու կրկորդի
Պատ ու պատնեշ,
Բորբ ու բորբոք դարձավ ասավ
Իրեն սրտին ու աշխարքին.

— Է՛յ, դուք, ժշակ, ճորտ ու բանվոր,
Կըշինեք հար դուրք ու դարբաս,
Ու ձեզ համար
Լուծ ու անուր, զնդան ամուր։
Երթամ շինեմ բերդ ու պատվար՝
Նեղ ու գժար օրվա համար.
Առնեմ իմ հոր զենքերն ու ձին,
Ու Սասմանց տան կուռ էրիճներ՝
Կռվիս համար վիգ ու սատար.
Եվեմք դուպար
Աշխարքի դեմ պրկոշ ու չար.
Ողջ ավերենք
Ու ռամկությունն բերենք աշխարհ,
Ռամկի օրենք ու իրավունք,
Որ տեր դառնա ռամիկն իրեն
Սուրբ վաստակին, արդար հացին։

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Ու կրակված թռավ Մհեր,
Եկավ, եկավ
Սիմ ու Սասուն — Սասունա սար։
Սասունա սար՝ վեստ ու վիթխար,
Հանց երկնամուխ
Ցրլի գլուխ,
Որ կրփնչի գոռ ու ահռիկ
Բուք-մրրբրիկ։
Կիրճերու մեջ Սասմա գետեր,
Հանց մերկ ու կեռ կայծակ-թրեր,
Էն ձյունափառ սեգ Սոլասար,
Որ աստղերուն է հավասար։

Կրդեղերեր Մհեր անդուլ
Անգրդ դեռն մինչ Սեղան-սար,
Մարաթուքեն՝ Ծծմակաքիթ։
Ու կրվիներեր բերդի համար
Քար ու կապան, չեռ առապար.
Անկ ու հարմար։

Օրանց մեկ օր՝ մութն ու մռայլ՝
Մեջ կապանքն, խոր ծմակին,
Մեկ վագր վիրավ ու ահագին.
Դեմ Մհերին խոպաց, վարգեց
Ու մոնչաց խոլ զարհուրելի։
Մհեր լախտը քաշեց, զարկեց,
Ձեղքեց գանգը վագրի ահռելի.
Միսը կերավ, մորթը ձգեց
Կուռ թիկունքին, գլխու վերան՝
Դիշտ ու խալամ։
Գտավ Մհեր մեկ խրոխտ չեռ
Մեջ բավիղին Մարաթուքա,
Ջիրդ բանձրիկ գահ,
Կողն ու կռնակ՝ գուղձ երկաթին,
Ուր կընայեն ամեն դիեն
Վիհեր մթին վեժ-անդունդին.
Քար ու կապան, չեռ առապար,
Բերդի համար անկ ու հարմար։

Ուզնանց Մհեր լախտն առավ ձեռ
Վազեց իշավ Տարոնա դաշտ։
Տարոնա դաշտ մեծ գետ ունի,
Խոր ու բրրոր,
Ու անունն է Արածանի.
Հարյուր քառասուն վտակ ու վետ,
Կրխառնվեն իրարու հետ
Ու կրհյուսեն Տարոնա գետ։
Տեսավ Մհեր՝ ջուրն է հորդել,
Վարար-վարար,
Ու կավերե դեղ ու հանդեր,

Արոտ ու վար
Շինականին ու ռամիկին։
Խղճաց Մհեր, մրմուռ սրտով
Վարգեց հասավ Քարքե սարին.
Մեկ ապառաժ վեմ վիթխարի
Ժեռ քարերեն Քարքե սարի
Մղեց, բերեց
Գլո՛ր-գլո՛ր,
Դղո՛ր-դղո՛ր
Բերեց ձգեց էն գետի մեջ.
Գետը բաժնեց երկու ճյուղի,
Մեկն աջ գնաց ու մեկը՝ ձախ։
Ջուրերն իջան,
Առաջվա պես արևելես
Եկան գեղերն ու հանդաստան
Շինականին ու ռամիկին։

Տարոնացիք էս որ տեսան,
Ջարմացք ահեն չուր կտրեցան.
Փախան, մտան
Արև-Առինճ մեծ շահաստան,
Վիշապաբերդ, արուրակերտ։
Արուրի դուրք քառասուն նիզով
Իրենց ետնուց սինդ դոցեցին։
Մհեր հասավ լախտը ձեռին
Ու յոթն հեղ որոտմունքով
Կոփեց բերդի դուրք արուրին,
Դոփեց գետին պողպատ ոտքով,
Ձենը ձգեց ահեղագոչ,
Տխնու վրա դողաց դողդոջ
Դուրք արուրին։

— Էյ Տարոնա իշխան-չոչեր,
Ականթոթափ
Ժողվեք բերեք, ավեք ինձի
Ձեր արծաթով, հացով-չրով,
Հարուր վարպետ, որ վեմ տաշեն,

Հարուր վարպետ, որ պատ քաշեն.
Բերեք հազար բանվոր, մշակ,
Որ քար կբրեն, երկաթ կբռեն.
Բերեք հազար բանվոր, մշակ,
Որ հող թալեն, արճիճ հալեն։
Բերեք, թե ոչ ձեր տուն ու տեղ
Ավեր կանեմ, հող ու աղուր,
Ջորտրին կուտամ՝ հողմերուն կուր։
Ու Մհերի ոտքը ելան
Աղ ու հացով, խնկիրք-լացով,
Արև-Առինճ քաղքի չոչեր՝
Վանճատապետ ու գանձաշատ.
Ականթոթափ
Բերին տվին հացն ու արծաթ,
Հարուր վարպետ, որ վեմ տաշեն,
Հարուր վարպետ, որ պատ քաշեն,
Բերին հազար բանվոր, մշակ,
Որ քար կբրտեն, երկաթ կբռեն,
Բերին հազար բանվոր, մշակ,
Որ հող թալեն, արճիճ հալեն։

Վարպետ-բանվոր Մհեր առավ,
Գումար տարավ
Բանձրիկ Սասուն, Սասմա աշխարհ,
Խոլ ու խոժոռ քիրծի վրա։
Ու շինեցին հզոր քիրծին
Բերդ ու ցատվար. զերդ կուռ ասպար,
Կայծակ քարով ու որձ-քարով,
Կամրջապատ փապ ու վիրապ։
Արճիճ լցրին կրի տեղակ
Մեջ հիմերուն,
Արճիճ լցրին իրիճի տեղակ
Մեջ օրմերուն։
Կանգնեցրին դուռ աշտարակ
Սուր սնարին՝ վիս ու անել,
Ուր լոկ արծվի թևն է դիպել։
Աղիս ու նիզով մուխ-երկաթի

Դուռ-դռանդի։
Ու շինեցին խըրոխտ բուրգեր՝
Բանձր ու բոլոր,
Պատուհաններ՝ աչքով խոլոր,
Կընայեին Համփաներուն
Ոլոր-մոլոր,
Թե՛ մոտավոր, թե՛ հեռավոր։
Ու անունը բերդի դրավ՝
«Մհերի Քեն»։
Անունը սոսկ, բերդը վրան
Մինչև էսօր սպառազեն
Դոռ պահապան։

Գնաց Մհեր՝ բարկ ու կըրակ,
Իջավ Սասմա Աթոռ-քաղաք.
Արև նոր էր աչքը բացել,
Ողջ երկինքն էր ծով-ծիրանի,
Սուխը կեչներ պալա՛ն-պալա՛ն
Ակութներեն ու երդևրեն։
Ու օրն էսօր տոն-կիրակի,
Ժամն էր կանգնած պատարագի։
Մհեր մտավ Աղյուծաբերդ,
Ջոչանց իր տուն,
Յոթը կողպեք պատուհանեն
Հանեց Դավթի զրահ ու վերտ,
Ոսկի գոտիկ՝ յոթը պատիկ,
Վահան լանջքին,
Վառ սաղավարտ դրավ գլխին,
Կապեց մեջքին
Թուր-Հավլունին, Թուր-Կայծակին։
Ելավ ոտքով զարկեց գոմի
Տասը նիգով ազխուկ դռան,
Ընկավ չախչախ ու ծխնեհան
Դուռն երկաթի.
Հանեց Դավթի
Ձին հրեղեն՝ բռնած բաշին։
Ձեռքը նյուսին դրավ՝ հեծնի,
Ճնճղաթռիչ հասավ ժամեն,

Եկավ մթնած՝ վրան թեղաց,
Ու արմունկեն բաշեց կառղած.
— Ջքվի՛ս, Մհեր,
Ջար, անառակ,
Նաշքդ տեսնեմ,
Գետինն անցնես։
Հանց արմունկով հըրեց Մհեր
Հեստ հորեղբոր,
Արմունկն առավ ակռաներուն
Ու ակռաներն եղան փշուր
Հեստ հորեղբոր։
Հեծավ Մհերն արեազուն,
Հեծավ խթեց հրեղեն ձին։
Թռավ կանգնեց քաղաքամեջ,
Աչու ձեռքին
Հազարաշող Թուր-Կայծակին։
Հանց գոռ-ամպրոպ Անգոկ լեռան
Կըկայծկլտե, կըսրռտա,
Գոռաց Մհեր Սասնու վրան.
— Է՛յ դուք, Սասմա ծռեր ու ճեռ,
Է՛յ դուք, գեղջուկ, մշակ ու ճորա,
Ձեռնել գիտցող նիզակ ու նետ,
Ձեռնել գիտցող գուրզ ու գեղարդ
Թող ամենքը ասպագինվին,
Դան ինձի հետ—
Քանդենք հիմեն աշխարհը չար
Ու ռամկությունն բերենք աշխարհ։
Ռամկի օրենք ու իրավունք,
Որ տեր դառնա ռամիկն իրեն
Արդար հաշին, սուրբ վաստակին։

Ու ետ եկավ Մհերի ձեն
Սալոր ձորեն, Տովմաց Դուռեն,
Ճապաղ-Ջուրեն, Մշու Դուռեն,
Խութա Քարեն, Գրգուռ սարեն,
Փռվեց նորեն
Գոռգոռալեն, հազարաձեն,
Սասնո վրբեն։

Ջոջ տան պետեր, խոլ հսկաներ—
Ջենով Օհան ու Խոր Գուսան,
Թառ-Ճնճղուկ ու Խոր-Մանուկ,
Վժիկ-Մխո, Բանած-Կուռիկ,
Ջոջ-Վիրապ ու Ճոզ-Վիրապ,
Ոստանիկներ ու Սենուհներ,
Ու Ազատներ ու Ավատներ,
Հագած-կապած վերտ ու վահան,
Սուր ու աշտե, տեգ ու նիզակ,
Իրենց առջև առած-բերած
Հոծ ժողովուրդ — գեղ ու քաղաք,
Գեղջուկ, մշակ, ճորտ ու ռամիկ,
Հագած-կապած դրահ-շապիկ,
Գունդ ու մկունդ, պարս ու աղեղ,
Գրոհ տվին, եկան մեկտեղ
Դեմ Մհերին ու ձենեցին.—
— Է՛յ դն Մհեր,
Վար էջ ձիեն, ժամտուն գընա,
Լա՛ց, որոտա ու դարձ արա
Խորհուրդներեն չար սատանին։
Կռի՞վ կուզես.... Մեզրը վրրեդ,
Էսօր ենթ
Քեզ կբխառնենք հաղար տարվա
Մեռելոց հետ...

Մհեր կեցավ անպատասխան,
Անպատասխան լեռ անասան։
Բոլոր մեկտեղ դառան ետ-ետ.
Բոլոր մեկտեղ կանգնան մեկեն,
Բոլոր մեկտեղ սալ ու գետին
Ոտներով պիրկ՝ պինդ դոփեցին,
Տեգերով կուռ հանց կռվի կանչ
Վահանները պինդ կոփեցին,
Թինդ ու թափով թռան առաջ,
Շկահելով, գոռգոռալով,
Հողմի նման խիստ խոյացան,

Եկան վեռ-վեռ ու իրենց հետ
Ամպ ու փոշի, մուղտ ու մղեղ,
Գռութ տվին,
Գռութ տվին,
Կուռ կռուփներ ցցած ահեղ,
Թռան, եկան, եկան հասան՝
Մհեր գլեն,
Մհեր ճմլեն.—
Մհեր խրեց Ձին հրելեն
Ու մխրճվեց մեջ ամբոխին.
Ձեղքեց ամբոխն երկու մասի,
Մեկն աջ թալեց ու մեկը ձախ.
Կեսն՝ արևցաթ, կեսն՝ արևպատ,
Մղեց, եկավ, կանգնավ խիզախ,
Դեմ-հանդիման, ճակատ-ճակատ,
Իշխաններուն, Սենուհներուն,
Ավատներուն, Ազատներուն,
Քաշեց զարկեց Թուր-Հավլունին,
Թուր-Հավլունին, հանց հուր-կայծակ՝
Մեջ մթագին ամպ ու զամպին,
Կտրեց, թափեց,
Այրեց, լափեց
Ով որ ընկավ Քրի վրան,
Ինչ որ ընկավ հրի բերան։
Արյունն ելավ գալ-գալ գմաց...
Մնացածներ դումար փախան,
Եղան ցրիվ, հանց չոր խոիվ...

Սև ագռավի մռայլ կառանչ՝
Սև լուրն հասավ Սասնա ականջ։
Իշխան, ջոջեր, ժամերեցներ
Ելան ժամի կոչնակ տվին.
Ու չորս դիեն ծեր-հալեոր,
Մեր ու մանուկ, աղքատ, հարուստ
Ժամ ժողվեցան, նորեն եկան,
Ալիք-ալիք ծովու նման,
Ծով կապեցին ժամի բոլոր։
Իշխան, ջոջեր, ժամերեցներ

Ու իրենց հետ երդումարդով
Սասուն լման
Նզովք արին գոռ Մհերին.
— Անիծվես դո՛ւ,
Ջարդ՛ դ Մհեր,
Դո՛ւ, ներհակ Նեռ,
Դո՛ւ, Դև ցասման,
Դո՛ւ, որ կուգես՝ աշխարհ քանդես,
Սարավ մընաս ու անոթի,
Անճետ մընաս ու անարգի,
Մահ ուզենաս, չդանես մահ,
Մինչ Քրիստոս գատաստան գա՝
Քո դատ կքարե։

Ու անեծքը հասավ բռնեց
Մհերին.
Գետինն էլ չէր կարող տանի
Մհերին։
Ձիու ոտքը ծունկերն ի վեր
Հողերու մեջ կըմխրճվեր։
Մհեր ուժով, ուժով-զորով
Հասավ հոր-մոր գերեզմանին,
Գրկեց հողվարքն, ասավ լալով.
— Վե՛ր ել, հերիկ,
Վե՛ր ել, մերիկ,
Մեկ ճա՛ր արեք
Ձեր Մհերին։
Ու հերն ու մեր գերեզմանեն
Լացին, ասին.
— Գնա՛, որդի, Տոսպան բլուր,
Ադաֆու այր,
Ու քար բաղե, ավազ մաղե,
Լա՛ց ու զղջա,
Որ Քրիստոս քեզի խղճա,
Թողություն տա։

Երկիրն էլ չէր ուզի տանի
Մհերին,

Արեգակն էլ՝ աչքի նման
Մեռելին
Պաղ կընայեր ու լույս չէր տա
Մհերին։
Ձիու ոտքը ծունկերն ի վեր
Հողերու մեջ կըմխրճվեր.
Ուժով-զորով դնաց Մհեր,
Եկավ, հասավ Վանա ծովուն։
Ադաֆու Քար բացվեց մեկեն,
Առավ-կալավ մեջ իր ծոցին
Մհերն ու Ձին։
Ադաֆու Քար գոցվեց նորեն
Նըրա վրեն։

Մեջ անձավին անմահ, անմեռ,
Կա ու կապրի Ցասման Մհեր.
Գլխու վերն — նրսեմ ճրագ՝
Գիշեր-ցերեկ հավիտյան վառ.
Խմած ջուրը՝ մեկ ըսկահակ.
Հացը օրեն՝ երեք նշխար։
Մեկ խուրձ առույտ Ձիու առաջ
Ամառ-ձմեռ պալար-կանաչ։
Ու կըմաքի անմահ Մհեր
Աշխարքի բան.
Աշխարքի բան, հանց որ իժ-օձ,
Կըխեթըթեն սիրան ու հոգին։
Ու ո՛չ կուլա, ո՛չ կըզղջա,
Որ Քրիստոս խղճա-գթա,
Վեռ արարքին թողություն տա։

Ու թիռ կուգան
Բարդ-բարդ ամպեր՝ հրով-ջրով
Լույս Մասիսի վեհ գագաթեն,
Սիփան Սարեն, Ծիպան ծովեն,
Կայծակ կուտան
Ադաֆու լերկ Քարի վրեն
Ու Մհերի գոց Դուռն ի վեր
Կըգոռգոռան, կըորոտան,
Փըխրին, կերթան։

Մահեր այրեն, Քարի խորեն
Խոլ կըթնդա, ղղորդ կուտա
Բարկութենեն։
Կըվրընչա ու կըգոչեն
Զին սանձակոծ, կրակ ու բոց,
Ու կըժաժեն Մահերն ու Զին
Աշխարհն հիմեն։

Ամեն տարի օրն Համբարձման,
Երբ իրարու համբույր կուտան
Երկինք-երկիր, թե հուր ու ջուր,
Ամեն տարի օրն Համբարձման,
Երբ կըբացվի ամեն վակ դուռ,
Կըվախենան գեղ ու քաղաք,
Թե կըբացվի Ագռավու Քար,
Կելնի Մահեր արև-աշխարհ։
Դեղ-դեղոցի, քաղաք-քաղրով,
Արտասուքով
Կըպաղատեն Քրիստոսին՝
Զար Մահերին կապի-բանդի,
Որ դուրս չըգա՝ աշխարհ քանդի։

Մեկ Համբարձման օր, երբ Մահերի Դուռ
Նորեն բաց եղավ, Ագռավու անձավ
Մեկ ծերոն հովիվ ներս մտավ, տեսավ՝
Մեկ պարթև վեմ-մարդ՝
Գլխին սաղավարտ,
Հեծած կրակ Զին,
Կայծակը ձեռին,
Մթան մեջ կանգուն։

Հարցուց.— Ո՞վ ես դուն։
— Մահերն եմ ես, Դավթի տշան,
Դու, հալեռը, ո՞ւստի կուգաս։

— Լույս աշխարքեն, հովիվն ասավ։

— Աշխարքն է՞ն է, ինչպես որ էր,
Հարցուց Մահեր։

— Հա, էնպես է, ինչպես որ էր,
Համբավ տվավ հովիվը ծեր։

— Նորեն ռամիկ գառ կըդառի,
Աշխարհ կուտե,
Ու կըմնա ինքն անոթի՞,
Հարցուց Մահեր։

— Հա՛, էդպես է, Ազնանց Մահեր։

— Դե, դարձ, գնա քո չար աշխարհ,
Խոր զայրույթով ասավ Մահեր։

— Դու ի՞նչ պիտի դուրս գաս աշխարհ,
Հարցում արավ հովիվը ծեր։

— Երբ շեղբն հասնի
Ոսկորին,
Ռամիկ կանչե
Մահերին,
Պատգամ տվավ Ցասման Մահեր։

Ու դուրս ելավ հովիվն այրեն,
Ագռավու Քար գոցվեց նորեն։

Մինչև էսօր դեռ
Էնտեղ է Մահեր.
Հուրնի Զին հեծած,
Սաղավարտ կապած,
Կայծակն աջ ձեռին,
Վահան՝ ձախ ձեռին,
Հագած կուռ ասպար.
Միշտ ու միալար
Կըսպասե անհինջ՝
Հոգին ականջին
Ու ականջը՝
Ռամկի կանչին։

Էն օրն վեր անցան դարեր,
Երբ ռամկասեր Մհերը վեհ՝
Անձավի մեջ բանդվեց անել.
Անցան հազար տարիներ չար,
Նորեն հազար չար տարիներ,
Դառն ու դաժան, մութն ու մլար։
Ռամիկը, հանց ճորտ ու ստրուկ,
Բանվոր, մշակ, գերի-գլուխ,
Կուռապեր ու կաշխատեր,
Կուռապեր ու կրտքներ
Աբքաներու, իշխաններու,
Սեպուհներու, հարուստներու
Շահի համար անհագ, անկուշտ։
Ամենուրեք ու ամեն տեղ
Կշարշարվեր անդուլ, անխոնջ.
Ծովերու մեջ ու բովերուս,
Բարկ ու կրակ արևի տակ,
Սառնամանի հողմերու տակ,
Խեղճ, անոթի, մերկ ի մորեն.
Ու կրմնար նորեն-նորեն
Անիրավունք ու անբաժին։
Տարվե տարի ու օրն օր
Լուծը դաժան չար բռնության
Կրծանրանար ռամկի վրան։
Ու մինչև որ շեղբը հասավ,
Հասավ ռամկի չոր ոսկորին։

Երբ շեղբն հասավ չոր ոսկորին,
Ահեղ ցավեն ճրչաց ռամիկ։
Քաղաքներեն ու գյուղերեն,
Ու ծովերեն ու բովերեն,
Դարբնոցներու հրեն-բոցեն
Ճորտ ու ըստրուկ, բանվոր, մշակ,
Աղքատ ու զուրկ ձեն տվեցին
Մահի պատրաստ, ռազմահրավեր,
Ձեն տվեցին ու կանչեցին
Վեհ Մհերին։

Ամեն դիեն կանչերը հուր՝
Հազար, հազար, հազար ու բյուր,
Հանց ծովերու փոթորիկներ,
Հանց ծովերու զոռ ալիքներ,
Եկան, եկան ու կոփեցին
Մհերի Դուռ, Ագռավու Քար։

Լսեց Մհեր մեջ անձավին
Կանչերը հուր, հազար ու բյուր՝
Մահի պատրաստ, ռազմահրավեր.
Բաղուկն երկաթ պրկեց Մհեր,
Խալ մրրկվեց սիրան ու հոգին,
Խալ վրընջաց Ձին հրեղեն
Ու ժաժեցին աշխարհն հիմեն
Ու ճեղքեցին քար-ապառաժ։
Թուր-Հավլունին կայծակ տվավ՝
Դուռ կայծակներ ահեղաթափ,
Խորտակեցին կապանք ու դուռ,
Ելավ Մհեր արև-աշխարհ։
Ու վարգեցին, թռան, եկան
Հազար, հազար, հազար ու բյուր
Ճորտ ու ըստրուկ, բանվոր, մշակ,
Ամեն դիեն թռան, եկան
Նորեն հազար, հազար ու բյուր
Ճորտ ու ըստրուկ, բանվոր մշակ,
Ծով կապեցին Մհերի շուրջ,
Ծով կապեցին փոթորկաշունչ.
Գրոհ տվին բոլոր մեկտեղ՝
Աբքաներու, իշխաններու,
Սեպուհներու, ավատներու,
Հարուստներու վրա մեկտեղ.
Ավերեցին աշխարհը չար,
Ու ռամկությունն բերին աշխարհ,
Ռամկի օրենք ու իրավունք,
Որ տեր դառնա ռամիկն իրեն
Սուրբ վաստակին, արդար հացին։

1919—1937,
Ժեն — Երևան

ԼԵԳԵՆԴՆԵՐ ԵՎ ԲԱԼԼԱԴՆԵՐ

«ԻՐԻՑԿՆԿԱ ԱՂԲՅՈՒՐԸ»

(Ներակի ավանդավեպ)

— «Դի՛ն-տո՛, դա՛ն-տո՛», առավոտու զանգը հնչեց մեղմաձայն,
Տերտերն ելավ, փիլոնն առավ, աղոթելով գնաց ժամ.
Իրիցկինն էլ դուռը բացեց, կով, հավ ու ճիվ դուրս արավ,
Հարևանին, հանդևորին բարև տվավ ու առավ։
Հացի խմորը հասել էր. արագ հագավ մխնոցը,
Կրակ տվավ թոնրի շենքին, բոցը ելավ, վառ բոցը։
Լույս-խմորից գնդեր շինեց, գնդեր շինեց, գրտնկեց,
Բաթաթն առավ, թոնրի շուրթին աղոթեց ու ծունկ գարկեց։
Բաթաթն առավ, բացը կպցուց, խփեց թոնրի բարկ պատին,
Վարդի գույնը թշերն օծեց, քրտինքն իջավ ճակատին։
Տա՛ք-տա՛ք լավաշ, ծաղիկ-լավաշ հանեց թոնրից ու փռեց,
Նորահացի անուշ հոտը դուռ ու երդիքը բռնեց։

Մեկ էլ, կամա՛ց դուռը ճրռռա՛ց, աղքատ մի մարդ կուղեկուզ,
Ցուպը՝ ձեռին, պարկը՝ ուսին, տունը մտավ սուսուփուս։
— «Բարաչողում, իրիցկին ջան, աղոթքանի լույս դառնաս,
Ճամփորդ մարդ եմ, աղքատ մարդ եմ, օրհնած հացեդ ինձ մաս տաս»։
— «Գալը բարին,— պատասխանեց իրիցկինը հոգատար,
Նստի՛ր ու կեր, ճամփուդ համար քանի մ'հատ էլ պաշար տար»։
Մի սյունի տակ աղքատ մարդը բեռը դրավ ու նստավ,
Իրիցկինն էլ քաղցր ձեռքով սալան առաջը դրավ.
Սալան լեցուն շարմաղ լավաշ, անքաշ պանիր ու կանաչ,
Աջ կողքին էլ անուշ ջրով, սառը ջրով լիքը փարչ։
— «Աստված տունդ միշտ շեն պահե, գլխավորդդ ողջ լինի,

Ցորն որդով սեղան նստիս, կարոտ մնաս թաց աչքի»։
Կերավ, խմեց անցորդ մարդը, օրհնեց հազար օրհնանքով,
Իրիցկինն էլ առատ-առատ պարկը լցրեց պարենով։
Իրիցկինը շա՜տ սիրուն էր, թուխ մազերը՝ ծամավոր,
Վառ աչքերը՝ աստղոտ դիշեր, թշիկները՝ հուր խնձոր։
Եղջ աղքատի սիրտը լցվեց անուշ մեղքով, ու ասաց.
— «Իրիցկին ջան, աստծու սիրուն, ալ-թշերեդ պա՛գ մի տան...»։
Իրիցկինը շատ բարկացավ, ապա խղճաց իր մտքում.
— «Աղքատ ախպեր, որ դու էգպես աստծու անուն ես ձգում,
Ես ի՞նչ ասեմ, աստծու սիրուն, մի պագիկ ա՛ռ ու գնա,
Մեղքը վիզդ, դու քո խիղճդ, դուռ ու դրկից չիմանա։
— «Մեղքը վիզս, իրիցկին ջան»,— ասաց աղքատն ու թռավ,
Գրկեց ամուր, պապակ սրտով կսկուծ-կսկուծ պագ արավ։

Ծխնու վրա դուռը դարձավ, վա՜յ, տերտերը ներս մտավ,
Իրիցկնկա գույնը թռավ, սիրտը վախից թն առավ։
— «Վա՜յ ինձ, աստված, մեղքս շատ է, ես խաբեցի տերտերին,
Գետին, պատռի՛ր, ինձի կո՛ւլ տուր, էլ չտեսնեմ տերտերին»։
Եղջ տերուհու հույսը մարեց, շարը նստավ սրտի մեջ,
Եվ հույսը՝ մար, սիրտը՝ խավար, վառ թոնրի մեջ գլորվեց։
Մեկ էլ հանկարծ, վառ թոնիրը աստվածային հրաշքով
Աղբյուր դառավ, ղով ու վճիտ, պայծառ շողքով ու երգով։
Ու սարսափած, ապուշ կտրած՝ դողաց ձայնը տերտերի.
— «Մեղա՜ աստծու, ա՛յ տիրուհի, էդ ո՞րտեղ ես, դուրս արի»։

Եվ հատակից զով աղբյուրի, ջինջ աղբյուրի, մեղմորեն,
Երևան ելավ իրիցկինը՝ դառած մի ձուկ ոսկեղեն։
Եվ ոսկեղեն ձուկը նայեց՝ դարձ ու զզջում աչքերում,
Նայեց սիրով հեգ տերտերին, որ աղոթք էր մրմնջում։
Հանկարծ, թրը՛ռ, պոչը շարժեց, սուզվեց ձուկը ջրի տակ,
Փրփուր հանեց, տիղմը ելավ, սևցավ աղբյուրն անապակ։

Այն օրվանից իրիցկինը անմեռ, անմահ ձուկ դառավ,
Եվ թոնիրն էլ «Իրիցկնկա աղբյուր» անունը առավ։

1891,
Ղազարապատ

ԻԳԻՏ ՍԱՐԴԱՐ

(Հրայր Գալոց օրերից)

Ա

Աշբղ.— — Մշուշի պես մեր թշնամին
Սով ու ցամաք պատել է,
Սարդա՛ր, վե՛ր կել, քու սուր թրին
Ժանգ ու փոշին պատել է։
Մեր վաթանը ոգի մնչ է,
Ջարն է կապել մեր աստղին,
Մեր ու մանուկ բանտի մնչ են,
Լուծ է դրած մեր վզին։
Մշուշի պես մեր թշնամին
Շեն ու շեմքին հասել է,
Շուտ վե՛ր կեցիք, դուռ ու դրկից,
Կռվի օրը հասել է։
Հազար ամոթ՝ ով ձին գոմում,
Թուրը պատին մնում է,
Ով գովերում, յարի գրկում
Վարդ ու գինով քնում է։

Բ

Սարի ուսից լույսը շողաց,
Ձրև դիպավ կա՛ս-կարմիր,
Սարդարն ելավ ասպատ ժոռած,
Ձեռքին բայրաղ խա՛ս կարմիր։

Աշբղ.— — Մշուշի պես մեր թշնամին
Դուռ ու երդիկն հասել է,
Տղա՛, վե՛ր կել, աղջի՛, վե՛ր կել,
Փառքի օրը հասել է։
Էս ի՞նչ օր է, տարի ու դար,
Որ փախնում եք կռվելուց,
Մեր վաթանի սիրու համար
Վախենում եք մեռնելուց...

Սարդար.— — Մնա՛ք բարով, հերի՛կ, մերի՛կ,
Տուն ու օջախ պապերի,
Մնա՛ք բարով, քուրի՛կ, յարի՛կ,
Ալ վա՛րդ, ալ թո՛ւշ, ալ գինի՛.
Արունս աչքիս կռիվ կերթամ
Դեմ ու դիմաց թշնամուն,
Թիկունք տվեք՝ կուրծքս թոշ տամ,
Ջարբեմ, փշրեմ թշնամուն։

Սանամ.— Երթա՛ս բարով, ապի՛ղ յար ջան,
Անճարին չարա էղնիս.
Սուրբ յոթնանուն քեզ թուր ու թև,
Եռ դառնաս, մուրազդ առնիս։

Խալխը.— Երթա՛ս բարով, իգի՛թ Սարդար,
Մեր դարդին դարման անես,
Սուրբ յոթըվերք վերքիդ մահլամ,
Բարո՛վ դաս, կոսպանդ կապես...

Սարդարն եռաց, Սարդարն թնդաց,
Ալ ձին հնծավ, չափ տվավ,
Երկինք հանեց թոզ ու դուման,
Ղոշունի գլուխն անցավ։

Գ

Խորունկ ձորը, կռվի ձորը,
Ագռա՛վ, ի՞նչ ես վոռգում,
Ա՛խ, Սարդարի լուռ դիակը,
Ագռա՛վ, ի՞նչ ես քրքրում։
Գարդլու յարին խաբար տարեք,
Մե-ոռ ամսեր ու թոշնակ,
Որ Սարդարը զարկեց-զարկվավ,
Երկինք թռավ, աստղ դարձավ։

Դ

Ամպերն եկան, սև-սև դիզվան,
Թոշնակն էլ տխուր երգեց,
Վա՛յ քեզ, Սանա՛մ, նստել կուլաս,
Յարաբ սիրտդ վկայե՞ց...

Սանամ.— — Իմ Սարդարից խաբար չկա,
Զարքաշ տարիս բոլորեց,
Սգվոր եմ ես, սև շոր հագիս,
Սիրտս կուտե ցավ ու ցեց։
Տեղ չեմ մտնում, դադար չունիմ,
Աչքս ճամփին՝ ծով կտրավ,
Գարունն անցավ, վարդը դարձավ...
Ա՜խ, յարս էլի չդարձավ...

1894,
Լայպցիգ

ՊԱՆԴՈՒԽՏ ՈՐԴԻՆ

Գարդը՝ սրտիս, աղքատ ու խեղճ, ցուպը ձեռիս, դլխակոր,
Շա՜տ տարիներ պանդուխտ եղած՝ նորեն դարձա հայրենիք.
Կյանքի բեռով մեջքս ծռած, միտքս շվար ու մոլո՛ր,
Յոթը սարեն, յոթը ծովեն դարձա նորեն հայրենիք։

Իմ հայրենի գեղի հանդում տեսա մանկութ ընկերիս.—
Ա՜խ, ընկեր իմ, կարոտ սրտով նրա առաջ վազեցի,
Ասի.— Բարո՛վ, անդին ընկե՛ր, չե՞ս ճանաչում դուն ինձի։
— Ախբր ես շա՜տ փոխվեր էի... չըճանաչեց նա ինձի։

Ցուպը ձեռիս գեղը մտա, անցա յարիս տան ճամփով.
Տեսա յարըս վարդը ձեռին՝ մենակ կանգնած դռան մոտ
Ասի.— Քուրի՛կ, ադիզ տեսքիդ արժանացա ես բարով...
Նա էլ ինձի չըճանաչեց...— աղքատ էի ու փոշոտ...

Դարդը սրտիս հասա մեր տուն, տեսա ծերուկ, խեղճ մորըս.
Ասի.— Նանի՛, ճամփորդ մարդ եմ, գիշերս ինձ հյուր կընդունե՞ս։
Ա՜խ, մերի՛կ ջան... վգովս ընկավ, սրբտին գըրկեց ու լացեց,—
Ա՜խ, բալա՛ ջան, դարիբ բալա՛, էդ դո՞ւն ես...։

1902,
Շուշի

ԱՐԱՔՍԻ ԾՆՈՒՆԴԸ

(Աշուղ Պչոսլիի վրայցը։
Հատված «Ցնսաս Կարոս»-ից)

Խորունկ են հայոց ձորերը անտակ,
Սարերը բարձրը, բարձրաշեն գմբեթ.—
Այդ սար ու ձորում հնուց ժամանակ
Մի հայ մայր կապրեր իրեն որդու հետ։

Ինչպես կըհնչե ծաղկունանց միջով
Սարի հովն անո՛ւշ,—
Այդպես մեղրաձայն՝
Հոտն առաջ ծգած, սրինգ փչելով
Իրկուն տուն կուգար մի՛ամոր տղան։

Եվ նրանց դրկից կապրեր մի ալջիկ՝
Ոսկի մազերով սարերի եղնիկ.
Ու նրանց սերը գարնան պես ծաղկած՝
Վառ-վառման ծաղիկ։

Այս փուչ աշխարհում ի՞նչ կա փոփոխուն,
Քան բախտը մարդու,
Ի՞նչ կա ամպի պես անհիմն ու փխրուն,
Քան բախտը մարդու։

Որտեղի՞ց որ էր, մեր աշխարհ մտան
Հայի թշնամիք — մարդակերպ գազան,
Եկան քանդեցին մեր տունն ու այգին,
Մահ, ավեր բերին մեր շեն աշխարհքին։

Եվ մի օր եկավ մի վայրի հորդա,
Ու այդ հորդայի գլուխ-բռնապետ
Տեսավ նաղելի սիրուն աղջկան,
Խլեց մոր գրկեն ու տարավ իր հետ։

Այս տխուր անցքը երբ լսեց տղան՝
Ոչխարը թողեց գայլերի բերան՝
Գնաց խլելու թշնամու ձեռքեն
Սարերի եղնիկ, անբախտ աղջկան։

Տեսավ, ո՞չ տեսնեա.
Սարի կողերին վրանների ծով,
Ու նրանց մեջտեղ մի կապտիր վրան,
Եվ բռնապետի գրկում աղջկան՝
Մաղը կըպոկեր լացով ու կոծով։

Ու վրա պրծավ հուսահատ ողան,
Գաշույնը խրեց սիրտը գազանի,—
Այն բռնավորի խողամնեին եկան,
Փերթեցին մեկտեղ ողին, աղջկան։

Ապա թշնամին լեշն իրենց մեջին
Հետևին առած՝
Կատղած, փրփրած՝
Ավեր, ավերով ասաց գնացին...

Մայրը սպասեց միհատիկ որդուն,
Ու օրեր անցան, որդին չեկավ տուն.
Լալով, ողբալով ընկավ սար ու քար,
Որդուն կըփնտրեր, որ, ավա՜ղ, չըկար։

Եվ մի առավոտ գտավ իր որդուն,
Նազիկ հարսի հետ՝ մեկ-մեկու գրկին.
Սուրբ նշխարները համբուրեց լացով,
Ու նրանց գրկած ավանդեց հողին։

Աղջար արյունը չի կորչի իզուր.—
Ասում՝ հրաշքով՝ մոր, հայրի, ողի
Արյան-արցունքին հազար ակն-աղբյուր
Բխեցին նման լուսնի ասողի։

Եվ գետին թափված պուտերն արցունի
Անուշ հատերով ծաղիկներ դառան.
Անուշ հատերով հաղարան գույնի,
Աղբերաց-աղբյուն, շուշան անթառամ։

Աղբյուրներն ալմաստ ու անապական՝
Բլրակի ձայնով օրոր ասացին,
Ծաղիկներն անբիծ ու անմահական
Ծածկեցին անգարդ քուն մոսածներին։

Այն սև օրվանեն բյուրակն են կոչվել
Գմբեթ սարերը բյուր-աղբյուրներով.
Այն սև օրվանեն սարերն են զարդվել
Զոհված արյունի վառ ծաղիկներով։

Ու այդ ակները հայոց սարերեն
Իջել են, կուգան ու կիջնեն էլի՝
Հյուսվելով իրար՝ մեկտեղ դառել են
Մեր Մայր-Արաքսը՝ հազար սիրելի։

1904 փետրվար — մարտ.
Նոր Նախիջևան

ՄԱՅՐԸ

(Շիրակի ավանդավեպ)

Անտառներում՝ աշնան թափուր,
Երբ թաց խավարն է իջնում,
Երբ դաշտերում մեկ ու տխուր,
Ցուրտ քամին է շառաչում,—
Ամեն անգամ քզգում եմ նոր
Զրույցն այս խեղճ պառավ մոր։
Եվ խորհում եմ՝ թե արդյոք ո՞ւր,
Մեզնից մոտիկ կամ հեռուն,
Ո՛ր անտերուն խեղճին հիմա
Չարի ձեռքն է հարվածում...

Չգիտեմ՝ ե՛րբ, և ո՞ր շենում
Իրեն որդու, հարսի քով
Մի խեղճ պառավ մայր էր կենում,
Մանրը ականջ, կույր աչքով։
Ոտ ու ձեռից ընկած, անճար,
Հաց չտային, չէր ուզում.
Եվ օրն ամբողջ նրանց համար
Աղոթքներ էր մրմնջում։

— Ցֆ — ասում էր հարսն ամեն օր,
Միորդ բեռ է իմ վզրա.

Բանքս թողած՝ օրը բոլոր
Փեշն եմ բռնել հս նըրա։
Աչքը՝ անկուշտ, ինչքան որ տամ,
Միշտ անեծքը բերանին,
Նստել է մեր շնչի վրան,
Տար, կորցրու՝ ապառազիմ...

— Ա՛յ կին, ի՞նչ չար բան կըխոսաս,
Մարդ էլ ծնող մորն էսպես...
Կբարկանա աստված վրաս,
Մեղա՜ աստծու, մեղա՜ քեզ։

Բայց ամեն օր հարսն անողորմ
Ամուսնու սիրտն էր կրծում,
Եվ խստաբար պահանջում էր
Իր չար կամքին գոհացում։
Ու մի օր էլ ճըչաց, լացեց,
Պոկեց մազերը գլխից,
Վրա պրծավ, դուրը բացեց,
Թե մորըդ տար իմ տնից.
Թե ոչ՝ հիմի դուրս կթռնի
Ու կըձենե աշխարհում,
Թե մարդն իրեն օր չի տալի,
Թե ուրիշին է սիրում։

Թշվառ մարդ էր. ճարը կտրած,
Վերցրրեց մորը պառավ,
Անգութ հարսի աչքի առաջ
Պարկը դրեց, ուսն առավ։
Գլուխը կոր՝ ճամփա ընկավ,
Միտքը՝ մռայլ ու խոլոր,
Սև ամպերից գիշերն իջավ,
Ճամփան՝ մթին ու մոլոր։

Ուշ գիշերին հասավ անտառ,
Խոր ծմակում, ծառի տակ,
Պարկը ձրգեց — մորը անճար
Ցրդեց անտեր ու մենակ։

Աշնան քամին էր հեծկլտում,
Գայլն էր տալիս կոլանչին.
Ոտքը փոխեց, որ դառնար տուն,
Մոր ձայնն հասավ ականջին.—
— Երթաս բարով, աստված քեզ հետ,
Ոտքդ քարի թող չըգա.
Տըղա՛ս, վերցրու պարկը քեզ հետ,
Պարկը տանը պետք կըգա։

1907,
Ալեքսանդրապոլ

ՍԻՐՈ ՎԵՊԸ

Կանաչ ծառի տակ
Նստել էր մենակ
Մի խեղճ կույր գուսան, և կրծքի վ. ան
Սեղմել էր մի սապ, որ ուներ միայն
Մի դողդոջուն լար։
Կանաչ գաշտն ի վար
Հոսում էր երգով
Զմրուխտի նման մի կանաչ վտակ,
Եվ երգում էր նա անուշ կայլակով
Ամպերի մասին՝ հակինթ ու սուտակ,
Որ ծվարում են լեռան գագաթին,
Ուրկից ցատկեց նա անդունդը մթին...
Գուսանը մեղմիկ
Ջարկում էր լարին,
Լարը քնքշիկ
Պատմում էր լրին
Մի վեպ սիրային...
— Հին ժամանակում, ոսկի դղյակում
Ապրում է չքնաղ մի աղջիկ,
Այնպե՜ս գեղեցիկ, այնպե՜ս գեղեցիկ,
Ինչպես կարապը՝ թևերն արծաթյա
Լճակի փիրուզ ջրերի վրա...

Հեռու մի երկրից
Եկել է ահա՛
Մի սիրուն տղա,
Գինով այդ սերից
Ծունկի է իջել չքնաղ աղջկա
Պատուհանի տակ, սեր է աղերսում.
«Զքնա՛ղ, քո սիրուն
Կորել, անցել եմ աշխարհն-աշխարհ,
Թողել եմ հայր, մայր միայն քեզ համար։
Վառ երազիս մեջ պատկերդ տեսա,
Եվ երազելով քո դուրը հասա»։
Սակայն աղջիկը չի լսում նրան,
Եվ միտն է բերում՝ ինչպես մի անգամ
Շքեղ, աննման եկավ մի ասպետ
Եվ անցավ, գնաց ու չնայեց ետ։
Լքել է կույսը դղյակը ոսկի,
Առել է ձեռը մի ցուպ երկաթի,
Ընկել է թափառ
Աշխարհն-աշխարհ
Սիրած ասպետին գտնելու համար,
Որ գնաց, գնաց... առանց վերադարձ։
Իսկ հեռու երկրից եկած պատանին
Իր սերն է հայտնում նրան վերստին.—
«Հոգիս քաղվում է քեզ համար, ի՛մ սեր,
Կրկանգնեմ այստեղ դարեր ու դարեր,
Եվ մահը միայն կարող է բռնի
Բաժնել ինձ քեզնից...»։
Աղջիկը սակայն
Չի լսում նրան...
Անհայտ մի երկրում, տարիներ հետո
Գտավ նա հետքը սիրած ասպետի,
Բայց, ա՜խ, ասպետը գնացել է հեռու
Իր սիրո հետքից կամ իր երազին,
Նա կըտիրանա, կամ էլ չի դառնա,
Էլ ետ չի դառնա...
Եվ հետևում են օրերը իրար,
Եվ խեղճ պատանին ծերացիր, խոնարհ
Սեր է աղերսում...

Հեծկլտաց լարը, դողաց-դողդողաց
Եվ քնքուշ լարը կտրվեց հանկարծ...
Գուսանը սեղմեց կրծքին սաղն անլար,
Եվ նայեց շուրջը տխուր ու մոլոր...
Եվ վեպը այսպես մնաց կեսկատար,
Բայց մինչև այսօր
Այս թևաթափ վեպը միշտ իմ ականջում
Հնչում է որոշ, և լավ չեմ հիշում,
Արթո՞ւն եմ լսել, թե՞ մի անուրջում.
Կարծես հինավուրց մի հեքիաթ լինի,
Որ հյուսել է մի հարազատ ոգի
Հեռու, անանուն
Մի հին աշխարհում...

1908

ԼԵՅԼԻ ՈՒ ՄԵՋՆՈՒՆ

Կորիճ Մեջնում քնավ, երազի մեջ տեսավ Լեյլիին։
Տեսավ, սեր տվավ ու սեր առավ։
— Ա՛յ նանե-մերիկ, գլուխս կդնեմ բարձին, կբարձրացնեմ,
Դրախտի հյուրին երազիս կտեսնեմ։
Ա՛յ նանե-մերիկ, հալալ արա ինձի քու ծծի կաթ,
Երթամ՝ աշխարհք ժուռ գամ՝
Գտնեմ Լեյլիին։

Ասավ Մեջնում նանե-մորը. ասպաս հագավ ու գնաց։
Գնաց, գնաց,
Բինգյոլի աղբյուրի վրա հոգին վկայեց
Ու կանգ առավ։

Կես-գիշերին, մեջ-գիշերին
Քոչվոր եկավ Բինգյոլի սարը։
Քոչվոր եկավ, վրան զարկեց Բինգյոլի սարը։
Սիրուն Լեյլին քնավ, երազի մեջ տեսավ Մեջնումին,
Տեսավ, սեր տվավ ու սեր առավ։

Առավոտ բարի լույս բացվի ձեր վրա,
Առավոտ բարի լույս բացվավ Լեյլիի վրա,
Առավ կուսն ու գնաց աղբյուրը ջրի,
Հոգին վկայեց ու եկավ Բինգյոլի աղբյուրը ջրի։
— Ա՛յ Մեջլում, բարև քեզ, ասավ Լեյլին։
— Հոգար բարին քեզ, աչքիս լույսը,
Սրտի սիրելի Լեյլի։
Մեջլում նայեց Լեյլիին
Ու կանգնավ մնաց.
Լեյլին նայեց Մեջլումին
Ու կանգնավ մնաց։
Լեյլիի աչքերը գիշերվա երկինք են՝
Արևներով վառ.
Լեյլիի մազերը աբրշումն առուներ են՝
Ծուփ-ծուփ կթափվին
Մարմարե կրծքին...
Ցոթն օր, յոթ գիշեր
Ոտքի վրա կանգնան էնոնք,
Էլի կիմանային, թե նոր են եկած։

Ցոթն օր, յոթ գիշեր բոլորավ,
Լեյլին ասավ.—
— Ա՛յ Մեջլում, իմ սեր ու իմ սրտի տեր,
Ինձ հրաման տուր՝
Մի կուժ ջուր տանեմ հորս վրանը,
Առավոտ էլի քու մոտը կուգամ։

Խոսքերը Լեյլիի բերանեն անո՛ւշ կթափվեին
Շիրազի մեղրի գինուց գովական։
Լեյլիի մատները լուսնյակի շողեր են.—
Մնաս բարևի ձևոք տվավ Մեջլումին։
Մեջլում լացեց, ասավ.
— Լեյլի՛ջան, Լեյլի ջա՛նեջան, մի՛ գնա,
Ես քու սպանվածն եմ առանց վերքի.
Քեզի փնտրելիս կանեմ Հնդուքուշը
Մինչի Չինմաչին։
Լեյլի՛, քու հասակ ոսկի բուրջ է,
Մի սև խալ կա քու թշի վրա,
Լեյլի՛, անխիղճ Լեյլի, մի՛ գնա...

Լեյլին ջուրն առավ ու գնաց,
Մեջլում աչքը հուսին գցած մնաց,
Ձիերը ծռլին, մոլո՛ր, մոլո՛ր...
Լեյլին գնաց։ Գնաց ի՛նչ տեսավ.
Հոր վրաններ բարձած քոչվոր կերթան.
Լեյլին գնաց հոր քոչի հետ...
Իմ վրա բարով անցնի աշնան խաղալը.
Քու վրա բարով անցնի ձմռան ձյունը.
Իմ վրա բարով ծաղկի գարնան լալեն,
Քու վրա բարով ծաղկի գարնան վարդը։
Լեյլին տեսավ գարնանը
Մի հավք վերև ման իյուգար։
— Ա՛յ թռչուն, ասավ Լեյլին,
Դուն կուգաս Սիփանա քարեն,
Քու ճամփեն կանցնի Բինգյոլա սարեն,
Մի հարցում տամ, պատասխա՛ն տուր.—
Չես՞ իջել յարար Բինգյոլի աղբյուրի վրեն,
Չե՞ս տեսել Մեջլումին Բինգյոլի աղբյուրի վրեն։
— Ո՛վ խՀե-Լեյլի ասավ հավքը երկնուց,
Ես կուգամ Սիփանա քարեն,
Իմ ճամփեն կանցնի Բինգյոլա սարեն,
Ես տեսա աղբյուրի գլուխ մի կորիճ մեռած,
Միսը կերա, ոսկորները իրար վրա ժողվեցի...

Լեյլին ծամեր քանդեց,
Մոխիր լցավ ծամերու վրա,
Գնա՞ց, գնա՞ց Բինգյոլի աղբյուրի վրա,
Տեսավ Մեջլումի ոսկորները ծաղկունանց մեջ,
Կարմիր ու նեխշուն ծաղկունանց մեջ։
Լաց լացեց, լաց լացեց ու մեռավ
Տնավեր Մեջլումի ոսկորների վրա։

Աստծու հրամանով երկուսն էլ ասող դառան,
Անմուրաղ Մեջլում ու երաշ Լեյլին,
Երկինք թռան, ասող դառան.
Մեկը շողաց հարավակողմ,
Մեկը՝ հյուսիսա։
Աստծու հրամանով տարին մեկ անգամ

Լեյլիի ու Մեջնունի տառապիրը իրար կապան,
Կարոտ-ծարավ սրտով կիսամաթիլեն իրար,
Պաշ կուտան ու գաշ կառնեն
Նորեն իրարուց կհեռանան,
Լեյլին Մեջնունի տեղը,
Մեջնունի՝ Լեյլիի.—
Լեյլին՝ հարավակողմ,
Մեջնունի հյուսիսա...

1910,
Ղազարապատ

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՍԵՐԸ

I

Լուսակերտ է ապարանքը Թադմորի,
Անապատում, որպես նեղաղ ոսկեհյուս.
Յոթն հարյուր սյունի վրա մարմարի
Սլանում է աշտարակը երկնասույզ։

Շուրջը նազուկ արմավենու պուրակներ,
Ուր երգում են հրաշք-հավքեր կարոտով,
Շատրվաններն հարհրում են կրակներ,
Ծաղիկները պճնազարդում արծաթով։

Գահի վրա երփատարդ էլ-Սաման
Մեղմ դրէել է հրաշագեղ բամբիշին.
Կրծքի վերա հյուսքը նրա — ծիծփան,
Հանց նունուֆար լույս-աղբյուրի երեսին։

Փերոզ ծուէը, որ փայլում է մշտաթոր
Սեպ ժայռերը Էրբանանի փոշերի՝
Չունի այնպե՛ս, այնպե՛ս փրփուր ճլունաթույր
Ինչպես կուրծքը լուսապարծառ բամբիշի։

Ալքայական գահի չոքջը վարթեան
Մանկամիկներ և նաժիշտներ ասիական
Նվագում են, կաքավում են ու երգում
Գիշերները, առավոտուց մինչ գիշեր։

II

Երբ հանգչում են ապարանքի շահերը,
Եվ արծաթյա կարապի պես լուսնկան
Փայփայում է ավազանի ջրերը,
Շշնջում է սյուքի նման էլ-Սաման։

Շշնջում է լուսաթաթախ բամբիշի
Ականջն ի վար այնպես քնքուշ, հեզաստահ,
Ինչպես լուսնի շողակաթը թավիշի
Այն հոյակապ սյուներն ի վար մարմարյա։

— Բարձր են երկնի ծեղունները, նազելի՛ս,
Բայց իմ սերը բարձրաբարձր է նրանցից.
Խոր են երկրի հիմունքները, նազելի՛ս,
Բայց իմ սերը խորախոր է նրանցից։

Արուսեկը, որ նեքկում է ծիրանի
Շրթունքները զառնուկների Տյուրոսի,
Այնքա՛ն կարմիր, այնքա՛ն կարմիր բոց չունի,
Ինչքան որ քո համբույրները անդուսի։

Կխորտակվի ապարանքդս գեզանի,
Եվ կծածկվի անապատի ջնջի տակ,
Կբարձրանա անհուն ծովը Սիդոնի
Եվ կրգերե անապատը ծագե ծագ,—

Ժամանակը իր վախճանին կհասնի
Եվ արևը մի բուռ մոխիր կդառնա,
Բայց իմ սերը վախճան չունի, հուն չունի,
Նա հավերժ է, նա անշեջ է, նա անմահ...

Ջէացնող համբույրներում դյութական,
Հանց հինավուրց հերիոթական գիտու մեջ,
Թալկանում է և հալչում է Էլ-Սաման...
Ժամանակը դառնում՝ վայրկյան ու հավիտ...

Ապարանքի երենոսյան դռնից
Երաշանուշ մուշկ ու կնդրուկ է բուրում.
Մանկլավիկներ ու նաժիշտներ ցնծալից
Նվագում են, ու երգում են, ու պարում...

III

Լուսինը մահվան թևով ծվարած՝
Առկայծում է կանթեղն ազոտ, մենավոր,
Եվ մեռնում է հեզ բամբիշը դալկացած
Էլ-Սամանի կրծքի վրա սգավոր։

Նա մեռնում է ինչպես ցողը բոցրջում,
Մանկիկն ինչպես սուրբ գրկի մեջ մայրական.
Եվ հրծծում է, աղոթքի պես շշնջում
Հեզ բամբիշի ականջն ի վար Էլ-Սաման։

— Կբխորտակեմ կամարները երկնային,
Ես չեմ թողնի, ես չեմ թողնի՝ դու մեռնես.
Ե՛վ կվանեմ, և՛ կհաղթեմ չար մահին,
Ես չեմ թողնի, ես չեմ թողնի՝ դու մեռնես։

Եվ գրկել է դժգունացող բամբիշին,
Մահվան հանդեպ սուր ու վառան է շարժում.
Եվ բամբիշի սառած-մեռած շրթներին
Իր հրեղեն սերն ու շունչը ներարկում։

IV

Լուսիններ են եկել-անցել, ու կրկին
Մեռած բամբշին ամուր գրկած Էլ-Սաման
Շշնջում է ականջն ի վար մեղմագին,
Ինչպես դեղին սյուներն ի վար լուսնկան։

Եվ լքել են ապարանքը սարսափից
Մանկլավիկներն ու նաժիշտներ ոսկեհեր.
Երամներն են լուռ սոսափում թախծալից,
Եվ մարել են վառ ծաղիկներն ու ջահեր։

Շատրվանները հեծկլտում են ու լալիս,
Եվ սյունից սյուն սարդը ոստայն է հյուսում.
Անապատի հողմն է միայն այց գալիս
Եվ դահի շուրջ կաղկանձում ու փսփսում։

Օձն է սրբում ստոն ու փայլուն կողերով
Էլ-Սամանի ոսկորների լուռ փոշին,
Բայց Էլ-Սաման կմախքային ձեռներով
Պիրկ գրկել է նորից հյուծված բամբիշին։

Եվ քայքայուն ականջն ի վար լռելյայն
Մեռած, սառած շրթունքներով Էլ-Սաման
Շշնջում է հավերժաբար ու անձայն,
Ինչպես խարխուլ սյուներն ի վար լուսնկան։

Պուրակները լորացել են, չքացել,
Եվ շիջել է լույս հրաշը սյուների.
Անապատը դեղին քղանցքն է փռել
Եվ ծածկել է ապարանքը Թադմորի...

Եվ ավազուտ շիրմի վրա մենավոր
Աշտարակն է մնում կանգուն ու վկա,
Որ իմանան վառ աստղերը հեռավոր
Էլ-Սամանի սիրը հզո՛ր ու անմա՛հ։

Որ աշխարհին պատմեն սիրը հաղթապանծ.
Էլ-Սամանի սիրը՝ անա՛նց, հավերժո՛ղ,
Քարավաններն ու ճամփորդներն երկյուղած
Հեռուներից հեռուն եկող-գնացող...

1914 նոյեմբերի 27,
Բեռլին

ՄԵՐ ՆԱԽԱՀԱՅՐԸՐԸ

Եկավ հապճեպ սուրհանդակ՝ փոշիների մեջ թաթավ,
Ուրարտուի արքայի առջև խոնարհ ծունր իջավ.
— Որպի՛ հզոր Խալդիի, տեր գետերին Նաիրի,
Ինձ առաքեց բդեշխը քո այն հեռու աշխարհի,
Ուր արևն է մայր մտնում։
Հաղթո՛ղ գոռոզ Ասուրի,
Մի թշնամի, որ նման մթնում փայլող մի սուրի,
Մխրճվել է մեր հողը, և քանդելով բուրգ-պատվար՝
Ներս է խուժում մեր հողը, հեղեղների պես վարար։
Չենք իմանում, չգիտենք նրանց առհմը, ովքե՞ր են,
Ո՞վ է նրանց աստվածը, նրանց լեզուն. ուսկի՞ց են։
Եվ մզրի՞կն են սանձել, թե՞ արծիվը ամպերի,
Նրանց ձիերը թռչում են պատանեշներով բերդերի...

Սարդուրիսի ճակատին մռայլ վիհեր բացվեցին,
Եվ արձակեց հրաման ուրարտական թագերին.
Կազմեց ամուր այրուձի, կազմեց բանակ մեծաուժ,
Եվ մեկնեցին ռազմադաշտ թշնամու դեմ խուժադուժ...

II

Գամիրք, Մոսոք ու Թափալ ծունկ են իջել գլխահակ՝
Հաղթողներին բերելով հարկ ու ընծա անքանակ.—
Ցորեն, մեղրը ու երկաթ, իրենց չքնաղ կույսերը,
Որոնց միայն գգվել են երկնի մաքուր հովերը։
Նետեր ունին սայրասուր և աղեղներ լայնալիճ,
Որ արծիվին սրտախոց վայր են բերում երկնքից,
Գարսեր ունին ամեհի, սուրեր ունին կուռ-կոփված,
Կայծակների ամպերն դարբնոցում շրդեղված։
Փոյուգիական գդակներ և գոտիներ երկաթի,
Եվ վիթխարի ուսերին վագրերի վառ մորթի,
Որոնց բռնել են շտապ իրենց անցած վայրերում,
Եվ ճակատներն արևված՝ ինչպես կավը քուրայում։
Վաշեների մեջ կորյուն՝ ժիր մանուկներ ոսկեհեր,

Բաղուկները չլապինդ, աչիկները՝ արևներ։
Եվ նրանց հետ ալեհեր և իմաստուն ծեր պապեր՝
Պիրկ ձեռներին գինով լի էտրուրական սափորներ։
Վիթի նման աղջիկներ՝ գարունքվա պես բռնկված՝
Զրահի տակ ստինքներ՝ սերն ու կարոտ անթեղած.
Եվ մայրերը սիրաշատ ու նրանց սուրբ արգանդում
Կյանքն է աճում, ինչպես որ վիշապաձագն անդնդում։

III

Ինչպես ծովը դուրս պոռթկա իր վիհերից անպարփակ,
Հորձանքներ տա և հորդի, որոնելով նոր հատակ,
Այնպես հորդում է առաջ նրանց արշավն ահավոր,
Որոնելու նոր աշխարհ, իրենց երդի համար նոր։
Եվ հորդում են, և նրանց խոլ բարբառից սարսափուն
Վարաղներն են թաքթաքում շամբուտների գուբերում։
Եվ հորդում են, և հարթում նժույգների ոտքի տակ
Խոշեր-խութեր ու լեռներ, աղբեր-ցեղեր ու բանակ.
Եվ նրանց վերև հածում է սաղավարտով պղնձի՝
Նահապետը, քաջ Գեստրաս, ինչպես արև քաջաձի։

IV

Եկավ արքան Սարդուրիս, և արքաներ Նաիրի
Ոտքի գան ամեհի, հեռո՛ւ, անհայտ աշխարհի.
Երկաթեղեն պատերով պատվար կեցան դարեդար,
Եվ սուր սրի զարկեցին, ճակատ ճակատի անդադար.
Սերունդ իջավ գերեզման, սերունդ ելավ օրրանից,
Եվ կռեցին նոր սուսեր, պայքարեցին նոր-նորից։
Ճակատ ճակատի բախեցին և սուր սրի զարկեցին,
Ճակատ ճակատի բախեցին և սուր սրի զարկեցին։
Փշրվեցին նետ ու սուր, Ուրարտուի այրուձին,
Եվ նորեկներն հաղթապանծ՝ կուռ պատերը ճեղքեցին։

Ռազմիկները Խալդերի փախան պարտված ու նվաստ՝
Թողած բալիշ ու ավար իրենց հողը հացաշատ,
Ոստանները ոսկեդուռ, իրենց կիներն սևաչվի,
Փախան մինչև ծովածեծ կողալանջերն Կավկավի։

V

Եվ վաղերը շառաչուն՝ հաղթողների կանգ առան
Այրարատյան դաշտի մեջ, Մասիսների հանդիման.
Գեստրասները կախեցին վահանն իրենց պողպատի
Ադամանդից լուսեղեն Ավագ-Մասսա ճակատի։
Հիմ դրեցին, վառեցին իրենց երդը սրբազան,
Եվ ծուխն ելավ ու փռվեց գետերն ի վար Նարբյան.
Եվ բագինը կանգնեցին իրենց արև-աստծու՝
Քաջ Վահագնի, բաշխիչը հաղթանակի և գինու.
Եվ Աստղիկի, բամբիշը Վիշապաքաղ Վահագնի,
Աստվածուհին գեղեցկի, հղոր սիրո և կյանքի։

Եղան նրանք քաջ պետեր՝ հայեր սնպուհ, հաղթական,
Աշխարհն եղավ Հայաստան և պիտ մնա Հայաստան՝
Մինչև արևը հանդչի և ցուրտ ամյունը նրա
Ջյունե համայն ազգերի հայրենիքների վրա...

1917 հունվար.
Ժնև

ԱՍՊԵՏԻ ՍԵՐԸ

Հին ժամանակ իր ամրոցում ոսկեղեն
Կրբնակվեր հուր ու հրաշք մի աղջիկ.
Ու կապասեր, որ հեռավոր տեղերեն
Իր երազի ասպետը գար դեղեցիկ։

Եվ ձին հեծած, բանակներով հաղթաղեն,
Եկավ մի օր կանաչ-կտրիճ մի իշխան...
Սանձը ձգեց, ու քար կտրեց հիացքեն,
Երբ որ տեսավ պատշգամբում աղջիկն։

— Հրաշք-աղջի՛կ, թագավորիս դռներով
Կես աշխարհը դրոշակիս տակն առա.
Քեզ սիրեցի, սիրտդ տուր ինձ, քո սիրով
Մյուս կեսն էլ տիրեմ, բերեմ քեզ ընծա։

— Այդ ի՞նչ սեր է,— ասաց աղջիկն ասպետին,—
Քաջ ես, գիտե՛մ, գիտե՛մ, չկա քեզ նման.
Դու կարող ես տիրել աբար-աշխարհին,
Բայց այդ երբե՛ք հղոր սիրու չէ՛ նշան։

— Ինչպե՞ս հայտնեմ սրտիս հուրը, նաղելի՞ս.
Կուզե՞ս պատռեմ կուրծքս հիմա այս սրրով,
Ոտներիդ տակ նետեմ սիրտս սիրով լի.
Մեռնիմ ուրախ ու բախտավոր՝ քո սիրով։

— Այդ չէ՛ սերը, ասաց աղջիկն ասպետին,
Գիտե՛մ, քաջ ես, բայց շա՞տ վախկոտ, թույլեր կան.
Որ հուսահատ՝ քաջի նման կըմեռնին,
Բայց այդ երբեք անշեջ սիրու չէ՛ նշան։

Ու կտրիճը մնաց մոլոր ու շվար,
Աչքերն հանգած՝ լույս-երեսին աղջկա.
— Ի՞նչ որ կուզես, ասա՛, անեմ քեզ համար,
Արևի տակ իմ սիրուս պես սեր չկա։

— Թե կսիրես, թո՛ղ ինձ հիմա ու գնա՛,
Ու ականջ դի՛ր, մի օր դուռդ կըթակեմ։
Այսպես ասաց, ու իր ծոցեն մարմարյա
Նետեց նրան մի հատիկ վարդ հրեղեն։

Ասպետն առավ վարդը, քնքո՛ւշ համբուրեց,
Վերջին անգամ նայեց, նայեց սիրածին։
Սիրու վարդը պահեց այրվող ծոցի մեջ.
Ու խթանեց, ու պտցավ նժույգ-ձին։

Եվ նստել է ամրոցի մեջ մենա-մենի
Այն իշխանը նրագներում երջանիկ,
Վարդը ծոցում, ու ականջը մի ձենի...
Եվ թե առան, թռան օրեր ու տարիք։

Աչքերը գոց՝ պատած ոսկի մշուշով,
Ուր կրժպտար սեր-աղջիկը անմահ,
Քաջ ասպետը բոց կարոտով, լի հույսով
Սիրտը ձենի՝ լուռ սպասեց աղջկան...

Եվ թե առան, թոան օրեր ու տարիք,
Վառ կտրիճը դառավ դողդոջ մի ծերուկ,—
Ու երբ ճահը դուռը բախեց զարհուրիկ,
Հանեց ծոցեն վարդը խամրած ու դալուկ։

Սիրու վարդը աչքին գրեց փափագով,
Ու համբուրեց, ու համբուրեց, ու... մեռավ՝
Հոգին լցված յլթուլների երգերով.—
Եվ զրույցս էլ ա՛յսպես տխուր վերջացավ...

1917.
ԺՆԻ

ՍՈՒ ՍԻՐՈՒԹԸ

(Հայկական ավանդավեպ)

Կա հինավուրց մի զրույց,
Թե մի տղա,
Միամորիկ,
Սիրում էր մի աղջկա։

Աղջիկն ասավ— «Ինձ թնավ
Դու չես սիրում,
Թե չէ գնա՛,
Գնա՛ մորքդ սի՛րտը քեր։

Տղան մորը, գլխիկոր
Քայլ առավ,
Լացեց, լացեց,
Ճղչկա մոտ եռ դառավ։

Երբ նա տեսավ, զայրացավ.
— Է՛լ չերևես
Շեմքիս, ասավ,
Մինչև սիրտը չբերես։

Տղան գնաց և որսաց
Ասրի այծյամ,
Սիրտը հանեց,
Բերեց տվեց աղջկան։

Երբ նա տեսավ, զայրացավ.
— Կորի՛ր աչքես,
Թե հարազատ
Մորքդ սիրտը չբերես։

Տղան գնաց՝ մորն սպանեց,
Երբ վազ կըտար
Սիրտը՝ ձեռքին,
Ոտքը սահեց, ընկավ վար։

Եվ սիրտը մոր ասավ տխուր,
Լացակումած.
— Վա՛յ, խեղճ տղաս,
Ոչ մի տեղդ չըցավա՞ց...

1919 մարտի 15.
ԺՆԻ

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ

Եղել է հնում, պերճ արևելքում
Մի քաջ զորավար՝ հայրենապաշտպան,
Առանց ընկճելու նրկրի թշնամուն՝
Նրրա սուրը երբեք չի մտել պատյան։

Նրրա արձակած տեգը խոլական
Թշնամու հողում ցըցվել է ահեղ,
Նրրա սարսափը օրհասի նման
Թշնամու գլխին կախվել ամեն տեղ։

Եվ ժողովրդի քնարք ազնիվ
Փառաբանել է անունը նրրա,
Հազարանվեները փայլուն ու անթիվ՝
Սուրբ հայրենիքի սառնի վրրա։

Բայց Թագավորը՝ նենգ ու փոքրոգի,
Նախանձում էր խիստ նրա հռչակին.
Վառ լույսերի մեջ նրա մեծ փառքի
Ջղում էր իրեն նվաստ ու չնչին։

Անհուն նախանձի կրքով առլցուն՝
Մի օր խնջույքում արքայական ասաց,
Մի զորականի՝ անհաչտ, անանուն,
Ժպտաց սիրալիր, դրվատեց նրան։

Եվ նա Փրխաբեն զորավարին մեծ՝
Տեղ տվեց նրան առընթեր գահի,
Հյուրերին բոլոր՝ գաբմանք պատճառեց
Այնքան ապերախտ վարմունքն արքայի։

Մյուս օրը շքով այն զորականին
Սպարապետի սուր տվեց արքան,
Եվ հրամանատար կարգեց բանակին,
Իսկ զորավարին՝ թիկնապահ նրան։

Ջայրացավ հոգին քաջ զորավարի,
Համհարզները իր սատրիկ զայրացան,
Առավ ընկերներն հին կռիվների,
Եվ հոգն հայրենի թողին, հեռացան։

Գնացին նրա սուրի հետևից,—
Ճակատագիրը սուրն է քաջերի,—
Հոգեր կրավեց բռնակալներից
Եվ դառավ իշխան տիրած հոգերի։

Եվ երբ հրճվանքով լսեց թշնամին,
Թե անպարտելի զորավարը քաջ
Լքել է անդարձ երկիրն հայրենի,
Եվ բաց են դռներն արշավի առաջ,—

Մոռացան իսկույն և՛ փորձ, և՛ սարսափ,
Հնչեց շեփորը գոռ պատերազմի,
Հին թշնամու դեմ խոյացան շտապ՝
Լուծելու անմոռ վրեժն արյունի։

Սահմաններն անցան և խուժեցին խոր,
Հերի մատնեցին գյուղեր ու ավան,
Սպարապետը փախավ գլխիկոր,
Զորք ու ժողովուրդ խուճապի ընկան։

Խուռն խռնվեց հրապարակներում
Ժողովուրդը ողջ, հեղեղանման.
— Ո՞ւր է, գոչեցին, զորավարը մեր՝
Սուրը հայրենիքի փրկիչ ու պաշտպան։

Նախարարներին ու Թագավորին
Կարդացին բուրը, խիստ սպառնալիք,
Որ խնդրեն իրենց քաջ զորավարին,
Պատվով ու փառքով բերեն հայրենիք։

Եվ ավագանին նստեց խորհրդի,
Երեք փորձառաս ծերեր ընտրեցին,
Որ Թագավորի և ծերակույտի
Խնդիրը տանեն քաջ զորավարին։

Պատվիրակները հասան հոգնաբեկ,
Իշխանի առաջ կանգնեցին ոտի,
Ողջույններ տվին զորավարին սեղ
Եվ աղերսները մեծ ծերակույտի։

Զրույց էր անում զորավարը մեծ
Ընկերների հետ իր հավատարիմ.
Եվ պատմում էին հին արկածներից,
Հիշում մարտերը՝ վարած միասին։

Տարածեց ձեռքը իշխանը փութով,
Լուեց դահլիճը պերճ ապարանքի.
Պատվիրակները պատմեցին վշտով
Թշվառ վիճակը մայր հայրենիքի։

Լսում էր տխուր պատգամը նրանց,
Վարանմունքի մեջ վշտակոծ հոգին,
Վաղեմի քենը բռնկվեց հանկարծ
Եվ ձեռքը ժխտող տարածեց ուժգին։

Ոսոխն օրևցօր մխրճվում է խոր,
Ուր ոտք է դնում՝ ավեր ու ավար,
Եվ ժողովուրդը վհատ ու մոլոր
Հնաք է փնտրում, չի գտնում հնար։

— Մայրենի տաղով, հայրենի հողով
Կերթանք նրա մոտ մեր գուսանն ու ես,—
Զարմում է ուժով մի ծեր չինական,—
Կգիտենք նրան, նա չի՞ ջի՞ մեզ։

Եվ ժողովուրդը ոտքի և դնում
Իր հին գուսանին և ծեր գնդապետին։
— Ողջույնները տաքք, մեր անբը անհոգ,
Նա չի մոռանա իր ժողովրդին։

Գնացին նրանք, սահմանը շանցած՝
Շինափանն արտից առավ մի բուռ հող,
Լցրեց քսակը, և արտարքնիցց՝
Հասան իշխանի ապարանքը ճոխ։

Երեկո էր ուշ. կանթեղները լուռ
Նշույլում էին պերճ ձեղուններից,
Զորավարը հին՝ նստել էր տխուր,
Ընկերների հետ՝ մոայլ, թախծալից։

Տավիղն հինավուրց հանելով ուսից՝
Գուսանը կանգնեց դահլիճում մարմար,
Զարկեց լարերին թոփով, խանդալից,
Եվ լեզու առավ տավիղն ոսկեբար։

Հին հայրենիքի մեղեդիներն հին
Մեղմ կարկաչեցին առվակների պես.
Գուսանը վառման՝ երգեց սրտագին
Ճերմակ լեռների կատարները մեռ։

Արծրվի կանչը՝ ժայռի գագաթին,
Ծրփուն արտերի զմրուխտը պայծառ,
Վիթերի վաղքը՝ կիրճերում մթին,
Հոտերը բարի՝ դաշտերում դալար։

Երգեց ձիերի խրխինջը խրոխտ
Հայրենի փոշոտ ճանապարհներում,
Թռչողը ոգի, հնձանների հորդ,
Եվ խրճիթների ծուխը տխրագույն։

Երգեց պիրակով վարդ-ազգենիներին,
Ոգեռնք վարատով վանչում են նրան,
Նրանում են նրան փոսորը սիրագին,
Որ շոշոփում է արտի նման։

Մոայլ ճակատը գոգդոջան ձեռքին
Եվ աչքերը գոց՝ երազով տարված,
Լսում էր քաջը գուսանի երգին,
Լսում էր՝ արտին ականջը գերված։

Ինչպե՞ս մայրենի խոսքերով անուշ
Կանչում են նրան, կանչում կարոտած.
Եվ վաղուց մնացած մոր ձայնը քնքուշ
Անհուն քաղցրությամբ լսում է հանկարծ։

Եվ թաց աչքերը սրբում է ափով.
Սակայն ծերունին քայլերով ամուր
Մոտեցավ, դրեց քսակը հողով
Իշխանի առաջ և կանգնեց անդորր։

Իշխանը սուզված նայում է անթարթ,
Ցնհատ հայացքով նայում է հողին,
Հողը խոսում է նրա սրտի հետ,
Եվ միրաը նրա խոսում է հողին։

Հայրենի հողը քաշում է ինչան,
Ինչքա՞ն ուժով է, ի՞նչ ազդարարելի.
Եվ ինչպե՞ս քաղցը հուշում է նրան
Վառ մանկությունը՝ երազներով լի։

Այդ հողն է նրան ծընել ու սընել,
Իր մայրն ու հայրը այդ հողն են դառել,
Եվ հայրենիքն է, ժողովուրդն անմեռ,
Եվ նախնիները, որ հող են դառել։

Լսում է խորին այդ անհուն ձայնին,
Մայր ժողովրդի կոչին դարավոր,
Օ՜, ինչքա՜ն ուժով քաշում է նրան
Հայրենի հողի խորհուրդը հզոր։

Եվ կարկատում է ձեռները դողդոջ,
Քսակը փորրիկ վերցնում երկյուղած,
Զգում է այնպես՝ թե աշխարհի ողջ
Գանձերը ունի ափի մեջ բռնած։

Աչքերը լցված սրտի արցունքով՝
Խոնարհում է հեզ գլուխն արքենի,
Եվ երեք անգամ անհուն կարոտով
Համբուրում է նա հողը հայրենի։

Եվ ապա ընդոստ կանգնում է ոտի,
Հեծնում հրրաբաշ նժույգը ռազմի,
Ընկերների հետ փառքի և վշտի
Սլանում է սուրբ հողը հայրենի։

1920,
ժնև

ՈՐԴԻԱԿԱՆ ՍԵՐ

Մի մայր ուներ չորս հատ որդի։
Մեկը՝ ուսած, հռչակավոր,
Ուներ ամբիոն վարժապետի.
Սակայն մյուսը՝ կրոնավոր,
Մի քահանա սրբակենցաղ.
Եվ երրորդը՝ վաճառական,
Լայն ձեռնարկներ, մեծ առուծախ.
Իսկ վերջինը... թափառական,
Կարիքի մեջ՝ աղքատ ու խեղճ։

Երբ մահն եկավ, մայրը աստծուց
Շնորհ խնդրեց — տեսնել շիրմից,
Թե ինչպիսի՞ վերաբերում

Պիտ. ունենա որդիներից։
Վարժապետը դրեց ներբող,
Ուլեթք կարդաց սուրբ քահանան,
Եվ հարուստը նվիրեց փող։
Բայց հեզ որդին թափառական
Բեկված սիրտը մորը բերեց...

1916,
Վենետիկ

ԱՊՈԼԼԱՆ ԵՎ ԻՐ ՍՈՒՐԸ

(Առասպել)

Կա մի հզոր, մի ահեղ սուր
Ոզուզների ժամանակից,
Խորունկ թաղված մի կաղնու տակ
Վրկանա բորբ ատափաստանում։

Հորդաները խուժ հոների,
Ակոսել են տափերն անծիր,
Եվ չեն գտել սուրը հզոր
Ժամանակի սկիզբներից։

Եվ Աթթիլան հրաշ տեսավ,
Երազի մեջ — տեղը սուրի.
Խլեց կաղնին խոր արմատից,
Հանեց սուրը հին պապերի։

Վրկանա մութ ծովի վրա
Կայծակն ահեղ փայլատակեց,
Երբ Աթթիլան ճոճեց սուրը
Արևմտյան աշխարհի դեմ։

Եվ Բոսփորի, Հելլեսպոնտի,
Եվ Դանուբի, և Տիբերի
Ալիքները մլմաղեցին,
Երբ Վրկանա ծովը շողաց։

— Սրդ. դարձրեք, ասասնեցե՛ք,
Արևմուտքի խարտեշ ցեղեր,
Դե՛ք, հնաց Հռոմի, մեզի Թյուլսնդիոն,
Բնաջնջ եմ ժանա վերանանք ձեր։

Պիտի փշրեմ, կրակի տամ
Ոստանները, գահերը ձեր,
Քաղաքները, դղյակները,
Դպրոցները, վանքերը ձեր։

Օրենքները շղթա են ձեր,
Ձեր բարքերը՝ կնամարդի.
Ձեր գրքերը սուտ են ու սին,
Ձեր աստվածը՝ շահ ու բաժին։

Պիտի կրքին իմ սուրի տակ
Արքա, իշխան և քահանա,
Եվ պիտի ձեր քաղաքներում
Վրկանա դու գայլը ոռնա։

Ձիուս կոխած սմբակի տակ
Եվ իմ անցած ուղիներով
Էլ չպիտի ծաղկի մի ծիլ
Ձեր հայրերի պիղծ հողերում։

Ասաց. հնծավ խոշական ձին
Առանց սանձի, վարավանգի.
Թանձրով ոլորվ՝ խթանեց ձին
Եվ մերձեց սուրն արևմուտք։

Մոմատցին, մռնչացին
Հարդանները հեղեղ-հեղեղ,
Եվ խաժանուած ծով կապեցին
Վրկանա դու ծովի բոլորտ

Եվ խթանեց ձին Աթթիլան,
Վրկանա գայլն առջևն ասած,
Եվ մխրճեց սուրն արևմուտք,
Վրկանա գայլն ոռնաց վայրագ...

Հորդանեցրը մերկվեցին,
Եվ ճանապարհով ծով ու ցամաքն՝
Անասունները տասպատ ընկան,
Գյուղ ու քաղաք մահի ասվար.
Ամարերն ելան խարտուղիների
Եվ ծածկեցին նենգ Եվրոպան։

II

Երբ Աթթիլան խաչ հանեցի
Վրկանա բորբ տափաստանում
Կաղնու խորին ճիրաններից
Կորցեց սուրը Ղուզների,—
Վայրուց ծարով լեցվի նման
Պապակում էր սուրն ապրանի.
Եվ ձի պես գայարվում էր
Կուռ ափի մեջ Աթթիլայի,
Ընդվզում էր պատյան մտնել,
Եվ չէր հանգչում պատյանի մեջ,
Եվ մղվում էր պատյանից դուրս.
Հնչի արյան արբեցումի։

Եվ Աթթիլան՝ սուրը ձեռին,
Անցավ Հունի դաշտերն անծիր
Ըսկյութիայի և Դակիայի,
Թանայիսից մինչև Դանուբ,
Սրի քաշեց հովիվներին,
Ռամիկներին, ազատներին,
Սրի քաշեց գեղջուկներին.
Արյամբ ներկեց գետ ու գետին,
Եվ չհագցավ սուրը սակայն։

Սրդեն ծփում էր արյան մեջ
Հեռ Եվրոպան մինչ Գալլիա,
Ուր Աթթիլան վարեց ապով

ԱՎԳՈՒՍՏԻՆՈՍԻ ՏԵՍԻԼՔԸ

Միշտ ի խնդիր և իրեղեքի անհասնում
Եռբհուրդների, Հրաշքների խնամքում՝
Երանելին Ավգուստինոս ուսումնում
Մտալուսկ դեղերում էր մի անշուք։

Հանկարծ տեսավ, որ մի մանուկ հեգին
Իրեն ինքուշ, պստիկ ափով, անդադրում,
Ջուր էր վերցնում անծիր ծովից և լցնում
Ավազի մեջ շինած փոքրիկ մի ամանում։

Նորից վերցնում և լցնում էր նա նորից,
Եվ ջուրը հար դեպի ծովն էր ծծվում ետ։
Ի՞նչ հավատով ճիգ էր թափում ապարդյուն,
Տարերքի հետ ի՞նչ մրցում էր անհիթեթ։

— Ի՞նչ ես անում,— հարցրեց նա մանուկին։
— Ուզում եմ ծովն այս փոսի մեջ գետեղել։
— Ի՞նչ անմիտ խաղ. ի՞նչ հանդուգն տենչ է այդ,
Ասաց սուրբը և կամեցավ քայլ անել։

— Հապա, ո՜վ հայր, դու ի՞նչպես ես հանդգնում
Տիեզերքը՝ այնպես անհեր ու անբավ,
Ձետեղելու այնքան փոքրիկ քո դանդում...
Մանուկն ասաց,— և տեսիլքը չքացավ։

1932,
Փարիզ

ՍԻՐԱՀԱՐ ՆԱԴՈՆ

Կորիճ Նադոն քաշեց ալ Տին
Ցայլանները Ալազյաղի,
Քաշեց եկավ, եկավ կանգնավ
Կոնի առաջ Գյուլիզարի։

Աղջիկ, կնոջ իրարու դեմ։
Եվ Կատաղվելյան ռազմադաշտում
Հազար ու բյուր ընկան ուսպասա,
Ուր դեռ ոչի ոչբաններում
Ուրուները ռազմիկների
Մարտնչում են կատաղաբար
Իրար ոնհոլոս ու ոիսերիմ։
Բայց Աթթիլան և ոչ մի վահ
Դաղար չառած խուժեց դեպի
Ձքնաղ ափերը Վենետի.
Արյունախանձ սրին մատնեց
Ենթվիլեյան հրաշակերտ,
Եվ չհագեցավ սուրը սակայն։

Արյան անհագ արբեցումի
Տենչով վառված սուրն ահավոր
Տանջում էր հույժ Աթթիլային
Երազներում և արթմնի։
Ընդվզում էր մտնել պատյան,
Չէր դադարում պատյանի մեջ,
Եվ մղվում էր պատյանից դուրս,
Նվ օձի պես գալարվում էր
Սուր ափի մեջ Աթթիլայի։

Գաննոնայի արձակ դաշտում
Վեհ Աթթիլան՝ կուրծքը բացած,
Կանգնեց մի օր առավոտյան։
Սուրը երկինք նետեց թափով,
Սուրը իջավ շառաչումով,
Գատռեց կուրծքը Աթթիլայի,
Մրմնջեց սրտում Աթթիլայի,
Ընկավ մեռած՝ Աթթիլան վար,—
Եվ խաղաղվեց սուրը վայրագ,
Արյան ծարավը հագեցավ։

1932,
Փարիզ

Թռավ ձիուց, կանգ առավ դին
Զարկած սեպից կապեց ալ-ձին,
Ցուր ծիլակը խրթնց գետին,
Խրթնց գետին կոնք ձախ դին։
Բանձրը բռնած գլուխը սեգ,
Ձեռքը գրրած ոսկե դոշին
Դաղստանի կնա խանչալի,—
Կարիճ Նադոն մոտավ անվախ
Հոր վրանը Գյուլիզարի։
Ասանց ասալամ տալու, Նադոն
Գյուլիզարի առաջ կանգնավ։
Լուռ գիտեին սրտերն իրանց,
Որ սիրում են նրանք իրար,—
Բայց երկուսն էլ հպարտ էին՝
Կարիճ Նադոն ու Գյուլիզար։
Մեկն ուզում էր՝ մեկելն առաջ
Իրան սրտի գաղտնիքն ասա,
Որ հետո խեղճ, շլինքը ծուռ,
Գուլի պաղատեր հպարտ յարից։
Էսպես առանց ասալամ տալու
Նադոն դարձավ Գյուլիզարին.
— Ո՞վ է ասել քեզ,
Ա՛յ ջադու խրճեր,
Թե սեր ունիմ ես,
Ձեր ունիմ վրադ։
Ո՞վ է ասել քեզ,
Ա՛յ ջադու խրճեր,
Թե օր ու գիշեր
Սիրտս մխում է
Քու տեսքին կսրտու։

Սերըդ աչքերս մուժով չի պատել,
Սար ու դաշտերը չի պատել մուժով։
Ունեցածդ ի՞նչ է,
Ա՛յ ջադու խրճեր,
Որ շուքիդ գիրի՞
Հալվիմ ու մաշվիմ...

Շիտակ է, որ դու քառասուն ծամ ունիս,
Որ մեջքիդ բոլոր փաթուվ են գալիս,
Բայց քու ծամերդ մուշկի հոտ չունին,
Ու աբրեշումի փայլփլանք չունին։

Շիտակ է, որ դու աչքեր ունիս սև,
Երկու սև օձեր՝ խոռ-խոռ ծվաբած,
Բայց աչքերիդ մեջ կրակներ չկան,
Մեռած են, մարած քու սրտի պես սև։

Շիտակ է, որ քու հասակդ բանձր է։
Հասակդ բանձր է, մեջքդ բարակ է։
Բայց հասակդ չի ծփում բաղդու պես,
Ու խան-Արազի եղեգների պես
Մեջքդ ճկուն չէ։
Հագել ես, կապել ասպես, գանավուզ,
Ու դեմքիդ վրա երկու մոռ իրալ կա,
Բայց քու թշերը վարդի թերթեր չեն,
Կարմիր ու վառման, վարդի պես անուշ։
Սերդ աչքերս մուժով չի պատել,
Մուժով չի պատել աշխարհը աչքիս։

Լա՛վ իմացիր դու, առանց ուխտի
Կերթամ, կհեռանամ ես քեզանից հիմի,
Առանց ախ քաշել կընկնեմ սար ու ձոր,
Կոիվ կըմտնեմ՝ ով դեմըս կելնի։

Դուման դաշտի մեջ կրնկնեմ վիրավոր,
Կըմեռնիմ առանց տեսնելդ տարու,
Ու չեմ փափաքի, որ վերջին անգամ,
Մեռնելուս շեմին, ինձ ոգեր ձրագով,
Քու ձայնդդ լսեմ, աչքերդդ տեսնեմ...

Էսպես ասավ Նադոն,
Աղջիկը բերան չբացեց.
Կոնից դուրս եկավ Նադոն,
Նիզակն հանեց գետնից,

Բոնեց ձիու բաշից,
Բռնեց, որ հեծնի.—
Մեկ էլ... գառավ ետ,
Ու կոնի շեմքին
Ընկավ ծնկների վրա.
— Ո՛վ մայրս, ո՛վ հոգի-փերի,
Սրտիս սիրական Գյուլիզար,
Աստված գիտե, դու էլ գիտես,
Որ սուտ եմ ասում, սուտ։
Ա՜խ, մեռնում եմ քեզ համար,
Հոգիս բերանս է եկել, յա՜ր։
Աշխարհի մեջ, ժողովրդի վրա
Չկա քեզ նման, չկա ինձ նման,
Սիրուն, գովական Գյուլիզար,
Դու սիրուն, սիրուն, սիրուն,
Հազար անգամ հաղար...

1934,
Փարիզ

ՀՐԵԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼ

Երբ Յահվեն մարդուն ստեղծեց հողից,
Համարեց հողը երկրի չորս կողմից—
Առավ հյուսիսից, հարավից առավ,
Եվ արևելքից, և արևմուտքից,
Որպեսզի մարդը, ուր որ դնգերն,
Ամեն տեղ իրան ըզգա իր երկրում.
Եվ երբ որ հոգնի և մահը բերն
Նրա անհաղորդ տենչանքներին վերջ,
Ամեն տեղ լսե ձայնը մայրական.—
«Արի, որդյակ իմ, հանգչիր գրկիս մեջ»։

1935 հուլիսի 11,
Փարիզ

ՅԱՀՎԵԻ ՎՐԵԺԸ

(Հնական ավանդավեպ)

Շրջակ ժառանգն էր Մովսեսը նեղհուն
Փարավոնների հզոր բազուկի,
Պակայն գիտեր, որ արյունն է կրում
Մեծ Իսրայելի ընտրագույն ազգի։

Իր եղբայրներին տեսնում էր գերի,
Գիշեր ու ցերեկ խոշտանգված մշակ,
Հարկառների մեջ դշխեմ բուրգերի
Քաղցած ու ծարավ, մտրակների տակ։

Եվ մորմոքում էր սիրտը Մովսեսի,
Վրեժ էր ուխտում մեծ Տան* դեմ դաժան,
Բայց երբ շրջում էր մի օր մեկուսի՝
«Ո՞վ ես դու», մի մարդ հարցրեց նրան։

«Եգիպտացի եմ», խրո՛խտ, սխրաբա՛ր
Պատասխան տվեց հրեա պատանին.
Հետո դեպքն այս նա մոռացավ իսպառ՝
Ջանվելով ամբողջ իր ազգի վշտին։

Երբ փարավոնի երկրից անօրեն
Մինչ ափը կապույտ՝ Ավետյաց Երկրի,
Տոհմերի հովիվ Մովսես մարգարեն
Ապատեց, բերեց զարմն Իսրայելի,—

Երբ քառասուն ամ հետ ամբոխի հետ
Տակաց, դեգերեց Սին անապատում,
Կրեց բազմաղան անցքեր չարաղետ,
Մարտնչեց անդուլ, տքնեց անապատում,

* Մեծ Տան — փարավոնների տոհմը։

Եվ երբ ծերունու ծունկերն հոգնատանջ
Սուրբ հողում հիմա պիտի հանգչեին,
Մահը՝ անողոք և խստապահանջ
Կանգնեց սքրամերկ նրա առաջին։

Մովսես լալագին խնդրեց Յահվեին,
Որ վանե մի պահ ժամը օրհասի,
Մինչև Մովաբի լեռներն անցնեին,
Մինչև համբուրեր Հողը Երազի։

Սակայն Յահուվեն՝ վատին ոխերիմ,
Հազուրդ չտվեց Մովսեսի լշին,
Միշտ մտքի մեջ էր նրա վաղեմի
Ուրացումն իբեն արյան ու ցողին։

Եվ արդարադատ Յահվեն խստաբար
Պատժեց Մովսեսին, իբրև դրժանի.
Օտար վայրում նա մեռավ տժգույժ,
Հայրերի հողին չեղավ արժանի։

1936 Հունվարի 25,
Փարիզ

ՍՈԿՐԱՏԵՍԸ

Սոկրատեսը դատապարտված էր մահվան
Աթենական ամբոխավար տոյանից.
Նա ձաղկել էր շոր կարգերը պետության
Եվ հոմանքի բարքերն հոգի, մեղադրից։

Նա վիճաբեն օրենքների մարդաղավ՝
Բարձրացրեց իմաստության կատարին—
Խղճի ձայնը, ազատ միտքը, սիրն անբավ,
Գեղեցիկը, ճշմարիտը և բարին։

Եվ ահա նա շղթայակապ, բանտի մեջ,
Սպասում էր մահվան ժամին անվրդով,
Բայց մի հմուտ երաժիշտի թախանձեց,
Որ մտոր գար մի կարևոր խորհրդով։

Եկավ շուտով երաժիշտը անվանի.
— Ողջո՞ւյն, ասաց, ով իմաստուն Սոկրատես,
Ինչո՞վ եղա ես քո կոչին արժանի,
Ասա, խնդրեմ, ես պատրաստ եմ եղբոր պես։

— Շատ եմ խնդրում, եղբա՛յր անգին, որ հանիս՝
Էությունը երաժշտության մեկնել ինձ.
Կյանքը կարճ է, ազիտությունը՝ երկար,
Սակայն լավ է՝ չհրաժարվել առիթից։

— Բայց չէ՞ որ կու... ա՛հ, պաշտելի քարեկամ...
Եվ կաբկանեց երաժիշտը ապշահար։
— Այո՛, սակայն, մահվան առաջ ցանկամ
Էությունը այդ արվեստի իմանալ։

Երբ մեկնում էր երաժիշտը երկյուղած
Գաղտնիքները, խորհուրդները արվեստի,—
Իմաստության անմահ բույրով հանանչված՝
Հրճվում էր անհաղթ ոգին Սոկրատի։

1936 Հոկտեմբերի 31,
Աթենք

ԺՈՂՈՎՐԴԻ ՋՆՋԸ

(Սերբական քնար 18-րդ դարի)

Փայլատակում է լուսատանը դեռ
Արյունաթաթախ Մերբիայի վրա.
Եվ դեռևս են ադամանդներն աստղքի
Դիերով ծածկված դաշտերի վրա։

Արդուլլահ փաշան, ահեղ բռնակալ,
Այսօր շատ ուրախ, երջանիկ է շատ,
Իր կազմած վայրագ զարդերի համար
Սատանել է նա Մուլթանից խալաթ։

Աբդուլլահ փաշան, Սերբիայի դահիճ,
Ճերմակ Բելգրադի պերճ ապարանքում
Այսօր ի պատիվ բարձրը պարդևին
Խնջույք է տալիս, փարթամ կերուխում։

Բազմել է փաշան սադաֆե թախտին,
Ոսկե գավաթով շերբեթ է խմում,
Ու երազում է՝ աչքը գավաթին,
Թե ուսկոկների արյունն է խմում։

Փաշայի շուրջը նստել են շարքով
Ենիչարները՝ մռայլ ու դաժան,
Սեղանն է բուրում ճոխ խորտիկներով,
Շերբեթն է հոսում Դոնայի նման։

Զվարճանում են ենիչարները,
Հաշվում են իրենց սուր յաթաղանով
Մեկեն թոցրած սերբ զլուխները,
Եվ հոհոում են դիվային խանդով։

— Հե՛յ, դահիճ բերեք այն ծեր Միրկոյին,
Որի չորս որդին գերի ենք առել.
Այն կույր գուսլյարին, որ հղոր երգով
Սերբերի սրտում կրակ է վառել։

Գնացին, բերին գուսլյարին ծերուկ.
Ներս մտավ Միրկոն՝ գուսլեն ուսից կախ,
Նստեց գլխահակ, լուռ ու անշշուկ,
Աչքերն անհայացք՝ նետեց աջ ու ձախ։

— Լսիր, դու, ծերո՛ւկ, ասում է փաշան,
Իմ ոտների տակ Սերբիան ճղմեցի,
Բայց երգիդ համար հարգանքիս նշան՝
Քո զավակների կյանքը բաշխեցի։

Ինձ պանծացրո՛ւ, երգի՛ր ինձ համար,
Ներբողի՛ր փառքս անմահ դաստանով,
Աշխարհն իմանա իմ գործերը վեհ,
Քանի կան մարդիկ, կա ցամաք ու ծով։

Եվ խոստանում է ոսկի ու գոհար,
Նորից խոստանում ձիեր ու այգի.
Բայց լուռ է Միրկոն՝ գուսլեն ուսից վար,
Լուռ է դահիճը պերճ ապարանքի։

— Միրկո՛, ա՛յ գյավուր, երգվում եմ ահա
Մեծ մարգարեի հզոր անունով,
Չորս զավակիդ էլ կարձակեմ հիմա,
Եղբայր կերթաք տուն, խաղով, խնդումով։

Տեսնում է Միրկոն — որդիներն ուրախ
Տուն են դառնում ողջ, ազատ, միատեղ,
Բայց լուռ է նորից, գուսլեն ուսից կախ,
Լուռ է խնջույքի դահլիճը շքեղ։

Ինչպես բորենին՝ որսին ակընդետ՝
Զոքել է փաշան սադաֆե թախտին,
Իսկ Միրկոն, ինչպես ամպրոպ մթնաժետ,
Ըմբոստ Բալկանի խրոխտ ճակատին։

— Ո՛վ թշվառ գյավուր, գոռում է փաշան,
Երգի՛ր անհապաղ, հրամայում եմ,
Իսկ եթե չերգես, վկա է ալլահն,
Չորս զավակիդ էլ ցրցի կհանեմ։

Տեսնում է Միրկոն հեգ որդիներին
Իր աչքի առաջ ցրցի են հանում,
Սարսափն է պատում դժբախտ գուսանին,
Բռնում է գուսլեն ձեռքով դողդոջուն։

Աղեղն է հպում արծաթ լարերին,
Ճգնում է Միրկոն շարժել լարերը,
Չի հնազանդվում սիրտը աղեղին,
Եվ կարկամում են դալուկ մատները։

Ուզում է փրկել հեգ որդիներին.
Ճգնում է հյուսել փառքի դաստանը,
Չեն հնազանդվում խոսքերը սրտին,
Եվ կոկորդի մեջ խեղդվում է ձայնը։

Տեսնում է Միրկոն յաթաղանը կեռ
Փայլատակում է Սերբիայի վրա,
Եվ թեածում են ագռավները դեռ
Դիերով ծածկված դաշտերի վրա։

Միրկոն ցասումով կանգնում է ոտքի,
Զարկում է թափով գուսլեն հատակին,
Եվ երևնիվեր ահեղ փաշայի
Միրկոն հաղթական ճչում է ուժգին.

— Ո՛վ սրիկաներ, ճիվաղ, տմարդի,
Մորթեցե՛ք, լափե՛ք ավել, առավել,
Սակայն իմացե՛ք,
Որ ժողովրդի քնարը երբեք
Չի կարող սուել...

1937,
Երևան

ՀՈՏՆ ՈՒ ՀՈՎԻՎԸ

(Հայ ժողովրդական առասպել)

Ասում են, թե՝ կար ժամանակ, շատ առաջ,
Երկրի վրա գառ ու ոչխար չկային.
Լոկ դրախտի արոտներում հիասքանչ
Ապրում էին գառն ու մաքին երկնային։

Սիրուց լքված մի պատանի սրտաբեկ
Թափառում էր Արագածի լանջերում.
Թափառում էր անմխիթար, անընկեր,
Ինչպես զրկված իր եղբիկից եղջերուն։

Նվագում էր ջինջ սրինգով եղեգնի
Իր կարոտը, մենությունը տխրագին,
Թախանձում էր աղբյուրներին, ժայռերին,
Որ լինեին իրան ընկեր անմեկին։

Աղբյուրները հառաչելով ասացին,
— Գնացող ենք, ինչպե՞ս մնանք մենք քեզ հետ.
Եվ ժայռերը հառաչելով ասացին.
— Մնացող ենք, ինչպե՞ս գնանք մենք քեզ հետ։

Ոչխարները՝ հեզ ու բարի, լսեցին
Մրմունջները այն պատանու վշտահար.
Եվ մայելով՝ դրախտից դուրս վազեցին,
Երգով դյութված, եկան իջան լեռն ի վար։

Գառն ու մաքին բոլորվեցին նրա շուրջ՝
Սրտանվեր նրա քաղցր սրինգին.
Նրան խոնարհ հետևեցին ամենուր,
Եղան ընկեր սիրով, սրտով անմեկին։

Այն օրվանից սուրբ սարերում բույն դրին
Հոտն ու հովիվ՝ նվիրական ու արդար.
Այն օրվանից սուրբ սարերի բարձունքից
Իջավ բարին ու ծավալվեց ողջ աշխարհ։

1937 հոկտեմբերի 7,
Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԸ

(Ավանդություն)

Հայերի վրա զայրացավ աստված,
Որ նրանք ունեն թեև ճոխ հանճար,
Բայց չեն միաբան, և ոխով լցված,
Դավով, նախանձով ատում են իրար։

Եվ աստված պատժեց հայ ժողովրդին,
Եվ Հայաստանից հավաքեց տարավ
Գետեր, վտակներ, աղբյուրներ հորդուն,
Եվ թողեց հողերն անջուր ու ծարավ։

Եվ ասված ամեն դրանց փոխարեն
Բոցակեզ ժայռեր, առապար ու քար,
Եվ դարեր անդուլ զարկող խոտաղեմ
Մի նենգ հարեան, ամբարիշտ ու չար։

1910,
Երևան

ԱՌԱԿՆԵՐ

ԱՌԱԿ

(Ասավածաշնչից)

Ժողովեցան մի օր ծառ ու ծիլ բոլոր,
Որ իրենց համար ընտրեն թագավոր.
Շատ խորհուրդ ալ-ին ու դարձան ապա
Ասին ձիթենուն.—
— Եղի՛ր թագավոր, իշխի՛ր մեր վրա։
— Իմ ի՞նչին է պետք,— ասաց ձիթենին,—
Ես իմ գործն ունիմ, չէ՞ որ ամենին
Անոնդ եմ բաշխում իմ պտուղներով.
Ես ի՞նչպես իշխեմ իմ բարությունով։

Նորից խորհեցին ու դարձան ապա
Ասին թզենուն.—
— Եղի՛ր թագավոր, իշխի՛ր մեր վրա։
— Ո՛չ, ինձ հարմար չէ,— ասաց թզենին,
Ես հաճելի եմ չէ՞ որ ամենին՝
Քաղցրիկ ու անուշ իմ պտուղներով,
Ես ի՞նչպես իշխեմ իմ քաղցրությունով...
Խորհրդի նստան և խաղողենուն
Եկան դիմեցին։
— Ինչի՞ր եք ասում,
Թողնեմ իմ գինին՝ ոսկի ու պայծառ,
Որ ցնծությունով լեցնում է աշխարհ,
Զվարթ երգերով թնդում սար ու ձոր.
Ո՛չ, իմ բանը չէ՝ լինել թագավոր...

Երկար խորհեցին ծառ ու ծիլ բոլոր,
Որ չար տատասկին անեն թագավոր.
Ծառ ու ծիլ բոլոր հավաքված եկան
Եվ հեզ ու խոնարհ խնդիրքի կեցան.
— Եղի՛ր թագավոր, իշխի՛ր մեր վրա։
— Կընիմ թագավոր, և դրա համար
Իմ սուր փշերով ես շա՜տ եմ հարմար,
Կբխոցեմ խորին, վա՛յ նրա օրին,
Որ չընհնազանդի իմ օրենքներին.
Եկե՛ք, թուփիս տակ մտե՛ք ապաստան...—
Ասաց ու ել նրա փշերը դաժան...

1906,
Ղազարապատ

ՄՈՒՂԱՆ ՈՒ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

Մուղան եկավ կեսօրվա դեմ
Բաքնը ու ՝ղոր մինարեն.
Նեցուկ տված ձեռքն ականջին՝
Ուղղեց ուղղեց արարչին։

Հետո հենվեց շրջափակին,
Նայեց ներքև՝ քաղաքին.
— Գա՜հ, պա՜հ, մարդիկ ինչքա՜ն փոքր են,
Ասենքիս տակ հավեր են։

Նստում էին ու վազվզում
Մանուկները պարտեզում.
— Հե՛յ, մինարի ծայրին, ասե՛ք,
Միթա է նստել, նայեցե՛ք...

1910

ՀԱՅՈՒՅԶՆ ՈՒ ՄԱՀԸ

(Հայոմավուրից)

Մի մարդ էր փախչում հոգին բերանին՝
Իր հետն բնկած ահեղ դազանից.
Եվ փախչելիս նա ոտների տակին
Տեսավ մի խոր գուբ, որի շրթունքից
Մի թուփ էր ածել անդունդի վերա։
Եվ գուբն իջավ նա՝ թուփից կախվելով,
Ոտները խրեց խորշերում նրա,
Ու մի պահ զգաց իրեն ապահով։

Եվ երբ աչքերը նետեց նա վերև՝
Սոսկումով տեսավ, որ երկու մեծ մուկ
Մեկը՝ սպիտակ, և մյուսը՝ սև,
Փոխեփոխ կրծում, ուտում են ծոծուկ
Այն դալար թուփի արմատներին ամեն։
Եվ ուզեց տեսնել հատակը գուբի,
Ուր մկներն իրեն վար պիտի ձգեն՝
Մաշելով հիմերն փրկարար թուփի.—
Մարսափով տեսավ — ժիր խոտոշում
Մի դաժան վիշապ, ահավոր, ոձն,
Ժանտ երախը բաց, սև բոց է փնչում,
Իսկ խորշերի մեջ, ոտների ներքև,
Գալարվում էին կծիկն իժերի,
Որոնք շշալով վեր էին սողում՝
Գարշապարները խայթելու խեղճի,
Որ զարհուրանքից խիստ էին դողում...
Եվ երբ վերստին նայեց նա վերև,
Տեսավ՝ այն թուփից ծորում են անուշ
Մեղրի կաթիլներ, և մարդը թշվառ
Կորցրած ամեն փրկություն և հույս,
Սկսեց ծծել, ծծել անդադար
Ծորանքը մեղրի՝ քաղցր ու հմայուն։
Եվ այն ծծելով՝ անդուլ ու անհագ,
Մոռացավ իսպառ սարսափ ու սոսկում,
Իր բախտը դժխեմ, գազանին վայրագ,

Որ մոնչում էր իր գլխի վրա,
Ահեղ վիշապին, որ բոց էր փնչում,
Ժահրոտ իժերին, մկներին ագահ...

Այս թշվառ ոգին՝ կախված անկայան՝
Կյանքի — մահի մեջ, ո՛վ մարդ, այդ մենք ենք,
Իսկ գազանն ահեղ — կարիքն է դաժան,
Եվ այն գուբը մութ — աշխարհն է անելք.
Իսկ մկներն ագահ — գիշերն ու ցերեկ,
Որոնք կրծելով տուլիս են իրար
Մեր նյանքի թելերն և ուտում մեկ-մեկ.
Կծիկն իժերի — ցավերն անհամար,
Ախտ, հիվանդություն՝ մեր շուրջը հավերժ,
Իրենց թույները թափում են մեր մեջ։
Եվ վիշապն ահեղ — մահն է, գերեզման,
Մթնում դարանած և երախը բաց,
Ըսպասում է մեզ վաղ թե անագան.
Իսկ թուփը կյանքն է անհիմն և ունայն,
Որ բողբոջում է անդունդի վրա.
Եվ մեղրը անուշ — հաճույքն է նրա,
Որով արբեցած մոռանում ենք մենք
Աշխարհն ահալոր, մեր բախտը դժնյա,
Ցավն ու ժամանակ, գերեզման ու մահ։

1910,
Հաղբատ

ԳԱՅԼՆ ՈՒ ՍՈԽԱԿԸ

Այս վաղեմի չար աշխարհում,
Գարնան մի օր, լուսածագին,
Անտառի մեջ գայլը բռնեց
Սոխակին։

Գայլի ճմլող, սուր ճանկերում,
Նուրբ հույզերի երգիչը հնգ
Թպրտում էր ու ծղրտում
Սրտաբեկ։

— Գա՛հ, գայլն ասաց, հոչակ ունես,
Թե երգերի մեծ վարպետ ես.
Անուշ ձայնդ սա՞ է մի թե,
Սուտասա՛ն։

— Այո՛, ճիշտ է, սոխակն ասաց,
Վարպետ եմ ես հռչակավոր,
Բայց միայն թե՝
Մայր բնության ազատ գրկում,
Եվ ո՛չ դաժան քո ճանկերում,
Ո՛վ գազան։

1915,
Ժնև

ՄԻ ՀԱՐՑՈՒՄ

Մի քահանա կիբաչմուտին
Քարող խոսեց իրեն հոտին.—
— Ասուած փոխ է թե՛ ցամաք, թե՛ ծով
Իբրև ձոխ սեղան աւատ բերքերով,
Որ այսպես իրեն
Լափնելն ամեն՝
Մարդ թե անասուն,
Ձկներ ու թռչուն,
Ուտեն, լիանան
Եվ իրեն փառք տան...

Ժողովրդի միջից հանկարծ
Քահանային տրվեց մի հարց.—
— Տեր հա՛յր, չգիտեմ,
Խնդրում եմ պարզես,
Այն կեր գնացող էակները խեղճ,
Տկար կամ շնչին,
Պե՞տք է որ նույնպես
Փառք տան արարչին...

1922,
Վենետիկ

ԱՌԱՆ ԱՂՎԵՍԱԳՐՔԻՑ

Զարամանկ կատուն ձգեց իր վզքան
Փիլան մի անգամ,
Դարձավ կարգավոր
Եվ ուզեց պատգամ
Մլկնիներին բերեր.—
— Մի՛ վախեք, ասաց, ինձնից այսուհետ,
Չբզրամ եմ ուրիշ,
Սուրբ կարգ եմ առել՝
Արյան չթափեմ, և ձեզ հետ հավետ
Եղբոր պես ապրեմ
Սիրով մրտերիմ։

Մլկները նրբան տրվին պատասխան.
— Տեսնում ենք, իրավ,
Մրտել ես կարգը աբբա Մարկոսի,
Բայց առա մի՛ խոսք,
Չես փոխի բնավ
Քո դաժան բարքը, անբարգարծ վարքը։

1922 ապրիլի 28.
Վենետիկ

ՎԱՐԱՋՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ

Վարազը ժեռուտ քարերի վրա
Անխոնջ եռանդով
Սրրում էր մեկ-մեկ ժանիքներն իրա։
Հեգնաղ ժպիտով
Աղվեսը նրան հարց արավ, ասաց.
— Ո՛վ կարիճ եղբայր,
Ո՛չ կավի բար կա և ո՛չ էլ կտուկած,
Ի՞նչ ես վազբտրար
Ցով-քարերը մեկ ու քեզ շարշարում։
Իսկ վարազն այսպես պատասխան տվավ.
— Ամբողջ աշխարհում
Խորամանկ, խելոք

Հանկ ես համբավ,
Բայց խելքդ, ինքդ,
Հավնոցից հեռու չի անցնում քնավ։
Զինվորը պիտի
Խաղաղության մեջ և ո՛չ թե մարտի
Ձեռքերը սրե, և պատրաստ ու կապմ՝
Աշալուրջ լինի։
Գիտցի՞ր, որ ժանդն է ծնել պատերազմ.
Սրբած թրի դեմ դուրս գալ ճակատի
Թշնամին նվազ ախորժակ ունի։

1922 օգոստոսի 14,
Վենետիկ

ԿՑԱՆՔԻՑ ԹԱՆԿ ԲԱՆԸ

Վայրի աղավնին՝ կուրծքը վիրավոր՝
Ընկել էր մենակ աղբյուրի եզրին,
Ծորում էր շիթ-շիթ արյունը բոսոր.
Մեռնում էր, աչքը՝ ջրի երազին։

Քնքուշ պարիկը տեսավ դալկահար
Մեռնող աղավնուն և խոսեց ալպես.
— Տո՛ւր ինձ այն, ինչ որ թանկ է քեզ համար,
Է՛ն թանկագինը, կյանք տամ իսկույն քեզ։

Մեռնող աղավնին խորհում էր ինքնին.
— Է՛ն թանկագինը՝ կյանքն է, անպատճառ.
Ախ, ծաղրում է ինձ աղբյուրի ոգին։
— Է՛, լավ, Թո՛ղ լինի, տո՛ւր և նորից առ։

Պարիկը ցողեր սրսկեց վերքին,
Աղավնին բացեց աչքերը ոսկի,
Ու թևին տալով ծափեց խնդագին.
— Ե՞րբ կուզես կյանքըս, նազելի ոգի։

— Թևերդ կուզեմ, կյանքդ թեզ լինի։
— Թևերդ՞ա... ինչպե՞ս, ոհ, երբե՛ք, երբե՛ք.
Առանց թռիչքի կյանքը ոչն չունի.
Կյանքս առ,— թռչունն ասաց սրտաբեկ։

— Ո՞ւր, սիրելի՛ս, ապառ ու վայրի,
Ո՞ւր ու ասա սարուկ աշխարքին,
Թե ի՞նչն է թանկը կյանքից ավելի...
Ասաց ջրերի լուսեղեն ոգին։

1921 փետրվարի 20,
Վենափկ

ԱՐՋՆ ՈՒ ՕՁԸ

Ինչպես եղավ, որ մի անգամ
Արջն ու օձը դարձան ընկեր,
Ընկեր դարձան ու բարեկամ։

— Մեկս քնի,
Մեկս հսկի,
Իրար շահենք,
Իրար պահենք,
Ընկերովի կյանք վայելենք։

Այսպես ասին, երդվեցին,
Իրար աղնիվ խոսք տվեցին
Օձը՝ արջին, արջը՝ օձին։

Անցավ այս կերպ մի ժամանակ։
Եվ շարունակ
Երկու ընկեր սիրով, սրտով
Նստան-կեան ու քուն մտան
Կարգով, հերթով։
Սակայն օձի սողքը բեկբեկ
Դուր չէր գալիս արջին երբեք։

Օրվա մեկը արջը ժայռին
Թիկն էր ավել արևկողի,
Հանկարծ օձը՝ ոլոր-մոլոր
Եկավ, ասես, գաղտագողի։
Վախ ու կասկածն առավ արջին,
Ելավ կանգնեց նստած տեղում։
— Ես ծուռ ու մուռ գնացողին,
Ընկեր լինի թե կաթնաբերը,
Չէ, չեմ սիրում, ես չեմ ուզում։
Գոռաց արջն և թաթն ուժգին
Դրեց, սեղմեց օձի գլխին
Ու մյուս թաթը օձի մարմնով
Մինչև պոչը քաշեց թափով.
Ապա մոտիկ հոսող գետին
Հանձնեց օձի անկենդան դին։
Եվ նայելով ջրերի հետ
Նեռի նման սողող օձին՝
Գոհ մրթմրթաց բեղերի տակ.
— Ա՛յ, ընկերը էսպես շիտակ
Պիտի լինի,
Դե՛հ, շիփ-շիտակ գընա հիմի։

1927,
Երևան

ԿԱՔԱՎԱՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ

Կաքավը մի օր քարից քար անահ
Ճատկելով, խաղով ոտ դրնց հանկարծ
Քարերի միջին միամիտ քնած
Աղվեսի վրա։
Սոսկալի տրկած։
Հազիվ մի վայրկյան,
Կաքավն աղվեսի գրկումն էր գաժան։
— Բախտն որ ուզենա,
Քնած տեղդ էլ
Քո դուռը կգա։

Անոթությունից քուն էի մտել,
Բայց ասված հոգաց.—
Զվարթ քրքիջով աղվեսը ասաց։
— Ասածու համփածն եմ, այդ լավ գիտեմ ես,
Դո՛ւ, ասվածընտիր, դո՛ւ, օրհնյալ աղվես,—
Երկյուղած ասաց կաքավը նրան.—
Նան գիտցիր դո՛ւ,
Որ ուտել առանց պատճառն փառք տալու,
Մեծ մեղք է հոգուդ։
— Իրավ ես, տնշուշտ,
Աղվեսն հավանեց, և ձեռներն իսկույն
Բարձրացրեց վեր և բազկատարած,—
Փառքդ շատ, ասված...—
Աղոթքն ըսկսեց, հաղիվ ոկսած՝
Զարմանքով տեսավ
Ժայռի էատարին
Կաքավը թառած՝
Նրգում է ուրախ.—
«Շաղկդա՜, կաղկդա՜...»։
Ի՜նչ ծաղր ու ծիծաղ...
Զայրույթով լցված
Աղվեսը զարկեց գլուխը քարին՝
Դառնասիրտ ասաց.—
Տեղն է հիմարին,
Թող քաղցած մնա։
Եվ աշխարհիս մեջ թող անիծվի նա,
Ով դեռ չկերած՝ ասածուն փառք կտա։

1932,
Փարիզ

ԷՇՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆ

Մի օր մի գեղջուկ, ամառվա շոգին,
Էշն առաջն արած՝
Դաշտով ու ձորով,
Քրտինք ծորելով,
Գնում էր շտապոց։

Ու գնում էին ամառվա շոգին
Տերը հոգսի տակ,
Էշը բեռի տակ
Կքած երկուսով։

Իրենց բախտին էր — Համփու հեքիաթին,
Ծառերի միջով,
Անուշ կարկաչով,
Հոսում էր մարմանդ, ինչպես մի գեղյուս,
Մի բյուրեղ աղբյուր։
Էշը՝ ներքևից, գյուղացին՝ վերից,
Անհագ խմեցին բարի աղբյուրից,
Խմեցին անվերջ, նորից խմեցին։
Ապա գյուղացին
Իշու վրայից բեռը դրեց վար,
Ու թողեց նրան սեղի մեջ դալար։
Ու ինքն էլ պառկեց ծառի շվաքում,
Եվ մի թեթև քուն
Աչքերն սթոցեց։

Երբ խոնջենքն առած՝ աչքերը բացեց,
Երկյուղով տեսավ, որ Համփու ծայրին
Շատ կասկածելի երկու մարդ, զինված,
Ցցվեցին հանկարծ։
«Գողեր են», ասաց գեղջուկն ինքն իրեն
Ու ցատկեց տեղից.— Էհ, իշու կտոր,
Շուտ արի, բեռդ բառնանք ու փախչինք։
— Այսպես շտապով... Ի՞նչ պատահեց որ...
Կրակ է դառել երկինք ու գետինք.
Սպասենք քիչ էլ։
— Գողեր են գալիս, ա՛յ էշ-ավանակ։
— Ինձ ի՞նչ գողերը։ Թող գան, երթան էլ։
— Ինչպե՞ս թե՝ «ինձ ինչ». հենց քեզ կտանեն։
Դեհ շուտ, շուտ արա. չկա ժամանակ։
— Ինձ ի՞նչ՝ կա, չկա։ Գնա քո բանին.
Ինձ համար մեկ է, ուր էլ որ տանին,
Իմ վրաս նորից բեռ են դնելու,

Հոգիս հանելու Մնչ ունեմ հիմա,
Այս կնճ-կրակին հե-հե վաղ տալու...

Պատասխան տվեց նշը գնդակին
Եվ սեղեի մեջ, ծառերի շուքին,
Թավալվեց գլարբ՝ կոնակի վրա։

1932,
Փարիզ

ԱՂՔԱՏՆ ՈՒ ՔԱՐԱՎԱՆԸ

Շարվեն շարան,
Ուղտերի ձիգ մի քարավան՝
Բեռնավորված հաղար տեսակ
Բարիքներով ու բերքերով,
Ապրանքներով մեծաքանակ,
Գալարվում էր ձորերն ի վար
Եվ հյուսվում էր լեռներն ի վեր։
Եվ շարժելով գլխ ու զանգակ
Սփռվում էր զողանջելով,
Շարվեն շարան,
Ծանրաբեռն մի քարավան։

Մի ձորի մեջ՝ խոր ու խավար,
Ուր ժայռերն են պատ ու պատվար,
Սպառաժներ՝ բարձր ու լերկ,
Քարավանի վերա հանկարծ
Գրոհ տվին՝ դարան մտած՝
Ավազակներ սուսերամերկ։
Կողոպտեցին, ավար առան
Թանկարժեք բան՝ ինչքան որ կար —
Ոսկի, գոհար, լալ ու մարջան,
Մետաքս, ատլաս ծաղկանկար։
Աղիողորմ լալիս էին
Ճամփորդները պաղատագին...

Մինչդեռ այնտեղ,
Ավարառու աչքից լքված,
Մի աղքատ մարդ,
Պարիզ գրեց գլխատակին,
Գտակեց հանգարտ,
Սիրտց՝ անդորը
Ու մտմտաց իրեն մտքում.—
— Ահել է որ,
Փողի, զորի այս աշխարհքում
Անտուն-անտեր աղքատ մարդն էլ
Իր հանգիստ օրն ունեցել է...

1932,
Փարիզ

ԱՂՔԱՏ ՄԱՐԴՆ ՈՒ ԱՍՏՎԱԾ

Թույլ ու դալուկ
Մի աղքատ մարդ
Դեգերում էր պատերի տակ
Մեծ տների շքեղազարդ։

Երբ զանգերը եկեղեցու
Երեկոյան զոզանջեցին,
Աղքատ մարդը գդակն հանեց
Եվ փառք տվեց
Բարիքների պարգևողին։

Սակայն ասված
Աղքատ մարդու փառաբանքին
Չըհավատաց։

1932 հոկտեմբերի 8,
Փարիզ

ՊԱՐԾԵՆԿՈՏԸ

— Չգիտեմ, եղբայր, ո՞ւժ է, թե՞ շնորհ,
Թեհրանում էր, որ
Բռնեցինք գրազ,
Մեկ շնչով հանդարտ
Թռա քառասուն գազ,—

Սրճարանի մեջ ասում էր մի մարդ,
Որ նոր էր դարձել Իրան ու Թուրան
Կատարած հեռու ճամփորդությունից։
— Իրա՞վ ես ասում,— հարց տվին նրան
Սաստիկ զարմացած ամեն մի կողմից։
— Ի՞նչ կա զարմանք բան,
Այնտեղ Թեհրան,
Մարդիկ գեռ ողջ են, քաղաքն է վկա,
Քառասուն գազ թռա
Եվ գրազն առա։
Այո՛, ո՛չ մի մազ
Ավել կամ պակաս,
Ուղիղ քառասուն գազ։

— Ես հավատում եմ,— խոսք առավ մի մարդ,—
Այս աշխարհի մեջ չեղած բան չկա,
Սակայն, սիրելիս,
Էլ ի՞նչ կարիք կա՝
Վեր կենալ երթալ հեռավոր երկիր՝
Գտնելու վկա։
Այստեղ էլ գազ կա, այստեղ էլ գետին,
Դու էլ այստեղ ես, դե՛հ, չափենք՝ թռիր.
Տե՛ղ տվեք, տղե՛րք,
Գազը մեջ բերեք։
Սակայն ո՞ւր գտնես թռչող կտրիճին,
Մի վայրկյանում նա ծոից թե առել,
Ո՞ր պատուհանից, արդյոք, ո՞ր ծակից
Արդեն քառասուն փարսախ էր թռել։

1932 հոկտեմբերի 14,
Փարիզ

ՄԱՐԴՆ ՈՒ ՏԱՐԵՐԱԸ

Փոթորիկ էր ծովի վրա։
Ալիքները շաչում էին
Եվ լեռնանում փրփրագեղ։
Եվ փլչելով իրար վրա՝
Իջնում էին մռայլ անգունդ։

Եվ գունդագունդ,
Խոժոռ ամպեր կայծակնալից՝
Խուժում էին խոլ երկնքից
Եվ որոտում որոտապին։

Նավակի մեջ մի խեղճ ձկնորս,
Օրհասական թոհուբոհում,
Անիծում էր իր բախտը չար,
Որ հատկապես իրեն համար
Խառնվել են տարերքն իրար։

1932 հոկտեմբերի 23,
Փարիզ

ՄԻ ՄԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Իր թաքստից՝ մթին ու խոր,
Մկան մկը ելավ մի օր,
Գանգատ գնաց բնության մոտ.
— Քո դեմ, ասաց, գանգատ ունիմ,
Ո՛վ բնություն.
Այս ի՞նչ բախտ ես վիճակել ինձ.
Առջևս՝ մահ,
Սրտիս մեջ՝ ահ,
Հանգիստ չունիմ
Դաժան ու չար
Կատուներից։
Կամ հոգիս առ
Եվ կամ դարձրու
Ինձ էլ կատու։

Գոծան ու չար կասու դառած՝
Մուկը վազեց մտավ մառան,
Շուրջը սփռեց այնքան երկյուղ,
Որ մկները թավալուխ,
Ծակ ու ծերպեր շունչներն առան։
Բայց շներից հալածական
Փախավ, եկավ բնության մոտ։
Կամ հոգիս առ։
Կամ ինձ դարձրու
Շուն ահարկու։

Եվ ահարկու գամփռ դառած՝
Մուկը վազեց, մտավ փարախ,
Գայլերի հետ կռվեց անվախ.
Բայց երբ լսեց զարհուրելի
Մանչյունը վեհ առյուծի,
Լեղաբեկառ
Իրեն ձգեց բնության մոտ...
— Կամ հոգիս առ,
Կամ ինձ դարձրու
Ահեղ առյուծ,
Որ վախ չունի
Ոչիշ և ոչ մի կենդանուց։

Առյուծ դառած՝ խրոխտ ու սեզ,
Մուկը գնաց, մտավ անտառ,
Անցավ դաշտեր և առապար,
Մահ տարածեց ամենուրեք։
Սակայն մի օր մարդը հանկարծ
Առյուծի դեմ հպարտ ցցվեց.
Առյուծն ահեղ՝ կռվի պատրաստ՝
Բաշը ցնցեց։
Սակայն մարդը կայծակնաթափ
Հուր արձակեց — ամպ ու որոտ։
Եվ առյուծը մահախուճապ,
Շունչը առավ բնության մոտ.
— Միայն, միայն մարդ դարձրու ինձ.
Նա է հզոր մեր բոլորից,
Նա է տերը մեր բոլորիս։

Եվ մարդ դառած մուկը դինվեց
Հրով-սրով սպառնալից.
Ամեն մի շունչ ու կենդանի
Փախչում էին նրա շուրջից։
Բայց ավելի մեծ սարսափով
Վախում էր նա հիմա սատանի
Իր նմանից։
Տեսավ՝ մարդիկ
Իրար ահից
Չեն երկնչում, կարծես, մահից
Օդն են ելնում ամպերից վեր
Եվ սուզվում են ծովերի տակ։
Բնդանոթով և ռումբերով
Եվ թույներով հաղար տեսակ
Ջինվում են ու դինավաճվում։
Եվ օրից օր վնասներով նոր
Ջինվում են ու նորից դինվում։
Եվ բյուրավոր
Բանակներով
Հարձակվում են իրար վրա,
Եվ խելագար,
Անհաղաբար,
Կոտորում են,
Կոտորում են,
Կոտորում են
Մարդիկ իրար...
Եվ ահաբեկ խորհում էր նա.
— Լավ չի՞ արդյոք,
Որ վերստին
Մուկիկ դառնա...

1939,
Փարիզ

ԹԱԳԱՎՈՐԻՑ ՓԱԽՉՈՂԸ

Թագավորը այցի եկավ
Իր հարկատու,
Գահին հլու
Գավառներին, քաղաքներին
Մոտ ու հեռու։

Ճոխ ասպետներ — հիտևորդներ՝
Հագած-կապած զենք ու ասպաք,
Հիծած ընտիր նրժուլդ ձիեր՝
Արծաթասանձ ու ոսկեսաք։

Երբ ամբոխի ցնծությամբ տակ
Թագավորը շքախմբով
Մի քաղաք էր մի օր մտնում,
Այն մյուս դռնից ելավ Ճնպով
Մի խոնարհ մարդ՝ վախը սրտում։
Եվ վազում էր փախչում էր պինդ՝
Հոգին բրդի մեջ հավաքած,
Հալածական նրան պես,
Կածաններով, շավիղներով,
Անտառներով խոր ու անտես։

Մի մարդ կանգնեց նրբա առաջ.
— Է՜յ, դու, կեցիր, մարդը ասաց,
Դու ոնիր ես գործել, գիտեմ,
Որ փախչում ես գլուխդ առած։

— Ես մի արդար, անմեղ մարդ եմ,
Հաց եմ կերել իմ քրտինքով,
Բայց փախչում եմ Թագավորից,
Որ փառահեղ հանդեսներով
Այցի եկավ մեր քաղաքին։
Հասկացի՞ր ինձ,
Եղբա՜յր անգին.
Նրբա ուժը՝ իմ ուժից շատ,
Նրբա խելքը՝ իմ խելքից քիչ։

Է՜հ, ի՞նչ լինի, ի՞նչ չլինի,
Թագավորից
Ինչքան հեռու, այնքան բարի։

Եվ նա նորից
Վազեց, սուրաց
Հետապնդված երեի պես
Կածաններով, շավիղներով,
Անտառներով խոր ու անտես...

1935 օգոստոս,
Թուրք (Փարիզ)

ԱՔԼՈՐՆԵՐԻ ՎԵՃԸ

Երկու հոխորտան աքլորների մեջ,
Մի կուտի համար թե մի վառեկի,
Ծագեց այնպիսի դժնդակ մի վեճ,
Որ բանը հասավ դանակ-դանակի։

Ճիչ ու աղաղակ
Հավնոցի դռան,
Աղմուկ ու ժխոր
Աղբյուսի վրա...

Կացահարեցին իրարու կատաղ,
Բոսոր փետուրներ օդի մեջ թռան,
Լանջ ու պարանոց — մերկ, արյունլցվա։
Եվ դեռ հոսում էր արյունն անդադար—
Աքլորներից մին թափով կատաղի
Ջարկեց ու կոտրեց թևը ոսոխի։
Եվ թևաթափը՝ պարտված, նքկուն,
Փախավ, պահվըտեց
Մացառների մեջ,
Իսկ հաղթանակող աքլորը փքուն
Բարձրացավ բարձր մի պատի վրա
Եվ թափահարեց թևերը ցնծուն
Եվ երգեց գոռոզ՝ հաղթանակն իրա։

Բայց այդ միջոցին
Ահարկու մի ցին
Լրանց աքլորի կանչը սքնապարծ,
Նետի պես սուրաց, խշավ սրբարշավ,
Կորզեց հաղթողին, թռցրեց տարավ...

1935,
Փարիզ

ԱՌԱԿ

(Ըստ Լոխմանի)

Մի մարդ անցնելիս անտառի ափով
Լսեց ոչխարի անհույս լաց ու կոծ.
Հայացքը շրջեց՝
Տեսավ, որ մի գայլ՝ ահավոր ու մեծ,
Ոչխարին բռնել՝ քաշում է թափով
Դեպ անտառը մութ։
Մարդը շուտափույթ
Մահակի զորեղ զարկերով անշեղ
Փշրեց գայանի գլուխն ու ժանիք,
Եվ ոչխարն առած՝ ուրախ գնաց տուն։

Գիշերն ոչխարը քնեց երջանիկ.
Մյուս օրը, սակայն, վաղ առավոտյան,
Մարդը սուր սրեց դանակն ահագին,
Թշվառ ոչխարին վայր զարկեց գետին,
Դանակը սրած
Դրեց կոկորդին.
Ոչխարը՝ ապշած
Նայելով մարդու աչքերին մռայլ,
Հառաչեց, ասաց.—
— Երեկ փրկեցիր ինձ գայլի ձեռքից,
Բայց այսօր, ո՛վ մարդ, դո՛ւ ես դարձել գայլ...

1938 սեպտեմբերի 18,
Մաղկաձոր — Երևան

ԱՅԾՆ ՈՒ ԳԱՅԼԸ

Այծը կանգնել էր
Բարձր ու ապալեր
Ժայռի կատարին,
Իսկ ըստորոտում գայլը անդադրում
Շրջում էր, տքնում ժայռն ի վեր Լնկ,
Սակայն ապարդյուն։

Այծը վերևից
Սուր հղջյուրները ցրցած զայրագին
Խիստ ըստորոնալից
Ասում է գայլին.
Ա՜խ, դու սրիկա, ինչպես կուզեի
Էս կոտոշներըս փորդդ խրեի։

Քնքշություն տալով գայլը իր ձայնին
Պատասխանում է պարծենկոտ այծին.
— Բա ե՞ս, սիրելիս, ի՞նչքան երանի
Կըտայի սրտանց էն օրհնյալ ժամին,
Որ կոտոշներդդ փորըս լինեին։

1939 հուլիսի 27,
Մաղկաձոր

ԳԱՅԼՆ ՈՒ ԵՂՆԻԿԸ

Գայլը ճանկել էր մի մատաղ եղնիկ,
Ակռաները խոր
Խրել էր նրա քնքուշ մարմնի մեջ,
Եվ ապա մեղմիկ
Լիզում էր նրա վերքը արնածոր։

Թշվառ եղնիկը ձայնով օրհասի
Ասում է գայլին.
— Ինձ թշնամու պես

Վերք ես հասցնում,
Եվ ընկերի պես
Վերքըս հանքարարում։
Չեմ հասկանում քեզ՝ ի՞նչ հարգ ունի ես։

1939 հուլիսի 28,
Մաղկաձոր

ԱԶՐԱՅԻԼ ՍԱՀԱԿԱՆ ՀՐԵՇՏԱԿ

(Արաբական առասպել)

Երբ աստված խորհեց ստեղծել մարդուն,
Լույս-Չիբրայիլին ուղարկեց երկիր.
— Գնա՛, ասաց նա, և իմ անունով
Երկրից մի բուռն կավահող ուղիր։

Երբ կավը վերին՝ երկիրն իմացավ,
Ողբաց դառնագին.— Ո՞հ, ինչ մեծ արհամ,
Ի՞նչ մեծ պատուհաս, ինչքա՜ն փիշտ ու ցավ
Պիտի կրեմ ես, ավա՜ղ, այսուհետև.

Մարդիկ պիտ աճեն, անհուն բազմանան,
Եվ պիտի դառնան դաժան ու ագահ,
Եվ իրար ատեն, խաբեն, գողանան,
Եվ արյուն թափեն իմ երեսի վրա...

Չե՛մ ասա... Ծո՛ղ աստված ինձ պատժե խստիվ,
Բայց աղերսում եմ նրան չապտին՝
Կասելու գալիք տանջանքներն անթիվ,
Որ մարմին չտա իր այդ բաղձանքին...

Զայրացավ աստված և հղեց երկիր
Վեց Ազրայիլին՝ անողորմ, ասիր,
Որ երկրի ողբին խիստ անկարեկիր՝
Կորզեց բռնաբար մի բուռն կավահող,

Եվ աստված կավից կերտեցով մարդուն,
Իբրև վարձ ոգեց վեց հրեշտակին՝
Անհամեմ իրավունք՝ բռնի կորզելու
Մարդկանց անհաղորդ, մշտամարտ հոգին։

1940 մարտի 5—8,
Երևան

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԽՈՍՔ

Բուրաստանի ծեր պահակին
Մի անցորդ մարդ դիմեց խնդրով.
— Մի վարդ տուր ինձ՝ դնեմ կրծքիս,
Ուրախանամ այդ պերճ զարդով։
Մի ցավագին սարսուռ անցավ
Ծեր պահակի և վարդերի
Սրտի միջով.
— Ո՞վ, բարեկամ, կարելի չէ,
Ես ո՞ր վարդը, ասա, քաղեմ,
Որ մյուսը չրհարաշեն։

1946,
Երևան

ՍԱՏԱՆԱՆ ՈՒ ԻՐ ԱՂՋԻԿՆԵՐԸ

(Միջնադարյան հայ առակ)

Սատանան ուներ երեք հատ աղջիկ,
Նաև մի աղջիկ՝
Ջվարթ, գեղեցիկ։
Հասել էր նրանց մարդու գնալու
Ժամանակն արդեն,
Եվ հայր սատանան
Երեց աղջկան անվանեց «Գոռոզ»՝
Տալով կնության իշխանավորի։
Երկրորդ աղջկան անվանեց «Ագահ»՝
Տալով կնության վաճառականի։

Նրրորդ աղջկան անվանեց «Նախանձ»՝
Տալով կնության արվեստագետի
Իսկ գեղեցկուհուն «Սեր» կոչեց հայրը՝
Եվ տվեց նրան ամբողջ աշխարհին։

1915 հունվարի 18,
Երևան

ԻՄԱՍՏՈՒՆ ԳՈՀԱՆ

(Ժողովրդական առասպելական ասակախոս)

Իմ հին բարեկամ իմաստուն Գոհան
Եղավ որ մի օր վաղ առավոտյան
Էշ նստած՝ գյուղից գնում էր քաղաք.
Գլուխը՝ տր՛մբ-տր՛մբ, ականջները՝ կախ,
Քայլում էր էշը հանդիսավոր ու դանդաղ։
Աշխարհքի բանը խորհում էր Գոհան։
Աշխարհքի բանը խորհելով անվերջ,
Աչքերը գոցել, քնել էր կարծես
Հանգիստ ընթացող իշուկի վրա։
Իր գյուղից մի մարդ տեսնում է ահա՝
Գնում է Գոհան իշուկին նստած,
Առապարներով քար ու ապառաժ
Քաղաքից, գյուղից անչափ հեռացած։
— Ինչ ունիս, ա՛յ մարդ, էս չոր, ամայի,
Առապարներում,—

Զայնում է ուժով համագյուղացին,
Խոհերի միջից հանում Գոհային։
— Այո՛, սիրելի՛ս, խելքս տվեցի
Աշխարհքի բանին, կամքս էլ՝ իշուկին,
Բերեց գցեց ինձ այս չոր, ամայի
Առապարները,—

Պատասխան տվեց
Իմ հին բարեկամ իմաստուն Գոհան։

1952 հունվարի 27,
Երևան

ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊՈԵՄՆԵՐ

ՈՂԲՈՒՄ ԵՄ

Ողբում եմ դառն վիճակդ տխուր, ո՛վ հայ ժողովուրդ, տանջանքիս աղբյուր։

Եվ ո՞վ կուտա ինձ արցունք ծովերով՝ լալու երկիրդ արյո՛ւն ու թափո՛ւր...

Հի՛ն-հի՛ն դարերից, խավար դարերից, դաժան ու դժար ճանապարհներով՝ քո հոգու, մտքի ինքնուրույնության և ազատության վեհ գործի համար դու մաքառեցիր՝ միշտ մպլցնելով դեպի անհունը, դեպի լույսն անմահ...

Ավա՜ղ, խավարը և չարը դժնյա և այս աշխարհիս գոռ հզորների ուրն ու բռունցքը խորտակեցին քեզ, և նվիրական խոր վերքը սրտիդ և մարտիրոսի պսակը ճակտիդ ընկար դու անհաղթ, բազմատանջ վկա, կատարելության մեծ շավղի վրա...

Եվ ազգեր եկան ոստերով դալար՝ ճախրելով դեպի արևը պայծառ և քո վրայով ընթացան հառաջ. և ազգեր եկան, ազգեր գնացին, վերբերդ տեսան և չքուժեցին, և քեզ իրենց հետ չվերցրին, տարան...

Եվ ո՞վ կուտա ինձ արցունք ծովերով լալու վիճակդ դառն, անօրինակ, իմ հեռ հայրենիք՝ ավեր ու ավար, ընկած ոտնատակ, աչերդ՝ պղտոր, երկինքդ՝ խավար, բռնավորների զարկի նշավակ...

Իմ վե՛հ հայրենիք, հովի՛տ թախծության, արյուն-արցունքի օվկիանոս անծիր, որ ծանրացել ես հազար տարիներ մարդկության մեռած, քար խղճի վրա և փոթորիկաշունչ բուռն հորձանքով ճգնում ես փշրել զայրույթդ պատող ափերդ հակա...

Ողբում եմ դառն վիճակդ տխուր, ո՛վ իմ վիրալից, խոցված հայրենի՛ք. շինականներդ, որ հոդդ են հերկում արյուն-քրտինքով և քաղցած

նստում, և հարուստներդ, մեծատուններդ՝ վայելում, գիրկդակ, ուրախ ու տմարդ, և արծաթասեր, իսկ գիտուններդ՝ ոգու այդ նանիր հեղգ գաճաճները, որոնք կույր ու գոլ օրհասով հանգչեք, որոնք մոռացած քո արյան ծովը թե կաճառներում փուչ ամբիոններիդ ճչում են անվերջ ունայն, սնամեջ զառանցանքներից, բարբաջանքներից՝ դարավոր և մայրենի խոսք, մայրենի երկիր. վա՛յ գիտուններիդ, որոնք շան նման՝ այն ազատարար ձեռքն են կծոտում, որն իրենց վզի շղթան է կոտրում, որոնք՝ ապերախտ ստո՛ղ, դավաճան...

Առաջնորդներդ, որոնց թիկունքն է թշնամին տեսել և խղճահարվել, որոնք, սիրելիս, քո դյուցազնոգի վեհ որդիներիդ, նահատակներիդ, այն, որ նվիրված, քո վերքով վառված, արյունովդ օծված՝ հրեղեն սրեր — թռել են անվախ վիս բարձունքները կյանքի ու մահի՝ քո սիրո համար — նրանց ծաղրում են և նախատում են, և անգիրեզման, և անհիշատակ սև մոռացության անդունդն են նետում. առաջնորդներդ, որոնք թափում են շրի արտասուք սուրբ վերքիդ վրա։

Ողբում եմ դառն վիճակդ դժնյա՝ շարի, բռունցքի ոտ հազարամյա, ընկած ազգերի մեծ ճամփու վրա...

Ողբում եմ նորից քո արտասվելի վիճակդ անգութ, դու խավարի մեջ միշտ լույս որոնող, իմ հա՛յ ժողովուրդ — արդ առավոտից մինչև առավոտ ոտներիդ ներքև ես քեզ եմ հսկում անքնոջ ու անքուն՝ քո շունը որպես...

Գիշերը մինչև լույս վանում եմ հեռու վերադ արշավող ոհմակը գայլի, ցերեկը, սակայն, թշնամիներիդ սրունքն եմ կծում, երբ քեզ են կոխում...

Վե՛ր կաց, ոտքի՛ էլ, փոթորիկներից անընչաք կաղնի դո՛ւ գերմարդկային, դո՛ւ գերբնական տառապանքների երկաթե ոգի,— դու պե՛տք է ապրես, դու կուզե՞ս ապրել։

Եվ վերջդ պակիր, տա՛ր ինձ, սիրելիս, և գոռանալվիր և խրոխտ ու վեհ կոչնակդ հնչե՛, թող եղբայրության, և իրավունքի, և ազատության զանգը պրոտա քո երկաթեղեն լեռներիդ վրա...

Զայն տուր քո ընտիր, քաջ որդիներին, որ մոնչում են շղթաների տակ, փուռ գնդանոցներում, անապատներում, սառցե դաշտերում, ձայն տուր, և նրանք՝ խորտակած կապանք՝ դեպի քեզ կուգան։

Ձա՛յն տուր քո վսեմ, վեհ սրդիներին, որոնք ընկած են կռվի դաշտերում, կախաղանների, կացինների տակ, և՛ գնդակահար, և՛ արախոխող, ձա՛յն տուր, և նրանք նիկենդանանան և կրակի պես կսլանան, կուգան...

Եվ քո դարավոր ցասման, դայրույթի ամպրոպի շանթը արձակե հիմա, ջախի՛ր, ջախջախի՛ր բռունցք ու շղթա, նոր արև վառի՛ր մեր խավարած, հոգնած բրբերին, և՛ ազատության, և՛ արդարության վառ դարունը բեր մեր ամեր երկրին, ստեղծագործության և ոգեվառման երազ-թևերով մեր ոգին թռցրո՛ւ ափերը հեռո՛ւ...

Դու պե՛տք է ապրես, դու կուզե՞ս ապրել. ո՛վ դու ախոյան լույսի, գեղեցկի. կռվի՛ր, ողորել դու վաղո՛ւց գիտես,— փշրի՛ր, փոշիացրո՛ւ օրենք ու կուռքեր, բարվո և չարի տախտակները հին, և բազմաչարչար քո հոգու խորքից ստեղծագործի՛ր ոգու սավառման մի նորոգ աշխարհ՝ բոլոր տառապած, բոլոր խոշտանգած, ծարավի, ցավի մեր ոգիների փրկության համար...

1906

ՍԻՐԱՀԱՐ ՔԱՄԻՆ

Մի օր մեղմաշունչ մի քամի նուրբական բարձունքներից վար սահելով անցավ փարավոնների բուրգերի վես հակատների վրայով, իջավ ոսկեալիք Նեղոսի ափերը և մի վայելչակազմ ու դեռատի արմավենու ոտների տակ փռվեց հեհհև.

— Իմ հրաշագեղ, իմ անման թագուհի, ես քեզ սիրում եմ. ես՝ աշխարհի անանձ և ըմբոստ ոգին՝, ահա նաղելի ոտներիդ տակ մարում եմ... Երբ հորիզոններից հորիզոններ էի անցնում մեջ տեսա չքնաղ պատկերդ, տեսա և սիրեցի... Բա՛ց նվիրական գիրկդ ինձ համար...

Եվ արմավենին արհամարհելով լուռ էր։

— Մի՞թե գութ չունես, դո՛ւ, որ այդպես քնքուշ ես և գեղեցիկ, մի՞թե կթողնես մեռնիմ շնչիդ առջև...

Հեծծեց քամին և մեղմով դրկեց նրա նուրբ իրանը և ուզեց համբուրել, բայց արմավենին զայրացած հրեց նրան և ասաց.

— Ի՞նչ ես ճանձրացնում ինձ, անպատկա՛ռ քամի, դու ո՞վ ես, որ քեզ սիրեմ. իմ սերը քեզ համար չէ. գնա՛, կորիր դո՛ւ, անտուն, անհայր, թափառական... Ես, որ արքայական պարտեզների երազն եմ, ինչպե՞ս կարող եմ մի մոլորաշրջիկի իմ սերը տալ...

— Բայց ես քեզ սիրում եմ բոլոր ծովերի ուժով և խորքով,— հառաչեց քամին։

— Դու ո՞վ ես որ, մի՞թե այն չես, որ գիշեր-ցերեկ վայում ես ավերակների մեջ և ամայի ուղիների վրա ունայն դեգերում. ամեն դուռ

փակ է քո առջև. դու նախանձից տների ճրագներն ես մարում, որովհետև տուն չունիս, թավշյա տերևներն ես փոշոտում ու վանում ցանուցիր, որովհետև չար ես ու խանդոտ, մերկ ես ու աղքատ, գնա՛, հեռացիր ինձնից...

— Ի՞մ թագուհիս, մի՞թե ինձ չես ճանաչում,— ասաց քամին,— ես աշխարհի հզոր, անհաղթ ոգին եմ. ես նա՛ եմ, որ շառաչելով Հիմալայան երկնասույզ ժայռերի վրա, մի թափով թռչում եմ՝ բերելով պարթևական Դեմավենդի ճակատը պողպատյա և մրրկվելով Արարատյան գահարակերտ գագաթին՝ հասնում եմ մինչև բարձունքները Աստված։

Ես նա՛ եմ, որ զողանջելով Քաշմիրի զմրուխտյա հովիտներում, սլանում եմ իրար խճճելու հսկայական Ամազոնի նախատեղծ և անթափանց անտառները, ինչպես կույսը խաղում է իր դեղձան մազերի հետ։

Ես նա՛ եմ, որ գալարելով ու ոլորելով հորձանուտ անդունդները Ատլանտիկի, մինչև հրեղեն աստղերն եմ թևակոխում. ես նա՛ եմ, որ անծայրածիր Սահարայում ավազի բարձրաբերձ լեռներ եմ շինում, նորից քանդելու համար. ես նա՛ եմ, որ քաղաքների նախամայր Մեմփիսը ավազի դեղին հեղեղների տակ ծածկեցի...

— Ես սարսափում եմ քեզնից, դո՛ւ դաժան ես, դո՛ւ վայրագ ես,— դողդոջուն ասաց արմավենին...— Ես Նեղոսն եմ սիրում միմիայն. Նեղոսը քեզնից հզոր է, բայց և գթոտ. նա գիշերները ինձ մեղմանուշ օրոր է մրմնջում և նինջս հյուսում չքնաղ երազներով, որ բերում է հեռավոր աշխարհների մարմարեղեն լեռնագահերից... Գնա այստեղից,— աղաչեց արմավենին։

— Բայց մի՛ վախենար, ի՞մ նազելիս, որովհետև երբ սիրում եմ, աշխարհի ամենահեզ, ամենաբարի ոգին եմ դառնում. մի՞թե դեռ ինձ չես ճանաչում. ես նա՛ եմ, որ իմ քնքուշ թևերի վրա դրախտի բուրմունքներն եմ տարածում աշխարհե-աշխարհ. ես նա՛ եմ, ո սրտահույզ քնարի նուրբ լարերն եմ թրթռացնում և նրա գեղգեղանքը հասցնում սիրատոչոր հոգիներին. ես նա՛ եմ, որ գալարագեղ անտառների անհուն լռությունն եմ օրորում, աղբյուրների մարգարիտների մեջ լալիս ու քրքջում... Ես նա՛ եմ, որ երկնասլաց արծիվների թևերն եմ շարժում և նումիդական առյուծների բաշերը հյուսում. ես նա՛ եմ, որ արշալույսից մինչև արշալույս մրահոն կույսերի գիշերազեղ մազերն եմ շոյում և աստղերի երազները բերում նրանց. և ես նա՛ եմ, իմ թագուհիս, որ մշտամրմնջ խոսում եմ արքայական Մեմնոնի արձանի հետ, և ես ահա՛ ոտներիդ տակ հիմա սեր եմ աղերսում։ Գթա՛ ինձ, արձակիր շքեղ վարսերդ վրաս, ես հոգնած եմ ու տառապած, թո՛ղ համբուրեմ քեզ և երանության մեջ մոռանամ վշտերս ու խոնջենքս դարևոր և թափառումներս անկայան...

— Ես քեզ չեմ սիրում, չե՛մ սիրում,— բարկացավ արմավենին,— ես քեզ ասացի, որ Նեղոսն եմ սիրում. նա հզո՛ր է և քնքո՛ւշ, սիրտը խորն է նրա և գթով լի. տե՛ս, ինչպե՛ս փայփայում է նա իմ դեմքը և միշտ պահում իր սրտի վրա. տե՛ս ի՞նչ գեղեցիկ է նա՝ վեհ և հանգիստ. երկնքի ոսկեգույն աչքերը մինչև լույս նրան են նայում հիացած. արքայափառ արևը նրա հայելու մեջն է փայլում-հուրհրում։

Ես միա՛յն, միա՛յն նրան եմ սիրում. նրա ոսկեշուրթ ալիքները համբուրում են ինձ և զովացնում իմ կարոտակեզ հոգին. առավոտից մինչև առավոտ մրմնջում է նա ինձ պարիկների դյութական երգերը և պատմում միշտ հրաշալի հեքիաթներ։

Ահա կանչում է նա ինձ. իմ մազերի քաղցրաբույր ստվերը պիտի իջնի նրա այրված ճակատի վրա. միա՛յն և միա՛յն նրա համար են բողբոջում իմ սիրավառ համբույրները։

Կորի՛ր, հեռացիր, ո՛վ դու անտուն պարծենկոտ քամի։

Այսպես ասաց արմավենին և վարսերը կախեց Նեղոսի վրա, որի ալիքները թռչում էին վեր, դեպի արմավենու սիրաբորբոք շրթունքները։

— Դո՛ւ, որ ինձ չես սիրում և արհամարհում ես ինձ, հիմա տե՛ս, թե ո՞վ եմ ես. քո տերն եմ ես, ո՛վ դու անմիտ, դողոջ արմավենի, քո տե՛րն եմ ես...

Եվ մռնչաց քամին, գալարվեց, զայրացավ քամին, Նեղոսի անշարժ ջրերը վայրագ խանդով խառնեց-պղտորեց, դուրս թափեց ափերից. շառաչեցին ծառերն ու ծառատունկները բոլոր, և գետնին փռվեցին, և հոգի սյուները ամպերի հետ խառնվեցին, դողաց, դողդողաց արմավենին, իսկ սիրահար քամին գրկեց նրան ամուր ու հզոր բազուկներով, պոկեց արմատից, սեղմեց իր զայրացած և սիրատոչոր կրծքին և տարավ հեռո՛ւ, հեռո՛ւ, դեպի անապատները այրվող, դեպի ծովերը շափյուղյա, դեպի լեռնագագաթները ձյունափառ...

1907

ԵՂՆԻԿԸ

«Մի անգամ իմ բարեկամ մի որսորդ մեր հանդի անտառում սարերից մի եղնիկ նվեր բերեց երեխաներիս համար»։

Այսպես սկսեց ընկերս աշնանային մի երեկո, երբ նստած միասին նրա պատշգամբում, հիացած նայում էինք հեքիաթական վերջալույսով վառվող սարերին, որոնց վրա մակաղած հոտերի նման մեղմորեն հանգչում էին ոսկեգեղմ անտառները։

«Այդ մի մատաղ ու խարտյաշ եղնիկ էր, խորունկ, ան ու շինչ ալքերով, որ ծածկվում էին երկայն, նուրբ թարթիչների տակ։

Երբ բռնում էի նրան՝ քնքուշ մարմինը կուչ էր գալիս գրկիս մեջ, և սիրտը վախից թրթռում էր այնպես արագ, թիթեռի թևերի նման։

Կամաց-կամաց մեր վրա սովորեց նա. էլ չէր փախչում, չէր վախենում մեզնից. մանավանդ շա՜տ մտերմացել էր երեխաներիս հետ. նրանց հետ միասին վազվզում էր պարտեզում, նրանց հետ ճաշում էր, նրանց հետ քնում։

Մի բան ինձ շատ էր զարմացնում։ Եղնիկը թեև այնպես ընտելացել էր մեզ, սովորել էր մեր տանն ու դռանը, բայց մեկ-մեկ մեզնից թաքուն բարձրանում էր այս պատշգամբը և ուշագրավ, լռիկ նայում էր հեռու՝ անտառներով փաթաթված սարերին. ականջները լարած խորասույզ լսում էր անտառների խուլ և անդուլ շառաչը, որ երբեմն ուժեղանում էր, երբեմն բարականում՝ նայելով հովերի թափին։ Նայում էր նա այնպե՜ս անթարթ և այնպե՜ս ինքնամոռաց, որ երբ պատահում էր բարձրանում էի պատշգամբը, ինձ բավական միջոց չէր նկատում և երբ հանկարծ ուշքի էր գալիս՝ նետի պես ցլկվում էր մոտիցս...

Արդյոք գիտե՞ր նա, որ ինքը ղողանջուն անտառների ազատ երեխան է եղել, որ մայրը այնտեղ է կաթ տվել իրեն, որ այնտեղ է իր հայրը եղջյուրները խփել կաղնիներին։ Արդյոք, գիտե՞ր, որ այդ խոզ շառաչը անո՜ւշ-անո՜ւշ օրորել է իրեն առաջին անգամ, և ո՞վ գիտե, գուցե, երազներ է բերել իրեն, սիրուն երազներ...

Խե՜ղճ եղնիկ... Կարոտ՝ իր սիրած գուրգուրող անտառներից և զանգակ աղբյուրներից, իր խարտյաշ մորից և շնչկնկան հովերի հետ վազող ընկերներից՝ հիմա տանջվում, տառապում է մեզ մոտ, մտածում էի ես։ Եվ այնպես սրտանց ցավակցում էի նրան... Չէ՞ որ նա էլ մեզ պես մտածող և զգայուն հոգի ունի։

Ես շատ էի հարգում նրան, խնդրեմ չծիծաղես վրաս, այո՛, այնքան, որ երբ նա բարձրանում էր պատշգամբը, հեռացնում էի երեխաներիս, և թողնում էինք նրան մենակ իր ապրումների հետ...

Երբ գրկում էի նրան, այդ նազելի էակին, և նայում էի լեռնային աղբյուրների նման վճիտ աչուկների մեջ՝ տեսնում էի ոչխտեղ մի թախծալի, երազուն կարոտ...

Մի գիշեր,— մի քամի գիշեր էր,— սարերից անսանձ փչում էր քամին, գուռն ու պատուհանները ծեծում ու ծեծկում։ Պարզ լսվում էր, որ այնտեղ, անտառում, դարավոր կաղնիներն ու վայրի ընկուզենիները ճակատում էին հողմի դեմ՝ աղմկում և դղրդում։ Եվ քամին բերում էր անընդհատ անտառի այդ լիակուրծք խշշոցն ու մռունչը, ու թվում էր թե՝ հենց մեր դռան առջև է աղմկահուլիգ, հողմածեծ անտառը։

Երեխաներս վախից կուչ էին եկել. մինչդեռ եղնիկը դողում էր մի խենթ սաքսուռով։ Աչքերը կայծակին էին տալիս։ Անթարթ, ամբողջովին լեցիք դառած՝ ականջ էր դնում նա անտառի հուժկու շառաչին, որ խոսում էր նրա հետ մայրենի լեզվով։

Անտառը կանչում է նրան, ընկերների ազատ վազքն է տեսնում նա մթին թավուտների մացառուտ ժայռերն ի վեր,— մտածում էի ես։

Մի փոքր հետո ավելի սասակացավ քամին՝ փոթորիկ դառնալու չափ. մեկ էլ աղմուկով բացվեցին լուսամուտի փեղկերը, և մի ուժգին շառաչ միանգամից ներս խուժեց։ Եղնիկը հանկարծակի մի ոստումով ցատկեց լուսամուտի գոգը՝ աչքերը սուզելով շառաչուն խավարի մեջ։ Ես խելքն վրա վազեցի բռնելու նրան, սակայն նա մի ակնթարթի մեջ թռավ լուսամուտից պարտեզը և ծածկվեց խավարների մեջ...

Դե՛հ, հիմա՛ գնա ու գտիր նրան իր հայրենի անծայր անտառներում...»։

1907,
Գանձ

ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ԻՄԱՍՏԸ

Թերունի մի դերվիշ՝ ճակատն արևառ, եկավ եգիպտական անապատ, որ մեծ Սֆինքսից հարցումներ անե՝ երջանկության խորհուրդը իմանալու համար։

Անապատի դեղին լռության մեջ բազմել էր հինավուրց Սֆինքսը՝ անդորր և աներեր. նրա անթարթ աչքերը ժամանակի խորքերից նայում էին խորհրդավոր հեռուները։

Եկավ դերվիշը, արձանացավ Սֆինքսի առջև, եղնգի երկարուն ցուպը խրեց այրվող ավազի մեջ. խոհուն աչքերը մոայլ ճակատի տակից հառեց նրա աչքերին և ասաց.

— Եկել եմ մոտդ համայն աշխարհի բոլոր ծայրերից. բոլոր ծայրերից հարցումն եմ արել իմանալու, թե՝ ի՞նչ է երջանկությունը, ո՞րն է նրա իմաստը... Եվ մնացել եմ անպատասխան։

Գալիս եմ այժմ նվիրական Սինայի ժայռերեն գագաթից, ուր Մովսեսը պատգամներ առավ, հարցումն եմ արել անխոս բարձունքից... Եվ մնացել եմ անպատասխան։

Քայլել եմ Նեղոսն ի վեր, տատասկները խոցել են սրունքներս, և արևը կիզել է ալեհեր ճակատս. և հասել եմ քո դռանը։ Ա՛ռդ, բա՛ց քո շրթունքը՝ հավիտյան գոցված աշխարհի համար, և քո իմաստուն, քո

անվրդով աչքերով, ինչ որ տեսել ես դարերի շեղջում, ասա՛, հայտնի՛ր, հարցնում եմ՝ ի՞նչ է մարդկային կյանքի երջանկությունը։

Մարդս խանձարուրից մինչև գերեզման անպարտելի հույսերով ձգտում է երջանկության, սակայն առանց իմանալու, թե ի՞նչ է այն։ Ասա՛, հայտնի՛ր ինձ, և ես կմտանեմ խրճիթից խրճիթ, ապարանքից ապարանք. և հարավին, նույնպես հյուսիսին, և արևելքին, նույնպես արևմուտքին բարձրաձայնեմ քո հայտնությունը երջանկության իմաստի մասին...

Եվ լռությունը մեծ անապատի՝ ծերուկ դերվիշի հարցումից հետո նորից ծանրացավ, և հինավուրց Սֆինքսը նորից նայում էր անթարթ՝ անեզր հեռուն։ Անցան օրեր, անցան գիշերներ, և դերվիշը, անքուն ու կանգուն, արձանացած նրա առջև, ակնապիշ սպասում էր պատասխանի, և պատասխան չկար։

Եվ երբ անցան օրեր ու գիշերներ, դերվիշը դարձյալ հարցում արավ, և նորից լռությունը մեծ անապատի ծերուկ դերվիշի հարցումից հետո թանձրացավ ու ծանրացավ։

Ճերմակ ալիքները բարկ հովին տված՝ նորից հարցում արավ դերվիշը, և նրա աղաչող ձայնը հնչում էր ամբողջ մարդկության հոգու խորքերից։

Եվ երբ լռեց դերվիշը, Սֆինքսը աչքերը բևեռեց դերվիշի աչքերին, և ահա՛ շարժվեցին նրա հավերժալուռ շրթունքները, և անապատի ձայնով պատասխանեց նա.

«Ո՛վ մարդ, արյունի ծնունդ և կրքի ծարավ, քո անմիտ ոգին անհագ տարփում է հավերժ գրգիռի։ Երջանկության իմաստը դու անկարող ես ըմբռնել, քո զգացող գոյությունը շարժե իր ձգտումին, և ո՛չ մի նպատակ չարժե, որ նրան ըղձաս։

Սակայն ես ասում եմ քեզ և հավիտյան լռում, գնա՛ և այսուհետև մի՛ վրդովիր իմ երջանկավետ անդորրը։

Գնա՛ և պատգամիր աշխարհին հանուր՝ հարավին, նույնպես հյուսիսին, արևելքին, նույնպես արևմուտքին՝ երջանկության իմաստը — չպետք է զգալ, չպետք է խորհել, չպետք է կամենալ, այլ մի՛այն քարանա՛լ, քարանա՛լ, քարանա՛լ...»։

Եվ նորից քարացան հինավուրց Սֆինքսի շրթունքները, և նա՝ հավերժորեն անխոով և անվրդով՝ սևեռեց իր անթիթ աչքերը դեպի անծայրածիր հեռուները, և նորից խորասուզվեց ծով-հանգստի մեջ։

Եվ անապատի անհուն լռությունը թանձրացավ ու ծանրացավ նորից...

1910,
Թիֆլիս

ՍԳԱՎՈՐ ԱՐԱԳԻԼԸ

Մեր պարտեզի բարձր բարդիի վրա, ուր ծառը երեք մեծ ճյուղերի էր բաժանվում, երկու արագիլ, այր ու կին, իրենց բույնն էին հյուսել՝ մի ամուր և մեծ բույն. այնպես որ արագիլները իրենց ձագուկներով հանգիստ տեղավորվում էին այնտեղ։

Ամեն գարուն, ձնծաղիկների երևալուն պես գալիս էին արագիլները, այր ու կին. հսկա թևերը դյուղի վրա ծափ տալով և ուրախ-ուրախ լա՛կ-լա՛կ անելով, գալիս հանգչում էին իրենց վաղեմի բույնի վրա։

Մի քիչ հանգստանալուց հետո սկսում էին աշխատել. թռչում էին, դյուղ, տաշեղ, փետուր գտնում-բերում ու բույնը կարկատում։

Անցնում էր մի ժամանակ, ու մի օր էլ մենք տեսնում էինք երեք-չորս փոքրիկ ձագեր, բույնի միջից գլուխները օրորում էին ու մանուկ ձայնով լա՛կ-լա՛կ անում։

Մեր՝ երեխաներիս, աչքը չէր հեռանում նրանցից, ուշի-ուշով դիտում էինք արագիլների ամեն մի շարժումը. մեկ տեսնում էինք, թե ինչպես ծնողները փոխնիփոխ դաշտն էին գնում, անունդ ճարում ու բերում կերակրում ձագերին, մեկ տեսնում էինք, թե ինչպես հայրն ու մայրը ձագերին թևերի վրա առած թռչել էին սովորեցնում, ճիշտ այն կերպ, ինչ կերպ մեր մեծերը մեզ լող էին սորվեցնում գետի խորին տեղերում։

Մի տարի մեծ դժբախտություն պատահեց։ Հայր-արագիլը կանգնել էր բույնի եզրին, հսկում էր նորածին ձագերին, իսկ մայր-արագիլը գնացել էր ճահիճը կերակրվելու կամ կեր բերելու։

Քաղաքից որսորդներ էին եկել. այդ անգութները կրակեցին հրացանները և սպանեցին խեղճ մորը։

Օրն եկավ, ճաշ դարձավ. մայրը չեկավ. սպասեց հայր-արագիլը, սպասեց, նորից չեկավ։ Երեկոյան մոտ թռավ ճահիճը փնտրելու մայր-արագիլին։

Տեսնելու բան էր, թե ինչպե՞ս խեղճը թևակոտոր ընկավ կնոջ դիակի վրա, լալագին ձայնով լա՛կ-լա՛կ արեց, վեր ու վար թռավ, թևերով երբեմն իրեն գլխին էր խփում, երբեմն՝ չոր գետնին... Մութը որ իջավ՝ թևերը քարշ տալով հասավ բույնը, որը ձագերին ծվայլեց թևերի տակ և լռեց։

Այնուհետև մենք էլ չէինք լսում նրա ձայնը։

Առավոտ վաղ թռչում էր բույնին մոտիկ դաշտերը, գետափերը,

աչքը միշտ պահելով բույնի վրա. պարեն էր հավաքում, բերում ձագերին տալիս։

Ձագերը երբ թևավորվեցին, հայրը զատ-զատ վեր էր առնում նրանց և թռչել էր սորվեցնում։ Ձագերը թռչում էին գնում դաշտը և ապա ուրախ-ուրախ դառնում բույնը, տխուր հոր շուրջը ծափ տալիս, նրան ուրախացնում։

Եկավ աշունը, և նրանք միասին թռան գնացին։

Հաջորդ գարնանը մեր արագիլը դարձավ եկավ մեն-մենակ։

Բույնը դիտելուց հետո գնաց կանգնեց ճահիճը, կանգնեց կնոջ զարկված տեղի վրա, կանգնեց, կանգնեց և նորից եկավ բույնը։

Եվ ամեն օր գնում էր նա այնտեղ. մի ոտքի վրա ժամերով տխուր կանգնում՝ վիզը ծռած, գլուխը թևերի տակ։

Տեսնում էինք հաճախ, թե ինչպե՞ս մի արագիլ, մի անծանոթ նորը, մոտենում էր նրա բույնին, նրա հետ լա՛կ-լակո՛վ խոսում ու դժկամ հեռանում։

Երբեմն էլ այդ եկվոր արագիլները փորձում էին նստել բույնի մեջ, նրա կողքին, կռուցները քնքշորեն քսում էին նրա պարանոցով, փետուրների մեջ, բայց նա մերժում էր և ուժով բույնից հեռացնում նրանց։

Մի անգամ, մի արագիլ ուղիղ երեք օր դարբաս արեց մեր արագիլին. քանի մեր արագիլը վանում էր նրան, սա նույնքան համառությամբ գալիս էր նորից թևերը փռում մերինի վրա, գլուխը թաքցնում մերինի թևերի տակ, բայց մեր արագիլի սիրտը կոտրած էր, նոր սեր չէր ուզում։

Լուսնկա գիշերին հաճախ տեսնում էինք նրան՝ մենակ թափառելիս դաշտերում ու լսում էինք նրա տխուր լա՛կ-լա՛կը։

Այսպե՞ս, երեք թե չորս տարի ապրեց նա տխուր ու սգվոր, ապրեց մենակ ու կատարյալ այրի։

Ամեն գարնան գալիս էր ու ամեն աշնան գնում. մի աշնան էլ գնաց, և գարունը բացվեց. չերևաց. սպասեցինք, սպասեցինք — չեկա՛վ ու չեկա՛վ։

Բույնը մնաց-մնաց, ինքնիրեն քանդվեց։

1912,
Ս. Պալիս

ՄԻ ՍՈԽԱԿԻ ԵՐԳԸ

(Մի պարսկատանցուց լսած)

— Ես տեսել եմ մի դեպք, որ հիշողությանս մեջ մի այնպիսի՛ անթառամ թարմությամբ է ապրում, որ ասես թե՝ հենց հիմա աչքերիս առջևը կատարված լիներ։ Եվ ամեն անգամ հիշելիս սիրտս լցվում է միշտ նույն խորին հուզումով, ինչպես այն օրը, թեև արդեն յոթ-ութ տարի է անցել։

Մայիսյան մի վաղ առավոտ էր. արեգակը դեռ չէր ծագել, լուսաբացին ճերմակ լույսերի մեջ թրթռում էր պարտեզը, և վարդենի թերթերի վրա ցողերը դեռ աղամանդի փայլ չէին առել։

Վարդենու թփերի վրա կանգնել էին հինգ սոխակ. մեկը՝ մեջտեղը և չորսը՝ շուրջը։

Փոփոխակի, հերթով երգում էին շրջանի չորս սոխակները։ Նրանք արուներն էին, որ երգում էին մեջտեղ նստած մարիին հրապուրելու համար։

Այդ՝ իսկական մի մրցահանդես էր։ Արուներից յուրաքանչյուրը ճգնում էր իր երգով գերազանցել մյուսներին։ Եվ ամենքն էլ մեկը մյուսից գեղեցիկ երգեցին։

Մարին ուշադիր լսեց յուրաքանչյուրին, բայց, երևի, նրանցից ո՞չ մեկը չգրավեց նրա սիրտը, և նա վարանումի մեջ նայում էր մեկ-մեկ ամենքին. անշուշտ դժվար է չհավանածին սեր տալ։

Այդ միջոցին մոտակա նռենու ճյուղերի միջից մի դայլայլիկ բարձրացավ, մարին գլուխը ուղղեց այն կողմը,— մի փոքրիկ սոխակ էր երգողը՝ նռենու կարմիր ծաղիկներով ծածկված։

Ես շատ եմ լսել սոխակի երգեր, լսել ու հիացել, բայց այսպիսի՛ մի երգ կյանքիս մեջ առաջին անգամ էի լսում. ինչպիսի՛ ելևէջներ, ինչպիսի՛ մեղմ ու սուր հնչյուններ, հազա՛ր-հազա՛ր դայլայլներ ու նրբին երանգներ։

Այս գեղգեղանքը սիրավառ սրտի, հրեղեն արցունքների և անծայր կարոտի մի ամբողջ հեքիաթ էր, մի դյութական հեքիաթ, հազարան ծաղիկների բույրերով ներդաշնակված, որ ծփում էր շուրջս և շուրջս փոխարկել էր երազի և հեքիաթը՝ իրականի։

Արդյո՞ք նման մի սոխակի երգը չի լսած եղել պարսիկ աշխարհի առաջին մեծ երաժիշտը, որ սոխակի դայլայլներից առեղծեց Յոթն-Գամը և հյուսեց անմահ Ռասթը։

Երգի մեջ սուզված լսում էի ես, և մեկ էլ այն տեսա, որ մարին մի հարբած ոստումով թռավ երգչի մոտ, կանգնեց նրա առջև ու կտուցը քնքշորեն թաքցրեց նրա թևերի տակ։

Քիչ հետո լուռ երգիչ-սոխակը, ապա նրանք նռենու կարմիր ծաղիկների մեջ կտուց-կտուցի տալով փայփայում էին իրար մի այնպիսի աշխարհամոռաց երջանկության մեջ, որ նույնիսկ չնկատեցին, թե ինչպես այն չորս արու սոխակները գլխիկոր, տխուր-տխուր հեռացան այնտեղից։

Զանցավ մի պահ, նորից սկսեց երգել սոխակը, հաղթական երգիչը. և այս անգամ ավելի հզոր, և ավելի բարձր՝ ամբողջ հուր ու բոց, ամբողջ խանդ ու ոգի. ամեն մի հնչյունի մեջ՝ սրտից մի կտոր։

Անհուն երջանկության և պայծառ ուրախության բոցեղեն գինու մի շատրվան էր նրա երգը, որ կայլակում էր շողշողալով դեպի վերև՝, դեպի վերև՝...

Եվ հանկարծ, ասես, սրի մի հարվածով երգը կտրվեց, և երգիչը գլխիվայր ընկավ նռենու տակ։

Ես վազեցի դեպի նա։

Խեղճը փռվել էր գետնին, և արյունը անընդհատ հոսում էր քնքուշ բերանից, աչքերը կիսափուխ՝ հանգել էին արդեն, իսկ մարին տխուր ծլվլներ արձակելով մոլո՛ր-մոլո՛ր դառնում էր սիրու համար կյանքը տված երգչի շուրջը...

1913,
Ժնև

ՀԱՎԵՐԺՈՒԹՅՈՒՆ

Պանդխտական՝ ուղիներիս վրա ես հանդիպեցի իմ սերին։

Նստել էի գարնան պարտեզում հասակ առած մի ծառի տակ՝ մենակ ու մտորում։

Անցավ մի աղջիկ իր ընկերուհիների հետ, այնպե՛ս ուրախ և վճիտ, ինչպես այն թարմագեղ գարունը, որ թռչունների երգերով փռվել էր ծաղիկների ու սեղերի վրա։

Ես նայեցի նրան, նա նայեց ինձ, և մեր հայացքները գրկեցին իրար։

«Որքա՛ն ծանոթ էր այդ հայացքն ինձ։ Ո՞ւր էի պատահել։ Ուրբ եմ տեսել նրան — այնքա՛ն ծանոթ ու վաղածանոթ դեմք... գուցե երազի մեջն եմ տեսել նրան, գուցե իմ հայրենիքում, մանկության օրերիս, խաղացել եմ նրա հետ։

Եվ ոտքի ելնելով, սովորի պես հետևեցի նրան. անցավ մի ուրահ՝ տեսա նրան ընկերուհիներից անջատ, մոլորուն քայլերով շրջում էր պարտեզում։

— Ողջույն,— ասացի ես,— նախքան, եթե ասեմ, որ ինձ թվում է՝ քեզ ճանաչում եմ քեզ, վաղուց, շատ վաղուց, սակայն ո՞ւր եմ տեսել — չգիտեմ։

— Դու ևս ծանոթ ես թվում ինձ, մի՛այն չեմ հիշում երբ եմ տեսել։ Բայց տեսել եմ անշուշտ։

— Ես շտապ եմ այս երկրում, սա իմ հայրենիքը չէ, առաջին անգամն եմ շնչում այստեղի օդը։ Գուցե դու եղել ես իմ հայրենիքում, իմ հեռավոր հայրենիքում...

— Ո՛չ, իմ հայրենիքից դուրս չեմ եղել երբեք։ Ի՞նչ տարօրինակ հանդիպում է սա, ի՞նչ խորհուրդ ունի այս...

— Բայց որքա՞ն հարազատ է, վաղեմի ծանոթ, քո ձայնը, և մանավանդ քո հայացքը. կարծես հազար դարեր առաջ մենք տեսել ենք իրար...

— Այո՛, ավելի քան հազար դարեր առաջ...

Եվ նստեցինք իրար մոտ, և երկար նայում էինք միմյանց,— և մեր հոգիները հանկարծ լուսավառվեցին հավերժի հիշողությամբ — ճանաչեցին իրար իմ հոգին, նրա հոգին։

— Ես ճանաչեցի քեզ, իմ անմահ սեր։ Քո այդ հավիտենական քաղցր հայացքը ճանաչեցի ևս։ Դու իմն ես եղել միշտ՝ արևներից ու ոստերից առաջ,— ասացի ես։

— Ճշմարիտ, դու իմն ես եղել միշտ, իմ հավիտենական ընկեր, միշտ իմը՝ աշխարհի ձևավորումից առաջ, երբ թոհուբոհի մեջ էին ժամանակի և տարածության բոլոր իրերը։

— Այո՛, նազելիս, հիշո՞ւմ ես... մենք հյուլե էինք մի զգացումով, մի կամքով, հավիտյանության սկզբից ծնված միասին, ձուլված մի հոգու մեջ։ Անհամար դարեր դեգերում էինք խավար տիեզերքի անհայտ ոլորտներում, մենակ և երերուն, բյուրաբյուր հյուլեներից հետո և մենակուր։

— Այո՛, մտերիմ ընկեր, մենք իրար գրված թավառում էինք տարածության անեզրության մեջ՝ միլիոն, միլիոն տարիներ, միլիոն դարեր, որոնք անցան մի վայրկյանի պես, որովհետև մենք երջանիկ էինք։

— Ո՜հ, ինչ ահավոր մրրկապարների մեջ եղանք, կաղապարվող և քայքայվող արևների մեջ եղանք, բայց միշտ անբաժան ու միացած, անմեկին սիրով, իրարից անհագ...

— Սակայն տարերային ահեղ ուժերը մեզ կիսեցին, բաժանեցին առ ժամանակ, որ անթիվ դարերից հետո անպարտելի կարոտով բռնկված՝ նորից գտնեինք իրար։

— Այո՛, հոգիս, սիրել նշանակում է՝ գտնել իրար...

Եվ քնքուշ ձեռքը դրեց նա ափերիս մեջ։

— Հետո, հիշո՞ւմ ես,— ասացի ես,— գրեթե կես հավերժություն անցավ մեր անջատման օրից։ Նորակազմ երկրի վրա էր, վիթխարի ծառերը հասնում էին մինչև բարձր ժայռերի կատարին, ահռելի կենդանիները վխտում էին շրջրում և ցամաքի վրա։

— Հիշում եմ այսօրվա պես։ Դու վագր էիր որսում ահագին մահակը հուժկու ձեռքիդ, երբ քեզ տեսա, զգացի, որ միլիոն տարիներ միասին ապրած իմ ընկեր-Հյուլեն էիր։ Քո հայացքը հավերժական սիրո լեզուն էր։

— Ես էլ նույնը զգացի և, մղված մի անհաղթ տենչով դեպի քեզ՝ թողեցի որսը։ Եվ քո ցեղակիցների հետ մահի և կյանքի կռիվ տալով՝ հափշտակեցի քեզ և արագ տարա հեռավոր անտառի մեջ մի քարանձավ։

— Հետո, դու մի օր եկար որսից մի հսկա գերան ուսիդ դրած՝ մի ծայրին վարազը շախշախված գլխով, իսկ մյուս ծայրին — ուրախ, փայլուն, ճարճատուն վարդը՝ նորագյուտ կրակը։ Ի՞նչ հրաշալիք էր։

— Ահ, ինչ ստրսափելի և սքանչելի օր էր այդ։ Ես անտառումն էի, որոտում էր երկինք ու երկիր, ամպերը քարի ծանրությամբ կախվել էին գլխիս, անձրևը հեղեղում էր,— և հանկարծ ահեղ կայծակը հզոր սրի պես զարկեց ծառի կատարին. ծառը իսկույն բոցավառվեց, ես փախա վախից. ապա հետաքրքրված մոտեցա։ Ծառի ճյուղերը հալվում էին, ուրախ-ուրախ ճիչեր արձակելով. ավելի մոտեցա, թրջված էի անձրևից և մրսում էի. շատ հաճելի թվաց ինձ երկնքից ընկած այդ թրթռուն, խայտուն, կարմիր կրակը։ Տաքանում էի՝ հիացած աչքերս չհեռացնելով այդ երկնային գեղեցկությունից, երբ դդայի մի քաղցր հոտ՝ մինչև այդ երբ անծանոթ մարդկային հոտոտելիքին։ Նայում՝ ինչ տեսնեմ — սգանված վարազս, որ ընկած էր գետին, մի այրվող ճյուղ հասել էր նրան և խորովում է վարազի աղդրը։ Գուրկան հոտը գրգռել էր ախորժակս. փորձի համար խորոված ուղղեց կերա... այնպիսի անգերազանցելի ճաշակ

ունեցա, որի նմանը չունեցա իմ դարավոր վերապրումների ընթացքին այլևս։

Հիշո՞ւմ ես, այնուհետև մենք միշտ խորովում էինք միասին։ Ի՞նչ համեղ սեղաններ ունեինք։

— Այո՛, իսկական հրաշք էր... Երբ վառվող գերանը քարանձավի բերիր, ես սկզբում վախեցա, երբ սովորեցի, էլ չէի հեռանում կրակից։ Դու գնում էիր անտառ, ծառեր էիր կտրում ու բերում, իսկ ես հսկում էի, միշտ նոր փայտեր ձգելով, որ չհանգչեր կրակը։

— Ի՞նչ անուշ օրեր ունեցանք այդ երկնային կրակի շուրջը։ Մեր երեխաները մեծացան նրա օրհնության տակ, ձմեռը առանց մրսելու քնում էինք նրա շուրջը, և նույնիսկ վայրագ գազանները վախենում էին մեր բնակարանին մոտ գալու։ Հիշո՞ւմ ես, որպիսի խորին ծերության հասանք մենք։

— Եվ հեռավոր տեղերից, իմ սիրելի ընկեր, գալիս էին մարդիկ մեր կրակից տանելու։ Այո՛, գալիս էին մեր անձավը ուխտի։ Սուրբ երդ էին կոչում մեր կրակատեղը և սուրբ երդասան՝ մեր բնակարանը։ Եվ ապա այդպես կոչվեցին բոլոր մարդկանց կրակատեղին ու բնակարանները, ուր կին կար, միշտ կրակը վառ պահող և սրբազան կրակը՝ երդի մեջ։

— Այո՛, հոգուս հատոր, ինչպե՞ս չէ։ Այդ դեպքի շնորհիվ շատ բան փոխվեց մարդկային կենցաղում. կանայք այլ մարդկանց հետ էլ որսի չէին գնում, այլ մնում էին տանը՝ հոգ տանելով կրակի վրա, իսկ միայն այրերս էինք գնում սար ու ձոր, դաշտ ու անտառ, սնունդ հայթայթելու համար։ Պայքարում էինք ամեհի կենդանիների հետ։ Եվ այդ իմ հավիտենական կյանքիս ամենաերջանիկ օրերն էին։

— Դրանից հետո, ես հիշում եմ մեր նոր վերածնունդը։ Դա՝ նվիրական Հիմալայի գրկումն էր, հավերժական գարունի պարտեզում, չքնաղ Քաշմիրի հովտում։ Ես մի դեռափթիթ աղջիկ էի, իսկ դու՝ մեծքաղաք Քաշմիրի հովտում։ Ես մի դեռափթիթ աղջիկ էի, իսկ դու՝ մեծաքաղաքաց այծերի հովիվ, քաղցր սրինգը միշտ շրթներիդ վրա. մենք հանդիպեցինք մի երեկո ծաղիկների մեջ... մեր հայացքները համբուրվեցին իրարու հետ...

— Հիշում եմ, նազելիս, վերջալույսին էր, ես ժպտացի՝ քեզ նվիրելով անթառամ ձյունավարդերի մի փունջ, որ քաղել էի Հիմալայի բարձր ապառաժների կողերից։ Մենք նորից գտանք իրար մեր մշտանորոգ սիրով ու կարոտով, բայց, ավա՜ղ, ինչ կարճատև եղավ մեր երջանկությունը։ Հյուսիսից բարբարոս հրոսակները ներխուժեցին մեր դրախտային հայրենիքը, հրի ու սրի տվին գյուղ ու խրճիթ, տարան մեր հոտերը. քեզ ես, իմ հոգուս հոգի, ուզում էին տանել, որովհետև դու միշտ անմահ

գեղեցիկ էիր. ես դեմ կեցա, սրի հարվածը կուրծքս պատռեց, սրտախոց ընկա, այլևս չգիտեմ՝ ինչ եղավ...

— Ես լքածանվեցի քո մարմնից, իմ նվիրական սեր։ Երբ քեզ թրատում էին, ես ձեռքովս և ատամներովս բռնել էի սուրը և նույն սուրը խրեցի իմ սիրտը... Ա՜խ, արտասավալի վախճան, ողբալի բախտ...

— Սակայն անտեղի է ողբալը այժմ։ Անբնկնելի կարոտով դեպի քեզ ես վերստին մարմին առա։ Ոսկեթաշ առյուծ էի Լիբիական կիզող անապատում, քեզ էի որոնում և չէի գտնում։ Օրեր հրեղեն կարոտից տոչորված՝ մոնչում էի բոցափայլ անապատում, և շնչիս տակ դեղին ավազը շատրվանի պես վեր էր ցայտում։ Մխրճվում էի անապատի խորքերը քեզ որոնելով միայն, և — հանկարծ հեռվից հոտոտեցի քո խենթացնող բուրմունքը...

— Իրական կերպով, այս վայրկյանիս, իմ հավերժ սիրելիս, վերհիշում եմ ահավոր կարոտիդ սոսկալի մոնչյունը, որ դող ձգեց հոգուս մեջ Զգացի քո հարազատ շունչը, որ միշտ փռված էր հոգուս մեջ հավիտյաններից ի վեր։ Անդիմադրելի ուժով տարված՝ սլացա դեպի քեզ։ Ի՜նչ երջանիկ էի քո հզոր հովանու ներքո։ Քո սպառնալի սուվերից զարհուրած՝ չէին համարձակվում ինձերն ու վագրերը մոտենալ մեր որսատեղի սահմաններին անգամ։

— Մի՞թե դեպք ինձ ծայր աստիճան հուզում է մինչև օրս. հիշում եմ, իմ քնքուշ ընկեր, այս անգամ մենք գեղեցիկ Հելլադայում էինք։ Ես մի աղբատ քանդակագործ էի։ Մի փառաշուք տոնահանդեսի պահին էր. սիրո լույսերի մեջ մենք ճանաչեցինք միմյանց, իմ հոգին տեսավ քո հոգին, թեև ուրիշ կեղև էինք հագած։ Դու ոսոտանիկ տիկիններ բույի մեջ էիր, մեր հայացքները իրար հանդիպեցին։ Ապա ես կորցրի քեզ, ողջ Հելլադան ոտքի տակ առա և բոլոր կղզիները թափառեցի, բայց քեզ չգտա։ Դարձա մենավոր խուցս և գիշերներն անքուն ճգնությամբ լուսեղեն մարմարիոնի մեջ մարմին տվի քո աստվածային դաշն ձևերին, որ բարու և գեղեցիկի գաղափարն էին ինքնին։ Եվ դիտեմ, որ անպարկեշտ սիրով բռնկված և հոգնաջան աշխատանքների մեջ հալ ու մաշ՝ կիլոսխելագար դեգերում էի հրապարակներում և ծովերի ափերում...

— Անհուն թախիծով հիշում եմ, իմ անմահ ընկեր, հիշում եմ այն հանդիսավոր օրը, հիշում եմ քո հավերժական հայացքը, որ այլևս այն կյանքում չողջագուրեց ինձ։ Սակայն տարիներ հետո ես տեսա այն մարմարիոնը, որ ողջ Հելլադան իմ երկվորյակն էր համարում և իբրև արվեստի հրաշալիք։ Ես ներշնչումով՝ համարձակ այդ անդրին ստեղծագործումը այն երիտասարդի, որի դյուցական հայացքը բազմաժամոր ամբոխի միջից անեզրական սիրով խոսեց իմ հայացքի հետ։

Սակայն զարմանալին այն է, որ յուրաքանչյուր մեր անձնավորության ժամանակ, որքան էլ որ փոխված էին լինում դարն ու վայրը, և թեև մեր հոգու մարմին առած ձևերը, բայց և այնպես մենք իսկույն անվրեպ ճանաչում էինք իրար, մեր հայացքների մեջ խոսող հոգին բնավ չէր փոխվում։

— Հիշո՞ւմ ես, սրտագին ընկեր, հարափոփոխ մարմնառումների բնթացքում մենք մի անգամ շատ բախտավոր հանգամանքով կենակցեցինք։

— Ո՞րն ես մտաբերում, նազելի քույրիկս։

Եվ նա լուսեղեն ձեռքը դրեց ուսիս և սրտի ձայնով ասաց.

— Չե՞ս հիշում միթե... մենք սրբազան Բենարեսի շքեղ հովտումն էինք, Գանգա գետի ափում, դու և ես, իրար այնպես մերձ, երկու շուշան, հովիտների քնքուշ շուշան, մեղմ սյուրի հպումից մենք իրար գրկի մեջ թպչանում էինք և իրար հոգու բույրով արբում։ Բուդդհան անցնում էր իր աշակերտներով, տեսավ մեզ, երբ մենք իրար գրկումն էինք, նա ցույց տվեց մեզ աշակերտներին և ասաց.

«Նայեցեք այս չքնաղ էակներին, ինչպիսի՜ երկնային սիրով սիրում են նրանք իրար, այս ծաղիկ հոգիները։ Ճշմարիտն եմ ասում ձեզ, իմ ավետած Նիրվանան — ահա՛ այս գերերջանիկ սերն է — այսպես սիրեցեք միմյանց, իմ աշակերտներս»,— և ծունկի եկավ, համբուրեց մեզ ու գնաց։ Եվ կարծես մեր սրտի խորքերից էր, որոնցով նա բարբառեց։

— Հիշում եմ, հիշում եմ, նազելիս, երբ նա գնում էր, աշակերտներից մեկը քաշեց մեզ և տվեց մեծ ուսուցչին։ Բուդդհան մեղմորեն հանդիմանեց նրան, ասելով.— «Ինչո՞ւ ցավ պատճառեցիր նրանց»։— Եվ նա գթությամբ փայփայեց մեզ, և մենք թաղամեցինք միասին, գերերջանիկ՝ նրա աստվածային ափի մեջ։

— Այո՛, գերերջանիկ ապրեցինք, գերերջանիկ մեռանք, բայց, հոգուս ընկեր, ամեն անգամ մեզ չլինեցավ գտնել իրար։ Ա՜խ, ինչքան անգամ իմ հոգին աշխարհ եկավ, սպասեց կարոտով ու փափագով քո հոգուն, բայց չհանդիպեց երբեք։ Ինչքան անգամ լացել եմ ու լացով թափառել որոնելու քեզ։ Երազներով բուն եմ մտել և զարթնել եմ նորից մենավոր։ Քանի՜ անգամ հոգիս որբ մնաց բյուրավոր մարդկանց մեջ, թեև շատ շատերը ինձ իրենց սերն էին նվիրաբերում։ Իմ զարավոր մարմնացումների մեջ քանի՜ անգամ ամուսնացա, սակայն երբեք չսիրեցի իմ ամուսիններին, որոնց կույր, անմիտ պատահմունքն էր բերել իմ ճանապարհի վրա և ոչ թե այն հավերժական անսկիզբ սերը, որ ոգևորել ու

կիզել էր մեր հոգիները՝ հյուլեական գոյությունից մինչև այսօր և մինչև հավիտյան։ Ավա՜ղ, շատ եմ տառապել ես...

— Այո՛, Նազելիս, նույն դառն գոյությունները վիճակվեցին նաև ինձ շատ ու շատ անգամ։ Հաճախ մնացի ամբողջ կյանքիս մեջ մենամենակ։ Մերացա՝ երազելով անմահ սիրուս գգվանքներին։ Հաճախ անիծել եմ, որ մարմին եմ առել այս ներհակ ու չար ուժերով լի աշխարհում։

Օ՜հ, առանց քեզ ինչ հրեշային տանջանք էր ապրելը։ Մի անգամ անվերջ որոնելով քեզ, հուսալքված բախտս կապեցի մի աղջկա հետ, որի հայացքը հեռավոր նմանություն ուներ քո աստվածային հայացքին, սակայն դժբախտ եղա շատ։ Անսեր միությունը զարհուրելի մղձավանջ դարձրեց բովանդակ կյանքս։

Ա՜խ, չարաչար, չարաչար տառապեցի։

Բայց մի անգամ, Նազելիս, մի զարմանալի և շատ սրտահույզ հանդիպում ունեցա։ Որսորդ էի, լեռների վրա պատահեցի մի քնքուշ եղնիկի, առանց երկյուղի կանգնեց նա և նայեց ինձ այնպիսի՜ մտերիմ, այնպիսի՜ սիրատուր հայացքով, սրտի, հոգու հայացքով։ Ես հասկացա նրա հայացքի հավիտենական սիրո լեզուն. անշուշտ, նա դու էիր։ Ես գրկեցի նրան, փայփայեցի նրան, համբուրեցի նրա երազուն աչքերը և տարա տուն։ Եղնիկը գրկիս մեջ հանգիստ նիրհեց՝ աչքերը կրծքիս սեղմելով։

Մինչև իր մահը խնամեցի և գգվեցի նրան, որ երեխայի պես հանգչեց բազուկներիս վրա։

Իմ ձայնը մարեց սրտիս լուռ հեկեկանքի մեջ։ Իշամ մի թախծալի լռություն։

— Սակայն դարեր հետո, իմ բյուր սիրելիս, մենք նորից բախտ ունեցանք իրար պատկանելու,— լռությունը խզեցի ես։ Անշուշտ, չես մոռացել, որ ես վիկինգ էի անվախ, անվեհեր, իմ անդեկ նավակի վրա՝ սանձելով Ատլանտիկի գոռ ալիքները, հասա Ալբիոնի եզերքին, և քեզ առևանգեցի հենց քո հոր գրկից, որ ափերի իշխողն էր։ Դու նայեցիր իմ աչքերի մեջ և կարդացիր հոգիս և ճանաչեցիր անսկիզբ ժամանակների քո վաղեմի ընկերին, կարոտով փաթաթվեցիր պարանոցիս՝ չիմանալով քո մոր աղերսանքներին։ Հիշո՞ւմ ես, դու մի ոսկեհեր աղջիկ էիր նոճիի պես սլացիկ։

— Հիշում եմ, հիշում եմ, հավիտյանների իմ մտերիմ, ի՜նչ կորիճ էիր դու, արևակեզ, զինավառ, առյուծի քաջով։ Հայրս քեզ անհամար ոսկի առաջարկեց փրկանքի համար, բայց ես լալիս էի և չէի ուզում քեզնից անջատվել, և դու արհամարհանքով մերժեցիր հորս պատգամավորներին։

Դու Սկոնիայի ափերում, բարձր ժայռերի կատարին, արծվի բույնի վրա, ամրոց ունեիր հայրենավանդ։ Մենք ապրում էինք այնտեղ։ Դու արշավում էիր, ավարում մինչև Իսպանիայի և Իտալիայի ափերը, և վերադառնում էիր գանձերով ու բերքերով։

Բայց մեր սիրը այս անգամ շատ դժբախտ վախճան ունեցավ ավա՜ղ, ավա՜ղ... Միխիթարական էր միայն այն, որ մեր երկու սիրուն վավակները ողջ մնացին։ Հիշո՞ւմ ես այն ոսկեգանգուր կորյուններին...

Եվ հորդ արցունքների մեջ խամրեցին նրա աչքերը։

— Մի՛ լար, Նազելիս, մի՛ լար, գիտեմ, դու վերհիշում ես այն սոսկալի ժամը, երբ մի օր մենք զբոսնում էինք օվկիանոսում։ Այո՛, մեր որդիները որսի էին գնացել, մեզ հետ չէին։ Հանկարծ ինչպիսի հզոր փոթորիկ բարձրացավ, անողորմ հորձանքները մեր նավակը զարկեցին ապառաժներին, և ջրերը կլանեցին մեզ։ Մենք իրար գրկած սուզվեցինք անդունդի մեջ։ Բայց դու իզուր ես լալիս, չէ՞ որ խավարը երկար չպատեց մեր հայացքը, չէ՞ որ մենք շատ անդամներ վերստին հարություն առանք, վերստին գտանք իրար։ Բայց ես մշտապես վերհիշում եմ մի վնեմ վերածնունդ, որը դու ես անկասկած չես մոռացել։ Ես երիտասարդ ասպետ էի հայկական այրուձիի մեջ, ընկերներիս հետ գնում էի մեր երկիրը պաշտպանելու։ Մեր հայրենիքի վրա կատաղած արշավում էին պարսկական անհամար ղորքերը, նրանք գալիս էին ընկճելու մեր հայրենիքը։ Մեր վաշտը անցավ մի քաղաքով, հրապարակի վրա կանգ առանք,— և մի ապարանքի պատշգամբում ես տեսա մի չքնաղ, մանկափթիթ աղջիկ, այդ՝ դու էիր, մեր հայացքները համբուրվեցին նորից, դու մի վարդ նետեցիր ինձ, մենք նայեցինք վերջին անգամ միմյանց, և հնչեցին շեփորները, և սլացան մեր նժույգները։ Ես գնացի և անձնուրաց ճակատամարտի մեջ ընկա Ավարայրի կարմիր հողերի մեջ՝ քո սուրբ պատկերը հոգուս մեջ գրկած։

— Գիտե՞ս, սիրելիս, ես որքան սպասեցի քո վերադարձին, աղոթում էի և սպասում, հուսալքվում էի և նորից սպասում։ Թափառիկ գուսանները ներբողում էին ասպետների անձնվեր ճակատումները և սխրանքի գործերը, և նրանք, անշուշտ, քեզ էին ներբողում, քեզ, իմ քաջին, իմ կորիճին, որ այլևս չեկավ...

Ցուն դարձան շատերը, իսկ դու չկայիր... Հալվեցին ձմռան սառույցները, գարունը եկավ, ծիծեռնակները վերադարձան իրենց բույները, իսկ դու չդարձա՜ր, չդարձա՜ր... Գիտես, այդ վիշտը սուրի պես ծայրեծայր խոցեց, մնացի անհույս և անայցելու. սփոփանքի համար վանք մտա, կուսագրվեցի և մենության ու լռության մեջ լացի, և ճգնեցի, և

աղոթեցի քեզ համար, մինչև որ աչքերս փակեցի՝ միանալով քո հավերժաբար սիրած, պաշտած հոգուն...

— Դու նո՞րից լաց ես լինում, իմ հոգու հոգի, բայց ինչո՞ւ Մի՛թե դու չգիտես, որ այս է մեր անվախճանելի ճակատագիրը — անջատում և միացում, միացում և անջատում, այսպես անհամար անգամ, որովհետև մեր սերը ինքնին հավերժաբնություն է, որ եղել է միշտ, որ կա և կլինի միշտ...

Մահը մեզ համար ժամանակավոր նիրհ է եղել և հանգիստ միայն, երբեմն փափագ՝ ազատվելու տանջալից, անդաշն վիճակներից...

Եվ դարերից հետո վերստին մեր շրթունքները անհուն երանությամբ հպվեցին իրար, և մեր հոգիները անսկիզբ և անվախճան համբույրի մեջ վերստին միացան իրար, և մեր հայացքները վերստին հալվեցին իրարու մեջ...

1919,
Լյուցեռն

ՍԱԱԴԻԻ ՎԵՐՋԻՆ ԳԱՐՈՒՆԸ

Գարուն էր։

Մեկը այն անհամար գարուններից, որ զարդարել են երկիրը, և որոնցից հարյուր հատ ապրեց երջանկության և տխրության բանաստեղծը՝ Սաադին։

Առավոտ շատ վաղ զարթնեց Սաադին. իջավ պարտեզը, որ ծաղկում էր Ռոքնաբադ գետի ափին։ Նորից լսելու համար բլբուլների երգը և նորից տեսնելու համար զարնան հրաշքը։

Նայեց Շիրազի դաշտին, որ մանկության շնորհներով ու վարդերով պճնված՝ վաղորդյան նիրհն էր առնում՝ պարուրված բուրալից ճերմակ շղարշներով։

Նստեց ծաղկած հասմիկի տակ, Սպահանի գորգի վրա, և բռնեց դողդոջ մատներով վարդենու նոր բացված կարմիր-կանաչ կոկոնը և մրմնջաց յուրովի.

«Ինչպես մատաղ աղջիկը ժպտում է գգվող սիրահարին, այնպես էլ վարդը իր շրթունքն է բանում առավոտյան հովիկին»։

Թե՞ չա՞տ էր ծերացել Սաադին, սակայն նրա հոգին երազի աչքերով և ականջով էրազի՝ տեսնում էր ու լսում աշխարհի չքնաղ իրերն ու ձները, երգերն ու լռությունը անհայտ ոլորտների, որովհետև տակավին զրույց էր անում նրա հետ բանաստեղծության կախարդ ոգին — Զմրուխտ թռչունը, որ իր հավերժական բույնն էր կերտել Կաֆ լեռան գագաթին, աստղերի մեջ...

Երգում էին բլբուլները՝ գորշ ղրեստ հագած և լուսեղեն ալուկնեով, երգում էին իրենց դյութական ռուբայաթները սիրո կրակով կրակված,— ու երգում էին Սաադիի սրտի մեջ։

Քնքուշ հովը վարդերի ականջներին կուսական շնչով բարևագրեր էր շնչում, որ բերել էր հեռավոր սիրահար վարդերից,— և կարդում էր Սաադիի հոգին սիրո բարևագրերը...

«Սիրող սիրտը լսում է միշտ այն բոլոր խոսքերը, որ մրմնջում են իրերը։ Աշխարհը լի է հնչուն դաշնակություններով։ Աշխարհը թրթռում է անվախճան և սիրավառ արբեցումով»,— հիշեց Սաադին իր հին խոսքերը։

Ականջը բլբուլների երգերին և սպիտակ գլուխը կարմրափթիթ վարդերի մեջ սուզած՝ ծծեց Սաադին հեշտության բույրերը, և բույրերով լցված՝ աչքերը գոցեց,— և տեսավ աշխարհը իր հոգու մեջ, ինչպես երազի մեջ մի երազ։

Տեսավ Հնդու խաղաղության գետերը սրբազան լոտոսներով օծուն։

Տեսավ իմաստուն փղերին, որ խորհում են մթին ջանգյալների մեջ։

Եվ Դեհլիի ոսկեդիպակ ապարանքների մեջ սիգաճեմ աղջիկներին տեսավ՝ գիշերագեղ մազերի մեջ կարմիր նունուֆարներով։

Տեսավ Թուրանի մրրկաշունչ տափաստանները և մրրիկների մեջ խոյացող ամեհի հելուզակներին՝ կայծակե թրերով։

Տեսավ նույնպես անապատը բոցակեզ, բեդվինների նժույգների վազքը սրարշավ. առյուծների հետևից՝ արծիվների թևերի տակ։

Եվ երկյուղած ուխտավորների անծայր քարավանները տեսավ. աղոթքով ու երգով Մեքքայի դարպասների առաջ նրանց ծունկի գալը։

Եվ տեսավ Մսրա աշխարհի հնագեղ հրաշքները և կապույտ ծովերի ծփուն բյուրեղը։ Եվ Դամասկոսի թավիշ աղջիկներին, լուսնկա մարմնով, որոնց երկար ու քնքուշ ձեռները մանյակի պես գլանթափվել էին երիտասարդ Սաադիի պարանոցով...

Սաադին հառաչեց՝ աչքերը բանալով.

— Ավա՜ղ, անցավ հարյուր տարիս մի գիշերվա երազի պես, թռավ թեթև մի վայրկյանի մեջ, որովհետև դուք միշտ ուղեկցում էիք ինձ, ո՜վ հեքիաթ, ո՜վ բլբուլներ ու վարդեր, և դո՜ւք, վարդերի քույր շնորհագե՛ղ աղջիկներ...

Երկնքի երփնավառ պարտեզների միջից դուրս բխեց արեգակը, և հուրհրացին ամեն թերթ ու փերթ, ամեն քար ու գուղձ, որովհետև գիշերը ադամանդի փոշի էր շաղ տվել բոլոր նրանց վրա։

Սաադին նայեց շուրջը խորունկ ու հետաքրքիր հայացքով. նայեց երկնքի կապույտ վրանին՝ արջալույսի մեջ թաթախուն, ոսկու մեջ ճախրող թռչուններով։

Նայեց այնպես զարմացած և սքանչացած.

— Ա՜խ՛, հրաշք է աշխարհը, հեքիաթ է, զմայելի և անհուն զարմանալի։

Եվ ամեն օր նայում եմ աշխարհին և ամեն օր զարմացած, կարծես, առաջին անգամն եմ տեսնում աշխարհը.— աշխարհը՝ առօրյա և միշտ հիասքանչ, աշխարհը՝ հեռօրյա և միշտ նորաստեղծ, հավիտենական մի անծանոթի հրաշալիքով ստինքեղող։

Սաադին նորից նայեց աշխարհին. տարերքի ոգու քաղցրագան ու հրաշագան խաղին, երբ աչքին ընկավ երկու տատրակ, որ կարմիր տոտիկներով շրջում էին կանաչ մարգերի վրա, քաղցր գմբգմբալով. և նորից խոսեց իր սրտում.

— Կախարդված է աշխարհը, և բոլոր իրերը հմայված են մի անտեսանելի վհուկի դյուցական գավազանով, և հերիաթացած է ամեն բան։

— Աշխարհը գլխիվայր հոսում է, քայքայվում է ու ձևալուծվում, և ի՞նչն է, որ նորից կերտում է ու կաղապարում այս հոլանոց աշխարհը, և մեր հոգու շուրջը փռում այս հրաշքն ու հեքիաթը։

Ո՞վ ստիպեց եղնիկին, որ պապակ սրտով մագլցի սեղ ժայռերը՝ եղջյուրները քարերին փշրելով տարփալից ճռնչյունով թռչունները թինդ հանեն։

Ո՞վ ստիպեց, որ վարդը ճեղքի իր զմրուխտյա գրահը և բուրեն հեշտագին։

Ո՞վ ստիպեց մարդուն, որ անհայտից բխեն ձև ու հոգի առած՝ մտածելու և տառապելու համար. զգալու հուրը մեջ այրող ըղձանքի և չփափագի երբե՛ք մեռնելու։

Ո՛վ սեր, դո՛ւ անպարտելի ստիպմունք, դո՛ւ քաղցր բռնություն, ես վաղո՛ւց ճանաչում եմ քեզ։ Սակայն քնավ չհասկացա քո խորքն ու խորհուրդը...

Եվ տեսանողի հոգով նախազգաց Սաադին, որ այս վերջին գարունն է, որ ինքն ապրում է։

Վերջի՛ն գարունը։

Գարնանի գանակը բացվեց։

Սպիտակ շղթաշները հովին ծփծփան՝ ներս մտավ Նազիաթ, Սաադիի սիրած շիրազուհին, որ միշտ այցի էր գալիս ծերունի բանաստեղծին։

Նազիաթի գինեվետ շրթունքը և հոլանի թևերի լույսն ու կրակը շա՛տ անգամ արևագաթդել էին գաքեար Սաադիի անքուն գիշերները։

Սաադին սիրում էր նրան իր անթառամ սրտի երիտասարդ ավյունով, և ոսկի բառերով քանդակել էր նրա պատկերը անմահ «Գյուլստանի» մեջ։

Նազիաթ՝ վարդերի փունջը գրկին, մոտեցավ բանաստեղծին և վարդաբույր ձայնով ողջունեց։

Տխուր էր Սաադին։ Հառաչանքը թրթռում էր նրա գունատ շրթունքին։

— Ինչո՞ւ ես տխուր, դո՛ւ, ամենաերջանիկը մահկանացուներիս մեջ։ Ինչո՞ւ ես տխուր։

Սաադին լուռ էր։

— Ես սիրում եմ քո տխրությունը, ո՛վ Սաադի, իմաստուն է քո թախիծը. և դու ասել ես քո աստվածային լեզվով, թե մարգարիտը վերքից է, որ ծծնի, և խունկը այրվելով է, որ իր անուշ հոգին կբուրե։

Սաադին նայեց Նազիաթին դալուկ ժպիտով։

— Տե՛ս, վարդեր եմ բերել քեզ համար, իմ պարտեզի թավիշ վարդերից։

Եվ ծերունուն պարուրեց վարդերով և լուսեղեն մատներով շոյեց բանաստեղծի ճակատի մոայլը։

— Քո շնորհած վարդերը, ո՛վ դրախտի աղջիկ, աշխարհի ամենալքնաղ վարդերն են եղել միշտ և երբեք չեն թառամել։

— Այո՛, Սաադի, «Ինչո՞ւ վարդը հոտոտելիս խորհել նրա վաղանցուկ շնորհի մասին։ Պահի՛ր հիշատակը բույրի և դյուրին կլինի մոռանալը, որ վարդը թառամած է վաղուց»։

Արծաթի ձայնավ աղտաստանեց Նազիաթ բանաստեղծի վաղեմի խոսքերը։

Եվ նրա երազաբույր վարսերը գգվեցին Սաադիի դեմքը. երբ Նազիաթ ծունկի եկավ բանաստեղծի մոտ. և պարտեզում մի անուշ հով ծիածանի թևերը թափահարեց Սաադիի գլխի վերևը — այդ Զմրուխտ

Թռչունի չքնաղ թևերն էին, որ ծուփ եկան, երբ Սաադին դողդոջ մատներով շոյեց նազիաթի երազաբույր վարսերը։

Եվ ապա Սաադին հոգու խորին հատակից նայեց մեկ՝ իր շուրջը բռնկած հեքիաթ-աշխարհին, մեկ՝ իր առջևը՝ լուսաժպտուն հրաշք-աղջկան, և զգաց տաք արցունքի մի կաթիլ իր հին սրտի մեջ, և բռնելով աղջկա փոքրիկ ձեռքը, համբուրեց ու դրեց լացող սրտի վրա՝ ասելով.

— Քո շուշան մատներով դրի՛ր «Դյուլբատան»-իս հետին էջի վրա իմ այս վերջին խոսքերը.

«Մնվում ենք ակամա, ապրում ենք դարմացած, մեռնում ենք կարոտով...»։

1923 մայիսի 21,
Վենսիկ

ԼԻ-ԹԱՅԻ-ՊՈ

(Չին բանաստեղծ 702—763 թթ.)

Մի երեկո, երբ վարդերը բուրում էին պարտեզում,
Սյումն ինձ բերեց մի հեռավոր սրինգի երգն երազում։
Եվ դիմեցի ուղի ճյուղից իմ սրինգը գեղչկական
Ու երգեցի սրտիս երգը՝ նրա երգին պատասխան։
Եվ լսում են այն օրվանից թռչունները սիրատենչ
Իրենց լեզվով անուշ մի վեճ երկու անճայտ սրտի մեջ...

Լի-Թայի-Պո բանաստեղծի հոգին լսում էր շարունակ բոլոր անլսելի մրմունջները սիրակարոտ սրտերի և լուսե նվագները հեռավոր աստղերի։

Եվ գյուղերի, թե քաղաքների դինեռներում, բաժակի առաջ նստած՝ գուսանական բամբիռով երգում էր իր քաղցր ու տխուր զրույցները, որ ուներ անհայտ սրտերի և անհունի աստղերի հետ։

Լի-Թայի-Պոյի բամբիռի վրա բնությունն իր բոլոր տարերքի հուզումներն էր դրել։ Երբեմն ծովն էր մրրկում նրա գուշի մեջ, և դողդոջուն լարերը ալիքների պես լեռնանում էին ու շառաչում։ Եվ երբեմն ցնորական այուքն էր սահում, անշշուկ, լարերի վրայով, բերելով իր հետ լոտոսների բույրը սրբազան լճակներից։

Նրա հոգին բռնկված էր արևի պայծառ հրճվանքով, սակայն խորքում անհուսության ստվերներն էին խառնված։ Ուրախ էր խաղով տարված երեխայի պես, սակայն վիշտը իր սև արմատն էր մխրճել նրա հոգում։ Եվ նրա վիշտը անպարտելի էր մահվան պես, և մահվան դաժան շունչը զգում էր իր գլխի վրա։

Քանի որ կյանքը պատրանք է,
Ինչո՞ւ այսքան ցավ ու թախիծ։
Պիտի հարբիմ, հարբիմ անդուսպ
Մինչև դինին ընկնեմ ինձ.
Ու մոռանամ խայթը մահվան՝
Բույրերի մեջ երանության...

Սակայն մի պահ միայն, որովհետև հանկարծ մահը իր ծանր ձեռքով ցնցում էր նրա ուսերը, և իր սոսկալի ներկան պարզում բանաստեղծի զարթնած հոգու առջև...

Աշուն է դալկահար,
Թռչունները լքվում են հողմավար.
Ես լցնում եմ բաժակս և նայում եմ գորշ հեռուն.
Զուր եմ չանում դինու մեջ խեղդելու իմ տրտմությունը։
Քանի որ այս աշխարհում
Իրերը լեն ընթանում մեր տենչերի կամքով,
Լավ է նետվել մակույկի մեջ՝
Մագերն ազատ հովերին,
Եվ հանձնվել հուզված ծովերին...

Եվ բանաստեղծը կանգնած կյանքի ու մահվան միջև՝ հրակեզ շրթները աղջկա և բաժակի շրթներին, և հուսահատ աչքերը մահվան տեսիլի վրա — երգում էր ավելի ուժգին, ավելի խորին. երգում էր արագաթռիչ և՛ անհուն գեղեցկությունը աշխարհի, և՛ հավերժական կսկիծը բոլոր գոյությունների...

Ժողովուրդը լսեց նրա երգերը և սրտագին սիրեց նրան։ Եվ կայսրը՝ Մինկ-Հուանգ-Թի, լսեց նրա երգերը և շքով տարավ նրան իր արքունիքը։ Եվ ամեն հարգ ու մեծարանք տալով նրան՝ պատվեց «արքայական բանաստեղծների նախագահ» կոչումով։

Ութ նշանավոր բանաստեղծներ էին ապրում արքունիքում։ Նրանք չքնաղ երազներով զարդարում էին երիտասարդ զահակալի կյանքը. իմաստություն էին սովորեցնում նրան, և անմեկին ընկերներն էին նրանք արքայի գինարբուքների։

Եվ Լի-Թայի-Պոն քանիցս դառնալով այդ մեծանուն բանաստեղծներին, անվանեց նրանց ոգենա սափորի ոգին իմաստուններ։

Եվ ինչպես նախագահ արքայական խնջույքներին՝ երգում էր նա բամբիոնը ձեռքին։—

Տե՛ր իմ, դու մեզ բուրալից գինի ես շնորհում,
Ահա՛ փայլում է նա ոսկի բաժակներում։
Դեռ մի՛ խմեք, մինչև որ երգեմ
Իմ սրտի վիշտը — վիշտը բոլորիդ։
Թուփեր են բուսել հիմա ավերակների միջից
Սու-Թայի շքեղ ապարանքների։
Լուսնյակն է հիմա՝ գունատ պարուհին,
Այն հոյակապ դահլիճների մեջ,
Ուր մի ժամանակ սահում էին
Այնքա՜ն շքեղ, շքեղ կանայք...
Իմ քարեկամներս,
Հան-Ցոյի ջրերը ծովն են ընթանում,
Եվ երբեք ակունքին ետ չեն դառնալու։
Մի՞թե ձեր սենյակները զուրկ են հայելիներից,
Եվ չե՞ք տեսնում — ձեր մազերի վրա
Ձյուն է իջել արդեն...
Դուք ասում եք,— երկնքի կամարը
Հավիրժական է, հավերժ կապույտ.
Եվ երկիրը կանգնած է ամուր
Իր հին ոտների վրա հաստատուն։
Բայց դո՛ւ ինքդ ի՞նչ ես, ո՛վ մարդ,
Եվ ո՛չ մի դար կարող ես վայելել
Աշխարհի հրաշքներն ու սիրերը սրտիդ։
Եվ ինչ որ ունես — ավար պիտ դառնա,
Փոշի և ունայն, և ուրիշ ոչի՛նչ։
Հիմա առե՛ք բաժակները.
Երգենք ու խմենք մինչև.
Երգն ու գինին արժեն
Աշխարհի բոլոր ոսկին։
Խմեցե՛ք մինչև մրուրը,
Խմեցե՛ք նորից.—
Ամեն ինչ կանցնի, ոչի՛նչ կմնա։
Հասնում է ահա խավարը մահի,
Որ գերեզմանի խորից է բխում...

Լի-Թայի-Պոն ապրելով կայսեր մոտ, վայելքների և մեծարանքի մեջ՝ ձանձրացավ սակայն արքունիքի ձևապաշտ և չափված կյանքից։

Նրա արկածասեր և անհանգիստ հոգին տենչում էր ինքնիշխան

ազատությունը թափառաշրջիկ զուսանի և խմաստասեր մենությունը ներահայաց ճգնավորի։

Եվ հայրենի անծայր երկրի փոշոտ ուղիները իրենց հետ տանում էին նրա հոգին դեպի արծվաբնակ լեռները, որոնց ապառաժոտ գահերից վիժող ջրընկեցների դիվական ծայրը լցնում էր լռությունն անծայրածիր։

Տանում էին նրա հոգին դեպի հազարամյա անտառների սավառնած տխրությունն խորքը, ուր Լի-Թայի-Պոյի հոգին՝ ինքն իր մեջ մխրճված՝ պիտի խորհեր և որոներ կյանքի ու մահվան և տիեզերքի անլույծ խորհուրդների արմատը։

Տակավին տատանվում էր նա փախչել ապարանքից, երբ մի օր եկավ չնաշխարհիկ պարուհին — Լի-Սի-Շի։

Ուշ երեկո, լույսերի մեջ ծփում էին ապարանքի կախարդական պարտեզները, ուր խոսուն ջրերի վրա վարդի մեջքի պես կորացող կամուրջներից կախված՝ շողշողում էին երփներանգ լապտերները։

Եվ հովը անուշ շնչով սահում էր՝ համբուրելով լոտոսի շրթները։

Հախճապակե գետինկոնի վրա, գահավորակի մետաքսե բարձերին՝ թիկն էր տվել երիտասարդ արքան։

Բուրում էին հեշտագրգիռ խունկերը, և ցոլցլում էր բեկբեկ ճաճանչներով ընտիր գինիների հակինթը։

Արքայի առջև պարում էր Լի-Սին, արուսյակի պես շողարձակ, թեթև, ինչպես քողը վաղորդյան մշուշի. գեղեցիկ, ինչպես գեղեցկությունն ինքը։

Սավառնում էր ու ճախրում, ժպտում էր ու ծիծաղում, հրաշալի՛, հրաշագե՛ղ, մինչև որ անուշ ու տարփագին թալկությունը սուզվեց նրա բյուրեղ մարմնի մեջ։

Լուսեղեն ազդրերի դաշն ծփումները մարեցին...

Եվ մանրիկ ոտները կանգ առան...

Այն ժամանակ հոգնած իջավ նա հասպիսն գահի առջև՝ թրթռուն թարթիչներով սիրատարփ աչքերը արքայական հայացքի մեջ պարտված...

Քնաղ Սի-Շին բեկված շուշանի նման ընկավ նվաղուն՝ արքայի ոտների ներքև...

Այս ամենը տեսավ Լի-Թայի-Պոն. և այլևս չուզեց և չկարողացավ տեսնել շարունակությունը։

Գլխիկոր հեռացավ խնջույքի վայրից։

Զգաց, որ իր ազատ հոգին գերի է դարձել Սի-Շիի կախարդանքին։

Բայց Սի-Շին արքայինն է։

Բանաստեղծը հոծար էր կյանքը նվիրարերել չքնաղ աղջկան, սակայն նույնիսկ կյանքի գնով անկարելի էր հափշտակել կայսեր գրկից Լի-Սի-Շիին։

Այլևս չէր կարող մնալ նա արքունիքում՝ հավերժական անհագուրդ տենչանքի և տանջանքի մեջ ծարավ սրտով տեսնելու լույսերի աղբյուրը իր տոչոր շրթներին այնքա՛ն մոտիկ և այնքա՛ն հեռու, հեռավոր, անմատույց հեռու...

Եվ սիրախոց բանաստեղծը գիշերով ծածուկ թողեց արքունիքը՝ Լի-Սիի դյութիչ պատկերը հոգում և նրա գեղեցկության խայթը սրտում։ Եվ կորավ հայրենի անծայր ուղիներում, որ մխրճվում էին բիլ մշուշների մեջ։

Պարկը ուսին, բամբիռը անութի տակ և ցուպը ձեռին, աղքատ գուսանների պես, թափառում էր արքայական բանաստեղծը՝ մղված իր հմայքի հովերով, առանց նպատակի, ամեն ուղիներով։

Թափառում էր՝ Լի-Սիի աչքերի, հուր-սլաքները — սրտի մեջ, նրա քաղցր անունը — շրթների վրա և աչքերի առաջ — բռնկված պարը հրեղեն աղջկա։

Ահա՛ ագռավները թառ են լինում
Կու-Սուի աշտարակի վրա։
Հրաշագեղ Լի-Սիի պարը
Գինով է դարձրել արդեն արքային։
Արևը էանաչ բլուրների հետև
Արնարամ է եղել վաղուց։
Լուսինը նիրհ է մտել Ցեանքի
Օրորոն ջրերի մեջ։
Եվ սրշալույսի հովը
Հանգցրել է աստղերը արդեն.
Սակայն Լի-Սին պարում է տակավին.
Պարում է անխոնջ...

Հիմա ննջում է նա թագավորի գրկում. և դեղձենիի ծաղկի շուքը թրթռում է նրա ժպտուն այտերի վրա։ Եվ նրա ժպիտը մոռցնել է տալիս, թե կյանքը գարնան պես արագահոս է...

Եվ թափառում էր նա խեղճ ու խոնարհ ժողովրդի մեջ, որի պարզ սիրտը և անչար հոգին սիրում էր շա՛տ բանաստեղծը։

Խոնարհների ցավին և ուրախության մասնակից, նրանց անշուք

խնջույքներում խոսեցնում էր բամբիռը, որի խինդն ու հառաչները արձագանքում էին Ցին-աշխարհի բոլոր ափերում։

Այս կյանքի մեջ մի ստույգ բան ունենք—
Մահը միայն։
Այս բլուրը բերանները, որ համբուրում ենք,
Մի օր պիտի լցվեն հողով։
Այս բամբիռը, որ թրթռում է մատներիս տակ,
Հավերի թառ պիտի դառնա մի օր։
Վայրը, որ ցատկում է հիմա այս հովանոցներում,
Այնտեղ ձկներ են լող տալիս մի օր...
Մի բարեկամներս,
Խմաստունները ուրախության պատեհը
Չեն կորցնում երբե՛ք։
Եվ թափուր չեն թողնում գինու գավաթը։
Ուր շողում են լուսինն ու արեգը։
Ինչո՞ւ համար են փառքն ու գանձը,
Ինչո՞ւ համար են...
Սակայն անվախճան արբեցումը—
Այս է ահա՛ շահավոր գործը։
Արքայադուն Ցենկը երգ չէր սիրում,
Բայց տասը հազար կտոր ոսկի տվավ
Մի անմահ, անմահական գինու համար։
Առե՛ք, ինչ որ ունիմ,
Ձգեստներս, դրամս վերջին,
Երգերս բոլորը ձե՛զ լինին,
Ծախեցե՛ք, ծախեցե՛ք,—
Գինի՛ առեք ինձ համար։
Ես ուզում եմ մոռանա՛լ, մոռանա՛լ,
Որ կյանքը տխուր է մահվան պես,
Եվ երկնքի դրախտը — պատրող մի խա՛յթ միայն...

Եվ լույսն ու խավարը իր հոգում՝ փառաբանում էր նա հայրենի կանաչ դաշտերն ու դեղին դեռները, ճերմակ լոտոսներն ու ծիրանի գլենին, ընկերական սերն ու գովանքները աղջիկների։

Եվ փառաբանում էր նույնպես սրբակրոն կենցաղն ու տարփական գիշերները, անհատական ազատությունը անսանձ և հայրենիքի պաշտումը անձնվեր, և կյանքն ու մահը միաժամանակ։

Եվ անցնում էր նրա կյանքը թափառական ու անտուն, խրճիթն խրճիթ և գյուղ գյուղ գիշերները շա՛տ անգամ բաց երկնքի տակ։

Հաճախ, օրերով ինքնամոռաց, դիննասյզ, գլուխը սիրազեղ աղջիկ-

ների կրծքի վրա և ոչ-ոք օրերով մենության մեջ, աչքերը աստղերին հառած և հոգին տիեզերքի առեղծվածով տեսլացած...

Մի օր հոգնաբեկ քայլում էր նա դեղի մի ավան։

Առաջը կանգնեց շինական աշխարհի երկրորդ նշանավոր բանաստեղծը՝ Թու-Ֆուն։ Խանարհ գլուխ տվեց Թու-Ֆուն և, ծունր իջնելով ճանապարհի փոշու մեջ, երգեց իր ներբողը բանաստեղծների իշխանին.

Բանաստեղծությունն է քո լեզուն,
Ո՛վ Լի-Թայի-Պո,
Եվ սիրտ հավերժական բարբառն է
Քո երգի։
Դու դրում ես, ինչպես թռչուն է երգում.
Քո դայլայլիկները — քո տողերն են։
Եթե դու չերգեիր,
Արշալույսները նվաղ ծիրանի կլինեին
Եվ երկնքի ձեղունը նվաղ կապույտ։
Երբ ոսկի գինով ներշնչվում ես դու,
Դեպի աստղերն են թռչում
Քո արբեցման երկնային երգերը.
Եվ անմահները կախվում են ամպերից՝
Քեզ լսելու համար,
Ժամանակը խորտակում է իր թռիչքը,
Եվ սիրակամ մոռանում է իր սիրուհուն։
Բոլոր մարդկանցից դու՝ ամենագեղը.
Արևի պես պատում ես աշխարհը
Քո հոգու լույսերով։
Եվ մենք՝ բանաստեղծներս,
Աստղեր ենք միայն քո շուրջը դարձող։
Ես սքանչացած քո լուսե փառքերով՝
Սուրբ եմ իջած աստղեր ահա։
Ընդունի՛ր, ո՛վ վսեմդ,
Իմ մեծարանքի թոթովանքները։

Նշավ, որ չինական մի նահանգ ապստամբեց մի պաշտոնանգապետի կեղեքումների դեմ։ Եվ Լի-Թայի-Պոն ըմբոստ ժողովրդի հետ էր։

Կրակից այրող խաղերով վառում էր ռազմիկների խիզախությունը և մարգարիտներից թանկ բառերով երդում էր մարտիկների լքված կանանց տվայտանքները։

Մի դինվորի կին նստած է պատուհանի առջև,
Բեկված սրտով մի հեռավոր վարդ է ասեղնագործում

Մեռաքսե բարձի վրա։
Ասեղը ծակում է մատը,
Արյունը հոսում է հերմակ վարդի վրա՝
Նրան կարմիր ներկելով։
Նրա միտքը թռչում է որոնելու իր սիրածին,
Եվ կռվի վայրումն է և նրա արյունը դուրս հիմա
Կարմրացնում է ձյունը գաղտի...
Լռում է նա ծիծ գոչիլուն.
Իմ սիրտ՞ը վերագարձավ։ Ինչ քաղցր։
Ո՛չ, իր սիրտն է՝ որ տրոփում է ուժգին,
Իր խռով սիրտն է կրծքի տակ...
Եվ գլուխը կախվում է բարձի վրա.
Հիմա քանում է նա իր արցունքների արծաթով,
Որ պատում է արյունոտ վարդը...

Ապստամբությունը ճնշվեց, շղթայի զարկվեցին ըմբոստները և մահվան դատապարտվեցին։ Բանաստեղծը նրանց մեջն էր։

Սակայն կայսրը խնայեց Լի-Թայի-Պոյի կյանքը՝ աքսորելով նրան երկրի սահմաններից դուրս։

Օտարության մեջ, հարազատ ժողովրդի սրտից հեռու, տառապում էր նա, և իր անհուն կարոտը երգում էր հրով ու արցունքով։

Այդ երգերը, Չինի հսկա պարիսպները ճեղքելով՝ մտնում էին մեծածավալ երկրի մեջ։ Եվ նրանցից մեկը հասավ կայսեր ականջին։

Իմ խրճիթից պանդխտական՝
Դուքս նայեցի խոր գիշերին.
Լույս էր մաղում վառ լուսնկան,
Երկիր սփռում արծաթի փոշին։
Խաբում ես ինձ, օտա՛ր լուսին,
Շողերդ արծաթ՝ կեղծ են բոլոր.
Հայիս եմ բեզ կարոտագին,
Իմ հայրենի՛ք, իմ հեռավո՛ր...

Կայսրը հուզվեց։ Եվ արագորեն սուրհանգակ ուղարկեց բանաստեղծի մոտ դարձի շնորհով։

Թևեր առած թռավ-եկավ նա արքայանիստ քաղաքը. և ծայր տվին խնջույքներն ու գինարբուքները օրեր ու գիշերներ։

Երբ մի երեկո բամբուկի ծառերի միջով թրթռում էին հովերը, որ պտիկ ջրընկեցների պես թափվում էին տերևից տերև, ու շշնջում էին նարինջները, որպես թե կանանց մեռաքսե քղանցքների սարսուռները

լինեին՝ Լի-Թայի-Պոն ընկերների հետ նավում էր գետի վրա՝ դինիներով ու նվագով արբած։

Լոտոսների բողբոջներում մարգարիտներ էին ցոլում։ Եվ երանություն էր բուրում երկիր ու երկինք։

Լուսնյակը շողշողում էր գետի մանրիկ ալիքների վրա, որոնք, ասես, արծաթափայլ անթիվ ձկներ լինեին դեպի ծովը խայտացող։

Լի-Թայի-Պոն ձեռքը մեկնեց բռնելու լուսնյակը՝ սեղմելու տոլոր կրծքին, բայց փախչում էր նա բանաստեղծի մատների միջից։

Անպատճառ ուզեց բռնել գիշերվա պայծառ հավերժահարսին, որ դյուրում էր նրան, քաշում էր դեպի ինքը. և Լի-Թայի-Պոն մի ոստումով թռավ գետի մեջ և լուսնյակով կախարդված՝ լուսեղեն շրերի մեջ գտավ իր տենչացած ու ատած մահը...

Եվ ժողովուրդը, որ նրան կես-աստված էր համարում, տաճար շինեց նրա մարմնի վրա և վիպեց ու պատմեց սերունդներին, թե երբ Լի-Թայի-Պոն նավում էր գինեարբ, հանկարծ լսեց երկնային մի երգ. ծովից եկավ դելֆինների մի խումբ, և երկնքից իջան երկու լուսե ոգիներ, որոնք հրավիրեցին Լի-Թայի-Պոյին իրենց հետ մեկնել երանության դաշտերը։

Եվ նա դելֆինների մեջքի վրա տարածուն, ոգիների և նվագի ուղեկցությամբ՝ վերացավ և սուզվեց ոսկե եթերի մեջ։

1923 նոյեմբեր,
Վենետիկ

ՉԻՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՐՍՊԻ ԵՐԳԸ

Հյուսիսի ցրտաշունչ տափաստաններից և սառցապատ լեռներից, գարնանանվերջ, հիոնգնուների և թուրքիուների վայրենի հորդաները մրրկաբաշ ձիերին գամված՝ արշավում էին Չինաստանի հարուստ ծայրագավառների վրա։ Սմբակների տակ տրորում էին ծաղկած արտերն ու այգիները, ավերում էին բարդավաճ քաղաքներն ու ավանները և ահագին ավարով ետ էին դառնում իրենց ցրտաշունչ տափաստանները և սառցապատ լեռները։

Չին կայսր՝ Ցին-Շի-Հուանգ-Թին մտածեց վերջ դնել այս ավազակային հեղեղումներին։ Եվ վճռեց ամրախարիսխ, երկարաձիգ պարիսպ քաշել Դեղին ծովից սկսած մինչև Գոբի անապատի դեղնածավալ ավազների մեջ... որպես պատվար ու պատնեշ, բերդ ու ամրոց՝ հյուսիսից խուժող հեղուղակ ցեղերի դեմ։

Կայսրը բռնակալ և անընկճելի կամք ուներ, գոռոզ և ինքնագոհ բնույթ, և որպես երկնքի որդի հավակնում էր կարծել, թե իրավունք ուներ իշխելու ոչ միայն մարդկային տարերքին, այլև բնության։ Նա նույնիսկ մի անգամ պատժեց մի լեռան, որը հանդգնել էր մրրիկ բաց թողնել երկնքի որդու վրա։

Կայսրը հրամայեց իր մեծածավալ պետության բոլոր ճարտարապետներին ու վարպետներին՝ տասը տարվա մեջ կառուցանել իր երևակայած անծայրածիր պարիսպը, որ վիշապի ձև պիտի ունենա։ Ազգային խորհրդանշանը՝ անմահության պատկերով, օղակված խրոխտ աշտարակներով պիտի մարմնանա լեռների կատարների վրա, ձորերի ու անապատների մեջ։ Պիտի ձգվելով ձգվի և գալարվելով գալարվի, ինչպես վիշապն է ձգվում ու գալարվում, ու իր անհամար օղակների և կողերի մեջ պիտի պարփակի Չինական բոլոր հողերը և ոչ մի ափ հող չպիտի մնա վիթխարի վիշապի մարմնից դուրս։

Եվ Շանգ-Շենգը՝ հսկա պարիսպը, հավերժաբար պիտի կանգնի, իբրև սպառնալիք ու սարսափ մոնղոլական հորդաների դեմ, որոնց վայրագ ճակատները պիտի փշրվեն այնուհետև վիշապի քարակերտ կողքերին զարկվելով։

Կայսրը հրամայեց, որ արու չինացիներից տասից մեկը բանվոր գնա պարիսպները շինելու։

Երեք միլիոն բանվոր հավաքվեցին սահմանագլխի երկայնքին և երեք միլիոն բանվոր տասը տարի անընդհատ լծվեցին տաժանելի ու հյուծիչ աշխատանքի։

Եվ հրամայեց, որ բովանդակ Չինաստանը տասը տարի սնունդ մատակարարեն բանվորներին և անհրաժեշտ նյութն ու առաղձը խոլական վիշապի՝ Շանգ-Շենգի, կառուցման համար։

Դաժան կայսրը խիստ պատժի սպառնալիքով հրամայեց ճարտարապետներին, որ պատերի քարերը այնպես պիտի ագուցվեն իրար, որ անհնար լինի երկու քարի միջև նույնիսկ մի ասեղ խրել։

Ինչքա՜ն վարպետներ ու բանվորներ են կախվել բարձր բուրգերից, երբ կայսրի քննիչները գտել են, թե հրամանը լիովին չի կատարված։

Երեք միլիոն պատանի, երիտասարդ և չափահաս բանվորներ, գյուղացիներ, ընչազուրկներ վաղ առավոտից մինչև ուշ երեկո աշխատել են, տքնել են արևի բոցի մեջ և խայթող հողմերի տակ, որ շաղել են հյուսիսի սառնաշունչ տափաստաններից։

Խմել են առատներ փշրող ավազուտ սառը ջուրը և կերել են չոր բրինձը։ Անսվաղ քնել են ցեխոտ խշտյակների վրա, և նրանց երազը մղձավանջ է եղել։

Աշխատել են նրանք կոպիտ և դաժան հսկիչների մտրակների և բրերի հարվածների տակ։ Փորել են խորունկ հիմներ, մեջքերի վրա կրել են ծանր ու մեծ վեմեր, և բեռի տակ նվաղած՝ գետնահարվել են, և ինչքա՜ն, ինչքա՜ն թշվառներ մեռել են անողոք ծեծի տակ։

Հյուծված, խոշտանգված բյուրավոր բանվորներ ջախջախվել են քարհանքերի փլուզումների տակ, վայր են ընկել պարիսպներից, և փշրվել է նրանց դանգը քարերի վրա։ Եվ բյուրավոր այս մեռելներին թաղել են հիմերի և որմերի մեջ։

Հինգ հարյուր հազար թշվառներ թաղվել են հիմքերի և որմերի մեջ, և Շանգ-Շենգը իրավամբ կոչվել է «Աշխարհի ամենաերկայն գերեզմանոցը»։

Տանջանքից փախչողները դառն ու թշնամի անապատում գտել են իրենց մահը և նրանց անանուն դիակները կերել են քաղցած անգղները և նրանց տառապած ոսկորները լիցել են անապատի չար հողմերը։

Երեք միլիոն աշխատավորներ անհնարին տանջանքներով, իրենց արյունով, մկաններով և ոսկորներով շինեցին տիտանյան Շանգ-Շենգը, հաստատարիսխ հիմերով և ամենի վեմերով, խոլական Շանգ-Շենգը, որ ունի երեք հազար կիլոմետր երկարություն, տասնմեկ մետր բարձրությամբ և բազմաթիվ տեղերում կրկնակի և նեակի պատերով։ Անհամար դոներով՝ երկաթակուռ փեղկերով և նիզերով, անհամար բուրգերով և բարձր աշտարակներով։

Այնքա՜ն քար և աղյուս կա կիրարկած Շանգ-Շենգը կառուցելու համար, որով կարելի է երկու անգամ քարահյուս գոտի կապել երկրագնդի շուրջ։

Այսպես, Ցին-Շե-Հուանգ-Թի կայսրի հրամանով Չինական վիշապանիշ դրոշակը քարեղեն մարմին առավ և այս խոլական պարիսպների անծայրածիր օձը բարձրացավ լեռների կապույտ դագաթները, իջավ մթին ձորերը, կամուրջներով թռավ հորձանուտ գետերից, հաստաբետ ցիցերի վրայով ձգվեց ճահիճների միջով, ձգվեց անկար դաշտերի միջով, գալարվեց և օղակներ կազմելով դնաց, սուզվեց Գոբի անապատի հողմակոծ ավազների մեջ։

Շանգ-Շենգ վիշապը տասը տարի շարունակ,— տառապանքների և տաժանքի մի ամբողջ հավիտենականություն,— ծծեց ու քամեց չին ահագին ժողովրդի հոգեկան և մարմնական ուժն ու զորությունը, նյութական բովանդակ միջոցները։

Մեռնողները մեռան և պարիսպների ծանրածանր քարերի տակ թաղվեցին, իսկ ապրողները, երբ տուն դարձան՝ ծերացած և ուժասպառ, գտան իրենց պարտեզի ծառերը չորացած, տներն ամայի, և հարևանները ցույց էին տալիս նրանց հարազատների գերեզմանները միայն։

Չին սեծ երկրի մեծ ժողովրդի սիրտը մղկտաց և այլայլվեց Շանգ-Շենգի ահռելի վիշապի ավերումների ու սոսկալի հանգամանքների։ և բյուրավոր որդեկորույս մայրերի ու անհամար որբերի հետ լացեց դառնակսկիծ, և նրանց անհուն վիշտն ու ցասումը մարմնավորվեց պարիսպների երգի մեջ.

«Գարնան առաջին ամիսն է մեզմ ու թարմաշունչ։

Ամեն տարի դոնից կարմիր լաստանները են կախված։

Շատերի ամուսինները տուն դարձան, բայց իմ ամուսինը դեռ աշխատում է Շանգ-Շենգի վրա։

Երկրորդ ամիսն է, ծիծեռնների մի զույգ իջավ մեր ցվիթին, նրանք նստում էին երդիկի տակ՝ սյուների վրա։

Բայց իմ տունը դատարկ է և ամուր։

Երրորդ ամիսն է. շողշողում են դեղձի ծաղիկները, և փայլում են կանաչ ուռենիները։

Հարևանները խունկ են այրում նախնիքների շիրիմների վրա։

Չորրորդ և հինգերորդ ամիսներն են. վարդերի և թթենիների պահն է. նուռերի և սալորների տոնն է։ Հարևանները մշակում են իրենց դաշտերը։

Ավա՜ղ, իմ դաշտերը խոպան մնացին...

Լացով ու վշտով անցան վեցերորդ ու յոթերորդ ամիսները. եկավ ութերորդ ամիսը. ծաղկեցին լոտոսները, և աղավնիները նամակներ բերին հեռավոր սիբելիներից։ Բայց մենավոր կնոջ համար ոչ մի լուր խեղճ ամուսնուց, որ հալվում, մաշվում է հայրենի հարկից հեռու, ո՞վ գիտե, ո՞ր անապատի մեջ, ո՞ր ճախճախուտի վրա։

Իններորդ ամսում ճամփա են ընկել ուխտավորները. և գյուղացիները հավաքում են բրինձը, որ վճարեն պետության ծանր հարկերը։

Տասը և տասնմեկերորդ ամիսներում բուք է ու ցուրտ, աղազուն թուփերի վրա պսպղում է եղյամը, և թախծությամբ իջնում է ձյունը և ծածկում բոլոր ճանապարհները։

Տասներկուերորդ ամիսն է. բոլորը նոր տարվա տոների համար են պատրաստվում. իսկ մենավոր կինը, որի ամուսինը մեռել է Շանգ-Շենգի կառուցման վրա, լաց է լինում, լաց է լինում այնքան դառնագին, որ նրա հզոր հառաչանքը հասնում է մինչև երկինքը, և նույնիսկ մեծ պարիսպները լսում են նրան և խորտակվում...»։

Այդ դառն օրերից անցել է քսան և երեք դար, և չին աշխատավորը

քսան և երեք դար երգում է հառաչանքով մեծ պարիսպների այս անդարդ երգը։

Հովիվը երգում է լեռներում բամբուկի սրնդի վրա, գեղջուկը երգում է բրնձի արտերի մեջ մխրճված, կուլին երգում է ծանր բեռի տակ բեկված և բանվորը երգում է գործարանների և հանքահորերի դժոխքի մեջ։

Այս երգը պարիսպների սեփականությունից բարձրացել և դարձել է ստառապանքի խորհրդանշանը, աշխարհաձավալ թշվառության հանգանակը։

Կեղեքումների, բռնությունների դեմ ծառացող ռազմիկների մարտակոչն է դարձել նա և ըմբոստ դանգվածների քայլերգը։

Այս երգը պարիսպներից բարձրացել և դարձել է անհուն Չինաստանի վրա ծածանվող ազատագրման դայլարի դրոշակը, որի ներքո քաղաքներում, գործարաններում, նավահանգիստներում և ամենուրեք ալեկոծվում է չինական ռևոլյուցիան։

Կուլին, բանվորը, գյուղացին այս հնամենի դրոշակի տակ է գրոհ տալիս ու մրրկում ընդդեմ դարավոր կեղեքիչ մանդարինների, ընդդեմ ճապոնի արյունռուշտ աշխարհակալության, ընդդեմ Եվրոպայի ընչաքաղց դրամատերերի, որոնք հաշիշով և շահագործման նենգ ձեռնարկներով ծծում են չին աշխատավորի ուղն ու ծուծը։ Գրոհ է տալիս և մրրկում՝ բյուրավոր զոհեր տալով՝ խորտակելու բոլոր պարիսպները ու բանտերը բռնության, խորտակելու բոլոր բուրգերն ու բերդերը դրամապաշտության, խորտակելու համար բոլոր լուծերն ու շղթաները ազքատության և սոսկության՝ ստեղծելու համար ազատության, իրավունքի, մարդավայել աշխատանքի և արդար վայելքի լուսակերտ աշխարհը դարավոր Շանգ-Շենգի փլատակների վրա։

1935 նոյեմբերի 25,
Փարիզ

ԼԵԳԵՆԴՆԵՐ ԵՎ ՋՐՈՒՅՑՆԵՐ

ՀԻՆ ԱՄՐՈՑԸ

(Զրույց)

Հի՛ն-հի՛ն ժամանակներից, հի՛ն-հի՛ն դարերից քառասուն շարք պարիսպով, հազա՛ր գլխանի, հազա՛ր աչքանի մի ամրոց կար կանգնած բարձրադիր վայրում։

Այդ ամրոցի շուրջը փռված էին հազար-հազար գյուղեր ու քաղաքներ։

Այդ հազար-հազար գյուղերի ու քաղաքների տերը — թագավորը — ապրում էր այդ ամրոցում — գոռո՛զ ու մռա՛յլ։ Հազար-հազար մարդիկ հլու և հնազանդ՝ կանգնած էին նրա սպասին՝ նրա հրամանին։

Իսկ նրա ամեն մի խոսքը հրաման էր, ամեն մի քայլը՝ հրաման և ամեն մի ցանկությունը՝ հրաման։ Առանց նրա հրամանին հովն իր հեվով, թռչունն իր թևով չէր կարող մոտենալ նրա ամրոցին, իսկ գյուղերի և քաղաքների բնակիչները նրան՝ իրենց իշխանին, ո՛չ մի անգամ չէին տեսել. իրավունք չունեին տեսնել ցանկանալու (այդ ցանկության համար նրանք խիստ պատժվում էին)։

Այդ ամրոցից նա իշխում էր գյուղերի ու քաղաքների բյուրհազար բնակիչների վրա...

Հին-հին ժամանակներից, հին-հին դարերից բոլոր բնակիչները համոզված էին, որպես ճշմարտության, թե այդ ամրոցում ապրողը իրավունք ունի իշխելու մարդկանց վրա — նրանց կամքի, կյանքի և մահի վրա, օրենքներ տալու նրանց, և իրենց իրավունքն է՝ միայն հպատակվել այդ օրենքներին։

Եվ նա օրենքներ էր տալիս ամեն օ՛ր, ամեն ժամ — նրա ամեն խոսքը օրենք էր, ամեն քայլը՝ օրենք, ամեն ցանկությունը՝ օրենք։

Իսկ օրենքը մարդկանց աչքում սրբություն էր և անմահ ճշմարտություն։

Եվ նրա հազա՛ր-հազա՛ր սպասավորներ, որոնք վինված էին և թագավորից միշտ ոսկու գանձեր, պարգևներ էին ստանում — անդադար համոզում էին հպատակներին, որ թագավորը աստծու սավերն է երկրի վրա, որ նրա հայրերը խոսել են աստծու հետ. աստծու սիրտը թագավորի սրտումն է, նրա կամքը թագավորի կամքն է, և թագավորի օրենքները — աստծու ներշնչածը. և այդ բոլորը հաստատելու համար նրանք հին-հին մագաղաթյա գրքեր էին ցույց տալիս։

Եվ ստրուկ ու համբ ժողովուրդը հավատում էր այս ամենին և օրհնում թագավորի կյանքը և հնազանդում նրա կամքին։

Իսկ նրա կամքը՝ անբեկանելի, անսահման և թեատարած փովել ու ծանրացել էր ժողովրդի վրա։

Իսկ նրա կամքը արյո՛ւն էր ու մա՛հ, տանջա՛նք ու կախաղա՛ն։

* * *

Եվ թագավորը իշխում էր ամբոցից ժողովրդի վրա. այն հազա՛ր-հազա՛ր գյուղերում ու քաղաքներում ժողովուրդը հեծծում էր ու տառապում թագավորի երկաթե օրենքների շղթաների մեջ, նրա սպասավորների բռունցքի տակ, բայց չա՛տ թանձր էին քառասուն շարք պարիսպները, և միշտ խուլ էր թագավորի սիրտը։

Եվ թագավորը օրենք էր հրատարակել, որ բոլո՛ր հողերը և ջրերը, անտառներն ու կենդանիները իրենն են, և որ ինքը բարեսրտությունից այդ տալիս է ժողովրդին՝ օգտվելու, թե չէ ժողովուրդը քաղցից կմեռնի. և ժողովուրդը պիտի աշխատեր գիշեր ու ցերեկ, ծովաչափ քրտինք թափեր և դրա համար ժողովուրդը պիտի նրան ամենահպատակորեն շնորհակալություն հայտներ — ներկայացնելով նրան իր արյուն-քրտինքի ամբողջ աշխատանքը, և թագավորը վերցնում էր ամեն ինչ, ամեն ինչ, որ դրանով նորից բարիքներ մատուցանե ժողովրդին, բայց նաև գթասրտությունից թողնում էր մի բան ժողովրդին — այնքան, որ քաղցից չմեռնեն։

Իսկ եթե մի ըմբոստ իր աշխատանքից մի բուռն պահում էր իրեն համար և չէր ներկայացնում, դրա պատճառով սպասավորները նրան բանտ էին ձգում, քաղցած թողնում։

Եվ եթե մի ուրիշ երկրի թագավոր հարձակվեր և ուզենար նստել նրա ամբոցում — ժողովուրդը պարտական էր կռիվ մտնել նրա զորքերի դեմ, մինչև մինչև վերջին մարդը և թույլ չտալ իրենց թագավորին ուրիշը փոխարիներ...

Իսկ եթե մի ըմբոստ երիտասարդ, մոլորվա՞ծ թե՞ սատանայից դայթակղված, դուրս էր գալիս և հրապարակի մի անկյունում խոսում էր թագավորի օրենքների դեմ, թե դրանք մի քիչ խստասիրտ են, կամ սպասավորների մասին՝ թե անսեր են — իսկույն բռնում էին այդ ըմբոստին և նրան ազատախոս լեզվից կախում հրապարակի վրա՝ ժողովրդին օրինակ ցույց տալու համար։

Իսկ ժողովուրդը ուրախանում էր և մեղադրում նրան, որ հանդգնեցավ թագավորի աստվածային կամքի դեմ գնալու, որ այդ խենթերը կործանում են ժողովրդի բախտը և բարեգութ թագավորի արդար ցասումը բերում.

«Թո՛ղ կուլեն այդ ըմբոստները. նրանք կործանում են մեր թագավորությունը. կեցցե՛ մեր թագավորը. նա է մեզ ապրեցնում ու կառավարում. առանց նրան մենք կորած ենք. ապրա՛ծ կենա՝ հազա՛ր-հազա՛ր անգամ մեր տերը, մեր թագավորը»,— այդպես էին խոսում նրանք։

Եվ նրանք հի՛ն-հի՛ն ժամանակներից, հին-հին դարերից համոզված էին, որ թագավորը ժողովրդին կառավարում է, որ ամեն մարդու կամքին անտեսանելի սանձ կա և այդ անհամար սանձերը գտնվում են թագավորի ձեռքում, որը իմաստուն կերպով կառավարում է. եթե նա չլինի, ժողովուրդը անսանձ կգնա, կընկնի մահի խորխորատը...

Եվ թագավորը բռնած իր ահեղ և աշխարհակալ ձեռքում այդ հազար-հազար գյուղերի ու քաղաքների անհամար բնակիչների անթիվ, անտեսանելի սանձերը՝ բոլորին կառավարում էր իմաստուն կերպով դեպի բախտը, երջանկությունը... Այսպես էին հավատացած նրանք։

* * *

Մի օր, վաղ առավոտյան անծանոթ մի մարդ ծիրանավառ գրոշակը ձեռքին բարձր բռնած, հնավոր երկրից մի եկվոր, հպա՛ռտ և ազա՛տ ճակատով եկավ և բարձրացավ մի լեռան վրա և հզոր ու որոտալից հնչեց շեփորը։ Նրա ահեղազոլ ձայնը փոթորկի պես անցավ այդ երկրի մի սահմանից մինչև մյուս սահմանները, և բոլոր բնակիչները ցնցված այդ հզոր և նոր ձայնից, վեր կացան և վազեցին դեպի լեռը։

Եվ շեփորը մրրկում էր և ժողովրդին կոչում իր մոտ. և երբ բոլոր ժողովուրդը եկավ և ծովի պես փովեցավ նրա շուրջը, նա ասաց.

«Վա՛յ ձեզ, ժողովուրդ, հիմա՛ր և ստրուկ. հազար անգամ վա՛յ, որ դուք չեք զգում, չեք իմանում ձեր ստոր վիճակը. լուծ է դրած ձեր վզին,

շղթա է փաթաթած ձեր ոտներին, և այդ ամենը դուք ձեր ձեռքով եք արել, դուք եք ստեղծել ձեր գլխին իշխան՝ բռնակալ և հպատակվել նրան, և մեռնում, տառապում նրա համար. խելքի եկե՛ք, միացե՛ք, փշրեցե՛ք ձեր շղթաները, գցեցեք ձեր լուծը, սուր վերցրեք և մի մարդու պես՝ մի հոգի՝ հարձակվեցեք բռնակալի վրա և նրա սպասավորների վրա և մեր շղթաներով կապեցեք նրանց, հազա՛ր-հազա՛ր տարիներ մեր արյուն-քրտինքը ծծեցին։ Եվ ձեզ ազատության խոսք եմ շնորհում. հառա՛ջ, դեպի ազատամարտ, գնա՛նք, խլե՛նք մեր ապրելու իրավունքը, մեր իշխելու իրավունքը, մեր ազատությունը խլենք. կորչի՛ թագավորը, կեցցե՛ ժողովուրդը...»։

Եվ որովհետև նա խոսում էր հրեղեն և անկեղծորեն — նրա խոսքը կայծակի պես ճեղքեց ու վառեց բոլորի սրտերը, ոգի առան բոլորը, վրեժի կրակով լցվեցին, փոթորիկահույզ ծովի պես գոչեցին — «Տա՛ր մեզ դեպի՛ կռիվ, դեպի՛ մահ, դեպի՛ կյանք, կորչի՛ բռնությունը, կեցցե՛ ազատությունը...»։

Եվ հազար-հազար տարիների բռնության խավարը առաջին անգամ ցրվեց ժողովրդի հոգուց, բացվեցին նրա աչքերը, և զարթնեց նրա միտքը, և նա զգաց լուծը և անարգանքը ստրկության, կեղեքումի և տառապանքի անծայրածիր աշխարհը. և ժողովրդի սիրտը առաջին անգամ լցվեց ատելության, կործանումի և վրեժի սոսկալիթթխար փոթորկով...

Եվ նորից այն ծիրանի դրոշակակիրը փչեց շեփորը, մարտակոչերը և բոլորը դիմեցին ու դրահագորվեցին և ազատության պատգամաբերի հետ գրոհ տվեցին դեպի բռնության որջը ազատության. դրոշակի տակ, որոտացին և ազատաշունչ երգերով. մրրկածուփ ալիքների պես արշավեցին դեպի ամրոցը՝ ավերելու, խորտակելու և մաքրելու աշխարհը լկումից և բռնությունից...

Բայց երբ մոտեցան ամրոցի վայրին — իրենց աչքերին չհավատացին — այն ահարկու և հոգեթաղ ամրոցը չկար. ո՛չ մի քար, ո՛չ մի բեկոր այդ վիշապանման ամրոցից...

«Այս հրա՞շք է,— գոչում էին նրանք, և ո՛չ ոք չէր հավատում այդ հրաշքին, ո՞ւր գնաց այդ ամրոցը, ո՞ւր փախավ — բոլորը մնացին զարմացած, իսկ ամրոցի փոխարեն ծփծփում էր դալար, ծաղկավառ բարձրավայրը...

Եվ այն ժամանակ նորից հնչեց շեփորը, և եկվորն ասաց. — «կեցցե՛ ազատամիտ ժողովուրդը. նա հրաշագործ է.— դո՞ւք էիք ստեղծել այդ ամրոցը՝ այդ բռունցքը, այդ գայլ-սպասավորներին և այդ ամեն սարսափները. դո՞ւք էիք տվել նրանց այդ իրավունքները և սողացել նրանց ոտների ներքո։

Դո՞ւք էիք ստեղծել այս ամենը ձեր հոգում, և երբ դուք հասկացաք, և զարթնեցիք, և ձեր հոգին ազատեցիք — նրանք չքացան, որովհետև նրանք չկային իրապես, դուք էիք ստեղծել այդ ամենը՝ իբրև ծանր երազ...»։

Եվ ժողովուրդը տեսավ, որ նա հին-հին դարերից, հին-հին ժամանակներից կապվել ու կաշկանդվել էր իր ստեղծած ծանր երազի մեջ, որ հիմա փշրված են բոլոր շղթաները և կտրված բոլոր սանձերը, որովհետև ինքը ուզեցավ ազատ լինել և՛ եղավ ազատ, շղթայազերծ, և՛ եղավ երջանիկ, և՛ ինքնիշխան...

Եվ ընկավ նա մեծ ուրախության մեջ, ծածանեցին ամենուրեք ծիրանավառ դրոշակները, քառատոն օր, քառասուն գիշեր խնջույքներ սարքեցին, պարեցին և երգեցին. ես էլ էի նրանց հետ, նրանց տանջանքին և կռվին մասնակից, նրանց ազատության և խնջույքին մասնակից. երգեցինք միասին ազատության հզոր երգերից և խմեցինք վարդափրփուր գինին՝ ազատության կենացը և ազատատենչ ժողովուրդների կենացը...

1906

ՇԻԴՀԱՐԸ

(Ասապել)

Թափառական Շիդհարը վեր բարձրացրեց մտազբաղ աչքերը, որոնց վրա արևակեզ ճակատի խորունկ խաչշմներ էին իջել։

Եվ տեսավ դարմանքով, որ ա՛յն վազեմի ծանոթ ծովը, որի շառաչուն ափերով ինքն անցել էր մի քանի անգամ իր դարավոր թափառումների անկյան ընթացքին, հիմա մի ծալավուտ և տատասկոտ անապատ է դառել։

Եվ տեսավ, որ նախկին ծովի կանաչ ալիքների փոխարեն, որոնց վրա նավերն էին օրորվում փետուրի պես,— հիմա ավազի դեղին ալիքներն են գալարվում անապատային առյուծի բաշերի պես։

Եվ նավերի փոխարեն դանդաղ քոշլում է քարավանը խուլ զողանջումով։

Ծլկաթեղեն ոտներով մոտեցավ նա քարավանի պետին և խոլաձայն հարցրեց.

— Քանի՞ ժամանակ է, որ այստեղ անապատ է գոյացել։

— Խե՛ղճ ծերուկ, խելքդ թոցրել ես,— բարձրաձայն ծիծաղեց առաջնորդը։

— Ճիշտ եմ ասում, անծանոթ բարեկամս, տարիներ առաջ երբ անցա, այստեղ մի անեզր ծով կար, իսկ հիմա .— անցուր անապատ։

Եվ նրա ահագնցիկ ձայնը գալիս էր դարերի մռայլ խորքերից։

— Սակայն քո աչքերից լի երևում, թե դու խելացար ես։ Բայց ի՞նչ անհասկանալի բաներ ես ասում։ Մեր պապերի պապերի պապերը անցել են այս տեղով, ու նրանցից էլ շա՜տ առաջ շատերն ես անցել, իսկ այս անապատն աշխարհի սկզբից կար ու կմնա...

Երագի մեջ ես, ծերուկ, երագի մեջ։

Մի դաժան ծաղր կծկվեց Շիդհարի սևաթույր շրթների անկյունում։ Եվ նորից քայլեց առաջ։

Անցան դարեր, նորից դարեր։

Թափառական Շիդհարի հաղյուր ա՛գաս երկիրը չափով ոտնքը մի անգամ վերջին ոտքվեցին դեպի անապատը։

Երբ մոտեցավ ծանոթ վայրի սահմաններին՝ տեսավ, որ երբեկվա ամայի անապատում հիմա մի մայրաքաղաք է եռում։

Մոտեցավ շաղաքի մեծ դռանը և միամտորեն հարցրեց դռնապանին.

— Ի՞նչ շուտ շինեցիք այս քաղաքը։

Դռնապանը շատ տարօրինակ գոռավ այս հարցը։

— Ինչպե՞ս թե... շինեցինք։ Վաղո՜ւց, վաղո՜ւց գոյություն ունի այս քաղաքը. մեր պապերի պապերի պապերը չգիտեն անգամ, թե ո՞վ և ե՞րբ ձգեց այս քաղաքի հիմները։ Այս քաղաքն այնքան հին է, որքան աշխարհը։

Մռայլներով լեցուն աչքերը մեծ թափառականը նետեց քաղաքի վրա — փողոցներում և շուկաներում խռնվում էին այրեր, կանայք և երեխաներ։

Ոմանք ճանապարհում էին մտահոգ, ոմանք արնի տակ զվարճանում էին անհոգ, և երեխաները զվարթ խաղ էին անում աղբյուրների շուրջը։

Կանայք՝ պճնված վարդերով ու գոհարներով, հրապուրում էին այրերին. և նրանց երազուն հայացքները սիրո անվախճանությունն էին խոստանում։

Հրապարակների վրա պերճախոսները օրատում էին հավերժական ճշմարտի և գեղեցկի մասին, մարդու տիեզերական ուրժանքի և նրա գերագույն նպատակների մասին...

Նորից մի դաժան ծաղր գալարվեց՝ անապատի օձի պես՝ Շիդհարի մթագին շրթների վրա։

«Ինչն թանչ վայրկյանը, որ մարդիկ կյանք են անվանում, հավերժության է թվում այս խեղճերին... Սակայն, ո՛վ փրկարար պատրանք... Իրենց խիստ նեղշից տիեզերական օվկիանի խորհուրդներն են լուծում և գլուխներ են ստեղծում անհանդին և անասահմանին... Անապատի վրա՝ մի սառնամանի ամպի տակից ավելի ստահոդ է ձեր էությունը... Սակայն տեսանելը վաղը ի՞նչ է լինելու...»։

Եվ վերջապես քայլեց անցուր դարերի թափառականը։

Անցան դարեր, նորից դարեր, և եկավ վաղը։

Հիշեց Շիդհարը վաղեմի քաղաքը և ուզեց այցելել նրան։

Երբ հասավ նրա սահմաններին՝ տեսավ, որ քաղաքի տեղը հիմա փռված է մի ցաշտավայր՝ ծաղկավետ և գարնանագնդ։ Գետակի ափին ջարում էին ու երգում ցորաբողբոջ աղջիկները։ Եվ հովիվը արածացնում էր խաշների հոտը սրնդի դայլայլների տակ։

— Ո՞ւր գնաց այստեղից քաղաքը,— հարցրեց նա հովվին։

— Ի՞նչ քաղաք,— ապշեց հովիվը։

— Տարիներ առաջ իսկ և իսկ այս կողմերն էի. մի մարգաշատ քաղաք էր եռում այստեղ։ Նրա մասին է խոսքս...

Հովիվը քար-կտրած նայում էր Շիդհարին։

— Ե՞րբ առաջ եկավ այս դաշտը,— հարցրեց Շիդհարը։

— Ի՞նչ սարսափելի բաներ ես ասում. ես քեզ չեմ հասկանում... մեր պապերի պապերի պապերը, և էլի առաջ, այստեղ իրենց հոտերն են արածացրել։ Այս դաշտը կար աշխարհի սկզբից և կմնա...

Հինավուրց թափառականի մռայլ շրթները նորից գալարվեցին. և արգահատանքի մի հայացք, դաշույնի պես շողաց նրա աչքերում։

«Եղիցի՛ մարդիկ, երկիր նրանց համար գոյություն չունի, այսօրն է նրանց համար միակ իրականը... Երգում են և պարում, և չգիտեն, որ իրենց ոտների տակի երնկվա կիրեղմանը՝ վաղը իրենց գերեզմանն է լինելու...»։

Եվ նորից քայլեց Շիդհարը։ Զյունաթույր մազերը ալեկոծվում էին նրա մթին ճակատի վրա։ Քայլում էր և հազար խորքում զառնագին խորհում մարդու միամտության և նրա գոյության ակնթարթի վրա և բոլոր իրերի գահավեժ հոսման վրա...

1907

ՇԻ-ՀՈԱՆԳ-ՏԻ ԲՈՂԴԻԽԱՆԸ

(200 տարի Քրիստոսից առաջ)

Երկնային պետության տերը՝ Շի-Հուանգ-Տի Բողդիխանը, երկնքի պես հպարտ ու բարձրամիտ, նստել էր փղոսկրե գահույքի վրա՝ մոայլ և դաժան։ Նրա աչքերի մեջ մրրկում էր դայլացկոտ Դեղին ծովը, անդուլ ճտնկոում է Չինու ափերը։ Եվ նրա խոժոռ Ճակատի վրա կնճիռները Գոբի անապատի օձերի նման գալարվում էին։ Բաղմել էր նա մատաղաջ և դժնատենչ, ինչպես մթագին ամպը, որ շանթ ու որոտ ունի կրծքում խաղացած։

Նրա դահույքի պատվանդանի ներքև՝ հատակի վրա գետնատարած, ինչպես մրրիկի առջև արտերն են լինում, անհույս ճակատները մարմարե սալաքարերին սեղմած՝ սատանել էին չինական աշխարհի բոլոր դիրքերի ներկայացուցիչները և իմաստունները — չորս հազար հիսուն ալեծածան գլուխներ։

Եվ որոտաց Բողդիխանը։

— Արյունք այրվե՞ց, ծուխ ու մոխիր դարձա՞վ Ողիների աշտարակի վրա հոխորտացող ատողադիտարանը։

— Այո՛, երկնքի և երկրի տեր, այրվեցին, ծուխ ու մոխիր դարձան աշտարակն ու դիտարանը քո ասավածային հրամանի համաձայն,— ահաբեկ պատասխանեց մեծ նախարարապետը՝ ճակատը մինչև հատակը բախելով։

Նորից որոտաց Բողդիխանը։

— Արդյոք այրվեցի՞ն, ծուխ ու մոխիր դարձա՞ն այն մատյանները ու մագաղաթները, որոնք գանվում են իմ գայլատեսի ներքո, որոնք ճգնում են տիեզերական գաղտնիքներն ու պատճառները լուծել, բայց որոնք խաբում են ու մոլորեցնում մարդկային ոգին միայն։

— Այո՛, երկնքի արև, երկրի երկինք, ասավածների որդի, ամեն ժամ հավաքվում են մատյանները և այրվում քո երկնափայլության ապարանքի հրապարակի վրա, քո ամենակարող կամքի համաձայն,— պատասխանեց մեծ նախարարապետը՝ ճակատը հատակին քսելով։

— Հիմա դուք ինձ ասացեք, ով գիտուններդ և իմաստուններդ,— դարձավ Բողդիխանը նրանց,— դուք, որ բրջում եք երկինք ու երկիր, մարդկային հոգին և կենդանու հոգին, և ամեն ինչ։ Ասացեք, ինչո՞ւ համար է ապրում մարդը, ի՞նչ է կյանքի նպատակը, որտեղի՞ց ենք գալիս մենք, ո՞ւր ենք գնում մենք, ի՞նչ է նյութը, ի՞նչ է ուժը, և ինչո՞ւ են դրանք, պատասխանեցեք ինձ։ Ասացեք, ի՞նչ է տիեզերքը, ինչո՞ւ ստեղծվեց նա, ե՞րբ է նրա սկիզբն ու վախճանը, և վերջապես, ի՞նչ է ժամանակն ու տարածությունը, և ինչո՞ւ են դրանք...

Տիրեց անապատային խորին լռություն։

— Դո՛ւ ասա, ո՛վ ծերուկ, որ ավագն ես գիտուններիդ մեջ,— դիմեց նա ամենից զառամյալին։

— Այդ դու մեզնից բյուր անգամ լավ գիտես, ո՛վ մեծդ Բողդիխան, դու՝ արքաների արքիվ, որ երկնքի որդին ես և արևից իջած,— երկյուղածին պատասխանեց ծերունին։

— Եթե չգիտենք, ապա ինչո՞ւ ենք գրում և կաճառներում իրար կոխոդ պատռում։ Շուտ պատասխանիր։

— Տեր իմ ամենահզոր... Մենք կարող ենք պատասխանել, բացատրել, եթե հանելի է քո երկնային ականջներին, շատ բաներ, «բայց թե ի՞նչ է և ինչո՞ւ համար է» — չենք կարող։ Այնքան մեծ է, սոսկավիթխար, անպարունակ և անպարփակ տիեզերքը, որ մենք նման ենք այն անձին, որ կանգնած անհեր օվկիանի ափին՝ մի շիթ միայն վերցրած նրանից, կշռում է այդ շիթը ամբողջական օվկիանի ծանրությունը իմանալու համար։ Անզոր է մարդը՝ ընկնելը տիրում ամենուրեք որդերի։

Ամենայն երևույթ, ամենայն առարկա իր պատճառն ունի և իր հետևանքը, մենք կանգնած ենք պատճառների սանդղակի մի անհայտ աստիճանի վրա. երբ պատճառները քրքրելով իջնում ենք աստիճան առ աստիճան դեպի խորխորատ անդունդները տիեզերքի, մեր միտքը հալչում է ու ցնդում, ինչպես անձրևի կաթիլը կիզող արևակի առաջ... ոչ ոք չի կարող իջնել մինչև առաջին աստիճանը, որովհետև նա չկա...

Աստվածների մեծ շառավիղ, այն բոլորը, ինչ մենք տեսնում ենք, զգում ենք կամ լսում՝ ծնունդ են տիեզերական մայր պատճառի, մայրը բոլոր, բոլոր պատճառների. պատճառականության շղթայի մի օղակն է միայն մեր ձեռքում, իսկ մյուս անհամար, անթիվ օղակների շղթան թաղված է անհունության մեջ։ Ոչ ոք երբեք չի կարող և չպիտի կարողանա հասնել առաջին օղակին, որովհետև նա չկա...

— Ինչի՞ս է պետք այն, ինչ որ ես տեսնում եմ, լսում եմ ու շոշափում. երեխան իսկ գիտե և հասկանում է իրերը այնպես, ինչպես ինքն է զգում կամ երևակայում։ Տիեզերական բովանդակությունը ինձ չի հետաքրքրում, ես ուզում եմ նրա էությունը իմանալ։ Ժամանակի և տարածության պատճառն եմ ուզում իմանալ։ Պատասխանեցեք ինձ և կամ մեռեք բոլորդ...

Ամպրոպի նման որոտաց Բողդիխանը, և բովանդակ ապարանքը դղրդաց, և նրա դաժան աչքերի դեղին ծովերը փոթորկեցին մոլեգին...

Լոտոսի տերևների պես դողացին բոլոր գիտուններն ու իմաստունները։

— Երկնքի որդի, ամենաբարի ոգի, տեր մեր կյանքին ու մահին, սուրբ է քո կամքը և քո տենչը դեպի իմացականությունը՝ նվիրական, բայց ինքը՝ մեծն Մաքիա-Մունին, Հիմալայը խոկման, իսկ՝ մեծն Լաոծեն, ինքը՝ մեծն Կոնֆուցիոն, որոնց բերանով ինքը՝ ժ[illegible] և տարածության, հավերժության և անսահմանության ասելիքն է բարբառում,— նրանք նույնիսկ անկարող եղան բարձրացնել տիեզերական անհասանելի գաղտնիքների վարագույրի ամենաչնչին ծայրն անգամ...

— Ո՞ւր ամենքդ պիտի մեռնեք, եթե չմեկնեք ինձ լիկոզ, շարաշար կեղեքող հարցերը,— մռնչաց Բողդիխանը,— դուք ամենքդ պիտի մեռնեք...

Զայրույթից և հուսահատությունից ըմբոստացած՝ ծուռացավ ավագ իմաստունը, գավազանը խփեց մարմարյա հատակին, թոթվեց ալեհեր բաշը և խրոխտացավ Բողդիխանի ճակատն ի վեր։

— Ստրուկների տեր... անհուն է, անսկիզբ, անվերջ, անափ, անըմբռնելի տիեզերքը՝ իր ժամանակով և տարածություններով, անհամար աստղեր ու արևներ են ծնվում ու մեռնում, ինչպես վայրկենական երևույթներ հավերժության մեջ, ինչպես մանր խխունջներ օվկիանոսի մեջ։ Տիեզերքը լցված է արևների ավելի շատ հույներով, մոլորակների ավելի անթիվ երամներով, քան մեծազոր մեր արքայի հսկայական շտեմարանները բրնձի հատիկներով, քան փեթակները մեղուների պարսերով...

Եթե արքան ստրուկներիս՝ կարողանա գտնել հրեղեն, թևավոր նժույգին, որը եթե կարողանա լույսից և մտքից ավելի արագ՝ մի հազարերորդական վայրկյանում հասցնել արքային հեռավոր արեգակին և անցնել այն կողմը և նույն թափով անհամար, անհամար, անհամար դարեր արշավել տիեզերական տարածությունների միջով՝ այն ժամանակ մի մազ անգամ առաջ դնացած չի լինի արքայի գահույքի մոտից... այդքան ահագին է և անըմբռնելի է տիեզերքը...

Այլևս մենք ոչինչ չենք կարող ասել, սպանիր մեզ, դու, որ երկնքի որդին ես, դու պիտի գիտենաս այն, ինչ որ մենք չենք կարող գիտենալ...

Լռեց ծերունին. Բողդիխանն առավ մոայլ ճակատը ափերի մեջ և խորհում էր։ Տիրեց ծանր ու երկար մղձավանջային մի լռություն։ Ապա Բողդիխանը առանց ճակատը բարձրացնելու՝ անդրաշխարհային ձայնով շշնջաց.

— Տարեք սրանց ամենին գլխատման հրապարակը։

Նախարարապետը գլուխ իջեցրեց Բողդիխանի առջև, և բոլոր գիտուններին և իմաստուններին դուրս տարավ գլխատելու։

Մյուս օրը Բողդիխանի հրամանով ներկայացավ նախարարապետը և հայտնեց, որ ամենքը գլխատված են արդեն։

Այն ժամանակ շանթերով փայլատակեցին Բողդիխանի մռայլ աչքերը, և հրամայեց նախարարապետին.

— Հրավիրատակեցեք մեր պարիսպներից մինչև դարպասները երկնածիր Հիմալայի և մինչև ափերը մեծ օվկիանոսի, որ այսուհետև երկնային պետության սահմաններում չպիտի գրվի ոչ մի գիրք «Ինչի և ինչո՞ւ» մասին, չպիտի խորհվի կյանքի նպատակի մասին, չպիտի հարցվի պատճառների պատճառի մասին, իրերի սկզբի և վախճանի մասին, չպիտի քննվեն տիեզերական գաղտնիքները, և մանավանդ ոչ մի շրջակ ժամանակի-տարածության առնչվածի մասին։ Երբե՛ք, երբե՛ք։

Հրավիրատակեցեք աշխարհ-աշխարհ, որ Շի-Հուանգ-Տի Բողդիխանը սպանեց Ոգին ու Միտքը, որովհետև Ոգին մղում է դեպի անհասություն, միտքը՝ դեպի մահ։ Կորչեն Ոգին ու Միտքը։ Կեցցե՛ կյանքը անգիտակ և բնազդային։ Քաղ ասրի իմ ժողովուրդը առանց Ոգու և Մտքի՝ անգիտության մեջ ուրախ և երջանիկ, թող կենսաբաշխ արևի տակ սիրի, աճի և զվարճանա։

Երեկոյան պալատականները գտան Բողդիխանին գահույքի վրա մեռած՝ դաշույնը սեփական ձեռքով իր սրտի մեջ խրած։

1907,
Ղաշարապատ

ՉԻՆԳԻԶ-ԽԱՆԸ

Ղարա-Ղորումի պարիսպների ստվերները աշխարհներ են ծածկում, և աշխարհների աչքն ու ականջը դեպի Ղարա-Ղորում են դարձած։

Աղղերի արյունով շաղախեց Չինգիզ-խանը Ղարա-Ղորումի պարիսպները, և աղղերի հազար-հազար ու բյուր գանգերով բուրգ ու աշտարակ շինեց Չինգիզ-խանը։

Ոսկեղուն քյոշքում նստել է Ջինգիզ-խանը փլատակի վրա, դառամած գլուխը սպիտակ մազերի ուսի, ինչպես հավերժական ձյունների տակ Տյան-Շանի ամպածածկ գագաթը։

Սակայն նրա գահույքի ոտները պատվանդան են շինել Մեծ Օվկիանոսից մինչև բոլորավար ծովը Հնդու, Գոբի մրջկաշունչ անապատից մինչև երկնառաս չշ բարձունքները Կավկասի։

Մոռալ այքերով, ինչպես անդունդները Վրկանա ծովի, փամփ է դահույքի վրա Մեծ Մոնղոլը։ Նա ծերացել է։ Լեռները թունդ հանող ոտները հազիվ են շարժվում, ժողովուրդների սասանող ձայնը մարել է, վարար ու առյուծ մինչև սոնձող բազուկը՝ թուլացել։

Մեծ վեզիրը և պալատականների խանի պատվանդանի նստոց, դարձերի վրա ծնրադիր՝ նստել են գլխիկոր՝ ոսկանջ դարձած սպասում են խանի հրամանները։

— Է՛յ, վեզիր,— նվաղած ձայնով դիմում է խանը,— ձանձրանում եմ ես, սաստիկ ձանձրանում... Դանա՛յք բերեք, թո՛ղ պարեն, երգեն, թո՛ղ լոգանք անեն մոտս... Գինի՛ բերեք, էյ, գինի՛ բերեք, հարյուր տարվա հրաբորբոք գինի...

Կրնկի վրա բացվում են եբենոսյա դռները, և երգի, ծիծաղի և բուրմունքի հետ խանի սերայը ներս են դալիկաչում մատաղ եղնիկների բույլեր — շքեղ, մարմարիոնե աղջիկներ, որոնց որսացել են, բերել Դանդահարի ասիական ապարանքների միջից, Շիրազի վարդաստանների միջից։

Սերայի հսկա դահլիճում, խանի շուրջը, հույլը-հույլը պարում են նրանք շղարշների մեջ ծփուն և՛ հոլանի, և՛ ծաղկապսակուն։

Նրանց արշալույսների նման շքեղ և շուշանների նման մաքուր մարմինները բուրում են անուշ յուղերով և կնդրուկներով Հնդստանի և Արաբստանի։

Բուռն և քնքուշ պարում են նրանք։

Գիշերների պես սևաթույր են և արևի պես ոսկի են նրանց մազերը, որ խուժել են նրանց լուսեղեն մեջքերի վրա, և գնաթթվում են կարոտի պես նրանք նազելի դարձուցներով և սրբելացուցիչ բարմունքով ոսկույլ ոսկույլ կայծ են ընկնում ձյունապատ երծքերի վրա, ինչպես սև ու ոսկի ամպերը Կունլուն-Լուհի ձյունների վրա։

Դրախտի խնձորենիների պես՝ անուշաբույր սաղմերները թրթռում են լուսնկային ծոցերում, ինչպես այն ծիրանի դինին բյուրեղյա սկահների մեջ...

Ինչպես հազարան-բլբուլները Ջինամաչինի արքայական վարդարաններում, այնպես երգում են փերիները կարոտի և անուրջների երգերից, երգում են համբույրների և սիրո գիշերների մասին, երգում են ու պարում, բուրում են ու երաշանում խանի շուրջը — և սիրո մոռացարաշխ գիրկն են հրավիրում նրան։

Բայց լսում է Ջինգիզ-խանը և չի լսում, լսում է, բայց չի մրմնջում հանգած արյունը նրա։

Ձմրուխտ և հակինթ թասերի մեջ եռում է գինին, երիտասարդ կինվորի ալյան պես Ցոլբոքում է նա, ում լեզվի վրա մի կաթիլ է ծորում...

Եվ խմում է Ջինգիզ-խանը։

Ճենապակի ավազանների վարդաջրերի մեջ լոգանում են փերիները։ Նրանց մազերի ուշկոյզներից աղամանդի և մարգարիտի հատիկները պես ջրերի կաթիլները ցայտում են վեր ու վար վազող շատրվանների հետ, և վարդաջրերի գոհարները բրբջալով, ծիծաղելով ցատկում, թռչում են հետո՝, ընկնում են Ջինգիզ-խանի ճակատի վրա և սառչում, սառույց դառնում։

Նայում է խանը հարիների շողշողուն մարմիններին. նայում է, բայց չի տեսնում. տեսնում է, բայց սառած սիրտը նրա չի ալեկոծվում։

Քնարի, սրնգի և ծնծղայի ներդաշնակությունը հյուսվելով և ոլորվելով մարմարյա սյուների հետ՝ բարձրանում է վեր, փովում է ոսկի առաստաղին, թռչում է դուրս՝ երկինք, բայց չի հասնում խանի ականջին, բայց չի փոթորկում քարացած հոգին նրա։

Արմաչյա և ծովակյա փերիների հայացքների հուրն ու նետերը հառագայթում են ամեն կողմ. տարափի պես թափվում են խանի վրա — համբույրների և հրավիրանքների սաստան են հյուսում նրա շուրջը, բայց պողպատյա վահան է դարձել խանի սիրտը. և ո՛չ մի նետ չի խոցում նրան. ո՛չ մի կրակ չի ջերմացնում նրան։

Ձմրուխտ և հակինթ թասերի մեջ եռում է գինին՝ երիտասարդ կինվորի բոբբոքուն արյան պես, բոցավառվում է նա, ում լեզվի վրա մի կաթիլ է ծորում։

Նա արևի աշխարհներից է բերված և որբեցնում է արևի խանդավառ նրազներով նրա՛ն, ով մի քիչ մրայն խմում է արևի գինուց։

Եվ խմում է խանը, սակայն նրա հոգին սառույց-սառնամանիք է, և արևը չի հալում նրան։

— Թո՛ղ դա ինձ մոտ Գյուրջիստանի ասիրում որսած վիշը, թո՛ղ նա փայփայի ինձ։

Եվ գիփյուռի պես սառնալով, գարնան պես բուրելով վազում է մի

գեղեցիկ. փարվում է խանի ծնկներին, մանկան պես թեթև, երազի պես հեզ, նստում է նրա չորացած ծնկներին։

Խանը հավաքում է ուժերը, կարկառում է կծկված բազուկները, գրկում է լուսափթիթ աղջկան. թույլ ու նվազ սեղմում է մարած կրծքին և հաղիվհազ կարողանում է անշարժ, անձայն մի համբույր տալ Գյուլչիստանի պարանոցների նեղների նման նորաբողբոջ նրա ստինքներին։

Եվ թուլացած վայր է թողնում ձեռները մեծ խանը, ծնկները դողդողում են փերու քնքշության առաջ...

Նեղանում է արքան, գայրանում է նա...

— Դո՛ւրս ասրնք բոլորին, բոլորին. հարկավոր չեն ինձ, ձանձրացնում են ինձ...— բարկացած հրամայում է խանը կերկերուն ձայնով։

Ավելի մռայլվում են խանի թորշոմած աչքերը.— «Ոնվ կանանց է տիրում, նա, իրոք, աշխարհին է տիրում։ Իմ թագավորությունը չարժե Երիտասարդ հովիվի կրակե մի համբույրին». այս միտքը օձի պես սողաց նրա գլխով։ Թույնով խայթեց նրա սիրտը։

Եվ գլուխը կախ ձգելով հոգոց, խորտակված կրծքի վրա՝ նիրհում է խանը։

Ամենազոր է մեծ-մոնղոլը։ Կես-աշխարհի տերն է նա, մի հրամանով նրա կարող է աշխարհի մյուս կեսն էլ պառկել նրա գահի տակ. նա կարող է մի քմահաճույքով խորտակել Մարա պղնձե դռները և չքնաղակերտ Իյուլանդիեանի ծուխը երկինք հանցնել... Սակայն նա անկարող է մի քնքուշ աղջիկ համբուրել անգամ...

— Վեզի՛ր, ձանձրանում եմ ես...

— Հրամայի՛ր, մեծ խան, արքաների արև, քո կամքի առջև ամեն ինչ հլու է, մեծ օվկիանոսից մինչև աշխարհը Ֆրանկների...

«Արքաների արև՛»,— շատ ցասարտի և ծաղրական թվաց այս սովորական կոչումը Զինգիզ-խանին.— «բայց հանդած արև, մտքի մեջ այսպես ուղղից նա, «հանված արև, որից չնչին կայծն անդամ գերազանց է»...

— Ի՞նչ... մինչև Ֆրանկների աշխարհը... Վեզի՛ր, ես կամենում եմ որսի գնալ մինչև Ֆրանկների աշխարհը. նժո՛ւյգս բերեք, պատերազմի վարեմի ընկերիս հարազատ ձեռը... հավաքեցեք Բիկնապահները բոլո՛ր, զորքերս ջոլո՛ր. ուզում եմ որսի գնալ՝ խորեզմի անծայր դաշտերում՝ առյուծ որսալով հասնել հեռո՛ւ, հեռո՛ւ Ֆրանկների աշխարհը, որ արյունս տաքանա, արյունս եռա... Շո՛ւտ գնանք, սրարշավ գնանք...

Ասաց և եղավ։

Ոսկենուռ քյոշքի աշխարհաչափ հրապարակից հնչում է ահա ուժգին և որոտալից ռազմական շեփորը, և փոթորկում է ծովի նման՝ մեծ քաղաքը. մի ակնթարթում դուրս են թռչում զինվոր ու զորապետ, զինվում են ու զրահավորվում, նժույգները դուրս են հանում ախոռներից և շտապում են հավաքվել ապարանքի հրապարակում։

Ծածանվում են հսկա արծիվների թևերի նման ոսկեթել և արյունաներկ դրոշակները, որոնք ոսկի փառապանծ դաշտերում խանի գլխի վերև այրվել են Հնդստանի արևի տակ, և Թուրանի ահեղ հողմերի հետ շառաչել։

Զորապետների նժույգները կրծում են պողպատե սանձերը, վրնջում են ու դոփում սալահատակները, շորս կողմ կայծեր սփռելով։

Զորքի նիզակների և մերկ սրերի խիտ անտառը արևի ճառագայթների տակ հուրհրում է։

Նախարարների բազուկների վրա բազմած դուրս է գալիս խանը՝ զինված գոհարակուռ զենքերով. խրխնջում է ու ծառանում նրա մրրկածին նժույգը, որի հրեղեն կրծքով Զինու հազարամյա պարիսպներն է խորտակել և հզոր սմբակներով էլբրուսի պողպատե կողերից ժայռեր է պոկել...

Նախարարները հեծցնում են խանին նժույգի վրա. դողդոջ ձեռքերով բռնում է նա ոսկե սանձը, և նժույգը տեսնելով իր տիրոջը, հառաջագին թրթռում է և ոտքը թափով սալաքարին հարվածում։

Ցնցվում է խանը, օրորվում է խանը, դողում է նա, սանձը ընկնում է ձեռքից։

— Իջեցրե՛ք ինձ ձիուց, չեմ ուզում,— հրամայում է խանը։

Լռում է ռազմական շեփորը, և հրապարակը ամայանում։

Հզոր է Զինգիզ-խանը. նա կարող է հրամայել մի վայրկյանում խալիֆաների Բաղդադը Տիգրիսի փրփրաբաշ ալիքների տակ ծածկել, Արաբստանի անապատների ծովածածան ավազը մինչև արևի ակը բարձրացնել. նրա հրամանով կարող են Ֆրանկների աշխարհը հողի տակ թաղել... Սակայն նա անզոր է մի նժույգի սանձահարել։

Հիվանդ է խանը, մահամերձ հիվանդ. նա պառկած է մետաքսե մահճի մեջ։

— Է՛յ, վեզիր,— հազիվ շշնջում է խանը.— մահը մոտենում է. հրամայում եմ, շրջապատեցեք քաղաքը՝ զորքով, զինված. պարիսպները, դարպասները, բուրգերն ու աշտարակները, բոլո՛ր հսկեցեք, որ մահը ներս չսողա պալա՛տս. ամեն կողմերից՝ տանիքից, դռներից, պատուհան-

ներից հսկեցեք արթուն, որ մահը ներս չսողոսկի. դարա՜ն մտեք, որ եթե մահը գա՝ բռնեք, սպանեք...

Ասաց և եղավ։

— Վեղի՜ր, սուրս տուր ձեռքս, որ մահը գա, սիրտը խրեմ նրա...

Կատարում են հրամանը։

— Չեմ կարող վերցնել սուրս, ծա՜նր է, դաշույնս տուր...

Եվ կատարում են հրամանը։

— Վեղի՜ր, թևս չի շարժվում, ո՞վ է բռնել իմ թևերս.

— Ո՛չ ոք, տեր իմ, ո՞վ կհանդգնի բռնել աշխարհը տիրող բազուկները։

— Վեղի՜ր, մութն է, աչքերս չեն տեսնում, ո՞վ հանդգնեց ջահերը։

— Ո՛չ ոք, տեր իմ, ո՞վ կարող է խիզախել հանգցնել ամենակալ ապարանքի ջահերը։

— Վեղի՜ր, շունչ չկա, ո՞վ է նստել իմ կրծքիս և շունչս խլում, խեղդուն կախեցեք այդ հանդուգնին...

— Տեր իմ, ո՞վ կարող է համարձակվել քեզ մոտենալ... ո՞չ ոք չկա...— պատասխանում է վեղիրը։

Քարե լռությունը ճնշում է ապարանքը։

«Ես եմ, մահն եմ, ձեռքերդ բռնել, խավարել աչքերդ, կրծքիդ նստել»։

— Դուն ին ա՞ն եկար, սվսգա՜ն, ստահա՜կ,— վերջին ուժերը հավաքած գոչում է խանը։ Բայց ձեռները թուլացան բոլորովին, և դաշույնը վայր ընկավ։

— Վեղի՜ր, մահս եկավ, ինչպե՞ս թողիք, դավաճանությո՞ւն, կաշա՞ռք...

«Ես հեռվից չեմ եկել,— ասում է մահը,— ես միշտ քո մեջն էի, քեզնից անբաժան. երբ երիտասարդ էիր ու առույգ, դու էիր ինձ հաղթում, բայց ես մաքառելով ուժերդ մաշեցի. հիմա հաղթահարված ես դու, վերջին խոսքդ ասա և գնանք...

— Վեղի՜ր, հրամայում եմ իմ պետության բոլոր աղբյուրներն ու գետերը, ծովերն ու օվկիանոսները թունավորեցեք, որ ինձ հետ մեռնեն ամենքը, ամենքը...

Վեղիրը լսեց խանի հրամանը, որովհետև մահը բռնել էր նրա լեզուն։

1907

ԲՈՒԴԴՀԱՆ

Մեծ Տոլտեքի ուրուանվյա
նբրելյանին՝ խոնարհ նվեր

Երբ Սաքիա-Մունին Բուդդհա դարձավ, երբ լսեց տիեզերքի խորհրդաստ բարբառը, որով նրա հոգում հայտնագործվեցին մարդկությանը մինչ այդ օրը անհայտ՝ տանջանքի և փրկության մեծ ճշմարտությունները, այն ժամանակ իջավ Հիմալայի մայրիներով նիրհուն արտանուշներից մինչև Բենարես՝ բրահմանների և բալասանների քաղաքը։

Դեղին քղամիդով փաթթված՝ տիեզերական իմաստությամբ անդորր աչքերով ողջունում էր ճանապարհի անցնող-դարձողներին՝ ավետարանելով ամենքին.

«Ես գնում եմ ճշմարտության թագավորությունը հիմնելու. ես թմբկահարելու եմ կոչված Ինսկզբին. Անմահին՝ այս աշխարհի խավարի միջից»։

Բենարեսի հոյակապ դարպասների առջև, նա դիմեց ժողովրդին.

«Այն բացված են մեծ Անմահի դռները նրանց համար, ով ականջ ունի լսելու»։

Եվ ամբոխը հոհոաց, և բարձրացավ մեծ ժխոր։

Բենարեսի շքեղ և մեծ հրապարակներում խռնվող ամբոխի առջև՝ նա քարոզեց տանջանքի և փրկության «Չորս Մեծ Ճշմարտությունները»։

Բայց ամբոխը նորից հոհոաց, և բարձրացավ նորից մեծ ժխոր։

Եվ իմաստունը նորից դարձավ դեպի ժողովուրդը կարեկցական հայացքով և հայտարարեց տանջանքի և փրկության «Ութստեղյան Ճշմարտությունը»։

Եվ սակայն ամբոխը ավելի ժխոր բարձրացրեց և հոհոաց անհնթեթ։

Բայց Սաքիա-Մունին, որի վարդապետության սկիզբը փառավոր է, միջուկը՝ իմաստուն և վերջը՝ փրկարար — ավելի ևս կարեկցական զգացումով լցված դեպի ամբոխի անհավատությունը,— նորից դիմեց նրան՝ թշվառության և տանջանքի այդ տգեղ ժառանգին։

Նա բացեց ժողովրդի առջև ճանապարհները դեպի Նիրվանան, որի հավերժական երանությունը անդորրը բմպելու համար պիտի փշրել այն «Տասն շղթաները», որոնք կապում-կաշկանդում են մարդուն տանջանքի և ցավերի գոյության հետ, արտասվելի և անիսորհուրդ կյանքի հետ։

Եվ ամբոխը այս անգամ ավելի ուժգին և խռլական հոհոաց։ Սադրական ծամածռություններով ծափ զարկեցին և խուժդուժ գոռացին.— «Արքայորդին ցնորվել է. արքայորդին ցնորվել է»,— գոռգոռացին ամեն

կողմից, ամեն բերան, և արհամարհանքով՝ նեխած արմավներ էին նետում դեպի Կատարյալը։

Եվ երբ գիշերն իջավ, և ամբոխը ծաղրից հոգնած հեռացավ Զարի և Ստի հրապարակներից — Բուդդան մնաց մեն-մենակ հրապարակի մեջ կանգնած։

Մտախոհ նայեց երկրի մեջ թաղված քաղաքին, կարեկցաբար շարժեց իմաստուն գլուխը և հեռացավ։

Սակայն քաղաքի դարպասների մոտ մարդիկ նորից դառնապես ծաղրեցին նրան։

Բուդդան այս անգամ զայրացավ. զայրացավ մարդկանց չարության վրա, բայց առավել զայրացավ նրանց տգիտության վրա, որը «Ցասն շղթաների» նախապատճառն է, և ամենամեծ հանցանքը աշխարհում...

Ու հեռացավ շալապանների, իմաստուն ուղիներով միշտ քայլող ոտքերից թոթափեց անգիտության մեջ տառապող քաղաքի փոշին աշխարհի չորս հողմերի առջև և բարձրացավ նորից Հիմալայ...

Տիեզերական անեզր խորհուրդների մեջ սուզվելու օրից մինչև այսօր Բուդդան չէր զայրացած, սակայն այսօր սաստիկ զայրացավ։

Նրա մեծ հոգին, որ լի էր միայն սիրով և գթով՝ այսօր հանկարծ միանգամից լցվեց տիեզերական ահագին զայրույթով։

Եվ նա իր ճգնավայրում, գլխաբաց, տարածելով ձեռքերը, կանգնեց Հիմալայն ի վեր, երկնքի դեմ-հանդիման և ասաց.

«Ո՜վ Ագնի, ո՜վ Ինդրա, ո՜վ Տրիմուրտի, հին աստվածներ։

Ո՜վ Անսկիզբ, ո՜վ Մեծն Անմահ, լսեցե՛ք իմ աղոթքը։

Չար են մարդիկ, չար է նրանց կամքը. ապահ են դեպի կեղծիքն ու սուտը, պապակող են տուփանքի և արյան, և անհագ են չարությամբ և անգիտությամբ։

Խավարն են տենչում նրանք, և ոմիրն են սիրում. հշմարտությունը արհամարհում են և մեծ արդարության ուղին ցնխատում։ Գթություն և սեր չունին, գիշեր և ցերեկ եղեռն են նյութում։

Աղաչում եմ ձեզ, ոչնչացրե՛ք բոլոր մարդկանց. ուրիշ ելք չկա նրանց իսկ փրկության համար, որովհետև նրանք խուլ են դեպի ճշմարտությունները և դաշույն են սրում իրար հանդեպ.

Ի՞նչ է երկիրը — ցեխե մի անոթ, որ լիքն է մարդկանցով, օձերով և որդերով, կենդանիներով և այլ գազաններով, որոնք անդուլ և անդադար հոշոտում են իրար, պատառոտում իրար։ Ո՞վ կլուծ նրանցից փրկության բարբառը, սիրո խոսքը, գթության պատգամը։

Նրանք գոհ են իրենց զազրելի, պաղշոտ և եղեռնային գոյությամբ, և ո՞վ կանուա փշրել «Ցասն շղթաները»։— Ո՜չ ոք, ո՜չ ոք։

Ուրեմն, լսեցե՛ք իմ խնդիրը, մեծ աստվածներ, փշրեցեք ցեխե այդ անոթը...

Տիեզերական ո՜վ մեծ Բրոտ, խորտակիր այս արյունագանգ և վավաշա-գարշանքի ցեխե անոթը, որ չինել ես քո Անուշադրության կամ գուցե Բարկացման ժամին...

Աղաչում եմ, կատարեցե՛ք իմ աղերսանքը, եթե ես ձեր ընտրյալն եմ, ձեր մունետիկը։ Ուրիշ ելք չկա մարդկության փրկության համար։ Երբ նրանք չուզեցին լսել ինձ՝ ձեր պատգամախոսին, և արհամարհեցին մեծ ճշմարտությունները. ապա ուրեմն ինչո՞վ կարող են ազատվել — փրկվել այն տառապանքներից, տոփալի ցանկություններից, ոճիրներից և եղեռններից, որոնք հավերժապես՝ երկրի ստեղծման օրից վախճանը մինչև՝ անմեկին, անխուսափելի շաղկապված են մարդկության և համայն արարածների եղկելի գոյության հետ։

Եվ ուրեմն թո՞ղ չլանա, թո՞ղ ոչնչանա տանջանքի այս հյուլեն — երկիրը նոշկալի է»։

Հողմը ունայնության էր հեծեծում ծառերի սաղարթների միջով և քաշքշում էր Բուդդայի քրանցքները, իսկ նա անուշադիր դեպի շուրջը, նայում էր երկինք՝ գլխաբաց և բաղկատարած։

Ամայացել էր նրա շուրջը. նրա բարեկամ եղնիկներն ու այծյամները, ցիներն ու արծիվները, որոնք տարիներից ի վեր սովոր էին նրան, և որի ամոթից բրնձի հաշն էին ուտում — այսօր նկատելով իրենց բարեկամի զայրացկոտ հայացքը՝ հետու էին գնացել...

Միայն հողմն էր իր հուժկու թևերը թափահարում Բուդդայի շուրջը և չարաճճիորեն քաշքշում նրա քղանցքները։

Այդ միջոցին երկու ճնճղուկ ծլվլալով պտույտ տվեցին Բուդդայի շուրջը և կան նստան նրա աջ ափի մեջ։ Նրանցից մեկը գնաց շյուղ և խոտ բերեց, տվավ մյուսին. նորից գնաց շյուղ բերելու, իսկ ափում մնացած ճնճղուկը Բուդդայի մատների արանքում իրար էր կպցնում շյուղն ու խոտը։ Նա բույն էր շինում։

Բուդդան, մտքերի մեջ խորասուզված, հազիվ թե նկատեց նրանց արարքը։

Աշխարհի կործանման ահեղ ժամին սպասելով մտասլաց՝ անցան օր ու գիշերներ. և երբ Բուդդան ուշքի եկավ՝ տեսավ, որ ճնճղուկները իր ափում բույն են շինել, ձվեր կան և նրանց վրա փոքրիկ ճնճղուկը թուխս է նստել. իսկ արտն անընդհատ գնում էր, գալիս և կատուի մեջ որդեր ու մրջյուններ էր բերում իր կնոջ համար։

«Հիմարներ,— քմծիծաղեց Բուդդհան,— տափանքի մեջ անգիտացած՝ չգիտեն, թե ի՞նչ ոնիր են գործում»։

Եվ ուղեց ափից վայր թոթափել բույնը։

«Ինչո՞ւ եմ խղճում, չէ՞ որ սրանք չեն ըմբռնելու փրկության խոսքը, և հավերժապես, միլա նորոգվող սերունդներով դատապարտված են տառապանքի. չէ՞ որ կործանումը միակ ելքն է հնարավոր, չէ՞ որ կործանման մեջն է իսկական կարեկցությունը»։

Սակայն խղճաց ճնճղուկներին, շավերեց բույնը և թողեց իր ափի մեջ, և երբեմն ուշք էր դարձնում, որ չլինի թե ձվերը ափից վայր գլորվին... Եվ խնամքով, ամուր ու հաստատ բռնում էր իր ափը։

Եվ ցասկա խոհերի մեջ խորասուզված, աչքը ավերման անելանելի ժամին ծովացած՝ անցան օրեր ու գիշերներ. որքա՞ն՝ այդ չնկատեց Բուդդհան, սակայն, երբ հայացքը նետեց ափին — տեսավ, որ ձվերից արդեն երեք հատ փոքրիկ սղվամաղ ճագեր են դուրս եկել և, օրորելով նվազ վզիկները՝ հազիվ ճլվլում են։

Մեղուները որդեր ու մժեղներ էին բերում և կատուցով քնքշորեն ու խնամքով գնում էին ճագերի բերանը։

Բուդդհան նայեց թռչի ու նվազ ճագերին և խղճահարվեց։

«Ուրեմն ես պահպանում եմ նրանց, որոնք նույնպես չարագործ են, հոշոտում են որդին և մժեղները։ Ինչ, Լարենցի՞ր Չէ՞ որ հաստատուն է իմ էմբից անկալ՝ Կարմայի անեղ օրենքը — հատուցումն ամեն գործի և արարքների. ով չարիք է գործում, նրան հետևում է տանջանքը, պարտքը. ինչպես սայլի անիվը հետևում է լծված դրաստին։

«Տիեզերքում ամենուրեք սիրում է մշանջնավոր, անողոք արդարությունը, և նրա ամենատես աչքից վատ արարքները ծածկելու համար չես թյ

ԱՆԱՆԴԱՆ ԵՎ ՄԱՀԸ

Երբ Անանդան գնում էր Հիմալայի սրբազան անտառների լռության մեջ ներանձնանալու, մահը, ուրիշներին անտեսանելի, ցցվեց նրա առաջ։

Եվ սևեռելով Անանդայի վրա իր անհուն աչքերը, որ խավար ունայնությունն է անծայրանում, հրամայեց, չոր ծնոտները զարհուրելի չխկչխկացնելով.

— Անանդա, դո՛ւ պետք է մեռնես...

Անանդան այդ միջոցին այլևս ոչինչ չասեց, ոչինչ չտեսավ, բայց միայն վայրկենական մի ամբողջ հավերժության մեջ զգաց մի ահեղ, անարտահայտելի, մինչ այդ իրեն անծանոթ մի սարսափ իր ողջ էության մեջ, ամեն հյուսվածքում...

Երբ անցավ վայրկյանի հավերժությունը՝ Անանդան հազիվ աչքերը բացեց և իրեն զգաց մի ամայի վայրում, գետնին գամված, ամբողջ մարմինը այնպես ծանր, որ կարծես հսկա ժայռերի ծանրության տակ ճզմված լիներ, և բոլորովին անկարող էր գոյզն ինչ շարժում անել։

Եվ գլխի վերև կանգնած էր մահը՝ վիթխարի թիկունքով արևը ծածկած, որով ողջ երկինքն ու երկիրը թանձր մութի մեջ շաղախվել էին։

Կանգնած էր մահը, որի աչքերի մեջ ունայնանում էին հույսեր և աստղեր, սեր և արյարհներ, հանճար և իմաստություն — ամեն ինչ, և որ միայն սոսկալի անհուսությունն էր անծայրանում։

Եվ կանգնած էր նա կմախքի ծնոտները չխկչխկացնելով։

— Ո՞վ ես դու,— վերջին ուժերը հավաքելով հարցրեց Անանդան՝ ատամներն իրար զարկելով փշուր-փշուր և երկյուղագին գողալով։

— Ես ոչինչ եմ և ոչնչությունը, կյանքի և նյութի կործանողը, ես տիեզերքի տերն եմ միահնձան։ Ես մահն եմ։

— Ո՛վ մահ, մեծ, ահավոր և անմահ իշխան, ինչի՞ դ է պետք իմ չնչին էությունը — արհամարհելի հույսիս... խնայիր ինձ, շնորհ արա ինձ ապրել, թող ապրեմ, իմ էությունը չի ուզում մեռնել, չի կարող ուզենալ մեռնել...

— Ես ոչինչ չեմ հասկանում,— որոտաց մահի չոր ձայնը։— Ես անհրաժեշտությունն եմ, անբեկանելի, անխուսափելի, անպարտելի։ Պետք է մեռնես, Անանդա։

— Ես չեմ հասկանում դրսից եկած անհրաժեշտությունը։ Ես էլ եմ անհրաժեշտություն,— ասաց Անանդան սրտապնդվելով։ Անհրաժեշտը իմ ներսն է, հասկանո՞ւմ ես...

— Օ՜հ...— ձանձրացած և ձանձրույթից զայրացած չխկչխկաց մահը.— ի՞նչ երկարախոսն ես եղել և դեռ լեզուդ դառնում է։ Շուտ պատրաստվիր մեռնելու։

Եվ մահը այնպես ահեղ և կործանիչ հայացք ձգեց աչքերի անհույս և զարհուրելի անդունդներից, որ Անանդան մաղ մնաց հալվեր, աննյութանար... ապա սրտաուռչ աղերսանրով թախանձեց մահին.

— Ո՜վ մահ, աղաչում եմ լսելդին, եղիր քո հավերժական անգթության մեջ գոնե մի անգամ բարի և թույլ տուր ապրիմ, միայն թե ապրիմ, նույնիսկ գժոխային անվերջ տառապանքներով լի։ Միայն թե ապրի իմ հոգ, որ չխորտակվի այս հոյակապ, փոքրիկ տիեզերքը, որ ստեղծել եմ ինքս և փռել իմ շուրջը։

Եվ մահը իր հավերժական գոյության մեջ միայն մի անգամ, և այս անգամ, խղճահարվեց տեսնելով հուսահատությունը մեռնող մարդու, որ գալարվում էր տաղնապի մեջ և ասաց.

— Շատ լավ։ Ես քեզ կտանեմ Հարա-Բերեզատիի ապառաժոտ գագաթը, ուր սառնաշունչ մրրիկներ են ոռնում գլխիդ վրա, իսկ ոտքերիդ ներքև անհատակ անդունդն է խորանում, ուր ահեղամռունչ օվկիանոսն է շառաչում, և այնտեղ երեսիդ վրա կձգեմ քեզ, մի դար ամբողջ, կդամ, և կմեռնես։

— Այո՛,— ուրախագին պատասխանեց Անանդան։

Եվ մահը քարշ տվեց Անանդային, տարավ Հարա-Բերեզատի, ձգեց երեսի վրա լեռնագագաթի մի սառցապատ ժայռի ծայրին, և ինքն հեռացավ։

Երբ ազատվեց մահի սարսափելի ներկայությունից՝ երջանիկ շունչ քաշեց Անանդան և անդորրացած՝ խոսեց իր սրտի մեջ։

«Ահա թե ո՞վ է ճմլում մեր սիրտն այսքա՜ն անողորմ, այսքա՜ն անգութ հավերժապես — մահն է դա։

Մահն է ճմլում մեր սիրտը, այսպես դաժան և անիրիզ, մեր ծնած օրից իսկ։ Նա ամեն ժամ, հանապազ քամում է մեր էությունը և մեր եղկելի կյանքը թաթախված է մահի սարսուռով։

Եվ տարիները գլորվում էին Հարա-Բերեզատիի գագաթից՝ գահավիժվող ժայռերի նման։

Եվ Անանդան խորհում էր խորասույզ և խոսում էր իր սրտի հետ։

«Ի՞նչ է մահը...— Ես անհրաժեշտությունն եմ,— ասաց ինձ մահը,— դու պետք է մեռնիս։

Նա անգութ, անհաղթ և բռնակալ անհրաժեշտությունն է։ Նա տիեզերական այն մեծ մուրճն է, որի հարվածների տակ սլիտի փշրվեն և փոշիանան բոլոր նրանք, ինչ որ ծնունդ և սկիզբ են առել։

Պիտի ցնդին և ունայնանան, և չէանան և Հիմալայները, և օվկիանոսները, և Միր-կաթինները, և արևները բոլոր, և ամեն ինչ, որ կա ժամանակի և տարածության մեջ, ինչ որ ես եմ ստեղծել։

Տիեզերքի տերը միահնձան ես ես, ասաց ինձ մահը։ Ուրեմն պիտի մարի և չքանա տիեզերական կյանքը և մահի անվախճանությունը պիտի տիեզերական, հիմա, իրոք, մահն է միահնձան տիրանը ժամանակի և տարածության վրա. հնամանակս նրանից առաջ մահն է իշխել և նրանից հետո մահն է իշխելու։

Ուրեմն հզոր է մահը տիեզերքից, և անծայրածիր տիեզերքը նրա առջև՝ մի հյուլե նսեմ։

Տիեզերական այս անպարտելի կյանքի տենչանքը, ուրեմն, տիեզերական հյուլեի անհույս կռիվն է մահի դեմ, որն անպարտելի է և անմահը միայն»...

Այս մտքի վրա սարսուռով սոսկաց Անանդան և նորից լսեց մահի ծնոտների սասանիչ շիկչիկոցը, սակայն մահը տակավին չէր նկել, այլ թվացումն էր սոսկ միայն...

«Երբ համայնապարփակ, տիեզերատարած մահը շնչի, աշխարհները պիտի եղծվեն, և ինքը միայն պիտի գահակալի։ Եվ քանի որ նրանցից առաջ և նրանցից հետո միայն մահն է ծավալվում և իշխում, ուրեմն մենք մահի մեջ խրված ենք եղել միշտ,— և ուրեմն տիեզերական կյանքը մահի մեջ մի վայրկենական մղձավանջային երազ է, որը և կա, և չկա... Ուրեմն, տիեզերքը և կա, և չկա»...

Այս դաղափարի մասին խորհեց նա տարիներով, որոնք գլորվում էին Հարա-Բերեզատիի գագաթից գահավիժվող ժայռերի նման։

«Օհ, հավերժորեն, անհունորեն սարսուռ եմ զգում... որքա՞ն թշվառ եմ ու խեղճ, և դարեր, անթիվ դարեր, հավիտյաններ էլ չեմ զգալու, և խորհելու, և ստեղծելու։

Սարսափելի է, սարսափելի է։

Եվ միայն այս միակ խոսքը անջինջ կմնա իմ հոգում, եթե մոռանամ բոլոր խոսքերը լեզվի, միայն մի բառ, որով կարելի կլինի հայտնել այն, ինչ զգում է բոլոր բովանդակ հոգիս մահի դիմաց.—

Սարսափելի է, սարսափելի է։

Մահը — այդ միակ վիշտն է տիեզերական, միակ բռնությունը ժամանակի վրա, միակ իշխանը տարածության վրա, որ անիմաստացնում է իրերը բոլոր։

Մահը, մահը...»։

Անանդան սարսափով, տարիներ կրկնում էր մահ բառը. և ամեն անգամ կրկնելիս բզիկ-բզիկ հնչում էր նրա ողջ էությունը՝ հոգի և մարմին։

«Կյա՜նք, դո՛ւ ես վառում աստղերը երկնքներում և սերը մեր սրտերում, սակայն դժբախտ մահը մարում է աստղերը և սերերը պայծառ։

Կյա՜նք, դու ես հյուսում շքեղ, գարնանային անուրջները, բոլոր երկրը ծաղկաբույր, սակայն դաժան մահը ջնջում է անուրջները և երկրները չքնաղ։

Կյա՜նք, դու ես ձևում ու կաղապարում գեղեցիկ իրերը և ներդաշնակում ասաղերի պարտ, սակայն անիմաստ մահը հյուծում է ջաղի ձևերը գեղեցկության և թանկագին դիրքերում ասաղերի համերգում։

Ավա՜ղ, և բյուր ավա՜ղ կանչիս...»։

Եվ դառնագին խորհում էր Անանդան՝ անհույս և հոգնամաշ, և լալիս էր առանց արցունքի, որովհետև վաղուց է, որ բարացել էին արցունքները նրա աչքերում։

«Անայլայլ մի՞թե իրավ վատ է մահը, մի՞թե նա ապրման ատելանելի է»,— այս հարցը հանկարծ փայլատակեց նրա ցրտրշան հոգու մեջ։

«Ի՞նչ է կյանքը... մի՞թե ես սիրում էի կյանքը։ Երբ քայլում էի նրա ուղիով։ Հիշում եմ, որքան եմ նշանվել կյանքը, ի՞նչ հեղգամարտուկ էր աշխարհը և սաղմոսալի, և արդյոք ի՞նչ կար կյանքում։

Եվ իսկն առամ՝ ես շատ ավելուց հոգնել էի արդեն, և ո՞վ էր հասկանում սերը։ Ես շատ ասելուց զզվել էի արդեն, և օրեցօր որքան աճում էր ատելությունս, և շատ ասելուց բարացել էի, բայց ամեն օր նոր ասելիքներ էր նյութում ինձ։

Թող փշրվի կյանքի սափորը, որ լիքն էր ագի ջրով, որ ինչքան խմում էիր, այնքան ավելի ծարավում՝ այլվերով խմում վերստին և զզվում, բայց բնավ չհագենում։ Եվ մի՞թե կյանքը այն մշտական պապակը չէր, այն տենչն ու տանջանքը տոչորան, որ կրում էի ոգուս մեջ երկրի երեսին խարխափելիս. այն անհագուրդ կամքը ապրելու գոյության... և ինչո՞ւ համար լինել...

Եվ որքան տառապանք ուներ կյանքը և խոշտանգում. և մի՞թե արժեր ապրել կրելու համար այն փշե-տանջանքները, որ կրծում էին հոգիս ու արյունոտում սիրտս,— կրել ծաղրը մարդկանց, հասարակաց կարծիքն անարդար, դրպարտությունը լրբենի, պաշտամունքը փողի, դավաճանությունն ընկերի...

Կրել վրեժխնդրությունը թշնամու, խարդավանքը սիրած կնոջ, խայ-

ին վավաշ տարփանքի, ճիրանները խլճի անքուն գիշերներին, բաղցած օրերը իր նմանների կուշտ սեղանների առջև...

Թող չքանա կյանքը — այդ անազնիվ կռիվը հացի համար, կեղտոտությունը եղբայրների, կրքերի նողկանքը, կեղծիքի գարշանքը, ստորացումը հարուստների և իշխողների կրունկների ներքո, ցկուտը, ապտակումը, թութն ու մուրը...

Թող չէանա կյանքը, որ սրբորում էր մեր սիրտը, հյուծում բանտերի մեջ, որ վաճառք էր հանում խիղճ ու աղնվություն, մայրական սերն ու արցունքները որբի, որ գնում էր համբույրները սիրո և գափնիները փառքի, որ ծաղրում էր աղքատությունը և ոգին...

Եվ մի՞թե կյանքը ատելանքների այն կուռ շղթան չէ, որ փաթաթված մեր վզով քաշում է մեզ փոշու և փշերի միջով, հրի ու սրի միջով, և մահը, որ գալիս փրկում է տառապող մարդուն, խորտակում բռունցքները, սրերը ծանգռտում և վերջ դնում չարին ու բռնակալին, ազատությանը և պատերազմին...

Արժե՞ր ապրել այսպիսի սուղ գնով՝ տագնապալից տեսիլների այս դժոխքը...

Մահն է, որ ամոքում է մեր վշտերը, մեր զառն անձուկները. նա բալասանն է կյանքի նյութած վերքերին, անարգանքներին։

Եվ մահը այն բարի շրթունքն է, այն ջինջ ու զով աղբյուրը, որ հագեցնում է կյանքի հուր-ծարավը, լինելու անիմաստ կամքը անէացնում։

Եվ վերջապես, նա ծով հանգիստն է, երանական անդորրը՝ անհուն նինջը, անելաց, անանց։

Փրկիչ է մահը։

Ես կամենում եմ մեռնել...»։

Եվ Անանդան ուզում էր օրհնել մահը և վախճանապես հաշտվել նրա հետ և նրան կանչել, սակայն այդ միջոցին իր բոլոր-բովանդակ էությունը այդ տենչանքի դեմ ըմբոստացավ, և հզորապես զգաց նորից մահի ահաբեկիչ սարսուռը, և ճիչ արձակեց զարհուրանքով։

— «Ո՜չ, ո՜չ, դու փրկիչ չես. ո՜վ դժնատեսիլ մահ, ես քեզ ատում եմ, իմ հոգում կա ամեն տեսակի կաթ ու կարոտ, բայց մահի բաղձանքի սավանն անգամ չկա։

Ես տեսնում եմ, որ կյանքը մշտնջենական անհաշտ մաքառման մեջ է մահի դեմ, և իմ բոլոր շղթաներն ու տենչերը աղբյուրների և առվակների պես իրար հյուսվելով ընթանում են մի հունով՝ մահի հանդեպ միայն նրան դիմադրելու համար։

Ես տեսնում եմ, որ բոլոր իմաստությունները մահի դեմ են ծառայում, և բոլոր կրոնները եղել են մահի սարսափը մեղմելու համար, և ինքնասպանն իրեր մահից խուսափելու համար է գիմում մահին։

Ճշմարիտն եմ ասում ես, որ իմ մեջ ոչ մի հյուլե և տիեզերքի մեջ ոչ մի հյուլե, ոչ մի հունդ մահ չեն փափագում. մեր ամեն մի քայլը ծրգտում է միայն հեռանալ մահից, մենք ամենքս անմահություն ենք տենչում միայն, տենչալով տենչում։

Անմահության այս հզոր տենչը, այս կամքը անընկճելի, բխում է ապրող տիեզերքի անհուն ընդերքից, որպես մի անվերջ ծնունդ՝ ներքին և ներսում. հապա ուրեմն ինչո՞ւ է մահը մեր դիմաց դրված, ինչպես անհաց սարդ, ինչպես որկոր, ինչպես դահիճ սուսերամերկ։

Ո՞րն է հշմարիտը, ո՞րն է սուտը։

Ի՞նչն է հշմարիտը, ի՞նչն է սուտը...»։

Եվ անլուծ մտքերը քաղցած որդերի պես կրծում, քայքայում էին Անանդայի հոգին...

Իսկ ամպրոպները պայթում էին նրա գլխի վերև, շանթերը հոշոտում էին ապառաժները և անդունդները սրատում հազարաձայն։

«Ես ատում եմ ձեր հշմարիտն ու սուտը, կյանք և մահ. միակ ճշմարիտը ես եմ, իմ լինելության իմաստն ու կամքը, որն անմահություն է բաղձում։ Ես ատում եմ մահը, որովհետև ես գիտեմ հիմա նրա բոլոր անունները,— նա ինքն է վիշտն ու ցավը, նրա շունչն է թույնը հյուծող, նա ինքն է հաշմությունն ու ժանտախտը, և բոլոր անանուն տառապանքները մի անուն ունեն միայն — մահ։

Դու ինքդ ես, ո՜վ մահ, ծերությունն ու ախտերը բոլոր, կախաղան, պատերազմ և հուսահատություն — այդ դու ես, միակ դու, բոլոր սոսկումները — դու ես։

Դու ոստայն ես հինել, և տարածության ափերից բոլոր ափերը ցանցել ես քո եղեռնական թելերով և խճճել ես այնտեղ ապրող տիեզերքը, և հավերժապես ծծում ես, ծծում ես հույզն ու հոգին գոյությունների, դու գերտիեզերական ահավոր սարդ։

Եթե մահը չլիներ՝ չէր լինի հիվանդություն և ծերություն, չէր լինի քաղց և կախաղան, որովհետև դու ես, որ անջրպետները կտրելով խորշակաբեր հազար ու բյուր մրրիկների պես ջնջում ես օազիսները գալար, հովիտները գովաշունչ և անտառները բամբուկի ու բանանի. դու ես խորտակում թեերը արծվի և երիտասարդի ճակատին գալուկը գնում և մարում բույլերը աստղերի, և ամեն ինչ, ամեն իր մահի անհուն խավարով փաթաթում, մահով շաղախում, մահացնում։ Նզովում եմ քեզ, որովհետև դու ես ունայնացնում ամեն մի վեհություն, շնորհ և գեղեց-

կությունն, դու ես որդերով լցնում մեր հոգու պարտեզները լուսաբույր և ապականում մեր աղբյուրները ոսկեմրմունջ։

Եվ գոհեցիկն ես դու բոլոր գոհեցիկներից, որովհետև դու ես հանձարն ու ապշությունը միահավասար դարձնում, և դու տաղտկալի ունայնությունն ես, սին, անմիտ ունայնությունը։

Գարշում եմ քեզնից, դու զզվելի, նողկալի մահ, միակ իրական անիմաստությունը, միակ զարհուրանքը, միակ ոճիրը, միակ ոսոխը։ Նզովում եմ քեզ, բյուր-բյուր անգամ, իմ ողջ զայրույթով, դարերի մնռած ու ապրող մարդկանց զայրույթով նզովում եմ քեզ, ո՜վ մահ, վնասթար, չարանյութ, եղեռնագործ...»։

Անանդան տակավին չէր ավարտել իր նզովքը, երբ մահը վերստին ցցվեց նրա վհատ աչքերի առաջ և, կմախքի շոր ծնոտները զարհուրելիորեն չիկչիկացնելով, ասաց.

— Օրդ հասավ, պայմանաժամը լրացավ, Անանդա, պետք է մեռնիս։

— Չեմ ուզում մեռնել, չեմ ուզում, հասկանո՞ւմ ես։ Ապրելու իրավունք ունեմ ես, և ո՞վ է քեզ իրավունք տվել սպանել ինձ, սպանել բոլորին — դարե՛ր, դարե՛ր անհամար սերունդներ, անհամար սերունդներ խողխողել ունպատիժ, անդատ, անընդհատ, դո՛ւ ոճրագործ, մեծ սպանող, տիեզերական մեծ դահիճ, որ արյունով անհունն ես լցնում և չես հագենում։

Գնա, հեռացիր, չեմ ուզում մեռնել...

Մահը նրա այս խոսքերի վրա հռհռաց շոր ծնոտներով, և իր դառնաշունչ ծիծաղից սոսկացին և երերացին Հարա-Թերեզատիի ապառաժաշունչ ծիծաղից սոսկացին և երերացին Հարա-Թերեզատիի ապառաժները և անդունդ գլորվեցին։ Անանդան սմքեց տեղնուտեղը, դողաց-դողաց, ատամներն իրար տվին փշուր-փշուր, աչքերը խավարեցին, և նվազուն ձայնով շշնջաց.

— Ո՜վ մահ, ամենազոր, ահավոր, տիեզերակալ տեր, ներիր ինձ. ես՝ մի աննշան հյուսի, հանդգնեցի ծառանալ համաշխարհային ճակատագրի դեմ, որովհետև հուսահատություն անսահման էր։

Գրքա՛ ինձ և թող նորից մի դար ես ապրեմ, ուր որ ուզում ես — գժոխքների մեջ. օձերի ու կարիճների հետ, օվկիանոսների հատակում, միայն թե չմեռնեմ, միայն թե չմեռնեմ, միայն թե ապրեմ...

— Ո՛չ,— խստորեն պատասխանեց մահը։

— Աղաչում եմ, ո՜վ մեծ, վսեմ մահ, ի՞նչ պիտի շահես արդեն իմ հյուծված հյուլեիցս։ Կտրիր իմ ոտներն ու ձեռները, կտրիր իմ լեզուն, խորտակիր իմ հոտոտելիքն ու շոշափելիքը, ձգիր ինձ ամայի անապատներում, սառցադաշտերում — սակայն թող ինձ իմ լսելիքն ու տեսանելիքը, որպեսզի լսեմ կշռույթիր տիեզերական և տեսնեմ աստղերն ու արևը...

— Ո՛չ, ո՛չ,— որոտաց մահը։

Բայց Անանդան աղերսագին հայացքով նայեց մահին, և իր հայացքի մեջ համայն աշխարհի բոլոր-բովանդակ տանջանքներն էին լեզու առել։

— Պաղատում եմ քեզ, ո՜վ բարեգութ մահ, խլացրու ինձ, հանիր աչքերս, բայց թող ինձ միայն իմ գիտակցությունը, իմ զգացողությունը,— իմ ես-ը թող ինձ գոնե և թաղիր թշվառիս երկրի խավար անդունդների մեջ, սակայն թող միայն խորհեմ ու զգամ — և տիեզերքը ինձ հետ կլինի, որովհետև նա չի մեռնի, քանի ես կա, և ես այդպես կապրեմ դարե՛ր, դարե՛ր, տիեզերքի հետ հավիտյան գոհ ու երջանիկ, շնորհ արա, աղաչում եմ...

— Ո՜հ, ինչ մուրացկանն ես եղել,— ասաց մահը,— մի դար միայն, և ոչ մի վայրկյան ավելի...

Եվ մահը դարձյալ գնաց։

Անանդան այլևս ոչինչ չէր լսում, այլևս ոչինչ չէր տեսնում, չուներ ձեռք ու ոտք, չուներ հոտոտելիք ու ճաշակելիք և չէր կարող շոշափելով իմանալ, թե ո՞ւր է ինքը։

Անանդան՝ խուլ և կույր, համր ու անշարժ ընկած էր լեռնագագաթին և խորհում էր իր հոգու մեջ։ Եվ շուրջանակի հազարաբերան մռնչում էին հողմերը, և կայծակները շանթում ժայռերը, բայց Անանդան ոչինչ չէր լսում, ոչինչ չէր տեսնում։

Նա իր հոգու խորքում գոհ էր, որ մահը հեռացավ իրենից գոնե մի դար ևս։

Եվ խորհում էր նա.— «մահը՝ այդ մեծ եղեռնագործը, այդ անհաղթելի թշնամին, ոչնչացրեց իմ լսելիքն ու տեսանելիքը, և իմ բոլոր զգայարանները, սակայն մնում է իմ ոգին։

Եվ իմ ոգին խորհում է, ուրեմն ես կամ, ես ապրում եմ, և որովհետև ես կամ, ուրեմն կա և տիեզերքը, եթե ես կամ և կա տիեզերքը, ապա ուրեմն չկա մահը։

Սակայն մահը կա, որովհետև ես տեսա նրան և զգացի անսահմանության սարսափները նրա հանդեպ և ոչնչության զարհուրանքը։

Բայց ի՞նչ է ոչնչությունը, ի՞նչ է ոչինչը։

Ես չեմ ըմբռնում, ես չեմ կարող ըմբռնել ոչնչությունը...»։

Եվ խոշտանգիչ հարցերն ու խոհերը Անանդայի անհուն ներաշխարհում ծագում ու մայր էին մտնում, հավաքվում ու ցրվում էին, ինչպես

ալիքները անեզրական օվկիանոսում. և ժամանակը հոսում էր՝ պոկելով Հարա-Բերեզատիի գագաթից մոայ ապառաժները։

«Եթե արդարև մահը ոչնչացնում է ինձ և տիեզերքը, ապա ի՞նչ է մնում մեր տեղը — անլույս, անապ, անհուն մի պարապ, ամեն ժամ և ամեն վայրկյան։

Կնշանակե՝ մահը անզոր է ոչնչացնելու ժամանակն ու տարածությունը, ուրեմն ժամանակ-տարածությունը հզոր է մահից, գերագո և գերազանց է նրանից և միակ իրականն է և անմահը։ Եվ որովհետև ես եմ ստեղծել ժամանակ-տարածությունը, իմ ոգու դրսևորումն է նա և իմ կամքի ու մտքի առարկայացումը — ապա ուրեմն ես հզոր եմ մահից, ու անմահ է իմ ես։

Կյանքն է ամենազորը, հավերժականը և իրականը, իսկ մահը՝ սոսկ մղձավանջ։ Եվ տիեզերական կյանքի մեջ խրված է մահը, նրա շուրջը կյանքն է իշխում, ինչպես օվկիանոսը գերեզմանային կղզու շուրջն է իշխում։

Եվ ես գիտեմ հիմա, որ մահը մի սարարշավ փոթորիկ է, որ հոգանք է տալիս կյանքի կալվածքների մեջ և ավերումներ նյութում միայն։

Սակայն անմահ եմ ես, որովհետև մահը չի կարող անէացնել իմ ես՝ ժամանակ-տարածությունը։

Ես եմ իրը մշտագո, հավերժ ու անփոփոխ, իսկ մահը՝ երևույթ միայն։

Այժմ թող գա մահը, ես չեմ երկնչում նրանից»։

Եվ Անանդան անդորրացած լռեց, լռեց տարիներ և նորից տարիներ, անտարբեր սպասելով պայմանաժամի լրացմանը։

Եվ տարիները համր ու անվրդով անցան, մինչև վերջապես երևաց մահը։

Եվ մահը ծնոտները խստասիրտ լիկչիկացնելով հրամայեց.

— Մեռի՛ր, Անանդա։

Անանդան չլսեց, բայց զգաց մահի հրամանը։

— Ես քեզնից չեմ վախենում, ո՛վ մահ,— անհոգդողդ ասաց Անանդան.— ես հզոր եմ քեզնից, անեզրական է և հավերժական իմ ես՝ ժամանակ-տարածությունը, որի մեջն ես դու ոչնչացվում և որը դու անզոր ես հաղթահարել։ Արդ, մեռցրու ինձ, եթե կարող ես...

Ջայրագին հոհոաց մահը և Անանդային կատաղի թափով նետեց անդունդ, ուր ահեղամռունչ օվկիանոսն էր եռում սև ու ծանր ալիքներով՝ գալար-գալար...

1908,
Ալեքսանդրապոլ

«ՁԵՐ ԽՆԴՐԱՆՔԸ ԻՄ ՈՍՏԵՐԻ ՏԱԿՆ Է»

Ես չեմ պատմում այն բանաստեղծի մասին, որ Երեկոյան ծովախոշշի արծաթե ջրերի վրա մակույկով ճեմելիս՝ հարբած գեղեցկի հրեշեն գինով, իրեն ծովն է նետել՝ ալիքների վրա քայլող լուսնյակը բռնելու,— և անդարձ սուզվել է այնտեղ։

Ես չեմ պատմում և՛ այն բանաստեղծի մասին, որ կախարդված բլբուլի հեքիաթական երգով՝ ջանգյալների անծայր անտառներն է մտել՝ բռնելու նրան,— և անդարձ կորել է այնտեղ։

Ես պատմում եմ Շիրազի այն բանաստեղծի մասին, որ միշտ ճշմարիտն է խոսել և քարկոծվել է ճշմարտի համար։

Մեծ Զրադաշտն ասել է. «Ճշմարիտը խոսիր աներկյուղ այս աշխարհի հզորների առջև»։

Եվ Մուսա-Շիր-Ալին, Շիրազի բանաստեղծը, հրապարակների վրա, դարպասների առջև, թե իշխանավորների երեսին միշտ ճշմարիտն է ասել և չի վախեցել։

«— Չար են ձեր գործերը և ձեր սրտերը կեղծ, ստոծու անունով խաբում եք խեղճերին և սիրո դիմակով զրկում մերձավորին։

— Դո՛ւք ներքողում եք բռունցքն իշխողի, որբի և այրիի դատն եք պաշտպանում՝ ծիծելով ձեր քար կուրծքը արյունոտ ձեռքերով։

— Դո՛ւք սերն ու գթվանքը առնում եք և ծախում, փեշերիդ տակ դանակ սրած՝ իրար համբույր եք տալիս...»։

Այսպես էր ասել միշտ Մուսա-Շիր-Ալին։

Եվ բոլորը հալածել են նրան. բարեկամը ողջույն չէ տվել և ընկերը երես է պահել նրանից. հրապարակներից անցնելիս ծաղրել են նրան և նրա հացը արցունքով թրջել. սակայն ամբոխի զայրույթը դեպի նա այնքան է հորդացել և իր զայրույթի մեջ այնքան է գաղանացել ամբոխը, որ խեղճ Մուսա-Շիր-Ալին հազիվ է մաղապուրծ փախել-ազատվել ամբոխի ճիրաններից։

Եվ օր ու գիշեր ճանապարհ կտրելով՝ պատմուճանը անապատների ատատասկներով գզգզված և մուճակները առապարների քարերով քրքրված՝ հոգնած հասավ նա մի օր Բուխարայի պարիսպների տակ։

Արդյո՞ք ներս մտնի քաղաքը, թշնամիների բանակը, ճշմարտության խոսքն ասելու, թե՞ գնա անապատ բորենիների հետ սնվելու նստի։

Մի վայրկյան վարանելուց հետո նա ներս մտավ քաղաք և մոլորվեց փողոցից փողոց։

Եվ նա տեսավ մշակներին՝ կորացած մեջքերով, ծանր բեռի տակ. նրանք հոգնած քայլերով տանում էին բեռները և մեծատան շտեմարանները լցնում. իսկ մեծատունը թանկագին պատմուճանի մեջ փաթաթված՝ տեսնելով իր հարստությունը, շփում էր կարմիր մորուքը և մրմնջում.— Փա՜ռք քեզ, ալլա՛հ...

Տեսավ Մուսա-Շիր-Ալին մուրացիկների շարանը, որ դռնե-դուռ էր անցնում. մի տեղ հալածում էին նրանց, և նրանք ուրիշ դուռ էին բախում։

Եվ տեսավ նույնպես, թե ինչպես մեծատունը մի սև դրամ տվավ մի ծեր աղքատի և ինքը ծերունու օրհնության տակ քայլում էր հպարտ և մեծաշուք. հիացած իր բարությամբ։ Եվ ճանապարհին աջ ու ձախ խոնարհ ողջույն էին տալիս նրան, և մեծատունը ողորմածորեն ընդունում էր ողջույնները։

Տեսավ և նույնպես, թե մեծատունը ինչպես խոնարհ գլուխ տվավ և ճկեց մեջքը մինչև գետին՝ մի ավելի հարուստ մեծատան առջև, որն հազիվ նշմարեց նրա ողջույնը...

Նորից ոլորվեց փողոցից փողոց հալածական երգիչը և տեսավ դարձյալ մարդկային այն բոլոր արարքները... ինչ որ տեսել էր Շիրազում...

Օրը երեկոյանում էր...

Խիստ հոգնած էր Մուսա-Շիր-Ալին և շա՜տ անոթի։

Զեռքը տարավ գրպանը, հանեց մի ոսկի փոքրիկ դրամ, վերջին դրամը, որ մնացել էր մոտը, և ափում բռնած քայլեց դեպի շուկան հաց գնելու։

Բարձր մինարեից հնչեց մոլլայի երեկոյան էզանը. բարեպաշտ մուսլիմանները խումբ-խումբ ուղղվեցին հրապարակը և ծնրադիր նամազի կանգնեցին։

Բանաստեղծը գնաց այնտեղ, կանգնեց հրապարակում և դիտում էր իր շուրջը։

Բարձր հնչում էր մոլլայի աղոթքը և փռվում քաղաքի վրա։

«Մեկ է ալլահը և Մուհամմեդը նրա մարգարեն է։

Ողորմած է ալլահը և նրա ողորմածությանը սահման չկա։

Ծովը կցամաքի, բայց նրա գութը անսպառ է իր որդիների համար։

Փա՜ռք ալլահին, նրա բաշխած շնորհների և բարիքների համար։

Ո՛վ ալլահ, ներո՛ղ եղիր քո անհուն բարության մեջ մարդկանց մեղքերի համար և տո՛ւր մեզ քո ամենօրյա հացը։

Մուսա-Շիր-Ալին այդ իսկ միջոցին ձգեց ափի ոսկին իր ոտների տակ, տրորեց մաշած մուճակով, կանգնեց նրա վրա և հրապարակով մեկ՝ բարձրաձայն գոչեց.

— Ո՛վ մոլլա, ո՛վ մարդիկ, դուք ինչ որ խնդրում եք աստծուց — ահա՛ այստեղ է, ճշմարիտն եմ ասում ձեզ — ձեր խնդրածը իմ ոտների տակն է...

Նրա ձայնը թավալեց և փռվեց հրապարակի վրա, դիպավ աղոթողների բարեպաշտ ականջներին և բարձրացավ վե՛ր, մինարեի գլուխը և ընդհատեց մոլլայի հոգեբուխ էզանը...

Տիրեց մի պահ լռություն, և մեկ էլ խուլ մռնչաց ողջ հրապարակը. բոլոր աղոթողները ոտի կանգնեցին.

— Ի՞նչ է ասում այս գյավուրը, ո՞վ է սա։

— Ինչպե՞ս է հանդգնում աստծու դեմ խոսել։

— Ո՞վ է սրբապղծում մեր հավատքը...

Հազար բերան մռմռում էին ամենքը՝ օղակ կապելով Մուսա-Շիր-Ալու շուրջը։

Կատաղությունն աչքերի մեջ՝ վրա հասավ մոլլան.

— Ո՛վ ալլահի հավատացյալներ, ի՞նչ եք կանգնել, քարկոծեցեք այս գյավուրին։

Եվ առաջին քարը վերցրեց մոլլան, ուժգին թափով արձակեց Մուսա-Շիր-Ալու վրա. քարը շշալով գնաց և դիպավ բանաստեղծի ճակատին. արյունը ցայտեց, և օրորվեց բանաստեղծն ու փռվեց գետին։

Մուսուլմանները հետևեցին մոլլային և կատաղի ցասումով մեծ ու փոքր քարեր էին շպրտում նրա վրա։ Արդեն մեռել էր նա, բայց նորից շաչում էին քարերը և րլլանում նրա վրա։

Այդ իրարանցումի մեջ՝ ամբոխը հանկարծ նկատեց թշվառ բանաստեղծի ոսկի փոքրիկ դրամը, որ փայլում էր քարերի միջից. ամենքը իրար հրելով վրա պրծան, սակայն մոլլան, որ բոլորից մոտիկ էր կանգնած՝ ետ մղեց նրանց և, ասես խելակորույս, ընկավ գետին, ոսկին հափշտակեց և ամուր բռնած գոչեց ուրախացած.

— Ո՛վ ալլահ, փառքդ շա՜տ լինի, մեծ է քո ողորմությունը. ամեն տեղից հատուցանում ես քեզ օրհներգողին։

— Մեծ է ալլահը,— ասին ուրիշները,— արդարի որդիները անհաց չեն մնա, փա՜ռք քեզ հավիտյան, փա՜ռք քեզ...

Ճշմարիտ էր ասում Շիրազի բանաստեղծը.— Ո՛վ մոլլա, քո երկընչիկ խնդրածը նրա ոտների տակ գտար։

Ճշմարիտ են խոսել միշտ բանաստեղծները.— Ո՛վ մարդիկ, ձեր իմ.դրածը նրանց ոտների տակն է...

1909

ՕՄԱՐ ԽԱՅԱՄԻ ՎԵՇԸ ԱՍՏԾՈՒ ՀԵՏ

Օմար Խայամը, Խորասանի վշտահար բանաստեղծը, ոսկեղեն նաբդիների մեջ նստած՝ աշխարհի ունայնությունը մոռանալու համար, կավե գավաթից գինի էր խմում։

Այդ միջոցին բարձրացավ հանկարծ մի սատանի-քամի, որ իր պոչի վրա ցցված պտույտ-պտույտ գալով, խելագարի պես, այս ու այն կողմն էր վազվզում, ձեռն ընկածը քշում, շաքդում, կոտրում...

Մեկ էլ թշնամու պես արշավեց խեղճ Խայամի վրա, անտես փեշերով տվեց՝ վայր ձգեց գինու գավաթը, գինին թափվեց հողի վրա։

Հետո խելառ ու չար քամին՝ թևերը թափահարելով, սինլքորի նման սուլելով, շվշվացնելով փախավ, թռավ հեռուները...

Խայամը մեկ զայրացած նայում էր հեռացող քամու հետևից, մեկ՝ ափսոսանքով նայում էր կենսաբաշխ կարմիր հեղուկին, որ ծարավ գետինը ծծեց մի վայրկյանում, թունդ հարբեցողի պես։

Ապա աչքերը ձգեց կապուտակ երկնքին, և այսպես ասաց Օմար Խայամը, Խորասանի վարդերի տիսուր բլբուլը.

Իմ վառ գինու գավաթն հողի
Դու կոտրեցիր, աստվա՛ծ իմ.
Ուրախության գուռն իմ առաջ
Դու գոցեցիր, աստվա՛ծ իմ։

Թո՛ղ բերանը լցվի հողով,
Որը խմեց իմ գինին։
Ինչ արեցիր, մի՞թե դու էլ
Թունդ հարբած ես, աստվա՛ծ իմ։

Եվ աստծուն լսելի եղավ Խայամի տրտունջն ու հանդիմանությունը։ Բարկացավ աստված, սաստիկ բարկացավ, որ մի հողեղեն հանդգնում է այսպիսի բերան բանալ։

Եվ պատժեց աստված Խայամին. բանաստեղծի բերանը ծռվեց, լեզուն կարկամեց։ Էլ չէր կարողանում խոսել Խայամը, ունայնության քաղցրախոս բլբուլը։

Երբ անցավ մի փոքր ժամանակ՝ զգաստացավ Խայամը. տեսավ ծանր պատիժը, զղջաց և դարձավ այսպես թոթովեց դեպի աստված.

Աշխարհիս մեջ մեղք լրագործած,
Ո՞վ կա, ասա, աստվա՛ծ իմ,
Եվ նա, որը չի մեղանչում,
Ի՞նչպես կապրի, աստվա՛ծ իմ։

Թե վատ անեմ, թե վատ խոսեմ,
Դու էլ ինձ վատ պատիժ տաս,
Ուրեմն ի՞նչ է իմ և քո մեջ
Տարբերությունն, աստվա՛ծ իմ...

Եվ աստծուն նորից լսելի եղավ Խայամի զղջումն ու իմաստալից խոսքը, զարմացավ, թե ի՞նչպես մի հողեղեն կարող է այդպես խելացի խոսել։ Ամաչեց ինքն իր մեջ և ներեց բանաստեղծին, վերստին շնորհելով նրան և՛ ծիրանի գինի, և՛ ավելի իմաստուն լեզու։

1909

ԱՍՏԱՐԴԱՆ

Մեծ պատուհաս իջավ Ասուր-Նաբալի տան վրա։ Նրա միհատիկ որդին, մի դալար պատանի, գահաժառանգը՝ ծանրագին հիվանդացավ։ Եվ երբ մահի վտանգը անցավ, նա արդեն հաշմանդամ էր դարձել. ձեռներն ու ոտները այնպես էին չորացել ու կարկամել, որ բնավ չէր կարող շարժել, աչքերը այնպես էին խավարել, որ Միջագետքի պայծառ արևի բոցափայլ սլաքները ամենանսեմ կայծեր էին թվում նրան։ Իսկ ականջները այնպես էին խլացել, որ անկարող էին լսել երկնքի որոտմունքը կամ սոսկաշունչ մրրիկների մռունչը, որ կոտրատում էր հսկա արմավենիները Եփրատի ափերի։

Ասուր-Նաբալի հրամանով տրքունիքը հավաքվեցին պետության մեծահմուտ քաղաքները, որոնք աստղերի քայլերն են համարում, մեծահամբավ բժիշկներն ու վհուկները, Պարսից աշխարհի իմաստուն մոգերը և եգիպտական խոհուն քրմերը նկան, հավաքվեցին՝ քննելու համար արքայորդու ահավոր հիվանդությունը և բուժիչ հնարներ գտնելու։

Քննեցին օրեր և նորից օրեր, քննեցին և խորհեցին, սակայն, վերջը

անզոր և անկարող հայտարարելով մարդկային միտքը՝ ձեռնունայն հեռացան։

Հույսը մնաց աստվածներին։

Եվ Ասուր-Նաբալը ավագանիի հետ դժբախտ որդուն պատգարակի վրա դրած, շրջապատված հոծ ամբոխներով, տարան աստվածների արքայի, Մեծ-Բաաղի դուռը։

Տաճարի առաջ բորբոքվեցին հսկա խարույկները և քառասուն անգամ քառասուն վիթխարի ցուլեր ողջակիզվեցին մեծ աստծու կուռքը շարժելու համար։ Ծուխը ելավ, փռվեց և ծածկեց աշխարհանման Բաբելոնը։

Պատանուն դրին Բաաղի ոտքերի առջև, և բոլոր քրմերը, Ասուր-Նաբալը, ավագանին և ամբոխը ծունկի եկած աղոթեցին թշվառ դահաժառանգի փրկության համար։

Երեք օր, երեք գիշեր ողջակեզների ծուխը թանձր ամպերի պես մնաց Բաբելոնի վրա, և երեք օր, երեք գիշեր ամենքը աղոթքի մնացին ծերագիր։

Եվ երեք օր, երեք գիշեր անցնելուց հետո Մեծն Բաաղի ավագ քրմապետը հայտնեց, որ աստվածների արքան անհաշտ է Բաբելոնի հետ և չի կամենում բուժել արքայորդուն...

Մյուս աստվածների քրմապետների խորհրդով Ասուր-Նաբալը որդուն տարավ, մեկ-մեկ, բոլոր աստվածների դուռը, ողջակեզներ արավ, բայց ունա՛յն և միշտ ունայն. բոլոր աստվածները խռով էին Ասուր-Նաբալի և ողջ Բաբելոնի հետ։

Մնաց միայն Աստարդան, սիրո աստվածուհին։

Եվ հուսահատ Ասուր-Նաբալը ասավ մայր-թագուհուն.

— Մեծն Բաաղը չկամեցավ բուժել խեղճ որդուս, մյուս աստվածները չկամեցան, գուցե և չկարողացան բուժել, իսկ ի՞նչ կարող է անել Աստարդան, սիրո, համբույրների աստվածը, աստվածների քնքուշ կինը. թե մարդկանց և թե աստվածների մեջ կինը միշտ կին է, թույլ և անզոր... ավա՜ղ, իմ որդին այլևս կորած է...

Սակայն մայր-թագուհին առավ հիվանդ որդուն և նաժիշտներով գնաց Աստարդայի դուռը։

Հիվանդին պատգարակի վրա դրին Աստարդայի առաջ, և ամենքը ծունր իջան և լացին։

Դուրսը այրեցին խարույկները, սակայն ցուլերը դեռ չողջակիզված՝ մրրկաշունչ հողմ բարձրացավ, գետին տապալեց խարույկները, հանգցրեց բոցերը և ծուխը վանեց։ Ամենքը սահմռկեցին այս ահավոր նշանից։

Եվ ավագ քրմուհին հայտնեց Աստարդայի բերանից, թե աստվածուհին ուրիշ զոհեր չի կամենում, բայց միայն հիվանդի սիրտը...

Եվ հիվանդին տարան, դրին լուսեղեն Աստարդայի ծնկների վրա, սիրտն ի վար...

Ակնթարթ չանցած հիվանդը պարզեց կարկամած ձեռները և գրկեց աստվածուհու ծնկները.— տաճարի ամեն անկյունում, հոծ բազմության վրա տիրեց նվիրական, իսորհրդալից լռություն։

Ապա պատանին գլուխը բարձրացրեց և խավար աչքերը ուղղեց աստվածուհու լուսապայծառ, ճաճանչալից աչքերին, և խավար աչքերը շողացին վճիտ և գվարթ։

Տաճարի ամեն անկյունները հեծկլտացին և հիացմունքով ներբողեցին ամեն շրթունք.

— Հրաշագո՛րծ դիցուհի, նվիրական Աստարդա, հավիտյան փառավոր լինիս։

Եվ պատանին առույգ ու կայտառ ոտքի կանգնեց, ապա գետնատարած համբուրեց Աստարդայի լուսագեղ ոտքերը և սրտաբուխ դիմեց շքեղաղ դիցուհուն.

— Ո՜վ մեծ աստվածուհի, բարի և գթառատ, դո՛ւ սեր և կյանք, առանց քեզ աշխարհը խավար է, դո՛ւ աշխարհի արև, առանց քեզ արևը մարած է, դո՛ւ անշիջանելի, նվիրական, ամենահզոր հուր, դո՛ւ մեծ սեր, աղբյուր լույսի և հոգի տիեզերքի, դո՛ւ ամենահաղթ դրոշը տիեզերական բոլոր սահմանների վրա հավերժածուփ... Դու վերստին ծնար ինձ, նոր կյանք, նոր թևեր տվիր, դու ամենաբարի արարիչ, աղաչում եմ, ասա քո անհուն բարության շրթունքով, ինչո՞վ կարող եմ հատուցանել գեթ ամենանսեմ չափով քո անպարփակ գորովին և սիրուն։

Եվ բազկատարած մնաց պատասխանին։

Եվ չքնաղ աստվածուհին ավագ քրմուհու շրթունքով հայտնեց իր նվիրական պատգամը.

— Քո սիրտը հավերժապես իմ զվարակն է արդեն, գնա՛, ո՛վ պատանի՛դ և ողջակիզվի՛ր — սիրի՛ր, սիրի՛ր, միա՛յն սիրիր...

1910

ԼԻԼԻԹ

(Հրեական առասպել)

Աստված՝ երկինք ու երկիր և բոլոր կենդանիներն ու բույսերը իր արարչական մի սոսկ խոսքով ստեղծելուց հետո՝ առավ անասունների ոտքի տակ ընկած հողից մի կտոր և նրանից ստեղծեց մարդուն։

Ստեղծեց նրան, որ սա սքանչանա իր վեհ գործերի վրա և փառավորե աստվածային անունը։

Եվ բնակավայր տվեց նրան Եդեմի դրախտը։

Նորաստեղծ Ադամը հիացավ ասածու հրաշալիքների վրա։ Մեկ-մեկ նայեց անասուններին, թռչուններին և զանազան բույսերին, զարմացավ և փառաբանեց մեծ վարպետի անունը։

Եվ իրեն զգալով մենակ ու անբնակեր՝ սկսեց ձանձրանալ, սաստիկ ձանձրանալ։

Աստված տեսնելով Ադամի մենակությունը՝ խոսեց ինքն իր հետ.

«Եկեք՝ ստեղծենք Ադամի համար մի քնքուշ ընկեր, որ մարդը միայնակ չվայելե դրախտի հրապույրները»։

Եվ բռնեց դեպի վեր սուրացող կրակը և նրա բնկբնկուն, հախուռն բոցերից ստեղծեց անդրանիկ կնոջը՝ Լիլիթին։

Եվ նայելով իր ստեղծածի վրա՝ հյացած ասաց.

«Բարի է, որովհետև զգեղցիկ է»։

Ապա կոչեց Ադամին իր մոտ։ Լիլիթի փոքրիկ ձեռքը դնելով նախամարդու ափի մեջ՝ ասաց.

— Ադա՛մ, ահա քեզ ընկեր, գնդեցիկ Լիլիթը։ Իրար աչքերի մեջ տեսեք ձեր պատկերը և իրար սրտերի մեջ սիրեցեք միմյանց։ Աճեցե՛ք և բազմացե՛ք։

Ադա՛մ, քո բոլոր օրերիդ մեջ հետևիր Լիլիթին, և դո՛ւ, Լիլիթ, հնազանդ եղիր Ադամին։

Լիլիթ ուշի-ուշով նայեց Ադամին, և կավի հոտ զգաց իր հոտոտելիքը։ Եվ զգաց, որ Ադամի հայացքը հողի ծանրությամբ իջավ իր մազերի և ուսերի վրա։ Ու հապճեպով ձեռքը դուրս քաշեց Ադամի ափի միջից։

Ադամ նայեց Լիլիթին. և գեղեցկություն մի անհուն ծավալվեց ու խորացավ իր առջև, որ դյուրում էր ու քաշում իր հոգին դեպի ահավոր անդունդը՝ ոչնչացնելու համար։

Եվ հիազարհուր աչքերը գոցեց։

Եվ երբ աչքերը նորից բացեց՝ շրթունքները հազիվ կարողացան իրարու դալ.

— Ա՛խ, ասուված, դու ստեղծեցիր ամենագեղեցիկը և կատարյալը քո արարածների մեջ։

Դու հյուսեցիր պատկը քո հրաշագործ տիեզերքի։

Փա՛ռք քեզ անսահման և հավիտյան։

Երբ Լիլիթ լսեց Նրա խոսքերը՝ գլուխը քնքուշիկ թեքեց դեպի աջ ուսը. և առաջին զոհունակ ժպիտը փայլեց չքնաղ դեմքի վրա։

Ադամ՝ մղված մինչ այդ իրեն անծանոթ մի զգացումից՝ ուզեց կրկին բռնել Լիլիթի ձեռքը։ Սակայն Լիլիթ բոցի պես խույս տվեց Ադամի մոտից։

Ադամ զգաց, որ իր սիրտը կապված է Լիլիթի լուսաշող կրունկներին՝ անբաժան ու անմեկին։ Եվ հետևելով Լիլիթին՝ տեսավ նրան կանգնած ոսկեվառ լճակի ափին, ուր նայում են ձյունափետուր կարապները։

Լիլիթ հիացումով դիտում էր գեղանի կարապներին։ Նրանց ճկուն, սլացիկ պարանոցները կոխարկել էին իրեն։

Եվ քաղցր ձայնով կանչեց կարապներին. ու երբ Լիլիթ ծունկի եկավ նրանց փայփայելու, հանկարծ ջրերի վրա տեսավ մի հրաշալի, մի հրաբոցոց պատկեր. և երբ հասկացավ, որ այդ իր ցոլքն է, սքանչացավ իրենով և հպարտացավ։

Կրծքի վրա թափթփված մազերը հյուսեց և թողեց, որ հյուսերը ծփան ուսերի և թիկունքի վրա։ Եվ հիացած ու նորից հիացած՝ նայում էր իր պատկերին և չէր հոգենում։

Կապույտ երկինքն իր արևով և դրախտից մի կտոր ցոլացած էին լճակի հայելու մեջ։

Եվ տեսավ Լիլիթ, որ արևը այնքան հրեղեն չէ, ինչքան իր աչքերի կրակը, և երկինքը այնքան խորունկ չէ, ինչքան իր աչքերի հունը։ Ինքն է ամենակատարյալը դրախտի մեջ, և լիճն ու դրախտը լցված են իր դեմքի լույսով։

Մինչ այդ՝ մի գույգ հակինթ թիթեռներ՝ ադամանդե թևերով, եկան և նստան նրա քաղցրաբույր մազերի վրա։ Լիլիթ նայեց և ժպտաց։

— Ի՞նչ գեղեցիկ կլիներ, եթե սրանք միշտ մազերիս վրա մնային...

Եվ իսկույն ծաղիկներ քաղեց, որ հազար գույներով փայլում էին ու բուրում իր շուրջը, և շարեց վարսերի մեջ։

Ադամ, որ հեռուն կանգնած՝ հափշտակված դիտում էր ընկերին, մեկեն սիրտ առավ մոտենալու նրան։

Լիլիթ երբ տեսավ, որ Ադամի ցոլքը խառնվեց իր պատկերին, զայրացած ոտքի հլավ և աչքերի ցասկոտ հուրը վառեց նրա վրա։

— Լիլի՛թ, հրեշտակներից չքնա՞ղս,— թոթովեց Ադամ,— այդ ի՞նչ ծաղիկներ էին, որ դու քաղեցիր...

— Սրա՞նք.— հրաշալիքներ են սրանք, դու չես հասկանում,— Ադամի խոսքը արհամարհանքով կտրեց Լիլիթ։

— Ո՛չ, հոգիս, ես գիտեմ Եդեմում այնպիսի վայրեր, ուր ստեղծողն անգամ տակավին ոտք չի դրել։ Այնպիսի աննման ծաղիկներ, անպատմելի բույրերով ու գույներով, այնպիսի լուսատերև ծառեր՝ ամենահամեղ պտուղներով զարդարուն։

Չէի՞ր կամենա՝ հիմա երթայինք շրջեինք այն վայրերը...

Ադամ այնպիսի փաղաքուշ ձայնով ասաց, որ մի պահ մեղմացավ Լիլիթի զայրույթը։

— Լա՛վ, Ադամ, կերթանք, բայց ոչ այսօր. հետո, հետո։

— Լիլի՛թ, նազելիս, այո՛, երբ որ կամենաս, սակայն, գիշեր է գալու հիմա. գնանք իմ տաղավարը, որ շինել եմ հրաշագեղ սոխակների բներին կից, ամենաշքեղ ծաղիկներով պարուրված։ Քնի՛ր այնտեղ, իսկ ես կհսկեմ քո անուշ քունը։

— Ո՛չ, ո՛չ, թո՛ղ ինձ մենակ։ Ես այսօր շատ հոգնած եմ,— և թեթևասահ քայլերն ուղղեց պուրակների խորը։

Ադամ չգիտցավ՝ ի՞նչ պատասխաներ։ Լուռ և գլխաքարշ հետևեց նրան։

— Ադա՛մ, թո՛ղ ինձ մենակ, խնդրում եմ...

— Բայց, Լիլի՛թ, հաղար ցանկալի՛ Լիլիթ, ե՞րբ տեսնեինք իրար, և ե՞րբ...

— Վաղը,— Ադամի խոսքը հրամայաբար կտրեց Լիլիթ և ակընթարթի մեջ սուզվեց թփերի մեջ։

———

Լիլիթ աղբյուրի մոտ նստած, ականջը դրած նրա բյուրեղյա նվագին՝ նայում էր դրախտի աստղաշարդ երկնքին. և աստղերի հրաբորբ ողկույզները արբեցնում էին նրա սիրտը մի խորհրդավոր տենչանքով։

Եվ Լիլիթ աստղերով հարբած՝ քուն մտավ ծաղիկների վրա և զարթնեց սոխակների սիրահույզ դայլայլներից։

Ցնորագեղ շնորհներով ծագեց արշալույսը և ծավալվեց դրախտի վրա՝ թաթախելով ամեն ինչին կուզձն իսկ շողերի և գույների անճառ կախարդանքի մեջ։

Ադամ, զամբյուղը լցրած պտուղներով ու ծաղիկներով՝ քայլեց դեպի Լիլիթի տաղավարը և հեռվից ձայնեց Լիլիթին։

Պատասխան չառավ։

Նորից ձայնեց, նորից ոչ մի պատասխան։

Անհամբեր մի բանի անգամ անցավ ու դարձավ աղբյուրի շուրջը։ Հայացքը ամեն կողմ լարած։ Լիլիթ չերևաց։

Գնաց լճափ, թափառեց պուրակներում, պրպտելով ամեն թուփ ու մացառ։ Կրկին դարձավ աղբյուրի մոտ։ Լիլիթ չկա՞ր ու չկար։

Ի՞նչ է պատահել նրան, Լիլիթին,— մտածում էր Ադամ.— երևի անծանոթ շավիղներ բռնելով՝ մխրճվել է հեռավոր պուրակների մեջ և մոլորվել։

Պիտի որոնել, որոնել նրան։

Եվ զամբյուղը թողնելով աղբյուրի մոտ, ուր Լիլիթի տաղավարն էր, գնաց որոնելու։

Ամբողջ օրը թափառեց Ադամ՝ բարձր ձայնելով Լիլիթի անունը։ Սակայն ոչ մի արդյունք։

Երեկո եղավ և իջավ գիշերը։

Ադամ, անկարող լինելով խավարի մեջ գտնել դարձի արահետները՝ հոգնած քնեց մի ծառի տակ։

Եվ միայն լուսադեմին, երբ կաթնալույսով ողողված էր երկինք ու դրախտ, Ադամ կարողացավ վերադառնել եկած ուղին։

Վազ տալով, շնչասպառ և դեռ չհասած աղբյուրին, հեռվից ձայն տվեց.

— Լիլի՛թ, բարի լույս։

— Սակայն մի՛ եկ մոտս. դեռ չեմ լվացվել։

Ադամ, լսելով Լիլիթի ձայնը, երեկվա բոլոր կրած տանջանքը նույն սրությամբ նորից ապրեց։ Սրտում զայրույթը ոտքի կանգնեց։ Ուզեց Լիլիթին խիստ կշտամբել, սակայն զսպեց իրեն։

— Ո՞ւր էիր երեկ, ամբողջ օրը։ Այնքան որոնեցի, այնքա՞ն որոնեցի...— Մեղմ եղանակով ասաց Ադամ։

— Երե՞կ.— երեկ ես եկա լիճը. քեզ չտեսա. դու չկար,— պատասխանեց Լիլիթ.— ապա մի քիչ վազվզեցի այծյամների հետևից, ընկա նոր անծանոթ վայրեր։ Սքանչելի սոխակներ կային. նրանց երգով տարված՝ մնացի մինչև երեկո։

— Բայց զարմանալի է։ Դու ե՞րբ եկար լիճը. մի ոտքս այստեղ էր, մյուսը՝ այնտեղ։ Եվ վերջապես դրախտում այնքան թափառեցի։ Ո՞ւր էիր, որ քեզ չգտա։

— Սակայն ես սպասեցի քեզ թե՛ այստեղ, թե՛ լճափում, իսկ դու չկայիր ո՛չ այստեղ, ո՛չ այնտեղ,— կտրուկ ձայնով պատասխանեց Լիլիթ։

Ադամ մի պահ լռեց։ Ադամ մտածում էր՝ մի՞թե չնկատեց Լիլիթին, անկարելի է, բայց...

Եվ համակերպված հաշտ սրտով ասաց.

— Գեղեցի՛կ Լիլիթ, հիանալի պտուղներ եմ բերել նախանաշիդ համար։

— Սակայն սպասիր, մազերս դեռ չեմ հարդարել։

— Եվ չքնաղ մազերիդ համար արշալույսի ցողերով թաթախուն ծաղիկներ եմ բերել։

— Շնորհակալ եմ, ես էլ ունեմ։ Մի քիչ էլ սպասիր, հիմա կգամ։

Եվ սպասեց Ադամ։

Լիլիթ, բոցերի պես թավոռուն, եկավ կանգնեց Ադամի առջև՝ ոտքը հաղիվ գետին առած։

— Օ՜հ, նորից նույն հիանալի պտուղները, որ գտա ուղղավորիս առաջ։

— Միշտ նույն գեղեցիկ տեղերից եմ բերել։ Հիմա պիտի ղնանչ, չէ՞, հոգիս։

— Կերթանք, դեռ ժամանակ կա,— ասաց Լիլիթ և նստեց նախաճաշիկի։

Ադամ տեղ բռնեց Լիլիթի ձախ կողմը և սրտի ղեղումին ազատ ելք տալով.

— Ա՜խ, Լիլիթ,— ասաց,— իրավ որ դու անգութ ես։ Մենակությունը հոգիս հանեց։

Եվ կարոտով գրկեց Լիլիթի մեջքը և բոլոր հոգով սեղմեց Լիլիթին իր կարոտած կրծքին։

Լիլիթ փախավ Ադամի գրկից և, հեռուն կանգնած՝ լացի ձայնով ասաց.

— Ադա՛մ, շատ կոպիտ ես գրկում. կոզերս ջարդեցիր։

Եվ թիկունքը դարձնելով Ադամին՝ խոսված կանգնեց Լիլիթ։

Եվ նրա թիկունքը ավելի ոսկեբոց էր, քան արշալույսի շքեղահյուս ծիրանին, որով զարդարվում է դրախտը։

Ադամ նայեց, և հոգին նվաղեց. և փափկությամբ բռնեց Լիլիթի ձեռքը և նրա աչքերի մեջ հալվելով խոսեց.

— Լիլի՛թ, կյա՛նքս, ներիր ինձ։ Լիլի՛թ, հոգուս հոգի, այդպես լուռ և տխուր մի՛ նայիր ինձ. ժպտա՛, խոսի՛ր։ Ա՜խ, ինչպես կուզենայի հազար ականջ ունենայի, որ քաղցր ձայնիդ հազար անգամ լսեի և նորից չհագենայի։

Լիլիթ նստավ։ Զգվեց մի լռված լռություն։

— Ադա՛մ,— խզեց լռությունը Լիլիթ,— ասված քեզ վաղո՞ւց է առեղծել։

— Այո՛, նոզելիս։

— Ի՞նչ էիր անում դրախտում։

— Թափառում էի մենամենակ և ինձ համար ընկեր էի որոնում անթան անասունների մեջ։

— Մի՞թե չգտար քեզ նմանը,— հարցրեց, աչքերի խորամանկ խաղով զննելով Ադամին։

— Օ՜չ, Լիլիթ։ Դրա համար էլ ասված քեզ ստեղծեց ինձ համար։

— Ինձ քեզ համար ստեղծե՞ց... հա՛, հա՛, հա՛...— ծիծաղեց Լիլիթ բարձր ու զվարթ։

Ադամ վիրավորվեց։ Իջավ մի դառն լռություն։

— Այո՛, այո՛,— սրտաբեկ խոսեց Ադամ,— ասված քեզ ստեղծեց, որ մենակ չապրեմ, որ ընկեր լինինք... կյանքս հատնում է քեզ համար, իսկ դո՞ւ... դու չես իմանում, որ առանց քեզ դրախտն անտանելի է ինձ համար և կյանքը՝ միայն տառապանք... ասածուն հաճելի չէ այս. եթե լսե, սատիկ կբարկանա։

Եվ դողաց նրա ձայնը. արցունքները թրթռացին ձայնի մեջ։

Լիլիթ նայեց Ադամի խղճալի դեմքին և լիահնչուն քրքիջ արձակեց։ Սակայն մի պահ։ Ապա հայացքը նրա քայլքրացավ, ասածու անունը դգաստացրեց նրան։

— Բայց, Ադա՛մ, ինչո՞ւ ես լալիս. ինչո՞ւ ես այդպես խոսում։ Չէ՞ որ միշտ բարի եմ եղել քեզ հետ։

Եվ հրացայտ մատներով փայփայեց Ադամի անկարգ մորուքը։

Անծայր գորովով լցվեց Ադամի սիրտը։ Պատրաստ էր ընկնելու Լիլիթի ոտները և թողություն խնդրելու։

— Հավ, Ադամ, սիրելի՛ս,— փաղաքուշ ձայնով դիմեց Լիլիթ,— բռնի՛ր այս թռչող ծաղիկը ինձ համար։

— Սա թիթեռ է, ծաղիկ չէ։

— Միևնո՛ւյն է, բռնի՛ր։

Ադամ վազեց թիթեռի հետևից և չկարողացավ բռնել։

— Ուզո՞ւմ ես՝ բռնեմ իսկույն,— ասաց Լիլիթ և, ճախր առնելով օդում, ակնթարթի մեջ բռնեց թիթեռին։

— Ճնշա՞ր, Ադամ։ Բայց ի՞նչ դանդաղաշարժն ես եղել դու։

— Օդի միջով քեզ պես չեմ կարող ոստոստել,— պաշտպանեց իրեն վիրավորված շեշտով Ադամ,— բայց շատ արագ կարող եմ վազել։

— Այդ էլ չես կարող,— հակառակեց Լիլիթ,— մի՛ պարծենար։

— Կարող եմ,— պնդեց Ադամ,— արի փորձենք։

— Ջուր մի՛ հոգնիր։

Ադամ նորից պնդեց։

— Շատ լավ,— ասաց Լիլիթ,— եթե ինձ բռնես, դրախտի ամենից քաղցր պտուղը կտամ քեզ։

— Ո՞րն է այդ, որ դու գիտես, ես՝ ո՛չ, թեև դրախտի բոլոր պտուղները ճաշակել եմ սրդեն,— զարմացած հարց տվեց Ադամ,— ի՞նչ է սնունը։

— Համբույր։

— Համբո՞ւյր,— զարմացական ու հարցական կրկնեց Ադամ։

— Այո՛, համբույր,— շրթների հատնումը ուրիշ շրթների վրա։ Չգիտե՞ս։

Ադամ խորհում էր, թե ո՞րտեղից այդ գիտեր Լիլիթ, ե՞րբ և ինչպե՞ս... Եվ վարանոտ նայեց Լիլիթին։ Իսկ Լիլիթ անխոս նայում էր Ադամի աչքերին, և սակայն նրա բեցալեզու հայացքը կրակե ճառագայթներով անցավ Ադամի բիբերի միջով և բռնեց Ադամի հոգին մորենու պես։

Հանկարծակի Ադամ և սրտակամ համաձայնեց։

Վազում էր Լիլիթ կայտառ ու թեթև, Ադամ ոգևորված վազում էր հևիհև։

Թաքչում էր Լիլիթ թփերի տակ, ապա ցատկում էր վեր, կանգնում էր մի պահ և հնչուն ծիծաղով ասում.— «Արի՛, արի՛, բռնիր, սպասում եմ»։ Եվ կարմիր շրթները համբույրի բողբոջ կազմած՝ սպասում էր։

Ադամ խելակորույս կանգ առավ։

— Ադա՛մ, աստված քեզ ինչո՞ւց ստեղծեց,— հարց արավ Լիլիթ նրան մոտենալով։

— Հողից, բայց իր պատկերի նման։

— Հողի՞ց, հողի՞ց... հա՛, հա՛, հա՛,— ծիծաղում էր ու ծաղրով ծիծաղում,— դրա համար այդպես ծանրաշարժ ես, հաստ ու կոպիտ։

Ադամ բորբոքվեց ու բարկացավ. և բոլոր ուժերը հավաքած՝ վազ տվեց, վազեց Լիլիթի վրա և քիչ մնաց բռներ նրան, ու ճմլեր իր գրկում. սակայն մատները միայն դիպան մազերին։ Իսկ Լիլիթ, ակնթարթի մեջ, արտույտի պես նետվեց վեր ու սլացավ թավուտների մեջ՝ զվարթ ծիծաղով ու բարձր ձայնելով.

— Ադա՛մ, վազն արի գնանք դրախտը շրջելու։

Ադամ հաղթված և ամոթահար՝ երկար ժամանակ մնաց բնեռված և աչքերը անթարթ ծռվեցած՝ Լիլիթին պարփակող թավուտների վրա։

Արշալույսին Ադամ եկավ և դեգերեց աղբյուրի շուրջը։ Սպասեց, մինչև Լիլիթ, ծաղիկներով պճնված, հազար նազանքներով երևաց։

— Ուրեմն ասում ես՝ գնանք քո գոված վայրերը,— անփույթ ասաց Լիլիթ։

— Օ՜հ, անմա՛ն Լիլիթ, գովքը ոչինչ հնչյուն է. պիտի աչքովդ տեսնես այն գեղահրաշ պուրակները, աղբյուրները, լճակները, որ հանկանաս դրախտի շքեղությունը։

Եվ Ադամ ցույց տվավ գնալիք ուղին։

— Ո՛չ, այսպե՛ս գնանք,— ասաց Լիլիթ՝ մատնանշելով Ադամի ցույց տվածի հակառակ կողմը։

— Նեղլիս, սա՛ է ճանապարհը,— մեղմով առարկեց Ադամ։

— Այսպե՛ս գնանք,— կրկնեց Լիլիթ։

— Անգի՛ն Լիլիթ, այդ ճանապարհը չա՛վը չէ այնքան։ Ես գիտեմ բոլոր շավիղները,— և ցույց տվածս է ամենագեղեցիկը։ Ներիր, որ ասեմ, թե դու չգիտես։

— Ո՛չ,— պայրացած ասաց Լիլիթ,— և վերջապես ես ա՛յս եմ ուզում. եթե չես գալիս, ես մենակ կերթամ։

Եվ ոտք դրեց իր կամեցած ուղին։

Ադամ հլու հնազանդեց նրան։ Մի պահ գնալուց հետո՝ Ադամ համարձակվեց ասելու.

— Չքնա՛ղ Լիլիթ, ապշում եմ. հիմա էլ փորձիր իմ ասած ճանապարհը։

— Շատ լավ,— գիշեց Լիլիթ,— թող քո ասածը լինի։ Արդեն միշտ քո ասածն է լինում։

Ճանապարհի ափերին, հազարաբույր ու հաղարաթույր ծաղիկները բյուր-բյուր ձևերով՝ պճնազարդել էին բուրաստանները։ Երազանման թիթեռների բույլերը ճախր էին առնում կանաչի ու կակաչի մեջ Լիլիթի շուրջը։ Պուրակներում բահաններն ու անանասները բոլորել էին լճակները, ուր ցոլացյալ ձկներն էին խայտում նունուֆարների և լոտոսների հույլերի մեջ։

Սաղարթախիտ սավիրների տակ արծաթյա և ծիածանավառ սիրամարգերն էին ճեմում զմրուխտահավերի և ծիրանահավերի հետ։ Մարգից մարգ ոստոստում էին դրախտահավերն ու քնարահավերը։

Դարաստանների վրա, բուրալից օդում, անուրջների պես, ցանուցիր, թափառում էին երփնավառ թռչունները և երգում էին հազար դայլայլներով, հոգեհմա գեղոններով իրենց սերն ու տենչերը։

Ոսկեկեղև ծառերից կախված էին հեշտագրգիռ պտուղները կախարդիչ գույներով ու ձևերով։

Լիլիթ պառկում էր սիրտն ուպածը և հիացած ճաշակում։ Հափշտակված էր Լիլիթ դրախտի տնասրաններով. անթարթ նայում էր շուրջը, ետ դառնում և նորից նայում։

— Հոգյա՛կս,— ասաց Ադամ,— ահա այնտեղ է իմ տաղավարը։

Սակայն Լիլիթ անուշադիր՝ չլսեց Ադամին և քայլում էր զմայլած ու վերացած։

Նա թռչունների պես ոստոստում էր, քան թե քայլում, լուսակաթ ոտները գետնին չէին հպում։

Իսկ Ադամ ծանր ու հաստատուն քայլերով հետևում էր նրան, աչքերը չհեռացնելով նրա կրակե բոցերի պես ծփծփող, ճառճանչագեղ մազերից։

Զգացումի հզոր ու անզուսպ մի ալիք մղում էր Ադամին գնալու և Լիլիթի ոտների տակ փշրվելու, և Ադամ, արագացնելով իր քայլերը՝ մոտեցավ Լիլիթին, վախով բռնեց նրա հրեղեն արմունկից և հոգեսպառ ասաց։

— Ի՛մ չքնաղ ընկերս, նայիր հեռուն, ի՞նչ վսեմ է։

Լիլիթ աչքի ծայրով անտարբեր նայեց հեռուն։

Եվ հեռուն երկնաձիգ լեռներն էին սուզվել կապույտ լռության մեջ, արծաթացոլ ձյունապատներով։ Ցյունաբարձ ապառաժներից գլխիվայր նետվում էին ջրերը և ահագնագոչ դղորդով լեցուն անձավները, ուր խարտյաշ այծյամներն էին հանդիստ առնում։

Լեռների ոտների տակ անդուսի ծովն էր հևում, ուր լուսափետուր որորները քնքշորեն խփում էին իրենց կուրծքը ոսկեծայր կոհակներին և սուրում էին դեպի հեռավոր զմրուխտաշող կղզիները։ Այնտեղ երփնաթերթ ծաղիկներն էին ինկում և բարձրուղեշ արմավենիներն էին օրորվում գուրգուրող հովերի մեջ։

— Տեսա՞ր, հոգիս, ինչ գեղեցիկ է։ Ես չէի՞ ասում,— շշնջաց Ադամը և գորովով գրկեց Լիլիթի մեջքը։

— Վատ չէ, բայց իմ ասած ճանապարհը նույնպես լավն էր,— ասաց Լիլիթ և, ոստում անելով՝ թռավ Ադամի գրկից դուրս և կանգնեց ափին մոտակա առվակի, որ զվարթ ծիծաղով թռվալվում էր խայտաբղետ ավազահատիկների վրա։

— Օ՜հ, ի՞նչ սիրուն են այս մանր քարերը, ի՞նչ սիրուն գույներ ունեն. կարմիր, կապույտ, կանաչ, ոսկե... Ադա՛մ, տուր ինձ այդ խիճերից մի քանի հատ։

— Լիլի՛թ, այս ի՞նչ են որ։ Ես գիտեմ այնպիսի խիճեր, որոնք փայլուն են արևի պես, թափանցիկ են ջրերի պես և կարծր են ու շատ գեղեցիկ։

— Ա... Ո՞ւր են նրանք, Ադա՛մ, սիրելիս, ո՞ւր են հիմա։

— Նրանք շատ հեռու տեղ են գտնվում, խորոնկ, անհուն ձորերի մեջ, ժայռերի ծերպերում, հեռու հեռուներում։

— Ե՞րբ կբերես, ասա՛, Ադամ,— և Լիլիթ քնքշությամբ ձեռքը դրեց Ադամի ձեռքի վրա։

— Եթե հաճելի է քեզ, նազելիս, այսօր կգնամ և վաղը կբերեմ,— ասաց Ադամ ուրախացած, որ առիթ ունեցավ Լիլիթին հրճվանք պատճառելու։

— Գնա՛, Ադամ, հիմա իսկո՛ւյն գնա. ի՞նչ լավն ես, Ադամս,— և ափի հակադարձ կողմով փափկությամբ շոյեց Ադամի ճակատը։

Ադամ սրտի արագությունով մեղմիկ առավ Լիլիթի շուշանագեղ ձեռքը և դրեց շրթներին։ Համբույրի անուշությունը ծորեց Ադամի սրտի մինչև հատակը...

Ապա կարոտի հայացք ձգելով Լիլիթի վրա՝ արագ վազ տվեց, մինչդեռ Լիլիթ աչքերի հրեղեն խաղով, ուր անուշ խոստումներ կային, երթաս բարև մաղթեց Ադամին։

Լիլիթ ոտակավ ինչ հանգչելուց հետո՝ ուրիշ շավիղներով ուզի ընկավ դեպի իր տաղավարը։ Հանկարծ գլուխը ցից բռնած մի օձ հանդիպեց նրան։

Լիլիթ նայեց օձի աչքերին, օձը՝ Լիլիթի։ Եվ երկուսն էլ կանգնած մնացին. երկուսն էլ թռվված էին մեկ մեկով։

Լիլիթին այնպես հրապուրել էր օձի վեհվեհուն, գալարուն մարմինը՝ ողորկ, սուր և նեռվոր։ Նրան այնպես թվաց, թե այդ թափանցիկ իր մարմնի միջով։

Երկար և երկար նայում էր Լիլիթ, սակայն օձը, վախեցած նրա հայացքի կայծակից, սուլեց և ակնթարթի մեջ անհայտացավ կարկառների մեջ։

Մինչդեռ Ադամ շնչասպառ վազում էր՝ շուտով հասնելու գեղեցիկ քարերի ձորը։ Երբ հասավ, հանդով սկսեց հավաքել երփներանգ խիճերը։

Առանց հոգնելու և վհատելու մոգեցում էր ժայռերը և ծերպերից ատամներով պոկում էր քարերը՝ վիրավորելով մատներն ու ոտքերը, բայց ոգի առած այն հեռապատկերով, թե ի՞նչպիսի հաճույք պիտի ընծայեր չքնաղ Լիլիթին։

Ինքնին զարմանում էր, որ Լիլիթին տեսնելու վայրկյանից սիրտը լցված էր մի հեշտալի և քաղցր զգացումով. և դրախտն այն օրվանից հազար անգամ ավելի գեղեցիկ է դարձել, և իր ամեն ապրած վայրկյանը իմաստ ունի և անարտահայտելի հրապույր...

Աղամ բեռնավորված ծանրալի զամբյուղով՝ վերջալույսին հեիհն հասավ լճակը, ուր Լիլիթ անհամբեր սպասում էր Ադամին։

Նա դրկած ուներ մի թավշամորթ կատու, որին շոյում էր անընդհատ՝ ժամանակը կարճելու համար։

— Լիլի՛թ, հոգեթո՛վ Լիլիթ, ահա եկա և բերի,— գոչեց Ադամ։

Լիլիթ, որ Ադամի ցոլքը տեսել էր ջրի վրա, իբրև թե հանկարծակի եկած՝ ետ դարձավ դեպի նա։

— Ադա՛մ, դո՞ւ ես։

— Ների՛ր, հոգիս, որ ավելի շուտ չկարողացա գալ։ Շատ հեռու էր։ Վաղո՞ւց է՝ սպասում ես ինձ։

— Ո՛չ, Ադամ, նոր եկա։ Չէի ուզում գալ, գլուխս ցավում էր. հենց այնպես եկա։ Քերի՞ր քարերը, տեսնենք։

Եվ զսպած անհամբերությամբ աչքերը նետեց զամբյուղի մեջ.

— Օ՜հ, ի՜նչ գոհարներ են, ի՜նչ շքեղ են, ի՜նչ շքեղ,— հիացած ձայնեց Լիլիթ։

— Գոհա՞ր է սրանց անունը։ Դու ո՞րտեղից գիտես,— զարմանքով հարցրեց Ադամ։

— Այո՛, այդպես է, ես գիտեմ. Ադա՛մ, սիրելիս, ե՛կ համբուրեմ քեզ, ինչքան բարի ես։

Եվ Լիլիթ, չկարողանալով զսպել ուրախությունը, կատուն բաց թողեց գրկից, թռավ և համբուրեց Ադամի ճակատը։

Ադամ խելքը կորցրած փռվեց Լիլիթի ոտների տակ և ապշած դիտում էր նրան, որը, քնքուշ մատները իրելով զամբյուղի մեջ՝ խաղում էր գոհարների հետ, առնում էր ափի մեջ, անհագ նայում, ժպտում էր ինքնին, նորից լցնում էր զամբյուղը և նորից վեր առնում։

— Ի՜նչ հրաշալի ադամանդներ են՝ սպիտակ հիանալի ճառագայթներով։ Ի՜նչ կարմիր հակինթներ են. ի՜նչ մաքուր կանաչ զմրուխտներ են, ի՜նչ սուտակներ, ի՜նչ շափյուղներ. ո՞րն ասեմ, ո՞րն ասեմ. և ինչքա՜ն շատ են, շա՜տ են...

Եվ Լիլիթ խաղում էր գոհարներով, սփռում էր վայրերի մեջ և նորից հավաքում, մինչև լիալուսինը բարձրացավ ծառերի հետևից և լուսավորեց դրախտի ամեն մի թուփ ու մացառ, ծիլ ու տերև։

Լիլիթ նստել էր նռենու տակ։ Լուսնյակի նուրբ շողերը լուսեղեն քարերի պես ծրարել էին նրա դեմքը։ Ադամի սիրտը թռչունի պես թրթռում էր կրծքի տակ և ուզում էր բերանից դուրս թռչել։

— Լիլի՛թ, աննմա՛ն Լիլիթ, դու իմաստուն ես. ասա՛ ինձ, այս ի՞նչ զգացում է, որ բուն է դրել հոգուս մեջ քեզ տեսնելու վայրկյանից։ Ուզում եմ հալչել լույս ոտներիդ տակ. ուզում եմ համբուրել կոխածդ

հողը. ուզում եմ արևը պսակ դնել գլխիդ վրա և աստղերով սալարկել քո ուղին։

Լիլիթ լսում էր Ադամին, և մեղմ ծիծաղը հավաքվում էր իր շրթների շուրջը։

— Ասա՛, ամենաչքնա՛ղ Լիլիթս, ի՞նչ է այս զգացումը, որ երբ մոտ եմ լինում, դրախտը ավելի շքնաղ է դառնում և կյանքը ավելի անուշ. իսկ երբ հեռու եմ լինում քեզնից՝ դրախտը դառնում է տգեղ և ամայի, և կյանքը՝ դառն ու ծանր։

Քնած թե արթուն՝ երազներս միայն քեզնո՛վ են լցված։ Դու ապրում ես սրտիս և աչքերիս մեջ։

Լիլիթ ծիծաղելով, սակայն ցուրտ ձայնով ասաց.

— Սի՛ր է, Ադա՛մ, սե՛ր է դրա անունը։

— Սե՞ր... որտեղի՞ց գիտես դու...

— Ես վաղո՛ւց գիտեմ, Ադամ։

— Սեր. նվիրականն ահավոր անուն։ Սեր, այո՛, ասված էլ նույնն ասաց՝ սիրեցեք իրար։ Եվ ես սիրում եմ քեզ, Լիլի՛թ, հազար-հազար սիրելի Լիլիթ. ես քեզ սիրում եմ։

Եվ ինչպե՞ս կարող եմ քեզ չսիրել՝ դու շքնաղ ես, հրաշագեղ, հրաշագեղ, բյո՛ւր անգամ հրաշագեղ։

Եվ գիտեմ հիմա, որ սե՛րն է բոլոր իրերի հոգին. սերն է, որ թռչունների բերանը հովերի ու ադբյուրների անուշ մրմունջն է դրել։ Սիրուցն է, որ քո անցած շավիղներից մեխակի և խնկածաղիկների բուրմունքն եմ առնում։

Եվ գիտե՛ս, Լիլիթ, փոթորկով բռնկված ծովը, որ լեռնաշափ ալիքներով ծեծում է երկրի ժայռերը, ավելի թույլ է ու թալուկ, քան իմ սերը, որ անզուսպ ուզում է ոտներիդ տակ ծունկի դալ և լռության մեջ հատնել։

Ուզում եմ քեզ օծել համբույրներով, և հոգվույս համբույրների մեջ դալկանամ ու չքանամ։ Ա՜խ, այնպե՛ս, այնպե՛ս սիրում եմ քո հոնքերը, նազելի՛, ցանկալի՛ Լիլիթ։

Քո հոնքերը ծիածանի պես կամար են. ծիածանի պես կամար են կապել քո հոնքերը աչքերիդ երկնքի վրա։

Քո աչքերի երկնքի մեջ ծիր-կաթիններ եմ տեսնում, ուր հազար-հազար արևներ են հրդեհում։

Հազար-հազար արևներով բոցավառ աչքերդ կիզում են հոգիս. հոգիս կիզում են։ Թող աչքերիդ մեջ նայելով մոռանամ ինձ. մոռանամ դրախտն ամբողջ՝ աչքերիդ մեջ նայելով։

Եվ համբուրեց Լիլիթի աչքերը և համբուրեց հոնքերն ու թարթիչները։

Լիլիթ անտարբեր էր Ադամի զուրգուրանքի հանդեպ։ Լիլիթ մտազբաղ էր։

— Ադա՛մ, ի՞նչ կա դրախտից այն կողմը։

— Այնտեղ երկիրն է՝ շոր ու տատասկոտ։ Քող կորչի երկիրը. ես սիրում եմ քո պարանոցը, Լիլի՛թ։ Քո պարանոցը բարձր է ու սպիտակ, ավելի բարձր ու սպիտակ, քան ցարասիները, որ նուրբ ու քնքուշ հասակով կանգնել են դրախտի դռների վրա։

Եվ Լիլիթ աչքերի ծիծաղով՝ երկարացրեց պարանոցը, և Ադամ համբուրեց պարանոցը և նորից համբուրեց անհնչանքով։

— Ադա՛մ, ո՞վ է ապրում երկրի վրա։

— Սատանա՛ն է ապրում, Լիլի՛թ. սակայն թող կորչի սատանան։ Ես սիրելով սիրում եմ քո բերանը, Լիլի՛թ։ Դրախտի հրաշալիքն է քո բերանը, Լիլի՛թ...

— Ադա՛մ, ո՞վ է սատանան,— ընդհատեց Լիլիթ նրա սրտի զեղումը։

— Աստծու հակառակորդն է նա։ Հրեշտակ էր նա, հրեղեն՝ և իմաստուն, և գեղեցիկ, սակայն ըմբոստացավ աստծու դեմ. ուզեց նրան հավասարվել։ Եվ աստված պատժեց նրան. երկնքից ներքև թոթափեց նրան իր ընկերներով՝ հավիտյան նզովելով նրանց։ Եվ թող նզովվա՛ծ լինեն նրանք։

Ես սիրում եմ քո բերանը. անսպառ և անհուն հրապույրների, անանուն վայելքների նեկտարն է քո բերանը, ուսկից ոսկի մեղուն ամենաքաղցր մեղրն է շինում։

Քո լեզուն բոլոր սոխակների սիրատարփ երգերն ունի, և բոլոր թռչունների ճռվողյունից ավելի անուշ է քո լեզուն։ Քո շրթների մի քաղցրանուշ համբույրով ես ողջ դրախտը վայելած կլինեմ. լիաճոխ ճաշակած կլինեմ ողջ տիեզերքն ու հավիտենականը քո շրթների մի-միակ համբույրով...

Եվ Ադամ տարփակեց շրթները կարկառեց՝ Լիլիթի բերանը համբուրելու. սակայն Լիլիթ ձեռքով զոցեց Ադամի բերանը և, ուժգին ետ մղելով նրան, իսկույն մի ցունցով ոտքի ելավ։

Ադամ թալկացած ընկավ գետին։

— Քունս տանում է,— ասաց Լիլիթ.— վաղը կապառես ինձ լճափին։

Եվ թռչունի քայլերով թռավ սուզվեց պիշերային սավաններն մեջ։

Ադամ խավարած աչքերով հետևում էր հեռացող, կայծկլտող, փայլուն Լիլիթին։

Ադամ ատամով աչքերը բացեց, տեսավ գլուխը գետնին, և Լիլիթ չկար։ Կարծես թե՝ երազի մեջ էր։ Աչքերը նորից զոցեց, սակայն Լիլիթ նորից չկար։

Հանկարծ միտքն ընկավ Լիլիթի վերջին խոսքերը։

Արագ քայլերով շտապեց լճափ և, աչքերը սևեռած դրախտի բոլոր շավիղներին, սկսեց սպասել։

Ամեն մի եղնիկի քայլով սիրտը թունդ էր ելնում. ամեն մի զեփյուռով, որ թփերը իրար էր բերում, ալեկոծվում էր նրա սիրտը։ Այսպես անհամբեր սպասեց մինչև վերջալույս — և Լիլիթ չեկավ։

Ադամ հուսաբեկ փռվեց սեզերի վրա՝ թարթիչները գոցած, որ Լիլիթին երազե։

Լսեց մի մրմունջ ափի եղեգների մեջ. կարծեց թե մի սիրտ մորմոքում էր այնտեղ։

Շտապով ոտքի ելավ, կտրեց մի եղեգ, մի երկու ծակեր բացեց ցոզունի վրա և սկսեց նվագել։

Այս նվագ չէր, այլ Ադամի սիրավառ սերն էր ինքնին, որ շիթ-շիթ ծորում էր եղեգնափողի միջից՝ զարձած արցունք ու տենչանք, տենչանք ու արտունջ։

Եվ երգում էր նա.

— Լիլի՛թ, Լիլի՛թ, դու իմ ճակատագիր։
Առանց քեզ ի՞նչ է անմահությունը։
Դու հեշտանքի դրախտն ես, Լիլիթ,
Հրաշքների և հմայքների միակ դրախտն ես դու։
Երազն ես դու, հիացքն ու գլուխանքը, Լիլիթ,
Դու չճաշակված գաղտնիքն ես, Լիլիթ,
Արքայադուրն ես դու, Լիլիթ,
Քաջար տանջող և ապրեցնող հրապույրների
արքայադուրը։
Անհաղթելի կինն ես դու, Լիլիթ,
Լիլի՛թ, հավիտենական Լիլիթ...

Գիշերն անքուն թափառեց Ադամ՝ երգելով իր ցավագին կարոտը, որ կիզում էր նրա սիրտը։ Եվ մյուս օրն ամբողջ Լիլիթ նույնպես չերևաց։ Օրն ամբողջ թափառում էր Ադամ ու հառաչում։ Այրվում էր ու պապակում, և դրախտի ոչ մի ուռն աղբյուր չէր կարող զովացնել նրան։

Ադամ որոշել էր. երբ Լիլիթին տեսնի, ծանր խոսքերով կշտամբեր նրան, հանդիմանե կոպիտ ձևով և նույնիսկ սպառնա աստծու անունով։ Այնպե՛ս տառապած էր Ադամի հոգին, այնպես խիստ տառապած։

Վերջալույսին, հանկարծ թփուտների խորքից երևաց Լիլիթ բյուր սեթևեթներով, իր մարմնի բոլոր շնորհներով պերճացած։

Ադամ խենթի պես ցատկեց դեպի Լիլիթ, վայրկյանի մեջ մոռանալով ամեն քեն ու որոշում։

Եվ տեսավ Լիլիթին աշխույժ ու կայտառ, վազում էր մի գալարուն ու սնափայլ օձի հետևից, աչքը չհեռացնելով օձի վրայից։

Ադամ բոլոր շնչով ձայնեց և հետապնդեց նրան.

— Լիլի՛թ, կանգնի՛ր, ո՞ւր ես գնում, կանգնիր։

— Քեզ ի՞նչ, ուր եմ գնում, ինչո՞ւ ես հետևում ինձ.— բարկացայտ պատասխանեց Լիլիթ։

— Ինչպե՞ս թե՝ քեզ ինչ։ Չէ՞ որ ասված ուզեց, որ հետևեմ քեզ, և դու հնազանդիս ինձ...

— Ես քեզ հնազա՞նդ։ Դու ո՞վ ես, ո՞վ։ Կորի՛ր աչքիցս, կո՛շտ հողի կտոր,— արհամարհոտ գոչեց Լիլիթ և բոցերի պես օդի միջով սուրաց, անհայտացավ։

Ադամ, համբերությունը հատած՝ ուղղակի գնաց ասածու մոտ գանգատի։

— Տե՛ր իմ, այս ի՞նչ ընկեր տվիր ինձ,— ասաց Ադամ զսպած բարկությամբ.— քո հրամանին երբեք չանսաց նա. չհնազանդեց ինձ։ Հրապուրում է ինձ, տոչորում և ապա ծարավ թողնում, հեռանում։ Այրվում եմ, երբ հեռու եմ լինում նրանից. այրվում եմ նորից, երբ մոտ եմ լինում նրա։ Չար կրակ է նա, կիզող-կրակի կտոր, տանջվում եմ, հատնում եմ ես...

Ասված հանդստացնելով Ադամին՝ ճանապարհ դրեց։ Եվ կոչեց Լիլիթին իր մոտ։ Սակայն Լիլիթը չեկավ ասածու ձայնի վրա։ Ասված՝ սրտմտած՝ ուղարկեց Սենոյի և Սանսենոյի հրեշտակներին, որ գտնեն բերեն իր աթոռը անհնազանդ Լիլիթին։

Լիլիթին բերին։ Նա աչքերը խոնարհած կանգնել էր ասածու առաջ։ Արարիչը սաստեց նրան, ասելով.

— Ես ստեղծեցի Ադամին հողից և քեզ կրակից, որ իրար լրացնեք։ Պիտի սիրես և մանավանդ հնազանդ պիտի լինես նրան, քո ամուսնուն, որովհետև ես քեզ նրա համար ստեղծեցի։ Եթե չհնազանդես, գիտցիր, որ խիստ կպատժեմ... Գնա հիմա Ադամի մոտ, այդպես եմ կամենում ես...

Վտակի ափին, ուռենու տակ, տխուր նստել էր Լիլիթ։ Թախծանուշ դեմքը մարգարիտի պես գունատ, ճակատը բազուկին հենած, եվ մազերը պճնող դրախտավարդերի պսակը թառամել էր արդեն...

Ադամ, որ սպասում էր նրա դարձին, եկավ նստավ նրա կողքին և, վախով բռնելով նրա ցուրտ ձեռքը, ամբողջովին զուրգուրանք դարձած՝ շշնջաց մեղմիկ.

— Լիլի՛թ, հոգո՛ւս հոգի, ինչո՞ւ ես տխուր, ինչո՞ւ ես այդպես տխուր։ Ինչո՞ւ չես ժպտում, ի՛մ գեղանուշ։

— Ա՛խ, արնափա՛յլ իմ Լիլիթ, ինչո՞ւ ես լուռ։ Մի՞թե չգիտես, որ քո սիրով եմ միայն ապրում. եթե սիրես քամես, սերդ կծորև այնտեղից, միայն քո սերը և ուրիշ ոչինչ։ Տիեզերքի չափ սիրում եմ քեզ, տիեզերքի չափ...

Եվ բյուր փափագով համբուրեց Լիլիթի մազերի ծայրը և փաղաքշանքով համբուրեց մազերն ու աչքերին քսեց նրա ոսկեհուր մազերը։

Սակայն Լիլիթ լուռ էր և անտարբեր՝ անթարթ աչքերի հայացքը հեռուն ցրված։

— Լիլի՛թ, նազելիս, գնանք իմ տաղավարը, ամենահամեղ պտուղներից սեղան եմ պատրաստել։ Ծաղիկներից սքանչելի նեկտար եմ հավաքել և մեղուներից՝ քաղցրագին մեղր։ Եվ վարդերից ննջարան եմ հարդարել քեզ համար։ Գերերջանիկ անուրջներով պիտի քնես, և ես մինչև լույս պիտ հսկեմ քո ոտների տակ։

Արշալույսից առաջ սրինգս նվագեմ պիտի, որ թռչնի գան քնքուշ սոխակներն ու դեղձանիկները, թիթեռներն ու դրախտակաքավները։ Երգեն ու պարեն և զվարճացնեն քեզ։

Սակայն Լիլիթ լուռ էր և անտարբեր։

Ադամ գրկեց նրա նուրբ մեջքը, ոտքի կանգնեցրեց և, թևերի վրա առած՝ տարավ իր տաղավարը։

Հոգնած էր Լիլիթ սրտի հուզմունքից։ Նրա վրա ազդել էր ասածու բարկացայտ հայացքը։ Եվ կամազուրկ պառկեց ծաղկահյուս ննջարանում։

Ադամ նրա գլուխը դրեց իր ծունկերին և հիացած ու հափշտակված՝ դիտում էր նրա բյուրեգային մերկությունը՝ ծիրանավառ վարդերի թերթերի վրա ընկողմանած։

Լիլիթ գոցել էր աչքերը, և՛ հեզ էր, և՛ խոնարհ, ինչպես վիթերը, որ երկնչում են ծաղիկների սոսափյունից անդամ։ Եվ գունատ էր մարգարիտի պես։

Ադամ փայփայում էր Լիլիթի մարմինը և ինքնին մրմնջում.

Եվ սիրտն ցանկությամբ հոմբուրում էր Լիլիթ սատանայի շրթունքը։ Եվ ծիծաղում էին միասին գոհ ու հրջանիկ։

Ադամ, նախանձից խելագար՝ մոնչաց կատաղի.

— Լիլի՛թ, Լիլի՛թ, Լիլի՛թ, այդ դո՞ւ ես...

Լսեց սակայն հաղթական սատանայի ահեղ քրքիջը, որ ամպի պես որոտալից ճայթեց իր գլխին։

Եվ տեսավ նույնպես, որ սատանան, գրկած Լիլիթին՝ մխրճվեց երկրի մեջ...

Եվ կուրացան Ադամի աչքերը, այլևս ոչինչ չտեսան...

Խենթացած թափառում էր Ադամ, առանց դադարի, դրախտի մեկուսի վայրերը։

Ամայի էր դարձել դրախտը, և թռչունների երգերը ձանձրացնում էին նրան։

«Լիլի՛թ, Լիլի՛թ, ա՛խ, Լիլիթ»,— հառաչով ու լալով կոչում էր նա, և հառաչելով անցնում էր նրա լացը ծառերի տերևների միջով, կիզելով ծառերի տերևները։

Գիշերները խռովահույզ երազների մեջ տեսնում էր շարունակ դավաճան Լիլիթին՝ միշտ սատանայի գրկում։

Անհույս էր Ադամի հոգին և, նզովելով ստված ու անմահություն՝ մահ էր տենչում։

Եվ ստծուն լսելի եղան Ադամի հառաչանքները. կարեկցեց նրան, և ինքն իր մեջ սուզված խորհեց, որ անկարելի էր վերև սլացող հուրը ընկերացնել երկրին կառչող հողին։

Եվ թմրություն բերեց Ադամի վրա և նրա կողից ստեղծեց մի նոր ընկեր՝ Եվային, որ իր ծագումի բերումով հնազանդ լինի Ադամին, կարողանա սիրել միայն նրան և մի-իթարել մանավանդ։

Ադամ, երբ աչքերը բացեց, տեսավ իր մոտ նստած մի նոր ընկեր, ո՛չ Լիլիթի պես կատարյալ և հրեղեն գեղեցիկ, սակայն դարձյալ գեղեցիկ, բայց հողաբույր, բայց մարդկորեն։

Եվան մոտեցավ Ադամին, գլուխը դրեց նրա ուսին և մեղմիկ ժըպտաց, նվիրված աչքերով նայելով Ադամի տխուր, երազուն աչքերին։

Սակայն Ադամ՝ նստած Եվայի կողքին, երբ լսում էր վարդենիների շշյունը՝ նրա մեջ Լիլիթի շունչն էր առնում։ Դրախտի բույրերի մեջ Լիլիթի բույրն էր զգում և սոխակների երգերի մեջ՝ Լիլիթի ձայնը։

Երբ բաշի Եվան գգվում էր Ադամին և իր սև մազերով ծածկում էր

Ադամի դեմքը, Ադամ տեսնում էր սակայն Լիլիթի սոսկահուր վարսերը միայն, որ ծածկում էին բոլոր հորիզոնները։

Երբ փոթորիկ էր լինում և մրրիկ, նա տեսնում էր Լիլիթին իր մոտով շեշտակի անցնելիս, և երբ կայծակն էր ճեղքում երկինքը — Լիլիթի հրեղեն սերն էր այդ, որ ճեղքում էր Ադամի հոգին։

Երբ գոցում էր բիբերը՝ իր սրտի մեջ տեսնում էր Լիլիթի անհուն գեղեցիկ պատկերը, երբ նայում էր աստղերին — աստղերի մեջ տեսնում էր Լիլիթի աչքերը և անհուն արևի մեջ — ամբողջ Լիլիթին...

«Եվա» էին հնչում նրա շրթունքը, սակայն «Լիլիթ» էր արձագանքում նրա հոգին։

Եվ երբ ճիգ էր անում Լիլիթին մոռանալու, գրկում էր հավատարիմ Եվային, կրծքին սեղմում և համբուրում — նա այդ ժամանակ Լիլիթին էր սեղմած տեսնում իր կրծքին, Լիլիթին համբուրում, Լիլիթին զգում, միայն Լիլիթին...

Եվ ապրեց Ադամ՝ սպասելով ու տենչալով միշտ Լիլիթին, և մեռավ Ադամ՝ հառաչելով ու երազելով մի՛միայն Լիլիթին։

1921 մայիս,
Վենետիկ

ՈՒՇԻՆԱՐԱ

(Հնդկական զրույց)

Արդար և իմաստուն դատավոր էր Ուշինարան։ Մաքուր էին նրա բոլոր խորհուրդները և միայն մերձավորների և հեռավորների համար նվիրված։

Համեստ կյանք ուներ նա իր հոյակապ սրահներում և ճոխ սեղան ու ապաստան ամեն աղքատների և ուխտավորների համար, որ տարի բոլոր դեգերում են Գանգայի սրբազան ափերի և Հիմալայի նվիրական անտառների միջև։

* * *

Մի անգամ, երբ նա դահլիճում նստած կարդում էր Վեդաները,— սրտապատառ ներս ընկավ մի աղաչնի, որին հետապնդում էր սրաթև անգղը։

Սարսափած թռչունը նստավ դատավորի ծնկին և պաշտպանություն աղերսեց։

Անգղը հասավ նրա հետևից։ Սակայն Ուշինարան պատսպարել էր արդեն մահապարտ աղավնուն։

***

— Դատավո՛ր,— փիմեց անգղը Ուշինարային,— քաղցը վաղուց ընկճել է ինձ։ Մեծ հանցանք է քաղցածի ձեռից խլել նրա սեռունդը։ Ե՞ս տուր ինձ աղավնին։

Ուշինարան ձեռի շարժումով մեկժեց նրա պահանջը։

— Դատավո՛ր,— շարունակեց անգղը,— դու պարտաճանաչ մարդու հռչակ ունես, սակայն ինչո՞ւ պարտքի օրենքին հակառակ ես գնում։ Ինչո՞ւ ես ինձ զրկում իմ անհրաժեշտ սեռունդից։

— Այս անօգնական, մահի սարսռալով փղդղջուն թռչունը իմ պաշտպանությանը դիմեց,— առարկեց Ուշինարան,— դո՛ւ, հզոր անգղ, մի՞թե չես տեսնում, որ իմ առաջին պարտքն է — չհանձնել ինձ հավատացող արարածին իր հաշտող թշնամուն։ Ավելի մեծ ոճիր է՝ վտանգված թռչնին զրկել օգնությունից, քան թե կատարել ոճիրների ոճիրը — սպանել Բրահմինին։

— Բայց, դատավո՛ր, ամեն արարած աշխարհում ուտելով է, որ կապրի։ Եթե զրկես արարածին կերակուրից, իսկույն կդադարի նրա կյանքը։ Հիմա որ դու իմ ձեռքից խլում ես իմ ապրուստը, շուտով կմահանամ ես և ինձ հետ կինս ու ձագուկները։

Աղավնուն խնայելով դու մեզ բոլորիս մահի ես մատնում։

— Դո՛ւ շատ իմաստուն ես խոսում, ո՛վ անգղ, հզոր թռչուն. բայց իսստովանիր, ի՞նչպես կարող ես ընդունել, որ թշվառ փախստականին հանձնեմ կորստի։ Բնա՛վ, երբե՛ք։

Քո առջև բաց են ահա մառանիս դռները։ Գնա՛, ա՛ռ, ինչ որ ուզում ես — եղնիկի միս, վարազի միս։ Եվ ուրիշ ինչ որ ուզում ես, ասա՛, կկատարեմ քո կամքը։

— Ոչ, դատավոր, ես ուրիշ տեսակի միս ուտելու սովորություն չունիմ։ Բնությունից որոշված հավերժական օրենք է, որ անգղները աղավնիներ պիտի ուտեն։ Տո՛ւր ինձ իմ իրավունքը։

— Ա՛նգղ,— թախանձեց Ուշինարան,— ինչ արարած որ ենթակա է մահի սոհմանների — ուզի՞ր, ես կտամ քեզ։ Միայն երբեք չեմ կարող հանձնել թշվառության մեջ ինձ ապաստանածին։

— Դատավո՛ր,— պատասխանեց անգղը,— քանի որ դու այդքա՞ն սիրում ես այդ աղավնուն,— փոխարենը տուր քո մարմնից այնքան միս, որքան կշռում է աղավնին։

— Այո՛, հիմա արդար է և ճշմարիտ քո կամքը,— սրտահոժար ասաց Ուշինարան,— սիրով կտամ, ո՛վ անգղ, իմ մարմնից փոխարենը։

***

Եվ հանկարծ դահիճի ձեռունից մի կշիռ կախվեց։

Ուշինարան աղավնուն դրեց մի նժարում, իսկ մյուս նժարում՝ իր մարմնից մի փերթ, բայց աղավնին գեռ ծանր էր կշռում։ Նորից կտրեց մսի մի փերթ, և աղավնին նորից ծանր էր։ Դարձյալ նորանոր փերթեր կտրեց դրեց, և սակայն աղավնին ավելի և ավելի ծանր էր կշռում։

Այն ժամանակ Ուշինարան ամբողջ իր հոշոտված մարմնով նստավ կանգնեց նժարի մեջ...

— Ես Ինդրան եմ,— ձայնեց անգղը,— տիեզերքի իշխանը և աղավնին — հուր Ագնիի ողին։

Մենք եկանք քո առաքինությունը փորձելու համար։

Հավիտենական փառքով դու զարդարեցիր քեզ, ո՛վ Ուշինարա, որովհետև քո իսկ մարմնով իրաքանչիր փոքրիկ աղավնուն և քո կյանքով փրկեցիր թշվառին։

Ժողովուրդների մեջ պիտի չհնանա քո անունը, և հավիտյան պիտի ապրես դու անմահ փառքով ու փայլով, որովհետև պարտքի սրբության հավատարիմ եղար։

1922,
Վենեսիկ

ՎԻԿԻՆԳՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ

Սկոնիայի գուսանները, թափառաշրջիկ սկալդները, իրենց մրրկաշունչ բամբիռների վրա երգել են անվախեր վիկինգների արարքները և սերունդները կրկնելով հասցրել են այդ հզոր երգերը մեզ։

Քաջ վիկինգնե՛ր, ազնիվ և անդավաճան, որոնց համար կյանքն արկածների առիթ էր և մահը՝ ժպիտ։

Մարսալն էին նրանք բրիտների և ֆրանկների. Իսպանիայի և Իտալիայի պտրտ դղյակների կողոպտողներն ու հրձիգները։

Մթին անտառների դարավոր եղևնիներից շինած կարմիր ու անդեկ նավակներով՝ թևաբաց, հածում էին նրանք անծանոթ ծովերի վրա, և հուզված ջրերի վրա միայն որոնելով իրենց հանգիստն ու համույրը։

Փոթորիկների մեջ զվարթ երգում էին նրանք և վտանգների հարվածներով ճեղքում էին իրենց վրա փլչող փրփրադեզ լեռները։ Արշավում էին գետերի հոսանքներով դեպի վեր. կավի շնփոր էին փշում, և

նրանց սուրերի սոսկալի շառաչը տանում էին արձագանքները պարիսպավոր քաղաքներից ներս։

Այրում էին, կողոպտում ավաններն ու ոստանները և ավարով դառնում էին Հայրենի ափերը։ Եվ նրանց իշխանության սահմանն այնտեղ էր, ուր գնում էր ալիքը ծովի՝ սպիտակ բաշերով։

Իսլանդ կղզում ապրում էր քաջ վիկինգ Բոդգլին, նրա ամուսինն էր գեղեցիկ Գուդրունը, հռչակավոր Օսվիֆուրի աղջիկը։

Բոդգլին սպանեց իր կաթնեղբայր անվեհեր Կիարդանին, որովհետև սա Բոդգլիից առաջ ամուսնության խոսք էր տվել Գուդրունին, ապա լքել էր նրան։ Բոդգլին պիտի վրեժխնդիր լիներ իր կնոջ նվաստացնողից, ուրիշ կերպ նա դավաճանած կլիներ Հայրենի ավանդներին և արժանի չէր կարող լինել իր կնոջը։

Սակայն Բոդգլին երկար ժամանակ չվայելեց իր կնոջ սերը։ Տակավին չորս ձմեռ չէր անցել, երբ մի օր Կիարդանի եղբայրներն իրենց քեռայր քաջահռչակ Հելգիի հետ հարձակվեցին Բոդգլիի վրա, և Հելգին, Հարտբենի որդին, սպանեց նրան։

Այդ ժամանակ Գուդրունը հղի էր. երբ աշխարհ եկավ փոքրիկ Բոդգլին, մայրը կաթի հետ վրեժի կրակով սնուցեց մանուկի հոգին ու մարմինը։

Շա՜տ տարիներ էին անցել Բոդգլիի մահից հետո։

Ամառվա մի առավոտ Հելգին գնաց արոտավայրը իր դստերը տեսնելու։ Հովիվը մոտեցավ նրան, ողջունեց և ասաց.

— Առավոտ վաղ օտար մարդիկ տեսա, որոնց ես չեմ տեսել բնավ. երևի նրանք ուրիշ ափերից են եկել։ Ձիերի ոտները կապած՝ բաց էին թողել արոտի մեջ, իսկ իրենք, ծառերի տակ հավաքված, նստել էին թամբերի վրա և մեծ ախորժակով հաց էին ուտում։

— Ինչպե՞ս էին նրանց դեմքերը, ի՞նչ հագուստ ունեին և ի՞նչ կերպ էին զինված,— հարցրեց Հելգին։

— Նրանք բոլորն էլ թիկնավետ էին, խարտյաշ մազերով, աշխույժ կապույտ աչքերով. ճակատները՝ լայն և բազուկները՝ հաղթ ու կուռ. բոլորն էլ ազնվական տեսք ունեին։

Նրանց թամբերը պատած էին ոսկով, և վերարկուները կապույտ էին կամ կանաչ։ Նրանց մեջ մեկը կար, որ նստած էր գոհարներով զարդարուն թամբի վրա, ուսերին ծիրանի վերարկու ուներ, մի ոսկի ապարանջան բազուկի վրա, և մի ոսկյա ժապավեն ճակատին կապած։

Ոսկի մազերը ծփում էին ուսերի վրա, և երեսի գույնը սպիտակ էր աղջկա պես. բիթն արծվենի էր, ծայրը՝ կոր. աչքերը՝ կապույտ, աստղերի նման վառվռուն։ Այդպիսի գեղեցիկ այր ես տեսած չեմ. պատանի էր տակավին, սակայն վշտով պատած էր նրա ազնիվ դեմքը։ Ամենքը հարգում էին նրան, և ամենքի հայացքը նրա ակնարկին էր հառած։

— Դու ճիշտ ես դիտել,— ասաց Հելգին,— դա պատանի Բոդգլին է, որ կրում է իր փառապանծ հոր անունը. ես դեռ չեմ տեսել նրան, բայց գիտեմ, որ նա է։ Նա հասակն առել է և լսել է հոր ձայնը. իր հավատարիմներով՝ զինավառ եկել է արյան վրեժը լուծելու, որովհետև ես էի, որ սուրս մխրճեցի հայրական արյան մեջ։ Օրհասի ժամը կարելի է հետաձգել, բայց այդ նորից անպատճառ կգա, և նա չպիտի հանկարծակիի բերե արի վիկինգին։ Իմ սիրտը հիմա սովորականից ավելի արագ չի բաբախում, և թարթիչներս երկյուղից չեն թրթռում...

Հելգին դարձավ տուն. կանանց շտապով ձի նստեցրեց և փախցրեց, իսկ ինքը զինված, ծառաներով սպասեց թշնամիների գալուստին։

Մինչ այդ Բոդգլին համհարզներով հեծան ձիերը և արշավեցին Հելգիի տան վրա։ Ռապպուրն իսկույն թռավ տանիքը և, գլուխը երդիկից ներս կախելով, ձայնեց.

— Աղվեսն արդյոք իր որջի մե՞ջն է։

— Աղվեսն իր որջի մեջն է և կխածե մոտեցողին։— Եվ Հելգիի խոսքի հետ նիզակը նետվեց դուրս և թափ անցավ Ռապպուրի կրծքի միջով. վիկինգը գլորվեց տանիքից վար գետին՝ իր արյան մեջ թաթախված։

Հելգիի տունը հաստաբետ գերաններից էր շինված և տանիքը ցեխով պատած։

Բոդգլիի խմբի ավագ վիկինգը, տեսնելով Ռապպուրի մահը, կարգադրեց, որ վիկինգները գերանները թափահարեն այնքան ուժով, մինչև որ պատերը փուլ գան։ Հելգին լսում էր նրա կարգադրությունը. նա իր հետ ուներ միայն մի քանի ծառա, և իր պատանյակ որդին, որ չուզեց մոր հետ փախչել. Հելգին իր մասին չէր մտածում, նրա ցավը սիրելի որդին էր։

Հզոր բազուկների տակ գերանները սեղահան եղան. տանիքի մի մասը փուլ եկավ։ Հելգին ըմբռնեց, որ ստիպված է դուրս ելնել, եթե

ոչ պիտի չախչախվեին ու թաղվեին ձեղունների ու պատերի ծանր գերանների տակ։

Եվ նիզակը ձեռքին նետվեց առաջ. մի հարվածով ճեղքեց Թորստենի սաղավարտը, խորին վերք տալով գանգի մեջ. Թորստենը փռվեց մեջքի վրա և ասաց վերջին շունչը տալով.

— Հավատս վկա, որ ճիշտ է, այնտեղ մարդ է եղել։

Ապա Հելգին այնպիսի վայրագ թափով մխրճվեց թշնամիների մեջ, որ նրանք ետ մղվեցին։ Այդ ժամանակ Թորգիլսը հասնելով, սուրը վրա բերեց. սուրը պատռեց Հելգիի ուսը. Հելգին դեմքն ուղղեց դեպի Թորգիլսն, ասելով.

— Ինչքան էլ ուժասպառ լինեմ, աչքերս չեմ խոնարհի երկաթի առաջ։

Եվ սակրը նետեց, փշուր-փշուր եղավ Թորգիլսի սրունքը. Թորգիլսը խորտակված ընկավ գետին։

Մի ակնթարթում պատանի Բոդգիին հարձակվեց՝ ձեռքին բռնած ունենալով հոր ավանդ թողած ահավոր սուրը, և հոգու բոլոր վրեժով հարվածեց Հելգիի քունքին. մահացրեց նրան մի վայրկյանի մեջ։

Վիկինգները սպանեցին նրա ծառաներին. ուզում էին սպանել և մանուկ Հարդրենին, Հելգիի որդուն, սակայն Բոդգիին կանգնեց մանուկի առջև։

— Քաջերի գործն ավարտված է, մնում է միայն վատերինը,— ասաց նա.— սրա մի մազին պիտի չդիպչիք. նա պիտի ապրի խաղաղության մեջ և հետո, երբ հիշե այս օրը, պարտական է կատարելու իր պարտքը։

Ապա ձեռքը դրեց մանուկի ճակատին, երկար պահ իր աչքերը հառելով նրա աչքերին, ասաց.

— Նայի՛ր, տղաս, և թո՛ղ Բոդգիի որդու դիմագծերն անջինջ մնան քո հիշողության մեջ. լավ նայի՛ր, որպեսզի կարողանաս ճանաչել նրանց այն օրը, երբ պետք է, քո հերթին, անդորրացնես քո մեռելների հոգին։

1924,
Վենետիկ

ԲՈՒԴԳԻԱՆ ԹՌՉՈՒՆ

(Հեղկական առասպել)

Մի անգամ Բուդդհայի հոգին հավերժական Սանսարայի ընթացքին մի թռչունի ձևով մարմին առավ։

Աշնան վախճանն էր։

Թևերը ամփոփված գլխի վրա՝ թառել էր նա մի տերևաթափ ծառի ճյուղին և թևերի տակից նայում էր երևույթների աշխարհին։

Ջյունապատ բաբեռներից և դեղձած լեռնալանջերից թավալում էր սառնաշունչ քամին։

Ջոր ու դալուկ տերևները՝ հոգնի բերանն ընկած՝ սարսուռով ու հառաչով թշվում էին այս ու այն կողմ և ծառերի փշակներում կամ ժայռերի ծերպերում մի պահ հանգիստ գտնում։

Ամեն դգացող ձև ապավինել էր իր շունչին և ծվարել, ուր որ կարողացել էր։

Մրսում էր Բուդդհա թռչունը։ Փշանման ցցվել էին նրա փետուրները. և ամբողջ մարմնով դողում էր նա։

Քաղցած էր նա։ Եվ քաղցն ավելի՛ էր տանջում նրան, քան ցուրտը, և ցուրտն ավելի՛ էր տանջում նրան, քան քաղցը։

Եվ ինքնասույզ՝ խորհում էր նա.—

«Կյանքը տառապանք է։ Սակայն ապրելու կամքը ավելի տառապանք է, որ մղում է տենչացող մարմինը ոճիրների և ուրիշների տանջանքներին։

Կյանքը մի արյունոտ կռիվ է, որ ամեն արարած պարտվում է, և հաղթող չկա։

Բայց ինչո՞ւ անհարատև է ծնվելու անհրաժեշտությունը...

Ես եղա ամենուր. անցա ծովերով ու անապատներով. եղա դաշտերում ու անտառներում, տեսա գյուղեր ու ոստաններ։

Կանգնեցի աշտարակների կատարներին և ապարանքների սյուների վրա. իշա խրճիթների ցվիքին և պատուհաններին իմաստուն մենակյացների — և տեսա ա՛յն, ինչ որ տեսել էի իմ նախկին գոյությունների շրջանում — միայն չարիք ու ոճիր, միայն ցավ ու դրիանք, միայն սուտ հաճույքներ և ճշմարիտ տանջանքներ։

Տեսա՝ աշխարհը այնքա՞ն մեծ և դգացող արարածը այնքա՞ն փոքր, բայց նրա տենչանքն ու տանջանքը աշխարհից մեծ։

Տեսա՝ կյանքը մի բեռ է, որ ծանրանում է ժամ ժամի վրա։ Եվ մեր օրերը ցնդում են ամեն օր, և անենչանք է մնում մեզ անհապուրդ լեկոդը։

Ամեն վայրկյան ամուրդ՝ լինելու համար, խաբող հույս և ծնվող հույս. ապա հիվանդություններ, ծերություն և քայքայում։

Եվ աշխարհը՝ դրուժան իր բոլոր խոստումների մեջ, բացի մի խոստումից, որ կատարում է անհապաղ և անվրեպ — մահը, որի հանդեպ կյանքը երապի մի սովեր է միայն...

Եվ այդ սովերը բռնելու համար՝ ես տեսա ամենուրեք — լաց ու արյուն, ոճիր ու նախճիր, եղեռն ու զարհուրանքներ միայն...»։

Մրսում էր նա սաստիկ, և անընկճելի քաղցը մտրակում էր նրա ապրելու կամքը։

Եվ կտուցով ծակեց ծառի կեղևը և մագիլներով պատառեց ծառի կեղևը և կեղևի տակ տեսավ խռնված մի բազմություն միջատների։

Քաղցը, որ ատելության արմատն է, մղեց նրան ուտելու միջատներին, իսկ կարեկցությունը, որ սիրո աղբյուրն է, ետ մղեց քաղցը։— «Կամենալ ապրել,— խոսեց նա յուրովի,— ահա՛ չարիքի հավերժական արգանդը, որ բնավ չի ստերջանում։

Եվ ամենքը կամենում են ապրել, և յուրաքանչյուրը կամենում է ապրել — մարդը երկրի վրա, և որդը տիղմի մեջ, և հունտը հողի տակ»...

Այդ միջոցին մի այր և մի կին, ցրտից կապուտցած մի երեխա գբրկած՝ եկան պատսպարվելու ծառի տակ։

Աղքատ էին նրանք — ցնցոտիների մեջ։

Երեխան լալիս էր և նվաղուն հեծեծում — «քաղցա՛ծ եմ, մրսո՛ւմ եմ...»։

Մայրը սեղմեց նրան իր կրծքին և իրեն վրայի պատառուն լաթով ծածկեց դողացող երեխային։ Մերկ մնացին խեղճ մոր կողերը՝ հողմի կտրող ակռաների տակ։

Հայրը չոր ճյուղեր ու տերևներ հավաքեց և վառեց խռիվը։ Խարույկը բռնկվեց։

Երեխան տաքանալով՝ մի պահ լռեց. ապա ավելի լալագին հեծեծաց — «քաղցա՛ծ եմ, քաղցա՛ծ եմ...»։

Այր և կին հուսահատ՝ նայեցին իրար երեսին։ Ոչինչ չունեին նրան տալու։

— Համբերի՛ր, սիրելի՛ս, համբերի՛ր, քամին դադարի, կգնանք մոտակա գյուղը, և բարի մարդիկ ուտելիք կտան քեզ...

Սակայն սառնաշունչ քամին շաչում էր, և շաչում էր, շաչում։

Բուդդհան նայում էր իր աչքերի առաջ պարզված սրտահույզ պատկերին։

— Ո՛վ ապրելու դառն անհրաժեշտություն,— խոսեց նա իր սրտի մեջ։— Անհուն է ձեր տառապանքը, ո՛վ ապրողներ. անսկիզբ և անվախճան ժամանակի մեջ եկող ու գնացող և վերստին եկող, ո՛վ անհամար թշվառներ։

Անհո՛ւն է ապրել կամեցողի տառապանքը։

Բայց թո՛ղ ապրի այս մանուկը... օ՛մ, օ՛մ, օ՛մ...[1]։

Այս ասաց թռչունը և իրեն նետեց խարույկի մեջ։

Եվ երբ երեխան ուտում էր խորոված միսը, թռչունի հոգին գնաց և մարմնացավ Սիթհարթայի մեջ, որը դարձավ մարդածին Բուդդհան՝ կատարյալ և իմաստուն լույսը՝ ավետելու աշխարհին չորս սրբազան ճշմարտությունները — փրկելու համար մարդուն՝ ծնվելու, ծերանալու և մեռնելու անհրաժեշտության տանջանքներից, և հասնելու համար բացարձակ երանությանը — Նիրվանային։

1.25,
Վենետիկ

ՈՎ Է ԱՊՐՈՒՄ

Շա՛տ դարեր առաջ արևելքում մի փառատենչ իշխան է լինում։ Անունը մոռացվել է, բայց գործը հիշվում է։ Անհանգիստ ու կռվազան է լինում։ Շարունակ դավեր է նյութել դրացի իշխանների դեմ՝ գրավելու նրանց սեփական երկրներից մանր ու խոշոր հողամասեր, և դավերի ու կռիվների մեջ հաջողելով՝ դարձել է բոլորից մեծ ու բոլորից ուժեղ պետությունը մյուսների հանդեպ։

Այդ կռվասեր իշխանը շրջապատի իշխանությունները փոքրացնելուց և հարկատու դարձնելուց հետո ելնում է աշխարհակալության։

Ստվար և հզոր բանակի գլուխն անցած՝ հարձակվում է մի թագավորությունից մյուսի վրա։ Մի անգամ, հանկարծակի, խուժելով մի հեռավոր իշխանության սահմաններից ներս, ամրոցից ամրոց գրավելով, հաղթանակից հաղթանակ անցնելով, հասնում է երկրի մայրաքաղաքի փակ դռների առաջ։ Պաշարում է քաղաքը, բանակը գետնեղում է ամրակուռ պարիսպների շուրջը, ինքն էլ նստում է արքայական վրանի մեջ՝ օր ու գիշեր հնարներ ու դավեր որոճելով քաղաքին տիրանալու համար։

Մի օր, իշխանը ղորքի մեջ քննական պտույտ անելուց հետո վերադառնում էր իր վրանը։ Ճանապարհը անցնում էր քաղաքի ընդարձակ գերեզմանատան միջով։ Հնադարյան այդ մեռելատունը ծավալվում էր լայնանիստ դաշտի վրա և ծածկում էր բլուրները։

---

[1] Օմ — այս բազմաբովանդակ սրբազան բառը մոտավորապես համապատասխանում է քրիստոնեական «ամեն», «եղիցի» բառերի իմաստին։

Իշխանը քաշեց նժույգի սանձը. կանգ առավ և դիտեց անծայրածիր գերեզմանները։ Դիտում էր և խորհում իր սրտի մեջ — ինչքա՜ն հուշարձաններ կան, ինչքա՜ն մամռոտած շիրիմաքարեր, ինչքա՜ն. ինչքա՜ն. ավելի բազմաթիվ քան իրեն ղինվորներն են։ Հարկավ ամեն մի քարի տակ մի հանգած կյանք կա, մի մեռած անհատ — անշուշտ, նրանց մեջ քաջ ռազմիկներ, զորավարներ, իշխաններ, մեծատուններ, գիտուններ... ապրող ներկա անհատների պես — մտքերով և կրքերով, զգացումներով և կամքերով նույն և նման։ Ներկա ապրող աշխարհից առաջ մի անցած ապրող աշխարհ...

Սանձը հանձնեց թիկնապահներից մեկին, ինքը իջավ նժույգից։ Մոտեցավ առաջին շիրիմաքարին և կարդաց արձանագիրը.— անուն, տոհմանուն, մեծահարուստ վաճառական, ծնվեց այս թվին, մեռավ այս թվին. չապրեց և ո՛չ մի օր։

Ի՜նչ տարօրինակ խորագիր։

Կարդաց մի ուրիշը.— անուն, տոհմանուն, հռչակավոր զորապետ, միշտ հաղթական, ծնվեց-մեռավ, ապրեց միայն մի օր։ Իշխանը զարմացած շարունակեց ընթերցումը հաջորդ մահարձանի.— մեծափարթամ կալվածատեր, ծնվեց-մեռավ, ապրեց յոթը տարի։

Մոտեցավ մի ուրիշ հուշարձանի.— անուն, տոհմանուն, մարդասպան — ավազակ, ծնվեց-մեռավ, ապրեց երեք տարի։ Ավելի զարմացավ իշխանը, և շիրիմաքարից շիրիմաքար անցնելով՝ կարդաց մի այլ արձանագիր.— անուն, տոհմանուն. խորիմաստ հեղինակ ծնվեց-մեռավ. ապրեց իր կյանքի բոլոր օրերը։

Իշխանը մտահոգ կանգ առավ. ի՞նչ կնշանակեն այս, ի՞նչ խորհուրդ ունեն այս գրությունները։ Մտածեց, մտածեց և անկարող եղավ լուծելու այս գաղտնիքը։ Հրամայեց գտնել-բերել տեղացի մի մարդ՝ գիտակ այս առեղծվածին։ Ցրվեցին թիկնապահները ամեն կողմ, և մի պահ անցած բերին մի ծերունի մարդ, որ բնակվում էր գերեզմանի ծայրին, մի հյուղակի մեջ։

— Կարո՞ղ ես բացատրել ինձ այս տապանագրերի իմաստը,— հարցրեց իշխանը։

— Ես այս գերեզմանատան հինավուրց պահապանն եմ, ո՛վ մեծ իշխան, և ճանաչում եմ յուրաքանչյուր մահացածին, որ փոշի է դառնում այս քարերի ներքո։

— Հապա՛ մեկնիր ինձ, ի՞նչ է ուզում ասել, օրինակի համար, այս գիրը։

Ծերուկը հենվելով ցուպին, առանց նայելու մատնանշված շիրիմին, խորշոմած աչքերը հառելով իշխանի աչքերին.

— Տես ինչ է,— ասաց,— դիպերում եմ այս մեռելաքաղաքի բնակիչների մեջ։ Այստեղ հանգչում են հայրերը և նրանց կողքին իրենց որդիները, իսկ թոռները հիմա մարտնչում են քո դեմ։

Ես գիտեմ այս մեռելաքաղաքի գործերը — մահի և կյանքի առեստուրը։ Կյանքը իր ծնած ժամից գրավ է դրված մահի մոտ։ Մահը խիստ և հզոր պարտատեր է։ Ո՛չ հաղթապանծ իշխանը կազատվի այդ պարտքից, ո՛չ պարտված ստրուկը... Կյանքը սուտ է, միայն...

Իշխանը մեղմով կտրեց ծերունու խոսքը։

— Այո՛, այո՛, բայց խնդրում եմ ինձ մեկնես այս գրերի խորհուրդը։

Ծերունին մի պահ տրտնջաց ճակատը և խամրած ձայնով ասաց.

— Հնուց, դարերի մեջ սրբագործված մի սովորություն կա մեր քաղաքում։ Երբ մեռնում է մի քաղաքացի, դատի են նստում քաղաքի իմաստուն ծերունիները։ Քաղություն, խելք, հաբատություն անարժեք են, երբ չի գործվում ուրիշի համար։ Իրեն անձի համար ապրած օրերը նժարի մեջ կշիռ չունին, բարիք գործած օրերն են ապրած համարվում։ Ուրիշի համար ապրողն է ապրում։ Որովհետև կյանքի իմաստը ուրիշի համար ապրելու մեջ է։ Եվ այսպես հաշվում են ինչեցյալի բարիք գործած օրերը և թիվը գրում տապանի վրա։

Եվ առանց նայելու մատնանշված շիրիմաքարին, շարունակեց ծերունին.

— Այս քարի տակ հանգչում է մեր ժողովրդի հռչակավոր իմաստունը։ Իր մանուկ օրերից հրաժարվեց նա աշխարհի հաճույքներից։ Խոր ղդաց թշվառի և զրկվածի տանջանքները, տառապեց քաղցածի և կիսերկվածի տառապանքներով։ Ամփոփվեց իր աղքատիկ խցի մեջ, օր ու գիշեր, ամեն ժամ խորհեց՝ ուղի գտնելու թշվառների փրկության համար։ Գրեց ու երգեց, և նրա սրտից բխած խոսքն ու երգը մխիթարեցին տառապողին, ըմբոստացրին լքվածին և սաստեցին կեղեքողին և հարստահարողին։ Նա մեր մարգարեն է, իմաստուն առաջնորդը դեպի արդար և բարի կյանքը։

Եվ մեր ծերունիները հաշվեցին նրա կյանքի բոլոր օրերը — ապրած օրեր, զուր չգնացած։

— Իսկ այս մյուս մահարձա՞նը,— հարցրեց իշխանը։

— Սա մեծ ճանապարհների վրա կողոպտող և սպանող ավազակ էր։ Բայց մի օր զղջաց իր ոճիրները, կտրեց սուրը։ Հեռավոր վայրերից աղբյուր տարավ երկրի ամենից ջրազուրկ ճանապարհի վրա և ինքն էլ աղբյուրի մոտ իր խշտին դրեց։ Առավոտից մինչև երեկո զավաթը ձեռքը՝

սառը ջուր էր մատուցում ծարավի ճամփորդներին։ Այսպես նա ապրեց ուրիշների համար թվով երեք տարի։

— Այդ մատնանշածդ մեր քաջ զորապետն էր, հաղթողը մեր երկրի թշնամիներին, բայց նրա սխրագործությունները հաշվի չառան, այլ այն միակ արարքը, որ սիրո և բարության ծնունդ էր։ Նա պատերազմում մի անգամ թշնամի մի վիրավոր զինվորի պատսպարեց իր վրանում, վերքերը կապեց և խնամեց մի օր։ Այդ միակ օրը մեր իմաստունները հաշվեցին ապրած օր։

— Իսկ այս մահարձանի տակ պառկած է քաղաքի մեծահարուստ մեկը։ Իր կյանքում նա միայն մի բան գիտեր — գանձ դիզել։ Եվ ո՛չ մի մարդու և ո՛չ մի վայրկյան չկարեկցեց. աննշան բարիք իսկ չարեց և ո՛չ մեկի համար։ Նրա օրերը զուր անցան. ծուխի պես ունայն։ Եվ դրեցին նրա տապանի վրա — չապրեց և ո՛չ մի օր։

Իշխանը գոհացավ ծերունու խոսքերից, առատ վարձատրեց նրան, և հետիոտն, գլուխը քարշ, դանդաղ քայլերով գնաց վրանը։

Բոլոր գիշերը մինչև լույս, նա առանձնացած, գլուխն առավ ափերի մեջ, ո՛չ քնեց և ո՛չ հանգստացավ, մտածեց ու մտածեց։

Երբ լույսը ծագեց՝ փոխանակ ռազմակոչ շեփոր զարկելու՝ կոիվը նորոգելու համար, նահանջի հրաման արձակեց։ Պաշարումը վերացրեց, վերադարձավ իր երկիրը,բանակը ցրեց և ձեռնարկեց բարի և խաղաղարար գործերի՝ մնացած կյանքը ապրելով ուրիշների բարօրության համար։

Ավանդությունը հիշատակում է, որ նա, ամեն առավոտ զարթնելիս և ամեն երեկո քուն մտնելիս, կրկնում էր.— Ես բախտավոր եմ, ես ապրում եմ հիմա։

1930

ՉԻՆԱԿԱՆ ՄԻ ՀԻՆ ԶՐՈՒՅՑ

Վերևից նետած քարը ինչքան ավելի վար է ընկնում, այնքան ավելի սաստկանում է նրա թափը, և ամենից ներքև գտնվողին ավելի ուժգին է հարվածում, քան ավելի վերև գտնվողին։

Հեռավոր Չինաստանում, մեզանից շատ ժամանակ առաջ, մի կայսր է եղել։ Բոլոր մարդկանց պես նա էլ եկել է ու գնացել։ Բայց նրա մասին, իբրև անմոռաց հիշատակ, մնացել է այս զրույցը։

Ամառային մի օր կայսրը զբոսնում էր իր ապարանքի պարտեզում։ Տարաշխարհիկ չքնաղ ծառերը զով սավերներ են սփռել անծայր պարտեզի բոլոր շավիղների և մարգերի վրա, արևի շլացուցիչ լույսը հոծ

տերևների միջից մաղվել է ամենուրեք, անջրպետը կանաչ գույն է առել, մեղմ ու քնքուշ։ Մարմարյա շատրվանների երգող ջրերը վեր են ցայտում և քաղցրաձայն գեհիյուռի պես փարվում են թուփերին ու սեզերին և դող են ձգում գունագեղ տերևները։ Բյուրավոր ծաղիկները բուրում են անուշ ու թովիչ։ Երփներանգ թռչունները դայլայլում են դյութական երաշների միջից։

Կայսրը զբոսնում է՝ երջանիկ իր փառքով, իր երիտասարդ կյանքով, իր հզորությամբ։ Կայսրը զբոսնելով հասնում է պարտեզի պատշգամբին, որ բացված է արքունիքի ընդարձակ հրապարակի վրա։ Կայսրը բարձրանում է պատշգամբը և նայում է հրապարակին։ Արևագակի հուրը վառվել է քարերի, հողերի վրա. ճառագայթների մի խուրձ ընկնում է կայսրի դեմքին, ճառագայթները շիկացած ասեղի պես կիզում են նրա դեմքն ու աչքերը։

— Ի՞նչ զարհուրելի տաք է,— ասում է կայսրը և ետ քաշվում։ Սակայն ուշադիր դիտում է հրապարակի վրայի անցուդարձը։ Զիները դժվարին ճիգով տանում են բեռնաբարձ սայլերը, շները, լեղուները դուրս հանած՝ հևալով գնում են պատերին քսվելով։

Անցնում են մարդիկ, և ինչքան շատ են նրանք, անցնում են գործով մտահոգ, հանում են ծանր, սև գլխարկները, սրբում են քրտնած ճակատները։

«Գոնե այս ծանր գլխարկների փոխարեն թեթև սպիտակ գլխարկներ դնեին, հիմարներ...»։ Եվ հանկարծ կայսրի գլխում լույս է ծագում։ Հրամայում է, որ իր առջև գա մեծ նախարարը։

— Դու չե՞ս տեսնում՝ ինչ կիզիչ արև է, ուղղակի կրակ է թափվում։

— Այո՛, տեր իմ, կրակ է թափվում։

— Դու չե՞ս տեսնում, որ իմ ժողովուրդը այրվում է այս ավանդական ծանր գլխարկների տակ։

— Այո՛, երկնքի որդի, ճշմարիտ է։

— Ես կամենում եմ, որ վաղվանից ամեն մի չին իմ մեծ պետության մեջ, ուր էլ որ լինի, հանե այդ ծանր, սև գլխարկները և սպիտակ թեթև գլխարկներ դնի։

— Այո՛, երկնային բարություն, Ձեր կամքը օրենքն է։ Վաղվանից կատարված է ձեր աստվածային կամքը։

Ապարանք է դառնում կայսրը ավելի դոհ և երջանիկ, որ այսօր բարի և օգտակար գործ կատարեց իր ժողովրդի համար։

Եվ այս գիշեր ավելի բուռն ախորժակով անձնատուր է լինում արքունիքի սովորական խրախճալից գինարբուքին։

Մեծ նախարարը մյուս օրը, հանդիսավոր փայլով, հրապարակում, ողջ մայրաքաղաքի ժողովրդի առաջ, կարդում է արքայական կամքի հրովարտակը՝ ծանր, սև գլխարկները թեթև, սպիտակ գլխարկներով փոխարինելու մասին։

Եվ հրամանագիր է ուղարկում նահանգապետներին, որ ժողովրդին արգելեն ծանր, սև գլխարկներ կրելը և փոխարիներ դնեն թեթև, սպիտակ գլխարկներ։

Իսկ նահանգապետները հրամայում են քաղաքապետներին ու գավառապետներին, որ ժողովրդին արգելեն ծանր գլխարկներ կրելը՝ փոխանակ թեթև գլխարկների. ընդդիմացողները տուգանքի ենթակա են։

Իրենց կարգին, քաղաքապետները հրամայում են թաղապետներին, գավառապետները հրամայում են գյուղապետներին։

Իսկ թաղապետներն ու գյուղապետները խստիվ հրամայում են, որ ամեն մարդ իսկույն կատարի կայսրի հրամանը, որ ուշացողները ծանր պատժի կենթարկվեն։

Կայսրը մի քանի օր հետո նորից պատշգամբ է բարձրանում և մեծ հրճվանքով տեսնում է, որ հրապարակով անցնում են իր հպատակները սպիտակ ու թեթև գլխարկներ դրած։

Կայսրը բախտավոր է, կայսրը գոհ է։

Երկնային մեծածավալ կայսրության բոլոր նահանգների մեջ անհամար ոստիկանները եռանդով գործի էին անցել հապարավոր քաղաքներում ու գյուղերում կիրառելու արքայական հրամանը։ Եվ օր-օրի վրա ոստիկանների եռանդը աճում է — հին գլխարկ կրողներին ծեծում են ու ծանր տուգանքի ենթարկում, գավազաններով մեկդի են շպրտում հին գլխարկները և մերկ գլուխներին հարվածում։ Հեռավոր գավառներում հրամանը անմիջապես չիատարողներին լցնում էին բանտերը և շղթայի կարկում, ավելի հեռավոր վայրերում գլուխներն էին կտրում և ձորի ծայրին անցնում սարսափ տարածելու համար...

Վերջապես կայսերական ապարանքի հատատեսուտ պատերը թափանցում և կայսրի ականջին են հասնում հրամանի չարաչար գործադրության մասին շշուկով տարածված դաժան լուրերը։

Կայսրը սառատիկ դայրացած կանչում է մեծ նախարարին։

— Իրա՞վ են այդ չարաշշուկ լուրերը։

— Այո, իրավ են, երկնքի արդարություն։

— Բայց մենք մի մարդասեր օրենք հրատարակեցինք, որ գլխարկները փոխեն, ոչ թե գլուխները կտրեն։

— Սակայն օրենքի ընթացքն այսպես է, Եվ նրա այս բնական ընթացքի առաջ անզոր է թե՛ իմ և թե՛ նույնիսկ Ձեր արքայական հզորությունը, ո՛վ երկնքի իմաստուն որդի։

Կայսրը գլխիկոր մնկուսացավ իր առանձնասենյակը։ Եվ իր մոայլ տրամադրությունը փարատելու համար այդ գիշեր ավելի թափով անձնատուր եղավ արքունիքի սովորական խրախճանքներին։

1935 Նոյեմբերի 10.
Փարիզ

ԱՌԱԿՆԵՐ

ԱՀՄԵԴԻ ՈՒՂՏԸ

Ահմեդը հինգ ուղտ հետևը ձգած գնում էր քաղաք։

Արևը սաստիկ այրում էր, իսկ ծարավը մարդու շրթունքը պատառ-պատառ էր անում։

Եղավ որ՝ հենց կիզիչ կեսօրին հանդիպեց մի աղբյուրի. որ ճանապարհի ափին ուրախ ու պայծառ քլքլում էր ծառերի զով ստվերի տակ։

Ահմեդը ուղտերը քաշեց աղբյուրի գուռների վրա, լավ ջրեց, ինքն էլ մի կուշտ խմեց, հետո երկար ու մեկ փովեց ստվերի հովին։

Ո՛չ արթուն էր, ո՛չ քնած, մի հաճելի թմբիր զով ստվերի հետ իջել էր նրա հոգնած անդամների վրա։

Երբ կեսօրը կտրվեց՝ Ահմեդը ուշքի եկավ, նայեց տեսավ ուղտերի մեկը չկա. կանգնեց քարերի գլխին, դիտեց չորս դին — բան չէր երևում. միայն բավական մոտիկում, մի գյուղ ծառերի միջից ճերմակին էր տալիս։

Շտապով ոտքի հանեց ուղտերը, գնաց գյուղը։

Մի պառավ կին պատահեց նրան գյուղի ծայրին։

— Նանի՛,— ասաց Ահմեդը,— ուղտս կորել է, չե՞ս տեսել, աչքիդ չի՞ ընկել. է՛սպես-է՛սպես մի ուղտ։

— Ես քո ուղտի դա՞րդն եմ,— զայրացած ասաց պառավը.— իմ կորիճ աքլորն է կորել, ման կուգամ, ման կուգամ, չեմ դտնի, քո ուղտը աչքի՞ս կերևա. արի առաջ-առաջ աքլորս ման գանք գտնենք, հետո քո ուղտը։

Ահմեդը գլուխը ժամ տալով մտավ գյուղը, ուղտերը պահ տվավ գյուղի տանուտերին ու ինքը գնաց կորուստը փնտրելու։

Գյուղից դուրս տեսավ մի մարդ, պարկով ցորենը դրել է գետին, պարկի մի կողքը պատռվել է, ցորենը բուռ-բուռ թափվել է ճամփի երեսին։ Խեղճ մարդը մեկ՝ ցորենն է հավաքում, լցնում պարկը, մեկ՝ մատներով գետինն է քրքրում, հողն է մաղմղում։

— Ա՛յ մարդ, ուղտս կորել է, էստեղով չի՞ անցել, տեսած չունի՞ս էսպես-էսպե՛ս մի ուղտ։

— Ես գլուխս եմ մոլորել,— նեղսրտած ասաց մարդը,— երեխաներիս ապրուստը հող դարձավ. ասեղս եմ կորցրել, ասեղս, որ պարկս կարեմ, երթամ տուն. քո ուղտդ աչքի՞ս կերևա. արի առաջ-առաջ ասեղս փնտրենք գտնենք, հետո քո ուղտը։

«Խենթ են էս մարդիկը»,— փնթփնթաց Ահմեդն ու առաջ գնաց։

Ում որ դիմեց, նույն պատասխանն էր ստանում, թե ի՞նչ է, բան ու գործ չունեինք, քո ուղտի՞ն պիտի աչք պահեինք։

Ահմեդը վշտացած մարդկանցից ու հույսը կտրած՝ գյուղ վերադարձավ. մի ծառի տակ նստավ, գլուխն առավ ափերի մեջ տխուր-տխուր միտք էր անում. քունը վրա հասավ, և հոգնաբեկ Ահմեդը աչքերը գոցեց. քունն ու երազ տեսնելը մեկ եղավ. տեսավ, որ իր մայրն եկավ, Ահմեդի գլուխը շոյեց և ասաց.

«Որդիս, մի՛ տխրիր. ուղտդ կորած չէ. միայն այս աշխարհիս բանն այնպես է, որ առաջ ուրիշի կորուստը պիտի փնտրես, որ ուրիշն էլ քո կորուստը փնտրե. մի՛ մեղադրիր մարդկանց. ամեն մեկի համար իրեն աքլորն ու ասեղը քո ուղտի չափ է»։

Ահմեդը դարթնեց և վազեց պառավի մոտ։

— Նանի, աքլորդ գտա՞ր,— հարցրեց Ահմեդը։

— Չէ՛, որդի, չէ՛։

— Արի, միասին փնտրենք,— ասաց Ահմեդը։

Եվ երկուսով ընկան գյուղի երդիկներն ու կալերը. մինչև ուշ երեկո որոնում էին կորած աքլորը. հանկարծ պառավը սրտապատառ գոչեց.

— Ահա՛ աքլորս, կորիճ աքլորս, պատի տակ նստել է։

Ահմեդը վազեց դեպի աքլորը, սա էլ վախեցած թևերը թափ տալով վազեց դեպի դաշտերը. Ահմեդը հետևից, աքլորը առջևից, աքլորը վազելով, Ահմեդն էլ հետևից վազելով, վազելով... հանկարծ մեկ էլ աչքի առջևը — իր ուղտը, հենց իր ուղտը, որ կանաչի մեջ նստած հանգիստ որոճ էր անում։ Ահմեդի ուրախությանը սահման չկար, մեկ ձեռքին աքլորը, մյուս ձեռքին ուղտի պարուսանը — խնդումներս մտավ գյուղ։

1912

ԱՇԽԱՐՀԻ ԴԱՌՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակով մարդու մեկը լավ-վատ ապրել է այս աշխարհում և մի օր էլ մեռել, գնացել է մյուս աշխարհը։

Հրեշտակները մյուս աշխարհում գրել են այդպես կշեռքի վրա նրա բարի և չար գործերը, հաշվել են նրա բարի ու չար մտքերը,— և տեսել են, որ նրա բարի գործերը շատ առավել են նրա չար գործերից, որ նրա բարի մտքերը շատ առավել են նրա չար մտքերից։

Եվ աստված արդար է հռչակել նրան և արժանացրել է երանության դրախտին։

Արդար մարդը սրբերի հետ շրջում է դրախտում, ուտում է շատ համեղ և լքնաղ պտուղները, խմում է անմահական ապրյուրներից, բայց բնավ համ չի առնում։ Մեր աշխարհի դառնությամբ լցված է լինում նրա բերանը։

Սրբերը նրա համար ընտրում են ամենաքաղցր պտուղները. բայց նորից չի անցնում նրա բերանի դառնությունը։

— Այնքան դառն էր աշխարհը, որ...— ասում է նա,— այնքան դառն էր, որ...

Գթառատ սրբերը իրենց նոր ընկերին մատուցում են ասածու՝ իրենց, վայելած պտուղները, որ ամենից քաղցրահամերն են, ամենից սքանչելիները։

Սակայն մինչև հիմա լուր չունենք, թե անցա՞վ նրա քիմքի դառնությունը, որ ավել էր նրան մարդկային աշխարհը։

1918

ՄԵԾ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակով մի մեծահարուստ մարդ է լինում։ Այդ հարուստը որոշում է մի մեծ շենք կառուցել։ Բազմաթիվ վարպետ ու բանվոր է վարձում ձեռնարկի համար։ Ինքը՝ առավոտ վաղ, աշխատավորներից առաջ, կանգնում է ոտքի՝ հսկելու համար աշխատանքը և երեկոյան, բանվորից հետո միայն, գնում է հանգստանալու։

Վարպետ ու բանվոր, յուրաքանչյուրն իր մասում, բանում է բարեխիղճ, և օրեցօր բարձրանում է շենքը։ Բայց հարուստ մարդուն թվում է, թե գործը շատ թույլ է առաջ գնում, շենքը դանդաղ է բարձրանում։ Նա այնպես է զգում, որպես թե օրը շատ կարճ է, սովորական օրերից շատ կարճ — հաղիվ լուսացած՝ կեսօր է դառնում, բանվորների ճաշվա հանգստաժամը, և հանկարծ եկեղեցու երեկոյի զանգերը հնչում են, արևն շտապ մայրամուտ է դիմում։

Սարսափելի է. գրեթե դեռ գործ չաբսած հառնում է օրավարձի դառն վայրկյանը։ Ի՞նչ է նշանակում այս։ Մի՞թե իր դեմ դավադրություն կա կազմած։ Չէ՞ որ եկեղեցին, կարծես, դիտմամբ, առավոտյան այնպես ուշ է զանգերը տալիս, իսկ երեկոյան այնպես կանուխ, չափազանց կանուխ։ Բայց արևը՞ — արևն անկաշառ է անշուշտ, սակայն ինչո՞ւ նա էլ այնպես շտապ կտրում է իր երկար ուղին՝ արևելքից արևմուտք։ Եվ արանձնում է հարուստ մարդը, խիստ հրամայելով է արձակում, որ եռանդուն աշխատեն, արագաշարժ լինեն, չդանդաղեն, չծուլանան։ Բարկանում-գայրանում է աջ ու ձախ ամեն բանվորի վրա, սպառնում է զրկել օրավարձից, սպառնում է հանել գործից։

Անշեղ կատարվում է հրամանը, բայց կրկին նրա աչքին գործը թույլ է առաջանում, շենքը դանդաղ է աճում, մինչդեռ երեկոն խսկույն վրա է հասնում — և նա դժկամությամբ բանում է քսակի բերանը և սրտի ցավով վճարում է յուրաքանչյուրի օրավարձը՝ համարելով իր ձեռնարկն անմիտ գործ, ծախսված փողը՝ ջուրն ընկած։

Եղավ, որ տարիներ հետո թշնամին խուժեց այդ քաղաքը, ուր ապրում էր մեծահարուստ մարդը։

Ավարի տվեց թշնամին նրա գույքը, կողոպտեց քաղաքացիներին մինչև վերջին թելը, ավերեց և հրդեհեց ամբողջ քաղաքը, բնակիչներից շատերին կոտորեց, շատերին գերի տարավ, ոմանք էլ փախան՝ հաղիվ ազատված սրից ու հրից։

Հին հարուստը՝ հիմա կողոպտված ու աղքատ, գնաց մի ուրիշ երկիր, շեն ու խաղաղ մի օտար քաղաք։

Ընտանիքի օրվա հացը վաստակելու համար սոսկալի եղավ մի մեծ շենքի կառուցման վրա բանելու։

Արևի հետ ելնում էր աշխատանքի և արևի մայր մտնելու հետ, բանթող, գնում էր հանգստանալու։ Բայց ինչքա՞ն, ինչքա՞ն երկար է օրը — ծա՞նր, ծա՞նր, դժվարին։ Քարացել է ժամանակը և չի շարժվում։ Այդ ե՞րբ էր, որ լույսը ծագեց. շատ վաղուց էր այդ, բայց տակավին կեսօր չկա, իսկ արևն իր բոլոր կրակը թափում է նրա կռնակի վրա։ Ինչքա՞ն, ինչքա՞ն հոգնած է, քաղցած, ծարավ. ծնկները ծալվում են տակը, այնինչ օրը դեռ չի թեքվել, իսկ շենքն ի՞նչ շուտ է աճում, աճում է ժամեժամ։

Ե՞րբ պիտի եկեղեցու երեկոյան զանգերը հնչեն, որ օրավարձն ստանա ու շարշարված ոտներին հանգստություն տա։

Մի՞թե իր դեմ դավադրություն կա կազմած, որ եկեղեցու առավոտյան զանգերը այսպես կանուխ տան և այսպես ուշ ավետեն երեկոյի ժամը։ Բայց արևը՞ — արդեն անկաշառ է, անշուշտ, սակայն, ինչո՞ւ նա էլ կրիայի պես հազիվ է տեղից շարժվում. Ե՞րբ պիտի կտրի-անցնի նա այդ անվերջանալի ուղին — արևելքից արևմուտք։

Եվ երբ մի օր ուժասպառ և հոգնած ընկավ գետին և երբ լսեց իր ղլխի վերև կանգնած անսիրտ գործատիրոջ հայհոյանքն ու ղայրույթը,— այն ժամանակ միայն տեսավ հրամայողների և վայելողների անխիղճ և դոռոզ հոգին, և աշխատավորների ու տանջվողների դառնագին վիճակը։ Այն ժամանակ միայն հասկացավ և զղջաց արյան բոլոր կաթիլներով՝ կյանքի մեծ ճշմարտությունը՝ տերերի կողմից երբեք չհասկացված, հարուստների կողմից երբեք չզգացված։

1931,
Փարիզ

«ԱՅԴ ՈՂԻՆՉԸ ԵՍ ԵՄ»

Արևելյան մի քաղաքում, ամառվա միջօրեի շոգին, փողոցում, պատի ստվերին պառկած էր մի ծերունի դերվիշ։

Ցնցոտիների մեջ դերվիշը պառկել էր մայթի լայնքին, նվաղուն աչքերը կիսափակ։

Քաղաքապետ իշխանը՝ հպարտ ու վեհ, հագած ճոխ ու զարդարուն, գալիս էր դանդաղ քայլերով, շրջապատված շքախմբով։

Փողոցում մարդիկ ոտի էին կանգնում, կպչում պատերին և խոնարհ գլուխ տալիս անցնող քաղաքապետ իշխանին։

Շքախմբի առաջնորդը, գավազանը թափահարելով, գոռաց դերվիշի վրա.

— Ի՞նչ ես մեկնվել մայթին, ճանապարհը բռնել։ Չե՞ս տեսնում ով է գալիս. վեր կաց, անպատկա՛ռ։

— Ես միայն ինձնից մեծի առաջ ոտի կկանգնեմ,— անվրդով պատասխանում է դերվիշը։

Քաղաքապետը լսում է դերվիշի պատասխանը և հետաքրքրված մոտենում է նրան և հարցնում.

— Մի՞թե ես քեզնից մեծ մարդ չեմ։

— Իհարկե՝ ո՛չ։ Քեզնից բարձր դեռ շատ աստիճաններ կան։ Այո՞, թե՞ ոչ։

— Այո՛։

— Դու քաղաքապետ իշխան ես, գիտեմ. որ մեծանաս, ի՞նչ պիտի դառնաս,— հարցնում է դերվիշը։

— Նահանգապետ,— պատասխանում է քաղաքապետը։

— Հետո՞։

— Հետո՝ վեզիր։

— Հետո՞։

— Փոխարքա։

— Հետո՞։

— Սահմանը սա է։ Մեր բոլորի վրա շահը կա։ Նա է ամենից մեծը։

— Ասենք թե՝ շահ դարձար, հետո՞,— հարցնում է դերվիշը։

— Հետո՝ ոչինչ,— պատասխանում է քաղաքապետը։

— Ահա՛ այդ ոչինչը՝ ես եմ։ Ոտքերիս տակից անցիր գնա քո ճանապարհը,— նույն անվրդովությամբ պատասխանում է դերվիշը և նվաղուն աչքերը դոցում։

1945,
Երևան

ՀԵՔԻԱԹՆԵՐ

ԱՄԵՆԱՊԻՏԱՆԻ ԲԱՆԸ

Ժամանակով Արևելքի մի հրաշագեղ աշխարհում արդարամիտ և խելացի մի թագավոր է եղել։ Նա ունեցել է երեք որդի։

Եղավ, որ այդ թագավորը ծերացավ և կառավարության սանձը կամեցավ դեռ ողջ-օրով հանձնել իր ժառանգներից նրան, որն ավելի ընդունակ կլինի այդ դժվարին գործին։

Ուստի մի օր կանչեց որդիներին և ասաց.

— Սիրելի՛ որդիներ, տեսնում եք, որ ձեր հայրը ծերացել է ու կլի կարող երկիրը կառավարել։ Ես վաղուց իջած կլինեի իմ գահից, եթե կատարված տեսնեի այն միտքը, որ երկար տարիներ պաշարել է հոգիս։ Եվ հիմա ձեզանից ով որ իմաստուն կերպով լուծե այդ իմ միտքը, նա կստանա իմ թագը, նա կկառավարե իմ ժողովուրդը։

— Ապրած կենա մեր սիրելի հայրը, սուրբ է մեզ համար նրա վերկամքը. այդ ի՞նչ մեծ միտք է, որ չի կարողացել լուծել նրա իմաստուն հոգին։

— Ահա՛ տեսնո՞ւմ եք այդ ահագին և մեծածավալ շտեմարանը, որ վաղուց շինել եմ։ Իմ փափագս էր այդ լցնեի այնպիսի մի բանով, որ ամենապիտանին լիներ աշխարհիս երեսին և որով կարողանայի բախտավոր դարձնել իմ ժողովուրդը։ Այդ շտեմարանը դեռ մնում է դատարկ։

Եվ հիմա, ո՞վ ձեզնից կարողանա այդ շտեմարանը իր բոլոր անկյուններով, ծայրեծայր, լցնել աշխարհի այդ ամենապիտանի բանով։ Թո՛ղ նա արժանի լինի գահին։

Առե՛ք գանձերիցս ինչքան որ կուզեք և առանձին-առանձին ուղի ընկեք քաղաքե-քաղաք, աշխարհե-աշխարհ, գտեք այդ բանը և լցրեք իմ շտեմարանը։

Ձեզ երեք անգամ քառասուն օր միջոց եմ տալիս։

Որդիները համբուրեցին հոր ձեռքը և ճանապարհ ընկան։

Ամբողջ երեք անգամ քառասուն օր նրանք շրջեցին քաղաքե-քաղաք, աշխարհե-աշխարհ. տեսան ուրիշ-ուրիշ մարդիկ, ուրիշ-ուրիշ բարքեր ու ժամանակին եկան կանգնեցին հոր առջև։

— Բարով եք եկել, անգին որդիներս, գտե՞լ եք արդյոք և բերել՝ ինչ որ ամենապիտանի բանն է աշխարհում։

— Այո՛, գտել ենք, սիրելի հայր,— պատասխանեցին որդիները։

Եվ հայրն իսկույն վեր առավ որդիներին, և գնացին շտեմարանի դուռը. այնտեղ հավաքված էին բոլոր պալատականները և շա՜տ ժողովուրդ։

Թագավորը բացեց դուռը և կանչեց մեծ որդուն.

— Ինչո՞վ կլցնես այս ահագին շտեմարանս, սիրելի որդյակ, ի՞նչ բանով, որն աշխարհում ամենապիտանին լինի։

Եվ մեծ որդին հանեց գրպանից մի բուռ հացահատիկ՝ պարզելով դեպի հայրը՝ ասաց.

— Հացով կլցնեմ այս ահագին շտեմարանը, թանկագին հայր։

Ի՞նչն է աշխարհում ամենապիտանի բանը, բան հացը, ո՞վ կարող է առանց հացի ապրել։ Շա՜տ թափառեցի, շա՜տ բան տեսա,— բայց հացից անհրաժեշտ ոչինչ չգտա։

Այն ժամանակ հայրը կանչեց միջնակ որդուն.

— Ինչո՞վ կլցնես այս ահագին շտեմարանս, սիրելի որդյակ, ի՞նչ բանով, որն աշխարհում ամենապիտանին լինի։

Եվ միջնակ որդին հանեց գրպանից մի բուռ հող, պարզելով դեպի հայրը՝ ասաց.

— Հողով կլցնեմ ես ահագին շտեմարանը, թանկագին հայր, ի՞նչն է աշխարհում ամենապիտանի բանը, քան հողը։ Առանց հողի հաց չկա. առանց հողի ո՞վ կարող է ապրել։ Շա՜տ թափառեցի, շատ բան տեսա, բայց հողից անհրաժեշտ ո՛չինչ չգտա։

Ապա հայրը կանչեց կրտսեր որդուն.

— Ինչո՞վ կլցնես այս ահագին շտեմարանս, սիրելի որդյակ, ի՞նչ բանով, որն աշխարհում ամենապիտանին լինի։

Այդ միջոցին կրտսեր որդին հաստատ քայլերով մոտեցավ շտեմարանին, անցավ շեմքը, գրպանից հանեց մի փոքրիկ մոմ, կայծքարին խփեց հրահանը, կայծ հանեց, վառեց աբեթը, հետո մոմը։ Բոլորը կարծում էին, թե նա ուզում է լույսի լուսով լավ զննել շտեմարանը, նրա ահագնությունը։

— Դե՛հ ասա,որդի, ինչո՞վ կլցնես,— անհամբեր ձայնով հարցրեց հայրը։

— Լույսով կլցնեմ այս ահագին շտեմարանը, իմաստո՛ն հայր, լույսո՛վ միայն։ Շատ թափառեցի, շա՛տ աշխարհներ տեսա, բայց լույսից անհրաժեշտ ո՛չ մի բան չգտա։ Լույսն է ամենապիտանի բանը աշխարհում։ Առանց լույսի հողը հացը չի ծնի, առանց լույսի հողի վրա կյանք չէր լինի։

Շա՛տ թափառեցի, շա՛տ աշխարհներ տեսա և գտա, որ գիտության լույսն է ամենապիտանի բանը, և միայն գիտության լույսով կարելի է կառավարել աշխարհը։

— Ապրի՛ս,— գոչեց ուրախացած հայրը,— քեզ է արժանի գահն ու գայիսոնը, քանի որ լույսով ու գիտությամբ պիտի լցնես թագավորությունդ և մարդկանց հոգիները։

— Ապրա՛ծ կենա մեր երիտասարդ լուսավոր թագավորը,— գոչեցին ոգևորված պալատականներն ու ժողովուրդը ամբողջ։

1904

ԱՐԵՎԻ ՄՈՏ

Մի որբ երեխա՝ ցնցոտիներ հագած՝ կուչ էր եկել հարուստ տների պատերի տակ։ Մեջքը հենել էր մի հարուստ տան պատին և մեկնել էր ձեռքը դեպի մարդիկ։

Նոր էր բացվել գարունը, մոտավոր սարերը կանաչին էին տալիս, և գարնան անուշ արևը բարի աչքերով նայում էր ամենքին։

Մայթերով անցուդարձ էին անում մարդիկ, և ո՛չ մի մարդ չէր նայում, չէր ուզում նայել խեղճ ու որբ երեխային։

Երբ արևը կամաց-կամաց թեքվում էր մոտավոր կանաչ սարերի հետևը — սկսեց փչել մի ցուրտ քամի, և երեխան դողում էր՝ խե՛ղճ ու անտուն։

— Ա՜խ, կարմիր արև, բարի՛ արև, դուն էիր ինձ միայն տաքացնում, հիմա ո՞ւր ես գնում, թողնում ես ինձ մենակ՝ այս ցրտին ու խավարին, ես մայր չունիմ, ես տուն չունիմ, ո՞ւր գնամ, ո՞ւմ մոտ գնամ... Վե՛ր առ, տա՛ր ինձ քեզ հետ, անո՛ւշ արև...

Լալիս էր երեխան լուռ ու մունջ, և արցունքները գլոր-գլոր սահում էին նրա գունատ երեսից։ Իսկ մարդիկ տուն էին դառնում, և ոչ ոք չէր լսում ու տեսնում նրան, ո՛չ ոք չէր ուզում լսել ու տեսնել նրան...

Արևը սահեց անցավ սարի մյուս կողմը և էլ չերևաց։

— Բարի՛ արև, ես գիտեմ, դու գնացիր քո մոր մոտ... Ես գիտեմ ձեր տո՛ւնը, ա՛յս սարի հետևն է. ես կուզամ, կուզամ քեզ մոտ, հիմա՛, հիմա՛։

Եվ խեղճ երեխան դողալով՝ հարուստ տների պատերը բռնելով, գնա՛ց, գնա՛ց, քաղաքից դուրս ելավ։ Հասավ մոտավոր սարին. դժվար էր վերելքը. քարեր ու քարեր, ոտքը դիպչում էր քարերին, խիստ ցավում, բայց նա ուշ չդարձնելով բարձրանում էր անընդհատ։

Մութը իջավ, և կանաչ սարը սևերով ծածկվեց։ Սարի գլխին փայլփլում էին աստղերը՝ կանչող, գուրգուրող ճրագների պես։

Փչում էր սառը, խիստ քամին, որ ձորերի մեջ ու քարափների գլխին վայում էր. երբեմն թռչում էին սև թևերով գիշերահավերը, որոնք որսի էին դուրս եկել։

Երեխան անվախ և հաստատուն քայլերով գնում էր վերև, բա՜րձր, միշտ բա՜րձր. և հանկարծ լսեց շների հաչոց, մի քիչ հետո էլ լսեց մի ձայն խավարի միջից.

— Ո՞վ ես, ո՞ւր ես գնում։

— Ճամփորդ տղա եմ, արևի մոտ եմ գնում, ասա՛, ո՞ւր է արևի տունը, հեռո՞ւ է, թե մոտիկ։

Ճրագը ձեռին մոտ եկավ մի մարդ և քնքուշ ձայնով ասաց.

— Դու հոգնած կլինես, քաղցա՛ծ ու ծարա՛վ, գնանք ինձ մոտ։ Ի՞նչ անգութ են քո հայրն ու մայրը, որ այս մթանը քեզ ցրտի ու քամու բերանն են ձգել։

— Ես հայր ու մայր չունիմ, որբ եմ ու անտեր...

— Գնա՛նք, տղա՛ս, գնա՛նք ինձ մոտ,— ասաց բարի անծանոթը և երեխայի ձեռքից բռնելով տուն տարավ։

Նրա տունը մի խիզճ խրճիթ էր. օջախի շուրջը նստել էին բարի մարդու կինն ու երեք փոքր երեխաները։ Նրա խրճիթին կից մի մեծ բակում որոնում էին ոչխարները։ Նա հովիվ էր, սարի հովիվ։

— Սիրելի՛ երեխաներս, ձեզ եղբայր եմ բերել, թո՛ղ չլինեք երեք եղբայր, լինեք չորս. երեքին հաց տվող ձեռքը չորսին էլ կտա։ Սիրեցե՛ք իրար. եկե՛ք համբուրեցեք ձեր նոր եղբորը։

Ամենից առաջ հովվի կինը գրկեց երեխային և մոր պես ջերմ-ջերմ համբուրեց. հետո երեխաները եկան և եղբոր պես համբուրեցին նրան։

Երեխան ուրախությունից լաց էր լինում և նորից լալիս։

Հետո սեղան նստան ուրախ, զվարթ. մայրը նրանց համար անկո-

դին չինեց և ամենքին քնեցրեց իր կողքին. երեխան շա՜տ հոգնած էր. խսկույն աչքերը խփեց և անո՜ւշ-անո՜ւշ քնեց։

Երազի մեջ ուրախ ժպտում էր երեխան, որպես թե ինքը արևի մոտ է արդեն, գրկել է նրան ամուր ու պառկել է նրա գրկում տաք ու երջանիկ։

Մեկ էլ սրտի հրճվանքից վեր թռավ և տեսավ, որ արևի փոխարեն գրկել է իր նոր եղբայրներին և ամուր բռնել է մոր ձեռքը։ Եվ նա աչքովին տեսավ, որ արևը հե՜նց այս տան մեջն է, որ ինքը ուզիղ հե՜նց արևի գրկումն է...

1905

ԱՂԱ ՆԱԶԱՐ

Նազարը մի փոքրիկ գյուղի գլխի էր, ծուլ ու ազքատ և մանավանդ շատ վախկոտ մարդու մեկն էր, բայց սիրում էր մեծ-մեծ խոսել և գլուխ գովել։

Հաստլիկ ու կարճ էր հասակով, հաստ գոտի էր կապում, որի մի կողմից միշտ քաշ էր ընկած կարմիր մեծ թաշկինակը, իսկ մյուս կողմը միշտ խրած կար գրիչ-մելանի տուփը։

Ինչպես էր պատահել, որ գյուղի հանգուցյալ տերտերից մի քիչ գրել-կարդալ էր սովորել, և այդ պատճառով էլ գյուղի միակ «գիտնական-կարդացվոր» մարդն էր համարում իրեն։

Մի աչքաբաց կնիկ ուներ, որ օր ու գիշեր հարևանների դռանը աղխատում էր ու հաց էր թխում, կով կթում... և դրանով տունը պահում։ Նազարն իր գլխի պաշտոնից ստացած չնչին բանը տալիս էր ծխախոտի և օղիի. տան համար օգուտ չուներ.դեռ լավ էր, որ ցերեկն էլ փորը դուրս էր գցում այս ու այն հարևանի կամ ռեսի տանը, եթե ոչ, խեղճ կինը անկարող էր կշտացնել Նազարին, որ բախտի տվածով՝ անհագ ախորժակի տեր էր։ Ո՛չ տղա ունեին, ո՛չ աղջիկ, միայն մի սև էշ ունեին, մի քանի հավ և մի աքլոր։ Գյուղի եզերքին էլ երկաչքանի մի փլփլված խրճիթ ունեին. մի աչքում մարդ ու կնիկ էին պառկում, մյուսումն էլ էշն ու աքլորի ընտանիքը։ Այնպես փլփլված էր խրճիթը, որ երբ հավերը երդիկը քշուշ էին անում, հողը մաղվում էր անձրևի պես, իսկ վայ թե էշը իր փոքը փչեր — ողջ խրճիթը կդողդողար։ Եվ երբ քամի էր լինում, մաղ էր մնում, որ տունը թևի տակ դներ ու տաներ։

— Ա՛յ մարդ,— գանգատվում էր կնիկը,— ո՛չ բարով ես էլ աշխարհք մտա, մարդ առա. էսպես էլ օ՞ր կլինի, էսպես էլ ապրո՞ւստ կլինի, որ մենք ենք անում։

— Ի՞նչ անեմ, ա՛յ կնիկ,— ասում էր Նազարը,— ես էլ գիտեմ, որ գեշ է. ճարս ի՞նչ էս աշխարհքիս վրա, ինչքան ես հասկացա, ավելի լավ է մարդ մի մատնոց բախտ ունենա, քան թե մի կարաս խելք... Թե չէ, դու ասա, ես հո՞ խելառ չեմ, պատճառն ի՞նչ է, որ աղքատ եմ։

— Խելառ չես, բայց խելոքի պես էլ չես։ Չէ՞ որ, ա՛յ մարդ, բախտս ո՞րն է, հա նստածդ տեղը պուտուկով ոսկի չպիտի՞ գտնես։ Գնա՛,— խրատում էր խեղճ կնիկը,— գնա՛, գլուխդ քարին տուր, քարը գլխիդ, տե՛ս փող չե՞ս վաստակի, մարդ չե՞ս դառնա։

— Կնի՛կ, դու կնիկ ես. փուչ կիսոսիս։ Ասել եմ ու էլի կասեմ, թե բախտն է բանը. բախտը որ տա մարդուս, նստած տեղն էլ կուտա։ Ի՞նչ է, ես ո՞ւմից պակաս տղամարդ եմ, որ ողջ գեղի գիտունը ես եմ. բայց արի տես, որ բախտ չունիմ։ Ռեսն ի՞նչ է իմ քովս, Տերտերանց Պողոս աղան ի՞նչ է իմ քովս. նրանց ես մի բրդուճ կանեմ, կուտեմ՝ թե՛ խելքի, թե՛ կարիճության կողմից, բայց տե՛ս որ նրանք բախտ ունին ու էստեղից էլ գոմշի տակով ոսկի։

— Հա՛, դու էիր պակաս նրան չհավանելու,— ծաղրում էր կնիկը.— հլա՛ մեկ քիթ ու բերանդ օրբիր, նոր խոսիր։ Մարդաչնման-մարդաչնավան։

— Պապանձվի՛ր,— գոռում էր Նազարը,— կնիկն ի՞նչ է, որ իր գլխավորի վրա էսպես ամբարտավան բերան բանա... Ա՜խ, բախտ չունեմ, բախտ որ ունենայի, թաղավորի աղջիկը կնիկս կլիներ, չէ թե քեզ պես անզգամը։— Ու զայրացած դուրս էր թռչում, դուռը թափով զարկում խեղճ կնկա երեսին, նստում էր սև էշը, մի ձեռքով երկայն մահակը բռնած, մյուս ձեռքով գոստակը ժանգոտ թրի, որ իբրև դղեր կապել էր մեջքին և առպանդակիով էշը քշում էր գյուղամեջ։ Գնում էր և բթի տակ ինքն իրեն հետ խոսում. «Մարդս բախտ պիտի ունենա, բա՛խտ։ Խելք, կարիճություն դարդակ բաներ են»։

Գյուղի երեխաները վազ էին տալիս նրա հետևից ու բղավում.

— Բարո՛վ տեսանք, փչան Նազար, էդ հրեղեն ձիով ավազակները բռնելո՞ւ կերթաս, բարի՛ հաջողում։

Կատաղում էր Նազարը, երկայն մահակով հարվածում էր ափն ընկած չարաճճիներին։

— Ջննե՛ք դ, լակոտներ, ես ձեր հոր տեղն եմ, ձեր հորերից մեծ մարդ եմ, ես Աղա Նազարն եմ։ Սուսե՛ք, թե չէ թրով ականջներդ կկտրեմ։

— Մեղա՛, մեղա՛, Աղա Նազար, բարով եկար, Աղա Նազար, բարով եկար։

— Ապրի՛ք, ձագուկներս, էդպես ասեք — Աղա Նազար։

Եվ գոհ ու զվարթ գնում էր Նազարը, բերնին դրած չիբուխը, որից ծուխը բարձրանում էր թոնրի պես։ Գնում էր ոնսի դռան առաջ կանգնում։ Ռեսի հրամանները տանում էր այս տանից այն տունը, մի տեղ — ճմռուր էր ուտում, մի ուրիշ տեղ՝ մածուն, մի տեղ մի օղի էր վայելում, մի ուրիշ տեղ՝ մի հավկիթ կուլ տալիս։

Օրը մթնում էր, և Աղա Նազարը կուշտ ու հարբած, իր իշու հետ դառնում էր տուն։

* * *

Մի երեկո խեղճ կնիկը վառել էր օջախը, վրան դրել էր ջրով լի մի կավե աման, մեջն էլ մի քանի հատ կարմիր տակ։

Նազարը աղայի նման թիկն էր տվել խոտի բարձին. ամեն օրվա պես այսօր էլ գլուխը տաք էր՝ առյուծի կաթ կար փորի մեջ. հա՛, թիկն էր տվել, չիբուխը վառել ու միտք էր անում։

— Ա՛յ կնիկ, միտք եմ անում աշխարքի բանը. մեր գեղը ինձնից խելոք, բանգետ ու կտրիճ մեկը չկա։ Էսօր ռեսին ու գեղի իշխաններին, կուզեմ ասել՝ իշխաններին էնպես իմաստուն բաներ ասացի, որ բերանները բաց մնացին, բայց օգուտն ի՞նչ։

Կինը լուռ էր, սիրտ չուներ խոսելու. այսօր խեղճը առավոտից մինչև երեկո ոտքի էր եղել, հարևանի լուրդն էր լվացել գետի մեջ ու սաստիկ հոգնել էր։

— Կնի՛կ, ասել է ասողը, թե բախտը որ կա, ոսկի հավկիթ ածող մի կույր հավ է, որ անարժանների գոգի մեջ է իր բնկալը դնում։ Ի՞նչ իմաստուն խոսք։

Աղա Նազարը, քնքը տեղը, խոսում էր ու խոսում, առանց պատասխան առնելու։ Հաց կերան, պրծան, պատրաստվեցին քնելու։ Սովորույթ էր, որ քնելուց առաջ, միշտ, իրար հետ ելնում էին իշուն նայում, խոտ տալիս ու դառնում. ասենք, ի՞նչ սովորույթ. ճշմարիտն այն էր, որ Նազարը վախենում էր գիշերը մենակ դուրս գալ և դրա համար էլ ամեն անգամ ասում էր կնկանը, թե՝ կնի՛կ, դու ճրագը բռնե, լույս արա, ես տեսնեմ իշու առաջը բան կա՞, թե ոչ։

Կնիկը ճրագը բռնել էր։ Նազարը դուռը բացեց. ամառվա երկնքի երեսին շողին էին տալիս ոսկի աստղերը։

— Կնի՛կ, ա՛յ կնիկ, թե որ բախտ ունենամ՝ մեծ մարդ կդառնամ ու էս աստղերի համրանքի չափ ոսկի կունենամ...

— Դո՛ւ իշուն նայե, քեզնից բան դուրս չի գա։

— Ի՞նչ ես ասում, թե որ բախտն ուզենա, ինձնից մեծ մարդ դուրս չի՞ գա...

— Հա՛, հա՛, թե որ բախտն էլ ուզենա, էլի քեզնից մարդ դուրս չի գա, ո՞ւր մնաց մեծ մարդ։

— Հաստա՞տ,— վիրավորված հարցրեց Նազարը։

— Հաստա՛տ ու հաստա՛տ, փսլնքոտ։

— Ջե՛նդ կտրե,— գոռաց Նազարը։

— Կորի՛, գնա՛, հերիք մեծ-մեծ խոսես, հոգիս հանեցիր, հարբան լոպպազ,— ասաց կնիկը, իսկույն տուն մտավ և դուռը ամուր փակեց։

Խեղճ Նազարը մնաց դուրսը. վախից դողում էր։

— Էս էլ իմ բախտից. որտե՞ղ է տեսած, որ կնիկը մարդուն դուրս անե։

— Քեզ պես մարդը չունենամ էլ կլինի,— ձայնեց ներսից կնիկը,— ահա՛ն, ա՛ռ թուրդ, ա՛ռ մահակդ ու հայդե՛, էլ աչքիս չերևաս։— Եվ դռան ճեղքերի միջով դուրս ձգեց Նազարի զենքերը, գրիչն ու մելանը, գդակն ու թաշկինակը։

— Կնի՛կ ջան, ես ո՞ւր գնամ էս կես-գիշերին,— աղաչեց Նազարը։

— Գրողի ծոցը, ո՞ւր կուզես գնա...

Նազարը աղաչեց, պաղատեց, հնար չեղավ։

— Ա՛յ քեզ բախտ,— տխուր-տխուր ինքն իրեն խոսեց Նազարը և իշու կողքին, շոր աղբի վրա պառկեց ու չիմացավ, թե ինչպես քնեց։

* * *

Արևը դեռ չէր ծագել, երբ Նազարը խայթվածի պես դարձնեց. իշաճանճերը թափվել — ղժղժում էին նրա բիթ ու բերանի վրա, ուտում, կծում, քցքցում էին խեղճ Նազարին։

Նազարը զայրացած, քնաթաթախ՝ տարալ-բերալ ափով ամուր զարկեց իր քթին ու բերանին։ Ու մեկ էլ տեսավ — ճանճե՛ր, գազանի չափ խոշոր ճանճե՛ր, ամենքը սատկած, չարդ ու փշուր եղած, իրար վրա թափվել են գետնին։ Նայեց... Ինչքա՛ն շատ են, հարյուր հատ, ավելի, ավելի, հազարի չափ, համրանք չկա...

— Տո՛, ես տղամարդ եմ եղել, մեկ զարկով հազարը սպանեցի...

Ու մեկեն ոտքի ելավ, կարմիր մեծ թաշկինակը փռեց, մատները թաթխեց մելանի մեջ ու մեծ տառերով վրան գրեց.—

«Աղա Նազար, Աղա Նազար,
Որ մեկ զարկով չարդի հազար»։

Դրոշակն ինչպես թաշկինակը կախեց մահճակի ծայրից, թարը հարեց մեջքին, նստավ իշուն, չիբուխը դրեց բերանը ու, ծուխը ամպի նման քաց թողնելով, ասաց.

— Հողը էն տղամարդու գլխին, որ կնկա անուն կուտա։

Ու Նազար, դա՛ւ, Աղա Նազար, էշը քշեց, ընկավ մեծ ճամփան ու գնաց դրոշակը ձեռքին, թուրը մեջքին, չիբուխը բերանին, գլուխը՝ բարձր, փափախը՝ ծոծրակին, հպարտ, աղավայիլ...

Անցորդները, թե՛ ոտավոր, թե՛ ձիավոր, տեսնում էին Աղա Նազարին, էշն ու թուրը, զարմանքով կարդում էին դրոշակը, և վախից ասում էին։

— Ամա՜ն, Աղա Նազար, ոտքդ պագենք, խղճա՛ մեզ, խեղճ մարդիկ ենք,— աղաչում էին ճամփորդները։

— Գնացե՛ք ձեր ապրուստի հետևից,— հրամայում էր նա և ամենքից մի քիչ հարկ էր վերցնում, որից հաց ու ծխախոտ, որից օղի ու չամիչ և ուրիշ մանր-մունր բաներ։ Գնում էին անցորդները թե՛ ոտավոր, թե՛ ձիավոր և իրենց գնացած տեղերում պատմում էին Աղա Նազարի կորիճության և բարության մասին։

Գնում էր Աղա Նազարը և խոսում էր ինքն իրեն հետ. «բախտն է բերում սրանց իմ դուռը. թե որ բախտն ուղենա, ոսկու քարվաններ կբերեն, առջևս կթափեն»։

* * *

Աստղն ու կատարվելը մեկ եղավ։

Աղա Նազարը նոր էր մի ձոր իջել և ձորից ելել, մեկ էլ տեսավ, որ սարի փեշերով փոշի է բարձրանում ու փոշու միջից զը՛նգ հա զը՛նգ, զը՛նգ հա զը՛նգ շորորվելով մի քարավան է գալիս. էն էլ ի՞նչ քարավան, գլուխը սարի տակն է, պոչը սարի գագաթի ամպերի միջից նոր է ծայր տալիս։

«Թե որ բախտս բանի՝ էս քարավանը իմս կլինի»։

Քարավանը մոտեցավ։ Աղա Նազարը քարվանապետի կնա թուրն ու երկայն նիզակը տեսավ թե չէ, վախից ճանապարհի կողքին մի ժայռի հետև կուչ եկավ։ Քարվանը եկավ, հասավ ժայռի դիմաց. մեկ էլ հանկարծ քարվանապետի աչքին դիպան իշու սուրուլիկ ականջները ու դրոշակի ծայրը, և գոռաց.

— Ո՞վ ես, մա՞րդ, թե սատանա...

Լսեց Աղա Նազարը, մաղ մնաց լեղին պատռվեր։ «Էստեղ խելքի

ու կորիճության տեղ չէ. բախտի տեղ է»,— հաղիվ կարողացավ մտածել ն, ինքնատոցից ելնելով, ցցվեց քարվանի առաջը ու բարձր ձայնեց.

Ես եմ, Աղա Նազար,
Որ մեկ զարկով չարդն հազար։

Քարվանապետը նայեց դրոշակին, զարմացավ, լսեց նրա ուժով ձայնը, վախեցավ ու վախից գլուխը կորցրած՝ իրեն ուղտի վրայից վայր ձգեց Աղա Նազարի ոտների տակ։

— Աղա՛ Նազար, քո բախտն եմ ընկել. քարվանը քեզ մատաղ, իմ ու ընկերներիս կյանքը բաշխե. խեղճ մարդիկ ենք՝ վարձով ծառայողներ...

— Թախշեցի,— խրոխտ պատասխանեց Աղա Նազարը,— զուր արունք անել չէ՛ իմ ուզածը։

Քարվանապետի ընկերներն եկան խոնարհ գլուխ տվին Աղա Նազարին ու քարվանը բեռներով հանձնեցին նրան։

Նազարը շատ ուրախացավ։ Նայեց ուղտապաններին, որ խեղճ-խեղճ կանգնել էին՝ վիհանձնությունը բռնեց, ամեն մի ուղտապանին մեկական ուղտ նվիրեց իրենց բեռով, իսկ քարվանապետին՝ երկուսն ավելի։

— Գնացե՛ք ձեր երեխաները պահեցեք, և էլ քարվանի տերերին ասացե՛ք, թե քարվանը Աղա Նազարը տարավ։ Մի՛ վախենա։

Ուղտապանները երկնից-գետինք շնորհակալ եղան։ Ուրա՛խ-ուրա՛խ գնացին՝ աշխարհքով մեկ փառաբանելով Աղա Նազարի քաջությունն ու բարությունը։

Աղա Նազար, հիմա հաստատ որ Աղա Նազար. էշը նստած անցավ քարվանի գլուխն ու մեն մենակ հետևից քարշ տվեց բարվանը՝ կուշտ ու կուռ ծխելով չիբուխը ու հետն էլ բարձր-բարձր խոսելով.

«Ես ասում էի չէ՞, թե բախտն է բանը. խելը, կորիճություն դատարկ բաներ են. էդպես եղա՞վ,— էդպես էլ եղավ։ Հիմի, ա՛յ Աղա Նազար, քարվանդ տա՛ր քաղաք, ծախի, քեզ համար մեկ քյոշք ու սարայ շինի՛ր, քնկի՛ր կողքիդ, առքով-փառքով ապրի՛ր»...

* * *

Ու գնաց Աղա Նազարը, շատ թե քիչ, ճամփան գիտե, մտավ մի ուրիշ թագավորի հողը։ Դու մի՛ ասիր՝ էդ տեղերը ավազականոց են եղել. Աղա Նազարն էլ միամիտ միամիտի պես։

Ավազակները ճանապարհի եզերքներին սրսկան շների պես դարան մտած՝ աչք էին պահում գնացող-եկող ճամփորդներին կողոպտելու համար. հենց որ տեսան՝ մեծ հարուստ քարվան է գալիս, ուրախությունից սրտները ճախր եկան, բայց երբ մոտեցավ քարվանը, ավազակներից գրաճանաչը կարդաց դրոշակը, և իմացան, որ Աղա Նազարինն է քարվանը — վրանները ջուր մտցվեց։ «Աղա Նազարն է, պահո՞, անունը լսել էինք, հիմի ինքն է...»,— ավազակները վախով ասում էին իրար։ Խորհրդի նստան իսկույն։— «էս չեղած բան է. մեն-մենակ, անծայր քարվանի գլուխն անցած, ո՞չ պահապան, ո՞չ օգնական, տեսիլք է, ախպե՛ր»։

— Տո՛, ի՞նչ տեսիլք, հաստատ բան է։

— Աղա Նազարը կամ դևի ուժ ունի, կամ սատանի հնճարք։

— Տղերք, լավն էն է, թողնենք երթա, գլուխներիս փորձանք չգա...

Ավազակապետը վերջ տվեց վեճին։— «Աղա Նազարը, ասաց նա, դևի ուժ էլ ունի, սատանի հնճարք էլ. թե չէ՝ էս քոսոտ իշով անցել է հազար ճամփա. էս ժանգոտ հին թրով շար ու թշնամու է սասանացրել։ Հանաքի տեղ չէ։ Լավն էն է՝ երթանք, մեր թրերը դնենք Աղա Նազարի ոտքերի տակ, խնդրենք, որ դառնա մեր պետը. նրա անունով աշխարհը կտիրենք»։ Ամենքը մեկ խոսք եղան, ու քառասուն հոգին մեկ մարդու պես եկան, գլուխ տվին ու թրերը դրին Աղա Նազարի իշու ոտքերի առջև։

Աղա Նազարը դեռ գլխի չէր ընկել, երբ ավազակապետը ասաց.

— Աղա՛ Նազար, Աղա՛ Նազար, մենք ամենքս, քառասուն ընկերտղերք, էստահետ քո ծառան ենք։ Էս կտրիճների պետը դու ես. հիմի տեսնում եմ, որ դու ես միակ արժանավորը՝ մեր գլուխ-գլխավորը լինելու։

— Ապրի՛ք, տղերք,— ասաց Աղա Նազարը հանգիստ ձայնով ու թուքը սրբելով,— ես որ մենակ մեկ զարկով հազարն եմ ջարդում, ձեզ հետ մենակեղ հիմա հարյուր հազարը չեղածի պես. մեր դեմ՝ էլ աշխարհք չի կարող կանգնի։

Ավազակները Աղա Նազարին թոցրին տարան իրենց բերդը, որ արծվի պես թառել էր հեռու ռարի գլխին՝ աչքերը ամեն կողմ սրած։

Նստեցրին նրան փառքով օջախի վերին գլուխը, թանկագին գորգի վրա, համեցրին քիրազի շիրուխը ու բարև բռնած կանգնեցին ոտքի։

Բերին ընտիր խորտիկներ և ազնիվ գինիներ։ Աղա Նազարը նստել էր հպարտ ու բախտավոր։

Ավազակների պետն ասաց.

— Աղա Նազար, դու քո ազայությանդ վայել, հանգիստ նստիր, քո անունը մեր վրա լինի, հերի՞ք է։

* * *

Ու քառասուն ավազակները Աղա Նազարի անունով դարկում էին թալ ու քարավան, արշավում էին գեղ ու քաղաքներ, կտրում, թափում, ավար առնում ու հարկ դնում վրանները։

Աղա Նազարի անունը թնդում էր ամեն տեղ. ժողովուրդները ահ ու սարսափի մեջ էին։

Մի օր էլ հավաքվեցին գյուղ ու քաղաք. գնացին թագավորի մոտ զանգատ, թե չգիտենք ո՞վ է մեր թագավորը, ո՞ւմ պիտի հարկ տանք. երկու թագավորի հարկ չենք կարող տալ. մեռա՞նք, մեռա՞նք. կամ դու եղիր հաստատ թագավոր, կամ երթանք Աղա Նազարի դուռը։

Թագավորն էլ զորք հավաքեց ու եկավ մի դիշեր բանակ դրեց Աղա Նազարի բերդի դիմացը։ Առավոտ կանուխ ավազակները տեսան զորքը ու եկան ասացին Աղա Նազարին.

— Աղա Նազար, որ մեկ զարկով ջարդես հազար, դու էս մեծ օրվա համար էիր մնում, որ փառքդ շատանա, անունդ ծովեր անցնի։ Թագավորն եկել, անթիվ, անհամար վրան է զարկել. կռիվ է ուզում։

Վախից Աղա Նազարի սիրտը սկսեց դողալ ու, չիբուխի ծուխը բերանից հաղիվ դուրս բշելով, ասաց.

— Շատ լավ, պատրաստվեցեք, երթանք։ Ու իր մտքում խոսում էր. «էստեղ ի՞նչ կտրիճության տեղ է. քանի՞ գլուխ ունիս թագավորի զորքի դեմ ելնելու, բախտն է բանը, բախտ որ ունենամ...»։

* * *

Թագավորի զորքը իրար անցավ։ Բոլոր զինվորները վազուց արդեն հազարավոր մարդկանց բերանից լսել էին Աղա Նազարի անվան քաջության, խելքի ու վեհանձնության մասին։ Հիմա որ բերել էին նրանց Աղա Նազարի հետ կռվելու՝ բարձրաձայն ասում էին՝ ինչպե՞ս դուրս գնաս Աղա Նազարի դեմ, որ մեկ զարկով հազար կջարդի։ Մենք չենք կռվի. թո՛ղ Աղա Նազարն ու մեր թագավորը իրար հետ կռվեն. ով որ հաղթեց, թող նա լինի թագավոր։ Եվ զորքը բոլորով մեկ հայտնեցին թագավորին, թե թող ինքը մենակ երթա Աղա Նազարի դեմ, Աղա Նազարն էլ մենակ գա թագավորի դեմ. թաղը քաշվեն կվայելեն, զուր արյուն թափելու ի՞նչ պետք կա։ Մենք կռվողը չենք...

Պատգամավորները ուղարկեցին այս մտքով Աղա Նազարի մոտ։

— Շա՛տ լավ, թող էդպես լինի, հաշիվը մեկ է,— պատասխանեց կտրիճ Աղա Նազարը՝ մտքի մեջ իրեն ասելով— «ճարս ի՞նչ...»

Թագավորն էր. հրեղեն ձին նստած, ահագին փայլուն թուրը քաշած՝ հիսավ իրոք կանգնեց դաշտի մեջտեղ։

Ավազակների սիրտը իր նժույգ-ձին բերեց, որ Աղա Նազարը նստի, Աղա Նազարը մերժեց, ասելով՝ պետք չէ։

Տվեց իր երկաթի կարող թուրը, Աղա Նազարը մերժեց, ասելով՝ պետք չէ։

Հավաքված ժողովուրդն ու զորքը այս բանը տեսնելով շատ զարմացան։

Աղա Նազարն էլ սև էշը նստած, մեկ ձեռքին դրոշակը, մյուս ձեռքին ժանգոտ թուրը՝ հիսավ կանգնեց Թագավորի դեմ հանդիմանելու։

Թագավորը նայեց Աղա Նազարին — նրա կերպարանքը, էշն ու թուրը, մտածեց.— «Հը՞մ, հասկացանք. Աղա Նազարի կտրիճությունը իր խելքի մեջն է։ Էստեղ ուժի տեղ չկա։ Գնալ է նայեմ, ինչ որ նա անե, էն էլ ես կանեմ»։

— Դո՞, ե՞ս Աղա Նազարը,— հարցուց արավ Թագավորը։

— Աղա Նազարի նման չե՞մ, ինչ է, չե՞ս տեսնում, կարոյա դրոշակս,— ասաց Աղա Նազարը։ Ծնկները դողացին, ու վախից գլուխը թեքեց, պահեց իշու պարանոցի տակ.— «Հիմի կզարկե, հիմի կզարկե»,— սարսափով մտածում էր Աղա Նազարը։

Այնինչ Թագավորն էլ Աղա Նազարի պես գլուխը պահել էր ձիու պարանոցի տակ և սրտատրոփ սպասում էր։ Աղա Նազարը տեսնելով, որ զարկը ուշանում է, ուզեց իմանալ, թե ի՞նչ կա. տեսավ, որ Թագավորն էլ իրեն պես վախենալ է... ու մեկ էլ այլ չմարթած՝ թռավ գետին ու ժանգոտ թրով, ձեռքի բոլոր թափով, տո՛ւր թե կուտաս, տո՛ւր թե կուտաս Թագավորի գլխին, զզին... թաղը գլորվեց վար։ Թագավորը ժամանակ չունեցավ գլուխը վեր բարձրացնելու, ոտները ասպանդակից հանելու. Աղա Նազարը զարկում էր, հա զարկում, իսկի միջոց չէր տալիս. Թագավորը թալացած փռվեց գետնին. պատռված դլխից արյունը բխում էր աղբյուրի պես։

Աղա Նազարը մեռած Թագավորի թաղը վերցրեց, դրեց իր արյունոտ թրի ծայրին, բռնեց բարձր, ցույց տվեց զորքին, ժողովրդին և իր ավազակներին։

— Ապրած կենա մեր նոր Թագավորը, անհաղթելի Աղա Նազարը,— որոտաց զորքը և փողերն ու թմբուկները թնդացրին լեռ ու ձոր։

— Ապրած կենա մեր մեծը, մեր իմաստուն Թագավորը՝ Աղա Նազարը,— ուրախ-ուրախ գոչեցին ավազակները։

Եվ զորքն ու ավազակները վազեցին դեպի Աղա Նազարը։ Ձիավորները դենքերը դրին Աղա Նազարի ոտքերի տակ, գլուխները խոնարհեցին գետին, հպատակության երդում տվին։ Հետո Թագավորի թաղը դրին Աղա Նազարի գլուխը, ծիրանին ձգեցին ուսերի վրա և իրենց վահանների վրա բարձրացրած՝ երգով ու պարով տարան Թագավորանիստ քաղաքը։

Ժողովուրդը՝ մայր ու մանուկ, ծեր ու երիտասարդ, դիմավորելու էին եկել Աղա Նազարին։ Նա էլ Թագավորի վայել բարև էր առնում, բարև տալիս նրանց բոլորին։ Մեծամեծները ոսկի մատուցարանի վրա քաղաքի բանալիները աղ ու հացի հետ միասին ներկայացրին Աղա Նազարին։ Եվ ամենքը մեկտեղ ծունկի իջան, հպատակության երդում տվին։

Գուսանները առաջ եկան և երգեցին.

Աղա Նազար, մեծ Թագավոր,
Բարձրդ, գահդ շնորհավոր.
Հազար տարի ապրած կենաս,
Ու հետո էլ մահ չունենաս։

Եկեքով, շնորհքով, փառաց փառքով
Անցնենք, դառնաս մեր երկնքով,
Դու, մեր արև, պայծառ շրջա,
Մեր թշնամին տեսնի, դողա։

Շվաքիդ տակ ապրինք անվախ,
Թուրդ կարե՞ թե՛ աչ, թե՛ ձախ։
Թո՞ղ երկիրդ անծայր լինի,
Արևն այնտեղ մայր չմտնի։

Աղա Նազար, մեծ Թագավոր,
Թուրդ, թագդ շնորհավոր,
Ապրիս հազար, Աղա Նազար,
Որ մեկ զարկով չարդես հազար։

Մեծ հանդեսներով, հաղթական ու ծաղկեպսակ կամարների տակով տարան Աղա Նազարին քյոշք ու սարայը։

Լողացրին վարդաջրով, անուշաբույր յուղերով օծեցին ոտքից գլուխը, փղոսկրե սանրով մազերը սանրեցին, հագցրին գոհարազարդ արքայական զգեստներ և խնդրեցին գահ բարձրանալ։

Դրոշակը տարան քյոշք ու սարայի դարպասի ճակատին բարձր կանգնեցրին, որ հաղթական ծածանի հպատակների վրա՝ որպես հովանի, թշնամիների վրա՝ որպես սարսափ։

Թուրը կախեցին գահի վերևը՝ նախկին թագավորների սխրագործ թուրերի մեջտեղը։ Ազնիվ էշն էլ, որ իր տիրոջ փառքի մեջ իր արդար բաժինն ուներ, փաթաթեցին ոսկեթել ծածկոցներով, տարան արքայական ախոռը, տեղ ավին նժույգների վերևը ու մսուրքի մեջ անպարպելի դարի՝ ընտիր, հատ-հատ մաքրած։ Պարապած թագավորի չքնաղ թագուհին եկավ, խոնարհ գլուխը վեր բերեց նոր թագավորին և ասաց.

— Շնորհավոր լինի թագդ, Աղա Նազար, դու իմ թագավոր, դու իմ անհաղթ ամուսին։— Եվ Աղա Նազարը թագավոր-ամուսնու պես գրկեց թագուհու նազուկ մեջքից և տեղ հրամայեց իր աջ կողքին։

Տերության ամբողջ ժողովուրդն ընկավ մեծ ցնծության մեջ՝ այսպիսի խելոք ու հզոր թագավոր ունենալու համար։

Աղա Նազարն էլ իր ավազակներին կարգեց մեկին վեզիր, մյուսին՝ նազիր, մեկին՝ դահճապետ, մյուսին՝ զանձապետ, մեկէլներին՝ զորապետներ ու նահանգապետներ։

Աղա Նազարը նստել հանգիստ թագավորում է, վեզիր ու նազիրը կառավարում են երկիրը և օրենքներ հնարում, դահճապետը գլխատում է օրինազանցներին, իսկ զանձապետը Աղա Նազարի պատկերով փող է օրինազանցներին, իսկ զանձապետը Աղա Նազարի պատկերով փող է կտրում։ Զորապետները նոր հողեր են կցում տերության հին հողերին, նահանգապետները գանձերի վրա նոր գանձեր դիզում։

Աղա Նազարի համբավը տարածվել է ամեն կողմ։ Նրա հին կնիկն էլ լսեց այդ համբավը, եկավ կարոտով գրկեց փառապանծ ամուսնուն, գովեց նրա խելքն ու շնորհը և թագավորական հրամանով նստեց նրա ձախ կողքին։

Եվ տարի բոլոր հազար ու մեկ ջահերով լուսավորված էին Աղա Նազարի քյոշք ու տարայները, տարի բոլոր խնջույք կար մարմարե կամարների տակ։

Դուրսը թնդում էին զորքի կեցցեները, և թմբուկները՝ որոտում թագավորի փառքի համար։ Բազմել էր Աղա Նազարը գահի վրա, թագը գլխին, ծիրանին ուսերին, չքնաղ թագուհին աջ կողքին, իրեն կնիկը ձախ կողքին։

Ոսկե սկուտեղներով չնաշխարհիկ պտուղներ և անուշեղեններ էին մատուցում։

Թագավորի ոտների տակ շարվել էին տերության մեծամեծները և նրանց գեղեցիկ կնիկները։

Մետաքսե բարակ քողերի մեջ մշուշված սիրուն աղջիկները և ոսկեգանգուր մանկլավիկները պարում էին ու երգում։

Աղա Նազարը ծխում էր մարգարտե չիբուխը ու բյուրեղե գավաթով խմում քառասուն տարվա գինին։

Խմում էր գինին ու շոյում էր նազելի թագուհու այտերը և մեղմիկ ասում ականջին.

— Տեսա՞ր, թագուհիս, ես ինչ խելոք ու կորիճ մարդ եմ. գզիր տեղից ելա, հաղթեցի թագավորին, դառա թագավոր։ Աշխարհքիս երեսին բախտ-մախտ դատարկ բաներ են, խելք ու կորիճություն է մենակ պետք։

Թագուհին մանրիկ ժպտում էր ու մարմարե այտը դեմ անում Աղա Նազարին. քաջ ու կորիճ Աղա Նազարն էլ անուշ պուչ էր անում ու խմում քառասուն տարվա գինին։

Խմում էր ու գառնում իր կնկանը, բոթում էր նրա կողքը ու փքսփքսում ականջին.

— Տեսա՞ր, կնիկ, ինչպես թագավոր դառա։ Բա՛ ես չէի՞ ասում, թե խելք ու կորիճություն դատարկ բաներ են աշխարհքիս երեսին. մարդս բախտ պետք է ունենա, մենակ բախտ...

Ծիծաղում էր կնիկը ու կարմիր թուշը դեմ անում Աղա Նազարին. բախտավոր Աղա Նազարն էլ գզիրի իրեն հին սովորության պես կծում էր կնկա թուշը ու խմում քառասուն տարվա գինին։

Հետո թիկն էր տալիս գահի բեհեզյա բարձերին, ծխում էր մարգարտե չիբուխը և միտք էր անում աշխարհքի բանը ու քա՛հ-քա՛հ ծիծաղում։

***

Եվ մինչև այսօր էլ կա ու կենդանի է Աղա Նազարը. նստել է գահի վրա, ծխում է մարգարտե չիբուխը և միտք է անում աշխարհքի բանը ու քա՛հ-քա՛հ ծիծաղում...

1911 դեկտեմբերի 22,
Իզմիթ

ՆՈՒԿԻՄ ՔԱՂԱՔԻ ԽԵԼՈՔՆԵՐԸ

Ժամանակով մի քաղաք է եղել Նուկիմ անունով։ Անունը կա, բայց տեղը մինչև հիմա հայտնի չէ։

Այդ քաղաքը շատ ցուրտ է եղել՝ երկու ձմեռ, մի ամառ։

Մի օր ժողովուրդը հարա-հրոցով հավաքվում, ափ է առնում քաղաքի առաջավոր մարդկանց դռները.

— Էս քաղաքում էլ ապրել չի լինի, սառանք, ախպեր, սառա՛նք։

Ելեք պատգամ գնացեք թագավորի մոտ. գնացեք, թագավորին ասեք, թե որ երկու ամսա, մեկ ձմեռ չանի՝ մենք էս քաղաքում էլ մնացողը չենք։

— Ժողովրդի կամքը սուրբ է,— ասում են առաջնորդները, որ քաղաքի խելոքներն են լինում, խորհրդի են նստում և որոշում են թագավորի մոտ գնալ խնդրելու և, թագավորի սիրտը շահելու համար էլ մի քսակ ոսկի նվեր են տանում ժողովրդի կողմից։ Շինում են մի երկար նիզակ, նիզակի ծայրից կախում են քսակը և՝ «Թագավոր, որտեղ ես, գալիս ենք քեզ մոտ», ասում են քաղաքի առաջավորներն ու ճամփա ընկնում։

Մի ավանի միջով անցնելիս տեսնում են խանութպանի մեկը կրակի կարմիր բոցի պես մի բան է ծախում։ Դրա տեսքը շատ է հրապուրում Նուկիմ քաղաքի պատգամավորներին։

— Էդ ի՞նչ ես ծախում, ախպեր,— հարցնում են նրանք։

— Տաքդեղ,— պատասխանում է խանութպանը։

Առաջին անգամն են տեսնում տաքդեղը, առաջին անգամն են լսում տաքդեղ անունը։

— Ուտելու բա՞ն է,— հարցնում են նրան։

— Ուտելու բան է, բա ո՞նց,— պատասխանում է խանութպանը։

— Որ էդպես է, մի կշեռք էդ տասնչորս տուր։

Ավագ պատգամավորը տաքդեղից մի հատ կծում է, բերանը մրմրում է, աչքերը արցունքոտվում են, նետում է մյուսին, սա էլ մի կտոր կծում է, նետում է մյուսին։ Էսպես մինչև վերջին պատգամավորը։ Բերանները մրմռալով, աչքերը արցունքոտելով, խանութպանին հայհոյելով շարունակում են ճանապարհը։

Մի ուրիշ ավանով անցնելիս, տեսնում են խանութպանի առաջ սալաների վրա դարսված... չեն իմանում ինչ։

— Էդ ի՞նչ ես ծախում, ախպեր։

— Խաղող։

Առաջին անգամն են տեսնում խաղողը, առաջին անգամն են լսում խաղողի անունը։

— Ուտելու բա՞ն է,— հարցնում են նրան։

— Էն էլ ո՞նց,— պատասխանում է խանութպանը։

— Դե, մի կշեռք տուր։

Վճարում են, առնում ուտում, համը բերաններն է մնում։ Շրթունքը լիզելով, խանութպանին օրհնելով, շարունակում են ճանապարհը։

Մի ուրիշ ավանով անցնելիս տեսնում են խանութպանի մոտ կտոր-կտոր ճերմակ բաներ։

— Էդ ի՞նչ ես ծախում։

— Շաքար։

Շաքա՞ր... Ո՛չ տեսել էին, ո՛չ լսել։

— Ուտելու բա՞ն է,— հարցնում են նրանք։

— Էն էլ ո՞նց։

— Դե մի կշեռք տուր։

Վճարում են, առնում, կոթ-կոթ ուտում, համը բերաններն է մնում։

Գնում են, գնում, գիշերը դրա է հասնում, նիզակը տնկում են գետնի մեջ, իրենց էլ պառկում են նրա շուրջը, միամիտ քնում։ Գողը ինչպե՞ս կարող է բարձրանալ վերն, նիզակի ծայրից կախված քսակը առնել, իսկի խելքի մոտ բա՞ն է։

Հակառակի պես, գիշերը մի ճամփորդ է անցնում էդ տեղերով, տեսնում է մի տնկված ձողի շուրջը մարդիկ անուշ քնել են։ Վեր է նայում՝ ձողի ծայրից բան է կախված։ Վար է բերում ձողը, բաց անում քսակը՝ մեջը դեղին ոսկի։ Ոսկին լցնում է իր խուրջինի մեջ, փոխարենը քսակի մեջ լցնում է խիճ ու ավազ, ձողը նորից կանգնեցնում։

Առավոտը Նուկիմ քաղաքի խելոքները շարունակում են իրենց ուղին։ Հարցնելով, հարցնելով հասնում են թագավորանիստ քաղաքը։ Մայրաքաղաքի դուռն մոտ նստում են, ծախսերի հաշիվ են տեսնում, որ գումարը իրար մեջ այդպես բաժանեն։

Ավագ պատգամավորն ասում է.

— Էն կարմիր բանը, որ ես կերա, քեզ գցեցի, դու կերար, մեկէլին գցեցիր — մեկ արծաթ. էն բանը, որ ասված շինել էր, մենք քանդեցինք՝ մեկ արծաթ. էն բանը, որ բանց ձյուն ճերմակ էր, քանց մոր կաթ անուշ՝ երկու արծաթ։

Հաշիվը տեսնելուց հետո գնում են թագավորի պալատի դռանը կանգնում։ Դռնապանը իմաց է տալիս պալատականներին, պալատականներն էլ իմաց են տալիս թագավորին, թե Նուկիմ քաղաքից պատգամավոր են եկել։ Թագավորը հրամայում է ներս կանչել նրանց։

Պատգամավորները գլուխ են տալիս թագավորին և բարև բռնած կանգնում են առաջը։

Ավագ պատգամավորը քսակը մոտեցնում է թագավորին և ասում է.

— Թագավորն ապրած կենա, մենք Նուկիմ քաղաքի ժողովրդի կողմից ենք եկել խնդրանքով, էդ մի չտակ ոսկին էլ քեզ նվեր ենք բերել ժողովրդի կողմից։ Մեր քաղաքը շատ ցուրտ քաղաք է, երկու ձմեռ, մեկ ամառ։ Թե որ երկու ամսա, մեկ ձմեռ չանես, էլ մեր քաղաքում մենք մնացողը չենք, լավ իմացած լինես։

Մյուս պատգամավորները գլխով հաստատում են նրա ասածը։

Թագավորի գանձապահը, որ վերցրել էր քսակը, թագավորի ականջին փսփսում է, թե ոսկու տեղ խիճ ու ավազ է։

Թագավորը մտածում է՝ արանք նպատակո՞վ են ոսկու տեղ խիճ ու ավազ բերել, թե՞ միամիտ սրտով։ Փորձելու համար հրամայում է նրանց առաջ մի սինի սև սալոր դնեն, խառը սև լոչճների հետ։

Պատգամավորները վրա են պրծնում. ավագ պատգամավորը ասում է.

— Տղե՛րք, առաջ ոտավորը ուտենք՝ չփախչեն, անոտը մեր ծառան է։

Թագավորը տեսնում է նրանց խելքի չափը և, զառնալով նրանց ասում է.

— Գացեք ձեր տները, մինչև տեղ հասնեք՝ մեկ էլ ամառը եկած կլինի։

— Թախտիդ հաստատ մնաս,— ասում են պատգամավորները և ուրախ-զվարթ դառնում են իրենց քաղաքը։

1940 հուլիսի 15,
Բորժոմ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ՇԱՔՐՈ ՎԱՅՆՇՎԻԼԻ

1905-ին էր, հավիտյան անմոռանալի այդ թվականը, երբ անծայրածիր Ռուսաստանի վրա, նրա մի եզրից մինչև մյուսը, հեղափոխության գրոշն էր ծածանվում, որի տակ հավաքվում էին բոլոր իրավազուրկները, բոլոր տանջվածները, բոլոր ազատասերները։

Այդ գեղեցիկ տարվա մեջ, մայիսյան մի առավոտ, Օսեթիայի մշտադալար հովիտներից մեկում ժողովվել էր գյուղացիների խուռն ամբոխը՝ լսելու հեղափոխական քարոզչին։

Քարակուռ բարձունքի վրա կանգնել էր մի կրակոտ երիտասարդ՝ ձախ ձեռքին բարձր բռնած կարմիր դրոշակը, որի վրա փողփողում էին «Ազատություն, եղբայրություն, հավասարություն» նշանաբանները։

Նա հարատահարված ժողովրդի վիճակն էր նկարագրում և իշխանների արյունարբուությունը։ Բոցաշունչ խոսքերով ժողովրդի իրավունքներն էր պատչամում և հեղափոխական կռվի նպատակը։

— Ես վերջացրի իմ խոսքը,— ասաց քարոզիչը,— մենք հող և ազատություն ենք պահանջում։ Հողը և ազատությունը տերերի և իշխանների ձեռքին են. մենք էլավով պիտի տիրանանք մեր իրավունքին՝ արյունով և սրով։ Հիմա ձեզնից ո՞վ կկամենա կռվել և արյուն թափել հողի և ազատության համար. լամեցողը թո՛ղ դա, կանգնի այս դրոշակի տակ։

— Մենք բոլորս կլինենք, մենք բոլորս պատրաստ ենք մեռնելու. սուրբ է մեզ համար ազատության դրոշակը...— Մի մարդու նման որոտաց ժողովուրդը։

Երբ լռություն տիրեց, նորից խոսեց քարոզիչը։

— Կեցցե՛ ժողովուրդը... Հիմա ձեր միջից ո՞վ կարող է միշտ բարձր պահել այս սուրբ դրոշակը, ո՞վ կարող է զեկավարել ժողովրդին դեպի կռիվ։ Ո՞վ է նա, որ մինչև վերջին շունչը, մինչև արյունի վերջին կաթի-

լը պիտի կռվի այդ դրոշակի համար, ո՞վ է նա, որ չի վախենա մենամենակ գնալու հազարների դեմ, առանց նայելու, առանց ափսոսանքի իր կյանքը զոհելու, և մի՛շտ առնական, և մի՛շտ հպարտ, մի՛շտ անդավաճան... Լավ խորհեցեք, դժվարին է իմ առաջարկը, լա՛վ խորհեցեք...

Լռեց քարոզիչը, և տիրեց բաղմախորհուրդ մի լռություն. հարյուրավոր ճակատներ կնճիռներով մթագնեցին...

— Նորից ասում եմ, ո՞վ է նա, որ կառաջնորդն ժողովրդի դլուխն անցած՝ դրոշակին միշտ անձնվեր՝ դեպի կռիվ ու դեպի մահ. երբ ամենքը կլքեն ու կխուսափեն, ո՞վ է նա, որ մենակ կկանգնի բռնակալության բոլոր բանակներին դեմ-դիմաց...

— Ե՛ս,— ճեղքեց քարոզչի խոսքը մի արծվի ճիչ։

— Ո՞վ է նա, թո՛ղ առաջ դա,— գոչեց քարոզիչը։

Ոտքի նման ալեկոծվեց ժողովուրդը. նրա խորքից, ասես ծովի միջից թևերը թափահարելով, առաջ էր լողում մի երիտասարդ։ Բոլորի աչքերը՝ մի աչք դառած, որոնում էին այդ խիզախին։

— Շաքրո Վալիշվիլին է, Շաքրոն է,— ձայնեցին մի քանիսը, և այդ անունը անցավ բերնե-բերան. և ահագին բաղմությունը խուլ մռնչում էր։

— Շաքրոն է, ճամփա՛ տվեք, ճամփա՛ բացեք։

— Շաքրոն է, Շաքրո՛, Շաքրո՛...

Եվ եկավ, կանգնեց դրոշակի տակ մի երիտասարդ, գյուղական հագուստով, սպառազին և խրոխտ. փափախի տակից արևաո ճակատի վրա ծփում էր նրա մազերի փունջը. կայծակնացայտ աչքերը ձգած դրոշակին՝ ձեռքը մեկնեց դեպի այն։

— Ո՛չ, դեռ սպասիր,— ասաց քարոզիչը,— գիտեմ, Շաքրո՛, դու քաջ ես, սակայն դու զգո՞ւմ ես այն ուժը, որպեսզի միշտ կանգուն պահես դրոշակը և սառն աչքերով նայես մահի աչքերին։

— Այո՛,— հաստատակամ ձայնով պատասխանեց Շաքրոն,— թող ամբողջ աշխարհը գա ինձ վրա, ես վախեցողը և փախչողը չեմ։ Երդվում եմ ազատության, եղբայրության և հավասարության անունով, երդվում եմ բոլոր սրբություններով, տո՛ւր ինձ դրոշակը։

Այն ժամանակ քարոզիչը դրոշակը փռեց Շաքրոյի գլխի վրա. Շաքրոն հանեց գլխարկը, ծունր իջավ գետին, Լրիք անգամ համբուրեց դրոշակը և երկաթե ձեռքերով բռնեց այն։

***

Այնուհետև Շաքրոն՝ անցած օր, վրացի և հայ գյուղացիների գլուխը, հեղափոխության դրոշակը բարձր բռնած՝ մրրիկի նման սլանում էր հովիտներից դեպի լեռները և լեռներից դաշտերը։

Ահաբեկում էր ժողովրդի ցեցերին՝ վաշխառուներին, հարստահարիչներին. հրդեհում էր կառավարական շենքեր, գերում ու սպանում վատ պաշտոնյաներին։

Կովկասյան լեռներից ու կիրճերից առնական հոգիները հավաքվում էին նրա դրոշակի տակ։ Բոլոր կեղեքողների, իշխանների և պաշտոնյաների ահ ու սարսափն էր նա։ Վրացի իշխան-կալվածատերերը նրա սարսափից ազատվելու համար, կառավարության միջոցով կազմեցին սահմանադրական խմբեր՝ վարձկան սինլքորներից, լրտեսներից և ժանդարմներից։ Կառավարությունը դինեց նրանց կատարելագործված հրացաններով և, վինչեսթերների ընդավարության տակ՝ դուրս բերեց Շաքրոյի խմբի դեմ։

Շատ անգամ Ելիսատեց Շաքրոն, շատ անգամ հաղթող եղավ, բայց մի անգամ, մի գիշերային օր, անակնկալի եկավ. կիրճի մեջ շրջապատվեց թշնամու խմբերից։ Վագրի պես կռվեց, իր խմբից շատերն ընկան, մյուսները փախուստի ավին կամ ծերպերի մեջ թաքցան. ինքը մի քանի արի ընկերներով նեռի նման խրվեց թշնամու խմբի մեջ. անողոք գրնդակը ծանր վիրավորեց նրա ուրը. ձին նույնպես վիրավորվեց և սայթաքվեց դետին, թշնամին ոչ-ոչ բռնեց նրան՝ անասելի տանջանքների ենթարկելով, շղթայակապ, ձեռք ու հարվածների տակ, բերին նրան զինվորական նահանգապետի մոտ։

Երբ ներկայացրին գեներալին, վերջինս հարցրեց.

— Դո՞ւ ես Շաքրո Վալիշվիլին։

— Այո՛, ես ինքս եմ Շաքրո Վալիշվիլին,— հպարտ պատասխանեց նա։

— Դո՞ւ ես այրել, ավերել, սպանել,— թվելով մի շարք անուններ, նորից հարցրեց նահանգապետը։

— Այո՛, ես ինքս եմ այրել, ավերել, սպանել և շատ լավ եմ արել. այդ գեռ սկիզբն է։

— Լռի՛ր, անզգա՛մ,— կատաղած գոռաց գեներալը,— լեզուդ արմատից կպոկեմ. շո՛ւտ ասա, ովքե՞ր էին քո ընկերները։

— Բոլոր ժողովուրդը և ոչ ոք։

— Ովքե՞ր էին, անուններով ասա, ես քեզ կներեմ, եթե ասես. դու

քաջ տղամարդ ես, ափսոս է քեզ պես կորիճին մեռցնելը,— ձայնը քաղցրացնելով ասաց նահանգապետը։

— Ես կյանք չեմ խնդրում. ես սպանել եմ ժողովրդի թշնամիներին՝ ձեր ոհմակից շատերին, դուք էլ սպանեցեք ինձ՝ ժողովրդի բարեկամներից մեկին։ Մեր միջև հաշտություն ու գութ չի կարող լինել և չպիտի լինի։

— Մենք էլ ժողովրդի բարեկամներն ենք,— նույն քաղցրաձայն ձայնով շարունակեց գեներալը,— քեզ մոլորեցրել են ժողովրդի փողերն ուտող քաղաքացի սրիկաները։ Թագավորը մեր հայրն է և բոլորիս լավն է կամենում. մեծ հանցանք է նրա պաշտոնյաների դեմ կռվելը, բայց դու անուս, միամիտ գյուղացի ես, մոլորվել ես։ Դու ասա, ո՞վ էին քեզ խելքից հանողները՝ կոմիտեի մարդիկը, և քեզ ինչերն թագավորը։

— Ինձ ոչ ոք խելքից չի հանել. ես ինքս տեսել եմ իշխանավորներիդ անգութ արարքները և դուրս եմ եկել վրեժս առնելու։ Դուք բոլորդ մեր թշնամին եք, դուք զրկել եք մեզ հողից, հացից, ազատությունից, բոլոր իրավունքներից և դարձրել եք մեզ ճորտեր, անասուններ։ Էլ ասելու բան չունեմ. հիմա հերթը ձերն է. ես իմս արի, դուք էլ ձերն արեք։

Այնուհետև գեներալը շատ աշխատեց մի խոսք կորզել նրա բերանից, սակայն ապարդյուն. Շաքրոն անընդհատ լռում էր, լռում էր քարի պես։

Ենթարկեցին նրան դժնդակ տանջանքների, մեկ-մեկ պոկեցին մազերը, փշրեցին ատամները, սվիններով ծակոտեցին մարմինը, սակայն նա մնաց անհողդողդ և անխոս։

Վերջին անգամ բերին գեներալի առջև։

— Հիմա խելքի եկած կլինես, խոստովանիր, և քեզ կներեմ անպատճառ, ազնիվ խոսք եմ տալիս։

Շաքրոն լուռ էր։

Գեներալը կրկնեց մի քանի անգամ իր «ազնիվ խոսքը». բայց չստանալով ոչ մի պատասխան, հրամայեց ժանդարմներին.

— Կապեցեք ձիու պոչից այս անզգամին և տարեք անտառ, սպանեցեք։

Հրամանի համաձայն Շաքրոյին ոտքերից կապեցին ձիու ագիից և մացառների ու փշերի վրայով քշեցին անտառ։

Ճանապարհի քարերը ներկվեցին Շաքրոյի արյունով, մեջքի մաշկը պոկվել էր և գլուխը վիրավորվել, սակայն այդ անմեղ հերոսը առանց տրտունջի, առանց ցավի մի ճիչ արձակելու, հաղթականորեն երգում էր ազատության երգեր։

Ճանապարհին պատահող գյուղացիները պատմում են՝ ինչպես նա՝

գզգզված մարմնով, փոշու մեջ ծածկված, անընդհատ կրկնել է՝ «Կեցցե՛ ժողովուրդը, կորչի՛ բռնակալությունը, կեցցե՛ ազատությունը»։

Մյուս օրը գյուղացիները գտնում են անտառում Շաքրոյի մարմինը՝ հրացանի բազմաթիվ գնդակներով խոցոտված։ Վերցնում են երկյուղածությունով և տանում, թաղում հայրենի դալարագեղ հովտում, ուր առաջին անգամ անվեհեր և գեղեցիկ Շաքրոն բռնեց ազատության դրոշը։

Եվ հավատում է ժողովուրդը՝ թե նորից պիտի ծնվի իրավունքի և եղբայրության դրոշակը հայրենիքի այս թախծաղաղ լեռների և գլխիկոր կաղնիների վրա և պիտի դուրս գնի դեղեղմանից սիրելի և ազնավուր Շաքրոն՝ նորից բռնելու հեղափոխության սրբազան դրոշակը...

1906

ԳԱՐԻԲԱԼԴԻԱԿԱՆԸ

Սրանից տարիներ առաջ Օդեսայում, այն տանը, ուր ես էի ապրում, իմ սենյակի դեմուդեմը կենում էր մի իտալացի կոշկակար, իր թուլակազմ, եղնիկի պես վախկոտ, տասը-տասներկու տարեկան աղջիկ-թոռնիկի հետ։

Դրացիները նրան անվանում էին Ջիովաննի։

Մերունի իտալացին տնից սակավ էր դուրս գալիս։ Նստակյաց, զբաղված աշխատանքից և կյանքի բեռից կորացած մեջքով՝ նա երբեմն գնում էր շուկա և թևի տակին մի բան դրած վերադառնում տուն։ Եվ ապա մինչև երեկո լսվում էր նրա խցից մուրճի թրխկոցը...

Հիշողությանս մեջ կենդանի պատկերանում է նա հիմա,— բարձրահասակ եղած պետք է լիներ. տխուր էր դեմքը և մտախոհ, բայց ամենագրավիչը նրա աչքերն էին — մի երազուն, մարմանդ կրակով աչքեր, որ մի անգամից վստահություն էին ներշնչում հանդիպողին և գուրգուրում։

Բարձր ճակատի տակից բարությամբ ժպտում էին այդ աչքերը ծանոթների դիմաց, իսկ ձայնը սրտագին էր և բարեկամական։

Այդ հոգեթով աչքերը ինձ քաշեցին դեպի իրենց, և ես մի օր նստս մտա նրա մոտ. նա կռացած էր մի հին կոշիկի վրա, որ սեղմել էր ծերացած ծնկների մեջ և կրունկին մեխեր էր խփում։ Եվ քթի տակ մեղմիկ մրմնջում էր «Մարսելեզի» հաղթական քայլերգը։

Ես բարևեցի նրան, գլուխը բարձրացրեց և սիրալիր ժպտով բարև առավ. մենք դուրսն իրար պատահելիս, իրրև հարևաններ, միմյանց միշտ բարևում էինք։

— Հը՛, ի՞նչ կա, հարևան, գալդ բարի։

— Դի՛հ, հարևանները ենք, եկա, որ գրույց անենք, ինդրում եմ, որ դուք էլ մեկ-մեկ գաք ինձ մոտ,— ասացի ես։

Նա ժպտաց և շարունակեց ընդհատված աշխատանքը։

— Հիմա սա կվերջացնեմ, բարեկամս, իսկանենք հանգիստ գրույց անել. դուք ասեք, ի՞նչ նորություններ կան։

Ես ասացի, որ նորություն չունեմ և սկսեցի պնդել սենյակը.— մի շատ աղքատիկ, անզարդ և նուիրական էլ մութն ու փոքր սենյակ էր. մի դուռ բացվում էր դեպի մի ուրիշ սենյակ, ուր քնում էին պապ ու թոռ։

Այս անշուք, մերկ սենյակի մեջ աչքի էր ընկնում ոսկեզօծ շրջանակի մեջ Գարիբալդիի մեծադիր պատկերը, որ կախված էր ծերունու գլխի վերևը։ Ես մտածում էի,— իսկ՛ոն ծերունի, գոյությյան կռվի անողոք ալիքները նրան քշել, գցել են Հայրենիքից հեռու այս ափերը՝ աղքատ ու միայնակ. բայց նա չէ մոռացել ազգային հերոսին հետը վերցնել. ինչպե՞ս սիրում են իտալացիք այս մարդուն։

Ծերունին հանեց ինձ մտածմունքից.

— Ինչո՞ւ լուռ ես,— հարցրեց նա։

— Հայր Ջիովաննի, սիրո՞ւմ ես դու Գարիբալդիին։

— Օ՛, ինչի՞ր ես ասում, բարեկամ,— զարմացած հնչեց նրա ձայնը,— մարդ էլ չսիրի՞ Գարիբալդիին. նա հոգի՛ էր, հոգի՛, այդպե՛ս մարդ չի եղել ու չի լինի. ով որ նրան տեսել է, էլ ուրիշ բան չի ուզում տեսնի։

— Բայց դու նրան ինքդ աչքով տեսե՞լ ես,— հարցրի ես։

— Ինչի՞ր ես ասում,— նորից զարմացած՝ լայն-լայն բացեց աչքերը.— ո՞նց թե ես նրան տեսել եմ։ Մի՞թե դու չգիտես, որ ես նրա զինվորներից մեկն եմ եղել. ես էլ «Ալպյան որսորդների» բանակի քաջերից մեկն էի, նրա «Հազարյակի» մշտական կամավորներից։ Քանի՞-քանի՞ անգամ ինքը՝ Գարիբալդին, անունս տվել է և ուսիս խփել։

Եվ հանկարծ շոկեց տարիներով կորացած մեջքը, ճակատը պայծառացավ, և աչքերը հուրհրացին։

— Ջուզի՛պպե Գարիբալդի, Ջուզի՛պպե Գարիբալդի... ահա՛ իմ փառքը, իմ անչափ հարստությունը, ահա՛ իմ բախտը, որով ապրում եմ շատերից երջանիկ. նրա սուրբ հոգին գլխիս վերևն է միշտ սավառնում և ասում է ինձ. «Մի՛ ընկճվիր, Ջիովաննի, օտար երկրում մի՛ ընկճվիր. դու միշտ քաջ ես եղել և քաջ էլ մնա՛ մինչև մահ. մեռնելուց հետո միշտ ինձ մոտ կլինիս»։

Ուժգին թափով ղողանջեց նրա ձայնը. դեն շպրտեց մուրճը և հայացքը բեհեց վրաս։

Ես թախանձեցի, որ ինձ պատմե Գարիբալդիի մասին իր տեսածն ու լսածը։

Նա հարգեց իմ հետաքրքրությունը. բարի աչքերը ձգեց վրաս, ապա ձեռքը տարավ ճակատին, կոշտ մատներով, ասես, հարթել ուզեց կընճիռները և մի փոքր մտածելուց հետո սկսեց պատմությունը.

— Սրանից մոտ քառասուն տարի առաջ մեր հայրենիքը, աշխարհների ամենագեղեցիկը, Մայր-Իտալիան օտարազգի թշնամիների ոտքի տակ հեռում էր՝ շղթայակապ և սորուկ։ Բոլոր լավ, ազնասիրտ իտալացիները ամոթահար էին և վրեժխնդիր, բայց ամենից շա՛տ արյունոտվում էր հայրենիքի վշտով Գարիբալդիի մեծ սիրտը, և նրա վրեժը մեր ծոլերից խորն էր և ուժեղ։

Նա շա՛տ անգամ էր դուրս եկել կռվի դաշտ, թե՛ մեր հայրենիքի և թե՛ ուրիշ ճնշված հայրենիքների համար. և այս անգամ էլ ձայն ավեց Գարիբալդին և կանչեց հայրենիքի այն բոլոր քաջերին, որոնք ուրախությամբ կուզեին կռվել և մեռնել հայրենիքի համար։

Այն ժամանակ ես մի բան և հինգ տարեկան երիտասարդ էի։ Երբ լսեցի նրա մարտահրավերը, սիրտս թնդաց, թողեցի ծնողներիս, գինավաճառեցի և բաղեի պես թռա նրա մոտ. նա այն ժամանակ Լոմբարդիայի դաշտումն էր, Թուրինոյի մոտ։

Երբ նրան ներկայացա, քաղցրությամբ հարցրեց անունս. այն ժամանակ մի փոքր ալեխառն էր նրա մորուքը։ Օ՛հ, ի՞նչ գեղեցիկ էր նա— իսկական տղամարդ, առույգ և ուժեղ, իսկ հայրական գթով լի աչքերը փայլում էին հայրենիքի սիրով և վրեժով։

Նրա գլխի վերև ծփծփում էր սուրբ հայրենիքի դրոշակը. այդ դրոշակի տակ ես ուխտեցի կռվել և անձնազոհվել հայրենիքի համար, ազատության համար, Գարիբալդիի և ընկերներիս համար։

Մեր «Ալպյան որսորդներիս» զինավառ, հայրենասեր վաշտերը ուրախ երգելով անցնում էին Լոմբարդիայի ծաղկոտ դաշտերով, մենք բոլորս քաջ տղերք էինք, թռած-եկած ժայռոտ կղզիներից, Ապենինյան կատարներից, կապույտ ծովի ափերից։

Ա՜խ, ինչքա՜ն լավ է, վեհ է կռվել հայրենիքի համար լավ ընկերների հետ մեկտեղ, մեռնել հայրենիքի համար լավ ընկերների գրկում...

Ա՜խ, անցած անգին օրե՛ր... գիտե՞ս, մենք ինչպե՞ս էինք սիրում իրար, զինվորներս. մի տան պես էինք։ Քաղց ու ծարավ, ցուրտ ու անձրև, անքուն գիշերներ սիրով էինք տանում և մեր վերքերով պարծենում էինք։

Ինչպե՞ս էին սիրում մեզ իտալացի գյուղացիները, գրկաբաց էին ընդունում մեր հաղթական կտրիճներին։

Էհ՜է, Գարիբալդի. ինչպիսի՜ սիրտ ուներ. հո հրամայող չէր, այլ մեր ընկերն էր, մեր հավասարը. մեզ հետ տանում էր ամեն դժվարություն, և ավելին, նույնիսկ՝ կովի ամենատաք տեղը ինքն էր առաջ նետվում։ Ա՜խ, նա որ երևում էր մեր շարքերում, կրակ էինք կտրում և առյուծ դառնում։ Մարդ զարմանում էր, թե ինչպե՜ս նրա բարի, գթոտ աչքերը մեզ խրախուսում էին փշրել, սպանել, կոտորել թշնամուն։

Եվ մենք միշտ հաղթող էինք։ Մեր առաջ միշտ կանգնած էր լինում ինքը՝ Գարիբալդին, սուրը բռնած. և կովում էինք գլխապատառ-սրտապատառ. ու մեռնելիս, աչքներս ձգած նրա վրա՝ «Կեցցե՛ Իտալիան, կեցցե՛ Գարիբալդին» գոչելով հանգչում էինք նրա գրկում, նրա ոտների տակ։ Եվ նա բոլորի համար արցունք ուներ։

Քանի-քանի անգամ մենք ճակատ մտանք թշնամու հետ, որոնց ոչխարների վախկոտ հոտի պես քշում էինք, մաքրում Լոմբարդիայից։ Մենք թվով շա՜տ չէինք, թշնամին մեզնից տասնապատիկ ավելի էր, բայց թիվս ո՞րն է, մեր մի տղան հարյուր էր, հազար էր։

Գարիբալդիի հետ մենք արծվի պես մեխվում էինք թշնամու բանակի սրտի մեջ. խփում-ծակում էինք և փոթորկի ուժով քշում նրանց աշնան տերևների պես — այդ կանոնավոր, թնդանոթավոր, ավստրական-կայսերական բանակները։

Եվ նրանց քշեցինք մինչև Վենետիկի լագունները. պետք է բոլորին ծովը թափեինք, բայց Ֆրանսիայի կայսրը, չգիտեմ ինչո՞ւ, նամակ գրեց Գարիբալդիին և արգելեց առաջ գնալ. ինքը՝ Գարիբալդին, զայրացած, պատռեց կայսրի նամակը և պատռած կտորները ետ ղրկեց նրան, իբրև պատասխան։

Այդ մենք բոլորս տեսանք մեր աչքերով, բայց երբ մեր թագավորը նամակ գրեց Գարիբալդիին, որ դադարեցնի արշավանքը, Գարիբալդին լսեց, և մենք ետ դարձանք սուրբ Մարկոսի քաղաքի մոտերքից։

Այնուհետև մենք քանի-քանի կռիվ ունեցանք Հռոմի մարդադայլի հետ — Պապա Ռոմայի հետ, որը իշխանների և կարդինալների հետ ծծում է գյուղացուն և մոլորեցնում է մարդկանց։

Ես ութ-ինը տարի շարունակ Գարիբալդիի կամավորների բանակումն էի. և ընկերներով մեկտեղ շատ վերքեր ստացանք, որոնցով և լավացավ Հայրենիքի մեծ վերքը։

Իմ սիրելի ընկերներից շատերը ընկան կռվի սուրբ դաշտում. փա՜ռք նրանց, լուսավորվի նրանց հոգին, ես էլ կուզեի մեռնել նրանց հետ, Գարիբալդիի աչքերի առջև, բայց բախտը ինձ ուրիշ բան էր կամեցել։

Նրա մեծ սրտի իղձը կատարվեց. ազատվեց սիրելի Իտալիան, միացավ, զորեղացավ... Վերջացան մեր կռիվները, բոլորս ցրվեցինք մեր տները՝ գոհ և երջանիկ, տանելով միասին Գարիբալդիի հետ ապրած փառավոր օրերի հուշերը։

— Ահա՜ այստեղ է ապրում նա — իմ սրտի մեջ,— այս ասելով խփեց նա իր ոսկրացած կրծքին.— և նրա պատկերը կրծքիս վրա՜ է.— և նա զողզոջուն ձեռքով քանդեց բաճկոնի կոճակները և հանեց պարանոցից կախած մի փոքր նկար — Գարիբալդիի գլուխը...— Այս փոքրիկ նկարները դուք կգտնեք ամեն մի ազգատ իտալացու կրծքի վրա — գյուղացիների, հովիվների... ինձնից անբաժան պիտի մնա այս նկարը, և գերեզմանիս մեջ, հավիտյան...

Այստեղ ծերունին կանգ առավ, նայեց ժամացույցին, ապա և իմ հիացած երեսին։

— Երջանիկ ես դու, հայր Ջիովաննի, որ Գարիբալդիի բազկներից ես և պարտքդ կատարել ես դեպի հայրենիքդ, բայց ների՛ր, մի հարց տամ. ի՞նչը ստիպեց քեզ քո վերքերով առողջացած այդքան թանկագին Իտալիայից հեռանալ, ընկնել այս օտար աշխարհը, անծանոթ մարդկանց մեջ։

— Էհ՜է, բարեկա՜մ, բարեկա՜մ,— հառաչեց նա, և նրա մի փոքր առաջ ոգևորված աչքերի թարթիչներից երկու կաթիլ արցունք կախվեցին. մի լլավացած վերք կար ծերունու սրտի մեջ, որին ես անզգուշությամբ դիպա։— Ես ապրեցի երկար ժամանակ իմ մայրենի օջախի տակ և աչքովս տեսա Իտալիայի մեծությունը. հուղարկավորեցի դեպի անմահություն Գարիբալդիի սրբազան աճյունը... Ա՜խ, մարդ չի հասկանում, ինչո՞ւ են մեռնում այդպիսի մեծ մարդիկ... բայց ի՞նչ ասեմ... այնքան թանկ արյուններով՝ դրսի թշնամիներից, օտար տերերից ազատված Իտալիան ընկավ մի նոր տեսակի գերության մեջ — մեր արյունակից տերերի ճանկն ընկավ, հարուստների և կառավարության պաշտոնյաների։ Հարուստները ոսկի շղթայով կապեցին-կաշկանդեցին Իտալիան և իրենց ծանր թաթը դրին իտալական չարքաշ ժողովրդի սրտին և ճնշեցին։ Ազգատ է շա՜տ մեր գյուղացին ու բանվորը. իմ որդին սպանվեց մեր կառավարության զինվորների ձեռքով, մի բանվորական գործադուլի ժամանակ, իսկ հարսս՝ գործարանի ծանր աշխատանքից թոքախտով մեռավ։ Ես դարձա ապերախտ հայրենակիցներիս դեմ, որը թոռիս վեր առա, հեռացա այն դաշտերից, որոնց վրայով ես էլ հաղարների հետ հաղթական անցել էի մի ժամանակ։ Ես չցանկացա ստրուկ լինել մեր ազատած հայրենիքում։ Է՜հ, մենք էլ մարդ ենք, հպարտություն ունինք։

Նով նստեցի և եկա այստեղ. միևնույն է, մի տեղ պետք է գնամ... Եվ ես բանի ողջ եմ. չեմ վերադառնա նորից ստրկացած Հայրենիքս. հիմա ո՞չ Գարիբալդի կա, ո՞չ էլ ում ունիմ կռվելու... Բայց կուլենայի գոնե աճյունս թաղվեր իմ Հայրենիքում, որ տարիներ հետո, երբ վերջնականապես Իտալիան իր ստրուկ, շարքաշ ժողովրդով ազատվեր հարստահարության լծից.— հաղթական ժողովրդի ազատ ձայները լսեի, ինչպես լսեցի երիտասարդ օրերում...

Բայց ո՞վ է տանելու մի աղքատի աճյունը այդքան հեռո՞ւ...

Է՜հ, թող ազատվի Իտալիան, հեռվից էլ կլսեմ...

Ես ապրում եմ հիմա իմ թոռիս համար. ասուված կյանք տար ինձ այնքան, մինչև որ թոռիս իր սեփական տունների վրա կանգնեցնեի, հետո մեռնեի. ուրիշ ոչ մի իդձ չունիմ հիմա. ի՞նչ է լինելու թոռնիկիս վիճակը, եթե ես շուտ մեռնիմ... Բայց Գարիբալդիի մեծ ոգին, որ միշտ գլխիս վերևն է, խրախուսում է ինձ, և արդեն նրա ոգով եմ ես մխիթարվում այս աշխարհում. երբ օրս հասնի, ո՜հ, այն ժամանակ ես Գարիբալդիի մոտ կլինեմ, այնտեղ, երկնքում...

Խզվեց ծերունու ձայնը. աչքերը բարձրացրեց վերև, և ապա կանգ առավ երկար ու բարակ՝ Գարիբալդիի նկարի վրա...

Տիրեց մի երկյուղած լռություն...

Ես չուզեցա խանգարել նրա հոգեալացումը, որ վեհ էր և նվիրական։

Այդ ժամանակ ներս մտավ թոռնիկը և վախվխելով բարևեց ինձ ու մտավ մյուս սենյակը։ Ես վեր կացա, համբուրեցի ծերունու կոշտացած, սևացած ձեռքը, գլուխ տվի և հեռացա։

Տարիներ հետո, երբ ոտքս նորից ընկավ Օդեսա, շատ որոնեցի ծերունուն, բայց չգտա։ Կարոտով նայեցի նրա վաղեմի բնակարանին և մեկ-մեկ վերհիշեցի նրա բոլոր խոսքերն ու շարժուձևերը։

Ո՞վ գիտե, ուր է նա հիմա. արդյո՞ք նորից՝ հոգին չքեղ երազների մեջ՝ գրկել է և ամուր սեղմել մանր ու ընչին մարդկանց կոշիկները իր առնացի, հերոսական սրտի վրա և համբերությամբ կարկատում՝ իր վերջին պարտքը կատարելով թոռնիկի հանդեպ, թե գոյության կռվի դաժան ալիքները, որ այնպե՞ս զորեղ են աղքատներին փշրելու, որ այնպե՞ս զոհիկ են դևպի մեծություններն ու գեղեցկությունները, վերջնականապես խորտակել են այդ չքնաղ բեկորը և հողերին հավասարեցրել ու որբուկին թողել ապերախտ հայրենիքից հեռու, նյութապաշտ մարդկանց մեջ՝ խեղճ ու անօգնական...

1907

ՔՈՒՐԴ ԱՄՈՆ

Ջանգվի ափին խաչաձև նստել է մոայլ ու տխրագեմ Երևանի բանտը։

Այս վիթխարի խաչի ձախ թևի վրա մեր խցերն էին գտնվում. ես միայնակ էի իմ խցում բանտված. մի փոքրիկ լուսամուտ նայում էր Արագածին, որի միայն բյուրեղափայլ գագաթն էր հայացքս գուրգուրում։

Դուռս բացվում էր դեպի նեղ և երկայնաձիգ միջանցքը, իսկ իմ դռան հանդեպ կար մի խցի մեծությամբ մի ուրիշը, ուր բանտարկված էին վեց մարդիկ — մի քուրդ՝ Ամո անունով, մի հայ՝ Պողոս անունով. և էլի մի հայ, մնացած երեքը՝ թուրքեր։

Դուռս միշտ փակ էր, կողպած, նրա վրա կար մի փոքր անցքծակ, որի միջով դիտում էին մեզ պահակները, և որտեղից բանտարկյալներս հաց, ջուր էին տալիս։

Հարևան բանտարկյալներս միմյանց տեսնում և խոսում էինք այդ անցքի միջով, որն այնքան փոքր էր, որ մի երեխայի գլուխ հազիվ տեղավորվեր։

Երբ պահակները հեռանում էին միջանցքից կամ նստած տեղերում մրափում, բանտարկյալներս մոտենում էինք դռներին, անցքերից իրար ձայն տալիս և սկսում էինք խոսել։

Եվ ինչե՞ր չէինք խոսում. մեր միակ մխիթարանքը զրույցն էր. խոսում էինք մեր անցյալ օրերից, լավ հիշողություններից, պատմում էինք զանազան դեպքեր ու անցքեր, առակներ էինք ասում, երգում ցած ձայնով։

Ամեն օր խոսում էինք, և մեր զրույցներին վերջ չկար. մեկը իր տեսած երազն էր պատմում, մյուսը՝ տնից ստացած տեղեկությունները. և ապա սկսվում էին ավելի համեղ զրույցներ — մեր ճանապարհորդություններից, մանկությունից, սիրուց, արկածներից և այսպես ամեն օր, ամեն հաջող ժամին...

Միասնական բանտը, տանջանքը մեզ բոլորիս միացրել էր. եղբայրացել էինք միևնույն վշտի և տառապանքի մեջ։ Քաղաքական հանցավորն ու քրեական հանցավորը, թուրքն ու հայը, քուրդն ու ասորին եղբայրացել էին իրար հետ։

Ամեն օր աշխատում էր սփոփել մյուսին. երբ գրսից մեկը մի բան էր ստանում՝ ծխախոտ, շաքար, միրգ՝ խկույն սիրով բաժին էր հանում ուրիշներին։

Երբ հիմա՝ տարիներ անց հիշողության մեջ կենդանանում են այդ տոռապալ, գունատ դեմքերը — սիրտս լցվում է մի անհուն սիրով դեպի նրանց։

Մայիսյան մի խաղաղ և թովիչ երեկո էր. քաղաքի հեռավոր տներից ժպտուն աչքերի պես փայլփլում էին ճրագները. մեղմ հովը բերում էր իր թևերի վրայով ուրախության ձայներ, սիրո երգեր և բարձր քրքիջ, իսկ մեր բանտը լուռ էր՝ հսկա գերեզմանի պես։

Բանտարկյալները լուռ էին. արդյոք քնե՞լ էին նրանք, թե գարնան գգվող նրեկոն նրանց հոգին կախարդական աշխարհն էր տարել, ուր ազատության և երջանկության շքեղ երազները մոռացության են տալիս բանտի մռայլը և ծանր մղձավանջը...

Բանտում ամենքը երազում են գիշեր ու ցերեկ, ցերեկ ու գիշեր և ամեն մի բանտարկյալի աչքերի մեջ երազն է շողում, ազատության լքնաղ երազը...

Երբեմն միայն խոր լռությունը խոցում էր մի տխուր երգ, խավ հառաչանք և շղթաների սրտմաշուք շառաչը...

— Է՛յ, ախպեր ջան,— լսեցի Ամոյի ձայնը, որ ինձ էր կանչում. ես մոտեցա իմ դռանը.— արի՛ մի քիչ խոսենք, սիրտս շա՛տ նլած է, տխուր եմ,— ասաց Ամոն։

— Սիրելի՛ս, տխրելու ի՞նչ կա որ... շատը գնացել է, քիչն է մնացել. այնքանը տարել ես, մի քիչ էլ տար, կվերջանա, ի՞նչ մնաց որ...

— Մնաց երեք ամիս. տասն օր, հոգիս դուրս կգա, մինչև քաշեմ էսքանը. անցած վեց ամիսն աչքիս չերևաց, ամա էս մնացածը չեմ կարող. էն ձմեռ էր, ոչինչ, հա՛ դուրսը, հա՛ ներսը. իսկ հիմա գարո՞ւն է, գարո՞ւն է,— հառաչեց Ամոն։

Մի երիտասարդ, առույգ և սիրուն մարդ էր Ամոն. մեկին վիրավորելու պատճառով ինն ամիս բանտ էին վճռել. նոր էր նշանված։

— Ամո ջան, դիմացի՛ր, բա ես ի՞նչ անեմ, որ մի տարի նստել եմ ու դեռ չկիտեմ, թե որքա՞ն էլ պիտի նստեմ։

— Քու բանն ուրիշ է. մեկ՝ որ դու քաղքցի ես, միշտ տանն էք, սարի սովոր չեք. մեկ էլ՝ որ նշանված չես, աչքդ մուրազի չէ։

— Դե՛հ, ավելի լավ, որ դուրս գաս՝ հիմի սարն աչքիդ ավելի անուշ կերևա, նշանածդ՝ ավելի սիրուն։

Թեթև ժպտաց նա։

— Թե որ ազատվիմ, գիտես, ախպեր ջան, ինչքա՞ն ուրախություն պիտի անեմ. քեզ չեմ մոռանա իսկի. էսօր սիրտս շատ ելավ.— հեռվից տեսա մեր սարերը... է՛յ, սարեր, ջա՛ն սարեր... սիրտս թռավ էնտեղ. հիմա քոչը սարն է ելնում, գառն ու ոչխար անուշ-անուշ մայելով, կաթնոտ խոտը արածելով բարձրանում են հով ու սիրուն սարեր. մենակ խեղճ Ամոն է էս կրակի մեջ տապակվում. հիմա սիրուն հարս ու աղջիկ գնգղնգալով, փոփոալո՛վ սարն են ելնում ու ջահել տղերանց սիրտը աչքով այրում. ամա մենակ խեղճ Ամոն սարից կարոտ էս քամբախում տանջվում է...

Հորդ արտասուքները խեղդեցին Ամոյի ձայնը...

— Ամո՛թ է, ամո՛թ, Ամո, մենակ հո դու չես, չէ՞ որ ամեն մարդ էլ սիրտ ունի, սեր ունի. բայց ի՞նչ, պիտի դիմանանք, քաշենք, ցավը մարդը պիտի դաշե. հո քարը քաշելու չէ, տղամարդ չե՞ս, դիմացի՛ր...— խրատական շեշտով բարկացա ես, բայց սիրտս կտոր-կտոր էր լինում այդ բնական մարդու անմիջական տանջանքի վրա։

— Ա՛խ, չեմ կարող դիմանալ, կուզեմ չտանջվեմ, գիտեմ, որ քիչ է մնացել. ուրիշներին տեսնում եմ, որ տարիներ նստել են ու ախ չեն քաշում, ամա սիրտս խոսք չի հասկանում. դիտե՛ս, հիմի սարերն ինչքա՞ն սիրուն են, որ բարով դուրս գաս, արի ինձ մոտ հյուր, կե՛ր, խմի՛ր, քե՛ֆ արա, որսի գնանք... ջա՛ն Ադմաղանու սարեր, ծովից հովը փչում է անո՛ւշ ու բարա՛կ, ջրերը կլկլան, ծաղիկները գառ-վառան, նխշուն, հավքերի ձենները հո պատմել չի լինի. հիմի իրիկվան՝ երգ, պար, ձիերի խրխնջոցը իրար հետ խառնված, վրանների ծուխը... հիմա նշանածս լարաբ ի՞նչ է անում, լարաբ մեկ իմանալի. ա՛խ, Ամո, Ամո, ե՞րբ պիտի սարերի հողը կոխես...

Ես որքան ջանացի զրույցի նյութը փոխել, որ Ամոյի աչքը տանեի ուրիշ կողմ, հնար չեղավ. նա շարունակ իր վշտի ու կարոտի մասին էր խոսում, սարերի զովքն էր անում, ծաղիկների տեսակների անուններն էր թվում, ձորերի ու քարափների կամ գանգաղան աղբյուրների ջրերի մասին էր պատմում, մարալների ու կաքավների կամ ձիերի ու ոչխարների մասին էր խոսում. սիրո քնքուշ խոսքեր էր ուղարկում նշանածին կամ թե չէ անանդի խանկից հայհոյում էր նրան...

Զարմանալի մարդ էր Ամոն. ճիշտ և ճիշտ բնության որդի, հեռուն չէր մտածում և զգացմունքի գերի. այնպես էր հուսահատվում. կարծես կախազան էին վճռել նրան. երբեմն թվում էր նրան, թե այլևս բանտից դուրս չի գալու. նայում էր պատուհանի երկնքով թռչող ագավնուն՝ լալիս էր և բարևներ ուղարկում. դուրսը գողացող ավիտակին նրանի էր տալիս...

Երբեմն անհամբեր՝ սրտի զայրույթից ոտքը խփում էր պատերին, դռանը և գաղանացած պահակների բարկությունն ու հայհոյանքի տարափը բերում։

Ճշմարիտ ասած՝ ես ձանձրացել էի նրա ամենօրյա միատեսակ գանգատներից և խնդրեցի, վերջ տալու համար այդ տաղտուկին, մի երգ ասել. նա անուշ ձայն ուներ և սրտանց էր երգում։

Նա նայեց բակի աջ ու ձախ կողմը և, տեսնելով ոչ ոք չի երևում, սկսեց քաղցր ու մեղմ ձայնով.

Յա՛ր, աչքերդ ասող ու զրույց,
Հանց աղբյուրներն Աղմաղանու
Կրթվոտաս, հանց որ մարա՛լ
Մաղկունանց մեջ Աղմաղանու

Յա՛ր, կրմեռնեմ քու կարոտով,—
Երազ դառնա՛ր, արի՛ ինձ տես.
Դուն սարի վա՛րդ անուշ հոտով,
Ալ թերթերդ շա՛ղ տուր վրես։

Կուրծքդ՝ շարմա՛ղ, կուրծքդ՝ ներմա՛կ,
Հանց որ ձյունը Աղմաղանու,
Ո՛ւրախ-ո՛ւրախ կուտան մազերդ արձակ,
Հանց որ հովերն Աղմաղանու

Երգը դեռ չէր ավարտել Ամոն, երբ դռնապահը խոշոր և արագ քայլերով եկավ դեպի մեզ.— «Ի՞նչ ես ոռնում»,— փրփրած հայհոյեց նա Ամոյին և իշխանական աչքերը սևեռեց վրաս. ասես հրամայեց, որ լռենք և անպատճառ քնենք։

Անցավ մայիսը, և Ամոյին մնաց 85 օր միայն. բայց այս վերջին օրերում խեղճը սարսափելի տանջվում էր, ամեն րոպե օրերն էր համրում, բայց բանտում օրերը տարիներ են, դարեր են, երբեմն հավերժություն են։

Վերջին օրերս նա շա՛տ էր ընկել, նիհարել. հաց չէր ուտում, անքուն էր և շա՛տ էր ծխում. նրա մխիթարանքը ես էի միայն. ինձ թվում էր, որ նա միակողմանի զգալուց և մտածելուց ծայրահեղորեն սրել էր իր կարոտի-վշտի զգացմունքը և հիվանդագին դրության հասցրել։ Հանդիստ չուներ իր խցում. մեկ թոնում էր մահճակալի վրա և լուսամուտից նայում հայրենի սարերին, աչքերից արցունք քամում, մեկ գալիս էր դռան մոտ, ինձ դուրս կանչում.— «շունչ չկա, ախպե՛ր ջան, սիրտս պատռվում է, սարերի հովն էլ չի գալիս, որ մի ծծեմ, ուիսուն և հինգ հատ օր մնաց, է՛լ հոգի չմնաց մեջս...»։

Եվ նորից թոնում էր լուսամուտը, սարերին երկա՛ր ու երկա՛ր նայում... Նա նման էր վանդակում փակված վայրի կատվին, որ շարունակ չանգռում է վանդակի ձողերը և վեր ու վար թռչկոտում, զարկվում դեսուդեն, հազար անգամ փորձում ձողերը և ազատության ելք որոնում...

Սիրտս կտոր-կտոր էր լինում՝ տեսնելով Ամոյի հսկայական, թեև անտեղի տանջանքը. սրտանց ուզում էի, որ նրա երեք ամիսն էլ ես քաշեի, միայն թե նա հենց հիմա դուրս գար բանտից...

Հունիսի կեսին, առավոտ շա՛տ վաղ, Ամոյի խցից ինձ դիլ ձայն տվեցին, ես վեր թռա վախեցած. սովորաբար ես զարթնում էի, երբ բանտարկյալները զարթնում էին, և շղթաների սոսկալի շառաչը խոր քնած տեղս հույնիսկ խոցում էր ոսկի երազներս և ինձ վեր կացնում։

Ես մոտեցա դռանը. Պողոսը՝ գունատ ու աչլայլված՝ ինձ հայտնեց, որ Ամոն լուսամուտից իր գոտիկով կախվել է, մեռել է սրգին... Ես բարացա, ես շվարեցի, ծնկներս դողացին, և առամներս զնդզը-զնդզը իրար խփեցին...

— Մենք քնած էինք, չէինք իմացել,— ասաց Պողոսը,— երբ աչքներս բացինք, տեսանք Ամոն լուսամուտից նայում էր հեռու սարերին, ասացինք, քուրդը առավոտ կանուխ իրենց սարերի կարոտն է առնում. մեկ էլ տեսանք ի՞նչ կարոտ — սև կարոտ. խեղճի ոտները դեսնից վեր են. մոտեցանք, բանը բանից անց էր, աչքերը բաց — մեռած, հենց իմանաս սարերին էր նայում անթա՛թթ — անկո՛ւշտ...

Այդ միջոցին երկու ճնճղուկ ուրախ ծլվլալով թռան-նստան լուսամուտիս երկաթե ձողերի վրա. մեքենաբար նայում էի նրանց. կտուցկտուցի տված՝ գվարթագին ճլվլում էին նրանք։

Օրը անգթորեն գեղեցիկ էր, թարմ, և երկինքը պայծա՛ռ՝ կյանքի պես՝ անո՛ւշ ու շքե՛ղ...

— Խե՛ղճ Ամո, իմ խե՛ղճ Ամո,— փղձկացի ես և բնկա անկրկնուս վրա։

1907

ՀՈՐՍ ԳՈՒԹԱՆԸ

(Մի վասպուրականցու պատմած)

Խոսքն այն օրերի մասին է, երբ Սուլթան Համիդը ղինեց ու բաց թողեց քրդերին, որ կողոպտեն ու սպանեն հայ շինականին։

Մեր գյուղի և հարևան հայ գյուղերի լեռները լցվել էին այդ արյունարբու խմբերով։ Մի բուռ հայ անձնվեր կարիճներ, ճակատ-ճակատի կռվում էին նրանց դեմ, քրդերը մեր բազերի դիակների վրայով միայն ոտի կարողանալին մոտենալ հայ գյուղերին։

Կռիվը օրեր տևեց։ Վաղ առավոտից մինչև ուշ երեկո անընդհատ լսում էինք հրացանների ճարճատյունը, ե՞րբ պիտի վերջանար այս կռիվը. ո՞վ գիտե։ Քրդերի վրա ավելանում էին նոր խմբեր. թեև մեր կարիճների թիվն էլ էր աճում, բայց թշնամու հետ համեմատած շա՜տ չընչին էր։

Գյուղերում մնացել էին միայն ծերերը, պառավները և երեխաները. երիտասարդ կինները թեև չէին կռվում, բայց օր ու գիշեր, անքուն, ոտքի վրա՝ հաց էին տանում կռվողներին, վիրավորներին խնամում, զենքերը սրբում։

Խեղճ ծերունիները, եկեղեցու պատի տակ նստած՝ աղոթք էին մրմնջում և, գլուխները կախ՝ խորհում, խորհում, իսկ պառավները, ցամաքած աչքերը քամելով՝ տան հոգսը քաշում։

Երեխաներս էլ շա՜տ տխուր էինք, ասենք, լավ չէինք հասկանում, թե ի՞նչ է կատարվում և ի՞նչ է սպասում մեզ. սակայն գյուղի խորին տխրությունը մեզ էլ էր համակել. մենք, երդիկների վրա լուռ նստած՝ դիտում էինք կռիվը. և կամ կռիվ էինք խաղում, բաժանվելով երկու խմբի՝ հայ և քուրդ. հայ խումբը միշտ հաղթող էր դուրս գալիս։

Ինձ մի բան միայն շատ զարմանք է պատճառում, եղբայրներս կռվի վայրումն էին. մայրս ամբողջ օրը արցունք էր թափում, իսկ հայրս մեր հին գութանը հանել էր դուրս, և մի անվերջանալի, միօրինակ երգ շրթունքից կախ՝ սուր ուրագով տաշում-տաշտշում էր գութանը, հին փայտերը հանում, նորը՝ դնում, միայն երբեմն, երբեմն, երբ ավելի էր ուժեղանում հրացանների ճարճատյունը, գլուխը վեր էր բարձրացնում, ափը աչքերին հովանի արած՝ նայում էր լեռը, կռվի վայրերը, և ապա, քրտինքը սրբելով և նույն երգը կցելով, շարունակում էր աշխատանքը։

Մի անգամ մայրս սրտանեղած ասաց հորս.

— Ա՜յ մարդ, ի՞նչ քար սիրտ ունիս. տղերքդ լեռը՝ մահի բերան, ողջ գյուղը սրի մեջ, ընկերներդ հավաքվել գյուղի մասին են մտածում,— դու ելել գութանն ես շինում ու դեռ սիրտ էլ ունես՝ երգում ես. ո՞ւմ համար ես շինում, հարցնող լինի. վաղը վայրենի քուրդը կուգա, քեզ էլ կսպանի, մեզ էլ, ու գութանը կտանի։

— Է՜հ, կնիկ, ի՞նչ ես ասում, մեզ կսպանեն, հո՜ գութանն էլ չե՞ն սպանի. ես կշինեմ, հո չեմ քանդում, աշխարհը գութանի վրա է հիմնված, ողջ մնացինք, գութանը մեզ հարկավոր է ու հարկավոր, մեռանք՝ ով որ տանի, կարելի է արդար աշխատանքի սեր զարթնի մեջը, ինձ էլ ողորմիս տա, ի՞նչ իմանաս աշխարհիս բանը...

Մայրս գլուխը շարժեց և հեռացավ։

1912

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԸ

... Աշնան մի պայծառ առավոտ էր. Արարատյան դաշտի հրաշագեղ աշունը. փոշոտ ցանկերի միջից փայլփլում էին խաղողի ոսկեգեն ողկույզները, նուռն ու խնձորները, ասես հրեղեն գնդակներ լինեին. հուռթի այգիներից լիության անուշ բուրմունքն էր խնկում. վերև, բացկապույտում, հավքերի շղթան էր ձգվում, ներքև, ցողաթուրմ արահետներով հայ գեղջուկի սայլերն ու ձիերն էին անցնում բարձած աշնան հազար ու մեկ բերքերով։

Երկու ընկերով գնում էինք հինավուրց Արմավիրի բլրի տակով. մեր գլխի վրա ծփում էր մեհենական սոսիներու խորհրդավոր սոսափը. երկուսս էլ լուռ էինք, տարված մեր տեսիլներով։

Մեր ցուպերը՝ հովիվների պես, մեջքներիս լայնքով դրած արմունկներիս մեջ, քայլում էինք Երասխի հին հունով դեպի մի գյուղ՝ Երասխի ձախ ափին։

Սքանչելիք է Արարատյան դաշտը։

Մասիսը ուղղակի դիմացներս էր, այնպե՞ս պարզ ու վճիտ էր, որ նրա ոտքերից մինչև գագաթը մեկ-մեկ կարելի էր դիտել։ Մի հսկա սպիտակաբաշ առյուծի է նման նա, նստած հետի ոտքերի վրա, ալևոր գլուխը անհունի մեջ, հանդիստ և անվրդով։

Աշնան քաղցր ու մեղմ արևը Մասիսի վերից վար, և Արարատյան երկրի լայնքին ու երկայնքին իր տարածուն ծիրանին էր փռել։

Մատնք մեր նպատակադրված գյուղը։

Հաջորդ օրը, մեկնելուց առաջ դնացինք գյուղական դաշտերի դպրոցը այցի։ ուսուցչի հետ արդեն երեկոյան ծանոթացել էինք. նա նույն գյուղից մի կրակոտ երիտասարդ էր։

Ջարական կառավարությունը փակել էր հայկական դպրոցները՝ քաղաքների և գյուղերի, գրավել էր դպրոցների պատկան շենքերն ու եկամուտ բերող կալվածքները։ Հայ ժողովուրդը զրկվել էր ազգային կրթություն ստանալու միջոցներից և հնարավորություններից։ Հայ ժողովրդի զգայուն մասը գիտակցում էր հայությանը հասած ծանր հարվածը, և հայրենասեր անհատներ ինքնաբերաբար մտածում էին կարելի չափով հակազդել պետական այլասերող քաղաքականությանը։ Հայկական գավառներում տեղ-տեղ, տակավին սակավաթիվ գյուղերում, սկսեցին գործել գաղտնի դպրոցներ, համեստ միջոցներով։

Նախկին դպրոցների ուսուցիչներից ոմանք մնացին իրենց գյուղերում՝ նվիրվելով մանուկ սերնդի ազգային կրթությանը։ Նրանք սովորեցնում էին գրել-կարդալ և հասարակ թվաբանություն։ Հետագայում այդ տարրական դպրոցների քանակը շատացավ։

Այդպիսի դպրոցներից մեկին էր, որ մենք այցելեցինք։

Արաքսի ափին հաստաբուն ընկուզենու տակ խումբ-խումբ, հասարակ նստարանների վրա, տեղավորվել էին բավական մեծ թվով մանուկներ և պատանիներ։

Օրը կիրակի էր. գյուղը հանգստանում էր դաշտային աշխատանքներից, և այդ պատճառով դպրոցը լիքն էր աշակերտներով, ինչպես բացատրեց մեզ ուսուցիչը։ Դպրոցը միայն մի ուսուցիչ ուներ, բայց ուսուցչի եռանդը հասնում էր ամեն տեղ։ Մի խումբ «այբ ու բեն» էր սովորում, մյուս խմբում՝ «Մայրենի լեզու» էին կարդում, երրորդ խմբում Պալասանյանի «Հայոց պատմությունից» էին դաս պատասխանում, մի ուրիշ խմբում «Դավիթ Բեկ» էին կարդում։

Երբ դասաժամը վերջացավ ու աշակերտները պիտի ցրվեին, ընկերս, որ շատ երգ սիրող էր, խնդրեց ուսուցչից, որ աշակերտները մի երգ ասեն։ Ուսուցիչը պատասխանեց, թե ինքը, դժբախտաբար, «բաղաձայն է և դրա համար էլ երգ չի սորվեցրել. սակայն, ավելացրեց, որ աշակերտների միջից երգողներ կան, և առաջարկեց նրանց, թե ով կարող է թող երգեն։ Փոքրերը սիրտ չարին, մեծերն էլ քաշվեցին...

— Բայց լավ կլինի բոլորը գոնե մի ընդհանուր ազգային երգ գիտենան. օրինակ, «Մայր Արաքսին», որ շատ տեղին է, հենց նրա ափին է,— ասաց ընկերս։

Ուսուցիչը մեզ նայեցրեց, ապա մի պահ մտածելուց հետո, գլուխը եռանդուն թափահարելով, դեպի աշակերտներին.

— Հապա՛, սիրելիներս, ամենքդ մեկ շարվեցեք այստեղ,— և հետո մեզ.— ինչպե՞ս չէ, գիտեն և լավ գիտեն։

Ու ձեռքի քանակը թափով վեր բարձրացնելով, գոչեց.

— Բոլորդ միասին ինձ հետ երգեցեք «այբ-բեն-գիմ»։ Չէ՛ որ բոլորիդ անգիր սորվեցրել եմ, և միասին ձայնով ասել ենք։ Դե՛հ, այսպես։

Եվ քանակի հավասար բախումներին ներդաշնակ՝ բոլորը, հետևելով ուսուցչին, սկսեցին միասին բարձր և եղանակավոր ձայնով հեղել.

Այբ, բեն, գիմ,
Դա՛, ե՛ դա,
է, բթ, թо...

Այսպե՞ս մինչև վերջը, բառասուն-հիսուն կրծքից բխած այս հուժկու, բազմահնչուն և միահամուռ ձայնը, որ ինքնին հայոց լեզուն է, նրասխի շառաչի հետ փռվելով Արարատյան աշխարհի վրա՝ թվում էր, թե սլանում է ազատ — Մասիսն ի վեր։

Ամենքի երեսին պայծառ ժպիտ կար. ուսուցիչը շատ ոգևորված էր։

— Ահա՛ ձեզ մի ընդհանուր ազգային երգ, որ ամեն հայ անպատճառ պետք է գիտենա. ահա՛ չորս-հինգ տարի է ես այդ երգն եմ սորվեցրել, ուրիշ երգ չեմ ճանաչում...— Բոցավառ շրթունքներով շնչասպառ ասաց ուսուցիչը և սրբեց քրտնած ճակատը։

— Շատ հիշտ եք ասում և կեցցե՛ք, իսկապես որ անմահ է,— ոչ նվազ ոգևորությամբ պատասխանեցինք մենք։

Ապա մեր շնորհակալությունը հայտնելով, ամուր սեղմեցինք սրամիտ ուսուցչի ձեռքը և ուրախ ու թեթև շարունակեցինք մեր ուղին։

Մի պահ գտնվում էինք այդ տարօրինակ երգի ազդեցության տակ. ընկերս խզեց լռությունը.

— Համաձայն չե՞ս, որ քանի հայը կապրի, հայոց «այբ-բեն»-ը չի՛ մեռնի։

— Այո՛,— ասացի ես,— բայց ես հակառակին ավելի համաձայն եմ. այն, որ՝ քանի հայոց «այբ-բեն»-ը կապրի, հայը չի՛ մեռնի...

— Դրան նույնպես համաձայն եմ,— թերևս ավելի շատ, սրտաբուխ ձայնով պատասխանեց սիրելի ընկերս։

1913

ՖԱԹԻՀ ՍՈՒԼԹԱՆ ՄԵՀՄԵԴ

Սուլթան Մեհմեդ կեսօրից հետո նստել էր Սերայի մեծ դահլիճում, գահի վրա, վեհափառ սարբքը ղլխին։

Զախ ափի մեջ բռնել էր մորուքը և ցուցամատը գրել էր բարակ, երկարուն, սուր քթի վրա։ Խորաղին հայացքով նայում էր իր ոտների ներքև, Սպահանի թանկարժեք գորգերի վրա ծռնը գրած մեծ վեզիրին, սեր-ասքյարին, դեֆտերտարին և Մյունեջիմ-բաշուն։

Մեծ վեզիր Մահմուդ փաշայի խորագետ հայացքը կարդում էր Սուլթանի դեմքը, որ միշտ անթափանցելի կերպով ծածկում էր նրա հոգեկան կացությունը։ Սուլթանը հոգում հուզված էր վեզիրի հաղորդած լուրերի պատճառով։

— «Փույթ չէ,— մտածում էր Սուլթանը,— ես կարող եմ, եթե ուզենամ, գյավուր վենետիկցիներին հանել խաղ ճենովացիների դեմ. սակայն հիմա բարեկամ պիտի երևալ, որպեսզի հետո, հարմար ժամանակին լավ հարվածել նրանց։ Այսպե՛ս։— Եվ դիմեց պետական գանձապետին։

— Դո՛ւ, դեֆտերտար, ամենաընտիր նվերներ ուղարկիր շուտով, իմ անունից, Վենետիկի և Ճենովայի իշխանապետներին, իբրև նշան բարեկամության։

Դեֆտերտարը խորին գլուխ տվեց մինչև գետին։

— Դո՛ւ, սադրազամ,— հարցրեց Սուլթանը մեծ վեզիրին,— ուրիշ ի՞նչ լուրեր ունես։

— Բոյո՛ւկ Սուլթան, մաշար Հունիադին Բելգրադի մեջ ահագին թվով ասքյար է հավաքել, իսկ առնավուտների Իսկենդեր բեկը հարձակվել է քո պետության սահմանների վրա և քո հավատարիմ ծառաներից շատերին չարաչար սպանել, շատերին էլ գերի վարել...— պատասխանեց վեզիրը վախվխելով։

Սուլթանի երեսի վրա ոչ մի մկան չշարժվեց։

— Աշխարհասասան մեծ փադիշահ, Իսլամի վահան, քո քաջ բանակները վրեժի կրակով բռնկված՝ քո մեկ հրամանին են սպասում կամի դաշտ թռչելու՝ մեռցնելու և մեռնելու քո փառքի համար...— սիրտ առած բերան բացեց զինվորական նախարարը՝ սեր-ասքյարը։

Սուլթանի դեմքի վրա նորից ոչ մի մկան չշարժվեց։

— Ալլահի սիրելի, ճակատագրի ընտրյալ, հավիտյանս Ֆաթիհ Սուլթան,— կարճատև լռությունը խզեց պալատական աստղագետ՝ Մյունեջիմ-բաշին,— երկնքի աստղերը քո ձեռնարկի համար շատ բարեբաստ ելք են գուշակում։ Ժամանակն է անհաղթ սուրդ մերկացնելու։

Մեծ վեզիրը, սեր-ասքյարը, Մյունեջիմ-բաշին խոսք մեկ էին արած Սուլթանին համոզելու, որ գյավուրների դեմ պատերազմ հռչակի։

Սուլթանը մի կարճ հայացք նետեց վեզիրի վրա։ Սա վայրկյանը հարմար համարեց նորից խոսելու։

— Ի՞նչ է մտածում մեր հոգու և մեր մարմնի Տերը, Կրալների, Շահին Շահերի, Սուլթանների Սուլթանը։ Ի՞նչ է մտածում քո իմաստուն հանճարը պատերազմ հայտարարելու մասին, դո՛ւ, նոր ժամանակների մեծ Սողոմոն արքա...

— Ե՞ս... Ես ի՞նչ եմ մտածում — այդ [illegible] ես [illegible]։ Եթե սեփական մորուքիս մազն ունենամ [illegible] իմ մտքերը, ա՜ [illegible] կպոկեմ այն...— տիրարար ասաց Սուլթանը և լռեց։

Լռեց և վեզիրը՝ անսնելով, որ այլևս անհնար է Սուլթանի դիտավորությունը իմանալ՝ թե արդյոք ուզո՞ւմ է պատերազմ, թե ոչ։ Նա գիտեր, որ Սուլթանի գաղտնապահությունը անսահման է, հիշելով, որ Սուլթանը մի անգամ ասաց, թե՝ հաջողության հոգին գաղտնիք պահելն է և մի վնիռ լավ խորհելուց հետո կայծակի պես արագ գործ դնելը։

Սակայն սեր-ասքյարը փորձ արեց գրգռել նրա գայրությունը։

— Մեծ Ղազի փադիշահ, դու՝ որ մինչև այժմ տասը թագավորության ես տիրել և հարյուր յոթանասուն քաղաք գրավել՝ հիմա հանդգնում է վոյեվոդ Դրակուլը, այդ գյավուր վլախը, աննկարելի, անհանդուրժելի լրբություն գործել քո հավատարիմ ծառաների դեմ։ Քո ուղարկած պատգամավորներին, որոնք մեր սրբազան օրենքի համաձայն չեն հանել նրա առաջ իրենց սարբքները, պահանջել է գլուխները բանան, իսկ երբ մերոնք մերժել են, այդ ժամանակ այդ շունը ասել է.— Լավ, թո՛ղ այդպես լինի, հրամայելով դահիճներին, որ բեռեռն սարբքները մերոնց գլուխների վրա։ Եվ դահիճները ահագին գամեր են խփել ծառաներիդ գանգերի մեջ և այդպիսով սոսկալի տանջանքների մեջ նահատակել մերոնց...

— Անհանդուրժելի՜ է այս, անհանդուրժելի՜,— միաբերան վրա բերին վեզիրն ու դեֆտերտարը։

Սուլթանը այս սարսափելի դեպքի վրա բարձր և ուրախ ծիծաղեց և նորից ծիծաղեց։ Նրան շա՜տ զվարճալի և սրամիտ թվաց Դրակուլի այս եղեռնական արարքը։ Ապա ծիծաղից հանգստանալով ասաց սենեկապետին, որ իր առջև բերեն մյուս սենյակում սպասող բանաստեղծներին։ և Ջենտիլ Բելլինիին, վենետիկցի այս նշանավոր նկարչին, որ վաղուց հետե Պոլսումն էր ապրում Սուլթանի հրավերի համաձայն՝ նկարելու համար, թե՛ գեղարվեստասեր փադիշահին և թե՛ այլ պատկերներ։

Ներս մտան և խոնարհ գլուխ տալով՝ ծնկի եկան բանաստեղծ-փի-

լիսոփա Սինանը, որ Սուլթանի դրագրագրանապետն էր, բանաստեղծ Համդին և բանաստեղծ Շեհդին, որը շատ հաջող ուսանավոր առնի մեջ երգել էր Ֆաթիհի հաղթանակները և վառահեղ գործերը։ Նրանց հետ էր և նկարիչ Բելլինին։

Սուլթանը սիրալիր ողջունեց նրանց։ Նա իր ամբողջական հավանությունը արտահայտում էր բանաստեղծների և փիլիսոփաների վրա և սիրում էր նրանց հետ խոսել բարձրագույն նյութերի մասին։ Ինքը նա ուզում էր պարտադրել նրանց՝ Աստվի կեղծ անունով։

Սուլթանը գահի բարձի տակից հանեց մի գիրք, որ զարդարված էր պարսկական մանրանկարներով։

— Համդի,— ասաց նա,— կարդացի իմ սիրելի Ջամիի «Ցուսուֆ և Զուլեյխան»։ Նաև գեղեցիկ գործ է։ Ուզում եմ, որ այն ևս թարգմանես մեր ժողովրդի համար, և այնպես կատարյալ, ինչպես թարգմանեցիր Նիզամիի «Լեյլի-Մեջնուն»։

Համդին անսահման ուրախությամբ համբուրեց գիրքը՝ իր հոտարարությունը հայտնելով։

— Դո՛ւ,— դիմեցին նրան, ուղարկեցի՞ր Քերաթ սիրելի Ջամիին իմ տարեկան նվեր ոսկին։

Դեֆթերդարը մինչև գետին գլուխ տվեց։

— Սինան,— դիմեց Սուլթանը նրան,— սիրո՞ւմ ես Ջամիին։

— Ասողությունը փադիշահ, քո սիրած բանաստեղծին՝ ինչպե՞ս կարելի է, որ ես չսիրեմ։ Նա պարսիկների յոթը մեծերից մեկն է։

— Այո՛, բայց ես ամենից շատ հիացած եմ Ջելալեդդին Ռումիով։ Նրա իմաստությունը անհուն է։ Ռեսումների Ապլատուն փիլիսոփան նրա չափ խորագետ չէ։

— Իրավ ես, մեծ փադիշահ, իսկական աստվածային Ջելալեդդին Ռումին է, քան թե Ապլատունը։ Չէ՞ որ Ռումիի իմաստության համաձայն՝ մարդկային գոյության, նրա հոգու նպատակն է, որ վերջը լուծվի իր նախաբջյուրի մեջ — աստծու մեջ ու այն ծովի մեջ, որից երբեմն դուրս է հոսել։ Նա հնամենի աստվածներով պիտի դատա հոգ, բույս, անասուն, մարդ, ապա հրեշտակ և վերջը աստված հասնել։

— Դո՛ւ, Շեհդի,— նայեցին դարձյալ Շեհդիին,— երևի ասացա Ձեզ՝ որ իմանամ դիվանը, որ ինձ է նվիրել։ Մի՞թե դուք կան, բայց ես ավելի սիրում եմ Միհրի խանումի ղազելները։ Ինչպե՞ս քաղցրությամբ գովում է նա իր սիրածին, նրա գեղեցկությունը աստվածության է հասցնում։ Դեֆթերդա՛ր, վաղը իմ անունից նվերներ ուղարկիր շնչիր խանումներին, Դիհնիի, Բաղդադի դիպակներ, մյուսլիներ ու սավայներ, ինչ որ հաճելի է կանանց։

— Շա՛տ ճշմարիտ է նկատել աշխարհի աչքը՝ արե-Սուլթանը,— ասաց Շեհդին,— երբ կարդում ես Միհրի խանումի գազելները, թվում է թե Նեզիմի գերվիշն է երգողը, որ պաշտում էր ջրվեցիկը, և իր սիրածի մեջ աստվածությունն էր անծնավորված տեսնում։

— Մի՞թե... Վաղը թո՛ղ Սինանը ինձ բերի Նեզիմի դիվանը. իսկ այսօր քեզ կտամ մի քանի գազելներ, որ նոր եմ գրել։ Մյուս օրը կիմանանք դրանց մասին։

Ապա, հայացքը ուղղելով վենետիկցի նկարչին, ասաց.

— Ի՞նչ նոր բա՛ն ունես նկարած, իմ սիրելիս...

Հուլակավոր վարպետը ցույց տվեց մի պատատա, որի վրա նկարած ուներ Հովհաննես Մկրտչի կտրած գլուխը։ Սուլթանը հիացած՝ գովեց նկարի գույների ներդաշնակությունը, ապա հարևանցի ասաց.

— Սակայն պարանոցի այս կտոր միսը, որ դեռ նկատվում է կտրած գլխի վրա, իրականին չի համապատասխանում։

Նկարիչը զարմացած նայում էր Սուլթանին։

— Այո՛,— շարունակեց Սուլթանը,— երբ մեկը գլխատվում է, պարանոցը իսկույն ոչնչանում է, որովհետև նրա մկանները մորթու, ջլերի և երակների հետ անմիջապես քաշվում, կծկվում են դեպի և իրանի մեջ։

Եվ նկատելով նկարչի կասկածանքը՝ հրամայեց պալատական գինավաճառ գանապան-պահակին, որ մի ստրուկ բերեն։ Ստրուկին գահի բերին։ Սուլթանի ակնարկի վրա՝ պահակը սրի մի հարվածով թոցրեց ստրուկի գլուխը՝ ներկայանալի սարսափած աչքերի առաջ։ Հետո Սուլթանը հրավիրեց նկարչի ուշադրությունը կտրած գլխի վրա.

— Ճշմարիտ չէ՞ ասածս, սիրելի Բելլինի։

— Այո՛, իսկ և իսկ, իմաստուն արքա,— կարկամած ասաց նկարիչը։

Մինչ այդ՝ Սերայի մինարեից հնչեց մյուսլինի երեկոյան աղոթքը։ Սուլթանը վեր կացավ, քայլերն ուղղեց դեպի Սերայի մյուս հարկարաժինները ապրելու և նամազի համար։

Սուլթանի աչքին՝ սողալով երևաց Զալարազատին, մեծ ներքինապետը։ Սուլթանը խորհրդավոր ձայնով շշնջաց նրան, և ներքինապետը աչքերին քսեց Սուլթանի չյուսպայի քղանցքը գոհունակ ժպիտով և ետ-ետ քաշվեց։

Բոլոր ներկաները, ստվերների պես իրար հետևից երերուն քայլերով՝ դուրս ելան իմաստության և սիրի դահլիճից...

1921,
Վենետիկ

ԱՆՊԱՐՏԵԼԻ ՈԳԻՆ

(Ակսեռանի պատմած)

Եփրատից այնքան հեռու, որ հաղիվ լսվում էր նույնիսկ լուռ գիշերին նրա խոր շառաչը՝ անապատում կային իրար մոտ մի քանի խղճուկ տաղավարներ։

Հայրենի հավերժ ողբալի սպանդից ղերծած՝ մի քանի տասնյակ հայեր էին ծվարել նրանց ներքև — ծերեր, կանայք և մանուկներ։

Ցնցոտիներով էր ծածկված նրանց ոսկրացած մերկությունը, և նրանց հայացքների մեջ մշտական սարսափն էր սառած, ինչպես կախաղանի տակից հրաշքով ազատված մահապարտների աչքերն են լինում։

Ժպիտ և ուրախություն սպանված էին նրանց աչքերի մեջ. միայն անմեռանելի հույսի մի կայծ կար, որ տակավին կյանքի նշույլ էր տալիս նրանց ցիրերին։

Ցերեկները վայրի բեղվիններն էին գալիս գաղտագողի՝ հածում և հոտվտում տաղավարների շուրջը, առևանգելու համար վայրագ Թուրքերի աչքից ճողոպրած գեղեցիկ աղջիկները, իսկ գիշերները անապատի միռելային լռության մեջ բրբենիներն էին ոռնում արյան և դիակի անհաց ծարավից։

Եվ մարդ ու գազան մի՛ասին նորանոր սոսկումներով հոշոտում էին ցավադին բնկերները մի զոհված ժողովրդի։

Գիշերները՝ մեսոբայա սև վիրակապերի պես փաղաքշող ու քնքուշ՝ թեև անդորրում էին այդ թշվառների հուր ու զարհուրանք տեսած աչքերը, սակայն հանդիպ բրբում էին նրանց հոգիները կարմիր, ահավոր տեսիլներով...

Երկնքից հրաշեկ արևը կրակ էր մաղում, և առավոտը կիզող էր, ինչպես միջօրեին։

Հեռու՝ դեղնավուն, ծավալուն հողերի վրա հորիզոններն էին իջնում պղնձե պատերի պես։

Ծերերն ու պառավները՝ հենված ու չալուկ՝ կուչ էին գալիս տաղավարների մի անկյունում, գաց աչքերով՝ իրենց երդիկների անդորր ծուխն ու պարտեզների ծաղկած ծառերը վերապրելով։ Նվ քանդվում էր ու հատնում նրանց չարչարված հոգին...

Առավոտ էր։ Վաղահաս պառաված կանայք ստվերի մեջ նստած՝ չորացած մատներով կար էին անում շրջակա արաբներից հազար խընդրանքով ձեռք բերած աշխատանքներ, որոնցով իրենց հարազատների լոր հացն էին վաստակում։

Անխո՜նջ, անդո՜ւլ կարում էին նրանք, իրենց ճմլված սրտերի մեջ սև արցունք թափելով։

Տաղավարների առջև, մանուկները՝ պատիկ աղջիկներ ու մանչեր, մանկության երազով տարված՝ մուռանալով իրենց խղճալի օրը, խաղ էին անում, նույնիսկ երբեմն ուրախ մի արձակելով։

— Տղա՜ք, դասի՛ եկեք,— Հնչեց տաղավարներից մեկի մեջ։

Եվ երեխաները ցրվեցին տաղավարները։ Երկու երեխա՝ եղբայրներ՝ ձեռք-ձեռքի բռնած, մտան տաղավարներից մեկի մեջ։ Մենք տասներկու տարեկան կլինեք, փոքրը՝ յոթ-ութ։ Երկուսով էլ վազ ավին, ընկան մայրական գիրկը։

Ջարաբախտ կինը նահատակության ճանապարհի վրա կորցրել էր իր ամուսինը և երկու դավակ. ամուսնուն և պատանի որդուն, շատերի հետ միասին, անողորմ տարել էին Թուրք ոստիկանները, իսկ ծաղկափթիթ աղջկան հափշտակել էին քուրդերը։

Մայրը գորովագին համբուրելով երեխաներին, ասաց կրտսերին.

— Ադվո՜ր գառնուկս, հիմա ես կգրեմ, դուն պիտի կարդաս. տեսնեմ, գիրերը լավ մը կճանչնա՞ս. վերն ալ ատոր նման պիտի գրես, եթե լավ կարդաս, քեզի արմավ կուտամ։

Եվ մայրը ցուցամատով գրեց ավազի վրա.

— «Ատված պահե հայրիկս, քույրիկս, աղբերիկս»։

Երեխան հեգնելով կարդաց գրածը։

— Ապրի՜ս, աչքիս լուսիկը։— Մայրը, նորից համբուրելով փոքրիկին, մի քանի չորացած արմավ տվավ։

— Հիմակ ալ դուն նստե գրե։

Երեխան, արմավը ուտելով, սկսեց փոքրիկ մատով գծեր քաշել ավազի մեջ։

Մայրը, դիմելով մեծ որդուն՝ ասաց.

— Իմ սիրունիկ Վազգենս, տեսնեմ ի՞նչ գրեր ես։

Մանուկը մի քանի բան էր գրել ավազի վրա. մայրը աչքերը լարելով կարդաց.

— «Այլազգը տարավ հայրիկս, քույրիկս, աղբերիկս, կըսեն, որ սպանած են. ես չեմ հավատար. երբ տուն դառնանք, անոնք հոն ողջառողջ պիտի գտնենք»։

— Հարկա՜վ, սիրելիս, հարկա՜վ...

Եվ արցունքը զսպելով համբուրեց երեխային և, չկարողանալով դասը շարունակել, երկուսին արմավի հետ մի կտոր սև հաց տալով՝ ասաց.

— Հիմա դացեք, դուրսը խաղցեք. իրիկունը, Վազգենիկս, քեզ Ավետարանն դաս պիտի տամ. անանկ լավ պիտի սորվիս, որ ընկերներդ զարմանան, ու երբ տուն երթանք, հայրիկդ պիտի տեսնե, որ պարապ չես անցուցած հոս առանց. շա՜տ պիտի ուրախանա։

Երեխաները զվարթ դուրս թռան։

Մայրը նրանց հետևից փղձկաց դառնագին. ապա, արցունքները սրբելով, լացակումած մրմնջաց.

— Ա՜խ՛, երբ մեր աղատված հայրենիքը դառնանք, անոնք, բոլոր ուրիշների հետ, ամենքն ալ հարություն առած հոն պիտի դտնենք, անշո՛ւշտ։

Ականատեսը ավելացրեց.

— Խեղճ հայ մայրերից մի քանին հետները միմիայն Ավետարան ունեին. թողի՛ մի կտոր։ Անապատի ավազները հանախ դարձան հայ մարտիրոսված մանուկների համար գերեզման և, ավելի հաճախ՝ պատանք ու սնունդ, անխաչ և հավիտյան կրքած ու անհայտ...

1922.
Վենետիկ

ՀԱՍԱՆ ԱՂԱՆ

1965 թվականի ամառը երեք ընկեր տղաներ՝ պատշաճ պատրաստությամբ, Բաքվից նկել էին Աղեքսանդրապոլ՝ Արագած լեռան գագաթը բարձրանալու համար։ Ինձ էլ հետները առան, ու կառքով գնացինք լեռան ստորոտի հայ գյուղերից մեկը, ուր ես մի հին դասընկեր ունեի։

Ընկերս, որ կիսաս էր թողել դպրոցը և գյուղը վերադարձել, շատ մեծ հարգ էր վայելում շրջակա գյուղերում և լեռնաբնակ բրդերի մոտ, թե՛ իբրև հարուստ տան որդի և թե՛ իբրև կորիճ մի երիտասարդ։ Եղանք նրա մոտ հյուր։ Եվ մյուս օրը, թե՛ մեր խնդրանքով, թե՛ իր իսկ բաղձանքով՝ նա էլ մեզ միացավ, առնելով իր հետ երկու ուժեղ գյուղացի տղաներ, ծանրությունը կրելու և մեզ օգնելու համար՝ բարձրանալու դժվար պահերին։

Կեսօրից անց էր, որ Մանթաշ կոչված սքանչելի ձորահովիտով քայլում էինք ուղղակի դեպի լեռան արմատի տակը։ Այդտեղ պիտի գիշերեինք բրդերի մոտ, որ առավոտ շատ կանուխ սկսեինք մեր վերելքը՝ կեսօր չհասած լեռան գագաթը հասնելու համար։

Ընկերս մեզ առաջնորդեց իրեն լավածանոթ, ցեղապետ Հասան աղայի վրանը։ Մի սև ու ընդարձակ վրանի դռան առաջ ցիցերից կապված կային երեք ձիեր՝ կազմ ու պատրաստ։ Մոտիկը, մարմանդ կրակի վրա դրած էին երկու-երեք հատ մեծ ու փոքր սրճամաններ, որոնց վրա հսկում էր մի հասակավոր քուրդ։

Դռան առջևը լիքն էր բրդերով, որոնք հարգալից ճանապարհ բացեցին մեզ, անունով բարևելով մեր ընկերին։

Մտանք վրանը, բարձերի վրա նստած էր Հասան աղան, մի հիսուն տարեկան քաջառողջ քուրդ, ալեխառն մորուքով, մի իսկական ցեղապետի տիպար։

Բարև տվինք ու բարև առանք։ Ընկերս ներկայացրեց մեզ։ Ես բաղվեցի ընկերներիցս ավելի տարիքոտ էի, ուստի Հասան աղան ինձ իր աջ կողքին տեղ տվեց, իսկ ընկերներս նստանցին իմ կողքին։ Հասան աղան նորից բարևեց մեզ, բարի գալուստ մաղթելով և իմանալով մեր ուղևորության նպատակը, առաջարկեց ընդունել իր կողմից մի քուրդ ուղեցույց, որը գոց աչքերով նույնիսկ գիտե ամենաոչ-ուրին կածանները դեպի լեռան գագաթը։ Մենք շնորհակալությամբ համաձայնեցանք։

Սուրճից հետո Հասան աղան հրամայեց, որ մի թեթև նախաճաշիք բերեն, որովհետև կարող էինք մենք քաղցած լինել։ Մենք համոզեցինք նրան, թե դեռ կուշտ ենք. ապա կարգադրեց գառ մորթել ընթրիքի համար՝ հակառակ մեր թախանձանքին։

Մեր դավառի բրդերը հայերեն գիտեն խոսել, իսկ Հասան աղան, որ շարունակական շփման մեջ էր հայ վաճառականների և գյուղացիների հետ, բավական ազատ կարող էր խոսել, ինչպես, Շիրակի բարբառով։

Մի կարճատև կցկտուր խոսակցությունից հետո՝ Հասան աղան հանկարծ կտրեց բոլորիս խոսքի թելը, և դարձավ ինձ հետևյալ հարցումով.

— Էն օրը Գյումրվա քաղաքն էի գնացել ճոթ (կնրպաս) առնելու։ Գիտես, ձեր քաղաքի ամենեն հարուստ մարդու խանութը, որ մեր տան հին-հնուց բարեկամն է եղել միշտ։ Հա՛, էն կուզեի ասել, թե էդ մարդիկը շատ կվախենային, դու ասա, ռուսվար խոսք է... լեղվիս վրեն է... սոցյալ, էդ տեսակ մեկ խոսք։

Ընկերներից մեկը օգնության հասավ. սոցիալիստ, սոցիալիզմ...

— Հա՛, հա՛, սոցիալիզմ,— բավական ուղիղ հնչելով այն նոր բառը։— Հարցուցի՝ էդ ի՞նչ նոր բան է, խալեա է, թե մեկ ուրիշ գեշ ցավ. ասին, թե չէ, մեկ տեսակ մարդիկ կան, որ շա՜տ շատվոր են, կուզե՛ն աշխարք խառնեն, հարուստներու հողն ու փողը խլեն, տան աղքատներուն։

Էսպես, շա՞տ կվախենային, թե էդ մարդիկ ուժ ունեն ու մեկ օր էլ իրենց էդ գեշ միտքը գլուխ բերեն։ Խելքս չի պառկի էդպես բան։ Մենակ դու ուսումով մարդ ես, ինձի մեկ ասա, էդ ի՞նչ բան է. դրո՞ւստ է, թե դատարկ խոսք՝ փչե, քամին տանի...

Ես իսկույն չպատասխանեցի, ուզում էի մտքերս այնպես ձևակերպեմ, որ կարելի լիներ լեռների այս զավակին դյուրամատչելի ներկայացնել սոցիալիզմի սկզբունքները, սակայն, բարվեցի ընկերս առաջ անցավ և հարցրեց.

— Հասան աղա, հենց ասենք թե այդպես է. թող հարուստների ունեցածը աղքատներին անցնի, նրանք էլ մի քիչ օր տեսնեն, ի՞նչ կլինի որ։

— Հեչ բան չի ըլնի, տղաս, էդ կլինի ավազակություն, մեկ բան, որ միշտ եղել է ու կա։ Էդորեն ի՞նչ վախենալու բան կա։ Ավազակներու դեմ թագավորի իշխանությունը կա։ Ու ինքը՝ հարուստ մարդն էլ, ձեռքերը բանձար հո չե՞ն քաղի, կկռվի, մարդ բաց աչքով իր ոսկին, մալը ուրիշին չի տա, մեռնել կա — տալ չկա։

— Իսկ եթե թագավորի իշխանությունն անցնի աղքատների ձեռքը, հարուստներն ի՞նչ կարող են անել, եթե նույնիսկ մինչև շապիկը մերկացնեն...

Ես այլևս չէի մտածում և հետաքրքրությամբ սպասում էի, թե Հասան աղան ի՞նչ պիտի առարկի։ Ցեղապետը իշխողի հայացքով նայեց ընկերիս և ասաց.

— Ին ժամանակ հարուստը կլինի աղքատ, աղքատը՝ հարուստ։ Աշխարքիս մեջ բան չի փոխվի։ Իմ ձիս ուրիշը պիտի նստի, ես ոտքով պիտի երթամ։ Ես ջուր լցնողը պիտի ըլնիմ իմ խոլամ Մստոյի ձեռքին։

Մստոն, որ գլան առաջը կանգնած էր, սարսափած խոնարհվեց մինչև գետին, քթի տակ մի բան մոմոալով։

— Հա՛, էդպես չէ՞, է՞դ կուզես ասել,— ու բարձրաձայն խնդաց հեգնոտ իմաստով և պատասխան չսպասելով, շարունակեց.— Ին ժամանակ էլ աղքատացած հարուստները էդ սոցիալիզմ ըսածիդ կդառնան ու հարստացած աղքատներու ձեռքեն կխլեն մալը։ Ու նորեն աղքատը էն տեսակ կմնա, ինչ որ էր՝ հարուստ ու աղքատ։

Շիտակ չէ՞ ասածս, թե որ շիտակ չէ, դու ասա,— դիմելով ինձ վերջացրեց իր խոսքը։

Ես ասացի.

— Հասան աղա, սոցիալիզմը ավազակություն չի ուզում։ Նա ասում է, թե՝ էլ ոչ հարուստ պիտի լինի, ոչ աղքատ. հողը, անտառները, հանքերը, ճանապարհները, մեծ-մեծ մաշինաները պիտի բոլորին լինին, ժողովուրդին։ Ինչ որ էս արոտի տեղերը ձեր էլին-ցեղին կպատկանին, դու էլ իրավունք ունիս, մյուսներն էլ քեզի պես՝ էդ հողի վրա իրանց ոչխարը արածացնելու։ Աշխարհը կլինի մի ցեղ, մի տուն, և ամեն մարդ կաշխատե. պարապ, անգործ մարդ չի լինի։ Եվ ամեն մարդ իր աշխատանքի վարձի փոխարեն կապրի, կհագնի, կուտե, փող էլ չի լինի, պետք չի լինի։ Գեշ բա՞ն կլինի, Հասան աղա, եթե այդպես լինի,— ուղղակի դիմեցի նրան։

— Գեշ կլինի, շատ գեշ,— մաղձոտ պատասխանեց ցեղապետը։

— Ինչո՞ւ այդպես կասես, Հասան աղա, միթե գեշ կլինի, որ մարդիկ կուշտ լինեն, հիվանդ ու խնդմ չլինեն։

— Չէ՛, տղաս, ես բարի մարդ եմ։ Հասան աղան գեշ սիրտ չունի, ու աղքատ էլ կսիրեմ ու կշահեմ։ Մենակ նորեն կասեմ, որ գեշ կլինի, շատ գեշ կլինի։

— Հասան աղա, սոցիալիզմը եթե դա, շատ լավ պիտի դառնա աշխարհը։ Նա հավասարություն պիտի բերե. բոլոր մարդիկ իրար հավասար պիտի լինեն, այսինքն՝ մեկ հոր որդիների պես. ոչ հարուստ, ոչ աղքատ, ոչ բեկ ու խան, ոչ աղա ու ծառա, ոչ թագավոր ու բան։ Բոլորը հավասար, հավասար... Գե՞շ բան կլինի, Հասան աղա։

— Գեշ, գեշ, շատ գեշ,— ասաց Հասան աղան,— էնքան գեշ, որ չարժե ապրել, թե որ էդպես աշխարք ըլնի։ Մենակ խելքիս չի նստի, ինչ կուզեք ասեք։ Գիտնակ մարդիկ եք, խոսք չունիմ, շատ երկիրներ եք եղել, շատ լեզուներ գիտեք, մենակ ձեր ասածը խելքիս չի պառկի։ Ինչո՞ւ, ասեմ. մարդիկ իրար նման չեն ծնվի, որ իրար հավասար գործ տեսնեն, իրար նման ապրուստ ունենան, խելոք ու անխելք մարդ կծընվեն, քաջ ու վախկոտ, շնորհքով ու անշնորհք, ուժով ու տկար։ Աշխարհի մեջ իրար նման ու հավասար բան չկա։ Աչ ձեռք ու ձախ ձեռք կա, մեծ ու պստիկ սար կա, գետ ու ծով կա, հազար տեսակ ծառներ ու ծաղիկներ։ Ասլանի դիմաց մուկ կա, ձիու դիմաց՝ էշ, եզի դիմաց՝ ոչխար. ճիճուի՝ օձ... Ու իրար կհաղթեն, իրար կուտեն։ Ուժով գայլը թույլ գայլի ձեռքեն կխլի ոչխարը։ Ամեն բերան ուտել կուզե, ուրիշի կերածը քո փորը չի մտնի, ամեն մարդու ձեռքը իր բերանը կերթա։ Ախպեր, ընկեր, մեկ տո՛ւն... Լավ խոսքեր են, մենակ սուտ խոսքեր են։ Ես հոգի ունեմ ասածուն տալու, գեշ սիրտ չունեմ։ Մենակ՝ չի ըլնի, չի՛, չի՛, զուր կռիվարություն թափել կըլնի։ Ասածած աշխարքը ձեր ուզածի պես չի շինել, հասկցա՞ք, հասկցա՞ք...

Ապա, չիրուխը վառելով, շարունակեց.

— Ասենք, կրնաք գոռով էդ սոցալը գլուխ բերեք, մենակ իմացեք, որ շատ գեշ բան կըլնի, չարժե ապրել. մեռնել՝ հազար տակ լավ է։ Տո՛,

ինչպես կըլնի, որ ես՝ Հասան աղաս, Մուստաֆա աղայի թոռը, որ Ջալալի աղբյուրներին մինչև Բուղուղլի՝ հավք չէր թողնի անցնի, որ փաշաներու-երանալներու հետ նստել ու կանգնել է, ու էնոր թրի վախեն սարդարներ քուն չեն եղել,— հիմի պիտի հավասարվի հողին ու քալալ Մստոյին, որ օխտը պորտով մեր տան ծառան է եղել։ Տո՛, ծառա ծընված Մստո, տո՛, Սմկո, տո՛ Ջալալ, ձեր գլուխը թաղեմ, դուք ինձի հավասա՞ր եք, կրնա՞ք հավասար ըլնի, թե որ էսօր թաղավորը հրաման տա՛ էլ։

Ծառաները քոլոզները հանած խոնարհվեցին մինչև գետին։

— Աստված չանե, աղա՛, մենք քո ոտքի տակի հողն ենք. մենք ո՞ւր, դուն՝ ուր. երկինք-երկիր՝ էդչափ հեռու...

— Տո՛, սուտ մի խոսիր, շիտակ ըսեք։ Էգուց, որ սոցյալը գա ու իմ ձեռքես ձիերս առնի, ոչխարներս, հողերս... ձեզի տա ու ինձի էլ ձեր ծառան շինե, հավասա՞ր եմ ձեզի...

— Հասա՛ն աղա,— պատասխանեցին ծառաները,— միշտ մեր աղան ես. թագավոր էլ ըլնինք, նորեն մենք քու առաջ — աշնան խաղալ, կոխե անց մեր վրայով, աստված վկա, սուտ բան չկա։

— Տո՛, Քոռ Մհեի տղա,— դիմեց ցեղապետը մի ուրիշ քրդի,— թե որ էգուց մեզի հավասար շինեն, իրար հետ պիտի ոչխար արածենք հա՞, ասա տեսնեմ։

— Ըռզակը գլխուդ մատաղ ըլնի, Հասան աղա, սարը չի իջնի կոր դուրան դառնա. էտոնց ասածը գիլ-թոզի է (գայլի հանած փոշին՝ խաբելու համար)։

Մի պահ ցեղապետը լռեց. մենք՝ նրա հյուրերս, գտնվում էինք մի անհարմար կացության մեջ. ինքս մտածում էի մի ելք գտնել թե՛ մեզ համար, և թե՛ ցեղապետին հանգստացնելու, որ շափազանց ջղայնացել էր։

— Հավասա՞ր, հավասա՞ր...

Եվ բառերի խորքն ու իմաստը թափանցելով և ավելի խորունկ զգալով նրանց էությունը, Հասան աղան կրակ կտրած, գոռաց.

— Դեչչալի[1] օրը պիտի հասնի, աշխարքի վերջը, թե որ հավասարականը գա, ամուն-մամուճները (թզուկները) պիտի մեյդան առնեն։ Վա՛յ գիտի Արազ, հողը գլուխդ, Ալիի կաղ էշն էլ վրայովդ անցավ։ էյ, Հասան աղա, ինչե՞ր կլսես...

Ու ձեռքը տարավ խանջալին։

[1] Մահմեդականների նեռը։

— Աստված է վկա, էդ օրը, էդ սոցյալի օրը, էս խանջալովս կտոր-կտոր կանեմ դեմս ելնողը. խոլամներս, ձիերս, ոչխարներս՝ մեկ-մեկ կմորթեմ ու կփրթեմ. սարիրը կվառեմ, սարերը... Թող բան գտնեն, հավասարեցնեն... Ես ասլան եմ ծնված ու ոչխարի միս կերած. ոչխար չեմ ծնվել, որ հոտին խառնեն. էգ չեմ ծնվել, որ լծի տակ քաշեն...

Որոտում էր ցեղապետի կուրծքը. նրա հուժկու ձայնով լցվել էր ողջ վրանը, որի մագոտ պատերը դողդողում էին։ Քրդերը լուռ, գլխահակ կանգնել էին, և ոչ ոք սիրտ չէր անում մի խոսք ասել։ Այնպես գերզբաղված էր իր ցեղակիցների այս հովիվը։

Ես փորձեցի միջամտել և քաղցր ձայնով ասացի.

— Հասա՛ն աղա, մի՛ նեղսրտիր։ Եթե սոցիալիզմը դա, աշխարհով է լինելու. ողջ երկրիս վրա բոլոր-բոլոր ազգերը, լեզուները, տերությունները. ի՞նչ ես մտածում, մենակ քեզնով չէ. թագավորները, սուլթանները պիտի հավասարվեն, և մանավանդ, որ դու բոլորովին ուրիշ տեսակ ու սխալ ես հասկանում, և սարսափելի ձևով ես ընդունում։ Հավատա, որ եթե գա, բոլորիս համար լավ կլինի, թե՛ հարուստի և թե՛ աղքատի։ էլ հաց մուրացող չի լինի ու եղ ու մեղրի մեջ լողացող։ էլ կռիվ, պատերազմ չի լինի. դրախտ կլինի, աշխարհը դրախտ...

— Էդ դրախտդ չեմ ուզում։ Մենակ ինձ ասա, թե էդ ե՞րբ է ըլնելու, էդ սև օրը, շեյթանը ե՞րբ է գալու։

Ես ասացի, որ ոչ ոք չի կարող գուշակել, թե երբ է գալու, կարող է պատահի, որ բնավ չգա էլ, կամ փոխված գա, և կամ կամաց-կամաց...

Հասան աղան մի քիչ հանգստացավ, հրամայեց կրակ բերեն հանված չիբուխի համար և դիմեց ինձ.

— Դու խելացի մարդ կերևաս։ Աստված ավելի շնորհք տա քեզի։ Կրնա՞ս վեր-վար անել, թե ե՞րբ կրնա գա, մեկ տարի, երկու տարի։

— Ո՛չ,— պատասխանեցի ես,— գուշակել դժվար է։ Բայց շուտով գալու նշաններ չկան. դեռ պիտի ժողովուրդները ուսում ստանան, աչքերը բացվին, մաշինաները, ֆաբրիկաները շատանան։ Իմ խելքովս՝ մենք չենք տեսնի, գուցե հարյուր տարի անցնի էլ...

Դեռ խոսքերս չէի ավարտել, երբ Հասան աղան մարմնացած ուրախություն դարձած՝ գլխի փաթթոցը մինչև գազաթի ծայրը քշեց. աչքերը կայծակեցին. երկու ձեռքով ամուր ծունկ զարկեց ու գոռաց.

— Էհե՛յ, տո՛, շուտ առեր, լուսահոգի հոր տղա, էգուցվան քցած դատեն վախեցողը ո՞վ է։ Հարյո՛ւր տարի հետո... Քաղաքի խելառները նստել հարյուր տարի հետո գալող օրը կուլան։ Հարյուր տարի հետո... Ո՞վ գիտե, ի՞նչ կլինի, ի՞նչ խելոք մարդիկ աշխարհ պիտի գան, որ էս

սոցալ անունը իսկի բերաններն էլ չեն առնելու։ Ո՞վ դիտե, ինչ խելոք բաներ պիտի ասեն ու շինեն... Աչքիս լույսը որ դուն ես, քաղաք երթալուդ՝ գնա բարեկամներուս ասա, որ հեղ չվախենան, սոցալը գալու չէ, իսկի չի գալու, չի կրնա գա։ Ես կասեի, թե խելքիս չի պառկի. ապրի՛ս, տղաս, բարով եկար, աստված քեզի ղրկեց։ Էս գիշեր լավ քեֆ պիտի անենք, մնկել գիշեր էլ հյուրս եք, ձեզի թողնող չկա... Ախր, շատ կմտածեի, քաղքցիք սիրտս վախ գցեցին։ Վախն ի՞նչ է, չգիտեի, հմա վախցուցին։

— Է՛յ, Մատո, Սմկո, հաց քաշնք, անոթի ենք, դանկբեժներ (երգիչներ, սրինգ նվագողներ) բերեք, լավ քեֆ պիտի անենք, մաստիկա էլ պիտի խմենք. էգուց էլ որսի պիտի երթանք, ձուկ պիտի բռնենք, ձի քշենք։ Էսպես ուրախ չէի եղած, ալլահ — վաքիլ...

Այդ միջոցին եկավ ծերունի մի քուրդ, որ Հասան աղայի աներն էր։ Բոլորը ոտքի կանգնեցին։ Ծերունին բարևեց ու նստավ Հասան աղայի տեղը. փաթթոցը հանեց, դրավ ծնկներին, ու շոր-բարակ մատներով համբ ու դանդաղ քորում էր ճաղատ գլխի հատ ու կտոր դեղին մաղերը։ Ապա չիբուխը քարին զարնելով դատարկեց մոխիրը, նոր ծուխ լցնելու համար Հասան աղան, լցնելով ծերունու չիբուխը, իր ձեռքով վառեց, և ծերը հանդարտ ծխում էր, մտիկ անելով Հասան աղային, որը համառոտակի պատմեց մեր խոսակցության իմաստը։ Ապա ծերը չիբուխը բարձր բռնելով՝ ասաց ծանր ու որոշ.

— Հասան աղա, Մուստաֆայուն թոռուն աղա, ջուրը կերթա ավաղը կմնա, խոսքը ջուր է, աշխարքը՝ ավաղ։ Մի տրտմի, մի ուրախանա։ Աշխարքի մալը աշխարքին կմնա։ Քանի կա՝ կե՛ր, խմե՛, օրդ էրա, աշխարքի մալը հետդ տանելու չես։ Գալիք օրվա մասին էլ մի մտածեի։ Մարդիկ հողի տակն են իրար հավասար, հողի վրա՝ աղա ու ծառա, սուլթան ու գյաղա։

Աշխարքն ինչպես եկել է, էնպես էլ կերթա. ինշ ալլահ։

Չիբուխը հանգել էր, Հասան աղան նորից իր ձեռքով կրակ դրեց և ծեր քուրդը՝ թույլ կրծքով քաշեց ծուխը, մարած աչքերով զննաբար նայելով մեզ, ապա աչքերը գոցեց և խորասուզվեց ծխի մեջ։

Բոլորս լուռ էինք. ծառաները սեղանն էին պատրաստում։

1923

ԲԱՅՐԱՄ ԱԼԻՆ

Երևանի բանտում, իմ խցի պատուհանի տակ, ընդարձակ պարապած բակի մեջ, օրը երկու անգամ պտույտի էին հանում հանցավորներին։

Նրանք ադրբեջանցիներ էին, մեծ մասով երիտասարդ տարիքի, դիմավորապես գյուղացիներ։

Նրանց միջից աչքի էին ընկնում ոտքերը շղթա զարկած հանցավորները — առողջ, ուրախ-զվարթ տղամարդիկ։

Նրանք ծիծաղով, բարձր խոսալով, խումբ-խումբ, անցուդարձ էին անում և մի առանձին պարծանքով թափահարում էին ծանր շղթաները, որ ավելի ուժով շառաչեին։

Սա իրենց փառքն էր ու մեծությունը — շառաչող շղթան։

Քանիսները վիրավորված բողոքել էին բանտի վարչությանը, երբ սա հապաղել է շղթային արժանացնել նրանց։ Ամոթ է, չէ՞։ Ինչո՞վ են պակաս իրենք մյուս իգիթներից։ Չէ՞ որ սա արհամարհանք է, անպատվություն է իրենց քաջագործությունների հանդեպ։ Հայրենի գյուղում եթե լսեն, ի՞նչ պիտի ասեն... Մի՞թե հավի գողեր են նրանք, ի՞նչ է։ Եվ կոր գլուխները բարձրացրել են հպարտությամբ, երբ ծանր երկաթները կախվել են հաղթ ազդրերից։

Ի՞նչ մեծ հաճույք է շղթաների այս առնական շառաչը։ Նրանց երեվակայությամբ՝ այս պանծալի շառաչը հասնում է մինչև իրենց հայրենի բարձր սարերը և մթին անտառները, իրենց սիրալի գործերի վայրերը, և լցնում դուռ ու երդիկ, ձոր ու արահետ՝ իրենց քաջագործությունների գովքով ու համբավով։

Թափառաշրջիկ աշուղները հանդեսների մեջ երգում են խանդավառ՝ իրենց շղթայակապ քաջերին։ Նրանց հայրերն ու մայրերը պարծենում են իրենց կտրիճ որդիներով։ Պատանիները ոգևորվում են նրանց անունով։ Աղջիկները երազների մեջ լսում են այս շառաչը, որպես իրենց տենչացած իգիթների հաղթանակի երգը։

Անվանի ավազակներ էին նրանք՝ քարավան կտրած, պետական պոստը կողոպտած։

Բեկերի ու աղալարների դեմ հող ու ջրի համար վրեժխնդիր իրավատերեր էին, իրենց իսկ ձեռքով դատաստան արած։

Սիրո հերոսներ էին նրանք, սիրած կանանց համար արյուն թափած։

Բայց այդ տղամարդկանց մեջ մեկը կար, որ ամենից շատ գրավել էր իմ ուշն ու զգացմունքը։

Մոտ երեսուն տարեկան մի երիտասարդ էր նա, բարձրահասակ՝

անտառում բուսած եղևնու նման և եղևնու նման ճկուն։ Եվ իսոր ու մթին աչքերով քարանձավների խորության և մթության նման։

Բայրամ Ալին։

Միշտ մենակ, միշտ մռայլ, միշտ ինքնամփոփ, շրջում էր նա, անտարբեր ընդհանուր եռուզեռին, անտարբեր շղթաների բարբարոս կըռուլթին (ռիթմին)։

Ո՞վ էր նա, ի՞նչ ուներ նա այս ինքնագոհ ոճրագործների մեջ։ Մի բացառություն,— քանի որ բնավ նման չէր մյուսներին։

Բացառությո՞ւն...

Անվերջ դիտում էի նրան և շատ էի փափագում իմանալ նրա կյանքի վեպը։

Իմ բանտարգելության մասը բաժանված էր քրեական ծանր հանցավորների մասից։ Ես իրավունք չունեի հարաբերություններ ունենալ ուրիշների հետ, բացի այն հասարակ բանտարկյալներից, որոնք ծառայություն էին անում բանտում և ազատ էլ ու մուտ ունեին ընդարձակ բանտի ամեն կողմերը։

Սրանք թեթև հանցանքներ գործած տղաներ էին, որ մի երկու ամիս բանտում դեգերելուց հետո լույս աշխարհ էին ելնում, մի երկու ամիս հետո նորից վերադառնալու համար, նորից չնչին հանցանքներով։ Սրանց մի ոտը դուրսն էր, մյուսը՝ բանտում։

Այս տղաներն էին ինձ հաց, ջուր, թեյ բերողները, և սրանց միջոցով էին տեղի ունենում հարաբերությունները իմ և շղթայակապների միջև, որոնք ինձ շատ էին հարգում իբրև կարդացվոր մարդու, իբրև էրիան, թագավորի դեմ կռվող ջահել իգիթի» և դրսից ստացած իրենց ուտեստներից ինձ մաս էին ուղարկում այդ տղաների միջոցով։

Այդ տղաներից կարողացա իմանալ նրա անունը և դատավճիռը՝ ենթարկված տաժանակիր աշխատանքի։

Մի անգամ մի նոր թուրք ծառայող ունեցա, մի աչքաբաց, շատախոս տղա։

— Քյարիմ ջան, կարո՞ղ ես ինձ Բայրամ Ալու մասին տեղեկություններ հավաքել. ո՞վ է նա, ի՞նչ է արել,— խնդրեցի նրան՝ մի ոսկի ծխախոտ նվիրելով։

— Աղմաղանցի Բայրամ Ալի՞ն. ո՞վ չի ճանաչում իգիթ Բայրամ Ալուն։ Ափսո՞ս տղամարդ, կնկա փորձանքի ընկավ։ Ես քեզի, ախպեր ջան, կպատմեմ իրիկունը, երբ ոտը ու ձենը կտրվի, բանտը քուն մտնի։

Անհամբեր սպասում էի մութն իջնելուն։

Երբ բանտը քուն մտավ, հանգարտվեց ամեն կողմ, թուրք պատանին եկավ մոտս։ Ականջս դրեցի խցիս այն դռնակին, որտեղից կերակուր էի ստանում, և պատանին ականջիս մեջ շշնջում էր Բայրամ Ալու կյանքի վեպը։

— Բայրամ Ալին, ախպերս որ դուն ես, մեր Աղմաղանու սարերիցն է, կորիճ տղա, քաջ որսկան։ Եղավ, որ աչք դցեց իրանց գեղի հարուստ Մեհդի բեկի մի հատիկ, սիրուն աղջկա վրա՝ Մահնուր խանումի, աղջիկն էլ՝ Բայրամ Ալու վրա։

Բեկը չուզեց աղջիկը նրան տալ։ Բեկը հարուստ էր, անհաշիվ ոչխարի, տավարի, ձիու տեր, Բայրամ Ալին՝ աղքատ, սարի որսկան. «Քիր տաշ, բիր բաշ» (մի քար, մի գլուխ)։

Բայրամ Ալին խոսք մեկ արավ աղջկա հետ ու մեկ գիշեր էլ աղջիկան փախցրեց, տարավ սարը։ Մեհդի բեկը առավոտ կանուխ ախպոր տղաներին ու խոլամներին առավ, ինքը տղա չուներ, ընկավ Բայրամ Ալու հետևից, ուխտ կապելով, որ Ալուն կտոր-կտոր անե, աղջիկը հետ բերե։

Աղմաղանու սարերի վրա կռվի բռնվեցին։ Բայրամ Ալին աղջիկը պահեց քարերի հետևը ու ձենեց.— Գնացեք տներդ, ա՛յ ախպերներ, ա՛յ մուսուլմաններ, զուր ինչի՞ արուն թափենք, աղջիկն իմս է, ես՝ աղջկանը, սեր ունենինք իրար վրա։

Բեկը լսեց։ Կրակ բաց արին։

Բայրամ Ալին երեք հեղ էգ խոսքն ասավ, նորից լսող չեղավ։ Էն ժամանակ Բայրամ Ալին ասավ.— Մեղքը ձեր վիզը, պարտական մնաք ալլահի ու փեյղամբարի առաջ։

Բայրամ Ալին երեսի նշան բռնող էր. խնձորները ծառի վրայից մեկ-մեկ կթռցներ, մթանը ճրագը վառեիր, դնեիր քարի վրա, գյուլլով կոտար, կմարեր ճրագի բոցը, ճրագամանը մազի չափ տեղից չշարժելով։ Էդպես հնարքով մարդ։

Նշան առավ ասելով, թե՝ կթռցնեմ բեկի փափախը և թռցրեց փափախը։ Խրատ չեղավ։ Կրակ էր, որ թափեցին, կրակ էր, որ թափեցին Ալու վրա։ Ճարը կտրած իգիթ Ալին զարկեց, վիրավորեց խոլամներից մեկին։ Էլի խրատ չեղավ։ Արունը կոխել էր բեկի աչքերը։ Էլի կրակ բացին, Բայրամ Ալին էս հեղին տվեց սպանեց բեկի ախպոր տղին... Բեկը տեսավ, որ բանը բուրդ է, խոլամների հետ պուկ եկավ փախավ։ Փախավ իրան քցեց ռուս զապտիների քովը։ Ղազախները եկան կռվի տեղը։ Հիմի արի տես, որ Բայրամ Ալու ոտին էլ գյուլլա էր առել, ոսկորը փշրվել։ չէր կրցել իգիթը փախնել։ Ղազախներն Ալուն բռնեցին, ծեծելով, ծեծելով տարան քաղաք, տվին իշխանության ձեռքը։

Ալին բռնվելուս ասավ աղջկան.— «Այ Մահնուր խանում, իմ աչքի լույս, ինձի զնչիլ պիտի զարկեն, Սիբիլ պիտի քշեն։ Ալլահի, փեյղամ-

բարի անունով երդում կուտամ ու երդում կառնեմ՝ հավատարիմ մնա ինձի ու քու սերին, մարդու չերթաս։ Ես զնջիլները կկոտրեմ, ուրտեղ էլ որ ըլնիմ, ուշ թե կանուխ թռնիմ կուգամ։

— Աղջիկն ալլահի ու փեյղամբարի անունով երդում կերավ։

Ռուսները դիվան նստան և Բայրամ Ալու ձեռքն ու ոտքը զնջիլ զարկեցին, քշեցին Սիբիր։

Աշըղները խաղ կապեցին Ալու վրա,— ու ամեն մարդ կասեր էդ խաղը։ Ես էլ ասեմ, լսե, ախպեր ջան։

Եվ Քյարիմը ցած ձայնով երգեց.

«Սարի ամպը գոռուն-գոռուն կըգոռա,
Բայրամ Ալին սարին թառած կըգոռա.
Էյ, Մեհդի բեկ, մուրազս մի ավիրե,
Որտ ոչխարը դանակից չի վախենա։
Ջան Մահնուր խանում, չեննաթի փերի,
Քու մով աչքերին գերի եմ, գերի։
Մեկ ձեռս՝ թվանք, մեկէլ ձեռս երկնքին,
Քեզի ասածու հրամանով խոսք ունիմ.
Էյ, Մեհդի բեկ, սերը զուլում մի դարձրու,
Թողում չկա սիրտը սրտից դատողին։
Ջան Մահնուր խանում, չեննաթի փերի,
Քու շեկ մազերին գերի եմ, գերի։

Բայրամ Ալի, իգիթ Բայրամ Ալի, քու կերած կաթը քեզ հալալ է։ Կրնա՞ր Բայրամ Ալին Սիբիր մնար, երբ իր սիրած աղջկա աչքն իրան ճամփին է։ Իսկի՛։ Բայրամ Ալին կոտրեց զնջիլը, փախավ, եկավ վաթանը, Աղմաղանու սարերը, դառավ ղաչաղ։

Գիտե՞ս, ախպեր ջան, ինչ անուշ բան է ղաչաղությունը — թվանքն առնիս, շահին հավքի (բազե) պես թռնիս սարերը, ազատ, լավ ընկեր տղոց հետ, ճամփեքը վախի մեջ պահես, անունդ աշխարհք ձեն տա, թագավորի զորքը հետևեդ ընկնի... մեկ օր էլ զարկվիս տղամարդու պես, ընկնիս չոլերի մեջ, ակռաներդ բաց՝ արևի դեմ ծիծաղես։ Մարդ մեկ օր ծնվել է, մեկ օր էլ պիտի մեռնի, բանը իգիթի անուն թողնելն է։ Էդ կմնա, ախպեր ջան, մենակ է՛դ, է՛դ... Հա՛, էն էի ասում, որ Բայրամ Ալին դառավ ղաչաղ։ Ու էդ ժամանակը իմաց է տալիս Մահնուր խանումին, թե եկել եմ, պատրաստ ըլնես, փախնենք, երթանք շահի հողը։ Էստեղ իմանում է, թե աղջիկը մարդու է գնացել։ Չի հավատում։ Ախպեր ջան, դուն ըլնեիր Ալու տեղը, կհավատայի՞ր, չէ՛, չէիր հավատա, տղամարդը չի հավատա, չէ՞ որ ուխտ կա, երդում կա։ Էսպես իգիթ Ալին չի հավատում, կուզե իրեն աչքով տեսնել բանը։ Գիշերանց, զողոտի

մտնում է գեղը, ելնում է Մահնուր խանումի մարդու տան երդիկը, իրան առաջուց ասել էին, թե ում է մարդու գնացել էդ հում կաթնակեր կնիկը։ Ելնում է երդիկը, նայում է երդիկից ներս, տեսնում է ծամ կտրած Մահնուրը ուրիշի գրկին...

Բայրամ Ալու ծնկները ծալ են ընկնում... էն կրնար երկուսին էլ գյուլլախորով անել, չի անում։ Իգիթը կնկա վրա գյուլլա չի քցի, կրնար մենակ Մահնուրի մարդուն զարկել. էդ էլ չի անում։ Բայրամ Ալին էլ սիրտ չուներ արուն թափելու։

Սիրտը կոտրած՝ ոտները քարշ տալով բռնում է Իրիվանի ճամփեն, շիտակ դիվանխանի դուռը, թե՝ ես Բայրամ Ալին եմ, փախել եմ Սիբիրից։

— Զնջիլը երդում կոտրող, խային կնկանից լավ է. ի՞նչ ասիր, ախպեր ջան...— դարձավ Քյարիմը ինձ և վերջացրեց պատմությունը, հառաչելով.— Ափսո՛ս իգիթ, ափսո՛ս Բայրամ Ալի»։

1924,
Վենետիկ

«ՀԱՄԲԵՐԱՆՔԻ ՁԻԲՈՒԽԸ»

Երկաթուղին ոլորվում էր Շիրակի ծաղկած դաշտերում։ Վագոնի լուսամուտից նայում էի այնքան սիրելի հողի կտորին, ուր խաղաց ու անցավ իմ բախտավոր մանկությունը։

Ահա՛ և Օհան-ամու ջաղացը։ Այստեղ էր մի ժամանակ լիկլիկում Օհան-ամու ջաղացը։ Առուն չորացել է հիմա, ջաղացը ավերվել է վաղուց, միայն երեք ուռի և մի բարդի է մնացել այն փոքր ծառուտից, որ տնկել էր Օհան-ամին ջաղացի շուրջը։

Ինչքա՜ն անգամ ենք նստել այս ծառերի տակ Օհան-ամու հետ և զրույց արել։

Այն օրվանից շատ բան է կուլ գնացել ժամանակի անհունության մեջ՝ անկրկնելի և անվերադարձ.— և Օհան-ամին էլ չկա, վաղուց մեռել է նա և թաղված է այս ծառերի տակ իր սրտի ուզածի համաձայն։

Եվ հիշում եմ քո իմաստուն խոսքը, Օհան-ամի. «Մարդը կերթա, աշխարքը կմնա»։

Մեր ջաղացից կես ժամ հեռու, Ախուրյանի զառիթափի վրա էր գտնվում Օհան-ամու փոքրիկ ջաղացը մի աղորիքով, որ գառնում էր Ախուրյանի մեջ թափվող մի կարկաչուն առվակի շրով։ Իր ձեռքով էր շինել Օհան-ամին ջաղացը և նրան կիպ տնակը, և իր ձեռքով էլ մշակում էր ոչ մեծ բոստանը, որ փռված էր ջաղացի շուրջը մինչև գետի եզերքը։

Երբ մեր ջաղացն էի լինում՝ հաճախ այցի էի գնում Օհան-ամուն։ Թեյ ու շաքար էի նվեր տանում նրան, որ միասին թեյ խմեինք և լսեի նրա զրույցները։

Շա՜տ վաղուց է այդ։ Շա՜տ տարիներ առաջ, այն պարզասիրտ և միամիտ ժամանակները, երբ Օհան-ամու ծերունի ընկերները, գյուղից գյուղ, ցուպերը շավիղների քարերին ծեծկելով, բիրի տակ մի հին բան թոնթնալով, կորամեջք ու տնկտնկալով գալիս էին ջաղացը հատակաց Օհան-ամու ընտիր թյությունից մի չիբուխ քաշելու և հնությունից մի-երկու խոսք իրար հետ սրտանց խոսելու համար, և նորից տնկտնկալով վերադառնում էին իրենց գյուղերը։

Պատանի երևակայությանս համար երևում էր լուրջ, մենակյաց Օհան-ամին, իբրև նահապետական դարերի մի խմաստուն, որ վաթսուն տարիների գագաթից նայում է աշխարհին, միտք է անում աշխարհի բանը՝ ծխելով իր «համբերանքի չիբուխը»։

Իմ թարմ զգայության վրա խորհրդավոր տպավորություն էր թողնում նրա անցրած ու ապրած կյանքը և իր ապրումներից գումարած մտքերը։

Մինչև քառասուն տարին Օհան-ամին ապրել էր իրեն պապերի գյուղում, աշխատել էր օր ու գիշեր, ցանել ու հնձել, Կողբ ու արանները քիրա-քյարվանի գնացել, ծնողներին խնամել ու պատվով թաղել, քույրերին ամուսնացրել, ինքն էլ ամուսնացել և որդիներ հասցրել։

Քառասուն տարեկան հասակում գյուղում հողաբաժին եղավ։ Հարուստներն իրենց մեջ բաժանեցին բերրի հողերը և ստերջ հողերը տվին թուլլերին, խեղճերին։

Օհանը զայրացավ։ Վառեց ու բորբոքեց հողազուրկների արդար վրեժը։ Գյուղի զրկված մասը ըմբոստացավ։ Հարձակվեցին, ծեծեցին ռեսին ու մի քանի հարուստների։

Գանգատը հասավ քաղաք։ Եկավ կաշառված պրիստավը մի քանի յասավուլներով (ոստիկան), հավաքեց ըմբոստներին, բարկացավ, ոտները գետին զարկեց ու քաշեց նրանց մարակի տակ։

Արյունը կոխեց Օհանի աչքը. ձեռքը ձգեց պատահած քարին և նետեց պրիստավի կրծքին։ Ծեծվողները թև առան, հարձակվեցին յասավուլների վրա, գինաթափեցին նրանց, քարահալած արին պրիստավին ու ռուսիկանների և գյուղից քշեցին։

Երրորդ օրը, երբ կազակները եկան նրանց ձերբակալելու՝ նրանք գյուղից փախել էին արդեն, ելել էին սարերը, «զալազ» էին ընկել։

Նարճ ժամանակի ընթացքում փախստական գյուղացիները մեկ-մեկ իջան գյուղը, ընկան հարուստների ոտները, ներում խնդրեցին և ներվեցին։

Օհանը մնաց չորս ընկերով փախստական։ Մի ժամանակ հետո, չորս ընկերն էլ եկան, վզները գրին հարուստների շեմին, ներում ստացան։ Բայց Օհանը մնաց մենակ և անսասան։ Նա չդիջեց։ Մերժեց հարուստների պատգամը, որ ուզարկել էին նրանք — հանձնվել, զղջալ և թողություն ստանալ։

Մի օր էլ, մատնությամբ, մի գյուղում բռնվեց նա։ Զեռները կապեցին հետևը, տարան Գյումրի քաղաքը, դատեցին և չորս տարվա բանտարկություն վճռեցին։

Երբ Օհանը բանտից ազատվեց, գյուղն եկավ, որդիները հասել էին արդեն, ուժգնել և հարստացել, բայց իրեն մենակ զգաց գյուղում, չուզեց տեսնել իր դավաճան, փոքրոգի ընկերների երեսն անգամ։ Չուզեց մնալ գյուղում, որդեկոր ստիպված չլինի պատահելու իր թշնամի հարուստներին։

Արդեն բանտում երազել էր մեկուսանալ — «աշխարհաթող» լինել։ Եվ հիմա, բանտից ելնելով՝ վճռեց և վերջնականապես տեղափոխվեց ջաղացը։ Եվ միայն շատ անհրաժեշտ դեպքերումն էր գյուղ գնում։

Անդոր եղան կնոջ և որդիների թախանձանքները՝ բեկանելու փայփայած նրա իզձը։

«Քանի ողջ եմ,— այսպես ասաց ու այսպես կտակեց իր որդիներին.— էստեղ կաշխատեմ կապրեմ. երբ մեռա, էստեղ թաղեցեք ինձի՝ իմ ծառերիս տակը»։

Եվ այսպես «աշխարհաթող» եղավ Օհան-ամին։

* * *

Այսօրվա պես հիշում եմ իմ այցելած օրերից մեկը։

Ամառ էր։ Ախուրյանում լողանալուց հետո գնացի Օհան-ամու մոտ զրույց անելու։

Օհան-ամին թիկն էր տվել ծառերի տակ։ Մի փոքրիկ աթաթեին մատնաչի ծածկում էր նրա գլխի նոսր, ճերմակ մազերը։ Ճակատը շա՜տ կնճռոտված էր երևում։ Ահագին ձյունափայլ մորուքը խառնվել էր բաց

կրծքի ալեխառն մազերին։ Ինքնամփոփ ծխում էր չիբուխը։ Ոտների տակ մրափում էր Ասլանը, Օհան-ամու հավատարիմ, հսկա գամփռը։

Բարև տվի և թեյ-շաքարը դրի կողքին։ Խորշոմների մեջ կորած խոհուն աչքերով նայեց ինձ։

— Գալդ բարի, աղախպորս տղա,— այսպես էր նա միշտ կոչում ինձ։

Միջօրեի ճպուռներն արևաբորբոք ճռռում էին, կարծես արևի ձայնն էր այդ, կամ ուղղակի, արևի ճառագայթներն էին ճռռում այսպես բարկ ու բորբոք։

Ջաղացը ծուլորեն չխկչխկում էր։ Ջաղացի դռանը կապած կար մի խղճուկ էշ, որ նամդով բռում էր մեջքը պատի անկյունին։ Հավերը քջուջ էին անում այս ու այն կողմ։

Ինձ տեսնելով մոտեցավ Օհան-ամու պառավը, որ եկել էր ամուսնուն այցի։

— Ես՝ չէ, թող աղեն ըսե,— դիմեց ինձ,— հայը էսօր քեֆ չունի, կըսե՝ մեջքս կցավի։ Էս չորում հերիք մնա, ինչի՞ համար։ Թող տուն գա, առոք-փառոք ապրի. չարդվելիք հարսներն ինչի՞ համար են, թող շահեն։ Էս օր-ծերությանը դատար չունի. մեկ դլուխ կդատի ու կաշխատի։ Ի՞նչ պիտի տանի աշխարքին։

— Կնի՛կ, հերիք փնթփնթաս. քանի հաղար անգամ ասել եմ քեզի — ես աշխարհաթող եմ եղել. ես էլ գեղն եկողը չեմ։ Խոսքս խոսք է։ Աշխատե՛լ։ Քանի ձեռքս բերանս կհասնի, պտի աշխատեմ։ Հո հարստության համար չե՞մ դատում. իմ աչքս կուշտ է։ Տղերքս իրանց համար, ես ինձ համար։ Իմ հաշս իմ քրտինքովս պիտի ուտեմ։ Ես քեզնից լավ գիտեմ, որ աշխարքից բան տանող չի եղել, բայց մեկնակ թե՝ մարդս էս աշխարքն եկել է աշխատանքի համար։ Ձեռքս բան, ոտքս՝ գերեզման։ Գործա՞նք։

Դե՛հ, էս չայ-շաքարն առ, սեղան բաց, չայդանն էլ դիր, աղախպորս տղի հետ հաց ուտենք, չայ խմենք։

Երբ պառավը գնաց, ես հարցրի.

— Օհան-ամի, հիվա՞նդ ես։

— Չէ՛, չանամ, մեջքիս ցավը հո նոր չէ, հին բան է, բանտից եմ հետս բերել։ Հիմի հո դպա ջահություն չե՞նք երթա. ավոդը ինչ որ տվել է, հիմի քիչ-քիչ ետ կառնի։ Էդպես է աշխարքիս բանը։ Ես էլ կամաց-կամաց ճամփա կիստկեմ դպա հորս քովը։

Ու չիբուխը խրելով գոտկի ծալքը՝ թեթև շարժումով ոտքի ելավ։

— Էրթանք բոստանը, մեկ քիչ սոխ, թարխուն քաղենք։ Էսօր կնիկս ինձի համար գառով փլավ է բերել, ուտենք իրար հետ։

Մարգերի նեղ արահետով քայլում էր Օհան-ամին՝ առանց գավազանի. նա տակավին գավազան չէր գործածում։ Ասլանը կրնկակոխ՝ լեզուն դուրս ձգած՝ հետևում էր նրան։

Ես գնում էի նրանց հետևից։

Օհան-ամին կորաքամակ էր արդեն, գլուխը բավական թաղվել էր ուսերի մեջ. հաստ, բայց կարճ ոտները դեռ տոկուն էին ու ամուր։

Ասլանը՝ կապտավուն մազերով ածդահա գամփռը, իր տոհմի երրորդն էր, որ ապրում էր այստեղ։ Նրա եղբայրներն ու քույրերն ապրում էին դյուղում, Օհան-ամու տանը։

Այս Ասլանից առաջ երկու Ասլան ապրել էին այստեղ՝ իրար հաջորդելով և նրանց թաղել էր Օհան-ամին բոստանի ծայրում ու վրաները քար ձգել։

Օհան-ամին թարմ կսկիծով մեկ-մեկ հիշատակում էր նախորդ Ասլանների բարեմասնությունները, նրանց հետ կապված դեպքերը, նրանց անձնազոհ քաջությունները։

Ասլանը Օհան-ամուց մի վայրկյան չէր բաժանվում. երբ իրար չէին տեսնում՝ անհանգիստ ու ջղայնացած որոնում էին իրար։

Իրար հետ սեղան էին նստում։ Օհան-ամին ուտում էր իր ճաշը, Ասլանը՝ իր լափը։

Ջմռան երեկոները, Օհան-ամին բուխարիկի կողքին նստած՝ լուռ, իր չիբուխն էր ծխում, Ասլանը նրա ոտների տակ, գլուխը թաթերի վրա դրած, լուռ, չիբուխի ծուխի պարուրկներին էր հետևում։

Երբ մեկը Ասլանի մոտ «Օհան-ամի» արտասաներ, նա աչքերը կբանար լայնորեն, ականջները կսրեր, պոչը կշարժեր։ Օհան-ամու անունը թիկդ էր հանում Ասլանի հոգին։

Վա՜յ թե մեկը Օհան-ամու բացակայության ժամանակ ձեռք դիպցներ նրա որևէ իրին՝ Ասլանի զայրույթին չափ չէր լինում, կհաչեր ու կգազազեր մինչև տերը գար. սակայն ինքը սիրում էր խաղալ Օհան-ամու իրերի հետ։ Հաճախ այսպիսի հանաքներ էր անում։ Թաքցնում էր Օհան-ամու թյուրյունի քսակը կամ թաշկինակը, և սուտ-քուն մտած, ներքին հրճվանքով նայում էր՝ թե ինչպե՞ս իր տերը քրքրում է ամեն մի անկյուն՝ կորցրածը գտնելու, և հետո, ինքը քնած տեղից ելնում էր, որոնում, գտնում իրը և ուրախ-ուրախ բերում հանձնում Օհան-ամուն։

Մի օր, եղբորս երեխաներն Ասլանին բռնել էին դաշտում, ուժով տարել էին մեր տուն, փակել մի սենյակում, առատ միս դրել առաջը, որպեսզի այս կերպով սովորեցնեին մեր տան վրա։ Բայց երկու օր Ասլանը գրեթե ոչինչ չէր կերել, անընդհատ ոռնացել էր՝ մինչև որ մայրս արձակել էր նրան։

Եվ Ասլանն խկուն, խելակորույս, սլացել էր Օհան-ամու մոտ։

Երբ ես մի օր Օհան-ամուն պատմեցի Ասլանի կրած տանջանքը մեր տանը, նա հանգիստ սրտով ասաց.

— Թագավորի պալատն էլ տանես ու ամեն օր հավ ու լոր տաս, էլի պտի պրծնի, գա։

Եվ ավելացրեց.

— Էս շուն է. հալա մեկ ասա՝ շու՞ն։ Էս մարդ արարած չէ։ Էս՝ կենիկարմատ չէ։ Էս շուն է — հավատարմություն։ Մարդու բնույթն իսկի չի կրնա հասկանա շան բնույթը։ Մարդը սուտ է, հավատարմությունը մարդու համար անհասկանալի բան է։

* * *

Նստեցինք ծառերի ստվերում։ Ասլանը սեղանակից էր մեզ՝ մի փոքրը հեռու պպզած։ Մենք գառի ոսկորները նետում էինք նրան. նա էլ ճարպկորեն այնպես էր դիրքավորում գլուխը, որ ոսկորներն ուղղակի ընկնում էին երախի մեջ և մի ակնթարթում հզոր ատամներով փշրում էր ոսկորները։

Օհան-ամին մի բաժակ օղի խմեց, մի բաժակ էլ ինձ մատուցեց.

— Խմե՛, աղախպորս տղա, խմե, որ ուրախանանք։ Էս աշխարքում գլխավոր բանը ուրախությունը ընելն է։ Ուրախությունը բախտավորության կեսն է։ Ինչ որ ընելու է՝ պտի ընի. էս գլխեն ի՞նչ տալացուք ունենք տխուր ընելու։ Էս սհաթն է մեր ձեռքը. քանի էս սհաթը մեր ձեռքն է՝ ուրախ ընենք, մեկէլ սհաթի տերը մենք չենք, կարելի է կանք, կարելի է չկանք։

Օհան-ամին բաժակը կրկնեց։

— Ես չար բան սիրող չեմ, կռիվ ուզող էլ մարդ չեմ. ու վիճակիցս էլ շա՞տ գոհ եմ։ Էս ջաղացը, էս կտոր հողը շա՞տ է ինձի համար։ Աշխարքը որ բաժնեն, կարելի է էսքանն էլ ինձի չհասնի։ Էնքա՞ն մարդիկ կան — անտուն, անհող, եանչյալ աղքատ...

— Է՛յ գիտի, Միրզա Մեհդի, ականչդ կանչե՝ թե որ ողջ ես. թե էն է՝ պառկել ես հողի տակ, տղերքդ ողջ ընեն։ Էսպես մեկ տաղ կերգեր բանտի մեջ, երկու տարի միալար։ Էդ տաղի խոսքերը մտքիս մեջ տրպվել են։ Քսան տարի է՝ ամեն օր կրսեմ ինձ ու ինձ։

Կանալ դաշտի պարզ հոլիկը
Շահի ոսկե ջյուշքից լավ է։
Քրտինքովդ կերած հացը
Սուլթանների հաշից լավ է։

Շահիրների մուղամներից
Քամու աղատ շունչը լավ է։
Հարուստ, հպարտ ախպորիցդ
Սրտամոտ օտարը լավ է։

— Լավ խոսքեր են,— ասացի ես,— բայց ո՞վ էր Միրզա Մեհդին։

— Էն ատամ էր։ Իմ տարիքիս մարդ էր։ Կնդծ փող էին դտել քովը, բերել կոխել էին բանտը։ Երկու տարի իրար հետ շա՞տ սիրով ապրանք, կողք-կողքի, մեկ ամանից էինք ուտում։ Իմ ու քու չունեինք։ Չգիտեմ՝ մեղավոր էր, թե փորձանքի մեջ ընկած.— բանտում բռնված մեկը չկա, որ իրան մեղավոր հաշվի, ամեն մարդ իրան արդար, անմեղ է հաշվում.— բայց ազնիվ, պատվական մարդ էր, իմաստուն մարդ էր, խելքի ծով. շա՞տ երեսելի խոսքեր ուներ։

Կնստեր թախտի վրա, չիբուխը կքաշեր միալար ու կասեր.— «քաշենք համբերանքի չիբուխը մինչև աղատության դուռը բացվի»։ Ես էլ նրանից սովորեցի էդ խոսքը, ես էլ կքաշեմ հիմի համբերանքի չիբուխը՝ մինչև...

— Կնչ՞կ, մեկ հատ էլ լից,— ընդհատելով իր խոսքը՝ Օհան-ամին դիմեց կնոջը, և լիքը բաժակը վիրցնելով, կարծես, մի վայրկյան մեջնից անջատվելով՝ հայացքը հառեց հեռուն։

— Կենա՛ցդ, Միրզա Մեհդի, ախպեր ջան,— ասաց և բերանը սրբելով դարձավ ինձ.

— Հա՛, էն կուզեի ասել՝ աշխարքը էն գլխից համբերանք է եղել ու կա...

Շա՞տ տեսակի մարդիկ կային բանտը — եփված, աշխարհատես։ Հայ ասես, Թուրք ասես, էլ քուրդ, ըռուս։ Վարժապետ կար, վաճառական, գրել-կարդալ գիտցող մարդիկ։ Շա՞տ բան սորվեցի էդ մարդկանցից։ Վաստակածդ փողը քուկը չէ։ Կրնա ուրիշը գողնա տանի, բայց ինչ որ սորվեցիր՝ էն քուկդ է։

Մեկ լավ ջահել տղա կար՝ անունը Սարգիս։ Հարաղաստ ախպերը քառասուն տեսակ գրկել էր նրան, վերջն էլ հողը ձեռքից ուղեցել էր խլի։ Սարգիսը կրակ էր բացել վրեն, վիրավոր էր արել, բայց չէր սպանել։ Բանտ էին քցել մեկ տարով։ Բանն աջողի, անուշ տղա էր. գառի պես, պատվով։

Էդ ազահ ախպոր վրա Միրզա Մեհդին ըսավ։

— Ժամանակով աճամի հողը մեկ մարդ կուգա, կիջնի մեկ գեղ ու կխնդրվի՝ իրան դրկից չինեն, հող տան, ապրի։ Գեղի մեծերը կրսեն.— էս հողը քեզի. կրսե՝ քիչ է։ Կրսեն.— էն մեկն էլ քեզի. կրսե. նորեն քիչ է. էն ժամանակ գեղի մեծերը կրսեն.— է՛յ դու ծակաչք մարդ, ահան

մեր հանդը առաջդ է, վազե՛, ինչքան ոտքդ կտրեց՝ էն քեզի։ Էս մարդն էլ էնքա՞ն կվազե, էնքան կվազե, որ վերջը շունչը կկտրի, սիրտը կպատռի, կընկնի, կմեռնի... Հիմի քու ախպերն է. պատիժն առավ, մահը մոտիկուց տեսավ։ Էդքանն էլ բավական է։

— Մեկ հատ էլ խմենք ու ըսենք՝ հերիք է։

Իմ մերժումիս վրա՝ ինքը խմեց։

— Թանտի մեջ մեկ կոտր ընկած վաճառական կար, շատերի փողը կերել էր։ Միծաղու բան էր։ Ում փողը որ կերել էր, նրանց շատերից ամեն օր ուտելիք ու խմելիք կատանար։ Էդ բանի վրա ինքը կըսեր թե՝ ես Նոյ նահապետի պարտապանն եմ։ Ըսել է թե՝ ջրհեղեղի ժամանակ, երբ որ տապանը ջրերի վրա էր, մեկ մարդ լող է տալիս դպա տապանն ու գոռում.— Նո՛յ ջան, նոպանը բցե, տապանդ ելնեմ։ Միտքդ չէ՞, որ դու եղ չունեիր, քեզի մի տիկ եղ տվի։ Նոյ նահապետը չլսելու տվավ ու մտքի մեջ ըսավ.— Ազատեմ, հետո պտի կանգնի, եղը պահանջե։ Թող ջրի տակն անցնի։

Մեկ ուրիշ մարդ մոտեցավ, թե՝ Նո՛յ, ազատի ինձի, դու լավ մարդ ես։ Էն տարին ալյուր չունեի, մեկ չվալ ալյուր փոխ տվիր... Նոյ նահապետը տվոցը, թե՝ ազատեցեք, խեղճ է։ Ու մտքի մեջ ըսավ,— որ խեղդվի, ալուրս պտի կորի. ազատեմ, կելնի, կաշխատի, պտրտոքը կուտա։

Հիմի էլ էս իմ պարտատերերն են։

Օհան-ամին չիբուխը լցրեց և մի կում ծուխ առնելով ու արձակելով, շարունակեց.

— Էսպես, բանտ ըսածդ մեկ հավաք աշխարք է։ Մենակ էն զանազանությունը կա, որ աշխարքում չբռնված գողերն ու արունքտերերն են ապրում, իսկ բանտի մեջ՝ բռնված գողերն ու արունքտերերը։

Թանտի մեջ հասկացա բանի ուղն ու ծուծը. էն թե՝ ամեն, ամեն գեշ բաների պատճառն իմ ու քուն է։ Գեղ ու քաղաք իրար զզում են փողի, հարստության համար, ուրիշի աշխատանքը տանելու համար։

Ու քանի որ փողը կա, մարդ չկա, քանի իմ ու քու կա, սեր ու խիղճ չկա։ Էդտեղից էլ հարուստ ու աղքատ, զրկող ու զրկվող, բանտ, արունհեղություն։

Թուրքը կըսե.— «Կռիվն ուրտեղի՞ց է։— Մեկը կուտե, մեկէլը կաշե.— կռիվն էդտեղից է»։ Ես իմ մասիս.— հաշիվս իստկել եմ աշխարքի հետ։ Ուրիշ ի՞նչ կրնայի անել։ Կռվեցի, բանտ դրին, մենակ մնացի։ Մենակ մարդն ի՞նչ կարող է անել աշխարքի սարքի դեմ։ Զարկես-զարկվես, օգուտն ի՞նչ։ Գեղ պիտի կանգնի, որ գերան կոտրի։ Հիմի՝ իմ ձեռքս առանց ուրիշի բերնից հաց փախցնելու՝ իմ բերնիս հացը կվաստակեմ, և էլ արդար հացս միշտ կիսել եմ ուրիշի հետ, ծանոթ-անծանոթի հետ։

Ուրախ աղմուկով թեերը թափ տալով եկավ խնչան Մխոն։

— Մխո ջան,— ասաց Օհան-ամին,— նստի հաց կեր։

— Մխոն էնքան ուրախասիրտ է,— զարմավ Օհան-ամին ինձ,— գիտես թե ո՛չ պատավանալ կա, ո՛չ մեռնել։ Աշխարքը իրան վրա ծախես, մեկ կոպեկի չի առնի։ Ամենեն հարուստ մարդն է, ինչու որ ամենեն գոհ ու կուշտ մարդն է։ Ամեն բանի հաղթել է։

Մխոն Օհան-ամու քրոջ որդին էր՝ մանուկ հասակից որբացած։ Մեծացել էր քեռու տանը, իրրև նրա որդիներից մեկը։ Մոտ երեսուն տարեկան կլիներ, նեղ ճակատով, մեծ բթով և բարձրահասակ։

«Խելառշունչի մեկն է»,— գյուղացիները այսպես էին բնորոշել նրան։ Խելառ-խելոք։ Խոսում էր անկապ, տակից-վրայից, սարից-ձորից։ Սակայն մշտական զվարթ տրամադրության մեջ էր այդ մարդը։ Թվում էր, թե՝ երբեք տխրություն զգացած չէր կարող լինել նա։ Աշխարհի չար իրերը նրան բարի դիմքով էին երևում։ Ամեն բան ծիծաղի առիթ էր նրա համար — մահն էլ, մահի բոլոր տարրերն էլ — ցավ, հիվանդություն, ծերություն։

Մխոն ապրում էր Օհան-ամու հետ, թեև նրա մի ոտը ջաղացումն էր, մյուս ոտը՝ գյուղում։ Միասին վարում էին իրենց փոքր տնտեսությունը՝ բաղկացած մի-երկու տասնյակ հավերից ու բադերից և մի կըթան կովից։ Միասին կոանում էին ջաղացքարը և սարքի գցում։

Մխոն անչափ նվիրված էր Օհան քեռուն, նրա խոսքին՝ հլու-հնազանդ։ Եվ միայն Օհան-քեռու հարցերին էր լուրջ պատասխանում։

Մխոն գդակ չէր գնում, գարուն-ձմեռ։ Մազերը թաղիքի պես կպել էին գլխի մաշկին։ Միայն սաստիկ չրտերին բաշլուղ էր փաթաթում գլխին։

Երբ գդակ էին տալիս՝ նա մի կողմ էր նետում, ասելով.— «Իմ փափախս գտեք, տվեք՝ դնեմ. ուրիշը չեմ ուզի։ Իմ փափախս վեցը հատ աբասի արժեր»։

Գյուղի երիտասարդները, յուրաքանչյուր անգամ նրան տեսնելիս՝ հարցնում էին.

— Մխո՛ ջան, փափախդ ո՞ւր է։

Եվ Մխոն ամեն անգամ, օրական հարյուր անգամ իսկ, միևնույն պատասխանն էր տալիս.

— Ի՞նչը։

— Փափախդ ո՞ւր է։

— Ո՞ւմ։

— Քու փափախդ ո՞ւր է։

— Փափա՞խս, հա՛։ Քամին տարավ փափախս։ Չդիտեմ, խոլեռի տարին էր, թե քեռուս ձիու կորած տարին, մեկ սատանի քամի եկավ, աշխարք առավ մեջ, չաղցի քարի պես պտտցուց, ֆռռացրեց։ Ես մի մենձ քարի տակ մտա, քարը բռնի, տափ եղա։ Մենակ փափախս տարավ, էդ տանելն է, որ տարավ։ Հիմի վո՞վ դիտե, փափախս ո՞ր սարի ստվերն է կորել, ո՞ր ծովերու վրեն կամբտմբա։

Ի՞նչ փափախ, ի՞նչ փափախ, վեցը հատ աբասի արժեր։

Միսոն սեղանի ափին ծունկի եկած՝ ձեռքին բնկածը խոթում էր բերանը և խնդումներես նայում Օհան-ամուն։

— Միսո, զե՞ղն էիր,— հարցրեց Օհան-ամին։

— Վո՞վ։

— Դու գե՞ղն էիր։

— Չէ, քեռի ջան, գնացել ճամփու վրեն կայնել էի Եկոզ-Էլիսացողի հետ մե-քիչ խորաթա էնելու։

— Քեռի ջան,— բարձր ծիծաղով ավելացրեց,— ըսին թե՝ հառոմցի Բաթո աղեն մեռել է, հա՛, հա՛, հա՛, մեռել է։

Եվ ծիծաղից դողում էր ողջ մարմնով։

Օհան-ամին աչքերը մի պահ գոցեց, ձախ ձեռքով տրորեց ճակատը և ապա աչքերը վրաս հառելով՝ ասաց.

— Գոռզ-գոփոզի մեկն էր, աղքատի շապիկը վրայից հանող։ Տեղովը որ արև-արեղակ ըլներ էդ Բաթո աղեն, էլի մեկ մարդու չէր կրնա տաքացնե։

Ողորմի՜ կողքի մեռելներին...

Եվ մի երկու ումպ թեյից հետո՝ շարունակեց։

— Լավ կճանչնայի, ինչքան որ ագահ էր, էնքան էլ կծծի էր։ Աշխարքը իրան տայիր՝ աչքը էլի մրջյունի տարած մեկ գարի հատիկի վրա կըլներ։ Ագահ մարդու փորը կրնա կուշտ ըլնի, բայց աչքը միշտ անոթի կըլնի։

Էս մարդը բան էլ չէր ուտում, միալար կդիզեր ու կդիզեր։ Տղա զավակ էլ չուներ. դիզածը մնաց փեսաներին։ Էդպես է աշխարքիս բանը՝ կծծի մարդու վիզը ոջիլը կուտե, փողը՝ ուրիշը։

— Մարդը գնացական է,— ամփոփեց իր մտքերը Օհան-ամին,— նրա լավ գործը՝ մնացական. ըսել է՝ ինքն է մնացական։ Ա՛յ, խոսքի օրինակ, էս շաքարը գցեցիր չայի մեջ, հալավ, կորավ, չկա. բայց չայն անուշցավ։ Էնպես էլ լավ մարդը կմեռնի, բայց նրա լավ գործը աշխարքը կանուշցնե։ Թե չէ առանց լավ մարդու աշխարքը շա՜տ դառն է՝ օձի լեղի...

— Վո՞վ,— հարցրեց Միսոն։

— Բաթո աղի վրա է խոսքս, Միսո ջան։

— Որ մեկ բրդում հաց տար ուրիշին, ի՞նչը կծովեր,— ասաց Միսոն ջրքշլալով։

— Ղուրբան եմ եղել էդ ճակատիդ, Միսո՜ ջան,— խրախուսեց Օհան-քեռին մի մեծ կտոր շաքար Միսոյին տալով, որը դոթ-դոթ աղմուկով մանրեց ատամների տակ։

Քայլ առ քայլ երեկոյանում էր։ Լեռները ծփում էին մանուշակի գույների մեջ. արևածաղիկները ոսկե գլուխները կախում էին։ Դաշտերից ու արտերից դանդաղ-դանդաղ տուն էին դառնում շինականները։

Ես վեր կացա գնալու։ Օհան-ամին ուղեկցեց ինձ մինչև բոստանի ծայրը՝ ճանապարհին մի քանի մատղաշ վարունգներ քաղելով ինձ համար։

Բոստանի ծայրին կանգնեցինք։ Օհան-ամին ծանրությամբ նայեց շուրջը — դաշտերին ու գետի փայլփլուն ոլորներին, դաշտերի մեջ ձգվող շառավիղներին, նայեց հեռավոր լեռներին, որոնց նայել է տասնյակ տարիների ընթացքում, և մայր մտնող արևին նայեց, ու չիբուխը վառելով ներս տարավ մի ումպ ծուխ, և ապա ծուխ ու հոգոց իրար խառնելով, ասաց.

— Է՜ է՜հ, ծերացա՜նք, ըսել է՝ եկանք հասանք ծերին։ Ամեն բանի ծերին, կյանքի ծերին, աշխարքի ծերին... Վնաս չունի։ Մեկ խնդրանք ունիմ — քանի ողջ եմ, ում ու ձեռով մնամ, գետնին գերի չըլնիմ, աշխատեմ, ու էստեղ, ջաղացիս դուռը նստած, համբերանքի չիբուխս քաշեմ, ու ամեն օր լսեմ բարի, ուրախ լուրեր աշխարքիս չորս դիերից, ամեն կողմերից։ Էլ ուրիշ բան չեմ ուզի...

* * *

Իմ սիրելի՜ Օհան-ամի։

Շա՜տ և շա՜տ տարիներ են անցել այն օրերից, շա՜տ բան է խավարել իմ հիշողության մեջ, սակայն անջնջելի է մնացել քո նահապետական պատկերը իմ հոգում։

Եվ հիշում եմ միշտ քո անմոռաց զրույցները, և քո համբերանքի չիբուխի խաղաղ ծուխը աչքիս առջևն է դեռ, և քո հանգիստ, հնամենի ձայնը ականջումս է տակավին...

1928 դեկտեմբեր,
Երևան

ԾԱՌԱ ՍԻՄՈՆԸ

Վաղուց անցած-գնացած օրերից է այս վերհիշումը։

Իմ բարեկամ մի ընտանիք Սիմոն անունով մի սպասավոր ուներ։ Սիմոնը տարիներից ի վեր ծառայում էր նրանց մոտ. գոհ էին նրա աշխատանքից և թվում էր, որ ինքն էլ գոհ էր նրանցից։

Մի օր Սիմոնը ներկայանում է տանտիրուհուն և ասում.

— Խանում, ներող եղեք, ես ուզում եմ տուն գնամ, մեր գեղը։ Շատ շնորհակալ եմ ձեզանից, բայց էլ չեմ ուզում ծառայել։

— Ինչո՞ւ, Սիմոն ջան,— զարմացած հարցնում է տիկինը,— չէ՞ որ մենք քեզ միշտ լավ ենք նայել, տարիներ շարունակ մեր տանն ես եղել, սովորել ենք իրար։ Հիմա ի՞նչ պատահեց, ասա սրտաբաց։ Թե ռոճիկդ չիչ ես գտնում՝ ավելացնենք։ Էնպես չինի, որ գոհ լինես մեզնից և մեր տանը մնաս։

— Չէ՛, խանում ջան, գիտեմ, որ ինձ հետ լավ եք վարվել, և ռոճիկիս մասին էլ գանգատ չունեմ. միայն թե ուզում եմ գեղ գնամ, ժամանակավոր. կարելի է մի քանի ամիս անց էլի եկամ։

— Բայց ինչո՞ւ ես մնում այդքան երկար ժամանակ. գեղում ի՞նչ կա որ...— Սիմոնը լռում է։

— Մեկ էլ որ՝ շատացիր գնալուց պատճառը։

— Խանում ջան, ճշմարիտը որ կուզես իմանալ՝ ասեմ,— վճռողական շեշտով պատասխանում է Սիմոնը,— ուզում եմ գնալ, որ էլ իմ անունը չլսեմ։ Չլսեմ անունս՝ ակամայ հանգստանա։ Թե չէ, էս ինչ կյանք է, ես կխելագարեմ։ Շարունակ, ամեն օր — Սիմոն, սամավարը քցե, շո՛ւտ, շո՛ւտ արա։ Սամավարը քցում եմ, կրակը փչում եմ, մեկ էլ — Սիմո՛ն, աղայի կոշիկները արի տար, շուտ սրբիր՝ բեր։

Վազում եմ, կոշիկները տանում, սրբում եմ շտապով, հանկարծ՝ Սիմո՛ն վազ ֆայտոն բեր, օրիորդը տեղ է գնում, շո՛ւտ, շո՛ւտ։ Վազում եմ ֆայտոն բերելու՝ սամավարը թողնելով իր բախտին, կոշիկները սրբելը կիսատ, ֆայտոնը բերում եմ։ Սամավարը հփել, ջուրը թափվել է. նորից ջուր եմ լցնում, նորից ածուխ եմ քցում։ Մեկ՝ սամավարն եմ փչում, մեկ՝ կոշիկները սրբում։

Նորից անունս.

— Տո՛ տղա Սիմոն, չայն ո՞ւր մնաց. բերաններս չորացավ։ Դեհ, գնա մի լիմոն էլ բեր, միայն շո՛ւտ արա։

Մյուս կողմից աղայիս ձայնը.

— Տո՛, Սիմոն, կոշիկ սրբե՞լ էր, թե սենյակ սրբել։ Մի ժամ եղավ Շտապում եմ, շո՛ւտ արա։

Չեռքս կոշիկի միջից չհանած՝ դռան զանգը տալիս են։

— Սիմո՛ն, վազի՛ր, դուռը բաց,— էդ միջոցին, մեկ էլ պստիկ տղան.— Սիմոն, թոռ մի տուփ պապիրոս բեր։ Դե՛հ, քեզ տեսնեմ... Դեհ, խանում ջան, բա ես ո՞նց սենեմ, որ չխելոեմ։ Օրը հաղար անգամ անունս լսում եմ.

— Սիմո՛ն, արի,
Սիմո՛ն, գնա,
Սիմո՛ն, տար,
Սիմո՛ն, բեր,
Սիմո՛ն, վազե,
Սիմո՛ն, թոռիր,
Սիմո՛ն, Սիմո՛ն,
Էլի
Սիմո՛ն, Սիմո՛ն...

Էդ՝ ակամայս խարտոցող Սիմոն անունը երազիս մեջ էլ եմ լսում, քունս հարամ է անում։

Տունը մարդ չեղած ժամանակ էլ պատերը ձեն են տալիս.— Սիմո՛ն, Սիմո՛ն։

Անունս ինձ թշնամի է դառել, աչքիս գրողն է դառել. կատաղեցնում է ինձ, գժվեցնում է ինձ։ Կուզեմ փախչեմ աշխարհի ծայրը, որ զզվելի անունս էլ չլսեմ։

Չէ՛, խանում ջան, էլ ուժ չունեմ. հիմի շատ եմ խնդրում իրավունք տաս, երթամ մեր գեղը, մի քանի ամիս ակամայս հանգստանա, հետո նորից կգամ։ Խոսք եմ տալիս, միամիտ եղեք...

1931,
Փարիզ

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՒՇԵՐ

1927 թվականի ամառն է։ Իմ հայրենի Շիրակի դաշտումն եմ։ Ձիով դանդաղ գնում եմ այն գյուղը, ուր ջրաղաց ունեինք և ընդարձակ հողեր, Ախուրյանի ափին, բարդիներով և ուռիներով պարսպած, և պարտեզներ՝ վարդենիներով վառ։

Ահա մեր գյուղի հանդերը, ուր աղջիկների և տղաների հետ բանջար էինք քաղում, ահա՛ լեռները, ուր դիշերել եմ ոչխարների հոտերի մոտ, երբ ընկերներիս հետ հովիվ էի։

Ահա՛ մեր ջրաղացի առուն... ցամաքած է նա վաղուց, որովհետև ավերակ է մեր ջրաղացը. տեսնում եմ հեռվից մեր տան և ջրաղացի ավերակները։ Թուրք զինվորի ձեռքը և երկրաշարժի տարերքը կործանել են նրանց. ահա՛ մեր հողերը և պարտեզները, մեր բարդիներն և ուռիները՝ խորտակված են մեծ մասով և արմատախիլ եղած...

Նվիրական վայրե՞ր, ուր անցան իմ մանկությունը և պատանեկության առաջին տարիները, ուր խաղացի ընկերներիս հետ և մենակ թափառեցի նրանցներով թնավոր, ուր զգացի առաջին սիրո սրբությունը և նրա քաղցր վիշտը...

Ջիպս ամբակների տակից բարձրանում է ճանապարհի փոշին, և փոշու նման բարձրանում են հուշերս — բարձրանում են ապրած օրերից և զգացած վայրերից։ Հոգուս մեջ տեսնում եմ ապրած իմ քաղցր օրերը այս նվիրական հողերի վրա, նվիրական Ախուրյանի ափին։

Ահա՛ հայրս և մայրս։ Հայրս լուրջ դեմքով, բարի և պատկառելի, մայրս սրբուհու պատկերով, անուշ, վշտոտ և գթառատ։

Հայրս քաղաքի առևտրական իր գործերը հանձնել էր եղբայրներիս և մորս հետ տեղափոխվել էր գյուղի կալվածը՝ վերջին տարիները անվրդով ապրելու համար։ Ես էլ, որպես ծնողներիս կրտսեր որդին, նրանց հետն էի։ Հարևան մոտիկ գյուղի դպրոցն էի հաճախում մինչև մեծանալս, հետո քաղաք փոխադրվեցի։

Առավոտ է։ Հայրս հագել է քիրմանշալի խալաթը (ղգեստ), նստել է մտամփոփ, վերացած, Սաղմոս կամ Նարեկ է կարդում, կիսաձայն։ Դռան ճեղքից երկյուղածորեն նայում եմ հորս. կարծես, խեղճ մարդը մի ծանր ոճիր է գործել, որ հիմա, աչքերը արցունքով լի, կարդում է սուրբ գիրքը՝ քավելու համար իր մեղքը։

Մայրս դուրս ու ներս է անում. քաղցր և բարի ձայնով կարգադրություններ է անում աղախնուն, հացթուխին, ծառային, պարտիզպանին — կովերը նախիր տարե՞լ են, հորթերը հանձնե՞լ են հորթատածին, գառները՝ գառնարածին, ձիուն կեր տվե՞լ են, շներին լափ տվե՞լ են, հավերին, սագերին, բադերին կուտ, ուտելիք տվե՞լ են...

Արդեն մեծ ու փոքր թոնիրները վառել են, հաց են թխում, կերակուր են եփում թե՛ մեզ համար, թե՛ ջրաղացի բանվորների համար։

Մայրս իր ձեռքով շրջիկ աղքատներին և ճամփորդներին կերակրում է և ճամփա դնում։

Հայրս ավարտել է ընթերցումը, այցելում է ջրաղացը, մեկ-մեկ նայում բոլոր աղորիքներին, խոսում է ջրաղացպանի հետ, աղունատների հետ. գնում է պարտեզը, բանջարանոցը, իր ձեռքով կանաչեղեն է քաղում ճաշի համար։

Ես ընկերներիս հետ վազվզում եմ ջրաղացի ներսն ու շուրջը, մեր և հարևանների կտուրներն ենք բարձրանում, թռնում ենք խոտացների վրա. մեծ աղմուկով գյուղացոց գոմեշներն ենք լողացնում գետի մեջ և նրանց հետ սուզվում ջրի տակ. դաշտերում բաց թողած էշերն ու անասնի պառավ ձիերն ենք հեծնում ու նրանց բաշերից բռնած արշավում...

Ճաշից հետո հայրս մի պահ պառկում է հանգստանալու։ Ապա դուրս են հորս բարեկամները, բոլորը՝ հասակակիցներ, հորս դրուժբնկերներն են նրանք — Տեր Միքայելը, Օհան տացուն, Ադամ Քեհյան, Պապան Քեհյան, Ներսես ամին։

Մխում են, թեյ են խմում և զրույց անում։ Խոսում են հնից ու նորից, անցած դեպքերից, վագեմի օրերից, նշանավոր անձերից։

Ես թեյ եմ մատուցում այս հարգելի ծերակույտին և ուշադիր կլանում եմ նրանց խոսքերը։

Տեքստերը պատմում է Գրիգոր Նարեկացու հրաշքներից, Սիմոն Սյունակյացի վարքից։ Օհան տացուն ասում է, որ վերջերս անիծված թափառական հրեան հանկարծ երևացել է Հոռոմ գյուղի հովիվներին, մի քիչ դադար է առել նրանց մոտ, մի թաս կաթ է խմել և նորից ճամփա է ընկել, աներևութացել. հայտնել է, որ շուտով աշխարհանցամ պիտի լինի, և իր տանջանքները աշխարհի հետ պիտի վերջանան։

Մարմինս փշաքաղվում է, և բաժակները դողում են մատուցարանի վրա։

Տեր Միքայելը հակաճառում է ասելով, որ աշխարհը կկործանվի միայն այն ժամանակ, երբ Նեռը կելնա. Հայտնության գրքի վկայությամբ դեռ հազար տարի կա Նեռի երևալուն։

Ես հանգստանում եմ։

Պատմում են զանազան իմաստալից առակներ։

Լսում եմ Դիվանա Պահլուլի մի առակը։

Նրա եղբայրը թագավոր է՝ հզոր և պատերազմասեր. գնացել է մի աշխարհ է տիրել և ցնծությամբ վերադառնում է։

Տեսնում է, մայրաքաղաքի ավագ դռան առաջը եղբայրը չափչփում է գետինը, անուշադիր ընդհանուր ցնծությանը։

— Ի՞նչ ես անում,— հարցնում է թագավորը։

— Ուզում եմ չափել իմանալ, թե՝ էդքան անծայր հողերից, որ տիրել ես, ինչքա՞ն է լինելու վերջնական քո բաժինը — չափեցի տեսա՝ յոթը կանգուն հող, եղբայր սիրելի,— պատասխանում է Դիվանա Պահլուլը։

Ջիպս քայլում է դանդաղ, և նրա սմբակների տակից բարձրանում է մեր գյուղի ճանապարհի փոշին, և հոգուս մեջ բարձրանում են հուշերս...

Հայրս ուներ մի աշուղ բարեկամ, մեր դրացի գյուղից, աշուղ Գալուստ անունով։ Լավ սազ էր նվագում, անուշ, թավ ձայն ուներ՝ սրտից խոսող, շա՜տ հեքիաթներ գիտեր։ Պարսկական, թրքական, հայկական անթիվ հեքիաթներ։ Իր սիրո վեպն ուներ արևելքի հեքիաթների տարրերով և գույներով հյուսած։

Ամեն շաբաթ, կեսօրից հետո, սազը պատյանի մեջ վզից կախ, գալիս էր նա մեր տունը, մնում էր ամբողջ կիրակի օրը մինչև երկուշաբթի։ Եվ երկուշաբթի առավոտ, մեկնում էր սազը վզից կախ, առատ վարձատրված։

Ինչքա՜ն, ինչքա՜ն էի սիրում աշուղ-ամուն։ Երբ գալիս էր, տոն էր սկսվում ինձ համար։ Հափշտակված, աչքերս նրա մթին աչքերին հառած՝ ժամերով կախված էի մնում նրա կախարդ շրթներից։ Նրա սազն ու հեքիաթը այլափոխում էին իմ աչքում իրական շրջապատը։ Հանկարծ մեր գավառի լեռները, ձորերը, դաշտերը վերածվում էին ուրիշ տեսակ մի աշխարհի, աննկարագրելի գեղեցիկ, առասպելական։ Հրաշքի աշխարհ, որի լեռների բաշերով թռչում են հրեղեն ձիերը, կտրիճները գնում են անմահական խնձոր բերելու, շքեղազարդ աղջիկները մարմարյա ապարանքների մեջ կարոտով սպասում են անվեհեր կտրիճներին, որոնց մեջ տեսնում էի և ինձ... Ամառը քաղաքից հյուր էին գալիս մեր ազգականները։ Հորեղբայրս, հորքուրանք, քեռոնք, մորքուրանք, խնամոնք... Մնում էին օրերով, զվարճանում էին և գնում, տեղ տալով հաջորդներին։

Ամառային մի անուշ երեկո է. ջրաղացից անընդհատ գալիս է չախչախների ձայնը և ջրերի խոխոջը... բարդիները սոսափում են...

Հորքուրանքս մեզ հյուր են։ Հորաքույրս նստել է հորս աջ կողմը, նրա ամուսինը՝ ձախ կողմը. մայրս հորքուրիս մոտն է։

Նվագում է աշուղ Գալուստը. քույրերս, եղբայրներս, հարսներ, աղջիկներ, պատանիներս հավաքված ենք նրա շուրջը։

Աշուղը՝ սազի լարերը լացացնելով, երգով պատմում է Բաղդասար աշուղի դժբախտ սերը։ Հետո իմացա, որ այդ իր սիրո վեպն էր, որ վարագուրել էր ուրիշ անունի տակ։

Դժբախտ էր այդ սերը, տառապալից, անհույս, կարոտով տոչորուն, ինչպես բոլոր մեծ սերերը։ Հուզումով, վշտով վերապրում էր նա իր վեպը։ Մենք՝ բոլոր ունկնդիրներս, մեծ և պստիկ, համակված ենք իրական կարեկցանքով դեպի դժբախտ աշուղի ճակատագիրը։

Երբ աշուղ Գալուստը հառաչելով ավարտեց իր վեպը այս հարցումով՝

«Հե՜յ, վախ, մեռել է Բաղդասար,
Ցա՜ր, գերեզմանը չե՞ս տեսել...»։

Հորքուրիս գեղեցիկ, դեռատի աղջիկը փղձկաց, և երկար պահ նրա եղնիկի աչքերից հոսում էին արտասուքները...

Հայրս պատվիրեց աշուղին, որ այլևս տխուր բաներ չպատմե — «ջահելների սիրտը մի՛ կոտրի. ուրախ երգեր ասա...»։

Աշուղ Գալուստը ուրախ երգեր նվագեց, սակայն դրանցից բան չեմ հիշում, իսկ նրա թախծանուշ երգը միշտ կենդանի հնչում է հոգուս մեջ...

Դանդաղ քայլում է ձիս մեր հանդերի արահետներով, նրա սմբակների տակից բարձրանում է արևակեզ հողերի փոշին, և բարձրանում են հուշերս իմ կարոտակեզ հոգում...

Ախուրյանի ափին, մեր տան դիմաց, վրան ենք սարքել. պատանիներս այնտեղ ենք անցկացնում մեր ժամերը — կարդում, վիճում, նարդի խաղում։ Մեզ հյուր են եղբորս ընկերները, հինգ երիտասարդներ, որոնք այցի են գնում Անի քաղաքին, որ մեր գյուղից հեռու չէ։

Զրույց է տեղի ունենում։ Խոսքի նյութն է հայրենիքի գաղափարը։ Քաղցր է հայրենիքը, ասում են նրանք, նվիրական է հայրենիքի հողը. խորհրդավոր է և անբացատրելի հզորություն ունի։ Հայրենիքը հող է, ասում են նրանք, հողը ավանդապահ է, հողն է ստեղծում և կաղապարում ազգությունը, երբ հողը կորսվի, ամեն ինչ կորսված է։ Մեր պապերը ծնվել են այդ հողից և նորից վերածվել են այդ հողին։ Մենք՝ ինքներս էլ, ծնվել ենք այդ հողից, սնվել ենք այդ հողով. այդ հողով է շինված ու զանգված մեր ոսկորը, մեր արյունը, մեր հոգին։ Մեր բյուրավոր նախահայրերի հողն է մեր մեջ։ Հայրենիքը,— եղբայրանում են նրանք,— մեր նախնիքն են, մեր ծնողներն են, մենք ենք՝ հող դարձած։ Եվ ինչքա՜ն դժբախտ է այն մարդը, որ կմեռնի օտար հողում և բախտ չի ունենա խառնվել իր ծնողների հողին...

Հայրենի Շիրակ, ինչքան քաղցր հուշեր ես զարթնեցնում իմ հոգում։ Եվ հուշերիս զմրուխտյա գետը քո նվիրական դաշտերով տանում է ինձ դեպի երջանիկ մանկությունը, դեպի մայրական կիրքը, դեպի երազներով խանդավառ պատանեկությունը և առաջին սերը։

Հայրենի Շիրակ, ինչքա՜ն, ինչքա՜ն սիրում եմ քո հին, հարազատ հողը...

1933,
Փարիզ

ՏԵՐ ՄԼԵՀԸ

Շոգեկառքը զրնգալով գնում էր երկաթե գծերի վրայով։ Ես կանգնել էի վագոնի դռների մեջտեղում և պատուհաններից նայում էի դուրս, երբեմն՝ աջ կողմս, երբեմն՝ ձախ կողմս։

Կանաչ առավոտ էր, թարմ, ցողաթաթախ։ Ամեն քար ու թուփ բյուրեղով զարդարուն։ Գովերն ու եզնները անհագ ախորժակով արածում էին ցողաթուրմ սեզը։

Մանուկ արևը ժպտում էր բոլոր իրերի երեսին, և նրա ոսկի ժպիտը շողշողում էր միլիարդավոր ցոլքերի մեջ։

Դաշտերը զմրուխտյա գետերի պես վազում էին դեպի շոգեկառքը։ Վազում էին, վազում էին երկու կողմից և քսվելով վագոնների կողերին՝ սահում, անցնում էին։

Ցորենի մատաղ արտերը, կարմիր կակաչներով բոցավառված, ցոլում էին ու ծուփ տալիս։ Արտույտները թփերի տակից, նետի պես, սլանում էին վեր, դեպի արևը, և արևի ճառագայթների մեջ ոսկի էին դառնում։

Վեհանիստ Արագածի գագաթները՝ անբիծ սպիտակ, կարծես անյութական էին, կարծես, բնազանցական երևույթներ էին։

Իսկ հանդիպակաց Հարսնաբար նազելի լեռը՝ կանաչավառ թավշյա զգեստ հագած, ամպերեն բարակ շղարշը երեսին, նման էր իր առաստղելի հարսին, որ մեջքից շատ դարեր առաջ, իր շքեղ ամրոցում, զարդարված սպասելիս է եղել փեսային պատակ գնալու համար, սպասել է, սպասել, բայց դավաճան փեսան չի եկել, և դժբախտ հարսը վշտից իրեն անդունդն է նետել...

Շիրակի դաշտե՛ր, իմ նվիրական ցորենի արտե՛ր, իմ պատանեկան անուրջների լուսեղեն աշխա՛րհ, ինչքա՛ն գեղեցիկ եք դուք։

Երբ նայում եմ ձեզ՝ մի անդորրություն և ներդաշնակություն ողողում է հոգիս։

Բոլոր մոայլ մտքերս վանում եք իմ սրտից հեռու, հայրենի դաշտեր։

Անհուն խորանում է ձեր վրա կապույտ երկինքը, ամենապայծառ կապույտը բոլոր երկինքների մեջ։

Երբ նայում եմ քեզ, Շիրակի երկինք, հրաշքի պես փոխվում է ամեն ինչ,— աշխարհը դառնում է երազ — կապույտ, աշխարհը դառնում է բանաստեղծություն։

Ճանապարհի եզերքին, դալար թումբի վրա, կանգնել էին երեք գեղջուկ պատանիներ, մախաղները մեջքերին կապած, մահակները՝ ձեռքերին։ Կարմրաթուշ, պայծառ աչքերով։

Նրանք ուրախ, բարձր ճիչերով բարևեցին մեզ՝ ուղևորներիս և վագոնների մեջ գտնվող աղջիկներին ծաղիկների փունջեր նետեցին։

Ինչքա՛ն ուրախ էին նրանք և կենսաշվարթ...

Ինչպես կուզեի նրանց պես, նրանց հետ լինեի, բաց դաշտում, թարմությամբ լի օդում, և նրանց կենսաշունչությունը ունենայի — ուրախ, զվարթ, բնության զգայակից և նրա հետ դաշն ու բարեկամ։

Մոտենում էինք Ջաջուռ գյուղին։ Ջաջո՛ւռ, պատմական մշուշից եկած մի խորհրդավոր անուն։

Ինչքա՛ն անմեղ հեղնանքի նյութ է տվել նա կատակասեր գյումրեցիներին։

«Ջաջուռից գրում են «Մշակ» լրագրին, թե ֆրանսիական մինիստրությունը տապալվեց»։

Երբ մեծ-մեծ խոսում է թերուս մեկը,— «Ջաջուռի համալսարանն է ավարտել. ի՞նչ կուզեք»։— ասում էին մեր ղվարթ գյումրեցիները։

Հապա՞ Ջաջուռ գյուղի քահանան, Տեր Մլեհը...

Հռչակավոր էր նա իր առածներով, դրույցներով, առակներով, քարոզներով։

Երբ Գեորգ Կաթողիկոսը (Ճեմարանի հիմնադիրը) գալիս էր ամառանոց Արագածի վրա, Տեր Մլեհին զրույցի էր կանչում իր մոտ։ Կաթողիկոսը շա՛տ էր ախորժում նրա առակներից, պատմություններից։ Նրան ոսկեղօծ խաչ էր նվիրել, որ ուրտուրը կրում էր կրծքի վրա արդար հպարտությամբ։

1896 թվականի հունվար ամիսն էր։ Մաքուր սպիտակ ձյունով սավանված էր Շիրակը — դաշտերն ու բլուրները, բոլոր ձորերը, մինչև լեռների բարձր բաշերը։ Սպիտա՛կ, սպիտա՛կ — լուսնային դաշտեր ու լեռներ։

Քեռուս որդու հետ գնում էինք Ջաջուռ։ Երկաթուղին չկար դեռ այն ժամանակ։

Ձյունի վրայով սահում էր գյուղացու նախակերտ սահնակը, և ես այն զգացումն ունեի, թե լուսնի դաշտերի վրայով է, որ սահում ենք։

Գնում էինք Ջաջուռ՝ Բրդե ամուն տեսնելու։ Բրդե ամին հանգուցյալ հորս մտերիմ ընկերն է եղել և գործակիցը։ Միասին ճամփորդել են Կարս, Երևան, Լոռի, Թիֆլիս։

Բրդե ամին, հորս ողջ ժամանակ, օրերով մեր տանն էր ապրում։ Նա գյուղից նվերներ էր բերում մեզ՝ եղբայրներիս, նախշուն գուլպաներ, որ իր հարսներն էին հյուսել, կարագ էր բերում, մեղր ու ներկած հավկիթներ։

Ամենից շա՜տ ինձ էր սիրում, որովհետև մեր տան կրտսերն էի։ Այժմ, տարիներ հետո, գնում էի Բրդե ամու մոտ, որ հանգուցյալ հորս կարոտն առնեի նրանից։

Ամեն անգամ, երբ նա պատմում էր հորս հետ ապրած օրերից և միասին շրջագայած վայրերից, երևակայությունս ինձ պատեցնում էր նրանց հետ։

Երբ ասում էր — «Մեկ անգամ գնացինք Լոռի ջաղջի քարեր առնելու... հե՛յ վախ, ի՜նչ անուշ օրեր էին... Լուսահոգին էսպես ասավ...», ինձ թվում էր թե՝ հայրս կենդանի է, ներկա է և նրա լուրջ ու սիրող աչքերը գգվում են ինձ...

Բրդե ամու տանն ենք։ Բարեկեցիկ վիճակ ունի Բրդե ամին։ Գոմը լի տավարով, ոչխարով. ախոռը՝ ձիերով։ Տունը շեն և ուրախ, փոքրիկ պես ելումուտով։

Նահապետական օջախ է — սրդիներ, հարսներ, թոռներ։ Երկու-երեք օրոցք շիկում է անընդհատ։

Թոնիրները բոցին են տալիս, ծուխը մրցում է ամպերի հետ։

Երեկոյան, նստել ենք օդայում, մշտավառ հին օջախի շուրջը, նրա տրամադրող մթնոլորտի մեջ։

Բրդե ամին նստել է սրբազան երդի աջ կողմը, գորգի վրա, թիկն տված մեծ մուգ-կապույտ բարձին։ Երդի ձախ կողմը նստել է ծերունի Տեր Մլեհը։

Բրդե ամին էլ ծեր է, ավելի քան 70 տարեկան, ալեհեր է, բայց տակավին ամուր կազմվածք ունի, և խելացի խոսակից է։

Առաջին անգամ չէ որ տեսնում եմ Տեր Մլեհին։ Մանուկ օրերումս մի քանի անգամ տեսել էի նրան, հեռվից, անցողակի, բայց այս անգամ պատիվ ունեի բարձակից լինելու նրան։

Հիմա նստել եմ նրա կողքին և ուշի ուշով զննում եմ նրան։

Օդան բերնեբերան լցված է մարդկանցով։ Բրդե ամու օդան գյուղի ավագանիի ակումբն է։ Վերի գլխում տեղ են գրավել, տերտերից և Բրդե ամուց հետո, գյուղի հարգելի ծերերը, առաջավորները։ Ներքևում Բրդե ամու փեսաները, որդիները, իսկ թոռներն ու ծառաները կանգնել են պատերի տակ, դռան առաջ։

Բայց իմ դիտողության առանցքը Տեր Մլեհն է։

Տեր Մլեհը — մեծ գլխով, պստիկ գոգակի տակից վար իջնող ձյունհերմակ մազերով։ Բրդոտ, թավ հոնքեր ունի՝ սև ու մեծ և բարությամբ լի աչքերի վրա կախված։ Արծվաքիթ՝ կեռ և սուր, բթախոտից սև ու գնդին դարձած ընչածակերով։

Փառավոր, ալեծածան մորուքը չրվեժի պես իջել, ծածկում էր ցայտուն լանջքը, որի վրա ոսկեզօծ խաչը փայլատակում էր հաղթանակով։

Հայնաթիկունք, մեծ իրան։ Թևերը՝ կարճ, բազուկները՝ հաստ ու մազոտ, իսկ մատները — մեծ, ահագին։

«Տեր Մլե՜հ»,— այսպես էին հնչում գյուղում ու քաղաքում,— մի սոսկ անուն չէր. նա բովանդակում էր ամբողջ մի փոքրիկ աշխարհ։

Ինչե՜ր չէին պատմում նրա մասին, ի՜նչ զվարթ միջադեպեր, ի՜նչ առասպելական զրույցներ։

Ասում են, որ ինքը չի կամեցել քահանա դառնալ։ Լեռների հովիվ է եղել Սարիբեկը. ոչխարներին հովվողը ինչպե՞ս կարող է մարդկանց հովվել, բայց պապը, որ քահանա է եղել, ուղեցել է, որ թոռը իր տեղը բռնե, քահանայությունը իրենց տոհմից չհեռանա։

Սարիբեկը երկար ժամանակ ընդդիմացել է, իրեն չի զգացել «օծյալ» դառնալու արժանի, բայց վերջը հնազանդել է մեծ հոր և ծուխի պնդումներին ու թախանձներին։

Առասպելն ասում է, որ նա ո՛չ կարդալ գիտե, ո՛չ գրել, բայց ամբողջ սաղմոսները, ավետարանը, եկեղեցու ամոնքները, շարականները, նարեկի աղոթքները «ջրի» պես գոց գիտե, որ սովորել է մեծ հորից միայն լսելով, սակայն գրքի մեջ չգիտե նրանց տեղը։ Այնպես որ, երբ ձեռնադրող եպիսկոպոսը տիրացու Սարիբեկին հարցաքննելիս ցույց է տվել ավետարանի մի գլուխ, որ կարդա։— տիրացուն չի կարողացել կարդալ։

Եվ զվարթ գյումրեցիները, որ կատակասեր են և մարդու ձեռք առնող, այդ գյումրեցիները, ակամատեսի պես, հաստատում են, թե երբ եպիսկոպոսը հարցրել է նրան՝ թե եկեղեցիս քանի՞ սուրբ խորհուրդ ունի, տիրացու Սարիբեկը բթամատն ու ցուցամատը իրար շփելով պատասխանել է — «700 սուրբ խորհուրդ»։

Այսինքն՝ 700 ռուբլի։

Եվ եպիսկոպոսը իսկույն հավանություն է տվել և ձեռնադրել է նրան քահանա «Մլե» ծաղրանունը վրան դնելով։

Այսինքն թե՝ տիրացուն գործը մլելով, քշելով է գլուխ բերել։

Թեև գյումրեցիները արդար էին այս հարցում՝ համոզված լինելով թե՝ իրոք սա ծաղրանուն է, որովհետև բոլորի համար միանգամայն անծանոթ էր այս անունը և կարծում էին թե՝ մլե բայի հրամայական ձևն է։

Սակայն գյումրեցիների այս կատակը շատ էր զայրացրել ջաղուցիներին, որոնց հատկապես շատ էին ձեռք առնում նրանք։ Սակայն Տեր Մլեհը իրեն մշտական բարի ժպիտով ասում էր.

«Գյումրեցիները աշխարհիս երեսին ի՞նչ գիտեն որ, մենակ արագի դավաթին մեծն ու պստիկը, և էլ լոպազության են թունդ տեսակները։

Այդ առասպելներին սակայն ո՞վ էր հավատացողը։

Ճշմարտությունն այն էր, որ տերտերը լավ էլ կարդալ ու գրել գիտեր, և մանավանդ երիտասարդ տարիքին այնպիսի հզոր ձայն ուներ, որ, ինչպես վկայում էին իր հասակակից ծերունիները, երբ նա երգում էր եկեղեցում, նրա ձայնը լսվում էր գյուղի բոլոր տների մեջ էլ։

Գյուղացիները սիրում և հարգում էին իրենց տերտերին ամենից առաջ նրա անսահման բարության համար։

Բարի, գթառատ սիրտ ուներ նա բոլորի հանդեպ։

Ասում են, որ իր կյանքի մեջ ո՛չ մի մարդու մի ծանր խոսք չէր ասել նա, ո՛չ մեկի հետ կռված չէր։

Նրա շեն տնից սիրտամոտ ձեռքով միշտ ուտելիք էր բաշխվում գյուղի հիվանդներին, կարիքավորներին։

Զրույց էր բացված։ Խոսում էր բուն գիտցողը, աշխարհատեսը և լսում էին երիտասարդները։

Թիֆլիսից Ալեքսանդրապոլ ձգվող երկաթուղին նոր էր շինվում։ Սակում էին Ջաջուռի հսկա լեռները թունելի համար։ Գյուղացիները ապշել էին այդ վիթխարի գործի հանդեպ։

«Սարի երկու երեսից ծակում են, որ գետնի տակ իրար դիպնեն։ Ի՞նչ հնճար, ի՞նչ ուսմունք»։

— Տալյանները (խուզարկիչ) լավ, գիտնական վարպետներ են, բայց շա՞տ խման են և շա՞տ դող են։ Վաստակածը ուրիշ են գինու և արաղի։ Գողնում են բարութ, կինամիտ, բահ, ջլունգ...»։

— Ինձիներ մեծերն էլ դող են. երկու սել հող ենք թափում, իրանք հինգ-վեց սելի հաշիվ են գրում։ Մեկ մանեթը երեք մանեթի տեղ են հաշիվ ցույց տալիս թագավորի խազինին...»։

Հազար ու մի բանի մասին խոսեցին ու անցան։

Խոսք ծագեց հայկական կոտորածների մասին, որ 1895 թվականին տեղի ունեցել էին դժբախտ Թուրքահայաստանում։

Ահավոր լուրերը թափանցել էին Կովկասի Հայաստանի կորած-մոլորած գյուղերի անկյունները։

Հայ գյուղացու սիրտը մորմոքում էր իր հեռավոր, թշվառ եղբայրների համար։

«Գազան սուլթանը ջարդեց հայերին։ Աշխարքը մատը մատին չդարկեց...»։

Այդ դաժան բանաձևն էր հածում գյուղի-գյուղ։

Մի ծերունի հառաչելով ասաց.

— Թուրքի ձեռքը որ բռնող չլինի, հայի մուխը կմարի։ Մենք զորք չունենք, մենք բերդ չունենք, օգնական չունենք։ Ի՞նչպես պտի գլուխ ելնենք էդ բարբարոսի հետ։ Ջուլում բան է, գուլում»։

— Բա՛, էս Աստված կընդունի՞,— խորին ցավով և զարմանքով բացականչեց Բըդի ամին,— էս ի՞նչ աշխարք է. մեղի մեր չի՞ բերել, մենք քա՞ր ենք, թե հողի չունենք... Աստված ի՞նչպես է համբերում...

Բոլորը սիրությամբ գլուխները կախեցին։

Բըդի ամին նայում էր ինձ. աչքերի մեջ համբ և դառնագին հարց կար ինձ ուղղված։

Ես մտածում էի պատասխանիս մասին, երբ տխրամած լռության միջից լսվեց Տեր Մլեհի հին, խռպոտ ձայնը.

— Աստծուն ի՞նչ. նրա ի՞նչ պետքն է. իսկի նրա դարպը չէ...

Այս ի՞նչ տարօրինակ, զայթակղիչ խոսք էր մի ծեր քահանայի բերանից, զարմացած խոսեցի սրտիս մեջ։

Գյուղացիները բոլորը գլուխները բարձրացրին դեպի Տեր Մլեհը։

Նրանց հայացքի մեջ զարմանք չկար. այլ հետաքրքրություն։ Գիտեին, որ իրենց սիրելի քահանան մի տեղին առակ ունի լեզվի տակ, որ հիմա պատմելու է։

Այդպես էր նրա ոճը — առանց առակի խոսք չուներ երբեք։

Տերտերը, իր ծանրությամբ ձեռքը տարավ գրպանը, հանեց քթախոտի մեծ տուփը և մի ահագին պտղունց քթախոտ առնելով, նույն ծանրությամբ կոխեց ընչածակերի մեջ։

Բըդի ամին անհամբեր էր։

— Տերտե՛ր ջան, ի՞նչպես թե աստծու պետքը չէ։ Բա՛, մենք նրա ստեղծը չե՞նք։

— Կեցի՛ր, որ ասեմ, տո՛, հեր օրհնած,— պատասխանեց նա, և քիթը մեծ, մուգ-դեղին թաշկինակով սրբելով, սկսեց.

«Մեկ օր աստված ասում է Գաբրիել հրեշտակին, թե իջնենք երկիր, տեսնենք ի՞նչ են դառել իմ ստեղծած ազգերը։

Իսկույն իջան երկիր։ Հրեշտակը աշխարքի ամեն ծերերը հասնող ձեռով կանչեց.— Ազգե՛ր, լեզունե՛ր, ինչքան որ կաք աշխարքիս վրա, եկեք անցեք աստծու առջևով։ Տերն ուզում է ձեզի տեսնի և ձեր ուղածը տա։

Արևելքից ու արևմուտքից, հարավից ու հյուսիսից օխթանասուն ու երկու ազգերը ժաժ եկան ու համբա ընկան։

Եկան Չինմաչինից ու Հնդստանից, եկան Արաբստանից ու Մըսրա երկրից, Հապաշից ու Հալապից, Իրանից ու Թուրանից։

Եկան ինկիլիզ, ֆռանկ, ուռուս և էլ շատ ու շատ ազգեր։ Եկան ու եկան, եկան ու անցան աստծու առջևով։

Աստված տեսավ, ճանչցավ նրանց, օրհնեց, խնդրանքները կատարեց։

Խոսքի օրինակ. ինկիլիզն եկավ, ասավ ասաց.

— Ինկիլիզն է, ճանչցա, իմ սանդղն է։ Հարցրու տես, ի՞նչ կուզե։

Հրեշտակը հարցրեց.

— Ի՞նչ կուզես։

— Աղվեսախնձոր, ասավ ինկիլիզը։

— Թո՛ղ ուշածն անպակաս լինի, ասավ աստված։

Եկավ թուրքը։

— Թուրքն է, իմ սանդղն է, ինչ կուզե։

— Չոռ, ասավ թուրքը։

— Թո՛ղ ուղածն անպակաս լինի, ասավ աստված։

Մեկ ադղ «Տեր ողորմյա, Տեր ողորմյա» երգելով գալիս էր։ Աստված նայեց, նայից չճանչցավ. դառավ հրեշտակին.

— Էս ադղը իմ սանդղածը չէ. չճանչցա։ Դու գիտե՞ս, ով է։

Հրեշտակը ղլուխը ժաժեց։

— Հարցրու տեսնենք՝ ո՞վ է,— ասավ աստված։

— Ի՞նչ ադղ եք,— հարցում արավ հրեշտակը։

— Հայ քրիստոնյա։

— Հասկցա,— ասավ աստված։— Էս իմ որդու բռնած հում գործերից են։ Թող երթան՝ Քրիստոսին ադաչեն։ Իմ բանս չէ։

— Տեսա՞ք, դարձավ Տեր Մլեհը մեզ, որ իմ ասածը ճշմարիտ է։

Հիմի պետք է ասեք, լա՛վ. թող Քրիստոսը օգնության հասնի։ Քրիստոսի աչքը վախեցել է աշխարքից։ Մեկ անգամ աշխարք եկավ, բռնեցին, խաչեցին, մահացրին, թաղեցին։ Աստծու պես հայր չունենար, կորել գնացել էր։

Գյուղացիները քթերի տակ խնդացին։

Բրդի ամին մոայլվեց. դժգոհ էր առակից։

— Տերտե՛ր, առակդ ավուր պառշանի չէր։ Խնդալու տե՞ղ է, որ խնդալու բան ես ասում. լալո՛ւ տեղ է... դրեթե հանդիմանիչ ձայնով ասաց նա և լռեց։

Տեր Մլեհը լուրջ դեմք առավ.

— Առակ էր, միտքս ընկավ, ասի։ Ի՞նչ խոսք, որ միշտ էլ մեր հույսը աստծու վրա պիտի դնենք։ Մենակ աստծու կամքը անիմանալի է, անքննելի. չգիտենք, ի՞նչ է ուզում, ի՞նչ է մտածում մեզի համար։

Բանն էն է, որ էսօրվա օրս թուրքը մեզի ջարդում է, մենք էլ՝ ի վեր աշխարքի անտեր, անտիրական որբ ենք։

Ասելս էն է, որ մենք որբի պես, մեր պորտը մեր ձեռքով պտի կապենք։ Մենք պտի մեր գլխու ճարը տեսնենք։

— Ի՞նչ ճար ցույց կուտաս մեզի, ջղայնացած հարցրեց Բրդե ամին։

— Թուրքի հետ յոլա երթալ, յուրաքանչյուր բառը շեշտելով ասաց տերտերը։

— Աշխարհը յոլա երթալ է։ Յոլա պիտի երթաս կնկանդ հետ, որդոդ հետ, դրացուդ հետ, բարեկամիդ ու թշնամուդ հետ, իշխանության հետ։ Ամենեն իմաստուն բանը — յոլա երթալն է։

— Թուրքի հետ յոլա չի երթցվի,— լսվեց մեկի ձայնը,— կարելի չէ, չի երթցվի, թե ուրիշ ճար գիտե՞ս, է՛ն ցույց տուր։

— Յոլա երթալ, մինչև աշխարքս աշխարք դառնա։ Ուրիշ ճար չեմ տեսնում։ Թո՛ղ ազգի մեծերը ուրիշ ճար ցույց տան։ Իմ խելքս էսքան է կտրում,— հանդստությամբ կնքեց իր խոսքը Տեր Մլեհը։

Բարձր ձայնեց Բրդե ամու երեց որդին.

— Էնքա՛ն արյուն է թափվել, ինչո՞ւ արդար արյունը ջուր դարձնենք։ Թուրքն էլ մսից ու արյունից է շինված. նա էլ մահից կվախենա, թե որ դեմը տղամարդ տեսնի։ Մենք էլ կարող ենք դարկել։ Անիծեմ էս պատ արյունը, որ ունենք... Մեռնելը գերությունից հաղար անգամ լավ է...

Նրա կրակոտ խոսքերը ոգևորեցին դռների մոտ հավաքված երիտասարդներին։

Ճակատները բարձրացան, բռունցքները կազմվեցին, ըմբոստ կոչեր խաչաձևեցին իրար։

— Թուրքը անշուն գեղ է տեսել, առանց մահակի ման կուգա։

— Թուրքը մենակ զենքից կվախենա։ Թուրքը ուրիշ լեզու չի հասկանա։

— Զենք չունեցողը ոչխարի պես կմորթվի...

Կավալեր Մելիքը,— այդպես էր գյուղը կոչում նրան,— ծխամորճը շրթների միջից հանելով և բարձր բռնելով, հրամայող ձայնով գոչեց.

— Սուսե՛ք, ես էլ բան ունեմ ասելու։

Մելիքը ռուս-թուրքական պատերազմին, 1877—78 թթ. իբրև կամավոր մասնակցել էր ռուսական հետախուզային ձիավոր խմբերի մեջ։ Քաջություններ էր գործել, խաչի շքանշանով պարգևատրվել։ Գյուղի ազդեցիկ և ունևոր մարդկանցից մեկն էր։

— Տերտերս շատ շիտակ խոսք ասավ, բայց ուշ է. կռիվն ընկել է հայի և թուրքի մեջ, արյուն թափվել։ Ետ դառնալ՝ շատ դժվար է... Հիմի ասելիքս էն է որ, թե կարող եղանք, տերտերիս խրատի պես, թուրքի

հետ յոլա երթալ, շա՜տ լավ կլինի... Թե չէ՝ ուրիշի վրա հույս դնել անօգուտ բան է։ Մենք պտի մոռածենք՝ մեկ ճար դանենք։

Կավալեր Մելիքի խոսքը ներկաների մեջ առաջ բերեց վհատեցուցիչ տրամադրություն, որ ավելի թանձրացրեց մեր ծանոթ ծերունին՝ իր մռայլ միտքը դրեթե կրկնելով.

— Թե որ Թուրքի ձեռքը բռնող չլինի, Թուրքը մեր մուխը կմարու էլ։ Ձեռքը բռնողը մենակ ռուսն է, էն էլ էսպես։ Զուլո՜ւմ է, զուլո՜ւմ...

Փարատելու համար այս ճնշող մթնոլորտը, մի քանի հուսադրիչ խոսք ասացի։

— Դուք չափազանցության մեջ եք ընկնում,— մոտավորապես այսպես ասացի ես,— հայ ժողովրդի վիճակը այնքան անհույս չէ, ինչքան ներկայացնում եք։

Ռուսաստանը միշտ մեր բարեկամն է եղել, թեև նա շատ անգամ վնասել է մեզ, բայց տված օգուտները շատ ավելի մեծ են եղել։ Ռուս թագավորությունը ուզենա-չուզենա, բարիք է մեզ համար. մանր-մունր գեշ բաներով չպիտի զատել նրան։ Երախտագիտ պիտի լինենք ռուս մեծ ազգի հանդեպ։ Իսկ ռուս մարդը շա՜տ բարի սիրտ ունի և ուրիշներին երբեք չարություն չի կամենում նա։

Պետք չէ հուսահատվել. հայ ժողովուրդը ավելի դառն ժամանակներ է ունեցել, բայց տեսնում եք, որ չի կորել։ Միայն պետք է մենք հավատ ունենանք մեր վրա, սիրենք մեր երկիրը, մեր ազգը, օգնենք իրար։ Աշխատենք ու երբեք չհուսահատվենք։ Վերջը լավ կլինի։

Խոսելիս նայում էի երբեմն Տեր Մելհին, երբեմն Թբդե ամուն. կարծես արևի ճառագայթներ էին անցնում նրանց դեմքերի միջից։

Ես խոսքս վերջացրի։

Իշավ անդորրող, պայծառ մի լռություն...

Շոգեմեքենան թափով սուլեց և կառքերը աղմուկով կանգ առան։

Աչքերս բացի — Ջաջուռի կայարանի առաջն ենք։

Շոգեմեքենայի ծուխի պես ցնդեցին Թբդե ամու օդան, ներկաները, վեճերը...

Շատ տարիներ էին անցել այն օրվանից։ Ջաջուռը անճանաչելի էր դարձել։ Սպիտակ պատերով խոշոր կայարան, շուրջը՝ նոր շենքեր, ամբարներ, պարտեզներ։ Երիտասարդ տղաները, գործով, հապճեպ ելումուտ են անում, ապրանքներ են կրում ու բերում։

Անշո՜ւշտ, նրանք չեն տեսել Տեր Մելհին ու Թբդե ամուն, որոնք վաղուց հեռացել են այս աշխարհից։

Իրենք, նրանք չեն էլ լսած Թբդե ամու և տերտերի անունները.— այն օրերից հետո հզոր հողմեր շառաչելով անցան այս նահապետական երդիքների վրայից և սրբեցին-տարան հինավուրց կենցաղի այս միամիտ մարդկանց հիշատակները, անունները, խոսքերը։

ՏԵՐ ՄԼԵՀԻ ՔԱՐՈԶՆԵՐԻՑ

ա.

Անօրեն չհուդեները հ էլ կուապաշտ հոռոմացիք բռնեցին Հիսուս Քրիստոսին. Թքեցին, ծեծեցին, ի խաչ հանեցին, ձեռքերին ու ոտքերին մեծ-մեծ մեխեր դաբդեցին, արյունն ելավ գնաց։

Աստ՜, Աստծու տղա, իսկի ձենդ ելա՞վ։

Օրհնեց մենակ իրա դահիճներին։

Ա՜յ ժողովուրդ, վայ թե մեկը ոտնկոր կոխի, իսկույն ձեներդ աշխարք կբռնեն։ Պրիստավ, ժանդարմ կկանչեն։

Ծարավ էր, չուր ուզեց։ Քացախ տվին։ Մզրախով կողքը ծակեցին, արյունն ելավ գնաց։

Աստ՜, Աստծու տղա, իսկի ձենդ ելա՞վ։ Աստծուն խնդրում էր, որ ներեն էդ անօրենները։ Դուք որ նրա տեղը լինեիք, Գաբրիել, Մուքել հրեշտակները վար կբերեիք, աշխարք կքանդեիք, ամեն մարդու կամ կախաղան կամ Սիբիր կղրկեիք։

Օրինակ առեք Աստծու որդուց, ա՜յ անզգամ ժողովուրդ, համբերող եղեք, իրար սիրեցեք։ Ձեզի ցավ տվողին բարություն արեք։ Ձեզի բամբասողին՝ զովեցե՛ք, ձեզի զրկողին հաց տվեք. ձեր մալը գողացողին բանդ մի՛ դրեք, թե բանդի մեջն է, հանեցե՛ք։ Ամեն։

բ.

Ա՜յ ժողովուրդ, գնացե՞լ եք Գյումրվա քաղաքը, գնացե՞լ եք Ազան աղբոր դրախտը[1], ձյուն-ձմեռ ժամանակ։

Ներս կմտնես — տաք, լույս։ Պատերի վրա սիրուն-սիրուն պատկերներ կախած, սեղանների վրա կարմիր-կապույտ ծաղիկներ դրած։ Սազանդարներ, անուշ խաղ ու տաղ։ Մարդ կմոռնա աշխարքիս ցավն ու նեղությունը։

[1] Տրախտիր, ճաշարան, աղճատված ձևով՝ դրախտիր, դրախտ։

Չայ ես ուզում, չայ են բերում, ղայֆա ես ուզում, ղայֆա են բերում։ Տեսակ-տեսակ կերակուրներ, գինի, արաղ, տանձ, խնձոր։

Փող ունե՞ս, Աղան աղբոր դրախտի մեջ տեղ ունես։

Հիմի, ա՛յ ժողովուրդ, լավ միտք արեք. էս գյումրիցու դրախտը որ էսքան լավ է, հապա ինչքա՞ն լավ պտի լինի Աստծու դրախտը — հազար, հազար, հազար անգամ լավ...

Մենակ Աստծու դրախտը մտնելու համար ծոցդ փող ունենաս չի անցնի, պտի առնելիքներ ունենաս Աստծու զամբարի մեջ գրած։

Թե մեր աշխարքի մեջ ազբարին հաց ես տվել, անլորին՝ հագուստ, տնանկին՝ տեղ. թե չարը խափանել ես, բարին առաջնորդել — էդ ամենը էնտեղ Աստծուն պտարտ տվածի պես կհաշվեն հազարապատիկ շահը վրան, ու նրա դիմաց կվայելես անմահական դրախտը հուր-հավիտյան։

Գնացեք խաղաղությամբ. Աստծու աչքը ձեր վրա լինի։ Ամեն։

գ.

Սուրբ ավետարանն ասում է. ողորմություն տվողը երկնքի մեջ իրան համար քսակ կշինե, որ ո՛չ ժանգը կուտե, ո՛չ էլ գողերը կտանեն։

Ո՛վ անխելք մարդ, լա՛վ իմացիր, որ էս աշխարքը անցվոր է, և էլի ինչ շինես երկրի վրա, հիմքը ավազի վրա է։ Ամեն բան պտի կործանվի ու հող դառնա ձեր տունտուլիկներից բռնած մինչև ամենն ամուր բերդերն ու թագավորների ոսկե պալատները։ Ողորմություն արեք, բարություն արեք, տվեք ձեր ընկերոջը, ձեր հարևանին, օխտ օտարին. և էլ ամենից առաջ ձեր թշնամուն։ Աստծու մոտը քսակ ունեցեք։ էդ կմնա. թե չէ մնացածը դարտակ բաներ են։

Ամենից մեծ բանը բարությունն է. և էլ Աստծու աչքին ամենից դուրեկան, սիրուն արարքը՝ բարությունն է։

Աշխարքս մեկ սյունի վրա է շինված — էդ բարությունն է։ Բարությունը վերանա — աշխարքս կվերանա։

Խաղաղությունը ձեր տան վրա լինի և էլ ձեր սրտերի մեջ. գնացեք Աստված ձեզի հետ։ Ամեն։

ԱՌԱՔԻ ԿԱՐԳ ԴԱՍՎԱԾ ՏԵՐ ՄԼԵՀԻ ԽՐԱՏՆԵՐԸ

Սիրելի ժողովուրդ, ով որ ձեզի մեկ բան կասե, մի՛ մտածեք թե սուտ է ասում։

Հավատացեք նրա խոսքին, էլի պինդ կացեք ձեր բանին։

* * *

Աշխատելը ամեն բանի ճար ու ճամփան է։ Վազող ոտքը իրեն համար նոր տրեխ կճարե. և էլի,— անգործ ձեռքը անոթի փորի վրա է։

* * *

Մեկ գործ բռնելիս խորհուրդ տրա հորդ հետ, հերդ չկա՝ մորդ հետ, մերդ չկա՝ կնկանդ հետ. բայց էս էլ իմացիր, որ՝ մեկ փորձը հազար խրատից ուժով է։

Բայց նորեն,— խրատ տվողին հաց տվողի չափ պատվե։

* * *

Աշխարքս ծով է. չես իմանում դեմդ ելնողն ով է։

Աչքերդ ի՛նքդ բաց, քանի գլխիդ չեն գարկած։

* * *

Խաղաղություն սիրե՛, կռվի մակարդ մի՛ դառնար։

Եվ էլ,— մահակը ձեռքդ վեճի մի՛ բռնվիր։

* * *

Ճշմարտությունը շատ երես ունի. էդ պատճառով.—

Ականջիդ մեկը բարեկամիդ տուր, մեկելը՝ թշնամուդ։

Եվ էլ,— շիտակ բան կուզես քու մասիդ, զողտուկ ականջ դիր դուռ ու դրկցիդ։

* * *

Աշխարքիս մեջ ուրախ եղիր, հուսալով ապրիր,— կյանքն էնքան կարճ է, ինչքան տրամությունը երկայն է։

Եվ էլ,— հույսով մեռնելը անհույս ապրելուց լավ է։

ՏԵՐ ՍԼԵՀԻ ԱՌՍԱՆՆԵՐԻՑ

Ա.

Ժամանակով Թագավորի մեկը բարկանում է իրան ծառայողներից մեկի վրա, էդ մարդու ինչ որ արարքի համար։

Հրամայեց է տալիս դահիճներին, որ նրան մեկ շտեղված, լսված պատիժ տան։ Եվ էլ խիստ հրաման է տալիս՝ էն տեսակ պատիժ տան, որ չմոռնի. ու երբ ինքը հրամայե, բերին էդ մարդուն իրան քովը։

Ի՞նչ պատիժ տան, որ եղած չինի։

Դահիճները միտք են անում, միտք, և էդ խեղճ մարդու ազդրների կակուղ մասերը ծակում են, ձեռքերն անցնում են ծակած մասերի միջից ու բերում են ձեռներն ոտքերի մեջտեղ իրար կապում։

Թագավորը լսում է, քեֆը գալիս է։

Մեկ օր անց՝ ձեռքերն ազատում են, վերքերին դեղ են դնում, լավացնում։ Թագավորը հրաման է տալիս՝ էդ մարդուն բերեն իրան առաջը։

— Լա՞վ պատիժ էր։ Հիմի խրատ առա՞ր,— ասում է թագավորը։

— Թագավորից եկածը միշտ բարի է։ Հայրը իրա որդուն չի կարող չար բան անել։ Էդ՝ պատիժ չէր, էդ՝ բարիք էր։

— Հապա ո՞րն է պատիժը,— զարմացած հարցնում է թագավորը։

— Թագավորն ապրած կենա,— պատասխան է տալիս խեղճ մարդը,— իսկական պատիժն էն է, որ հին, լավ բարեկամդ օիսը տարվա ծառայությունից տունդ հյուր կուգա, ու դու մեկ պատառ հաց ու պանիր չես ունենա նրա առաջը դնելու...

Թագավորը լսեց, ընկավ մտքերի մեջ։

Ու թանկագին նվերներով էդ իմաստուն մարդու սիրտն առավ, և էլ, իրան խորհրդական շինեց։

Բ.

Մեկ ջաղաջքի մեջ երկու մարդ ցորեն կաղային։ Քոչ քոչի էին։ էդ մարդկանցից մեկը, որ մեկ աչքով կույր էր, տեսավ որ իրան հարևանը երեսը ուրիշ կողմ է դարձրել, գողտուկ թիսակը խրեց հարևանի ալրատի մեջ ու մեկ թի ալուր վերցրավ լցրեց իրան պարկի մեջ։

Ջաղաջպանը էս որ տեսավ, եկավ գողցողի ականջին ասավ.— «Հոգուդ մեղք չարի՞ր, որ հարևանիդ ալուրից գողցար»։

— Գողցա՞։ Ես մեղավոր չեմ, թե որ գողցա։ Մեկ աչքս կույր է, լավ չեմ տեսնում։ Էնպես երևաց ինձի, թե իմ ալրատից եմ վերցնում։ Սխալվել եմ։

— Թե որ լավ չես տեսնում, թո՛ղ հարևանիդ օգտին սխալվեիր։

— Էդ բանի համար երկու աչքով պտի կույր լինեի,— պատասխան տվավ մեկաչքանին։

Էս առակը ցույց է տալիս թե՝ ուրիշին օգուտ տվողը երկու աչքով կույր պիտի լինի։ Ասել է թե բաց աչքով ուրիշին լավություն չես կարող անել։

Ես ձեզի էն եմ ասում հիմի — բաց աչքով լավություն արեք, թե չէ կուզե՞ք որ Աստծու համբերությունը հատնի. ձեզի երկու աչքով կուրացնե, որ էն ժամանակ կույր-կուրնա ուրիշին լավություն անեք։

Էս առակս բարոյի ոչնչ եղավ։ Լսողաց՝ կատարողաց։

Գ.

Երբ որ Աստված բարձրացավ Ադամի վրա ու դրախտից դուրս վռնդեց, Գաբրիել հրեշտակը բռնեցնեն թուրը ձեռքը Ադամին ու Եվային քշեց դրախտից շա՞տ հեռու և սաստեց, որ դրախտին իսկի չմոտենան։

Ադամը՝ գլուխը ցած՝ առաջ ընկավ, Եվան էլ հետից լալով-լալով գնում էր։

Մեկ ցուրտ քամի եկավ, Եվան դողում էր ցրտից. մեկ ծառ կար էնտեղ, մեջը փչակ։ Եվան մտավ փչակի մեջ, կուչ եկավ. Ադամն էլ մեկ մեծ քարի տակ նստավ։ Իրիկնադեմ էր. մութը կամաց-կամաց իջնում էր։

Ադամը նայեց երկրին — չորս կողմը՝ քար ու խոպան, թուփ ու մացառ, ամայի՛, ամայի՛...

Ադամը դլխին զարկեց, ա՜խ քաշեց, ասավ ինքն իրան.

— Ի՞նչ պիտի լինի մեր ճարը, ի՞նչ պիտի անեմ, երկիրը խոպան, ամայի, ես էլ մենակ մարդ։ Ինչպե՞ս պիտի հաց ճարեմ, կնիկ պահեմ։ Ո՞վ պիտի օգնե ինձի...

Մեկ էլ քարի ետևից մեկ ձեն լսվեց.

— Բաա՜, ես, ես։

— Դո՞։

— Բաա՜, ես, ես։

— Ո՞վ ես դու։

Ձենը բառաչեց.

— Բաա՜, ես, ես։

Ադամը վեր կացավ, մոտեցավ, տեսավ քարի ետևը՝ մեկ կենդանի, մեծ կոտոշներով, նստել, որոճ է անում։

Սև, մեծ աչքերով կենդանին նայեց Ադամին։

— Դո՞ւ պտի օգնես ինձի,— հարցրեց Ադամը։

— Ես, բաա՜ա, եմ։

Ադամը շատ ուրախացավ, աչքերը լցվան արտասուքով, պաչեց կենդանու ճակատն, ասաց.

— Ես աղբեր չունեմ, դու ինձի աղբեր եղար։

Անունը դրեց եղ ու նորից պաչեց ճակատը.

— Ե՛զ չան, աղբե՛ր չան։

Էն օրվանից եղը մեր օգնական ընկերն ու աղբերն եղավ։

Եղան քրոջ անունն էլ կով դրավ, այսինքն թե՝ քովը։ Ինչու որ միշտ Եվայի քովն էր։

Ադամն ու Եվան նրանց օգնությամբ արտ վարեցին, կաթ ունեցան, տղա մեծացուցին։

Ասելս էն է, որ աղբոր պես և էլ քրոջ պես պտի սիրենք ու պահենք եզն ու կովը, որ մեզի հաց և էլ կաթ ու իարաղ են տալիս, մեզի պահում են, ապրեցնում են։

1935,
Փարիզ

ԴԱՐԲԻՆ ԳԵՎՈՐԳԸ

Շաբաթ օր էր։ Արևը դեռ մայր չմտած՝ դարբնոցներում իրար հետևից դադարեցին մուրճի հարվածները։

Դարբին Համբարը վարպետի փոքր մուրճով ավանդական երեք հարվածը տվեց սալին և «բանթող» հայտարարեց։ Աշխատանքը ավարտված էր։

Դարբնի բանվորները քուրայի կրակը հանգցրին, հավաքեցին գործիքները—մուրճերն ու աքցանները, դասավորեցին իրենց մշտական հատուկ տեղերում, ավլեցին, մաքրեցին դարբնոցը, հանեցին իրենց կաշե գոգնոցները, լվացվեցին և կանգնեցին վարպետի առաջ։ Վարպետ Համբարը վճարեց նրանց շաբաթականները և ճանապարհ դրեց։ Ապա դարբնոցի դուռը փակեց, բանալին դրեց գրպանը և իր օգնական վարպետ Գևորգի հետ մեկնեցին։ Երկուշաբթի օրվա աննլիքների մասին խոսելով հապան դարբնոցների փողոցի անկյունը և իրար «գիշեր բարի» մաղթելով բաժանվեցին։

* * *

Վարպետ Գևորգը մտավ իր հին ընկեր Սեթոյի վարսավիրանոցը, ուր ամեն շաբաթ երեկո գալիս էր սափրվելու և գլխի մազերը կարգի բերելու համար։ Սեթոյին բարևելով, նստեց հայելու առաջ. վարսավիրն սկսեց իր գործը։

Վարպետ Գևորգը առողջ, ուժեղ մարդ էր, իր լավ տարիքի մեջ։ Ուներ մի պառավ մայր՝ ծանր հոդացավով անկողին ընկած, կին և չորս զավակներ՝ երկու եղջիկ, երկու տղա։ Վաղ էր ամուսնացել։ Լավ աշխատողի և լավ վարպետի համբավ ուներ։ Սակայն շատ դժվար էր ապրում. ընտանիքը մեծ էր, կարիքը շատ. ինչպես ասում են գյումրեցիները՝ «քաշքշելով» մի կերպ ապրում էին։ Ինքը մեղավոր չէր, իր խղճի առաջ արդար էր. առանց իրեն խնայելու շարաչար աշխատում էր, բայց վարձատրությունը այնքան նվազ էր, որ ընտանիքի անհրաժեշտ պետքերը նույնիսկ չէր կարող բավարարել։ Վարպետ Համբարը քարի սիրտ չուներ, պարզապես շահագործում էր Գևորգին, օգտվելով նրա խեղճ դրությունից և երբեք մտքով չէր անցկացնում վարձն՝ արժանիքի և աշխատանքի համաձայն ավելացնելու։

Շատ ծանր էր նրա վիճակը. միայն ինքն էր տան աշխատողը, ամբողջ ընտանիքը նրա ձեռքին էր նայում։ Հառած աղջիկ ուներ, հագնը-վեր-կապվել էր ուզում, հապա մյուս երեխանե՞րը, ուսումնարանի ծախսե՞րը...

Գևորգը ընկճված էր այդ ծանրության տակ։ Նա շատ էր խորհում այս վիճակից ելնելու մասին. օրինակի համար՝ ուրիշ վարպետի մոտ գնար աշխատելու, որ զրկող չլիներ, կամ ընկերովի աշխատեր մեկի հետ. իսկ եթե իր դարբնոցը ունենար, ինչքա՜ն հաճախորդներ կունենար, լավ կվաստակեր և ընտանիքը լավ կպահեր. ինչո՞ւ չէ, քանի որ ինքը փորձված վարպետ էր, ձեռքից ամեն բան գալիս էր, ինչե՞ր չէր շինում — կացին, բահ, ուրագ... ավելի մեծ բաներ՝ խոփ, գութանի շղթա... բայց ո՞վ էր տվել նրան այդ բախտը։

— Անուշ եղավ, Գևո ջան,— ասաց վարսավիր Սեթոն գործը վերջացնելով։

* * *

Դանդաղ քայլերով գնում էր Գևորգը՝ գլուխը կախ դցած։ Շուկայից անցնելով, խորոված ի և խաշլամայի միս գնեց, դրեց նախշուն մեծ թաշկինակի մեջ, ինչպես և կանայանները։ «Խեղճ երեխաներս շաբաթը գոնե մեկ անգամ միս ուտեն», ասաց ինքն իրեն։

Շաբաթ երեկոները տուն գնալուց առաջ Գևորգը մի պահ ուշադրություն էր դարբինների սրճարանը, մի-երկու ֆինջան սուրճ խմելու, ընկերներ, ծանոթ տեսնելու, մի-երկու խոսք փոխանակելու նրանց հետ, նաև քաղաքի և դրսի նորությունները լսելու համար։ Մեկ էլ հույս ուներ այստեղ հանդիպելու իր հին, սիրելի ընկեր Եղիշին։ Նա մի շաբաթ առաջ խնդրել էր, որ Եղիշը իր դարբին քեռու մոտ տեղավորեր նրան։ Եղիշի քեռին՝ վարպետ Ղևոնդը, որ ազնիվ մարդ էր, շատ հաճախորդներ ուներ, այնպես որ լավ աշխատող օդնականի պետք կունենար։ Եղիշը, որ դիտեր ընկերոջ վիճակը, սրտանց խոստացավ միջնորդել քեռու մոտ։ Թերևս այսօր մի բարի լուր ստանար։

Սրճարանի դռան առաջ Եղիշը ուրախացած գրկեց նրան։

— Գևո ջան, հոգուդ մեռնեմ, ո՞ւր էիր, գնացի դարբնոց՝ փակ էր, շատ ման եկա, չգտա, մտածեցի, որ էստեղ կլինես, եկա քեզի բանեմ։

Գևորգը շատ ուրախացավ ընկերոջ այս ջերմ հանդիպման համար։

— Եղիշ ջան, քեֆդ լավ կերևա, միշտ էդպես լավ եղիր,— ասաց Գևորգը։

— Ընչի՞ չպտի լինիմ... քեզի աչքալուսանք ունիմ, էլ երթանք Հարթենի դրախտիրը, քեզի լավ բաներ պտի ասեմ, ուզածիդ ավելին եղավ, էդոր համար էլ պտի խմենք։

Հարթենի գինետունը ճոխ լուսավորված էր, բոլոր սեղանները դրավված էին հաճախորդներով, խոսակցության ձայներով, ծիծաղով, քրքիջով լցված էր ընդարձակ սրահը։

Նրանց համար պատի տակ փոքր սեղան տեղավորեցին։ Եղիշի պատվերով օղի բերին, աղանդեր, հետը գինի և խորոված։

— Գևո ջան,— ասաց Եղիշը՝ Գևորգի աչքերի մեջ նայելով,— մենք հին, անգին տղերք ենք, ես քեզ շատ կսիրեմ, էս դու լավ գիտես։ Ախպերս որ դուն ես, էս օրվանից հետո էլ նեղություն չես քաշի, հասա՞ս։ Քեռիս ծերացել է հիմա, ծերացել է, տղերքը հասել են, մեկը բուխալտեր է, մեկէլը՝ ֆելդշեր. լավ փող կաշխատեն, քեռիս էլ դարբնություն չպիտի անե, տղերքը չեն թողնի։ Քեռիս ուզում է դարբնոցը ուրիշի՝ մեկ արժեքավոր մարդու հանձնել։ Քեռիս էլ իմ խորհրդով ու խնդրանքով դարբնոցը իր ամեն բաներով տեղնուտեղը քեզի պիտի հանձնե։

Եղիշը մի շնչով ասաց այս ամենը և կանգ առավ։

Գևորգը չէր հավատում ականջներին։ Իջավ մի պահ լռություն։

— Մաքիս թելը կորցրի, լից խմե՛նք, Գևո ջան։

Մի-մի բաժակ գինի խմեցին։

— Հա՛, էն էի ուզում ասել, էդուց կերթանք քեռուս քովը, ձեռքը կպաչես, քեզի հոր տեղ է, ամեն բան դրած վերցրած է, գործը եփված է, երկուշաբթի օրվանից դարբնոցի տերը դուն ես։ Գիտես չէ՞, ի՞նչ բանուկ տեղ է։ Ի՞նչ ընտիր գործիքներ ունի։

Գևորգը աչքերը լայն բացած լսում էր։

— Գևո ջան, քեռուս կենացը, լավ մարդ է։ Ես ոսկերիչ եմ, չէ՞,— քեռուս եմ պարտական, ինձի Աիբլեյխա դրկեց ամենից երևելի վարպետի մոտ, սորվա, եկա։

Ապա Եղիշը խոսեց պայմանների մասին, այն, որ Գևորգը պիտի վճարե դարբնոցի վարձը այնքան, ինչքան քեռին վճարում էր շենքի տիրոջը, իսկ իրեն՝ լեռան՝ գործիքները բանեցնելու և սարք ու կարգի համար մի թեթևանալի հատուցում, ուրիշ ոչինչ։ Հետո վրա բերեց.

— Թե որ բան է, ժամանակի մեջ մի քիչ փող հավաքես, քեռուս գործիքները, սարքն ու կարգը բոլոր քուկդ կլինի ու քուկդ, հասկացա՞։ Բայց էդոր մասին հետո։

Գևորգի աչքերը ջերմացան, արցունքոտ ձայնով ասաց.

— Եղիշ ջան, ի՞նչ ասեմ, երևոցս կյանքը փրկեցիր...— և փաթաթվեց ընկերոջ պարանոցով։

Երկու իրար սիրող ընկերները խմում էին իրենց ընտանիքների կենացը. խոսում էին մանկության քաղցր օրերից, կատակում, նորից խմում և խանդավառված համբուրում իրար։

* * *

Երբ իրարից, գյումրեցոց ասածի պես, պոկվեցին, Գևորգն ուզում էր վայրկյան առաջ տուն հասնել, վայրկյան առաջ ընտանիքին ուրախացնել։ Վազում էր, ուզղակի թռչում էր։ Արագ վազքից շունչը կտրվեց, մի պահ կանգնեց՝ աչքն առավ երկնքին.— «Վա՜հ, ինչքա՞ն աստղեր կան...»,— զարմացած ասաց ինքն իրեն։

Ամառ գիշերվա վճիտ երկնքում փայլում էին, շողշողում էին աստղերը, անթիվ պայծառ աստղերը։ Ինչքա՞ն փայլուն էին, ինչքա՞ն գեղեցիկ էին։ Շատ վաղուց կլիներ, որ Գևորգը երկնքին չէր նայել, նա միշտ գլուխը կախ, մտադրաղ անցել էր տան ճանապարհը։ Ընտանիքը սպասում էր Գևորգին. նա երբեք այսքան չէր ուշացել։ Կինը համբերանքը կորցրած՝ դուրս ու ներս էր անում։

Գևորգը լի օրերը դարբնոցից ուղղակի տուն էր գալիս, շաբաթ երեկոները մի քիչ ուշանում էր սափրվելու և սրճարան այցելելու հե-

տևանքով։ Իսկ այսօր ի՞նչ էր պատահել, ինչո՞ւ այսքան ուշացավ, մի վատ բան պատահած չլինե՞ր։

Շաբաթ երեկոնները նա միշտ տանն էր, նստում էր հիվանդ մոր մոտ, զրույց էր անում, նրա հետ էր թեյը խմում։

Կինը մի սպահ դռանը կանգնած՝ ամուսնու ճանապարհին էր նայում, երբ ուրախ-ուրախ ներսից Գևորգը. կինը մոտեցավ, ձեռքից առավ թաշկինակի կապոցը, մեծ աղջիկը լամպը ձեռքին ընդառաջեց հորը։ Լամպի լույսի տակ հայրը նայեց աղջկան, ավելի ուշադիր նայեց։

— Յա՜, Վարդուշ ջան, ինչքա՜ն սիրուն ես եղեր...

Մի վայրկյան հայր ու աղջիկ լուռ կանգնեցին իրար դեմ։ Հոր ձայնը կերկերաց, խղվեց։

— Վարդուշ ջան, անուշ ջան, նեղող եղիր, լավ չէի տեսել...— թրջվեցին աչքերը, և գորովով, ջերմագին համբուրեց աղջկան։

Աղջիկը սիրտը լցված փախավ։

— Քա՜ մորդ, նո՞ր տեսար...— վախեցած, զարմացած և հետո կշտանքանքով հարցրեց կինը։

— Աղքատի օրոցքը կոտրի, սիրտ ունի՞, որ աշխարքին աչք. ամեն բան սև է աչքին,— հառաչելով ասաց պառավ մայրը։

Մի սրտաբեկ տխրություն համակեց բոլորին։ Յուրաքանչյուրը մտածում էր իր սրտում։

Երկաթագործի ծանր աշխատանքից ջարդված՝ Գևորգը գալիս էր տուն՝ մռայլ, բիլը կախ, մի փոքրիկ լամպի աղոտ լույսի տակ հագիվ նշմարում էր անկյունները, մոր ձեռքը համբուրում, երբեմն շոյում փոքրիկների գլուխը և կնոջ հետ մի-երկու խոսք փոխանակելուց ու մի աղքատիկ ընթրիք անելուց հետո՝ հոգնած մտնում էր անկողին ու առավոտը վաղ, լուսամուտին, անտեսանելի գնում գործին։

— Գործերս լավ են, շատ լավ են,— առույգ ձայնով ասաց Գևորգը և արագ ու համառոտակի պատմեց Եղիշի հաղորդածի մասին։

— Անե՞ս, Վարդուշ, մեկէլ լամպն էլ վառեր։

Լամպը վառեցին, սենյակը լցվեց պայծառությամբ, ուրախությամբ։

Գևորգը համբուրեց քնած երեխային, համբուրեց մոր ձեռքը, մայրն էլ համբուրեց որդու ճակատը, օրհնեց Եղիշին, նրա քեռուն, և դիմելով հարսին ասաց.

— Հարս ջան, չայ տուր, բերանս չորացավ։

— Հիմի, մայրիկ ջան, հիմի,— ասաց հարսը աչքերը ոլորելով և անցավ թեյի պատրաստությանը։

Կես-գիշերն անց էր, դեռ բոլորը արթուն էին։ Գևորգը ոգևորված խոսում էր, զվարթ բաներ էր պատմում, ծիծաղում էր ու ծիծաղեցնում։

Եվ վերջապես պետք էր քնել. քթի տակ մի եղանակ մմնջալով անկողին մտավ։ Շատ տարիներից ի վեր այսպիսի ուրախ սրտով և հանգիստ մտքով նա գլուխը բարձին չէր դրել։

1951,
Երևան

ԳՅՈՒՄՐԵՑԻ ԿԱՊԻՏԱՆ ՂԱԶԱՐԸ

(«Ուստա Կարո» վեպից)

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Կապիտան Ղազարը կենսաթոշակի արժանացած, ռուս կայսերական բանակի հին սպա էր, պատերազմների մեջ եփված և բաղմափորձ։ Թեպետ յոթանասուն տարեկանից անց մի ծերունի էր, սակայն տակավին առույգ էր՝ հոգով և մարմնով։ Ապացուցելու համար իր բազուկի ուժը, նա հուպ էր տալիս մի ափով միայն երիտասարդների ձեռքը և լուրջ ցավեցնում. թեև իր կորիճ տարիքին՝ քարը սեղմելով միջից արյուն էր կաթեցնում, ինչպես վկայում էր ինքը։

Միջահասակ էր, բարձձև կազմվածքով։ Քիթը՝ կոր, կզակը՝ սուր։ Քայլում էր ամուր և հաստատ, առանց ցուպի օգնության։ Ձայնը հզոր էր և հնչուն։ Եվ սեղն էր տա՛վիին աչքերի լույսը, որը պղտորվում էր միայն, երբ երգել էր տալիս իր իսկ ձայնակցությամբ այս տխրած երգը, որ հիշեցնում էր զինվորի զորքի, շարքաշ կյանքը։

Այս երգը միշտ երգել էր նա կռվի և հաղթանակի օրերին. և երգում էր հիմա իր վերջացող օրերի երևակային.—

«Զինվորիս երգերը, եղբարք, լսեցեք,
Աշխարհիս բաները լավ մտածեցեք.
Մեկն ունի մեծ աներ, մյուսը դյուղ ունի,
Միայն իմոնց զինվորը ոչինչ բան չունի—
Շորերը՝ թանկագին, փորը միշտ լաստած,
Տուր ձիուն միշտ գաբի. ինքդ կեր չոր հաց,
Թե քաշ պատերազմես, կտան քեզ պարգև,
Թե ոտքդ կորցնես կտան՝ մնաս բարև»,

Հազնում էր կազակի զգեստ ամ մանուշիշ։ Կուրծքը բազմաթիվ արծաթե մեդալներով և խաչերով զարդարված, մեջքին ոսկեզօծ գոտի,

որից պետական հանդիսավոր օրերին կախում էր արծաթապատ դաշույնը։ Դնում էր կուզակի փափախ՝ բանվածքներով, երբեմն գինվորական գլխարկ՝ կոկարդով, կարմիր լայն երիզով։

Ղազար աղան, ինչպես գյումրեցիք սովորաբար կոչում էին նրան, բարեկեցիկ վիճակ ուներ, զավակների և թոռների տեր։ Ընտանեկան պարկեշտ անուն էր վայելում քաղաքի մեջ։ Շատ ժամասեր էր ու ասավածավախ, բարի և աղքատախնամ։ Հայրական մի ընդարձակ տուն ուներ մեծ և պարսպած պարտեզով։ Իր սենյակը զենքերի փոքրիկ թանգարանի նման էր. պատերը ողջ ծածկված էին վայրի կենդանիների մորթիներով, որոնց որսացել էր իր իսկ ձեռքով Կովկասի ամեհի լեռներում, ռուսական անծայր դաշտերում, Լեհաստանում և Թուրքիայում։

Մորթիների վրա ներդաշնակ ձևերով ու խնամքով կախված էին մեծ քանակով՝ զանազան տեսակի և ոճի զենքեր՝ մանր ու խոշոր դաշույններ, սրեր, հրացաններ, փշտովներ, կարաբինաներ, որոնց յուրաքանչյուրը իր հատուկ փառավոր պատմությունն ուներ՝ իրավունքով ձեռք բերած Բեյբութովի պատերազմին, Շամիլի և Վարշավայի կռիվներին։

Իր նստած թախտի տակ կար մի երկաթյա արկղ, ուր աչքի լույսի պես պահվում էին թագավորից և փոխարքայից ստացած գովեստի և գերազանցության թղթերը, իր խաչերի և մեդալների վկայականները, մուրհակներ, պահեստի դրամ և իր կենսաթոշակի տետրակները,— որոնց մեջ գրված էր արքայական գանձարանից ամսե ամիս ստացած թոշակը, իբրև արդար հատուցումն իր արժանավոր զինվորական ծառայության «հանուն հայրենիքի», թագավորի և հավատի։ Առավոտ վաղ զարթնում էր Ղազար աղան, մի երկու կանոն Սաղմոս էր քաղում, մի երկու գլուխ Նարեկ էր կարդում, ապա գնում եկեղեցի։ Այնտեղ՝ հատուկ իր գորգի վրա կանգնած՝ ձայնակցում էր տիրտերների և տիրացուների բոլոր ժամասացություններին՝ գոց, անվրեպ կերպով։

Եվ հետո ժամի դուռը կուլ եկած աղքատներին ողորմություն տալով՝ դառնում էր տուն և սկսում պարտեզում աշխատել, ուր հասցնում էր ծաղիկներ ու բանջարեղեն և մի քանի պտղաբեր ծառեր — բալ, կեռաս, տանձ և խնձոր։

Կեսօրվա հանգստից հետո շարունակում էր պարտեզի աշխատանքը։ Ապա իր մշտապես ընտրած փողոցներով գնում էր տասնյակ տարիներից ի վեր իր հաճախած սրճարանը, որ սովորական ժամադրավայր էր ժամանակն անցած, տարիքավոր մարդկանց։ Նրանք հավաքվում էին այնտեղ վերստին ասելու և վերստին լսելու իրենց կյանքի դիպվածները

ու դրվագները, որոնց վերհիշումը կախարդական զորություն ուներ վերապրեցնելու անդարձ թռած քաղցր երիտասարդությունը...

Երեկոյան ժամի զանգերը լսելուն պես՝ Ղազար աղան կտրում էր խսկույն իր կամ՝ ընկերների խոսքի թելը, շտապում էր եկեղեցի, ապա նորից տուն, անոպյման տանելով հետը մի թաշկինակ լեցուն մրգերով իր սիրելի գերդաստանի մեծի ու պստիկների համար։

Այսպես էր կապիտան Ղազարի ամենօրյա կյանքը՝ անխախտ, բանուկ ժամացույցի նման, ժամը՝ ժամին, վայրկյանը՝ վայրկյանին։

ՂԱԶԱՐ ԱՂԱՅԻ ՏՈՀՄԸ, ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ԳԱՂԹԸ

Ղազար աղայի Մալխազյանց ազնվական տոհմը Տուրուբերան աշխարհից էր։ Բերանացի ավանդություններին համաձայն՝ Մալխազյանց ընտանիքը անմիջական շարունակությունն էր հինավուրց Խոռխոռունի իշխանական տան՝ սերված Հայկ Նահապետի խոռ որդուց, որ ապա Վաղարշակ թագավորի օրով Խոռխոռունի Մալխազը նրա թիկնապահն եղավ, դարեդար ժառանգելով այդ մեծ պաշտոնը։

Եվ իսկապես էլ, Մալխազենք ունեին Խոռխոռունյաց զավառում ընդարձակ հողեր։ Նրանց սեփական խոռանց մեծ դյուղը հին դարերից ի վեր շինված էր Սիփանա ծաղկոտ լանջերին։ Մալխազենց բերդի նման հին տունը կառուցված էր երկու ձորաբերանի ժայռերի վրա, որոնց աղբյուրները գոլգոշալով իջնում-թափվում էին մոտիկը փռված Վանա կապույտ ծովակի մեջ։

Այնքան հարուստ է եղել Ղազար աղայի հայրը՝ Մալխազ աղան, այնքան հարուստ, որ փաշաներն ու վալիները ոսկի էին պարտ առնում նրանից։ Դրանց չվճարված մուրհակները, մինչև օրս՝ հիշատակի համար պահում էր Ղազար աղան երկաթյա արկղի մեջ։ Մալխազ աղայի մի լոր խոսքի վրա էրզրումից քարավաններով ապրանք էր գալիս-թափվում նրա դուռը։

Սիփանա արոտները ծածկված էին Մալխազենց տեսակ-տեսակ ձիերի երամակներով, ոչխարների հոտերով, տավարների նախիրներով։ Ոչխարները կթում էին ոարերի գլուխը և այնտեղից կավե խողովակներով կաթը աղբյուրի պես հոսում էր մինչև Մալխազի տունը և լցնում հսկա տաշտերը՝ պանիր ու յուղ շինելու համար։

Ամեն տարի տասը մեծ կարաս դինի՝ բերանները կնքած՝ ետ էին դրվում անձեռնամուխ պահվելով, քառասուն տարուց հետո բացվելու

համար։ Նրա ծառաներին, աղախիններին, հովիվներին, այգեպաններին ու մշակներին թիվ ու համար չկար։ Աշխարհ բանում էր նրա համար ու աշխարհ ուտում էր նրա հացը։

Մալխազ աղան տան մոտ մի հյուրանոց — խան էր շինել ճամփորդների, անցնող ու դարձողների համար։ Հարուստ ու աղքատ, ամեն լեզվի ու հավատի մարդ, իջնում էր այնտեղ, օրերով իրենց կողքին պառկում, ուտում-խմում. ամենքը իրենց պատվի համաձայն, շահվում ու խնամվում և շարունակում էին իրենց ճանապարհը. անունները հարցնող չկար, համբանքը պահող չկար։

Հինգշաբթի մի ջրաղաց օր ու գիշեր ցորեն էր աղում այդ մեծ տան պետքին բավելու համար. ձիթհանքն էլ իրեն կարգին։

Ղազարը՝ Մալխազ աղայի միահատիկ անդրանիկ զավակը ծնվել է 1826 թվին, հունվարի 12-ին, ինչպես վկայում է տոհմական ձեռագիր հին նարեկը, որի հիշատակարանի մեջ նշանակված է ընտանեկան այս մեծ դեպքը։

Այդ տարին ծերերի կողմից չտեսնված ու չլսված ցուրտ է եղել. այնպես ցուրտ, որ թուքը գետին չէր հասնում, ձկները սառել են Վանա ծովի մեջ և անտառի ծառերը այրող ցրտից վառվել ու բոցին են տվել։

«Էդ տարին,— ինչպես պատմում էր Ղազար աղան ծնողներից լսածը,— էդ տարին բոլոր ծնված երեխաները մեռել են հայ, թուրք, քուրդ։ Մնացել եմ մենակ ես, մենակ ես։ Խոսքը մեր աշխարհի մասին է, ուրիշ տեղի ծնվածներ կան, պատահել եմ։

Զարմանք բան չկա, թե որ պատճառն իմանաք, ինչու որ ամեն բան պատճառ ունի, բացի միայն անպատճառ աստվածությունեն, ու դրա համար էլ աստված անպատճառ կա, խոսք ու վեճ չի վերցնի, հավատով խոստովանիմ։

Ծնվելես օրթն օր հետո, մկրտության սուրբ խորհուրդը կատարելու ժամանակ, հայրս հրամայել է, որ ինձ եռման ջրի մեջ մկրտեն, ու անունս էլ դրել է Ղազարոս։ Հիմի, համբերեցեք, կիմանաք թե ինչու համար։ Հա՛, ժամի դռան առջևն էլ բերել կուտա սառույցը վրան կապած մեկ տաշտով ջուր։ Մկրտությունեն եռաս, հայրս ականթոթափելի, ինքն իր ձեռքով կառնի ինձի, մարե մերկ, ու սառույցը կոտրելով ձեռաց կկոխե ջրի մեջ. եռման ջրեն սառը ջրի մեջ, գլխո՞ւ եր։ Կկոխե ասելով, «Թե ապրավ, կնշանակե, Ղազարոսի պես հարություն առավ. թե մեռավ, աստված ողորմի անմեղ հոգուն»։

Էսպես սառը ջրի մեջ թողնելով մեկ պահ, հետո դհանե ինձի կաս կապույտ դառած, շունչ կենդանի...

Ուրախացած կգոչե լուսահոգի հայրս, «Տղաս անունը վայելեց. Ղազարոս հարյավ ի մեռելոց. տղաս դառավ ջանփոլատ, պողպատիկ, վրան թուր ու արձիճ պիտի չբանի»։

Հորես օրինակ առնելով մեր հոգի ժողովուրդը՝ հայ, թուրք, քուրդ, էդ տարին իրենց նորածինները ամենքը մեռցրին, որը եռման ջրի մեջ, որը՝ սառը ջրի մեջ։ Զդիմացան էդ անմեղ հոգիները։ Էդ պատճառով էլ ես մնացի մենակ էդ տարվա ծիներեն, ու էդպիսով էլ նրանց կատարելիք քաջությունները ես մենակս կատարեցի։

Մ՚վ հայեր, չլինի թե դուք էլ ձեր երեխաների գլուխն էդ փորձն անեք, փորձանք կլինի, իմ բանս ուրիշ էր։

Ողորմածիկ հայրս, որ իմաստուն մարդ էր, ինձի հետո ասավ՝ թե պողպատիկությունս հիսուն տարեկան ժամանակս անցնելու է։ Ինչ որ անելու եմ, մինչև էդ տարին անելու եմ։ Էդ թվեն դենը հասարակ մահկանացու պիտի լինեմ ու ափսո՞ս, էդպես էլ եղավ... Հիմի հասկացաք հորս միտքը։ Ինչ որ դարբինները տաք երկաթը ջուրը կմխեն պողպատ շինելու համար, էնպես էլ հայրս դարձուց ինձի մուխ տված երկաթ. ու էդ պատճառով էր, որ ամեն կռիվներու մեջ վրաս ճանճերու պես գընդակ ու թուր կթափեին ու բրդի կծիկներու պես ետ կդառնային՝ մենակ հագուստս մաղ-մաղ ծակելով։ Միայն կայծակը, երկնքի թուրը, վրաս կընար բանի։ Թե որ զարկվեի, կայծակին պիտի զարկվեի, ինչու որ պողպատը կայծակը իրան կքաշե։

Եվ Ղազար աղան մինչև հիսուն տարեկանը կայծակից լուրջ վախ ուներ։ Երբ երկինքը ամպոտում էր ու որոտում, նա փախչում էր ու պահվում տան կենտրոնի մութ սենյակը և վերմակների ներքև կծկվում։ Միայն հիսուն տարեկանից հետո այդ վախը թուլացավ, բայց իսպառ չանցավ։

Մի անգամ նույնիսկ նա ակներև մահից ազատվեց, որի համար միշտ այդ տարեդարձին մի զառ մատաղ էր անում։

Այսպես պատահեց։ Դաղստանում, երկնքին կպած լեռների մեջ, Իմամ Շամիլի դեմ կռվելիս, հանկարծ ամպերից ընկնում է ահավոր կայծակը, ուղիղ Ղազար աղայի վրա։ Ղազարը վայրկյան ու գլուխը վորցրած փախչում է, վազում, կայծակն էլ ետևից, ինքը փախչում է, կայծակն էլ ետևից, կրնկակոխ, մի թիզաչափ հեռու միայն, որ նույնիսկ այրում է Ղազար աղայի փափախը։ Հաղիվ խեղճը իրեն ձգում է մի խոր քարայրի մեջ, իսկ կայծակը դիպչում է ժայռին փշուր-փշուր անելով ժայռ-ապառաժը։

Մանուկ Ղազարի մկրտության այսպես հաջող ելքի համար Մալխազ աղան մեծ կոչունք է տալիս հազար մարդու — հայի, թուրքի, քուրդ-

դի, որոնք գալիս են մեծամեծ նվերներով ու արմաղաններով, բերում են նժույգ-ձիեր, թանկարժեք գորգեր, քերմանշալներ, ոսկե և արծաթե իրեր...

Այդ օրը հազար հավկիթ են կոտրում ձվածեղի համար, երեսուն հղ են մորթում, հարյուր ոչխար, երեք հարյուր հավ, մի տաշտ աղ ու պղպեղ են բանեցնում, հինգ կարաս արդար յուղ։ Բրինձը, հացը և մնացած բաներն էլ ամեն ոք կարող է իր մտքի մեջ ամբողջացնել՝ լրիվ պատկեր առնելու համար։ Գինին ու օղին... այն էլ աղբյուրի պես հոսել է հարբեցնելով գյուղ ու քաղաք։

Երբ ռուսները 1828—1829 թվերին արշավեցին Թուրքերի վրա, հաղթեցին Սուլթանին և գրավեցին Կարսն ու Էրզրումը, Մալխազ աղան իր քաջերով միացած էր ռուսներին՝ փափագելով, որ քրիստոնյա թագավորի հովանին տարածվի հայոց աշխարհի վրա։ Բայց երբ Անգլիայի պահանջով ռուսը ստիպված եղավ ետ տալ գրավված հողերը, Մալխազ աղան էլ հարկադրված եղավ, հաղարավոր հայերի հետ, ռուս զորքի հետ գաղթել, որովհետև օգնելով ռուս թագավորին վատամարդ էր եղել Սուլթանի աչքին և վախենում էր Սուլթանի վրեժից։

Այսպես, Մալխազ աղան լքեց իր ծով-հարստությունը, պապական հողերը և առնելով իր ընտանիքը, ձիերի և տավարի հազիվ մի մասը ու միայն ու միայն մի գոմեշի տիկով ոսկի, փախավ եկավ Դյումրի, հոլ գնեց՝ տուն շինեց, պարտեզ տնկեց և ընդմիշտ հաստատվեց այնտեղ։

Ռուսաց պետությունը, ճանաչելով թե Մալխազենց ազնվականությունը և գրելով նրանց ընտանիքի անդամների անունները ազնվականների Ոսկե Գրքի մեջ, սակայն պատշաճ վավերաթղթերի չգոյության պատճառով, չընդունեց նրանց հայկական Խոռխոռունի իշխան լինելը, որով Մալխազենց տունը պիտի հանդիսանար աշխարհի ամենահին տունը չորս հազար տարվա հնությամբ, ռուս աղգից չորս անգամ հին։ Ո՞ր թագավորը այդ կհանդուրժեր...

Մալխազ աղան մի կողմից զժգոհ է, որ թողել է հայրենիքը և իշխանական վիճակը, բայց մյուս կողմից էլ զոհ էր, որ քրիստոնյա թագավորի ձեռքի տակ անարգել, միշտ լսում է հայոց եկեղեցու զանգերի հրճվակային ձայնը, որ դարերից ի վեր պապանձված էր մահմեդական տերության մեջ։

Այդ ժամանակները մանուկ Ղազարը վեց-յոթ տարեկան էր։ Երբ դարձավ տասը տարեկան, հայրը առավ տարավ նրան Թիֆլիս, տվեց ազնվականների դպրոցը, որպեսզի ուսում առնի զինվորական դառնա, կովի ու մեռնի հայրենիքի համար։

Ղազարը տասնեհինգ տարեկան էր, երբ փայլուն կերպով ավարտեց

զինվորական դպրոցը։ Եվ ինչպես երիտասարդ, գեղեցիկ ու մանավանդ ազնվական տան որդի, փոխարքան — նամեստնիկը նրան առավ իր շքախմբի մեջ, իբրև իրեն թիկնապահ։

Ժառանգական ուժերի ի՞նչ գաղտնի խորհուրդ կար այս երևույթի մեջ, որ Վաղարշակ արքայի թիկնապահ՝ Մալխազի թոռը երկու հազար տարի հետո դառնում էր փոխարքայի թիկնապահ։ Բայց ի՞նչ զարմանալու բան կա, քանի որ մի անգամ ջուր գնացած տեղից վերստին ջուր կերթա, և ծառերը հազարավոր տարիներից հետո նույն պտուղներն են տալիս։ Եվ թիկնապահ դառնալով Ղազարը իր նախահայրերի պես հավատարիմ էր ու քաջ, զենքի մեջ վարժ ու հմուտ։ Մասնակից էր նա, իբրև թիկնապահ՝ պալատական բոլոր հանդեսներին ու պարերին, արքայական որսորդություններին և ճանապարհորդություններին։

Այդ ժամանակները մի մեծ տոնի առթիվ, Կովկասի հին սովորույթի համաձայն, պալատի առջև մեծ հրապարակի վրա ձիարշավ տեղի ունեցավ և ջիրիդ խաղ։

Այստեղ էր, որ երիտասարդ սպա Ղազարը ցույց տվեց առաջին անգամ իր շնորհքն ու քաջությունը։ Նա շքեղ հագնված՝ հեծել էր նժույգը՝ սերված պապական ազնիվ ձիերի արյունից։

Նամեստնիկն ու իր տիկինը՝ իշխաններով ու գեներալներով և սրանց զարդարված կանանցով շրջապատված՝ բազմել էին պալատի պատշգամբում։

Մեկ էլ... նշան տրվեց ու մրցողները ձիերը շարժման մեջ դրին։

Մրցողների մեջ կային շատ ազնվատոհմ երիտասարդներ, բայց ամենից առավել աչքի էին ընկնում երեք հոգի, թե իրենց թանկագին հագուստներով, թե իրենց ընտիր նժույգներով։ Մեկը վրաց գահազուրկ թագավորի տղան էր, որ նույնպես ռուսական զինվորական պաշտոնի մեջ էր, մյուսը Իրանի շահի քառասուն կանանցից մեկի տղան էր, որ հյուր էր եկել Թիֆլիս՝ փոխարքայի մոտ, իհարկե պետական մի գաղտնի հանձնարարությամբ, իսկ երրորդը՝ Ղազարն էր, Խոռխոռունյաց տոհմի պայազատը։

Մրցակիցները դեռ իրար ասպարեզ չէին հրավիրել, երբ պարսիկ արքայազնը՝ հակառակ ընդունված կանոնին, հանկարծակի ջիրիդի ձողը թափով նետեց Ղազարի վրա։ Բոլորովին միամիտ էր Ղազարը, սակայն իր բախտից ձողը վրիպեց։

Ղազարը միանգամայն պաղարյուն կերպով ձայնեց հրապարակով մեկ.

— Շահզադե՛, դու հյուր ես, պատիվդ պահեցի։

Արքայազնը գոռոզաբար խնդաց քթի տակ, և նորից նետեց։ Այս անգամ էլ վրիպեց։ Ղազարը ուժգին գոչեց.

— Շահզադե՛, ներողություն խնդրեմ։

Շահզադեն ներողություն չխնդրեց։

Հայ սպան նորից գոչեց.

— Շահի տղա՛, էս անգամ կինայնմ քեզ ու միայն փափախդ կթողնեմ։

Ասելն ու ձողը նետելն ու փափախը թռցնելը մեկ եղավ։ Հանդիսականները ապշած մնացին։ Արքայազնը վիրավորվեց ու սաստիկ կատաղեց, ձին լարեց Ղազարի ետեից և ձողը նետեց։ Ղազարը ակնթարթում իր նժույգի փորի տակն անցավ։ Ձողը թռավ նժույգի վրայով։ Ղազարը փորի տակից ձին քշելով, բռնեց սուրացող ջիրիդաձողը՝ տակավին գետին չընկած, ապա հուժկու ձայնով գոռաց.

— Ա՛յ շահի տղա, մեղք ես, ներողություն խնդրե։

Շահզադեն համառեց։

Ղազարը թե՝ «այս անգամ էլ կխղճամ ծաղիկ կյանքիդ ու ձիուդ ականջը կթռցնեմ»։

Եվ լարեց ձողը, ձիու ականջի մի մասը պոկ եկավ ու թռավ։ Հանդիսականները այս անգամ չհամբերեցին ու ծափ տվին։ Արքայազնը խայտառակված՝ ավելի ու ավելի գրգռվեց ու զայրացավ, ձին քշեց հեռու, մինչև հրապարակի ծայրը և այնտեղից լցված՝ բաց թողեց, մոտեցավ, շատ մոտեցավ Ղազարին և ձողը նետեց. վերջինս թռավ կանգնեց ձիու վրա և ձողը իրեն մոտեցած վայրկյանին այնպես ճարպկորեն բռնեց, ինչ որ մարդ թռչող ճանճը կբռնի։ Հանդիսականների վրա լուր մաղվեց, շնչերը կտրած սպասում էին դեպքի զարգացմանը... Հայ ազնվականը այս անգամ, առանց խոսք ասելու ձողը խաղցրեց գլխի վերևը և այն է պիտի նետեր, որ նամեստիկն ու տիկինը թաշկինակները ճոճեցին ձայն տալով.

— Լաչար, Մալխազով, բավակա՞ն է, բավակա՞ն է...

Ղազարի ձեռքը թուլացավ, ձողն ընկավ գետին։ Փոխարքան կանչեց նրան իր մոտ.— «Ապրի՛ս, կտրիճ, ասաց, քո վեհանձնության համար այս մեդալը հիշատակ-նվեր»... Եվ մեդալը ուզեց փակցնել հայ քաջի կրծքին։ Նամեստանիկի տիկինը քաղցր ժպիտով իր կրծքի վրայից հանեց գնդասեղը և իր ձեռքով ամբացրեց ծապավենը...

Ղազարը հուզված համբուրեց մեծ տիկնոջ և փոխարքայի ձեռքը։ ապա խոնարհ ու համեստ կանգնեց նրանց սպասին։

Ղազար աղան կեսօրից անց՝ նստել էր Հաճիպապի սրճարանում իր մշտական տեղը։ Աջ կողքին իր հին ընկերն էր՝ Ֆելդշեր Գալուստը, որն իրեն զինվորական բժշկի օգնական, ներկա էր Դաղստանի կռիվներին և Ղազար աղայի քաջ գործերից շատերը տեսել էր իր սեփական աչքերով։

Ֆելդշեր Գալուստը մի փոքրահասակ, վտիտ ծերուկ էր, հակառակ կապիտան Ղազարի՝ մոլի խմող ու ծխող։ Մատներն ու մորուքը ծխելուց կարմրա-դեղին գույն էին ստացել։

Սրճարանը լի էր մարդկանցով։ Ավելորդ, տեղի ու անտեղի խոսակցություններով բռնված էր մթնոլորտը, որը միաժամանակ հագեցած էր սրճի հոտով, ծխի մշուշով։

Սրճարանը ներս մտավ Ուստա Կարոն, դարբին ուստա Մացակի և Ջավուշի հետ։ Դարբին Մացակը Ուստա Կարոյին ներկայացրեց Ղազար աղային։

— Ղազար աղա,— ասաց նա,— խնդրեմ ճանանչ եղեք երևելի վարպետ Ուստա Կարոյի հետ։ Քու անունդ շատ է լսել, ուզեց քեզի տեսնի։

Ղազար աղան ծանրությամբ ձեռքը մեկնեց.

— Բարով եք եկել, ո՞րտեղացի եք։

— Ղարսա նախճվանի կողը կնստիմ։ Ինչպես ուստա Մացակ սիրելս ասավ, շատ մենձ փափագ ունեի հրամանքիդ տեսնելուն։

— Ի՞նչ բանի վարպետ ես։

— Տուն կշինեմ,— պատասխանեց Ուստա Կարոն։

— Վնաս չունի, վնաս չունի — լավ բան է. աշխարհաշեն գործ է։ Ասված է՛լ ավելի շնորհք տա։

Ուստա Կարոն զննեց Ղազար աղային — ճերմակել էին իգիթ կապիտանի ոչ միայն գլխի նոսր մազերն ու բեղ-մորուքը, այլև հոնքերը։

«Հե՛յ վախ,— մտքի մեջ հառաչեց Ուստան,— կրակը գնացել է, մոխիրն է մնացել»։

Սրճարանի սպասավորը ձախ ափի մեջ իրար վրա դարսած կթխաները շարեց հյուրերի առջև և սուրճ լցնելով ասաց.

— Ուստա Գաբրելից։

Ուստա Մացակը աչքերը պտտեցրեց սրճարանի չորս կողմը և գտնելով հյուրասիրող ուստա Գաբրելին գլխով շնորհակալության նշան արավ։

— Ղազար աղա,— դիմեց ուստա Մացակը,— վարպետ Ուստա

Կարոն շատ կփափագի քու պատմությունները մեկ-երկու բան լսել, շատ կխնդրվինք։

Ղազար աղան չլսել ձևացավ։

Ուրիշներն էլ միշամաեցին թախանձելով.

— Ղազար աղա, մեր օտար հյուրի պատիվը մի՛ կոտրի, մենք կ կխնդրվինք. մի քիչ կյանքիդ պատմությունեն արա, մենք էլ լսենք, օրն անցնի, երթանք տներս...

Ղազար աղան էլ հենց հոգով-սրտով այդ էր ուզում։ Սիրում էր իր արկածները պատմել, նորից-նորից, հազար անգամ, որովհետև անգիտակից կերպով զգում էր, որ երբ պատմում է իր կյանքի վեպը՝ կամաց-կամաց նա է գալիս անցյալը, դառնում է այսօրվա օր, իրական, ապրող ներկա կյանք։ Լսում է վառոդի հոտն առած ու գրգռված ձիերի խրխինջը, նրանց սմբակների դափն ու դոփյունը, փողերի և թմբուկների ոռմիկ, ոգևորիչ ձայնը։ Տեսնում է ու լսում թնդանոթների կրակի ու որոտը։ Սրճարանը դաշտային միկիտան է դառնում, ունկնդիրները՝ զինվորներ։ Զգում է, որ իր մարմինը նորից պողպատանում է, արյունը նա է գալիս պրկված երակների մեջ և սիրտը պատերազմի թմբուկի պես զարկվում է ու դղրդում... Եվ բազուկը տանում է թրին, թեև թուրը սենյակի պատից էր կախված...

Սակայն մի պահ նազ արեց, որ նորից խնդրեին։

— Ի՞նչ պատմեմ, գիտեք, շատ անգամ եմ պատմել, համն ելել է։ Ուրիշ բան խոսենք։

— Ղազար աղա, համը չի ելել։ Քու պատմություններն ամեն օրվա հացի պես են, որ մարդ միշտ կուտե ու չի զզվի։ Պատմե, կշտանալիք չունինք։

— Ո՞րը պատմեմ, ի՞նչը պատմեմ. էնքան շատ են,— մտածկոտ ասաց Ղազար աղան, ինքն իր հետ խոսելով, սակայն որոնելով մի կենտրոնական թել, որից սկսեր բանալ իր պատմությունների կծիկը։

— Գլխեն պատմե, Ղազար աղա, իրիկվան զանգերին դեռ ժամանակ շատ կա,— կրկին թախանձեցին։

— Ժամանակ շատ կա,— հաստատեց Ղազար աղան՝ ձեի համար իր ժամացույցին նայելով ու շտկվեց նստած տեղում։

Ուստա Կարոն սուրճ ու թեյ պատվիրեց բերել բոլոր ներկա եղողների համար։

Սրճի կթխանները և թեյի բաժակները նորոգվեցին, չիբուխներն ու ծխամորճները սկսեցին կայծի տալ, տամայի և նարգու խաղերը դադար առան։

Կապիտան Ղազարը մի սուրճ ևս խմելուց հետո արբեց բեյերը և կծիկը բացեց։

— Կոտրիճ երիտասարդ էի, դեռ երեսուն տարեկան չեղած, որ էն խորամանկ Անգլիան, աշխարքի անառակ Ֆրանսիան ու քսակ կտրող Իտալիան միաբանած քրիստոնեից թշնամի Սուլթանի հետ պատերազմ բացին մեր թագավորի, Նիկոլայ Պավլովիչի դեմ։ Կռվի մեկ ծերը Ղրիմու վրա էր, մեկել ծերը մեր քաղքեն բռնած։ Նամեստնիկը Թիֆլիզեն եկավ եկավ Գյումրի։ Ես էլ հետն էի։ Մնողներուս օրհնությունն առած՝ կապասեի հրամանի։ Մեկ գիշեր էլ հրամանը տվին, մեր զորքն անցավ Արփաչայը, մտավ Թուրքի հողը։ Մեր գեներալն էր հայազգի իշխան Բեյբութովը։ Նամեստնիկը մնաց մեր քաղքի բերդը։ Ես ձիավոր էի ու հայրուրապետ։ Թուրքի զորքը՝ շատ խառնիխուռն էր. բաշի-բոզուկ, Ղասապ-Թաբուրի, ենիչարի, ջիլո գելբեկ, արաբ, չերքեզ, շալան, առնավուտ ու իրենք՝ թուրքերը, և էլ քրդերը։ Թրի ու թնդանոթի բերան տված՝ ջնջեցինք նրանց, ժողվեցինք Քյուրակ-դարա ու Քյազիկլար, ու ջարդեցինք, փրթեցինք, էնպես որ մեկ տարի բոլոր ղրանց լեշերի վրա ագռավները մրջյուններու պես կբանեին ու իրենց բները էնտեղ էին շինել...

Եկանք հասանք Ղարսա բերդի առաջը ու կանգ առանք։ Դուք գիտեք՝ որ Ղարսա բերդը անառիկ է. հիմի որ անգլիչանի ու ֆրանցուզի խելքով ու հնարքով էլ անառիկ դառած։

Մարդու միտը թուրքի կողմն էր, փողն ու կռվի վարպետությունները էդ անամոթ եվրոպացիներու կողմը։ Էդ պատճառով էլ էս կռիվը շատ երկար քաշեց, երկու-երեք տարի։

Էսպես Ղարսա առաջն էինք, ձմեռը վրա հասավ։ Ի՞նչ ձմեռ — սուր ածելի. ձեռք ու ոտք կտրեր-կթափեր։ Բայց, գիտեք, ես ի՞նչ դիմացկուն աղա էի. ճիշտ որ ջանփուլաղ. երկաթ-հոգի — ողորմած հոգի հայրս էն սկիզբեն գլխաս ճարը տեսել էր։ Արմանք-շարմանք բաներ կանեի. բոլոր զորքի բերանն էր անուս։ Թուրքերն էին, որ անուս դրել էին «Ջանփուլաղ», տեսնելով, որ իրանց ծանր ու սուր յաթաղաններով, երբ կզարնեին ինձի, միս ու ոսկորներս պողպատի պես «չը՛խկ» ձեն կուտային ու արյուն չէր կաթի։ Էս չընկ ձենով բռնված էր կռվի դաշտը— ամեն կողմը — լսող մարդ չէր մնացել։ Ինձ որ կտեսնեին բռնալով կփախնեին.— ամա՜ն եկավ Ջանփուլաղը։

Ես էլ փափախս կքաշեի ականջներուս վրա ու ինձ կքցեի փախչող թշնամու ետևը, զարկ, որ կզարկես, թուրս կտաքանար ու կծռվեր. ես նորեն նոր ուժ կառնեի ու կսրվեի. ի՞նչ անենք, թե թուրս բութ էր դառել։

Ա՜խ, չկը գիտի թե էս ձեռքս ինչքան ուժով էր,— ափսոսանքով ցույց տվեց Ղազար աղան աջ բազուկը.— մեկ զարկով գլուխ կթոցնեի, մարդը պանիրի պես կկիսեի...

Էնպես եղավ, որ երբ կռիվ կլներ, դեմս էլ մարդ չէի տեսնի... Ստիպված եղա հագուստս փոխել, սոլդատի շինել հագնել, որ ասկյարները չիմանային՝ թե ես եմ։ Բայց կարճ ժամանակ հետո նորեն գլխի կընկնեին էդ անիրավները...

Իրիկուն կլիներ, ետ դառնալու փողը կփչեր, լագրը կդառնային։ Բոլոր սոլդատներն ու խաղախները մեռելի պես կփռվեին կրակի շուրջը։

Լագրի մեջ շատ տեղ մեծ-մեծ օջախներ կային վառած, որ զինվորները տաքանային,— չմոռնաք որ ձմեռ էր,— տակառներով ել արաղ կար էս ու էն դին։ Ես կրակին իսկի չէի մոտենա. կերթայի արաղը ջրի պես կխմեի, կուտեի ինչ որ ձեռս ընկներ, ու յափունջիս փաթաթված՝ սառած գետնի վրա կպառկեի։ Գիշերը ծարավցած ժամանակ կելնեի, սառույցը կկոտրեի, ջուրը կքաշեի գլուխս ու նորեն կքնեի, ոնց որ բմբուլներու վրա լինեի, տաք սենյակի մեջ։ Թե արաղի, թե իմ արունի տաքությունեն գիշերը բոլոր՝ վրայես շոգին կելներ. քիչ կպատահեր, որ յափունջուս վրա սառույց բռներ կամ բեղերս սառույց կախվեր...

Շատերը հիվանդացան ու մեռան, կրնամ ասել, որ հրով ու թրով էնքան զինվոր չմեռան, ինչքան հիվանդություններեն։ Ես իսկի չհիվանդացա. գլխու ցավն ինչ է՝ չունեցա. ոչ թե մենակ էս կռվին, հապա բոլոր գալիք մյուս կռիվներին էլ։ Կյանքիս մեջ միայն մեկ անգամ հիվանդ պառկա, էն էլ մեր տան մեջ, լավ կերած, լավ խմած։ Տիֆով էի բռնվել, ոտքս ուրները ձեռք էին քաշած եղել ինձեն, հույսերը կտրած։ Էդ գիշերը ծարավ-պապակ՝ ծածուկ փախել եմ անկողնես, մտել եմ մեր մառանը, մորս դրած թուրշին (թթու) կուշտ-կուշտ խմել եմ,— ու էդ առավոտը մորեն նոր ծնված՝ ողջ առողջ ոտքի եմ կանգնել, գիտես թե իսկի բան պատահած չի եղել հետս։

Հա՜, էն կասեի, որ Ղարսը առնելու գործը երկարացավ։ Մեր գեներալները խորհրդի նստան, ու էն միտքը դուրս բերին, թե՝ բերդը շուտով առնելու ճարը բերդի տակը գտնվող վառոդի ամբարը տրաքացնելն է. համ ճամփա բանալու համար, համ թշնամուն սարսափեցնելու համար։

Հիմի ո՞վ էր էն խելառ կտրիճը, որ գլուխը փեշը դներ՝ էրթար։ Ես էի էդ խելառը։ Մեջ ընկա, ասի թե՝ կերթամ։

Կնյազ Բեյբութովը նայեց աչքերիս մեջ, կուզեր ասել, թե՝ «Մեկուճար ես, ափսոս ես»։ Ես էլ իրան աչքերու մեջ նայեցի, ասել կուզեի թե՝ «Ինձի փառքից մի զրկիր»...

Վերջապես, ինչ երկար գլուխ ցավցնեմ, գիշերը ծածուկ, մենակ ճամփա ընկա, ոչխարի սև մորթին վրաս քցած, տեղն եկած ժամանակը չորս թաթ կերթայի, որ դարաղուները (պահակ) իմանային, թե՝ անասուն կլինի էրթացողը. մեկ խոսքով՝ հոգիս բերանս առած՝ գնացի...

Լույսը չբացված՝ երկինքը բոցով լցված, աշխարք՝ դղրդոցով. ամբարը տրաքեցրի...

Ասկյար, փաշա՝ փախչող-փախչողի։ Կեսօր չեղած բերդի վրա էինք. բերդի մեջ եղած անգլիչան, ջիլո-միլո ավլեցինք, թափեցինք բերդի պատերեն ցած, Ղարսա ջուրը սրբեց տարավ։

Իրիկունը Բեյբութովը լալով գրկեց ինձի, ճակատս պաչեց ասելով. «Մեր զորքի պարծանք, ասա ի՞նչ կուզես»։ Ես էլ ասի. «Ուզածս եղավ, բերդն առանք, էլ բան չեմ ուզեմ»։ Առջևս թափեց խաչերն ու մեդալները թե՝ որը կուզես՝ առ, բոլորն առ։ Ես էլ ասի թե՝ օրենքի կարգով տուր, ստիճանիս հարմար։ Էս խաչերն ու մեդալները ինքը տվավ, տեսեք՝ վրան գրած է՝ «Քաջության համար. 1855 թվին»։

Եվ Ղազար աղան՝ ոգևորված կրծքին զարկելով ցույց տվեց շքանշանները, մեկ-մեկ նայելով հանդիսականների աչքերին, ապա շարունակեց խոսքի թելը։

— Գարունը նոր էր բացվել։ Իշխան Բեյբութովը ինձի մեկ գաղտնի նամակով շտապ գրկեց նամեստնիկի մոտ, Գյումրի քաղաքը։ Գնալ գալու համար երկու օր միջոց տվավ։ Ձիս նստա ու թռա։

Մշկոներու մոտ ձիուս ոտներն ընկան մեկ քանի գաղթական հայեր։ Մեկ մարդ ու կնիկ լացով ասին թե՝ քրդերը իրենց լուսի պես աղջիկը փախցրին տարան։ Ու ցույց տվին տարած կողմը։ Էլ չմտածեցի պաշտոնիս մասին, նորեն թռա։ Մութը կոխեց. ի՞նչ մութ — սև ձութ, մատը աչքդ կոխեին, չէիր տեսնի։ Մեկ ոտքս ձիու վրա, մեկէլը գետնին՝ ականջս դրած հողին, կլսեի աղջիկ փախցնող քրդերի ոտքի ձենը — հեռու, հեռվանց։

Ձիս կրակ ու քրտինք մտած՝ կանգնեցրի Ջուլլուի ավերակ կարմունջի վրա։

Տեսած կաք, ի՞նչ խոսք, մեր նախնյաց շինած էդ զարմանալի կարմունջը՝ մեջը դարդակ, կամարակապ, իշևան տուն։ Ձիս թողեցի դուռը, ես ներս մտա։ Շատվոր շնչի ձեն առա, խոմփոցներ, նրանց մեջեն երեխայի պես մեկ անուշ շունչ։ Էս է, հայի աղջիկն է, մտածեցի, ու կամաց-կամաց մոտեցա, մատներովս երեսը շփեցի, տեսա, հայի աղջիկն էր։ Երկու քուրդ փռել էին յափունջին աղջկա վրան. իրանք պառկել էին յափունջու վրա երկու կողմեն։ Էնպես, որ աղջիկը չէր կրնա ժաժ գալ յափունջու տակը. ո՞ւր մնաց ելներ ու փախներ։

Մոտենալի սպանեմ բրդերին, աղջիկը առնեմ, վախենամ, որ նրանց ձեռքն մեկէլները դարձեն, կռվի բռնվինք, մուրի մեջ խեղճ աղջիկը զարկվի։

Հնար մտածեցի. խանգարելու յափունչին երկու դոզմեն կամացուկ դարեցի, աղջիկը հանեցի մեջերեն, առա ձիուս վրա։ Լույսը չճեղքված հասցրի հորն ու մորը։ Նրանց օրհնանքն առած՝ եկա հասա Գյումրի նամեստնիկի մոտ ու նամեստնիկի պատարխան նամակն էլ առած՝ բերի տվի Բեյքուրթալին, որոշված ժամանակին, վայրկյանը վայրկյանին։

Էստեղ էն ախտոր բանը պիտի ասեմ որ,— ձայնը իջնցնելով, հուսալանքով ասաց Գալշար աղան,— մեր քաջությունները զուր անցան։ Ավազակ, խայտառակ ինքրապչիք պահանջ դրին, պալման կատեցին ու մեր կռվով առած հոգերը Նորեն նա ավինք Սուլթանին... Գալշար աղան մի պահ լռեց։ Ուստա Կարոն կրկին տուրճ հրամցրեց նրան, խմեց, հանգստացավ, ապա մի նոր պատմությանն գլուխ սկսեց։

Սա արդեն նրա սովորությունն էր. երբ նա մի անգամ բաց էր թողնում պատմությունների կծիկը, այլևս հակառակ իր կամքին, գլորվում էր, գլորվում էր կծիկը, մինչև որ մի արտաքին հանգամանք առաջ կտրեր։

— Էս պատմությունս էլ,— շտկվեց դեպի Ուստա Կարոն, քարձես միայն նրա համար էր պատմում իր զրույցը,— էս անմոռանալի պատմությունս էլ էն ժամանակվա համար է, երբ Դաղստանի Իմամ Շամիլը Կավկազի բարձր սարերու ծերին թառած՝ դլուխ էր բռնել մեր թագավորի դեմ, հարի չէր տալիս, չէր հնազանդում ու Սուլթանի հետ էր իրեն սիրած ու գոսծ։

Նամեստնիկը, Գարսա գալեն հետո, ինձի հետը նորեն թիֆլիզ էր տարել. ինձի իրեն հարազատ տղայի պես կսիրեր, պալատի մեջ փակ դուռ չկար առջևս։

Հիմի որ ֆոռել սկսավ, կանչեց մեջքիս զարկեց, ասավ,— «Ձեզի տեսնիմ, Լազար, էս անգամ կապիտան պիտի դառնաս»։

Էսպես գնացինք Դաղստան կռվի։

Շատ դժվար էր էս կռիվը, քանի որ Դաղստան ասածդ — սարեր ու ձորերու մեկ Ցընջուկ, քնչի օրինակ։ Առաջդ բաց դաշտ չէիր, որ թշնամուդ բրդեիր, հապա՝ սար ու քար, անդունդ ու անտառ, գազաններու բան։ Ելիր, իջիր, վա՛յ թե ոտքդ դուրս պրծներ, մինչի անդունդը մեռիկ կանչելով պիտի էրթայիր։ Մեր առաջ սուլթանն էլ՝ դաշտ ու գուրանի մարդ, սարը ոտնձգ ամպ կեարծեր, ձորը տեսնեք՝ ջուր ու գետ։ Էս ամեն պակասն էլ կլրացնեին իրանց՝ Շամիլի իգիթ գինվորները —

շալան, լեզգի, չարքյազ՝ անվախ, անահ, մահեն երես չդարձնող սրբրած թրեր...

Արի ու էս կռվեն գլուխ հանեն։ Թնդանոթը կտրաքեցնեինք՝ կերթար կդիպչեր ապառաժներուն. թշնամու տեղ վայրի հավքերն ու անասունները ծակ ու ծուկերեն փախ կուտային, կթռնեին...

Մեկ էլ հանկարծ, սատանան դիտի, որտեղերեն Շամիլի զորքի դափաղլուի մեծ-մեծ գնդակները կարկուտի պես վրաներս կթափվեին։ Ջորս դին կնայենք՝ մարդ-մուրդ չէր երևա... կերթային մութն ու ծմակ անտառներու մեջ կկորեին։ Ո՞ւմ հետը կռվեիր — ծառներու, քարերու, թե՞ հավքերու հետ։

Էստեղ, վրաս չխնդաք, որ ասեմ թե՝ շատ անգամ կռվի ժամանակ մորուքս մեր պոլկի համար օրացույց դարձավ։ Էս էլ գիտենալու է, որ հիմի է մորուք կպահեմ ծերությանս պատվի համար։ Առաջ աստծու իրան օրը թրաշ կանեի։ Բայց կռվին սար ու ձորերու մեջ, ազատ ժամ ու միջո՞ց կար թրաշի — ամենևին։ Մորուքս երեսիս վրա երկու-երեք մատ հաստությամբ կնստեր։ Ընկերներս կհարցնեին — «Մալիսազով, էսօր ամսու քանիսն ենք, ի՞նչ օր է»։

Ես էլ ձեռքովս կշփեի երեսս, ճիշտ ու ճիշտ օրը, թիվը կասեի, ինչու որ մորուքիս հաստ ու բարակ, կարճ ու երկնն մազը ժամանակի աստիճանը ցույց կուտար։ Միաքս էի պահում վերջին թրաշիս օրն ու ամսաթիվը, ու հիմի ավելացնելով էդ թրաշից հետո անցած օրերը, որ ինչպես ասի՝ մորուքս ցույց կուտար, մտքիս մեջ կհաշվեի ու անսխալ կիմանայի, թե ինչ ժամանակի մեջ կգտնվեինք։

Շատ անգամ նամեստնիկը խնդալով կհարցներ. «Էյ, Լալազար, օրացույցդ ի՞նչ նշանց կուտա»։

Կշփեի մորուքս ու ձեռաց կասեի, խոսքի օրինակ. «Ձերդ մեծություն, էսօր սեպտեմբերի ութն է, օրը հինգշաբթի»։ Ու մորուքս շատ տերտերներեն ավելի շիտակ ցույց կուտար։

Ճսելիքս էս չէր, հապա էն, որ նամեստնիկը իրան կուտեր, որովհետև ամոթ էր ողջ աշխարքի առաջ, թե առաջ զորքը, անգլիչանին ու ֆրանցուզին ծակը մտցնող ռուսաց զորքը, հիմի անհնար մնացել է էս սարերու վայրենիներու դիմաց։

Էստեղ շմոռանամ ասել, որ էս կռվի միջոցին առաջին հեղ ծանոթացա Գալուստ ախպորս հետ, որ դոխտուրի մոտ ֆելդշեր էր,— գլուխը թեթևակի թեքելով դեպի ֆելդշեր Գալուստը,— բայց դոխտուրին շատ բան կհասկնար ու շատ գործ կտեսներ։ Մեկ քաղաքից էինք, լավ բարեկամացանք, ախպեր դառանք։

Ունկնդիրներից ոմանք Ուստա Կարոյի հետ հայացքները ուղղեցին դեպի ծերունի ֆելդշերը, որը համեստությամբ գլուխը կախեց և սկսեց դողդոջ մատներով ծխախոտ փաթաթել։

Նամեստնիկի հետ կելնենք սարերու գլուխը թշնամու տեղը դրտնելու համար։ Ինքը դյուրբին (հեռադիտակ) կդներ աչքերին ու կնայեր «Մալխազով, կասեր ինձի, ես էն սարի լանջին զինված մարդիկ կտեսնեմ, դուն ի՞նչ կասես»։ Ես էլ ձեռքս ճակատիս՝ աչքերիս վրա դրած՝ կնայեի ու կասեի — «Ձերդ մեծություն, ներող եղիր, տեսածդ շիտակ չէ, ոչխարի հոտ է երևացողը»։

Ու վերջը միշտ իմ խոսքս կըլներ։

Էսպեսով էր, որ իմ աչքիս զորությունը փրկեց պատերազմը ու մեզի հաղթություն բերեց։ Խոսքիս լավ ականջ դրեք, ամենեն լավ տեղը ենք պատմությանս։

Ես, որ արծվի պես մեկ աչքս էս սարի վրա էր, մեկէլ աչքս էն սարի, մեկ օր իրիկվան դեմ տեսա, որ հեռվեն թշնամու շատ զորք կուգար մեր վրա։

Հաշվեցի, տեսա, թե որ մենք էստեղ մնանք, նրանք պիտի վրա տան մեզի, չորս կողմեն փաթթեն, հում-հում պիտի ուտեն մեզի։ Նորեն հաշվեցի, տեսա, թե որ մենք վրա տանք, առավոտ չեղած՝ նրանց կբռնենք ձորի մեջ, մենք՝ վերև, իրենք՝ ներքև, ուղղակի հալած արճիճի տակ նրանց կխեղդենք։ Կնշանակե՝ զորքը պիտի առաջ քշել։ Բայց զորքը առանց Նամեստնիկի հրամանի տեղեն չի շարժվի։ Իսկ թե Նամեստնիկին ասեմ, ժողովի պիտի նստին, տեսուծիս չպիտի հավատան, եկողն էլ դիշեր է, որ իրենք տեսնեին. թե որ հավատան էլ, պիտի քննեն, խոսեն, վիճեն, ժամանակ պիտի կորի, բաներս բուրդ պիտի դառնա։ Վճռեցի գործս ինքնագլուխ տեսնեմ։ Հենց որ Նամեստնիկը քուն մտավ, ես ձիս առանց թամբի ու առանց սանձի հեծա, որ տեսնողը համոզվեր թե շիտակ վռազ էր։ Լագրրի մեկ ծայրեն մյուս ծայրը վազեցի գոռալով — «Նամեստնիկը հրաման տվավ ինձի, որ զորքը տանեմ. ելեք, հագնվեք, շուտ,շուտ». ամենքը մեկ վայրկյանի մեջ ոտքի ելան, ձիավոր ու ոտավոր, կազմ ու պատրաստ։

Զորքի գեներալները ինձի հարցրին — «Ո՞ւր պիտի երթանք»։

Ես չուզեցի ճշմարիտն ասեմ. գաղտնիք պահելը հաջողության էն սկիզբն է ու կեսը։ Էսպես պատասխան տվի.— Ջիբուխիս ծուխը ուր որ կերթա, ետևեն արեք։

Ես հիմի ծուխ չեմ քաշի. առաջ չիբուխս բերնես վար չէր ընկնի։ Բայց քանի տարիքս առա ու պողպատությունս էլ անցավ, ծուխն ու խումը թողեցի։ Մերությունը հանաք բան չիմանաք։ Նապոլեոն մեծն

էլ, ինչպես ուսումնարանի մեջ կարդացել էի, որ հարյուր պատերազմների մեջ եղավ ու իսկի վերք չունեցավ. (կարծեմ որ ինքն էլ պողպատված էր). բայց որ ծերացավ, փորի ցավեն ընկավ մեռավ։ Ժամանակի խարտոցը ամեն բան կուտե. պողպատ էլ չի դիմանա, ժայռապառաժ էլ։

Զորքը բոլորը ինձի հնազանդվեցավ։ Սուտ հրաման հանելուս մարդ չկասկածեց. քանի որ բոլորին հայտնի էր, որ Նամեստնիկը ամենեն շատ ինձի կսիրեր ու կհավատար։ Առանց հրամանի ներս ու դուրս կանեի, մինչև իսկ իրան քնած սենյակը կմտնեի ու կզարթնեցնեի։ Ու մանավանդ որ՝ նրա գրած ու բերանացի հրամանները գեներալներին ես կհայտնեի։ Մեկ էլ որ ամեն մարդ գիտեր, թե որ սուտ խոսեի, ասել կուզեմ, սուտ հրաման տայի, Նամեստնիկը գլուխս պիտի կտրել տար, թեկուզ ինձ հոր պես կսիրեր. Ես օրենք է պատերազմի։

Ես էլ մտածեցի. թող փրկեմ զորքը, թող գլուխս կտրեն։ Մեկ օր եղել եմ՝ մեկ օր էլ պիտի մեռնիմ, բայց անմահ անուն կթողնեմ, հորս ու մեր քաղաքի համար հավիտենական փառք ու պարծանք։

Զորքի գլուխն անցած կերթայի։ Վա՜յ թե ձիս չհնազանդեր ու գլուխքն առներ, փախներ. պապիս ձիերը հրեղեն էին ու կատաղած։ Սընկներովս էնպես կսղմեի փորին, որ շունչը կկտրեր, կանգ կառներ...

Հա՜, զորքի գլուխն անցած էսպես կերգեի.

«Խմենք պիտի, պարենք պիտի,
Երբ մահը գա, մեռնենք պիտի,
Հայրենիքի պատվի սիրուն
Զարկենք պիտի, մեռնենք պիտի...»։

Էսպես կերգեի, ու ժամանակ-ժամանակ էնպես կիմանայի, թե մահի կերթամ... Էս մտքերու մեջն էի, երբ հասա ուզածս տեղը՝ Դարգո, Սալավաթ սարերու տակը։ Զորքս շարեցի կռվի համար ու սպասեցի։ Մեկ էլ ձորը լցվավ Շամիլի զորքերով։ Նրանք միամիտ էին, մեզի չէին տեսել։

Օրվա լույսի հետ կրակ ու բոց բացինք։ Ի՞նչ կռիվ, ի՞նչ կրակ։ Բոլոր տեսած կռիվներս սրա քով՝ խաղկնելիք։ Ձալանները ու լեզգիները առյուծի պես կկռվեին, գայլի պես կոռնային։ Մերոնք էլ պակաս առյուծներ չէին։ Մենակ վախն էն էր, որ նրանք շատվոր էին, սարի ու ձորի կռվի մեջ վարժ։ Երկու օր ու գիշեր կռիվ ունեցանք։ Մեր կողմից թե մեկ մարդ կվիրավորվեր, նրանց կողմից հարյուրը կվիրավորվեր։

Ես կոփի դրակ ու բոց տեղերն էի։ Ձիս, հրեղեն ձիս, զարիվեցավ տակս, ձախ թևս էստեղ վիրավորվեցավ։ Թևիս էն տեղը, որ հայրս մկրտությանս ժամանակ բռնել էր ու պաշ ջրի մեջ կոխել էր ինձի, էդ տեղ մուխ չէր առել ու հասարակ մոխ պես էր մնացել։ Էդ վերքը Գալուստ ախպերս ինքը հնոտ լավացրեց։ Էնպես լավացրեց, որ տեղն էլ չի երևա հիմի։

Վերջապես երկու օր հետո՝ առջևներս էլ մարդ չկար — մենակ մեռած լեշեր. հատ ու կատոր մարդ փոխակ, էն էլ Իմաստին սև լուր տանելու համար։

Ոտաքս ու ղվարթ, երգով ու խաղով դառանք լագերը (բանակատեղ)։ Երկու օր ոչ կերել էինք, ոչ քնել, բայց նորեն թոնելով կերթային, թև էինք առել. հաջողությունը մարդուն թև կուտա։

Լագերը մտանք-չմտանք՝ Նամեստնիկի ծառաները՝ թթված դեմքերով եկան առաջներս կտրեցին, ինձի տարան Նամեստնիկի քովը։ Ինքը լսել էր ինքնագլուխ հրաման տալս, էնպես էր զայրացել, որ ինձ տեսնելս ու դլուխս կտրելը մեկ պիտի ըլներ։ Էսպես կլոնքս մագ կախված էր նղել։ Գեներալները գործի հոտն առնելով հետս նկան։ Նամեստնիկը ինձի տեսավ թե չէ բարկությունից կրակ կտրած, ոտքերը գետնին զարկեց ու գոռաց.— «Էստեղ Նամեստնիկը ե՞ս եմ, թե դուս»,— և հրամայեց, որ վրայես խաչերն ու մեդալները և էլ էպոլետները պոկեն։

Գեներալները վախու պապանձվել էին։ Իմ իսկի պետքս չէր. գիտես թե՝ ինձի հետ գործ չուներ էս բանը։ Ծառաները եկան, յափունջին առան վրայես. ի՞նչ յափունջի՝ քարմաղ դառած։ Նամեստնիկը տեսավ զարմացավ։ Ձեռքիս վերքն էլ դեռ արյունը կկաթեր, մոռացել էի կապել։

Նամեստնիկը նայեց ինձի, նայեց գեներալներին, էդ վայրկյանին գեներալները մեկ մարդու պես ընկան նրա ոտները՝ աղաչելով. «Ձերդ մեծություն, ներե Մալխազովին. նա ազատեց Ձեր զորքը. թշնամին հաղթված է»։

Նամեստնիկը էս խոսքի վրա մոտեցավ ինձի, նայեց, խղճմտանքով նայեց. աչքը ընկավ հագուստիս։ Վրաս-դլուխս, փափախս, չերքեզկաս, կոշիկներս՝ ամենքը, ծակծկված։ Հանել տվեց վրայի հագուստներս... Ի՞նչ ասեմ, 50 հատ, 100 հատ զափախլուի գնդակների արհճներ թափվեցին հատակի վրա։

«Մարդ աստծու, էսքան գնդակ ես կերել ու չես մեռել. հրաշք է աստված վկա»։

Կուրծքս բացեց, տեսավ, ողջ կապուտցած, գնդակները ոժոլ դիպել էին, միս ու ոսկրս չէին ծակել։ դիպած տեղերը կապուտցել էին մենակ։ Էս բանի վրա սիրտը էնպես կակղեց, որ գրկեց ինձի, ճակատս պաչեց ասելով.

— Կապիտան Լազար, իմ սիրելի Լազար...

Էսպես դառանք կապիտան։

Էս հրաշքի համար էր, որ Նամեստնիկը ինքն իր ձեռքով նամակ գրեց թագավորին, ու էն ժամանակվա Պետերբուրգի ու Մոսկվայի կղեքները զարմանալի բաներ գրեցին վրաս — «Լազար Մալխազով, կովկասցի գերություն։ Ամեն մարդու և կնկա բերանն էր էս խոսքը։ Թագավորը խաչ գրկեց։ Ա՜յ, էս խաչն է՝ Սուրբ Գյորգի։ Գալուստ ախպերս էս բոլոր բաներում ականատես է։

Այդ միջոցին Գալուստը կոկորդը շիտակելով, խոսքած ձայնը հարմարեցնելով՝ ասաց.

— Կազեթները կպահեի, միայն վերջի տարիներս թոռներս մուկի պես ծակ ու ծուկ մտան, փչացրին թուղթ ու կազեթ։ Ղազար աղայի ձեռքը ես լավցուցի, ոսկորները ավազ էին դառել։ Է՛յ գիտի օրեր...

Ղազար աղան շարունակեց իր խոսքը.

— Նամեստնիկը ամեն բան տեղին իմացավ գեներալներին։ Լսեց, որ երկու օր ու գիշեր բան չենք կերել ու աչք չենք փակել։ Հրամայեց ծառաներուն, ինձի տարան իրա սենյակներն մեկը, հանվեցրին, դեզ քսեցին մարմնիս վրա, պառկեցրին, հավի ապուր կերցրին, ոռմով շալ խմցրին։ Հանգստացա ու քուն մտա։ Մեկ օր ու երկու գիշեր մեջքիս վրա քնել էի։ Երբ որ զարթնա, ոնց որ գարնան նոր բացված արեգակ։

Իրիկունը էս հաղթության պատվին՝ Նամեստնիկի մոտ կերուխում եղավ, պար ու մուղիկա։ Ես նոր հագուստներ հագած կապիտանի էպոլետները դրած՝ Նամեստնիկի առաջն ելա։

Է՜, ինչ երջանիկ օր էր, անմահական, դրախտի օ՛ր...

Մուղիկան ածեց, շամպայնի գինիները տրաքվեցան, փրփուրը մռռած հատակը բռնեց։ Խմեցինք թագավորի, թագուհու, հայրենիքի կենացը։ Հետո պարը սկսվավ։ Նամեստնիկը ինքը առաջինը պարեց՝ կաղաչկա, հետո ես, հետո բոլոր գեներալները, օֆիցերները։

Ես ինչքան շնորհք ունեի՝ թափեցի — մերկ իսանջալներով պարեցի, բուտիլկան գլխիս գրած, շամպայնի լիքը բաժակները ձեռքիս՝ պարեցի, կամարինսկի, կազաչկա, լեզգինկա։ Խենթ ու խելառ, ոչ հոգնել կար, ոչ էլ հշտանալ...

Է՛յ վա՜խ, է՛յ վա՜խ, անցած օրին օր չի հասնի. սուտ բան է մնացածը։

Էսպես կերանք-խմեցինք, երգեցինք, պարեցինք երեք օր, երեք գիշեր։ Երեք օր ու գիշեր որ լրացավ, Շամիլի կողմեն մարդ եկավ, թե Իմամը սենձնատուր է։ Հասկացա՞ք, թե բանը ուրտեղեն ծագում առավ, Շամիլի տաշտը ուրտեղեն ծանվվեց, գլխո՞ւ եք...

Ղազար աղան հարկ համարեց այստեղ վերջացնել իր պատմությունը, թե հոգնել էր, թե արդեն բավական ուշ էր։ Մի տաք-տաք սուրճ խմեց սրա վրա, մինչ այդ իրիկվան ժամի զանգերը տվին։ Բոլոր ունկնդիրներին մնաս բարև ասելով և բոլորից հարգալից բարև ընդունելով, ելավ ֆելդշեր Գալուստի հետ ժամ գնաց, սակայն մեջը գրեթե բոլորովին ուղղվել էր՝ քայլում էր գլուխը բարձր, կեցվածքը՝ զինվորական, փափախը՝ գագաթի ծայրին, ու մի քիչ աջ ականջի վրա շրջած։

ԿԱՊԻՏԱՆ ՂԱԶԱՐԻ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ. ՆՐԱ ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԱՐՔԱՅԻ ՀԵՏ

Կապիտան Ղազարի և ֆելդշեր Գալուստի մեկնելուց հետո Ուստա Կարոն և ուստա Մացակն էլ թողին սրճարանը և գնացին Ուստա Կարոյի իշխանը։ Ուստան շատ հետաքրքրված էր իմանալու Դաղստանի կռիվներից հետո կապիտանի անցրած կյանքը։ Մացակը պատմեց, ինչ որ ինքը լսել էր ու տեսել, ինչ որ ողջ քաղաքը գիտեր նրա հետագա կյանքի մասին։

Դաղստանը նվաճելուց հետո փոխարքան Պետերբուրգ է գնում պատերազմի և հաղթանակի մասին զեկուցում տալու ցարին և մնում այնտեղ. նրա տեղը ուրիշ փոխարքա է գալիս Կովկաս։ Ղազարն էլ գնում է Ալեքսանդրապոլ ծնողներին տեսնելու և մնում է նրանց մոտ։ Եվ որովհետև այլևս փոխարքայի թիկնապահ չէր, լավ է համարում մնալ հոր տանը և ծառայել տեղական բանակի մեջ։

Ծնողները բավական ծերացել էին և բոլորովին մենակ էին։ Նրանց աչքերը ջուր էր կարել միհատիկ որդու ճանապարհը սպասելով։ Գրեթե քսան տարի աննշան ընդհատումներով, նա բացակա էր տնից. և հիմա որ իրենց ձեռքն ընկավ, ուղղակի ուժով-զորով բռնեցին նրան պսակեցին մի գեղնցիկ, համեստ աղջկա հետ, որպեսզի խոռխոռունյաց տոհմը չվերջանար։

Ընտանեկան կյանքը շատ խորթ եկավ Ղազարի համար։ Երկար ժամանակ չէր կարողանում հարմարվել նոր կյանքի ձևերին։ Մարդը տարիներով դուրսը, լեռներում ու դաշտերում, կատարյալ վայրենացել էր։ Կռիվների մեջ ե՞րբ էր նա մոր ձեռքով եփած անուշ կերակուր տեսել. շատ անգամ քաղցից որսի միսը հում-հում էր կերել կամ ծառի չոր կեղևը ծամել։ Ե՞րբ էր նա կնոջ ձեռքով ձգած անկողին մտել. քարքն էր եղել բարձ և թաց գետինը՝ անկողին։ Այսպիսի մարդը ինչպե՞ս հարմարվեր փափուկ կյանքին։

Մի խոսքով՝ սիրտը տան վրա դեռ տաք չէր։ Ծառայությունից ազատ օրերը որսի էր գնում կամ ընկեր-օֆիցերների հետ գինարբուքի մեջ գիշերները ծայրեծայր լուսացնում։

Տանը եղած միջոցին էլ կամ ձին էր լողացնում, կամ զենքերով էր զբաղվում, կախված տեղերից վար բերում, մաքրում, նորից կախում և նոր-նոր ձևերով դասավորում փայլեցրարած զենքերը պատերի վրա։ Սակայն կամաց-կամաց այս վայրի թռչունը սովորեց ընտանեկան բակին, սիրեց կնոջն ու երեխաներին, որ արդեն երկու հատ էին՝ մի տղա, մի աղջիկ։

Մալխազ աղան խիստ կրոնական մարդ էր, որ առանց «եկեսցէ»-ի անկողին չէր մտնում. Ղազարն էլ ենթարկվեց հոր ազդեցությանը, որի հեզինակությունն ընդունում էր անպայման և հնազանդվում էր սիրով։ Դարձավ եկեղեցասեր և սկսեց «հոգու ետեևն» ընկնել։ Առավոտ կամ երեկո անպատճառ, գոնե մի անգամ, ժամ պիտի գնար, ջերմեռանդ աղոթք աներ ու թեթևացած խղճով տուն դառնար։

«Պատերազմներու մեջ կամա-ակամա, գիտությամբ ու անգիտությամբ և մասամբ նորին,— ամեն անգամ այս կերպ էր ասում Ղազար աղան, երբ խոսք էր բացվում այդ առիթով,— կրնա պատահել, որ շատ մեղք գործած ըլնիմ, անմեղ արյուն թափած, թեկուզ թագավորի հրամանով։ Բայց հոգի ունիմ աստծուն տալու, դառն հաշիվ ավուր ահեղ դատաստանին։ Միայն էս մեկ թուրս հազար գլուխ է կտրել, հապա՞ մնացած թրերս ու փշտովները, որ հաշվենք. ճոթը մինչի Ղըրմզ կհասնի։ Թե որ միայն մեկ անմեղ արյուն էլ թափած ըլնիմ, նորեն հաշիվը շատ խիստ էր ըլնելու»։

Խոսքը այն կեռ և ծանր թուրի մասին էր, որ կախել էր արջի մորթու վրա, իր անկողնու գլխավերևը։

Քաջ մարդկանց մոտ հնուց հարգի օրենք կա, որ հազար հատ գլուխ թոցրած թուրը պետք է հանգստյան կոչել ու պատվով կախել բարձր ու պատավաղոր տեղից։ Այդպիսի մի նշանավոր, սրբագործված թուր ուներ կապիտան Ղազարը. տեսնողը տեսել է այն, ով որ ուզում է՝ կարող է տեսնել իր աչքերով և հավատալ։ Թեև գյումրեցիք ասում էին՝ թե այդպիսի երեք թուր ունի Ղազարը, բայց այդ ճիշտ չէ. ճիշտը մեկ թուր է։

Ղազար աղան քաղաքում հարգված մարդ էր, բայց մի գաղտնի բամբասանք շատ դառնացրել էր նրա սիրտը, որ չէր կարող մոռանալ։ Մի քանի արուն-բերան գյուղերից նախանձից տարածել էին՝ թե Ղազար աղան պատերազմում թալան է արել, թուրքերին, գաղստանցիներին կողոպտել է, նույնիսկ բանակի գույքից ծախել է, դրա համար էլ հիմա այսպես ապահով, անկարիք ապրում է։ Անպիտանները մտածում են, որ նա թոշակ ունի, տուն ունի։ Մալխազ աղան գոմշի ոսկի է բերել, քաղաքում մի մեծ քարվանսարայի բաժնետեր է, բայց արուն-բերան մարդկանց ի՞նչ խոսք հասկացնես— «Տո՛, ի՞նչ թալան, կողոպուտ,— զայրացած ասում էր նա,— վա՜յ, վա՜յ, ես որ փող ուզենայի, ձեռքս բռնողն ո՞վ էր։ Ուրիշները բեռներով իրենց տները ոսկի, արծաթ, շալ ու սրբեշում, խալիներ գրկեցին և ամեն կռվի մեջ աչքս կուշտ մտա ու կուշտ դուրս եկա։ Ես իմ փոքր հարգը չգիտեի, ուրիշի փողին ի՞նչ աչք պիտի տնկեի։ Խոսքի օրինակ Դաղստանի կռվեն հետո, երբ տուն կդառնայինք, մենք չոր, ամայի տեղով անցնելուս, զինվորիս մեկը մրսեց, հիվանդ պառկավ։ Չայ պիտի խմեցնեինք, որ քրտներ, լավանար։ Սամովարի շուրը տաքացնելու համար կպչան (փայտիկ) չկար։ Սոցիս մեջ եղած թուղթ փողերս բոլորը վառեցի, զինվորիս համար չայ շինեցի։ Մենակ էս բանը հերիք էր կազեթի մեջ քցել՝ խմացնելու համար, թե ես ի՞նչ սրտի տեր մարդ էի և էլ միշտ էն սրտի տեր մարդն եմ։ Ես հոգս ուրիշ օրինակ չունի։ Մալխազենց տան մեջ արատ չի եղել ու չպիտի լինի։

Երբ Ղազար աղան բավական տարիքն առավ՝ հրաժարվեց զինվորական պաշտոններից, սկսեց օրեցօր նույնպես հրաժարվել զինվորական ունակություններից։ Թողեց գինարբուքները, որսի ելնելը և ուրիշ մաղ ու աննշան սովորությունները. ամբողջապես նվիրվեց ընտանիքին և եկեղեցու։

Այսպիսի պարկեշտ կյանք վարելով, անցավ բավական ժամանակներ նորից ռուս և թուրք իրար դեմ ելան, 1877 թվին։ Ղազար աղան հոգում կրկին ուրի կանգնեց զինվորականը՝ կապիտանի սուրը ձեռքին։ Թեպետ անցել էր ճակատագրային հիսուն տարին և ակներև կերպով կորցրել էր պողպատիկությունը, բայց դարձյալ ուժ ուներ և մանավանդ ուժեղ փափագ այս անգամ էլ չափվելու թուրքերի հետ, անպատճառ մի թուր էլ «հազարով օրհնված»— հանգստի կոչելու։

Սակայն ձեռքն ու ոտքը կապված էր ընտանեկան անհաղթելի աղբյուրներով։ Նրա խեղճ մայրը ձմռան մեջ վախճանվել էր և ծերուկ Մալխազ աղան էլ կսկծուց կաթվածահար անկողին էր ընկել։ Այդ ինքն էր տան մեծը, միակ կարող տղամարդը։ Ո՞ւմ թողներ հիվանդ

հորը, անփորձ կնոջը մատաղ երեխաներով։ Չէ՞ որ որդիական և հայրական սրբազան պարտականություններ ուներ կատարելու։ Դժվարին կացության մեջ էր կապիտան Ղազարը։ Սակայն ամեն օր նոր-նոր զորախմբեր էին գալիս Ալեքսանդրապոլ ճակատ մեկնելու համար, զինվորական քայլերգով և որոտալից երաժշտությամբ։ Ղազարը՝ իր բոլոր մեդալները կրծքին շարած, ոգևորված ընդառաջ էր գնում նրանց, ճանապարհին ու կազարմաններում խոսում էր զինվորների և զինվորականների հետ։ Իբրև հին փորձված զինվոր խրատում էր նրանց ու խրախուսում, սովորեցնում էր նրանց աշխարհագրական տեղերը, կռվի ձևերը, թուրք զինվորի թույլ և ուժեղ կողմերը ցույց տալով։

Եվ որքան որ մեծ էր կռվի մեջ նետվելու արգելքը, այնքան էլ զորեղ էր մարտնչելու իղձը։ Հորը խնամելուց ազատ ժամերը նա իր սենյակը քաշված, փայլուն ու խոսուն զենքերի տակ, գիշերները լուսացնում էր թղթերի վրա՝ Կարսն ու Էրզրումը առնելու պլանները քաշելով, հարձակման, պաշարման նախագծեր կազմելով։ Խորհելով, որ այս ամենը Լոռիս-Մելիքովին պիտի հանձնի՝ իբրև մի փորձված զինվորի կողմից համեստ առաջարկներ։

Վրդովվում էր պատերազմի մասին անհաջող լուրեր լսելիս և սաստիկ ափսոսում էր, որ ինքը այնտեղ չէ։ Ցավով տեսնում էր իր անփոխարինելի բացակայությունը։

Հիվանդ հոր մոտ նստած հոգով նա կռվի դաշտումն էր։ Իրական միջավայրը ջնջվում էր։ Տեսնում էր իրան բանակի գլուխը կանգնած, իր քաշած պլանները ձեռքին, հին օրերի պես՝ սուրը մերկացրած՝ հարձակում է գործում թշնամու վրա։ Ահա պաշարել է նա Ալաճա-սարը, որի գլխին թառած Մուխթար փաշան մի քանի օր առաջ նեղն էր ձգել ռուս գեներալ Գեյմանին, իսկ հիմա ինքը՝ Ղազարը նեղն է ձգել թուրք փաշային, որը ոսկի թուրն հանձնելով Ղազարին՝ անձնատուր է լինում։ Ահա՜ Ղարսն ընկնում է նրա ոտների տակ։ Ահա ինքը իր ձեռքով ցարի դրոշակը կանգնեցնում է բերդի գլխին։ Ցարը հեռագրով նրան առաջին աստիճանի Գյորգիի խաչ է նվիրում և գեներալության հասցնում... Հայրը ցավից նեղված հառաչում է և Ղազարին հանում կռվի միջից և դարձնում տխուր, անփառունակ իրականությանը։

Երբ Լոռիս-Մելիքովը, որ այս պատերազմի զորապետն էր, Ալեքսանդրապոլ եկավ, կապիտան Ղազարը իր բոլոր մեդալներով զարդարված՝ ներկայացավ նրան, հանձնեց իր պլանները։ Գեներալը շատ շնորհակալ եղավ, գնահատելով նրա փորձառությունը, որովհետև ինքը առաջին անգամն է, որ Ղարսի կռվի մեջ պիտի մտնի, այնինչ կապիտանը մի անգամ արդեն եղել է և հաղթող դուրս ելել։ Ղազարը ցավով

հայտնեց կռվին իր չմասնակցելը, և զորապետը ցավով ընդունելով այդ հանգամանքը, մխիթարեց նրան և ապահովեցրեց, որ իր ընկեր ռուս և հայ գեներալները ամեն բան կանեն, ինչ որ կապիտանի սրտի ուզածն է։ Ապա նրան, իբրև հավատարիմ զինվորի, կարգեց բերդի մեծ վառոդատան գլխավոր պահապան։ Անձնվեր մարդ պետք էր այս կարևոր տեղի համար, որովհետև քիչ անգամ չէ պատահել, որ պահապանները փողի համար գողանալ են տալիս վառոդի կեսը և փոխարինը սև հող լցնում։ Մնաս բարևին զորապետը ասաց.— «Միամիտ եղիր, կռվի գործը լավ ձեռքերու մեջ է։ Պատերազմին հետո նորեն կտեսնվենք,— խորհրդավոր ձայնով շեշտելով այս վերջին խոսքերը»։

Ռուս և հայ գեներալները լրիվ կատարեցին Ղազարի երազած և չկատարած քաջությունները։

«Մարդիկ իմ գործս տեսան. խիղճս հանգիստ է։ Ղարսն առան՝ էրզրումը վրան, Արդահանն առան՝ Բաթումը վրան։ Ուրիշ էլ բան չի ուզեն»,— ասում էր Ղազար աղան մխիթարված։

Լոռիս-Մելիքովը չմոռացավ վարձատրել հավատարիմ կապիտանի ծառայությունը, թե՛ մեդալ տվեց և թե՛ դրամական նվեր։

Մի երեկո էլ, հաղթանակի այդ օրերում, Ղազարը լսեց, թե հին փոխարքան Թիֆլիս է եկել նոր գրված երկրները տեսնելու համար։ Պատշաճ ու պատվավոր համարեց Թիֆլիս գնալ՝ փոխարքայի աչքին երևալու համար, քան թե Ալեքսանդրապոլ մնար և սպասեր, որ Նամեստնիկի Ղարս անցնելու միջոցին ներկայանար նրան։

Կապիտան Ղազարը անկեղծ սրտով փափագում էր իր սիրած փոխարքային օր-առաջ տեսնել, հին անուշ օրերը վերհիշել միասին։ Համոզված էր, որ փոխարքան չի մոռացել իրան։

Այսպիսի տրամադրությամբ կապիտան Ղազարը ձին նստավ և մեկնեց Թիֆլիս։ Հասած օրվա մյուս առավոտ հարդարված ու զարդարված ճամփա ելավ փոխարքայի իջած պալատը գնալու համար։ Ինքը, իբրև ուղղակի ականատես՝ այսպես էր պատմում այդ տեսակցությունը։

— «Գլուխս կախ՝ մտածելով ասելիքիս մասին, կերթայի ինձ ինձ, երբ մեկը հետևես երկու ափով աչքերս բռնեց, ասելով — «Թե իմանաս ո՞վ եմ ես...»։ Հրաշք բան էր ու անհավատալի.— ինքը Նամեստնիկն էր։ Ասացի.— «Մառալիդ ինչպե՞ս ճանչցար, Ձերդ մեծություն»։ Նամեստնիկը աչքերս թողեց. գրկեց ինձի, ասելով.— «Ի՛մ Լազար, սիրելիս, ինչքա՞ն ես փոխվել. երանի՜ էն օրերուն»։ Ես, աչքերս լցված՝ համբուրեցի ձեռքը։ Ինքը բոլորովին ծերացել էր՝ ճերմա՛կ, ճերմա՛կ։ Պատվեր տվավ, որ մեկէլ օրը պալատ երթամ։ Գնացի, երկար խոսեցինք անցած օրերից, ինձի ճաշի պահեց։ Մնաս բարևիս, զավակներուս նվերներ տվավ։ Էսպես՝ սիրաս ուրախ, դարձա եկա տուն։ Բայց քաղաքիս մեջ համբավ էր ընկել ու մինչի օրս էլ շատերը սխալմունքով կպնդեն, թե ես եմ Նամեստնիկի աչքերը բռնել ու հարցում արել։ Ես ասել եմ ու միշտ էլ կասեմ, որ էս բանը բոլորովին սխալ է, սուտ է։ Նամեստնիկը ինքը իրեն իսկ ձեռքերով բռնեց աչքերս։ Էդ խաղը իմ կողմեն անկրթություն և ամբարտավանություն կլիներ ինձեն էնքա՜ն բարձր աստիճան ունեցող մարդու դիմաց։ Բայց շիտակը էն է, որ Նամեստնիկը բռնեց աչքերս ու էդ հարցումն արավ։ Ես սուտը չեմ սիրե. ամեն ինչի մեջ ճշմարտությունը լավ բան է»։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

(Հատվածներ)

1891

Դեկտեմբեր

<...> Հայր Խոջայանը խորհուրդ է տալիս շարունակել գյուղատնտեսական ճյուղը. նրա ասելով հեշտ կպսակվի հաջողությունը։ Բայց չէ՞ որ գյուղատնտեսությունը ռեալական (նատուրալիստական) գիտություն է, ես ո՞նց թողնեմ իմ ցնորքները, իմ ուտոպիան, իմ ոսկի ԷՊՊերը, իմ իդեալները... Բայց ի՞նչ արած. կարիքը պոեզիայի գերեզմանն է... Ես դարձյալ հավատարիմ կմնամ իմ դրոշակին, դրական գիտության մեջ կպահեմ դարձյալ իմ ցնորքները... Ա՜խ, Աստված, ինչո՞ւ ինձ այնպես ստեղծեցիր... Ինձ թող ստեղծեիր որպես օդ, մետեոր, աստղ, հրեշտակ... Ես ընդունակ եմ միայն երազելու և լալու։

Ես այժմ ուրախ եմ. հետևյալ ազոտ միտքը բերկրություն է պատճառում ինձ. չէ՞ որ գյուղատնտեսությունը մի միջոց է, որով կարելի կլինի իդեալներս, ստեղծած աշխարհներս իրականացնել... Մարդկանց ձեռքին տուր հաց, որ նրանք կուշտ լինելով, կարողանան ապրել իդեալական աշխարհում... Վերևում ասացի, որ կարիքը պոեզիայի գերեզմանն է, իսկ եթե կարիքը չլինի, գերեզման էլ չի լինի, ուրեմն պոեզիան կմնա յուր ամենապարզիակ նշանակությամբ, բայց իրականացած ֆաղիսով...

Ապրել — գործել հօգուտ հասարակության. ահա՛ իմ սկզբունքը... Բայց թե ինչո՞ւ է ապրում հասարակությունը, ի՞նչ է մարդկության նպատակը, ի՞նչ է կյանքի իդեալը — ահա՛ ինձ տանջող մտքերից մի քանիսը...

Այսօր ստացա օր. Շ...ից երկրորդ նամակը... որքա՜ն ուրախացա։ Ես այժմ երջանիկ եմ, որ կարողացա գտնել «մեկը» նման իմ հոգուն, իմ բնավորությանը։ «Նրան» մեջ տեսնում եմ իմ հոգեկան պատկերը՝ որոշ գույներով. ես «նրան» սիրում եմ՝ իդեալական սիրո ամենաքնքշագրգիռ ծավալով. «նրան» սիրում եմ... անվերջ, հավիտյան... Մեր սերը, անշուշտ, անթառամ կլինի, ես շատ ուրախ եմ զգում ինձ, ես այժմ մենակ չեմ աշխարհում — անապատում — ես ունեմ նազելի քնկեր, թե ու թիկունք... Կյանքը թվում է ինձ անվերջ սեր... Սիրել — ապրել — տանջվել։— կյանքի խորհուրդը այս է. ինձ համար մասամբ պարզվում են կյանքի նպատակի կնճիռները... Ա՜խ... մեր սերը դեռևս չենք հայտնել միմյանց, բայց, անշուշտ, հավատացած եմ, որ «նա» էլ ինձ է սիրում, ամբողջ նամակից փոխադարձ սեր էր ծորում... Ես երջանիկ եմ և երջանիկ... Ինձ պատահած անախորժ դեպքերը հյուսվեն են երևում սիրո փոթորկի առաջ... Տակունությո՛ւն — կյանքի մռայլը կփարատվի։

Դեկտեմբերի 23, Գ.<Հոգյան> Եվմաուռ

Ինձ թվում է, թե ես ոչինչ եմ։ Արդարև, որքան ճշմարիտ է այս միտքը. ես ի՞նչ եմ, ի՞նչ — չգիտեմ. ես ապրում եմ, բայց մի՞թե դա գեռ պայման է գոյության. ես ապրում եմ իներցիայի օրենքով. իմ գոյության վերա ոչ ոք չի հիանում. ո՞վ գիտե, թե կա մեկը, որը ապրում, տանջվում է, կամ եթե գիտենան — ի՞նչ բավականություն։ Ապրել — երկու ծայրահեղ պայմանների մեջ, այսինքն. ամբողջ աշխարհը թող հիանա, ինչպես կուզե՝ թե՛ շար և թե՛ բարի տեսակետներից, իմ վերա, ինձնով զբաղվի — դարձյալ ոչինչ...

<...> Բայց թե կարող եմ լինել մեծ մարդ՝ մինչև անգամ չեմ կարող երևակայել, և ցնորք չէ՞ երևակայելը... Ես ի՞նչ եմ, ի՞նչ — ոչինչ։ Ամեն բան անցավոր է. երազներս, ցնորքներս բոլորն էլ կանցնին, գերմարդկային ոչինչ չի մնալ — ես կլինեմ մի հասարակ մարդ, հանգամանքների խաղալիք։— Ա՜խ, ի՞նչ է կյանքը — դատարկություն...

Ես փառք շատ եմ սիրում, ես շատ փառասեր եմ — հետևապես ես շատ ունայնասեր եմ. ի՞նչ է փառքը — խաբուսիկ գգվանք... Ա՜խ, ես ի՞նչ եմ, ի՞նչ, ասացեք, ի սեր Աստծո. մա՛րդ, սովորակա՛ն մարդ։ ա՜խ, ինչո՞ւ եմ ապրում. եթե այդպես է, ես չեմ կարող երևակայել մի վայրկյան ինձ մարդ. մա՛րդ, ի՞նչ բան է այս — բնության միմոս — ուրիշ ոչինչ... Ես շատ թշվառ եմ, երբ ինձ թվում է, թե ես բանաստեղծության տաղանդ չունեմ. գուցե ունե՞մ. չէ՞ որ, բավական հաջող գրում եմ — ապդեցության չեմ ենթարկվում, ոգևորվում եմ, լալիս եմ... Ա՜խ, ես ե՞րբ պետք է համոզվեմ, որ իսկապես տաղանդ ունեմ. իսկ եթե չունենամ՝ ես բոլորովին մեռած կլինեմ հոգեկան բոլոր ուժերից...

Այն ժամանակ կյանքը իսկապես ինձ համար կլինի անտանելի բեռ, այժմ գոնե ոտանավորներովս հայտնում եմ իմ ներքին աշխարհը, հայտնում եմ իմ գոյությունը — սլրում եմ, անիծում եմ, լալիս եմ։

Ընկերներս տմարդի, որոնք միմյանց հետ կրկնապատկում են իմ զայրույթը, խորթությունը և ատելությունը դեպի մարդիկ։ Բայց ես պետք է սիրեմ մարդկությունը, որ նորա համար բարերար հանդիսանամ, որ նորա առաջ իմ սիրով (չէ՞ որ սերը ազնվացնող, կրթիչ բնավորություն ունի) բանամ ցանկալի աշխարհի դռները — ուրեմն աշխատե՛լ, անվե՛րջ աշխատել հօգուտ հասարակության — մարդկության <...> Ես պետք է հոգով նվիրվեմ այդ կոչմանը — սովորել և միշտ սովորել... Բայց ի՞նչ կարող եմ սովորել. կարո՞ղ եմ ամբողջ գիտությունը տիրապետել — ո՛չ. կարո՞ղ եմ նորա միայն մի ճյուղը տիրապետել — ո՛չ. ա՜խ, ինչո՞ւ մարդը ամենագետ չի կարող լինել. ինչո՞ւ և բազմագետ գոնե չի կարող լինել. գիտության ընդհանուր օվկիանի առաջ մենք մեր գիտությամբ անտեսանելի կաթիլ ենք, մանավանդ ես. ի՞նչ գիտեմ — ոչինչ և ոչինչ... Օ՜, անկատարելություն — սխալմունքների ծնունդ։

Դեկտեմբերի 24,
Գեորգյան ճեմարան

Այսօր ուրախ անցավ։ Զարմանում եմ — ինչո՞ւ մենք ավելի ընդունակ ենք չնչին երևույթներով ուրախանալ կամ տխրել... Ա՜խ... մեր կյանքը որքա՜ն չնչին դեպքերով, աննշան իրողություններով է սահում. ահա՛ այս տարին մերձ ի մահ է. այս շրջանում ի՞նչ ենք արել — ոչինչ. աննկատելի հառաջադիմություն. տարիներ, տասնյակ տարիներ գլորվում են, մենք դեռ նույնն ենք, դեռ անգույն բնավորությամբ, անորոշ գաղափարներով... Դարձյալ կրկնում եմ. մեր կյանքը, մեր կամքը չնչին կրքերի, մտքերի, հոգսերի, կարիքների և վշտերի ստրուկ է. մեր կյանքը նման է այն սահնակին, որը անխոչընդոտ արագությամբ սահում է լայնատարած սառույցի վերայով։ Մենք ի՞նչ ենք անում մեր գոյության ժամանակամիջոցում՝ մերթ լալիս, մերթ ժպտում, աղոթում, զրկում, կեղծում... և ահա կյանքի սահմանին մոտ ենք։ Ինչո՞ւ ամենքս մի-մի հերոսներ չպիտի լինենք, ինչո՞ւ չպետք է մենք կարողանանք անել այն, ինչ որ ցանկանում ենք... Դուցե, եթե ինձ թողնեն, ես կարողանամ բանաստեղծների երազները իրականացնել. թող տան ինձ Նապոլեոնի զորքերն ու հարստությունը, ես Եվրոպայի ցնորքները կատարեմ։ Ես այսքան վստահ եմ խոսում՝ շափազանցությամբ մոլորված...

1892

Հունվարի 4

Երեկ երեկոյան ներկայացրին Ճեմարանի լսարանցիք՝ Մոլիերի «Ճարտյուֆը» և Դ դասարանցիք՝ «Մադոյի կտակը» և մի քանի կենդանի պատկերներ։ Հաջող անցավ։ Այս օրերս ես մի տեսակ անորոշության մեջ եմ գտնվում, մտքերս խառնաշփոթ են, միմյանց դեմ շարունակ կռիվներ են հարուցանում. պատճառը մի քանի գրքերի ընթերցումն է. այս օրերս կարդացի Шопенгауэр փիլիսոփայի կյանքն ու փիլիսոփայության թեորիան։ Նա, որպես պեսիմիստ փիլիսոփա, սաստիկ (մի քանի մտքերի կողմերից) դուր եկավ. հետո կարդացի «Карамзин как оптимист» հոդվածը. սա հակառակ էր իմ ուղղությանը. հետո կարդացի Макс Нордау-ի «Пессимизм или оптимизм» գլուխը, հետո կարդացի Արծրունու «Էվելինա» էսյուդը (որը իմ համոզմունքներիս բարեկամ էր)— այս բոլորը, սրանց մտքերը ինձ այժմ շատ են զբաղեցնում. ես ուզում եմ որոշել պեսիմիզմի և օպտիմիզմի ուղղությունները. նրանցից ո՞րն է լավ, ո՞րն է ճիշտ... Ես, իհարկե, սաստիկ պեսիմիստ եմ և ջերմ պաշտպան այդ ուղղությանը. այդպես է պահանջում իմ հոգին։ Ես ասել եմ և միշտ կասեմ՝ ամեն բան մի որոշ պատճառներից է գոյանում. պեսիմիստների հոգին ուզում է կյանքից իրեն բավականություն. նա այդ բավականությունը չգտնելով, կյանքը և մարդիկը թվում են իրեն անկատարյալ, անբարեկարգ. բողոքում է այդ կազմակերպության դեմ և պահանջում է իր կամքի ցանկացածը... Իսկ օպտիմիստը ինչ որ ցանկանում է, այն գտնում է, ուրեմն, նա գոհ է կյանքից և լավ <է> անվանում։ Երկու հայացքներն էլ կան բնության մեջ. չէ՞ որ կյանքը, բնությունն են ստեղծում այդպիսի հայացքներ, բնությունն է պատճառը այդպիսի պահանջների։ Պեսիմիզմը թվում է ինձ համար ճշմարտություն, իսկ օպտիմիզմը — կեղծավորություն։ Երկուսն էլ ինքնասիրությունից են առաջ գալիս։ Բայց եթե կյանքը բոլորի ըղձացածներին բավականություն տա՝ այդպիսի հայացքներ չեն կարող գոյություն ունենալ։ Պեսիմիզմը արդարև տեսնում է այն, ինչ որ կա, իսկ օպտիմիզմը՝ ոչ։ Օպտիմիզմը այնքան լավ է, որ գործունեության ղեկը իր ձեռքումն է, բայց կարելի՞ է ուրանալ ճշմարտությունը — մեղք է. պեսիմիզմը ճշմարտություն է, բայց անգործունեություն. բայց և կարելի է լինել պեսիմիստ և դարձյալ գործող՝ նպատակ ընտրելով՝ «աշխատել կյանքի վատ կողմերը լավացնել»։ Այս մտքերը դեռ

շատ անիմաստ են... Ես շատ կմտածեմ դեռ... բայց իմ բոլոր ցույցերը, հակումները պեսիմիզմին են վերաբերում — թող լինի — ոչինչ... Լինել պեսիմիստ և գործող.— թե ինչո՞ւ գործել — չգիտեմ։

Մարտի 2, էջմիածին

Ես երդվում եմ իմ դավանած սրբություններով՝ իմ կամքի հզոր ուժով հաղթել արգելքներին և խոչընդոտներին. արհամարհել աշխարհային թովիչ կյանքը, նրա փառքն ու պատիվը՝ միայն այն վեհ սեղանի համար, որի վրա բարձրանում է գիտությունը՝ անհաղթ, սուրբ, անմահ ու ճշմարիտ գիտությունը. զոհել ամեն ինչ և մտնել այդ վսեմ պրոշակի հովանավորության ներքո. սիրել գիտությունը և ապրել գիտությամբ...

Թո՛ղ իմ կյանքը լինի գիտության համար և ո՛չ գիտությունը իմ կյանքի...

Ահա՛ իմ կյանքի միակ նպատակը։

1893

Մարտի 24, չարեքշաբթի, Ալեքսանդրապոլ

Ահա քանիերորդ անգամն է սա, որ ես ձեռնարկում եմ հիշատակարան գրել, բայց վանազան հակասող մտքեր, հանգամանքներ, կամքի թուլություն, բնավորության թուլություն, տոկի ու եռանդի բացակայություն, հարատևության սնանկություն, ահա սրանք ուժեղ <արգելոտիքներ> են հանդիսացել իմ ձեռնարկմանը. բայց ես այսօր հաստատապես, մի քիչ կասկածում եմ արգելոտիքներից, վճռում եմ գրել օրագրություն — հիշատակարան, շարունակել և հարատևել.— հաջողությո՛ւն։

Իսկապես շա՜տ սիրելի և հետաքրքիր է օրագրությունը. նրա մեջ մտքմնանում է անհատի անհատականությունը, նրա ամբողջ կազմակերպությունը, ներքին ֆիզիոնոմիան. օրագրություն գրել, նշանակում է գրել այն, ինչ որ մտածում է, ցանկանում է, զգում է անհատը. յուրաքանչյուր երևույթ, որ պատահում է սուբյեկտի ներսում՝ ուղեղում, պիտի գրվի օրատետրում. յուրաքանչյուր երևույթ, դեպք, որ պատահում է դրսում՝ արտաքին աշխարհում, որ կապ ունի սուբյեկտի հետ, պիտի գրվի գարձյալ օրատետրում, ուստի այս տեսակետից նա ունի հոգեբանական արժեք, թե ինչպե՜ս է մարդ զգում, մտածում, թե ինչպե՜ս է ազդում օբյեկտը՝ սուբյեկտի վրա, և ուրիշ շատ տեսակետներից էլ շատ արժեք ունի օրագրությունը. այստեղ է, որ երևում է, թե ի՜նչ է անհատը, նրա տեմպերամենտը, նրա բնավորությունը, զգացմունքների աշխարհը, նրա փիլիսոփայությունը, նրա կրոնը, նրա լոգիկան և այլն... ամբողջ անհատը իր ամբողջ տարրերով.— ուստի օրագիր գրողը առաջնակարգ պայման պիտի ընդունե ճշմարտությունը — իրականությունը. նա պիտի գրե այն, ինչ որ իսկապես է, կա, ինչ որ զգում, մտածում, վճռում, դատում, գործում է՝ թե՛ լավ, թե՛ վատ կողմերով. նա չպիտի խարություն դնե՝ ընտրել, գրել լավը, գեղեցիկը, սուրբը.— ո՛չ։ Անհատը չպիտի աշխատե իրեն լավ ցույց տալ, պատկերացնել ազնիվ գույներով՝ ծածկելով վատ, գարշ մտքերն ու զգացմունքները։ Եվ, իսկապես, այն անհատն է համակրանքի արժանի, որ հայտնում է իր ամբողջությունը՝ իր կազմվածքի լավ և վատ տարրերը։ Անհատականությունը պիտի մարմնանա այստեղ, իր սեփական մտքերով, կրքերով, զգացածներով։— Կրկնում եմ, գրել օրագրություն, նշանակում է գրել անհատականությունը, ահա իմ համոզմունքը. և այս համոզմունքի հավատարիմ օրատետրը, անշուշտ, ունի գիտական նշանակություն։

Ահա այսպես ես սկսում եմ գրել, բայց ի՞նչ.— ես էլ չգիտեմ։ Ա՛խր, եթե գրեմ այսօրվա զգացածս, մտածածս,— բացի դրանից, որ այժմ ես չեմ հիշում,— շատ անմիտ կլինի, որովհետև նա կապ ունի անցյալի — շղթայի — հետ. անցյալի օրագրությունը այժմ չեմ կարող գրել — մոռացել եմ և ժամանակ չկա, քանի որ հենց ամեն մի տարր գրելիս՝ ներկան, մի վայրկենաչափ ներկան դառնում է հավիտենական.— անդարձ անցյալ,— այդպիսով ներկայի արագությամբ անցյալ դառնալով, ես չեմ կարող հասնել թարմ, կենդանի ներկային՝ հոգուս ներկային։ Գրիչս ուտավոր է, ժամանակի հոսելը — սահելը՝ ձիավոր։

Մարտի 27, շաբաթ երեկոյան

Այսօր Զատիկ է, բոլորը սպասում են — ուտելու, խմելու և զվարճանալու համար, և միա՛յն իրենց համար։ Երանի՜ նրանց, ովքեր հարություն են առնում Քրիստոսի հետ — սիրե՛լ և սիրե՛լ...

Եկեղեցուց ես դուրս եկա սաստիկ վրդովված. սիրտս պատռվում էր։ աչ նայում ես՝ պրոզա, ձախ նայում ես՝ պրոզա, ետ՝ պրոզա, հառաջ՝ պրոզա։ Դե՛ ուրեմն, քաշ տուր քո անմիտ գոյությունը, անմիտ կոիվը, անցրու տասնյակ տարիներ՝ առանց ապրելու, առանց հասկանալու լինելիության, թե կյանքի էությունը... «Լինել, բայց չապրել»,— ահա՛ մարդկանց դևիզը։

Ապրիլի 6, Ալեքսանդրապոլ

Շատ բան եմ կարդացել՝ թե ի՞նչ է բանաստեղծությունը, գեղարվեստը, միտքը, զգացմունքը, կամքը, ինքնուրույնությունը, անհատականությունը, գիտակցությունը, ինքնաբերությունը... և այլն, և այլն։ Բայց ես, ես նորից իմ խելքով եմ աշխատում,— որքան կարելի է,— հասկացած, միայն խորը հասկացած, խորը զգացած բացատրել։ Այսպես, ես այժմ մի քանի երկաթե համոզմունք ունեմ, որոնց հշմարիտ լինելու համար ես կկռվեմ։

Այս իմ կյանքի մեջ մի փայլուն էպոխա է։

Այժմ եմ հասկանում, թե ի՞նչ կնշանակե չմարսել, չյուրացնել, չզգալ, չհասկանալ, և միայն խոսել, խոսել գրքերից, դրսի աշխարհից, որոնց ստույգությունները արդարություն ենք ընդունում... Բայց այս դեռ նոր է իմ մեջ ծագել։ Ես սիրում եմ ինքնուրույնություն, տարօրինակություն, անհատականություն. միապետ, միահեծան, ինքնիշխան, ինքնագնաց, ինքնապատան, ինքնահույս, ինքնագործ, ինքնազգաց, ինքնախոհ. «ես» ունենալ, տիեզերքի մեջ՝ աշխարհ ունենալ, ինքնակամ թագավորություն, իմ հպատակների վերա՝ զգացմունքներիս, կրքերիս, մտքերիս, վճիռներիս, հոգուս տարրերի վրա, որոնք արտայահավում են, և թո՛ղ արտահայտվեն միայն իմ «Բարձրագույն ես»-ի տեսքինած ձևերով, գույներով։ Ահա՛ իմ մեծ իղձը։

Շատ մտածեցի, բայց քիչ գրեցի։

Մայիսի 18

Արդարև, մեծ կշիռ ունի նախազգացմունքը, և ահա ես արտագրում եմ 1891 թ. 17 հունիսի օրագրությունից այն նախազգացված կտորը, վերաբերում է դեռ նոր ծանոթացած Շ-ին։— «Կ-ների տանը պատահեցա օր. Շ-ին. ողջունեցի և նստեցա մոտը. նա ասեղնագործությամբ էր պարապում. մեր քաղաքի բոլոր աղջիկներից ավելի սա է ինձ գրավում. չափազանց գեղեցիկ է. սև և կլոր աչքեր, վառվռուն և խելոք հայացք, վարդագույն շրթունք, դալկահար դեմք, պարզ, որոշ ձայն. այո՛, սա մի հրնշտակ է, մի դերբնական ոգի, մի մագնիս, որ քաշում է դեպի իրեն իմ սիրտն ու հոգին։ Ես և նա երկար խոսեցինք առանձին. մաքուր հայերեն էր խոսում։ Նա նրևի ինձ համակրեց. գոնե համակրանքի ցույցեր էր անում։ Նա համակրում էր ճեմարանի շարժումը։ Նա կամենում էր Սահմանուշյան դպրոցի պես ինձ ստրկացնել յուր ազդեցությանը, բայց չհաջողվեց. ես գերազանցեցի։ Օ՜, նա խորամանկ է, փորձող է։ Ա՜խ, չնաշխարհիկ Շ., դու գերեցիր ինձ... Ոչքա՞ն ես դյուրաթեք, շուտ խաբվող և ընկճվող եմ կուսական սրտի առաջ. ահա իմ բնավորության մի թույլ կողմն էլ... Նա իսկապես մի «ջադու պառավ» է... Նա ինձ գերեց։ Իմ սիրտը շատ ընդարձակ տարածություն է. «Մեծ է երկինքը, մեծ է երկիր, սիրտս մեծ է նոցանից». բոլորն էլ (կուսանք) կարող են նրա սիրաբողբոջ խորշերում ապաստան գտնել. դո՛ւ էլ, սիրելի՛ Շ., գրավիր նրա կենտրոնը»...

Այս գրելով, ես չեմ ուզում անվանարկել «նրան». մի՞թե կարող եմ. «նա» իմս է, իմ հրեշտակը... բայց ուզում եմ հիշել այս խորհրդավոր մարգարեությունը...

Էլ ոչինչ չունեմ գրելու այսօր. միայն «նա» է գրչիս և զգացածիս ու մտածմունքներիս նյութը. «նա» տիրապետել է ինձ ամբողջապես։

1894

Հունիսի 19, Լայպցիգ

Ամեն մի երկրում ու ազգի մեջ հոգևորականությունը, պետությունը, արիստոկրատիան ու ամբոխի տրադիցիաները արգելք են լինում քարոզելու, սորվեցնելու ամբոխին ու մարդկանց, որ բոլոր ազգերի, մարդկության երջանկությունը միայն փոխադարձ կապի, դաշնի մեջ է կայանում՝ իրար հարգել, իրար օգնել իրենց աշխատանքով ու խելքով <...> և մարդը ապրի առանց սովածության, իսկ ամբարները չհոտեն ու մղլեն՝ բուրժուայի փորի պես...

Բայց մարդիկ չեն ուզում դա — նրանք ուզում են իրար խաբել ու ղրկել <...>

Հոկտեմբերի 8, Լայպցիգ

<...> արցունքի հետ սառն միտքը, սառն մտքի հետ այրող զգացմունք. իմ գրվածքը պիտի լինի մի հյուսվածք տիեզերքի պես բարդ ու հոն պիտի լինի և՛ փիլիսոփայություն, և՛ պոեզիա, և՛ էպոս, և՛ լիրիզմ, և՛ ռոմանտիզմ, և՛ մորալի ու հիգիենայի քարոզ... Ֆյոռոզլու թրի գովքի հետ պիտի ողբամ մարդկության ճակատագիրը <...> կքարոզեմ կյանք ու մահ, մի նշանավոր ու տարօրինակ էկզեմպլյար կլինեմ մարդկության մեջ։ Իմ պատկերը պիտի ամեն տուն կախվի, և ինձ տեսնելը մարդկանց մեծ ցանկություններից պիտի լինի։ Կոգնորեմ մարդկանց հայրենիքի սիրով, կմարակեմ հարուստ-խոզերին, ողջ կյանքը, որ մի-

այն թմրում է, կուշտ կատվի պես, կրքի ջերմության տակ... Մա՜հ կերգեմ, կոգևորեմ մահով, ցույց կտամ, որ մեր քայլերը <դնպի> կոչուտ են տանում մեզ, որ բնությունը կոչուտի է գնում...

Հոկտեմբերի 30

Ինձ ոչինչ չի երջանկացնում, այլ միայն իմ մտքերիս տարածումը, ուստի ես կցանկանամ միայն մի դյուղ ինձ համար, ուր ես լինեմ ձրի ուսուցիչ։ Ուզում եմ ձրի լինել, որ անկախ ասեմ այն, ինչ որ ճշմարիտ է և օգտակար տանջվածներին։ Ձրի եմ ուզում, որովհետև այդ պայմանի մեջ ես ինձ բարձր կզգամ և կոչումիս հարմար.— ես չեմ ուզում ծախել ճշմարտությունները, որոնք գիտությունը դարերից սկսած ձեռք է բերել՝ ուրիշների քրտինքով։ Ես կլինեմ ձրի ուսուցիչ,— օրինակ՝ Մաստարայում,— գյուղացիք թող միայն ինձ հաց ու ջուր տան — այն սնունդը, ինչ որ իրենք ունեն՝ իրենց սեղանին թող մասնակից անեն, իսկ ես՝ նրանց երեխաներին, պատանիներին կսովորեցնեմ կարդալ, գրել և ապրել։ Նրանց երիտասարդներին — դատել ու ապրել։ Ես կարող եմ կիրակնօրյա քարոզներ տալ կանանց, այլրիկներին ու պառավներին, սայլերում — հովիվներին ու նախրչիներին, դաշտերում — մշակներին... Իսկ օրը մի քանի ժամ՝ գյուղացոց... Ես պատրաստ եմ հոգուս բոլոր ուժերով՝ դրա համար ես ընդունակ եմ, ես շատ բան գիտեմ, քան ճեմարանի մի դիպլոմավոր ասա։

Հոկտեմբերի 31

Ոգևորությունը — ոգևորված կյանքը — տիեզերքի գրկում մի բուրմունք է — անուշ բուրմունք, մի անուշ երգ է, մի խորին ներդաշնակություն, մի բանաստեղծական հյուսվածք։ Ոգևորությունը մի այնպիսի հարմոնիա է, որի մեջ երջանկությունն ու թշվառությունը, բախտն ու դժբախտությունը, ժպիտն ու արցունքը, տանջանքն ու ուրախությունը, սերն ու մոռացությունը, կարոտն ու վիշտը սքանչելի վարպետությամբ հյուսված են։ Ոգևորված մարդը ապրում է մի երազում, մի փառավոր երազում, որը անվերջ է և անխափան։ Ա՜խ, չէ՞ որ բնությունն ինքը ապրում է այդպիսի ներդաշնակության մեջ — ամպն ու պայծառ օդը, զեփյուռն ու մրրիկը, ձյունն ու դալարը, ցուրտն ու տաքը, լույսն ու պիշերը, որոնք հակասություններ են, բայց ապրում են մի ներդաշնակության մեջ, և այնքան հրաշալի են.— առանց սմպերի, անձրև — ծիածան չկա, առանց ձյունի՝ ձմեռային գիշերվա փառահեղությունն ու

տարերի փայլը, աստղերի ժպիտները։ Թո՛ղ լինի մեր կյանքը հարանման բնության կյանքին — մենք լանք ու ժպտանք, մրրկվենք ու մեղմանանք, երգենք ու լսենք, եփվենք ու քնենք, սիրենք ու տանջվենք, կռվենք ու վիրավորվենք — միայն թո՛ղ ոգևորություն լինի, այդ կրակը, այդ թոցը, այդ շունչը մեր սիրտը դղրդացնե, շալե-շառաչ թող մեր սիրտը — այնուհետև ցուրտն ու շոգը, սովածությունն ու ծարավը աստիճաններ են մեզ համար, որով պիտի անցնենք — պիտի անցնենք գետը — դաշտը մտնելու, լեռը ելնելու... Իզուր է ձգտումը կյանքի միջից աբսոլյուտ հեռացնելու վիշտը, տանջանքը, դժգոհությունը — սա անկարելի է, սա բնության օրենք է — մարդ պիտի ծերանա, պիտի հիվանդանա, պիտի մեռնի. ձյուն պիտի գա, և պիտի մրսենք, արևը պիտի այրե, ու պիտի քրտնենք. իհարկե, կարելի է տանջանքների սահմանը մի քիչ նվազացնել, բայց բոլորովին չնչել — անհնարին է... Բայց միայն ոգևորված սիրտը սիրով տանում է ամեն մի զրկանք ու ուրախություն... Ոգևորության մեջ է երջանկությունը, որը բարձր է, որը վսեմ է — պիտի փշրել այն սարքն ու կարգը, որ արգելում է ոգևորված կյանքը — եկեղեցին, պետությունը...

Նոյեմբերի 1, գիշեր

Օ՜, պիտի մեռնել, պիտի փոշի դառնալ. գոնե ոգևորվենք մահով— մահի սարսափով, ոգևորվենք մեծ, մեծ մարդ դառնալու, որ մեր դերեզմանի վրա հազարավոր տարիներ մարդկությունը ծունր իջնի և պատկառի... Մե՛ծ, մե՛ծ եմ ուզում լինել։

Թշվառ, պզտիկ մարդիկ միայն ձկի պես ներկայով են ապրում — հավիտենականությունը նրանց համար փակ է. նրանք չեն սավառնում անհունության ալիքների մեջ... Միայն ակնթարթային հաճույքներ, բավականություններ, ներվերի գրգիռներ, և ո՜չ հավիտենական երազ, հիացմունք...

Ապագա մարդկությունը ազատվելով տնտեսական կողմից, փշրելով տիրանիզմն ու պետությունները, եկեղեցին ու կրոնները, չպիտի կորցնի անշուշտ և հոգու ռոմանտիզմը — նա պիտի ապրի բնությանը անմիջապես մոտ — սերտ կապված. նա պիտի խույս տա արհեստականից, նա պիտի մտքի խորության հետ միասին, միաժամանակ ունենա սրտի կյանք, լիրիզմ. նա պիտի երգե, լա, ոգևորվի, արբենա պլատոնական սիրով ու կուսական բուրմունքով, աստղերի երազներով...

Նա պիտի ասպետների պես լինի հպարտ, վեհանձն և անձնազոհ... Նա պիտի իր երգերով՝ տրուբադուրների պես էլի կախարդե աշխարքը, նույն ժամանակ նա պիտի իր գիտական թեորիաներով ու գյուտերով ապշեցնե աշխարհը, և այս երկուսը պիտի անե միևնույն անհատը։ Խորին գիտնական-փիլիսոփա լինելու հետ, ապագա մարդը պիտի լինի խորին լիրիկ ու ասպետ... Սրանց հակառակ ես ուրիշ երջանկության — կատարելագործության գաղափար չունեմ, որ տամ. իմ ամենամեծ երջանկության ամենամեծ գաղափարն է — լինել փարթամ, ռոմանտիկ բնության մեջ, սիրահարված, սիրուն ձի ու զրահով զինված, խելոք, զարգացած ու բանաստեղծական հոգով մի ասպետ... Եվ իմ սրտիս մոտ հավասար բարձր ու վսեմ արժեք ունեն — սիրած Շուշիկս, միկրոսկոպը, գիրքն ու գրիչը, աշրդն ու սազը, Քյոռօղլին ու Դարվինի պատմությունն ու թեորիան, ձին ու յաթունջին, մուզեումն ու ջրաղացը...

Նոյեմբերի 3

Սեր, ընկերություն, անձնազոհություն, աշխատանք, ողջախոհություն — սրանք միջոցներ են ապրելու համար, իսկ ապրում ենք իդեալների համար, որոնցով պիտի ոգևորվենք ապրել։ Մեր իդեալներն են՝ զարգանալ, անհուն զարգանալ, և՛ խելքով, և՛ կամքով, և՛ զգացմունքով, և՛ մարմնով... Ամեն բան հասկանալ ու զգալ և կամենալ — անել այն ամենը, ինչ որ <մեր> հասկացածին ու զգացածին համապատասխանե... զարգանալ մինչև Նիրվանա, ու սուզվել այնտեղ — սուզվել ճշմարտության, աստվածության մեջ. Նիրվանան լոկ ճշմարտությունն է և ամենի վերջը... Նա տիեզերքի երազն է, կյանքն է, հիացմունքն է— մենք անասուն ենք եղել, այժմ կիսաանասուն մարդ ենք, պիտի դառնանք հաստատ մարդ, հետո մարդ-աստված, հետո միայն աստված... և Նիրվանայում հանգչենք... Միայն Նիրվանայով կարելի է ոգևորվել։ միայն մեր ոգևորության ամենալայն հորիզոնը դա է։ Նիրվանան՝ մնայուն, հավիտենական...

Ես պիտի ոգևորվեմ Նիրվանայով... և ոգևորված մարդու առաջ աշխարհը պիտի խոնարհվի...

Մտավոր աշխատանքի, զգացմունքի, գեղարվեստի, ֆանտազիայի աշխատանքին վարձ տալ — այդ կնշանակե — փչացնել հեղինակին...։ Աշխատել հոգու ուժերով — դա մեր սուրբ պարտքն է։ Ես թերևս Դոն-Քիշոտի հավատը չունեմ դեռևս — Համլետի անալիզը ավելի է մոտ զարգացած, բայց ես, որ ձգտում եմ դեպի կյանքն ու գործը — դրա պատճառը իմ մեջ եղած էներգիան է — այն կրակը, այն անգիտակցական մղումը, այն անգիտակցական կամքը, որ ինձ չշում է դեպի գործ— գրել, քարոզել, գործել... Ես չեմ կարող հանդարտ ապրել, զվարճանալ գոհ բուրժուայի պես, սահմանափակվել ընտանեկան կյանքով... Ես ուզում եմ հռչակ ունենալ, անմահ լինել, մեծ մարդ լինել։ Պակսեց այս ձգտումը իմ մեջ — ես ինձ կսպանեմ...

Մորալ կա, և նա պիտի որոնել ո՛չ թե երևակայության մեջ, այլ մարդու ֆիզիկական և նյարդային էության մեջ — բնության մեջ։

Ջնայելով մի ամիս է չեմ ընթրում, բայց ես հոգս չեմ անում — ոգևորված եմ որովհետև։

Իմ տանջանքները դուր չպիտի անցնեն — ես չպիտի լռեմ, ինչպես խոզերը լռում են, երբ տաք տեղ ու հաց են գտնում։ Եթե իմ սիրտս կարտվում է թշվառ մարդիկ տեսնելով, եթե ես թշվառությունը իմ կաշվիս վրա կրում եմ այժմ, և տանջվում — ես չպիտի լռեմ։ Ես հասկանում եմ բոլորի պատճառը և կարող եմ այդ պատճառը փշրել։

Մի որևէ տիկին Արամյան ամսական 400 ռուբլի է խարջում այստեղ, իսկ ես, որ իդեալ ունեմ — սոված եմ անցկացնում ու չեմ կարող զարգանալ։ Փշրել այս կյանքը, այս հասարակությունը։

Նոյեմբերի 4

Իմ կարծիքով բանաստեղծությունն ու վիպասանությունը չպիտի ֆոտոգրաֆ միայն լինեն — միայն բնությունը, կյանքն ու մարդու հոգին նկարեն, այլ պիտի հոն լինի և՛ տենդենցիա, իդեալ, նպատակ, ստեղծագործություն մի նոր կյանքի... Բանաստեղծի տանջված սուբյեկտը։

Պետք է ոգևորվել կյանքով՝ նրա բանաստեղծական ու գեղարվեստական կողմերով, բնության վեհությամբ ու չքնաղությամբ, հավիտենականությամբ, անհունությամբ ու լռությամբ, մահի պոեզիայով ու մշտագարուն բուրմունքով... և անվերջ, անվերջ անդորրությամբ... Պետք է միշտ ոգևորվել — ժպտալ մեղմ, չհոհոալ, արտասվել — մեղմ, չգոռգոռալ, ու ծով շինել արցունքներով... Բայց պետք է կայծակի պես ոգևորված լինել, փշրել հասարակական պայմանները... Պիտի արհամարհել վախ, երկյուղ, պատիվ, բարձր անուն, փող, բարեկամներ, ընկերներ՝ երբ դիմադրում են քու իդեալին։ Հաստատ պիտի ոգևորվել։ Հառա՛ջ միայն — կրակի պես։

Մենակությունն էլ ունի իր պոեզիան ու լոգիկան, և ես թե՛ իմ մանկության և թե՛ պատանեկության մեջ շատ եմ մենակ ապրել — մենա-

կության մեջ մարդ սուզվում է, խորանում է և ստեղծում. բայց մենակ կարելի է ապրել այն ժամանակ, երբ չես սիրում հասարակությունը, կռիվը, չունես ընկերներ ու թշնամիներ ,այլ ունես մտքեր, գաղափարներ, փիլիսոփա ես — պիտի մտածես ու ստեղծես. չես կարող կյանքում ակոս բանալ գործ հիմնելու։

Զգացմունք և միտք իրար շարունակություն են, մինչև անգամ միևնույն բաներն են — նույն ծիածանն է մեր հոգում, ուր կան միայն գույներ, բայց մի ծիածան... Մտածում եմ խորը, խորը, և դրա հետ զգում եմ ամբողջ մտքի իսկական էությունը — կամ տխրում եմ, կամ հուսահատվում, կամ բարկանում, կամ ոգևորվում, զգում եմ խորը մի զգացմունք — սեր դեպի մարդը, անասունը, կարեկցություն դեպի թշվառը, տանջվածը — ահա՛ մտքերս էլ նույնպես են դասավորվում՝ լոգիկաս արդարացնում է իմ սերն ու կարեկցությունը և որպես ճշմարտության համար՝ հավանություն տալիս կամքիս գործին...

Նոյեմբերի 5

Ահագին տիեզերքը նպատակ չունի — էլ ինչո՞ւ ենք որոնում մենք մեր կյանքին նպատակ տալ, մեր ձգտումներին նպատակ տալ, այնպես ապրենք, որ մեր լոպեական կրքերը փաղաքշվին, գոհ լինենք — ահա՛ այսպես է ասում բնական գիտությունների փիլիսոփայությունը— Հիմա՞ր է...

Ամբողջ տիեզերքն իր անվերջությամբ ու անհունությամբ ինձ մի երազ է թվում։ Կարծես քնած եմ և երազ եմ տեսնում — զարմանալի, աքանչելի երազ, որ հավիտյան է, որ վեհ է և շատ հուսահատեցուցիչ ու խորին լուռ...

Ուզում եմ ապրել, որովհետև սիրտս դեռ ամբողջ է — կարող է սիրել, ուրախանալ, ու հրճվել, ու թրթռալ...

Մարդիկ ծիծաղում են երազող մարդկանց վրա, բայց ողջ գիտական գյուտերը — մարդ կա՞ առողների վրա, որքա՞ն է լուսնի ծանրությունը — երազներ են. երազ էին Նյուտոնի, Գալիլեի, Կոլումբի, Դարվինի ծրագրները... Ներկա երկիրը — իր օրգանական, անօրգանական ու մետեորոլոգիական դրությամբ ժամանակակից են մարդին — ինձ... ես պիտի սիրեմ դրանց, որոնք իմ ներկա դրացիս են և ինձ հետ գույն միասին դառնան հավիտենական ուժ — եթե ոչ վաղը, գոնե մյուս օրը... Մարդի՛կ, սիրեցեք ձեր շրջապատը — ձեր վիճակակիցը...

Գիշեր

Հայաստանում մեծ կոտորած կա... գերմանական թերթերը տաճիկի կողմն են պահում.— անասելի մարդիկ են գերմանացիք. զգայմունք չունեն, փողասեր <...>։ Ամբողջ ուսանողությունը դատարկ, նյութապաշտ, մահմեդական են դառնում (ֆակտ) փողի ու կնոջ համար. պատտորները բաղաբանշիկ ու կառապան են դառնում, երբ տեսնում են, որ շատ փող են վաստակում այդպիսով <...> Ա՛ռաջին հարցը, որ տալիս են մեզ, է՝ ի՞նչ եք սովորում և ի՞նչ պաշտոնի եք պատրաստվում, որքա՞ն փող կստանաք այդ պաշտոնից...

Նոյեմբերի 6

Աննպատակ, անկամ, անձգտում մարդու կյանքը նման է այն ուռած ու կշտացած խանում ասլլային, որ հարսանիքում ուշ գիշերին քունը գալիս, հորանջում է, բայց չի գնում տուն քնելու, նրա՛ համար, որովհետև դեռ ծառան չի եկել հետևը, կամ դեռ կառքը չէ եկել... Ահա՛ ծառան եկավ, կառքը եկավ... Դե՛հ, մնաք բարև, հարսնավորներ...

— Եվ այդ ծառան ու կառքը մահն են, որ հոգնած ու ուռած մարդուն երջանկություն ու վերջ են բերում... Շնորհակալությո՛ւն այդպիսի շնորհալի — բարեգութ ծառային — մահին...

Նոյեմբերի 13

Գրությունս անորոշ է — փող չունիմ, տանտիկինս ուզում է, ես նեղվում եմ. ընթրիքի, ճաշի փողը չեմ տվել, շորերս մաշվել են. վրես ծիծաղում է հասարակությունը... իսկ ես վիրավորվում եմ... Հասարակությունը — խուժան է — մութ ու գորշ ամպեր, դիզված երկրի կրծքի վրա. ինձ պես տանջված մարդիկ նրա էլեկտրականությունն են — մենք նրա կայծակներն ենք — զարկում ենք, խփում, փշրում — և իրեն՝ հասարակությունը մաքրում։ Մարդկանց հազարից մեկը հազիվ ազնիվ ու բարի լինի, անկեղծ ու բարձր. հազիվ հազարեն մեկի գործերի, զգացմունքների շարժառիթը ազնիվ ու մարդասեր լինի — սեփական շահից ազատ լինի...

Իսկ ես — Շուշիկի մոտ նստած ժպտում էի ու տխրում, իմ ամբողջ կյանքում խառը՝ իրար հետ հյուսված ժպտում ու տխրում։ Ժպիտն ու թախիծը — սիրտը այսպես եմ ես պատկերացնում։ Սիրտը երկինքն է, թախիծը նրա ամպերը. երկինքը — սիրտը լալիս է, և հովանում է՝

սկսում է ծիածանը խփել — սիրտը ժպտում է։ Ժպիտը — ծիածան է, որը թախիծի, արցունքի հետ է հյուսված. իսկ ո՞վ ծագեցրեց ծիածանը — ո՞վ է արևը — դա կյանքի կրակն է, ապրելու կրակը, հույսը, մեր մեջ ընկած օպտիմիզմը։

Նոյեմբերի 10

Մինչև այժմ ես այն կարծիքին էի, որ պիտի կռվել և Տաճկահայաստանը ձեռք բերել — իբրև ազատ երկիր — անկախ նույնիսկ ուրիշ ազգերի միջամտությունից, միայն մեր արյունի շնորհիվ, բայց Սասունի կոտորածի լուրը ինձ փոխեց. այս ճամփով տաճիկը մեզ կշնչի վերջնականապես աշխարհի երեսից, նրանք ունեն զորք, զենք, թնդանոթ և փող, իսկ մենք ոչինչ և սոված <ենք>... Նրանք մեզ հում-հում կուտեն։ Պետք է ուրիշ տեսակ վարվել, բացի դրանից էլ, որ մեր երիտասարդությունը իսկի տրամադրություն ցույց չի տալիս մեռնելու Պետք է պրոպագանդա անել, շայկաներ պատրաստել, դինամիտ շինել սովորել, և պետք է ջարդել ու փշրել տաճիկին հօգուտ Ռուսաստանի։ Շատ, շա՜տ լավ կլինի, որ Ռուսաստանը գնա և ողջ Հայաստանը տիրե. գոնե մեր ժողովուրդը էլ չի ջարդվի — սովից ու սրից,— գոնե ուսը օրենք և սիրտ ունի։ Այն ժամանակ ոսի ձեռքի տակ, որպես մի ամբողջություն, կգարգանանք ու կաճենք, իհարկե, որ մի օր Ռուսաստանում կոնստիտուցիա կլինի <...> Այս շատ լավ կլինի։ Ես այսուհետև ինձ կպատրաստեմ մի զինվոր. ուրիշ զինվորների հետ արյունս կթափեմ ռուսի դրոշակի տակ և հայրենիքս կփրկեմ կրակից ու արյունից ու սովից։ Պետք է այս քարոզել ու խրախուսել Ռուսաստանին։

Նոյեմբերի 25

Երեկ կատարյալ հիվանդ էի, ամբողջ օրը պառկեցի անկողնում ու լավ քրտնեցի.— մենակ էի, մոտս ոչ ոք չկար. Էրագը լուռ վառվում էր։ Nietsch-ի «Also sprach Zarathustra»-ն* մոտս էր.— սաստիկ շերմում էի ու գլուխս ցավում էր, հիշում էի ապլայիս — անցած կյանքս իր բոլոր մանրամասնությամբ, Շուշիկին, մեր սիրը. այժմյան դրությունը — տանջվում էի, ուզում էի փշրել, արյուն էի ուզում... Բայց անուժ էի ինձ գտնում... աղքատ ու անտաղանդ... սիրտս ճաքում էր, բարձս այրվում... ծա՜նր, ծա՜նր գիշեր...

* Նիցշեի «Այսպես խոսեց Զրադաշտը»։

Էքստազներ, միայն էքստազներ — սա է վեհ կյանքը, ուր և՛ ժպիտ կա, և՛ արցունք, և՛ վիշտ, և՛ ուրախություն, և՛ սեր, և՛ ատելություն...

Հազար երանի Շուշիկին սիրած չլինեի ու չսիրեի հիմա էլ — նա իմ դժբախտության, իմ քայքայման ու վերջապես իմ մահվան պատճառն եղավ, և է լինելու...

Ամաչում ու ինձ ստոր եմ կարծում, երբ մտածում եմ, որ իմ ստեղծած, տարիներով մտածած ու տանջված դրքերը պիտի փողով ծախվեն, որ ես իմ հոգու բխումի համար պիտի փող ստանամ...

Կարծես մարդ փողի համար է գրում... Օ՜, օ՜, երբ ես տարիների ընթացքում աշխատում եմ ու մի գիրք գրում, դա իմ փառքն է, ինձ փող պետք չէ. իմ քրտինքը, մկանների ուժը, մայր-երկրի պտուղները — ահա՜ իմ հացը։

Մի՞թե Քրիստոսը կկարծեր, որ իր Ավետարանը պիտի փողով ծախվի, մի՞թե Հոմերը գրեց ու երգեց, որ հետո տարդաշները փող աշխատեն... Զզվելի՜ աշխարհը, դու քու օրենքներով փչացնում ես մի ոգևորված բանաստեղծի ու գիտնականի...

Դեկտեմբերի 3, Գիշեր

Ես այնպիսի հոգով եմ ծնվել, որ իմ միակ երջանկությունը թափառական-արկածական-բանաստեղծական-ռոմանտիկ կյանքն է։ Ես կհագնեմ ճամփորդի ռոմանտիկ շորեր. ես կլինեմ ասպետ, ու սարեր ու ձորեր ման կուգամ, աշուղների ու հովիվների մեջ, ձկնորսների ու որսորդների մեջ, ավազակների ու հայդուկների հետ։ Ես կքարոզեմ ու կսորվեցնեմ նրանց, ես կքարոզեմ կուլտուրայի, փողի ու բուտինայի դեմ։ Հետս կունենամ շուն՝ հավատարիմ շուն, ձի, բեռ՝ գրքերով ու թղթերով, շորերով... Հետս կունենամ թվանք ու զենք՝ մի տեսակ Դոն-Քիշոտ կլինեմ — օրինակ՝ Մուրատ-բեկ (կամ Ազատի բեկ-Մանթաշեցի). կունենամ և իմ Սանչո-Պանչոն... կգրեմ ոտանավորներ ու արկածներ ու ժողովրդի երգն ու կյանքը... Այսպես թափառական կապրեմ, մինչև որ կանցնեմ Հայաստան, կկռվեմ ու կռվում զինվորների հետ կընկնեմ։ Իմ կարծիքով է՛լ ուրիշ լավ կյանք չկա աշխարհում։ Ջարժե ապրել քընքուշ կյանքով.— շարքաշ կյանք ու կռվի մեջ մահ...

Դեկտեմբերի 5

Որքան էլ երկիրը մեծ է, բայց նա մտածող ու տանջվող հոգու համար բանտ է — ճնշող և հուսահատեցուցիչ. ինչի՞ է մարդ ձգտում, ի՞նչ է ուզում... ոչինչ չգիտեմ, միայն գիտեմ, որ փայտը լավ բոց ավեց,

տաքացրեց, փայլեց ու մարավ — ինչո՞ւ համար. միայն մի վայրկյանի համար... Անցավ — մոռացվեցավ.— այդպես է և մեր հոգին՝ ոգեվորվում է, այրվում, ծրագրում, ձգտում, տանջվում, կռվում-վառվում, վառվում... և մարում, ամեն քայլափոխում մարում...

... Եվ լուռ է շորս դին... Ես պիտի ապրեմ — այդ վճռել եմ, բայց ինձ համար կյանքը գերեզման կլինի, որ խաղաղ, զով ու մանր ապրեմ, ինչպես ապրում է քաղաքացի մի մարդ, մի բնտանիքի հայր... Իմ մեջ մի մեծ վերք կա, դրա ցավից ես ուզում եմ այնպես գոռալ, փայլել, վազել ու կռվել, որ մարդկանց զարմացնեմ... Թո՞ղ հավատ չլինի, թո՞ղ բոլորը փուչ լինի — Նապոլեոնի ու Բայրոնի պես կռվել ու տոկալ ու մեռնել — մեզ ի՞նչ, ինձ ի՞նչ — քիմիական մի զանգված էի, մեջս կրակ կար, վառվեցա, այրվեցա — ու մարա... Ողջ արեր ու տիեզերքը պիտի նույնիսկ մարի... Ես էլ կմարիմ, բայց թողեք լույս տամ առաջ արեի պես, կայծակի պես այրվեմ... Հետո ողջ տիեզերքի հետ Նիրվանայում նիրհենք...

Ես թեև այժմ մոխրի տակ թաքնված կրակ եմ ու դեռևի տակով վազող գետ... բայց շատ շուտով կպայթենեմ ու կվառվեմ. այս մի զինադադար է, մի պատրաստություն է ինձ համար... Ես վերք ունեմ, իմ մեջ հեղեղ կա, որից այժմ միայն կաթիլներ են թափվում... Բայց հետո՝ մի հոսանք... Ես պիտի մտնեմ մեր կյանքը մի գիսավոր աստղի պես՝ պիտի երգեմ, քարոզեմ, բարկանամ, լամ, վառվեմ... Ա՜խ, ուրիշ կերպ ես չեմ կարող ապրել. մարդիկ ապրում են իներցիայով, նրանց մեջ կա մի ինքնաշարժ անիվ ու նրանց գլորում է — նրանք սիրում են կյանքը՝ առանց գիտակցելու ուտում են, խմում են, քնում են — այդ է նրանց կյանքը, և երբ սկսում է դա մի քիչ նվազել՝ նրանք սկսում են ատել կյանքը, և նրանց ողջ վիշտը նրանումն է, որ այդ անեցնեն ու զարգացնեն — շատ ու փարթամ ուտեն ու խմեն, շա՜տ ու փարթա՜մ... Ես թքում եմ այդ կյանքի վրա... Ես այդ պատճառով վերցնում եմ թափառականության գավազանը՝ թո՞ղ ցուրտը, քաղցը, ծարավը ինձ տանջեն, բայց ես կվառվեմ խո՝ Ես պիտի մտնեմ մեր կյանքը... իմ վարմունքով ու իմ ցանկություններով — տաթթինակ... ցանկանալ լայ, մաքուր սեր, բնություն, արհավիրք բնության, կռիվ, ասպետական թռիչքներ. ցանկանալ ոգևորություն, վիշտ ու բարկություն... ու կարեկցություն և ոչ թե սեր դեպի մարդիկ (կարեկցել, որ թշվառ են, անցավոր ու երազի, փրփուրի պես, ցանկանալ ազատություն, անվերջ ազատություն և միայն բնություն, բնություն...

Իսկ գրել — այդ իմ սերն ու հոգին է, որ պիտի դնեմ մարդկանց առաջ, ո՛չ թե նրանց զվարճացնելու ու ձանձրույթը փարատելու, այլ տանջելու ու ոգևորելու։ Իմ գրվածքը մի մեծ ու ճոխ հյուսվածք պիտի լինի՝ բնության պես մեծ ու խորհրդավոր. հոն պիտի լինեն պատկերներ ու տեսարաններ, հոգեբանական խոր անալիզ՝ մոտիվներն ու դրությունները հոգու... Հոն պիտի լինեն կյանքի շերտերից պատկերներ ու անցքեր, հին կյանքից պատմվածքներ։ Այնտեղ պիտի լինեն արձակ բանաստեղծությամբ իմ ձգտումները, ցաքերը, վշտերը, զայրույթները գրված, իմ ուրախ ու տխուր վայրկյանները լիրիկապես արտահայտված...

Այնտեղ կգրեմ նամակներ ու ոտանավորներ՝ Շուշիկի հասցեին ուղղված, նամակներ ու ճառեր մեծ մարդկանց, հանճարներին ուղղված, կգրեմ կտորներ իմ օրագրից՝ ո՛ւր գնացի, ի՞նչ պատահեց, ի՞նչ մտածեցի։ Այնտեղ կլինեն մոնոլոգներ բնության, աստղերի, լուսնի, մրրիկի կամ ավերակների, գերեզմանների, մոնոլոգներ՝ լի պոեզիայով ու փիլիսոփայությամբ։ Կգրեմ ճառեր ու քարոզներ ու խրատներ, որ ես ասել եմ հրապարակով, լեռներում, դաշտերում, գյուղացոց ու շուկաների կամ գողերի հանդեպ, որոնց մեջ ես կհայտնեմ ողջ փիլիսոփայական հարցերը կյանքի, մարդի ու տիեզերքի վրա... Կգրեմ վիճաբանություններ մարդկանց հետ — վարդապետների, վարժապետների և այլն... կամ ընկերների ու կողմնակի մարդկանց... Կլինեն առակավոր խոսակցություններ ձիուս, շանս հետ։ Կլինեն երազներ, որոնցով կուզենամ գուշակել կյանքի ու բնության հիմքերը, նպատակները, կամ մի գեղեցիկ բան կպատմեմ։ Կգրեմ արձակ բանաստեղծություններ զանազան բաների վրա — ծաղիկների, ծովի, վշտի, հույսի, սիրո, աչքերի, փիլիսոփայական մորալի, մարդու վրա։ Կգրեմ ցնորքներ ու անուրջներ՝ լի վայրենի ու ասորիական ցանկություններով ու մոքերով։ Ինձ հետ կխոսեն ծառ ու ժայռ, աղբյուր ու գետիկ, արև, լուսին, ու կհայտնեն երկնի գաղտնիքները — խորհրդավոր ու սոսկալի... Այնտեղ կլինեն երեխաների ժողով, խաղեր, երգեր, ողջ գյուղական կյանքը՝ իր վշտերով ու ուրախություններով, մարդկանց տիպեր։ Այդ հյուսվածքի մեջ վարագույրն գծերով կանցնեն հին ու նոր ժողովրդական լեգենդներ, բալլադներ (որոնց ես ժողովել ու նորից գեղեցիկ գրել եմ), երգեր, զրույցներ, հեքիաթներ, առակներ։ Գլխավոր տեղը կբռնեն՝ «Գյոռոգլին», արձակ ու հանգերով գրված. «Դավիթ ու Մհերս՝ չափական գրած. «Զոփուռի աղեղը»՝ գեղեցիկ ու խաղերով պատմած... և այլն, և այլն։ Ավանդություններ՝ ժողոված ու գեղեցիկ գրած։ Կգրեմ ողջ գյուղական հոգեկան ու տնտեսական կյանքը. գյուղացոց ու բնական մարդկանց

մտածելու ու զգալու եղանակը, նրանց փիլիսոփայությունը... նրանց խաղերը, հարսանիքներ, պարերը, կռիվները — ո՛ղջ կյանքը...

Եվ իմ ողջ գիրքը, որ մի չքնաղ հյուսվածք, տիեզերքի պես պիտի լինի — նրա միջոցով ես կանցընեմ իմ զգացածը, մտածածն ու ցանկացածը — ես իմ ձևով կլուծեմ ու կդնեմ փիլիսոփայական, մետեսական, սոցիալական, բարոյական, էսթետիկական, բնագիտական հարցեր ու խնդիրներ, և այդ բոլորի միջով մի զորեղ կայծակի պես կանցկացնեմ հետևյալ միտքը.— Կյանքը ու ողջ բնությունը մի երգ է, մի վերք — մի ողջ պոեզիա՝ վառվել, փայլել, շողալ, հնչվել ու մարել... Պետք է ապրենք ծովի պես՝ մռնչանք ու ծփանք՝ ողջ բնությունը մեր մեջ գրկած. պիտի հոգով ու գործով ասպետներ ու ազնվականներ լինենք՝ բարձր, սուրբ վշտերով, երգով թաթախված սրտով, ոգևորված կյանքով ու մահով — պիտի սիրել կյանքն ու մահը, պիտի ատել կյանքն ու մահը — պիտի դղրդալ ծովի կամ երգի պես ու պիտի մեռնել՝ պիտի մեռնելու գնալ — Նիրվանան՝ տիեզերքի, նյութի իսկական, հավերժ կյանքն է։

Դեկտեմբերի 6

Գրելու ու ստեղծելու ասպարեզը պիտի մտնեն այն մարդիկ, որոնք իրենց մեջ մի ուժ, մի պահանջ են զգում գրելու ու ստեղծելու։ Գրելու ցանկությունը զուտ, մաքուր ու աբսոլյուտ պիտի լինի՝ անկախ նյութական և այլ գծուծ դիտումներից — փող կամ հարգանք ձեռք բերելու ձգտումից։ Ո՛չ — գրողը պիտի գրիչ վեր առնե՝ ոգևորված այն խորը մտքով, որ նա անդամահատում է տիեզերքը հավիտենականության համար — և ո՛չ թե մարդկանց զվարճության ու զբոսանքի։ Պիտի գրել ողջ էությամբ, գրելու ժամանակ պիտի ապրել՝ ողջ տիեզերքի հետ... Հավատացած եմ, որ եթե փոխվեն այժմյան սոցիալական պայմանները — փողի հետ միասին կվերջանա և՛ այն մեծ բանակը գրողների, որոնք կեղտոտում են թուղթը՝ կրկնելով թութակի պես հանճարների մտքերը, կամ այդ մտքերը ծռմռելով դուրս են տալիս հիմարություններ — այն ժամանակ՝ ինչպես և հին ժամանակում՝ գրիչ կառնեն իրենց ձեռքը Պլատոն ու Արիստոտել, Շեքսպիր ու Դեկարտ, Բայրոն ու Վունդ, Նիցշե և Արթրունի — և ոչ Բեբելներ, Բլյումներ, Փամբակեցիներ ու Ճուղուրյաններ...

Ամբողջ երկիրը — դա իմ բնակարանն է, բայց իմ հայրենիքը — իմ ծնողներիս ոսկորների փոշիացած երկիրը — դա իմ սիրելի ու պաշտելի անկյունն է, ուր ես կարող եմ հանգիստ ու անուշ երազներով քնել — դա իմ սուրբ օջախն է... որի առաջ ես նստում եմ, տաքանում ու մտածում...

Ես պիտի հերոս լինեմ — օ՜, ի՜նչ մեծ ու վեհ զգացմունք, երբ հերոսական գործից — կռվից հետո կրծքիս վերքեր, ճակտիս կնճիռներ, գլխիս ուռու թարմ պսակ՝ ընկերներիս հետ կմտնեմ — կվերադառնամ իմ ծննդավայրը... Օ՜, այնտեղ մայրս ուրախության արցունքով լի թաշկինակը կշարժե, այնտեղ Շուշիկը ուրախության մեջ, ժպտով լի՝ ծաղիկների փունջը կձգե դեպի ինձ... ու ընկերներս «ուռա՜» կգոչեն... Սա ամենամեծ, սուրբ ու տիեզերական զգացմունքն է՝ միացած այն գիտակցության, որ դու հերոս ես, հանճար ես — սա այն միակ բարձր ու անսահման զգացմունքն է, որ բնությունը ունի իր մեջ, որը միայն մեծ մարդիկ կարող են տածել — սրան պիտի ձգտենք...

— Հերոս լինել... աղջկա մաքուր սերը, մոր անձնազոհ սերը, ընկերների հավատարիմ սերը — սրանք իրավ շատ վեհ զգացմունքներ են, բայց հերոսական ինքնագիտակից հպարտ զգացմունքի մոտ, իշալես աստղերը լուսնի... Երբ դու սիրում ես, ոգևորված ես ու երջանիկ վշտով թաթախված, և այդ բոլորի հետ հաղթական հերոս ես... Օ՜, արդեն դու հասար քու կյանքի վերջին կետին — այլևս մի՛ ապրիր՝ դու գիտավոր աստղ էիր՝ երկնքի կյանքում, դարձյալ կորիր մութ հավիտենականության մեջ։— Հերո՜ս լինել, հերո՜ս։ Ահա՜ իմ միակ ցանկությունը։ Հերոս լինեմ՝ պսակված ուռու պսակով, մոր արցունքով, Շուշիկի ժպիտով, ընկերներիս համբույրով.— հերոսի գրիչը — ձեռքիս, թուրը — մեջքիս, վերքերը — կրծքիս, մտքի ու վշտի կնճիռները ճակտիս...— Հերո՜ս, հերո՜ս...

Նոյեմբերի 8

Իմ սիրտս նման է ծովի... Երբ նա վիշտ ունի, տխուր է ու մելամաղձիկ, այն ժամանակ ամպերն ու մշուշը իջնում են ծովի — սրտիս վրա, ու ես խավար եմ, գլուխս քաշ արած — լուռ ու բաժանված արտաքին աշխարհից — մտածում եմ — երկա՜ր ու երկա՜ր... Այդ ժամանակ չեմ կարող գոռալ, շաչել, փրփուր տալ... Ես միայն կարող եմ նստել անշարժ ու մտածել, թաղվել... Բայց հենց որ մշուշը — ամպերը վերանում են, սկսում է սիրտս — ծովը բացվել, այդ ժամանակ ես կարող եմ ծփալ ու ալիքներ տալ, ես կարող եմ երգել ու գրել — ոտանավորներ գրել... Մի քիչ հետո — գրելուց հետո — ամբողջ սիրտս բացվում է, արևը բարձրանում է երկնքում ու ընկնում իմ սրտիս — ծովի վրա, շողում է ծովը — սիրտս ու ուրախ ծփում, ձկները լողում են ու թռչունները ծափ տալիս — այդ ժամանակ ես կարող եմ ուրախ պարել, երգել ուրախ, խաղալ, լողանալ գետում ու ձի քշել... Մեկ էլ ծովը մրրկում է, փչում են

քամիներ, կայծակ, որոտ և կոհակներ ու փրփուրներ — այս ժամանակ ձկները ու թռչունները փախնում են, նավերը տատանվում, ժայռերը փշրվում... Իմ սիրտս էլ է ալեկոծվում, ես բարկանում եմ, կատաղում եմ, գայրանում եմ, գոռում եմ ու գոչում... Էլ չեմ կարող երգել, պարել կամ խաղալ... Անցնում է այդ մրրիկը — հանդարտված է ծովը — և դալիս է գիշերը — հով, աստղոտ գիշեր, բուրմունք ու հովեր... Ծովը ծփում է մեղմիկ, աստղերն ու լուսինը ընկել են ծովում... Լուռ ու հավիտենականություն կա շորջդիդ — իմ սիրտն էլ ունի իր կախարդիչ գիշերը — և երազում եմ, մեղմ լալիս ու երգում, ցնորում... Դա իմ սրտի պոեզիան է...

Չէ՞ որ ծովն էլ է ոգևորվում... Վառ արև, կապույտ ծով, ժայռեր, փրփուր ու բուրմունքով քամի — այն ժամանակ ծովը — միայն ներդաշնակ շաչում է. ամպեր ու մշուշ չկան, խփում է ալիքներին, տարածվում է դաշտի ու ափերի վրա, հանում է թանկագին քարեր իր ծոցից, ծովը ուրախ է ու գեղեցիկ... Ես ոգևորված եմ — խփում եմ կյանքի ժայռերին <...> ներդաշնակ գոչում եմ... և տարածվում ափերից դուրս... Այս ժամանակ ես չեմ կարող մտածել, երգել կամ գրել... Ես կուզեմ թռթռալ, վառվել ու այրվել, գոչել, քարոզել, կռվել ու մեռնել՝ լի իդեալներով...

Դեկտեմբերի 9

Մի՞թե կարելի է ծախել համբույրը, որ բխում է սրտիդ խորքերից, մի՞թե կարելի է գնել արցունքը, որ թափվում է սրտի խորքերից, մի՞թե կարելի է գնել երգը կամ խրատը, որ բխում է հոգու խորքերից — այս բոլորը անգին են, և միայն ձրի կարելի է տալ, ինչպես բնությունը ձրի տալիս է ծաղկին բույր ու գույն, մեզ՝ սիրտ ու աչեր, ծիածանին՝ գույն ու ցոլք, աղբյուրին՝ շիթեր ու կարկաչ...— Բայց ինչո՞ւ են բանաստեղծները, բարոյագետները ու հանճարները իրենց սիրտը, գլուխը, տանջանքը, լացը ծախում... Անբարոյական մարդկություն...

Ամեն բան բնության մեջ պոեզիա է — բանաստեղծական մի մոտիվ — շողում է առավոտյան ցողն ու կորչում, բուրում է շուշանն ու—կորչում, կարկաչում է առուն ու լռում, երգում է սոխակն ու լռում, մեղեդորչում, փայլում է լուսատիտիկն ու մոայլվում, կորչում, մռնչում է ծովն ու լռում, ցամքում, բարձրանում է մարդու կուրծքը ոգևորությամբ ու մեռնում, ծփում է հովը մետաքս մազերի հետ ու կորչում, դողդողում է երգչի քնարն ու փշրվում. ցոլում են երեկոյի աչերն ու մարում, վառվում է մոր օրորն ու լռում, ծաղկում է պատանու սերն ու մարում, վառվում ծիածանն ու հանգչում, փլփլում են աստղերն ու փշրվում, այրվում է արևն, ու սառչում, փոշի դառնում — ինչո՞ւ համար, ո՞ւմ համար, ի՞նչ նպատակով — ո՛չ մի նպատակ չկա... Այդ կամեցավ նյութ-ուժը, կամեցավ՝ գեղեցկություն, երգ ու պոեզիա լինի, և եղավ ու անցավ, էլի կլինի...

Դեկտեմբերի 11, Գիշեր, ժամը 2-ին

Հեռուհետ մշակում եմ այն տիպը, որ իմ գրվածքում ես պիտի ինձ նկարագրեմ։ Ես պիտի իմ մեջ մարմնացնեմ մի հոգի, որին ես պիտի տամ Գերմարդ (Übermensch) անունը։ Ի՞նչ պիտի ունենա այդ մարդը— Գեղեցիկ դեմք, կնճռոտ ճակատ, տխուր, բայց փայլող, մարող աչքեր, շրթունքներ՝ որոնց վրա ժպիտ ու անեծք կա... մի կուրծք, որ հեկեկում է ու ոգևորված խփում... մի ճակատ, որ մտքերի տակ այրվում է։ Թշեր, որոնց վրա ժպիտն ու արցունքը շողում են... մազեր, որոնք արշալույսի ցողերի հետ, քամու հետ ծփծփում են... մի ճակատ, որ քրտինքը վառվում է...

Ելնող, մտածող ու քննող, անալիզ անող ու հարցասեր, սկեպտիկ և միշտ մտորող... Նրա գլխում միշտ այս հարցերը պիտի խռնվեն.— Ո՞ւր, ինչո՞ւ, ի՞նչ է, ինչո՞ւ համար, ե՞րբ, որտե՞ղ, ո՞վ ես, ի՞նչ ունես, ո՞ւր էիր, ինչո՞վ, ինչո՞ւց, ի՞նչ պատճառով, որտեղի՞ց, ո՞ւր, ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչո՞ւ... Նա շարունակ պիտի վիճե ու քարոզե, հետազոտե ու ասե ճշմարիտը... Սիրտը — մի ողջ բնություն <է> — այդտեղ կան միլիոնավոր զգացմունքներ — վիշտ՝ համաշխարհային թախիծ, հավիտենական սեր ու վիշտ, մոր վիշտ ու սեր, ընկերական սեր ու վիշտ, պլատոնական սեր ու վիշտ ու հուսահատություն, կարեկցություն դեպի մարդիկ ու աշխարհը, անեծք ու օրհնանք, երգ — վշտի, գիշերվա, բնության... Նա պիտի սիրե ու ատե մահը, կյանքը, մարդիկ. նա պիտի սիրե աղջկան՝ ընկերի պես, ու միայն մոտը լալ ուզենա. նա պիտի սիրե ժայռերը, որոնց տակ մտորե, ամպեր, որոնց պես ցնորե անհուն կապույտի մեջ, կարապին, որի հետ լճում տխուր լողա, ուռին, որի հետ լուռ խշշա... Նա պիտի ոգևորվի մահով — Նիրվանայով։ Նա պիտի պատվասեր ու ասպետ լինի, հերոս ու դյուցազն, պատերազմում զենքը ձեռին պիտի մեռնի տանջվողի ու թշվառի համար և պիտի հսկա քարի տակ թաղվի, զինվորների հետ, ուռենու տակ։ Նա պիտի քրտինք թափե գյուղացու հետ, հովվի հետ անձրևի տակ թրջվի, ձկնորսի հետ լրում թրջվի, որսորդի հետ քարե-քար ընկնի... անտառում կորի, այրում ճգնավորի պես խորասուզվի, ավազակի պես՝ հարստահարողին

պատժե... Նա պիտի երգե առավոտն ու գիշերը — տխուր ու լուռ երգեր, ու պիտի լա ամպերի հետ... Նրա լացն ու ժպիտը հյուսված պիտի լինեն իրար հետ միասին... Նրա գլխին պիտի ուռու և շուշանի ճյուղքերից ու թերթերից շաղաղ պսակ լինի... Նա պիտի սիրե գերեզմանի մելամաղձությունը և լճի տխուր ծփանքը, որոնց մոտ պիտի մենախոսե խորին գաղտնիքներ...

Նա պիտի ատե սեռական զվարճությունը, բայց նրա համար սուրբ և ոգևորիչ պիտի լինի սեռական սրբությունը — որդեծնությունը... Նա պիտի ատե վավաշ համբույրը, բայց պիտի արցունքով համբուրե... Նա պիտի խույս տա զվարճություններից — կշտացնող ու հղփացնող զվարճություններից... Նա պիտի անքուն մնա, սոված ու ծարավ... Նա պիտի սիրե զենքն ու գերանդին... քնարն ու գրիչը... ավերակն ու անապատը... Նա պիտի բոլորին կարեկցե, բայց պիտի բոլորից սիրվի ու պաշտվի։ Նա պիտի բոլորին ձեռք տա ու օգնե, բայց ուրիշից մերժե այդ. ուրիշից նա պատկառանք է ուզում դեպի իրեն, նա ուզում է քնել, որ երազ տեսնի, որպեսզի երազի մեջ լա ու ոգևորվի ու մտորե... Նա գետի պես պիտի հոսե մեղմ ու լուռ, բայց մեկ էլ քարափից ջրվեժի պես թափվի ու շաչե, ու էլի լա՝ ցողեր շաղ տալով... Նա պիտի վերջը թափվի ծովը — Նիրվանան, որ կհանգստանա, բնության կյանքով կապրի...

Այս բոլորը նրա համար աննպատակ էր, միայն մի կամք էր, որ նա՝ Գերմարդը, կամենում էր ապրելու համար, իսկ կյանքը — մի մեղոդիա է, մի տխուր ու մեղմ — ուրախ պոեզիա, որի վերջը կամաց-կամաց մարող հնչյունների ղողանջող լռությունն է — հետո լի լռությունը՝ Նիրվանան... Նրա ոգևորողը Նիրվանան պիտի լինի. կյանքը վերք է, բնությունը վերք է — Նիրվանան սպեղանի, որի տակ թմրում է վերքը և անուշ մրմռում, ուր մարդ աչքերը բաց նայում է երկինք, վայելելով վերքի անուշ ու տանջող մրմռումը...

Նրա ողջ կյանքն է, ուրեմն, հարց տալը, մտքերում թաղվելը, հանդիսավոր ու խորհրդավոր երգելը, անհուն կարեկցելը, ողջ տիեզերքի վրա կարեկցելը, արտասվելն ու ժպտալը, երազելն ու մտորելը և Նիրվանայով ոգևորվելը. մի ոգևորություն, որ նրա բոլոր ներվերը թափանցած է...

Դեկտեմբերի 19

«Սոս-հերոս Մանթաշեցի» — ահա՛ իմ հերոսի — իմ անունը։— Օ՜, եթե մարդկությունը հասկանար գոնե միայն պահմ՝, տիեզերքի ողջ, խորունկ վերքը, եթե այդ վերքի մրմունջից կտորմ՝ ղզար — նա իսկույն

կդաղարեր ապրելուց. նա (մարդկությունը) կդառնար մեռած բյուրեղ ու կընկներ երկրի կրծքի վրա — արցունքի մի բյուրեղ <...> Ես սիրում եմ բնությունը, բայց ես սոսկում եմ ու ատում բնության երկաթե օրենքները, այդ անխուսափելի անհրաժեշտությունը, որի առաջ խոնարհվում են ու երազի պես ցնդվում թե՛ մարդիկ իրենց մտքերով, թե՛ անասունները իրենց կրքերով, թե՛ ծաղիկները իրենց բույրով, թե՛ աստղերը իրենց շողերով, թե՛ սարերը իրենց վեհությամբ, թե՛ հովը իր քնքշությամբ, թե՛ ծովը իր փոթորկով, թե՛ արևը իր հրդեհով, թե՛ ողջ տիեզերքի կազմը իր հրաշալի, անիմանալի կազմությամբ։ Այդ անհրաժեշտությունը նյութ-ուժի քմահաճույքն է, որին մենք օրենք ենք ասում, և այդ բռնակալ օրենքի առաջ ոչի՛նչ մեծ, հավիտենական, հաստատուն չկա, բացի իրենից՝ բռնակալ նյութ-ուժից։ Մենք թշվառ ենք և մեզ հետ ավելի թշվառ են արևն ու աստղերը, ծիածանն ու կայծակը։— Կարծես տիեզերքի անվերջ տարածության մեջ մի համր, սարկային լռություն կա, կարծես տիեզերքի հիմարության վրա մի լուռ հիացմունք կա... Բայց երկրի մրջյունները՝ մարդիկ են միայն, որ այդ սարկային, հիացած լռությունը ընդհատում են, բողոքում են, լալիս են և իրենց անեծքը ուղարկում են դեպի վերև — նյութ-ուժի գահը, ուր նստել է նյութ-ուժը, և ապշած հիանում է իր հանճարեղ, անհասկանալի, աննպատակ, փարթամ, չքնաղ, խելոք ու անմիտ հիմարության վրա — մի հիմարություն, որի ծնունդը ողջ տիեզերքն է։

Այո՛, մեզ պես թշվառ են աստղերն ու արևը, ծիածանն ու կայծակը. նրանք էլ մեզ պես երգում <են> ու բարկանում, սիրում ու շողում, որ վաղը մի բրդում փոշի դարձած՝ կուլ գնան նյութ-ուժի անհուն որ կորում։

Մեր վիճակները, որ իրար նման են — դե՛հ, ուրեմն եկեք իրար սիրենք, ո՛վ դուք մահկանացու, փոշիացող ընկերներ — աստղե՛ր, լուսի՛ն, մոլորակնե՛ր, արև՛ ու աստղնե՛ր։— Ես երբեք ձեզ չեմ ատի, ես ձեզ կսիրեմ ու հերոսի պես կկարեկցեմ բոլորիդ, որ անմիտ նյութ-ուժից ծնվել եք, որ հետո գոլորշիանաք։ Դուք ինձնից ավելի թշվառ եք, քանի որ դուք ձեր ահռելիությամբ ու հրաշալիությամբ հանդերձ՝ ինձ հետ հավասար վիճակ — ճակատագիր ունիք։ Եթե ես գոլորշիանամ, ես կորցնում եմ մի մտածող ու սխալվող հոգի, իսկ դուք՝ սքանչելիություն, վեհություն, մեծություն, խորություն, չքնաղություն։— Ձեր կորուստը ավելի մեծ է։

Դեկտեմբերի 29

Ես իմ ուրախության մաքսիմումի ժամանակ խորին վշտի մի ստվեր շարունակ ինձ հետ քարշ եմ տալիս։ Ուրախության հետ ես տխուր եմ,

շարունակ հիշելով, որ ես ինձ խաբում եմ. սա իլյուզիա է, կյանքը ունայն է, պիտի բնությունը մարի, և այդ ինձ շատ է ծանր թվում ու դուր չի գալիս. քանի որ ուրախ եմ, ուզում եմ ապրել, բայց հանկարծ այնպիսի տխուր ձայներ եմ լսում, որ սիրտս կտրվում է։

Իսկ տխուր ժամանակս ինձ վրա շատ քիչ է ազդում համաշխարհային վիշտը. նույնիսկ միտքս բերվում եմ, որ երկիրը պիտի փշրվի, և մենք կհանգստանանք, որ վատ մարդիկ կջնջվեն։ Տխրությունս — գուցե արդեն մահի սաղմոսն է, որ պիտի թաղեն, բայց ուրախության մոմենտիս «համաշխարհային վիշտը» դա այն հեռագիրն է, որ քիչի ժամանակ ձեռքդ են տալիս — բանում ու կարդում ես՝ «Սիրուհիդ մեռավ»...

Հին ժամանակ հերոսները, առպետները խմբով չէին կռվում, այլ գուելի էին դուրս գալիս — այստեղ ո՛չ թե զենքի ուժն էր (հրացան չկար) գործ կատարողը, ո՛չ թե տեխնիկան, այլ կռվողի անձնական ուժը, ճարպկությունը, փորձառությունն ու անվախությունը։

Հին ժամանակվա փիլիսոփաները, կրոնատուները, օրենսգետները հավատում էին իրենց ասածին և ապրում էին այնպես, ինչպես իրենք էին քարոզում։ Այն ժամանակվա երգիչները ոգևորված մարդիկ էին, որ, արդարև, սերունդներ էին կրթում։ Փողը, որ այժմ մի մեծ մոտիվ է մարդկանց շարժումների — այն ժամանակ այսպիսի գործերում իսկի դեր չէր խաղում — մարդիկ կռվում, քարոզում ու երգում էին, որովհետև այդպես էին հավատացած,— այդ էր նշմարտությունը։

Դեկտեմբերի 31

Այս բոպեիս (գերմանական) դեկտեմբերի 31-ին, գիշերը ժամ 12-ին խփեց <ին> եվկեղեցու զանգերը, հայտնում են հին տարու մահը, նորի ծնունդը. փողոցներում ամեն կողմից լսվում են բարձր ձայներ, որ «Prosit Neu-Jahr!»* են ասում իրար. գալիս են՝ որքան ուզենան... Ախմա՛խ, հիմա՛ր մարդիկ. ուրախությամբ ողջունում են հա՛մ իրենց մահի մոտենալը, հա՛մ երկրի մահի մոտենալը։ Մտաք նոր տարի, ավելի մոտեցաք հա՛մ ձեր գերեզմանին, հա՛մ մարդկության, հա՛մ երկրի...

* «Շնորհավոր նոր տարի» (գերմ.)։

1895

Հունվարի 8

Ես ձեզ պես չսիրեցի, ես չսիրեցի արևելքի, արևմուտքի, հյուսիսի կամ հարավի պես, ես սիրեցի կնոջը՝ Շուշիկիս — բնության այդ ամենաչքնաղ կաթիլը, հերոսի պես, տիեզերքի պես ես սիրեցի... Ես Շուշիկին, տիեզերքի այդ սքանչելի կաթիլը, ես սիրեցի հերոսի պես։ Ես տիեզերքի եղերքն եմ — ես հերոս եմ, ինձնից է սկսվում ամեն մի ճշմարիտ բան. ես այն ափն եմ, ուր կյանքի խարիսխն է ձգված. այս ափից բռնեցեք, ո՛վ մարդիկ, և կտեսնեք լույս ու կյանք։

Հունվարի 12

Խորին գիշերում ես աշխարհք մտա. շուրջս մթին էր, մշուշով պատած. խորին գիշերին ես թափառեցի, մշուշի նման՝ ես թափառեցի. սիրտս խավար էր, երգերս՝ խավար... Հեռվում աստղի պես, լուսաստղի պես՝ դու երևացիր, ընկե՛ր նազելի... Սիրտս տրոփեց, ուրախ և մաքուր, ու պայծառ ժպիտով քեզ ողջունեցի... Ինչպես արշալույս լեռների կրծքից՝ դու ինձ ձեռք տվիր երկնքի կրծքից... ու ես երգեցի սրտալի երգեր, ես երգեցի մեկ՝ վշտով հալվեցի... ու սիրտս ցոլաց ճոխ արշալույսով ու իմ հույսերը ոսկով վառվեցին, ու երազներս՝ վարդով բույր առան... Եվ անցավ, անցավ ճոխ արշալույսը... Այժմ կեսօր է. արևն է կիզում... և անապատում մենակ ու անմիտ, ձանձրույթից խեղդված, ես քաշ եմ գալիս... Արևն է կիզում... և ահա՛, ահա՛ մոտ է երեկոս...

Հունվարի 13

Լայպցիգում երկու աղջիկ կան՝ մեկը մեծ, մյուսը փոքր. մեծը՝ սև, փոքրը՝ ոչ շատ սև, որոնք ինձ Շուշիկին են հիշեցնում և սիրտս լցնում են թթերային սիրով։ Այսօր տեսա, որ փոքրը՝ Շուշիկի նմանը սառույց էր խաղում. երկար նայեցի... Ա՜խ, ի՜նչ լավն էր, ի՜նչ գեղեցիկ, մաքուր. ես տխուր էի ու ուրախ. շատ էլ բարձր էի այդ մոմենտին։ Աղջիկը ժպտում էր — շա՜տ պայծառ դեմք, շա՜տ քնքուշ ժպիտ, շա՜տ լավ աչեր... Ա՜խ, ուզում եմ լալ... Ես կխնդրեմ և կաղաչեմ բնությանն ու մարդկանց, որ թողնեն այդ մանուկը մաքուր մնա, միշտ չինչ ժպտա, երբեք վատ կիրք սրտում չմտնի... Մի՜շտ մաքուր մնա։ Ա՜խ, Շուշիկիս էլ այդպես էի աղոթում, բայց նա հիմա...

Հունվարի 25

<...> Արևն էր շողում — վերջալույսի դողդոջ արևը։

Ու ձյուն էր գալիս — ձյունի հատ-հատ փոշի — երկնքից բյուրեղ ու կայծեր էին թափվում...

Ծ՛ս կանգնած էի սառույցի վրա, ու դեմքս ցոլվում էր սառույցի մեջ — դեմքս շա՜տ սև էր՝ տխուր ու հիվանդ. երկար գիշերներ ես չէի քնել — աչերս սև-արուն էր լցվել... Ու հանկարծ բերնիցս երգերի փոքր-բանքներ դուրս եկան — ինչպես կարկուտ լինեին...

Ես կուզեմ ծծել երկրի սառնությունը ու ցուրտ մահը... Ես կուզեմ երկիրն բռումս բռնած ձգել տարածության մեջ — դեպի արևը...

Շա՜տ, շա՜տ կցանկամ մի բան ստեղծել — ստեղծագործել, օրինակ՝ մի բան գրեմ, մի բան կարեմ, տաշեմ, փորեմ, քանդեմ...

Գո՛րծ, գո՛րծ միայն։

Սիրել բոլորին, սիրել անչափ, լի կարեկցանքով, սիրել մինչև անձնազոհությունը,— սա մի այնպիսի մեծ էպոխմ է, որ միայն հերոսները կանեն։

Քրիստոնեական խոնարհությունը — սա միայն սեր չէ, այլ թույլ անկամ, անհաշիվ բնություն, Քրիստոս ինքը շա՜տ գոռոզ, վեհանձն ու խստասեր էր։

Հերոսը սիրում է բոլորին (կարեկցում է), որովհետև նա իրեն շատ է սիրում։ Հասարակ մարդը չի սիրում ու կարեկցում ուրիշին, որովհետև իրան չի սիրում ու հարգում։

Ես ուզում եմ ամեն մի առոմային վայրկյանը կյանքիս՝ ինձնից ու մարդկանցից ու տիեզերքից ծծել միայն ոգևորություն՝ արցունք ու ժպիտ, կասկած ու մտքի զգացմունքի թռիչք։ Ես ուզում եմ կյանքը ծծել, ծծել, ծծել, որ իմ ողջ ներվերը, անոթները զգան ու տանջվեն ու ժպտան։

Մարտի 4

Քանի կամք գոյություն ունի, գոյություն չունի այնտեղ ո՛չ մահ, ո՛չ հանգստություն, ո՛չ ձանձրույթ, ո՛չ նիրվանա։

Ապրիլի 16

Խոր զգացված գրում եմ՝ առանց հայրենիքի և բարեկամների չեմ կարող ապրել, նրանց հետ կապված եմ, չեմ կարող պոկ գալ. առանց նրանց՝ ես թշվառ եմ։ Մենակ չեմ կարող ապրել։

Ո՛չ մի անհատ հասարակաց կարծիքից ազատ չէ. մարդը իր գիտակցությամբ իրեն ենթարկում է հասարակաց կարծիքին։ Հասարակաց կարծիք ասելով պիտի հասկանանք այն ձայնը, որը գնահատում կամ պարսավում է անհատի գործերը։ Իսկ այդ ձայնը կա. տարբերությունը քանակության մեջն է. այդ ձայնը կարող է մի հատ լինել կամ մի միլիոն, կամ ներկայում, կամ ապագայի հույսով։ Եթե մի անհատ մի մեծ գործ է կատարում և նրան հասարակությունը ծաղրում է, բայց այդ անհատը այն հույսովն է, որ ապագան նրան կգնահատե։ Ապագայի կարծիքը նրա համար մեծ խթան է։ Մեկը մի գործ է կատարում և նրան ոգևորում է մի ուրիշի կարծիքը՝ իր սիրելու, սիրուհու... Հասարակաց կարծիքը՝ ուրիշին դուր գալու ձգտում է. նրան օգուտ տալու ձգտում է։ Չկա մի մարդ, որ մի գործ կատարե այն գիտակցությամբ, որ նրա գործը և ներկայում, և ապագայում, և ընդմիշտ պիտի դատապարտվի։ Մի հույս պիտի նրան խթան լինի։

Սուր ու գերանդի, գութան ու վահան — ահա՛ սրանք պիտի լինեն մի՛շտ, մի՛շտ մեր ձեռքում։

Ինչ եմ անում ասվածները, երբ ես ասված եմ։

Ապրիլի 18

Ժողովո՛ւրդ, ժողովո՛ւրդ, որ ծով ես անհուն, հանգիստ ու անալիք. ես մի մեծ ալիք էի քո մեջ, որ բխելով քո կրծքից, դիզվա, ուռա և հասա մինչև քո եզերքը, և քո եզերքից դուրս ընկա դեպի մութ, հեռավոր հորիզոններ, դեպի երկինք, դեպի աստղերը բարձրացա և այնտեղից իմ խոսքերն ու արցունքը թափեցի քեզ վրա... Դու շարժվեցիր, օղակներ կազմվեցին քո մեջ, ալիքներ ծնեցիր... Բայց հետո — դարձյալ լո՛ւռ, խաղա՛ղ և անդո՛ր...

Ապրիլի 26

Այժմ ես հավատացած եմ, որ եթե մեր մեջ եղած մյուս զգացմունքները՝ ընկերական, դեպի բնությունը, դեպի մեզ, դեպի ազատու-

թյունը — զարգացնենք, զգվենք, հլգենք, պաշտենք՝ դարերի ընթացքում կհասնի այնպիսի խորության, ծավալի, զարգացման և հրաշալիության, որպիսին հասել է այժմ սերը, սերը դեպի Բեատրիչեն, Լաուրան, Բայրոնինը, և իմս՝ դեպի Շուշիկը... Մի՞թե հայտնի չէ, որ այս չքնաղ սիրով շա՜տ քչերն են սիրում. մի՞թե վայրենի աղգերի և մեր գյուղացոց մեջ այն սիրուց կա, որով Դանթեն էր սիրում — ո՜չ, ո՜չ...

Սերը... մեր մեջ զարգացել և դառել է մի հրաշք։ Այդպես պիտի անել և ստեղծել մյուս զգացմունքները՝ ընկերական, եսական, բնական — ազատական, և՛ ոգևորությունը, և՛ մելամաղձոտությունը...

Ամուսին, ընտանիք, փարթամ, զանկին կյանք, հասարակական դիրք ու պատիվ, որդիներ ու քեֆեր — սրանք ինձ երբեք չեն կարող երջանկացնել, սրանք դարդակ, հիմար բաներ են։ Ինձի համար աշխարհում գոյություն ունի՝ կռիվ, փառք, գաղափար. կռվում կտանջվեմ, կ՚արշարվեմ և փառքի մեջ կժպտամ. գաղափարով կոգևորվեմ, կրակառնեմ դպի կռիվ վազելու համար. գիտությունը միայն զենք է իմ ձեռքում՝ իմ սիրտը խորացնելու և հաղթանակը տանելու համար։ Գաղափարը, իդեալական նպատակը իմ պահապան հրեշտակն է և իմ բնվեռային աստղը, իմ հոգու առրատան։ Ինձ համար չկա երջանկություն։ Չեմ էլ որոնում, անկարելի է երջանկություն վայելել. հիմարություն է երջանկությունը վայելելը։ Թո՜ղ լինի կռիվ, մրրիկ, արյունք, ժպիտ, հույզեր, նպատակներ, ձգտումներ, բոցեր, դժվարություններ և հաղթանակներ։

Մայիսի 1

Իմ ուխտը։

Ես տեսնում եմ մարդիկ, որոնք աշխատում են գոր ու գիշեր, բայց մնում են անտուն, անքուն, սոված, ծարավ, այլանդակված, հիվանդ։ Բուսական էակ, անբարոյական։ Այդ բոլորի պատճառը տնտեսական անարդարությունն է։ Նրանք, որ չեն աշխատում՝ ունին պալատներ, տասնյակ ձեռք շորեր, թանկագին սեղան...

Ա՜խ, պիտի ճաքեցնել կյանքը, պիտի մտցնել աշխատանք և արտեսական հավասարություն, տնտեսական նիվեռ, բայց միշտ և միշտ հենիները, հերոսները, հոգու արիստոկրատները պիտի իշխեն, կառավարեն։ Պետք է մտցնել տնտեսական դեմոկրատիա և հոգեկան արիստոկրատիա։

Ես կփշրեմ բուրժուն, պետությունը, փող, կղեր, գյուղ ու քաղաք, և կստեղծեմ նոր երկիր, ուր աշխատեն, ուտեն և հոգով դեպի վեր սավառնեն։ Ահա այսպես՝ ես մարքսիստ և նիցշեիստ եմ, սոցիալիստ, անարխիստ, դեմոկրատ, արիստոկրատ։

Հենին, հերոսը մի ազգի դիստիլիրա եղած կրիստալն է. նրա մեջ արտացոլվում են այդ ազգի ամեն հատկությունները՝ ավելի խորացած, նույնիսկ նրա մոլությունները։ Մի հերոսը, մի հենին մի ողջ ազգ է, մի ազգի գլուխն է. հենց այդ հիման վրա նա պիտի իշխե և ղեկավարե իր ազգը դեպի իր որոշած իդեալը...

Մայիսի 4

Քրիստոնեական մորալը ասում է — Եղե՛ք անձնուրաց ուրիշի համար, զրկվե՛ք ուրիշի, մերձավորի համար։ Շատ լավ, բայց եթե մերձավորն էլ զրկվի ու անձնուրաց լինի, ուրեմն իմ անձնուրացությունը տեղ չի հասնի, չի ընդունվի։ Մայրս զրկվում է ինձ համար, իսկ եթե ես էլ զրկվեմ նրա համար, ուրեմն նրա անձնուրացությունը պիտի մերժեմ։ Այս մորալը միակողմանի է. մեկը պիտի զոհվի մյուսի համար, փոխադարձ զոհվել չկա, գոյություն չունի. մեկը ինձ տեղ է տալիս և ինքը մնում դուրսը ու սառում. նա զոհվեց ինձ համար, իսկ եթե ես էլ ինքը մնում դուրսը ու սառում։ Նա զոհվեց ինձ համար, իսկ եթե ես էլ անձնուրաց լինեի, պիտի մերժեի նրա զոհաբերությունը, և ես սառեի։ Ոչ, այս մորալը միակողմանի է և հակասող. մյուսից պահանջում են հերոսություն ի շահ մերձավորի, իսկ մերձավորը միայն վայելում է, նրա համար չէ Քրիստոսի մորալը. ուրեմն Քրիստոսի մորալը հերոսների մորալն է, քաղցածների, զրկվածների մորալը. մերձավորը գոհվում է անձնուրացությունը, որովհետև ինքը օգուտ ունի նրանից. ինչո՞ւ ինքը չի զոհվում. բայց ես չեմ ընդունի. ես ուզում եմ, որ ես զոհվեմ նրա համար. մի մասը զոհվի մյուսի համար...

Մայիսի 9

Այսօր մայիսի 9-ին տեսա Fr. Nietzsche-ի՝ խելագար դրության մեջ նկարված պատկերը... Օ՜, սիրտս ճմլվում, պատռվել է ուզում. ի՜նչ սոսկալի դեմք — ապուշ, հիմար, հիվանդ. սարսափելի՜ է. սիրտս կտորկտոր է լինում. ա՜խ, մի՞թե մի հանճար այդ աստիճան կընկնի... Ա՜խ, Նիցշե, ա՜խ... Մինչև անգամ անատոմիական փոփոխությունների է ենթարկվել թշվառ հանճարը։ Այն մեծ ճակատը նեղցել, փոքրացել, տա-

փակացել. քներակները փոս ընկել. աչքերը՝ տխուր և անմիտ... Ինքը նիհար ու խեղճ, ողորմելի... Սրտաշարժ տեսարան... Ամբողջ տպավորությունը այնքան ճնշիչ է, այնքան սրտաշարժ... Նրա դեմքից մարդ միայն մի բան է նկատում — անկումն, խեղճություն, թուլություն, անզորություն, ոչնչություն, պարտություն, խոնարհումն... Ա՜խ, ի՞նչ է դառել այն արծիվը, առյուծը, Übermensch... Ա՜խ, ա՜խ, աշխա՜րհ...

Մայիսի 14

Եթե արև կա, ստվեր էլ կա. որքան էլ կյանքը պայծառ ու մաքուր լինի, էլի նրա հետևից ստվերը միշտ պիտի քաշ գա. միայն կեսօրին, ճաշին ստվերը մրափում է մեր ոտքերի տակ, բայց նա չի մեռնում...

Իսկ ի՞նչ է ստվերը — կյանքի ստվերն է, սև — վերքն է, <...> մահը, ոչնչությունը, անցավոր — ախտավորությունը, սնահաս տրտփանքը, այդ անճոռնի կատաղությունը, <...>, լափելն ու զկուտալը — այս բոլորը մեր ստվերն են, մեր հոգու արևի ստվերը... Բայց ի՞նչ առանց ստվերի արև չկա, և առանց արևի՝ ստվեր։ Լույսը միշտ խավարի հետ է և խավար է ծնում, միայն խավարը չի կարող լույս ծնել։ Եվ ահա՜ — միայն գիշերը ստվեր չունի, ինքը ստվեր է և գիշեր — մարդի՝ ողջ մութ, մռայլ ստվերներ են։

Սեպտեմբերի 25

Մի կողմ թողած բնությունը, որը խորհրդավոր է, միայն այս կարող եմ ասել, որ կյանքը և մարդը շա՜տ ողբալի են։ Պատճառները բնական և կուլտուր-պատմական են։ Բնական պատճառները, որպես ողբալի և զզվելի, ես համարում եմ մահը, ոչնչությունը <...> և գոյության կռվի օրենքը, որոնց հիման վրա մարդկությունը ապրում է բուսական, ֆիզիոլոգիկ — բնազդական...

Ես զզվում եմ այսպիսի կյանքից։

Կուլտուր-պատմական ողբալի ու զզվելի պատճառները՝ մարդկանց հիմարությունն է, տնտեսական անհավասարությունը, մարդկանց գազանություններն ու լաբությունները, բարու անկումը, չարի հաղթանակը, այժմյան քաղաքական սարքն ու կարգը, միլիտարիզմ, ցենզուրա, բուրժուա, բյուրոկրատիա <1 անընթ.> և դրամական ուժի արիստոկրատիան և կապիտալիզմը։

Այս բոլորը մարդկային կյանքը փչացնում են ու բովանդակությունից զրկում։ Այժմյան լավ մարդկանց ձգտումը պիտի լինի վերջ տալ պետություններին ու օրենքներին, կապիտալիզմին ու սրված ինդուստրիայի ու տեխնիկայի աճմանը։ Վերջ տալ կղերն ու եկեղեցին։

Եվ ես մարդկության հետ տառապում եմ այժմյան վատ պայմաններում — ես ազատվել եմ ուզում — ազա՜տ, ազա՜տ...

Ես ուզում եմ տնտեսական նիվիռ և հոգու արիստոկրատիա ու դեֆինացիա... Ես ուզում եմ ասկետիկ ու պուրիտանիկ կյանք — լինել ասկետ և հենի, ողջախոհ, մտածող, երգող ու քրտնող. լինի մասսա՝ մտածող ու աշխատող, քրտնող ու երգող...

Լինի կյանք՝ լիքը վիթխարի գործերով։ Փոխել կյանքը և նրան վերածել մաքուր ու խորը մասսայի և մաքուր ու խորը հենի — հերոսների — սա է իմ խորը համոզմունքը և իդեալը...

Ես ուզում եմ ուսում առնել ու լինել բարձր... Մարդիկ, կարգերն ու օրենքները չեն թողնում... Ես կատաղում եմ... Ես ուզում եմ զարգանալ, որ կյանքը հեղափոխեմ. ես այժմ ուզում եմ կռվել, որ էլի հեղափոխեմ...

Մեր դարու նպատակը հեղափոխությունն է — արմատական ու հիմքով...

Եվ ես ուզում եմ հեղափոխ<ող> ուժ լինել։ Այս ճամփեն երկուս է. մեկը ներքևով՝ երկրի վրայով, մյուսը վերևով՝ երկնքի միջով։ Ես ուզում էի և մինչև վերջն էլ կցանկամ վերևի — երկնքի ճամփով գնալ, հեղափոխել կյանքը...

Այս ճամփեն շատ դժվար է — պետք է լինել հենի՝ մտածող ու ստեղծող, պետք է լինել գիտնական փիլիսոփա ու բանաստեղծ... Շա՜տ դժվար է... Չեն թողնում, և երևի մեջս էլ ուժ չկա... Ես ուզում եմ հենի լինել — մարդկության նրակը, մարմնացումը լավ իդեալների, որոնց մարդկությունը տածում է... Գուցե ես ունեմ հենիի սաղմը, բայց միջոց չկա — ազատ երկիր ու փող...

Ես սիրում եմ կյանքը, երգը և գիտությունը — թո՜ղ ես մեռնեմ, բայց մարդկությունը ապագայում լինի բա՜րձր, վե՜հ, ազնի՜վ ու խո՜ր...

Ես վճռել եմ լինել աղգային-հեղափոխական, փշրել տաճկի՝ այսպիսով և բոլոր տերերի և պարազիտների շղթաներն ու լուծերը, որ մտածող մարդկանց և տանջվող մասսայի վրա են դրված...

Ես կգնամ ներքևի ճամփով, բայց եթե հարկը գա, եթե ես զգամ իմ մեջ հենի — ես կթողնեմ ներքևի ճամփեն, կթողնեմ հոգու դեմոկրատներին և կթռնեմ վերևի ճամփեն ու կլինեմ հոգու արիստոկրատ... Վեհի թևերով կթռչեմ իդեալին և երկնքի շանթերով կփշրեմ բռնության

շղթաները... Կաշխատեմ լինել Բուդդա, Մովսես, Զրադաշտ, Քրիստոս, Մահմեդ և Նիցշե, իսկ եթե չկարողացա այդ լինել, կլինեմ բուդդիստ, մովսեսական, զրադաշտական, քրիստոնյա, մահմեդական և նիցշեական... Կմտնեմ գործելու, կտանջվեմ ժողովրդի մեջ, նրա հետ, նրա ցավով, լացով ու վշտով։ Օ՜, եթե կարողացա, վերջը կշաչեմ ժողովրդի վրայով — արևի ու ամպի նման...

Այժմ կգնամ ժողովրդի մեջով, հետո ժողովրդի վրայով à la Nietzsche. Այսպես — ես կմտնեմ հայ ժողովրդի մեջ, մարդկային մեծ գաղափարներով տոգորված... եկավեմ, կմեռնեմ...

Կեցցե՛ գործը, ուր կա խորը կյանք, իդեա ու զգացմունքներ...

Կեցցե՛ հայն ու մարդկությունը։

Կեցցե՛ Հայաստանն ու տիեզերքը...

Դե՛հ, մնաս բարև, առայժմ, գիտություն, սիրելի մարդարեներ ու փիլիսոփաներ, մնաս բարև, մայրիկ, հայրիկիս շիրիմ, Շուշիկ, եղբայրներ, քույրեր, հարսներ, ազգականներ ու բարեկամներ... Ես սլանում եմ ընկերներիս հետ գործի ու կռվի գաշտը։ Ես ձեզ բոլորիդ սիրում եմ...

Ինձ մի՛ մոռացեք<...>

1896

Հունվարի 29, Ալեքսանդրապոլ

Ես թափառում եմ... ամեն տեղ թափառում եմ. իմ նպատակը — իմ մեջն է. ես եմ իմ նպատակը, և իմ նպատակը հասկանալն է՝ մտքով ու զգացմունքով. ես թափառում եմ բուք ու բորանի միջով, ծովի վրայով, անտառի, անապատի, լեռների միջով — թափառում եմ, որ լսեմ բնությունը։ Ես խորն եմ ու լուռ. բնությունը գաղտնալից է, խորհրդավոր, ու դրա համար էլ՝ լուռ... Եվ ինչ-որ գաղտնիքներով լի է՝ — լուռ է ու խորհրդավոր... Եվ խորն ու խորհրդավորը լեզու չունի, որ խոսե, պատմե, նրա լեզուն լռությունն է, որ մեզ անհասկանալի է։ Ամ մարդիկ, ե՛ս եմ հասկանում լռությունը, որ տիեզերքի լեզուն է։ Տիեզերքի լեզուն թոթով երգում է, և այդ երգը, այդ վեհ լռությունը, որ ես թափառում եմ ու լսում, հոգումս տարած<վ>ում է և ես իմ խորքից ողջ հասկանում եմ այդ լեզուն — լռությունը և այդ լռություն-լեզուն հոգումս ճառագայթների պես ցրվելով՝ գառնում է մի մեծ, մի խորը,

մի բարձր ու ցածր, անուշ ու քնքուշ, ահռելի ու սոսկալի երգ... Այդ իմ երգն է, այդ ես եմ, այդ հենին է...

Եվ դուք չե՞ք լսում տիեզերքի լեզուն — լռությունը, որ իմ հոգումս ամենի երգ դարձավ...

Մայիս

Առաջին և վերջին գործս պիտի լինի շա՜տ լավ ուսումնասիրել մեր հեղափոխությունը, հայոց պատմությունը, գրականությունը, ժողովրդին. պիտի դուրս գամ ազգային բանաստեղծ, արտահայտիչ էպոխայի, մարգարե, առաքյալ...

Շա՜տ և շա՜տ մոտ զգալ հայկական հարցը, դատը...

Ի՜ն աշխարհ, խորհրդավոր աշխարհ, մթնոտ ու պայծառ աշխարհ, հրաշալի և սքանչելի աշխարհ... խորը և անբննելի աշխարհի <մարդիկ>։ Դուք մեզ պես թույլ, վախկոտ, տոփոտ, քնքուշ չէիք. դուք քա՛ջ էիք, ամո՛ւր, ահե՛ղ, հսկա՛. երկիրը ձեր ոտքերի տակ դողում էր, իսկ երկինքը ձեր գլխի վրա պսակի պես շողում... Զարթնեցե՛ք դուք ձեր գերեզմաններից, թո՛ղ ձեր ուժը փռվի մեր վրա, ձեր խորհրդավորությունն ու ձգտումները, ձեր կրակն ու բոցը թո՛ղ մեզ տքրե, տաքացնե...

Ի՜ն աշխարհ, փարթամ, հսկա, ահռելի աշխարհ...

<Գառուն>

Անապատ է մեր կյանքը՝ չոր, շոգ, տոթ. այրում է մեզ արևը և մենք տոչորվում ենք, ու մեր աչքերը հառում ենք հեռուն՝ երկինք. երկնքում տեսնում ենք մի չքնաղ, մի դալար երկիր, ժպիտ ու երգ — միրաժ, և մենք կյանք-անապատում շարունակ միրաժներ ենք տեսնում, զժգոհանում ենք մեր կյանք-անապատից և ըղձում ենք այդ միրաժներին և ձգտում ենք... Բայց, ավա՜ղ, սա պատրանք է, և պոեզիան, փայլը, երգը, խելագարությունը՝ միրաժ-պատրանք են բարձրում, երկնում, երբ մենք անապատում ենք թափառում, ապրում...

... Ողջ բնությունը ծովի լեզվով խոսում է ինձ հետ, երգում է ինձ համար, խորհում է իմ առաջ, իմ մեջ խոսում, երգում, խորհում է տիեզերքը...

Երկնքից հոսում էին երգեր՝ անուշ ու խորհրդավոր — նրանք լուսնի շողերից նուրբ թելիկներ առած, որպես բերի բանի ալյունքներ և վերջի ոչյան կաթիլներ՝ ծորում էին և հալվում սրտիս մեջ — բաց էր իմ սիրտը և այն բացել էի մեծ ծովի առաջ։

Ծովը եռում էր — սիրտս եռում էր։

Ծովը սրտումս եռում էր։

Ծովը շաչում էր, փրփրում էր, լալիս։

Ծովը պարում էր — ծովը սրտումս էր շաչում, փրփրում, պարում, լալիս...

Երկնից հոսող երգերը փշրում էին սիրտս, և ես տխրում էի ու արբենում... Շա՜տ մոն եկա, ա՜խ, շա՜տ թափառելի երկրի մեջ, և գոս սիրելիներիս շիրիմները անհայտ վայրում, ավազի ու փոշու մեջ թաղված... Նրանց սրտերը դեռ իմ սրտումս բախում են, և նրանց շիրիմները իմ սրտումս են... Շա՜տ լացելի նրանց վրա և շա՜տ սիրելի երկիրը... Սիրում եմ երկիրը — որքա՜ն անդին ու վեհ սրտեր են թաղվել նրա մեջ և փոշիացել...

Որքա՜ն տիեզերալափ սրտեր մի ափ փոշի են դարձել և շնչվել տիեզերքի մեջ... Բայց ես սիրում եմ երկիրը և տենչում, կարոտում եմ երկնին, և ես շա՜տ սիրեցի և շա՜տ մտածեցի, շա՜տ տանջվեցի ու թափառեցի... Դարեր, դարեր — ապրեցի...

Օ՛, ես շա՜տ եմ սիրում ծովը, բայց ավելի՜ շատ՝ ծով-սիրտը...

Ի՞նչ է առանց սրտի մարդը՝ երկինքն առանց աստղ-արևի՝ մո՜փ ցո՜ւրտ, սև՜...

Մենակ, ամայի դաշտում ընկած է քու շիրիմը, իմ ընկեր. անքարանխաչ. վայրի բաթաթն է դրկել քեզ — սիրտս է դրկել քեզ, սիրտս է դրկել քեզ...

Մեծ է իմ սիրտը, և մեծ, ահեղ ծովը իմ սրտի մի խորշում կեռ ու կծփա, բայց ես պիտի մեռնեմ և մի կաթիլ լինեմ ծովում։

Ես ամենամեծերից մեծն եմ, ամենափոքրերից փոքրը — տիեզերք եմ և կաթիլ...

1897

Մայիսի 1

Ես ինչ որ ասում եմ, երգում եմ — այն սրտիս ծովի, մրրկահույզ ծովի մի ալիքն է միայն, ընդարձակ դաշտակների մի հնչյունը, մի թույլ արձագանքը։ Ինչ որ արտահայտում եմ — դա իմ էության — սրտի ստվերն է — դալուկ ու թալուկ։

Արևեն խարկ ճակատով, մտքերեն բարկ ճակատով ես թափառում էի՝ կաղնի ցուպը ձեռիս։

Մայիսի 29

Իմ բանտարկության պատճառով մայրս մի ամբողջ տարի — դա՜ր — հսկայական դժոխային տանջանքներ է անցրել։ Խե՜ղճ կին — նիհարել, կուզը դուրս եկել, բոլորովին ծերացել... Է՜հ, մոր սիրտ, ամենաբարձր սրբություն ես...

Մայրս ինձ համար նահատակված կին է. շա՜տ սուրբ սեր ունի դեպի ինձ — այսպիսի սիրող սիրտ դեպի ինձ՝ ողջ տիեզերքի մեջ, գիտեմ, որ նա է մենակ...

Հունիսի 5

Պոլսեցի ճեմարանավարտ Արտաշես Տեր-Անդրեասյանն էլ է արժանացել «արնոտ պսակին» օգոստոսի 14-ին...

Անմա՜հ մնա անունդ, ո՜վ համեստ և բարի երիտասարդ... Հենց հիմա էլ հիշում եմ քու մաքուր, ջինջ և ժպտուն աչերդ, լայն ու խաղաղ ճակատդ և սիրուն, երկար մորուքդ...

Իսկ հանգիստ, անդորր ձա՜յնդ... խելոք հայա՜ցքդ... Հիշո՜ւմ ես կարոտում... 1890 թ., ի՜նչ ողորմած էիր դեպի աղքատները...

Ա՜խ, երանի՜, թե ձեզ պես ազնիվ հոգիների մահը կորուստ չլինի...

Հունիսի 9

Զեյթունցի, ճեմարանի Զ-ը ավարտած Ռուբեն Խոջա-Ավագյանը, որը մի տարի ինձ դասընկեր է <եղել>, 1895 թվին Մուշում ձերբակալվեց, իսկ 1896 թվի աշնանը բանտում ծանր տանջանքներ ու չարչարանքներ կրելուց հետո, մեռել է...

Դո՛ւ էլ, ընկե՛ր իմ, արժանացար «արնոտ պսակին»... Ի՜նչ պիտի լինի այս ազնիվ զոհերի վերջը — չեմ հասկանում... Ինչքա՜ն ուրախ, պարզ, լավ տղա էր — միշտ ժպտում էր, անմեղ չարությունները էր անում... Է՜հ, հանգիստ քեզ, ո՜վ սիրելի ընկեր...

Հունիսի 28

Միակ հավատարիմ սիրտը — մոր սիրտն է... Ես շա՜տ եմ տանջվեր, և այս խորն զգում եմ... Է՜հ, ընկերնե՜ր — անցնում են տարիներ՝

նրանց ոտն ու հոտը կտրում է. իսկ շուրջդ մարդիկ հրկար չեն աշում. ուզում ես տրաքիր, հանճար-բանձեր եղիր, ուժ ունես՝ ապրիր, չես կարող՝ մեռիր...

Իրենց մի կոպեկի համար քեզ ջնջում են. իսկ քեզ մինչև տանջել— այդ որ նրանց բարեհաճություններ է դեպի քեզ։

Անտարբերությո՛ւն։— ահա՛ մարդու բնությունը... Վա՜խ, մեռնում են մայրերը, մոտիկները — հեռանում են... Է՜հ, դու էլ ա՛ռ ցատդ, ընկի՛ր երկրի լենքն ու երկենքը... Որտեղ կորի կապը... Մեռի՛ր, բաղվի՛ր մի ժայռի տակ. քո՛ղ մարդիկ վրեդ չհայեն անգամ. ո՛չ ոք քեզ չէր հասկանում, բոլորն քեզ ատում էին, անտարբեր էին... Անառուն, տեքուն իմ ընկե՛ր. ե՛կ իմ կրծքին...

Օ՜հ, օ՜յ, օ՜յ, օ՜յ...

Բաժանվի՛ր մորդ շիրմից և մանկության վայրերից... Ցուպն ու մախաղն ա՛ռ, ընկի՛ր աշխարհքի ծոցը... Ծղի՛ր լուռ, գալանի, խորհրդավոր, հպարտ, ամուր, մաքուր... Քո՛ղ ալիքները քեզ տանեն, ուր կուզեն... Թո՛ղ տանեն... Լսի՛ր բնության երգերը, և տե՛ս նրա հրաշքները և տե՛ս մարդը մարդու հետ ի՞նչ է անում... Լսի՛ր երգեր, լո՛ւռ լայ, լո՛ւռ տանջվիր ու լո՛ւռ երգիր... Մ՚չ ոք քեզ չի հասկանա — դու մենակ ես ծնվել, մենակ ես ապրում, մենակ էլ պիտի մնաս... Եվ ո՛չ ոք քեզ վրա չպիտի լա... Եվ դու հենց հիմա մոռացված ես...

Գնա՛, թափառի՛ր, գնա՛ մտամոլոր ու մտատանջ. ո՛չ մի բանի հետ մի՛ կապվիր. օրենք, կարգ, սարք մի՛ ընդունիր, պարտք մի՛ ունեցիր, ո՛չ մի կապ — ազա՛տ, ազա՛տ...

Հուլիսի 15

Ամսու 7-ին Շուշիկը ինքը իր կամքով բացատրեց տարիներ առաջ իր վարմունքը իմ սիրո նկատմամբ. նա իրեն արդարացնում էր, ասելով, որ ինքը ուրիշին էր սիրում, իսկ ինձ, իբրև լավ ուղղի, միայն համակրում էր. հետո Քն՝ վրաս շա՜տ էր կարեկցում, բայց անզոր էր. ինքը մեղավոր չէր, փոքր աղջիկ էր... Է՜հ, սրտամաշուկ բաներ... Հիմա պիտի գնամ մոտը և ասեմ.— «Լավ, ասա՛ ինձ քու միտքը. ո՞ւր են իմ նամակները. հիմա ինձ ինչպե՞ս ես վերաբերվում. ինչո՞ւ ատանցիր ամեն բան պարզիր, ես ուզում եմ վարվել՝ ինչպես վայել է մարդուն— ազնիվ մարդուն։ Եվ եթե նա արտահայտվեց այնպես, ինչպես պետք է, ես կամ կպահպանեմ իմ բարեկամական կապը, կամ հավիտյան կխզեմ...

Սեպտեմբերի 12

Այսօր Շուշիկը գնաց, խոստացավ Թիֆլիսից նամակ գրել։ Նա արտանց մամ է ինձ նամակ գրելու, բայց ասում է, որ ամուսինը դժվար թե համաձայնի։

Ինձ համար այժմ ամեն բան պարզ է. Շուշիկը ինձ սիրում է. ինձ պատրաստ էր ո՛չ թե միայն համբույր տալ, այլև<...> իմ ետևից գալու։ Ես այժմ շվարած եմ. այս խմորը երևի շա՜տ ջուր կվերցնի։ Բայց փող չունեմ, և ծգտումներս ուրիշ են...

Հոկտեմբերի 26

Կյանքում շա՜տ բաներ եմ զգացել. շա՜տ եմ տանջվել ու հրճվել. օրինակ. սերս մի հսկա վեպ է, դրամա է. արտասահմանի քաղցած կյանքս. բանտի սոսկալի կյանքս մի-մի տրագեդիաներ են... Բայց այս բոլոր զգացմունքներից ես հազիվ մի հազարերորդ մասը կարողացել եմ գրել, աշխարհին հայտնի անել։ Նույնիսկ ես մոռացել եմ հին կյանքս, և չեմ հիշում, թե ի՞նչ սոսկալի օրեր ու ժամեր եմ անցրել...

Նոյեմբերի 11

Պլատոնական սերը շա՜տ մաքուր, բարձր և անուշ զգացմունք է. նա երկնային է, հզոր, բարոյական, կրթիչ և աստվածացուցիչ. զո՜ւտ մուզիկական և միստիկական սեր է այդ<...>

Երանի լիներ միայն մաքո՜ւր սեր, պլատոնական, երկակայական-իդեալական... Դրա պես սուրբ և չքնաղ զգացմունք էլ մարդը չունի։

Նոյեմբեր

Մաքո՜ւր, մաքո՜ւր — լինել մաքո՜ւր, լեռների բարձր գագաթների պես, ինչպես բյուրեղը գետնի խորքում, ինչպես կռունկի մաքուր աչքը...

Բանտում եղած միջոցիս ուզում էի մի ազատ օդ շնչեմ. ընկնեմ անտառի խորքերը, քնեմ շվաքի տակ, խմեմ պաղ ջրերը, համբուրեմ բոլոր թփերն ու թիթեռները...

Բանտում, երբ հիշում էի մորս — սիրտս լցվում էր, քրտինքը տալիս էր մեջքս. սրտնեղում էի, և շա՜տ կարեկցում նրան... Երբ հիշում էի լավ ընկերներին — էլի նույնն էի զգում...

Երբ հիշում էի անցյալ լավ օրերս՝ սիրտս կսկծում էր, կարծես վերք

կար մեջը. բոնտում — դուրսը հաշտարարական ցանկալի էր. երկինքը իսկական երկնքից գրավիչ, աչքը — փափագելի. ծաղիկները — խորհրդավոր, գեղեցիկ... Այնտեղ ես միշտ ծարավ էի լույսի, ջրի, օդի, հովի...

Բանտում ուզում էի լինել թափառական և միայն աղա՜տ երկրում, աղատ թափառել։

<Գեղտեմքեր>

Ես քեզ սիրում եմ, և այս սերս ինչպես մի աղոթք՝ դեպի քեզ եմ առաքում, և իմ սերս ոչ մի ցանկություն չունի. ես չեմ ուզում քեզ համբուրել, քեզ գրկել, քեզ տիրել. ես ուզում եմ, որ դուն աստղի պես շողաս երկնքում և որպես ցնորք թափառես իմ հոգու վիրեւ։ Դու աստղի պես շողաս իմ հոգում և ինձ լույս տաս և ամեն մարդիկ թո՛ղ տեսնեն այդ աստղը և զմայլեն, բայց իմ հոգում միայն շողաս...

Դու լինես բարձր ցնորք, որին ձգտեմ իմ հոգին՝ առանց հասնելու լինի անեղը այն վայրը, ուր դու կլինես... Բայց որ հասա, դու այլևս ցնորք չես, դու իմս ես, և իմ նինն ու տիկինը<...>

Օրիորդը նման է գարնան ծիրանաշողը թևերով թիթեռին. նրան հանդիպում է պատանին, սիրում է այդ գեղեցիկ թևերով չքնաղ թիթեռին, և վազում է հետևից՝ նրան բռնելու. երկար շարաբանքից հետո, բռնում է և սեղմում կրծքին. հետո նայում է, որ թևերը այլևս չունեն ծիածանի շողքերը. մերկ են ու դժգույն, և պատանին հիասթափված ցողնում է թիթեռին. բայց դեռ իր <մատներին> է այն գեղեցիկ ծիածանաշող թևերի փոշին, որը միշտ հիշում է և թախծում...

Դու, նաղելիս, նման ես երկնքից երկիր իջնող ձյան մաքուր, սպիտակ բյուրեղին, բայց, ա՜խ, երկրում մարդիկ քեզ ոտաց տակ կտրուրն, և դու կլինես ցեխ ու աղտ՝ մարդկանց ոտքերի տակ։

Օտար երկրներ շատ թափառելուց հետո, ես վերադարձա հայրենիք — շա՜տ էի կարոտել հայրենիքս. ահա հեռվից տեսնում եմ հայրենիքիս սահմանները... Օ՜, որքան սիրելի է հայրենիքը. քա՜ղցր ս թանկագին, որպես մորս դեմքը. նրա ամեն մի լեռն ու գետը հարազատ են իմ սրտիս, ինչպես մորս անուշ դեմքի սիրելի գծերը... Այն լճերը մորս աչքերի պես խորն են ու գորովալից...

Օ՜, հայրենիքի հուլիսի մայր-երկինք, իմ հոգու հարազա՜տ, ամենահարազա՜տ վայրեր, ողջո՜ւյն ձեզ, բյուր հազար ողջույն...

1898

Հունվարի 23

... Լռում է իմ սիրային լիրիկան. իմ պոեզիան կորցրեց յուր այս մասը. այդպիսով կորան և՛ իմ ժողովրդական մոտիվները։ Էլ ի՞նչ գրեմ նույն մոտիվները։ Վեհ զգացմունքներ կամ դաղափարներ — այդպես, այդ ոճով չէ կարելի գրել և արծանի էլ չէ. ավելի բարձր, արիստոկրատ ոճ է պետք։ Ուրեմն իմ ժողովրդական ոճը պետք կգա օբյեկտիվ գրությունների համար, երբեմն էլ այնպիսի զեղումների, որոնք պատանեկան ոգի ունեն...

Իքնուրույն լինելու համար պիտի ինքուրույն պոեզիա ստեղծել, ինքնուրույն մոտիվներ, ոճ, չափ, ձև — ահա՜ գլխավոր խնդիրը։

Այս հարցի մասին ես դեռ շա՜տ պիտի մտածեմ։ Բայց առայժմ այսքանս կարտահայտեմ։— Ես ապրում եմ, ինչպես մարդը երկրում, ունեմ երկրի զգացմունքներից և ձգտում եմ միստիկայի ու մետաֆիզիկականի։

Ես կապված եմ բնության հետ, ես նրա արդյունքն եմ. Նա իմ վրա խորին ազդեցություն ունի, և ես նրան ուզում եմ հասկանալ, զգալ, ըմբռնել — հե՛նց այս արտահայտել պոեզիայի մեջ սեփական ձևերով՝ մարդու ինքնուրույնություն է տալիս... Հե՛նց այդ ունի իր վիշտն ու հաճույքը — որը է և պոեզիա...

1899

Օգոստոս, Ալեքսանդրապոլ

Երբ ամայի, անբնակ, անմարդ, շոր բնության մեջ եմ դուրս գալիս, երբ լռին եմ ելնում, հենց կեսօրին, շոգին — մի տեսակ ձայն եմ լսում, կարծես բնությունը զնկում է — դը՛նկ-դը՛նկ։ Շարունակ «դընկ-դընկ» ձայներ եմ լսում. երբեմն ասում եմ, որ ականջս է ձայնում, բայց ախր ինչո՞ւ։ Ուրիշ էլ ի՞նչ պատճառ կարող է լինել այս ձայնին։ Ջերս դին լուռ, անտուտ չկա, ծով չկա, հրաբուխ չկա, գետ չկա, բայց դընկ-դընկոց կա... Այս նկատել է և Ն. Աղբալյանը, ես ասում եմ, և ասել եմ միշտ, որ տիեզերքը մի մեծ զանգ է, զողանջում է. բնությունը զանգ է, որ զողանջում է բնության խոր, լայն երգերը... Մարդն էլ է զանգ, մարդն էլ է ոգի-զանգ. կամ մարդն է այդ տիեզերական զանգի լեզուն... Վերջապես Տիեզերական զանգ կա, ոգի-զանգ կա...

Գեռք է հասկանալ. կա՛ և՛ քարե-զանգ, ամբոխ-զանգ։

Ամեն բան թողնի կյանքում. ամեն բան կորցրեցի կյանքում. մնացի մենակ, Ոգի Հիմա ընկնում երկրի երեսն ու թափառում... Ահա՛ բնությունը՝ մեծ զանգը, Տիեզերական մեծ, վեհ զանգը...

Ես ապրում եմ այդ Տիեզերք-զանգի համար, կամ այդ Ջանգ-տիեզերքի համար։ Ես չեմ տեսնում այդ անհուն, ամենը զանգը, բայց լսում եմ նրա խորին, լռին ցավախորհուրդ, վեհ, վսեմ զողանջները... Այդ զողանջները տիեզերքի լռության, վեհ լռության երգերն են...

Ում հոգում որ հնչե այդ զողանջը, ով որ լսե այդ զողանջները՝ նա բանաստեղծ է, նա մարգարե է, նա իմաստուն է...

Ասիան, Արևելքը, որ հեռու է եվրոպական կոմֆորտից, որը խլում է մարդու ամբողջ ժամանակը,— այնտեղ մարդը, անհատը դեռ է իր ուղքաս ապրումներից, բայց և մտածում է շա՜տ բարձր բաների, հարցերի վերա։ Արևելքը պոեզիայի և իդեալիզմի աշխարհն է...

Հոկտեմբեր, Թաֆա

Իմ գնդեղմանը Արազի ափին լինի, Արարատի դաշտում, որ հովերը Մասիսից ու Արագածից իրար դեմ-դեմի գան, գրկախառնվեն ու շիրմիս վերա փռվեն...

Եվ Արազի ցողը զովացնե իմ շիրմիս վերայի դալարը և արևը այրե իմ քարե և հավքերի թևքը շիրմիս և խորասույզ լսեմ տիեզերքի զանգի հոլանավոր, փառավոր, խորախորհուրդ զողանջները...

1900

Սեպտեմբեր

Երբ ես շա՜տ տանջվեցա կյանքում, սիրտս կարոտի, սիրտ, բացասականության մեջ հալ ու մաղ եղավ, երբ բանտերում փթա, մեռա, երբ հիմա մեռած, անկյանք քաշ եմ գալիս՝ տեսնում եմ, որ սխալ ճամփեքով էի գնում ես. ես ինքս ինձ մեռցնում էի. այնքան ուժ կար մեջս — սեր, ցնորքներ, ֆանտազիա, կիրք, ոգի... Բոլորը ես մեռցրի՝ ստեղծելով կյանքի հետ թշնամություն, ատելություն։ Ես ջուր տեղը պեսիմիզմի, սկեպտիցիզմի, մելանխոլիայի մեջ էի ինձ սուզում, դուր ասկետ տանջվող, միստիկ-մետաֆիզիկ, քարոյական էի ուզում ինձ ստեղծել—

այդ բոլորը որդերի պես կյանքիս արմատը կրծեցին... ճղակոտոր վայ ընկա...

Անե՛ծք այն մարդկանց, որոնք պեսիմիզմ, սկեպտիցիզմ, մետաֆիզիկա են քարոզում և մեռցնում են մարդու մարմինն ու հոգին... Մարմին, մարմին՝ դո՛ւ ես հոգու աղբյուրը, մայրը. ամենից առաջ քեզ պիտի հարգել, պատվել, պաշտել... Պետք է մարդ կենսուրախ լինի, սիրե կյանքը, երկիրը, մարդկությունը։

Ո՞վ է ասում, թե երկիրը չնչին բան է, մարդկությունը՝ նույնպես չնչին. ո՛չ, հազար անգամ ո՛չ։— Երկրագունդը թեև տարածության մեջ մի հյուլե է, բայց նա գեղեցիկ է, վեհ, խորհրդավոր, իսկ մարդկությո՛ւնը. նա թեև թշվառ է, անբախտ, դատապարտված է մահվան, ամեն մի բոպե նրա կյանքը վտանգի մեջ է, բայց նա է բնության, տիեզերքի փառքը, միտքը, իմաստը, հոգին, լեզուն, սիրտը, զգացմունքը, երգը, վիշտը, ուղեղը, զանգը, հոգին. նա՛ է Տիեզերական զանգի լեզուն։

Թեև բոլոր բնությունը, թունավոր բույսերը, կենդանիները, քամիները, շոգերը, ցրտերը մարդու թշնամիներն են, բայց մարդը ապրում է էլի, որովհետև իր կյանքով նա պիտի լուծե տիեզերքի գաղտնիքները. նա՛ է տիեզերքի խորհուրդը, գիտակցական-հոգեկան, ինտելեկտուալ կյանքը. առանց մարդու տիեզերքը կմնար լուռ, անհասկացված, անբացատրելի, խրթին...

Ո՛չ, արժե ապրել, հետաքրքիր է ապրել, պետք է ապրել — ամբոխը պետք է ապրի, որ հանճար ծնի, իսկ հանճարը տիեզերքի մեջ հոգեկան տիեզերքն է. նույն տիեզերքն է՝ հոգի, ոգի դարձած. տիեզերքի և ամբոխի՝ այդ երկու կյանքերի նպատակն է հանճարը։ Հանճարը հրեղեն մարդ է (Նիցշեի Übermench-ը)*, հերոս է. հերոսը հրեղեն մարդ է։

Աստղ, արև, երկիր — բոլորը մահկանացու են. ուրեմն բոլորի կյանքն էլ երազ է, մարդու կյանքը. մարդը այդ երազների մեջ ամենախորը և ամենաչքնաղ երազն է. ուրեմն եթե երազ է — թո՛ղ ամենավեհ, ամենավսեմ երազով ապրենք.— լինենք հրեղեն մարդիկ, հրեղեն աղջիկներ սիրենք, հրեղեն երգեր երգենք, հրեղեն խոսքեր ասենք և հրեղեն գործեր կատարենք...

Ես տանջվեցի և մաշվա՝ հիմա հասկանում եմ կյանքի արժեքը (Der Wert des Lebens).** ուրեմն ապրել, լիքը, խորը, բուռն ապրել, ակոսելով անցնել պատմության միջով, ամբոխների միջով...

Ի մի եզրակացնեմ մի քանի մտքեր։

---

* Գերմարդ (գերմ.)։

** Կյանքի գինը (գերմ.)։

Ամբոխը արգանդ է՝ նա է ծնում մեծ մարդիկ. (Obermensch) հրեղեն մարդիկ են (հայկական ձևով)։ Պետք է ունենալ հրեղեն կյանք— գեղեցիկ երազ, կյանք, գործել հրեղեն գործեր...

Երկու դաս հրեղեն մարդիկ.— փիլիսոփաներ և հերոսներ. հրեղեն խոսողներ, երգողներ, խորհողներ և հրեղեն կամքներ, գործողներ։ Հրեղեն խոսողները — խորհողները երբ որ գնան խորհելու, տիեզերքի հետ խոսելու, զանգի զողանջներ լսելու, նրանք կհեռանան ամբոխից և ընկերներից՝ մռայլ և մենակ, խոլոր ու խոժոռ, ոլոր-մոլոր թափառելով երկրի վրայով, կմտնեն անապատը — լռության նվիրական վայրերը՝ զանգը լսելու, տիեզերքի հետ խոսակցելու. նրանք այդտեղ առանձին, մեկուսի կխորհեն՝ ամբողջապես ուղեղ, հոգի, գլուխ դարձած, լսելով տիեզերքի զողանջները, նորից կվերադառնան անապատը, ամբոխի մեջ քարոզելու նոր զողանջներ — պատգամներ, կտակներ, մտքեր, վարդապետություններ։ Ամուսնությունը այնքան անհրաժեշտ բան չէ այդ տեսակի մարդկանց համար. նրանք ավելի ընդունակ են մտքեր, գաղափարներ սերելու, քան որդիներ։

Իսկ հերոսները, հրեղեն գործողները՝ նրանք հրեղեն ընկերների հետ, հրեղեն ձիերի վրա նստած կռիվ կերթան վիշապների, դևերի դեմ — սուլթանների, ցարերի, իշխանների ու բուրժուաների դեմ և կհաղթեն հօգուտ ամբոխի՝ արգանդի, և հետ կդառնան, մեծ քեֆ կանեն, հրեղեն աղջիկների, իրենց սիրածների հետ, կպսակվեն և 40 օր, 40 գիշեր կտևի հարսանիքը։

Փիլիսոփաները, հրեղեն լեզվակները, լեզուները — նրանք մենակ, անընկեր ոգիներ չեն։ Նրանք ամբոխին օտար են իրենց հոգով, իրենց արիստոկրատ ոգով, մտքերով, բայց ունեն ընկերներ, զանգեր, զանազան վայրերում, աշխարհի կողմերում, և իրար՝ բարձր լեռների պես՝ տարածության միջից, դարերի միջից, իրար հետ կխոսեն, ձայն կտան իրար, և իրար մոտ վեճի, խորհրդածելու կերթան։ Բայց տիեզերքի հետ խոսելու դեպքում սրանք, բնականապես, պիտի առանձնանան, մեկուսանան, ամփոփվեն լռության մեջ, որ լսեն զանգին։

Իսկ աշխարհը գեղեցիկ է, կյանքը խորհրդավոր. հեռո՞ւ պեսիմիզմ, սկեպտիցիզմ, մելանխոլիա, բուրժուադիա, բանություն, պետություններ, կայսրներ...

Կյա՜նք, կյա՜նք, և սիրել կյանքը — թափառել, սիրել, մտածել, գործել, խորհել, կռվել, ձի հեծնել, լողանալ, պսակվել, սիրել մայր, հայր, որդիներ. ունենալ ընկերներ՝ բառի բուն իմաստով, սիրել հայրերի և որդիների երկիրը։ Աշխատել, սիրել հողը, բույսը, կենդանիները, երկինքը, և այլն, և այլն... Ահա՜ կյանքը — պոեզիա-կյանքը։

Գիտություններին, և ամենից առաջ պոեզիայի՝ ձգտումն է եղել՝ երկրից,— այս մեծ բանտից, վոնդակից,— ուր ամուր շղթաներով կապված ենք դիրեզմանի հետ,— բարձրանալ դեպի աստղերը և ավելի հեռո՞ւ — այն կողմերը... Եվ եթե մենք երբևիցե չկարողանանք հասնել աստղերին, գոնե մեր երգերը, իղձերը, սերը, երազները, հոգու թռիչքները կհասնեն ո՞չ միայն աստղերին, այլև տիեզերքի հեռո՞ւ ափերին...

Որ վերակենդանանամ՝ մեր հեքիաթների հերոսների կյանքով պիտի ապրեմ — նրանց պես, հրեղեն կյանք<ով>։ Յոթն օր, յոթ գիշեր պիտի աշխատեմ, յոթն օր, յոթն գիշեր պիտի թափառեմ, յոթ օր, յոթ գիշեր պիտի խորհեմ, յոթ օր, յոթ գիշեր պիտի հարբեմ ու քեֆ անեմ, յոթն օր, յոթ գիշեր անտառում պիտի ապրեմ, նույնչափ էլ անապատում, այրում, վանքերում, կղզում, լեռան գլխին, հովվի հետ, ձկնորսի հետ, բաղում, և այլն, և այլն։

Դեկտեմբերի 16, Յուրիա

Բանաստեղծը մարգարե պիտի լինի, հրապարակախոս, լեռների վերևից, ջրվեժի պես շաչող դեպի ամբոխի հոգին, նոր գաղափարներ, նոր երգեր, նոր հորիզոններ նրան տալով. բանաստեղծը պիտի հրեղեն խոսքեր, երգեր ասի, որ սերունդի մեջ դուրս գան մարդիկ — քաջ հոգիներ, որ հրեղեն գործեր կատարեն. բանաստեղծը իր սրտով պիտի ստեղծե հսկաներ, որոնք իրենց հսկայական ուսերով, ոգևորված տանում են հասարակաց բեռը... Բանաստեղծը պիտի ոգեշունչ լինի, ոգի տա, մարդկանց ոգեորե...

Հայը աշխարհից է, բայց աշխարհին օտար. մարդկանց ավագ եղբայրն է (ազգերի ավագ եղբայրը), բայց աշխարհի տնից, մարդկանց տնից հալածված... Հայը վիրավոր, իր պատվի համար վիրավոր, ընկած մարդկության մեծ ճանապարհի վերա. ո՞վ պիտի նրա վերքերը դարմանե, ոտքի կանգնցնե, որ նա էլ գնա այդ մեծ ճանապարհով...

Ո՞վ... Ջարթե՛ք մարգարենե՛ր, քաջե՛ր, արտավազդնե՛ր...

Ես ո՞չ ռամկավարական եմ, ո՞չ ընկերավարական, ո՞չ էլ թշնամավարական. ես ասում եմ. եղիր մա՛րդ, անկա՛խ, ազա՛տ, անիշխա՛ն, և միայն քե՛զ, քե՛զ հետևիր...

Ես ասում եմ. դու տե՛ր եղիր քու աշխատանքի, և մի՛ թող ուրիշը հափշտակե քո աշխատանքը։ Ճշմարտությունը, որ անմահ է, ասում է,

որ սոխն ոք պետք է վայելի իր աշխատանքը. եթե դու քո աշխատանքի տերն ես, ուրիշից էլ ոչինչ չունես պահանջելու։ Ո՛չ մի հասարակական իդեալ սրանից այն կողմ չի կարող անցնել...

Էլ ո՛չ մի օրենք — ես եմ իմ աշխատանքի տերը, և ոչ ես՝ քո, կամ դու՝ իմ... Ես իմ աշխատանքից մաս կհանեմ իմ խեղճ դրացուն, քնկերին... Դա իմ սրտի գործն է. ո՛չ մի օրենք թող չխառնվի այդտեղ։

Նա գող է, ստոր, ով ուրիշի աշխատանքն է վայելում։ Իմ աշխատանքը տվեք ինձ, յուրաքանչյուրին՝ յուրաքանչյուրին, և հետո էլ ոչ մի ոչ, մուրացկաններ, թշվառներ չեն լինի... Մուրացկանները նրանք են, որոնց աշխատանքը խլում են, նրանք զրկվածներ են...

Էլ ո՛չ տեր, ազա, իշխան, խան, արքա, կայսր... այլ ազատ մարդիկ և հանճարներ։

Ինձ թվում է, թե մեր վանքերը մեր գյուղական տների անմիջական զարգացած ձևն են։ Գմբեթը նման է տանիքին իր երդիկով, որի լույս է ներթափանցում. գյուղական տան ծածկը կոնուսաձև է. այնուհետև քառակուսի պատեր, և չորս սյուների վերա, որպես և վանքերին է։ Հետո այն եղեղնաձև կամարը, որ բացվում է մի որևէ պատի կողմը, բայց առհասարակ դռան դեմ։ Այդ կամարակապ մասը մի-երկու աստիճան բարձր է տնից, ճիշտ վանքի սեղանի պես։ Այդ մասումն է թունները, օջախը, սրբությունը. վանքերի այդ մասումն է վեմ քարը, պատարագի հիմքը, սրբությունը։ Վանքերը կատարելագործված գյուղական տներ են. այնպես որ՝ հայկական անարատ ոճն է դու։ Հենց վանք բառ կնշանակե տեղ, օթևան, Իշևան, Վան, վանդակ, Արշակավան, Շիրակավան։

Իսկ արդյոք մեր գյուղական տունը իր գմբեթով, որի ծայրին է պատուհանը — երդիկը, լույսի տեղը, նման չէ՞ երկնքին, որ կլոր է, խորունկ և արևը մեջը...

Ո՞վ է իմանում, նախնական մարդու հոգում ինչպես է կազմվել տան գաղափարը...

Երեկոյան գնացի լճի ափը, ալիքներն եկան, ինձ ողջունեցին և փռվան ափերին, ոտներիս տակ. եկան ողջունեցին շշնջալով։ Իսկ արևը վերջալույսի շքեղության մեջ իր ոսկեզօծ եղջյուրները խրելով երկնքի մեջ, ամպերի վերա՝ իր մարալ գլուխը կոխել էր լճի մեջ՝ վերջին անգամ ջուր խմելու, որ հետո գնա մոր գրկում հանգստանա, հանգչի։ Ա՜խ, մերիկ, ո՞ւր ես դու, որ գլուխս, արևի պես, դնեմ սրտիդ և հանգչիմ, քնեմ, ո՞ւր ես...

Քանաստեղծը միշտ ապագայի մասին է խորհում, ահա՛ թե նա ինչո՞ւ է մարդարե... երազող...

Դժգոհ ներկայից, նա միշտ երազներ, ցնորքներ, անուրջներ է հյուսում, ապագա է հյուսում, աշխարհ է ստեղծում...

Մարդու հոգին պետք է այնքան բարձրացնել ու թևավոր դարձնել, որ կարողանա մասնակից լինել, հասկանալ տիեզերական անուրջին, տիեզերքի անուրջին... Այո՛, տիեզերքը մի անուրջ է, մի երազ, մի ունայն, մի ցնորք... Ամեն բան եկել ու գնացել է, կուգան ու կերթան, մնալու է միայն հավերժությունն ու տարածությունը...

1901

Դեկտեմբերի 27, Կաղզվան

Մի օր երեկոյան դեմ, ես ոտով անցնում էի մի տեղից դեպի մյուսը՝ թափառում էի. պատահեց մի քառածի կառք՝ փոշի հանեց մինչև երկինք. ես մեկուսացա ճանապարհի ափին. անցավ կառքը, տեսա սիրածս աղջիկը՝ իր ամուսնու հետ Տարիներ էր՝ չէի տեսել. տեսա և կայծակնահար մնացի՝ քարացած։ Անցավ կառքը, և մնացի տեղս մեխված։ Անցան ժամեր. եկավ քամին, շոյեց ճակատս ու անցավ. եկավ սարյակների երամը, գլխիս վրա երգեց ու անցավ. եկավ ամպը՝ վանանդա լեռներից, գլխիս վրա սևացավ ու անցավ. եկան ճամփորդներ, ինձ նայեցին, բարև տվին ու անցան...

Իսկ ես մնացի մենակ, կանգնած ճամփու ափին կյանքից հեռո՞ւ, հեռո՞ւ...

Գիշերը եկավ. ես քաշվեցի ճամփից հեռու, առվի ափին բուսած ուռենների ու բարդիների տակ թաթծեցի ու երազեցի. աստղերը վառվեցին վառ-վառ. նայեցի երկինք, տեսա երկու աստղ, որ երկնքի ծայրերից սիրալիր-ճաճանչալից հայացքներով իրար համբույրներ, ողջույններ էին ճառագայթում. հիշեցի մանկությունից լսած մի հին զրույց՝ աստղերի սերը, որը և պատմում եմ ստորև։

Երկնքում երկու աստղ կա, աստղ-սրտեր, որոնք իրար շա՜տ խորը սիրելիս են եղել, բայց իրար չեն արժանացել, իրար մուրազի չեն հասել. չար-աստղերը նրանց իրարից բաժանել են, մեկին հեռացրել են դեպի արևելք, մյուսին՝ դեպի արևմուտք։ Երբ համբարձման գիշերը եր-

կինք ու գետինք իրար համբուրում են, աստղերը իրար համբուրում են,— դրանք էլ արևելքից և արևմուտքից գալիս են, իրար հանդիպում, կեսգիշերին, մի վայրկյան, իրար գրկում, համբուրում և էլի բաժանվում են. արևելքից եկողը գնում է արևմուտք, արևմուտքից եկողը՝ արևելք

Եվ այս՝ տարին մի անգամ։

1902

Մարտի 22, Թիֆլիս

Սիրուց հետո միայն մեռնել է պետք. սերը կյանքերի կյանքն է. սեր — կնշանակե միլիոն, միլիոն մարդկանց (մարդկանց, որոնք հազարավոր դարերի մեջ եղել են ու կան, ու պիտի լինեն) կյանքով ապրել, կնշանակե՝ երկրի վրա եղած ամեն մի զգացմունքով ու երազով ու երգերով ապրել. ապրել և մեռնել.— մեռնել — սհա՛ սիրո վարձը. սիրուց հետո չարժե ապրել՝ սողալ, թմրել։

Սիրուց հետո գոլորշիանալ, ոգիանալ, աստվածանալ և հավերժանալ, բայց որ այդ չէա՝ մեռնել, փոշիանալ...

Ես որ սիրում էի՝ ոգիացած էի, ոգևորված էի, աստվածացած էի. երիտասարդացած և երազ ու երգ դարձած. ա՜խ, հազար երնեկ, սիրս այն շքեղ երազների ու զգացմունքի ժամանակ ես մեռնեի՝ այն գիտակցությամբ, որ չզգայի դրժյալ սերը՝ Лермонтов-ի «Выхожу один я <на дорогу>...» երգի պես։ Մեռնեի, բայց սիրս երազը լիներ, և հոգիս լիքը մելոդիաներով, կապրեի դարեր, մինչև աշխարհի վերջը։

Ա՜խ, ի՜նչ վեհ, սուրբ, բարձր ու վսեմ մարդ էի. ի՜նչ թռիչքներ, ի՜նչ մտքեր, ի՜նչ թևեր կային մեջս։ Սիրում էի միայնություն ու լռություն, բնություն ու եսս. խորհում էի, երազում էի նրանից, նրա մասին, նրա վրա, նրա համար, նրա շուրջը... Եվ լայի, լայի, ոտքերն ընկած լայի, շնչեի նրա շղարշների շշյունը և նայեի անծայրածիր աչքերին, և լայի, լայի, ոգիանայի, մեռնեի...

Ի՞նչ երգել, ի՞նչ ասել, ի՞նչ գրել,— սերը անպատմելի է, անճառելի, հանճարը նույնիսկ չի կարող սերը հայտնել, հանդես հանել...

Հոկտեմբեր 4, Անի

Անի՜,— սանսկրիտ — մայր լեզվից է բխել, և կրա՜կ, հո՜ւր կնշանակե, կրակի դիցուհի, և թո՜ղ նա, պանծալի Անին, լինի անշեջ հուր հայության սրտում վառելու և բորբոքելու ազատության սերը, և լինի մեր վերածնության ֆենիքսը։ Թո՜ղ այրվի, վառվի հայության սիրտը, իսկ ինչ որ այրվում է՝ նա և՛ լույս ունի.— հավատա՜նք, որ լուսավոր են լինելու մեր գալիք օրերը, մեր նոր կյանքը...

Նոյեմբեր, Բաքու

Դավիթը իբրև քրիստոնեության ներկայացուցիչ մեռավ, և հանդես եկավ Մհերը՝ հեթանոսության սիմվոլը, ներկայացուցիչը, որը չի մեռել, այլ շղթայված է, սպասում է դուրս գալու. գնա՜նք և ազատե՜նք նրան. հերիք սպասե<...>

Ժողովուրդը իր սիրած հերոսներին չի կարող հասկանալ, որ մեռել են. անմահացնում է նրանց. չի կարող ըմբռնել, որ այդ գերմարդկային ուժը վերջանա, հանգչի.— օրինակ, ժողովուրդը անմահացրել է Պրոմեթեոսին, Ֆ. Բարբարուսին, Ս. Ռազինին, Արտավազդին, Մհերին, և ինչպես ներկայումս մեր ժողովուրդը դեռ մինչև այժմ կենդանի է հաշվել ու չի կարողացել հավատալ սրանց մահը...

Կյանքս... նա երգն էր բնության, նրա կյանքն էր, հոգին էր. ուզում էի ընդգրկել տիեզերքը, դառնալ նրա ոգի-տիեզերքը, ոգիացած տիեզերքը, նա իմ մեջ ոգիանար։

Կուզեի խորը սիրել, խորը թախծել, խորը զգալ ու ուրախանալ, բայց քարացա։ Կուզեի կրոն ստեղծել, կուզեի հեծնել հրեղեն նժույգը և սլանալ երկրով, անվերջ ճանապարհներով, երկնքում թռչել, աստղերից-աստղեր։

Կուզեի երկրում անվերջ թափառել և զգալ. կուզեի վայելել տիեզերքը, կուզեի գրկել վսեմ գեղեցկուհու ոտները, լալ և պատմել վշտերս. կուզեի պատահել բաժանված, կարոտացած ընկերներիս, համբուրել, գրկախառնվել ու բաժանվել...

Կուզեի տիեզերքը — կյանքը գառնար երգ — մուզիկ, կուզեի սիրել մարդկանց, ա՜խ, լեռները, վայրի կենդանիները, ծառերը, բույսերը... հովիվներին... Մարգարե դառնալ, քարոզել, վերջը... մեռնել. կուզեի տիեզերքը, և ինձ տվին մահացում...

Ամբոխից անչափ բարձր էի, և նրան խորթ, նրանից տարբեր. նրա մեջ չէի հավքում. նրա օրենքները ոտքիս տակն էին, նրա երշանկությունը՝ շնչին ու գոհհիկ, նրա սերը՝ ստոր... բայց ես ինձ ջարդից. ո՞չ միայն հավասարեցրեց ինձ իրեն, այլև իրեն ստիպեց տակ ինձ ճզմեց։ Ով իրենից գլխով բարձր է՝ կտրել պետք է նրա գլուխը. ահա՞ նրա օրենքը։

Կյանքի մեջ գեղեցիկ է կարոտը՝ աչքդ մնա մի անվերջ, անծեր ճամփի, որով գալու է մի անհայտ, անսովոր, աղնվագույն երշանկություն, բախտ, և աչքդ ծով դառնա և սիրտդ՝ ծով դառնա...

Կարոտ եմ մի այնպիսի հոգեբուխ, գնդակրային երգի, որ հոգիս զարթնեցնե. կարոտ եմ մի այնպիսի արևի, որ հոգիս վառե, կարոտ եմ մի այնպիսի համբույրի, որ հոգիս բուժե, կարոտ եմ մի այնպիսի վշտի, աչատ և բերիկրալից պարի, որ սիլատս, հոգիս թնդացնե, կարոտ եմ...

1903

Հունվարի 27, Թաթ

Կյանքս անցնում է զորշ ու հանգիստ. առանց ալիքների. կաղապարների միջով է անցնում. հասարակության օրենքներն են կամքիս իշխում, հսկում են իմ մարների վրա, և ճնշում են ինձ. ես բարձր եմ լեռնագագաթի նման, նրանք ճգնում են հավասարացնել ինձ՝ տափակացնել՝ իրենց հավասար, և շղթայում են իմ ըմբոստ հոգին ու թերևս կապում. ճգնում են զգացմունքներս կարգ ու կանոնի տակ դնել. ուզում են ընտանի դարձնել, ինձ էդ տալ, որ թռչես նստեմ ու կամաց-կամաց՝ համառձակ, հաշտ իրենց օրենքներին՝ ապրեմ — քաշ գամ և սպասեմ մահին...

Բայց ես մրրիկ եմ, բայց ես թռնում եմ, և թևեր ունիմ, արծվի, սեգ արծվի պես ու կթռնեմ Մասրսի վերայով, Կաղբեկի վերայով, Սինայի վերայով, Գոնոսի վերայով։ Փշրում եմ ձեր օրենքները ու շղթաները, արհամարհում եմ ձեր բարին. մերժում եմ ձեր հացը, և ձեր անից հեռու՝ եմ փախչում. ընդվզում եմ ամուսնական լուծը. ձեր հոտից թռնում եմ վերև, թռնում եմ ձեր վրայից... և մնաք բարև. դուք հովիտներում ու քարերի դաշտերում... Ահա՞ իմ ճամփեն, մեծ, հեռու ճամփեն աշխարհի շուրջը, նրա ոլորտները, երկնքի խորքերը։

Ահա՞ իմ ճամփեն. ողջո՞ւյն քեզ, ուղի.— իմ հոգուց ձգված դու ո՞ւր ես գնում — դեպի հեռո՞ւն, անհայտը, խորհրդավորը. ահա՞ ես գալիս եմ քո հետքով, հասատա քայլերով, անվախ կամքով և հետ չեմ նայում. ինձ ընկեր՝ սովերս, և՛ երազներս, և՛ խոհերս... Ծուլը ձեռքս, մախաղը ուսիս, հայացքս պայծառ և սիրտս ճախրաթև՝ ուղի եմ ընկնում. թողնում եմ հայրենիքս, սովորույթների այս հնութ վայրը, և նոր ափեր եմ գնում ես. կմտնեմ Կովկասի երկնաբերձ շղթան, կանցնիմ Յարամատիայի հարթավայրերը և կսլանամ Պոնտոսի սև ալիքների ջրերով, կբախեմ Բյուզանդիոնի ոսկի դռները և կհանգչիմ աստվածային Ոլիմպոսի լանջերում։

Կանցնիմ ժողովուրդների միջով, խաղաղ գյուղերի միջով... և կդիտեմ, կլսեմ... սիրտս սիրով ու լայնությամբ լի՝ ամեն անցորդի, պատահող մարդու ողջույն կուտամ ու կանցնիմ. կդիտեմ հզոր, լուռ, ստեղծագործող մայր բնությունը — մանրազնին՝ թե ինչպես ցողը երկինք է թռչում, բազեի ճախրը կդիտեմ, ալիքների խաղը, ծաղկի բնաջոջ ոցելը և երեկոյան խաշինների խաղաղ նիրհը, կլսեմ ժողովուրդների խոսքերը, նրանց երգերը, լացը, վշտերը և ամենուրեք կլսեմ Տիեզերական զանգի հզորեղ, հիասքանչ, գերադույն զողանջը։

Ես կերթամ մենակ, բայց իմ երազների ու խոհերի սավառ երամի հետ, կանցնեմ պատկառելի Աթենքի միջով, ուր Սոկրատի ու Հոմերոսի սրբազան ստվերները կտեսնեմ ու կխոսեմ հետները, կճեղքեմ Միջերկրականը, կդեգերեմ Սրշիպելագի դալար կղզիներում, և թռիչքս կհասցնեմ Նեղոսի սրբազան ափերին. բուրգերի տակ կխորհեմ աշխարհի ու կյանքի գաղտնիքների մասին, և անապատի հրապույրը կզգամ ու կլսեմ տիեզերական զողանջը. անհուն երկնքի աստղերը՝ անապատի վերա վառվող, ես կդիտեմ, կհամարեմ, կթռնեմ նրանց մոտ և նրանց փայլը կվերցնեմ, կփայլեմ. կիջնեմ Հորդանանի շուշանների մոտ, կծծեմ նրանց բուրմունքը, կողողվեմ սուրբ ավազանի շրերով, կերթամ Գեթսեմանի աշգում կլամ, Գողգոթայի վերա կհամբուրեմ սուրբ քարերը և Ս. Սիոնի մեջ կերգեմ Դավթի սաղմոսները. սրբատուտ Ավետարանը անգիր գանեմ, կշրջեմ վսեմ Հիսուսի քայլած վայրերը. մարգարեների ոգով շնչած կթռնեմ Սինայի ամպամած գագաթը, որ անապատի զողանջող, երաչուն լռության մեջ խորախորհուրդ բազմել է, և նոր պատգամներ կխլեմ երկնքից, տիեզերքից... և կմարգարեանամ աշխարհի ու ազգերի կյանքի վերա, մահի վերա, բախտի վերա...

Ո՞վ եմ ես.— ճամփորդ, աշխարհի ճամփորդ, տիեզերական ճամփորդ. զանգի զողանջը երգող, և գնում եմ ճշմարտություն գտնելու.

ազգերի հոգու մեջ կսուզվեմ, նրանց դարերի պատմական հոգու մեջ, և օրենքներ կհանեմ, վեհություններ կծծեմ, ճշմարտություն, նոր հավատ, նոր կրոն, նոր գեղեցկություն գտնելու կերթամ։

Ականջ կդնեմ բոլոր մարդկանց սրտի մեղմ բաբախին, շրթունքների փսփսոցը կորսամ. արցունքների լեզուն կսորվեմ, ամենքի երգերը կլսեմ ու կդառնամ իմ հայրենիքը՝ բեռնված նոր անգին մարգարիտներով ու ակներով և կբաշխեմ կույր, խավար, քար հայրենակիցներիս...

Գուցե իմ հայրենիքումն էլ ճշմարտություն կա. եթե ոչ ամբողջ, բայց գիտեմ, որ ճշմարտության մի հյուլե կա և՛ Մասսա փեշերում. այն ևս կծծեմ. բոլոր ճշմարտությունները կձուլեմ մի մեծ, հոյակապ ճշմարտության մեջ, որ անհաղթ, անջնջելի, անհերքելի ու հավերժական պիտի լինի և սրտիս արյունով սնված՝ տամ հայրենիքիս ու աշխարհին...

Բայց գուցե ես մեռնեմ այդ ճանապարհին.— ոչի՛նչ, թո՛ղ մեռնեմ. թո՛ղ թաղվի մարմինս մայր-երկրի մի անկյունում, ուր էլ որ լինի,— ոչի՛նչ. ազգերը կգան և կանցնեն իմ վերայով, որովհետև ես գնում եմ մեծ ճանապարհով, և ընկա մեծ ճանապարհին, այն ճանապարհին, որ մարդկությունը պիտի անցնի՝ գերագույնը փնտրելու համար, գտնելու համար։

Մարդ կարող է թափառել աշխարհի ամեն կողմերը, օտար երկրներ, ուրիշ ժողովուրդների մեջ, իբրև ճանապարհորդ, ուսումնասեր և այլն, բայց հայրենիքը՝ այդ նրա տունն է, իր հայրենի, պապական օջախը. ինչպես որ մարդ միայն տանը իրեն լավ է զգում, ազատ է զգում, համարձակ ու ապահով, ու հարազատ, ընտանի, այնպես էլ մարդ իր հայրենիքումն է զգում այդպես, իր հայրենակիցների, իր ընտանիքի մեջ, մոր, հոր, քույր-եղբայրների մեջ։

Այդ կողմից կոսմոպոլիտիզմը ֆալշ է և շոր. աշխարհը մարդու հայրենիքը չէ՞, այլ հեռո՞ւ տեղեր, օտար ափեր, ուր մարդ իրեն պանդուխտ է զգում. հայրենիքը միշտ քաշում է.— այնտեղ է մայրը, մոր գերեզմանը, մոր և հոր սիրտը. այնտեղից միշտ լսվում է մոր ձայնը, որ անուշ-անո՞ւշ երգի պես կանչում է իրեն... Եվ թո՛ղ թափառե մարդ ո՞չ միայն աշխարհի հեռավոր ափերը, այլև երկնքում, աստղերում, բայց գա գլուխը հանգչեցնելու համար իր հայրենիքը, մոր գրկին, կրծքին դնելու. այնտեղ նա կլսի մոր ձայնը, մայրենի սուրբ լեզուն, <որով> կերգե մայր-ժողովուրդը իր հին, մանկական հասակի սիրած երգերը. մայրենի լեզու՝ ամենահարազատ խոսքը հոգու համար, որ ծնունդի առաջին օրից լսել է մոր բերնից։

Հայրենիքը՝ այդ մայրն է,— նրա սար ու ձորերը՝ մայրական դիմագծերն են. ով չի սիրում մորը, նա չի սիրում իր հայրենիքը, և ընդհակառակը, և ով չի սիրում մայրենի լեզուն, նա չի սիրում իր մոր խոսքը։

1906

Հունվարի 19

Վեհապանծ, բարձրագահ և տիեզերախոհ ոգիներից է բխում ազատությունը, որը լեռնաբարձունքներից շառաչող հզոր հեղեղի պես, ահեղազոչ շառաչում է՝ փշրելով սառած, անկյանք ժայռերը, կապանքներ ու օրենքներ փշրող ազատության հեղեղը, խորտակելով գրանիտե և բրոնզե գահերը՝ ջրվեժի պես ընկնում է դաշտի վրա, ցոլացնելով իր մեջ արևի շքեղությունը, և հրացայտ մտնում է դաշտը, ճեղքում է տաղտուկ տափակությունը և ոտքի կանգնեցնելով ամբոխին, ըմբոստացնելով նրան բռնակալների և օրենքների դեմ՝ արշավում է առաջ, առաջ՝ դեպի անսահման ազատության մեծ օվկիանոսը, ուր ամեն կաթիլ ազատ է ու ինքնակամ, ուր ամենքը ունեն իրենց մեջ մի ամբողջ արև, ուր ամենքը երազում են երկինք սլանալ, դեպի տիեզերական անսահման, անեզր ազատությունը...

Բայց կարմիր ու բոսորավառ է հեղեղը — մարդկային նվիրական զոհերի թանկ արյունով է վառվում, և լի են նրա հոսանքում զոհերի անվերջ շարքեր — թարմ, գեղեցիկ նահատակներ (հերոսներ)՝ վիրավոր ճակատներով և կրծքերով...

Աշխարհասասան մոնչում է ազատության հեղեղը. ո՛չ մի ուժ չի հանդգնում նրան դիմագրավել. անպարտելի է նա. և ամեն մի արգելին — նա ավելի ուժգին է հարվածում. ամեն ինչ ենթարկվում է նրա հոսանքին — մեռած դիակներն էլ քշվում են այդ հոսանքով — անշարժ ժայռերն էլ գլորվում են, և հուժկու ալիքները իրար ջարդելով, տանում են ամեն ինչ...

Ահա՛ ես ևս ընկնում եմ ազատության հոսանքի մեջ և գնում եմ, և գնում եմ...

1908

Թանատում, խցում, երեկոյան, գիշերը։

Սուլելով գնում էր երկաթուղին, և ես էլ մտքով, երևակայության մեջ գնում էի նրա հետ — դաշտեր, քաղաքներ, ծովեր, հեռուներ՝ ազա՛տ, ազա՛տ, կամքով, մտքով, սրտով...

1909

Մարտ

Բանտի մեջ անցրի մի շաբաթ (1909, մարտ). անցավ մի սոսկալի շաբաթ, ինչպես մի զարհուրելի երազի միջով անցներ։ Բոլոր ընկերները շունչները բռնած՝ սպասում էին, թե ինչ պիտի լինի...

1910

Ապրիլի 4, Ղազարապատ

Իմ ապրած կյանքը վշտի մռայլը լցրեց իմ սրտի մեջ...

Իմ ապրած կյանքը աշխարհի օրենքներով շղթայեց իմ ձեռն ու ոտը։

Իմ ապրած կյանքը հազար մեռելներ շարեց իմ սրտում, բայց ես ատում եմ վիշտը և բոլոր օրենքները. ատում եմ ես աշխարհի չարն ու բարին, պարտքն ու <վարձքը>, լավն ու վատը։

Գարնան վարար հեղեղները իմ հոգու միջով են անցնում. նրանք սրբեցին ու տարան բոլոր մեռելները, և խորտակեցին բոլոր շղթաները։

Գարնան վառ արևը ցրեց հոգուս մռայլը, և արևը բոցավառվում է հիմա իմ հոգու մեջ։

Գարնան զանգակ աղբյուրները ինձ դուրս են կանչում, ինձ սեր են երգում, լեռների աղամանդը ինձ է հրավիրում...

Ես ուզում եմ լինել պայծառ, ես ուզում եմ լինել հզոր, ես բարձր եմ վշտից և տանջանքից...

Ես ատում եմ խելքն ու իմաստությունը, ես ներբողում եմ ստեղծագործող կիրքը։

Աստղերը ոսկեղեն արտույտների պես թրթռում են երկնքի դաշտերում, և զմրուխտյա արտերը ցնծին են տալիս...

Ես ուզում եմ գարնան պես գրկել ամբողջ երկիրը և համբուրել ախտաբորբոք շրթունքով երկիրը, ինչպես մի չքնաղ կնոջ, ես ուզում եմ համբուրել աստղերը և շրթունքներս՝ այրվին, շիկանան...

Ես ուզում եմ, ինչպես մի առույգ և վայրի ցուլ՝ սլանալ կուսական անտառների թավիշով և ալմաստ լեռան դագաթից, արշալույսի դիմաց տարփորեն մռնչալ. և ուզում եմ...

Ես ուզում եմ լինել հավիտյան անմահ. հավիտյան առույգ.

Ես ուզում եմ խելահեղորեն թռնել, բռնել բոլոր գեղեցկություններն և սրտիս մեջ հալել. ես ատում եմ խելքը. ես ուզում եմ ցնորվել...

Եվ ես ինչ որ ուզում եմ՝ այդ սրբություն է. սուրբ է իմ կամքը, իմ կիրքը, իմ խելագարումը. ես սրբություն եմ. ես կամենում եմ, որովհետև ես եմ ստեղծել ամեն ինչ, որովհետև տիեզերքը ես եմ, որովհետև առանց ինձ՝ ոչինչ չկա...

1913

Հունիսի 15, Կոլլոնժ

Մի լուսնկա գիշեր. անամպ երկինք, հունիսյան երկինք, 10—15 օրվա լուսնյակ, պայծառ, հոյակապ. տաք, մեղմ գիշեր. բուրմունքով լիքը. անսահման խաղաղություն է. ո՛չ մի ձայն, ո՛չ մի շշուկ. քնած է ամեն ինչ՝ լեռ, ձոր, արտ, տուն, պարտեզ, քամի ու հով, ճանապարհ ու փոշի. անցորդ, մարդ, թռչուն, շուն։ Ասես՝ լուսնյակը կախարդել, պապանձացրել, դյուրել, թովել, հմայել է երկիրը՝ արարածներով. ծառերը իրենց տերևներով փաթթված անշարժ կանգնել են՝ հմայված, քարացած. տերև չի դողում. հանգիստ, մինչև հեռավոր աշխարհները. անզորը է մինչև աշխարհի չորս ծայրերը, չորս կողմերը, հազար-հազար անկյունները. մինչև տիեզերքի անսահման եզերքները. ասես՝ աշխարհքի սկզբից մինչև այս ժամը միայն հանգստություն է եղել. դարերի, դարերի մեջ ոչինչ չի շարժվել, ո՛չ մի աղմուկ, ո՛չ մի շշուկ, ո՛չ մի սարսուռ. միայն խորունկ քուն՝ առանց երազի. լուսինը ճերմակ — մահվան սավան է փռել աշխարհքի վրա բոլոր ծայրերից. ճերմակ, ճերմակ քուն... Առասպելական քարե համբացում։ Ամբողջը՝ մարդ ու բնություն՝ լուսնյակը սառը, անշարժ, մեռած մարմարիոն է դարձել, մարմարե մահաձան...

Հուլիս, Կոլլոնժ

Մարդու աչքին՝ տիեզերքի վրա մի մեծ դիմակ կա. տիեզերքը դիմակավորված, վարագուրված է, և տիեզերական բոլոր իրերը դիմակ ունին. մարդը միայն արտաքինը կարող է տեսնել. ներքինը, էականը՝ Ding an sich* — *չի կարող երբեք, և դիմակը այնքան բարդ է, մի դիմակի տակ մյուսը և անվերջ, անհամար, որ մարդը մի դիմակը պատռելով, դեմ է առնում մյուս դիմակներին<...>***

---

* *Իրն ինքնին (գերմ.)։*

** *Շարունակությունը բնագրում պակասում է։*

Օգոստոսի 12, Կոլոնիա

Մեր Վիգենը երաղն ու իրականությունը միմյանցից չի կարողանում զանազանել. երաղի մեջ տեսածը իրական է համարում. օրինակ՝ առավոտս լալով զարթնեց, թե՝ «Պապան շոկոլա տվեց՝ մեծ-մեծ, մամման առավ, պապան տվեց, մամման առավ, մամա, փիս մամա, տուր, տուր, donne, donne, *շոկոլան տուր»։— Եվ բռունցք էր ցույց տալիս մորը, հարձակվում էր վրան, այսպես մի կես ժամ։*

Ցերեկը, օրինակ, նստում է աթոռի վրա և երևակայում, թե վագոնի մեջ է, կամ ձիու վրա. ոգևորվում է, աչքերը փայլում են, և հավատում է, թե իրոք ձիու վրա է և գնում է։

Երբ հեքիաթ ենք պատմում՝ թե Վիգենը ձին նստեց, քշեց, շանը տեսավ, շանը ծեծեց, բազար գնաց, գնաց Ապլայի, Կոլյայի, Աքայի մոտ, և այլն, և այլն, իսկույն կատաղում է, լեզուն չփացնում ձի քշելու պես, շանը ծեծում, բարկանում, հայհոյում, <...> ճչում, բղավում, երգում, կանչում... մի խոսքով՝ ապրում է. աչքին ներկայանում են. նրան թվում է, թե իրոք գնում է, տեսնում է, որովհետև ուրախությունից խենթացած ճչում է, բղավում, ոտքերը զարկում, աչքերը վառված, ձգած հեռուն... Վիգենն ասում է (1913 սեպտեմբեր 1).— արևը գնաց քնելու մամայի մոտ. հիմա կոշիկները հանեց, շուկին հանեց, շորերը հանեց, մամային պաչեց և մտավ անկողին...

Ահա այսպես են կազմվել բոլոր առասպելները, միֆերը։

Սեպտեմբերի 15, Կոլոնիա

Նորից լուսնյակ, լիալուսին, որ ծագեց մոտ ժամի $9^1/_2$ — 10-ին։
Արծաթյա գիշեր, մարմարյա գիշեր.
Օ՜, մի՛ հիշիր, մի՛ հիշիր։
Ամեն ինչ կորցրել եմ, ամեն ինչ կորցրի.
Օ՜, մի՛ հիշիր, մի՛ հիշիր...

1914

Մայիսի 26, Բեռլին

Տիեզերքը անսահման մեծ է, բայց նա ինքնին գոյություն չունի. նա չի զգում, որ ինքը կա, ուրեմն չկա... Ես, որ մի չնչին որդ եմ, և իմ

օրերի ամբողջ քանակը կամ 10 000 օր է, կամ մի քիչ ավելի — նրանից մեծ եմ և վեհ. ես զգում եմ և՛ ինձ, և՛ նրան.— ես եմ նրա իմաստը։

Առանց մարդու ի՞նչ արժեք ունի տիեզերքը, գուցե և չի լինի, չկա...

Իսկապես՝ ինչո՞ւ համար է տիեզերքը. եթե կա, և նա կա, որովհետև չկան անհասկանալի է։

Աստվածը — դա մարդու հոգին է, ուղեղն է Աստվածը, որ պատվում էր խավարի և ջրերի վրա, և այդ քաոսից ստեղծեց լույս և աստղեր, թիվ, և՛ սահման, և՛ ժամանակ, և՛ ներդաշնակություն...

Պիտի կոտորել մինչև վերջին հարուստը՝ այդ սարդերը, այդ մակաբույծները... այդ քարե էգոիստները, որ կարծում են, թե ինդիվիդուալիստներ են։

Ամենաբարեգործ հարուստին ամենից առաջ պիտի կոտորել. նրանք փոշի են ցանում ամբոխի և վարդապետների աչքերին, որ ավելի լավ կողոպտեն աշխատավորներին <...>։*

<Մայիս, Բեռլին>

Ուզում եմ լսել տիեզերքի լեզուն, ուզում եմ հասկանալ տիեզերքի ոգին։

Աշխարհն աչքիս սևցել է,
Սիրտս միջին դևցել է.
Բան չըմնաց չհասկանամ,
Միտքս միջին խևցել է։

Մենակ թափառեմ. լեռների գլուխը պառկեմ և խորհեմ. ծովերի ափին պառկեմ և խորհեմ — տիեզերք խորհեմ, հավերժություն խորհեմ... Եվ միշտ առաջին սիրուս լույս-պատկերը աչքիս առաջ, ձայնը ականջիս մեջ, և սրտիս մեջ երաշ ու վիշտ, երգ ու արցունք...

Դեկտեմբերի 24, Թայնֆալ

Reinfall-*ը տեսա 24 դեկտեմ. 1914.— Շուրջը դժգույն դալար. ծյուն չկա. ավելի տաք, քան թե ցուրտ. ուղղակի զով օր աշնան։ Անտառները տերևաթափ. եղևնիները դալար, դալար։ Օրհնվա՜ծ երկիր։ Ջրվեժի տպավորությունը վեհափառ է — ջրերը իրար վրա ընկնելու։*

* *Շարունակությունը բնագրում պակասում է։*

իբար չնչինելով, կատրոնելով, շաչելով, ծնծղելով ու ծնծղելով — ուղղակի ջրերը փոշի են դառնում, ավազ ու փոշի... ավելի նուրբ փոշին գոլորշիի պես բարձրանում է ջրերի կոտորածի վրա կանգնում։

Ձայնը — սրոտմունքը հարատև է ու հոյակապ. ասես անտառներ լռել, լսում են նրան, ուշադիր հավանել, թե ի՞նչ է ասում հավերժաբար այս սպիտակահեր Հաենոսը, որին և՛ մամոնթն է տեսել, և՛ նախամարդը, և՛ Հուլիոս Ցեզարը, և ես,— և դեռ միլիարդներ, որ պիտի գան, տեսնեն, լսեն և երգեն, իսկ ինքը կմնա դեռ — մի կես հավերժություն։

1915

Ապրիլի 2, Թեհրան

Նորից հայրենի հողի վրա եմ, ուր մանկության առաջին հեքիաթը հյուսվեց, ուր առաջին ծաղիկը քաղեցի և հավերժական աստղերը տեսա...

Ահա՛ ստվերի պես անցնում է հայրս՝ մտախոհ և բարի՝ ծանոթ շավիղով, հառաջ եմ վազում ետ։

Ահա՛ մանկությանս ընկեր-գետը՝ նույն կայտառ ալիքներով, ասես վճիտ ջրերի հայելիի մեջ ինձ եմ տեսնում — լողանալիս... տեսնում եմ իմ մանուկ պատկերը։

Շամբուրում եմ սուրբ հողը, որ ծածկում է հիմա հորս և սիրելիներիս... Ահա՛ մեր տունը. օրհնա՛ծ լինիս դու, սրբազան օջախ, որ դեռ մայրս վառ է պահում. այդ սուրբ ծուխը անցած երջանկությամբ հյուսվում է իմ գլխի վերև, իմ շուրջը։

Եվ բախտավոր եմ զգում ես ինձ. ոչինչ չեմ տենչում այս ծուխից ավել՝ ո՛չ փառք, ո՛չ համբավ, ո՛չ փող և ո՛չ կին, ո՛չ օտար ափեր և ո՛չ արկածներ...

Կցանկամ նստել մեր տան պատի տակ, հորս նստած տեղում, և առջևս խայտա երեխան՝ վերազարձնելով մանկությունս ինձ, և գլխիս վերև՝ մորս օջախի ծուխը...

Օգոստոս, Թեհրան

Իմ և աշխարհքի մեջ չկա ներդաշնակություն։ Մի քացի, մի հարված տամ և գահավիժեմ երկրաքունդը անդունդի մեջ՝ իր մորալով, օրենքներով...

Աշուն է, ցուրտ. դուրսը քամին հալածում է չոր տերևները, որոնք իմաքացած գանգերի նման, ակռաները իրար չրխկ-չրխկացնելով ջրվում են, գնում, ո՞ւր — իրենք էլ չգիտեն, ուր... Ճրագն աղոտ լույս է տալիս սենյակիս մթության մեջ. երգիս մեջ կրակ չկա. օտար աշխարհ, օտա՛ր։— Նստած եմ սենյակում՝ գլուխս ափերիս մեջ բռնած. առջևս մի նամակ հեռավոր, սգավոր հայրենիքից, և մի սպիտակ, չգրված թուղթ, որ մեռելի սավանի պես փռված է...

Կարդում եմ նամակը...

Իմ հայրենիքը — ավեր, աբյուն, նախճիր, որբեր, հրդեհ, ավար... Սաքսափը համակել է ինձ. լռություն. վախից չեմ կարող հետ նայել, կամ կողմերս.— ինձ թվում է, թե իմ աչն և ձախը, հետևն և առաջս տարածվում են գերեզմաններ, եղբայրական գերեզմանների ծով, անթաղ դիակներ — բյուրավոր, բյուրավոր և նորից բյուրավորներ. մեջքիս հետև սեղմում են ինձ գերեզմանները — իմ անգին ընկերների — Սիամանթո, Վարուժան, Խաժակ... Գերեզմաններ. հրդեհների և ծովերի մեջ, ջրհորների և գետերի մեջ... Արյունոտ Եփրատ. Միջագետք. սոսկալի Դեիր-Զոր... քաշում են ինձ գեպի իրենց...

Ո՞ր սնրագործ, դիվական ձեռն արեց.— Վիլհելմ, Թրիան, Հորվեդ, Թալաաթ, Էնվեր, գերման, թուրք և քուրդ խաժամուժ, հավիտյան նզո՞վք ձեր անունին ու սերնդին. ո՞ւր պիտի գնաք մաքրելու ձեր արյունոտ ձեռները։ Ո՞ր օվկիանոսը կարող է մաքրել...

Դուք կանչում եք ինձ, իմ ընկերնե՛ր, իմ մորթված, խողխողված քույրեր, եղբայրներ, մանուկներ... գալիս եմ, գալիս եմ...

Եվ մեկը բռնեց դաստակս. նայում եմ ետ — մի ծերունի.

— Ի՞նչ ես անում, դու փոքրոգի...

Ցույց տամ տիեզերական մատյանի մեջ ազգերի ճակատագիրը, անցքերը. տե՛ս և ուսի՛ր. ամեն բան անմահ գրված է տիեզերքի մագաղաթների վրա, ամեն բան կենդանի է ժամանակի և տարածության մեջ — ցույց կտամ։

Եվ տարավ...

Տեսնում եմ — Արարատյան երկիրը, հայ ժողովուրդը — ուժեղ, պայծառ, հզոր. ստեղծում է, պայքարում և ապրում...

Անապատներից մորեխների պես արշավում են, կատաղած ձիերի վրա, վայրենի աղմուկներով. սրածություն, ավեր, արյուն, հրդեհ. քանդում են, մորթում. Արաբեան. ջարդեր. Նախիջևանի նախարարների կիզումը. մոնղոլներ, Չինգիզ խան, Ալփասլան, Իսմայիլ, Լենկ-Թեմուր, Շահ-Աբաս, աղա-Մահմադ...

Փախուստ, գաղթ. ավերում են քաղաքներ, դպրոցներ, վանքեր. վառում են պրոպարաններ, մատյաններ, մանուկների արյան բաղանիք.

գերեվարում են մի ժողովուրդ. ավեր է. նորից բողբոջում են, նորից որմնադիր. քար են տաշում, արտ հերկում, իմ աղնի՛վ, ստեղծագործո՛ղ ժողովուրդը. իմ արորավա՛ր, որմնադի՛ր ժողովուրդը. նա շինում է, նրանք քանդում են. նա շինում է, նրանք քանդում են, նա շինում է, նրանք քանդում են...

Տեսնում եմ — Համիդ, Թալաաթ, Էնվեր, Վիլհելմ, Գոլց փաշա, Հորվեգ. ջարդեր, ջարդեր (նկարագրություններ). անապատ, Դեիր-Զոր. հարեմ, բորդել. լկտի ծիծաղ, հրճվանք, որդու արյուն, հորի մեջ աղջիկը՝ «Թո՛ղ ապրի Հայաստանը». կռիվ, պայքար, հերոսացում. Միսակի մահը — լեռան վրա, վերարկուն ծածկեցին, որբեր, մայրեր, սգավոր, այրի, քաղցած, մերկ. մահ, մահ, համաճարակ, խելագարություն, ինքնասպանություն. աղբյուրից կերակուր գտնել. ես կատաղում եմ, ուզում եմ մարել աստղերը, կրծել բոլոր մարդկանց կոկորդը (չեզոքների անտարբերությունը). ուզում եմ գահավիժվել տիեզերական անդունդի մեջ։

Սերուկը բռնում է ինձ.— Ահա՛, ասում եմ, հավիտենականության մեջ տեսա միակ ոճիրը, հավիտենական ոճիրը. նզովք, տիեզերական նզո՛վք, դու ավերի, մահի, արյան, հրդեհի ժողովուրդ, ցեղ, անսիրտ, անհոգի, գազան, բորենի (որոնց նախանձում են աշխարհի բորենիները)...

Թո՛ղ կորչանվի աշխարհը, բոլոր ազգերը՝ բարեկամ և թշնամի, ցամաքի մարդու սերմը. նզովվի կնոջ արգանդը, և նզովվի տիեզերքը և Արարիչը... հայհոյանք, զայրույթ, թույր, մուր<...>

— Լսի՛ր,— ասում է ծերը,— մի՛ նզովիր, հասկացի՛ր...

— Գոյության կռիվ, պայքար, հաղթություն, ստեղծագործության խիղճ, գթություն, բարություն, հույս, հավատ, սեր, աշխատանք, վրեժ, դիմադրավել, նոր ազգ, նոր հայրենիք, զորք, զենք, գումարտակ, մահ, անձնազոհություն, վերածնունդ, հատուցում, հառաջադիմություն, ի խոսքն ասել... Թյուրքն ասեց — եղեռն ու ոճիր։

Հայը — հատուցում, գազանի զսպումն, պատիժ և ստեղծում. աշխատանք, ստեղծել, պայքարել, մարտ, ոգևորում, հարվածել և առաջ գնալ, ստեղծել...

Միաբանություն, կամք, համերաշխություն, և մեկը կդառնա հազար, հազարը՝ բյուր, բյուրը՝ բյուրավորներ...

Եթե ամբողջ Թյուրքիան ջնջեմ — դեռ քիչ է։

Ագա՛հ, թշնամի՛ ժամանակ, ե՛տ դարձիր. ե՛տ տուր իմ մանկությունս — հայր, մայր, քույր, եղբայր, ընկերներ, իմ սերս, իմ ուժերս

կյանքը իր ճիրանների տակ ճմլեց ինձ, քամեց ողնաշարիս ծուծը, և արյունս թունավորեց, արորեց, չարդեց ինձ. ա՜խ, եթե նորից մանկանայի — այս խելքով ու փորձով և պատանի ուժերով, ես կասեի, թե՝ ով է տերը աշխարհի։

Հազար-հազար տարիների մեջ միլիարդներով մարդիկ են ծնվել, երազել, խաբվել, ձղտել և հուսացել, և դաժան ժամանակը բոլորին մաշել ու փոշի է դարձրել։

Թախտ. բախտից զարկված, բախտից խաբված...

1916

Փետրվարի 28

... Այնքան մեծ է հայության վիշտն ու տառապանքը, այնքա՜ն ահռելի է ու տարօրինակ, որ մեծությունը չափելու համար տիեզերքի անհունությունն ու խորությունը պիտի առնել, իսկ ահռելիությունը սարսափների՝ որակելու համար բառարաններում բառեր չկան։ Եվ ո՛չ մի բանաստեղծ չի կարող արտահայտել, և միայն պիտի զգալ այն հասկանալու համար. իսկ զգացումը էլ չի կարող այդ ապրել՝ կմեռնի այդ սարսափն զգալով...

Սեպտեմբերի 21

Հայոց բոլոր արյունի մեղքը եվրոպացիների խղճի վրա է ծանրացած, նրանց համար ոչչ հայերը եղած չեղած՝ հավի չափ արժեք չունեն։ «Թո՛ղ կոտորե թուրքը, եթե այդ նրան պետք է, մանավանդ, երբ դրա համար մեզ կոնցեսիա է տալիս, ուրեմն թո՛ղ ջնջե. մեզ ի՞նչ. մենք մեր շահը, փողն ենք ուզում...»։ Եվ այդ Եվրոպան իրան հաշվում է քաղաքակիրթ, լուսավոր, քրիստոնյա։ Ամբողջ Եվրոպայում պետությունների մեջ (ինչպես և չինացոց և ճապոնացոց կարծիքն է) մորալ, կրոն կա, միայն ես, շահ, նյութ, փող. ուրիշ ո՛չ մի աստված, միայն ոսկի։ Նա առաջադիմել է գազանության մեջ կատարյալ զենքերով (Կրուպի) սպանել, մորթել, դավել, խաբել։ Ամեն բան chiffon de papier* է ո՛չ միայն գերմանների, այլ բոլորի մոտ, Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա, Ամերիկա և այլն...

* Թղթի կտոր (ֆրանս.)։

Այս պատերազմը բոլոր կովողների գույները ցույց տվեց, ցույց տվեց, որ բոլորն էլ բորենիներ են, խաբողներ, փոքր ազգերի դահիճներ, և ամենքի դրոշակը հյուսված է կեղծիքներից, խոստումներից, խաբանկություններից և մեծ գաղափարների (եղբայրություն, քաղաքակրթություն, ազգերի ազատություն, իրավունք, արդարություն) անուններից։

Ստորության և եղեռնի դրոշակակիր պետություններ... Կեղծ, գովող-խաբող դրոշակներ՝ փոքր ազգերին առաջ նետող և կոտորել տվող...

<...> Դարեր պիտի գան ու գնան, և խոսքի հանճարները չպիտի կարողանան հայկական սարսափների, տառապանքի, մարտիրոսության անհունը սպառելու...

Ես պիտի նստիմ Մասիսի ստորոտին, գլխիս մոխիր ցանեմ և լալ՝ լա՛մ՝ նզովելով ամբողջ աշխարհը՝ բարեկամ ու թշնամի, և ամեն հայ սրտում վառելով վրեժի օձ ու թույն։

Այսուհետև անհնար է հավատալ մարդուն, մորալին, բարոյականության, խղճի, խղճմտանքի, ազնվության, եղբայրության, մարդասիրության։ Մարդը կատարելագործված գազան է, ոչինչ ավելի և ոչի՛նչ պակաս...

Ա՜խ, ես էլ լինեի քեզ հետ, իմ խե՛ղճ, շարդվա՛ծ, ճղակտոր, ոտ և այրի՛ ժողովուրդ, որ հիմա <...> Միջագետքի անապատներում խորշակի ու մրրիկների բերան՝ մերկ ու քաղցած... լինեի ձեզ հետ, լայ ձեզ հետ...

Հայությունը խմեց ո՛չ թե դառնության բաժակը, այլ դառնության օվկիանը, մինչև մրուրը պարպեց... Հայություն՝ մեծ, հսկա, ահագին քո վշտով, քո տանջանքով...

Աշխարհը՝ քար, մարդիկ՝ օտար, թուքերը՝ գազան, մանկամորթ Եվրոպան՝ շահամոլ... իսկ հայերը՝ հավիտենական զոհեր... Եվ Աստված էլ չկա, միայն սատանան է, որ իշխում է...

Ինչպե՞ս դիմանալ — հայը տիեզերքից մեծ սիրտ պիտի ունենա, որ կարողանա տիեզերքի չափ այս ցավերին դիմանա... բարեկամների կողմից եկած անարդարությունները տանի և վատությունները հանդուրժե...

Սեպտեմբեր

Հայ ժողովրդին խաչ հանեցին և նրա կայքն ու գույքը և ազգային հնությունները Քրիստոսի պատմությանի պես բարբարոսները իրար մի վիճակի ձգեցին։

Ի՞նչ է հայկական կյանքը և իմ կյանքը — մի ծանր, խենթ, տենդավառ, արյունոտ բանդագուշանք, մի անլույս, հեղձամղձուկ մղձավանջ, որ կրծքիդ վրա լեռների պես դիզվում են ու ճնշում ու ճմլում հազար, հազար, ամեն կողմից՝ թշնամի ու բարեկամ՝ ավելի վատթար, քան թշնամի... Ե՞րբ է վերջանալու, ե՞րբ է սրա ծայրը երևալու, ե՞րբ է լույսը ծագելու...

Անտերությո՛ւն, անտերությո՛ւն. կորած, հոշոտված խեղճ ժողովուրդ։

Ո՞վ է քո բարեկամդ, ո՞վ է քո թշնամիդ — երկուսն էլ միևնույնն են՝ տարբեր դիմակներով։

Քար պետք է լինել, որ դիմանալ...

Դարերի մեջ, ամբողջ հազար տարի և ավելի երկար, արաբական արշավներից սկսած, Հայաստանը շատ փլուզումներ է ունեցել, բայց նա այսպես կամ այնպես կանգուն էր, սակայն այս վերջինը գլխեց ու անցավ, անգամ Լենկ-Թեմուրի, Շահ-Աբասի և Համիդի ավերումները չնչին, աննշան համեմատություններ են ներկայացնում այս վերջին, բոլոր ազգերի, բոլոր դարերում եղած սարսափներից գերազանց աղետի հանդեպ... Աշխարհի մեջ ամենասարսափելին, ամենաահավորը, ամենաահռելին ու ամենամեծը բաժին ընկավ հային, նա չունի իր վիճակակիցը. այդ սարսափներից այն կողմն էլ սարսափ չկա. դա սահմանն է...

Նոյեմբերի 5

... Հայրենի ավերակներից, հրդեհումներից ու փլուզումներից հող ու մոխիր է մաղվել քո վրա. քո աչքերի առաջ մորթեցին քո մանուկներին... Բավական է գութ ու ողորմածություն հայցես. ուժ, վրեժ, ցասում, հաղթանակ կամ մահ պահանջիր։

Քեզ ի՞նչ պատահեց, իմ անմա՛հ ժողովուրդ, ինչո՞ւ թողիր, որ քո հնձանները երեխաների արյունով լեցվի, հանգչի քո երդի հուրը, խորտակվի քո բերդի դուռը...

Ինչո՞ւ թուլացավ քո կորովը և աղեղդ ընդարմացավ. արդյոք չէ՞ մի, որ դու դավաճանեցիր քո հին բարի, արի աստվածներին և նրանք էլ լքեցին քեզ, իմ հեք, իմ աղքատ ու ձեծված ժողովուրդ...

Երբ մեզ մոտ վերջալույս է, ուրիշի համար արշալույս է սկսվում։ Արևը մի տեղ վերջալույսի մեջ է, մյուս տեղ՝ արշալույսի. կամ հետեվում վերջալույս է վառվում, առջևում՝ արշալույս։ Ինչ որ մեզ համար վերջալույս է, նա ուրիշի համար արշալույս է։ Արևը հավերժական, անընդհատ, շարունակական արշալույսներով ընթանում է։

1917

Հունվար

Հայաստա՜ն աշխարհ,

Դու աղամանդե լեռների վրա, այդ հավերժական սյուների վրա բարձրացած երկնասույզ աշխարհ, փիրուզե աշխարհ. դու աշխարհների մեջ անպարտելի կանգնած առաքինի նահապետ, որ անդավաճան քո սրբությանը և քո Աստծուն՝ հանապազ վառ ես պահում քո երգը, քո ատրուշանը, Թուրանի և Արաբի և Սարմատական տափաստանների խորշակն ու ցուրտը չկարողացան և չեն կարողանալու հանգցնել քո սուրբ հուրը. դու լույսի՜, ազնիվի՜ և մաքրության՜ շրաբաշխ, որ քո լեռներից սահանքում են գետերդ՝ տանելով ու սփռելով բարբարոսների հողերի վրա բարություն և օրհնություն։

Կա՞ ավելի դժբախտ, ավելի չարատանջ, ավելի արյունվող, քան դու. դու բազմադարյան զինվոր և նահատակ. անթիվ, անհամար թշնամին եկավ հարավից և հյուսիսից, արևելքից և արևմուտքից և թունավոր օձերի պես խրվեցին քո մարմնի մեջ և այլևս չանջատվեցին՝ դարեր ծծելով քո ազնիվ արյունը. թշնամին եկավ և դարձավ հարևան քեզ, սպանելով քո եղբորը և տիրանալով նրա հողին ու տանը և իր մահաբեր նիզակը ցցեց քո սրտին...

Աղավաղվեց քո հոյակապ լեզուն, նվաստացավ քո գեղարվեստը, և քո ստեղծագործ ոգին շղթայվեց։

Քո հացը տվիր նրան՝ հարևանիդ, քո եկեղեցիներում ներեցիր և օրհնեցիր քո հարևանին, բայց միայն թշնամի ունեցար և ո՛չ մի բարեկամ, ո՛չ մի բարեկամ՝ ողջ աշխարհի մեջ։ Քանդեցին քո դարպասները ու ոգիաշեն վանքերը, քանդեցին քո խրճիթները քո որդիների վրա, խեղդեցին քո դուստրերին թոնիրների մեջ, տրորեցին սմբակների տակ քո մանուկներին քո հնձաններում — քեզ տապալեցին գետին, բայց քո ոգին մնաց կանգուն՝ քո Մասիսի նման...

Իմ սո՛ւրբ ժողովուրդ, ես սիրում եմ, ես պաշտում եմ քո խավար խրճիթները, քո արտասվաթոր հացը և քո արյունաներկ արորը։ Ես պաշտում եմ քո փլատակ վանքի ամեն մի փշրված քանդակը և համբուրում եմ նրանց սրբազան մամուռը։

Դու չե՞ս մեռել, դու անմա՛հ ես, դու ինքդ անմահությունն ես հավերժական գաղափարը։

Հայի ոգի, արյան ծովերի մեջ ջրդեղված պողպատ, բյուր կայծակ է օրը հարվածում քեզ և ինքը ընկնում հարվածված։

Հակասական, վրդովեցուցիչ լուրերը վախեցնող չեն, հասկանալի են ներկա հուզված մոմենտում. օվկիանոսը հուզվել է, մի օրվա մեջ չի խաղաղվի։

Հայաստանն ազատվեց, այսպես կամ այնպես, այլևս կասկած չկա. վե՛րջ հայ մարտիրոսության։

Ապրիլի 27

Եվրոպան միանգամայն բարոյազուրկ է, հոգեպես փտած, և կամաց-կամաց ընկնում է տգիտության և անզգայության մեջ. շահը, պրագմատիկ նյութական շահը տիրապետում է բոլոր հոգիների և մտքերի վրա։ Շահով է չափվում ամեն մի արժեք, ով նրանց սանտիմ է տալիս, նա ազնիվ է և սիրելի — ուղղակի պոռնիկի հոգեբանություն։

Այդ է պատճառը, որ ահավոր, պատմության մեջ չտեսնված հայկական ջարդերը ո՛չ միայն զայրույթ չհարուցին նրանց մեջ դեպի Թուրքերը, այլ ջանացին օգտագործել այդ արյունը՝ դառնալ փաստաբան և պաշտպան Թուրքերի համար, ստանալով նրանցից վարձ ու հատույց, կոնցեսիաներ։ Նույնիսկ մեղադրեցին հայերին...

... Ինչպես հայր Ալիշանն ինձ 1901 թ. ասաց՝ «Ավերված է Եվրոպայի բարոյականը». խաչակիրների Եվրոպան չէ, այլ՝ բուրժուա-սոցիալիստ և Թուրքի սանտիմը սիրող։

Մենք կարծում էինք, թե հայկական ջարդերը պիտի խոցեն ազնիվ Եվրոպայի խիղճը, նա պիտի զայրանա, հուզվի և միահամուռ միանա և կռիվ հայտարարե Թուրքերի դեմ... Որքա՜ն միամիտ էինք. չգիտեինք, որ Եվրոպային պետք են այդ ջարդերը և՛ իր շուկան տարածելու, և՛ իր գիրքը ամրացնելու Թուրքիայում՝ ի հաշիվ հայերի արյան և մրցում մյուս պետություններին։ Մեր ջարդերի պատճառով եվրոպական պետությունները Թուրքի ձեռքը սեղմելու մեծ փառքը իրար ձեռքից էին խլում...

Օգոստոս

Իմ մեջ միշտ երկու մարդ է ապրել. մեկը նորմալ, գործող, սովորող, հետաքրքրվող, ուրախացող, ապրող, մյուս մասը՝ տխուր, անգործ, միշտ սևեռուն, միշտ կրծող — ցավեցնող, միշտ արթուն, չարչարող և խանգարող ու մեռցնող։

Դրա համար ինձնից դուրս չեկավ այն, ինչ որ կարող էր լինել՝ ի նկատի ունենալով իմ մեջ ամբարված կարելիությունները։

Ես կիսամեռ եմ, կիսակենդան։

Հայի ոգի՛, դու գեղեցկության, խորհուրդների և հրաշքների կոկոն... Դու գիտես, որ պիտի գա օրը և մանուկի թարմությամբ կբողբոջեն, կբացվեն քո փթիթները դարերի արյունոտ մղձավանջից հետո, այդ բուրմունքով պիտի հարբեն ազգերը, և բանաստեղծները իրենց կրքը քո բույրով պիտի օծեն... Վայր պիտի իջնեն աստղերից լուսաթիթեռները և ոսկեշապիկ մեղուները քո բաժակից ծծելու հավիտենական ամբրոսը։

Հայի ոգի՛, դու քո ազամանդե լեռներից բխող շափյուղյա աղբյո՛ր։ Թշնամին պղտորեց քո կայլակները և իր խժդժուժ կազկանձը խառնեց քո դաշնակներին, բայց դու գիտես, որ պիտի գա այն օրը, որ նոր արշալույսի տակ պիտի խոխոջես մանկական պայծառ ծիծաղով. նոր գեղեցիներով պիտի ցողես դաշտերը, և Հովվի սրինգին երգ տաս, և վարդապսակ կույսերի պարին՝ թափ ու թիռ...

Նո՛ր, հզո՛ր և խո՛ր երգերով քո հինավուրց հոգուց հորդացած հզոր գետերիդ պես պիտի երթաս, թափվիս մարդկության հանուր ծովի մեջ քո նոր դաշնակը հյուսելով հանուրի ներդաշնակության հետ։

Հայի ոգի՛, հայոց լեռների պես վերասլաց, ազամանդե, արևաբաց և հզոր ոգի՛, մաքուր ու սուրբ ոգի՛...

... Հայո՛ց աշխարհ, քո որդին առաջ գլուխը դնում էր բլբուլների բույների վրա, իսկ հիմա՝ կարիճների։ Դու իմ ավեր ու ավար հայրենիքա՛ն տուն։ Քո օրհնաբեր արորի տեղ հիմա օձն է ակոսում քո դարավոր սրբազան հողը. արտույտների տեղ՝ ագռավները, նավասարդյան եղնիկների տեղ հիմա ավազակ թշնամու ոտքերն են կոխկռտում քո մարմանդ ջրերը։ Բայց դու գիտես՝ արևի պես ծագելու է այն օրը, որ նորից բլբուլների բները կենդանանալու են և գեղջուկի ակոսները լցվելու նվիրական ցորենով։ Քո հանճարեղ որդիները նորից պիտի կապեն աշխատանքի գոգնոցները, և մուրճն ու կացինը, կարկինն ու ճախարակը պիտի ոգի առնեն և ոգի ստեղծեն... Եվ քո նորոգ, սալահարմ ճանապարհներով պիտի գան հեռավոր ազգերի և լեզուների աշխարհներից քարավաններ, բերելով գանձեր քեզ համար և տանելով հետներդ քո ստեղծած հրաշքները աշխարհի ամեն ծայրերը...

Իմ ժողովուրդ, գոտիդ կապի՛ր, և հավատարի՛մ մնա դու քեզ...

Ապրիլ 8

Ռուսական այս հրաշափառ հեղափոխության սկզբից, մարտի 16-ից մինչև այսօր՝ ապրիլի 16-ը, ես ներքնապես, համոզված եմ, որ ամեն բան աջող պիտի գնա, կոնտր-հեղափոխություն, ռեակցիա չի գալ-

1918

Մարտի 8

Այս սարսափելի օրերում, երբ հայ ամբողջ ազգի լինել-չլինելու առջև ենք կանգնած՝ քնելն է իմ երջանկությունը. միայն առանց երազի քունը, քանի որ երազներս նույն անհույս իրականության այլանդակ շարունակությունն են. իսկ երբ առանց երազի քնում եմ, երբ աչերս բանում եմ՝ սարսափելի իրականությունը պաշարում է ինձ սուսերամերկ, և սիրտս հալչում է ու մարում, ուզում եմ նորից քնել, քնել և լզարթնել երբեք։

Վրաս հոգի չկա, հազիվ եմ ապրում ու շարժվում։ Կյանքիս մեջ այսպես դժբախտ չեմ եղած. հազիվ՝ ասեղի ծակից մի նվազ հույս է շողում...

Երբ կարդում եմ թերթերը՝ սարսափից աչքերս ծածկում եմ, ասես թե՝ մեռնում եմ...

<...> Հայությունը աներևակայելի վտանգի մեջ է հիմա. ԵՊՔ անկորուստ դուրս պրծնի այս մահամերձ վիճակից, խոսք եմ տալիս ինձ՝ կյանքիս մեջ երբեք ախ չքաշել, չտխրել, չհուսահատվել, այլ ուրախ ու զվարթ, հարբած՝ ողևորված ապրել ու գործել...

Մարտի 9, ծրեն

Հայությունը ապրում է իր 3000 տարվա պատմության ընթացքում չտեսնված մի ճգնաժամ։ Թրքահայաստանը կոտորված ու ավեր, ու ամայի, իսկ Ռուսահայաստանը նույն օրհասի առջև սրտաղող կանգնած, աչխարհից, մարդկանցից և Աստծուց լքված, մենակ ահավոր թշնամու դեմ, գերմանաթուրան արյունարբու հորդաների առջև։ Այսօր հեռագիրը գուժում է Սամսոնի նոր ջարդերի մասին. վաղը և մյուս օրը թերևս Կովկասի... Քուրդ, թուրք, Կովկասի լեռնցիներ հեղելու են մեր երկիրը... Ինչպե՞ս պիտի դիմադրել և դիմանալ...

Ի՞նչ հույսեր կան...

... Ծանր, անհույս մտքեր. խենթացուցիչ հեռանկարներ։

Մեր ողբալի, հավիտենական ճակատագիր։

Մեր հայերը հավատով դիմել են Աստծուն և երգել.

Արի Աստուած հարցն մերոց,

Որ ապաւէնդ ես նեղելոց,

Հա՜ս օգնութիւն ծառայից քոց.
Անօգնական, ազգիս հայոց,
*Տէր, ողորմեա, Տէր, ողորմեա, Տէր, ողորմեա։**

Մենք մահապարտներս, Աստծուն չենք հավատում և մարդկանց վրա էլ հույս չունենք, քանի որ մատնվեցանք ու դավաճանվեցանք մի բարեկամներից՝ Թշնամու ձեռքը, ահավոր Թշնամու, որ հազար անգամ ավելի դաժան է, քան ասորական Թագավորները, քան Լենկ-Թեմուր, Ալփասլան, Ջարմաղան-խան, քան բոլոր բորենիները և վագրերը երկրագնդիս...

Բայց չպետք է հուսահատվել, այլ պետք է կռվել և կռվով մեռնել։

Մարտի

Այսօր թյուրքերը գրավեցին Էրզրումը. ուրեմն մոտենում են Կարսին. հայերը նորից պիտի կռվեն և հերոսաբար մեռնեն։ Մի՞թե ո՛չ մի տեղից օգնություն չպիտի հասնի մեզ...

Մի՞թե ես պիտի աչքովս տեսնեմ իմ ազգի մահը...

Կարոտ անկման օրը։

Միայն թե չմեռնի հույսը...

Մարտի

... Վայրկյանը չափազանց ծանր է, մեռցնող. մեր ահավոր պատմության մեջ իսկապես աննախընթաց. հայության կեսը ոչնչացավ. որ հասը, անխուսափելի օրհասը մյուս կեսին է...

Եվ ո՛չ մի տեղից փրկություն չկա...

Այս պատերազմը եղավ միայն մեզ ջնջելու համար։ Անչափ անգամ նզովվա՜ծ լինի մարդկությունը՝ գազա՜ն, ավելի քան գազա՜ն...

Մարտի

Ինձ համար պետք է մի երկարատև, աբսոլյուտ հանգիստ կյանք, որ կազդուրվեն քայքայված ջղերս...

Հաճախ Միսակի մահի գիտակցությունը ինձ կատաղեցնում է՝ ինչպե՞ս թե նա հիմա մեռած է և հող է դառնում, ոչնչանում. այդպես մատաղ, մատա՜ղ, խելո՜ք, սիրո՜ւն... Իսկ շուրջը կյանք կա, որին նա շատերից շա՜տ արժանի էր, որ վայելեր...

* Սիմէօն կաթողիկոս, ՔՀ, 59։

Ապրիլի 16

... Քանի ողջ եմ, կկռվեմ հայրենիքիս հողի համար, նրա ազատության համար, երբ որ մեռնիմ, կուզեմ, որ գերեզմանիս հողի վրա շրջեն ազատ ազդակիցներս։

Հունիսի 17, ծրեն

... Որոշեցի, առավոտյան պատգամավորների հետ թռչենք օդանավով՝ գնամ տեսնեմ Հայաստանի գավառները՝ Այրարատ, Սյունիք, Հեր, և Զարեհանդ, Վասպուրական, Տուրուբերան և այլն, մինչև Կիլիկիա <...> և քնեցի, հանգիստ և լավ. երբ առավոտյան աչքերս բացի, տեսա, ավա՜ղ, ինձ Լեմանի միշտ օտար ափերում, իմ օտարության անշուք սենյակում, Հայաստանի նահատակության և աշխարհասասան պատերազմի հինգերորդ տարեգլխի նախօրյակին։

Հուլիսի 11, ծրեն

Ուզում եմ ականջներս բուրդ խցկել, որ չլսեմ աղմուկը աշխարհի, մարդկանց.... և հեռանամ ամենալուռ, ամենահեռու մի վայր, մի քարայր՝ հանգիստ, անդորր, և մնամ այնտեղ տարիներ, տարիներ... ու խորհեմ երկարորեն, անընդհատ, և գտնեմ ճշմարտությունը, ճշմարիտ ուղիները, միջոցները երջանկության հասնելու, և հասցնելու մարդկությունը ամբողջ, բայց ամենից առաջ՝ անվրդով, երկարատև լռություն...

Երազիս մեջ՝ մեռել էի։

Ինձ դրել էին դագաղի մեջ, վրաս անկեղծ ու կեղծ լացեր ու ցավակցություններ. շշուկ ու աղմուկ։ Տարան թաղելու. քահանա, ամբոխ, աղմուկ, խոսք, զրույց, ճառեր։ Թաղեցին. վրաս հող լցրին. քահանան կարդաց, կարդաց. ես լսում էի այս ամենը ու ձանձրանում, սրտնեղում, ջղայնանում. գրգռվում, անհամբերությամբ սպասելով, թե ե՞րբ է վերջանալու այս ամենը։

Եվ սկսեցին հեռանալ. ականջս լարած լսում էի հեռացող ոտնաձայները. երբ գնացին, լռությունը իջավ, մնացի մենակ հողի տակ, ահագին ուրախությամբ, որ վերջապես հանգստության վայրկյանը հասավ։ Եվ շուռ եկա աջ կողքիս վրա, լավ մեկնեցի ոտքերս և անվրդով, ծով հանգստությունը ծծելով ու վայելելով, սկսեցի քնել, քնել...

Մինչև որ զարթնեցրին ինձ՝ նորից լսելու, կարդալու, տանջվելու, հուզվելու համար։

Մենք պիտի կռվենք մի անհույս հույսով. մենք պիտի հաղթենք թյուրքերին — դա մեր հույսն է, եթե կուզեք կասեմ՝ մեր անհույս հույսն է։

Նոյեմբերի 31

<...> Թո՛ղ նոր սերունդները գան, որոնց հոգին պղտորված չէ ատրապետով ու վշտով, ուրախանան և պայծառ սրտով երգեն հայության ազատությունը։

1919

Հունվարի 23, ժրկն

Կտրեցե՛ք, կտրեցե՛ք թուրքերի լեզուները, որոնք հանդգնում են գարնանը երգել մեր մորթած մանուկների անթաղ, ցիր ու ցան ոսկորների վրա, որոնց ծածկել են անգութ, անզգա, անտարբեր, սինլքոր ծաղիկները...

Հուլիսի 14

Լուսադեմին, երազ տեսա. մայրս ժպտում էր, իր սովորական տխուր, վշտահար ժպիտը աչքերի մեջ. կարծես ձեռքեր չուներ, արմունկից սկսած. այդպես թվաց. զարթնեցի. մի տեսակ զգացում ունեի հոգուս մեջ, որպիսին երբեք չէի ունեցել մորս երազումս տեսնելու դեպքում, մի խարհրդավոր, տարօրինակ զգացում (և մորս շատ վաղուց չէի տեսել). այդ զգացումի ազդեցության տակն էի, երբ քիչ անցած, առավոտ, անկողնուս մեջ, լսեցի մորս մահը...

Ջարմանալի, խորհրդավոր զուգադիպում...

Սեպտեմբերի 12

Հույսը մարդու հոգու և մարմնի մեջ ամենից ուշ է մեռնում։ Համախ նա գերեզմանից այն կողմն էլ է ապրում։

1920

Հունվարի 21, ժրեն

Արմիստիսից* մինչև այսօր 15 ամիս է անցել և հայոց հարցը մեր «բարեկամ» Անտանտը դեռ չվճռեց։ Անցյալ ամբողջ տարվա ընթացքին (1919 թ.), մենք ունեցանք նորից, և այս անգամ ամենամեծ, զարհուրելի հիասթափությունը եվրոպացի մարդու ազնվության վերա. մենք տեսանք, որ եվրոպացին միայն մի Աստված ունի՝ տնտեսական շահը, ինչպես որ եվրոպացի անհատը էգոիստ է, այնպես էլ նրանց պետությունները՝ էգոիստ, ցինիկ էգոիստ...

Ամբողջ տարվա ընթացքում մենք տեսանք, որ եվրոպացին ձգտում էր թաղել հայկական հարցը, անտարբերությամբ հայտարարելով, թե Հայաստանում հայ չկա, ցավում ենք, բայց ի՞նչ արած, Հայաստան չի կարող ստեղծվել...

... Եվ այս ամենը իրենց հինգ տարվա շարունակական խոստումներից հետո. նրանք Հայաստանի նահատակությունը և արյունը շինեցին իրենց համար ագիտացիայի միջոց և հիմա մեզ վատաբար լքում են մեր դահիճների ձեռքը...

Ահա՛ մերկ, իսկական, դաժան իրականությունը...

Փետրվարի 22

Կիլիկիայում նորից չարդեր՝ 7000 հայ. կրկին չարդում են հայերին, և մեր դաշնակիցները բավականանում են լոկ դատարկ խոսքերով մխիթարելով հայերին և վախ տալով թյուրքերին. սակայն թյուրքը շատ լավ գիտե եվրոպացիների սպառնալիքի արժեքը...

Մեզնից հիմա օգուտ չունեն. ունեին, երբ նեղն էին, պատերազմ կար, խոստումների շրջան էր, որ կռվեին հայերը, որ չարդվեին և դրանով զենք տային իր ձեռքը՝ վարկաբեկելու Թյուրքիային և Գերմանիային, մանավանդ Գերմանիային՝ չեզոքների առջև, և մեր սուրբ արյունով իրենց կեղտոտ դատը սրբագործեին. իսկ հենց որ պատերազմը վերջացավ՝ հիմա շահը. մեզնից ի՞նչ շահ. քանդված երկիր, ավեր, սով, չարդված, մերկ ժողովուրդ... իսկ թյուրքը, քուրդը, թաթարը հայերին կողոպտել են, փող ունեն, քանդված չեն, շեն երկիրներ ունին, ուրեմն նրանց հետ բարեկամանալ՝ օգտվելու համար. հապա հայե՞ր... Պետք

* Զինադադար։

է նրանց օգնեն, հաց տան, փող տան, հագուստ տան, զենք տան... Ուրեմն թող կորչին հայերը, մեռնին, որ իրենք ազատ զգան հատուցումից, երախտիքից, պարտքից։ Քուրդը սպանում է իր երախտավորին՝ ազատվելու համար. իսկ եվրոպացին ինչո՞վ է բարձր քուրդի մորալից, եթե ոչ միայն կատարելագործված թնդանոթներով։

Իսկ մամո՞ւը... Սա որ իր երկրների պես պոռնիկ է, վաճառված, ստանում է փող. և արդարությունը, մարդկությունը, իրավունքը, բարին ուրանում...

Ո՞ւր է գնում եվրոպական մորալը — դեպի անկում։ Բոլշևիզմյան հոդմը պիտի գա մաքրե այս գարշահոտությունը. և բոլշևիզմյան հեղեղը մաքրելու է ֆրանսիական, անգլիական, իտալական և մյուս ախոռները, աղբակույտերը...

Փետրվարի 29

Կիլիկիայում նորից ջարդ, 20 000։ Ուրեմն հավիտենական ջարդ։ լինի Գերմանիայի տիրապետության տակ, թե այսօր Ֆրանսիայի։ Հայության ճակատագիրն է — ջարդ, ոչնչացում. ո՛չ մի տեղից փրկություն։ Հաղթական դաշնակիցներ, հաղթված թյուրքեր... և նորից ջարդ ու ջարդ։

Ամերիկան ճառում է մարդասիրությունից, Հայաստանի փրկությունից, բայց չուզեցավ մի փոքր զոհաբերություն, մի բանակ ուղարկելու Թյուրքիա՝ պաշտպանելու հայերին։

Անգլիան զինադադար կնքեց, ինքը թյուրքերի հետ չդատարկեց Հայաստանը, զինաթափ չարեց թյուրք զորքը, և թողեց ամբողջ 16 ամիս Հայաստանը թյուրքերի ձեռքում, որ ավերեն, քանդեն, ոչնչացնեն մնացածներին. կովկասահայերից, պարսկահայերից կողոպտած հարստությունը թյուրքերը ժամանակ ունենան տեղափոխելու իրենց երկրի խորքերը... Եվ հազար ու մի խաղ խաղաց՝ Հայաստանը սահմանափակելու միայն Կովկասով<...>

Իսկ Ֆրանսիա՞ն... Կիլիկիան գրավեց և թույլ է տալիս սարսափելի ջարդերի. ինչո՞ւ չէ, ի՞նչ կորուստ ունի ինքը... խի՞ղճ — վագրի մոտ խիղճ ե՞րբ է տեսած...

Գերմանիային մեղադրում էին, թե թույլ է տալիս, որ հայերին ջարդեն — ինքը ի՞նչ է անում... Թշնամին կոտորում է քեզ ապավինած ժողովրդին, իսկ դու հրճվանքով Պոլիսն ես նրան ընծայաբերում. թերթերդ՝ վաճառված, կաշառված քո բերանը, քո հասարակության ձայնն ու խիղճը՝ պահանջում է Թյուրքիան թողնել անձեռնմխելի...

Լի՛ր Ֆրանսիա, գնաց զինաթափ արեց հայերին, կամավորներին

և զինեց քուրդերին, թյուրքերին — գնաց Մուսթաֆա Քեմալին այցի և սիրաշահեց։

Խե՜ղճ, խե՜ղճ հայ ժողովուրդ, հազար անգամ ջարդված. հիմա էլ ի՞նչ ունես, որ ջարդեն քեզ, արդեն ջարդված, խեղճ, մերկ, աղքատ, որբ, այրի, հիվանդ... նորից ջարդ... ի՞նչ գազան, գազանի սիրտ պիտի ունենան այդ թյուրքերը, որ... իրենց կողմից հազար ու մեկ անգամ ջարդվածին, նորից են ջարդում...

... Ամբողջ մուսուլման աշխարհը Իսլամի անունից Պոլիսն է պահանջում, իսկ քրիստոնյա մարդկությունը զոհ է բերում քրիստոնյա եղբորը իր շահի համար։

Երբ կարդում ես հայոց պատմությունը, տեսնում ես, որ ինչքա՞ն մարդը գազան է... տեսնում ես, որ բնավ գութ, խիղճ գոյություն չունի, և մի մորթվող ազգ՝ բարեկամ չունի անկեղծ։

Հունիսի 8, ծրեն

Հայ ժողովրդի անանուն տառապանքը, եթե գրելու լինի մարդը, պիտի միլիոն հատոր լեցնե, որովհետև միլիոն զոհի զարհուրելի պատմությունն է, որ պիտի պատմվի. ամեն մի զոհի տառապանքները մի հատոր կպարունակեն, սակայն, մի քանի խոսքով պատմելու որ լինենք, այսպես կլինի.

Անտանտը արդարության, ազատության, փոքր ազգերի ազատագրման՝ բազմիցս մեծազդեցիկ խոստումներով զարդարեց իրան, հայ ժողովուրդը, հավատալով այդ խոստումներին, կռիվ մտավ և ջարդվեց ու կոտորվեց. Անտանտը օգտագործեց այդ ջարդերը իր պատերազմական շահախնդիր նպատակների համար, աշխարհի համակրությունը գրավելու համար, խորամանկ կերպով իր սրտի դավերը իր ստոր դեմքի ժպիտներով ծածկելով։ Եկավ զինադադարը. առաջին դավաճանությունը ծայրը ցույց տվեց. Հայաստանը չգրավեցին, դատարկել չտվին, ապա գնացին Կովկաս, զինեցին թաթարներին՝ նավթի համար՝ մեր դեմ, թյուրքերին շոյեցին... թույլ տվեցին Կիլիկիայի և Հայաստանի հանրապետության ջարդերը, և ապա վերջը մեր արյունի գնով Կ. Պոլիսը գրավելով՝ ստիպում են մեզ մեր ուժերով, պատերազմով գրավելու տրվելիք հայ հողերը, որպեսզի մնացած հայությունն էլ կոտորվի թյուրք-թաթարքուրդ ոհմակների միջոցով։ Ապա իրենց վատությունը արդարացնելու համար սկսեցին հային մեղադրել... Սրիկա՛ գրողներ, ժուռնալներ, սենատորներ և միսիոներներ՝ ամենքը կաշառված, վարձված, իսկ մա-

մուլը՝ այդ յոթերորդ մեծ պետություն կոչված պոռնիկը, սկսեց հայերին դավել և թյուրքին գովել...

Ահա՛ այս ահավոր դավաճանությունը, պատմության մեջ չտեսնված, պատմության մեջ անունը չունեցող մի մեծ ոճրի հանդեպ։

Սո՛ւտ են մարդկություն, խիղճ, արդարություն, քրիստոնեություն խոսքերը. Եվրոպան գազան է և ավազակ, արյունարբու և ոճրագործ. խեղդել բոլորին, բոլորին... և ինքնասպան լինել, ջնջվել այս լիրբ աշխարհից...

Թեև պոլիտիկայի մեջ հիշողություն չկա, բայց երբեք մոռանալու չենք Սան-Ռեմոյի դավաճանությունը.— սրիկա Նիտտի, որ Միլերանի և Ֆոշի հետ երեք օր կռիվ մղեցին Էրզրումի շուրջը՝ թյուրքին թողնելու համար։

Գարիբալդիի հայրենիքը մեզ դավաճանեց. Ֆրանսիան միշտ սրիկա էր...

Զեռք բերեցինք իրատեսություն։ Իրերը տեսնել այնպես, ինչպես որ նրանք կան, իրական են, և ո՛չ թե մեր փափագների, երազների համաձայն։

1921

Մայիսի 27, Վենետիկ

... Թյուրքը կոտորեց մի ողջ ժողովուրդ, շարաշար կերպով, և Եվրոպան, նույնիսկ Ամերիկան արդարացնում է... Թուրքը սպանեց մի ողջ ժողովուրդ, որ սիրում էր եվրոպական կուլտուրան, եվրոպացուն ցեղակից էր և հավատակից եվրոպացուն. Թուրքը կողոպտեց այդ ժողովրդին, ոչնչացնելով նրա կուլտուրան, հնությունները... և հիմա այդ Եվրոպան թուրքին գրկում է, համբուրում, ճաշեր տալիս, մամուլը գովում է, փառաբանում...

Ահա՛ եվրոպական քաղաքակրթությունը՝ շնական, բորենիական, վայրենի, բարբարոս մի քաղաքակրթություն...

Անհնար է որակել...

Հուլիսի 4, Վենետիկ

Գերմանական դատարանը արդարացրեց Թալաաթի սպանողին... ասկայն լիրբ անդլիացիք բաց թողին բոլոր չարդարարներին, այն անդլիացիք, որ հայերի արյունով ներկեցին իրենց քնչաքաղց սև դրոշակը։

Հավատացած եմ, որ եթե Թալաաթ բռնված լիներ Մալթա, նորեն ազատ կարձակեին... Ողորմելինե՛ր...

Հայ ազգը չի՛ մեռնի. նա պիտի՛ ապրի, պիտի ապրի ձեր բոլորի գերեզմանների վրա՝ նո՛ր, ազա՛տ կյանքով...

Օգոստոսի 17, Ազոլո

Մուսթաֆա Քեմալը հաղթվելով ներս է փախչում, իր հետ տանելով հայության բեկորները, ջարդելով, կախելով, կողոպտելով...

Զեյթունն էլ ոչնչացավ, Կովկասումն էլ ահեղ են եղել ջարդերը, մոտ 60000 հայ է սպանվել — կոտորվել։ Եվ բանը նրանումն է, որ այս ջարդերը այլևս ո՛չ մի ազդեցություն չունեն եվրոպացիների և ամերիկացիների վրա. այլևս չեն կարդում, չեն հետաքրքրվում, չեն խոսում. թքել են հայերի վրա, և վերջ...

Օգոստոսի 21

Կիլիկիայից եկած Քեշիշյանը, որ կուսակցական մարդ չէ, վաճառական է, հետևյալն ասաց.— Թյուրքերը պատերազմի մեջ մտան հայությունը խպառ-սպուռ ջնջելու համար. միայն այդ նպատակի համար. չեզոք մնայինք — չմնայինք՝ պիտի ջարդեին։ Թյուրքը՝ թյուրք է՝ հին, նոր, զարգացած, տգետ, լուսավոր, մոլեռանդ, իթթիհատ, իթթիլաֆ, միլլիմի — ամենքը մի նպատակ ունեն՝ ջարդել, ջնջել հայությունը, և մինչև այսօր էլ ջարդում են և պիտի ջարդեն ամեն ժամանակ, երբ առիթ ունենան. ռուսահայ, պարսկահայ, ինչ հայ ուզում է լինի, բավական է, որ հայ է։ Եվ գիտեն, որ եվրոպացին <...> ջարդելուն արգելք չէ. դրա համար քառասուն տարվա հաղարավոր ապացույցներ ունեն, անպատիժ ջարդում են և արդարանում։

Ֆրանսիացիք ամեն կերպ ուզում են Կիլիկիան թյուրքերին թողնել, որպեսզի թյուրքերը հայերին ջնջեն, մաքրեն, իրենց տիրապետության գործը դյուրացնեն։ Ֆրանսիան չի ուզում հայի ստվերը տեսնել Կիլիկիայում և դրա համար էլ չի ուզում գրավել Կիլիկիան, որ հայերը չմնան, քանի որ՝ եթե ինքը տիրե, չի կարող հայերին մաքրել. ջնջել, այդ գործը հանձնում է թյուրքերին։

<Օգոստոս>

<...> Եվրոպացին թքեց իր տված հանդիսավոր խոստումների վրա, տրված պարլամենտներում, տաճարներում, թագավորների և նա-

խաղաղների բերնով։ Մարտիրոս Հայաստանի անունով վարկաբեկեցին Գերմանիային, գրգռեցին չեզոքներին, ոգևորեցին իրենց զինվորներին, և նվիրագործեցին իրենց ավազակային պատերազմը, օգտվեցին հայ կամավորներով, հետո թքեցին հայի վրա, մնացորդները ջնջված մի ազգի՝ մատնեցին նորից դահիճների ձեռքը։

Ասում են, թե կապիտալիստներն են մեղավոր, նրանք են պաշտպանում Թյուրքին՝ իրենց տված փողերի համար և ապագայում Թյուրքին շահագործելու համար, հային նվիրում են Թյուրքին՝ պարարտացնելու նրան, սիրաշահելու, կաշառելու համար։ Լավ։ Ապա սոցիալիստնե՞րը, նրանք, որ կռվում են խեղճերի, ճնշվածների դատի համար։ Նրանք թող բողոքեին և պաշտպանեին։ Սակայն նրանք էլ կաշառված են և լկտի. նրանք միշտ պաշտպանում են իրենց երկրի բուրժուազիայի արտաքին շահերը, գաղութային պոլիտիկը նրանք ուզում են, որ ուրիշ ազգերը՝ մանր, ճնշված՝ կողոպտվեն... Անգլիացի սոցիալիստը չի ուզենա զրկվել Հնդկաստանը շահագործելուց, այդ է պատճառը, որ լիբ Հինդերսոնը կամ լիբ Լոնգեն պահանջում էին, որ իրենց զինվորները հեռանան Հայաստանից և Կիլիկիայից. հոգ չէ, թե հայերը կջարդվեն. բայց չեն պահանջում, որ նույն զինվորները հեռանան Ալժիրից, Թունիսից, Հնդկաստանից, Միջագետքից...

Մեր հանդեպ ամեն կուսակցություն քար ու գաղան դարձան...

Ահավոր վիճակ, դժոխային կացություն։ Խաբված, լկված, ջարդ ու փշուր եղած, սովալլուկ, համաճարակով ոչնչացվող մի ազգ, որ Քրիստոսի խաչի սիրուն խաչվեց՝ հավատալով իր հավատակիցների խոստումներին, որոնք Հուդա եղան, և առանց խղճի խայթի, որ Հուդան ունեցավ վերջին...

Հոկտեմբերի 22, Ազգ

<...> Մենք ձգտում էինք ազատության՝ կռվելով, զոհվելով՝ հույսերս դրած քրիստոնյա, լուսավոր, քաղաքակրթված Եվրոպայի վրա երեխայի պես հավատալով, թե Եվրոպան Հայաստանը կազատե, Թուրքին կպատժե. բայց մենք եվրոպացուն չէինք ճանաչում. Թուրքը հրաշալի է ճանաչում նրան. հայությունը ջնջեց, վստահ լինելով, թե հայով ուզող չկա իրենից, վստահ լինելով եվրոպացու քարասրտության, շահամոլության, կաշառակերության վրա... Եվ չխաբվեցավ Թուրքը... նա հայությունը կոտորեց, կողոպտեց և այդ կողոպուտով կաշառեց եվրոպացուն՝ թերթ, մամուլ, սենատորներ, նախարարներ, միսիոներներ։ Ինքը սրիկա է և հույսը սրիկաների վրա է, որով լցված է Եվրոպան<...>։ Թյուրքը սպանեց հայությունը և ասում է, թե հայի քիթ չի արունել. և եվրոպացին ասում է՝ ճիշտ է։ Թյուրքը ասում է՝ հայը վաշխառու է, ջհուդ է. և եվրոպական մամուլը, որ ջհուդների ձեռքին է, ասում է՝ այո՛, ճիշտ է։ Թյուրքը ասում է՝ հայը կոտորեց մուսուլմաններին. եվրոպացին ասում է՝ ճիշտ է։ Եվ ստանում է Թյուրքից ոսկի՝ հայի արյունոտ ոսկին...

Դեկտեմբերի 21, Վենետիկ

Այսօր արդեն փաստ է, որ Ֆրանսիան Կիլիկիան հանձնեց Թյուրքերին։ Անգլիան, Ամերիկան բողոքեցին և անցան։ Եվ այլևս մարդ չկա, աշխարհի վրա ո՞չ մի մարդ, որ հավատա եվրոպացու կամ ամերիկացու հայասեր խոսքին. խաբեցին հայերին 40 տարի շարունակ, ոչնչացնել տվին մի ազգ, գրգռելով Թյուրքին, և այժմ նույնիսկ ատում են հայերին, և գովում Թյուրքերին իբրև «քաջ, ազնիվ» ազգի։ Ամեն եվրոպացի և ամերիկացի (միսիոներ և Ռոբերտ քոլեժի տեսչություն) կաշառվող է և կաշառված է Թյուրքերից...

Բրիանը, որ հազար խոստումներ արավ հայերին պատերազմի ընթացքին, այսօր հայերին հանձնում է Թյուրքերին, որ ջարդեն, ջարդեն... Եվրոպական պետությունների համար պետք է հայի արյունը...

... Անգլիացիք ասում են, թե Հայաստանի մեջ մենք պետական շահ չունենք. միայն մարդկայնություն, հումանիտետ...

Մալթա տարած ջարդարար փաշաներին — բեյերին Անգլիան բաց թողեց իր գերիները ազատելու համար. մեր արյունով իրեն գործն է տեսնում...

Դեկտեմբեր

<...> Եվրոպան օձը նորից տաքացնում է մարդկության կրծքի վրա <...>

Սո՛ւտ են եվրոպացիների գովեստները մեր մասին, նրանց ճառերը, սո՛ւտ. շա՛հն է միակ ղեկավարող ոգին նրանց գործերի և մտածումների։ Մեր եղերավեպը նրանց համար հասույթի աղբյուր դարձավ. և մեր անորակելի, աննախընթաց չարդերը միայն բազմացրին, աճեցրին մեր դեմ ունեցած ատելությունն ու արհամարհանքը և Թյուրքասիրությունը իրենց ախտավոր հոգիների մեջ զարգացրին, իրենց այդ գարշելի հնչտանքը։ Մեր օրորոցի կաթնակեր մանուկներից սկսած մինչև ծերերն

ու պառավները արյունով վճարեցին հայկական ազատագրության գինը, բայց Եվրոպան՝ ամենքը առանց բացառության՝ յուրացրին մեր այդ արյունի գինը...

... Եվ մեր մեջ մեռավ հավատքը դեպի մարդը, կուլտուրան, Աստված, մորալ, իդեալ <...> Եվրոպան մեր արյունը առուտուր դարձրեց...

1922

Հունվարի 3, Վենա

Կիլիկիան տվին Թյուրքերին, տասնյակ հազարավոր հայեր փախան իրենց տներից այս ցուրտ ձմռան... Եվ Անգլիան փակեց Պալեստինի, Միջագետքի և Եգիպտոսի սահմանները, որ հայերը չմտնեն, որ թե չլսուեն իրենց վրա, ինչպես լորդ Կրզոն հայտնեց Քեմբրիջի արքեպիսկոպոսին, թե Անգլիան պատասխանատու չէ, իրավունք չունի ազգային գումարներ ծախսելու հայերի համար։ Պարլամենտում, հարցապնդման ժամանակ, մի երեսփոխան ասաց, թե՝ հայ և Թյուրք իրար կոտորել են, մեզ ի՞նչ. հայերը իրրև թե մեզի օգնել են, բայց դրա համար փող են առել և ապրիլ և էլի ապրում են։ Իսկ նախարար Չեմբերլեն ասում է, թե Անգլիա վարչապետը կամ արտաքին գործերի նախարարը թեև խոստում է տվել հայերի ազատագրման, բայց այդ չի նշանակում թե պետությունը հանձնառություն ունի...

Այսպես։ Լուծեցին հայոց հարցը. իրենց երեսից միլիոն հայ մորթվեց ու կողոպտվեց՝ ողջ ազգը. իրենց դրոշակը սրբագործեցին մեր մարտիրոս ժողովրդի արյունով...

Գերմանիայում մինիստր Գեռպերգ ասաց, թե. «Մեզ վնասեցին Բելգիան և հայերը. ամբողջ աշխարհը մեր դեմ գրգռվեց...»։ Եվ հիմա Ֆրանսիա, Անգլիա, Իտալիա լիզում են Թյուրքերին, սիրաշահում, մեղ մեղադրում, Թուրքին արդարացնում... Այլևս ոչ մի խոսք կոտորածների մասին, Հայաստանի մասին, այլ՝ «Միլլին (Մ. Քեմալ) իրավունք ունի հերոս է... Նոր Թյուրքիա... Պոլիսը կհանձնենք, պիտի հանձնենք... խալիֆաթը հարգել...» Մի խոսքով վերադարձան իրենց հին հեշտանքին...

Այս բոլորը արժեց մեր կենի բնաջնջմանը...

Փետրվարի 17, Վենա

Հայկական հարցի վիժումը հասկանալու համար պետք է նկատի առնել մարդկային բնավորությունը. մարդը իր ծագումով գազան է, այ-

սինքն էգոիստ, բարոյազուրկ մի արարած. անասունը իր քաղցը հագեցնելու համար ձեռքն ընկած արարածները կհոշոտեն առանց խղճի խայթի. ուտելուց հետո գոհ կպառկի. բարոյական օրենք գոյություն չունի նրա համար, այլ բնական օրենքը. ուժեղը թուլին պիտի ուտեր։ Սակայն մարդը ստեղծեց ուրիշ աշխարհ, բարոյական մի աշխարհ բնականի վրա, ուր գրվեցավ բարոյական օրենքը — մի՛ սպանիր, մի՛ գողանար, սիրիր, կարեկցիր, լավություն արա, զոհաբերվիր, այսպիսով կռիվ հայտարարվեցավ բնության դեմ. սակայն այս նոր մարդկային աշխարհը եղավ թույլ, գոնե հիմա՝ բնականի հանդեպ, և մարդը մնաց նույն գազանը, սակայն ավելի զինված ու կատարելագործված իր չարիքները խորամանկորեն հաջող իրագործելու (զենք, բերդ, թնդանոթ, թույն, դիպլոմատիկա) և իր գազանական էությունը քողարկում է բարոյական սպեն շղարշով, խաղկրիղի կեղծություն՝ թե՛ ավելի խաբելու միամիտներին, թե՛ հաճելի լինի միջավայրին և թե՛ հարկ տված լինի բարոյականությանը, որովհետև վերջինս ընդունված է և սրբագործված իբրև կրոն, մորալ և այլն՝ հիմքեր հասարակական կարգերի։

... Թուրքիան ամերիկական մի ընկերության հանձնել է երկաթուղիների շինությունը. Աղանա — Դիարբեքիր — Բիթլիս — Սամսոն — Սվազ — Կարին — Վան։ Այդ այն խորհրդով է արել, որ Ամերիկային կապե իր շահերով։ Թուրքիայի պահպանման մեջ։ Երբոր Ամերիկան իր միսիոներների կոլեջների համար Թուրքիայի ողջությունն է պաշտպանում և հայերին թաղում, իր կապիտալիստների համար ևս առավել։ Արդեն Թուրքիան սկսել է Ամերիկայում գործեր գործունեություն, իրանպաստ... Թյուրքասիրության պրոպագանդ, հայատեցություն ցանելով, և ավելի գործնական միջոցներով՝ մենաշնորհներով, կաշառքով։

Հայկական հարցի ամբողջ պատմության ընթացքին այս «մենաշնորհ» ճիվաղային թիսման միշտ փրկել է Թուրքին. ջարդել, և ապա լռեցնելու համար մենաշնորհ տալ՝ Անգլիային, Ֆրանսիային, Գերմանիային... Մեր հարցը եղավ Եվրոպացու համար շահի մի անսպառ աղբյուր. մեր արյունով է ներկված Եվրոպացու կերած հացը...

Եվ Թուրքը... լավ կարդացել է և ճանաչել Եվրոպացու հոգին, այսինքն դժվար էլ չէր. նա իր հոգին տեսավ կրկնված, մշակված՝ Եվրոպացու մեջ. և իր ճանաչողության ուղիղ կետի վրա կանգնած,— ջարդեց հայերին, պատմության մեջ աննախընթաց քանակով և վայրագությամբ։ Եվրոպան բոլորը... և հիմա անպատիժ, հարգված հացասեղան են նստում «քաղաքակրթված» մարդագայլերի մոտ... Սարսափելի է, երբ տեսնում ես, որ սա երազ չէ, այլ իրականություն...

Հունիսի 2, Վենետիկ

Իմ խեղճ, իմ նահատակ, իմ մեծ ժողովուրդ, հղի նոր խոսքերով, ճշմարտի տեսիլներով, բայց շարդված, ասված, թքված ու արհամարհված աշխարհի բոլոր լկտի և լիրբ ազգերի կողմից՝ շահամոլների և պոռնիկների կողմից, ոճրագործների և բռնավորների. տմարդ, տգետ, սրիկա թշնամին ջախջախեց քեզ՝ արմատախիլ արեց քո բազմահազարամյա հողից, քո բյուրավոր մանուկներին, ծերերին, մայրերին, աղջիկներին, ոամիկին ու շինականին խողխողեց, քո լուսավոր զավակների գանգերը փշրեցին բարբարոս խավար ոհմակները, քո հինավուրց ոստաններն ու վանքերը փոշի դարձրին և նրանց հրդեհի ու ավերակների մեջ թողեցին բյուր բյուրոց, երգ ու երազ, հույսեր, թռիչքներ, գեղեցկություններ, գիրք ու դպրություն։

Քո հարստությամբ վայրագ թշնամին՝ կաշառեց Եվրոպան՝ ոսկի, կեղծի և նենգության, վաճառքի այդ շուկան, դահճին արդարացրին, և զոհին մեղադրեցին՝ իրենց խիղճը մեռցնելով։

Անմեղ կույսերիդ, որոնք միայն լույս և սեր էին երազում, լլկեցին սրիկաները, սրբակրոն մայրերի աչքերի առջև. մեր պապերի երկիրը ծածկեցին մեր երեխաների փշրված ոսկորներով, մեր հորերը՝ նահատակների դանգերով։ Գետերը ծածկեցին դիակներով, և անգղներն ու բորենիները եկան աշխարհի ամեն տեղերից անվախճան խնջույքի. արյունդ հեղեղեց լեռներն ու ձորերը, բայց արյանդ գինը յուրացրեց վաղխառու Եվրոպան՝ Քրիստոսի խաչին թքող Եվրոպան<...>

Բյուր-բյուրեր բոկոտն, կողոպտված, ծեծված, անոթի-ծարամ յաթաղանի տակ քշեցին անապատները և քաղցից խելագար՝ մեռցրին։ Բոլոր վայրի, գազան ժողովուրդները մաս առան քո աղջիկներից, որբերից, դանձերից ու ձեռակերտներից, բոլորը հոշոտեցին քեզ, քրքրեցին, կերան, կրծեցին։

Բոլոր սինլքոր հոգիները միաբանեցան քեզ վատահամբավելու, գովելու, չարախոսելու և չարաշահելու։

Բոլորը խնդիր են քեզ ոչնչացնելու, իսպառ-սպուռ, որ խղճիդ վրդովող չլինի, դատ պահանջող...

Եվ երկիրդ հիմա աղտեղում են, պղծում, խառնում բոլոր ավազակ, քոնի, բռի, վայրի ազգերը, քո գերեզմանի վրա իրենց ավազակային և պոռնկային որջերն ու հարեմները շինելու։

Լացեցիր և արդարություն աղերսեցիր հզորներից,— նրանք եկան ոճրագործների հետ կողոպուտին հաղորդ լինելու...

Դո՜ւ՝ եսապաշտ, նյութապաշտ, եսամոլ, շահամոլ Եվրոպա՜, արյունարբու, խաբեբա, խարդախ։

Դո՜ւ՝ իմ ժողովուրդ, սո՜ւրբ, մաքո՜ւր, միամի՜տ ժողովուրդ, զոհ քո հավատքին դեպի մարդը, եղբայրը, մարդկայինը, սերը, ազնվությունը, գութը, համամարդկայինը, արդարությունը և վեհ իդեալները...

Դու քո ջարդված, ճզակոտոր, հաշմ տեղովդ բարձր ես բոլորից, բոլորից։

Եվ իդեալներից ճառող գաղափարախոսները եղբայրացան դահիճներին ու մանկամորթներին... Ո՜վ դու արյունի զանգված՝ արյան գունդ աշխա՜րհ...

Հունիսի 16, Վենետիկ

<...> Կործանված Թյուրքիան ոտքի կանգնեցրին բոլոր եվրոպացիք։ Հայկական ծով արյունը եղավ շաղախը միացնելու եվրոպացիներին, սերտ կապերով, Թյուրքի հետ...

Մենք՝ հայերս կես-արևելքցի, կես-արևմուտքցի ենք. բայց քրիստոնեությամբ կապված արևմուտքի հետ, և դարերով կռվել ենք արևելքի հետ, և միշտ դավաճանվել ենք Արևմուտքից՝ սկսած հույներից, խաչակիրներից՝ մինչև այսօր, այս մեծ պատերազմից հետո։ Եվ վերջապես, մենք հաղթվել ենք անհավասար կռվի մեջ...

Այժմ այլևս անմտություն է հույս դնել Արևմուտքի վրա. ո՜չ մի օգնություն։ Սա պարզ է։ Ինքը՝ Անգլիան հայտնեց, թե մենք շահագրգռված չենք հայերով։ Դա մարդասիրական — բարեգործական հարց է, իսկ Եվրոպան երբեք ընդունակ չէ եղել և չէ մարդասեր լինելու...

Բայց մենք ունենք ելք՝ ռուսը, ռուս պետականությունը։

1923

<Մայիս>

Պարզ է, որ եթե բոլշևիկները չգրավեին Հայաստանը, Թյուրքերը պիտի կոտորեին ռուսահայությունն էլ, և այդ կլիներ ամբողջ Եվրոպայի և Ամերիկայի սրտովը։ Սրա համար արժե, որ ոչ մի բոլշևիկի քիթ չարյունի։

Իտալիան ճզակոտոր է լինում բոլշևիզմի կամ սոցիալիզմի, բանվորների ազատագրման առջև թումբ ստեղծելու։ Մուսոլինը հազար ապ թաքումներից հետո, այդ իսկական իտալացին, պոզյոր, ֆանֆարոն, դերասան, ճառող ու դավաճան, թքելով իր նախկին պաշտումների վրա՝ բանվոր, սոցիալիզմ՝ ընկավ բուրժուազիայի ձեռքը. նրա փողով կազմակերպեց ֆաշիզմը, միլիտարիստական մի կուսակցություն (և միլին ու ֆաշիզմը իրար հագթանակները շնորհավորեցին), ձեռք տվեց պապիզմին՝ ժանգոտ, խավարասեր ու խավարացնող կաթոլիկությանը, զարթնեցնելով ժողովրդի մեջ շովինիզմ և կաթոլիկություն։

Այս ժողովուրդը, որ սիրում է հանդեսներ, զվարճալի ժամեր՝ pane et cirkus — հաց և ցիրկ, պոմբ, ցույցեր. ամիսը մի անգամ կազմակերպում են այդ ցիրկերը, առանց. սակայն, հաց տալու, այլ հացի խլելու, օր-օրի վրա ավելացնելով հարկերը, տուրքերն ու անգործ մարդկանց թիվը,— ուզում են այդ խաղերով ազդել ժողովրդի երևակայության վրա, մթագնել նրա դասակարգային գիտակցությունը և մասսաները օրորել, թմրեցնել ու լծի տակ քաշել։

Կաթոլիկ կղերը, որ Գարիբալդիի օրերից ծակերն էր մտել, հիմա դուրս է եկել խլուրդի պես, զուգվում է ու զարդարվում ոսկե դիպակներով և թափորներ է կազմում, աներևակայելի շքեղ՝ միջնադարը ետ բերելով. նոր սրբեր է գտնում, նոր փտած ոսկորներ, երբեմն իշու ոսկորներ, և պատեցնում են փողոցները՝ քաղաքագլուխ, փաստաբաններ, բժիշկներ, դպրոցի տնտուներ, կոմսեր, և ինտելիգենցիան թափորի գլուխն անցած կղերի հետ՝ ուզում են դարշելի կաթոլիկության ուրվականը պատցնելով դյութել, խաբել ժողովրդին, խաբել ամբոխին...

Քրիստոնեություն են երգում այդ սրիկա մոլեռանդները, այդ այլասերված ավազակները... Քրիստոնեություն. ծա՜ղր. քրիստոնեությամբ Եվրոպայում... Պատերազմը ցույց տվեց եվրոպացու քրիստոնեությունը և կղերի քրիստոնեությունը՝ ստահակություն, նյութասիրություն, կեղծիք և անբարոյականություն... Ջարդարար թյուրքին եղբայր են անվանում և ազնվական, իսկ իրենց տանն սպանում են՝ այդ սև ղղեստով սեահոգի ֆաշիստները՝ բանվորներին, և կղերը օրհնում է նրանց արյունոտ ձեռքերը...

1924

Հունվար, Վենետիկ

Աշխարհը պատճառական, պատճառավոր պատահար է, պատահականություն, դիպվածք, դեպք։

Ընկերին, բարեկամին, մտերիմին ասած վիշտը՝ կիսվում է, թեթևանում։ Ես նրա համար այսքան տանջվում եմ, որովհետև ընկեր չունեմ։

Սֆինքսը, կարծեմ, այն հոգեբանական ժպիտն ունի, ինչպես կյանքից մի իմաստուն մարդ՝ հղփացած փորձով ու գիտությամբ, մանուկների մտքերի, կարծիքների վրա։

Սֆինքսը ծիծաղում է, հեգնում մարդկությունը, նրա պատմությունը, կյանքը։

Փետրվար

Հոգեկան և իրական.

Որտեղ որ ցավում է, հոգիս էլ այնտեղ է... Ես միշտ քեզ հետ եմ իմ ժողովուրդ։

Թուրքերը միշտ զանազան գաղափարների դիմակի տակ առաջ են գալիս իրենց ուզածը — ջնջել հայը։

Մարտ, Վենետիկ

Օրենքի դիկտատուրան է իշխանությունը, ուժը, որ զսպում է ժողովուրդներին, մարդկությունը և համեմատաբար նվազ ոճիր է լինում, բան երբ անիշխանություն լինի։

Գոնե Եվրոպայում և Ռուսիայում, Չինաստանում կամ Ամերիկայում, իսկ Թուրքիան՝ այս միշտ բացառություն է մարդկային օրենքներից, այնտեղ անիշխանությունը իշխանությունից ավելի նվազ եղեռնագործ պիտի լիներ։ Այո՛, նվազ եղեռնագործ, որովհետև Թուրքիայում իշխանությունն է կազմակերպում ոճիրներ, իսկ Եվրոպայում իշխանությունը որոշ չափով արգելում է, դեմն առնում, հսկում, պատժում։

Դժոխք է հոգիս այսօր և աշխարհն իր բոլոր իրերով անհրապույր, նույնիսկ զզվելի։

Ես՝ մարմինս այստեղ՝ երկրում, հոգիս դրախտում։

Դրախտի գաղափարը ծագում է առել սիրահարված մարդու հոգեկան բախտավոր դրությունից, երբ նա սիրածի մոտ է.— այդ դրությունը մարդ ուզում է հավերժ տևել և չի հագենում — (Ես Շուշիկի հետ 1892)։

Տիկին Քեշիշյանի մայրը ցույց տվեց տղայի պատկերը, որ պահում էր իր աղոթագրքի մեջ։ Գովեց նրան. ասլանի պես տղա է, գործող, անվախ բարի, սիրող, բոլորին կշահե, մեռնեմ անունին, ե՞րբ պիտի կարգեմ, ե՞րբ պիտի օրը տեսնիմ...

Այնինչ տղան մոտ 2 տարի առաջ Ամերիկայի մեջ օթոմոբիլի արկածով սպանվել է, 28 տարեկան հասակում, իսկ քույրը (պառավի աղջիկը) շարունակ նամակ է ղրկում նրա անունից և փող, և խեղճ մայրը ապրում է երջանիկ խաբկանքի մեջ։

Սուրբ, ոսկի սուտ...

Ուրախ է պառավը,— երգում է, խոսում, կատակում, զվարթ է երգը բերանին։ Եթե լսե մահը, կմեռնի։

Ապրիլ, Վենետիկ

Երբ Օթելլոն (մի դերասան) լսում էր Յագոյի հայտնությունը Դեզդեմոնայի մասին, հոգեկան հուզումից հաղթահարված պառկեց հատակի վրա, ձեռքերը տարածեց և լսում էր մոնչյունով։

Ուզում էր, առաջ չհավատալով, Յագոյին սպանել...

Շեքսպիրը իր հեքիաթների մեջ զարմանալի ճիշտ հոգեբանորեն հայտնագործում։

Հորս մահի օրը, մայրս վշտից ընկճված, խորունկ քնեց։

Զարոն ինձ սինձ, էրիժնակ էր բաժին ղրկում...

Քարն էլ ապրում է բույսի պես և բույսն էլ մարդու պես. միայն ապրելը՝ ավելի զարգացած արտահայտվել է մարդու մեջ... ինչպես որ նակ՝ գազանությունը թուրքի մեջ, նենգությունը անգլիացու և թեթևամտությունը ֆռանկների մեջ։

Քո գրկում լինեի մի գիշեր, մի հավիտենական գիշեր։

Կարծես գնացողը ես չեմ, ուրիշն է. համբուրողը ես չեմ՝ ուրիշն է, շոշափողը ես չեմ...

Քո մարմինը ամբողջ խոսում է ինձ հետ մի ուրիշ լեզվով, մի գեղեցիկ հեքիաթի լեզվով։

Շրթունքս դրել եմ ուսիդ և համբուրում ու բոլոր հոգիս հավաքվել է այդտեղ, շրթունքիս ծերին և ուսիդ վրա, և երբ անջատվեցի ու թափառում եմ, կարծես ես չեմ քայլում, այլ տանում են ինձ. ես չեմ կամ բնությունը, այլ ուրիշը, և հոգիս մեջս չէ, հոգիս այրվել է ուսիդ վրա։

Օգոստոսի 11, Վենետիկ

Համբերություն և հույս, տոկունություն և հավատ. աշխատանք և զվարթություն, հանգստություն և վստահություն, և՝ ամեն օր — այսպես...

Օգոստոս, Տրիեստ

Միրամարի պալատը՝ ավստրիական կայսեր եղբոր՝ Մաքսիմիլիանի։ Բայց ապրել է այնտեղ և Ֆրանց Իոսիֆը։ Մի հին սպասավոր նշանագգեստ հագած, ավստրիացի ծերունի, երկյուղածությամբ ցույց է տալիս պալատի սենյակները և պատմում է այնտեղ պատահածները։ Կայսեր սենյակի մեջ պատիվ է տալիս, ուղիղ կանգնած, փայտի պես և ձեռքը ճակատի մի կողմ դրած՝ որպես թե կայսրը ներկա լիներ։

Պալատի ետևը լեռներ, անտառ ու դալար։ Առաջը անծիր ծով։ Ալիքները գալիս ու զարկվում են դղյակին, ժայռերին։ Հեծեծում, մրմնջում, հառաչում, խոսում, պատմում են բնության հրաշքը հավիտենական։ Իսկ դղյակը լուռ է, համր, դժբախտության այս շքեղ դղյակը։ Սպիտակ, լույս, մարմարիոն ամբողջապես, գոթական ոճ։ Ի՞նչ կա ավելի գեղեցիկ, քան Միրամարը իր խորհրդավորությամբ, իր մենակությամբ, իր կույս ճերմակությամբ, լռությամբ, վշտերով։ Հսկա պարտեզը գեղեցիկ իր բազմապիսի ծառերով, ավազաններով, ուղիներով խաչաձևվող և ափերով, արձաններով, ծաղիկներով...

Սա, դղյակը միայն գեղեցկություն է, միայն հրաշք ու շնորհք և միայն լռություն, լռություն, լռության դղյակ։ Ամենախաղաղ ժամին էլ ծովն իր ալիքն ունի, իր մրմունջը, իր հևքը։ Կա մի եգիպտական սֆինքս կարմիր, սև-ճերմակ քար (գրանիտ, պորֆյո՞ւր)։

Սեպտեմբեր- Վենեպի

Այս գիշեր, օգոստոսի 9—10 Շուշիկին տեսա, կառքով միասին գնում էինք։ Կամ խոսում էինք։ Կարծեմ կառքից ընկավ և լացից։ Զարթնեցի։

Մեր կատուն։

Առավոտ ծնեց չորս ձագ. շուրջ նետեցին։ Կատուն ամբողջ օրը մլավելով, լացով որոնում էր ձագերին։ Ոչ մի տեղ դոլ ու դաղար չուներ, վեր-վար։

Գալիս էր ոտքերիս փարվում և իրեն սրտի ցավից կծում էր ոտքս։

Գիշերը քուն չունեցավ. ելե մլավում էր պատուհանիս գոգում, ուզում էր մոտս լինել, մարդու մոտ, կենդանի շունչի մոտ լինել... Մյուս օրը ևս լացեց ու որոնեց։ Երրորդ օրը լռեց, հաշտվեց, երևի մոռացավ...

Հոկտեմբեր

Հանգուցյալ մարդը (պապը) հարություն էր առել թոռան մեջ։

Թոռին նայելով զգում էր նրին տարիները կանաչած — երիտասարդական ավյունով նոր զարձած։

Չկա բնության մեջ մի փոքր իր, որ անհունապես մեծ չլինի, եթե լարել ուզենաս նրան հասկանալ։ Հյուլեն այնքան մեծ է իրեն խորհրդով, որքան տիեզերքը։ Երկուսն էլ անհասկանալի են և աստծո պես անբովանդակելի, պատկերացնել անկարելի։

Նոյեմբեր, Վենեպի

Այսօր ուզում էի սպանել ինձ, և մեռնել քո գրկի մեջ։ Վրեժ հանել ինձնից, իմ բախտից, բոլոր մարդկանցից և այս անմիտ պատահական պատահականությունից, որի անունն է տիեզերք։

1925

Օգոստոսի 25, Վիշեգրադ

Օտարության մեջ։ Մուգիկ. լսում եմ. թափառելով, մենակ։ Մարդիկ անցնում են խմբով, զույգ-զույգ, երկսեռ...

Տխրություն է ծավալվում հոգուդ մեջ և աշխարհում... Սերդ գարթնում է սրտիդ մեջ. վերքդ բացվում է նորից՝ հին վերքդ։

Ինչքա՜ն բախտավոր կարող էիր լինել, և չեղար...

Ո՛վ Ե..., ի՜նչ արիր ինձ, որ տասնյակ տարիներ հետո դեռ մխում է վերքս...

Քե՛զ հետ միայն, միա՛յն քեզ հետ կարող էի բախտավոր լինել, ներդաշնակ, հաշտ՝ աշխարհքի և մահի հետ։ Քեզ հետ կյանքս կխմաստավորվեր, և տիեզերքը խորհուրդ կունենար, որովհետև նրա կամքը, նրա խորհուրդը կատարած կլինեի...

Հոկտեմբերի 5, Վենեպի

«Անծանոթ կինը»։— Այդպես գեղեցիկ կին երբեք չեմ տեսել, մինչև այսօր, մինչև այս վայրկյանը։ Բոլոր տեսած գեղեցիկ կանայք միանգամից խորտուռվեցին պղտոր ջրերի մեջ։

Այսպիսի մի կին։ Ո՛չ, սա կին չէ։ Սրբապղծություն է այս որակումը. սա գերմարդկային է։ Ի՜նչ ազնվություն, և ինչպիսի՜ աչքեր — սուրբ, քնքուշ, սրտախոս։ Հոգեղեն է սա, անմարմին կամ երազի մարմին, անուրջ։

Պատահաբար նրա հայացքը մի պահ հանդչեց իմ վրա, և հոգիս տերևի պես դողաց այդ հայացքի ներքո...

Նրա մոտ կանգնած էր մի այր, նրա ամուսինը... Ի՜նչ, նրա ամուսինը. եփում է ուղեղս, և սիրտս հազար անդղների մագիլների քցցում...

Այդ մարդը — իմ ոսոխն է, բոլոր մարդկանց մեջ իմ միակ թշնամին, իմ արյունը ծծողը, աշխարհի մեջ միակ չարը, դեը, բոլոր իմ ատելության կենտրոնացումը։

Ամբողջ տիեզերքը չքանում, լուծվում է, չէանում է իմ առաջ, և մնում է այս հոգեկան էակը — աստվածությունը, և այս գարշելի արարածը՝ բոլոր չարությունների արձանացումը։

Ա՜խ, կուզեի ընկնել այս սուրբ էակի ոտները, համբուրել, նրա ոտների հողը։ Թո՛ղ այս գարշելին հարված ինձ, կրունկների տակ ջախջախե, արյունս սփռե այս սալահատակների վրա, ուղեղս, ուղեղս նույնպես. ես ձայն չեմ հանի. ես բախտավոր կփակեմ աչքերս՝ նրա հոգեղեն աչքերին հառած...

Ինչո՞ւ եմ սողում երկրի վրա, ի՞նչ նպատակ կա ապրել... Մեռնել, մեռնել միայն՝ հավերժության մեջ տանելով նրա քաղցր հայացքը, նրա պլացիկ հասակը...

Ի՜նչ եմ ուզում նրանից — ոչի՜նչ։ Ոչի՜նչ այն ամենից, ինչ որ ուզում են մարդիկ կանանցից։ Ոչի՜նչ. հավիտյան ապրել և ոչի՜նչ չտենչալ...

Միայն և միայն նա, այս զզվելի մարդուց գաղտնի, շշնջար ակամ. ջիս իր անունը, իր քաղցր, պաշտելի անունը, և ես բոկոտն կթափառեի օձոտ ու բոցոտ անապատներում, սրի պես կտրող սառցադաշտերի վրա, փոթորկահույզ ծովերի վրա, անդունդների վրա — հոգուս մեջ նրա պատկերը, և շրթունքիս վրա նրա քաղցր անունը...

Նա գնաց՝ և ես չկարողացա հետևել նրան. կայծակի հարված առնողի պես՝ անդամալույծ էի եղել ես։ Նա գնաց։ Նա ինձ հետ է — ամբողջ իմ հոգով, իմ հոգու բոլոր բջիջներով, իմ էությամբ բովանդակ՝ ես զգում եմ, ես ապրում եմ նրա ներկայությունը...

Ես գնում եմ. քայլում է նա ինձ հետ։

Ես գնում եմ երեկոյան խուռն ժողովրդի միջով։ Հրում են ինձ. խոսում են շուրջս. ես չեմ զգում. ես ոչինչ չեմ տեսնում։ — «Curierre della Sera*» — մի տող թերթը կոխում է աչքս։ Հեռացե՛ք, հեռացե՛ք, կորե՛ք բոլորդ, բոլո՛ր դ...

Ես գնում եմ. առաջիցս քայլում են կանայք։ Շքեղ հագնված։ Մարմիններ, միսեր, գարշանքներ։ Ատելի են բոլորը։ Գնում եմ տուն. ներս եմ մտնում, կինս դիմավորում է ինձ։ կի՞նս։ Այո՛, ես կին ունեմ։

Հետ եմ նայում. նա չկա, նա չկա. գնացել է նա. մենակ եմ ես. որբ եմ ես, թշվառ, թշվառ...

Ա՜խ, պիտի կարողանա՞մ վաղը նրան տեսնել. ինչքա՞ն բախտավորություն. վաղը, մի դար հետո...

Վաղը չտեսա նրան։ Ամենուր որոնեցի, հոտելների դահլիճներում, հրապարակներում, ծովի ափին, եկեղեցիներում, մուզեոնում։ Չկար, չկա՞ր։

Ո՞վ էր, որտեղի՞ց եկավ, և ո՞ւր գնաց։

Եվ մի վերք կիզում է սիրտս։ Հավիտյան այդ վերքը պիտի բանի սրտիս մեջ։ Ես գիտեմ այդ, ես զգում եմ այդ։

Թշվառությո՜ւն...

Իմ ծնած օրը ո՞ր աստղից է լույսը ճամփա ընկել... Այժմ 50 տարեկան եմ. ո՞ր լույսն է հասել ինձ իմ ծնած օրից, 50 տարի առաջ։ Իմ ծնված օրը այս աստղից ծորել է և այսօր հասավ ինձ։

* «Երեկոյան լրաթերթ» (իտալ. թերթ)։

1926

Հուլիսի 8, Վենետիկ

Հարություն Սորգուճյան... Այսօր մեռավ 86 տարեկան հասակում։ Երբ անգլիական զրահանավերի լոթը թնդանոթները ողջունում էին Վենետիկը, նա աչքերը բանում է, ասելով.— ժամը 12-ն է, և լարում է ժամացույցը, ապա ասում է.— Ա՛լ ինչ կսպասեմ...

Նորից պառկում է. քիչ հետո, հանկարծ, թափով նստում է, սուր աչքերով նայում է շուրջը, ներկաներին։ Երկու աչքերի ծայրից, դեպի քունքերը, մի-մի կաթիլ արցունք են պտղում...

Ապա հանկարծ ընկնում է բարձի վերա և շունչը, վերջին մնացորդը կյանքի, փչում...

Այսպես մարդը ապրեց 86 տարի, և չուզեցավ մեռնել... Ինչպես և եղբայր Ալեքսին, նույն տարիքին մեռավ, չուզենալով լսել մահվան անունն իսկ, ասելով, որ չեմ ապրել. ապրել եմ ուզում, դեռ չեմ ապրել. ապրած չունիմ...

Իսկ մյուս կողմից, ինչքա՞ն երիտասարդներ, սիրավառ, սպանում են իրենց, իրենց կյանքի թելը իրենց ձեռքով կտրում...

Աշխա՜րհ — հակասությունների թնջուք... թոհ ու բոհ։ Ամեն բան վերջ ի վերջո հոգեբանություն է։ Աշխարհը — մարդն է ներանձնական։

Ես չեմ սիրում մուզիկը։ Նստել եմ սրճարանում, ֆլորիան, և լսում եմ մուզիկային։ Սիրտս քայքայվում է։ Նվագը կրծում է հոգիս, կեղեքում է, տակն ու վրա է անում ներքնաշխարհս, հին, անցած վշտերս, վերքերս նորից ապրում եմ։

Կյանքի ծարավ, բացվող վերքեր և անկարողության գիտակցություն։ Անցնում են կանայք, մեկը մյուսից գեղեցիկ, մեկը մյուսից ցընցող, հրապուրիչ, խոցող, խայթող, տանջող, չարչարող։ Կայծակի պես։ Ահաբեկիչի պես։ Սարսափելի... ծփուն ազդրեր, թրթռացող ստինքներ. հրաշքով լցված աչքեր, լույսի պես մարմիններ, ցորենի պես թևեր, ցորենհացի պես։ Ուտելու հացեր, որ բնավ չի հագեցնում։

Եվ ինչքա՞ն կան, ինչքա՞ն կան...

Մտածում ես — ամենուրեք կան հիմա այդ կանայք. լեռների հռանչներում, կուրորտներում, ծովափերում... Բայց մեռնելու են. ծերանալ, հյուծվել, տգեղանալ... Ի՞նչ է սերը, նրա էությունը, իմաստը։ Իսկ մենք տեսնում ենք ձևեր, սիրուն ձևեր... նայում եմ — անցնում են, անցնում են և հաստ կանայք... Սիրում եմ կանանց, որ մոռացնել են

տալիս մարմինը, ֆիզիկան և դառնում են ցնորական, երազային, եթերային, հրեշտակային... Թռչում են աղավնիները՝ ծովի հերմակ փրփուրների պես... Անցնում են աղբատներ, ծխախոտ հավաքողներ, հիվանդներ, հաշմեր, ծերեր, բանվորներ՝ մրոտ և քինոտ...

Եվ հնչում է մուդիկան։ Ես տանջվում եմ...

Դեկտեմբերի 31

Ժամը 12-ին. հնչեց 12 ժամը։ Հին տարին գնաց, մեռավ անհունի մեջ։ Նորը սկսվեց։

Լուսամուտը բացել, նայում եմ։ Լուսնյակ գիշեր, լիալուսին, թեթև, կապարյա ամպեր։ Լսում եմ — գնացքը գնում է՝ սուլելով... Հանկարծ նավերի շչակները սուլում են, սուլում են, սուլում են... Հրացաններ են արձակում, անթիվ... Հեռվից մարդկանց ձայներ, երգեր, ծիծաղներ...

15 վայրկյան...

Պառկել վերհիշում եմ բոլոր նոր տարիները, որ դիմավորել եմ, ի՞նչ կերպ, ի՞նչ սրտով, ո՞ւր, ինչպե՞ս...

Սուլում են նավերը, մեկը կտրում, մյուսը սկսում...

Մարդկությունը ուրախանում է — ինչո՞ւ համար, ի՞նչ հույսեր է սպասում, երբ դժգոհ հնից՝ դիմում է անծանոթին... մահին, վերջին, ապագային, որի ծոցում ո՞վ գիտե ի՞նչ դաշույններ կան... գուցե մեզնից <ոմանք> չեն հասնելու մյուս տարուն, և շատերս չենք հասնելու, անշուշտ, բայց ուրախանում ենք... Ի՞նչ բնազդ է...

1927

Նոյեմբերի 28, Երևան

Մահվան մերձ օրերում աշխարհը աչքիդ դառնում է անարժեք և մարդկային բոլոր գործերը սին, ոչինչ։ Ինչքան էլ որ մեծ մարդ եղած լինի, մեծ գործեր կատարած, հերոսություններ, գյուտեր, բարեգործություններ, աչքիդ կերևան բոլորը տաղտուկ, խաղալիք, անմտություններ, որովհետև մահը ունայնացնում է աշխարհը՝ քեզ մեռցնելով։

Դուրսը տեսնում ես գարուն ու ծաղիկ, երեխաների զվարթ կանչեր, պատանիների թռիչքներ ու բերկրալից...

Մորս գերեզմանը այցելելուց հետո։

Գյումրի. հին սեր. մոր գերեզման...

Հայրենի հող, մորս լեզուն...

Նվագում են վաղեմի, երիտասարդության սիրած հին երգերն ու եղանակները։

Եվ աչքերիս առաջից անցնում են սիրած, մեռած ընկերներս...

1928

<Հունիս>

Հոգեբանորեն պատրաստ...

Հայր Սերգեյը՝ Տոլստոյն ինքն է. իր ներքին մարդը, անկեղծ Տոլստոյը։ Նա իր առօրյա կյանքում լավ չէր, բայց իր ներքին անկեղծության մեջ բարձր էր։ Հայր Սերգեյը իրական տիպ չէ, բայց նա իրական է, որովհետև Տոլստոյն ինքն է. որովհետև Տոլստոյը հոգեբանորեն պատրաստ էր հայր Սերգեի պես լքելու պալատական շքեղ կյանքը և գնալու, կորչելու զանգվածի մեջ. կտրելով իր մատը և բոլոր կապերը՝ և՛ փառք, և՛ գանձ, և՛ կին...

Այդպես եմ և ես, որպես Աբու-Լալա Մահարի...

Մարդ այնքան մեծ է, ինչքան որ ընդունակ է ուրիշներին սիրելու։

Երբ սիրում ես քո ընկերին, ավելի մեծ ես, քան եթե սիրես միայն քեզ՝ միայն քո ես-ը։

Երբ սիրում ես մի ամբողջ ժողովուրդ, ավելի մեծ ես, քան եթե սիրես միայն ընկերիդ։

Մարդկությո՛ւնը սիրիր — մարդկության չափ մեծ կլինես։

Տիեզե՛րքը սիրիր — տիեզերքի չափ մեծ կլինես։

Սիրի՛ր, և կմեծանաս, և կիսորանաս։ Քո սիրտը կհարստանա և կդառնա քո և ուրիշների երջանկության աղբյուր հորդառատ։

Հուլիս

Տարիներ հետո Շուշիկի մոտ... Հրավիրեց թեյի։ Նստել էի նրա կողքին, կարծես թե ոչինչ չի պատահել. դրսերևույթով հանգիստ, զվարթ։

Նրա երկու աղջիկը, և քույրն ու քրոջ աղջիկը ներկա էին, իբրև անցյալին անգիտակ։

Նա էլ հանգիստ էր և զվարթ։ Ո՞վ կարդաց երբևէ մարդկային սիրտը։ Ո՞վ գիտե՝ այդ պահին ինչե՞ր էր զգում ու մտածում։ Ի՞նչ ապրումներ ուներ նա։

Նրա հոգին փակ էր ինձ համար, ինչպես իմ հոգին նրա համար։

Այնինչ՝ հոգիս ծանր ու խուռն ապրումներ ուներ. կորած երջանկության կսկիծը. այլևս անցած, անդարձ գնացած կյանքիս. ցավ ու ափսոսանք։

Լսում էի նրանց և խոսում ու ժպտում, բայց անցյալի ուրախ, մանավանդ տխուր հիշատակները եկել, լցվել էին ու խեղդում իմ հոգին և ծովացել էին շուրջս։

Ինչքա՜ն դժբախտ ու դաժան անցավ իմ տխուր երիտասարդությունը, ինչքա՜ն ճակատագրական թշվառություն, հիվանդություն, հուսահատություն, օրերի թունավորում, հույսերի, կամքի, եռանդի փչացում։ Եվ ինչքա՜ն բախտավոր կլինեի մինչև օրս, այս րոպեիս, որ չեղավ...

Շուշիկն ասաց.— Ավետիք, հիշո՞ւմ ես Ղփչաղ, այն կարմիր ծաղիկը,բաց , նուրբ կարմիր, բայց մեղմ կտրված թերթերով։ Ի՞նչ էր նրա անունը. ուրիշ տեղ չեմ գտել նրան, չեմ տեսել նմանը։

Ես չհիշեցի։

— Այն ծաղիկը, որ դու քաղեցիր բարձր ժայռի կրծքից։ Ջորում մի բարձր ժայռ կար. մագլցեցիր և քաղեցիր...

Ես հիշեցի, բայց ասացի, որ բնավ չեմ հիշում, բոլորովին մոռացել եմ։

Բայց ասացի մտքիս մեջ. Այդ՝ մեր սիրո, մեր երջանկության ծաղիկն էր, որ թառամեց ու մեռավ անդարձ։ Եվ, իհարկե, նրան չես կարողացել ու չես գտել մինչև օրս ո՛չ մի տեղ, ո՛չ մի տեղ։ Եվ նույնիսկ նմանն էլ չես տեսել։ Այո՛, երջանկությունը, սերը անկրկնելի է։

<Ամառ>

Շիրակով անցնելիս։

Խաղաղ էր երեկոյան. հանդարտ, անուշ — մեր գյուղի հանդերում, մեր ջրերի ափին. մեր բլուրների վրա, ձորերում... Բայց վրդովված էր հոգիս. անցյալի հուշերը կյանք առան. սիրած դեմքեր անցան հոգուս միջով, ստվերներ, ուրուներ, ծիծաղ, լաց... կարոտ... կորած երջանկություն...

Հայրենիքս ծաղկել է հիմա, նորից...

Եվ դաշտերը լիքն են նորից հոտերով...

Բայց ինչե՞ր կարող են պատմել այս ժայռերը, լեռները, ի՞նչ արհավիրքներ, ո՛ր տեսան, երեկ, միայն երեկ...

Ավերակ տներ, մոխրացած. ի՞նչ խինդ ու կյանք է եղել այնտեղ, վիշտ ու հույսեր... և ամայի դաշտեր շուրջը, ուր պայքարել են ու մեռել... արյունով օծել։

... Տեսա սիրուհուս։ Թառամած, խորշոմ, ժժգույն, աչքերը անհոգի, ձայնը չոր, կուրծքը ոչ դալար, այլ ցամաք, և լալիս ես սրտիդ մեջ... Անցել են բախտավոր հին օրերը, երջանիկ օրերը չկան. ժամանակը կրծել է ամեն բան ու տարել դեպի անհունը կորստի... Ինչո՞ւ էր մերժում նա առաջ, փախչում. իզո՛ւր, իզո՛ւր։

Հիմա, աշխարհի զանազան վայրերում.
Անապատ, վագր, բեռվին.
անտառ, եղևնի, եղևիկներ.
ծովեր, մրրիկներ.
արծիվներ, ձիեր.
կանայք, աղջիկներ, սեր, համբույր...
կռիվ, քաջություն, մահ...
խոհեր...
Եվ տիեզերքում—
ծնվում են աստղեր, խորտակվում են աստղեր.
գուցե մարդկություն, և պայքար...

1929

Յուրաքանչյուր ազգի կուլտուրան, մի տեսակ նոր պատասխան է հին սֆինքսի հին հարցերին։ Յուրաքանչյուր ոճ մի նոր աշխարհ է ստեղծում։ Բնությունը նա դիտում է մի նոր պատուհանից...

Երևանում, նրա մթնոլորտում. լցված է հայության ձայնով, հայերենով։ Ականջդ օրեցօր, ամեն օր, ամեն ժամ, ամեն վայրկյան լցվում է հայությամբ և հայերով։ Ականջդ միալար հայության մեջն է, հայերենի մեջ։ Պառկում ես — և լսում ես — ծառերը հայերեն են սոսափում, թռչունները հայերեն են ծլվլում, առվակները հայերեն են խոխոջում։ Ամեն քար ու իր, աստղ ու երկինք հայերեն, հայկական, հայաշունչ։ Մարդ միայն իր հայրենիքում կարող է մնալ հարազատ, ազգային։ Մոսկվայում լսում ես միայն ռուսերեն, մթնոլորտը տոգորված է ռուսությամբ։ Ամեն հյուլե — ռուսական է։

Երկաթուղին գնում է։ Գնում է հայրենիքիդ հուշ։ վայրով։ Նայում ես — իրերը, վանքերը, գյուղերը, գետինը, դաշտը — բոլորը քո հարազատ երկրի, քո պատմության վկաների — արագությամբ, սրտապատռվազքով ընդառաջում են քեզ, վազում են շուտ, ավելի շուտով, շտապելով՝ իրենց ցույց տալու քեզ, քո հայրենաբաղձ աչքերին. մտնում են աչքերիդ մեջ, խրվում են ներս և նոր պատկերները հեռվից վազում են և տեսածներդ սահում են, թռչում են դեպի ետ, տեղ տալով նորերին՝ որ շտապում են, որովհետև գիտեն, որ սիրող անհամբեր՝ ուզում է վայրկյան առաջ տեսնել սիրած, վաղեմի հողը, վայրերը, հնությունները...

1930

Մայիսի 23, Ջրի

Զուտ գերմանական քաղաք՝ իր արխիտեկտուրայով. գոթական քաղաք, իշխողը գոթիկն է, բայց կան և այլ ոճեր։

Զարմանալի էր, երբ Ախենից անցա — տեսա հայկական ոճ։ եկեղեցին, հար և նման, մեծ և փոքր գմբեթ. արմենիկա։

Մայիսի 20, Ուրբ

Բեռլինը այլևս իմ տեսած քաղաքը չէ. շատ է փոխվել. ավելի շքեղացել ճոխացել, արդիացել՝ ամերիկանացել։

Այս հետպատերազմյան աշխարհում տեմպը (կուլտուրայի, տեխնիկայի) խառնել է և խառնում է իրար ամեն բան — ազգ, հայրենիք, ցեղ, մորալ, բարքեր, ոճեր։ Այս տեմպը մրրկապար, մի ջրապտույտի մեջ պիտի ձուլե և մի հայտարարի բերև մարդկությունը։

Որքան հառաջ է գնում մարդը, տեխնիկան, կուլտուրան՝ այնքան ավելի առաջնակարգ տեղ է բռնում սեռը — կինը։ Եվրոպան նվիրված է կանանց, նրանց տուալետի, արդ ու զարդի, հագուստի և այլն. Ռուսիայի հակառակ։

Եվրոպայում — աշխատել փող և վայելել։ Ռուսիան՝ աշխատել, աշխատել՝ ապագայի համար, համայնքի համար։

Մոսկվայում տեսնում ես անթիվ գրավաճառներ, և միշտ ժողովներ, դասախոսություններ։ Բեռլինում — կաֆեներ, շքեղ մագազիններ, ճաշարաններ և հաճույքի վայրեր։ Բաղիոն Եվրոպայի ամեն անկյուններից բերում է երգի, պարի, ֆոկստրոտի, ջազբանդի ձայներ, իսկ Ռուսիայից — ճառեր, զեկուցումներ։ Ռուսիայում ամեն մարդ լուրջ է, մտահոգված, գլուխը մեծ մտքերով, իսկ Եվրոպայում, գործից — բյուրոյից դուրս՝ քեֆ, հաճույք, պար։

1933

Սեպտեմբերի 27, Ծրեն

Ազգերի լիգայի ժողովների բացման շրջանն է։ Լճի շուրջի հոտելները զարդարված են մասնակցող պետությունների դրոշակներով։ Այդ հոտելներում ապրում են՝ այդ դրոշակների հայրենության տակ պատգամավորները՝ յուրաքանչյուրը իր դրոշակի։

Ահա Թուրքիայի դրոշակը... Սա կոմիտեյանների... ավազակների ժողով է, բոլոր մեծ ու փոքր ավազակապետությունների ժողովը...

Ե՞րբ պիտի գա հեղափոխության փոթորիկը՝ մաքրելու այս աղբանոցները...

Սեպտեմբերի 28, Ծրեն

Շրջում եմ ժնևում։ Վերջին 12 տարվա մեջ շատ է փոխվել ժընևը։ Նոր փողոցներ, նոր, հսկա շենքեր, մոդեռն շենքեր, «կառուցողական ոճով»։ Ցեմենտ, երկաթ, ապակի։ Տեխնիկա, մեխանիզացիա, մեքենաների իշխանություն։ Շրջում եմ և զիտում. շա՞տ է փոխվել ժընևի պատկերը, անճանաչելի, բայց նայում եմ ավելի խորապես.— երեխաները խաղում են փողոցներում, վազում, կովշտում, հրգում, ճչում. կանայք՝ տոների առաջ նստած, կարում են, զրույց են անում... Նույնն է աշխարհը, ձևերն են նոր. խորքում չի փոխված։ Գնում եմ Ռոնի ափերով Jonotion, Արվան և Ռոնը խառնվում են իրար — ինչպես 20 տարի առաջ, ինչպես 30 տարի առաջ... և 1000 տարի առաջ, և 1000 տարի հետո, և 10 000 տարի առաջ, և 100 000 տարի հետո...

Գնում եմ գեղեցիկ ծառերի տակով, գետի եզերքով. մյուս ափում, բարձր ժայռերի տակ (որի գագաթում հսկա նոր շենքեր են կառուցված) ծառերի սովերում, նստարանի վրա, մի զույգ իրար գգվում են, համբուրվում են (տղան է ավելի արտահայտվող, նախաձեռնող. աղջիկը պասիվ է, կրում է... հավերժաբար)։

Այս ափում մի ծերունի նստել է, ծխում է և նայում է. արդյո՞ք

նրանց, թե՞ նայում է և չի տեսնում. թե՞ նայում է և հիմա անցյալն կենդանացրել... Թերևս հենց ինքն էլ, սրանից մի 50 տարի առաջ, հենց այդ հղոր պլատոի տակ, գգվում էր իր սիրականին...

Ջուրը, երկինքը, ափերը, ծառերը, թռչունները... իմ տեսածներն են կարծես, որ տեսել եմ 20, 30 տարի առաջ։ Այդ ղույզը տեսել եմ 30 տարի առաջ։ Ահա՛ մի զույգ՝ փսփսալով, ժպտալով անցան մոտիցս... Ահա՛ նստարանի վրա երկու կին հյուսում են և խոսում, մեկը խոսում է տաք-տաք, ջղային, մյուսը՝ հանդարտ։ Երիտասարդներ են։ Ահա՛, մի ուրիշ նստարանի վրա, երկու կին ևս. մեկը նամակ է կարդում, մյուսը լսում է և ժպտում...

Ահա՛ երկու մանուկներ, պատանիներ, փայտ են տաշում և սլաքների պես նետում գետի մեջ և լուրջ ու բարձր խոսում... Այս բոլորը երբեք տեսա... Կյանքը չի փոխվում, շարունակվում է նույն խորքով և կրկնվում է նույն տարերքով։

Բնությունը — շուրջը — նույնն է, մի՛շտ նոր, մի՛շտ թարմ, մի՛շտ երիտասարդ, մի՛շտ անսպառ, կենսանորոգ, մշտանորոգ...

Այսպես էր 1000 տարի առաջ, 100 000 տարի առաջ և այդպես է լինելու վաղը՝ այսինքն 100 000 տարի հետո...

Գնում եմ Café Lyrigue. մտնում եմ ներս. երկու ծանոթ հրեաներ տեսա. մեկը նարդի էր խաղում, մյուսը նայում էր խաղացողներին։ Խաղացողը քանդակագործ էր։

Երբ ես Վենետիկ էի գնում, վերջին անգամ մտա սրճարանը մեկ բարև ասելու ծանոթներիս. քանդակագործը այն ժամանակ նարդի էլ խաղում։ Համոզվում եմ, որ ոչինչ չի փոխվել։ Գնացի՝ նարդի էր խաղում, դարձա տեսա՝ նարդի էր խաղում։ Միայն մազերը (քանդակագործի՝ երկար) սպիտակել էին և նոսրացել, իսկ մյուսը, որ ուսանող էր այն ժամանակ, ուներ կապույտ աչքեր, սպիտակ ու կարմիր դեմք ու այտերը պայծառ տղա էր. հիմա դժգունացել էին դեմքի վարդերը և մոխրացել կապույտն ու սպիտակը...

Երբ շրջում էի, տեսնում էի, թե ինչպես մարդիկ աշխատում էին։ Արվայից ավազ հանում մեքենայով. ֆաբրիկներում՝ եռ ու գեռ. ցեմենտի ֆաբրիկներ։ Ինչո՞ւ այսքան եռանդ, էներգիա ապրելու համար. ինչքա՞ն ուժ են վատնում, հավատով, լրջորեն...

Ապրել են ուզում, կարծես, հավիտյան են ապրելու։

Բայց ապրողը այդպես է զգում. անմահ։

Նոր սերունդի համար, երիտասարդների համար, կյանքը անվերջ է, լուրջ է, հետաքրքրական, գեղեցիկ, կայուն։

Բայց ինձ համար — իզուր են կորչելու այս բոլոր թափված ջանքն ու եռանդը։

Փողոցներով անցնելիս զգում էի, խորհում... Ձեզանից 30 տարի առաջ էլ մարդիկ կային, որոնց ես տեսել եմ, որոնք հիմա չկան. ձեզ նման էին — ժպտում, խոսում, ուտում, երգում...

Է՜հ, մտածում ես ի՞նչ անեն, ծնվել են, սրանց մեջ բնությունը դրել է ապրելու մեծ տենչանք ու կամք, պիտի ապրեն, շուզենալով մեռնել, և պիտի իրենց հերթին ծնեցնեն նոր կադրեր, մինչև աշխարհքի վերջը։ Ո՞վ է դարձնում այս սատանայական անիվը, ինչո՞ւ համար։ Չկա պատասխան։

Աշխարհը նույնն է իր էությամբ, ձևերն են փոխվում հավիտենական իրերի։ Մարդիկ՝ նոր մարդիկ — նոր ձևեր, նոր ծառեր — նոր ձևեր։ Մարդը նույնն է, անհատն է նորը. մարդը հին է, անհատն է նորը։ Հնի տեղը նորն է գալիս, նորն է բուսնում, նորն է բռնում հին տերևի, հին ծառի, հին աշխարհքի, հին մարդու տեղը։

1934

Մայիսի 2, Թուսաի

Մեր դրացու շունը ծնեց, բերեց 7 ձագ. ես երբ եկա, հազիվ 1/2 ժամ առաջ էր ծնել.. 3 ձագը իսկույն տերը թաղել էր հողի տակ, համարելով, որ 4-ը բավ է։ Սարսափելի՜ է. գեշ աղդեց վրաս այս դաժանությունը։ Մոտեցա, նայեցի մայր-շանը, խեղճը նստել էր ձագերի վրա, ծվարի տակ առել. լսվում էր ձագերի վնգստոցը, շոր հատակի վրա, պստիկ բույնի մեջ մայրը իր մարմնով տաքացնում էր նրանց, լիզում, գորովանքով լիզում. մայրը նայում էր մեզ. ո՜հ, ի՜նչ հայացք — ամբողջ նրա հոգին այդ հայացքի մեջն էր. նայում էր մեզ տխուր, հոգնած, շրջված հայացքով. մի կես ժամ առաջ էր անցկացրել երկունքի ցավերը. ո՜չ բժիշկ, ո՜չ դայակ-տատամայր, խնամք, ո՜չ մի բան և ո՜չ առջևը մի կազդուրիչ, տաք կերակուր, միայն սովորական լափը. նայում էր խեղճ-խեղճ, շշված, մոլորված, վախով՝ թե գուցե հափշտակենք ձագուկները, որովհետև նրա դարերի ենթագիտակցությունը գիտեր, որ շրջապատը թշնամի է. կուզան և կուտեն, կտանեն. շուներ և ամուսին, պաշտպան հայր... ձագուկներին։

Անօգ, անպաշտպան տարերքի առաջ, ցրտի, անձրևի, քաղցի և գիշատիչների։ Բայց բնությունը նրան օժտել էր՝ ի վարձատրություն, փոխարինություն զրկանքների՝ առողջ կազմվածք, արյան նյարդերի դիմադրական ուժ։ Եթե ոչ՝ ինչպե՞ս կարող էին ապրել կենդանիները և հարատևել...

Ո՛չ արյան վարակում, ո՛չ միկրոբներ, ո՛չ մրսել, թոքերի բորբոքում...

Բույնի առաջ կային արյան հետքեր...

Մի երկու ժամ հետո տեսա, որ շունը ելել է բույնեն, մտնում է տիրոջ սենյակը. քայլում էր արագ, ճապուկ, կարծես ոչինչ չի պատահել։ Ինչքա՞ն բնական է նրանց մոտ ծնելը, հեշտ գործ... Բայց և ինչքան դաժան է բնությունը, իր նպատակի համար ինչե՞ր է անում. տվել է կիրք, հրապույր. հղիացնում է, ծնեցնում, և նետում աշխարհ, թշնամի մթնոլորտ, լափող բերաններ — անթիվ. դե՛հ, գնա ու զլուխ հանիր այս դաժան գոյամարտից...

Սիրտս մղկտում է բոլոր զգացող էակների համար։

Մայիսի 28

Շնիկի ծանր հիվանդությունը իմ՝ գյուղի հանգիստ օրերի միակ վիշտն էր։ Շա՜տ ցավում էի, կարեկցում, մարդու պես տանջվում էր. երեկ երեկո կուլ էր եկել մոր բույնի մեջ, մի անկյունում, և ցավագին տքում էր։

Այսօր առավոտ ժամը 10-ից սկսվեց հոգեարքը. գարնան արևի տակ, դալար խոտերի վրա պառկել էր, աչքերը գոց, բերանը բաց, սաստիկ ջղաձգումներ ուներ. ցնցվում էր մարմինը, գալարվում էր փոքրիկ մարմինը և վնգում էր, վայում էր, տքում էր անընդհատ, անընդհատ, և սիրտը սոսկալի արագ բաբախում էր... Մայրը անտարբեր պառկել էր հեռուն, անգիտակ, և մրափում էր. եղբայրները խաղում էին, վազվզում, քնավ պետքերը չէր։ Ես չկարողացա նայել, և հեռացա, բայց հանգիստ չէի. 12-ից քիչ անց եկա տեսա հանգստացել էր, մի քանի ճանճ վրան էին նստել. բռնեցի փոքրիկ մարմինը — սառչել էր և ընդարմացել։ Տարա ստվերի մեջ և ծածկեցի լոր խոտով...

Սիրտս մղկտում էր, և աչքերս լցված էին արցունքով, հիմա այս տողերը գրելուս՝ աչքերս թաց են։

Ինչո՞ւ ծնվեց, հազիվ ունեցավ երեք շաբաթվա կյանք, վերջին շաբաթը՝ հիվանդ. ի՞նչ մեղք ուներ այսպես ծանր հիվանդանալու և շարաչար տանջվելով մեռնելու. ի՞նչ տեսավ, ի՞նչ հասկացավ. միայն ցավ, ցրտություն, տանջանք... անհուն տանջանք... Ի՞նչ է բնության նպատակը, ի՞նչ է ուզում։ Ես այս մահի մեջ տեսա ողջ օրգանական աշխարհի և մարդկության պատկերը։ Իսկապես որ մեռնողն է միայն մեռնում, աշխարհից մաղ չի պակսում... նորից նույն վայրկյանին՝ արև, թռչունների երգ, կյանք, լույս, իսկ խեղճ շնիկը՝ սառած, մեռած. գերագույն, իրեն համար անհասկանալի, տանջանքներով, ցավով բռնված...

Ակամա ծնվեց, ապրեց մի քանի օր անգիտակ, միքրոպները նշան առան նրան ու տանջեցին, իրենց գոյության համար մի ուրիշը մեռցնելու...

Ահավոր խորհուրդ — այս դաժան, զարհուրելի բնությունը, անբսկիզբ և անվախճան արհավիրքը, որ միլիարդ լույսի դարեր եղել է և պիտի լինի հավիտենություններ...

Սեպտեմբերի 20. Avallo

Մի քանի օր է՝ գյուղումն եմ։ Սակայն ապրում եմ գյուղից բավական հեռու — բաց դաշտում, ուր կան հիանալի մի քանի տնակներ։ Տնակներից մեկը իմն է։ Շուրջանակի փռված են դալար մարգագետիններ, արտերը, հարոսներ՝ եզերված ընդարձակ անտառներով։

Անհուն մի լռություն, խորունկ մի խաղաղություն է տարածված դաշտերի և անտառների վրա. մի կայուն, մի անսկզբնական լռություն, որով կարծես հագեցած լինի օդի ամեն մի հյուլեն, թեև մթնոլորտը ամբողջ օրը լցված է անտանելի, անընդհատ շառաչյունով և թռչունների ճռվոցյուններով, բայց բնության մեջ այնքա՜ն բնական են այս ձայները, այնքա՜ն տրամաբանական, որ բնավ չեն խոցում այս հին, նախակերտ լռությունը։

Զգում եմ, թե ինչպես մեծ քաղաքի աղմուկից և թույնից գրգռված և պրկված ջղերս այս անդորրության մեջ ազատվում են իրենց լարվածությունից և բեռի ծանրությունից, և այս բուժիչ լռությունը ծծում եմ անհագաբար, և խաղաղությունը տարածվում է հոգուս մեջ և հոգիս ներդաշնակվում է բնության հետ։

Ժամերով թափառում եմ դաշտերում և անտառներում. գոհ և հանգիստ. դիտում եմ բնությունը — ամեն երևույթ և իր, և խորհում եմ մեծ և անհուն բնության մասին։

Կապույտ երկինքը անծայրանում է գլխիս վերև, և արևը, տիեզերքի մեջ ամեն բանից հզորն ու գեղեցիկը, սավառնում է թեատարած...

Մայիս ամիսն է, և կախարդիչ, հրաշագործ բնությունը բոլոր արարածներին՝ լինեն չնչին կամ մեծ, տխեղծ կամ շքեղ, շնորհել է ուժ,

խելք՝ իրականացնելու իրենց ձգկատագիրը — կաղնիները, հուռթի և փարթամ, ձգվում են դեպի երկինք՝ կատարներով հողմածեծ, արծիվները ճախրում են ամպերի մեջ, թիթեռները՝ երփներանգ թևերով, մեղուները՝ ոսկե թևերով, դեգերում են ծաղկից ծաղիկ, և ինչքա՜ն միջատներ, որդեր, ճանճեր, ճիճուներ ամենուրեք, և անհամար ծիլ ու ծաղիկ, տերև ու թուփ, ծառ ու մացառ...

Բոլորն ուզում են ապրել. բոլորն ապրում են, բոլորը վայելում են լույս ու ջերմություն, բոլորը հասունանում են սիրո համար. ուզում են լինել, ուզում են հարատևել, և այս խրթին ձգտումի նպատակն ու իմաստը միայն բնությանն է հայտնի, միա՜յն նրան. և բնա՜վ երբեք ապրողի և ձգտողի համար։

Ինչքա՜ն գոհ եմ, որ հեռացել եմ քաղաքից — այդ բոլոր աղմուկից, ժխորից, վազքից, տենդից ու տապից, այդ բյուրավոր մարդկանց դեմքերից, նրանց շնչից ու խոսքերից, նրանց քայլերի ու գործերի աղմուկից. քաղաքից — աններդաշնակ, խառնիճաղանջ, մղձավանջային թոհուբոհից։

Թափառում եմ և խորհում — քաղաքը, քաղաքակրթությունը խաբում է մարդկանց, շլացնում է, քաշում իր ամեհի շրապտույտի մեջ,— և ոչի՜նչ չի տալիս։ Խաբեբա է քաղաքակրթությունը, ստախոս է, պոռոտախոս է — իր գործարաններով, լույսերով, մամուլով, երկաթով ու ծխով, շռինդով, և մետրոյով...

Կանգնում եմ ամայի դաշտի մեջ — լռության մեջ. շուրջս անսահման լռություն, լռություն. միտքս գնում է, թռչում է հեռո՜ւն, հեռավո՜ր հեռուն, անցնում է աշխարհից այն կողմը, գնում է տիեզերքի մեջ, անծայր տարածություն է կտրում, լույսից արագ, վայրկյանի մեջ կտրելով լույսի դարեր. սակայն սահման չկա, սակայն վախճանի չի հասնում։ Թվում է, որ ես չկամ, ես անէացել եմ — չկա ժամանակ և նյութ, չկա տարածություն և շարժում... Ամեն ինչ պատրանք է, թվացում. երազ, սոսկ գաղափար... Բայց սրտիս զարկը դարձնում է ինձ իրականությանը. ես կամ, ես ապրում եմ, ես իրական եմ... Աշխարհը գոյություն ունի...

Սեպտեմբերի 26, Ավլոն

Գիշերս, երազիս մեջ տեսա հայր Ղ. Ալիշանին. պատմում էի նրան Հայաստանի մասին։

Նա ասաց.

— Մի՛ ասեր, մի՛ ասեր, մի՛ ասեր...

Զուզեցավ լսել Հայաստանի ավերների մասին։

1935

Օգոստոս, Փարիզ

Այսօր տեսա մետրոյի մեջ մի աղքատ մարդ և կին։ Կնոջ ձեռքը մի աղտոտ կապոց՝ լիքը փայտի կտորներով և մանր լաթերով։ Հագնված աղտոտ. կոշիկները պատառոտուն. դեմքը ալտոտ, և ձախ աչքը արյունով լի և շուրջը կապույտ։ Բռունցք կերած անպատճառ։

Մարդը գեշ հագնված. գրպանը՝ թել, թղթի կտորներ։ Մարդ և կին իրար նայում էին թշնամաբար։ Ի՜նչ զազրանք, կատաղություն կար նրանց մեջ աշխարհի հանդեպ։ Ի՜նչ դիվականացած հոգիներ էին՝ լի ցասումով, վրեժով, քանդումի, կործանումի կրքով բռնկված...

Օ՜, եթե մի օր նրանց ցանկությունը կատարված լիներ — աշխարհը կքանդվեր, կհրդեհվեր, քար քարի վրա չէր մնա։

Մշտական կարիքի տակ գրգռված, դաղանացած, դարձած թույն, և ավերումի խելագար տենչ։

<Օգոստոս>, Լամանշ

Ծովը, անապատի պես, երազելու վայր է։

Նայում ես ծովին, և հորիզոն չկա. միացած է ծովը երկնքի հետ, չկա անչափման գիծ, նայում ես և սուզվում անհունության մեջ։ Իրականն ու երազը խառնվում են իրար, ճիշտ հոգեկան այն պահերի նման, երբ կես-արթուն ես և կես-քուն, և կյանքն ու երազանքը աննշմարելի ձուլվում են, հյուսվում են, խառնվում իրար, կորչում իրար մեջ...

Օգոստոս

Գտնվում եմ օգոստոսին 1935 թ. Café de L'Opale, այսինքն Paris-Plage-ում շքեղ ծովափ, անգլիացիներով լիքը, անգլիական ճաշակով։ Կանա՜յք, կանա՜յք — շքեղ կիսամերկ, գրգռիչ։ Գիշերները հագնվում են և ճոխ, շռայլ հյուրանոցում պարում, իսկ այն խեղճ կանայք, ծովային ճիճուներ ծախողները, էսկիմոսների նման կոպիտ, այրված, վայրենի, անհրապույր, աղքատ, ցնցոտի — ահա հակապատկերը այդ մյուս կանանց, կոնտրաստ։

Մի կողմը անհոգություն, քեֆ, հաճույքներ, պերճանք — մյուս կողմը՝ կարիք, խեղճություն, տառապանք։

Մի կողմը մարմնի կուլտ, խնամք, ամեն բան, ամեն գգվանք — մյուս կողմում ամեն զրկանք։ Մեկի համար ամեն ինչ, մյուսի համար՝ ոչինչ — ահա՛ կապիտալիզմի աշխարհը։

Սեպտեմբեր

Մի իտալացի բանվոր մի օր ինձ ասաց. «Քանի Ռուսիան կա, հուսահատվելու պետք չկա»։ Ինքը հակաֆաշիստ է, կոմունիստ։

Սեպտեմբեր, Փարիզ

Մայակովսկին շա՜տ է սիրել Փարիզը։ Երազել է միշտ այնտեղ ապրել, բայց կա և հայրենիքը, հարազատը, անգիտակցականը, հինը, տարերայինը... Եվ գրում է. «Я хотел бы жить и умереть в Париже, если бы не было такой земли—Москва».

Ես էլ կուզեի թափառել երկրում և ոչ մի տեղ կանգ չառնել, եթե չլիներ Արարատի դաշտը, Մասիսն ու Արագածը։

Բյուրեղացում.— Cristallisation

Ստենդալը սիրո ստեղծագործ, այլափոխող ուժը պատկերացնելու համար, պատմում է, թե ինչպես Զալցբուրգի աղահանքերի մեջ, երբ մարդ չորացած, մեռած մի ճյուղ նետե, մի ժամանակ հետո այն դուրս կհանե զմայլելի ակնաղտեղ բյուրեղներով զարդարված, դրվագված, անճանաչելի դառած։

Իր «De l'amour» *գրքի մեջ նա բյուրեղազարդում կանվանե երևակայության այդ գործողությունը, որով սիրահարը ամեն տեսակ շնորհներով և կատարելություններով կօժտե իր սիրո առարկան։*

Այսպես, ուրեմն, իմ բոլոր սիրածները, սկսած Շ.-ից, չոր ճյուղեր էին, տերևազուրկ, բայց իմ աղահանքի մեջ բյուրեղազարդվեցին, հյուսվեցին դարձան։

1936

Մայիսի 28, Վերսալ

Շրջում եմ Վերսալի արքայական պարտեզներում. հոյակապ ծառուղիներ. մարմարյա աստիճաններ, սանդուղքներ, մարմարյա ավազաններ, մարմարյա ծաղկամաններ և մարմարյա հեթանոս դիցաբանական արձաններ։

Խաղաղություն է, անդորրություն, լռություն՝ խորունկ և անվրդով. սահում է մի անիրական հով, բոլորովին անշոշափելի, աննյութական։ Քայլում եմ, կարծես երազի մեջ եմ քայլում, կանանչ ու կապույտ երազների մեջ... Միայն թռչունների երգն է, որ տանում է ինձ իրականությանը, կամ միայն թռչունների երգն է, որ իրական է, կենդանի, ապրող, որ զգալ է տալիս, թե երազի մեջ չէ, այլ իրական, շոշափելի աշխարհում — Վերսալի արքայական պարտեզներում... Քնարական պարտեզներ, քնարագեղ, քնարաշունչ։

Թռչունները երգում են, ճչում, սուլում, դայլայլում, գեղգեղում, գանգատվում, մրմնջում...

Փոքրիկ թռչունները ճապուկ-ճարպիկ թռչում են լճակի վրա, արագարագ, զիկ-զակ։ Բնությունը ե՞րբ, քանի՞ 100 000 տարիների ընթացքում սովորեցրեց նրանց այս թռչումը, թիռը...

Սեպտեմբերի 5, Վենետիկ

Հայ ժողովուրդը շշմել է։ Շշմել է ի տես այն բոլոր իրողությունների, որ պատահեցին իր բախտի նկատմամբ։ Կոտորվեց, ջնջվեց, նահատակվեց,— և մեծ, կուլտուրական աղջիկը խոստումներ տվին, բայց պատերազմից հետո թքեցին նրա վրա, շահագործեցին նրա միլիոն զոհերին, բարեկամություններ կապեցին թուրքերի հետ, ամրացրին նրան, ոտքի կանգնեցրին,— և այսօր Մեծն Բրիտանիայի թագավորը գալիս է այցի Քեմալին և բարեկամության դաշինք կոում... Շշմել է հայ մարդը և չի հասկանում այլևս աշխարհի իրերը, նա էլ չի հասկանում չարն ու բարին. չի իմանում՝ ո՞ւր է գտնվում, ո՞ր մոլորակի վրա, ո՞չ մի լեզու էլ չի հասկանում. անհասկանալի է աշխարհը. և անհասկանալի (գիվանագիտության) լեզվով բացատրում են այդ անհասկանալին. բայց մի բան պիտի հասկանա նա, հայ ժողովուրդը, որ մեծ և մի շարք փոքր պետությունների կերած հացը հայության արյունով է զանգված, շաղախված...

Սեպտեմբեր, Վենետիկ

Այնքա՜ն գեղեցիկ է Վենետիկը, ծովը, երկինքը, գույները... անհավատալի են, անիրական են, կարծես իրական չեն, սուտ են, երազի մեջ է։

Այս չքնաղ մարմնով աղջիկը մոտդ լողանում է. ուղղակի անհավատալի բան է, որ տեսնում ես այս մարմինը այնքան մոտիկ։ Իրականություն չէ, խաբկանք է, տեսիլք, պատրանք։

Թափառել, թափառել, ոտքով ելնել սարերը, իջնել ձորերը, քայլել դաշտերի միջով, անտառների միջով, ծովերի ափով, անապատի միջով, ժայռերով, գետերով, թափառել և խորհել, խորհել ամբողջ տիեզերքը, խորհել ամբողջ տիեզերքի մասին։

Խորհել, թախծել, հիշել, երազել... երազել սիրած կնոջ մասին, բայց խուսափել գեղեցիկ կանանցից. նրանք տանջող են, տառապեցնող և հավերժական ցանկությունը բորբոքող և այրող։ Աղբյուրի մոտ հանգչել սառը, վճիտ, զուլալ աղբյուրի մոտ, լեռների հովերի տակ, ծառերի ստվերների տակ...

Վենետիկ — միայն երևակայության մեջ աշխարհքը կարող է այսքան գեղեցիկ լինել։ Իրականությունը չէ, կարծես, մեր տեսածը, այլ անուրջ, երազ, հեքիաթ, կախարդական տեսիլ, պատկեր... իրականացած երազ...

Ծովափին՝ Ստաբիլի մենաստի մեջ, դանսինգներում... և ամենուրեք՝ մուզիկ կա, ջազբանդ, երգ, պար, և բոլոր այդ երևույթների իմաստը է կազմում, էությունը, հոգին — սերը։ Սեր են նվագում, սեր երգում, սեր պարում, սեր հառաչում, սե՛ր, սե՛ր, սե՛ր։ Եվ ամեն տեղ մեծ մասով երիտասարդությունն է, սիրո դերակատարները, ասպետները, զինվորները, պաշտոնյաները, սպասավորները։

Սե՛ր։

Հիմա ծերացել եմ, փոխվել է կենսաղգացումս և անտարբեր եմ դեպի կինը և չեմ հասկանում սերն ու կանացի հրապույրները, գեղեցկությունը։ Բայց երբ լինեի հանկարծ 20 տարեկան և Շուշիկը լիներ այս լուսնյակ գիշերին, ծովափին... ուրիշ կլիներ աշխարհը...

Վենետիկում — երազի մեջ եմ ապրում, թե՞ հեքիաթի։ Հեքիաթի մեջ եմ ապրում, թե՞ իրականության...

Լիդո, գիշերը, բոլորովին անդորր, նիրհած ջրերի վրա արտացոլված շենքերը, ծառերը, լապտերները ավելի գեղեցիկ էին,, ավելի հրապուրիչ, բանաստեղծական, քան իրական տները, քան իրերը, որոնց պատկերն էին։

Լուսինը լճակի մեծ բանաստեղծություն է, իսկ երկնքում — իրականություն և նվազ գեղեցիկ, հմայիչ։

Իրականության վրա, որ մեր երկիրն է, տխրափայլ սահում է լուսինը, երազի նման։

Վենետիկն այնքա՜ն գեղեցիկ է, այնքա՜ն խոր, անսպառ գեղեցկություն, որ ամեն օր թվում է, թե նոր ես տեսնում և այնքա՜ն ծալքեր ունի, հարստություններ, փարթամ, ճոխ, որ ամեն օր նոր բան ես գտնում։ Նոր մի պալատ, մի դուռ, քանդակ, սյուն, երկաթե լուսամուտների ցանց, դուռ, քանդակ։

Ծովերի կապույտ լռությունը, գիշերը, երեկոյան, խաղաղության մեջ։

Լուսնյակ գիշերներին, կապույտ երգը, շշունջը ծովերի։

Այս ի՜նչ բյուրեղային գիշեր է. բյուրեղ լուսին, երկինքը բյուրեղային, սաֆիր, շափյուղա...

Ս. Մարկոսի աղավնիները վստահորեն հետևում են իրենց կուտ տվողներին, թառում են նրանց ուսերին, ափերի վրա, և անկեղծաբար հետևում են, առանց ամաչելու, թե նյութապաշտ են, հացի հետևից են վազում, հաց տվողին են շոյում։ Կենդանիները անկեղծ են առհասարակ։

Մարդկությունը ապրել է հարյուր հազար տարիներ, թերևս միլիոն տարիներ և մեռել է շարունակ, բայց ձեռք չի բերել մահվան բնազդ, մահվան հետ հաշտվելու զգացում։ Չէ՞ որ ասում են՝ ապրելով, ապրելով և փորձեր ունենալով կենդանին ձեռք է բերում բնազդ, ունակություն, գործիք, գործարան, զգացումներ, տաղանդ, բայց մահից քանի գնում ավելի է վախենում... և համարում է մահը անբնական երևույթ, որի հետ չի հաշտվում և բողոքում է միշտ և միշտ։ Կյանքի, ապրելու կամքը, փափագը մարդկային և կենդանական և բուսական արարածների էությունն է կազմում։ Որ մի անգամ ծնվել են՝ հավիտյան ուզում են ապրել և չմեռնել։ Եվ ոգին բոի մեջ պայքարում են ապրելու համար։ Ծառի մեծ մասը չորացել է, բայց մի ճյուղ դեռ ծաղկում է... տերև է տալիս, ուզում է ապրել։

Մարդ ակամայից ընկնում է սենտիմենտալիզմի մեջ։ Ս. Մարկոս գնալիս տեսա քաղաքապահի ձեռքին մի մեռած աղավնի, տանում էր

կյանքով լի հրապարակից, ուր իր ընկերները թռչում էին, ճախրում էին, իսկ ինքը — մեռած, այլևս չի թռչելու, այլևս չի վայելելու երկնքի և ծովերի կապույտը... Նույն ժամերին տեսա Կոնտեսա Մարոզինին՝ անցնում էր սյունանցքի միջով, ծերացած, կորամեջք, տգեղացած, խորշոմած։ Հենց ուղիղ, նույն այդ կամարների տակ տեսա նրան՝ 1901 թվին՝ անցնում էր, ճախրում էր, թովռալով, ուրախ, զվարթ, թեավոր, գեղեցիկ, բոլորի հիացմունքը վայելելով... Օ՜, ամենակեր ժամանակ, ինչքա՜ն միջոցներ ունիս մաշելու, ծերացնելու, մեռցնելու ամենակարծը նյութը, օրինակ, գրանիտը՝ ցրտով, տաքով, օդով, քամիով, անձրևով. կրծում ես, տաշում, մաշում, քայքայում և փշրում, և ոչնչացնում. ո՞ւր մնաց մարդկանց...

Իտալական ներկա, տակավին ողջ կատակերգակ դերասաններից մեկը, որի բեմի վրա միայն երևալն արդեն ծիծաղի փոթորիկ էր բարձրացնում, հիմա՝ ծերացած լինելով, քաշվել է և նեապոլի մոտ մի վիլլա է շինել, ուր ապրում է անդորրիկ. պատի ճակատին գրել է.

— «Հիմա ես եմ ծիծաղում»։

Անմերձենալի երազ էր Վենետիկ նորեն գալը։

Երազից (Վենետիկից) դարձավ դեպի իրականությունը (Միլանո)։

Երեկ Երևկոյան Café Florian մի պառավ կին՝ արիստոկրատ, քայքայված, կծկծված, թառամած, նստել էր իր թոռան հետ՝ մի ծաղկափթիթ աղջիկ, սլացիկ, գեղեցիկ, թարմաշունչ։ Մի ժամանակ ինքն էլ սրա պես էր, և մի ժամանակ հետո սա էլ պիտի դառնա իր մեծ մոր պես — ավերակ, փլատակ։ Ամեն ինչ ժամանակի հարց է. երեկ, այսօր և վաղը. երեկ ես էի, այսօր դու, վաղը նա...

Իտալիա։ Ինչքա՜ն բան կա արվեստի։ Հազար-հազար ապարանքներ, եկեղեցիներ, նկարներ, արձաններ պատկերներ... Հրաշալիքներ։ Մարմարիոն, պորփյուր գույներ. որձաքար և բազմատեսակ քարեր, գույնզգույն մարմարներ և ի՞նչ գիտենամ, ի՜նչ տեսակ ընտիր քարեր...

Ի՜նչ գեղեցիկ է Codóro, ոսկե տունը. սրահի հատակը, մարմարե գունավոր քարերով մոզաիկ։ Ի՜նչ առաստաղ, սյուներ, նկարներ, արձաններ։ Հրաշալի է կավե Pieta — բնական, հուզիչ։ Կարծես մեր Միսակը լինի վիրավոր, մեռած՝ մոր ծնկների վրա ընկած...

Հոկտեմբերի 15, ծովի վրա

Նավը մարդկային դարևոր հանճարի խտացումն է։ Դարեր, հազարամյակներ, ազգեր՝ եկած և անհետացած, սերունդներ ստեղծել են, զարգացրել, հետզհետե կատարելագործել։ Նավը բանականության հաղթանակն է, գերիշխանությունը տարերքի վրա։ Նավը տրամաբանություն է՝ խստորեն, առանց ավելորդ բաների, իրերի, բայց նաև բարդ երևակայություն է, երազանք. վագներյան բարդ, հզոր, մեծացունց երաժշտություն՝ նրա մեքենան, մոտորը։

Նավի ռիթմը ուղղակի սրտին մարդու՝ համաչափ, զուգահեռ կգարկե։ Սիրտս խփում է նրա տակտի, զարկի, ռիթմի հետ։

Հիմա, այս վայրկյանիս, մի տեղ մի մարդ հոգեվարքի մեջ է. մեկը ողբում է իր կյանքը, անցյալը վերատենչում. մեկը լալիս է իր մեռած սիրելին. հիմա մեկը սպանում է մյուսին. հիմա մեկը համբուրում է իր սիրածին. հիմա մեկը ոճիր է խորհում. մեկը հիմա գլուխը թեքել է մի թղթի վրա և սոնետ է գրում. հիմա ոչխարները մի տեղ տուն են դառնում. հիմա պարում են մի տեղ.մի տեղ կռիվ կա և ծեծ. մի տեղ երեխա է աշխարհ գալիս. ձիերը վազում են հիմա մի արձակ դաշտում, և շրաղացները աղում են լեռների լանջերում. հիմա մի տեղ երգ կա և գինի, սեր և երջանկություն. հիմա մի հեռավոր աստղի վրա փոթորիկ կա և անտառները որոտում են. հեռավոր աստղերի վրա հիմա սեր կա և մահ. հիմա կործանվում է մի աշխարհ. հիմա ծնվում է մի աշխարհ...

Ես շրջել եմ Գարդա լճի շքեղ և հոյակապ ափերով, որոնց դարեր առաջ երգել են Վիրգիլիոսը և Կատյուլը...

Չգիտեմ՝ երկի՞նքն է իր գույնը տվել ծովին, թե՞ ծովից է առել իր գույնը... բայց ծովագնացները ասում են, թե ծովի գույնը կախված է երկնքից։

Հոկտեմբեր

Մոտենում ենք հունական շրերին, ափերին, կղզիներին, մայր հրկրին. ուրիշ երկիրների պես չեն նրանք — այս հողերն ու քարերը, շրերը, երկինքը. հասարակ, բնական, առօրյա չեն նրանք, այլ ուրիշ կերպ են, ուրիշ ձև և խորք ունեն, շաղախված են, պարուրված են միթոսներով, իդոսներով, աստվածներով, խորհրդավոր մշուշներով, խորհուրդներով. կախարդված են սիբիլներով։

Հունաստան անունը սոսկ թնդացնում է հոգիդ, թևավորում է հոգիդ, և այդ անվան տակ չես զգում հասարակ քար ու հող, ջուր ու երկինք, այլ մի ուրիշ աշխարհի,մի գերբնական, հրաշագեղ աշխարհի տարրեր, մթնոլորտ...

Անտառների մեջ Պանի ձայնն ես լսում, ժայռերի մեջ կիկլոպներին ես տեսնում, աղբյուրների մոտ ֆեսսերին, նալեդներին, լեռների գլուխք՝ աստվածներին, ամպերի մեջ՝ Հեփեստոսին և Օլիմպոսի ո՞չ թե մերկ գլուխը, այլ բազմած Զևսին։

Աթենք մտա հոկտեմբերի 17-ին, շաբաթ, ժամը 5-ին։

Ակրոպոլիս եղա կիրակի օրը, ժամը 10-ին։ Պայծառ, կապույտ երկինք, լուսավոր օր, և Պարթենոնը հին, դարևոր փայլով վսեմ և շքնաղ, թեթև և հոգեղինացած կանգնել էր ժայռերի վրա և սլանում երկինք։

Պարթենոնը երկնասլաց է, վերասլաց, երկնայինացած. լուսեղեն մարմարիոններ, անմահ և անմահացած մարմարիոններ՝ հոգեղինացած։ Հույն դասական ճարտարապետությունը գեղեցիկ է, նրա գաղտնիքը՝ առինքնող, գրավիչ, հիացնող ուժը՝ պարզության, չափի, ներդաշնակության մեջն է, և այդ հատկությունները դարձնում են նրան վսեմ։ Նա շքեղ չէ, պերճալից չէ, բարդ չէ, խճողված չէ, ծանր չէ, ինչպես հնդկականն է, գոթիկն է, ռոկոկոն է։ Պարզ է և թափանցիկ, կազմված է գրեթե միայն սյուներից։ Զարդեր շատ քիչ ունի. միայն ազնիվ, նուրբ, երկնասլաց գծեր։

Հունական պեյզաժն է՝ ծովը, լերկ լեռներ և սյուներ։ Հայկականն է՝ ճիրմակ լեռներ, կապույտ երկինք և վանքեր։

Հունաստանը — կղզիները շոր, լերկ, մերկ, քարոտ, դժգույն, վառված, խանձված ծովի աղով... Բայց այդ ի՞նչ գեղեցկություն են ստեղծել, ի՞նչ շքեղ դիցաբանություն, բանաստեղծություն, գեղարվեստ... Բոլորը միայն երևակայության ուժով։

Երևակայությունը եղել է այն ուժը, որ փոխարինել է իրականության աղքատությունը։

Տրովադան — խեղճ, ցածր լեռներ. մերկ, անշուր գրեթե այստեղ-այնտեղ հատուկենտ ձիթենի ծառեր, միայն այդքան, բայց Հոմերոսի երևակայությամբ լցված են, բնակեցրած են այդ առապարները մեծությամբ, հրաշքով, վեհությամբ, գեղեցկությամբ, ճոխությամբ։ Հեքիա՞թ, հեքիա՞թ...

Հունաստանը ինքնին, իրապես, շատ շոր է, մերկ, բայց լցված է, բնակված է աստվածներով, դյուցազուններով, առասպելներով, այեղներով ու պոետներով, փիլիսոփաներով։ Երևակայությունն է ստեղծել Հունաստանը, երևակայությունն է այնտեղ իրականությունը։ Ոգի բարկ աղերով խարկված, այդ մերկ ժայռերի ու լեռների վրա երևակայությունը բուսցրել է Արկադիայի հովվերգական մարգագետինները, Ատիկյան ծաղկավետ հովիտները և Լիվադիայի շքեղ պարտեզները, ուր երգել են, հրաշակերտել են, դյուցազնագործել են, պարել են բանաստեղծները, անդրիագործները, հերոսները, հավերժահարսները։

Սուբյեկտն է, մարդու ներաշխարհը իսկական Հունաստանը, և ներաշխարհ չունեցող մարդիկ տեսնում են միայն օբյեկտիվ-առարկայական Հունաստանը՝ շոր, ցամաք, դաժան, անհրապույր։

Հունաստա՜ն, դասական երկիր, փիլիսոփաների և բանաստեղծների հայրենիք... Հիմա նայում ես և բնավ չես տեսնում. միայն անցյալ գոյություն ունի, անցյալ, հուզիչ, զգացնող. այնինչ ներկան ոչինչ է, սուտ, կեղծ, մեռած, կամ կիսակենդան։ Ներկա արդի Հարտարապետությունը հնի այլասերումն է, շա՜տ անտաղանդ ընդօրինակումը։ Կարծես հինը, դասականը պլատոնյան իդեաներն են, նախատիպարները, կաղապարները, իսկ ներկայինը՝ նրա կոպիաները, պատճենները <...>

Արդի Հունաստանը իմիտացիոն է, հնի անհաջող վերարտադրումը։ Անցյալը ճնշում է ներկա հույների վրա, ներկա կյանքի վրա։ Անցյալը իր հզոր կնիքը դրել է նրանց վրա, շղթայել է, կաշկանդել նրանց միտքն ու ճաշակը, երևակայությունը։ Հույները անցյալի ծանրության տակ հղմված են, այլևս ոչինչ չեն կարող ստեղծել, և զուր է, եթե փորձեն նոր բան ստեղծել, չեն կարող. պիտի նոր հրաշք կատարվի, ծնվեն նոր աստված-հանճարներ, որ ստեղծեն նոր աշխարհ, նոր գեղեցկություն։

Հողմերի աշտարակի բակում ոտքի մի թաթ տեսա, կանացի ոտք, սանդալի մեջ. միայն մի կտոր մարմար, միայն թաթը. այնքա՞ն գեղեցիկ, համբուրելի, պաշտելի, նետած մանր քարերի կույտի վրա. եթե մեր թանգարանում լիներ՝ կլիներ թե՛ հայ քանդակագործների համար ներշնչման աղբյուր, թե՛ ժողովրդի ճաշակի զարգացման համար, և թե՛ իբրև թանգարանի գանձ, ունիկում։

Սոկրատեսի բանտից իջնում եմ դեպի Ակրոպոլի տակ և խորհում եմ վերջերս կարդացած այն դեպքի մասին, երաժշտագետի հետ... Այո՛, մահից առաջ, նույնիսկ ընդհուպ մահից առաջ պիտի սովորել չգիտեցա-

ծը, սովորել, անվերջ. գիտել, կարդալ, լսել, թափառել սովորելու համար, գիտենալու համար, կատարելագործելու համար իր միտքը, իմացականությունը, լայնացնել, տարածել մինչև անհունություն, անսահմանություն՝ աշխարհաճանաչումդ, իրականության ըմբռնումդ, տիեզերագիտությունդ... Ամեն ինչ գիտենալ և մեռնել, հոգ չէ։ Ամենագիտությամբ, անմնացորդ կերպով գիտենալ, այլևս բան չի մնում աշխարհում։ Մեռնել հանգիստ մտքով, գոհ, կատարյալ։

Հոկտեմբերի 23

Խոսում էինք նավապետի հետ։ Զզված է, ուզում է՝ հենց որ իր որդիներին ոտքի կանգնեցնի, հեռանալ, մի փոքր կենսաթոշակով բավարարվել և ապրել իր կնոջ հետ խաղաղության մեջ, հանգիստ։

Ցավի մասին ենք խոսում.— վտանգներ, ռիսկ, աշխարհներ տեսնել, աղգեր, սովորույթներ, մարդիկ, մտածումներ։ Ցավ, նավ, տարերք և գիտակցություն, կամք, խելք արհեստ։ Հին նավագնացները՝ քաջեր, հանդուգներ։ Տիեզերք, աստղեր, անսահմանություն. Ծիր-կաթինը ոչինչ է տիեզերքի առաջ. միլիարդ դարերը վայրկյաններ են հավերժության առաջ։ Հին լեգենդան։— Հսկա մի լեռ. ադամանդի կարծր լեռ. միլիոն տարին մի անգամ գալիս է մի թռչուն, կտուցով մի անգամ զարկում լեռան ու հեռանում։ Եվ այս զարկը պիտի շարունակվի մինչև լեռը ոչնչանա. և այդ ամբողջ ժամանակը միայն մի վայրկյան է անսահմանության, հավերժության հանդեպ։ Մարդը գիտե սա, մարդը զգում է իր ոչնչությունը. գիտությունը, տեխնիկան, պրոգրեսը չբերեց երջանկություն, այլ հոգսեր, կարիքներ։ Հիմա ունենք էլեկտրականություն, լույս, տաքություն, կոմֆորտ, բայց սրանցով քնքշացանք, թուլացանք. նախկին մարդը ավելի դիմացկուն էր, ուժեղ, թրծված, հիվանդությանց դեմ կայուն։ Գլխավորը ինքնազգացումն է, գոհ զգացումը, բախտավոր կենսազգացումը։

Գիտությունը, տեխնիկան, պրոգրեսը պեսիմիզմի տարան մարդուն. ջնջվեցին հին պատրանքները, կրոնը, հոգու անմահությունը, աստծու գոյությունը, հայր աստծու խնամատար գոյությունը. մարդը մենակ է զարհուրելի տիեզերքի, բնության մեջ. կյանքը խաբուսիկ, մշտական վտանգի տակ, կարճատև... Բայց և այնպես նորից բախտավորության երազ ու տենչ կա, հույս և հավատ այն ունենալու...

<Նոյեմբեր>

Գերմանացու հայացքները նացիստների մասին, հիտլերականների մասին. խաբեությամբ տեր դարձան Գերմանիային, խաբեությամբ էլ պիտի ապրեն, գլուխ պահեն. բռնությամբ տեր դարձան, բռնությամբ էլ պիտի շարունակեն ապրել, գործել։ Հենց որ դադարի բռնությունը, կվերջանա հիտլերիզմը. ամեն դիմադրություն անխնա ոչնչացնում են սազմի մեջ. ո՛չ սեռ են խնայում, ո՛չ հոսակ, ո՛չ դիրք, ո՛չ արժեքներ. միջոցներն են՝ ամբոխավարություն, քծնություն, քսություն, լրտեսություն, մատնություն, կողոպուտ, ծեծ, սպանություն, սարսափ, տեռոր։

Հիտլերի աստվածացում, բռնության աստվածացում. ամեն միջոց գործադրելի է՝ նպատակին հասնելու համար։

Ապշած է գերման ժողովուրդը, շշմած, վախեցած, փոքրոգիացած, փոքրոգի դարձած, դիմադրական ուժը մեռած, բայց իր հոգու մեջ թշնամի է ռեժիմին։ Թեև բոլոր պետությունները երկրագնդի ընդունում են, ճանաչում են Հիտլերին, բայց բուն գերմանական ժողովուրդը չի ընդունել, չի ճանաչում Հիտլերին։

Հենց որ հրաշքով ընկնի ռեժիմը՝ ժողովուրդը կացիններով պիտի չախչախե վերջին հիտլերականի գանգը։

Ես սպասում եմ այդ օրվան։ Դրա համար եմ ապրում։

Նոյեմբեր, Սև ծովի վրա

Նորից տեսա Ղրիմի ափերը։ Առաջին անգամ որ տեսա, քսան տարեկան էի և սիրահարված. սիրահարվածի աչքերով էի նայում աշխարհին։ Եվ մեծապես բանաստեղծական էին այդ ափերը՝ ժայռերը, ժայռոտ պատերը, լեռները... Իհարկե, հիմա այն չէ, այն չէ...

Երբ մարդը սիրահարված է և ճամփորդում է՝ կամ չի տեսնում աշխարհը, շրջապատը՝ այնքան զբաղված է լինում ներաշխարհով, իր սիրածի պատկերը ծակում է աշխարհը, կամ երբ տեսնում է՝ սիրահարվածի գեղեցկացնող, շքնաղացնող, բանաստեղծացնող աչքերով. իրականությունը դառնում է այլ. դառնում է անիրական, դառնում է երազային, փափագային, տենչային... Տենչացածը, ցանկացածը։

<Դեկտեմբեր>

Տիեզերական կյանքի ամբողջ էությունը, հարցը սրա մեջն է՝ սուբյեկտի և օբյեկտի փոխհարաբերության («ես և աշխարհը»)։

... Բախտավորությունը սուբյեկտի և օբյեկտի ներդաշնակության մեջն է։ Աշխարհը պիտի սրտով լինի, քեզ համույք պատճառե, քեզ լիացնե, այլ գուրգուրե, փայփայե, լիացնե, երջանկացնե...

1938

Օգոստոսի 22, Մաղկաձոր

Այս աստղը, Արկտուրը, տեսել է մեր երկրի ծնունդը, տեսել է մարդու ծնունդը. նրա ճառագայթը հետևել է մարդկության դժբախտ պատմության բոլոր փուլերին։

Նա տեսել է իմ ծնունդը. նրա ճառագայթը շողացել է իմ սիրտս վրա, նրա ճառագայթը պիտի տեսնի և՛ իմ անշուք հողաթումբը և նա պիտի տեսնի ողջ մարդկության մահը՝ և երկրագնդի մահը...

Եվ այս բոլոր անհուն ժամանակը տիեզերքի հավերժության մեջ պիտի կշռե միայն մի վայրկյան և ո՛չ ավելի։

Սեպտեմբերի 8, Մաղկաձոր

Մորթած հավը դեռ երկար ժամանակ, թերևս մեկ կամ երկու բոպե շղածգություններ էր անում, թևերը շարժում, ոտները կծկում և բանում... Իհարկե, չէր զգում. գլուխը չկար. երևի սիրտը, մկանները, ներվերի կենտրոնը, մեջքի ուղեղը...

Սարսափելի էր... և՛ Իսակը, և՛ Մկրտիչը, և՛ Նահապետը... և՛ հայությունը, և՛ պատերազմները...

Զարհուրանք է բնությունը. գազանություն, ոճրագործություն. ապրելը ոճիր է. բնությունը ոճրագործ է. նա մայր չէ, այլ դահիճ...

Եվ ո՞վ է շինել — աստված եղեռնագործ և բնության օրենքները...

Անհասկանալի պրոցես, անհասկանալի ընթացք, ոճրային ընթացք և աննպատակ։

Աշխարհ եկանք, որ տեսնենք այս ամեն զարհուրանքները և մեռնենք՝ զգալով բոլոր հավերժական զարհուրանքը...

1939

Մայիսի 28

Զաղ կալվածում մեր շոֆերը բերեց մի ուլ, ուլիկ, փոքր երեխա, հազիվ երկու ամսական. մկկում էր, գրկից փախավ, վազեց, ցատկեց և

լգիտեր, որ միայն կես ժամ, միայն կես ժամ կյանք ունի... Մի կես ժամից հետո շոֆերի ընտանիքը նրան պիտի մորթե և պիտի խորովեն, լափեն... Երանի է, չէի տեսել. սիրտս մղկտաց. աշխարհը՝ զզվանք, գարշանք, մարդությունը՝ գազան, անգութ... Բնությունը՝ սպանդանոց, կառափնատուն...

Հուլիս

... Զանգեզուրից վերադառնալիս, կանգ առանք Սելիմի անցքից հետո, Մարտունու շրջանի յայլաղներում՝ Յանախ (Յանաղ) ամառանոցում։ Ցերեկոյան նախիրը դառնալիս հետևյալ սոսկալի բանը տեղի ունեցավ։ Ցերեկը գյուղացիք մորթել էին մի տավար՝ հորթ կամ մոզի կամ կով... և արյունի վրա հող էին լցրել։ Նախիրը վերադառնալիս անցնում էր այդ հողի մոտով թե վրայով. կենդանիները արյան հոտն առան, կատաղեցին, սկսեցին բառաչել, գոռալ. տեղերից չէին շարժվում, փորում էին այդ հողը, հոտոտում, կատաղում, մռնչում, իրարանցում, օրհասի ձայներ...

Հազիվ, ուժով կարողացան գյուղացիք պոկել նրանց այդ արյունոտ տեղից և տանել-լցնել գոմերը...

Օգոստոսի 18

Այսօր Մաղկաձորի անտառում տեսա՝ քեֆ անողները նոր էին մորթել մի ոչխար (խոյ) և փորը բանում էին։ Սոսկալի, զարհուրելի և զզվելի զգացմունք ունեցա — զզվելի է մարդ արարածը, գազան, գազան... Ե՞րբ անասուններ, ինչե՞ր եք քաշում մարդկանց ձեռքից...

Սեպտեմբերի 18

Երեկ (17 սեպտեմբերի 1939 թ.) շոֆերս պատմեց ինձ հետևյալը, թե մի-երկու շաբաթ առաջ ներկա է եղել մի զարհուրելի պատկերի.— դասապետերը սպանում են մի 30-ի չափ ոչխար. բոլորին հավաքել են ի մի և մյուսների առաջ հերթով սպանում են ոչխարներին։ Հերթի կանգնած ոչխարները նայում են սպանողին և կանգնած տեղերը դողում են, դողում են, դողում են... և ճիգ չեն անում փախչելու։

Զարհուրանքը նրանց անդամալույծ է արել...

1940

Հունիսի 24, Ռարժամ-Լիկոկ

Մի երեխա քնից զարթնել էր և լաց էր լինում. նա շքեղ երազ էր տեսել. իր սրտի ուզած բաներն էր տեսել և ունեցել, հիմա զարթնելով կորցրել էր բոլորը և լաց էր լինում։

— Սիրո՜ւն երեխա, ինչո՞ւ ես լաց լինում. մի՛ լար, մի՛ լար. երիտասարդությունը, այդ շքեղ երազը դեռ առջևդ է. հապա ի՞նչ անեմ ես, որ իրապես կորցրել եմ ամեն, ամե՛ն բան, և երազ էլ չկա այլևս իմ առաջ...

Հունիս

Կախեթիան գեղեցիկ է շա՜տ։ Ոչխարների հոտեր՝ ճերմակ գեղմեերով։

Երեկոյան հրաշալի վերջալույս եղավ և մեղմ, քնքուշ անդորրություն, հանգիստ, խաղաղ, երազային։

Նայում ես հովիտին այդ զարբաղանի բարձունքից... Դալարի մեջ թաղված գյուղերը։ Մտածում ես, թե՝ բախտավորությունը, երջանկությունը այդ տնակների մեջ է։ Բայց, իհարկե, սխալվում ես — այնտեղ էլ վիշտ կա, հոգսեր, և մանավանդ՝ ձգտումներ, երազներ — հեռանալ այդ տնակներից, գնալ քաղաքները, լուսավոր, ճոխ, հարուստ, փարթամ, շքեղ. տեսնել, ապրել, բարձրանալ։ Դժգոհ են և կարծում են, թե բախտը այնտեղներն է՝ հեռուներում. կարծում են, թե՝ իրենց համար էլ այնտեղ բաժին կա ճոխությունից, լյուքսից. միայն թե գնան, գնան՝ և ամեն բան կունենան...

Սինանդալի։ Մատուռը հեղեղատի ափին. արևմտյան մասը քանդված, հեղեղը տարած. մնացել է միայն արևելյան աբսիդը։ Այստեղ է պսակվել Գրիբոյեդովը։

Եղևնիներ, նոճիներ, հսկա լորենիներ։

Մատուռը հասարակ, կլոր, գետի քարերից շինված։

Սոխակները Սինանդալիում և ամենուրեք երգում են երեկոյան և առավոտյան։ Արևի հետ այնքան գործ չունին։ Արշալույսին և դեպի լուսածագը։ Իսկ ցերեկը բավական հեշտալի երգում են սարյակները։

Ասում են, թե՝ սոխակները չեն կրկնում իրենց երգերը. միշտ նոր դայլայլներ։

Սինանդալիի մոտ կա երկուքարանի փոքր ջրաղաց՝ բերդի նման շինքի մեջ՝ ծայրերը կլոր բուրգերով։ Աղորիքներն էլ մեծ չէին և եգիպտացորեն էին աղում։

Ջրաղացի մեջ ջաղացպանի սենյակը բուխարիկով։

Այնքա՜ն հարապատ էր, հուզիչ...

Թելավն այնքա՜ն անդորր, հանգիստ քաղաք է. ուղղակի, մեծ, աղմկալից քաղաքից հետո, կարծես, անապատ ես ընկել...

Թելավում առաջ իշխող տարրը հայերն էին՝ հարուստ, զարգացած. ունեին դպրոցներ, գրադարան, բարեգործական ընկերության ճյուղ և թատրոն...

Թելավցի ուսուցիչ Ռուբեն Վաթյանը. նախկին տերտեր, հիմա անատվածների շարժման ղեկավար և քարոզիչ։

Ահա դիալեկտիկան։

Դեկտեմբերի 1

Արևը մայր մտավ, իջավ անդորրություն դաշտերի վրա. ոչխարները գլուխները կախեցին երկյուղած և հոտը փարախ մտավ ներհնելու։

Աստղերն ելան, լռություն ծավալվեց։

Աստղեր՝ անհունի մեջ ցրված կայծեր, անթիվ, անհամար — տիեզերք անսահմա՛ն, հսկա՛ յա, անակի՛ ղբ...

Ի՞նչ եմ ես — ոչնչություն, խեղճ, ողբալի, ճղճիմ...

Բայց իմ տառապանքը, իմ վիշտը, իմ ցավագին գալարումները, իմ սարսափը մահից, իմ գիտակցությունը իմ ոչնչության և տիեզերքի մեծության հանդեպ — ավելի մեծ են, անեզր են, ծանր են, քան աստղերը բոլոր, քան տիեզերքը...

Իջի՛ր երեկոյի անդորրություն, իջի՛ր սրտիս մեջ, խաղաղացրո՛ւ իմ լարլարվող հոգին, մարի՛ր թույնը իմ մեջ, խոհերս ջնջի՛ր և տո՛ւր ինձ անզգայություն և անգիտակցություն և քաղցր քնի պես մահ...

1941

Փետրվարի 18, Թրիքոթ

... Ես տեսա Անին ավերակների մեջ...

Ես տեսնում եմ Անին շեն ու շքեղ իմ տեսիլքի, իմ անուրջների, երազների մեջ, իմ հոգու մեջ — անվթար։

Մարդը մսակեր է և ուրիշ շատ կենդանիներ՝ մսակեր, գիշատիչ։

Ի՜նչ սոսկալի կոտորած կա մի վայրկյան բնության մեջ, ցամաքի վրա, ծովերում և օդի մեջ։ Ուտում են, հոշոտում են իրար. ամենուրեք ցավ, վիշտ, տառապանք, հոգնվարք, լաց, կոծ, զարհուրանք... անվե՜րջ, անվե՜րջ, անընդհատ, հավերժաբար...

Ահա՛ բնությունը՝ դրսից գեղեցիկ, հոյակապ, վսեմ, քնարական, իսկ ներսում՝ միայն ողբերգություն, մղձավանջ, մահ...

Զյուն է գալիս մեղմ ու դանդաղ և լցնում է դաշտերը, երկիրը մի խաղա՜ղ, անդո՜ր, անո՜ւշ տրամադրությամբ, զգացմունքով։

Հունիսի 24, Էսենտուկի

Հունիսի 22-ին, երբ նոր էի հասել Էսենտուկի, Գերմանիան հարձակվեց մեր վրա...

Սարսափելի օր... ո՛վ մեռնի, ո՛վ ապրի, ինչե՜ր պիտի տեսնենք, ի՜նչ թանկագին կորուստներ, ավերումներ...

Գազանական ֆաշիզմը ուղղակի ներկայացնում է Եվրոպայի կորուստը...

ԿՀՄ սանատորիայում, հուլիսի 7-ի երեկոյին կոնցերտ կար և հետո պար։ Ինչքա՜ն հակասություն կա կյանքում, աշխարհում։ Միևնույն պետության մեջ, մի տեղում կռվում են և սպանվում, մյուս տեղում երգ, պար, հրճվանք։ Մահ և կյանք՝ կողք-կողքի։ Մի տեղ երիտասարդներ կոտորվում են, մյուս տեղ՝ սեր անում, հրճվում...

Հյուսված են իրար հետ՝ մահն ու կյանքը։

1942

Հունվարի 27, Մոսկվա

... Ռադիոն առավոտյան զարթնեցրեց ինձ. աչքերս բացած-չբացած լսեցի «Ուրի՛ ես, կռանալ մի՛...» երգը. ուղղակի զգացի ինձ Հայաստանում, շա՜տ և շա՜տ հուզվեցի... Տեսա մեր քաղաքը 1892 թվի աշնանը, հարազատ փողոցները, տները, բարդիները, ուռիները... Շուշիկը նստել էր լուսամուտի առաջ և երգում էր «Ուրի՛ ես, կռանալ մի՛, մեր դռնեն հեռանալ մի՛, յա՛ր, Աստվածդ կսիրես, սիրել ես, մոռանալ մի՛...»։

Նա ինձ լքել էր, ինձ արհամարհել էր, ուրիշին էր սիրում. ես գիշերցերեկ նրա դռներից չէի հեռանում, նրա դռան գերին էի, իսկ նա ուրիշին էր ուղղում իր խնդիրը — «Մեր դռնեն հեռանալ մի՛ սիրել ես, մոռանալ մի՛...»։ Ա՜խ, ի՜նչ հակասություն, ի՜նչ չար բախտ... Այդ բախտը ինձ կործանեց, թշվառացրեց ամբողջ կյանքս, ինձ հիվանդացրեց ամբողջ կյանքիս ընթացքում... Ջա՜ր բախտ, չա՜ր Աստված...

Այս զգացմունքի տակ՝ սիրտս այնպես փղձկաց. զգացի ինձ պատանի այն օրերում, և բնավ ցանկություն չզարթնեց մեջս՝ նորից վերադառնալու ներկայիս մեջ — ծերության մեջ — անտարբեր, անհույզ, չոր ու ցամաք, անսեր, անհրապույր այս տարիքի մեջ, զուրկ ամեն հաճույքներից, մորից, քույրերից, եղբայրներից, ընկերներից, տնից, գյուղից թափուր այս իրականության մեջ, որ կամ... Ուղղակի ուզում ես ինքնասպանություն գործել, որ մեռնես այս երազի մեջ՝ չահել, զգացմունքներով թաթախուն և աչք չբանաս այս գորշ կյանքի վրա...։

Մայիսի 7

Փողոցում մի սրճագույն շուն, այս տարվա ծնունդ, նիհար, խեղճ, կարծես անտեր, թափառում է սոված. գլուխը միշտ կախ, գետինը հոտոտելով, ուտելիք է գտնում, ի՞նչ ուտելիք կարող է գտնել այս կիսասով քաղաքում. թերևս ոսկորի կտորները, հացի փշրանքները, ձկան ոսկորները... խե՜ղճ շուն. ցեխոտ, հողոտ, քաղցած։ Ինչո՞ւ է ծնվել, եկել այս չար աշխարհը, մի ոճրագործ բնության կամքով։ Ստեղծում է բնությունը՝ առանց մտածելու նրանց կերակրելու մասին, անհաշիվ քանակությամբ ստեղծում է և իրար վրա բաց թողնում այս խեղճ արարածներին։ Եվ դարձնում է նրանց զազան. անգութ. այնինչ կենդանիները բարի են հոգով. մարդն է չար, մարդն է բնության արժանի որդին — չարագործ բնության չարագործ զավակներ։ Այս խեղճ շունը, որ շփոթված քաշ է գալիս՝ գալարվելով սովի ձեռքից, փողոցի տղաները քարով զարկում են, ցավ են պատճառում. վնգստում է խեղճ շունը, և հաշտված իր վիճակի հետ, նորից թափառում է։

Բարի են կենդանիները, ազնիվ են — շունը, ոչխարը, այծը, եզը, գոմեշը, ձին, ուղտը։ Չար են մարդիկ... Պատերազմը մարդկության պատիժն է իր չար սրտի համար։

Դարան

Մութ գիշերին, փողոցում, մի պատի տակ, կատվի մի ձագ նորածին՝ նվում էր, վնգստում էր. սրտառուչ ձայնով լաց էր լինում — ճգնա-

ժամի, մահվան ձայն։ Ցուրտ էր, մրսում էր, քաղցած էր. մայր չուներ, փողոց էին ձգել նրան. մի պատանի ուզում էր քարով զարկել, սպանել նրան. «Թո՛ղ սատկի, ձենը կտրեմ»,— ասում էր նա։ Ես փախա՝ ձայնը ականջիս մեջ. ձայնը հետևում էր ինձ և սիրտս մղկտացնում. ի՞նչ է ուզում բնությունը. ինչո՞ւ է նրան ստեղծել, կյանքի, ապրելու ահավոր կամքով և տանջվելու հատկությամբ։ Խե՜ղճ կատու. աշխարհ եկավ միերկու օրվա համար. եկավ որ լա, նվվա, տանջվի, սարսափելի տանջվի և մեռնի, գնա։ Այս անսահման տիեզերքի մեջ նա ապրելու հնարք չունի, օգնություն չունի. նրա նվվոցով երևի լցվել է տիեզերքը. ձայնի ալիքները գնում են անվերջ, հավիտենորեն, իսկ բնությունը, աստղերը, ահագին ուժերը անտարբեր են նրա հանդեպ... «Թո՛ղ սատկի, ձենը կտրվի» — հեշտ է ասելը, բայց նա չի ուզում մեռնել. բնությունը չի ուզում, որ նա մեռնի. բնությունը ուզում է, որ նա ապրի, որովհետև մենք բոլորս ոչինչ ենք, կամք չունենք. բնությունն է, որ ուզում է, իսկ նա միջոց, ուժ չի տալիս, պայմաններ, հնարավորություններ, որ ապրի, կարծես ասում է. «Ես ստեղծեցի, կարող ես ապրել՝ ապրի՛ր, չես կարող՝ մեռի՛ր. ի՞նձ ինչ. ես ամեն վայրկյան միլիարդների կյանք եմ տալիս և մեռցնում...»։

Աստված առաջ մահը միշտ մարդու աչքի առջև էր դրել, կանոնեցրել։ Բայց երբ տեսավ, որ մարդը մահը միշտ տեսնելով չի կարող ապրել, տրտմում է և հուսահատվում, վերցրեց և քցեց ականջի հետևը։ Մահը մենք մեր ականջի հետևը ձգելով (մոռանալով) է, որ կարող ենք ապրել։ Մահի մասին չխորհելով։

Հոկտեմբերի 17

Ղազախի Սևքար գյուղում մի ծեր կին է ապրում, մեն-մենակ։ Մի հատիկ տղան կովի դաշտումն և մի տարուց ավել է նրանից ո՛չ մի լուր չկա — սպանվա՞ծ է արդյոք, թե՞ դերի, թե՞ անհայտ կորած։

Պառավ մայրը օջախը վառել է, միշտ վառ է պահում և սպասում է որդուն։ Գյուղի դուռ ու դրկից, կամ ազգականները առաջարկում են նրան, խնդրում են, որ գա իրենց մոտ ապրի, որովհետև բոլորովին մենակ է և անտերունչ։ Նա չէ համաձայնում գնալ, պատճառաբանելով, որ չէ կարելի օջախը մարել, ծուխը հանգցնել, դուռը փակել... և երթալ։ Ո՞չ, պիտի մնա. օջախը միշտ պիտի վառ պահե՝ մինչև որդու դարձը։ Որդին գա՝ օջախը վառ տեսնի, ծուխը երդիկից ելնելիս տեսնի...

Ի՜նչ հուզիչ զգացմունք և մտածմունք. սրբազան խորհրդանիշ ընտանիքի, կենդանության... օջախի — երդի գաղափարի, կրակի պաշտամունքի։

Հազար ու մի խոհեր է առթում այս սիմվոլը. հայ ժողովուրդը սրանով և սրանցով՝ այս ավանդներով, սիմվոլներով է դիմացել, գոյությունը պահել, պահպանել՝ հասցնելով ներկա օրերը. օրեր, որոնց առջև կանգնած է հայ ժողովուրդը՝ լինել-չլինելու ճգնաժամով...

1943

Երազ տեսա հունվարի 3—4-ի գիշերը, 1943 թ.։ Երազում մթության, խոր անդունդի ափին, տխրություն. կարծեմ, Շ-ը լուռ էր, չէր խոսում...

Հուլիսի 10

Այսօր Երվանդի տիրուհու տանն էի... Պատշգամբում մի ճերմակ ձագուկ կար հավի. ոտքը կապած, հանգիստ նստած կացում էր հատիկները՝ առջևն ընկած... Բայց վաղը նրան պիտի մորթեն... խեղճը չգիտե, որ հազիվ մի օրվա կյանք ունի...

Օ՜, եթե գիտենար, թե վաղը չկա... Բայց արդյոք կենդանիները մեզ նման զգո՞ւմ են մահի սարսափը...

Եվ ինչքա՜ն հիմա դրա վիճակին երիտասարդներ կան, որոնք չգիտեն կամ գիտեն, որ վաղը գոյություն չպիտի ունենան։

Հուլիս, Ֆրիեդ

Իրինդը — 70-80 տուն սասունցիներ հավաքված են հայկական մի հին, ճարտարապետական կոթողի շուրջը. ծվարած այդ VII դարի չքնաղ բեկորների, փլատակների մեջ։ Մի բոլորակ, վարդաձև տաճար, կեսը՝ կանգուն, կեսը՝ ավերակ...

1944

Հուլիսի 1

... Ղարախաչում այնպես ցուրտ էր, որ մրսում էի։ Գնացին մի ճերմակ դառ բիրին և իսկույն մորթեցին. խեղճը անշշուկ, անձայնուն

մորթվեց։ 10 ահագին մարդիկ... թափվեցին խեղճ գառի դիակի վրա, մաշկում էին, կտրտում էին՝ եփելու համար, ուտելու համար։

Ուտել — գազանային անհրաժեշտություն։ Մտածում ես — գառը, մոր կաթից գրեթե նոր կտրված, ընկերների հետ, ծաղիկների մեջ, արածում էր, ուրախ, կայտառ, խաղալով. իսկի մտքովը չէր անցնում, թե այսօր պիտի վերջ գտնի նրա կյանքը։ Ի՞նչ օրենք է դաժան բնության. դարերի մեջ շինվում է մի օրգանիզմ, բարդ, շատ բարդ. աչք, ականջ, ներվեր, ուղեղ և մի վայրկյանի մեջ ոչնչանում է, լուռ ու մունջ, կորչում է, ջնջվում ջրի պղպջակի պես անհետանում է՝ որպես թե բնավ չէր եղել... Նորից վերադառնում է՝ մարդու աղիքների միջով բնության տարերքին, քիմիական վերլուծման, որ բնության գործարանում նորից դառնա հող, ջուր, բույս, կենդանի... Նույնը և մարդը, իր ահագին ուղեղով, կարողություններով՝ վերածվում է հողի, ընկնում է բնության ընդհանուր դանձարանի մեջ, որից բնությունը ստեղծում է նոր-նոր բաներ...

Հոկտեմբերի 30

Տեսա Շուշիկին. հիվանդ, ծերացած, կմախքացած։ Եվ համեմատել՝ այն ծայրը և այս ծայրը։

Զարհուրելի է։

Լսեցի մահը 21/X, ժամը 2-ին։

1948

Մարտի 29, Երևան

Գարտեզում աշխատում են Հալեպից ներգաղթողներ, երեք հոգի՝ Այնթափի Հոմկլա գյուղից (Ներսես Շնորհալու աթոռը). նրանցից մեկը 75 տարեկան է, բարձրահասակ ծերունի, ուժեղ («Երկրի ուժը մեջն է դեռ»)։ Մառի արմատներն են հանում։ Նա ունեցել է 8 զավակ. 4 տղա, 4 աղջիկ։ Բոլոր տղաներին թուրքերը սպանել են, աղջիկներն էլ մեռել են. միայն մեկն է ողջ։

Կարիքն ստիպում է աշխատել ծերունուն։ Այդքան վիշտ է տարել և տակավին տոկուն է, դիմացկուն։

Մայիս

... Իմ մահից հետո, երկրագնդի մահից հետո, երբ հյուլեները, որոնք, ո՞վ գիտե քանի տասնյակ միլիարդներից են կազմված, կցրվեն, կտարաղնվեն տիեզերքի մեջ, արդյոք երբևէ իրար պիտի հանդիպե՞ն, գոնե մի քանիսը...

Հոկտեմբեր. Սոչի

Մանկանայի՜...

Ա՜խ, մանկանայի...

Ազատվեի իմ անցյալի դառն հուշերից, ամրողջ վատի, չարի հիշողություններից, ցավերից, հիվանդություններից, հոգնածությունից, վհատությունից, ծանր տրամադրությունից, մշտական թախիծից... Լինեի մանուկ, պատանի, նոր սկսեի կյանքս, առանց կրկնելու գործած սխալներս...

Նոր սիրեի, նոր երգեի, նոր զգայի, նոր երազեի, նոր գործեի... աշխարհքը նոր սկսվեր ինձ համար...

Ա՜խ, էլ չտանջվեի, թեթև զգայի ինձ բեռից, ճնշումներից, դառն վերապրումներից, մոռանայի, նոր սկսեի ապրել՝ պատանի, թարմ, աշխույժ...

1950

Հուլիսի 4

Մեր վերնաշենքը բարձր է, այնքան բարձր է, որ հեռվից, շա՜տ հեռվից մարդիկ տեսնում են այդ շենքի բարձունքները — դագաթները՝ ամեն ասպարեզի վրա — լինի պոեզիա, թե նկարչություն, լինի ճարտարապետություն, թե երաժշտություն։ Թեև մենք քանակով փոքր ենք, բայց մեծ ենք և հարուստ...

Հուլիսի 23, Կիսլովոդսկ

Ա՜խ, Անիի քաղաքացուն խոսելիս տեսնեի. Անիի բնակիչները խոսեին՝ լսեի, նրանց բառերը, ոճերը, հնչյունները, արտասանությունները....

Մի վայրկյան լսեի...

Ախ, սրտի բյուլահ ունենայի... և ջնջեի հայության հին և նոր թշնամիներին, ապա մեռնեի... հրաշք, հրա՜շք պետք է...

Օգոստոսի 4, Կիսլովոդսկ

Երբ մարդ նայում է այս պայծառ արևին, կանաչ լեռներին, շառաչուն, ցոլցլուն գետակին, ծաղիկներին, թռչուններին — մոռանում է, թե մահ կա, հիվանդանալ կա... Տարվում ես, հափշտակվում ես, մոռանում ես...

Օգոստոսի 29, Կիսլովոդսկ

Տեսա Թերլեմեզյանի նկարի պատճենը — «Սիփան սարը Կտուց կղզուց». կղզու վրա ժայռեր կային, ու փափագ զարթնեց համբուրելու այդ ժայռերը...

Սեպտեմբերի 6, Կիսլովոդսկ

Երբ մարդ երազին այնպիսի գեղեցիկ, երջանկացնող բան է տեսնում, օրինակ, մեռած սիրելիների հետ, որ նույնիսկ երազի մեջ էլ երազային է, այն բաղցր, երջանկացնող մոմենտին՝ զարթնում ես, որովհետև քնած, մեռած զիտակցությունը ցնցվում է, զարթնում է, չի հավատում։ Օրինակ. այս գիշեր (առավոտյան դեմ) տեսա, որ ես ջահել տղա, նստել եմ հրաշալի ձին և ուրախ, զվարթ, գնում եմ և հենց էն է՝ պիտի անցնեց Շուշիկի կեցած տան առջևից, որի պատշգամբում նստել է նա, հանկարծ՝ առջևս քամու ջրաղացի թևի պես մի գերան է կանգնել օդում և քիչ է մնում ճակատիս դիպչի. ուզում եմ գերանը հրել մի կողմ. զարթնում եմ այդ ամենաչքնաղ մոմենտին, երբ պիտի տեսնեմ երազական սիրածիս...

Ի՜նչ հիասթափություն, վիշտ...

Զարթնում եմ՝ ձեռքս լուսամուտի գոգի փայտի վրա...

Ձեռքս փայտին դիպչելուց խզվել է կամ հենց դիպչելիս՝ այդ երազն է ստեղծվել...

Բոլորը մի երկվայրկյանի մեջ։

Բայց կարևորը երազի կառուցումն է — չհասնել մուրազին։ Ճիշտ այդպես է միշտ՝ երազում չես հավատում, թե ողջ են մեռած սիրելիները։ Գիտակցության խորքում թաղված է մահի փասարը։

1951

Օգոստոսի 14, Սենինական

Այցելեցի Ավետիք Մալոյանի տունը. աղջիկ-տղաների, երիտասարդների ահագին բազմություն հավաքվեց. ուսուցչուհի Օֆիկ Մանուկյանը, որ հիմա այդ նվիրական տան տերն է (ուսուցչուհի Ղափլիում, Օֆելյա Ալանակյանի հետ, նույն գյուղում դասավանդող) երգեց «Թինգյոլը», «Սև աչերեն», «Սիրեցի, յարս տարան։ Հուզիչ տեսարան էր. մանկահաս աղջիկները հուզվեցին, լցվեցին աչքերը... Խաչ կերա այն տունը, ուր հին ընկերներով Ստեփան (Ըստոփկա) Տեր-Ստեփանյանի հետ, Բագրատ Սերոբյանի, Սիսակ Տեր-Սիմոնյանի... հետ հաճախ հաբիսա էինք կերել... Ի՜նչ ընկերներ, ի՜նչ գաղափարական մթնոլորտ, ի՜նչ քաղցր, աղիզ օրեր...

Ապլային վրա շիրմաքարը բցեցինք օգոստոսի 14-ին։ Ի՜նչ պատահականություն, ի՜նչ զուգադիպություն։ Ինչպես լսել եմ տարիներ առաջ, Ապլան վախճանվել է Աստվածածնա շաբթի մեջ և թաղն էլ բցեցին նույն տոնի շաբթի մեջ։ Աստվածածնա տոնի շաբաթ և կիրակի օրերը — օգոստոսի 16—17 թվերն են։ Ապլաս հանգչում է Ազամու և Նիկոլ աղբոր միջև։

1953

Լենվար

Առանց նյութի չկա կյանք, շարժում, զգացողություն. կենդանին ներվ է, գիտակցությունը ներվ է, աշխարհը ներվ է, աշխարհը կա, որովհետև ներվ կա։ Առանց ներվի աշխարհ չկա...

3 մարտի, Երևան

Բնությունը նրա չար օրենքները։
Ինչքա՜ն դաժան է բնությունը՝ իրար ուտել։ Շինել ու ավերել։
Միկրոբներ, թռչներ, ցավեր — և մահ. ոչնչություն։
Մարդն էլ բնության պես չար է, դաժան, ոճրագործ։
Ատում եմ բնությունը և մարդուն։

Թուրք կնշանակե՝ թուրեր, թրեր։ Թուրի հոգնակին։
Օ՜ֆ մի արա, որ թշնամին չլսե օ՜ֆ։
Օ՜ֆ մի արա, որ թշնամին չլսե օ՜խ անե։
Օ՜ֆ մի արա, որ թշնամին օ՜օխ չանե։

Ապրիլ

Հայ ժողովրդի ողբերգությունը ինձ կիսեց։ Կյանքս կիսեց։

Գյումրեցին ասում է — մարդու պակասություն։
Այսինքն՝ հաց, հարստություն կա, բայց մարդ չկա, խելոք, ազնիվ մարդասեր, քաջ մարդ չկա...
— Ի՞նչ կա, ի՞նչ չկա։
— Մարդու պակասություն ուրիշ ոչինչ։

1954

Բացել եմ ռադիոն և լսում եմ երաժշտություն աշխարհի զանազան վայրերից — Հինդ, Արաբ, Իրան, Բաքու, Հայաստան... Լսում եմ և երազում, բաց աչքերով... Թափառում եմ երկրե-երկիր, սեր եմ որոնում, սիրածի եմ որոնում... Կարոտ, լաց, մայր, հայրենիք, մանկություն, երիտասարդություն, անցյալ... Երազներ, երազանք, վերացում, սլացում, եսազրկում. անուրջներում ապրում. գոյությունդ մոռանալ, ես-դ մոռանալ, ինքնամոռացում...

Առանց մարդու տիեզերքն ի՞նչ արժեք ունի, ո՞վ է հաստատողը նրա գոյության. նրան բացատրելու...
Ո՞ւմ համար է նա՝ տիեզերքը, երբ իրեն պես բոլորը՝ տարրերը, անզգա են։
Ի՞նչ իմաստ ունի, ի՞նչ է։
Ոչինչ է նա, պարզապես մի անսահման ունայնություն, անմտություն, աննպատակություն։

Հանդուցյալ Ա. Տերտերյանի անդրին դնելու օրը՝ նրա տանը հավաքվեցինք, այնտեղ էր և Զարուհին...
60 տարի հետո նորից տեսա։

Բնությունը ամենամեծ հանճարն է։ Վարդը, եղնիկը, նժույգը, կարապը, դրախտահավը, քնարահավը... Նրա հանճարագեղ, հանճարեղ գործերն են։

Արևելցիները իմաստուն են, նրանք ճանաչում են մարդուն, արևվելցին ճանաչում է մարդուն, նա իմաստուն է։

1955

Հուլիս

Ոսկեթաս մոտ 600 բնակիչ։ Սասունցիներ։ Այս գյուղը տվել է Հայրենական պատերազմին 33 զոհ։ Գնացին՝ չեկան... Այս է ամենքի խոսքը։

Ահագյի Հայաբնակ, 830 բնակիչ տվել են 45 զոհ։

Մի ծեր սասունցի երգեց Սասունի կորուստը, ավերումը ողբ։ Ողբի մեջ ասվում էր՝ «Ծվրոպան մեզ խաբեց»։

«Սասունցի Դավիթ» էպոսը սասունցիների հոգու էությունն է, կամ հայ ժողովրդի։

Մարդը իր ինտելեկտով հիբերֆիզիկ է, նյութականից բարձր, վեր։ Նա կենդանական (անասնական), բնական աշխարհի վրա իր աշխարհն է բարձրացրել՝ կուլտուրան, հոգեկանը։ Եվ նա դրա շնորհիվ գոյության կռիվը տանում է ոչ թե մարդու դեմ, մարդը մարդու դեմ, ո՛չ՝ մարդը բնության դեմ։ Մարդը նվաճում է բնության ուժերը, վերջիններին տիրում է և ծառայեցնում իր շահերի համար. և նա կռվում է իր վրա բնազդների դեմ ինքնիշխանության և ինքնատիրապետության համար։

Հուլիսի 10

Սևանը իջել է 10 մետր։
70 000 հեկտար էռոզիայի ենթարկվեցին արտի լանջերը հերկելու հետևանքով։

1956

Դեկտեմբերի 27

Մոռանալ և խաբվել։ Ուզում եմ մոռանալ անցյալս, բոլոր վատ, տխուր դեպքերը, ազնտները։ Չհիշեմ, այնպես լինի, որ զգամ՝ որ բնավ չի եղել։ Խաբվել... Խաբեցե՛ք ինձ, բժիշկնե՛ր, խաբեցեք, գեղագործներ, խաբեցեք՝ մինչև վերջին բոպեն, մինչև վերջին շունչս խաբեցեք ինձ.— չիմանամ, որ հիվանդ եմ, որ ծանր հիվանդ եմ, որ չունիմ մոայլ հեռանկար, այլ պայծառ, ուրախ, արևոտ...

ԻՄ ՀՈՒՇԵՐԻՑ

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Ապրիլ ամսի սկզբներին, 1901 թվին, Վիեննայից մեկնում եմ Վենետիկ, թե՛ Մխիթարյանների վանքի՝ հայագիտությամբ հարուստ գրադարանից օգտվելու, և թե՛ Իտալիան հնար եղածի չափ տեսնելու։

Ուշ երեկոյան հասնում եմ Վենետիկ։ Առավոտ վաղ ոտքի վրա եմ. ուզում եմ ժամ առաջ տեսնել Սուրբ Ղազար կղզին՝ Մխիթարյանների վանքը։ Հետաքրքրությանս առաջին գծի վրա սա է կանգնած. պատանի հասակիցս երազել եմ տեսնել Վենետիկը, բայց մանավանդ Ս. Ղազարը։

Նստում եմ ինձ առաջին պատահած գոնդոլի վրա։ Մի արևավառ օր է. սև գոնդոլը սև կարապի պես նեղպաշնակ սահում է Մեծ կանալի կանաչ ջրերի վրայով։ Սա կախարդական քաղաքի ամենամեծ, լայն և երկայն ջրային պողոտան է, որ էլիսում է Վենետիկը երկու մասի։ Նրա աջ ու ձախ կողմերում շարքով կանգնած են հրաշագեղ պալատներն ու ապարանքները՝ երփներանգ մարմարիոնով, կառուցված վենետիկյան չքնաղ ոճով։ Կարծես հեքիաթների միջով եմ գնում, այնքա՜ն անիրական, այնքա՜ն երևակայական են թվում այս բոլորը. սակայն ես հայացքս հառել եմ լագունային հեռուները, որոնում եմ Ս. Ղազարի կղզին։ Գոնդոլավարը, ճանապարհի ընթացքին հանդիպող կղզիների անունները տալով, առաջանում է և, ահա, ցույց է տալիս ոչ շատ հեռվում՝ Ս. Ղազարը...

Դանդաղ է սահում գոնդոլը։ Ես անհամբեր եմ, շտապեցնում եմ գոնդոլավարին։ Մոտենում ենք կղզուն. անհագուրդ նայում եմ կանաչ նոճիների միջից երևացող կարմիր շենքերին.— «Սուրբ Ղազարն է սա»,— ասում եմ ինձ և կրկնում։

Ի՜նչ պատկառելի անուններ հնչում են ականջիս՝ Մխիթար Սեբաստացի, Ագոնց, Զամչյան, Ինճիճյան, Բագրատունի... և Ալիշան, որին բախտ կունենամ այսօր իսկ տեսնելու։

Ինչքա՜ն մեծ երախտիք ունի Սուրբ Ղազարի միաբանությունը հայ գրականության, հայագիտության հանդեպ։ Ի՜նչ հոյակապ գործեր՝ առաջին աշխարհաբար հայ գրականություն, Հայկազյան բառարան, Հայոց պատմություն, Հայաստանի աշխարհագրություն՝ ստվար հատորներով, հին ձեռագիր մատյանների (մատենագրությունների) հրատարակություններ, կլասիկների թարգմանություններ։

Գոնդոլը կանգ է առնում։ Սրտատրոփ ոտք եմ դնում այս պատմական, թանկարժեք հողի վրա։

Ինձ դիմավորում է մի առողջ, համակրելի երիտասարդ վարդապետ։ Եսայի Տայեցի՝ «Անվավեր ավետարանների» հրատարակիչը։

Միաբաններից մեկը, ամեն օր, հերթով, ընդունում է այցելողներին և ցույց տալիս Ս. Ղազարի տեսարժան տեղերը՝ տաճար, մատենադարան, թանգարան, տպարան, պարտեզ և այլն։ Վանքը լավ համբավ ունի Եվրոպայում, և Վենետիկի այցելուները չեն թերանում Ս. Ղազարն էլ այցելելու։

Վանքը շրջելուց հետո Եսայի Տայեցին առաջնորդեց ինձ հյուրասենյակը, ուր ծանոթացա մի քանի երիտասարդ վարդապետների հետ, արդեն անուն ունեցողներ՝ Վարդան Հացունի, Էփրիկյան, Սիմեոն Երեմյան։ Հյուրասիրեցին սուրճով և անուշեղեններով։ Նրանք շատ հետաքրքրվում էին Կովկասի հայերի կացությամբ, հարցնում էին դպրոցների մասին, գրականության և էջմիածնի մատենադարանի մասին, Անիի և այլ հնությունների պեղումների մասին։

Այս զրույցից հետո փափագ եմ հայտնում տեսնել հայր Ղևոնդ Ալիշանին։ Այս անգամ Սիմեոն Երեմյանն առաջնորդում է ինձ մեծանուն բանաստեղծի և գիտնականի մոտ։

Ինչքա՜ն, ինչքա՜ն ուրախ եմ, որ պիտի տեսնեմ ամբողջ հայության սիրելի Ալիշանին։ 90-ական թվականների մեր սերունդի համար նա ամենահմայիչ անունն էր. նրա՝ Նահապետի սքանչելի բանաստեղծությունները՝ «Հրազդան», «Պլպուլն Ավարայրի», «Հայոց աշխարհի՛կ, գարունդ է եկել...», մենք անգիր գիտեինք, մեր դասագրքերի զարդն էին նրանք, ոգևորված արտասանում էինք հանդեսներում։

Նրա գրքերին պատկառանքով էինք մոտենում, որոնք մեզ համար բացարձակ հեղինակություններ էին։ Նրա աշխարհագրական երկերի վրա («Այրարատ», «Շիրակ», «Սիսական») սովորում էինք Հայաստանը, և նրա պես, չտեսած հայրենիքի նվիրական վայրերը, սիրում էինք մի անբացատրելի սիրով։

Մտնում ենք հայր Ալիշանի խուցը, մի ոչ մեծ սենյակ ծովահայաց

լուսամուտով։ Գրասեղանին հակած է մի ալեոր՝ փոքրամարմին, անարյուն, դալուկ մի սուրբ... և գրում է։

Մի վայրկյան դիտում եմ անշուք խուցը... Ամեն կողմ գիրք՝ աթոռների վրա, սեղանի վրա. մի պարզ անկողին՝ սնարին Աստվածամոր պատկերը. մի փոքր սեղանի վրա մի գրաֆինկա՝ ջրով լի, կողքին մի բաժակ։ Եվ ուրիշ ոչինչ։

Ալիշանը բարձրացնում է գլուխը, խոշորացույց ակնոցների միջով նայում են ինձ երկու փայլուն, մեծ աչքեր։

Հուզմունքով համբուրում եմ ջլուտ ձեռքը, որ կերտել է այն պատկառելի հատորները։

— Ապրիք, զորանաք, ուրկե՞ կուգաք,— հարցնում է Ալիշանը տակավին առույգ ձայնով։

Հայր Սիմեոնը պատասխանում է իմ փոխարեն.

— Ուսանող է Վիեննայի, կովկասահայ է։

Ես հայտնում եմ իմ մեծ ուրախությունը, որ բախտ ունեցա տեսնելու մեր բոլորիս պաշտելի Նահապետին և այսպես առույգ, առողջ... Ալիշանը ժպտում է մեղմակի, ապա հարցնում է՝ ի՞նչ եմ ուսանում, ինչքա՞ն պիտի մնամ Վենետիկ։

— Ես կրնամ ձեզի սուրճ հրամցնել. վարդապետ, գնա՛ մեզի համար սուրճ ապսպրե։

Ես շնորհակալ լինելով, հրաժարվում եմ սուրճից։

— Սակայն դուն գնա՛,— ասում է Ալիշանը։

— Կովկասի հայերը սուրճ չեն սիրեր. դուք թեյ կսիրեք։ Ասկե շատ տարիներ առաջ պարոն Մինասարովը, հայտնի ազգային մը, գիտե՞ք զինքը։

— «Քնար Հայկական»-ի խմբագիրը, թերևս։

— Ապրես, գիտուն մանչ ես. այո՛, ան Պետերբուրգին այցի էր եկած վանքը ու ինձի սամովար մը նվեր բերած էր. ըսավ ինձի — վարդապետ, թեյ խմել սովորե, աշխատանքի ժամանակ աղեկ է։ Չգործածեցի, հոն կմնա վանքի մեկ անկյունին մեջ։

Տպարանում գնել էի Ալիշանի մեծ լուսանկարը, հիմա խնդրում եմ, որ բարեհաճի իր անունը գրել նկարի ներքո, որ շատ թանկագին հիշատակ կլինի ինձ համար։

Ալիշանը ամուր ձեռքով, դանդաղ ստորագրում է իր ներշնչող անունը։

Ավելի քան կես դար այս խուցում կամ նման խուցում, իր ողջ երիտասարդությունը, կքել է նա սեղանին, որի վրայով անցել են անթիվ գրքեր հին ու նոր լեզուներով, հայացքը Աղրիականի ոսկի ալիքներին և

ականջը մշտամրմունջ ջրերին, և ժողովրդից հեռու, հայրենիքից հեռու, բայց հոգով մոտ, սրտով մոտ, երգել է իր «Նվագ»-ները (հինգ հատոր՝ I հ. «Մանկունի», II հ. «Մաղթունի» և «Ինունի», III հ. «Հայրունի», IV հ. «Տիրունի» և V հ. «Տխրունի»), երազելով հայրենիք, սիրելիք, անհունություն, հավերժություն...

Այս խուցում ներշնչված Մովսես Խորենացու և Անանիա Շիրակացու ներկայությամբ, անխոնջ համբերանքով և սիրունով պրպտել է ողջ մատենագրությունը՝ պատմական և աշխարհագրական, արդի հայ գրականությունն ու մամուլը, հավաքել է անթիվ տեղեկություններ Հայաստանի ամեն մի վայրի մասին՝ հին և նոր։

Ալիշանը գիտնական աշխարհագետ էր, անդամ եվրոպական աշխարհագրական ընկերությունների. հմուտ ու շատ կարդացած էր. խորապես ծանոթ եվրոպական գիտնականների գործերին՝ Ա. Հումբոլդի, Կ. Ռիտերի, Էլ. Ռեկլյուի, այլև հին ու նոր ուղեգրությունների, սակայն, նա գրքերից կոմպիլյացիա կազմող չէր՝ չոր ու ցամաք, այլ, առանց նյութական աչքերով տեսնելու Հայաստանը, հոգով տեսավ նա գարերի մշուշների մեջ թաղված Հայաստանը, տեսավ տարածություններով հեռու վայրեր, այցելեց Հայաստանի ամեն մի կետը, սիրեց, ապրեց ամեն մի հոգի կտորը, շնչավորեց ավերակները, գգվեց, հիացավ նրանցով։

Իր հատորների և մեր հոգիների մեջ վերակերտեց նա Հայաստան աշխարհը և պատեց մի վիպական, բանաստեղծական մթնոլորտով՝ գեղեցիկ, հրապուրիչ, առասպելական, բայց և իրական։

Հայաստանը ո՛չ ոք այնպես չգիտե, ինչպես նա, ո՛չ ոք այնքան չի սիրել, որքան նա, այս մեծ հայրենասերը։ Իրականությունը նրա գրչի տակ երազ է դարձել և երազը՝ իրականություն։

Լուսանկարը վերցնում եմ խորին շնորհակալությամբ, նորից համբուրում եմ բազմաշխատ ձեռքը և խուցից դուրս գալիս։

Տակավին Վենետիկ էի, երբ Պետերբուրգի հայ ուսանողների մի խմբակից նամակ ստացա։ Գրում էին, որ ուսանողների այդ խմբակը ձեռնարկել է ժամանակակից հայ անվանի մարդկանց կենսագրությունը գրել ժողովրդական լայն խավերի համար։ Գիտում էին ինձ, որ անմիջապես Ալիշանից կենսագրական տեղեկություններ, փաստեր, դրվագներ խնդրեի, պատմեր ինձ և նույնպես միաբաններից հավաքեի նյութեր, նաև հարցնեի նրա կարծիքը Թրքահայերի հարցի մասին (Հայկական հարց)։

Այս նամակով գինված, գնացի Ալիշանի մոտ։ Ալիշանը հեգնանքով ասաց.

— Այդ ի՞նչ ծանր քար են դրած քո մեջքին։ Վախեցա՞ր. գրելիք քան մը չկա։ Ես կենսագրություն չունիմ։

Ասաց, որ իրեն 8—9 տարեկան հասակում Կ. Պոլսից բերել են Ս. Ղազար, նվիրել են վանքին։ Սկսել է աշակերտել միաբանության դպրանոցում, ավարտել է շատ մատաղ տարիքում, ուսանող է եղել և մի քանի տարի էլ Փարիզի Մուրադյան հայ վարժարանում դասատու և վարիչ է եղել— Եվ քանի մը գրքեր եմ գրած։ Ուրիշ ալ ըսելիք չունիմ։ Գրքե-գիրք՝ ատ է եղած իմ ճամփան։ Ուրիշ տեղեր չեմ գացած։

Հետո ասաց, որ աշխարհականները կենսագրական ունին, կարող են ունենալ։ Գործեր կբռնեն, կբնկնին, կելնեն։ Ճամփորդություններ կկատարեն, կկռվին, դատեր կվարեն, կամուսնանան, երեխաներ կունենան և այլն, և այլն։

Ինչ վերաբերում է Հայկական հարցին, Ալիշանն ասաց հետևյալը, որ ես շարադրում եմ արևելահայ բարբառով.

— Իմարկե, հայ ժողովուրդը լավ գիտեր, որ իր սեփական ուժերով չպիտի կարողանար թոթափել թուրքական լուծը, ինչպես առանց Եվրոպայի օգնության չպիտի կարողանային ազատվել ո՛չ Հունաստանը և ո՛չ Բուլղարիան։ Հայ ժողովուրդն էլ, նրանց հետևելով, հույսը դրել էր քրիստոնյա Եվրոպայի օգնության վրա, մեծ, քաղաքակիրթ պետությունների մարդասիրության վրա։ Այստեղից էլ հայ ժողովրդի մեծագույն և բազմաղետ սիալը։

Կոտորածների ժամանակ Թերզյան հայ կարդինալը գնում է Հռոմ, ընկնում է սրբազան պապի ոտները, աղերսում է, որ պապը դիմում անե քրիստոնյա մեծ պետություններին՝ Անգլիային, Ռուսիային, Ֆրանսիային, Գերմանիային, որ ջարդարար թուրքի ձեռքը բռնեն։ Սրբազան պապն ասում է.— «Այդ քրիստոնյա մեծ պետություններն են հայերին կոտորողները, ես որի՞ն դիմեմ»։

Եվրոպական պետությունները ո՛չ միայն չոգնեցին և չպաշտպանեցին իրենց հնազանդ հայ ժողովրդին, այլ պատեհ առիթ գտան շահագործելու հայկական արյունը։ Հայ ժողովրդին վանեցին թուրք դահիճին, փոխարեն ստացան տնտեսական-առևտրական մենաշնորհներ։ Եվրոպացու «բարոյականը ավերված է». բարոյապես սնանկացած է նա. նախնական մարդու բնական մարդասիրությունն էլ չունի անգամ։ Նա ստախոս է, շահամոլ է և եսական։

Պետք է վերջ տալ հայերի մեջ եղած հեղափոխական ընկերությունների գործունեությանը. պետք չէ գրգռել թուրքերի մոնոզոլական արյունը։ Պետք է ընդմիշտ երես շրջել այդ փչացած Եվրոպայից և գարշանքով երես շրջել։

Թրքահայերի պատրիարք Օրմանյանը քաղաքագետ մարդ է. բարեկամական հարաբերություններ է մշակում նա սուլթանի հետ։ Պետք է աջակցել նրան։ Մի բառով՝ պետք է համակերպվել. ուրիշ ելք չեմ տեսնում հայերի համար։ Հետո ավելացրեց.— Ռուսահայերի վիճակը, համեմատաբար, գեղ չէ. կոտորած, հավաքատակություն չկա, բայց այն պատճառով, որ ազգային դպրոցներ չունեք, հայկական դաստիարակություն չկա, լեզու և մշակույթ ճնշման տակ են, այս դրությունը ցանկալի արդյունք չի տալու։ Ռուս պետությունը իր բնությամբ է ասում այս։ Մի երկու տարի առաջ վանքն է այցելում ռուսական եկեղեցու սինոդի մեծը (երևի՝ Պոբեդոնոսցև, սինոդի օբեր-պրոկուրորը) իր քարտուղարի հետ։ Գրեթե բոլոր միաբանները նրա պատվի համար ոտի վրա են և քայլում են նրա հետ։ Նա տեսնում է գեղեցիկ տաճարը, ճոխ գրադարան-մատենադարանը, տպարանը, թանգարանը... Երբ նստում են հյուրասենյակում մի բաժակ սուրճ խմելու, այդ ռուս մեծ պաշտոնյան, շնորհակալություններ հայտնելով միաբաններին, ասում է.— Ես հիացած եմ ձեր աշխատանքի, համբերության և սիրո նկատմամբ՝ հանդեպ ձեր ազգի, բայց ցավում եմ, որ դրանք իզուր ջանքեր են, անօգուտ, աննպատակ։ Որի՞ համար են այդ անձնազոհությունները. մի փոքր ժողովրդի համար՝ ցրված երկրի երեսին և մատնված կորուստի։ Թուրքիայում կոտորում են հայերին շարունակ, Ռուսիայում էլ հայերը ոչ ռուս ժողովուրդների հետ դատապարտված են շուտ կամ ուշ ձուլվելու։

Բոլոր միաբանները սոսկացին, սակայն, արքահայրը (Իգնատիոս եպիսկոպոս Կյուրեղյան) հանդարտությամբ պատասխանում է.— Հայ ժողովուրդը շա՞տ ավելի ահեղ ժամանակներ ու բռնություններ է տեսել, նվազել է թվով, բայց մնացել է ոգով կայուն և անվթար։ Մեր հույսը ատծու վրա է, մեր ժողովրդի տոկունության և պատմության անիմանալի ընթացքի վրա։

Բոլոր միաբանները անխոս հեռանում են դահլիճից, իսկ մեծանուն պաշտոնյան, քարտուղարի հետ միայնակ, գնում է նավամատույց։

Ալիշանն ավարտեց խոսքը, ծանր շնչեց. լռեց մի պահ, ապա ձեռքը մեկնելով ինձ, ասաց.— Բարևներ խոսեցեք Պետերբուրգի ձեր ազնիվ ընկերներին, նաև իմ շնորհակալությունը՝ իմ հանդեպ ունեցած նրանց հարգանքի համար։ Շրջահայա՛ց եղեք, սիրեցե՛ք հայոց լեզուն, Հայաստան աշխարհը և սիրեցե՛ք միմյանց։

Ես խոնարհեցի գլուխս և դուրս եկա նվիրական խուցից։

———

Երբ մեկնում էի Վենետիկից, գնացի Ալիշանի մոտ՝ վերջին անգամ տեսնելու և հրաժեշտ առնելու։

Օրհնեց ինձ, բարիքներ մաղթեց և ողջույն ուղարկեց Խրիմյան Հայրիկին։

— Ինձմեն հարյուր օրով մեծ է ան,— ասաց Ալիշանը,— բայց կքսեն, որ շատ առույգ է, ձի կնստի. հարկավ այդպես է. ան Մասիսի հովին տակ կքնանա, Արաքսի ջուրը կխմի, Հայաստանի հացը կուտե, անոր հողի ուժը կառնե...

1948 դեկտեմբերի 30,
Երևան

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ

Սեպտեմբերի մեջ, 1901 թվին, այցելեցի Սուրբ Էջմիածին։ Նույն թվի մայիսին, երբ Վենետիկ էի, մեզ ամենից սիրելի հայր Ղևոնդ Ալիշանը իմ վրա քաղցը պարտ դրեց «Հայոց Հայրիկին կարոտագինս ողջունելու իմ կողմանեն»։

Մի երեկո անմոռանալի բախտ ունեցա Հայրիկի մոտ լինելու և համբուրելու նրա աչը։

Սիրտս ուժգին խփում էր հուզմունքից և ուրախությունից։

Առաջարկեց նստել։

— Վեհափառ Հայրիկ,— ասացի ես,— մեծ բախտավորություն եմ զգում, որ ինձ վիճակվել է բերել Նահապետ Ալիշանի կարոտագին ողջույնները Հայոց Հայրիկին։

— Ա՜հ, շատ շնորհակալ եմ։ Դուն Վենետի՞կ էիր, ե՞րբ էիր հոն, ինչպե՞ս է հայր Ղևոնդը, աղե՞կ է։

— Այո, վեհափառ Հայրիկ, այս դարնանը Վենետիկ էի և պատիվ ունեցա մի քանի անգամ լինելու ալեզարդ Նահապետի մոտ։ Նա հիվանդոտ է և թույլ...

— Ափսո՜ս, ափսո՜ս,— խոսքս ընդհատեց Հայրիկը,— մենք հասակակիցներ ենք. ես շատ կսիրեմ անոր. անուշ գրիչ ունի։ Նա շատ է ազդեր իմ գրչի վրա, նա իմ շատ բան է ներշնչեր։ Ասա, ուրիշ ի՞նչ կքներ։

— Նա ինքն էլ էր ասում, որ Հայրիկը իրենից հարյուր օր, միայն հարյուր օր մեծ է, և ասում էր, թե բերկրանքով եմ լսում, որ Հայրիկը ձի է նստում և ժողովրդին այցի է գնում...

Միշտ նախանձում էր Ձեզ, վեհափառ Հայրիկ, և ասում էր, թե Հայրիկի բանն ուրիշ է. նա առույգ է մնացել, որովհետև Մասիսի շուքին ներ-

քո է քնում, Հայոց դաշտերի ծաղկանուշ հովն է ծծում, Արաքսի ջուրը խմում։

Այստեղ Հայրիկը ուրախ և սրտանց ծիծաղեց։

— Ան կնոխանձն ինձ, ես վաղը կկարգադրեմ, որ անոր Մասիսի հողեն, Երասխի ջրեն ու Հայաստանի ծաղիկներեն քիչ մը վերցնեն և փոքրիկ արկղով մը ղրկեն Վենետիկ։

Ինչպես հետո իմացա, Հայրիկի կողմից ուղարկվել էր մի փոքր արկղ այդ արմաղանները, բայց մինչ հասնելը, դժբախտաբար, սիրելի Նահապետը արդեն վախճանված էր եղել (1901 թ. նոյեմբերի մեջ)։

— Էհ, դուն ալ բարով ես եկեր։ Ես Կռվկասի մեջ երկու բանաստեղծ կճանաչեմ անձամբ ու շատ կսիրեմ անոնց, մեկը մեր ուսուցիչ Հովհաննես Հովհաննիսյանն է, մեկն ալ Թիֆլիս Հովհաննես Թումանյանն է, շատ, մեկն ալ դուն ես, քեզ ալ հիմա տեսա։ Դուն անոնցմեն երիտասարդ ես, այդ է պատճառը, որ միշտ ամպ ու աղբյուր, վարդ ու աղջիկ կերգես...

Այստեղ Հայրիկը նորից շատ զվարթ ու բարձր ծիծաղեց։

— Շա՞տ պիտի մնաս հոս,— հարցրեց նա։

— Մի քանի օր ուզում եմ մնալ, վեհափառ Հայրիկ։

— Էհ, լավ է. ամեն երեկո եկ, կխոսենք։

Գլուխ խոնարհեցի ու դուրս եկա։

Ամբողջ դիշեր ես նրա թովիչ ձայնի, նրա արծվենի հայացքի ազդեցության տակ էի։ Եվ ինձ թվում էր, որ ասվում եմ նահապետական օրերում և երջանկություն եմ ունեցել խոսելու հին նահապետներից մեկի հետ։ Հայրիկն իմ երևակայության մեջ միշտ պատմական կամ, ավելի ճիշտ ասած, առասպելական լուսապսակով էր զարդարված։ Մանուկ օրերից երազել էի տեսնել Վասպուրականի արծվին, հայ ժողովրդի հույսերի և տենչերի կրող Հայոց Հայրիկին։

Մյուս երեկո Հայրիկը իր քարտուղար-վարդապետի միջոցով ինձ կանչեց Վեհարան։

— Էհ, նստե, տեսնենք, դուն գիտես, որ ես ալ բանաստեղծ եմ ու շատ կսիրեմ բանաստեղծություններ կարդալ։ Հոմերոս ու Վիրգիլիոս ամենեն շատ կսիրեմ։

Ու սկսեց առույգ շեշտով անգիր արտասանել Իլիականից և Էնեականից գրաբար հատվածներ։ Այդ պահին նրա գեղեցիկ աչքերը փայլում էին երիտասարդական ոգևորությամբ։

Երազի մեջ էի զգում ինձ, այնպես իրականություն ինձ անիրական էր թվում։

— Քեզի իմ գրքերեն ալ, հարկավ կարդացած կըլլաս, սակայն բանաստեղծները իրար կնվիրեն իրենց հեղինակություններեն, դուն ալ քուկիններդ ինձի կուտաս։

Եվ Հայրիկը կանգնեց իր սպարթեական հասակով, գնաց մյուս սենյակը և բերեց օժանդակ և խորհուրդ յուր և «Պապիկն ու թոռնիկ» գրքերը։

— Ասանք քեզի Հայրիկեն հիշատակ։

Անհուն շնորհակալությամբ առա թանկագին նվիրները՝ մարմարյա աջը համբուրելով։

Այնուհետև նա թիկն տվեց բարձերին՝ ծալապատիկ նստելով։ Փաթաթում էր հատ-հատ պապիրոսներ և իրար հետեից ծխում։ Ծխելով խոսում էր անվերջ, պատմելով Վանի կյանքից, իր մանկությունից, շաբաթվությունները։ Պատմում էր զանազան դեպքեր մեր մոտիկ անցյալից, նկարագրում էր իր ուղևորությունները։ Ես հիացած ականջ էի դնում նրան, այնքան գրավիչ էր և յուրահատուկ պատմող։ Նրա խոսքը համեմված էր ժողովրդական դարձվածքներով ու առածներով։

Հիշելով զվարթ դեպքերը իր կյանքից, ուրախ ծիծաղում էր. այնպես հուժկու թափով էր ծիծաղում, որ բարձրը տակին խաղում էր։

Առհասարակ Հայրիկը շատ էր սիրում խառնվել։ Հայց էր տալիս և պատասխանի չսպասած՝ ինքը շարունակում էր խոսել, պատմել և ծիծաղել։

Վանքում մնացի մի քանի օր ևս, ու գրեթե ամեն երեկո Հայրիկն արժանացնում էր ինձ իր տեսակցությանը։ Եվ երբ մի երեկո մնաք բարեի գնացի և հայտնեցի, որ առավոտյան մեկնում եմ Էջմիածնից, նա ասաց.

— Տղաս, ամեն անդամ, երբ գաս հոս, Հայրիկին չմոռանաս տեսնել։

1902 թ. հունվարին ես նորից ս. Էջմիածնի վանքումն էի, և ինձ համար կրկնվում էին նորից գեղեցիկ երեկոները։

Գնացի տեսնելու Հայրիկին։

— Էհ, բարով եկար, կերևի Հայրիկին կարոտեր ես, վանքի հացն ալ անուշ է։ Պատմե նայեմ, ի՞նչ կա, ո՞ւր էիր։

Ես պատմեցի ճանապարհորդություններիս մասին։

— Ապրիս, ապրիս, համ կճամփորդես, համ կգրես։ Ես ալ այդպես եմ ըրեր։ Հա, լավ միտս ընկավ, ես վերջին առաններս շատ բաներ եմ գրած։ Կարդամ լսե, բայց ուղիղ և ճշմարիտ խոսե. քու անկեղծ կարծիքն ըսե, մի վախենար։ Հիմա դուն պիտի մտածես, որ Հայոց կաթողիկոսի գրածները չի կարելի քննադատել, կամ անոր շիտակ բան մը ըսել, ինչպես մեր վարդապետները կընեն. երեսիս մի բան կըսեն, դուրսը ուրիշ։

Ու գիտցիր, որ բանաստեղծները միշտ ճշմարիտ պիտի խոսին աշխարհիս տերերի առաջ։ Մեզ ալ աշխարհը տեր չինեց. Քրիստոսը տեղ չուներ գլուխը դնելու, առաքյալները անտուն ու բորիկ մահ կուգային, բայց հիմա մենք՝ անոնց ժառանգները վեհարաններու մեջ կապրինք։ Ասոր վրա բան մը գրել եմ։

Եվ նորից կանգնեց իր պարթևական հասակով, դնաց մյուս սենյակը և բերեց մի տետր, նստեց բազմոցին, ակնոցները դրեց աչքերին և ուժեղ ձայնով սկսեց կարդալ։ Բովանդակությունը հետևյալն էր. ինքը գնում է Թադեոս առաքյալի վանքը ուխտի, թակում է վանքի դարպասը և ասում. «Բաց, Թադեոս առաքյալ, ես եմ, քո հաջորդը, գահիդ ներկա տերը»։ Առաքյալը ներսից պատասխանում է, որ ինքը գահ չունի, այդ ի՞նչ գահի մասին է խոսքը, և որ ինքը բռնակալ, իշխան չէ, որ գահ ունենա։

Հայրիկը պատասխանում է. «Մի՞թե չգիտես, որ գահդ ս. Էջմիածնում է, շքեղ Վեհարանի մեջ. շքեղ գահ, ծառաներ, հարստություն»։

«Մեր տեր Հիսուս Քրիստոսը,— ասում է առաքյալը,— անտուն էր ու ինքը ծառա։ Դուք նրա աշակերտները չեք. գնա, չեմ ընդունիլ...»։

Եվ Հայրիկին չի ընդունում առաքյալը։ Հայրիկը վերջացրեց ու սրբատանց ծիծաղեց։ Այդ գրվածքի մեջ երևում էր Հայրիկն իր բովանդակ դեմոկրատիկ էությամբ։

Ապա նա տվեց ինձ գրվածքների տետրը, որ առանձին կարդամ և հաջորդ երեկո նկատողություններս հայտնեմ իրեն։

Դրանք ազատ-անհանգ այն ոտանավորներն էին, որ հետագայում տպվեցին Եգիպտոսում «Վերջալույսի երգեր» վերնագրով, բիսած 82-ամյա պատկառելի գրչից։

Մյուս երեկո, խրախուսված Հայրիկի սիրալիր վարմունքից, մի քանի նկատողություններ արեցի, որ ոտանավորները երկար են, և լեզուն խառն է, արևելահայ և արևմտահայ բարբառների խառնուրդ։

— Այո, այո, ես ալ նկատեր եմ, որ իմ լեզուն խառնվեր է։ Կովկաս եմ ապրում, ազդվեր եմ, միշտ ալ խառն բարբառով կխոսիմ։ Իսկ որ կըսես երկար է՝ պատճառը երկար գիշերներն են,— պատասխանեց նա,— չեմ քնանար, ձանձրույթիս մահ կուգամ դահլիճին մեջ, կծխեմ ու կերգեմ, այդ միջոցին ալ կգրեմ, մինչև որ քունս գա, այդ պատճառով երկար կըլլա։

— Թույլ տվեք, վեհափառ Հայրիկ, հարցնել, ի՞նչ երգեր կերգեք։

— Շարականներ կերգեմ, ներբողներ, սուրբ հարց երգերեն՝ Շնորհալու, Կեչառեցու, Պետրոս Ղափանցու, Գրիգորիս Աղթամարցու և Բաղդասար դպիրի սիրո տաղերն ալ կերգեմ։ Ղափանցին լավ տաղասաց է, Քուչակ Նահապետ անորից վեր է. բայց ժողովրդի երգեր ամենից վեր են. ես շատ կերգեմ մեր Վանա և Մուշի գեղջկական երգեր, որ սովորել եմ վաղուց Վարագա և Ս. Կարապետի ուխտավորներից։ Բայց ամենից շատ կսիրեմ Խորենացու ողբը, անոր համար ես մի եղանակ եմ շինել ու կերգեմ։ Ինձի կթվա, թե այդ ողբը հայ ազգի ճակատագիրն է ու ամեն դարու ողբը, ինձի այնպես կերևա, թե քերթողահայրն Մովսես այս օրերին համար է գրել...

Հանկարծ հիշեց Նարեկացուն և ոգևորված խոսեց Նարեկի վանքի, Վանա ծովի գեղեցկության մասին, անգիր ասաց Նարեկացու աղոթքներից, պատմեց նրա տեսիլը, նրա մասին եղած ժողովրդական ավանդությունները։

— Նարեկացու կույս հոգին միայն կրցավ հասկանալ Քրիստոսին և տվեց քրիստոնեության բանաստեղծությունը։ Այսպես ամփոփեց Հայրիկն իր խոսքը։

Հաջորդ երեկո Հայրիկը շատ ուրախ տրամադրության մեջ էր, պայծառ դեմքով, ծալապատիկ նստած բազմոցի վրա գիրք էր կարդում և իր սիրելի մեծ «Վանիկ» կատուն նրա կողքին անուշ մռմռում էր։

— Նստիր, տղաս, խոսինք, գիշերն երկայն է։— Մի փոքրիկ դավաթով սուրճ խմելուց հետո ոլորեց իր հաստ պապիրոսը և սկսեց ծխել ու զվարթաբանեց խոսել։

— Դուն ալ կծխես, տեսել եմ, սուրճին հետ շատ համեղ կըլլա ծխելը։ բայց գիտցիր, Հայրիկին մոտ չըլլար ծխել, միաբան մը կնկատե ու աշխարհով մեկ չավ կընե, թե Հայրիկ կաթողիկոսը թույլ կուտա տղաներուն իր մոտ ծխել— այստեղ Հայրիկը երկար և բարի ծիծաղեց— ատոր համար քեզ մուշտուկ մը կնվիրեմ իմին մուշտուկներից, գուրսը ծխիր։

Ապա վերցրեց Երուսաղեմից ուղարկված ձիթենու ճյուղից շինված մի մուշտուկ և նվիրեց ինձ։

Դրանից հետո Հայրիկն սկսեց պատմություններ անել, փոքր ծիծաղելի դեպքեր, անցյալի վերհիշումներ։

Որքան նրա հիշողությունը թարմ էր, նույնքան էլ նա թռիչքներով էր խոսում. մեկ պատմում էր Սուլթան Համիդի մասին, մեկ Մուշի մի գյուղի մասին, մեկ նկարագրում էր բանաստեղծական գույներով մի լեռ Վասպուրականում, մեկ խոսում էր Լոնդոնի մուղեյների կամ Փարիզի մասին։ Եվ ինչ որ պատմում էր, բոլորն էլ հետաքրքրական և գեղեցիկ, թե՛ ձևի տեսակետից, թե՛ նյութի։ Իր բազմաբովանդակ և նշանակալից

անցյալից, ինչպես մի առասպելական հարուստ գանձարանից, հանում էր թանկագին գոհարներ — հուշեր և այդ հուշերով ոգևորվում էր, թարմանում և առույգանում։ Նա ապրում էր իր անցյալով։ Այդ հուշերը մեր ժողովրդի 19-րդ դարի ամբողջ պատմությունն էին, մի շքեղ Ոդիսական, որի ստեղծողն ու շատ անցքերի ականատեսը բռնած քեղ հայրական ձեռքով տանում է Հայաստանի խորշերը, վանքերն ու ավերակները և եվրոպական պալատներն ու վեհաժողովները։ Հսկայական կալիյդոսկոպի մեջ դու տեսնում ես Մասիս ու Մոն-բլան, Բզնունյաց ծով և Բոսֆոր, հայ աշխատավոր գեղջուկին և ավազակ քուրդ բեկին, հայ գործիչներին՝ Գրիգոր Օտյանին ու Բաֆֆիին և վայրագ փաշաներին, Սուլթանին ու Բիսմարկին և այլն, և այլն։

Զարմանում էի նրա հրաշալի հիշողության վրա, մանրամասն և գեղարվեստորեն նկարագրում էր բնության զանազան տեսարանները և այցելած քաղաքներն ու շքեղ շենքերը։ Հիշում էր, օրինակի համար, 40-ական թվականների մարդկանց խոսքերը և անցքերի օրերը նույնիսկ, կարծես, ոչինչ չէր մոռացել։

Երբ դուրս եկա վեհարանից, մտածում էի ինքս իմ մեջ — մեծ մարդիկ չեն ծերանում։

Հայրիկը նույնպես շատ հարցասեր էր, միշտ հետաքրքրվում էր գիտական, գրական, քաղաքական նորություններով։

Մի երեկո ասաց ինձ.

— Դուն լսած կա՞ս ան գերման գիտունի մասին, Հեկկել կրսեն։

— Այո, վեհափառ Հայրիկ, նա Դարվինի մեծ աշակերտ է ներկայումս։

— Անցած օրը ճեմարանի ուսուցիչներեն մեկը պատմեց ինձ անոր մասին, ան դարվինականությունը նոր և զորավոր փաստերով կհաստատե, որ Աստվածաշունչի պատմածը մարդու մասին — առասպել է սոսկ, այլ ճշմարիտն այն է, որ մարդն անասնական ծագում ունի։ Ես ալ կկարծեմ, որ այդպես է. քանզի մարդու մեջ շատ անասնական բան կա։ Քրիստոս ատոր հետ կռվելու էր եկել. ան կուզեր մարդուն, որ անասունի որդի է, աստծու որդի դարձնել։ Ճիշտ է Հիսուս, ատոր պիտի ձգտենք մենք՝ աստծուն որդեգրվել։

Մեկ-մեկ պատմել Հայրիկի իմաստուն զրույցները, սրամիտ խոսքերն ու կատակները և հուշերը՝ մեծ գրության նյութ է։ Ես բախտ ունեցա

շատ անգամ լինելու այս հոյակապ մարդու մոտ և շատ բան լսեցի, որոնցից մի փոքր մասն եմ պատմում այստեղ։

Ամեն անգամ նա սիրով ընդունում էր ինձ. միայն մի անգամ բարկացավ վրաս և դուրս արավ մոտից։ Դեպքը սա է։

1904 թվի մի ամսվա ընթացքում ես Հայրիկին պատահեցի մի քանի տեղում՝ Թիֆլիս, Ալեքսանդրապոլ, Էջմիածին և վերջապես Խոր-Վիրապի վանքում։ Վերջին անգամ ներկայացա նրան, ինձ տեսավ թե չէ, ասավ զայրացած — «Ա՛ռ, դուն կհետևես ինձ ամեն տեղ, սատանա, հայդե, կորի, գնա մոտս...»։

Ես խսկույն փախա, բայց երեկոյան կանչեց ինձ մոտը և սիրտս առավ։

— Տղաս, այսօր սիրտս եկած էր ուրիշ բանի մը առթիվ, բարկությունս քու վրադ թափեցի, քանզի գիտեմ, որ դուն Հայրիկին կսիրես ու անորեն չես նեղանար. ուրիշներու վրա չեմ կրնա բարկանալ. քեզ կսիրեմ, ատոր համար վատահ կբարկանամ վրադ։ Հետո ծիծաղելով վրա բերեց. — «Ի՞նչ շատ մահ կուգաս Վանա ջրատորտող թռչունների պես։ Երանի քեզ, երիտասարդ ես, չես հոգնի, լավ կանես, շրջիր, դնա, մահ եկ ժողովրդի մեջ, ինչ կա, չկա ան է, ան տեղ է, հոգին հետ. մեծ է ժողովուրդ աստծդ, մեծ սիրտ ունի, անոր հետ եղիր միշտ և քու սիրտն ալ կմեծանա»։

Վերջին անգամ Հայրիկին տեսա 1906 թվի աշնանը, ցավալիորեն թույլ էր և դունատ։

— Հիվանդ է Հայրիկը,— ասաց,— շատ չի ապրի Հայրիկը... էհ, շատ մարդ կա պատկած հոգին տակ՝ փարավոններ, արքաներ, հերոսներ, Խորենացի, Նարեկացի, Վիկտոր Հյուգո... վաղն ալ ես կպառկեմ հոգին քնով։ Դուն կուգաս վանքը ու Հայրիկին շիրիմը կտեսնես, կուլաս, չես լա — այդ չեմ կրնար ըսել, բայց այն ժամանակ կգգաս Հայրիկին կարոտը, հոս տեղ ուրիշը նստած կըլլա ու չես կրնար Հայրիկին հետ խոսել ու ծիծաղել...

Տխուր նախազգացումով պաշարված, ուշի-ուշով դիտում էի նրա արծվենի հայացքը, ուր դեռ արև կար, հոգեթով ձայնը և հնագարյան մագաղաթի նման դեղին աչը։

Զղում էի, որ վերջին անգամ եմ տեսնում նրան՝ հայ ժողովրդյան այդ մեծ զավակին։ Մի երկար ու խորին համբույրով նրա աչն առա և հեռացա մռայլ ու տխուր։

Ես հավատացած եմ, որ մինչև մահս իմ հոգում անջինջ և անաղարտ կմնա նա՝ այդ մեծ հայրենասերը։

Երբեք չեմ կարող մոռանալ նրա հայացքը, նրա նվիրական ձայնը։ Այնպես խորն է ազդել իմ հոգու վրա։

Եվ հայ ժողովուրդն էլ չի մոռանա նրան։ Քանի հնանա, այնքան ավելի պիտի պայծառանա նրա հիշատակը։ Նա դարերի միջից պիտի նայե հայ ժողովրդին և պիտի խոսի նրա հետ հարազատ լեզվով նրա նվիրական իշխանից և անմահ նպատակներից։

Ժողովուրդը նրան չի մոռանա երբեք, որովհետև նրա սրտից էր եկել և դեպի նրա սիրտն էր գնում։

ՊԵՐՃ ՊՈՈՉՅԱՆ

Առաջին անգամ նրա անունը լսեցի «Սոս և Վարդիթեր» անվան հետ միասին։ 12—13 տարեկան էի, երբ ձեռս անցավ «Սոս և Վարդիթեր» վեպը։ Այս տողերը գրելիս վերապրում եմ այն չքնաղ, հափշտակված հոգեվիճակը, որ կրում էի վեպի ընթերցման պահին։

Թառել էի Արփաչայի ափին ջրերի վրա օրորվող ուռենու հաստ ճյուղին և կլանում էի վեպի էջերը։ Շրջապատիս իրական աշխարհն այլափոխվել էր, մի ուրիշ երկնքի արև էր շողում գլխիս վերև, Քասախն էր հոսում ոտներիս տակ, և Սոսի ու Վարդիթերի հետ բռնկված՝ թափառում էի Աշտարակի կախարդական այգիներում։ Սիրտս թրթռում էր նրանց զգացումների հետ. արցունքներս թրջում էին սքանչելի վեպի էջերը՝ գծբախտ սիրահարների վշտով համակված։

Դրանից հետո կարդացի «Կռվածաղիկ» վեպը նույն հափշտակությամբ։ Ի՞նչ խորհրդավոր, դյութական աշխարհ էր պարզում նա իմ մանուկ մտքի առջև։

Այդ երկու վեպերն էլ այնուհետև դարձան իմ անմեկին ընկերները։ Եվ ինչքան էլ որ նրանց հերոսները թվում էին ինձ կենդանի, կյանքով բախուն մարդիկ, նույնքան ավելի շատ նրանց հեղինակը գերբնական մի արարած, որ ինձ համար մի անբացատրելի հրաշքով կարողացել էր ստեղծել հեքիաթի մի կախարդական աշխարհ։ Ա՜խ, երանի նրան տեսնեի, ո՞ւր է ապրում նա, մտածում էի ես, արդյո՞ք կարելի է տեսնել, մի՞թե հնարավոր է... Եվ ինչքա՜ն մեծ հղավ զարմանքս, երբ նույն թվականին, Անի քաղաքում, ուր գրեթե ամեն տարի գնում էի ես մեր գյուղին շատ մոտ գտնվելու հնարավորությամբ, հանդիպեցի մի քանի աշտարակցիների։ Հարցուփորձ արի Սոսի և Վարդիթերի մասին և Պոոշյանի մասին։ Նրանք պատմեցին, որ Սոս ու Վարդիթերը ողջ են, որ Սոսն իրենց դրացին է, իսկ Պոոշյանը, հո, իրենց ազգականն է, որ մեր գեղացիների պես մարդ է, պարզ, հասարակ...

Եվ Պոոշյանը իմ երևակայության միջից իջավ, կանգնեց իր հերոսների շարքում՝ իրական և կենդանի։

Տարիներ հետո, 1892 թվին Թիֆլիսում հայոց վանքի բակում ընկերներս ցույց տվին Պոոշյանին, որ մի քանի հասակակից մարդկանց հետ զրույց անելով՝ գնաց առաջնորդարանը։ Հայրական տպավորություն ստացա նրանից, և այդ տպավորությունը հարատևում է զգայնությանս մեջ՝ մինչև այսօր։

1898 թվին, մարտ ամսում Թիֆլիսումն էի, «Երգեր ու վերքեր» բանաստեղծություններիս գրքույկը նոր էր լույս տեսել. անձամբ գնում էի մեր հռչակավոր գրողների մոտ և խորին ակնածանքով գրքույկս ներկայացնում նրանց։

Գնացել էի հավերժ սիրելի Ղազարոս Աղայանի մոտ, որի հետ բախտ էի ունեցել ծանոթանալու Հովհ. Թումանյանի շնորհիվ։

Այս զարթուղումը անում եմ արձանագրելու համար նրանց կարծիքների զվարճալի տարբերությունը իմ գրվածքիս նկատմամբ։

Գրքույկս ներկայացրի, ժպիտով կարդաց իմ անվան գրած ձոնս, ապա մեջեմեջ մի քանի ոտանավորներ, հետո գրկեց ինձ, ասելով — «Կեցցե՛ս, համ շնորհքով բանաստեղծ ես, համ խելացի եմ ասում նրա համար, որ գործ ես ածել ճիշտ ուղղագրությունը. վ-ով ես գրել, փոխարեն ու-ի. իրենց գիտնական լեզվաբան հաշվող մեր պրոֆեսորները այդ չեն ըմբռնել, իսկ մի պատանի ըմբռնել է։ Կեցցե՛ս։ Շարունակի՛ր այս ուղղությամբ և ժամանակով մեծ բանաստեղծ կդառնաս[1]։

Մինչև հիմա էլ ես չհասկացա, թե սիրելի Աղայանը «այս ուղղությամբ» ասելով ի՞նչ էր նկատի առել։

Մյուս օրը գնացի Պոոշյանի մոտ։ Սրտատրոփ բարձրացա աստիճաններով։ Պոոշյանը նստած էր գրասեղանի առաջ և գրում էր։ Անմիջապես աչքիս ընկավ մի մեծ արծաթե ժամացույց՝ սև հաստ ժապավենով, դրված գրասեղանի վրա։

Գրքույկս մի պահ թերթելուց հետո, Աղայանի պես գրկեց, համբուրեց ճակատս, և «հայրենաշունչ բանաստեղծ ես, ապրես,— ասաց հայրական ձայնով,— Շիրակից ուրիշ տեսակ երգիչ, իհարկե, չէր կարող ծագել։ Բայց ափսոս, մեր տղա, փչացրել ես ոտանավորներդ էս անպիտան ուղղագրությունը գործածելով»։

[1] Բառերի մեջ «վ» հնչող «ու»-ն Աղայանը առաջարկում էր «ւ» գրել։ Դրա գործածման համար տարիներով նա կրքոտ պայքար էր մղում «ու»-ն պաշտպանողների դեմ։

Ես ծիծաղեցի մտքիս մեջ և ինձ արդարացնելու համար ասացի, թե դպրոցում այդպես են սովորեցրել։

— Հիմարություն են սովորեցրել ու քեզ պես ուշիմ տղային էլ մոլորեցրել։ Աղտամամություն են համարում՝ քանկելով դարերով սրբագործված ճշմարտությունները։ Շիտակ է ասած, թե՝ խենթը մի քար գլուրից հորը, քառասուն խելոք չկարողացան հանել։ Խոսքս մեր մեծ խենթի վրա է, Աղայանի, գիտե՞ս, էլի՛։

Իր մոտ կանչեց երեխաներին. ազմուկով ներս մտան երկու աղջիկ, երկու տղա (մեծ աղջիկը՝ Պերճանուշը, կարծեմ Բաքու էր ամուսնացած, իսկ մեծ տղան՝ Պողոսը տանը չէր)։

— Ահա իմ պատիկ գժերը, թե կարաս սրանց հետ գլուխ ելնել, քեզ տղամարդ կասեմ։

Եվ ինձ գովելով՝ ներկայացրեց նրանց։ Երեխաները հարցեր տալով կարկուտի պես, թափվեցին վրաս։ Կենդանի, աշխույժ, շարաճճի երեխաներ։

Քիչ հետո շուկայից եկավ տիկին Պողոսյանը — մի նիհար, քնքուշ կին, բարի, թախծալի աչքերով։ Տիկինը ինձ ճաշի պահեց։ Երբ առանձին մնացինք, Պողոսյանն ասաց.— Կինս՝ Աննան, իմ հոգին է, ինձ պահողն ու հասկացողը։ Բախտը սրանից ավելի մեծ բան չէր կարող տալ ինձ, որ ավեց, առանց Անիշկայիս ես կորած մարդ եմ։

Հետագայում ես շատ առիթներով նկատեցի, որ նրանք իրար անձնվիրաբար սիրում են և օրինակելի ամուսիններ են։ Եվ, առհասարակ, Պողոսյանը անսահման սիրով ու գութով մի հայր էր — հոգվոյուտ հայր և ամուսին։

— Աղջիկներս էս ա, սովորում են գիմնազիայում, բայց ուզում եմ ավարտելուց հետո համալսարան դրկեմ, մեկ որ էդ ծանր բեռի տակ չեմ կարող մտնել. երկրորդ, որ կնոջն էնքան էլ հարկավոր չէ բարձր ուսում ստանալը։ Կինը պիտի տունը կառավարի, երեխաներին մեծացնի, նրանց մարդասիրական հոգի ներշնչի։ Ուսում առած կանայք, նկատել եմ, ծրովում են։ Ազգ, եկեղեցի, ընտանիք երկրորդական են դառնում։ Էդ բարձրագույն ասածդ քայքայում է մեր ազգային գոյության հիմքերը, օտարամոլություն է բերում։ Հը՛, դու ի՞նչ ես մտածում։

— Համամիտ չեմ ձեզ, սիրելի հայրիկ,— ասացի ես,— բարձրագույն կրթությունը, իսկական իմաստով, չի կարող չարիք բերել։ Կրթությունը և առաքինությունը հոմանիշ են, և կրթված մայրերը լավ սերունդ կմշակեն։ Բացի այդ — ժամանակը փոխվել է. կինն էլ տղամարդու հավասար իրավունքներ ունի. նա չի ուզում այլևս մեր նահապետական մայրերի պես լինել։ Քաղաքակրթությունը ուրիշ պահանջներ է առաջադրում։

Պատմության անիվը անկաբելի է ետ դարձնել, օրինակի համար, կարծեմ, մեր դուստր բառը հնդկական ձևի մեջ կաթ կթող կնշանակի, հիմա ո՞վ կարող է ստիպել մեր օրիորդներին, որ կով կթեն...

— Ա՛յ տղա, ի՞նչ լավ բան ասիր, չէի գիտում։ Իմաստուն են եղել մարդկության հայրերը։ Ի՞նչ փառավոր ժամանակներ են եղել... Ափսո՞ս, ափսո՞ս անցան...

Ու ցավով երևում էր գլուխը։

Ճաշի վրա Պողոսյանը աղջիկներին բացատրեց իրենց նախապատմական, ճակատագրական կոչումը։ Աղջիկները ճչացին, ծղրտացին,— հայրի՛կ, հայրի՛կ... թե որ էդ գիտեիր, թող Աշտարակում մնայիր, գեղացի կնիկ առնեիր, աղջիկներդ էլ կով կթեին...

— Դրուստ եք ասում, դրուստ եք ասում, բալեքս, մեղավորը ես եմ։

Այս առաջին հանդիպմամբ ես խորապես տեսա Պողոսյանի էությունը՝ բարի, անկեղծ, սրտաբաց, պարզ, ժողովրդասեր մարդ, որն այդպես, անայլայլ մնաց մինչև կյանքի վերջը։

Այնուհետև շատ անգամ հանդիպումներ եմ ունեցել նրա հետ, առանձին, կամ՝ Աղայանի, Բոմանյանի, Փափազյանի ընկերակցությամբ։ Պատահի առիթներով պատմել է ինձ իր կյանքից դրվագներ, իր թափառումներից, անցյալի դեպքերի և վաղեմի գործիչների մասին։

Խաչատուր Աբովյանի հանդեպ անթառամ պաշտամունք ուներ, երբ խոսում էր նրա մասին, հոգեզմայլման մեջ էր ընկնում։ Մի անգամ էր տեսել նրան, Աշտարակում, երբ ինը տարեկան էր ինքը։

Մինչև իր կյանքի վերջը Պողոսյանը մնաց այդ հանդիպման միստիկ տպավորության տակ։

Իր մտածումների առանցքն էին կազմում գյուղացու ցավերը, մեր մշակույթի պահպանումը և զարգացումը, մեր լեզվի անաղարտության հարցերը, մեր գրականության խնդիրները։

Ամբողջական մարդ էր՝ կայուն համոզմունքների տեր։ Խոսքը պատկերավոր էր ժողովրդական ոճերով, դարձվածքներով, առածներով հարուստ։ Ինձ թվում էր, թե հոգի ուժով լցված ժողովուրդն է խոսում իր դարավոր աշխարհագրացությամբ, կենսահայեցությամբ։

1903 թվին ես շրջում էի Վայոց Ձորում (Դարալագյազ), եղա Օրթագեղում (թե՞ Բաշգեղում, լավ չեմ հիշում). բնակիչները ցույց տվին գյուղի բարձրում հինավուրց բերդի ավերակները, որոնք, ավանդաբար, Պողոս իշխանին են վերագրում։ Պատմեցին, որ տարիներ առաջ, երբ Պերճ Պողոսյանը հայ դպրոցների թեմական տեսուչն էր, այցելել է ավերակ-

ները, արտասվալից աչքերով համբուրել է քարերը, հայտնելով, որ իր՝ Պողոշյան տոհմի սնիականությունն է եղել։

Թիֆլիս վերադարձիս՝ Պողոշյանից ուղեցի ստուգել դեպքը։

— Այո, ճշմարիտ է։ Բա դու չգիտե՞ս, որ աշտարակցի Տեր-Առաքելյանների տունը (իրենց տունը) Գրիգոր Մագիստրոսի շառավիղն է։ Այդ փաստ է. բայց ո՞ւմ խոսք հասկացնես։

Մի օր, խոսքի մեջ, Ղ. Աղայանին ասացի այս։

— Գիտեմ,— բարձր ծիծաղելով պատասխանեց Աղայանը.— մենակ ինքը չէ իշխում մեր գլխին. մեր Օվանեսն էլ (Հովհ. Թումանյանը) իրան Մամիկոնյանների տոհմից է հաշվում։ Դրանք ուզում են մեզ իրանց ճորտը շինել. քանի որ բանն էդպես է՝ ես էլ Քյորողլու սերունդից եմ։ Բա դո՞ւ ոնց պիտի անես, գլխիդ ճարը տես։

1904 թվին, ամռանը, անցնում էի Ղարաքիլիսայով (Կիրովական), լսեցի, որ Պողոշյանը ընտանիքով այնտեղ է։ Գնացի մոտը և մի գիշեր հյուր եղա։ Բացի Պերճանուշից բոլոր զավակները հետն էին։ Դերենիկ Դեմիրճյանն էլ հյուր էր նրա մոտ։ Նաև մի օրիորդ էր ապրում նրա տանը, իր աղջիկների ընկերուհին։ Պոլսեցի էր և Եվրոպա պետք է մեկներ ուսանելու։

Պողոշյանը նկատել էր, որ Դերենիկը և պոլսուհին իրար հետևում են...

Շատ հուզիչ և միևնույն ժամանակ շատ զվարճալի էր Պողոշյանի հոգատար մտմտունքը նրանց հանդեպ։

— Ա՜յ տղա,— գաղտնաբար ասաց ինձ,— էս երեխեքը իրար վրա աչք ունեն։ Աղջիկն ուզում է գնա արտասահման, ով գիտե էնտեղ ինչ շան ու գիլու բաժին դառնա, ափսոս է։ Ես ուզում եմ միջամտեմ, բայց նրանք ինձանից քաշվում են, սրտերը չեն բանում։ Նրանց սերը պիտի գլուխ բերել, խեղճ են։ Դու կարաս, ընկեր տղա է, թե Դերենիկն է նազ անում՝ էդ գյադին համոզիր, թե աղջիկն է նազ անում՝ աղջկան համոզիր։

— Քյաչալը դեղ գիտենա, իրեն գլխին կանի,— պատասխանեցի ես ամենայն լրջությամբ։

— Ադա, ի՞նչ տեղին բան ասիր. ես էլ ո՞ւմ եմ սխտոր առնելու ղրկում...

Եվ երկար ժամանակ ծիծաղում էր իմ պատասխանի վրա։

Ամառանոցի խաղաղության մեջ Պողոշյանը զբաղված էր իր «Հուշիկները» կազմելով և Լև Տոլստոյի «Պատանեկություն» գրքի թարգմանությամբ։ Հիացմունքով խոսում էր Տոլստոյի արվեստի մասին։

— Դու սիրո՞ւմ ես Տոլստոյին,— հարցրեց ինձ։

— Ես Դոստոևսկուն ավելի եմ սիրում...

— Դե՛ն ձգիր էդ պիանից լուսնոտին,— խոսքս կտրեց Պողոշյանը,—

Տուրգենևն իսկի չի հասնում նրան, ո՞ւր մնաց Դոստոևսկին։ Տոլստոյը օվկիանոս է, օվկիանոս։

— Իսկ դուք ո՞նց եք միացնում այդ երկու հակասությունները՝ ռոմանտիզմ, ռեալիզմ...

— Դատարկ խոսքեր են՝ ռոմանտիզմ, ռեալիզմ. հանճարը ամեն բան է։ Ամեն բան կա նրանց մեջ. աշխարք են, տիեզերք...

— Իրավունք ունեք,— անկեղծորեն համաձայնվեցի Պողոշյանի կարծիքին։

1904 թիվը Պողոշյանի ընտանեկան բախտավորության վերջին տարին էր։ Մի տարի հալվել անցած՝ շատ ծանր հարվածներ ունեցավ դրժբախտ ծերունին։ Մեռավ իր սիրած, պաշտած կինը, մեծ որդին՝ Պողոշը, Օդեսայում լեյտենանտ Շմիդտի կազմակերպած ապստամբությանը մասնակցելու համար բանտարկվեց և աքսորվեց Սիբիր։

Դժվար էր տեսնել ծերուկ վիպասանին և հոգու խորքից չխղճալ։ Խպատ խորտակվել էր նա, անմխիթար ողբում էր կնոջ կորուստը և գաղտնի հայհոյում էր որդուն։

Անսփոփ, աննպատակ թափառում էր իր կորուստն ու վիշտը, կարծես, մոռանալու համար։ Գնաց Եվրոպա, վերադարձավ իսկույն. ոչ մի տեղ հանգիստ չուներ։ Պարզապես, իր հոգեվարքն էր ապրում խեղճ մարդը։

Վերջին անգամ տեսա նրան 1907 թվի աշնանը՝ Բաքվում։ Պերճանուշի մոտն էր։ Անտեր, անօգնական որբի նման կուչ էր եկել աղոտ սենյակում, վառարանի մոտ, ընկճված, կքած իր վրա, փոքրացած, կարծես, զգում էր իր մոտալուտ մահը, ինչպես ծեր գյուղացիք են նախազգում։ Ցավագնորեն դեղնել էր. արյան նշույլ չկար դեմքին, բոլորովին սպիտակել էր, նույնիսկ հոնքերը, և մորուքը ցանցառացել։

Նայում էի խորին ցավով, ինչպես որդին է նայում ծերացած, սպառված, սիրելի հորը։ Եվ երկյուղ կար սրտիս մեջ թե՝ վերջին անգամն է, որ տեսնում եմ մեծ վիպասանին։

Նույն վշտագին հանգերգը՝ կնոջ կորուստը, որդու տառապանքը...

Ես ջանացի մխիթարել, հույսեր տալ որդու ազատման համար, մոտակա ներման հնարավորության համար, և որ վերջապես որդին տակավին շատ երիտասարդ է. կյանքը առջևն է, իր նման հարյուր-հազարներ կան, Սիբիրում այնքան էլ դաժան չէ կյանքը, և որ գլխավորն է՝ մեծ գաղափարի համար է տառապում, պետք է պարծենալ այդպիսի որդի ունենալու համար...

Մնաս բարևին սրտագին համբուրեցի այս անզուգական բարի, պարզ

մարդու, վշտահար հոր ձեռքը, որը մեր ժողովրդին տվել է այնքան թանկարժեք բարոյական ժառանգություն։

Ինքն էլ ինձ համբուրեց. «Աստված թե կամենա, նորից կտեսնվենք, էն է՝ միայն ունեմ շուտով Թիֆլիս գալու, բարեր մերոնց...»։

Անցավ մի ամսաշրջան. ես մեծ վշտով դիմավորեցի հավերժացած Պռոշյանին Թիֆլիսի կայարանում։

Մահվան անհուն խաղաղությամբ հանգչում էր՝ ձերմակ գլուխը սառը բարձի վրա...

29 օգոստոսի
1937 թ. Սևան

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ

Ղազարոս Աղայանի անունը 7—8 տարեկան հասակից գիտեի ես։ Առաջին հայ գրողն էր, որի անունն այդքան վաղ հասակումս լսել էի։ Պատճառը հետևյալն է։ Մեծ քրոջս սենյակում կախված էր Աղայանի լուսանկարը, սեղանի վրա դրված էր նրա փոտոշաղմ «Երկու քույր» վեպակը։ Քրոջս ուսուցիչն էր եղել նա 1870-ական թվականներին Ալեքսանդրապոլի (Լենինական) Այրոցյան դպրոցում։ Քույրս պարծենում էր, որ նրա լավագույն աշակերտուհիներից է եղել ինքը և «Երկու քույր» վեպը նվեր է ստացել սիրելի ուսուցչից։ Քույրս պաշտամունք ուներ նրա հանդեպ, և երբ ամուսնացավ, նկարն ու գիրքը, բնականաբար, հետը տարավ։ Ես նայում էի Աղայանի լուսանկարին՝ մեծ բեղերով, ահագին մորուքով, խոժոռ հայացքով մի մարդ — և վախ էի զգում, մինչդեռ քույրս պնդում էր, որ նա շատ բարի մարդ է, հրեշտակի սիրտ ունի։

Հիշում եմ, որ քույրս մեզ համար կարդում էր «Երկու քույրը»։ Մայրս, եղբորս կինը և սպասավորուհին լաց էին լինում, ես էլ տխրում էի դժբախտ Արզումանի ողբերգական մահի համար։

Հիշում եմ նաև, որ քրոջս և ինձնից մեծ եղբորս հետ վեճի էի բռնվել «եղերական» բառի համար։ Գիրքը կրում էր այս բնորոշումը՝ «եղերական վեպ»։ Նրանք ասում էին, որ եղերական կնշանակե տխուր, ողբալի, իսկ ես պնդում էի թե՝ կնշանակե «եղած, պատահած պատմություն»։ Նրանք ծիծաղում էին, իսկ ես զայրանում էի նրանց չհավատացողության վրա։

Երբ շատ տարիներ հետո, 1892 թվին ես բախտ ունեցա ծանոթանալու Ղ. Աղայանի հետ — գրեթե կարդացել էի ամբողջ Աղայանին, նրա առանձին գրքով տպվածներն էլ, ամսագրերի մեջ եղածներն էլ։ Մեր

էի հեքիաթներից մի երկուսը՝ «Տորք Անգեղը», անգիր գիտեի «Ճախարակը» և «Հիշողությունը»։ Մեծեռնակը բուն էր շինում, և շինում էր, և երգում»... իմ մշտական սիրած բանաստեղծությունն էր և է. անզուգական, շատ հուզիչ, խորունկ, հայ աշխատավոր ժողովրդի դարավոր կյանքի ու պայքարի գեղարվեստական պատկերը, սիմվոլը։

Սիրելի էր ինձ շատ «Աղուիս և Մանվելը», որ պատանեկան իմ գրոհ ու փոթորկի հոգեբանությանը համընկնում էր։

Թիֆլիսում, 1892 թվի նոյեմբերի վերջին, թե դեկտեմբերի սկզբին էր, գնացել էի Հովհաննես Թումանյանի մոտ, Կովկասյան հայ հրատարակչության գրասենյակը. Հովհաննեսը պաշտոնավարում էր այնտեղ, կարծեմ, գրքերի վարիչ էր. գործ կար, չկար, ինձ հայտնի չէր, այնքան գիտեմ, որ ամբողջ ժամանակը մենակ էր նա, ժամերով ոլորտ էինք անում և խանգարող չէր լինում։

Հիշատակածս օրը, աղմուկ-աղաղակով դուռը բացվեց, ներս մտավ մի հաղթանդամ, թիկնեղ, ալեխառն տղամարդ, հաստ պալտո հագած, բաշլուղով, վալենկաներով, կալոշներով, իսկույն ճանաչեցի՝ Ղազարոս Աղայանն էր։ Նրանք դրկախառնվեցին, կարոտով երկար-երկար համբուրվեցին։

Թումանյանն ինձ ներկայացրեց Աղայանին, ես շփոթվեցի։ Աղայանը սրտարուխ մեստով ձեռքը մեկնեց ինձ, ես կարծես ամբողջովին կորա նրա հսկայական ափի մեջ։ Մի երկու հարց տվեց նա ինձ Ալեքսանդրապոլի իր հին բարեկամների և քաղաքի մասին, ապա դարձավ Թումանյանին, հայտնեց, որ մի-երկու օրով եկել է գյուղից և հենց ուղղակի Օհանեսի մոտ։

«Ա՛յ տղա, շատ էի կարոտել քեզ, ո՞նց ես, երեխեքդ ո՞նց են...»։

Թումանյանն ու ես մոտ երեք ամսվա ծանոթներ էինք արդեն, սակայն չգիտեի, թե նա երեխաներ ունի։ Չկարողացա զարմանքս թաքցնել— «էլի՞ թե երեխաները...»։

— Բա՛,— հզոր ձայնով վրա բերեց Աղայանը,— էս երեխան երեք երեխա ունի...

Հարցրեց Թիֆլիսի գրական, հասարակական կյանքի մասին, նորությունների մասին։ Խոսեց իր գրական աշխատանքներից. գյուղում հանգիստ պարապում է, աշխատում է, լավ գինի ունի, բայց մենակ է, մարդակարոտ է։

— Տո՛, Օհաննես, մի գիրք նվ կարդում, զարմանալի, հրաշալի գիրք, ձեռնարկել եմ թարգմանել. պոեմա է. Բուդդայի կյանքից է. գրքի անունն է «Ասիայի լույսը» — հեղինակն անգլիացի է՝ Առնոլդ...

Ես հիացած նայում էի Աղայանի վրա՝ առողջ, գեղեցիկ, կենսուրախ,

տարբերային։ Կարծես, հեքիաթների միջից եկած, մեր իրականության մեջ քայլող մի զորավար իշխան լիներ, լեռների քաջ որսկան, աշխարհն աշխարհ կտրող քարավանապետ... Մտքով Աղայանի և Թումանյանի միջև համեմատություն էի դնում. երկուսն էլ մի կատեգորիայի մարդիկ երևցան ինձ, միևնույն ոճով, միևնույն կոլորիտով, այնքան ներդաշնակ էին միմյանց, իրար լրացնող, ստեղծելով մի ամբողջություն, մի հասկացողություն՝ հայ հինավուրց ժողովրդի հոգի և խոսքի ուժն ու իմաստությունը։

1898 թվին, մարտ ամսին Թիֆլիսումն էի, «Ծրագիր ու վերքեր» բանաստեղծություններիս գրքույկը նոր էր լույս տեսել. անձամբ գնում էի մեր հռչակավոր գրողների մոտ և խորին ակնածանքով գրքույկս ներկայացնում էի նրանց։

Գնացի Աղայանի մոտ. ակնոցը շտկեց, բացեց գրքույկս, ժպիտով կարդաց ձոնս, ապա մեջմեջ կարդաց մի քանի ոտանավորներ, հետո գրկեց ինձ ասելով՝ «Կեցցե՛ս, համ շնորհքով բանաստեղծ ես, հա՛մ խելացի տղա։ Խելացի եմ ասում նրա համար, որ գործ ես ածել ճիշտ ուղղագրությունը և ւ-ով ես գրել, փոխանակ ու-ի[1]։ Իրենց գիտնական լեզվաբան հաշվող մեր պրոֆեսորներն այդ չեն ըմբռնել, իսկ մի պատանի ըմբռնել է, կեցցե՛ս։ Շարունակիր այդ ուղղությամբ և ժամանակով մեծ բանաստեղծ կդառնաս»։

Մինչև հիմա էլ ես չհասկացա, թե Աղայանը «այս ուղղությամբ» ասելով ի՞նչ էր նկատի առել։

1899 թվին, հունվարին, աքսորից վերադարձիս, ես մի քանի օր կանգ առա Ռոստով—Նախիջևանում, ուր աքսորված էր և Ղ. Աղայանը։ Եղա մոտը, Նախիջևանում. կինը, տղան և աղջիկը հետն էին։ Աղայանին գտա հիվանդությունից նոր ապաքինված։ Գրել էր «Ժամանակակից ատենախոսությունը» և սգեղորված կարդում էր ինձ համար։ Աղայանը իր երիտասարդ թարմ տարիներին, 1860-ական թվականներին, ռուսական զարթոնքի այդ հռչակավոր ժամանակաշրջանում ապրել էր Մոսկվա և Պետերբուրգ, կարդացել էր Դարվին, Բյուխներ, Բլոկ, Չերնիշևսկի, Պիսարև, Նալբանդյան... և այդ բազմապիսի ընթերցումներից ստեղծել էր իր յուրահատուկ աշխարհայացքը, մի տեսակ խառնուրդ սոցիալիզմի և քրիստոնեության, դեմոկրատիզմի—հումանիզմի, հայրենասիրության և կոսմոպոլիտիզմի, նաև ուրիշ տարրերի. և այս ամենը, որ կազմում է նրա էությունը, ես մարմնացած տեսա իր այդ գրվածքի մեջ։

Որոտացող, ներշնչող ձայնով կարդում էր. փայլատակում էին աչքերը, բոլոր հոգով հավատացած էր իր ուտոպիային, կրքոտ, տարամերժ մարգարեների պես ստիպում էր, որ ուրիշն էլ հավատար։

1893 թվին նա շատ գեղեցիկ կերպով գրել, լրացրել էր Քյորօղլու արկածներից գրվածներ. հիմա նրա և Քյորօղլու կերպարները նույնացան իմ աչքին։ Գաղափարական Քյորօղլին էր արձանավորված իմ առաջ, խոսում էր պատգամաբերի լեզվով, հոգ չէ, թե՝ ո՛չ ձիու վրայից, այլ բազկաթոռի միջից։

Ռոստով եղած ժամանակս ամեն օր գնում էի Աղայանի մոտ և խոսում էինք հազար ու մի խնդիրների մասին, բայց բոլոր խնդիրների կենտրոնը՝ աշխարհը վերափոխելու և մարդկությունը երջանկացնելու մասին էր։

— «Ժամանակակից ատենախոսությունը» իմ կոտակն է, իմ հավատամքը։

Մնաս բարև իր վերջին խոսքն էր սա։

Ղ. Աղայանին ավելի մտերմացա 1900-ական թվերին, երբ կազմվել էր մեր «Վերնատունը» և հաճախակի հանդիպումներ ու գրական զրույցներ էինք ունենում Հ. Թումանյանի տանը և երբեմն էլ Աղայանի մոտ։ Նա այլևս մեր գրական նահապետն էր։ Ինքը գրեթե դադարել էր գեղարվեստական բաներ գրելուց, բայց իսկական հոր պես հրճվում էր մեր վերնատան ընկերների գրական հաջողություններով։ Մենք նրան շատ սիրում էինք և հարգանքով էինք վերաբերվում նրա կարծիքներին, նկատումներին։

Մեր խնջույքներին երգում էր նա, Քյորօղլին տակավին իր առնական ձայնով և լցնում էր մեր սիրտը վշտախառն ուրախությամբ։— ավա՜ղ, որ ծերացել է մեր թանկագին նահապետը...

1905 թվի հեղափոխական շարժումներին երիտասարդական խանդավառությամբ հետևում էր նա և մոտ էր համարում իր երազների, տենչերի, իր ուտոպիայի իրականացումը... Ռեակցիան դառնացրեց նրա սիրտը, բայց չկոտրեց հավատը լավագույն ապագայի հանդեպ՝ սնուցած իր ողջ կյանքի ընթացքին։

Աղայանը խորքով օպտիմիստ էր. վիշտն ու տխրությունը չափա-

---

[1] Բառերի մեջ «վ» հնչվող «ու»-ն Աղայանն առաջարկում էր «ւ» գրել, օրինակ՝ «ուներ — ւներ», «գրուած — գրւած»։ Դրա գործածման համար տարիներով նա կրքոտ պայքար էր մղում «ու»-ն պաշտպանողների դեմ։

զանց կարճատև պահեր էին նրա մոտ։ Կարելի է ասել, որ նա իր կյանքում երբեք չհիասթափվեց, միշտ մնաց ոգևորված, հավատով։ Միտքը վառ էր միշտ՝ հարցասեր, հետաքրքրվող։ ականջը միշտ նորության՝ պրակտիկան, հասարակական և գիտական դյուտերի, նվաճումների։

Երազող էր և փլված երազների տեղ նոր երազներ էր կառուցում և պատանու պես հավատում էր իր նոր երազների կենսագործմանը։ Շատ զգայուն մարդ լինելով՝ դյուրավ վիրավորվում էր, բայց մի վայրկյան միայն։ Իր կյանքի վերջին օրերում մի բանավեճով էր բռնված, չեմ հիշում ում հետ և ինչ առիթով, կարծում եմ կաթողիկոսական թեկնածուների մասին էր վեճը։ Հենց նոր վիրավորել էին նրան լրագրի մեջ. ինձ պատահեց և ասեցի.

— Դաշնելի է մեր իրականությունը, զզվելի, չար մարդկանցով լիքն է. քիչ է մնում, որ մարդ գլուխն առնի, երթա՝, կորչի՝ ու կորչի՝ ու կորչի՝...

Ես սառեցի ազդվեցի նրա ծանր տրամադրությունից, բայց նա մի պահ հետո գլխարկացավ և լցվեց սնապարծ օպտիմիզմով, կարծես ոչինչ չէր պատահել։

Աղայանը պարզ, հասարակ, ընկերական մարդ էր. այն, ինչ որ ուրիշները փակում էին յոթը կողպեքի տակ, նա սրտաբաց ասում էր, պատմում էր իր անցյալից դեպքեր, սրկածներ, անեկդոտներ, էպիզոդներ, առանց մտածելու, թե դրանք կարող էին տավեր ձգել իր անվան վրա։ Միամիտ էր շատ, ունեցածը՝ երեխայի խորամանկություն, այնպես թափանցիկ էին նրա մտքերը։ Սիրտը լեզվի վրա էր։ Բանավեճերի մեջ անզուսպ էր, դյուրաբորբոք, անհաշտ, սակայն այդտեղ վերջանում էր նրա չարությունը. դործով չէր վնասում մարդկանց՝ թշնամիներին. զղջում էր շատով. ներողամիտ էր և վատությունը մոռացող, բնավ ոխակալություն չուներ. մի շնչին բանով կարող էիր նրա սիրտն առնել և հաշտեցնել իր «անիծյալ, երդվյալ թշնամիների» հետ։

Պոռշյանի պես անհամեմատելի մարդ էր։

1903 թվին ես շրջում էի Վայոց ձորում, եկա Օրթաղեղում (թե Բաշգեղում), բնակիչները ցույց տվին ինձ գյուղի բարձրում բերդի ավերակները, որոնք ավանդաբար Պոռշ իշխանին են վերագրում։ Պատմեցին, որ տարիներ առաջ Պ. Պոռշյանը այցելել է ավերակները, հայտնելով, որ իր Պոռշյան տոհմի սեփականությունն է եղել։ Թիֆլիս վերադարձիս՝ Պոռշյանից ստուգեցի գյուղացիների պատմածը. նա հաստատեց։ Մի օր խոսքի մեջ Աղայանին պատմեցի այդ։

— Գիտեմ,— ծիծաղելով ասաց Աղայանը,— մենակ ինքը չէ իշխան մեր գլխին. մեր Օհանեսեան էլ իրան Մամիկոնյանների տոհմից է հաշվում։ Դրանք ուզում են մեզ իրանց ճորտը շինել, քանի որ բանն էդպես է, ես էլ Քյորօղլու սերնդից եմ։ Բա դու ո՞նց պիտի անես, գլխիդ հարը տես։

1911 թ. հունիս ամսին Ղարաքիլիսա (Կիրովական) էի, երբ լսեցի Աղայանի մահվան բոթը, շտապեցի Թիֆլիս։ Խորագոց վշտով հոգին հանձնեցինք մեր անհուն սիրելի նահապետի մարմինը, և նույն գիշեր ես էլ հրաժեշտ տվի Թիֆլիսի իմ բարեկամներին և Հ. Թումանյանի տանից ուղղակի մեկնեցի կայարան, այնտեղից էլ Թուրքիայի սահմանը...

Ամբողջ ճանապարհի ընթացքին և Թուրքիայում հավերժացած Աղայանն էր երկար ժամանակ իմ վշտի և խոհերի առանցքը։

11.3 1941 թ.
Երևան

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կան մեզանից հավերժ բաժանվածներ, որոնք միշտ ներկա են մեր սրտերի մեջ, որոնց հիշում ենք երախտագիտությամբ և անհուն սիրով։

Այդպիսի անմահներից է բանաստեղծ Հ. Հովհաննիսյանը, մեր նոր լիրիկայի փայլուն կերտողներից մեկը։

Նրա անունը թիմ է հանում իմ հոգին, և վերստին ապրում եմ խանխավառ պատանեկությանս այն հրաշալի պահը, երբ հոգուս աչքերի առաջ բացվեց կախարդանքի այն չքնաղ պարտեզը՝ նրա բյուրեղային լիրիկան։

Բախտորոշ եղավ ինձ համար այդ նվիրական պահը, և ես գտա իմ ճանապարհը։

Հավերժ երախտապարտ եմ և հավերժ շնորհակալ բանաստեղծության այդ մեծ մոգպետին, իմ կախարդ ուղեցույցին։ Եվ ես բոլոր անկեղծությամբ գլուխս խոնարհում եմ նրա սրբազան հիշատակի առաջ, նրա անմահ երգի առաջ։

Հասկանալու համար, թե ինչո՞ւմն էր նրա պոեզիայի կախարդական հմայքի գաղտնիքը իմ և իմ սերունդի վրա, պետք է հետ գառնալ ավելի քան կես դար ժամանակ՝ 80-ական թվականների վերջերը։

Այդ շրջանում հայ բանաստեղծական գրականության վրա միահնչեան իշխում էր մեծատաղանդ, առնաշունչ Գամառ-Քաթիպան (Ռ. Պատկանյան)։ Նրա հայրենասիրական-հրապարակախոսական բոցավառ երգերով տոգորված էր մեր երկրի հոգևկան աթմոսֆերան։ Մանր, երկրորդական բանաստեղծները արձագանքում էին նրան։ Ինչքան էլ որ մենք՝ պատանիներս վառված էինք Արևմտա-Հայաստանի ազատագրական տենչերով, բայց և այնպես մեր սիրտը ուներ ինտիմ, մտերիմ պահանջներ՝ սրտի խորքեր, սիրո և երաստական վշտի երգեր, մի բառով՝ լիրիկա։ Ես, որ 12 տարեկանից ոտանավորներ գրելու փորձանքի մեջ էի ընկել, իմ մանկական թոթովանքների թեման հայրենասիրական մոտիվները չէին. ամբողջ հայ գրականության մեջ ես միայն երկու բանաստեղծություն էի գտել, որոնք շարժում էին իմ երևակայությունը և իմ ցանկացած պոեզիայի ճաշակը տալիս. դրանք էին՝ Մ. Նալբանդյանի «Մանկության օրեր, երազի նման» և Ս. Շահազիզի «Ես լսեցի մի անուշ ձայն»...

Բայց, երբ հնչեց Հ. Հովհաննիսյանի քնարը, մեր պատանեկան աշխարհը շշմեց, գլուխը կորցրեց. ահա Նալբանդյանը և Շահազիզը միասին՝ ավելի մեծ քանակով ու ավելի որակով։

Նրա պոեզիայի գարնանային թարմությունը, բնականությունը, մարդկայնությունը, նրա նոր, չքնաղ պատկերները, հիանալի լեզուն, սրտաբուխ երգը հալուցինացիայի մեջ ձգեցին մեզ։ Անգիր գիտեինք նրա ողջ գիրքը։

Նրա լիրիկան մեզ հոգեփոխեց, և հեղինակը դարձավ մեր կուռքը։

Նրա մասին լեգենդներ էին պատմում։ Ասում էին, որ նա մոայլ մարդ է, տխուր, զունատ, համաշխարհային թախիծով համակված, նա մեռնել է ուզում...

Մեր ցերեկվա ու գիշերվա երազների մեջ տեսնում էինք նրան ռոմանտիկական-բայրոնական մշուշներով պատած։ Ո՜չ այս աշխարհից։ Եվ հանկարծ ես բախտ ունեցա տեսնելու նրան՝ այդ առասպելական, անգոյ մարդուն իմ աչքերով, մարմնացած իմ աչքերի առաջ։

Այսպես, առաջին անգամ ես տեսա նրան 1889 թվին, սեպտեմբերին, երբ աշակերտեցի էջմիածնի Գևորգյան ճեմարանում։ Իմ երազած բանաստեղծը իմ ուսուցիչն է հիմա, իմ վարժապետը. ի՞նչ կար սրանից ավելի նախանձելի վիճակ։ Առաջին վայրկյանից ես սիրեցի նրան ու նվիրվեցի նրան։

Այն ժամանակ նա 26 տարեկան երիտասարդ էր՝ գեղեցիկ, հմայիչ այնպես բարի, պարզ և քաղցր։

Սրտով սովորում էի նրա դասերը և ուզում էի, որ նա նկատեր ինձ։

Գրում էի ոտանավորներ, բացառապես նրան նմանվելով, յուրացնելով նրա բառերը, պատկերները, ձևերը։

Մի օր, 1890 թվի գարնանը, մեզ ավանդած դասից անմիջապես հետո, ճեմարանի մութ միջանցքում, սրտի ուժգին բաբախումով մոտեցա նրան և տվի իմ նոր գրած ոտանավորը և խնդրեցի, որ կարդա...

Խնամքով գրված թղթի կտորը՝ ոտանավորս առավ և՝ ձեռքիցս բռնելով, ասաց. «Գնանք պարտեզ»։ Գնացինք ճեմարանի պարտեզի այն ծառուղին, որ «բանաստեղծ» աշակերտներիս մտորումների և երազանքների վայրն էր, ուր հաճախ ջղային քայլվածքով շրջում էր և ինքն իրեն հետ խոսում անմահ Կոմիտասը՝ եղբայր Սողոմոնը, ինչպես կոչում էինք նրան փոքր աշակերտներս։

Ոտանավորիս խորագիրն էր «Երկու համբույր»։ Դասընկերներս հավանել էին, որով ես սիրտ էի առել այն ցույց տալու վարպետիս։

Երկու համբույր։ Առաջին համբույրը որպես թե իմ սիրած աղջիկն է տալիս ինձ՝ վարդագույն, բոցավառ շրթներով, իսկ երկրորդ համբույրը մահն է տալիս՝ դժգույն, սառը շրթներով։

Կարդաց և իրեն ասաց. «Սեր և մահ. բանաստեղծության մշտական նյութը». հետո դարձավ դեպի ինձ.— «Ինչպես, այս գրածդ երևակայություն է։ Վաղահաս։ Գրի՞ր քո զգացած բաների մասին։ Բավական սահուն ես գրել... Երևում է՝ վաղուց ես սկսել գրել, վարժ ես... Վանկեր, հանգեր տեղին են, վատ չեն...»

— Այո՜, վաղուց եմ գրում, մի քանի տարի կա,— պատասխանեցի ես։

— Շատ լավ, մեկ-մեկ ինձ ցույց տուր գրածներդ։ Շարունակիր գրել, բայց շատ կարդա, զարգացիր և հայերեն լավ սովորիր։

Երբեմն-երբեմն նոր գրած ոտանավորներս ներկայացնում էի նրան. սիրով կարդում էր, նկատառումներ և ուղղումներ անում և անգնահատելի խորհուրդներ տալիս։

Այսպես գնում էր ժամանակը դասերի և անուրջների միջով։ Մի օր, 1892 թվին, ցույց տվի մի նոր ոտանավոր.

«Ծաղիկ էի նորարոզոզ
Սարի լանջում, երկնի տակ»...

Կարդաց ոտանավորս, նորից կարդաց և քաղցր ժպիտով ասաց, ուսիս թեթև խփելով. «Կեցցե՛ս, հիմա բանաստեղծ ես»։

Ոգևորությանս սահման չկար. ամուր սեղմեցի նրա ձեռքը և թռա ընկերներիս մոտ։

Ճեմարանից հեռացա և գնացի արտասահման՝ շատ սիրելի ուսուցչիս և աղնիվ մարդու հիշատակը սրտիս մեջ սրբությամբ կուրգուրելով։

1902 թվից սկսած ես հաճախակի լինում էի Վաղարշապատում և միշտ գնում էի այցելության ուսուցչիս և հիմա արդեն ընկերիս։

Նրա տան դուռը բաց էր իմ առաջ և սիրալիր ընդունելություն ունեի նրա աղնիվ տիկնոջ և զավակների կողմից։ Նրա հետ ժամանակ անցնելը գերազույն վայելք էր. բարձր ինտելիկտի մարդ, հոգվաղյուտ զարգացած, բաղմակողմանի կարդացած, դասական ճաշակի և խորունկ կուլտուրայի տեր, որ պատրվ էրերեր ամեն հասարակության։

Անթելի գիտեր հայերեն և ռուսերեն, գիտեր եվրոպական հին և նոր լեզուներ, լավ ծանոթ էր հայ բարբառներին և գոլկորին։ Եվ չնայելով իր՝ ֆիլոլոգիկ բարձրագույն կրթությանը և անցած լեզվական դիսցիպլինային, նա հայերենի քերականական տարակուսանքները փարատելու համար դիմում էր ժողովրդին՝ լեզվի ստեղծողին և անսխալ քերականագետին։

Պատմում են, որ Եմարանի աշակերտները մի անգամ վեճի են բռնվել մի նախադրի, թե մի բայի մասին, թե ինչ հոլով կամ խնդիր է առնում. վեճը լուծելու համար հարցնում են նրան։ Մի պահ մտածում է նա և ասում. «Եթե դիմեմ անգլերենին կամ գերմաներենին՝ դուռը կփակեմ, և կսխալվենք...»։

Այդ ժամանակ անցնելիս է լինում ժողովրդի մի մարդ՝ բերը շալակին։

— Ա՛յ, նրան դիմենք, նա գիտե ճիշտը։

Մեծ բանաստեղծի այս խորհուրդը ղեկավար պիտի լինի մեզ բոլորիս համար։

Նա ընկերական մարդ էր, սիրում էր հավաքույթներ, քեֆ, կիրուխում։ Բայց չուներ Հովհ. Թումանյանի թամադայական շողշողուն ձիրքը, որով քեֆերը դառնում էին շքեղ հանդեսներ, սրամտության եզակի առներ, ուրախության պահեր։ Նա էլ, Թումանյանի պես, գիտեր շատ անեկդոտներ, ժողովրդի կյանքից գեղեցիկ, զվարթ դրույցներ, և տրամաղրված ժամերին պատմում էր համով-հոտով՝ ուրախ ժպիտը աչքերի մեջ

Ավելորդ չի լինի հիշատակել, որ ես իմ մասնակցությունը բերել եմ Հ. Հովհաննիսյանի բանաստեղծությունների 1908 թվի հրատարակության գործին։

Ես մի կարճ ժամանակով Բաքվի «Կուլտուրական միության» հրատարակչության մասի վարիչն էի։ Իմ թելադրանքով և իմ հսկողությամբ

լույս ընծայվեցին Հ. Հովհաննիսյանի բանաստեղծությունների հատորը, նաև Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին»։

Այդ առթիվ նամակագրության մեջ եմ մտել Հեղինակի հետ։

1911 թվին արտասահման գնալով, ընդհատվեցին իմ կապերն ընկերներիս հետ, մանավանդ առաջին իմպերիալիստական պատերազմի և ռևոլյուցիայի տարիներին, երբ նամակագրությունս ընկերներիս հետ դրեթե խզված վերացավ։ Սակայն հիշածս պատերազմից առաջ, երբ 1913 թվին Կովկասում տոնեցին Հ. Հովհաննիսյանի գրական գործունեության 30-ամյակը, ես ծնկից նրան ողջույնի նամակ ուղարկեցի, որ հրատարակվեց այն ժամանակվա մամուլում։

1926 թվի աշնանը արտասահմանից վերադարձա հայրենիք։ 20 տարի կար, որ չէի տեսել ուսուցչիս, կարոտով գրկեցինք միմյանց։

Տարիները թեթև չէին անցել նրա գլխի վրայից, բավական ծերացել էր և առաջվա նման զվարթ չէր։ Պետությունը հարգում, մեծարում էր նրան. նշանակել էր կենսաթոշակ և այգի էր տրամադրել նրան՝ օգտագործելու համար։ Շատ հաճախ լինում էի նրա տանը և այգում։ Հիշում եմ, որ մի անգամ գիշերեցի այգում։ Տակավին ուշ գիշեր չէր, ուզում էինք արթուն մնալ, սակայն ինքը հոգնած էր, քնել էր ցանկանում։

— Կանուխ է,— ասացի ես,— մի քիչ էլ դրույց անենք։

— Գնա՛ պառկիր և աստղերի հետ կրույց արա,— պատասխանեց նա։

1928 թվի տարեմուտը դիմավորեցինք նրա տանը. բավական հյուրեր կային։ Անմոռանալի, սրտագին ժամեր անցրինք. բոլորս հավաքված մեր պոեզիայի ալեհեր նահապետի շուրջը, երգում էինք, պարում, հրճվում մինչև լույս։

Վերջին անգամ չեմ հիշում ուր տեսա նրան, միայն խոստացել էի կիրակի օրը, սեպտեմբերի 29-ին լինել այդում՝ խորոված ուտելու համար։

Կիրակի առավոտը, երբ զարթնեցի, մի տխուր, մռայլ օր էր. Մասիսը ծածկված էր աշնան մթին ամպերով. ծառերից գեղին տերևները հառաչելով վայր էին ընկնում, և ես շատ տխուր էի՝ անտրամադիր գնալու... Նկավ նրա մորաքրոջ որդին, որ միասին գնային. հրաժարվեցի գնալ։

Մյուս օրը, վաղ առավոտյան լսեցի մահվան բոթը.

Մինչև այժմ զգացմունքների մի պայքար կա հոգուս մեջ. ցավում եմ, որ չեմ գնացել և զոհ եմ, որ չեմ գնացել։ Ցավում եմ, որ վերջին անգամ չտեսա նրան, չլսեցի նրա վերջին խոսքը, բայց և զոհ եմ, որ

չապրեցի այն զարհուրելի վայրկյանը, երբ այդ հոյակապ մարդը, իմ սիրելին և մտերիմը, պիտի հանգչեր իմ աչքերի առաջ։

Հիմա և միշտ իմ հոգում ապրում է նա՝ գեղեցիկ, բարի, քաղցր՝ իր հայացքով և իր ձայնով, իր ժպիտով և իր թախիծով...

Եվ հավերժ կենդանի կմնա մեծ բանաստեղծի նվիրական քնարը հայ ժողովրդի համար, որովհետև՝

«Միայն այն կապրի, որ միշտ է անմահ—
Սուրբ գեղեցկություն և սուրբ գաղափար.
Վեհ միտքը ազատ, կենդանի կմնա
Ու սերն անձնազոհ խեղճ եղբոր համար»։

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Գեորգյան ճեմարանում աշակերտ եղած ժամանակ՝ 1892 թվին, մի բարեկամ ուղարկել էր ինձ Հովհաննես Թումանյանի բանաստեղծությունների առաջին հատորից մի քանի օրինակ, որ վաճառեի ընկերներիս մեջ։

Նույն թվի աշնանը, երբ Թիֆլիս էի, գնացի Թումանյանի մոտ վճարելու գրքի գինը և այդ առիթով ծանոթանալու նրա հետ։

Ներկայացա նրան։ Նա պաշտոն ուներ Կովկասի հայոց հրատարակչական ընկերության մեջ. ի՞նչ էր պաշտոնի անունը՝ չեմ հիշում, սակայն միշտ ընկերության դրասենյակում էր։ Նա քաղցրությամբ ընդունեց ինձ, հարցրեց, թե ի՞նչ տպավորություն է թողել գիրքը աշակերտների վրա։

Մեր ուսուցիչ-բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի համեմատությամբ առաջին գիրքը մենք գտել էինք թույլ, բայց զգացել էինք տաղանդի շունչը։

— Մենք շատ սիրեցինք ձեր պոեզիայի ժողովրդային տարերքը,— պատասխանեցի ես և արտասանեցի, իբրև ապացույց, որ սիրում ենք մի երկու ոտանավոր այդ ոճով գրածներից։

Թումանյանն ուրախ ժպտաց և իսկույն նվիրեց ինձ բանաստեղծությունների երկրորդ հատորը, որ նոր էր լույս տեսել։

Առաջին հանդիպումով շատ հաճելի տպավորություն ստացա Թումանյանից։ Վարմունքը պարզ էր և ընկերական։ Նրա դեմքը ողողված էր, կարծես, մի ներքին լույսով։ Փարթամ մազերով, աչքերը խոր ու խոհուն։ Ժպիտը միշտ ներկա էր դեմքի վրա։ Հաղիվ քսան և չորս տարեկան էր, ուրախ, զվարթ, երիտասարդ։

Հաջորդ այցելությանս արտասանեցի անգիր արած մի քանի ոտանավոր նոր հատորից։

— Վա՜հ,— բացականչեց նա,— ի՞նչ լավ հիշողություն ունեք։ Ես իմ գրածներից ո՛չ մի տուն չեմ հիշում։

Հետագա հանդիպումներին սիրտ արեցի, հայտնեցի՝ թե ես էլ եմ ոտանավոր գրում։

— Զգում էի,— ասաց նա,— խնդրեմ մեկ բերեք տեսնեմ։

Ոտանավորներիցս ընտրեցի մի տասը-տասնհինգ հատ և հանձնեցի նրան։ Օրեր անցան, սպասում էի, որ կարծիք հայտներ դրանց մասին, բայց նա լռում էր։ Մտածեցի, որ չի հավանել և երբեք էլ չհետաքրքրվեցի։ Թումանյանի մոտ ծանոթացա Ղազարոս Աղայանի հետ, որ գալիս էր հայրական գյուղից, ուր նա ապրում էր այդ ժամանակ։ Հաստ պալտո հագած, վալենկաներով, կալոշներով, գյուղից՝ ուղղակի Օհաննեսի մոտ։ Նրանք ջերմաջերմ գրկախառնվեցին, համբուրվեցին, կարծես երջանկացան իրար տեսնելով։ Շատ նման էին նրանք իրար. երկուսն էլ միևնույն առողջից, հայ ժողովրդի նյութից կերտած և միևնույն ոճով ձևավորված։ Նաև մեծ մտերմություն տեսա նրանց միջև, իսկ հետագա տարիներում համոզվեցի, որ ամբողջ աշխարհում նրանք իրար ամենամոտ մարդիկ են։ Օհաննեսը նրան կոչում էր «Ասլան ապեր», նա էլ Օհաննեսին՝ «Ասլան բալասի». հետո, երկուսով ծիծաղելով, ասում էին. «էլ ո՞վ կարող է մեզ հաղթել»։

1895 թվի ձմեռնամուտին Օհաննեսը երևաց Ալեքսանդրապոլում։ Իջել էր հյուրանոց. ես տեղափոխեցի մեր տուն։ Մի շաբաթ մնաց Ալեքսանդրապոլում։ Գալիս էր Թիֆլիսից Ախալցխայի և Ախալքալաքի վրայով, գնում էր Երևան, էջմիածին։ Ինչ-որ միսիայով էր շրջում նա։ Հայ կյանքը ալեկոծված էր արևմտահայերի ջարդերի սարսափելի լուրերով և ջարդերին ականատես, փախած հայ գաղթականների սրտակեղեք պատմություններով։ Ամեն գիտակից հայ ծանր մտահոգություններ ուներ արևմտահայերի և հայկական հարցի ճակատագրի նկատմամբ։ Անշուշտ, Օհաննեսի ուղևորությունը կապված պիտի լիներ այդ դրության վերաբերյալ գործերի հետ։ Այդ օրերից անցել է ավելի քան 50 տարի և մոռացել եմ, թե ի՞նչ էր Օհաննեսի դերը այդ գործերի մեջ, թեև նա անվերջ տեսակցություններ էր քաղաքի ինտելիգենցիայի և հասարակության ներկայացուցիչների հետ, հետաքրքրվում էր գաղթականների վիճակով և տետրակներ էր լցնում նրանց պատմածներով։

Այդ օրերից մնում է ինձ մոտ մի թանկագին հիշատակ, մի թղթի կտոր՝ Օհաննեսի ձեռագիրը՝ «Երկու սև ամպ» բանաստեղծությունը, որ նոր էր գրել։

Զմեռվա ցրտերին Օհաննեսին ճանապարհ դրինք Երևան։

1906 թվի գարնանը Թիֆլիսումն էի։ Այդ ժամանակ նոր էի ծանոթացել Դերենիկ Դեմիրճյանի հետ, որ Ներսիսյան դպրոցի աշակերտ էր։ Մի երեկո նրան տարա Թումանյանի մոտ. Օհաննեսն արդեն կարդացել էր «Մուրճ» ամսագրում տպված նրա բանաստեղծությունները և գովեստով արտահայտվեց դրանց մասին։ Խոսեցինք գրական նյութերից, ապա Օհաննեսը կարդաց «Մծիրի»-ի իր Նոր կատարած թարգմանությունը, որը մենք հավանեցինք՝ մեկ-մեկու նշումներ անելով։

Դերենիկը գնաց։ Ես կիլերեցի Օհաննեսի մոտ։ Տխուր շրջան էր. ցարական հայահալած քաղաքականությունը շարագին բնույթ էր ստացել, կառավարությունը փակել էր հայոց դպրոցները, իրար ետևից փակում էր հայ թերթերը, գրադարանները և կուլտուրական հիմնարկները. բանտերը լցվել էին արևմտահայերի ազատագրական շարժման համակրողներով. բանտարկված էին Ղ. Աղայանը, Շիրվանզադեն։

Ուշ գիշեր էր, երբ պատրաստվեցինք քնելու։ Օհաննեսը լամպը ձեռքին կանգնել էր անկողնուս մոտ։

— Ա՛յ տղա, շատ մի՛ տխրիր, վերջը լավ կլինի։ Հայ ժողովուրդը ավելի ծանր օրեր է տեսել։ Մի՛ հուսահատվիր, ես էլ կանցնի։

Առհասարակ լավատեսությունը գերակշռում էր Օհաննեսի հոգում. ընկճվածությունը մի վայրկյան էր նրա մոտ։ Հավատով էր մեր ճակատագրի հանդեպ և պայծառ հեռանկարներ էր տեսնում հայ ժողովրդի առաջ։

Այդ հավատը վարակեց ինձ, ես թեթևացած կարողացա քնել։

1898 թվի սկզբներին, ցարական ժանդարմերիայի կարգադրությամբ, ես մի տարով աքսորվում էի Եգեսա քաղաքը։ Աքսոր գնալիս, ճանապարհին կանգ առա Թիֆլիս և անմիջապես գնացի Օհաննեսի մոտ։ Արդեն օրենք էր դարձել, որ Թիֆլիս գտնվելիս անպատճառ պիտի լինեի նրա մոտ, գրեթե ամեն օր։

Երեկոյան բավական հյուրեր եկան և մեկնեցին ուշ գիշերին. երբ մնացինք մենակ, Օհաննեսը կարդաց «Դևի անհունը» պոեմը, որ վերջուց էր գրել։ Հիմա վերամշակել էր, տակավին ոչ վերջնականապես։

Ասում էր, որ պոեմի նյութը վավերական է, ճշգրիտ իրողություն։ Անհանգիստ գիշեր ապրեցի։ Երևակայությունս հուզված էր և անհնթեթ երազներ տեսա։ Առավոտյան երազներս պատմեցի Օհաննեսին։ Նա էլ ինձ՝ սա լավ նշան է, որ պոեմս ազդեցություն է թողնում, բայց իմ պոեզիայի ոճին չի բռնում։ Խորթ զավակ է այս պոեմն ինձ համար, նյութն էլ, գրելաձևն էլ։ Բայց թող լինի, իմանան, որ ֆոլկլորից դուրս էլ կարող եմ բան գրել։

Այս միամիտ բացատրությունը շատ զվարճացրեց ինձ։

1899 թվին աքսորից վերադարձիս մի քանի օրով մնացի Թիֆլիսում, եղա Օհաննեսի մոտ։ Օհաննեսին գտա շատ ընկճված, շատ տխուր։ Նոր էր դարձել Դեղեղ գյուղից, ուր գնացել էր հոր հուղարկավորությանը։

«Սիրելի հոս թաղեցի։ Սրանից ավելի ի՞նչ մեծ վիշտ կա՝ սիրածին թաղել...»,— Խորին թախծությամբ ասաց նա։

Օհաննեսը շատ էր սիրում հորը և միշտ էլ մեծ հիացմունքով էր խոսում հոր մասին։ Տարիներ հետո էլ առանց աչքերը արցունքով լցվելու չէր կարող խոսել նրա մասին։

Գիշերը մնացի մոտը, և մինչև ուշ գիշեր պատմում էր հանգուցյալ հոր բարությունից, ազնվությունից, առաքինությունից։

Օհաննեսը կենտրոնական անձնավորություն էր՝ հյուրասեր, մարդամոտ։ Զրույցի համար հոգի էր տալիս։ Օրվա որ ժամին գնայիր նրա մոտ, ձեռքի գործը կթողներ և, ժպիտը դեմքին, կնստեր զրույցի։

Ղ. Աղայանը, Դ. Դեմիրճյանը, ես և մեր մյուս ընկերները կանոնավոր կերպով շարաթը մեկ-երկու անգամ հավաքվում էինք նրա մոտ՝ իրար տեսնելու և զրույց անելու։ Այստեղով, նրա տունը դարձել էր մեր հավաքատեղին։ Թեյ էինք խմում, ընթրում, խոսում։ Զմեռը վառվուն բուխարիկի շուրջը նստած՝ կատակում էինք, անվերջ զրույց անում, խոսում, վիճում։

Առաջին խոսքը պատկանում էր Ղ. Աղայանին, որին նահապետ էին անվանում։ Գրականության նահապետ։ Նրան հարգում էինք բոլորս և սիրում։ Ուշադրությամբ էինք լսում նրա կարծիքները, դիտողությունները։ Մեր երեկույթներին, զիջելով մեր թախանձանքներին, Աղայանը երգում էր սիրած Քյորօղլու ասպետական երգերը, իրեն՝ Աղայանի հայացրած թարգմանությամբ։ Պարթև հասակով կանգնում էր նա, հուժկու ձեռքերը շարժելով, բամբ ձայնով կատարում էր Քյորօղլին։

Ընթերցում էինք մեր նոր գրած բաները, շնորհատում, կարծիքներ փոխանակում։ Խոսում էինք հայ, ռուս և օտար գրական նորությունների մասին, հաղորդում իրար մեր տպավորությունները։

Ի՜նչ նյութերի շուրջը ասես՝ չէր դառնում մեր զրույցը։ Խոսում էինք հասարակական և քաղաքական երևույթների մասին։ Խոսում էինք ազգերի պատմություններից, ժողովուրդների կյանքից, արվեստներից, փիլիսոփայությունից և մանավանդ գրականությունից։ Կարդում էինք դասական հեղինակներից՝ արևմուտքի և արևելքի, նույնպես նոր հեղինակների գործերը։ Մեղնից յուրաքանչյուրը իր սիրած հեղինակն ուներ, որ ի մի գումարած ընդգրկում էր վերջ ի վերջո գրեթե բոլոր հանճարները։ Կարդում էինք ժողովուրդների ֆոլկլորից և հիանում էինք ժողովուրդների անկեղծ ստեղծագործություններով՝ ռուսական բիլիներով, սերբական պոեմներով, մեր Սասունցի Դավթով և շատ ուրիշներով։ Մեր բոլորի սիրածն էր Սայաթ-Նովան, որին բարձրացրինք հանճարների դասին, ունեցանք պաշտամունք նրա հանդեպ, մեր բոլոր խնջույքներում երգում էինք նրա տաղերը, որոնք գրեթե մոռացված էին։ Վստահ կարող ենք պարծենալ, որ մենք վերակենդանացրինք նրան, տարածեցինք նրա համբավը և արծարծեցինք նրա երգերը։

Ինքնաբերաբար մեր հավաքույթների առաջին շրջանում, լուրջ թե կատակով, փափագ զարթնեց մեր գրական խմբակին, մեր հավաքույթներին անուն տալ։ Օհաննեսն ասաց, թե Գոնկուր եղբայրներն իրենց գրական խմբակն ունեին (որի անդամներն էին՝ Էմիլ Զոլա, Ալֆոնս Դոդե, Տուրգենև, Հյուսիմանս...), որ հավաքվում էին Գոնկուրների տանը վերնահարկում, որին «Ամբար անուն էին տալիս։ Նույն նմանողությամբ, չեմ հիշում ում կողմից, առաջարկվեց «Վերնատուն» անունը. խսկույն հավանություն տվինք, գտնելով այն շատ պատշաճ և տեղին, որովհետև Օհաննեսի բնակարանը այն ժամանակ չորրորդ հարկում էր։ Կնքեցինք «Վերնատուն» անունով մեր հավաքույթների վայրը։

Այդ անունն այլևս ընդմիշտ կապվեց մեզ հետ և քաղաքացիություն ստացավ։ Հասարակության մեջ պարզապես կիրառվում էր՝ «Վերնատան անդամները»։

«Վերնատունը» երբեմնակի հյուր էին գալիս գրողներ, արվեստագետներ, պատմաբաններ, լեզվաբաններ կամ գրականասեր մարդիկ՝ Գ. Պռոշյանը, Մուրացանը, Վ. Փափազյանը, Կոմիտասը, նկարիչներ Գ. Բաշինջաղյանը, Փ. Թերլեմեզյանը և շատերը։

Անմոռանալի գեղեցիկ ժամեր ենք անցրել «Վերնատանը», իմաստավորված, բովանդակալից, ներշնչող պահեր։

«Վերնատունը» ապրեց 7—8 տարի։ Անդամների բացակայության և

ցրվածության հետևանքով նա դադարեց գոյություն ունենալուց 1906—1907 թվականներին։

«Վերնատանը» տեղի ունեցած զրույցներից հիշում եմ Օհաննեսի մի քանի խոսքերը գրականության մասին.

— Իզուր ջանք է՝ անտաղանդ մարդկանց օգնել գրող դառնալու համար։ Իր նեղյուրները պախրան ինքը պիտի շինի։

— Ո՞չ մի քննադատ չի կարող իմ լավ ոտանավորը վատացնել և վատ ոտանավորը՝ լավացնել։

— Բանաստեղծությունը չի գրվի հանգով ու վանկով, այլ՝ սրտով և զգացմունքով։

— Գրականությունը հայրենիք չունի, բայց յուրաքանչյուր հայրենիք իր գրականությունն ունի։

1901 թվի սեպտեմբերին, Օհաննեսը Ալեքսանդրապոլ եկավ Աբաստումանից, ուր նա բժշկվում էր։ Ճանապարհին կանգ էր առել Ախալքալաքում, այցելել էր Փարվանա լիճը, որի հայտնի լեգենդի մասին վաղուց ի վեր մտորում էր։ Լսել էր Թմկաբերդի լեգենդը։ Չէր կարողացել դնալ բերդը տեսնելու, սակայն Աբուլ լեռան լանջերից դիտակով նայել էր բերդին, որի բուրգերը հեռվից աղոտ ուրվագծվում էին։

Խանդավառ խոսում էր Փարվանայի ու Թմկաբերդի լեգենդների մասին. նրա ներկայության մեջ կամաց-կամաց կենսագործվում էին այդ չքնաղ պոեմները։

Հիշում եմ այսօրվա պես, որ նա «Թմկաբերդի» նախերգանքի առաջին փորձը արտասանեց՝ մեծ հիացմունք պատճառելով ինձ։

Ալեքսանդրապոլում, իրար ողջագուրելուց անմիջապես հետո Օհաննեսն ասաց.

— Անիում դեռ չեմ եղել, շատ եմ ուզում տեսնել, անպատճառ գլուխ բեր էդ բանը, շատ եմ խնդրում։

— Աչքիս վրա, դրանից էլ հեշտ բան ի՞նչ կա։

Մի երկու օր անց բանաստեղծ Հովհաննես Կոստանյանի հետ, որ իմ մորաքրոջ որդին էր, ճանապարհ ընկանք դեպի Անի։ Կանգ առանք մեր տանը՝ Ղազարապատ գյուղում, հանգստանալու և մորս տեսնելու։

Օհաննեսը մեր ջրաղացի վարպետին և գյուղացիներին, որոնք հեքիաթներ և ժողովրդական երգեր գիտցողներ էին, հարցնում էր «Հազարան բլբուլի» մասին, գիտեի՞ն արդյոք, և ուրիշ ֆոլկլորի նյութերի մասին։ Ժամերով զրույց էր անում նրանց հետ և լսածները գրում տետրակի մեջ։

Երկու գիշեր միայն կարողացանք մնալ մեր տանը։ Օհաննեսը անհամբեր էր, ուզում էր շուտով տեսնել Անին։

Մեր գյուղից մինչև Անի հասիվ 25 կիլոմետր լիներ։

Այցելեցինք Հռոմոսի նշանավոր վանքին, որի նախագավիթը սքանչելի է։ Հովհ. Կոստանյանը մեզ նկարեց Աշոտ Ողորմած թագավորի դամբարանի աջ-ձախ կողմում կանգնած։

Մոտենում ենք Անիի հոյակապ պարիսպներին և բուրգերին. Օհաննեսը հուզված է, ոչինչ չի ասում, միայն արագացնում է քայլերը, հայացքը շարունակ պարիսպներին։

— Ի՞նչ ես շտապում,— ձայնում եմ նրան։— Սմբատ թագավորը դեռ քո գալու մասին լուր չունի։

Օհաննեսը դառնում, խոնոր նայում է ինձ և լայն քայլեր նետում։

Օհաննեսը մտածում էր մի դրամա գրել Անիի կյանքից. նյութը Հովհաննես-Սմբատ թագավորների «Թանգրամիր ու Թանգրամարմին» թագավորն էր, որ իմաստունի համբավ ուներ։

Ես դրա մասին էի ակնարկում, որ Օհաննեսին տհաճություն պատճառեց։

Վերջապես ավագ դռան առաջն էինք...

Օհաննեսը կանգնեց և ուղղակի բռնեվեց իր տեղում։ Երկար, լռելյայն նայեց և, գլուխը շարժելով, դարձավ դեպի մեզ։

Արդեն մութն էր, որ հասանք վանահայր վարդապետի բնակարանը, որն այցելուների հյուրանոցն էր միաժամանակ։ Մի սարսափելի ճիչ հետ մթության մեջ պայթեց հրացանը, որի գնդակն ուղղակի անցավ մեր երեքիս առաջով, եթե մի քայլ առաջ լինեինք, ով գիտե ինչ պիտի լիներ մեր վիճակը։

Պարզվեց, որ վանահայրը բացակա է, և ծառան վախենալով, թե եկողները ավազակներ են, դիմել է անտեղի ինքնապաշտպանության։

— Տո՛,— ասաց Օհաննեսը ծառային՝ բերդանկա հրացանը տեսնելով,— մի գյուղով երեք բանաստեղծ պիտի ուզանե՞ր։

— Լավ պրծաք, ըսել է՝ ձեր վերջը չէր եկել,— ամենայն անտարբերությամբ պատասխանեց ծառան։

Վաղ առավոտյան սկսեցինք թափառել պանծալի ավերակների մեջ։ Օհաննեսը հիացմունքով և ուշով դիտում էր ամեն մի բեկոր՝ արվեստի գնիք կրող։ Լուռ, մտասույզ թափառում էր՝ անցյալի հետ ներքին խոսակցությամբ տարված. կանգնում էր հրաշակերտ շենքերի առաջ, հայացքը լարած նայում էր սյուներին, կամարներին, քանդակներին, ապա աչքերը գոցում և ականջները լարում, կարծես մի երաժշտություն էր լսում՝ ո՛չ սովորական, ո՛չ այս աշխարհից։

Անին իր վեհասքանչ ճարտարապետությամբ շատ մեծ տպավորություն թողեց Օհաննեսի վրա։ Երբ մեկնում էինք Անիից և պարիսպներից դուրս էինք արդեն, Օհաննեսը վերջին անգամ նայեց Անիին և ասաց.

— Ինչքա՞ն մարդ պիտի անբան-տեսասուն լինի, որ ձեռք բարձրացնի այս հրաշալիքների վրա։

— Մի՞թե այս վայելչությունը պիտի մեռնի առանց հետք թողնելու հայկական և ուրիշ ժողովուրդների արվեստի վրա։

— Այսոր զարգացման ի՞նչ աստիճանի հասած կլիներ մեր արվեստը, եթե թուրք, թաթար ցեղերը չքայքայեին մեր ժողովրդին։

1903—4—5 թվականները հայ ժողովրդի համար ծանր տարիներ էին։ Ցարական հայահալած բաղաքականությունը ավելի խստացված շարունակվում էր։ Փոխարքա իշխան Գալիցինը, հայերին ատելու մեջ ինքնամոռացության հասած՝ անվերջ լաբիրինթներ էր նյութում հայ ժողովրդի դեմ։

Ցարն ու իր ռեակցիոն չինովնիկները հայկական դպրոցներն ու կուլտուրական հիմնարկները փակելուց չհագեցած, բռնի խլեցին հայ եկեղեցու բոլոր էալվածքները, որ գաղթով նվիրված էին հայ ազգի կողմից էջմիածնի ու կաթողիկոսության պահպանման համար և հոգալու հայ ժողովրդի կրոնական ու կրթական կարիքները։

Հայ ժողովուրդը, ամենուրեք, վենքը ձեռքին դիմավորեց հափշտակիչներին և երկուստեք արյուն հոսեց։ Բանտերը լցրին հազարավոր հայերով, և ձեռք գարկեցին մի դիվական գործի՝ թուրք մասսաները գրգռեցին և զինեցին հայերի դեմ... սկսվեցին հայ-թուրքական արյունոտ կռիվները... Օհաննեսը ամբողջ էությամբ կլանված էր մի կերպ վերջ դնելու այդ անմիտ եղբայրասպանությանը, որ ծառայում էր միայն ցարերի բռնակալության հաստատման գործին։ Այդ ժամանակներին էր, որ նա հայ դինված գյուղացիների գլուխն անցած, լեռում, գնում է հարևան թուրքերի մոտ և հաշտության դաշն կնքում, որով այդ շրջանի խաղաղությունը պահպանվում է։

Այս տարիներին ես հաճախ հանդիպում էի Օհաննեսին Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում, Երևանում, էջմիածնում։

1906 թվին, ամռանը, հուլիսին, գնացի Դսեղ գյուղը՝ Թումանյանի մոտ հյուր։ Նա ամբողջ ընտանիքով Դսեղումն էր։ Ապրում էին պապենական հին տան մեջ, որի վրա նա փայտաշեն մի հարկ էր կառուցել։

Մեծ ընտանիքը կառավարում էր Օհաննեսի մայրը՝ պատկառելի

Նանին՝ շերեփը ձեռքը, իբրև իշխանական գավազան, հրամայում էր մեծին ու պստիկին։ Առավոտից մինչև ուշ երեկո ծուխ էր բարձրանում Օհաննեսի երդիկից. ամբողջ օրը թոնիրների ու օջախների մեջ կրակ կար, նրանց վրա եփվում էին կերակրի կաթսաները։

Լոռումն եմ. Սարոյի, Սարոյի, Անուշի հայրենիքում. Օհաննեսի հետ, նրա հարկի տակ։ Ի՞նչ էլար ավելի քաղցր, քան այդ ժամերը։ Օհաննեսի հետ շրջում ենք Դսեղ գյուղում, նրա շրջակայքը։ Հին, հնադարյան գյուղ է Դսեղը, ամեն կողմ անցյալի բեկորներ։ Գնում ենք գերեզմանատունը, այցելում ենք Օհաննեսի հոր շիրիմին։ Օհաննեսի աչքերն արցունքոտվում են. ութ տարի է անցել հոր մահից, բայց վիշտը չի անցել եվ նորից, նորից պատմում է նա ինձ իր սքանչելի հոր մասին։ Աղնվական, բարի, սիրող սրտով մարդ, բանաստեղծական հոգով։

«Ինչ որ կա իմ մեջ լավ բան՝ հորից է»,— ասում է նա։

Գնում ենք բարձրաբարձ Ս. Գրիգորի հոյակապ վանքը՝ տեսնելու մեր միջնադարյան ճարտարապետության մի փառավոր կոթող։

Գնում ենք լիճը տեսնելու, որ գսեղցիք, լոռեցուն հատուկ հիպերբոլով, ծով են կոչում։ Բարձրանում ենք մի զառիվեր, որտեղից սկսվում են Մարցի չքնաղ անտառները։

Օհաննեսի մանկության և խաղերի վայրերն են սրանք։

Ամեն կողմից դեպի երկինք են մխրճվում լեռնագագաթները. լանջերը՝ անտառապատ, բարձր ժայռերի վրա հսկա ծառեր կան, ավելի բարձր՝ արծվի բները։ Զորակներից ծուխ է բարձրանում. հովիվների բինաներն են, ուր ապրում են ածդահա սաքոները։

Օհաննեսը ցույց է տալիս լեռները. ահա Զաթինդաղը, որի գլխին մշտապես հավաքվում են մթին ամպեր, և ամեն օր որոտ ու կայծակ կա։ Ահա՛ Քոշաքարա սարը, որը լիքն է եղնիկներով, որոնց ետևից մանուկ Օհաննեսը վազել է օրերբուն։

Գյուղի շուրջը բաղկատարած շառաչում են «կանաչ վիթխարի ընկուզենիները». և արդյոք որի՞ տակ Օհաննեսն օրհնություն ստացավ գյուղի մեծերից։

Ձիեր նստած թափառում ենք Լոռվա գյուղերը։ Գնացինք Օձուն, Սանահին, Հաղպատ և այլուր։

Շրջեցինք գրեթե Լոռվա մեծ մասը։

«Մի գրողի ճանաչելու համար պետք է լինել նրա հայրենիքում»,— այսպիսի մի միտք է հայտնել Գյոթեն։

Լոռին նահապետական մի ինքնամփոփ աշխարհ է, հեքիաթի, առասպելի մի վիպաշխարհ, դյուցազնական աշխարհ. նրա ամեն մի անկյունը՝ ավանդավեպ, ամեն մի քարը՝ խոսող հերոսական անցյալից։

Ահեղագոչ Դեբեդ (Դե-բեդ) գետի հին կամուրջի վրա ահա նստած է մի գուսան՝ մի աշուղ և պատմում է ու սազերգում դևերի և մարդկանց միջև եղած հին կռիվների, նաև ժողովրդի ծոցից դուրս պոռթկած կորիճ ըմբոստների նոր կռիվները հարստահարող թափադների դեմ, կառավարության բռնակալ և կեղեքող պաշտոնյաների դեմ։

Օհաննեսը գուսանի բերանից առնում է խոսքը և ոգևորված պատմում է ինձ Զոփուռի տղոց պատմությունը։ 80-ական թվականներին հարստահարող կալվածատերերի դեմ ըմբոստանում է Զոփուռենց տղոց մեծ եղբայրը՝ Սողոմոնը, սպանում է թավադին և երեք եղբայրների հետ դաշտ է ընկնում սարերը։ Նրանց միանում են ուրիշ դժգոհներ, կորիճներ։ Տարիներով ցարի կառավարությունն իր ստրաժնիկներով, կազակներով չի կարողանում նրանց բռնել։

Օհաննեսը պատանի հասակից տենչացել է դրել մի պոեմ՝ նրանց հերոսական կռիվների մասին. «Հառաչանք» պոեմի զարմանալի գեղեցիկ հատվածն այդ չիրականացված պոեմի թանկագին մնացորդն է։

Քաջությունը, իգիթությունը լոռեցու հատկություններն են։ Օհաննեսի նախահայր պապը Լոռվա ձորերի և անտառների նահապետ քաջ Հովակիմն է՝ Մեհրաբյան-Թումանյան Հովակիմը, որի մասին հոմերական ոճով գրում է խաչատուր Աբովյանը։

Մի հսկա, ժայռեղեն տղամարդ, որը պաշտպանում է Լոռին անթիվ հաղթանակող կռիվների մեջ, լեզգիների և ղզլբաշների ավարառու, ավերող արշավախմբերից։

Ինքը՝ Օհաննեսը, քաջ մարդ էր, լավ հրացանաձիգ, որսկան։

Երբ շրջում էինք գյուղերում, բոլոր գյուղացիք ճանաչում էին Օհաննեսին և խորին հարգանքով վերաբերվում դեպի նա։ Օհաննեսը գրեթե ճանաչում էր բոլորին, մանավանդ տարեց լոռեցիներին, զրույց էր անում նրանց հետ, կատակում Լոռվա համով-հոտով բարբառով։

Գիտեր նրանց շատերի կենսագրությունից դեպքեր, ծիծաղաշարժ անցքեր նրանց հովվական կյանքից, արջերի հետ ունեցած նրանց գոտեմարտությունից։

Լոռում Օհաննեսն իր տարերքի մեջ էր։ Այս հոյակապ բնության մեջ, այս՝ ավանդույթներով, առասպելներով, հիշատակներով լի չքնաղ սարերում ու ձորերում նա բազմապատկվել էր կյանքով, ապրում էր ամեն մի քարն ու քոլը, ճանաչում էր ամեն մի խորշը, անտառը, աղբյուրը, որոնց հետ նվիրական հուշերով կապված էր իր մանկությունն ու պատանեկությունը։ Նա դիտեր նրանց մասին անթիվ զրույցներ, դեպքեր, դրվագներ և գիտեր բովանդակ Լոռվա հինավուրց և նոր պատմությունը բոլոր մանրամասներով։

Օհաննեսը ցույց տվեց բարձրաբերձ, վիթխարի ժայռերի մեջ այն բարայրները, որտեղից վերջին տարիներս հայ հին ձեռագրեր հանեցին։ Այդ ձեռագրերը մեր պապերը թուրքերի ավերումներից փրկելու համար թաքցրել էին անմատույց այրերի մեջ։

Դյուցազնական-նահատակական Լոռին իր շքեղ բնությունով, իր ավանդներով ու սովորույթներով, նրա հինավուրց ժողովուրդն իր կենսահայացքով, իր ցավերով, նաև իր պայքարով՝ աղատության և երջանկության համար, եղան Օհաննեսի ներշնչարանը։ Այստեղից է հոսում դալիս Օհաննեսի ստեղծագործության անսահմանափակ ժողովրդայնությունը։

Օհաննեսի լեղուն, ոճը, պայծառությունն այս չքնաղ երկրի անհուն, դարավոր ֆոլկլորից է։

Օհաննեսն իր բոլոր հոգով, իր հոգու բոլոր կրքով ու կրակով սիրում էր Լոռին։

Այս հոգը սերը բոցավառեց, թևավորեց նրա երևակայությունը, գեղեցկացրեց նրա ստեղծագործությունները։ Իր հրաշագեղ հայրենիքն իր աշխատող ու պայքարող ժողովրդով բանաստեղծորեն վերակառուցվեց նրա անմահ գործերի մեջ։

Ինչպես ասացի, Լոռին Օհաննեսի անհուն ներշնչարանն էր, ինչպես մեծահոչակ բանաստեղծ Միստրալի համար էր՝ խաղողի և ձիթենու այգիներով, հուսի և հնագույն հիշատակներով հարուստ իր Պրովանսը, որը նրա շքեղ «Միրեյ» պոեմի մեջ, պրովանսական «Անուշի» մեջ մարմնացավ և անմահացավ։

Եվ միայն այս ճանապարհով է, ժողովրդային արվեստի ճանապարհով, որ անձուկ հայրենիքների և փոքր ժողովուրդների բուսահողից ծնված բանաստեղծները դառնում են համամարդկային մեծություններ, ինչպիսին են Միստրալը և Թումանյանը։

Եվ ինչպե՞ս Թումանյանը ներդաշնակվում էր Լոռվա պեյզաժին՝ բնանկարին, նրա մարմնից մարմին առած, նրա հոգուց հոգի առած։ Կարծես Իրանի բանաստեղծ Հաֆեզն էր մտորում Շիրազի վարդաստաններում կամ Պուշկինն էր թափառում Ռուսաստանի բազմաշառաչ անտառների և ծավալուն գետերի հեղեղներով։

Նա Լոռին սիրում էր այնպես, ինչպես սիրահար, ռոմանտիկ պատանին սիրում է իր երազների կույսին։ Ո՛չ մի ձեռք չպիտի դիպչի նրան։ Ո՛չ մի օտար շունչ, ոչի՛նչ չպիտի աղարտի նրա նվիրական կուսական գեղեցկությունը։

Եվ Օհաննեսը Ջոն Ռեոսկինի պես տխրում էր, որ երկաթուղի է անցնում չքնաղ Ալպերի վրայով, Լոռվա ձորերով, կուսական անտառներով, որ տեխնիկան ոչնչացնում է նախակերտ բնությունը, ոչնչացնում է եղնիկներին, թռչուններին, հովվերգությունը, լռությունը, խորհրդավորությունը...

Օհաննեսի մշտական երազն էր Դսեղում կամ Լոռվա մի նկարչագեղ վայրում շինել մի վիլլա, դրադարանը տեղափոխել այնտեղ և բնական ու հոգեկան իր միջավայրում պարապել և ավարտել «Հաղարան բլբուլը», «Սասունցի Դավիթ» շարունակությունը։

Մենք թափառելիս կես-լուրջ, կես-կատակ վիլլայի համար պատշաճ վայր էինք փնտրում։

Թումանյանի այս տենչը չիրականացավ քաղաքական հեղհեղուկ վիճակի և այլ պարագաների պատճառով։

1908 թվի դեկտեմբեր ամսին, ցարական ժանդարմերիան Օհաննեսին և ինձ ձերբակալեց և, զանազան հանցագործական մեղադրանքով, վեց ամիս պահեց Թիֆլիսի Մետեխի բանտում։ Կամերաներով դրացի էինք իրար։ Բանտում լրացավ, փետրվար ամսին, Օհաննեսի 40-ամյակը։ Այդ առիթով նա գրեց «Վայրէջք» գեղեցիկ բանաստեղծությունը։ Մենք տխրության ու ուրախության խառն զգացմունքով առնչվեցինք նրա տարեդարձը։ Բանտում նա գրեց նաև հրաշալի «Մի կաթիլ մեղր» տաղը։

1911 թվին, ամռանը ես ստիպված եղա փախչել արտասահման՝ ցարական հետապնդումներից ազատվելու համար։ Թիֆլիսից դուրս եկա հունիսի վերջին, Զաղարոս Աղայանի թաղման օրը։ Թաղումից հետո Թումանյանի հետ գնացինք իրենց մոտ։

Տխուր, սգավոր օր էր։ Հավիտյան զրկվեցինք մեր սիրելի նահապետից, ես էլ սիտի թողնեի հայրենիքս, և, թերևս, անդարձ։ Աննկարագրելի են այդ հրաժեշտի ծանր վայրկյանները։

Արդեն ուշ գիշեր էր։

Վերջին անգամ մենք գրկեցինք իրար. երկուսս էլ լուռ էինք. ո՛չ մի խոսք։

Այս եղավ մեր վերջին տեսակցությունը...

Թումանյանը էլանրով բռնկված մարդ էր, մեծ տեմպերամենտի տեր։ Նրա էությունն ամբողջովին բաղձանք էր, տենչանք, ցանկություն։ Նրա սիրաը անհուշտ էր և անհագ, ուզում էր ամեն բան ունենալ, ամեն բանի հասնել, ամեն տեղ լինել։ Ուզում էր և գրել, և հասարակական ու քաղաքական գործիչ լինել, այն էլ, առաջին կարգի։ Ամփոփվելու ժամեր

չուներ, միշտ խոնված էր վնճերի, ժողովների, քեֆերի մեջ։ Հասարակությունը ջաղում էր նրան դեպի իրեն, և ինքն էլ ձգտում էր դեպի նա, և բոլորվում էր նրա շուրջը։ Հասարակության զարդն էր նա, խնջույքների, հրավերների հոգին, շողշողուն ջահը։ Ամենուրեք թամադա էր նա՝ անգերազանցելի թամադա։ Ամենից հարգված, ամենից սիրված էր նա։ Ով որ նրան մի անգամ տեսներ, կուզեր շարունակ տեսնել։ Նրա հետ լինելը, նրա զրույցները, կատակները, սրախոսությունները լսելը գերագույն հաճույք էր։ Ուր որ գնար, զվարճությունը հետն էր տանում. նրա հետ եղողը մոռանում էր, թե աշխարհում վիշտ ու ցավ գոյություն ունի։

Նա հարբեցնում էր խնջույքներին ո՛չ թե գինով, այլ իր հումորով, իր կախարդիչ լեզվով, մտքի, խոսքի, ճաշակի հմայիչ գյուտերով։ Թվում էր, թե Օհաննեսը իրեն բախտավոր պիտի զդար՝ ունենալով հասարակության հարգանքը, կանանց սերը, գրասեր երիտասարդության պաշտամունքը և փառք ու համբավ։ Սակայն դժգոհ էր նա իրենից, իր վարած կյանքից։ Նա ուզում էր գրել, ստեղծագործել էր ուզում նա։ Ինչ որ տվել էր, համարում էր թույլ, թերի նախափորձ՝ ո՛չ իրեն հոգին բովանդակ արտահայտող։ Ուզում էր գրել «Հազարան բլբուլ», ուր պիտի զեղեր իր էությունը։ Արևելքի «Ֆաուստը» պետք է լիներ նա։ Ուզում էր գրել «Արտավազդ» անունով մի դրամա՝ հայոց միֆական անցյալից, շեքսպիրյան համարձակությամբ։ Ուզում էր գրել Սասմա ծռեր՝ ամբողջ էպոսը՝ Հոմերոսի կամ Ֆիրդուսու պես։ Նա համոզված էր իր ուժերի կարողության մեջ։ Բայց դրելու համար ժամանակ էր պետք, իսկ նա ժամանակ չուներ և, արդեն ժամանակի մասին զաղափար էլ չուներ։ Ժամացույց չէր սիրում և չէր ուզում գործածել։ Չէր սիրում չափված ժամանակով շարժվել։ Երեխայի պես հավերժական ինքնազգացում ուներ և, ներկան միշտ ներկա, իսկ ինքը շռայլում էր թանկ ժամանակը և նրա հետ ավյո՛ն, եռա՛նդ, թա՛փ ու կորո՛վ։

Ամենայն ճշտությամբ Հովհ. Թումանյանը կարող էր ասել Օսկար Ուայլդի պես. «Ես իմ տաղանդը գործ դրի գրականության մեջ, իսկ հանճարս շռայլեցի կյանքի մեջ»։

Շատ տարիներ հետո, տասնվեց տարի անց, երբ արտասահմանից վերադարձա հայրենիք, ավա՜ղ, չկար Օհաննեսը։ Հազար կյանքով ապրող այդ հոյակապ մարդու փոխարեն տեսա մի անշուք հողակույտ և մի մեծ լռություն...

1948 թ.

ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՄԱՀ ՀԻՇԱՏԱԿԻՆ

(Ծննդյան 80-ամյակին)

Կոմիտասը ինձ ժամանակակից մարդ էր. «Եղբայր Սողոմոնը», ինչպես կոչում էինք նրան Գևորգյան ճեմարանում. տարիներ ապրել ենք նույն հարկի տակ, խոսել, կատակել։ Ճամփորդել ենք միասին հայ գյուղերն ու ուխտատեղիները (Սևան, Հառիճ), ուր նա երգեր էր հավաքում։ Եղել ենք միասին Եվրոպայում, Սամբոլում. բայց այս ամենը թվում է ինձ ո՛չ իրական։ Կոմիտասը ինձ համար հիմա լեգենդ է, հեռավոր առասպել, և նրա կյանքն ու փառապանծ գործը մի չքնաղ հրաշապատում։

Կոմիտասը մեր ժողովրդի հպարտությունն է. նրա գործը՝ մեր ազգային անսպառ հարստությունը։

Ինչո՞վ է արժանացել նա մեր ժողովրդի այս բարձր գնահատանքին։ Նա ո՛չ օպերաներ է գրել, ո՛չ օրատորիաներ, թեև մի քանի արիաներ կամ ռոմանսներ միայն։ Բայց ավելի մեծ գործ է կատարել, քան այդ բոլորը։ Նա հայտնագործել է մեր ազգային երգը, հայկական երաժշտությունը, ազգային մելոսը՝ ինքնուրույն, ինքնատիպ և անաղարտ։ Նա հիմն է դրել ազգային երաժշտական կուլտուրայի։

Մարդիկ կային, հայեր և օտարներ, որոնք պնդում էին, թե հայ ժողովուրդը ազգային երաժշտություն չունի, թե նրա երգը նմանողություն է եվրոպականին, թրքականին, քրդականին...

Կոմիտասը անխոնջ աշխատասիրությամբ, իր հանճարի ուժով, իր զարմանալի ինտուիցիայի շնորհիվ, նաև իր տհասական լուրջ պատրաստությամբ ապացուցեց հակառակը, ապացուցեց հայ երաժշտության ինքնուրույն գոյությունը՝ քխած հայ ժողովրդի հոգուց և դարերի միջով մեզ հասած։ Նա դիմեց հայ երգի ակունքին՝ հայ շինականի, գեղջուկի, աշխատավորի երգին։ Արարատյան դաշտի, Շիրակի, Վանի, Մուշի ժողովրդական երգերին։ Նա ուզեց հայկական երկրի բնության մեջ, հայ գեղջուկի շրթունքներից լսել հայ եղանակներն ու երգի խոսքերը։

Նա խառնվեց այդ երգերը ստեղծող ժողովրդի հետ, ներծուլվեց նրա հետ. ներթափանցեց նրա երգերը և սրտով հասկացավ, որ հայ երգի ոճը թաքնված է ժողովրդի այդ երգերի մեջ, միայն պետք է մաքրել այդ երգերը օտարամուտ ժանգից ու անտեղի զարդերից, որոնք աղարտել էին

հայ երգը։ Եվ ցույց տվեց աշխարհին մեր ազգային երգը՝ մաքրված, ինքնուրույն և անաղարտ։

Կուլտուրական ժողովուրդները՝ ռուսները, ֆրանսիացիները, իտալացիները ընդունեցին հայ երաժշտության ինքնուրույնությունը և հիացմունքով տեսան մի նոր գեղեցկություն, մի նոր երգ, մի նոր համամարդկային հարստություն։ Աչքովքով մեր շինականի երգերը՝ աշխատանքի, բնության, սիրո, ուրախության և տխրության՝ նա բյուրեղացրեց, բարձրացրեց և որպես ազգային մնայուն գանձ դրեց մեր Ժողովրդի հոյակապ գանձերի՝ հարստության և Սասունի էպոսի կողքին։

Հիշում եմ մի գեղեցիկ օր։ Էջմիածնում հյուր էի Կոմիտասի մոտ. նստել էինք նրա փոքրիկ պարտեզում, սավերաշատ տանձենու տակ։ Կոմիտասը նոր էր գալիս «Մոկաց Միրզան» և մշակել էր այդ էպիկական հուժկու երգը։ Շատ ոգևորված և երջանիկ էր զգում իրեն այդ գյուտով։ Կատարեց ինձ մոտ արվեստի բացարձակ կատարելությամբ։ Անկարելի է նկարագրել այդ։ Ես հիացած էի և նույնպես երջանկացած։ Դեռ մինչև այսօր ես հոգուս մեջ տեսնում եմ ոգևորված Կոմիտասին և լսում նրա սրտաբուխ ձայնը։ Կոմիտասը հրապուրել, հմայել էր ինձ։

— Այս երգը շատ հին է,— ասաց նա,— հեթանոսական դարերից։ Թերևս։ Տե՛ս, ի՞նչ հզոր ձայներ կան, ի՞նչ խրոխտ շեշտեր։ Մեր բարձր լեռներից, շառաչուն ջրերից, խոժոռ ժայռերից են ծագում առել։ Մեր քաջ նահատակների հոգուց է բխել այս առնական երգը։ Այնքա՞ն հին է նա, որ անշուշտ Ջնոով Ծոնանը երգել է, Սասունցի Դավիթը լսել...

Եվ ուրախությունից փայլում էին նրա աչքերը։ Մեր գյուղական ժողովրդից վերցրած երգը Կոմիտասը բյուրեղացրած վերադարձրեց նրան։ Այդ երգը եկավ քաղաք, բարձրացավ բեմերի վրա, հաղթական հնչեց բոլոր հանդիսաներում։

Ուր որ հայ կա, այնտեղ է և Կոմիտասի երգը։ Կոմիտասը համազգային մնայուն է։ Նրա երգով մեր ժողովուրդը ավելի պիտակցաբար զգաց իրեն, ավելի կապվեց իրար հետ, ինքնաճանաչեց։ Հայ հասարակությունը զգաց աշխատավոր ժողովրդի վիշտն ու հրճվանքը, նրա աշխատանքի պաֆոսը, նրա սերը դեպի իր հայրենի բնությունը։

Կոմիտասը հայ երգով լույս աշխարհ հանեց դարերի խավարի մեջ կեղեքված ժողովրդի խուլ բողոքն ու ցասումը բռնության, սարկության դեմ. նրա խեղդված վիշտը, իրավազուրկ կյանքը և պայծառ ապագայի հանդեպ տածած հավատը։

Կոմիտասը զոհն եղավ թուրք պետության բարբարոսության. նա տեսավ հայ ժողովրդի՝ կանանց, երեխաների, ծերերի, աշխատավորների և մտավորականների երթը դեպի մահ, դեպի գերեզման։ Բոլորը, բոլորը

անցան նրա մեջ, խորազգաց սրտի միջով, և նա խորտակվեց, ջախջախվեց։

Անհունորեն մեծ է մեր վիշտը, մեր կորուստը. ինչքա՞ն գանձեր նա տարավ իր հետ... Նա կարող էր այսօր մեզ հետ լինել, մեր ազատագրված հայրենիքում, ուր ինչքա՞ն գործ ուներ կատարելու. ի՞նչ հրճվանքով պիտի տեսներ մեր երաժշտական նոր սերնդին, որը Կոմիտասի պաշտամունքն ունի։

Սիրելի՛ Կոմիտաս, այսօր և միշտ դու մեզ հետ ես քո շքեղ երգերով, քո բարձր արվեստով, պատմական սխրալի գործով։ Դու անմահ ես. ինչքան ժամանակ, որ հայ ժողովուրդը կապրի, կապրի՛ և քո երգը։ Բայց դու հոգնել ես շատ, սիրելի Կոմիտաս, տառապել ես շատ, զարհուրանքներ ես կրել, վայրագ թշնամու սուրն ես տեսել, հանգստացիր հիմա, մայրենի հարազատ հողի զրկումն ես հիմա։ Քո սիրելի Արարատյան դաշտի բուրումնալից երգը ծավալվում է քո շուրջը, քո երգերը ծփում են քո վրա, քո երգերի հետ ծփում են աշխատանքի և ազատության նոր, հաղթական կորովի երգեր...

Հանգչի՛ր խաղաղ, սիրելի՛, նվիրակա՛ն Կոմիտաս...

1949

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆՅԱՆ

Թորոս Թորամանյանի հետ ծանոթացա բանասեր Կարապետ Բասմաջյանի միջոցով Ալեքսանդրապոլում (Լենինական) 1903 թ. աշնանը։ Նրանք նույն այդ թվականին էին եկել արտասահմանից և ամռանը միասին անցկացրել էին Անի քաղաքում՝ հետազոտությունների համար։

Կ. Բասմաջյանը մեծ գովեստով խոսեց ճարտարապետ Թորամանյանի գիտության և կարողությունների մասին ու խնդրեց ինձ և ընկերներիս, որ աջակցենք նրան, ինչքան կարող ենք։

Քաշված, անշուք ու լուռ մարդու տպավորություն թողեց ճարտարապետը ինձ վրա։

Այս առաջին հանդիպումից հետո, կարծես նա անհայտացավ, մենք էլ մոռանալու վրա էինք նրան, երբ նույն տարվա ձմեռը, պատահաբար, հանդիպեցի նրան։ Ես Վաղարշապատ էի գնում, նա ևս։ Միևնույն վագոնում, լուսամուտի առաջ, նստեցինք դիմադեմ և սկսեցինք զրույց անել։ Ես հարցրի առաջիկա տարվա ծրագրերի մասին։

«Անի քաղաքում պիտի աշխատեմ, նպատակս այդ է...»։

Հանկարծ ընդհատվեց զրույցը։ Զյունի ճերմակ դաշտերի վրա, ձմեռվա պարզ, կապույտ երկնքի տակ, ցերեկվա պայծառության մեջ ձգվեց Անիի կարմրավուն պարիսպների կախարդիչ կարավանը, որ շարժվում էր, բայրում և մոտենում էր մեզ ավելի ու ավելի... բայց երկաթուղին վազեց, անցավ, Անին սուզվեց բլուրների ետև...

— Այո,— շարունակեց Թորամանյանը,— երկար տարիներ պիտի աշխատեմ այստեղ, ողջ կյանքիս ընթացքում. սակայն մի կյանքն էլ կարճ է Անիի անսահման գանձերն ուսումնասիրելու համար։

Ապա ոգեորված խոսեց իր ծրագրերի մասին — մեծ, ստեղծագործ ծրագրեր,— մի նոր աշխարհ բանալ մեր արվեստի պատմության մեջ, պանծացնել մեր հոյակապ ճարտարապետությունը։

Ես խանդավառված լսում էի նրան, հոգեփոխվեց նա աչքիս և շատ արժեքավորվեց։

Թ. Թորամանյանը ձմեռները գրեթե միշտ ապրում էր Ալեքսանդրում։ Այնտեղ դասավորում էր իր հավաքած նյութերը. գրում էր իր ուսումնասիրությունները՝ նրանցից ծագած արդյունքների, եզրակացությունների մասին։

Ալեքսանդրում թեև անտեսում էին նրան հարուստ շրջանները, սակայն մտավորականները հարգում էին նրան, մանավանդ նա շատ սիրված ու գնահատված էր քաղաքի արհեստավորներից, մասնավորապես, որմնադիր վարպետներից, որոնց հոշակը շատ տարածված էր Անդրկովկասում։

Հաճախ տեսնում էի նրան ժողովրդական սրճարաններում համբավավոր վարպետների հետ զրույցի մեջ՝ շինարարական արվեստի վերաբերյալ։

Եվ պիտի ասեմ, որ մեծագույն ճարտարապետը իր դիրքով ու շարժուձևով գրեթե չէր տարբերվում ուսում չառած, այսպես ասած, տնաբույս, ավանդապահ վարպետներից՝ մաղոտ երես, անխնամ հագուստ, գունավոր մեծ թաշկինակ, ծխախոտի ժողովրդական տուփ ու սարք...

Մեր վարպետները իրոքին հարգանքով տեղ էին տալիս նրան՝ վերի գլուխը սրճարաններում և իրենց հարկերի տակ և ճարտարապետ էին կոչում նրան։

«Ճարտարապետան եկավ»։

«Ճարտարապետ, ի՞նչ կուզես»։

«Ճարտարապետին սուրճ բերեք»։

Կային մարդիկ, որ չգիտեին նրա իսկական անունը։ Իր կոչումի անունով էին ճանաչում նրան։

Իսկ Անիի և ուրիշ ավերակների մոտ և հեռու գյուղերում կարծում էին, թե «ճարտարապետ» հատուկ անուն է։

Եղել են դեպքեր, որ գյուղերում նորածինների անունը ճարտարապետ են դրել։

Ճարտարապետը,— ես էլ բազմության պես, յուրացրել էի այս անը,— 1903 և 1905—6 թվականներից սկսած աշխատում էի Անիի մեջ և շրջակայքում, Կամսարականների Շիրակում՝ Մաղասաբերդ, Հոռոմոսի վանք, Տեկոր, Մրեն, Բագնայր, Բագրան...

Այդ թվականները և մանավանդ հաջորդող տարիները Անիի պեղումների և հուշարձանների հետազոտման հերոսական շրջանն էր, որ բացել էր ակադեմիկոս Մառը իր ռուս և հայ աշակերտներով, որոնց մեջ էր հետագայի մեր տաղանդավոր ակադեմիկոս Հովսեփ Աբգարի Օրբելին։

Ես հաճախ այցելում էի Անիին, համարյա ամեն տարի, երբեմն տարին մի երկու անգամ։

Ճարտարապետը շատ էր սիրում լավ որակի սուրճ և ծխախոտ, ինչպես և Անիի վանահայր սքանչելի Միքայել վարդապետը։

Սրբազան պարտականություն է, որ գոնե մի-երկու խոսքով պատմության համար արձանագրենք Անիի ավերակների այս անձնվեր պահապանի անունը, որ սրտագին սիրում էր ճարտարապետին, նրա հետ կիսում իր հացը, խնամում, հոգում էր նրա կարիքները։ Երախտապարտ ենք այս անհայտ, մեծահոգի մարդու հանդեպ։

Պայման էինք կապել մեր միջև, որ ես ճարտարապետին և վարդապետին սուրճ և ծխախոտ տանեմ, իսկ նրանք կերակրեն ինձ Անիում եղած ժամանակ։

Անմոռանալի գեղեցիկ պահեր եմ ապրել նրանց հետ չքնաղ Անիի մեջ։

Մի տարի այնտեղ էր տաղանդավոր դերասան, մեր սիրելի Վրույրը, որ լուսանկարում էր մայրաքաղաքիս հուշարձանները։

Երեքով միասին էինք շարունակ թափառումների, դեգերումների բոլոր ժամանակ։

Երկուսն էլ չափազանց հաճելի ընկերներ էին՝ զվարթ, սրամիտ, կատակասեր։

Մի շաբաթաշափ մնում էի նրանց հետ և ցավով բաժանվում էի խոսք տալով նորից գալու, և կատարում էի խոստումս։ Այնքան քաղցր էր նրանց ընկերակցությունը՝ նրանց գործերի հմայիչ մթնոլորտի մեջ։

Երբ լինում էի Անի, վաղ առավոտից սկսած մինչև կեսօր նրանց հետ այրվում էի բարի արևի տակ, օգնում էի նրանց գործիքները տանելիս, սարքելիս և ուրիշ բաների մեջ։ Կեսօրին դառնում էինք տուն ճաշելու։ Միքայել վարդապետը պատրաստել էր ճաշը, սեղանը բացել և սպասում էր մեզ։ Հանգչում էինք ճաշից հետո և նորից գործի անցնում։

Իսկ երեկոները մինչև ուշ գիշեր նստում էինք բացօթյա, ծխում, սուրճ խմում և անվերջ զրույց անում։

Երբեմն լինում էինք ակադեմիկոս Մառի մոտ, երբ նա հանգստանում էր ամբողջ օրվա աշխատանքից հետո և սիրով զրույց էր անում մեզ հետ։

Մի օր Ճարտարապետը չափում ու գծում էր Անիի ծիրի մեջ գտնվող «Հովվի» փոքրիկ եկեղեցին, իսկ Վրույրը լուսանկարում էր։

— Այս եկեղեցին պստիկ մի գոհար է. նմանը չունի, բայց դժբախտաբար շատ է խարխլված և իսպառ կործանվելու վրա է,— թախծով ասաց Ճարտարապետը,— արդյոք չե՞ս կարող Ալեքպոլում մի հանձնաժողով կազմել, դրամ հավաքել, որով կարելի լինի որոշ տեղեր կարկատել, նեցուկներ դնել, որ չմեռնի։ Ափսոս է. ի՞նչ ես ասում. մի լավ մտածիր։ Շատ փող պետք չէ։

Նյա ամենից քաղցր ձայնով ասած այս խոսքը բնավ մտածել չտվեց ինձ։ Խոսք տվի կատարել սիրելի բարեկամիս փափագը։ Եվ Ալեքպոլում քաղաքացիներ Նիկողայոս Կարապետյանի և Վաղարշակ Ստեփանյանի հետ իսկույն հավաքեցինք մոտ 1000 ռուբլի։ Սա հեքիաթային նվեր եղավ Ճարտարապետի համար, որ անմիջապես գործադրեց պստիկ գոհարի պահպանման նպատակին։

Եռացի, որ երեկոները ցրույց էինք անում. բնականաբար, մեծ մասով զրույցը Անիի պատմության և հայ ճարտարապետության մասին էր լինում։

Անհուն հմտություն ուներ նա ազգերի կառուցողական արվեստի մասին. համեմատում էր զանազան ոճեր իրար հետ և դուրս բերում ոճերի ծագումները, բնաջնջումները, փոխադարձ ազդեցությունները։ Ալցեկած, ուսումնասիրած լինելով մեր կոթողները և հուշարձանները բազմաթիվ վայրերում՝ նա սպառիչ կերպով խորամուխ էր եղել մեր նախնիքների շինարարական արվեստի էության մեջ։ Նա ընդհուպ մոտեցել էր հայ արվեստի արմատներին, որ գտնվում են հայկական բնաշխարհում. նա պեղել, փորփրել էր, հետազոտել էր հնագույն արմատները, որոնցով սնվել և բարձրացել է հայ մեծ արվեստի շենքը։ Այսպիսով մեր արվեստի միստիկան, նրա մթամած խորհուրդները մերկացած էին նրա պրպտող, թափանցող իմացականության առաջ։

Մեր բնաշխարհի ավեր կամ կիսավեր շենքերը շոշափել էր նա, չափել, գծել, համեմատել, համադրել։ Եվ գտել, գտել, բյուրեղացրել էր հայկականը, ինքնահատուկը, ազգայինը, հայ անհատականը։ Եվ տիրապես կոնքիստել էր իր հոյակապ տեսությունը հայ արվեստի նկատմամբ։ Շատ կարդացված և լավ մարսված գրքի պես գոց գիտեր նա մեր արվեստի բոլոր էջերը, նույնիսկ տառերը, շենքերի սյուները, պատվանդանները, խոյակները, կամարների և գմբեթների ձևերը, քանդակները, զարդանկարները և ամեն մի բեկորը։

Եվ ամենը տեղին ու անթերի։

Իսկ Անի՞ն... Անին նրա համար ապրող, շնչող իրականություն էր։ Անիի անցյալը նրա աչքում կենդանի ներկա էր. նա տեսնում էր անցած իրերը, դեպքերը, պատկերները։ Լսում էր անցյալի ձայնը, զգում էր անցյալը։

Անիում նրա համար մեռած կամ կիսամեռ կամ փլատակ բան չկար։ Բոլորը պարիսպներով, տաճարներով, բուրգերով, աշտարակներով, բոլորը նրա առաջ լրիվ կանգուն էին՝ անթերի և կատարյալ, որովհետև բոլորը նա վերակառուցել էր արվեստագետի իր հրաշագործ և ճշգրիտ երևակայության մեջ։ Կարծես նա աչքով տեսել էր այս հոյակապ շենքերը կառուցող վարպետներին, խոսել էր նրանց հետ, աշակերտել էր, միասին աշխատել, և այսպիսով որսացել էր նրանց վարպետության գաղտնիքները։ Ականատեսը և գործակիցը միայն կարող էր լրիվ այսքան գիտենալ։

Եթե չեմ մոռացել, նա գիտեր, բացի Տրդատ հանճարեղ Ճարտարապետից, նաև մյուս վարպետների անունները և նրանց սիմվոլները։

Եթե Ճարտարապետությունը քարացած երաժշտություն է, ապա Թորոս Ճարտարապետը այդ քարացածը վերածել էր կենդանի երգի։ Նա մեր հոյակապ ավերակների և հուշարձանների նույնքան հոյակապ երգիչն է։

Հիշում եմ մի անմոռանալի նվիրական պահ։ Ուշ երեկո է, հայկական բարձրավանդակի օգոստոսյան անբացատրելի պայծառ գիշեր, լիալուսին, իսկական լուսին՝ արծաթ ու բյուրեղ։ Նստել էինք Մայր եկեղեցու հանդեպ, քարե մի սեղանի առաջ։ Արջո-Առինջ լեռներից (Ալաճա) հոսում է մի զով, մեղմ, կաղգուրիչ հով՝ Շիրակի դաշտերի հոտավետ չոր խոտերի, ծեթրոնի և վայրի ծաղիկների բույրը հետը բերելով։ Շնկշընկում է հովը ավերակների մեջ, փսփսում է, խոսում է սրտիդ հետ։ Հովը չի խոսում, ոգիացած ավերակների հինավուրց քարերն են խոսում սրտիդ հետ՝ գաղափարացած, իմաստավորված քարերը, վսեմացած և հավերժական քարերը...

Ծխում ենք անվերջ և լուռ ենք քաղաքների մայր Անիի գիշերային լռության մեջ։ Սուզվել ենք մի երազային տրամադրության մեջ։

Անին արդեն ինքնին տրամադրություն է։

Շեն և աղմկալից աշխարհից կտրված, ամայության և լռության մեջ մեկուսացած, նա կախարդում է քեզ, գերում է, տիրապետում է հոգուդ և ողողում է քեզ մի հատուկ տրամադրությամբ։ Երբ խրոխտացող պարիսպներից ներս ես մտնում հնադարյան քաղաքը, առօրյա իրականությունը հեռանում է քեզնից և ոչնչանում, և տեղափոխվում ես վայրկենաբար անցյալի մեջ, հին տեսիլներին։

Ամեն մի այցելու իր պատմական գիտելիքների և երևակայության ուժի չափով սիրում է պատկերացնել վաղուցվա անցյալը, կենդանացնել նրան և ապրել նրա ապրած կյանքով։

Նայում եմ Մայր եկեղեցուն, որը լուսնի անորոշալին լույսի տակ ուրուր է դառել, գեղեցիկ, անծայր գեղեցիկ, աննյութացած, որ թվում է, թե ահա թռչելու է վերև, երկնքի անհունի մեջ. գնալու Պլատոնի դաղափարների՝ իդեաների աշխարհը, նստելու այնտեղ անմահ, հավիտյական, կատարյալ ձևերի, նախատիպերի կողքին, իր գահի վրա, որից իջել էր ներքև, հայոց երկրի վրա։

Ձեռքս մեկնելով տաճարին, ասում եմ.

— Գեղեցիկը ա՛յսքան կլինի, ճարտարապետ, սա մեր Պարթենոնն է։

— Ճշմարիտ է. միայն այն տարբերությամբ, որ Պարթենոնը մարմարիոնից է, իսկ մերը՝ հայկական համեստ տուֆ քարից։

Լռությունը խզվել էր ալդեն, և Թորոս ճարտարապետն իր թավ, անդորր և խորունկ ձայնով սկսեց խոսել մեր արվեստի մասին։

— Մեր արվեստը,— ասաց նա,— անդադար կերպով անտեսված է, բայց նա իր արժանավայել տեղը գրաված է, ուղղանա-շուղղանա, Եվրոպան իրենից դուրս կամ հզոր ազգերի արվեստից դուրս բան չի ճանաչում։ Հայն ի՞նչ է որ արվեստ ունենա... այսպես են մտածում նրանք։ Թող այդպես մտածեն, մենք մեր գործը կտեսնենք։

— Հայերը էն գլխից կառուցող են եղած։

Արարատն ու Մանու երկրները, որոնց միացումով թերևս սերել է Արմինի, Արմենի երկրանունը, լի են հոյակապ շինքերով, որոնց մնացորդները տեսնում ենք մենք Վան-Տոսպում, Սևանի ափերում և այլուր։

Հայերը այդ նախահայրերից ժառանգել են շինարարության արվեստը։ Քարաշատ Հայաստանը մեր ճարտարապետներին և վարպետներին տվել է անսպառ նյութ։ Մեր քարակոփները, մեր որմնադիրները իրենց ձեռքի տակ ունեցել են մի կերպընկալ, հլու միջոց՝ մեր հրաբխային քարերը, որոնց հետ խաղացել են մերոնք և ցանկացած ձևը տվել, կաղապարել նրանց։

Մեր ժողովուրդը այդ հլու, հնազանդ նյութի մեջ մարմնացրել է իր հոգին, բաղձանքները, երազները, ճաշակը...

Ինչպե՞ս է ստեղծվել մեր արվեստը։

Դա իր պատմությունն ունի, որ կարելի է պատմել հանգրվան առ հանգրվան, դար առ դար։ Մեր ժողովուրդը տակավին իր նախնական վիճակի մեջ ընդունել է նախահայրերից որոշ հիմքեր, խառնել է նրանց հետ իր տարերքից բխած նորություններ, կրել է նաև ազդեցություններ հարևաններից՝ պարսիկներից և Միջագետքից, յուրացրել է, շաղախել իր ունեցածի հետ՝ ավելացնելով նոր տարրեր, նոր գծայություններ։ Համաձայնեցրել է շինանյութերի հետ, կլիմայի հետ. ներդաշնակել է բնանկարի՝ պեյզաժի հետ և իր մտավոր, հոգևոր, կենցաղային պահանջների հետ։

Եվ, այսպիսով ստեղծվել է դարերի ջանքով և կուտակումով հայկական ոճը՝ ինքնուրույն կնիք, որ այլևս անբեկանելի է։

Անին հայկական մշակույթի հայելին է։ Լա՛վ նայիր Մայր եկեղեցուն, հայեցաբա՛ր նայիր. նա մեր ոճի ոգին է։ Տե՛ս, ինչքա՞ն վսեմ է, որովհետև պարզ է։ Պարզ է, որովհետև նա մաղվել է դարավոր մշակույթի միջից, զտվել, թոթափել է վրայից ավելորդ բաները, դառել է բյուրեղ։

Երբ նայում ես Մայր եկեղեցուն կամ Տեկորի, Երերույքի, Հռիփսիմեի տաճարներին, թվում է, թե լուսեղեն տեսիլքի մեջ տեսնում ես նրանց։ Ուրիշ ազգերի արվեստների գեղեցկությունը հուզիչ է, հաճախ գրգռող և խռովիչ, իսկ մեր արվեստի գեղեցկությունը անդորրող է, հանգստացնող, հայեցողության տանող։

Այս է հայ ճարտարապետական արվեստի էությունը, նրա փիլիսոփայությունը։

Երբ արդեն կատարյալ մարմին առավ մեր ոճը, սկսեց ճառագայթել։

Մեր քարքարոտ բարձրավանդակից իջան, տարածվեցին մեր արվեստի շնորհները դեպի Բալկանները, Բյուզանդիոն, Իտալիա, Գերմանիա, Ֆրանսիա։ Մեր գաղթական վարպետները, մեր թոնդրակեցի հալածական ճարտարները, արշավող ազգերը տարան այդ շնորհները, որոնք եղան ներշնչման, մտածման, նմանության, թելադրման և նորությունների ազդակներ բյուզանդական, գոթիկ, ռոմանական և նույնիսկ արաբական արվեստների համար։

Սա շատ ծանր խնդիր է, որ Եվրոպան դժվարությամբ պիտի ընդունե, իր պատվին չի կերցնե, անշուշտ, բայց իրողությունը պիտի հաղթանակե։

Մի բան պարզ է մեծամիտ Եվրոպայի համար, որ հայերի արվեստը բնավ կախված չէ եղել վերև հիշված արվեստներից, որովհետև նրանցից առաջ գոյություն է ունեցել։

Իմ ուսանելիությամբ ազդեցության հարցը երկրորդական է, բավական է, որ մեր արվեստը իր անժխտելի տեղն ունի ընդհանուր ազգերի ճարտարապետական արվեստի պատմության մեջ։

Սրանով ես հպարտ եմ և մխիթարված։

Թորոս ճարտարապետը այդպես վերջացրեց իր խոսքը։

Երբ ես հիացած նայեցի նրան, նա դեմքը հառել էր Մայր եկեղեցուն, կարծես, վերացած, լռության մեջ, հիմա էլ հոգով խոսում էր Մայր եկեղեցու հետ, հայոց ճարտարապետության ոգու հետ։

Եվ մտածում էի՝ ինչպե՞ս այն քաշված, անշուք Թորոս Թորամանյանը իր սխրալի գործով բոլոր ժամանակների հայ ժողովրդի համար դառավ Թորոս ճարտարապետ և մեծացավ, պատմականացավ, անմահացավ։

Երբ 1926 թվին Եվրոպայից վերադարձա հայրենիք, մոտ 15 տարի կար, որ ճարտարապետին չէի տեսել։ Ժամանակն իր դաժան գործը տեսել էր՝ ծերացել էր նա, սպիտակել, շատ պարարտացել էր և սիրտը հոգնել էր, բայց տրամադրությունը բարձր էր. նույն լավատես, տոկուն, համով, պարզասիրտ մարդն էր։

Նոր էր ապաքինվել ավտոյի մի ծանր արկածից, որից կրած սարսափի և ցավերի մասին պատմում էր ծիծաղով։ Շարունակ անդրադառնում էր իր ձեռագրերի, նկարների, գծագրությունների մի մասի անդառնալի կորուստի մասին, որ պատահել է թուրք բանակի Շիրակ և Ալեքսանդրապոլ ներխուժման ժամանակ։ Երբ հիշում էր այդ աղետը, դեմքը մթնում էր ցավագնորեն, հոնքերը ավելի էին թանձրանում աչքերի վրա, ուր արցունք էի տեսնում։

Արդեն ձեռնամուխ էր եղել իր հոյակապ գործին՝ «Նյութեր հայ ճարտարապետության», որի համար տառապել, նահատակվել էր նա իր ողջ կյանքում, մի մոնումենտալ գործ, ուր պիտի խտանային իր բոլոր հայտնությունները, մեր արվեստի վերաբերյալ իր պանծալի անսության հիմնավորումը։

Անսահման նյութ ուներ կուտակված քառասային վիճակի մեջ, որին պիտի հաղթահարեր այդ մեծ մոնումենտը կառուցելու համար։ Սարսափ էր պատում ինձ, երբ նայում էի թղթերի, նկարների, գծագրումների այդ հսկա դեզին, բայց նա հանդարտ և սիրով, համբերությամբ օրեցօր կարգի և ձևի էր դնում այդ քաոսը, միևնույն ժամանակ և միջոց էր գտնում նոր պեղումների մասնակցելու, նոր նյութեր կուտակելու։

Հիշում եմ, 1929 թվին ինչպիսի երիտասարդական ավյունով իր մտերիմ ընկեր, մեծագույն ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի հետ գնաց Երերույքի նշանավոր բազիլիկի որմերը ամրացնելու նախապատրաստական աշխատանքների համար՝ «Հայաստանի հնությունների պահպանման կոմիտեի» կողմից։

1930 թվին, գարնանը, վերստին արտասահման մեկնելիս «մնաք բարևի» գնացի ճարտարապետին, Վաղարշապատ։ Գիշերեցի մոտը։ Միասին գնացինք Զվարթնոց։ Ուզեցի թերևս վերջին անգամ տեսնել այս անկրկնելի գեղեցկությունը։

Երկար դիտեցինք Զվարթնոցի շուրջը։

Թորոս ճարտարապետը բացատրում էր հին ու հետագա պեղումների արդյունքների մասին։ Խոսում էր, խոսում և չէր հագենում, որովհետև նյութը Զվարթնոցն էր։

Ավա՜ղ, այս վերջին անգամն էր, որ տեսա նրան, եղա նրա հետ։

1934

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

Վահանի եղբայրներին՝ Ջավախեցուն և Արամին ճանաչում էի վաղուց և գիտեի, որ նրանք եղբայր ունեն Լաղարյան ճեմարանում, իսկ իրեն՝ Վահանին, առաջին անգամ տեսա Մոսկվայում, 1904 թ. մարտ ամսին։

Այցի էի գնացել Լաղարյան ճեմարան։ Ինձ շրջապատեցին մի քանի ուսանող-աշակերտներ, որոնց մեջն էր Վահանը։ Բոլորն ինձ հարցեր էին տալիս և հարցերիս պատասխանում։ Ցույց էին տալիս ճեմարանի սրահները, գրադարանը, դահլիճը և այլ անկյուններ, պատմում էին ճեմարանի հինավուրց ավանդություններից, մինչդեռ Վահանը լուռ ու անխոս հետևում էր մեկ՝ աչքը վրայիցս չհեռացնելով։ Երբ խոսք էի ուղղում նրան, կարմրում էր նա, շփոթվում։

Մնաք բարևին՝ Վահանը ձեռքս ամուր սեղմեց և շշնջաց. «Շատ ուրախ եմ, որ Ձեզ տեսա»։ Ես հրավիրեցի նրան ինձ մոտ։ Մի երկու օր հետո Վահանն իր ընկերոջ հետ մոտս եկավ։ Որքան ուղեկցող ընկերը սիրում էր շատախոսել, նույնքան նա լուռ էր կամ սակավախոս։ Առաջինը հետաքրքրվում էր Կովկասի քաղաքական կացությամբ, 1903 թվի հայոց եկեղեցական կալվածների գրավման հետևանքով ծագած կռիվներով, իսկ Վահանը հետաքրքրվում էր գրականությամբ, ինչ են գրում Ղ. Աղայանը, Շիրվանզադեն, Հ. Թումանյանը, Դ. Դեմիրճյանը և ուրիշները։

Երբ ես նայում էի նրան՝ հուզվում էր, գլուխը կախում։ Զգում էի,

որ հայերեն գրում է այս երկրում, վեհերոտ ուշային, և խուսափում էի նրա ուշքերին նայելուց։

Իմ հարցին, թե՝ արդյոք ուսանողությունը հետևում է հայ գրականությանը, Վահանը, կարծես, բոլոր ուսանողների կողմից, իբրև պատասխան, կարդալով արտասանեց իմ ոտանավորներից մի երկու նմուշ։

Հետաքրքրում ես իմացա, որ նրանք ճնմարտում կազմել էին աշակերտական մի փոքրիկ խմբակ հայ գրականությունը ճանաչելու նպատակով և, եթե չեմ սխալվում, հրատարակում էին աշակերտական մի գրական թերթ, ձեռագիր, որի խմբագիրը ինքը՝ Վահանն էր։

Հաջորդ տարին, 1905 թվին, ամռանը Ախալքալաքի գավառումն էի։ Թափառումներս ընթացքին հյուր եղա Վահանենց ընտանիքի մոտ, Գանձա գյուղում։ Կարծում եմ, որ մի շաբաթի չափ մնացի։ Վահանի հայրը քահանա էր, մի շատ տաքարյունակ և հետաքրքրասիրտ մարդ։ Բոլոր որդիները, մանավանդ Վահանը, ապշեցուցիչ նմանություն ունեին իրենց հորը՝ սև, ներքին հրով վառ աչքեր, սուր հայացք, թուխ մազեր, ջղային կազմվածք։ Ձնայելով բավական ծերացած էր տերտերը, բայց անհագ հարցասեր էր, մշտարթուն միտք։ Այդ օրերը Լ. Տոլստոյի ավետարանն էր համեմատում ավետարանիչների վարիանտների հետ, և զանազան աստվածաբանական-մետաֆիզիկական հարցերով շարչարում էր իր ուղեղը։

Վահանի մայրը վաղուց վախճանված էր, և տունը քույրն ու մեծ հարսն էին կառավարում։ Ընտանիքը հուզիչ գուրգուրանք ուներ Վահանի հանդեպ, որ տան կրտսերն էր, և Վանիկ էին էոչում նրան։ Ես էլ յուրացրի այդ անվանումը։ Վարդավառի կիրակին էր, մի պայծառ օր։ Գնացինք Գանձալից ոչ շատ հեռու ս. Հովհաննեսի մատուռը, որ ուխտատեղի էր։ Հինավուրց մատուռը կանգնած էր դալարագեղ մի բլուրի վրա, որի ոտների տակ ծփում էր Սաղամոյի կանաչ լճակը։

Շրջական գյուղերից ահագին բազմություն կար հավաքված։ Մի քանի ձեռք դավուլ-զուռնա կար, կային և աղուղներ՝ սազները կրծքներից կախ։ Որոտում էին դավուլ-զուռնաները և ուխտավորների խմբերը պարում էին մատուռի շուրջը։ Երիտասարդներ, պատանի աղաներ, աղջիկներ և հարսներ։ Շատերը ազնական համեստ զգեստներ էին հագել, ոմանք խեղճ, անշուք հագուստներով, բայց բոլորն էլ թռչում էին զվարթ ու խանդավառ։

Տարեց տղամարդիկ քեֆ էին անում. դեռևի վրա բացել էին իրենց պարզ սեղանները՝ հավկիթ, պանիր, սոխ ու հաց, երբեմն էլ սառը մսի

կտորներ, բայց արաղի բաժակն անընդհատ ձեռք ձեռք էր պտտվում, խմում էին ու կենացներ ասում, ծիծաղում էին ու գոռգոռալով երգում էին ու նորից խմում։ Աշուղի սազն ու արաղի թասը մոռացության գետն էին նետել նրանց դաժան առօրյայի հոգսերը։

Ես ու Վահանը նստել էինք մատուռի սակ, ծխում էինք ու դիտում պարողներին և քեֆ անողներին։

Վահանի լեզուն բացվել էր, այլևս չէր շոշափում ինձնից։

— Նայի՛ր,— ասում էր Վահանն ինձ,— ա՜խ, ի՜նչ տխուր աչքեր ունեն մեր գյուղացիները, ի՜նչ մտահոգ դեմքեր՝ արևով, անձրևով այրված ու բովված։ Ի՜նչ դառն ազգատություն է կաթում վրանցից, բայց ուրախանում են։ Բայց ի՜նչ թախծոտ ուրախություն է այս։ Իբրև թե ուրախ երգեր են երգում, բայց ի՜նչքան վիշտ ու մորմոք կա սրանց ուրախ երգերի մեջ։ Դարերի տառապանքն է խոսում սրանց բերանով։ Այս ժողովրդին մեր ինտելիգենցիան չի կարող հասկանալ, ո՞ւր մնաց օտարը։ Մեր նոր գրողներից Թումանյանը և դու, միայն երկուսդ, զգում եք մեր ժողովրդին։ Ձեզնից հետո կամ նոր, բոլորովին նոր երգ պիտի ասել, կամ պիտի լռել։

Մյուս օրը առավոտյան դնացինք տեսնելու Փարվանա լիճը և նրա ճերմակ ամրոցը, որը թեև առասպելը սուզել է ջրի տակ, բայց, ինչպես վկայում են գյուղացիները, սուր աչքը, վճիռ պահերին, կարող է նշմարել բուրգերի ծայրերը...

Մեզ շրջապատող բնությունը վայրկյանե վայրկյան փոխում էր իր տրամադրությունները. մերթ զմրուխտյա մարգագետիններ, կարկաչուն առուներ, ցորենի ծփծփան արտեր, մերթ չոր ձորակներ, անհերթեթ կերպարանքներով ժայռեր ու գունագեղ քարեր։

Բարձրացանք մի բլրակի վրա, որ իշխում էր շրջակայքին։ Մեզն ու մշուշը, որ սքողել էին լեռները, հետզհետե պատռվում էին և հրաբխային սուր գագաթները, տեղերի պես, ցցվում էին՝ շողշողալով նորածագ արևի ոսկով։ Փարվանա լիճը ծփում էր իր կապույտ ծխով... Մի պահ հետո պարզեց իր արծաթափայլ հայելին, ուր արևի դեմքը ցոլաց ավելի բանաստեղծական, քան որ երկնքում էր։ Լեռների շարանը ձգվում էր հեռուն, բայց մեր բլուրի կատարից գրկելու չափ մոտիկ էին երևում հեռուն և հեռացողը... Վահանը հափշտակված նայում էր՝ հայացքը թափառելով ամեն կողմ, և արտասանեց յուրովի Հովհ. Թումանյանի «Փարվանայից»։

«Բարձրագահ Աքուլն ու Մրթին սարեր»...

— Ճանապարհին իմ բարձրագահ հայրենիքը և նրա խոնարհ ժողովրդին, որ [illegible] է ու երազում, տքնում է ու երգում...

«Այդ [illegible] հոգին,— մտածում էի ես,— պարուրված է երազով, ինչպես իր [illegible]ների լեռներն ու լճակները՝ կապույտ մշուշով...»

Եվ այս սրտաշարժ զրույցներից այն խորին տպավորությունն առա, որ ես բանաստեղծական էությանն հետ գործ ունեմ, որ այս զգայուն հոգում ապրումները մթին խորություն մեջ են կատարվում, որ նա աշխարհն զգում է երազներով և երազների մեջ։

Գեղեցիկ զույգ է Գանձան, բարձրադիր, ձորի վրա կախված, հոյակապ լեռների մեջ։

Անջնջելի ներգործություն են իմ հոգում այն քնքուշ երեկոները և անդորր գիշերները, որ ապրել եմ Վահանի մայրենի գյուղում, պատանի Վահանի հետ միասին։

Հոգնած աչքը թեքվում է դեպի Արուլ լեռը, գագաթները հրդեհվում են և դժգունանում, անբջային կիսալուսնով կամաց-կամաց իջնում է մթնշաղը, նավ իրը սուն է դառնում հանդիպ. վառվում են տների ճրագները, գյուղի ոչխարները լռում են սակավ առ սակավ, հանգչում են բոլոր շշուկները... Աստղերը մեկը մյուսի հետից շողում են ու կայծում. հովիվները խառույկ են վառում Արուլի վրա, երեկոն գիշեր է դառնում անտես, աննկատելի քայլերով... լռություն. միայն ձորի առուն է մրմնջում նիրհի մեջ սուզված. լճից շշշվում է գնիպուտի մեղմ սրինգը...

Վահանը ականջին ասի, որտեղ ձայնով, շշնջում է չքնաղ հատվածներ համաշխարհային և հայկական գրականից — Գյոթե, Հայնե, Բոդլեր, Վերլեն, Լերմոնտով, Սոլոգուբ, Բրյուսով, Դուրյան, Հովհաննիսյան...

Լռում է Վահանը... Հովիվների խառույկը մարել է, խորին գիշեր է, մթին ու խորհրդավոր լռություն... բոլոր իրերը ձևաուծվել են, լքացել աննյութացել. իրական աշխարհը անդգալիորեն սահել է դեպի անիրականը։ Մենք երազում ենք, սավառնում ենք անրջային ոլորտների մեջ, ուր խճճված միտքը ձերբազատվում է և լարված միտքը հանգիստ գտնում...

Օ՜, Գանձայի քնարական երեկոներ, դուք թոցրիր Վահանի հոգին բանաստեղծական և գերզգայական ոլորտները, դուք անմահացաք նրա տաղանդի կոխարդանքով, դարձաք երգ ու հեքիաթ, մաքուր սիրոփանք և բարձր արվեստ...

1906 թվին, հունվարին, Վահանին և իր դասընկերոջը հանդիպեցի Թիֆլիսում։ Հեղափոխական հուզումնալից իրադարձությունների հետևանքով ժամանակավորապես գոցված էր Լազարյան ճեմարանը, ուստի նրանք վերադարձել էին Կովկաս։ Նրանք ուզում էին հեղափոխական աշխատանք, պրոպագանդ տանել ժողովրդի մեջ։ Ընդառաջելով նրանց փափագին, որոշեցի նրանց հետս տանել Ալեքսանդրապոլ (Լենինական) և ուղարկել Շիրակի գյուղերը, որպեսզի ժողովրդին բացատրեն Ռուսաստանում տեղի ունեցող անցքերը։

Այսօրվա պես հիշում եմ.— Վահանն ու դասընկերը՝ ահագին, սև ծոպավոր փափախները գլխներին՝ ոպեորված վագոն նստեցին։ Ալեքսանդրապոլ հասնելուց հետո, մեկնեցին Շիրակի գյուղերը։

Ալեքսանդրապոլում հաճախ լինում էին նրանք ինձ մոտ, ես էլ նրանց մոտ, հյուրանոցում։ Մինչև ուշ գիշեր զրույց էինք անում, բայց ոչինչ չեմ հիշում հիմա այդ զրույցներից։ Միայն երկու դեպք եմ վերհիշում։

Մի երեկո Վահանի ընկերը ինձ ասաց, թե Վահանը բանաստեղծություններ է գրում։ Ես արդեն գուշակել էի այդ։ Վահանը կամրելով ուրացավ, բայց պնդումիս վրա գիջեց և սեղանի վրա դրեց մի տետրակ՝ սև կալենկորով կազմած, որի վրա դանակով փորագրված էր «Արիուն» բառը։ Զարմանքով գոչեցի.— «Ինչ, մի՞թե արյան երգեր ես գրում»։ Ընկերը ծիծաղեց և մատով ցույց տվեց, որ հակառակ կողմից կարդամ։ «Նիւրա»։ Իրական թե անրջական իր սիրած աղջկա անունն էր Նիւրա, որին նվիրված էին ոտանավորները։ Վահանը դողդոջ ձայնով կարդաց մի քանի հատ։ Բնավ չհավանեցի, դժգույն բաներ էին, մեծ մասով իմ ոտանավորների, Թումանյանի և ուրիշների նմանություններ։

Բանաստեղծական տրամադրությամբ լցված մի երիտասարդ, լավագույն կերպով պատրաստված, տեղյակ հին ու նոր գրականության... և այսպիսի թույլ բաներ։ Շատ հիասթափվեցի։ Վահանը դեռ իրեն չէր գտել. հրաշքը դեռ տեղի չէր ունեցել։

Երկրորդ վերհուշս այս է։

Նրանք գյուղերը շրջելիս, եղբորս մոտ հյուր էին եղել Ղազարապատ գյուղում. այնտեղից էլ ձմեռ օրով գնացել էին Անի։

— Անսահման գեղեցիկ է Անին,— ասում է Վահանը։ Եվ իրոք, Անին իր ճարտարապետական հուշարձաններով ապրել էր նրա մտքի և երևակայության վրա։

1908 թվին, ամռանը Թիֆլիսում պատահեցի Վահանին։ Պիտի հրատարակեր իր բանաստեղծությունների առաջին գրքույկը՝ «Մթնշաղի անուրջները»։ Տպելուց առաջ Հ. Թումանյանի մոտ կարդացել էր ձեռագիրը, ուղեց ինձ մոտ էլ կարդալ՝ «անկեղծ կարծիքս» իմանալու համար։

Հյուրանոցիս սենյակում ենք։ Հուզված կարդում է ոտանավորները, մեկը մյուսի ետևից, քանի առաջանում է ընթերցումը, ավելի է հուզվում. ես սրտով և ուշով հետևում եմ ընթերցումին։ Տետրակը շավարտած՝ ես անհամբերությունից մղված՝ գոչեցի. «Կեցցե՛ս, Վանիկ ջան, հրաշալի բաներ են, բյուրեղացած զգացումներ՝ անթերի ձևերի մեջ։ Իսկական քնարերգությունը սա է — մաքուր լիրիկա»։ Զարմացա, որ «Նիւրա»-ից այստեղ ոչինչ չկար։

Վահանի ներհուն աչքերը փայլատակեցին ուրախությամբ։— «Հ. Թումանյանն էլ շատ հավանեց։ Երկուսիդ կարծիքը բացարձակ արժեք ունի ինձ համար։ Այլևս քննադատությունից վախ չունեմ»։ Երեկոյան եղա Հ. Թումանյանի մոտ և հիացմունքս հայտնեցի Վահանի բանաստեղծությունների նկատմամբ։

— Հա է՛, շատ դրուատ ես ասում։ Շատ գեղեցիկ են և գրեթե մեր լիրիկայի մեջ բոլորովին նոր բաներ։ Պատկերները թեև թույլ են և քիչ են, բայց լիզուն՝ մաքուր ղաված և արծաթե զանգի պես՝ հնչուն։ Իմ ազդեցությունը բնավ չտեսա այնտեղ, բայց քո և Դերենիկի տրամադրությունների արձագանքը կարծես կա, մանավանդ՝ քո։ Դու ի՞նչ ես կարծում, համենայն դեպս՝ մեր վիրնատան մեջ պատվավոր տեղ ունի...

Երկու տարվա ընթացքում հրաշքը կատարվել էր, Վահանը գտել էր իրեն և արվեստի գաղտնիքը։ Վահանի նրևումով մեր քնարերգության մեջ մի նոր էջ բացվեց, նոր մենակետ՝ սիմվոլիզմը, որից ծայր առան նոր բանաստեղծներ, որոնք ավելի կամ նվազ շնորհքով սկսեցին նմանվել և կրկնել այս անգերազանցելի տաղանդին։

Վահանը հաճախ գրում էր ինձ Մոսկվայից։ Հայտնում էր իր ծրագրերի, իր գրածների և գրելիքների մասին։ Նամակներից մեկի մեջ գրում էր, որ սկսել է թարգմանել Լյուդմ Ռոտերդամցու «Հիմարության գովքը» նշանավոր գիրքը։

1909 թվին, ամառը, Ախալքալաք գնալիս Վահանը կանգ առավ Ալեքսոլում, մի քանի օր ինձ մոտ հյուր մնալով՝ կարդաց իր նոր գրած «Ոսկի հեքիաթ» ցիկլից։ Ես էլ գրել էի «Աբու-Լալա Մահարին», ցույց տվի նրան, հավանեց և մի քանի նկատողություններ արավ։ Նրա խորհրդով նախերգանքի մեջ,— Մահարու հակիրճ կենսագրականում,— փոփոխություն մտցրի, որ մինչև այսօր էլ չդիտեմ լավ արեցի, թե վատ։

Ավելորդ չեմ համարում մեջ բերել այդ գրել էի այսպես.

«...եվ մի գիշեր, երբ շատ լքված էր նա և սրտաբեկ, դուրս հանեց երևակայության միջից քաջաղնաց ուղտերի մի քարավան՝ ընտիր սարքով, և մինչ Բաղդադը քուն էր մտել Տիգրիսի նոճիածածկ ափերի վրա — գաղտնի հեռացավ քաղաքից...»։

Վահանը գտավ, որ սա շատ անիրական կթվա, շատ անհամոզիչ։ Եվ, ուրեմն, իրրև թե ավելի համոզիչ կլինի, եթե Մահարին իրական քարավան ունենա։ Այդ նկատողությունն այն ժամանակ խելքիս նստեց և փոխելով՝ նախերգանքին տվի այն ձևը, ինչ որ այնուհետև հայտնի է հասարակությանը։

Այս տեսակցությունը, դժբախտաբար, վերջինը եղավ. էլ չտեսանք իրար. Ո՞վ կարող էր երևակայել, թե այս հաղվագյուտ տաղանդն իր ստեղծագործական փթթումի պահին պիտի թողնի մեզ... այսպես վաղաժամ։

Հիշում եմ, երբ ճանապարհ էի դնում նրան Ախալքալաք, թոլոդ տրյկայի միջից ձայնեց.— «Ավո ջան, խոստումդ կատարիր, ձմեռը Մոսկվա եկ։ Սպասում ենք»։

1911 թվի ամառը Ռուսաստանից փախա Թուրքիա։ Կ. Պոլսից նամակագրության մեջ էի Վահանի հետ։ Այնտեղ էր, որ ստացա իր բանաստեղծությունների նոր լույս տեսած հատորը մի նամակի հետ, ուր գրում էր, որ նշեմ իմ հավանած բանաստեղծությունները։ Անմիջապես պատասխանեցի, և որքան հիշում եմ, այդ նամակի մեջ գրեցի թե՝ «Հիմա, սիրելի Վահան, քո հազարն է» (քո շրջանը, ժամանակը)։

Նույնպես Կ. Պոլսում, Վահանից ստացա թարգմանական պատվեր, դրամ և նոր ռուսական հետաքրքրական գրքեր։ «Դարուն» ալմանախի համար թարգմանեցի Ա. Շնիցլերի «Վոյտըվնանտ Գուստը» և հանձն առա թարգմանել Գյոթեից, Պուշկինից և Լերմոնտովից սրտիս ուզած գրվածքները։

Վահանը մի քանի ընկերների հետ ստեղծել էր հրատարակչական մի ֆոնդ, որ լույս պիտի ընծայեր համաշխարհային գրականության երկերից՝ հայերեն լեզվով։

Ես սիրով ձեռք զարկեցի թարգմանություններին, բայց իմպերիալիստական պատերազմը վրա հասավ և խորտակեց այնքան լավ գործ ու ձեռնարկ։

Պատերազմի առաջին տարիներին, ծնն, մի երկու նամակ ստացա Վահանից։ Վերջինը գրված է 1917 թվին, հունվար-փետրվար ամիսներին (ամսաթիվ չկա) Սուխումից։ Նրա մեջ հավատք է հայտնում մեր շուտափույթ տեսակցության, գրում է իր չարաբաստիկ հիվանդության մասին, սակայն լավատես է, հույս ունի, որ հայրենի սարերը պիտի բուժեն իրեն, ուր ամառը պիտի գնա, այն բարձրագահ սարերը, ուր հովիվները կրակ են անում և ձայնում են իրար հին, հայրենի բարբառով, այն աղատ սարերը, ուր թռչում է անհայտին ավար իր գերի, տանջված

հոգին... Ինչպես պայթեց ռուսական մեծ հեղափոխությունը և անծայրածիր Ռուսիան, կարծես ընկավ անհայտության մեջ՝ ոչ մի լուր, ոչ մի ստույգ տեղեկություն։

— «Ի՞նչ եղավ Վահանը»,— մտապիկանքի մեջ շաբաթակաց հարցնում էի ինձ, անդադար այնպիսիորեն կրկնում էի անվերջ Վահանի զարմանալի գագաթը՝ «Հրաձիգի երգը»։ Զարագուշակ տեսիլ էր այդ աննախընթաց գեղեցիկ դագաթը։

1919 թվի ընթացքում, հատուկտոր, հակասական լուրեր լսեցի Վահանի մասին, սակայն նորից հնարավորություն չունեի կապ հաստատել նրա հետ, որովհետև ամեն հարաբերություն խզված էր Մոսկվայի և Ծնևի միջև։

Բայց մի օր, մարտ ամսի մի ցուրտ, մթագնած առավոտ, 1920 թվին, ծնևում կարդացի Կ. Պոչսի մի թերթի մեջ զարհուրելի բառը... Օրենբուրգում եթերոտսպանդ Վահան Տեր-Յակոբը...

Մինչև հիմա, և երբեմն խորին տխրության մեջ տվայտում էի նա։

1938

ՍԱՐՅԱՆՆ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻՆՆ Է

Տասնչորս տարիներ Հայաստանից հեռու լինելով, ես շատ կարոտել էի հայրենական սիրելի, հարազատ պեյզաժներին, ստին ու ձորին, գետերին ու դաշտերին, ժողովրդի կենցաղային պատկերներին։

Եվ շատ մեծ եղավ ուրախությունս, երբ 1924 թ. Մարտիրոս Սարյանը եկավ Վենետիկ՝ միջազգային նկարչական ցուցահանդեսին մասնակցելու։

Մ. Սարյանի անունը լսել էի, բայց նրա վրձնի ոչ մի արտադրանքը տակավին չէի տեսել։

Սովետական պավիլիոնում ես նայում էի Մ. Սարյանի նկարներին, անհամբեր, մի նկարից մյուսին էի շտապում, նայում հուզիչակված, ինքնամոռաց, երջանկացած.— իմ աչքերի առջև կարոտած Հայաստանն է՝ բանաստեղծորեն իրականացած։ Ահա՝ հայրենիքի կապույտ երկինքը, լուսատատ մթնոլորտը, ահա՝ վեհապանծ Մասիսը իր կորյունի հետ՝ առյուծի պես նստած, գլուխը երկնքում, սպիտակ բաշերով։ Ահա՝ Հայաստանի դաշտերը, ցորենի ոսկեցող արտերը, որ ծփում են, փայլուն գետերը, որ կարկաչում են, ճամփաների եզրերին կանգնած բարձրուղեղ բարդիները, ահա՝ խաղողի ողկույզները, մրգերը, վարդերը, երփներանգ ծաղիկները, չքնաղ ծաղիկները, որոնց բույրն առնում ես, իրապես առնում ես. իսկ ժայռի կատարից նայող եղնիկը, նազելի եղնիկը՝ գոհար աչքերով, ապա նախաժամանակներից եկած խորհրդավոր գոմեշը, որի հնամենի ձայնը կարոտով ուզում ես լսել, և այս բոլորը մեծատաղանդ եկարչի կախարդ վրձինով շունչ առած, կյանք ու ոգի առած։

Մ. Սարյանի արվեստը լավատես է, կենսուրախ՝ զարնանային թարմությամբ թաթափուն։ Կյանքի սեր է զարթեցնում մեր մեջ նա, ապրեցնող է, բերկրանք հորդող։ Արևարուխ է նրա արվեստը, նրա վրձինը հյուսված է արևի ճառագայթներից, ավելին՝ արևը ինքն է իր բոլոր արտահայտություններով նրա նկարների մեջ, արևը, որ ջուր է ու երանգ, որ ջերմություն է ու լույս, որոնցով կառուցված են նրա գործերը։

Ես պավիլիոնում կանգնել էի Մ. Սարյանի նկարների մոտ, ուզում էի լսել այցելուների կարծիքները, նրանց տպավորությունների արտահայտությունները։ Ես խոսում էի ինքս ինձ հետ,— «Սարյանը Հայաստանի պեյզաժների, բնության, վառ երանգների երգիչն է, արդյոք ի՞նչ են զգալու օտարները»։ Ես հուզված էի և անվերջ կրկնում էի մտքիս մեջ՝ «Հայաստանի երգիչն է, Հայաստանի երգիչն է...»։ Ահա մոտենում է երկու տիկիններ հետ Վենետիկում բնակվող գերմանացի անվանի նկարիչ Ջիմելը։ Կանգնեց Սարյանի նկարների առջև. «Ա՜խ, սա հետաքրքիր է, հետաքրքիր գործեր են, թարմ է, նոր գեղեցկություն է ինձ համար, ուրույն կոլորիտ ունի. տեսնես ի՞նչ երկրից է...»։ Ես մոտեցի դեպի նա։ «Արմենիա» — ասացի ես նրանց հպարտությամբ։ «Չե՞ր գործերն են»,— հարցրեց տիկիններից մեկը։

«Ո՛չ, իմ ընկերոջն է՝ Մարտիրոս Սարյան»,— պատասխանեցի ես։

Նկարիչ Ջիմելը մի անգամ էլ նայեց նկարներին և դարձավ ինձ, ժպտալով.— «Ես սիրեցի ձեր Արմենիան»։

Մ. Սարյանի գործերը մեր նկարչական արվեստի հաղթանակն են, մեր կուլտուրայի անթառամ զարդերը։ Բայց որ գլխավորն է, Սարյանը ազգային կոլորիտի նկարիչ է։ Նրա արվեստի արմատները սուզվում են մեր հին արվեստի մեջ։ Սակայն, երբ օտարը հիանում է մի ուրիշ ժողովրդի արվեստով, հասկանում է, գնահատում և սիրում, ապա այդ արվեստը անվիճելիորեն դառնում է համակարգկային, բոլորի սեփականությունը։ Եվ ճշմարիտ ուղին սա է՝ ազգային արվեստի միջով դեպի համամարդկայինը։ Մարտիրոս Սարյանի արվեստը բովանդակ աշխարհինն է, սիրելի է բոլորին։

1955

ՉԱՐԵՆՑԻ ՀԵՏ ՎԵՆԵՏԻԿՈՒՄ

Մեծատաղանդ բանաստեղծ Եղիշե Չարենցին առաջին անգամ ես տեսա Վենետիկում, 1925 թվականին։ Չարենցը եկել էր Հայաստանից Եվրոպա ճանապարհորդելու։ Ինձ մոտ եկավ նա Հռոմից։ Առաջին տպավորությունը, որ ստացա նրանից, փայլուն չէր։ Վտիտ մարմին, կարճահասակ, բայց խոհական, խելացի աչքերով։ Մնաց մի ամբողջ ամիս Վենետիկում, և մենք շատ և շատ խորին կերպով բարեկամացանք, մտերմացանք։ Ամբողջ օրը միասին էինք։ Առավոտը կանուխ գալիս էր հյուրանոցից, մնում էր մինչև ուշ գիշեր մեր տանը։ Թափառում էինք հրաշալի Վենետիկում՝ շրանցքներով, գոնդոլներով. գնում էինք ծովափ, հետո գնում էինք Մխիթարյանների վանքը՝ Սուրբ Ղազար։

Խոսում էինք անվերջ ամեն հարցերի մասին՝ գիտության, գրականության, փիլիսոփայության, հեղափոխության, բոլոր այն մեծ խնդիրների, որ կան, և փոքր խնդիրների նաև, որ հուզում են մարդկանց։

Վենետիկի հասարակությունը իր պարապ ժամերը անց է կացնում աշխարհի մեջ ամենազվարճալի հրապարակի՝ Սուրբ Մարկոսի հրապարակի վրա։ Մի կողմը Սուրբ Մարկոսի հրաշալի տաճարն է, մյուս երեք կողմերը թանգարաններն են, սրճարանները՝ բոլորն էլ մարմարակերտ պալատներ։ Եղիշեի հետ էլ մենք անցկացնում էինք Սուրբ Մարկոսի հրապարակի զանազան սրճարաններում։ Սուրբ Մարկոսի հրապարակը լեցուն էր աղավնիներով, որ կոչվում են Սուրբ Մարկոսի աղավնիներ՝ հազարավոր, տասնյակ հազարավոր, և կառավարությունը կերակրում է նրանց։ Հրապարակում ծախում են հունդեր, սիսեռներ՝ կերակրելու համար աղավնիներին։ Հասարակությունը, մանավանդ տուրիստական հասարակությունը, շարունակ նկարվում էր՝ ափերում սիսեռներ բռնած։ Աղավնիները գալիս, նստում են կոցահարելու համար, և՛ ուսերի վրա, և՛ գլխարկների վրա։ Ահա ես ու Չարենցն էլ նկարվեցինք Սուրբ Մարկոսի հրապարակի վրա՝ աղավնիների հետ միասին։ Չարենցը բախտավոր եղավ, որ նրա վրա նստեցին 3—4 աղավնի, իսկ իմ ձեռքը մնաց դատարկ։

Չարենցը խոհուն, դարդացած, մեծ էրուդիցիայի տեր անձնավորություն էր, անհանդիստ բնավորություն, ըմբոստ և եռուն։ Բոլոր ազգերի գրականությունները գիտեր, լավ ճանաչում էր և մեծ ճաշակի տեր էր։ Արդեն ես նրան ճանաչում էի նախքան նրա հետ ծանոթանալը։ Ես կարդացել էի (Վենետիկի վանքը ստանում է հայկական ամեն մի հրատարակություն, ուր էլ որ լինի) Չարենցի երկհատորյակը, որ տպված էր Մոսկվայում 22 թվականին։ Ինձ վրա մեծ տպավորություն թողեցին նրա «Դանթեական առասպելը» և «Տաղարանը», լիրիկական մի շարք բանաստեղծություններ, մանավանդ նրա հայրենասիրական բանաստեղծությունը՝ մեծ խոսքով՝ «Ես իմ անուշ Հայաստանին»։ Ինձ համար, առանց չափազանցության, բոլորովին օբյեկտիվ կերպով կասեմ, որ հայ տառերով, հայ բառերով այդպիսի բանաստեղծություն չի գրված՝ հայրենասիրության տեսակետից։ Դա իդեալի, աննախընթաց բան է։ Նույնիսկ կարելի է ասել, որ եվրոպական, համաշխարհային գրականության հայրենասիրական ժանրի բանաստեղծություններ, այդպիսի թափով, այդպիսի ընդարձակ խորքով գրված բան՝ գոնե ես չեմ հիշում։

Պետք է ասեմ, որ Չարենցը Հոկտեմբերյան սոցիալիստական էպոխայի ամենամեծ բանաստեղծն է հայ գրականության մեջ և նա բազմակողմանի կերպով ազդեց հայ գրականության վրա, մանավանդ ռիթմի, լեզվի, տաղաչափության, պոետիկայի կողմից։

Եղիշե Չարենցի կորուստը հավիտյան ողբալի է, և եթե նա ողջ մնար, դեռ ինչե՞ր կարող էր տալ։ Համենայն դեպս, նա ինչ որ տվեց, դա մի անմահ կոթող է հայ գրականության մեջ։

Հարգանք նրա հիշատակին։

1957 սեպտեմբեր

ՆԱՄԱԿՆԵՐ

ՇՈՒՇԱՆԻԿ ՄԱՏԱՆՑԱՆԻՆ

<1893>, մարտի 28, Էջմիածին

Սիրելի՛ քույրիկ.

Ի՞նչ գրեմ — արցունք, տանջանք, վիշտ, հեծծանք... Թառամեցան ծաղիկները, հանգան կայծերը, ձմեռն եկավ. բուք-բորան, մառախուղ, մռայլ, անապատ, անապա՛տ առանց օազիսի. ո՞ւր է երկինքը, աստղերը, ծիածանը, արշալույսը. ո՞ւր է, ո՞ւր է անդրանիկ սերը, սերը պղատոնակա՛ն, մաքո՛ւր, անարա՛տ, կուսակա՛ն... Ո՞ւր է, ո՞ւր...

Ես լալիս եմ, ես տանջվում.

Я вновь один, и вновь кругом
Всё та же ночь и мрак унылый,
И я в раздумье роковом
Стою над свежею могилой:
Чего мне ждать, к чему мне жить,
К чему бороться и трудиться:
Мне больше некого любить,
Мне больше некому молиться!..

Այո՛, քույրի՛կ, այո՛, ես էլ ո՛չ ոքին չեմ սիրում, ո՛չ ոքի համար էլ չեմ աղոթում...

Սակայն, ով գիտե, կարո՞ղ էի երևակայել, որ այն, այն ծաղիկը,— որի բուրմունքից արբեցած ես ապրում էի,— թառամում է. ո՛չ, ո՛չ, չէի կարող. միթե կարո՞ղ էի, միթե կարո՞ղ էի չսիրել «նորան»։

Երբ ես հուսահատ, երբ ես մռայլ, երբ ես հիասթափված դիմում էի դեպի կորուստ, ո՞վ ինձ ձեռք տվեց, ո՞վ ինձ միխիթարեց, ո՞վ ինձ քաջալերեց, ո՞վ ինձ հույսեր խոստացավ. «նա՛», «նա՛»։

Երբ ես հոգնած կյանքից, երբ ես զզված գոյության անմիտ կռվից, երբ ես մեռցրել էի հավատս թե դեպի մարդը և աշխարհը, ո՞վ ինձ նոր աշխարհ տվեց, ո՞վ ինձ իդեալներ տվեց, ո՞վ երկինքն ու երկիրը սրտումս իջեցրեց. «նա՛», «նա՛»...

Երբ կյանքը իմ աչքում դատարկություն էր, խաղալիք էր, երբ աշխարհը կրքերի և դվարճությունների օրորոց էր, երբ աշխարհը ճահիճ էր, մարդիկ՝ զորտեր, ո՞վ ինձ ոգևորեց դիտության անվամբ. «նա՛», «նա՛»...

«Նա», «նա», «նա»՝ իմ փրկիչս էր...

Օ՜, «նա» այժմ, «նա» այժմ տանջվում է, դեռ արև չտեսած գոլորշիանում է...

Օ՜, «նրա» օրերը, երկնային օրերը համրած են։

Ամեն եկավ՝ «նա» ծածկվում է, «նա» թաքչում է...

Եվ ես օրհնում եմ «նորան»...

Բայց ես, ես ի՞նչ անեմ. ես ապրել եմ ուզում, ապրե՛լ. ապրել, ինչո՞ւ՝ չգիտեմ...

Ես չեմ ուզում այսպես կորչել, ոչնչանալ. ապրել եմ ուզում հանուն գիտության, գիտության, միա՛յն գիտության համար ապրել, և իմ կյանքը գիտության համար նվիրել. ես գիտության, անմա՛հ գիտության զինվոր եմ ուզում լինել...

Այսուհետև սիրո ո՛չ շող ու ցող, ո՛չ բույր ու թույր...

Խաբուսիկ աշխարհ, խորամանկ դիմակ...

Ա՜խ, եթե ես կարողանայի աղոթել աստծուն, հավատալ աստծուն՝ երջանիկ կլինեի...

Եվ մի՞թե կա երջանկություն աշխարհի մեջ. ո՛չ, ո՛չ, նա ինքնախաբեություն, ինքնամոռացություն, նսականություն է... Ա՜խ, ես թշվառ եմ, ես ապերջանիկ. չկարեկցեք ինձ վերա. ես փոքրոգի չեմ, ես հաղթված չեմ կյանքի կռվից։ Չկարեկցե՛ք։

Իմ վիշտը, իմ վերքը, իմ երգը թո՞ղ ձեզ չդրավև, թո՞ղ ձեզանից ես արցունք չքամեմ... Մի՞թե ձեր վարդերը կարող են պսակ լինել ինձ. չեմ կամենում... չե՛մ, չե՛մ...

Իմ արցունքները կարող են ինձ համար բուսցնել «նորա» նվիրական շիրմից փշեր և մամուռ, և այդ ինձ բաշխման է որպես պսակ, որպես հաղթանակ...

Դո՛ւք ուրախացեք, դո՛ւք ապրեցեք, դո՛ւք սպասեցեք դարձյալ. կյանքը դեռ ժպիտ տալիս է ձեզ համար, իսկ ինձ՝ ո՛չ...

«Նա» ձեզ համար մնոնում է, բայց ինձ համար՝ ո՛չ. «նա» միշտ կենդանի կմնա և՛ իմ սրտում, իմ երգերում, և՛ իմ աղոթքներում՝ ավելի մաքո՛ւր, ավելի սո՛ւրբ... իսկ զազանի տանջանքով ավելի շուտ կհասնեմ կյանքի նպատակին՝ գերեզմանին, քան թե դուք... և հավիտյան «նա» սիրում և օրհնում է ինձ և նա՝ «նորան»։

Ավետիք

ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

<18>93 թ. 20 նոյեմբերի, Լայպցիգ

Սիրելի վարժապետ.

Ստացել եմ պատկերները — նվերների կողմից հայտնում եմ իմ ընկերներիս և իմ շնորհակալությունը. ծախսերը կամաց-կամաց վճարվում են (1 մարկ) — բոլորը ծախվելուց հետո կուղարկեմ փողերը՝ իմ փոդ-պարտք վերցրած փողերի հետ։

Սպասում եմ անհամբեր Ձեզանից մի նամակի — այժմ էլ ավելացնում եմ այս — այստեղի ուսանողներից մի-երկուսը (Բաբայան, Սարգսյան) թարգմանած ունեն գերմաներենից Բեռնսոնի «Նորապսակները», «Միականություն ու բազմակնություն» և այլ պիեսները. ուզում են «Տարազին» ուղարկել, բայց պայմանով, որովհետև խեղճերը նյութապես բավական սուղ են — ինձ ասացին, որ գրեմ Ձեզ — Ձեր համաձայնությունը և պայմանները իմանալու։ Պետք է ասել, որ հաջող է թարգմանությունը և համեմատված է ռուսաց թարգմանության հետ։ Բեռնսոնի գրվածները մի թարմություն է — ինձ այդպես է թվում — ընկած աշխարհի վրա. Քրիստոնեության չորցրած ծլերը աճում են — մի խոսքով «Տարազի» համար, իբրև ժամանակակից հարց — շա՛տ հարմար է։

Նույնպես պատասխանեցեք, խնդրում եմ — այն օրիորդի (Զ. Բաբայան) նկատմամբ, որը և ուզում է աշխատակցել։

Իմ լսած մի քանի դասախոսությունները ժողովրդական վիպասանության վրա, գյուղացիներգության վրա՝ իմ մեջ շատ մտքեր զարթնեցրին — այժմ պրոֆեսորի առաջնորդությամբ և ընտրությամբ կարդում ենք ազգերի գյուղացիական գրականությունից — Զենդավեստից, Շահ-Նամեից, Ղուրանից, Հին-կտակարանից, Հոմերոսից, Վիրգիլիոսից, Ռոլանդից, Սիդից, Նիբելունգներից, Կուդրունից, Իլյա Մուրոմեցից, և այլն... Այդ բոլորի վրա — մանավանդ այդ մասնագիտության վրա ես այժմ կատարյալ սիրահարված եմ։ Ասում են՝ հայերը գյուղացիներգություն չունեն.— այդ ասողները իմ աչքում երևում են՝ հայ ժողովրդին և պատմությանը

անծանոթ մարդիկ... Մի՞թե մեր Հայկն ու Արամը, Արան ու Տիգրանը, Վահագն ու Շարան, Արամազդն ու Շիդհարը, Դավիթն ու Մհերը... նույնպիսի ազգային դյուցազուններ — ազգային բովանդակություններ չեն, ինչպես Ռոստոմը, Սիգֆրիդը, Հերակլը, և այլն։ Այժմ դրականապես վճռել եմ գլխավորապես շատ զբաղվել այդ դրականությամբ. գուցե կարողանամ մեր ժողովրդի մութ-մութ խորշերից դուրս հանել պատմական Հային, իսկական Հային...

Կարդում եմ Ուլանդի բալլադները — սիրտս խփում է ուժգի՛ն. երևակայությունս լարվում է — թռնում եմ Մասիսի ու Տորոսի գրկերում մեր մնռած-մոռացած դյուցազներին հարություն տալու...

Բայց իզուր է անցնում այդ էնտուզիազմը, որովհետև նյութ չունիմ — ո՞վ է ծանոթ հայ գյուղացուն, ո՞վ ունի հայ գեղջուկի մասին լիակատար-բազմակողմանի գրվածքներ։ Թո՛ղ մեր գրականությունն էլ ունենա Գրիմի կամ Буслаев-ի գրքերը — այն ժամանակ մենք Ուլանդ ու Պուշկին էլ կունենանք...

Երբ ես հայրենիք էի, մեր ամեն բանը — գրականություն, թատրոն, գեղարվեստ, լրագիր խոշորացույցով էի տեսնում, իսկ հիմա այստեղ — մեր ամեն բանը՝ տղայական խաղալիք է թվում ինձ,— և հանկարծ 4000 տարի կյանք ունեցող ազգը դուրս է գալիս անհայր, անմայր, անտուն, անհայրենիք, անանցյալ — ինչո՞ւ, որովհետև մենք ժողովրդի մեջ, նրա հետ, նրանով չենք ապրում...

Այստեղ է Լևոն Սեղբոսյանը և մի ուրիշ պոլսեցի (Շամդանճյան). եկել են ուսանելու. այս շատ լավ երևույթ է. պոլսեցիք միշտ Փարիզ են գնում աղա դուրս գալու համար։ Ուղարկում եմ մի քանի ոտանավորներ էլ. մի առ ժամանակից հետո կուղարկեմ Նիբելունգներից հատվածներ և ինքնուրույն բալլադներ։

Սպասում եմ Ձեր նամակին։

Ընդունեցեք

մնամ՝ Ձեր աշակերտ՝ Ավ. Իսահակյան։

ԱՐՇԱԿ ՉՈՐԱՆՅԱՆԻՆ

<18>99 թ. 9-ն ապրիլի, Ալեքսանդրապոլ

Մեծապատիվ պ. Արշակ Չորանյան.

Ես Օդեսայումն եմ եղել, երբ Դուք նամակ էիք գրած եղել ինձ՝ «Մուրճի» հասցեով։ Երբ ես վերադարձա Թիֆլիս, այս տարի հունվարին,

պ. Արտասահմանցանը ինձ ասաց Ձեր նամակի մասին, որը դժբախտաբար կորել է կամ կորցրել է. մի խոսքով ինձ չէ հասել. ցավում եմ, որ չեմ ստացել, որ ինձ շա՞տ է հետաքրքրում։ Թեև մասամբ ենթադրում եմ նամակի իմաստը — եթե Ձեր ցանկությունն է ինձ աշխատակից ունենալ «Անահիտ» համար — ես պատրաստ եմ ուժերիս ներածի չափ նպաստել Ձեր համակրելի գործին. կտամ տրձակ և չափածո ինքնուրույն գրվածքներ, զանազան հոդվածներ, և թարգմանություններ գերմաներեն և ռուսերեն լեզուներից։

Կզարմանաք, որ մինչև այժմ Ձեզ նամակ չէի գրել. (Հունվարից—ապրիլ). պատճառը հիվանդությունս էր և դրությանս անորոշությունը. առողջությունս այժմ լավ է, բայց դրությունս դարձյալ անորոշ — մի բան, որ շատ է խանգարում կենտրոնանալ-պարապել։

Ո՞ւր պիտի գնամ, ի՞նչ պիտի անեմ — ահա՛ ինձ զբաղեցնող այս անձնական հարցը, որ իհարկե, շա՞տ բնական է։ Մի քանի տարի առաջ ես Եվրոպայումն էի, հետո վերադարձա Հայրենիք — Կովկաս, ուր ձերբակալվեցի հայկական դատի առթիվ (ռուսաց կառավարությունից). մի տարի բանտարկվելուց հետո, ուղարկեցին ինձ աքսոր — ամբողջ երեք տարի է, որ ես անկախ չէի, կառավարության օրենքի տակ, հսկողության տակ, կապված-կաշկանդված. այժմ նոր եմ ազատվել և եկել եմ տուն, և զարթնել է այն հարցը՝ ո՞ւր գնալ։ ի՞նչ անել։ Այս շա՞տ է տանջում ինձ, և ո՛չ մի վճիռ դեռ չեմ կայացրել իմ նկատմամբ. իսկ այնքա՞ն եմ տանջվել, այնքա՞ն ժամանակ եմ կորցրել՝ և որը պետք է նորից վերականգնել, կորուստը փրկել, ուղղվել... Բայց ինչպե՞ս... Արդյո՞ք հնար ունիմ — լոկ միջոց տնտեսական, նորից գնալու Եվրոպա՝ շարունակելու ուսումս, քանի դեռ երիտասարդ եմ. իսկ եթե չկարողացա գնալ, ի՞նչ անեմ այստեղ — Կովկասում, ուր ո՛չ մի կյանք, հոգեկան շահեր չկան...

Հայ ժողովրդի մեջ, վերջին դժբախտ անցքերի շնորհիվ, տիրում է մի զառն հիասթափումն դեպի գրականությունը, մամուլը, միտքը, հասարակական կյանքը. այժմ ամենքը, թե՛ ինտելիգենտը, և թե՛ ժողովուրդը միայն իրենց տնտեսական շահերովն են կլանված և ընտանիքի մեջ ամփոփված։ Գրողի, մտածողի համար այստեղ օդ չկա... Իսկ մեր հայ գրողնե՞րը... խեղճե՞րը.... հացի խնդիր, դառն կարիք, ժողովրդի անտարբերությունը, կառավարության ճնշումներ, հալածանք... Ուղիղն ասած՝ ուժ չկա ապրելու...

Ի՞նչ անել այստեղ.— Հայ դպրոցները փակ, գրադարան-ընթերցարանները փակ. գրականությունը ճնշված՝ ինչո՞վ ողևորվել.— ժողովրդո՞վ. ժողովուրդը ծաղրում է ազգությունը» և շա՞տ ստոր մակերևույթի վրա է նրա հոգու աշխարհը... Այս բոլորին կան նպաստող, սիստեմատիկ հանգամանքներ-պայմաններ. հասկանալի են, որ արվեստական և բարձրից նյութած որոշ քաղաքական գործունեության պտուղ։

Ի՞նչ անել այստեղ... այս հարցը ինձ բոլորովին չլատում է, և ես հիմա շա՞տ հուսահատված եմ և կորած թե՛ ինձ, և թե՛ ուրիշների համար...

Երևի Դուք կպատասխանեք «ի՞նչ անելուն՝ «գրել-գրեցեք»... Բայց հոգի չկա գրելու, խանդ, պաթոս — ոչի՛նչ չկա... Իսկ տեղական միջավա՞յրը... Օ, Դուք չեք կարող երևակայել այստեղ...

Ահա՛ դրանք են պատճառները, որ ես մինչև այժմ անտարբեր եմ դտնվել Ձեր թերթին. սա շա՞տ դատապարտելի է իմ կողմից, բայց ի՞նչ անեմ. ուղիղն ասած՝ կարեկցության արժանի եմ դարձել. դիմում եմ այստեղի հարուստներին բաժանորդ գրվել մեր թերթերին, լրագրերին՝ ծաղրում են լրբարար... այդքան անտարբեր են. դրանով կարելի է բացատրել այն փաստը, որ «Մուրճը» մեր ողջ քաղաքում միայն 2 բաժանորդ ունի. 2 հա՞տ միայն, իսկ «Անահիտը»՝ երևի միայն քաղաքի կլուբը «ակումբը). և գիտե՞ք, մեր քաղաքը Կովկասի ամենաբազմամարդ հայաբնակ քաղաքն է՝ ղո՞ւտ հայերով, 30 000 բնակիչ, շրջապատված 200 հայ բազմամարդ գյուղերով, և այդքան թիթ ազգաբնակության մեջ հաղիվ մի տասը ինտելիգենտ-կրթված անհատներ գտնվին. մեր երիտասարդությունը, հին ուսուցիչները — բոլորը այժմ Բաքու քաղաքումն են, նավթի աշխարհում, ուր շա՛հ ունեն...

Երկար եղավ նամակս, և Ձեզ, երևի, ձանձրալի, մանավանդ որ անծանոթներ ենք, բայց ոչ՝ վաղուց ծանոթներ ենք, և ահա թե ինչո՛ւ կամաակամա սիրտս բացեցի Ձեր առաջ, բարեկամս։ է՛յ, դառն են մեր հայրենիքի պայմանները. օրհասի մեջն ենք, և հաղիվ կարող ենք օդ շնչելերանի՞ Ձեզ, որ ապրում եք մտքի աշխարհում, լուսավոր մարդկանց մեջ, և Միցկևիչի նման երազում եք հարազատ ժողովրդի վերածնությունը. երանի՞ Ձեզ, որ ընդունակ եք զգալու, խորհելու, և տանջվելու... Ես այստեղ անպատճառ կգրանամ և կլինեմ ամբոխի հարազատ որդին — քարե-զանգ, քարե-զանգ, որ ձայն չունի, համր է, մեռած, և չի կարող ղողանջել վեհություն ու գաղափար...

Ընդունեցեք խորին հարգանքս,

Ձեզ համակրող

Ավետիք Խաչատրյանց.

Հ. Գ. Սպասում եմ Ձեր նամակին. մոռս չունեմ իմ հրատարակած գրքից՝ «Երգեր ու վերքեր», որ ղրկեմ. հետո կուղարկեմ անպատճառ «Անահիտի»

չորրորդ համարը չէ ստացվել մեզանում, երևի ցենզուրան է գրավել։ Խնդրում եմ շուտով պատասխանեք նամակիս՝ ի՞նչ որ ուզեցել էիք ասել կորած նամակով և ի՞նչ որ հիմա կուզեք։

Ձեր՝ Ավ. Իսահակյանց.

Հասցեն՝ — Кавказ, город Александрополь (Эриванская губерния). Аветик Исаакян, Генеральская улица.

<ՀԱՅ ՌԻՍԱՆՌՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ>

<1899>, Մարիզամիլ

Այսօր ստացա Ձեր նամակը, որով հիշեցնում եք իմ պարտքը. ես հաստատապես չգիտեի, թե որքան եմ պարտք (արդյոք) ընկերությանդ, քանի որ իմ Կովկաս վերադառնալուց հետո ուսանող Մկր. Շարաբանդյանը վճարել է իմ պարտքը, բայց երևի իմ ընկերը միայն մի մասն էր կարողացել։ Բայց իմ պարտականությունն էր իմանալ այդ բոլորը հաստատապես, սակայն ես Գերմանիայից վերադառնալու օրից ընկա այնպիսի պարտքերի մեջ, որ ես ապրում էի ուրիշի հաշվով. հետո ես մի ամբողջ տարի բանտարկվել եմ, որի շրջանում, պարզ է, որ ես ինքս էի կարոտ դրսի օգնության. նրանից հետո էլ ես մի տարով աքսորված եմ եղել Օդեսայում, ուր ես հազիվ կարող էի ապրել՝ այդ հսկայական քաղաքում, ուր չկան ծանոթներ և հարմար գործեր։ Բայց հենց Օդեսայից գրեցի Հայդելբերգ, ուսանող՝ որքան հիշում եմ՝ Հախումյանին, որ գրի իմ պարտքի քանակը, որ վճարեմ. այն ժամանակ իմ ընկերներից ինձ օգնել էին փողով, ես կարող էի վճարել, բայց պատասխան չստացա, իսկ փողերը ծախսեցի։ Այժմ ես շա՜տ ընչին ոռճիկով աշխատում եմ Մարիզամիլ՝ այս զինվորական քաղաքում, գյուղում որպես հաշվապահ մի աղի մոտ, և հազիվ եմ ապրում, հետևապես ես չեմ կարող վճարել պարտքս, գոնե այս տարի, և ուրիշներից էլ չեմ կարող պարտք վերցնել, քանի որ չունեմ այստեղ ծանոթներ։ Դրությունս այս է, և խնդրեմ մտնեք իմ դրության մեջ, որ ձեր վճիռները կյանքից կտրված վճիռներ չլինեն։

Հիմա, ներվի ինձ, մի քանի խոսք ասել Ձեր վճռի մասին։ Ձեր վճիռը միանգամայն անտակտ մի քայլ է. նախ որ՝ այն պարոնները, որոնք պարտք են ընկերությանը՝ և՛ հարուստ են, <և՛ ունեն> գործ ու չեն

տալիս՝ դրանք կտրված են իրենց անցյալից, հայկական կյանքից և իդեալներից. նրանց մեջ մնացած է խիղճը դեպի օտար երկրում ապրող աղքատ ուսանող-ընկերները. նրանց համար ամոթ էլ չկա, իսկ լրագրությունը ինքնըստինքյան այնքան մի ընկած բան է, որ նրան կարդացող էլ չկա։ Իսկ այն մարդկանց համար, որոնցից եմ և ես,որոնց համար և՛ խիղճ կա, և՛ ամոթ, և՛ իդեալ, բայց աղքատ են և կյանքում անհաջող ու ճնշված,— նրանց համար դառն է իր<ենց> ուսանող ընկերների սենատորական-պետական վճիռները։ Ուղիղն եմ ասում ես. ես արհամարհում եմ լրագրությունը և համարում եմ փսխանք (Նիցշեի խոսքով ասած) և նրա մեջ գրողներին՝ իրենց սրտի կեղտը փսխողներ, և լրագրությունը ինձ չի կարող անպատվել, որովհետև ես իմ հոգում ինձ չեմ զգում անպատվված. փող չունեմ, հնար չունեմ, չեմ կարող վճարել, իսկ փող չունենալը հասարակության այսպիսի կազմության մեջ՝ պատիվ է բերում անհատին։ Լրագրությունը ինձ ի՞նչ կարող է վիրավորել, քանի որ ինձ ճանաչողները գիտեն, որ ես մի աղքատ ուսումնածարավ երիտասարդ էի, հոգով ավելի բարձր, քան նրանք, որոնք հրամայում են ինձ, վճիռներ հանում, և արտասահմանները չափչփում,— որ ես այդ փողը գործադրում եմ իմ հոգու ազնվացման, և որ ես մենակ եմ տոկոսը հատուցանելու։

Ես սովորաբար լրագիր չեմ կարդում, և արհամարհում եմ նրա միջի գրածները, հետևապես ձեր գրածն էլ կարհամարհեմ։ Լրագրում միշտ հայտարարվում է նվիրատուների, գաղան Մանթաշյանների մասին, կլինեն գովեստներ, ինձ պես (Ձեր կարծիքով) փող ուտող, կեղտոտ, ստոր մարդկանց վրա պիտի ցեխ քցել։ Երևում է, դուք, հարգելի ուսանող ընկերներ, հառաջադիմում եք Բիսմարկի հայրենիքում, դուք ես դառնում եք պատժի, օրենքի ներկայացուցիչներ։

Պատժեցեք, դատեցեք, բայց չէ՞ որ մեր հոգումն էլ այնպիսի վրեժ կծնի, որը զգալ<ու> դուք ընդունակ չեք, դուք՝ բախտավոր մարդիկ։

Իսկ այն տողերը, որ գրում եք, թե «ավելի խիստ միջոցի կդիմեք»— դա ավելի քան անմիտ խոսք <է>. այդ ցույց է տալիս, որ դուք դեռ անփորձ եք շա՜տ, և չգիտեք՝ ի՞նչ մարդկանց հետ գործ ունեք։

Կարճ՝ եթե կհամբերեք մինչև պարտքս վճարելը՝ լավ, եթե չէ՝ դիմեք ուսանողներին. Շանթին՝ Մյունխեն, Լևոն Աթաբեգյանին՝ Ցյուրիխ, Միք. Հովհաննիսյանին՝ Ժընև, կամ «Մուրճ»-ին, «Տարազ»-ին, և իմ անունով ուղեք իմ պարտքը՝ նրանք կհատուցանեն։ Իսկ եթե չեք ուզում այդ և չեք համբերում մինչև իմ վճարելը, ի՞նչ կուզեք արեք՝ համաձայն եմ։

Ավետիք Իսահակյան

ՋԱՎԱՀԻՐ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

2 դեկտեմ. <բիրի> 1900, Ֆյուրիխ

Ուրախ եմ, որ քեզ նամակ եմ գրում. դու կարող ես նույնիսկ չկարդալ էլ նամակս, բայց որ գրում եմ — հոգեպես հանգստանում եմ, օր. Ջավահի՛ր։

Քեզ տաբօրինակ կթվա այս, գուցե և (ավելի լավ է պարզ խոսել) լարծես, որ ես սիրահարված եմ քեզ, բայց դժբախտաբար այդպես բան, այդպես զգացմունք չկա սրտումս դեպի քեզ. եթե լինեիր՝ ուրախ կլինեի և լի կապրեի։ Դու ինձ թվում ես միայն քրոջ պես, և շա՜տ վաղուց ծանոթ, ների՛ր, որ այսպիսի հարցերի մեջ մտա, բայց դիտմամբ արեցի, որ քեզ հայանի լինի, թե ինչո՛ւ եմ աշխատում քեզ հետ նամակագրություն ունենալ։

Այստեղ ես շա՜տ մենակ եմ. Աթաբեգյանը, որին շա՜տ էի սիրում, հիմա ինձ օտար է թվում. գիտես, Ջավահի՛ր, ամբողջ վեց տարի իրար չէինք կարգին տեսել, և այդ ժամանակում մեր ճանապարհները իրարուց շա՜տ են հեռացել. նա հիմա դրական, որոշ, կյանքը հասկացած մարդ է դառել. յուր ստացած դիտության հետ էլ բուրժուական հակումներ է դառել. յուր ստացած դիտության հետ էլ բուրժուական հակումներ է ձեռք բերել — երազում է լա՛վ ապրել, հոգեր դնել, ապահովվել... Իսկ ե՞ս.— իմ ճանապարհս ուրիշ է. ես ուզում եմ թափառել, ես սիրում եմ լեռները ու աշուղի թառը, չոբանի շվին. ես երազում եմ բոլորովին տարբեր աշխարհներ... Եվ այժմ մեր հոգին իրարուց շա՜տ խորթացել է. նա ընտանի սագ է, ես՝ վայրի... Նա սիրում է քաղաք, տուն, տեղ, ես սիրում եմ թռնել, անապատներ, սարե՛ր... Ահա թե ինչո՛ւ եմ մենակ. ընայելով, որ միշտ իրար մոտ ենք լինում, բայց է՛լ հոգեկան աշխարհի մասին խոսք չկա.— լավ ծանոթներ ենք այժմ, միայն Քո մասին նրան բան չեմ ասել, և լավ չեմ էլ հիշում, թե դու ի՛նչ ես ասել։

Զմոռանամ ասել, որ Արսենը նոր ինձ նամակ էր գրել, և հայտնել էր, որ նրան նամակ չես գրում. գրիր, լա՛վ տղա է Արսենը. դեռ լա՛վ էլ ո՞վ գիտե, գուցե նա էլ փոխվի... Բոլորս էլ երևի փոխվելու ենք՝ դեպի վատը, անշուշտ։ Ճանձրացել եմ Եվրոպայից ու շատ եմ կարոտցել մեր կողմերին, մորս, քրոջս, հարազատներիս, երևանցը, մանավանդ մեր սազանդարներին և գյուղացոց. ընայելով, որ հիմա լավ եմ պարապում, բայց այդ չի ոգևորում ինձ. թե ինչո՛ւ եկա Եվրոպա՝ այդ նպատակը այնքան ուժեղ չէ, որքան այն, որ ձիով մի գյուղից անցնեի, և վրիս շները հաչեին, ու մի գռնից էլ մի սառը ջուր խնդրեի, և հայ աղջիկը ինձ ջուր տար։ Մտածում եմ, որ մայիսին վերադառնամ. ես չեմ կարող Եվրոպա մնալ. հոգիս դուրս է գալիս. ես ո՛չ գիտական եմ լինելու (ինչպես հայ ուսանողներից ոչ ոք), ո՛չ էլ ապագայի հացի համար եմ մտածում. ի՛նչ ուզում է լինի, ես հայ ժողովրդից հեռու չեմ կարող ապրել։

Երազումս միշտ թառի ձեներ եմ լսում և շա՜տ ուրախանում եմ, երբ գիշեր է գալիս. քնել ու հայրենիքի կարմիր, սիրուն երազները տեսնել...

Քեզ ո՞նց է. Ֆրանսերեն հիմա երևի լավ սովորեցիր։ Հա՜, ինչպե՞ս է Տ. Հորտանսի (Հոնանի կնոջ) առողջությունը. միշտ հիշում եմ նրան. ա՜խ, ի՜նչ լավ կին է։ Երևի երևը առս ուսանողների երեկույթն էր, գնացել էի. շատ գոհ եմ. սամովարի թեյ խմեցի, մայրուսների պարերը տեսա, Վոլգայի երգերը լսեցի։ Այսօր գերմաներեն մի լավ ոտանավոր կարդացի. թարգմանեմ, տես, որքա՞ն ճիշտ է արտահայտում մարդուս սիրտը. հեղինակն է նոր բանաստեղծ K. Busse։

— Այս լեռներից հեռո՜ւ այն կողմ
Մարդիկ կըսեն՝ բախտն է ապրում.
Ա՜խ, մարդկանց հետ ես էլ գնացի,
Ու հետ դարձա՝ աչերս արցունք։
Այս լեռներից հեռո՜ւ, հեռո՜ւ
Մարդիկ կըսեն՝ բախտն է ապրում...

Վա՜յ ինձ, ո՞վ գիտե, գուցե ես էլ եմ երազում, որ այստեղից հեռո՜ւ, հեռո՜ւ, մեր սարերում բախտն է ապրում. և գնամ ու արցունքոտ աչքերով... հետ դառնամ... ո՞ւր... Շատ լավ ոտանավոր է, մանավանդ բնագիրը հրաշալի է. ռուսաց առածին՝ «там лучше, где нас нет» — *շատ նման է։*

Բարևիր Լուսոյին, Ղազարին և Վարդանյանին. (դա լա՛վ տղա է, մաքուր է, բայց տիրացու է. նոր է հասկանում աշխարհի խիրն ու շարը. դրա համար շա՜տ է խոսում,— ոչինչ)։

Բարևներ՝ Ավետիք

ՋԱՎԱՀԻՐ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

1901 մարտի 11, Վիեննա

Գիշերը ժամը 3-ին եմ գրում. այս գիշեր էլ չեմ կարող քնել. մինչև այժմ արթուն էի և «Ավետարան» էի կարդում, Հիսուսի հետ էի խոսում. հոգնեցի, վեր կացա, շորերս հագա և հիմա էլ քեզ հետ եմ խոսում,

դո՛ստր Հիսուսի... Օ՜, երևի պիտի զարմանաս, որ ես կրոնական եմ դարձել. ո՛չ, սիրելիս, ես անհավատ եմ, չեմ ճանաչում աստված, և այդպես էլ կմնամ միշտ. բայց Հիսուս իմ հոգումս միշտ կմնա որպես հիվանդների և վշտացյալների սրտանց ցավակից.— «Եկե՛ք ինձ մոտ ամենայն վշտացյալներ և բեռնավորներ, և ես կհանգստացնեմ Ձեզ»— Ո՛չ ոք այդպես ուղիղ չի կանչում թշվառին. միայն նա է, և ես հետևում եմ նրա սուրբ ձայնին. ո՞ւմ ձայնը աստվածային վեհ է, քան նրանը... Ո՛չ մի ուրիշի... Նա ինքը տանջվող մարդ էր և հարգում էր տանջանքը... Գիտությունը ասում է, որ տանջվող մարդիկ վերջը միստիկ են դառնում, մրթնում է նրանց ուղեղը... Թո՛ւ ասա. բայց իմ ուղեղս վառված է հազար ու մի արևներով, և այդ է պատճառը, որ այրվում եմ ես... Ես պիտի գնամ իմ ճանապարհով՝ բեռնավորված համաշխարհային վշտի ծանրությամբ, ա՛յդ բաժին ընկավ ինձ։ «Մի վիշտը հազար ուրախություն արժե» — ասում է Դանթեն. և ես կտանեմ իմ վիշտը,— ես չեմ փոխի այն՝ ամբոխի հրճվանքի և տոփանքի հետ. թող երբեք իմ դեմքիս վրա ժպիտ չծաղկի, և հույսը թո՛ղ չծաղև իմ հոգում. սիրո ծիածան, վարդեր պետք չեն ինձ... Աշխարհի մոայլը ավելք ինձ և վարդերի փշերը. ես կփաթաթվեմ մոայլով և կպսակվեմ փշերով... ու կգնամ իմ ճանապարհով — տանջվողնե՛ր, հուսահատնե՛ր, զարկվածնե՛ր շատ կան, և ես նրանց մոտ կգնամ, մի բարի խոսք, մի կաթիլ ջուր տալու համար...

Ո՞վ է բախտավոր աշխարհում.— այս դժվար հարցին մի մեծ մարդ պատասխանել է այսպես. «Նա՛ է բախտավորը, ով լա՛վ ստամոքս ունի և վա՛տ սիրտ...»։

Ես չեմ ուզում այդ բախտավորությունը. թշվառությունը նվիրական է, և թշվառ լինել, կնշանակե ավելի բախտավոր լինել...

Իմ թանկագին Ջավահի՛ր, ես տանջում եմ քեզ անշուշտ. ես այս գիտեմ, որովհետև, եթե գիտենամ, որ դու անտարբեր ես դեպի իմ տանջանքները, իհարկե ոչ մի տող նույնիսկ՝ չեմ գրի. բայց ես չեմ ուզում քու սերը դեպի ինձ <ի> չարը գործածել։ «Աղբյուրի շատ բխելը կտրվելու նշան է» — ես էլ որ սիրտս բանամ, վերջացնեմ,— այլևս քեզ հետ գործ չեմ ունենա. մեր ճանապարհները կհեռանան,— ես դեպի՛ անապատը, դու — դեպի կյանքը։

Վստահ կարող եմ ասել, որ ես ինձ չեմ սպանի. սրանից ծանր տանջանքներ թեկուզ պատահին,— ես պիտի տանեմ։ Ես խոսք ունեմ ասելու մարդկանց. սրտիս դժոխային հնոցներից դուրս եկած, բովված խոսք, որ ծա՜նր, ծա՜նր երկաթի պես պիտի ընկնի մարդկանց խղճի մեջ. մարգարեական կոչումն եմ զգում մեջս. կայսրներից և առյուծներից չեմ վախենում. իմաստության օձը սրտումս՝ ես կգալարվեմ մարդկանց շարքերի մեջ. կխայթեմ շարքի գարշապարը,— և ի վարձ այդ ամենի, կախաղանի վրա բա՜ծր և վե՜հ կճոճամ, որ ոտքերիս տակ ամբոխը խռնվի, սողա՜, դողա՜...

Եվ ես կհեռանամ կյանքից, կյանքի վայելքներից. պետք չեն դրանք. ամեն մի վայելքը հազարավոր զոհերի տանջանքով է լինում. ես չեմ ամուսնանա. բացի այն, որ չեմ ուզում, այլև վրաս բարոյական պարտք կա չամուսնանալու. ես ծնունդ եմ ջղային հորս, իսկ իմ որդին ժառանգապես ավելի ջղային պիտի լինի. ես անիծում եմ հորս. բայց որքա՜ն պիտի անիծե իմ որդին ինձ, ինձ, որ իմ հորից ավելի կրթված ու զարգացած եմ համարվում, անշուշտ եվ ես պիտի մնամ մենակ,— մենակ երկրի մեջ, բայց բյուրավոր թշվառների հետ միասին.— ուրիշ կերպ չեմ կարող հաշտվել կյանքի հետ. կյանքը ինձ շպրտում է դեն, ես նրա խորթ որդին եմ, բայց կոչումն եմ զգում մեջս, մարգարեի կոչում. և խոսք ունիմ ասելու.— պիտի ապրեմ, պիտի չմեռնեմ։

Ուզում էի երկար նամակ գրել, մեծ թուղթ վերցրի, բայց հոգնում եմ. երևի պիտի քնեմ մի քիչ. առավոտ պիտի գնամ բժշկի մոտ. միջոցներ ձեռք կառնեմ ոչ միայն վենետիկ գնալու, այլև մինչև արևելք. Գաղեստին համփորդելու. պիտի Հիսուսի ման եկած վայրերը շրջեմ, պիտի Հորդանանի ջուրը խմեմ և Երուսաղեմի դաշտերի շուշանը հոտառեմ...

Վերջացնում եմ նամակս.— խնդրում եմ ներողություն, որ քեզ հոգնեցնում եմ. երևի մի քիչ նախանձում եմ քու առողջության վրա, որ չեմ ուզում քու հանգստությունը. ո՞վ գիտե — մարդու հոգին առհասարակ շա՜տ նեսական է...

Ընդունիր կարոտալի բարևներս, իմ անգին քուրիկս,—

քու Ավետիք։

ՋԱՎԱՀԻՐ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

1901 հունիսի 6, Վենետիկ

Անմոռաց Ջավահի՛ր,

Նամակներիդ մի քանի կետերին ի պատասխան գրում եմ.—

Արդեն Վենետիկ ինձ ամեն մի ժամ մնալը բանտի պես տաժանելի է. և՛ շոգ է, և՛ շափազանց մոայլ եմ, և՛ էլ չեմ լողանում (ջուրը տաք է, վատ է ներգործում ջղերիս վերա),— բայց փողի եմ սպասում ու չեմ ստանում. ստացած օրը հենց դուրս կգամ։

Եթե չհասա ամսվավերջին՝ դու գնա՛, բալամ, դու համփեդ գնա՛. կամ եթե շոգից չես վախենում՝ Վիեննայով արի (Ժընևից մինչև այստեղ III կլաս 36 ֆր. այստեղից Վիեննա 25 ֆր.։ Իսկ Ժընևից Վիեննա III կլ. 38 ֆր., ուրեմն տարբերությունը 20—25 ֆր. այստեղով գալուս. բայց Աստված ոչ անե՝ ես մինչև ամսվա վերջը մնամ. շոգուց կխելահիմ)։

Իմ գրությունը այժմ, քան երևիցն, անորոշ է, կրիտիկական և հուսահատ. ես նկատում եմ, որ կատարյալ հերոս եմ — դիմանալու, համբերելու, տանջվելու մեջ. ո՛չ թե քաջություն և ազնվություն. ստրկի պես տանում եմ կյանքի շղթանները, բեռը։

Իսկի չգիտեմ ի՞նչ եմ անելու. ամբողջ բախտս կտրված է հիվանդությանս ընթացքից. եթե լավի նշաններ նկատեցի մի քանի ամսվա ընթացքում, սրտիս ուրախությունից կրկնակի կլավանամ... Թե կառնեմ ու էթոնեմ. ի՞նչ էլ որ լինի ձմեռը կլինեմ մոտդ, Ժընև, ո՞ւր որ լինես, իսկ եթե գրությունս մնա նույնը կամ դեպի ավելի վատը դարձավ, այն ժամանակ միշտ մնաս բարև. էլ ո՛չ մի նամակ, էլ ո՛չ մի բարև. գլուխս, հիմար, գիժ, անիծած գլուխս պիտի առնեմ ու անհետ-անդարձ կամ կորիմ երկրի երեսեն, կամ պիտի առանձնանամ մի անկյուն, մի վանք, մի կղզի (Սևան) և նվիրվեմ փիլիսոփայության և մետաֆիզիկայի, որ մոռանամ ինձ, կյանքը, ընկերների, հեղափոխություն, հայրենիք, ապդ...

Ուրիշ ելք չունեմ,— հոգիս է հիվանդ, հոգեկան հիվանդ եմ, հիպոխանդրիկ-մելանխոլիկ-նեվրասթենիկ. այս տեսակի հիվանդների մեծ մասը կամ խելագարվում են կամ ինքնասպան լինում, և երևի իմը դեռ այդ աստիճան չէ հասել։

Ամբողջ սրտով ատում եմ ինձ, մեր ընտանիքին, մի շարք ընկերների, մի ահագին քանակության հեղափոխականների, հայոց ազգի մեծամասնությանը և մարդկությանը. սիրում եմ մոայլ ժայռերը իր<ենց> թունավոր օձերով, ձյունապատ լեռները իր<ենց> էլուսական մաքրությամբ, ծովերը՝ իրենց մրրիկներով, անապատները՝ իրենց վայրի փշերով ու ծակող ծաղիկներով և կղզիները՝ իրենց լռությամբ։

Այժմ ես վախենում եմ, որ դու սիրահարվես վերաս և հետո շա՞տ տանջվես. ինչքա՞ն կուզես ինձ սիրիր, ազատ ես, բայց սեր, սիրահարություն մտքիդ հետո՛ պահիր։ Քու վերջին նամակներից ես վախենում եմ, և ինձ դատապարտում եմ, որ այդպես մոտեցա քեզ, նամակներ գրեցինք իրար։ Հանցանք է ինձ համար ամուսնությունը և անաղնվություն՝ աղջիկ խաբելը, այլանդակ սերունդ թողնելը. օ՜հ, ինչքա՜ն կցանկանայի որդիներ ունենալ, առո՛ղջ, առո՛ղջ, բայց ես ի՞նչ եմ,— ոչի՛նչ, ոչի՛նչ. անիծված լինեն ինձ ծնողները, իրենց հաճույքի համար ես եմ առաջացել.— զայրացած եմ հորս դերեզմանի դեմ և մորս նույնիսկ չեմ ուզում տեսնել. երազումս տեսնում եմ և հետը չեմ խոսում... Բայց որ մայրս վաղը մյուս օր մեռնի՝ ես ցավից, վշտից եթե չիեղաբարվեմ, հիվանդությունս կրկնակի պիտի անի. դրությունս անհուն, անհուն հուսահատական է. ժամերով մտածում եմ ու ելք չեմ գտնում, ինձ չեն հասկանում, և ուղեղս բորբոքվում է, պայթելու դրության հասնում. և մոլորվում եմ... աչքերս սառել, մնացել են երեսիս վրա՝ դիակի աչքերի պես, երբեմն ծերունու պես, մահացածի պես՝ մահս այնքան մոտիկ եմ զգում, որ դագաղի, գերեզմանոցի մոտից անցնել վախենում եմ. մեռել որ պատահում եմ, սարսափում եմ. թվում է ինձ, որ ես եմ մեջը, կամ վաղը ինձ են տանելու։

Դու համփեդ գնա՛, և հետ մի՛ նայիր. իմ անունը իսպառ մոռցիր, և մեռած համարիր. ու խնդրում, աղաչում եմ քեզ, հազար անգամ աղաչում եմ՝ ինձ է՛լ նամակ մի՛ գրիր. ի՞նչ օգուտ, ի՞նչ օգուտ. իզուր պիտի տանջվիս. գնա՛ կյանք մտիր, ուրախացի՛ր, վարդեր քաղե, սիրի՛ր, համբույր տուր, համբույր առ, հուսավառ աչքերով նայիր ապագայիդ վերա. Թող մեռելները հանգչին իրենց քարերի տակ, և տանջվողների սրտերը օրեցօր չարդվին. աշխարհի պատմությունն է այդպես. մարդիկ հրճվում, պարում են մեռելների գերեզմանների վերա. դու հանգուցյալ եղբորդ հո՞ ինձնից շատ չէիր սիրում, բայց ո՞նց մոռացար նրան, և նրանից հետո որքա՜ն ուրախ, լիակուրծք ծիծաղում էիր. երթա՛ս բարև, երթա՛ս բարև, ուր որ լինես՝ արևդ կանաչ լինի. երբեք չտխրիս. արցունքի կարոտ մնաս. միշտ առողջ լինիս և խաղաղ քնիս. փորձանքից ազատ մնաս. չխաբվիս և չխաբես. մաքուր սիրես, մաքուր սիրվիս. բայց ամենից առաջ ինձ մոռացիր... Նույնիսկ լավ կլինի, որ էլ չպատահինք իրար. շուտ գնա. և Վիեննայով մի՛ արի. քեզ շա՛տ եմ ուզում տեսնել, բայց և շա՛տ եմ վախենում. օ՜ֆ, ինչե՞ր եմ դրում. դու ուրտեղի՞ց ինձ պատահեցար. օ՜ֆ, կորի գնա՛, գնա՛, հեռացիր, աչքիցս գնա. էլ դու չկաս ինձ համար.

Ա.<վետիք>

<Հ. Գ.> Նամակ չգրես, առանց բանալու հետ կուղարկեմ։

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

1902 հուլիսի 21

<Նամակի սկիզբը պակասում է>

<...> «Սասունցի Դավիթիդ» մասին.— նորից կարդացի.— միակ պակասությունը նրանումն է, որ բնության նկարագրեր չկան, որոնք քեզ

շատ կհաջողվեին՝ իբրև էպիկի, բայց որ Սասունը չես տեսել, ի՞նչ նկարագրես. իսկ այն ես ճշմարիտ է, որ ամբողջ պոեմը, կարծես, լիջորեն, խորը մտածած չես գրել, հավատարիմ ես մնացել նախկին որոշմունքիդ — մանուկների համար. բայց ավելի լուրջ և ծանրախոհ կարելի էր գրել, ինչպես Ցիրոդուսու Շահնամեն, Յորգանի Նիբելունգը և Հերկերի Սիդը, որտեղ, բացի բուն նյութից կա և անհատական ստեղծագործություն. քոնը ուղղակի՝ նյութի ոտանավոր, մի փոքր մշակած վերածումն է։

Ինձ ամենից շատ դրավում են ժողովրդական ոճերն ու դարձվածքները, որոնցով չափազանց հարուստ է, և մանավանդ էպիկական պատմելու ձևը — Հանդիսատեսը, վերջին հանգիստ, և հումորը. հույս ունեմ, որ Մեհեանդուխտի սերը հաշող դուրս կբերես, բայց նախորդը պրում եմ Մհերի անհաջողությունը,— Մհերը կիսատ, չարդված հերոս է, լիքը հակասություններով, երևի պետք է նորանոր վարիանտներ գտնել՝ լրացնելու այդ պակասը. ժողովուրդը Դավթին է սիրել ու սիրում, ու նրան հարստացրել է։<...>

Մեծ սպասելիք ունեմ Սինամ թագավորիցդ, քանի որ նրա մեջ կա քո անձնական ստեղծագործությունդ, կ սիմվոլ և գեղեցիկ պատկերներ, անհամբեր սպասում եմ գրքիդ լույս տեսնելուն՝ կարդալու համար «Անուշը»... Բայց ինչ էլ որ լինին քո պոեմներդ՝ մեր գրականության մեջ դաշրջան են կազմելու Ապրիր և ստեղծագործիր — ահա քո ուղին. մեզ թող կովի դաշտը, ինչ կուզե թող լինի. — «Թող կործանվի աշխարհը, և ես կընկնիմ նրա ավերակների տակ». սա Հորացիոս բանաստեղծի խոսքերն են, որ իմ վերջին տրամադրության լոզունգն է, նշանաբանը։

Համբույրներով՝ Ավետիք

ՇՈՒՇԱՆԻԿ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ

<1904>

Նորից վեր եմ առնում գրիչս, թաթախում եմ հիվանդ, արյունոտված սրտիս մեջ և գրում եմ քեզ, Շուշիկ, մի քանի տող, գրում եմ ես՝ Ավետիք Իսահակյանս։

Ինչո՞ւ եմ գրում, ի՞նչ է ստիպում ինձ գրել. — սիրել — ես քեզ չեմ սիրում, ատել — ես քեզ չեմ ատում. բայց դու իմ հոգում կաս՝ որպես մի ծանր հրաղ, որպես մի դժբախտություն, մի կոշմար. ես ուզում եմ քեզ հոշոտել, ես ուզում եմ քեզ հազար-հազար անգամ սպանել, սպանել, նորից սպանել, կենդանացնել՝ նորից սպանել, հավիտյան ապրել և քեզ հավիտյան սպանել, բայց այդ չեմ կարող անել [անզոր եմ քեզ], ամբողջ

էությունս բարի է... և որ ամենաողբալին է՝ ես դեռ քու ճիրաններում եմ. ի՞նչ անեմ, ինչպե՞ս ազատվեմ. երբեմն քեզ ատում եմ ծովաչափ, ծովաչափ, և երբեմն սիրում եմ և պատրաստ ոտքերդ համբուրելու, բայց որ հիշում եմ անցյալը, ես մրրիկ եմ զառնում։

Դու մի՛ որոնիր այս տողերի մեջ որոշ միտք, որոշ իմաստ. ես գրում եմ համարյա կիսախելագար, և մինչև մահս քեզ էլ ո՛չ մի տող գրելու չեմ, և աչերիդ նայելու չեմ, Աստվա՛ծ է վկա. վերջին անգամ պիտի լամ քու առաջ և հայհոյեմ քեզ, հայհոյեմ,— հայհոյեմ քու բոլոր սրբությունները, որովհետև դու իմ սրբությունները պղծեցիր, որովհետև իմ ամենանվիրական սերս շան պես դուրս վռնդեցիր, որովհետև դու ինձ չարչարեցիր, նահատակեցիր՝ անսահմանորեն։

Դու ասում էիր ինձ, որ ինձ չես սիրել — գիտե՛մ, գիտե՛մ. բայց այդ քեզ իրավունք չի տալիս, ինձ՝ երբ ես քու ոտքերի տակ տիեզերական հզոր սիրուցս սառորացած ընկած էի,— ծաղրելու, արհամարհելու, դուրս շպրտելու. չէ՛ որ, Շուշիկ ջան, ես մարդ էի. չէ՛ որ, կային օրեր, որ դու ինձ գոնե հարգում էիր, «Թանկագին» և «ջան» խոսքերով խաղում էիր հետս... և այդ բոլորից հետո դու ինձ ոտաց տակ տվիր. խփեցիր ջահել սրտիս մեջ դաշույններ՝ չհանեցիր նրանց, թողիր սրտիս մեջ — մնացին, ժանգոտվան, և արյունովս իմ քայլափոխերս ծածկեցին, բայց դու մնացիր դեպի ինձ միշտ ծաղրող, միշտ անգութ, միշտ անսիրտ...

Եթե ամենակատաղի թշնամուս սիրեի, իմ, դեպի քեզ մրրկող սիրուս մի չնչին մասով, թշնամիս ինձ կգրկեր, կգուրգուրեր և կմխիթարեր... Իսկ դու — դու գիտեիր իմ դժոխային տանջանքներս, բայց մոտ չեկար, մի անուշ խոսք չասիր... ես քեզնից է՛լ սեր չէի ուզում. քեզ սիրել չէի ուզում, բայց քու մեջ մարդ տեսնել կուզեի, և որ՝ դու իմ մեջ մարդ տեսնեիր...

Դու ասում էիր ինձ, որ այն ժամանակ ջահել էիր և ուրիշները ներշնչում էին քեզ... Բայց, բայց... չէ՛ որ ջահելները ունեն գթառատ սիրտ. բայց մի՞թե դու ջահել էիր. դու հասած էիր՝ և այն էլ շա՛տ զզվելի կերպով, որ առաջին պատահող ամուսնու գիրկն ընկար...

Այո՛, մենք հետո բարեկամացանք, գուցե դու հետո ինձ սիրեցիր, բայց այդ օրվանից ես քեզ սկսեցի ատել և հայհոյել. դու հետո ինձ սիրում էիր ո՛չ մաքուր կերպով, այլ ֆիզիկապես... Ես զզվում էի քեզնից. բայց և անդիմադրելի կերպով սիրում էի. ա՜խ, ամբողջ 13 տարի դու նստել ես ու բռնել իմ ողջ, ողջ ուղեղը, հոգին և սրբապղծել իմ ողջ երկինքը... Դու ինձ արնաքամ արիր, գուցե ակամա, դու սպանեցիր իմ տաղանդը, դու ինձ մղեցիր ամենածանր, դառն հուսահատության, երբ ես ամբողջապես թաթախված ինքնասպանության ծանր մտքերով, հան-

կարծ սիրափվեցի — ինձ դուրս կանչեց ժողովուրդը, հեղափոխությունը, իմ ջանքավորված դեռին — ես տեսա իմ աչքում բոլոր իլյուզիաները ցրված, վարագույրները բացված և քեզ՝ որպես ամենավատ կինը բոլոր կանանցից... և քեզ հայհոյեցի աշխարհի ամենածանր հայհոյանքով, որ իմ կյանքում մի անգամ եմ ասել, և այն էլ քեզ, իմ հոգուն, իմ իդեալին. այժմ մաղերս փետանում են և ամաչում եմ, և սոսկում եմ այդ հայհոյանքից... Եվ այն օրից, երբ գրեցի...

Շուշիկ, սատանի, սիրելի Շուշիկ, ուրիշ կերպ ես չէի կարող վարվել. ես պիտի քեզ անպատվեի, վայր գցեի, որ կարողանայի ազատվել այդ հրեշային սիրուց, որ ինձ ծծեց, կամ սպանեի ինձ. սպանել չուզեցա, որովհետև բնությունը իմ մեջ շա՜տ է կյանք և կյանքի ուժ ու սեր դրել, բայց հայհոյել կարողացա. իհարկե, ավելի լավ էր մեռնեի, քան հասնեի այն օրին, որ իմ դարեր, դարեր պաշտած երազը սրբապղծեի, ոտոտակ տայի... Բայց այս բոլորի միայնակ մեղավորը դու ես։

Այժմ ի՞նչ եմ ուզում ասել ես.— խոսքս հետ չեմ առնում, բայց այդ հայհոյանքով էլ չբժշկվեցի ես. դու մի սոսկավիթիար վերք բացիր հոգուս մեջ, և ոչ մի երկրային ու երկնային դեղով դա չի բժշկվի... Այժմ դառնաս իմ կինը — ես խսկույն կփախնեմ քեզնից. դառնաս հին Շուշիկը՝ ես կսպանեմ ինձ՝ շտեսնելու համար տանջանքների այն ծանր շղթան, որ տարիներ ի վեր ինձ կաշկանդեց...

Բայց լավես եմ հիմա, և սրտիցս արյուն է կաթում. գնա՛, Շուշիկ, Աստված քեզ հետ, ապրի՛ր քու երեխաների համար. ինձ մի՛ անիծիր. իմ անունս երբեք, երբեք մի՛ հիշիր և ոչ մի տեղ, և ոչ մի տեղ, ոչ մի մարդու մոտ. աղաչում եմ քեզ. ինձ թաղիր քեզ համար հավիտյան, ինձ երբեք մի՛ նայիր. աղնիվ խոսք տուր այդպես վարվելու. ես թող բոլորովին չեղած, չծնված մարդ լինեմ քեզ համար. հոգիս խոստում է, երբ մտածում եմ, որ երբեմն դու կմտաբերես ինձ. պետք չէ հիշել այն տաճարում մի ուրիշ Աստծու անուն, որին այդ տաճարը չի պաշտում, մի <հնազանդվում>. չպետք է այդ տաճարում ուրիշ ձոնի սեղան ու պատկեր դրվի. քու հոգու տաճարից թող ես լինեմ դուրս՝ ես օտար, շնանալված Աստված եմ այդտեղ։

ԱՂԱՉՈՒՄ ԵՄ ՔԵԶ...
ԵՍ ԷԼ ԿՎԱՐՎԻՄ ՔԵԶ ՀԵՏ ԱՅԴՊԵՍ,
ԴՈՒ ԻՆՁ ՀԱՄԱՐ ՄԵՌԱ՜Ր, ՄԵՌԱ՜Ր...
ԱՐՏԱՍՎԵԼՈՎ ՀԱՄԲՈՒՐՈՒՄ ԵՄ ՔՈՒ ԳԵՐԵԶՄԱՆԸ
ԵՎ ՃԱՄՓԱ ԸՆԿՆՈՒՄ
ՆՈՐ ԱՍՏՎԱԾ ԳՏՆԵԼՈՒ...

Ավետիք։

ԵՎԳԻՆԵ <ԹԻԹՈՅԱՆԻՆ>

<1904> սեպտեմբերի 15, Ալեքսանդրապոլ

Բարձրացանք Արարատի հավիտենական ձյունափառ լեռնագագաթը և իջանք նորից դաշտը — ժողովրդի մեջ, հազարավորների մեջ, ուր մարդը ընչին է ու բանա՛լ, իսկ այն ալմաստե բարձունքում մարդը մենակ էր, հզոր, առանձին, արքայական...

Սրանից մի 12 օր առաջ հինգ ընկերներով Ալեքսանդրապոլից առավոտյան՝ նոտած լավ ձիերի վերա՝ ճանապարհ ընկանք դեպի սարը. երեկոյան հասանք լեռնալանջում մի գյուղի և գիշերեցինք մի ընկեր-գյուղացու մոտ. մյուս օրը այդ գյուղացու և ուրիշների հետ ճանապարհ ընկանք. ձիով և ոտքով. շա՜տ դժվար էր ճանապարհը՝ սար ու ձոր, քար ու ժայռ, բայց չափազանց գեղեցիկ էր. լեռնագագաթից փչում էր քաղցր քամին, առվակների ու աղբյուրների քչքչոցը, թռչունների ձայնը, կապույտ երկինքը և նկարչական պեյզաժներ, բա՛ր, մո՛ւթ ժայռեր... Ահա ճանապարհը...

Երդելով, ձիերը բշելով (հարմար տեղերում), լճերի մեջ լողանալով գնում էինք. երեկոյան հասանք լեռան գագաթի անմիջապես տակը, ուր ձիով չի կարելի մի քայլ անել նույնիսկ. պետք է ասել, որ Արագածը, չնայելով, որ Արարատից-Մասիսից ցածր է (Արարատը 5 վերստ բարձրություն, իսկ Արագածը 3 և կես վերստ), բայց նրանից ավելի լայնանիստ տարածված, ահագին լանջերով, փեշերով... Երեկոյան գիշերեցինք քուրդ հովիվների վրանում, և առավոտյան կանուխ, ոտքով, սկսեցինք բարձրանալ գագաթը... Սարսափելի դժվար էր՝ ձյո՛ւն ու քա՛ր, քա՛ր ու մեծ ժայռեր, թեք. շնչասպառ էինք լինում. բայց քանի բարձրանում էինք տեսարանները ավելի վսեմանում էին, հորիզոնները ընդարձակվում. երկիրը ավելի ցածրանում, շրջակա սարերը մանրանում, և հեռվից մեծ սարեր երևում... Ահա՛ և գագաթը. բա՛ր, սա՛ր, ամպ՛ա, վե՛հ և միստիկական-փիլիսոփայական... Կեսօրին լեռան գլխումն էինք. հրացանի սրոտմունքով ողջունեցինք մեր վերելքը. արձիվները շփոթված պտույտ գործեցին մեր գլխ<ավերևը>, միայն երկինքը և արևը մնացին լո՛ւռ, անտարբե՛ր և ագա՛ռ... Փչում էր ապա՛ռ քամին այդ բարձունքում և գնում դեպի Հիմալայ կամ ավելի հեռու՝ գալով ավելի հեռու տեղերից... Ես հեռացա մի ժայռի վերա և դիտում եմ շուրջս. դիտակով նայում եմ... Ահա՛ հեռվում Կովկասյան լեռնաշղթան, Էլբրուս, Կազբեկ. ահա՛ Սև ծովի՝ մշուշի նման, ահա՛ անթիվ մանր ջարեր, ձորեր, գետեր, լճեր. ահա՛ Արարատը. ահա Ճակա-Հայաստանի լեռները... և շա՜տ, շա՜տ հրաշալիքներ... Նայում

ես, նայում ես և չես հագենում... Սկսում ես ընկնել մտածմունքների մեջ... Մոքերի ծով, մոքերի լեռնագագաթներ... Ի՞նչ է մարդը, ի՞նչ է նրա հոգին, ի՞նչ է ուզում, ինչո՞ւ է մենում. որքան լավ է ապրել, ու բարձունքում հրաղել և հավերժ մտածել... Բայց մահ կա, բայց մարդը այս չնչին ավազից, որ այս ժայռի վերա է, ավելի կարճ կյանք ունի. այս ձյունից ավելի շո՜ւտ է հալչում... Եվ տխրում ես. հիշում ես սիրած մարդկանց. ահա՜ ընկերներդ՝ մեռած, սպանված, բանտում՝ երևում են աչքիդ ու գնում, ահա մայրդ. սիրածդ աղջիկը՝ գնացին... և դու մնում ես լեռան գլխին մենակ, լեռան պես բարձր. մենակ և փայլուն... Մի բոպե սիրող թռչում է արծվի պես, և ուխտում ես՝ լինել մի՜շտ ազատ, բա՜րձր, հզո՜ր, սո՜ւրբ, մենակ և քաջ. ձգտել կատարելության, իդեալի և մեռնել ազատանդյա բարձունքում, երկնքին մոտ, Աստծու ձեռքերի վերա...

Մնացինք մի-երեք ժամ լեռան գլխին, հանգստացանք, մի քիչ հաց կերանք, կոնյակ խմեցինք. մրսում էինք. ձյուն ու սառույց ծծեցինք և սկսեցինք իջնել. արդեն ամպերը կամաց-կամաց ուղտերի ու վիշապների քարավանի պես գալիս են, դիզվում սարի վերա. մենք դեռ կեսը չէինք իջել, երբ ահա հալարավոր բոմբերի նման պայթեցին ամպերը և ահագին կայծակն թուրը շողշողաց. ամբողջ լեռը ինդում էր ու մռայլ գագաթները կորել էին ավելի մռայլ ամպերի տակ. երբեմն միայն կայծակի լույսով երևում են գագաթները՝ որ<ոնց> վերա թափվում են կայծակները. (Արագածը ունի 4 մեծ գագաթներ, որոնց մեջ կա մի լիճ՝ հին հրաբխային կրատերի բերան. մենք բարձրացանք միայն մեկի գագաթը). մենք վախ ենք զգում. բայց ես կարծես թե ուզում էի կայծակահար լինել, և կայծակով զարնված սրտով մեռնել այս ամայի, վեհ բարձունքում... Իջնում ենք. ահա ամպերը եկան և մեզ ծածկեցին. իրար հաղիվ ենք տեսնում. ամպերի մեջն ենք՝ հին աստվածների պես... Կես ժամից հետո ամպերն անցան. մենք իջանք ներքև. ձիերը նստանք, և երևիոյան դարձյալ քրդերի մոտն էինք. մյուս օրերը շրջեցինք հայ գյուղերը, և երեկ հասանք քաղաք։

Առայժմ այսքան, թանկագին Եվգինե. վաղը գնում եմ մեր գյուղ, և խնդրում եմ ինձ շուտով գրեք, ձեր առողջության, ձեր տրամադրության մասին։

Կարոտալի բարևներով, Ձեր **Ավետիք**

Հասցեն՝

Ст. Агин (Эрив. Ж. д.) (Закавказье. Эриванс. губ.) Исаакян.

Սա մեր գյուղի ստանցիան է. մնալու եմ մեր գյուղում հանգստանալու և պարապելու։

ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ

1904 նոյեմբերի 9, Թիֆլիզ

Ուշ գիշեր է. ես միայն այժմ ժամանակ ունիմ խոսելու քեզ հետ. երեկ և նախընթաց օրը ուզում էի գրել, բայց մենակ չէի և ազատ ժամ չկար. հիմա գրում եմ Սհանենսի տանից (մենք Թումանյանին միշտ այդպես ենք կոչում). այսօր մեր խումբը, որի անունն է Վերնատուն, որոնք են՝ Ղ. Ալպայան, Հ. Թումանյան, Լ. Շանթ, Դ. Դեմիրճյան և ես, մեր գրական սկզբա խմբակը հավաքվել էր ճաշի... Երեկոյան նրանք հեռացան. մնացի ես և սրտիս գնչեցիկ ուրախությամբ սկսում եմ խոսել քեզ հետ, թանկագին Աննիկ։

Արդյոք ի՞նչն է սափրել քեզ՝ շարախնդաց Միֆեստոֆը (գրում եմ քու լեզվով), որ դու դիմում ես ինձ այսպիսի մի հարցով — «Ո՞վ ես դու. իմ պահապան հրեշտակը, թե կործանող սատանան» — «Ո՞վ եմ ես»... և այսպիսի երկբայական, սկեպտիկ, դեմոնական հարցեր. իմ սիրտը լցնում է քո տատանմունքը և՛ ուրախությամբ, և՛ թախիծով. ուրախանում եմ, որ դու խելոք ես, հասուն ես. և կուլ չես գնում, բայց տխուր եմ, որ հավատդ մեռել է արդեն դեպի մարդը և հոգուդ պայծառությունը ամպոտել. իսկ ես ինչպե՞ս կուզենայի, որ դու լիներիր ջինջ ու լազուր երկինք՝ իմ հոգու, իմ մռայլ ծովի վերա փռված փայլուն, պայծառ երկինք։ Դու հարցնում ես՝ վիշտը սրտիդ մեջ սնուցանելով, թե վճռիր իմ տատանմունքս... Ես միայն այս կասեմ քեզ և այս միայն մի անգամ կասեմ և ամբողջ կյանքիս մեջ միայն մի անգամ կասեմ քեզ։— «Ես սիրում եմ քեզ, Աննիկ, Աննիկ ջան, իմ շա՜տ սիրելի Աննիկ...»։

Եվ այս իմ հոգու խորքից քեզ խոստովանելուց հետո՝ այսուհետև քեզ ամեն ինչ պարզ պետք է լինի... ասա՜, ի՞նչ կարող է անել սիրող սիրտը, ինչի՞ առաջ կանգ կառնի սիրող սիրտը. ես անկարելին կարելի կդարձնեմ քեզ համար. ես քառասուն գլխանի դևին կսպանեմ քեզ համար. ես անմահության խնձորը կբերեմ քեզ համար. ես արևը, աստղերը, ամբողջ աշխարհը կնվիրեմ քեզ. ես իմ կյանքս, իմ կյանքս կտամ քեզ. ուրիշ ի՞նչ ես ուզում, մի՞թե այսուհետ կարող ես դու տատանվել, կասկածել դեպի ինձ։

Դու դեն շպրտիր քու թանկագին գլխից այն վատ մտքերը՝ թե ես նմանություն եմ գտնում քեզ քու քրոջ հետ. ասված չանե, որ դու նրան նման լինես. նա չար է, <...>, նա անսիրտ է, իմ ապրած հոգին զգաց քու մեջ մի երկնային հոգու ներկայությունը. մի չքնաղ մաքրություն. ես կարոտ եմ այդ հրեշտակային գուրգուրանքին և անմեղության. ես լալ եմ

ուզում քու մաքուր ձեռների վերա. ես որոնել եմ միշտ մի ոսկեղեն, մի լուսեղեն սուսուպի, որ անցներ իմ հոգու երկնքով՝ և անցավ ու այն դու էիր. անցար ու ընկար հոգուս խորքում. արդյոք դու պիտի ինձ համար նառագայթ գառնաս ոգեորության ու սիրո, թե վերք ու վիշտ. միևնույն է. ես օրհնում եմ քեզ. քու հանդիպումը. և եթե դու ինձ փշրես, ինչպես փշրեց նա, եթե իմ երջանկության կիսափշրուր բաժակը ամբողջովին ջարդես, ես չեմ անիծի քեզ. և սիրելով՝ կմեռնեմ։ Այսուհետև ուզում եմ, որ դու ինձ հավատաս այնպես, ինչպես հավատացյալը հավատում է աստծուն. ես միշտ ազնիվ, միշտ աստվածային կմնամ դեպի քեզ և ոչինչ չեմ ուզում քեզանից. եղի՛ր աստծու ազատ թռչունի պես՝ շինի՛ր քու բույնը՝ ուր ուզում ես, և ում հետ ուզում ես. ես սրտիս խորքից կնպաստեմ քու երջանկության շենքը շինելուն։

Եվ այս ամենից հետո դո՛ւ, իմ հպարտությունս, մի՞թե կարող ես կասկածել. ո՛չ և միշտ ո՛չ. դու հավատացի՛ր ինձ. և քու կյանքի նավն ու ղեկը հանձնիր ինձ. ես գերաբանչ ճիգերով կաշխատեմ, կղեկավարեմ քու փխրուն, քու նազելի նավը կյանքի կատաղի ծովի մեջ, ալիքների դեմ. կուրծքս պատնեշ կկանգնեցնեմ փոթորկի առաջ՝ և քեզ կհասցնեմ լույսի, գեղեցկության, վեհության ափերը...

Ես այլևս չեմ խոսի այս զգացմունքի մասին. ես երբեք չեմ էլ խոսի, եթե քու տատանմունքը չլիներ. քու կասկածը, քու վախը, ես շա՜տ լավ գիտեմ աշխարհը, մարդիկ, լիրբ օրենքներն ու ծովածավալ անմաքրությունը կյանքի. և գիտեմ որքա՜ն անպաշտպան ու խեղճ ու միամիտ են աղջիկները մարդագայլերի առաջ. և քու վախը հասկանալի է ինձ. բայց դու շատ բախտավոր ես, իմ սիրելի Աննիկ, որ ինձ հանդիպեցիր, ես քանի ողջ եմ — ոչ ոք չպիտի կարողանա և ոչ ոք իրավունք չպիտի ունենա քու սիրտը կոտրելու, քեզ վիրավորելու. իմ գերագույն հաճույքը պիտի լինի քու կյանքի ճամփեն դարձնել պայծա՛ռ, գեղեցի՛կ ու երջանկալի՛. արյունով կներկեմ իմ քայլերս ու ձեռներս՝ ով որ խոչընդոտ կանգնի քու երջանկության առաջ. ապրիր այսուհետև՝ հենված իմ դրանիտե սրտի վերա, երդի՛ր երկնքի ու ջահելության երդերից. պարիր ամենաբուռն ոգեորությամբ, քաղիր ամենաշքեղ ծաղիկները, երազի՛ր ամենաշքեղ երազները. սիրի՛ր երկինքը, մարդիկ, աշխարհը և ամենից շատ սիրիր ինձ...

Բարի գիշեր. և կարոտով բարևներ իմ սիրելի, իմ թանկագին, իմ պայծառ Աննիկին.

միշտ քեզ անձնվեր քո և քո Ավետիք

ԱՐԻՍՏԱԿԵՍ ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ

1905 փետրվարի 4, Ալեքսանդրապոլ

Ստացա ձեր նամակը, հարգելի պ. Արիստակես, թեև ավելորդ էր այլևս պատասխանել, բայց մինչև չպատասխանեի՝ հոգեպես չէի կարող ինձ հանգիստ զգալ. Ձեր նամակի տոնը, հակառակ իմ սպասածին՝ կոմպլեկտ վիրավորական էր, և ես անիծում եմ ինձ, որ դեռ մարդկանց հավատում եմ և բանաստեղծացնում. գուցե դուք բոլորովին չեք ցանկացել ինձ վիրավորել, գուցե իմ ջղերի բեբաններն են բաց, սակայն գուցե և ուզեցել եք վիրավորել... Բայց ինչո՞ւ, ի՞նչ իրավունքով, ինչո՞վ արժանացա այդ խայթոցին, ես էլ ուշադրության չեմ առել իմ փակագծի մեջ ասածը՝ որ դուք հակատրամադիր եք դեպի ինձ, բայց և նա իմ կյանքի մեջ կմնա միշտ փակագծի մեջ — դուք լավ գիտեք Ձեր հոգու խորքում, որ կար մի ժամանակ, երբ որ դուք չէիք ցանկանում բարևել ինձ նույնիսկ... իմ հոտառությունը ավելի սուր է, քան բեռնարդյան շներինը... Բայց այդ չէ խանգարել ինձ շկուրանալու և ես Ձեզ հարգել եմ միշտ — և այդ հարգանքն էր պատճառը, որ ինձ ստիպեց Ձեր առաջ իմ սրտից մի մասը բանալու. և դուք, փոխանակ հարգելու այն մարդուն, որը հավատում է ձեզ և սիրտ է բաց անում — դուք ամենասառնորեն կասկածում եք նրա անկեղծությանը։ Ի՞նչ դուալիզմ նկատեցիք իմ մեջ, կամ մի՞թե հանցանք է, որ մարդ ամբողջ չէ, նույնիսկ լավ, որ ամբողջ չէ, որոշ չէ, սահմանազծված չէ. բայց ի՞նչ դուալիզմ. խնդիրը անկեղծության մասին է. ամեն բան կարող եք (ասենք թե) ասել իմ նկատմամբ, բայց իմ անկեղծության մասին իմ բոլոր ընկերները կվկայեն, և եթե ես պակաս անկեղծ լինեի՝ դուք ավելի հարդանքով կվերաբերվեիք դեպի ինձ և խնդիրս ոտաց տակ չէիք տա... Բայց դուք կասկածում եք այդ հարցում և գրում եք, որ ես այս ու այն կողմ եմ ընկնում, ավելորդ բաներ եմ ասում և պարզ չեմ գրում ցանկություններս և նպատակս... և ուրիշ խրատներ, և հաշիվ եք ուզում ինձնից...

Ես կյանքիս մեջ հազար սխալ գործած կլինեմ և թող սա լինի հազար ու մի երրորդը, որ Ձեզ դժմեցի, հավատացի և սիրտ բաց արի։

— Ես սիրո՞ւմ եմ Աննիկին — ավելի, քան նրան կսիրեր քառասուն եղբայր, բայց իմ սերը այս աշխարհից չէ, նրա մեջ ֆիզիոլոգիա չկա և իմ հոգին ձգտում է դեպի նրա հոգին՝ ինչպես արմատը դեպի արևը՝ գիտենալով, որ արևին չեմ հասնի և հասնելուս կայրվիմ ու իմ մահը կլինի, ո՞վ է Աննիկը ինձ համար — նա իմ ստեղծագործությունն է, իմ հոգեկան աշխարհի, իմ երազների ամենաբանաստեղծական սֆինքսը, որը

իրոք գոյություն չունի, և ես խնդրում էի Ձեզ, որ դուք ներշնչեիք Ձեր շրջանին, որ կոպիտ ձեռներով չցնդեին իմ երազը։

Իմ սերը չի ձգտում տիրելու — և այս գիտեմ, որ դա հասկանալի չէ Ձեր ռեալ զգացողությանը, բայց իմ բանաստեղծական լոգիկայի մեջ Ձեր աշխարհի ամեն կարգ ու կանոնը թարս են դրված. ուրեմն այստեղ վերջնական որոշ նպատակի և որոշ ցանկությունների հարց չկա, որը դուք կուզեիք. իմ նպատակը — հավիտենական սիրո մեջն է, որ ապրում է իմ բոլոր ատոմների մեջ, որից ինձ ոչ ոք չի կարող զրկել, որը ոչ մի դեֆինիցիոնի չի հնթարկվում, նա կապրի իմ գերեզմանից հետո էլ դեռ — իմ անմահ ատոմների հետ. իմ սերը մի միստիկ-մուզիկալ-մետաֆիզիկական խելագարություն է, որին հասկանալու համար առնվազն ինձ չափ պետք է խելագար լինել՝ անորոշ, անձև, քաոսային՝ եթե ուզում եք, բայց խնդրում եմ հասկացեք ինձ՝ պահելով ի սեր աստծո Ձեր աշխարհի տրիվիալ-բանալ խելոքությունը...

Եվ հետևապես իմ հոգեբանությունը չի կարող ինժեներական-տեխնիկական պլաններ կազմել Աննիկին տիրապետելու համար. իմ պլանները բանաստեղծական են, և ուրեմն Ձերոնց համար անվնաս։ Ձերոնք կարող են իրեն՝ Աննիկին երջանկացնելու բարի ծրագիրները գլուխ բերելու, ես չեմ խանգարի, ես կհեռանամ. նրա հոգին, նրա լավագույն տարրը իմն է, ինձ հետ է, և իմ ամբողջ կամքն է — նրան տեսնել երջանիկ, ինչպես նրա քույրերն են. և ես ինձ ամբողջապես զոհաբերում եմ նրան. — ազնիվ խոսք։ Իսկ այն խնդրում, որ միջամտեիք, որ Աննիկին չճնշեին — դա իմ ինիցիատիվան չէ, լավ գիտեք, իսկ Ձեր վիրավորական բառը — միջնորդ. (որ Աննիկը կարող էր առանց միջնորդի գրել, թվում է, որ Ձեզ համար անարգանք էր իմ տողերը կարդալ) դա նույնիսկ ինձ համար շատ է ռեալ — նա ամաչում էր և որ ես նրա ամենամոտ մարդն եմ այս մոմենտիս (ուզենա՛ն-չուզենա՛ն՝ արդյոք մորալի օրենքները խախտվա՞ծ են). և Ձեր վերաբերմունքը ինձ ապշեցրեց — ուրեմն ես ստում էի, որ Աննիկին ինքնասպան հուսահատության են մղել, որ նրան ճնշում են ամեն ֆրոնտով, որ նույնիսկ պ. Կոստանյանը իր հնադարյան և հեղինակավոր ձայնն է բարձրացրել. և մի՞թե հասկանալի չէ Աննիկի Ձեզ դիմելը, քանի որ նա հավատում էր (և ես էլ բաժանում <եմ այդ> հավատը) Ձեր բարեսրտությանը և կարեկցությանը. դա վիրավորվելու չափ հասկանալի է։ Իսկ Ձեր օդան Ձեր զոքանչի ազատամտության նկատմամբ — դա արդեն ազգակցական տեսակետ է և мещанская мораль... Բայց դա Ձեր գործն է. — միայն ավելորդ չէ ասել, որ եթե իմ փոխարեն Աննիկի մոտ նստեր մի բուրժուայի լակոտ կամ մի ինժեներ... խնդիրը այսպիսի ընթացք չէր ընդունի։

Ես վերջացնում եմ նամակս — նորից կրկնում եմ, որ խնայեցեք իմ տղերը. ես շա՞տ եմ հիվանդ, և Ձեր շրջանը Ոչ չդայրացնե ինձ, ես մարդ եմ համենայն դեպս և համենայն դեպս ոչ ցածր Ձեր բոլոր շրջանից, գուցե և շատերի համար և բարձր. Եվ կարող է պատահել, որ սարերի արծիվը մեկ-մեկ ավելի ցածր թռչի գիշակեր ագահ ագռավից, բայց չէ՞ որ ագռավը երբեք չի կարող սարերի արծվից բարձր կամ հավասար թռնի...

Եվ Բիսմարկի պես բռունցքը ասել է՝ որ «դայրացած կամ հուսահատված մարդը իրավունք ունի ուրիշի կյանքի վերա»... Դուք ի նկատի առեք, որ Ձեր զոքանչի շրջանը ջախջախել է իմ լավագույն տարիներս և երազներս, քերթել են իմ կաշին և ջղերիս բերանները բաց թողել... Եվ եթե ես վրեժի մարդ չեմ — այդ թույլ չի տալիս նրանց վարվել ինձ հետ ինչպես և առաջ — անվե՛րջ, անվե՛րջ դայրացնել։ Եվ Ձեզ պես մարդիկ — <թող> մնամ աշխարհի դելիկատության, բարեկամության սահմանների մեջ։

Ներեցեք՝ ընդարձակ և շուտով պատասխանելուս. ամբողջ սրտով և հազար անգամ ներողություն եմ խնդրում, եթե այսպես կամ այնպես դուք վիրավորված լինեք իմ նամակից. Թող նույնիսկ վերջացած լինի մեր մեջ ամեն մի հարաբերություն, բայց իմ մեջ դեպի Ձեզ կա միշտ հարգանքի և բարեկամության զգացմունք։

Հարգանքներով՝ Ավ. Իսահակյան

ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ

<1905>

Սարսափելի ծանրացած սրտով գրում եմ այս տողերը և Աստված է վկա, որ էլ չեմ գրելու. կասեմ, կարտահայտվեմ, ինչ որ կա սրտիս մեջ դեպի քեզ և [եթե ուզում ես] — կբաժանվենք։

Ո՞վ եմ ես.— ես վեհափառ սարերի արծիվ եմ, ես կայծակ եմ մռայլ ամպերի մեջ, ես առյուծ եմ անապատի մեջ, և փոթորիկ ծովերի վրա. իմ հոգին՝ տիեզերքի չափ մեծ՝ ամբողջապես բանաստեղծություն է. ես բանաստեղծ եմ. ժամանակի և ժողովրդի հոգու տերը ես եմ. ամեն ինչ կմեռնի՝ հարստություն, գանձ և գահ, բայց ես [կմնամ] անմահ եմ և որքան էլ իմ [ներկա] պայմանները ծանր լինեն, ես գրանիտի պես կմնամ և ցույց կտամ իմ մարգարեական-բանաստեղծական անմահ հոգին. արևի պես կայրվիմ ու լույս կտամ, ջերմություն կտամ. ես հավատում եմ իմ ուժերին, և ամբողջ ժողովուրդը հավատում է ինձ. ո՞վ չէ

ինձ հավատում։ Ձեր շրջանը, որը իմ սավերը չարժե. ո՞վ չէ ինձ հավատում — մայրդ՝ մի հին կին, որ իր շեմքից հեռու չի տեսնում, որ խորտակում <վիրավորում> է, որ ինձ Շուշիկի ժամանակ վանդել են ու ծաղրել, իսկ հիմա կանգուն եմ աշտարակի պես. Տեր-Միրաքյան Հովհաննեսը — մի խեղճ մարդ, Կ. Կոստանյանը՝ մի մքլած, փթած սիրացու, որոնց իրենց երեսակայում են, որոնց ժողովուրդը չի ճանաչում... Կ. Կոստանյանը — ինչպե՞ս կարող է նա հաշտ նայել իմ գոյությանը,— ես, որ նրա աչքում՝ նրա ասելով միայն շորան կարող էի լինել, այժմ նա մնաց միայն [վանքի փշրանքների <...>] վարդապետների աչքում համարում ունեցող, իսկ ես դառա մի մարդ, որին գիտեն, որով պարծենում են [և դու ինձ չես ճանաչում]. և ես իմ բարձունքից իջել եմ քու մոտ, քեզ հետ համեստորեն ընկեր եմ դառել. հասարակում եմ քու երեխայական մաքերին, պատասխանում եմ քու հարցերին... և դու այնպես ես վարվում ինձ հետ, կարծես մի հասարակ մարդ լինեմ, մի ուսանող լինեմ, որոնց հազարի կյանքը իմ մի օրը չարժե. այնինչ դու պետք է անսահման ուրախ լիներիր, ամենաերջանիկ մարդը [աշխարհի վրա] բոլոր մարդկանց մեջ, որ ինձ գտար,— դու պիտի գլուխդ բարձր բռնած — հպարտորեն շրջեիր մարդկանց մեջ, որ ինձ պես ընկեր ու սեր ունես. դու բոլորի առաջ՝ մրրիկների ու մարդերի առաջ պիտի պաշտպանեիր ինձ ու մեռնեիր ինձ համար... և ինձ տեսնելով, արևի պեսը չպիտի զգայիր դու, և ինձ կորցնելով՝ աշխարհը կորցրած պիտի կգայիր քեզ... Բայց այս ամենից ոչինչ չկա, դու նայ ես անում, լարում ես քու հիմար կապրիզները... որովհետև դու ինձ չես սիրում, և չես կարող սիրել. իսկական սիրո հարցում

ցնդվեց չքնաղ և գերերկրային [երազը] ցնորքը և դու մնացիր մորդ գրկում, բարեկամներիդ մեջ, որոնց մեջ ամեն բան կա, բացի սեր և ազնվություն... Անցավ ոսկի տարին. եկավ գիշերը, և չկա երազդ, չկա Ավետիքը. նա վեհափառ սարերի տիրոջ է. նա կայծակ <է> մռայլ ամպերի մեջ... նա բանաստեղծ է, ստեղծագործող է. ահա՛ նա փշրեց իր կուրծքը, խլեց մատները, հանեց քո սերը իր սրտի միջից, և շպրտեց շան ու գիլու առաջ. ահա՛ նա ազատ է հիմա՝ ինչպես տիրոջը ծովում, բարձր է նա, ինչպես Հիմալայի լեռնագագաթը. նրա ճանապարհը սխալմամբ եկավ քեզ մոտ. նա սխալմամբ բռնեց քու դուռը, քու սիրտը. շա՛տ լացեց և տառապեց, բայց չմեռավ — ահա նա թռնում է հոգու և մտքի, և գեղեցկության, և ստեղծագործության, և աստվածության ոգեմանդալին, երկնահուպ լեռնագագաթները։

Դու մեռար նրա համար. արդյոք ինչպե՞ս պիտի հարություն առնես. արդյոք կարո՞ղ ես հարություն առնել. արդյոք ուրո՞ւմ է նա, որ հարություն առնես <...>

Ավետիք

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐՅԱՆԻՆ

1910 ապրիլի 20, Կազարազա

Սիրելի ընկեր,

Աղեքսանդր Ծատուրյան.

Սրտի խորությամբ իմացա, որ տոնվելու է Ձեր 25-ամյա գրական հոբելյանը։ Ես ուրախ եմ ոչ թե այն պատճառով, որ գիտակից հասարակությունը գալիս է գնահատելու և երախտահատույց լինելու, այլ այն պատճառով, որ Դուք 25 տարվա մարտիրոսական, դժվարին ճանապարհ եք կտրել, անցել, և Ձեր անունի վրա ստվեր չկա, և պայծառ հայացքով կարող եք ու դեռ ուժ ունեք առաջ քայլելու։

Ո՛չ ոք չի կարող այնպես խորագին զգալ այն հայտնի և անհայտ տանջանքները, որ Դուք ապրել եք 25 տարվա մեջ, բայց եթե միայն Ձեր գրչի ընկերները. հայկական վայրենի հասարակության մեջ այդ մի պրմեթեական դարավոր տառապանք է, մի իսկական հերոսություն, որ ընկած է Ձեր և Ձեր ընկերների զգայուն ուսերին։ Եվ այսօր ես, Ձեր կրտսեր եղբայրը, գալիս եմ գլուխս խոնարհելու Ձեր առաջ, և ոչ միայն նրա առաջ, ինչ որ Դուք արել եք և ստեղծել, այլ այն մեծության առաջ, որ շարատահայտվեց և շաղվեց, որը կար Ձեր հոգում, և որը խեղդվեց մի անհրապույր միջավայրում։

Իմ ավագ ընկե՛ր, իմ սիրելի ընկե՛ր, և Դուք մի հավատացե՛ք այն ծափերին և ճառերին, որոնք վաղը որոտալու են ի պատիվ Ձեզ. իմ խորին համոզմունքով հայ գրական խոսքը միշտ արհամարհված է և հայ ստեղծագործ միտքը միշտ ծաղրված հենց այդ մարդկանց կողմից, որոնք վաղը կուշտ որկրով պիտի շրջապատեն Ձեզ, մյուս օրը Ձեզ նորից արհամարհելու և ծաղրելու համար։

Դուք մի՛ հավատացեք մեր անպրագետ ինտելիգենցիային, մեր այլասերված ուսանողության և մեր գիշակեր բուրժուազիային. նրանք, օվսանա՝ նա են տալու Ձեզ. հավատացնում եմ Ձեզ, որ չեն էլ կարդացել Ձեր ստեղծագործությունները։

Դուք հավատացեք Ձեր ապագային՝ ոչ այն շաբլոնական ապագային, որ իրրև թե պսակելու է Ձեզ, այն մայրենի խոսքի ապագային, այն մեծ գաղափարին, թե ամեն ինչ կանցնի, կմնա Ոգին միայն ստեղծագործության, կմնա մայրենի խոսքը միայն, որի մեջ կապրի Ձեր շունչը, Ձեր ստեղծագործական վեհ տառապանքը, Ձեր իսկական սերը։

Ուրիշ ոչինչ չունեմ Ձեզ ասելու և շնորհավորելու. ցանկանում եմ Ձեզ ուժ և կորով և վեհանձնություն առաջ գնալու՝ բարձր պահելու հայ գրողի պատիվը. որը իրապես հայ ժողովրդի պատիվն է։

Ընդունեցեք ջերմ և սրտանց համբույրներս, իմ թանկագին ընկե՛ր.

Մնամ Ձեր

կրտսեր եղբայր՝

Ավետիք Իսահակյան։

ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ

1911 նոյեմբերի 24, Ռ. Պոլիս

Շա՛տ սիրելի Վիկտորիա, ամսիս 9-ին ստացա քու թանկագին նամակդ. ասել չի ուզե, որ չափազանց ուրախացա. միայն ափսոս, որ սանիկս հիվանդ է, և դու էլ անգործ ես. զգում եմ, խորն զգում եմ, որ տրամադրությունդ լավ չպիտի լինի. բայց մարդ պիտի գիտակցաբար թե անգիտակցաբար մի քիչ էլ երազներով ապրի, մինչև որ երազները ձև ու կյանք ստանան։

Դու գրում ես, թե՝ ինձ ավելի ուժեղ էիր կարծում, քան այն, որ եմ իրոք. սակայն, հոգիս, չէ՞ որ ես շատ զգայուն մարդ եմ. սիրտս խոցվում է, երբ մտածում եմ, թե տարիներ պիտի հեռու մնամ հարազատներից, և ո՞վ գիտե ի՞նչ կլինի, ո՞վ ողջ մնա, ո՞վ մեռնի — միայն այդ, թե չէ ուրիշ հոգս չունիմ. վերջ ի վերջո Պոլիսը ապրելու քաղաք է. հազվագյուտ գեղեց-

կությունների հետ թեև ունի զզվելի կողմեր, բայց առավելությունները անուրանալի են. ամենից առաջ սքանչելի բնական գեղեցկություններ. կախարդական Բոսֆորը, զմրուխտյա կղզիներ. մինչև այսօր ձյուն չէ եկել. վառարանները չենք վառում, տաք, արևոտ օրեր և լուսնակ գիշերներ ենք վայելում. ծովափերը մշտադալար, ծաղիկներով փոռոցները լի. ահռելի փունջը ծաղիկների՝ հիմա կարելի է 20 կոպեկի գնել։ Քաղաքը անհրաժեշտ կենդանության մեջ է. հսկա քաղաք՝ 1.500.000 բնակիչ. տարբեր ազգություններ, խենթացուցիչ գեղեցկուհիներ. Եվրոպայից միշտ գալիս են նշանավոր արտիստներ։ Ունի անթիվ ամենաշքեղ պալատներ, գղյակներ, տպարանքներ, մարմարյա ու ոսկեներ։ Նավերի անծայր անտառ է շուրջդ, լեգուների Բաբելոն, քաղաքական անակնկալների խառնարան, հրաբուխի կրատերում։ Ամենասիրուն կանանց հետ մրցում են արաբական ձիերը. սակայն այս բոլորի հետ միաժամանակ, մտավոր քիչ կյանք կա. չկա կարգին բիբլիոտեկա, համալսարան, և այլն։

Օրերս վատ չեն անցնում. երբեմն նույնիսկ լավ են անցնում. օրեցոր ծանոթներս շատանում են, շրջանս ընդլայնում. ընկերներ՝ տեղական և Կովկասից շա՜տ ունեմ, նույնիսկ լավ ընկերներ։ Տնտեսապես թեև ապահով չեմ, բայց լավ եմ ապրում մինչև հիմա. ո՛չ մի բանից զուրկ չեմ. թատրոն-օպերա միշտ հաճախում եմ. այստեղ առհասարակ մարդիկ լավ են հագնվում, և ես հետ մնացողներից չեմ. օրիորդներ ու տիկիններ հետաքրքրվում են, բայց և այնպես այդ բոլորը ոչինչ. սիրաս տեղը չէ, կարո՞ղ ունեմ, մե՞ծ կարոտ. ինձ թվում է, որ ես ավելի լավ պայմանների արժանի մարդ էի, քան որ ինձ վիճակվեց... Վերջապե՞ս։

Մոտ օրերս գնում եմ անպատճառ մոտակա մի գյուղաքաղաք, ուր կա հայկական մի նշանավոր դիտական վանք. մի ամիս կամ գուցե 2 ամիս պիտի մնամ և վերջնականապես «Ուստա Կարոն» ավարտեմ. այստեղ, Պոլսում, չի կարելի մեծ աշխատանքներ անել. ջղային-նեվրոզ միջավայր է — մանր-մունր բաներ կարելի է միայն գրել, իսկ մեծ գործի համար հարկավոր է անդորր վայր և անխանգաղ զբաղմունք-պարապմունք։

«Ուստա Կարոն» վերջացնելուց հետո կամ պիտի գնամ արտասահման՝ Վիեննա, մի տարով համալսարանում լսելու, կամ արևելք՝ ուղևորության. երկուսից մեկն ու մեկը անպատճառ։ Ուղևորությունս որոշված է, և կախված է ինձնից, գնա՞լ, թե՞ չգնալ. իսկ ես ուզում եմ գոնե մի տարով Եվրոպա լինեմ, մի փոքր փիլիսոփայությամբ պարապեմ. քանի դեռ երիտասարդ եմ, կարող եմ, եռանդ ունիմ աշխատելու և յուրացնելու, թե չէ ուղևորությունը միշտ կարելի է. երկիրները տեղերից չեն փախչում, և ես դեռ չա՜տ փամանակ ունեմ այստեղները քաշ գալու։

«Ուստա Կարոն», ինչպես երևում է, շա՜տ լավ բան է դուրս գալու. այս 4 ամիսը, ճանապարհին և այստեղ, բավական մշակեցի և խորհեցի։

Ձեռքիս տակ գրելիք շա՜տ բաներ ունեմ, իսկ հոգումս՝ շա՜տ նյութ։

Սիրելի բժիշկը զուր է ինձնից գանգատվում, որովհետև նրան 2 նամակ եմ գրել, երևի չի ստացել, որ անհնար է. ստացած կլինի, թեև երբեմն կորչում են նամակները։

Արդյոք ի՞նչ եղավ քու այստեղ գալդ. ի՞նչ պատասխանեց ընկերուհիդ, թե ծանոթդ։ Բոլոր սրտով կուզեի այստեղ լիներիր. այն ժամանակ Պոլիսը ինձ համար դրախտ կլիներ։

Քու ծանոթ Գրիգորիս վարդապետ Պալաքյանը եկավ էջմիածին կաթողիկոսական ընտրության համար. հաջողեցրու, նրան տես։ Նրա ձեռքից բան կուգա այստեղ պաշտոն գտնելու։

Ապահարզան ստանալդ ինձ և՛ ուրախացրեց, և՛ տխրեցրեց. բայց ավելի տխրեցրեց։ Սրտանց ցանկանում եմ, սակայն, քեզ բախտավորություն և ամեն լավ բան, ինչ որ դու կցանկանաս։

Մեր աստղը միշտ տեսնում եմ և միշտ խոսում եմ հետը — քեզ հետ։ Շա՜տ խոսումներ է նա ինձ անում, շա՜տ երազներ է հյուսում ինձ համար, սակայն, եթե իմ երազներիս մի չնչին մասը կատարվեր, ես հիմա Աստծու չափ երջանիկ կլինեի. բայց նորից քաղցր է հավատալ երազներին և հեքիաթներին. դրանց գինուց զուրկ մարդը աղքատ է և մուրացկան. պետք է հարբել երազների և հեքիաթների գինիով...

Իսկ դու ինձ համար ամենաշքեղ երազն ես ու հեքիաթը. և՛ կաս, և՛ չկաս. մոտիկ ես ինձ, շա՜տ ես մոտիկ, բայց և ձափալանց շա՜տ ես հեռու՝ մեր աստղի պես հեռո՜ւ, հեռո՜ւ...

Խնդրում եմ շո՜ւտ և շա՜տ գրես։ Բոլոր ընկերներին հաղորդիր բարևներս. համբույրներս բժշկին, սանիկիս և քեզ։

Միշտ քո, միշտ քեզ սիրող՝ **Ավետիք.**

ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ

1912 ապրիլի 24, Գրիգկիպո (Պոլիս)

Իմ շա՜տ սիրելի, իմ հոգի, իմ հոգուս հոգի, անգին Վիկտորիա. անհունորեն երջանիկ եմ զգում այս վայրկյանիս, որ քեզ հետ եմ խոսում — գոնե գրով։ Ստացա թանկագին նամակդ, և պատանու պես ուրախությունից վեր-վեր թռա. ի՛նչ է այդ. ես 40 տարեկանին եմ մոտենում (36—37 տարեկան եմ) և այսպիսի երազական ժամեր եմ ապրում քո շնորհիվ,

աչես թե 18 տարեկան տղա եմ, որ նոր եմ գրիչս թաթախում «Երգեր ու վերքեր» գրելու։

Ա՜խ, հազար անգամ ա՜խ, որ հեռացա Կովկասից. այս ի՞նչ դաժան ճակատագիր էր, որ վիճակվեց ինձ. և մինչև ե՞րբ պիտի օտար երկնքի տակ թափառեմ, ուր մշակ հարազատը գլխիս վերև Մեծ-արջն է, որ տարի բոլոր այս մշտադարուն երկրում շրջում է գլխիս վերև և միշտ քո նվիրական անունը հնչեցնում ականջիս մեջ... Զմեռս մի-երկու ամսով Պոլսից հեռու ապրեցա Իզմիթ քաղաքում (ուր գնացել էի առանձին աշխատելու և համարյա վերջացրի «Ուստա Կարոն»). հենց լուսամուտիցս միշտ երևում էր գիշերը մինչև շատ ուշ՝ ժամը 3-ը՝ այդ արջը, որի անունը որքան որ էր գիշերը մինչև շատ ուշ՝ ժամը 3-ը՝ այդ արջը, որի անունը որքան որ անբանաստեղծական է, իսկ հուշերը լիքը հոգեկան կախարդանքով...

Շա՜տ զգացմունքներ կան մեջս՝ սեր դեպի ծերունի մայրս, դեպի երեխաս, դեպի մանկությունս, դեպի հայրենի դաշտերը, և դեպի շա՜տ բաներ, բայց զգացմունքս ղեկի քեզ լցնում է հոգիս մշանջենական հույսով, և մի գեղեցիկ, միխիթարիչ գուրգուրանքով. մի՞թե կարող էր պատահել, որ տարիներ՝ ես համարյա անտարբեր անցնեի մոտովդ, և հանկարծ այսպիսի լուրջ հակում տածեի դեպի քեզ — զարմանալի է, իրավ, և ճակատագրական է, և նույնիսկ դժբախտ։ Ո՞վ է հալածում ինձ, ի՞նչ ճակատագիր է իշխում ինձ վրա, ի՞նչ պետք է լինի իմ վերջը... Շա՜տ եմ տանջվում, և երբեմն շա՜տ անհույս եմ տանջվում. իսկ վատն էլ այն է, որ ես միայնակ եմ տանջվում, օտա՜ր, պանդո՜ւխտ իմ վշտի հետ։ Ա՜խ, մի՞թե ես այնքան հիմար էի, որ անգիտակից կերպով խաղացի իմ սրտի հետ, իմ բախտի.— ո՞վ գիտե, գուցե հիմար էի. կամ գուցե շատ միամիտ, բայց շա՜տ պատժվեցի. հիմարության համար այդչափ չպիտի տանջվի մարդ, բայց ես շա՜տ եմ տանջվում... Միխիթարությունս միայն պարապմունքս է, և ապագայի հույսերը...

Ընդհատում եմ այս տխուր տողերը... Ես կպատմեմ իմ կյանքից, գիտեմ, որ հետաքրքրվում ես։ Սիրելիս, ես ապրում եմ մարտի վերջերից Մարմարյա ծովում, իշխանաց հին պատմական կղզիներից մեկի վրա — Պրինկիպո կղզին։ Պոլսից ժամ ու կես հեռու է այս կղզին, որ ուղղակի զմրուխտ է ծովի մեջ. սա ամենասիրուն կղզին է ծովում, արիստոկրատների, պրինցների, դեսպանների, իշխանների սքանչելի ապարանքներով լի. խաղաղ, անդորր և շողշողուն, ալիքները միշտ գուրգուրում են կղզու չորս կողմը. կղզին ծածկված է մայրի անտառով, և հազար ու մի տեսակ ծաղիկներով, վարդերով, թզենի, դափնի, և այլն, և այլն։ Իմ տունը գտնվում է կղզու վերև, ոլորի գլխին, անտառի ափին. մեկ լուսամուտ անտառի վրա է բացվում, մեկեր՝ ծովի։ Պանսիոներ եմ մեկի մոտ. ունեմ փոքրիկ սենյակ, գրասեղան, դիվան... Ամբողջ օրը կարդում եմ, գրում, և

ծովափին ու անտառում թափառում։ Ընկերներ կան, ինձ պես տարագիր. Պոլիսը քաղաքական թվածների <?> կենտրոնավայրն է հիմա. իմ ընկերներն են՝ մի ռուսական հրեա, շատ նշանավոր անձ, մեծ գիտությամբ և անցյալով. հասարակագետ է, և թղթակից եվրոպական լրագրերի. մի վրացի, մի հայ, մի թուրք, մի ֆրանսիացի... Միշտ միասին ենք լինում. խոսում ենք ամեն լեզվով, սակայն տիրող լեզուն ռուսերենն է. բոլորը գիտեն, բացի ֆրանսիացուց։ Նավարկում ենք, դոմինո ենք խաղում, և շաբաթը մի անգամ Պոլիս ենք գնում, քաշ գալու... Ես մի քանի ընտանիքներ ունեմ ծանոթ, տեղական բուրժուա հայեր, որ կղզումն են ապրում, երբեմն լինում եմ մոտերը։ Պոլսի բուրժուաների լակոտները՝ հայ, թուրք, հույն՝ իրենց մետրեսները — սիրուհիները այստեղ են պահում, և ամեն քայլափոխի տեսնում ենք զարմանալի գեղեցկուհիներ — ֆրանսուհի, իտալուհի, հույնուհի, իսպանուհի և չերքեզ-թրքուհի. երբեմն նրանց հետևից ենք ընկնում մեր մակույկներով ծովի մեջ. սակայն այստեղ վտանգավոր են սիրային արկածները — արևելյան խանդոտ մարդիկ են։

Պարապմունքս — հոդվածներ եմ գրում թերթերի համար, պատկերներ, պատմվածքներ, թարգմանություններ։ Դրամ հայթայթում եմ միայն գրելով. ո՜չ մի տեղից. իհարկե, փող չեմ ստանում. երեխա և կին ունեմ, ինձ ի՞նչ կհասնի։ Սակայն այս աշխատանքից այնքան էլ գոհ չեմ, որովհետև համարյա փողի համար եմ գրում. գրիչս վանառում եմ. առաջ ես գրում էի իմ հոգու համար, իսկ հիմա հացի համար. բայց և այնպես ազատ ժամեր եմ գտնում և՛ իսկական գեղարվեստի համար։ Գրել եմ մի քանի հատ շատ լավ պատմվածքներ և ոտանավորներ. գրել եմ և մի լավ հեքիաթ, որը հիմա առանձին արտատպվում է՝ քեզ կուղարկեմ. անունն է «Աղա-Նազար»։ Աշխատում և մի երկու ուրիշ լավ նյութերի վրա։ «Ուստա Կարոն» լույս աշխարհ կելնի։ Թարգմանում եմ Համսունի «Պանը» և «Վիկտորիա» վեպերը, Թիֆլիսի հրատարակչական ընկերության հանձնարարությամբ. բավական փող կստանամ և մի քանի ամիս ազատ կլինեմ։ Հավանական է, որ գնամ ամառը մի-երկու ամսով Հայաստան ճամփորդելու և նյութեր հավաքելու. դրա համար միջոց կա, բայց վախենում եմ ավազակների հարձակումներից։ Չգիտեմ աշունքվանից ո՞ւր եմ լինելու. արդյոք նորից Պոլի՞ս, թե՞ Եվրոպա, թե՞ էրզերում՝ թերթի խմբագիր (ինձ դիմած են)։ Եթե կարողացա Եվրոպա գնալ, կինս էլ կուգա անշուշտ, իսկ եթե ոչ՝ կինս Պոլիս կամ Կարին չի գա. եթե ոչ Պոլիս, Կարին (էրզերում) որ անպատճառ չի գա։

Ասում են, թե 1913 թվին նեռումն կլինի, և կարող կլինինք վերադառնալ. օ՜, եթե եղավ, ի՞նչ լավ կլինի. սակայն չեմ հուսա։ Հա՜, շնոր-

հանձնում եմ ձեր Լեոնի ապատվիլը. ո՞վ գիտե, գուցե ես էլ կապատվեի... Բայց եղածը եղած է.

Սիրելիս, ինչո՞ւ ես կարծում, թե բժշկին ինձ համար են խուզարկել. կառավարությունը հաստատ գիտեր, որ ես հեռացել եմ, և սխալ է, թե իմ գրքերը սպանում են. ես դեռ մեղադրված չեմ դատարանով, իսկ առանց դատարանի որոշման այդպես բան չի կարող լինել, չէ որ իմ գրքերը ցենզուրով թույլ տված են. դուք թյուրիմացության մեջ եք, և քեզ այդպես ասողները օրենքից տեղեկություն չունին եվ հեռաբրքիր է՝ ե՞րբ է եղել այդ խուզարկությունը։

Մոռացա ասացա «Գարուն» ալմանախը № 3. ամբողջական քննադատական. այնտեղ կա և իմ մասին՝ «Դիմագծեր»-ի մեջ. Թումանյան և ես։ Կա և Խ. Աբովյանի մասին՝ «Հանճարեղ սիրա», ձեռք բեր և կարդա։

Գրի՛ր քո կյանքից. ի՞նչ ես անում, ինչպե՞ս ես կառավարվում. արդյոք մորդ հետ միասի՞ն ես ապրում. ի՞նչ է անում քժիշկը. ես կարծում էի, թե նա Ալեքսանդրապոլից հեռացած կլինի. չա՞տ էր դժգոհ. իսկ ինչպե՞ս է սանիկս. արդեն բավական մեծացած կլինի. զարմանում եմ, որ կհիշե ինձ. խեղճը ինձ «պապա» է ասում, չգիտենալով, որ իմ երեխաս էլ իրեն պես անհայր է մնացել. ասված տա, որ ես այնպիսի դրության հասնեմ, որ երկուսին էլ իսկական հոր պես անխտիր աշխատեմ՝ մարդ դառնան. հին ժամանակ սանիկներին կրթում էին քավորները. կրթության հոգսը կնքահոր վրա էր — նա էլ է հայր. կնքահայր՝ քրիստոնեական — հոգեկան հայր։

Վերջացնում եմ նամակս. գիշերը ժամը 11-ից անց է. թեթև քամի կա. անտառը ղողանջում է, իսկ ծովը շառաչում. բանում եմ լուսամուտս. տեսնում եմ աստղը... արդյոք այդ բոպեին դու ի՞նչ ես անում... Կարոտով համբուրում եմ ձեռներդ, և քեզ, և գլուխդ, և սանիկիս։

Միշտ քո՝ **Ավետիք**

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

1912 մայիսի 28, Կ. Պոլիս

Սիրելի Օհաննես.

Սրանից մի 10 օր առաջ քեզ մի ապահովված նամակ էի գրել «Հորիզոնի» հասցեով։ Սոֆիկը գրել էր, որ գնամ Վիեննա, ես կգամ, ամեն բան վերջացած է.— ես պատրաստվում էի գնալ, երբ նամակ ստացա, թե՝ Օհաննեսը ասում է, որ սպասեմ, տեսնենք ի՞նչ կլինի։

Ես բնավ հույս չունեմ, թե հաշտվի արտաքսման գնալս. ես հավատ չունեմ իմ ատոդին և իմ բարեկամների վրա, ընդհանուս, եթե ասեմ, թե չեմ հավատում և ընկերներին, տա Աստված, որ սխալ լինեմ։

Խեղճը — Սոֆիկը, մեռավ սրան-նրան դիմելով և խեղճին խաբեցին խոստումներով՝ է՛լ Մեսրոպ Եպիսկոպոս, է՛լ Հով. Ամիրխանյան և ուրիշներ. սակայն այդ խոստումները վերջը ինձ քաղցի դուռը բերին. ես մտադիր եմ գնալ հայկական դավառները վարժապետության, ուրիշ հնար չունեմ — դիմեմ սրան-նրան փող ուզելու — եթե դիմեմ էլ չեն տա, իսկ քաղցած մնալ էլ չի կարելի. ուսուցչության գոնե ամսական 40 կամ 50 ռ. կտան, մի կերպ կապրեմ, թեև գավառը վտանգավոր է, բայց ճարս ի՞նչ։

Այս նամակը գրում եմ քեզ՝ քար սեղմելով սրտիս վրա. գրում եմ և հազիվ թե հույս ունեմ դրական խոսքի վրա, որովհետև դրա համար ես բավական փորձված եմ. սակայն իմացած եղիր բառացի իմաստով, որ քաղցած եմ... գրում եմ, որ հետո չասեք, թե ինչո՞ւ չգրեց. չփնտրեք...

Այսուհետև բոլորովին մենակ եմ և ընկերներ չունեմ. դաշնակցական խմբակից հեռացած եմ և համարյա բոլոր կապերս խզել եմ. մեռում է, որ հրապարակավ հայտնեմ և փեշերս թափ տամ դաշնակցական կոչված սրիկաներից...

Ես չունեմ ո՛չ Ահարոնյանի երեսը, և ո՛չ էլ նրա բարեկամները. <...> Ես ի՞նչ եմ որ... Եթե ես արժեք ունենայի ժողովրդի կամ ընկերների աչքին, այս դրությունն չէի մնալ. նեղվված լինի հայ կյանքն ու նրա դրականությունը և նրա ամեն ինչը... ծծեցին հյութերս և ձգեցին փողոց։

Ես ոչ ոքին չեմ կարող խնդրել, եթե կարող ես մի բան անել, արա, եթե ոչ — Աստված հետդ։ Աստված քեզ էլ բարի տա, բոլոր մարդկանց էլ։

«Մշակը», լսել եմ, որ արտատպել է ամերիկական մի հնչակյան թերթից մի նամակ, ուր ինձ մեղադրում են բանագողության մեջ (ճիշտ քո հարցը Դրամբյանի հետ). ես պահանջել եմ, որ գրածս լեգենդան Բուդդհայի կյանքից կողք-կողքի տպեն՝ Լազբրլբֆի լեգենդայի հետ համեմատելու համար. կուզարկեմ թերթի մեջ տպած իմ նամակն ու երկու լեգենդները (դեռ չէ հրատարակված, սպասում եմ այսօր-էգուց) և խնդրում եմ «Հորիզոնի» մեջ հարց բարձրացնեք անաչառորեն, համեմատեք երկուսիս գրած լեգենդները։ Այնքան հիմար են մարդիկ և չարամիտ, որ կարծում են, թե միայն մի մարդ կարող է օգտվել համաշխարհային լեգենդներից. և «Մշակն» էլ այնքան լիրբ է, որ առիթ բաց չի թողնում ինձ հարվածելու. նույնիսկ կարող եք իմ և Լազբրլբֆի գրածները միասին տպել «Հորիզոնում» և հարցը դնել հրապարակով «Մշակի» դեմ։ Ս. Լազբրլբֆի լեգենդան տպված կա Универсальная библиотека (изд. «Польза», Антика, Москва).

275 թվի մեջ «Легенда о гнезде» (լեգենդա բնի մասին) գրածն է, իսկ իմը կուղարկեմ. ականջի ետև մի՛ ձգիր. կամ սուր ազերբը անենս ես մեծ աղմուկ եմ հանել այստեղ դրա շուրջը։ Սարսափելի մարդիկ են այս հնչակյանները, սակայն անիծած և՛ դաշնակցականների հերը։

Սպասում եմ նամակիդ։
Համբույրներով բոլորիդ,
քո՝ Ավետիք։

Ես չեմ կարող իմ անունով դուրս գալ Կովկասի թերթերի մեջ. ձեր պարարքն է հանդես գալ, հանուն գրականության պաշտպանել մի գրողի դատը, որը անպաշտպան է։ Ձեր համար էլ լավ է մի անգամ ես բռնել այդ լրբերի — «Մշակի» — օձիքը։

Հ. Գ. Սոֆիկը գրել էր, թե Մոսկվա որոշել են իրրև թե ինձ ամսական 25 ռ. տալու, սակայն դրա մասին ինձ ոչ միայն բան չեն գրել, այլև աշխատում են որոշած հոնորարիս գինը կրճատել, նվազեցնել։

Առհասարակ վերջերս ապրուստիս բոլոր միջոցները ցամաքեցին. թերթերը չեն վճարում, կամ ամիսը մի անգամ կարող են տեղ տալ՝ դրամ չունենալու պատճառով։

Թարգմանության համար միայն մի բան կա ձեռքս՝ Հրատարակչականի (Թիֆլիսի) հանձնարարած «Պան» վեպը, որը ավանս չի տալիս։ Ինչո՞վ ապրել։ Թուրքիա միայն ձրի կարելի է գրել. ամեն օր երեսիցս կապ են ընկնում ձրի բան խնդրելու։

Ավ. Իս.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<1912> նոյեմբի 4, Կ. Պոլիս

Սիրելի Օհաննես.

Այս երրորդ նամակն է, որ ղրկում եմ քեզ։ Այսօր կնոջիցս նամակ ստացա, որ դու գրել ես նրան Հ. Մելիքյանի պատասխանը. իմ բոլոր հոռետեսությունը ի կատար է ածվում. դու մեղադրում ես ինձ, որ ընկերներին չեմ գրում դրության մասին և չեմ դիմում հարուստներին։— Դու թեև խելոք մարդ ես, սակայն ես էլ հիմար չեմ... Հարուստների մոտ միջնորդ պիտի ունենալ մի քանի կոպեկ ստանալու համար, իսկ միջնորդներ ընկերները կարող են լինել, որոնցից ես զուրկ եմ. հույս քո վերա է. ինձ հուսազուրկ չանես, դու և քո Աստվածը. թե չէ ես Ս. Հարությունյանի պես գծուծներին լավ եմ ճանաչում։ Հ. Մելիքյանի վրա հույս չունիմ, պոռոտախոս է, և խեղճ կնոջս իզուր է ջենտլմենի հույսերով կերակրել։

Սակայն ես անպատճառ գնալու եմ արտասահման, թեկուզ քաղցած մեռնեմ. գոնե «Հորիզոնի» մեջ ինձ տեղ տվեք, ապահովեցեք մի որոշ գումարով։

Ես Ահարոնյանից և մյուսներից ի՞նչ պակաս գրող եմ, որ քաղցած մնամ. մեղավո՞ր եմ, որ ձեզ նման հարուստ բարեկամներ չունեմ. իսկ ո՞ւր է մնում գրչի ընկերակցությունը... Կյանքում ճիշտ որ ամեն բան սուտ է. շարլի գրչական եղբայրներ։

Համբույրներով՝ Ավ. Իսահակյան

Ահա հասցես՝
Libraire populaire „Ardzive",
Marpoudjilar, 22
Constantinople,
Հանձնել Հայկ Գուսանյանին

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

1913 ապրիլի 30, Ժընև

Շատ սիրելի բանաստեղծ
Հովհան. Հովհաննիսյանին

Այս հանդիսավոր օրը, որ հայ հասարակության գիտակից մասը գալիս է Քո վաղաժամ ձերմակած գլուխը պսակելու,— ես հեռվից հեռու պուխ եմ խոնարհում ուսուցչիս և ընկերիս առաջ՝ հայտնելով այն խորին սերն ու հարգանքը, որ ամ՛առամ ունցել եմ սրտիս մեջ՝ սկսած այն օրից, երբ Քեզ տեսա առաջին անգամները։

Առաջին անգամ ես Քեզ տեսա, երբ պատանի էի և աշակերտեցի Քեզ Գևորգյան ճեմարանում։ Այն ժամանակ դու պայծառ երիտասարդ էիր՝ բանաստեղծական ցոլով ու շաղով վառ, այն ժամանակ ես առաջին անգամ խմեցի բանաստեղծության նոր, իսկական աղբյուրից, որովհետև դու ինքդ էիր ոսկեղեն աղբյուրը, որ կարկաչում էիր հայոց հին և նոր երգերի սահմանագծում։ Ջանձրացնելու չափ շատ է ասված, որ հայ գրողը նահատակ է. սակայն նահատակ է ո՛չ միայն տնտեսապես, այլև այն, որ նա չի կարդացվում, անհայտ ու մոռացված է մնում և նույնիսկ արհամարհված, որովհետև հայ մասսան ցավալիորեն տգետ է, իսկ գլուխը օտարացած, այլասերված։ Եվ ուրեմն որքան մեծ սեր պետք է ունե-

նաև չնայի մայրենի խոսքը, որ Էրնեստն ասաց շաբունակ բարբառել է տնապատի մեջ։

Եվ քո կերտվածները, քանակով քիչ, իսկ որակով սքանչելի և անհնարաւոր, իբրև իսկական գոհարներ, կշռդան ու գնագույն հրճվանքով լցնեն ընտիր հոգիները այնքան ժամանակ, որքան ժամանակ Արազը ուղա լափին տալով, և Ալաղյազ բարձր սարին ձյուն կկիսովի կատարին, և հայ խոսքը կհնչի Աղատ Մասիսն ի վեր...

Հոգով ու սրտով մասնակցում եմ Քո տոնին, բոլորի հետ միասին բարձրացնում եմ գավաթը և ջերմ-ջերմ համբուրելով Քեզ, իմ շատ սիրելի ուսուցիչ և ընկեր, մաղթում եմ առողջություն, ուրախություն և երկար կյանք։

Միշա քո՝ Ավետիք Իսահակյան

ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ

1913 դեկտեմբերի 31, Փարիզ

Սիրելի Վիկտորիա.

Այսօր վերջանում է մեր, եվրոպացիներիս տարին. ամբողջ Փարիզը հրեղեն ծով է դարձել, ասեղ ձգելու տեղ չկա։ Պարդկա, աստղավառ երեկո է. դուրսը — ցրտուկ ու ծիծաղ. մի բոպե քաշվել եմ հոտելս նամակներ գրելու, ապա ընկերներով գնալու ենք Cabare՝ Նոր-տարին դիմավորելու։

Հոգիս, այս երբորդ տարին է, որ մեր երկրից դուրս եմ ընդունում Նոր-տարին՝ Կ. Պոլիս, Ժընև, Փարիզ. ո՞վ գիտե մյուս տարին, երբ ողջ մնացի, ո՞ւր եմ լինելու — Բեռլին, Վիեննա, թե Լոնդոն. այսուհետև թափառական եմ. ի՞նչ լինելու է, թող լինի։

Գրում ես, որ Գինոն հայտնել է իմ վերադարձի մասին, սակայն զուր հույսեր. ո՛չ մի վերադարձ. կամ ոսկորներս կբերեն Ալաղյազի տակ թաղելու, կամ կվերադառնամ ծերացած. ինձ համար այդ միանգամայն դարձ է. միայն մի վիշտ ունեմ՝ այն, որ ոչ թե Կովկասն ու Հայությունն եմ կարոտացել ու չեմ տեսնելու, այլ՝ մորս, քույրերիս, եղբայրներիս, միայն երկու ընկերի և Ինգ. արդյո՞ք նույն կարոտն ունիս դու դեպի ինձ. երջանիկ կլինեի, թե այդ հաստատ գիտակցությունն ունենայի։

Գիշեր է, ժամը 3-ը, վերադարձել եմ տուն հոգնած, ջարդված, ներվերս գրգռված, բայց քունս չի տանում. Փարիզում քնել անկարելի է։

այս 4 միլիոնանոց քաղաքը հազար փոքրիկների տակ հուզված, կրտաղած օվկիան է. ամեն լեզու, ամեն ազգ. ի՞նչ են ուզում, ինչո՞ւ են թափվել այս զարմանալի փողոցները անգլիական լորդն ու հնդկական ռաջին, ռուս կնոջն ու բրազիլացի միլիոնատերը, իտալացի բոսյակը և ամերիկացի միլիարդերը, և ևս... Մ՛որ ենք վազում, ի՞նչ ենք որոնում այս ծովածավալ ամբոխի մեջ. շուրջս փրփրած գինու ծով է, ասես. պար, կանկան, tango, անգուսպ, բոցեղեն կիրք. 1000000 կանայք՝ շքեղ, քընքուշ և գայթակղիչ աչքերով. 1000 աչք հրապուրում է քեզ իր գիրկը — մի բոպեի, մի ժամի, մի գիշերի համար, որպեսզի մյուս օրը քեզ չճանաչեն... Ակորտատներ, ցիրկ, մուլին, ռուժ, խաղ, ծափ, ծիծաղ, գոհար ու ցնցոտի իրար կողք-կողքի, իրար գրա — ահա՛ Փարիզը... Եղել եմ Բեռլին, Վիեննա, Բուդապեշտ, Հռոմ, Միլան, Պոլիս, Մոսկվա, Պետերբուրգ, և այլն... դրանք միատեղ հավաքես՝ Փարիզի աղմուկը չի ստացվի...

Գրում եմ անկապ, ինչ որ միտքս է գալիս։— Դեռ մի 10 օր էլ մնալու եմ, ապա նորից Ժընև, այն գեղեցիկ Լեմանի ափերի քաղաքը, խաղաղ, մաքուր. երեխաս և գրասենյակս. գրում եմ ու կարդում. կարդում եմ ու գրում. և համբերանքս ծով է. թեև սիրտ էողմից դժբախտ եմ, բայց տրամադրությունս չեմ փչացնում, և ես գիտեմ, որ ինձ պես մարդը արժանի է, որ ապրի, և պիտի ապրի։ Ընկերներս ինձ մոռացել են. եղան ընկերներ, որ նույնիսկ նախանձից, չկամությունից վնասեցին ինձ. եղան նեղ և աղքատ օրեր, բայց հաղթեցի, և հիմա հաստատ է ոտքերիս տակի հողը. իմ գրիչը ինձ հավիտյան կպահե. չեմ կորչի Եվրոպայի միլիոնավոր մարդկանց մեջ. անվախ ծալլում եմ առաջ. թող գան տարիները և գնան՝ ես կանգնած եմ գրանիտի վրա և ձեռքս՝ իմ անխորտակելի սուրը-գրիչս։ Որոշել եմ տեղափոխվել Բեռլին, այս՝ նորագույն կուլտուրայի լուրջ քաղաքը. բայց Բեռլին հաստատվելով՝ շարունակ պիտի լինեմ Փարիզ ու Հռոմ, Վիեննա և Լոնդոն։ Ի՞նչ լավ կլիներ՝ հետս լիներիր,— սիրած կնոջ հետ այս հեքիաթի քաղաքներում, հրաշքների երկրներում։

Գրում ես, թե իմ մասին տեղեկություններ էիր հարցնում Գինոյից և Արսենից. Գինոյից կարող ես, բայց Արսեն-մարսեն՝ թո՛ղ. այդ տիրացուները ինձ չեն կարող հասկանալ, և նրանց հետ գործ չունիմ, նրանք էլ ինձ հետ.— ես Կովկաս միայն երկու ընկեր ունիմ, որոնց հետ սրտաբաց եմ. մյուսներից իմ մասին՝ ո՛չ մի խոսք, և ո՛չ էլ անունս տուր նրանց մոտ։ Նախանձից բամբասում են, թե ես այստեղ, Եվրոպա՝ պարապ քաշ եմ գալիս՝ կանանց հետ քեֆեր անելով. հայի նախանձը սահման չի ճանաչում. ի՞նչ են ուզում ինձնից. նրանց հացը չեմ ուտում, և նրանց համբուրած կինը չեմ պաչում. Կովկասի հացն ու համբույրը թողնում եմ

իրանց. Ո՛ղ ինձ հանգիստ թողնեն. ես այլևս հայրենիք չեմ ճանաչում. ես աշխարհի-տիեզերքի բնակիչ եմ։ Հասկացա՞ք։ Առայժմ այսքան. Ժընևից եղրևմ։ Համբույրներ կարոտով ու հազարով քեզ ու տղայիդ։

Քո՝ Ավետիք

Գրիր այս հասցեով.
Швейцария Genève
Bean Sejour, № 3
Avedis Bayazid.

ՍԻԱՄԱՆԹՈՅԻՆ

<1914> ապրիլի 21, Բեռլին

Սիրելի Սիամանթո.

Վաղուց է, կուզեի քեզ երկարորեն գրել, բայց գլուխս շատ զբաղած էր և օրեօր կգցեի. անշուշտ, վիրավորված չես լինիր, թեև իրավունք ունիս։

Շա՜տ զբաղված եմ, սիրելիս.— հազիվ բնակարան վարձեցի, կահավորել, ընկնել այս ու այն կողմ, և խմբագրական գործերը.— ուղղակի հոգնած եմ։

Ամենից առաջ, խնդրում եմ, քանի այդտեղ ես, մի բանաստեղծություն ուղարկիր, ոչ այս համարի համար, այլ երկրորդ համարի, որ լույս պիտի տեսնի Հունիսին։ Առաջին թվի համար չէ, քանի որ գերմաներեն առաջին թվի մեջ թարգմանորեն դնելու ենք քո «Հայրենի աղբյուրը»։ Ուրեմն, ժամանակ ունիս գրելու։

բ. Խնդրում եմ անհապաղ ուղարկես օր. Մաննիկի հասցեն. մեկ, որ պիտի նյութ խնդրեմ նրանից, երկրորդ, որ քանի Բեռլին եմ, ոչ մի լուր չունեմ. նամակ գրեմ, քեզի հարցնեմ։

գ. Ուղարկիր նույնպես Ռ. Սևակի հասցեն (Ռ. Չիլինգարյան, Լոզան, դոկտոր), նյութ եմ խնդրելու, նույնպես։

Դուն ի՞նչ վիճակի մեջ ես. սկսեցի՞ր Սիմեոնի մասին գրելիքդ գրել։ իսկ Մաննիկի հետ ինչ հուսկեան աստիճանի վրա ես. նամակներ կգրե՞ս, հա՞շտ ես, ի՞նչ կա. ինչպե՞ս է նրա առողջությունը. դուն ե՞րբ ես Փարիզ գնալու, կամ ե՞րբ ես Պոլիս գնալու։

Տնտեսական վիճակդ ինչպե՞ս է։

Լիպարիտը հազիվ մի քանի օրինակ է ծախել «Սուրբ Մեսրոբէն». կաշխատեմ ես էլ ծախել։

Ուրիշ ինչպե՞ս է անցնում ժամանակդ։ Երևի հիմա այդտեղ կատարյալ գարուն է, և շրջելու-մանգալու կերթաք միշտ. ես դեռ քաղաքից ոտքս դուրս չեմ դրել, և նույնիսկ քաղաքը չեմ տեսել. իմ գործը չէր բնավ պաշտոն, գործ ստանձնելը, բայց անգործ մնալ էլ չի լինիր. երեխա ունեմ, միջոցներ շա՜տ են հարկավոր։

Խնդրում եմ շուտով պատասխանես. Գարոյի, Նեվրուզի մասին. ի՞նչ կընեն. հաճա՞խ կլինիս տիկ. Թումանի մոտ. ի՞նչ կընեն տ. Անտոնը։

Երևիա անուս տալի՞ս է, թե՞ մոռացել է։

Ջերմ բարևներս հաղորդիր տ. Անտոնին, տիկ. Թումանին, Գարոյին, Նեվրուզին և ուրիշներին։

Համբույրներով, քո՝ **Ավետիք**

<Հ. Գ.> Պարզ դրիր Մաննիկի և Սևակի հասցեները։ Իմ հասցեն գիտես կամ կնոջս մոտից վերցրու։

ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

<1916> ապրիլի 2, Ժընև

Սիրելի Գարեգին ջան.

Շատ ուրախացա նամակդ ստանալով. այս ահավոր, սարսափելի պատերազմի ընթացքում համարյա ո՛չ մի ընկերից նամակ չեմ ստացել. ուղղակի վայրենի դարումն ենք ապրում. նեղվված, հազար անգամ նեղված Գերմանիան դարերի քաղաքակրթությունը կործանեց. օ՜, ի՜նչ սարսափելի օրեր եմ անցրել և անցնում եմ. այս ի՜նչ արյունոտ խելագարություն է.— սպանություն, սպանություն, արյո՜ւն, արյո՜ւն, արյո՜ւն. Հայաստան այլևս չկա, բառացի ասած՝ Թուրքիայի հայերը ոչնչացան. ե՞րբ պիտի նույն օրին ընկնի դազան Գերմանիան, որ մարդկությունը ազատվի մարդակեր Վիլհելմից, Հոհենցոլերների տան ձևերից, սրիկա, բորենի Կրոնպրինցից...

Կասկած չկա, որ դաշնակից պետությունները պիտի հաղթեն և Գերմանիան արյունվա, պատառ-պատառ պիտի ընկնի Ռուսիայի, Անգլիայի և Ֆրանսիայի ոտքերի տակ և մենք, հայերս, դժբախտ Բելգիայի, Սերբիայի հետ պիտի նոր կյանք ստանանք։

Ամբողջ հոգով ու սրտով ռուս քաջ զինվորների հետ եմ հայոց լեռներում. նրանք մեր վրեժը լուծում են. դարերի ընթացքում ռուսն է թուրքի գլուխը ջարդել և ազգեր ազատել — Հունաստան, Ռումանիա, Սերբիա, և երախտամոռ Բոլգարիա. այսօր հերթը հայերիս հասավ։ Արդարությունը դաշնակից պետությունների կողմն է և իրավունքի ասողածը նրանց հետ։

Սիրելիս, ես ուզում եմ գալ, բայց մի-երկու հանգամանք դեռ խանգարում են. նախ և առաջ այս մոտ մի տարի է ես հիվանդ եմ — երիկամունքների հիվանդություն,— բժշկվեցա, բայց դեռ պրոֆեսորս թույլ չի տալիս՝ հեռանամ, ուզում է, որ միաժամանակ նրա ձեռքի տակը մնամ, որ լավ բժշկեւ երկրորդ՝ դեռ անցագիր չեմ ստացել և երրորդ՝ գալու համար շա՜տ փող պետք է. ճանապարհները սաստիկ երկար են ու թանկ, իսկ փող — չկա։

«Աբու Լալա Մահարին» թույլ եմ տալիս, որ հրատարակես. ես չէի համաձայնել, որովհետև կարծում էի, թե շուտ կգամ և սրբագրված կհրատարակեմ. բայց քանի որ դեռ կուշանամ, ուրեմն դու օգտվիր բարեհաջող հանգամանքից և տպիր. առայժմ սրբագրությունը թողնում եմ. անհապաղ սկսիր տպագրել՝ վերջերոք գրաքննիչից համաձայնություն առ վերջին կտորը (Օմար Խայամ) բաց թող, չտպես։ Գիրքս մոտս չկա, որ մի երկու սխալներ կան՝ ցույց տամ. գրում եմ ըստ հիշողության, հետևյալները.—

Գրված է.— «Ի՞նչ օրենքը», պետք է լինի. «Ի՞նչ է օրենքը». «զուլալ բառը փոխիր՝ «վճիռ, պարզաբան» բառերով։ «Բարեկամները... մոծակների պես». մոծակ բառը փոխիր՝ գրարար ասվում է, կարծեմ, «մժրուկ թե մժեղ» — նայիր բառարանում. «...Մժրուկների պես»։

VI սուրահում.— «մոռանամ մարուն» — պիտի լինի «մոռանամ մարդուն» — և վերջապես նույն VI գլխում՝ «կանգ առավ հոգնած» փոխիր՝ «ծունկ առավ հոգնած»։ — Պայմանների մասին ի՞նչ խոսեմ. մեր նման ընկերների մեջ խոսել պետք չէ։

Իմացած լինես, որ ես «Հորիզոնից» հեռացած եմ. ես և Վարանդյան, Ահարոնյան, Թումանյան... անհաշտելի տարբեր ենք. նրանց ձեռքից որ գա, հոգիս կհանեն. բայց դեռ կտեսնենք. օրը կգա։

Ասա, որ Վ. Տերյանը, Մակինցյանը ինձ համար գրեն, և մեկն ու մեկը ուղարկեք ինձ լույս տեսնելիք ռուսերեն թարգմանությունների գիրքը՝ հայ բանաստեղծների։

Ցավն այն է, որ «Հորիզոնից» խզվելով՝ ուրիշ թերթ ինձ պաշտպան չունեմ. «Մշակը» ես թշնամի է։ Բայց ի՞նչ ցավ — ո՛չ մի, իսկապես։

Սիրելիս, լավ չեմ կարող պարապել. տրամադրությունս շա՜տ և շա՜տ վատ է. իսկ ձեռագրերս բոլորը դանվում են այն երկրում, ուր էի պատերազմը սկսվելիս. չկարողացա դուրս բերել. պահ տվի. չգիտեմ, ի՞նչ է լինելու «Ուստա Կարոս» էլ այնտեղ է։

Դու ի՞նչ ես անում. ձեռքդ ո՞նց են. մայրիկդ, եղբայրներդ. ուրիշ ընկերները ո՞նց են. հիշով կա՞ ինձ, թե՞ մոռացել են, մերոնցից ուշ-ուշ եմ նամակ առնում, Մկրտչից — բնավ. ասա որ գրե ինձ։ Շո՜ւտ-շո՜ւտ

գրիր, բարեկամների, ծանոթների մասին. ո՞ւր է տիկ. Վիկտորիան. եթե այդտեղ է, բարևիր անպատճառ. թող նա էլ գրե. բարևիր և օր. Արմեն. Տիգրանյանին։ Ձերմ բարևներս մայրիկիդ և եղբայրներիդ։

Մենք լավ ենք. երեխաս մեծացել է. խելոք տղա է դարձել, բայց շատ չար, աշխույժ և ջղային։ Բարևում են քեզ. տղաս հիշում է քեզ։

Ձերմ համբույրներով, քո՝ Ալեքսիս Խաչատրյան

Խնդրում եմ գրիր։ Սրա հետ ուղարկում եմ այս պոեման և երկու ոտանավոր «Գեղարվեստի» համար։

ՀԱՐԱՋԱՏՆԵՐԻՆ

1916 ապրիլի 6, Ժրեն

Իմ սիրելիներս, այսօր 5 օր է, որ լսել եմ մեր ազիզ, անմոռանալի, մեր անգին Միսակի մահը. այսօր հազիվ եմ ինձ հավաքում այս տողերը գրելու. վերջապես եղավ. ինչ-որ տարի ու կես ես ահ ու դողով բանում էի լրագիրները. մեր գեղի անգին ծաղիկը մեր տան ատոդը այլևս չկա. այսպիսի մեծ կորուստ, այսպիսի մեծ ցավ ես դեռ չէի ունեցել. ես լինեի իմ ազիզ բալիկի փոխարեն. ինչպես մոռանալ այն զեղեցիկ, հրեշտակի պես երեխային. ա՜խ, ա՜խ, անկարելի է մոռանալ. օր չանցավ, օր չտեսավ. չգիտեմ ինչպե՞ս մխիթարեմ անբախտ Աքայիս, դժբախտ մորը. արցունքներս օր ու գիշեր թափում եմ, խառնում եմ Աքայիս և բոլորիդ արցունքների հետ. միակ մխիթարությունը այն է, որ հերոսի պես ընկավ մեծ գաղափարի համար, հայրենիքի համար. սուրբ նահատակ, անմահ դարձավ. հայ ազգը հավիտյան կհիշե իր ազնիվ, իր սիրուն զավակին, որ իր տաղանդը և դայար կյանքը զոհ բերեց. հավիտյան համբուրելի կմնա նրա սուրբ գերեզմանը և լույսով ու վարդերով միշտ կպսակվի նրա անունը։ Մխիթարվի՛ր, իմ թանկագին Աքա, որ այդպիսի զոհար ես ծնել, և հիշիր, որ քեզ հետ շա՜տ լացողներ կան... Ամեն օր հազարավոր մայրեր արցունարցունք են թափում. միլիոնավոր սգավոր մայրեր կան այս նեղվված աշխարհի վրա, որոնք անիծում են գազան Վիլհելմ կայսրին և ղղվելի գերմանական ազգը, որ երկիրը արյան ծով ու գերեզման դարձրեց։ Շուտով կգա արդար դատաստանը. ռուսների, ֆրանսիացիների և անգլիացիների անձնազոհ բանակները կջախջախեն գերմանական վիշապի գլուխը և մեր բոլորի վրեժը կհանեն։

Իմ հոգուս հատոր Միսակի համար հոգեհանգիստ կատարեցեք իմ կողմից. լավ պահեցեք նրա ձեռագիրները. մխիթարեցեք Աքայիս, լավ նայեցեք Աբասիս և խրատեցեք Օլիկին, որ ուղղվի, լսեմ, բժշկվի։ Հոգե-

հանդիսաց հրատարեցեք և՛ Գեորգ եղբորս գերեզմանի վրա, որ այդպիսի ընտիր, սուրբ որդի ունեցավ։

Իսկույն ինձ գրեցեք, թե ինչպե՞ս ընկավ, ե՞րբ, մանրամասնությունները. որտե՞ղ է նրա գերեզմանը. ո՞ւր է թաղված. վերջին օրերը, վերջին խոսքերը. բոլորը, բոլորը. եթե էրզրում է թաղված, այնպես արեք, որ գերեզմանը չկորչի։ Իսկ նրա բոլոր տետրակները, նամակները, թղթերը լավ պահեցեք, որ գամ և հրատարակեմ։

Սոֆիկի արցունքները և համբույրները իր թանկագին Աքային։

Ընդունեցեք իմ արցունքներս ու համբույրներս՝ Ապլային, Աքային Վերջինին, Արասին, Գինովաբերին, իրիցկնկան, Փեփրոնին, Ռուբենին, Մկրտիչ աղբորս, Ալիքսան աղբորս և հարսներին, երեխաներին։

Ձեր՝ վշտահար Ավետիք

ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ

1917 մարտի 18, Ծրեն

Սիրելի Կարեն,

Նամակդ ստացա երեկ, այսօր և երեկ տաս նամակ միասին ստացա, գլուխս ուսական հեղաշրջման կախարդական, հրեղեն լուրերով ուղղակի պայթեց, կարծես, Պետրոգրադի աշխարհասասան պայքարը, աղմուկը, փլուզումները իմ գլխումն են պատահել, իմ գանգիս տակ, սարսափելի ցավում է գլուխս... Այս քանի օր է մենք հարբած ենք — անքուն դիշերներ, շամպայն, խոսք, վեհ... Այս մեծ, անսահման ուրախության համար փոքր է սիրտս, դիտե՞ս, սիրելիս, թե վշտից, հոգսերից, անարցունք լացից սիրտս որքան էր նեղվել, չորացել, և վերջապես մեծ-Ռուսաստանի մեծ ազատության մեծ ուրախությունը... Համբուրում եմ քեզ, գրկում եմ բոլորին — բոլոր լավ մարդկանց կրծքիս և ասում,— կեցցե՛ Ռուսաստանը, կեցցե՛ Ռուս մարդը... Փրկվեցինք բոլորը և հայերս, որ բոլորից դժբախտն ենք, փրկվեց Թուրքահայը, որ պիտի ոչնչանար Պրոտոպոպոֆների և ընկ. կրոնների տակ։

Դու չես կարող երևակայել, թե այսուհետև Թուրքերը և գերմանացիք ինչքա՞ն են սիրել, կարևկցկլու չափ խեղճացել, վերջապես հնչելու է հաղթության ժամը... Միայն մի ամպ երբեմն անցնում է հոգուս վրայով — չդառնա անվիրը, չգա՞ կոնար շարժումը, ռեակցիան։ Բայց չի՛ գալու, չի՛ գալու, աշխարհի պիտի քանդել, եթե գա.... Դառնանք առօրյային։ Ամենից ավելի է, որ ստացել եմ «Поэзия Армении». հոյակապ գործ և հոյակապ ջանք, նմանը չունեցած, արդեն նամակ գրել եմ Մոսկ. կոմիտեին. շնորհակալություններս հայտնելով, միայն ցավում եմ, որ Դեմիրճյանին մեծ

տեղ չեք տվել՝ նա մեծ բանաստեղծ է, սակայն բախտ չունի։ Խնդրում եմ մի քանի 4—5 օրինակ ուղարկեք ինձ՝ ծախելու, շատերն են ուզում, և մի օրինակ էլ «Արձակ գրողները» Մ. Գորկու հրատարակությամբ։

Լոնդոնում լույս է տեսել մի շատ շքեղ գիրք հայ գրողների, պատկերազարդ, ինձ նույնպես լավ տեղ է տված։

Ուզում եմ Բրյուսովի տեսությունը թարգմանել (Հայ պոեզիայի մասին) ֆրանսերեն լեզվով, շատ են հավանել տեղիս հայերը։

Խորին շնորհակալություններս հայտնելով պ. Բրյուսովին, ասա, որ նա հայ ժողովրդի անկեղծ և մեծ բարեկամներից մեկն է։

Գրում ես թե «Մահարին» չի համապատասխանում պատմական դեմքին. դա, սիրելիս, ես լավ գիտեմ, ինձ միայն անունն էր պետք, հնությունը. կոլորիտը և մասամբ էլ նրա պսևդմիստ-փիլիսոֆիա հոգին։ Նրա գրածները կարդացել եմ և՛ գերմաներեն լեզվով, և՛ ֆրանսերեն, գիտեմ, որ նա կույր է եղել, Բաղդադ չի եղել, բայց — այդ չէ կարևորը, այնտեղ ես եմ, ուրիշ ոչ ոք, միայն դա ուրիշի վերարկուի տակ։ Պրոֆեսորը սխալվում է «Քասիդա, քասիդ» նշանակության մասին, նա կնշանակի Գոնմ, այդպես են վկայում բառարանները, և կենդանի մարդիկ, արաբագետներ, ծանոթ եմ Բեռլին՝ նշանավոր պրոֆ. Մարտին Հարտմանին (նույնն է ասում). ծանոթ եմ արաբ սենատոր և բանաստեղծ գրող էլ-Բոստանին, նույնն է ասում։ «Սուրա»-ի մասին ճիշտ է, նա գործածում է Ղուրանի մեջ, և մեր «սրահ» բառն է «սրահ» կնշանակե հերթ, կարգ, բայց ես ուզեցել եմ նոր Ղուրան դրել. («մանիա գրանդիոզա» մեծամտություն)։ Չէ՞ որ ասել եմ «Օ, ազատություն, դու դրախտային վառ բլբուլների անմահ Ալ Կորան»։ Վրաս չծիծաղես։

Ձեր խոստացած փողը չստացա, ասված հետևո՛ղդ։ Առայժմ այսքան։

Բարևներով և համբույրներով։

Ի. Ավետիք

ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

1917 մարտի 28, Ծրեն

Սիրելի Գարեգին.

Ստացա նամակդ և ուրախությամբ կարդացի։ Անսահման, անսահման ուրախ եմ ռուսական հեղափոխության հաղթանակով. նո՛ր դարաշրջան. և վերջապես փրկվեց հայությունը։ <...> Այժմ ընդմիշտ ապահով է հայ ժողովրդի ապագան.— մի 30—40 տարուց հետո, մենք կունենանք ամուր, ուժեղ, հարուստ, մեծաքանակ հայություն. Ռուսիան պիտի

Հավաքողը լինի հայկական հոդերի և հայը ինքը աղատագրողը և յուրացնողը այդ եվրոպական հոդերի. մեր ներկա սերունդի և ապագա բոլոր սերունդների միսսիան պիտի լինի Հայաստանը դարձնել Հայաստան։ Սոցիալիզմը պիտի նպաստող լինի, և ոչ թե խանգարող։

Ձեր շնորհակալություններս սիրելի բարեկամ-ընկերներիս՝ Շիրվանզադե, Սիսակ, Խանազատ, Աշոտ, Գրիգոր և այլն։ որ ինձ հիշել եք և իմ կենացս խմել. հույս ունենամ, որ ես էլ արժանանամ այդ քնքերին։ Անհուն կարոտ ունիմ Կովկաս գալու, բայց հիմա անկարելի է դարձել, եթե չես ուզում ջրի տակն անցնել. դուցե հետո ճանապարհը բացվի։

Դեռ չեմ ստացել քո և Քալաշյանի ուղարկած գրքերը։

Թերթերին ուղարկեցի հերքումը Մատենճյանի գրության. եթե տպվել է, լավ, եթե չէ, դու գրիր նա տպված է (ստուգեցի Վիեննայից), 1893 թիվ, № 31, երես 491—92, «Տարազ»։

Աշխատի՛ր շուտ-շուտ նամակներ գրել, և սրտիդ ուզածը, քանի որ ազատ է հիմա։

Խնդրում եմ Գր. Վարդանյանի և Ար. Աբեղյանի Հայաստանի քարտեզներից մի-մի օրինակ ինձ համար առնես և պահես. եթե ինձ փող ես ուզում ուղարկել, նրանից դուրս արի։ Վախենամ սպասվին այդ քարտեզները, իսկ եթե ոչ, ուրեմն թո՛ղ մնա, ես գամ։

Եթե ուզում ես փող հասցնել ինձ, խնդրում եմ այդտեղ հանձնիր Գինովաբեն քրոջս կամ Մկրտչին, որ ինձ ուղարկելիք փողերի հետ միասին ղրկեն. ավելի հարմար է, և ծախս քիչ կլինի տեղափոխության։

Հույս ունեմ, որ «Գեղարվեստի» մեջ կդետեղես Լեոնցի ոտանավորներից, թո՛ղ այդ մարդը հանդես գա, շա՛տ է մոռացված։ Մոտ օրերս նրա գրածներից մի քանի հատ պիտի ուղարկեմ Մոսկվա, Հայկ. կոմիտեին, որ եթե հավանին, գետեղեն երկրորդ անգամ հրատարակվելիք «Поэзия Армении» մեջ։ Ստացա վերջապես. այո՛, հոյակապ գիրք է. մեծ ջանք, մեծ ճաշակ. միայն ափսոս, որ մեծ տեղ է տված Մատուրյանին, և շա՛տ քիչ Դերենիկին, Սիամանթոյին, Վարուժանին, Ալիշանին։

Գրի՛ր ընկերական շրջանից. դա ամենից շատ է ինձ հետաքրքրում։

Մենք լավ ենք. թե՛ Սոֆին. և թե՛ երեխաս, կինս բարևում է քեզ. ձեր բարևներ մայրիկիդ, և անեցոց, և նշանածիդ, եթե ունիս. բարևներ նույնպես տիկ. Վիկտորիային, օր. Արմենուհուն։

Ուղարկում եմ այս 3 ոտանավորը, և «Հավերժական սերի» ուղղումները։ «Աբու-Լալա Մահարին» խնդրեմ առայժմ չտպես. սրբագրություններ եմ արել. այդ առթիվ գրեցի և՛ Ադոնցին. կամ սրբագրվածը կուղարկեմ, կամ հետս կբերեմ։

Համբույրներով և բարևներով, քո՝ Ավետիք

ՎԱՀԱՆ ՉԱՔԱՐՅԱՆԻՆ

<19>19 նոյեմբերի 26, ծբնև

Սիրելի Վահան.

Նամակդ ստացա. մինչև հիմա չէի գրում, որովհետև շա՛տ հոգնած էի՝ Բեռլինում պարապ քաշ գալով, անընդատակ, երեք ամիս։ չհաջողված միսիոնով, և Հայկի շուրջը կատարված անախորժ պատմությունով... հիմա ջղերս հանգիստ են, բայց հայկական հարցի անորոշ վիճակը մեռցընում է ամեն եռանդ։

Ի՞նչ գրեմ... Գնացել են Ամերիկա, լավ են ինդունել, բայց հույս չկա մանդան ընդունելու. ավերակ, ամայի երկիր է։ աղքատ, ոչ ոք չի ուզում մանդա առնել. Հայաստանի և Թուրքիայի լավ տեղերը Անգլիան և Ֆրանսիան գրավել են (Կիլիկիա, Ադալիա, Սիրիա, Միջագետք...) և ցուրտ լեռները թողել են Ամերիկային. նրանք էլ ինչպես բոլորը, հարստություն են որոնում։

Հիմա էլ լսում ենք, թե խաղաղության ժողովը վերջանալու վրա է Փարիզում, և Թուրքիայի հարցը, մերն էլ մեջը,— տեղափոխվում է Լոնդոն. Անգլիան ուզում է տնավարի կերպով հարցը լուծել. թերևս այդ ավելի լավ է, քան Փարիզի շնական մթնոլորտում. թեև Անգլիան էլ մի բարի պտուղ չէ։

Հարբորտի (Ամերիկ. գեներալի) միսիոնի մասին դրական բան չգիտենք, բայց խելքս բան չի կտրում, Կովկասից եկած լուրերը լավ և վատ են. կարծեմ կոիվները դադարել են։

Վերջերս Բեռլինի գաղանը, հրեշը մի քանի օրով եկած է եղել Զվիցերիա. մինչև իմացանք, արդեն վերադարձել էր նորից Բեռլին. ժողով են ունեցել Բերն՝ խաղաղության ժողովի համար պատրաստություններ տեսնելու. նույն անունով էր եկել, ինչ որ Բեռլին ուներ։

Դուք նորից պիտի շարունակեք հետաքրքրությունը. փող կարող եմ ուղարկել, գիտես։ բայց մարդ — միայն նեվրուզին կարճ ժամանակով, եթե պետք է։

Գալով Հայկին, նա Փարիզում արդարացրել էր իրեն և կարծեմ չի ուզում Բեռլին դառնալ. լսեցի, որ պահանջում են, որ դր. Գրենֆիլդը փաստական մեղադրանքը ուղարկի Փարիզ։ Համոյից դեռ նամակ չունեմ. ե՞րբ կունենամ, աստված գիտե։

Գերիների հաստատ մեկնելու մասին ինձ գրիր, և արդյոք Մելի՞քն էլ է գնում հետները։

Հա, մոռացա քեզ ասել, թե մեկնելուս Մելիքին 1000 մարկ տվի, որ

500 քիլ հանձնեմ. 500 Աշոտին։ Շուտով Աշոտին պիտի գրեմ այդ փողի մասին։

Այլ ոչինչ չունեմ գրելու։ Բարևներ Գրիգորիին, Աշոտին, Մելիքին, Վարդանին և քեզ։

Քո՝ Ավետիք

Բարևներ ս. Անտոնից։

Նամակդ մի օր ուշ ավին, հրավիրեցին ինձ պոստը՝ վճար լրացնելու, որովհետև Գերմանիայից պահանջում են հիմա 30 թքեն մարկ դնել. ես չեմ կարծում. այդ ի՞նչ բան է։

Գրի՛ր իմ հասցեն՝

A. Issahakian.
Rue Prévost Martin, 53.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

1921 հուլիսի 1, Վենետիկ

Շտապում եմ մի քանի տող գրել, որ հանձնեմ գրաբերիս՝ հ. Դիոնիսիս վ. Կալատոզյանին, որ մեկնում է դեպի Թիֆլիզ։

Ես երեք տարիս է Վենետիկ եմ ապրում, իբրև էժան երկիր, և մանավանդ Ս. Ղազարի դրաղարանից օգտվելու, և հենց որ հարմար եղավ՝ կովկաս դառնալու։

Ինձ թվում է, որ այժմ Կովկասի վիճակը ավելի լավ պիտի լինի, քան անցյալ տարի, մանավանդ Թշվառ Հայաստանի. գոնե հիմա դրությունը կայուն է, այլևս կռիվ չկա ազնազան ցեղերի մեջ, և թվում է, թե՝ արտաքին վտանգը անցած է. ռուսական ուժի ներկայությունը կսանձե թշնամու ախորժակները։

Ես ինքս ազգային բացարձակ անկախության ոչ կուսակից էի, ոչ հավատացող, և ոչ էլ համոզված. մենք մեր ուժերով չէինք կարող անկախ լինել և պահել անկախությունը. Եվրոպան ո՛չ միայն չի օգնի մեզ. այլև թշնամի է և հրճվում է հայկական բնաջնջումով. սրան համոզված եմ փաստերի վրա. ինձ համար Անգլիան և Ֆրանսիան այնքան դաժան գրանվեցան, ինչքան Գերմանիան. քրիստոնեություն, քաղաքակրթություն, մարդասիրություն դատարկ հնչյուններ են եվրոպացու աչքում. պետք է երես դարձնել այս ավազակներից, և մոտենալ Ռուսաստանին, ինչ ձևի տակ էլ որ նա ներկայանա. հայկական առածը այնքան ճիշտ է՝ լավ է փորձած սատանան, քան անփորձ քահանան. որքան ռուսական առածը՝

«Старый друг лучше новых двух». Դու լավ ես հասկանում՝ թե ես ի՞նչ եմ ասում։ Ըստ իս, Հայաստանը և հայ ժողովուրդը կարող է միայն ապրել Ռուսաստանի հետ կամ բնավ չի կարող ապրել։ Մնացածը հիմարությունից վեր մի բան է։

Մնում է հիմա, որ ռուսների և մեր միջև ծագած թյուրիմացությունները հարթել, և հայ ժողովրդի ապագան ապահովելու համար ընդլայնել նրա երկրի սահմանները, և ապա լծվել կուլտուրական աշխատանքի. ես սպասում եմ այդ ժամին. ես ղենքի, կռվի մարդ չեմ, և ոչ էլ ցանկանում եմ դրա համար, ուստի խնդրում եմ, ինձ հայտնես, եթե հարմար ժամանակ է. կանչի՛ր, ես կգամ, կվերադառնամ, իսկ եթե դեռ կռիվ, ատելություն, լարություն կա, ես չեմ վերադառնա։

Ջերմ համբույրներով ու կարոտներով քեզ՝ ընտանիքիդ և բոլոր մեր լավ բարեկամներին ու ընկերներին,

քո՝ Ավետիք

Հասցեն՝ Ս. Ղազարի վանքը։

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

1921 նոյեմբերի 8, Վենետիկ

Սիրելի Օհաննես.

Լսեցի Պոլիս գալդ. հաստատություն եմ փափագում առաքելությանդ։ Կինդրեի մի-երկու տողով ինձ գրեիր, ինչ որ գիտես մեր և կնոջս ընտանիքի մասին. ո՞ղջ են, առո՞ղջ են, կո՞ւշտ են, ինչ են, ինչ չեն. շատ-շատ վաղուց է լուր չունինք։ Նույնպես ձեր ընտանիքի, Դերենիկի, Աղայանի և մեր Վերնատան անդամների մասին,— մի խոսքով գիտես, թե ի՞նչ եմ ասում։

Եվ Հայաստանի մասին միխիթարիչ լուրեր. ահավոր բաներ միշտ կարդում ենք և հալվում. ասում են, որ Քեմալը 60000 հայ կոտորեց, Շիրակ-Կարս-Կաղզվան ժողովուրդը ոչնչացված է...

Եվ որո՞նք են այժմյան Հայաստանի սահմանները, իրապես։

Իմ մասին մի երկու խոսք։ Ես 7 ամիս է, որ Վենետիկ եմ. եկա հոս իբրև էժան երկիր, բայց նորից թանկ է. մտադիր եմ Ավստրիա, Վիեննա գնալ, ուր ապրուստը էժան է։ Դարձել ենք թափառական, ուր գնալներս ու մնալներս չգիտենք...

Պոլսի «Ժողովրդի ձայնը» թերթի հոկտեմբերի 20 թվի մեջ կարդացի՝ թե Հայաստանի կառավարությունը որոշել է մի շարք գրողների գոյության պայմանները ապահովել ցմահ... ծաղրել... ծաղրել է թվում սոված ժողովրդի այս դրության մեջ այդպես բարբառելը։

Սակայն խնդրում եմ ինձ գրես, եթե ճիշտ է, ուրեմն շտապեմ, խնդրեմ, ինձ օգնություն հասցնել. ապա թե ոչ, պետք չէ որ իմ անունը շահագործվի, ունայն տեղը, ինչպես եղել է միշտ. օրինակի համար, անցյալ տարիներն էլ նախկին կառավարությունը օգնում էր գրողներին, և ես ոչինչ չստացա, կամ «Գրողների ընկերությունը» քո նախագահության տակ, ոչինչ չահսցրեց ինձ, թեև կարող էր, և պարտական էր, բայց չուզեցին՝ դու կամ բոլորդ,— միևնույն է ինձ համար, ես բան չստացա։ Այժմ եթե ինձ գրական չեն օգնելու. շուտով պիտի իմանամ, որ հրապարակավ հերքեմ այդ ձրի բարությունը, որ իմ անունը չկապվի իրապես օգտագործողների հետ։

Եթե դու իրազեկ չես ինձ պատասխանելու, խնդրեմ, կառավարությանը հասցրու։

Նվարդը, աղջիկդ, գրել էր ինձ, որ մտադիր է Վենետիկ գալու՝ վանքի գրադարանում ուսումնասիրություններ կատարելու. իմացած եղիր, որ դա անկարելի է. վանքը փակ է կանանց համար։ Խորհուրդ կտայի Վիեննա դալ, թե՛ գերմաներեն կսովորի, և թե՛ իմ միջոցով կկարողանա վանքից գրքեր ստանալ և մանավանդ կամ մեզ մոտ կապրի, կամ վերջապես աչքս վրան կլինի։ Եվ ապրուստը ձրի է*։

Հարգանքի բարևներ պ. Եր. Թաղիանոսյանին. սիրո և կարոտի բարևներ և համբույրներ իմ ու Սոֆիկի կողմից։

Քո՝ **Ավետիք**

Հասցեն՝
A. Issahakian,
Collegio Armeno „Moorat-Raphael",
Venise.

ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

1921 դեկտեմբերի 26, Վենետիկ

Սիրելի բարեկամ
պ. Արշակ Չոպանյան.

Վաղուց կուզեի Ձեզ մի երկուտող գրել, շնորհակալություն հայտնելու Ձեր այն ազնիվ նամակի համար, որ ուղարկել էիք ինձ Բեյրութից. այսօր ահա գրում եմ. կուզենայի գրքիցս մի օրինակ ուղարկել, բայց այստեղ մոտս չունիմ (ծրնև մնացին), ստանամ՝ անպատճառ կուղարկեմ։

Ես դարնանից սկսած Վենետիկ եմ տեղափոխված՝ թե՛ իբրև էժան երկիր, և թե՛ երեխայիս հայերեն սորվեցնելու, ես էլ մի քիչ օգտվեմ վանքի գրադարանից։ Եվ վերջապես՝ հոգնեցի Զվիցերիայից. և ո՞ւր գնալ. գրեթե անհայրենիք դարձանք՝ շնորհիվ մեր միամիտ հավատքի և դաշնակից սրիկաների երեսից։

Ի՞նչ ահավոր դաս տվին Ֆրանսիացիք մեզի. հանդիսավոր խոստումներից հետո. գիտակից և անգիտակ զոհաբերումներից հետո նորից քաշել հայությունը յաթաղանի տակ՝ դիվային, ճիվաղային բան է. ո՞ւր մնացին խոստումները.— մեր մարտիրոսացումով սրբագործեցին իրենց ավազակային դատը, և այժմ թքում են մեզ վրա։

Ի՞նչ է մնում մեզ,— եթե ոչ՝ դարերով ատել այդ միջազգային պոռնիկին, և ուիտել վրեժխնդիր լինել, և վնասել... և մենք դեռ կարող ենք հարվածել նրան. Փոքր Ասիայում դեռ մենք կանք, և դեռ դեր ունինք...

Լսե՞ս՝ «Հայկական հարցը» մեռած է արդեն. գարշելի Եվրոպայից այլևս, և երբեք էլ սպասելիք չկա, պիտի մեր ուժերի կարողացածի չափով արյունի վրեժ լուծել այդ բորենիներից, և ամփոփվել Ասիայում, հաշտվել դրացիների հետ, մտերմանալ բոլշևիզմին, և զարնել ամեն տեղ Եվրոպացուն, թե՛ նրա վաճառականությանը, պրիստիժին, դպրոցներին, թե՛ մասնակցել հակաեվրոպական շարժումներին։ Ուրիշ կերպ չի կարելի ապրել։ Այլևս ոչ մի հավատ չունեմ մեր հարցի մասին, և բոլորովին անմիտ, վնասակար եմ գտնում Փարիզի երկու պատվիրակությունների գործունեությունը։ Ամերիկա կամ Պապին դիմումները. մամուլին.— այդ բոլորի ոհմակին,— դիմումներն ու կոկորդիլոսի արցունքները, հայասերների ճառերը, և ազգերի լիգայի կեղծավորությունը. հայերիս համար կոզակը ավելի իրական է, քան Վիլսոնը, Ջեյմս Բրայսը, և բոլորը...

Վերջացած է ամեն ինչ. խաբված ենք ապուշի պես, պարտված ենք չարաչար, նոր ուղիներ պիտի փնտրել...

Դուք ի՞նչ եք անում, սիրելի բարեկամ, ի՞նչ եք մտածում, ի՞նչ եք գրում, եթե երբեք սիրտ մնաց մի բան գրելու, աշխատելու։

Ջերմագին բարևներս Ձեզի, Շիրվանզադեին, Փանոս Թերլեմեզյանին...

Մնամ Ձեր անկեղծ բարեկամ՝
Ավետիք Իսահակյան

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ

1924 նոյեմբերի 12, Վենետիկ

Սիրելի Մարտիրոս.

Երկու նամակ եմ գրել քեզ, որով հայտնել եմ քեզնից ստացած նամակները և փողը։ Գնումները կատարել էի, և ուղարկելու մասին հարցու-

* Կամ ասում են, որ Եվրոպայի ամենաէժան քաղաքն է (Ավ. Իս.)։

փորձից պարզվեց, որ ավելի ապահով ճամփան է տեղ հասցնելու համար մարդու միջոցով ուղարկել (թեև դու էլ էիր մարդ և տղամարդ միևնույն ժամանակ, բայց կորցրիր). ուստի ես էլ որոշեցի ուղարկել մարդու միջոցով (այս անգամ կնիկմարդու միջոցով, մտածելով, որ սրանք ավելի աչքաբաց են նյութեղենի նկատմամբ, և ավելի գործնական). ուղարկեցի տիկին Մարտիրոսյանի հետ, Շիրակի ջուլհակի թեմենելի կնոջ, ճանաչում ես նրան։ 24 պատճեն է նկարներիդ, 2 կատալոգ և 4 ալբոմ Վենետիկի. 2 քննադատական թերթիկներ, իմը և մի ուրիշինը, և 2 հատ մեր լուսանկարներիդ։ Հույս ունեմ, որ կհասնին. եթե չհասան, այս տեղում նորից կանեմ, և ես կրերեմ հետս։

Իսկ ես մտածում եմ գարնանը գալ. մենակ. կինս չի ուզում տեղից շարժվել. կանանց խոսք չի կարելի հասկացնել. նրանց արամաբանություն չի տրված, այլ ինստինկտ, ինտուիցիան, որ իմացից ավելի խելոք է։

Մոռացա ասել, որ տիկ. Մարտիրոսյանը 4—5 օր է, որ մեկնել է, Մոսկվայի վրայով։

Աշունը գալուց ի վեր սկսել եմ պարապել. ամառը անկարելի էր բան շինել։

Մի երկու օր առաջ վարդապետներից լսեցի, թե հայկական համալսարանի լեկտոր Կոստան Զարյանը կոչվել է նշանակվելու խորհրդային պետությունների կողմից Վենետիկ կամ մի այլ տեղ, չգիտեմ։ Դիմում է արել, միջնորդներ կան... Չգիտեմ, դա պատի՞վ է հայոց համալսարանին և նրա կոլեգիային, որ իր դասախոսը հյուպատոս է դառնում, սակայն, Զարյանի համար դա աստիճանի «անկում է» այն պատճառով, որ նա 1919 թվին ձգտում էր Հռոմի դեսպան դառնալ, երբ չհաջողվեց, գժտվեց այն ժամանակվա իշխանների հետ. թեև մի կողմից՝ այն դեսպանությունը հավասար է ներկա կոնսուլությանը... Ես տեսնվում եմ հետը, բայց ինձ բան չի ասել, և բնական է. ես «գաղափարի ընկեր» չեմ հետը, ինչպես և «գրչի ընկեր» չեմ։

Մարտիրոս ջան, մի պստիկ խնդիր ունեմ. եղբորս տղան՝ Աբաս Իսահակյան, ուսանում է համալսարանում, նրան նամակ եմ գրել, բայց պատասխան չունեմ. բարի եղիր Վահան Թոթովենցի միջոցով իմանալ, թե նա այս տարի ես ուսանում է, թե ոչ, և եթե Երևան է, տեսնելիր նրան, խրախուսելիր, տնտեսական մասին հարցնելիր և ինձ գրելիր, և իրան էլ ասելիր, որ գրեր։ Հավատացած եմ, որ կկատարես։

Ուրիշ ի՞նչ գրեմ. տրամադրությունս գեշ չէ, շա՜տ ուրախ եմ, որ Ֆրանսիան ճանաչեց սովիետները. Ռուսիան կուժեղանա և Բշնամիների աչքը կհանե։

Շա՜տ ուրախ եմ նույնպես, որ հայերից մասնակցող չեղավ վրացիների ավանտյուրիային. ռուսական մի կարմիր զինվորի ներկայությունը հայոց երկրի սահմանների վրա արժե 1000 Վիլսոն ու Ազգերի լիգա, 1000 Մակդոնալդ ու Հերիո. սա բացարձակ ճշմարտություն է։

Ամեն բան լավ է գնում Հայաստանում (Երևանից եկած թերթերը կարդում եմ). միայն մի բան է գեշ — ուղղագրությունը. աշխատեցեք փոխել։

Կարդացի Ս. Զորյանի «Ցանկապատից» մի երկու պատմվածք. լավ բաներ են. իրական, ճշմարիտ։ Ափսո՜ս լրիվ ձեռքս չընկավ Թոթովենցի Սեղբոսը. ինչո՞ւ վանքը չուղարկեցին. շատ կխնդրեի իմ անունով ուղարկեիք վանքին հանձնելու համար (որպեսզի առաջ ես կարդամ) հետևյալ գրքերը. Դերենիկի «Քաջ Նազարը», 2) «Սեղբոսը», 3) Զորյանի «Տխուր մարդիկ», 4) «Կարմիր այն» պատագրքերը, և այլն. ասա ուր որ տեղն է, որ ուղարկեն։

Վենետիկը հիմա դատարկվեցավ. էն «լավերը», որոնց «ախն» էի քաշում քեզ հետ միասին (կինդ լիմանա՜) էլ չկան. մեկ-մեկ պատահում են ուշացած ծաղիկների պես, բայց փաթաթված են հաստ-հաստ տերևներով (պալտոներով) և էլ չեն ցույց տալիս իրենց նկարչական (մի բառ պլաստիկ, դեկորատիվ, էքսպրեսիոնիվ-իմպրեսիոնիվ) հրապույրները։ Գիտի երևակայությամբ լրացնես՝ հիմք ունենալով ծովափի ապրումները։

Դու ո՞նց ես, կինդ, երեխաներդ, բարեկամներդ... Գրիր մանրամասն։ Այստեղ էր նկարիչ Կոնչիալովսկին. լավ տպավորություն թողեց, իրրև մարդ։ Քո մասին խոսում էր սիրով։

Տերնովեցը մոտ օրերս գոցելու է ցուցահանդեսը և Մոսկվա գնալու։

Վարդապետ-եպիսկոպոսի (այդտեղ) հանած ազմուկներն ու բրոշյուրները կարդացի և ղզվեցի, ինչո՞ւ. նախ, որ դրանք սրիկա մարդիկ, գարշելի ավազակ են և երկրորդ՝ փորի ցավեր ունին, անկեղծ չեն։ Իսկ գալով «կենդանի եկեղեցի» շինելուն, անմիտ բան է.

Բարևում են կինս և Վիգենը, կնոջդ, երեխաներիդ և քեզ։ Իսկ ես համբուրում եմ բոլորիդ։

Միշտ քո՝ Ավետիք

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ

1925 ապրիլի 22, Վենետիկ

Սիրելի Մարտիրոս.

Շա՜տ ժամանակ է, որ նամակդ ստացել եմ, բայց, ներող եղիր, սիրելիս, որ մինչև այսօր չեմ պատասխանել. տխուր եմ շատ, սրտաբեկ, անտրամադիր. այսպես գնաց մեր սերունդի կյանքը...

Վերջապես այսօր գրում եմ քեզ. Երևանը ծաղկել է հիմա, գուցե լեռնաբեր հասել, Արարատյան դաշտը կանաչին է տալիս. լեռներից իջնում են գարնան հորդ ջրերը, և Ալեքսանդր Մյասնիկյանը չկա. նա չկա այլևս, ամենալավ հայերից մեկը և ամենախելացի ու ամենաբարի բոլշևիկը։

Ամենասանկեղծ զգացումով ցավում եմ նրա կորուստը. նա ամեն հայի սրտի մեջն էր ապրում, և հիմա ամենքը ողբում են նրան։ Հայության պաշտպանն էր նա ներկա դառն ժամանակներում. ո՞վ պիտի փոխարինե նրան. դա է նույնպես շատ մտածել տալիս ինձ...

Ափսո՜ս, անհուն ափսո՜ս. ի՞նչ կարճ կյանք ունեցավ և ի՞նչ մեծ գործ կատարեց։

Անձնապես ցավ եմ զգում, որ Հայաստան գալով, երջանկությունը չպիտի ունենամ նրան տեսնելու. իմ միակ մեծ բարեկամ-ընկերն էր նա ներկա իրավակարգի մեջ. մյուսները, բացի Մակինցյանից, անծանոթ մարդիկ են ինձ։

Համոզվում եմ, որ հայ ժողովուրդը անբախտ ասողի տակ է ծնվել. գոնե խնայել, ով որ խնայելու է նրա աղնիվ ընկերներին. հույս ունեմ, որ կան. գոնե Լուկաշինի մասին շատ լավ են խոսում. այդ լավ ընկերները թող ապրեն հայությունքի համար, միայն թե ծիա հայի օջախը։

Սիրելի Մարտիրոս, մարտ ամսին այստեղ էր Ե. Չարենցը. ամեն օր միասին էինք. շատ քիչ կովեցինք, միշտ արիշ-բարիշ էինք, հաշտ ու սիրով։ Նրա մասին շատ կեղ, լաբ խոսքեր էի լսել, բայց ես նրան լավ տղա գտա. ընկերական սիրտ ունի, դարդիման է։ Երիտասարդական տարիքի պատճառով թերություններ ունի — մեծամիտ է, երևսալված է և անհանդուրժող է. սակայն խեղճը շա՜տ չզայրին է. հիվանդ տղա է ուղղակի. անշուշտ տարիների մեջ այս ամենը կանցնի։ Առաջին շրջանի գրվածքները նրա՝ կարդացի. գեղեցիկ բաներ են. տաղանդավոր է, բայց նրա ֆուտուրիստական գրվածքները չկարողացա սիրել. երևի հին մարդ եմ և չեմ հասկանում։

Տարիքից ավելի զարգացում ունի և կարդացած ու կարդալ սիրող տղա է. շա՜տ հառաջ կգնա։

Սիրելիս, ստացել եմ Մռավյանի գրկած «Արևները» և Ս. Զորյանի «Տխուր մարդիկը»։ Շնորհակալություններս անպատճառ հայտնիր նրանց, չմոռանաս։

Զորյանը շա՜տ լավ բաներ ունի — պարզ, ճշմարիտ։ Ուրախ եմ, որ դեռ երիտասարդ է և հառաջ գնալու ժամանակ ունի։

Ի՞նչ ես անում դու. աշխատո՞ւմ ես, թե՞ կոտրված ես. ինչպե՞ս են կինդ ու երեխաներդ։ Ինչպե՞ս է Երևանի տնտեսական դրությունը, ժողովրդի ապրուստը։

Շատ բարևներ բոլոր քո և իմ լավ բարեկամներին և ընկերներին. հատկապես բարևներ Դերենիկին Դեմիրճյան. ասա իրան, որ ամեն օր կարոտով անունը տալիս եմ նրա, բայց չեմ գրում, որովհետև՝ եթե գրեմ, մի ողջ գիրք պիտի գրեմ. այնքան բաներ ունեմ նրան ասելու. 14 տարվա մեջ սրտիս մեջ հավաքված բաներ. ինչպե՞ս գրեմ նամակով. երբ ասված կամենա իրար տեսության արժանանանք, ամիսներ պիտի խոսենք, որ վերջ ունենա...

Մերոնք լավ են. բարևում են սիրով քեզ և ձերոնց։

Իսկ ես չկրկնելով տիկ. Լուսիկիդ, համբուրում եմ քեզ, երեխաներիդ և Դերենիկին։

Միշտ քո՝ Ավետիք Իսահակյան

ԵՐԵՎԱՆԴ ՔՈՉԱՐԻՆ

1925 հուլիս, Վենետիկ

Սիրելի Երվանդ,

Ստացել եմ քո երկու նամակն էլ և տիկնոջդ փոքրիկ պատկերը, որից կարելի է ենթադրել, որ համակրելի աղջիկ է։ Բարով վայելեք միմյանց։

Ոչ մի առիթ չունիս հոգի մտածումներ ունենալու իմ շպատասխանելու համար. քեզ առաջվա պես սիրում եմ, միայն ծուլությունն է պատճառը, որ փափագներս չի իրագործում՝ նամակներին իսկույն պատասխանելու։ Շատ եմ սիրում նամակներ ստանալ, բայց պատասխանել ուղղակի տաժանք է։

Բոնի, զոռով եմ պարապում, այսինքն «Ուստա Կարոն» գրում, այնքան ստվար գործ է, հաղար էջ, այնքան դեմքեր ու դեպքեր կան, որ խճճվել եմ մեջը և դուրս չեմ կարող ելնել։ Հիմա էլ Վենետիկի ամառն է՝ մի սպանիչ, մեղկացուցիչ տաքություն, բաղնի՛ք, որ թմբիր է տալիս՝ թե կամքին, թե մտքին, թե զգացումներին։

Հնար չունիմ այս համամից դուրս գալու. սիրտս լեռներ է ուզում, կապույտ ու զով, բայց ո՞վ է տվել մեղավորին արքայություն։

Այո՜, Չարենցը անկեղծ ոգևորված էր «Ուստա Կարոյով», նա ճիշտ ըմբռնեց իմ հղացումը — տալ էպոս, ուր ամեն բան կա մեջը և պիտի լինի ամեն բան, ողջ դարը, մտայնությունը, դասակարգեր, մարդիկ՝ կենդանի, ռեալ, և մտքերի, գաղափարների հորդ ծով... Խնդիրը հաջողության մեջն է, պիտի հաջողի՞մ այսքան անհնարին ծանրության տակ ձեռք գարկելուս։ Տեսնենք, ես լավատես եմ։

Չարենցը հետաքրքիր տղա է, և տաղանդավոր է, և զարգացած է, և լավ ընկեր է։ Սիրեցի նրան։

Այնպես որ, սիրելիս, ներողամիտ եղիր չպատասխանելուս համար. քեզի մոռանալու կամ արհամարհելու նշան չէ դա, բնավ երբեք, այլ ասացի արդեն. ամենակարևոր նամակներ — հացի հետ կապված, շաբաթներով երեսի վրա են մնում, իմ տարիքս և իմ գործիս տեր մարդը պետք է, որ մի քարտուղար ունենա։ «Ուստա Հարոն» խեղդում է ինձ, ամեն բան ես եմ անում, և սրտագրությունը, որ սպանիչ է, նույնպես՝ ես... և ժամանակ չի մնում նույնիսկ անհրաժեշտ գրքեր կարդալու։

Դու ի՞նչ շրջի վրա ես, կարո՞ղ ես դուրիդ պահես,- այսինքն, ավելի դյուրին կերբրվի։ Կարծում եմ, որ արդեն մի ճամփա բացած կլինես քեզ համար։ Ծերքը և Մենոն Հանը օրեր են ապրում, հարցաքննություն, օր ու գիշեր զբաղված, նիհարել են, ցամաք ձորի աղվես դարձել։

Հիմա պիտի ավարտեին, չկարողացան, մնաց աշնանը։

Մերոնք լավ են, և հիշում են միշտ քեզ, ինչպես երբ Ժորժի և Մենոյի հետ հանդիպելիս։

Բոլորն էլ շերմ բարևում են քեզ։

Քաջ եղիր, լավ եղի՛ր, ուստալ և ուրախ։

Սրտագին բարևներ տիկնոջդ.

Համբույրներով, քո՝ Ավետիք

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ

1926 Հունվարի 31, Վենետիկ

Սիրելի հայրենակից Հովհ. Ավագյան.

Մեծ գոհունակությամբ ստացել եմ Ձեր «Գրական դեմքեր»-ը և հետո Ձեր նամակը։

Սրտագին շնորհակալություններս՝ Ձեր իմ հանդեպ ունեցած ուշադրության համար։

Սակայն ուշացրի պատասխանը, որովհետև հարկ էր ամբողջ գիրքը կարդալ՝ տպավորությունս Ձեզ հայտնելու համար։ Ամենից առաջ շնորհավորում եմ Ձեզ՝ գրական-քննական Ձեր կարողության համար։ Անուրանալի հատկություններ ունեք թափանցելու հեղինակի ապրումներին, հասկանալու նրանց ներաշխարհը, գնահատելու լավը, այն՝ ինչ որ կարողացել է մի հեղինակ իր հոգեկան բավիղից ու թնջուկից առարկայացնել։ Եվ հայտ բերել թերիները, բայց միշտ սրտացավ բարեկամի պես և ո՛չ թե չարախնդությամբ։

Հիանալի է Ձեր ոճը. պարզ է նա, ըմբռնելի, բայց և՛ ճոխ, և՛ նուրբ, և՛ մշակված։ «Կոչնակ»-ի հոբելյանական թվի մեջ տեսնելով Ձեր նկարը, ավելի զարմացա, որ տակավին այդքան երիտասարդ՝ ձեռք եք բերել այդպիսի մի սուր և հաջող գործիք՝ Ձեր լեզուն։

Կփափագեի՝ շքվեիք երբեք և շարունակեիք Ձեր գործը։ Ապերախտ է մեր իրականության մեջ գրական ուղին։ Մենք ամենքս էլ այդ ուղիի վրա շա՛տ ենք տառապել և մնացել ենք միշտ նյութով ապրատ, բայց հարուստ մեր այն գիտակցությամբ, որ Աստվածությունից մեզ շնորհած մեծ կամ փոքր քանքարը չենք թաքցրել։

Ի՞նչ օգուտ ուրիշին, եթե, օրինակ, ես հիմա մի հարուստ գրամատեր մարդ լինեի և դրած չլինեի նույնիսկ մի ոտանավոր... մի ոտանավոր. այո՛, եթե իրոք, իմ հարյուրավոր գրածներից միայն մեկը պիտի ապրի մեր լեզվի մեջ,— բավ է. ինչանակի արդարացած է իմ գոյությունը և իմ տագնապները լիուլի վճարված։

Միլիոնավոր մարդիկ են ծնվում ու մեռնում առանց մի հետք թողնելու, սովորի պես, որ անցնում է ժամանակի անապատի վրայով, բայց մի «անտունի», բայց «ջան-գյուլումի» մի քառյակ մի անմահ հաղթանակ է ժամանակի վրա։

Քննադատությունը շա՛տ մեծ դեր ունի. նա տատմայրն է, դայակը գրականության։ Հայ գրողները ավելի արժեքավոր երկեր կիրականացնեին, եթե ունենային այնպիսի քննադատ-ուղեցույցներ, ինչպիսին եվրոպական ազգերը ունեն։ Մեր մեջ քննադատությունը նոր է, բայց առնում։

Թողնելով Ձեր պատվական գրքի մեջ մյուս հեղինակներին նվիրված Ձեր գրածի մասին խոսելը, ես թույլ եմ տալիս ինձ՝ իմ մասին գրածին մի-երկու խոսք ասել։

Համաձայն եմ Ձեզ հետ, որ «աշուղ» հորջորջումը իմ մասին՝ հեգնանք չեմ ընդունել ես, այլ արժանիք։ Քուչակ Նահապետն էլ էր աշուղ, Սայաթ-Նովան էլ. երանի՜ չէր նրանց փառքին ու մեծությանը ես էլ հաղորդ լինեի...

Սիրելի բարեկամ, ասացեք, խնդրեմ. ինչո՞ւ պիտի բանաստեղծ կոչվելու համար հետևել Վերլենին կամ Մալարմեին, Վերհարնին կամ Ալ. Սրմենին, փոխ առնել նրանց ձևերն ու եղանակները, և պարծենալ, իսկ ոտնահարել մեկին, երբ նա հետևում է հայ հանճարի դարերոր ստեղծագործություններին, այն հավատով, թե շարունակում է ազգային-ինքնատիպ թելը, մեր ինքնուրույն աշխարհազգացումը և աշխարհապատկերումը։ Այլ բան է, թե ես չեմ հաջողել, բայց մտածումը ճշմարիտ է։ Յուրաքանչյուր ազգ պիտի ունենա իր ուրույն, ինքնահատուկ ոճը. միայն ոճ ունեցող ազգերն են ապրում, և չեն ջնջվում ո՛չ ջարդերով, ո՛չ հրով ու սրով. ոճը ազգի նկարագիրն է։ Արարատի սարերի տակ ապրող հայ ժողովուրդը իր երգերով ու իր ճարտարապետությամբ պերճախոս կերպով

ցույց է տալիս աշխարհին, որ ինքը դեմք ունի, իր ձեր ունի, իր սեփական-անհատական ըմբռնումն ու առարկայացումը աշխարհի, նրա իրերի և նրա խորհուրդների։ Ի՞նչ կա ավելի բարձր, քան մի ազգի մշակույթը, նրա ոգու դրսևորումը։

Ես աչքս բացել եմ այնպիսի մի աշխարհում, որ դուտ հայացի է, Շիրազը, ուր ամեն մի անկյունը հայկական կնիք ունի։ Անի՞ն... և շուրջը հոծ, կենդանի հայություն, երգ, լեզու, պար, իմաստություն. մի երկիր, ուր ժամադրավայրն է եղած հայկական բոլոր հատվածների. խոյեցու կողքին Երզնկացին, մշեցու կողքին կարնեցին, վանեցին, նույնիսկ արաբ-ելիրցին։ Ինչո՞ւ ալիտի խուսափեի ես բնաշխարհիկ ներշնչումներից... Ես վաղ հասակից (18 տարեկան) Եվրոպա եմ եկել ուսանելու, և մի օր չեղավ, որ ոգևորվեի Շարլ Բոդլերի պոեզիայով, որ իրոք ինձ համար «չարության ծաղիկներ» էին։ Ինձ համակել են այն բանաստեղծները, որ ազգային, ֆոլկլորի տարրեր են ունեցել — Հ. Հայնե, Գյոթե, Ռոբերտ Բյորնս։

Երբեք էդգար Պո, Երբեք Մալարմե — ատում եմ նրանց։

Գրում եք, որ ապքստամ է իմ բառամթերքս։ Ես գիտակցաբար եմ վարվել այս խնդրում. իմ կարծիքով քնարական (լիրիկական) լեզուն պիտի լինի շա՞տ պարզ, անսեթևեթ, ազնիվ, նախնական (լիրիկան արդեն գրականության սկիզբն է). միայն սրտի անպանուչ լեզուն իմ նախատիպարը եղել է ժողովրդի երգը՝ մեր և ուրիշ ազգերի. և իմ տեսությամբ — ամենակատարյալ լիրիկան ժողովրդի երգն է։ Նրանից հետո եկածը — արհեստ է, արվեստ, տեխնիկ, ձեռնածություն։ Ամենահաջող դեպքում — ոիտորիկա, ճարտասանություն։

Խոստովանում եմ, որ լեզվիս մեջ, անտեղի կերպով, շատ թրքական բառեր կան, որ դյուրավ կարելի էր փոխարինել հայ-ռամկական բառերով, բայց պատանի տարիքումս եմ գրած նրանց մեծ մասը։ Այլ բան էր, եթե ուշ գրած լինեի, կբյուրեղացնեի. թերևս, եթե մի օր նորից բոլորը հրատարակեմ՝ մաքրեմ այդ բարբարոսությունը։

Զգաստ և պարկեշտ մարդիկ ամենալավ քննադատներն են իրենց արժեքի։ Ես մեծամիտ մարդ չեմ, և իմ ներքին անկեղծության մեջ ինձ պզտիկ տեղ եմ տալիս. գիտեմ, որ շա՞տ և շա՞տ թերիներ ունեմ, գիտեմ, որ մեր գրականության մեջ ինձնից շա՞տ բարձրերը կան, որ կատարելությունից անչափելի հեռու եմ, բայց առանց հավակնության համամիտ եմ Ձեր այն գնահատանքին, որով պատվել եք ինձ և մխիթարել — «Հայ բանաստեղծության ամբողջ երկու հատվածներուն մեջ չիկա ուրիշ մը»... (էջ 144)։ Եվ՝ «Խաչակյանի երգերն ու վերքերը կըլլան նաև մեր ալ երգերն ու վերքերը...» (էջ 147)։

Այսքանը բավ է, որ ինձ հոլով համարեմ հայ նվիրական ժողովրդի տված արդար հացը։

Գալով «Աբու Լալա Մահարի»-ին, սիրելի Հ. Ավագյան, իմ հոգու զավակն է նա, իսորթ չէ ինձ այդ դժբախտ հոսանությունը։

Արար նշանավոր բանաստեղծի գրությունների մի փոքր գիրք, գերմաներեն, ձեռքս անցավ. կարդացի և գտա իմ հոգիս նրա հոգու նման... և նրա ապրած միջավայրը համաձայն գտնելով իմ ռոմանտիկ խառնվածքին,— քարվան, անապատ, արևելք, խորհրդավորություն,— ընտրեցի նրան իմ հուլգերս մարմնացնող։ Արաբ բանաստեղծից միայն երկու տող եմ առել, և ուրիշ ո՞չ մի բառ, ո՞չ մի պատկեր, որ չլինի վերարտադրություն։ Նույնիսկ նրա կյանքի հանգամանքները փոխել եմ. ազքատ է եղել նա, կույր, Բաղդատից դուրս չի եկել. միայն էությունն եմ առել, իմ էությունը միևնույն ժամանակ։

Հաշողած եմ, թե ոչ՝, չգիտեմ. ճշմարտությունն այն է, որ ես դժբախտաբար, շա՞տ տառապած մարդ եմ, երկար ժամանակ հիվանդ եմ եղել, և հիմա ջղերով քայքայված, բանտեր նստած, աքսորված, վտարանդի, միշտ անապահով վիճակ, ունեցել եմ շա՞տ թանկագին մարդկային կորուստներ, և վերջապես հայության աղետը, որ մոռցնել է տալիս անհատական վիշտ ու ցավ։ Եվ «Մահարին» նրանց արդյունքն է։

Պետք չէ, որ կոտորածները երգեմ, ցույց տալու համար իմ վիշտը. (Սիամանթոյից հետո դժվար է երգել), սակայն «Աբու Լալայիս» ռուս և գերման թարգմանությունների մասին գրախոսները ասացին, որ միայն հայ մարդը կարող է այսքան սև հոռետես լինել։ Անբացատրելի, զարհուրելի ջարդերը միայն կարող են այսպես մթագնել մի հոգի, հայ մարդու հոգին...

Այսքա՞ն, սիրելի բարեկամ։

Հիմա մտադիր եմ գարնանը Հայաստան գնալ. թերևս ներշնչվեմ նոր, պայծառ իրականությամբ, և եթե վիճակված է ինձ ապրել այս աշխարհում, ի կատար կածեմ մի-երկու բան, որ տարիներից ի վեր ամբարվել է մտքիս մեջ, որոնք գրել եմ, սակայն դեռ չեմ մշակել։

Նորից շնորհակալություն հայտնելով Ձեր սրտագին վերաբերմունքի համար իմ հանդեպ,

մնամ միշտ Ձեր անձնվեր՝

Ավետիք Իսահակյան

ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1926 հոկտեմբերի 12, Երևան

Սիրելի Սոֆիկ և Վիգեն ջան.

Վերջապես Երևանում եմ։ Ես ինձ շատ բախտավոր պիտի զգայի, եթե չիմանայի այն ծանր հարվածները, որ հասել են մեր ընտանիքին։ Թիֆլիզում իմացա, որ Ալեքսան եղբայրս մեռել է ապրիլ ամսում։ Մեռել է և՛ տերտերանց Գևորգը, Վիգոն (Աքայի աղջիկը) և շա՜տ շատերը մեր բարեկամներից և իմ ընկերներից...

Հանգիստ հասա Բաթում. լավ ընդունեցին։ Մի երկու օր մնալուց հետո գնացի Թիֆլիզ. ընդունելությունը սրտագին էր և անկեղծ։ Ճաշեր, ընդունելություններ։ Սկզբում հյուրանոց իջա, բայց Հովհ. Թումանյանի ընտանիքը չթողեց դուրսը մնալի. տարան իրենց տունը։ Լավ են նրանք։ Աշխենը, Նվարդը, Սեդան և Թամարան Երևանումն են ապրում։ Տանն էր Մուշեղը, Համլիկը, որ ամուսնացել է, Անուշը և Արփիկը։ Օյլան շատ չի ժլրացել։ Նրանց մոտ իմ տանս էի զգում։ Քնում էի Օհաննեսի սենյակում։

Շատ բարեկամներ տեսա. ուրախացա և տխրեցի. այդ է կյանքը։

Երևան եկա Դիլիջանով և Սևանով, Սիմոնիկ Փիրումյանի հետ, օտոմոբիլով։ Հրաշալի ճանապարհ էր, պայծառ, տաք, գեղեցիկ։ Տեսա խորհրդային Հայաստանի շինությունները, պանրագործարանը. հրաշալի էր։ Երևանը շա՜տ է փոխված, նոուզեռ, կենդանի, բազմամարդ։ Անվերջ քանդում են ու շինում. մեծ աշխատանք են թափում։ Զարմանալի ժողովուրդ է հայը. ապրելու ընդունակ. լալիս է, բայց նորից շինում ու ստեղծում, քարից հաց հանում։

Ավելորդ է խոսել իմ մասին։ Ամեն տեղ գրկաբաց ընդունելություն։ Բայց սիրտս կոտրված է։

Լենինական դեռ չեմ մտել. ո՞ւմ գնամ տեսնիմ. բայց, իհարկե, պիտի գնամ։ Սակայն դեռ Երևանում շատ պիտի մնամ. վաղը գնում եմ շրջանները, օտոմոբիլով. հետո էջմիածին։ Երգեհակները շատ լավ են։ տաք, պայծառ։ Հրաշալի ջուր ունի Երևանը, և՛ մրգեր, պտուղներ։

Ապրում եմ հոտելում. սենյակ պիտի ստանամ մոտ ապագայում։

Շատ շատերը բարևում են քեզ։ Բժ. Ասլանյանը, Վիկտորյան (հիվանդ է խեղճը, ոտքերը ուռել են) բժշկվում է։

Բոլորը գանում են, որ ես լավ եմ մնացել, ինչպես և դու։ Վիգենով հիանում են։

Սովի վրայից քեզ նամակ գրեցի. Բաթումից հեռագրեցի։ Նամակ չէի գրում, որովհետև ժամանակ չունեի, և սիրտ միևնույն անդամ։ Ստացա քո գրած նամակը։

Մեր ծանոթները, բարեկամները, ընկերները բոլորն էլ խեղճ վիճակի մեջ են. գրեթե ամբողջ ժողովուրդը խեղճ է. աղքատ, քանդված, ավերված, թալանված երկիր է եղել. դարհուրանքներ տեսել, անհուն, անսահման։ Հիմա նոր-նոր է ոտքի կանգնում. ապնում ես այս բոլորը և սիրտդ կտոր-կտոր է լինում. ուզում ես հոգիդ տալ նրանց, այնքան խղճում ես։ Խե՜ղճ, անբա՜խտ հայ ժողովուրդ, գնացել է մահի դուռը ամբողջովին, և կիսով՝ մերկ ու քաղցած, զարհուրած ետ է դարձել։ Եթե Նուսաստանը չհասներ 1920 թվին, ջնջված էր հայությունը։ Հիմա կուշտ են, սով չկա։ Բայց բնակարանի մեծ կրիզիս կա. թափված են իրար վրա, բառիս բուն նշանակությամբ։ Անվերջ շինում են տներ, բայց ծով կստիպին հասնել կարելի չէ. Եվրոպայի հայությունը պիտի օգնե, շա՜տ օգնե, եթե սիրում է նա հային ու հայ լեզուն։ Ամբողջ դպրոցը լցված է աշխատանքի։ Կառավարության դլուխ կանգնածները բնիկ, իսկոր երիտասարդներ են (մոտ 40 տարեկան մարդիկ), աշխատող, եռուն, եռանդով, դարդացած։ Գործի, աշխատանքի երկիր է Հայաստանը։ Գլուխները կախ աշխատում են, համբերանքով և հույսով։ Անշուշտ, մի 10 տարի հետո, Հայաստանը, եթե ունենա խաղաղություն և աջակցություն դրսից, շա՜տ զեղեցիկ, լավ երկիր է լինելու։ Հիմքերը լավ են դրված։ Նրանի՜ երիտասարդ լինեի և ընկնեի գործի, սև, չարքաշ գործի ծովում։ Ո՜ղ Վիդենս իմ տնդը կատարե իմ ուզածն ու չկարողացածը։

Բաթում—Թիֆլիզ գրեթե շինարարական գործ չտեսա. նրանք ավելն չեն են ու հարուստ. խեղճը, աղքատը մենք ենք։

Էլ ի՞նչ գրեմ։ Դերենիկին տեսա, գժբախտ է։ Սնաբը ամուսնացել է դեբասան Աբելյանի աղջկա հետ։ Հիմա մի աղջիկ ունի։ Սիմոն Հակոբյանին՝ դեռ չեմ տեսել, մի տղա ունի։

Սիսակը լավ է, զվարթ ու ազնիվ գործող։ Շիրվանզադեին, Քաջազնունուն դեռ չեմ տեսել։

Ով որ ճանաչում է քեզ, բարևում է։

Թիֆլիզում տեսա Անահիտին՝ Զլիբոդցյան. իր մարդուց բաժանված չէ. լավ տղաներ ունի։ Տեսա և՛ Սոֆիկ Աբովյանին. լավ դավակներ ունի։ Խեղճ են, բայց ամեն մարդ աշխատում է. պարապ լինել — քաղցած լինել նշանակե։

Գրիր Վիգենի մասին. ի՞նչ եղան քննությունները, հաջող ավե՞ց։ Ասա, որ լավ աշխատե, որ ապագայում հաց ունենա։ Իր հասակի տղաները հա՜մ աշխատում են, հա՜մ սովորում։ Օրինակ, Վիկտորյայի տղան և ուրիշները։

Ռուբենն ախպերը շատ հիվանդ է եղել. հիմա լավ է։ Տերտերը պարալիչ է ընկել. խե՜ղճ մարդ։ Մնացածները լավ են։

Շատ շերմ և կարոտով բարևներ վանքին ու դպրոցին, հայր տեսչին, Անտոն վարդապետին, Սահակին, Սրապիոնին, Պայանին, Գաբրիելյանին, Աշեմին, Խոշային։ Վանքը։ Հայր աթոռակալին, հայրեր Գաբրիելին, Հովսեփին, Ավետիքին, Արսենին, Վարպանին, Օհանին, Քեչովբեին, Վրթանեսին, Վահանին, Եղիային, և այլն, և այլն։ Սիրով եմ հիշում նրանց, և կարոտով եմ պատկերացնում վանքը։

Բարևեր Բաբայաններին, քեռուն, Հ. Արսենին, մորը, քրոջն ու Ջոնին, Մարիին, Ասաղիկին ու ծնողներին (Շիրինյան) Սովիկյաններին և բոլորին։

Սրբ Հանգստանամ, նամակ կգրեմ վանքը, և ում որ խոստացել եմ։

Գարնին Լևոնյանը, Միշա Մանվելյանը, Մամիկոն Գևորգյանը, ամենը լավ են ու բարևում են։

Մտադիր եմ ձմեռը Մոսկվա գնամ. ձերոնց դեռ նամակ չեմ գրել, կգրեմ։ Ժամանակ չունեմ, անվերջ տեսակցություններ, խոսք ու ճար եվ երբեք մենակ չեմ գտնվում։

Նվարդ Լալայանը ամուսնացել է Զարիկի հետ (Սահակ Մատինյանի քրոջ աղջկա)։ Թիֆլիզ չկարողացա շատ մարդ տեսնել, քո և իմ բարեկամներից։ Ժամանակ չկար։

Համբույրներով քեզ և Վիգենին,
քո՝ Ավետիք

Via Berlin—Moscau, URSS.

Эривань, Армения
Ашот Иоаннисян

Աշոտ Հովհաննիսյան,
Բաֆֆի փողոց, հանձնել ինձ։

ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1927 սեպտեմբերի 3, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Վերջապես ստացա ձեր նամակները։ Երկար ժամանակ է, նամակ չունեի և շատ էի տանջվում։ Դրա համար էլ հեռագիր տվի։ Քո պատասխանը հեռագրով մինչև օրս տակավին չստացա, բայց սիրելի Գեղամը հեռագրեց, և վերջ ի վերջո հանգստացա։

*Ես թեև Երևան էի, բայց շարունակ, կարճ միջոցներով թափառում էի երկիրը և ժողովուրդը տեսնելու համար։ Հիմա այլևս Երևանում եմ և ու

Իսկ քո Փարիզ կամ Վենետիկ մնալու կամ գնալու մասին, ես ի՞նչ կարող եմ ասել. դու գիտես, որտեղ որ քեզ լավ ես զգում, և մանավանդ որտեղ որ կարող ես մի քիչ փող շահել, այնտեղ էլ մնա։ Իմ կարծիքով Փարիզն ավելի լավ է։

Ինչ վերաբերում է իմ Եվրոպա վերադարձին, դրա մասին մտածում եմ. նախ, որ ձեզ տեսնեմ և վերջնականապես որոշեմ, կարգի դնեմ ամեն բան։ Հետո ձեռագրերս և գրքերս հավաքեմ ու բերեմ Հայաստան։ Բայց դալս իսկույն չի հաջողվի. նախ, որ վիզաների հարց կա. այստեղից արգելք չկա, միայն կուշանա, բայց Ֆրանսիան էլ պիտի վիզա տա. այդ մասին դու պիտի աշխատես՝ վիզա առնել, իսկ եթե Իտալիա ես գնում, իտալական վիզա պիտի ձեռք բերես։

Ես կարող եմ գալ Եվրոպա կարճ ժամանակի համար. ես չեմ ուզում Եվրոպայում ապրել, որովհետև թե՛ հոգնած եմ եվրոպական գաղթականի կյանքից և թե՛ ի՞նչ միտք հայրենիքից միշտ հեռու լինել։ Ես հայրենիքում շա՞տ հարգված եմ ամեն կողմից. երկրի իշխանավորները ինձ սիրում են ու հարգում. ես չեմ կարող այդ կապերը խզել։ Բացի այդ, օրեցօր սիրտս կապվում է երկրի և խորհրդային կարգերի հետ, և տեսնում եմ, որ այստեղ, Հայաստանում միայն կարող եմ ինձ բախտավոր զգալ և նպատակահարմար։ Ինչքան էլ որ խորհրդային իշխանությունը բացասական կողմեր ունենա, բայց և այնպես նրա դրական կողմերը գերակշիռ են, և մեր երկրի ապագան այս կարգերի մեջ՝ և՛ ապահովված, և՛ լավ։ Երկրի այս ավերված, թալանված և բնությունից աղքատ ու չոր երկրում, ամեն անկյունում տեսնում ես նոր իշխանության ստեղծագործ շունչը. անհոմանդ է մտածվում երկիրը բարձրացնելու անտեսապես. ջրային աշխատանքները չտեսնված գործեր են նույնիսկ ամբողջ Միության մեջ. քանի կանալներ են շինել և շինում են. հիդրոկայաններ, որոնց վրա 10—13 միլիոն փող է ծախսվում։ Եվ ուրիշ բազմաթիվ շենքեր՝ հիվանդանոց, դպրոց, համալսարանի շենքեր, թատրոն, կայարաններ, ճանապարհներ, գործարաններ և ուրիշ շատ բաներ։ Եվ այս ամենը տեսնելով, հրճվում է հոգիդ և համոզվում ես, որ ներկա իրավակարգը ամենանպաստավորն է մեզ համար, և ուրիշ մի պետականություն չի կարող և միտք էլ չունի փոխարինելու սրան։

Հայերիս գլխին թափված զարհուրանքներից հետո ներկա դրությունը մի օրհնություն է, որին պիտի քացի չտալ և պիտի պաշտպանել։

Ես այսպես եմ զգում ու մտածում, և այսպես լինելով՝ ես չեմ կարող երկար ժամանակ հեռու լինել Հայաստանից։ Եվ ուր էլ որ լինեմ, պիտի պաշտպանեմ այն, լավին լավ ասելով, վատին՝ վատ, ձգտելով իմ ներկայությամբ և իմ խոսքով վատը չեղոքացնել, ուղղել սխալները։

Ես խնդրում եմ շատ բաների ականջ մի՛ կախիր. ո՛չ հավատ ընծայե չափազանց դավեսանչերին և ո՛չ էլ հավատա չարամիտ քննադատներին. ճշմարտությունը այն է, որ երկրի բախտը ուղիղ ճանապարհի վրա է, և ապագան մթիթարիչ։ 5—10 տարվա մեջ չէր կարող մի երեսի վրա լքած երկիր Շվեյցարիա դառնալ։ բայց այդ կարճ միջոցում, դու հիմա կարող ես երկրի մի ծայրից մյուս ծայրը գնալ, լեռները բարձրանալ, լինել թուրքերի և քրդերի մեջ — և ամեն տեղ ապահով, անվտանգ։ Սա մի երազ է, որ առաջ միայն դիշերները քնի մեջ կարող էիր ունենալ։ Դու կարո՞ղ էիր երևակայել, որ Սեանի վրա ամեն օր նավագնացություն, շոգենավակներ են բոլոր ափերը։ Հիմա փաստ է։

Նամակս վերջացնեմ։

Ջերմ բարևիր Նիկոլային, Գարոյին, Զուբարին և կնոջը, ընկեր Գանուշին, Գեղամին և կնոջը, հայտնելով բոլորին և վերջիններիս սրտագին շնորհակալություններս։ Մակինցյանը, կարծեմ, դեռ Կ. Պոլիս չի գնացել. Աբասթումանի պիտի լինի։ Հեղուշի կապոցի մասին լուր չունիմ։

Երկու գիրք եմ տպում. մեկը շուտով պատրաստ կլինի, մյուսը կտպվի աշնանը։ Նրանցից շատ փող ստանալիք չունիմ, որովհետև արտատպումներ են. ստանալու եմ 1200 ռուբլի։ «Աբու-Լալա Մահարին» ստացել եմ։

Համբույրներ և կարոտալի բարևներ քեզ և Վիրենին։

Ավետիք

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԵՎ ԱՐԱՍ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1934 ապրիլի 25, Փարիզ

Սիրելի Արմիկ և Արաս ջան.

Նամակդ, որ ստացա մի-երկու օր առաջ, շա՛տ և շա՛տ ուրախացրեց ինձ, միևնույն ժամանակ տխրեցրեց և հուզեց։ Ուրախացա, որ վերջապես քեզնից բարի լուր առա։ տխրեցի, որ դեռ տառապում ես։ Չորս տարի է անցել, ինչ որ թողել եմ Միության սահմանները. քո մասին սկիզբները հարցրել եմ, պատասխան չեմ առել և ընկել եմ շա՛տ տխուր ենթադրությունների մեջ՝ ի նկատի ունենալով քո վիճակը, առողջական դրությունդ, և հետո վախենում էի քո մասին հարցնել. վերջերս Կոլյային գրեցի, որ մի լուր առնեմ քեզնից, դեռ չունեմ։

Լուր չունեմ մայրիկից և Օլիկի մասին. ո՞վ գիտե, արդյոք ի՞նչ եղան...

Շատ ուրախ եմ, որ Արմիկի հետ ես և միասին կմխիթարվեք. չափազանց հուզվեցա, որ տղա ունես և անմահ Իսահակի անունով. գրում

ես, որ առողջ երեխա է. լա՛վ պահիր։ Միշտ հոգ տար և՛ քո առողջության վրա. լգիտեմ Մինուսինսկ քաղաքը ի՞նչ մեծության է. ունի՞ լավ բժիշկներ, որ միշտ նրանց դիմես, նրանց հսկողության տակ լինես։

Արդյոք շա՞տ պիտի մնաս դեռ Սիբիրում. մի՞թե չես կարող դիմում անել, դառնալ Երևան։ Դու, երեխի, գիտես, որ ես Հայաստանի կենտգործկոմի անդամ եմ, член ЦИК'а Армении. որպես այդպիսին չե՞մ կարող միջնորդել, արդյունք կունենա՞. ի՞նչ ես կարծում։

Եթե չեղավ, երեխի, մի տարուց հետո ես Հայաստան կլինեմ. թերևս մի բան արվի։

Դուք ի՞նչ եք անում, ինչո՞վ եք ապրում, ո՞ւր եք աշխատում. ինչպես է բոլորիդ առողջությունը։

Գալով մեր մասին,— ես Հայաստանի օգնության (ՀՕԿ) կոմիտեի փոխնախագահն եմ, աշխատում եմ այդ գծով, նույնպես Ներգաղթի մարմնի փոխնախագահն եմ, որ դրամ է հավաքում գաղթականներ փոխադրելու Հայաստան։ Գիտակցաբար և սիրով աշխատում եմ Խորհրդային Հայաստանի բարձրացման համար։

«Ուստա Կարո» վեպս տպված չէ, և տպվելիք էլ չունի. շատ մեծ գումար է պետք, և որովհետև չի տպվում, ուստի չի էլ վերջացել. միշտ մշակում եմ, և քառս է դարձել. շա՞տ ուշացավ, հնացավ, փոխվեցին ժամանակները ու տրամադրությունները. դարձավ պատմական վեպի պես մի բան, բայց եթե մի-երկու տարի կյանք ունենամ, իր վերջնական ձևը կգտնի։

Այդ վեպի դլխին շա՞տ փորձանքներ եկան, տարիներով կտրված էի նրանից և հեռացած էր ինձնից։

Վիգենը թողեց համալսարանը, չուզեցավ վերջացնել, տարված է սինեմայի (կինո) արվեստով և մինչև վերջերս աշխատում էր Փարիզի ստուդիոների մեջ. իհարկե, ոչ դերասան, այլ ստեղծող, տեխնիկ, պատրաստվում է ֆիլմեր հանել. շնորհք ունի. գրում է թերթերում սինեմայի մասին, ծանոթ է հայտնի ռեժիսյորների հետ, ինչպես Էյզենշտեյնի հետ։ Հիմա ընդհանուր կրիզի պատճառով գործ չունի. առաջարկում են Սպանիա գնալ, դեռ չի որոշված. գուցե գնա Մոսկվա, Совкино-ում աշխատելու։

Համալսարանում գրականություն և փիլիսոփայություն էր լսում, բայց բոլոր ուշքը սինեմայի վրա էր. թո՛ղ գնա իր սիրած ճանապարհով. սինեման մեծ արվեստ է, մասսայական է, և մեծ ապագա ունի։

Ուղարկում եմ քեզ 300 ֆրանկ, որից 100 ֆրանկը Վիգենը տվեց սիրելի Իսահակի համար, որ հագուստ առնեք։ Ձեռքս որ փող անցնի, քեզ նորից կհասցնեմ. միամիտ եղիր. մանավանդ, երբ Վիգենը գործի անցնի։

Խորհուրդ տվեց Փարիզի քանկը, որ Торгсин-ի գործով է զբաղվում, այլ կերպ վարվել. ուրեմն չեքով Торгсин-ից ամեն բան կառնես։

Իսկույն կգրես ստանալուդ մասին։

Կարծեմ 300 ֆր. կբռնե մոտ 23 ռուբլի։

Եթե այս ձևը հարմար չէ, գրիր ուրիշ կերպ ուղարկեմ։

Շա՞տ բարևներ և համբույրներ Սոֆիի և Վիգենի կողմից,

Համբուրում եմ երկուսիդ և Իսահակին հատկապես։

Քո՝ Ավետիք Իսահակյան

Մոռացա ասել, որ Վենետիկ ուղարկած քո նամակներդ երբեք չեմ ստացել։

A. Issahakian,
17, rue Denfert Rochereau.
Paris 5.

ՎԱՀԱՆ ՉԱՔԱՐՅԱՆԻՆ

1934 նոյեմբի 6, Ռուասի

Սիրելի Վահան.

Շնորհակալությամբ ստացա նամակդ և կոնսուլից էլ թուղթը։ Բայց կարծում եմ, որ տղայիս անունը պիտի լիներ. թերևս մարտ-ապրիլ ամիսներում, 1914 թ.։ Ինչ որ է. տեղիս կոնսուլատը խորհուրդ տվեց նորից դիմել Բեռլին և խնդրել, որ պատճենը պարսկերեն տան և կնիքով, տղաս գրել է։ Շատ հույս ունենք ստանալու։ Վռամ խանը ժընև էր, որ գա՝ մի բան կանե. գեսպանի քարտուղարը խոստացավ, տղայիս հետ ծանոթացավ և բարեկամացան. երիտասարդ տղա է, և իհարկե, համոզված է, որ պարսկահայ է։

Հարց էիք տվել գաղութների հայության հարատևության մասին։ Շա՞տ բարդ հարց է, կախված է զանազան պայմաններից, ըստ երկրի, մշակույթի (կուլտուրայի) քանակի և որակի։ Մոտավորապես 600 000 հայեր կան՝ սփռված աշխարհի չորս կողմերը։ Նրանք, որոնք գտնվում են, օրինակ, Ֆրանսիայում, մոտ 60 000 ուշ կամ կանուխ ձուլման են դատապարտված։ Նոր սերունդը հայերեն չի ուզում սովորել, նույնիսկ ամաչում է դուրսը հայ երևալ։ Վերջապես, հացի խնդիրը կա, որ հարկադրում է իշխող լեզվի լավ գիտենալու անհրաժեշտությունը։ Հետո ֆրանսիական մեծ կուլտուրա կա, մեծ գրականություն և ֆրանսուհիներ։ Սրանք ամենքը ձուլող մեծ մեքենաներ են։ Մենք կարող ենք այս դաժան երևույթի դեմ

պայքարել, գոնե մահը հետաձգելու համար՝ հետևյալ միջոցներով՝ հայ գրականություն տարածելով, հայ լեզվի դասընթացներով—պատմության, անցյալի և ներկայի մասին, և մանավանդ՝ ոգևորելով Հայաստանի փաստով։ Այս փաստը՝ ինչքան նկատել եմ, խանդավառող հատկություն ունի։ Քանի ուժեղ է Հայաստանը, գաղութահայությունը այնքան կհուսալցվի, կապրի այդ ներշնչող իրականությամբ։ Եվ վերջապես ներգաղթը կա։ Թեև հիմա ներգաղթը տկար է, ցանկալի չափերով չէ, բայց Հայաստանի վերելքի հետ զուգընթաց սա էլ թափ կառնի։

Նույն վիճակն է ամերիկահայերի վերաբերմամբ։

Ուր որ հոծ բազմություն կա, իրար գլխի հավաքված, ավելի երկար կյանք կունենան։ Օրինակ, Կալիֆորնիա, Բուենոս-Այրես և այլուր, բայց Նյու-Յորք, Չիկագո՝ հոգեվարք է։

Իսկ այն երկրները, ուր տիրող կուլտուրան թույլ է, հետամնաց երկրներում, և հայ գաղութները համեմատաբար հոծ և հին տվյալներով, շա՜տ երկար կապրեն։ Այստեղերը ձուլումը շատ դանդաղ է ընթանում, օրինակ, Ռումանիա, Բուլգարիա, Հունաստան, Եգիպտոս և մանավանդ Սիրիա, ուր կա մոտ 140 000 հայություն։ Վերջին վայրում ձուլման, այլասերման նշաններ առայժմ չկան։ Կան հայկական բեկորներ, 70—80 000 հոգի՝ Թուրքիայում, այնտեղ ձուլում, թուրքացում չկա, բայց տնտեսական հյուծում։ Ես լավատես չեմ նրանց նկատմամբ։

Հետո, քո Պարսկաստանը, որ դու լավ գիտես, պարսկացում չկա, բայց <կա> տնտեսական քայքայում։ Ռիզա խանի ձուլման քաղաքականությունը հայերի դեմ չի ուղղված, այլ թուրքերի՝ Ատրպատականի։ Եվ պարսկահայերը, իրեն հին գաղութ, ունին տրադիցիաներ, ավանդություններ, սովորույթներ՝ տակավին ամուր և ազգապահ։ Իսկ Ատրպատականի և Թավրիզի հայերը մոտիկ լինելով Հայաստանին, կտաքանան և կներշնչվեն վերջինով։

Այս է իմ համեստ կարծիքը։

Սիրելի Վահան, դր. Ջեմսի մոտ ունեմ մի կապոց նամակներ, հետաքրքրական, պատմական բաներ, կարծեմ կան, և մի շարք գրքեր։ Խնդրեցի, որ քեզ մոտ թողնե, ինքը գնում է Պարսկաստան։ Խնդրում եմ մի տեղ դիր մնա, ես կգրեմ Երևան, որ տեղափոխեն։ Առհասարակ, ձեռքդ որ գիրք կընկնի, հայերեն, գերմաներեն։ եթե քեզ պետք չեն, պահիր Հայաստանի համար. շարունակ ես հավաքում եմ նվերներ և ուղարկում ենք պետական ազգային գրադարանին։ Օտար լեզուներով գրքերի և հին հայերեն գրքերի (որոնք այլևս չեն վերատպվում) մեծ կարիք կա։ Ես իմ գրադարանները բոլորը տվել եմ պետ. գրադարանին։ Այսօր մեր պետական գրադարանը (Bibliothèque nationale) ավելի քան 800 000 հատոր գիրք

ունի. հայերեն, ռուսերեն, կան ֆրանսերեն, բայց գերմաներեն՝ քիչ։

Համենայն դեպս հավաքիր, իրեն նվերներ, և գրիր ինձ, կկարդացնենք։

Ես դեռ այս տարի այստեղ եմ։

Ի միջի այլոց, ամսից ավել է այս գյուղումն եմ. եկել եմ հանգստանալու և պարապելու, Փարիզից 1/2 ժամ հեռու է, իջնում ենք պետք եղած դեպքում, մի ամիս ես կմնամ։ Հետո Փարիզ։ Հասցես Փարիզինն է։

Գրի՜ր երբեմնապես։

Շատ բարևներ Հայկին։

Ներփակ նամակս,— բարի եղիր հանձնել դր. Ջեմսին։

Հարգանքի բարևներ տիկնոջդ։

քո՝ Ավետիք Իսահակյան

Համբույրներով,

ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ

1934 հունիսի 6, Ռաստի

Սիրելի Կարեն,

Նամակդ վաղուց է ստացել եմ, ներողություն՝ որ ուշ եմ պատասխանում։ Պատմվածքդ կտպվի մոտակա թվերի մեջ։ Մինչև հիմա «ՀՕԿՍ»-ի Բ. տարվա 4-րդ թիվը լույս է տեսել, զարմանում եմ, որ քեզ չի ուղարկված։ Կստանաս։

Ես ամսից ավելի է գյուղումն եմ ապրում, շա՜տ շղային էի դարձել և սիրտս անհանգիստ էր, բժիշկս գյուղ ուղարկեց, հիմա լավ եմ, և կմնամ դեռ էլի մի ամիս կամ ավելի։ Փարիզը շա՜տ ապառողջ քաղաք է։

Վերադարձս զանազան պատճառներով հետաձգվում է։ Մնաց մյուս տարվան։ «Поэзия Армении» բ. հրատարակությունը լավ միտք է, անշուշտ լավ կանես Սայաթ-Նովայից շա՜տ դնել, ինչպես և Վ. Տերյանից, Գ. Դեմիրճյանից, թուրքահայ բանաստեղծներից և նորերից (Գ. Մահարի), Չարենցի «Ես իմ անուշ Հայաստան[ի]...» անպատճառ դրեք, և նրա հին լիրիկայից մի քանի ընտիրները [...]։ Ես իմ մասին ոչ մի առաջարկ չունիմ, բայցի այս խնդրից, շատ կուզենայի նորերիցս զետեղել այս ոտանավորս՝

«Արարատի ծեր կատարին
Դար է եկել վայրկյանի պես
և անցել»...

Գիրքս ունիս։ Խորագիրն է «Ռավեննայում»։

Հին հրատարակության մեջ (Π. Ap.) իմ երկու ոտանավորները իրար են խառնած, կարծեմ «Որսկան ախպերը» մի ուրիշի հետ։ Ուղղել։ Թերևս նորի մեջ այդ կտորները չեն մտնելու։ Թերևս շա՞տ բան դուրս են նետելու։ Բնավ պետք չէ։

Չոպանյանը միջնադարյան երգեր, լավ, նոր բաներ չունի։ Սակայն մեծ քանակությամբ Քուչակ Նահապետ ունի, որ պիտի լույս ընծայե շուտով, դիմում է արել Հայաստանին, Մելքոնյան ֆոնդին։

Գրում ես Չարենցի «Երկիր Նաիրի» գրքի ռուսերեն թարգմանության մեծ հաջողության մասին […]։

Արտասահմանի հայ գրականությունն էլ այքի ընկնող բան չունի։ Ամեն տեղ սնանկություն։

Դու և Ա. Խանջյանը շատ գովեցիք Չարենցի վերջին գիրքը՝ «Ճանապարհի գիրք», ձեռքս չընկավ, երևի, թաղեցին։ Նույնիսկ չի խոսվում նրա մասին։ Իրոք ի՞նչ եղավ։

Ի՞նչ հալի են մեր Երևանի ընկերները — Ցոլակը, Պողոսը, Միշան, Դերենիկը, գրիր, եթե տեղեկություններ ունիս։ Ո՞ւր մնաց Դավիթը։

Ի՞նչ են անում երեխաները, լա՞վ են։ լա՞վ սովորում են, ինչպե՞ս է տիկինդ։ Դու թարգմանելով, գրելով կարո՞ղ ես ապրել, ասում են կյանքը շա՞տ սուղ է Մոսկվայում, և հեշտ է ապրելը Торгсин-ի բոներ (վայլուստա) ունեցողների համար։ Լսեցի՞ր, որ Ա. Ահարոնյանը այս 4 ամիս է, որ անդամալույծ է ընկել, ո՛չ ապրում է, ո՛չ մեռնում, գրեթե անգիտակ, անզգա, անլեզու։ Սարսափելի է։ Իսկ Վարանդյանը մի երկու ամիս առաջ կաթվածահար եղավ, մեռավ։ Դաշնակցությունը հոգեարքի մեջ է, բարոյապես, նյութապես սնանկ։

Լավ չեմ պատկերացնում թե ի՞նչ է կատարվում Երևանում, առաջ գնո՞ւմ է Թամանյանի թատրոնի շենքը, Աղասթափա երկաթուղին։ կառուցվի՞ ֆաբրիկան։ Մրտի անհուն ցավով կարդում եմ Սևանը դատարկելու խոլական, խենթ ծրագիրը, արժե՞ մի քանի տասնյակ հազար հեկտար հողի համար Հայաստանի ջրամբարը ցամաքեցնել, կամ ավելորդ էլեկտրական ուժ ստանալու համար, որ մեզ պետք չէ, պիտի վաճառվի։ Շատ մտայլ եմ և տխուր այս հարցերի առաջ […]։ Մխիթարությունը այն է, որ 50 տարի պիտի քաշե Սևանի հոգեարքը…

Արաքսը հոսում է, ջրերը առատ, բայց չեն կարող թուրքին համոզել, որ թույլ տա ջուր վերցնելու և Սևանն են չորացնում։ Ե՛կ և դիմացիր։

Է՜հ, բավական գրեցի։

Շա՞տ բարևներ մերոնցից։
Ջերմ բարևներ Հարգելի տիկնոջդ.
Համբույրներով

Ի. Ավետիք

Հասցես Փարիզն է։ Շաբաթը մի անգամ գնում եմ Փարիզ, 1/2 ժամ հեռու է։

ՍԱՔՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

1934 օգոստոսի 30, Փարիզ

Սիրելի ընկ. Ս. Սուքիասյան.

Այսօր շնորհակալությամբ ստացա Ձեր նամակը և Վահանի ձեռագիր նամակը, և իսկույն պատասխանում եմ։

«Խառնակություն» բառի անպատշաճության մասին լիովին իրավունք ունեք։ Հենց գրելիս էլ զգացի նրա անհարմարությունը, բայց սահեցի, անցա վրայից։ Ինքներս պիտակներ — «հեղափոխության հուզումնալից իրադարձությունների հետևանքով, ժամանակ…»։

Գալով «վերջին երգիչը հայ քնարի» արտահայտությանս,— դրա մասին շա՞տ եմ մտածել և հասել եմ այդ տխուր եզրակացությանը։ Մեր քնարերգությունը, արևելահայերիս մեջ, ծագում առավ Ս. Շահազիզից և բալորեց 50-ամյա մի շրջան մինչև Վահան Տերյանը։ Այդ շրջանի մեծ և փոքր լիրիկները մշակելով լեզու, եղանակներ, ձևեր, պատկերներ՝ պատրաստեցին Վ. Տերյանի հոգը, և Տերյանը իր հայանությամբ պիտավորեց մեր լիրիկան։ Վահանը ինձ համար կատաք է, բարձունք. նրա երգերը ոչ պակաս հավասար են Գյոթեի, Հայնեի, Լերմոնտովի, Վերլենի լիրիկական երգերին։ Վահանից սերածները էպիգոններ են։ Ե. Չարենցը, անշուշտ, մեծ բանաստեղծ է, բայց ո՛չ կարկառուն լիրիկ։ Նրա քնարական երգերը, մի-երկու բացառությամբ, շա՞տ ազատ բաներ են, Վահանի նման հետևողություններ, ճապաղ, ջրալի։ Նրա «Տաղարանը», շա՞տ գեղեցիկ է, իսկ «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ…» ունիկում՝ մեր գրականության մեջ, աննախընթաց հրաշակերտ։ Միայն այսքան նրա լիրիզմից։

Հզոր է պոեմների մեջ — «Դանթեական առասպելը», «Խմբապետ Նավասարդը» և «Ամբոխները խելագարված», և «Հոգիս ուզում է», և այլն։

Սրանց մեջ կան շա՞տ տարրեր, կիրք ու ֆորով, թափ ու բուռ, շարունգ

ու շառաչ, բայց և շա՜տ մտածում ու քարոզ։ Լավագույն անունով՝ լիրիկական էպիկա, բայց երբեք՝ մաքուր լիրիկա, բյուրեղային լիրիզմ։

Այնպես որ, ես չեմ կարող Չարենցին համարել Տերյանի լիրիկան զարգացնող, կատարելագործող, ինչպես վերջինս զարգացրեց, կատարելագործեց Ս. Շահազիզին, Հ. Հովհաննիսյանին, Լ. Մանվելյանին, Ա. Թումանյանին, Դ. Դեմիրճյանին և ինձ՝ մեր լիրիկան (Հ. Թումանյանը լիրիկ չէ. նա մեծ էպիկ է, հետևապես համեմատության եզր չի հանդիսանում նա)։ Ընդհակառակը, անկում կրեց մեր լիրիկան։

Եվ Չարենցից հետո եկողները — Գ. Մահարի, Գ. Սարյան, Ս. Տարոնցի, և այլն, շնորհալի բանաստեղծներ, բայց չանցան, [չգերազանցրին], բնավ երբեք չկարողացան մոտենալ նրա պատվանդանին։

Վահանը մնում է, կրկնում եմ, կատար, լեռ-բարձունք, և այդ իմաստով է, որ ասում եմ. «վերջին երգիչը հայ քնարի»։ Դժբախտաբար այս օրենք է գրականության մեջ. գալիս է մի հանճար և ծծում է, չորացնում է ջուրը, ինչպես կաղնին, որ մոտը չի հանդուրժում ուրիշ կաղնիի աճելուն, այլ մանր-մունր թփերի։ Հանճարը սպառում է իր դարը, և պիտի անցնի երկար ժամանակ, մինչև որ հող պատրաստվի նորի հայտնությանը, երբեմն դարեր... Գյոթեից և Հայնեից հետո Գերմանիան չունեցավ նրանց հավասարը, ո՜ւր մնաց գերազանցողը. Պուշկինից և Լերմոնտովից հետո անկում է՝ Տյուտչևն էլ մնչն առած — Նեկրասով, Նադսոն, Բալմոնտ, Բրյուսով, նույնիսկ Ֆետ և Եսենին։

Պիտի հարցնեք. ապա Մայակովսկի՞ն։— Մայակովսկին մեծատաղանդ պրոպագանդիստ է. Չարենցը նրա հայկական մասշտաբով՝ երկվորյակը։

Մնաց որ, ամբողջ քաղաքակիրթ աշխարհում այժմ լիրիկան տեղի է տալիս։ Այսօր ո՜չ Գերմանիայում, ո՜չ Ֆրանսիայում, ո՜չ Իսպանիայում, ո՜չ Անգլիայում չկան մեծ լիրիկներ։ Արձակի դար է։ Պրոզա։

Այս տեխնիկական-ինդուստրիալ-մեքենապաշտ-պրագմատիկ դարում, ուր ընկերական մեծ պրոբլեմների լուծման արյունահեղ պայքարն է բռնկված — ո՞ւմ սրտին կխոսի Գյոթեի

Իմ սիրած լիրիկան — սա է։
Über allen Gipfeln ist Ruh.

Երանի՜ իմ հոռետեսությունը չարդարանա, և մեր որդիները բախտ ունենան ողջունելու մի նոր Վ. Տերյան, որ լեռների աղբյուրների պես՝ աստղերի մաքուր լույսով օծուն, կարկաչե իսկական բանաստեղծությունը, երազ տա և մոռացում տառապանքների և մահի հանդեպ և ստեղծե գերզգայական, դերիրական երջանիկ աշխարհ...

Կխնդրեի սիրալիր բարևներս հայտնել ընկ. Աշոտ Հովհաննիսյանին, Վ. Վահանյանին, Ներսեսին (Վահանի եղբորը)։

Կխնդրեի նույնպես, ներփակ նամակ հասցնել Կարեն Միքայելյանին. հասցեն չեմ գտնում, բայց հիշում եմ փողոցը՝ Сверчков переулок, թիվը չեմ հիշում. ընկ. Աշոտը գիտե։

Սիրով և հարգանքով,
բարևներով,
Ձեր՝ Ավետ. Իսահակյան

Exp. A. Issahakian,
17 rue Denfert Rochereau,
Paris, 5

ՍԱՐԻԿ ՍԱՐՅԱՆԻՆ

1940 դեկտեմբերի 9, Երևան

Սիրելի Սարիկ ջան.

Քո սրտագին նամակը հայրիկդ հանձնեց ինձ մի փոքր ուշացումով։ Խորապես շնորհակալ եմ քո այնքան ջերմ, խանդավառ վերաբերմունքի համար իմ պոեզիայի հանդեպ, ուրախ եմ, որ երիտասարդներդ այդպիսի սիրով, հայրենասիրությամբ եք թնավորված, վաղվա օրը ձերն է, և երբ այդ բարձր զգացմունքներով համակված պիտի մտնեք հայկական կյանքի մեջ գործելու, ուրեմն, մեր ժողովրդի ապագան՝ նրա կուլտուրան ապահովված է։ Սիրեցե՛ք հայ լեզուն, հայ կուլտուրան, և հայ ժողովուրդը չի կորչի. ազգերը ֆիզիկապես չեն ոչնչանում, ֆիզիկապես նրանց չեն կարող ոչնչացնել. ազգերը ջնջվում են միայն ինքնասպանությամբ։

Ներողություն եմ խնդրում ուշ պատասխանելուս համար, սակայն այդ ուշ պատասխանելը ինձնից կախված չէր. թերևս լսած լինիս, որ հոկտեմբերի վերջերից մինչև նոյեմբեր անգործության էի դատապարտված աչքերիս հիվանդության պատճառով. վարակվել էի կոնյուկտիվիտ ցավով, կոպերի, ներքին լորձունային թաղանթի բորբոքումով. աչքերս լցված էին լերդ-լերդ արյունով. հիմա լավ եմ, բուժվեցի և սկսել եմ պարապել։ Լսել ես, անշուշտ, որ դեկտեմբերի 23-ին տոնում են Հոբելյանս՝ 65-ամյակս մեծ շուքով են տոնում. բոլորը լծված են աշխատանքի, և սկսել են արդեն իմ մասին զեկուցումներ, դասախոսություններ. իմ ժամանակս էլ լցված է դրանով՝ նյութեր, տեղեկանքներ տալով, և այլն։

Սիրելի Սարիկ, հարցիդ ի՞նչ պատասխանեմ, այդ նոր հայ լեզվին խորթ, տգեղ տերմինների համար. մենք բոլորս էլ զայրացած ենք. դու

խո՞ տղա չես, ի՞նչ կարող ենք անել. գրես էլ ոչ մի արդյունք չի ունենա և երևի, չեն էլ տպագրի. պիտանական որոշումնք է։ Պիտի համբերատար լինենք, և փրկենք, ինչ որ կարող ենք, և շատ բան կարող ենք անել։ Գլուխները քարը, գրանով մի առանձին հարված տված չեն մեր լեզվական կուլտուրային։ Մի՛ հուսահատվեք, այլ ավելի լծվեք ներքին, ստեղծագործ ուժերով, նեկքնապես չպիտի ընկնել, պարտվել։

Համաձայն եմ, որ «Պեպոն» պիտի բերել Մոսկվա, բայց դեռ Մոսկվա գալու խոսք չկար։

Հայրիկդ այս տարի նկարեց ինձ. դա մի գլուխ-գործոց է, հավիտենական արժեք ունեցող գործ, պատմական փառավոր կոթող. նույնիսկ նկարիչները, օրինակ, Հ. Կոջոյանը նույն հիացմունքն է հայտնում։ Դրբ-նկարիչները, օրինակ, Հ. Կոջոյանը նույն հիացմունքն է հայտնում։ Դրբ-վում հոբելյանի օրը և իմաքեն, միշտ, վաճառելու համար։ Իհարկե, պատկերը կգնվի մուզեյի կողմից։

Խնդ Հովիկ Թումանյանը վախճանվեց, ինձ շատ մեծ վիշտ պատճառեց. երբեք չեմ մոռանալու նրան. շատ ազնիվ, խելացի տղա էր, հազար-հազար ափսոս։ Քեզ լավ պահիր, շմրսես, շատ չհոգնես, լավ կեր, լավ քնիր, շատ մի՛ աշխատիր, որ ուժասպառվես. ամենից առաջ առողջ կյանք, հետո մնացած բաները։

Ջերմ բարևներ մայրիկիդ և բոլոր քո ընկերներին,

Սիրով և բարևներով,
քո՝ Ավետիք Իսահակյան

Տ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ
«ՄՈՒՍԱ-ԴԱՂԻ ՔԱՌԱՍՈՒՆ ՕՐԵՐԸ»

1947 օգոստոսի 29, Սևան

Սիրելի ընկ. Տ. Ալեքսանյան.

Ձյոքանը կարող եմ ասել Ֆրանց Վերֆելի և նրա վեպի մասին։

Ֆ. Վերֆելը ծնվել է 1890 թվին, հրեա ընտանիքում։ Վիեննայի բնակիչ է։ Գրում է գերմաներեն։ Գրել է բանաստեղծություններ, վեպեր, դրամաներ. վերջիններից կան ռուսերեն թարգմանություններ։ Եվրոպական գրականության մեջ համբավ ունի վատառաջած։ Առաջավոր գաղափարների կրող է։

Մեզ հետաքրքրող նրա վեպը Կիլիկիայի մի մասի հայերի կյանքից է — նրանց օրհասական կռիվը չարդարար Թուրք կառավարության դեմ, 1915 թ.։

Թուրք չարդարարները պաշարեցին Մուսա լեռն՝ հայերին կոտորելու

իրականացնելու իբրևնց հայաջինջ ծրագիրը, ինչպես իրականացրին Մեծ Հայքում և ամենուրեք։

Այս վեպի լրիվ խորագիրն է. «Հայկական հերոսապատում. Մուսա լեռան քառասուն օրերը, բախտորոշ դյուցազներգություն»։ Բաղկացած է երկու ստվար հատորից, մոտավորապես 900—1000 էջերից։

Ի՞նչն է դրդել անվանի հեղինակին գրել այս հուզիչ վեպը հայ ժողովրդի զոյամաբառի մասին, մի ժողովրդի, որի գոտի հանդեպ ոչ մի համակրանք չունեին ո՛չ գերմանացիք, ո՛չ ավստրիացիք։

Հեղինակը պրեթե բացառություն է գերմանական լեզվով գրողների մեջ, հայկական տրագեդիայով հետաքրքրվելու տեսակետից, և այս հանգամանքով նա մեզ համար շատ սիրելի է և հարազատ։

Հեղինակը այսպես է գրում այդ գրդապատճառի մասին.— «Այս գործը ծրագրվեցավ 1929 թվ. մարտին, հեղինակին Դամասկոս բնակության միջոցին։ Գորգի գործարանի մը մեջ աշխատող խեղանգամ ու սովատանջ մանուկներուն սրտաճմլիկ տեսարանը վճռական մղումը եղավ՝ սովորական գնպքերում կարգին խլելու և պատմականորեն դասավորելու համար հայ ժողովրդին անասելի ճակատագիրը։ Այդ փորրերը փախստականներուն զավակներն էին...»։

Այնուհետև հարգելի հեղինակը ձեռնարկում է հայ ժողովրդի պատմությունը, հայոց հարցը ուսումնասիրելու։ Վիեննայի Մխիթարյանները շատ օգնում են նրան, և այլն, և այլն...

Այս վեպի մասին ես առաջին անգամ լսեցի 1933—34 թվին, Փարիզում։ Պատահաբար կարդացի մի թերթում 1933 թվին գերմաներեն լեզվով լույս տեսած աշքի ընկնող գեղարվեստական գրքերի մասին. հոդվածը ստորագրել էր նշանավոր գրող Ստ. Ցվայգը։ Ստ. Ցվայգը նշում էր 2—3 գրքերի անուններ, որոնք ամեն դրվատանքի արժանի էին. մեկը Ֆր. Վերֆելի վեպն էր. «Հայկական հերոսապատումը»։

Ես ձեռք բերի վեպը, կարդացի և հիացա։ Ստար ականավոր հեղինակի կողմից գրված այս վեպը մեր արդար դատին նվիրված անգնահատելի գանձ է, եղակի, նմանը չունեցող։ Մենք խորին երախտագիտությամբ պետք է մեր սրտերում ունենանք հեղինակի սիրելի անունը։ Վեպը գրված է զգացմունքով, մեծ սիրով ու սրտով։ Եվ դիպի հայերն ու մեր դատը խորին համակրանքով։

Այս վեպը թարգմանված է բազմաթիվ լեզուներով։ Կուլտուրական ժողովուրդ չի մնացել, որի լեզվով փոխադրված չլինի հայ ժողովրդի դատը նվիրագործող այս երկը։ Միայն տմարդի, նյութապաշտ դիպլոմատիան է, որ ամեն միջոցներով ուզում էր արգելակել նրա տարածումը Եվրոպայում և Ամերիկայում և ջնջել նրա ներգործությունը։

1930-ական թվերին Ամերիկայի Մետրո-Գոլդվին կինո ֆիրման ձեռնարկեց այս վեպի նկարահանումը։ Գործը հանձնված էր հայազգի ռեժիսոր Ռ. Մամուլյանին։ Ռեժիսորը պատրաստություններ էր տեսնում, հայեր հավաքում. թերթերը խոսում էին դրա մասին։ Հանկարծ լսեցինք, որ կինո-ֆիրման <դադարեցր>նց ձեռնարկը։

Պարզվեց, որ թուրք կառավարությունը դիմել է Ամերիկայի կառավարությանը, որ վերջինս արգելի նկարահանումը, սպառնալով բոյկոտ հայտարարելու Ամերիկայի կինոնկարներին։ Սակայն Մ. Գոլդվինը չհամաձայնեց։ Ինչուհետև թուրքերը դիմեցին Ֆրանսիային և փոքր Անտանտի պետություններին (Ռումինիա, Բուլգարիա, Հունաստան) նույն իմաստի պետություններին (Ռումինիա, Բուլգարիա, Հունաստան) նույն իմաստով։ Նրանք միջամտեցին և խափանեցին ձեռնարկը։ Փոքր Անտանտը և Ֆրանսիան պատճառաբանել էին, թե հայկական ջարդերը արդեն մոռացված պատմություն է, և անմտություն է եվրոպական խաղաղության տեսակետից նորից բորբոքել ժողովուրդների զգացմունքները, և գրգռել թուրքերի դեմ, և այլն, և այլն։ Թուրքերը խոշոր գումարներ ծախսեցին այս նպատակի համար, կաշառեցին ժուռնալիստների, թերթերի։

Չմոռանամ ասել, որ Հիտլերը արգելեց այս վեպի վաճառումը Գերմանիայում։

Սակայն վեպը իր հաղթանակը տարավ, թարգմանվեց 24 լեզուների։ Երկու անգամ չեխերեն լեզվով։

Մի ամերիկացի ընթերցող գրում է, թե՝ «այս զարմանալի վեպը կարդալիս 4—5 օր ես կտրվել էի աշխարհից և ապրում էի հայերի տառապանքով և նրանց հերոսությամբ»։

Վեպը հայերեն թարգմանվել է 1935 թվին հանգուցյալ գրականագետ Երվանդ Տեր-Անդրեասյանի ձեռքով (արևմտահայ բարբառով) և տպագրվել է Սոֆիայում։ Որքան գիտեմ՝ ռուսերեն լեզվով չկա. ցանկալի է, որ այդ լեզվով էլ լինի։

Շատ և շատ բաղձալի է, և մանավանդ շատ այժմեական և անհրաժեշտ, որ մեր Պետհրատը առանց հապաղելու ձեռնարկե այս չքնաղ վեպի թարգմանությանը արևելահայ բարբառով և լույս ընծայե։

Ավետ. Խաչիկյան

ԽԱՉԵՐԵՍ ՓՈՐՋՇԵՅԱՆԻՆ

1952 մայիսի 26, Երևան

Սիրելի ընկեր Խաչերես.

Հազար ներողություն պիտի խնդրեմ նամակս այսպես ուշ գրելու համար։ Ձեր բոլոր նամակները ստացել եմ. ես շատ զբաղված եմ մանրամունր գործերով, որոնք թե՛ շատ ժամանակ են խլում ինձնից, թե՛ շատ եռանդ, և մանավանդ փչացնում են տրամադրությունս։ Ոչ մի գործ չեմ կարողանում իր ժամանակին վերջացնել, միշտ խանգարվում է, միշտ հետաձգվում։ Եվ տարին լրանում է՝ տեսնում եմ, որ շոշափելի կամ մի մնայուն գործ չեմ տեսել։ Եվ մեջմեջ էլ միշտ հիվանդանում եմ, կամ գրիպ է, կամ աչքի ցավ, և այլն, և այլն։

Ձեր հարցերին պատասխանում եմ. վերջապես որոշվեցավ, որ դեկադան պիտի լինի հունիս ամսի վերջին, ուրեմն մի ամիս հետո։ Ես վճռել եմ՝ չգնալ. հոգնած եմ, թույլ եմ, առողջություն չի ներում՝ այսքան ճանապարհ գնալ ու դառնալ, օրերով Մոսկվայում անհանգիստ, հուզված կյանք վարել։ Իհարկե, ցավում եմ, որ չեմ գնալու։

Որոշել եմ նույնպես ամառը Հայաստանից դուրս չգնալ. զզվել եմ երկաթուղիներից, կայարաններից, ուզում եմ Հայաստանում անցկացնել և շատ տաք օրերը գնալ լեռները, հով տեղերը։ Իսկ մերոնք կգնան՝ թերևս Կիսլովոդսկ կամ ուրիշ տեղ։

Պարզապես ծերացել եմ, հավաս, եռանդ մարել են. հանգստություն եմ ուզում, լավ զրուցընկերներ, և կարդալ, մտածել, կարդալ, խորհել։

Ես վաղուց գիտեի, որ Շամիլի կինը հայ է եղել, և ամենասիրելի կինն է եղել, իհարկե, լավ չէ, բայց շատ ավելի վատ է, որ եղբայրը լրտես է եղել. (այդ փաստը ես չգիտեի). ես չեմ սիրում դավաճան, անհավատարիմ մարդկանց։ Մարդ պետք է հավատարիմ լինի իրեն, իր խոսքին, իր բարեկամին, ընկերին, ազգին, հայրենիքին։ Արաբական առածն ասում է. «Մի՛ դավաճանիր այն մարդուն, որը քեզ հավատում է, եթե դու նույնիսկ պաշտոնով լրտես լինես»։

Ուխտադրուժը ամենամեծ մեղքն էր արիական կրոնի և ժողովուրդների մեջ։

Շամիլի կնոջ եղբորը չեմ սիրում, և պատիվ չեն բերում հայ ժողովրդին ո՛չ քույրը և ո՛չ եղբայրը — Ալիխան։

Այս մեծ պրոբլեմ է, որի մասին նամակով, կիսատ-պռատ չի կարելի խոսել. դրանով չի սպառվում խնդիրը։ Իմ կարծիքով մորալի մեջ, էտիկայի նկատմամբ, ռելատիվիստ չպետք է լինի, այլ բացարձակություն, աբսոլյուտ։ Չպիտի խաբել, ուրեմն՝ չպիտի խաբել. չպիտի սպանել, ուրեմն՝ չպիտի սպանել։ Այստեղ խիստ, ոիդորիստ։ Իհարկե, մենք բոլորս էլ աբսոլյուտ մորալ չունենք, համեմատական է մեր չափը, հարաբերական։ Մարդը անկատարյալ արարած է, ծնված կենդանական շար, վատ բնազդներով, և մարդը չի կարող բացարձակ բարոյական լինել. թերևս բացառիկ հերոսները։ Հետևապես, մարդկային մորալը կիսատ է, անլրիվ. մենք ռելատիվիստներ ենք։

Դուք դեռ ծեր չեք, կարող եք Երևան գալ. եկեք տեսնք, թե Երևանը ի՞նչ է դառել, ի՞նչ գեղեցիկ քաղաք է դառել։ Երևի, պատերազմ չլինի (հույս ունենանք, որ չի լինի), և Հայաստանի շինարարությունը անարգելք կզարգանա։

Ով որ գալիս է Ռուսաստանից և Եվրոպայից, Ամերիկայից, ոչ հայեր, այլ օտար ազգեր, հիանում են Երևանի շինարարությամբ և հարստությամբ։

Սիրելի Խաչերես, ասենք, ես ուշացա պատասխանելու նամակիդ, բայց դուք էլ ուշացիք. ինձ միշտ հաճելի է Ձեր նամակները ստանալ և կարդալ, այնպես որ Դուք մի՛ կապվեք իմ պատասխանի հետ։

Ցմոռանամ ասել, որ «Սովետական գրականություն» ամսագրի 3, 4 համարները վաղուց են լույս տեսել. արդյոք ստանո՞ւմ եք, հասե՞լ է Ձեզ, եթե չեք ստանում, հայտնեցեք, խնդրե՛մ, որ պահանջեմ ուղարկել։

Շնորհակալ եմ Թիֆրովայի, Ժենյա, հասցեի համար, բայց դեռ չեմ գրել, և չգիտեմ ի՞նչ գրեմ, հաճելի կլնի՞ իմ նամակը նրան։ Աստված հետը։

Ջերմ բարևներ Ձեր ախկնոջը. ջերմ բարևներ կնոջս և իմ կողմից Ձեզ։

Ավ. Իսահակյան

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻՆ

1956 նոյեմբերի 12, Երևան

Շատ սիրելի հայրենակիցներ, քույրեր և եղբայրներ.

Հայտնում եմ իմ սրտագին շնորհակալությունը Ձեզ՝ բոլորիդ, որ օտար ափերում հիշում եք ինձ և տոնում եք իմ 80-ամյա հոբելյանը։

Սիրտս լցվում է անհուն բերկրանքով, որ, հայրենիքից հեռու, այսպես գուրգուրում եք հայ խոսքը և պանծացնում մայրենի գրականությունը։ Սա արգեն հայկական Ոգու հաղթանակն է, ամուր գրավականը հայ ժողովրդի հարատևության և ապրելու կամքի։

Սիրեցեք հայ գրականությունը, նա Ձեր հոգևոր հայրենիքն է, որ միշտ և ամենուրեք կլինի Ձեզ հետ։ Հայ լեզուն և տոհմիկ գրականությունը դարերի երկար ընթացքում պահել-պաշտպանել են հայերիս. այժմ էլ մենք պիտի պահպանենք նրանց, որ նրանք էլ այսուհետև, կատարեն իրենց փրկարար դերը։

Հայ լեզուն և հայ լեզվով գրականությունը այն անխորտակելի ոսկի

կամուրջն է, որ կա Սովետ. Մայր Հայաստանի և Սփյուռքի միջև, բոլոր հայության միջև։

Սփյուռքը մեր նվիրական արևմտյան Հայաստանն է, նրա ավանդապահ, աշխատասեր, ստեղծագործ ժողովուրդը, որ դարերով հերոսական և անձնուրաց պայքարել է զարհուրելի և խավարակուռ բռնապետության դեմ, այլասերման դեմ՝ հանուն հայրենիքի, մայրենի լեզվի, կուլտուրայի և ազգային իդեալների։

Սրտիս բոլոր ջերմությամբ մաղթում եմ, որ Սփյուռքի հայությունը միշտ վառ պահե հայրենիքի սերը, հավատարիմ մնա մեր բազմադարյան որբաղան ավանդներին, մեր հոյակապ լեզվին, արիաբար բարձր պահե հայ անունը, աշխատե, և չվհատի, անհողդողդ հավատա իր լույս-ապագային և ավելի սերտ կապվի մայր հայրենիքին, որ մեր բոլորինս է, մեր երազների և իրականացումների նվիրական հայրենիքը։

Սիրելի հայրենակիցներ, մաղթում եմ Ձեզ բոլորիդ առողջ և բախտավոր կյանք, առկունություն և հաղթանակներ։

Խորին շնորհակալություններս հոբելյանական հանձնաժողով <խ>՝ հարգելի հայրենակիցներիս Ե. Ազնակյանին, Զապել Արամին, Արմեն Միրիջանյանին, Արշավիր Շամլյանին. և շատ սիրելի ընկեր Սիտալին։

Ձեր՝ Ավետիք Իսահակյան

ԽՈՍՔ՝ ԻՐ ԾՆՆԴՅԱՆ 80-ԱՄՅԱԿԻ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻՆ

Ամենից առաջ բոլոր սրտով, սրտիս բոլոր ջերմությամբ հայտնում եմ իմ խորին շնորհակալությունը ձեզ, շատ սիրելի հայրենակիցներ, քույրեր և եղբայրներ, գաղափարի և մեծ գործի ընկերներ, որ եկել եք եղբայրական հանդիպումներից ողջունելու իմ 80-ամյակը։ Սրտագին շնորհակալությունս եմ հայտնում իմ հարազատ սովետական պետությանը և կոմունիստական մեծագործ կուսակցությանը, որ ջանք չխնայեցին շքեղորեն տոնելու իմ հոբելյանը։

Սիրելի ընկերներ, խնդրում եմ թույլ տաք ինձ այս օրվա առթիվ մի համառոտ խոսք ասելու։

80 տարին բնության կողմից մեծ դիրքություն է տրված մարդուն։ Պետք է որ այս շնորհը լավագույն կերպով օգտագործվի։ Իհարկե, մարդ չպիտի մոռանա աշխարհից բան տանելու մասին, այլ աշխարհում բան թողնելու մասին։ Մնացածը ունայնություն է։

Դժբախտաբար ես շատ քիչ բան եմ թողնում հայ ժողովրդի համար,

որովհետև ժամանակիս մեծ մասը ես ծախսել եմ երաշանքների և որոնումների, թափառումների և ընթերցանությունների վրա։ Սակայն ինչ որ թողել եմ, այսինքն՝ ինչ որ գրել եմ — ներշնչված հայ ժողովրդի հին և մեծ գրականության տրադիցիաներով, միշտ հավատարիմ մնալով այդ նվիրական ավանդներին՝ հայրենասիրության և ժողովրդասիրության, ազատասիրության և հումանիզմին, և բարեկամությանը ռուս մեծ ժողովրդի, նաև մեր դարավոր հարևանների՝ վրացի և ադրբեջան ժողովուրդների հետ։

Հայ պետականությունը կործանվելուց հետո, հայ ժողովրդի պահպանության գործն ու պայքարը գլխավորեցին հայ կուլտուրան և հայ գրականությունը։ Հայ լեզվով գրված գրականությունը։

Համաշխարհային պատմությունը հային վիճակեց մի հայրենիք, մեծ, աշխարհակալ պետությունների՝ Հռոմի, Բյուզանդիայի, Պարսկաստանի, արաբների, Թուրքաստանի և օսմանցիների բախման ճանապարհի վրա, ճանապարհների հանգույցի մեջ։ Դա եղավ մեր ճակատագիրը և շատ աղետաբեր եղավ այդ ճակատագիրը։ Այդ աշխարհակալները միմյանց ձեռքից խլում էին Հայաստան երկիրը, պատառ-պատառ անում, ավերում գյուղ ու քաղաք, կեղեքում, տրորում, հյուծում բնակչությանը։

Դարեր շարունակ ներխուժում էին թուրք-սելջուկ և մոնղոլ հորդաները, կողոպտում ու կոտորում հայ շինականին ու քաղաքացուն, գերի վարում բազմություններ, քար-քարի վրա չթողնելով։

Կյանքի ու մահվան անհավասար կռվի մեջ բռնված ժողովրդին հայ գրականությունն էր, որ ոգի էր ներշնչում, քաջալերում դիմադրելու, տոկալու, պահելու ազգային անաղարտությունը և ինքնուրույնությունը, պաշտպանելու իր իդեալները։

Հայ գրականության հրեղեն, մարգարեական խոսքը բոցավառեց և ամրացրեց հայ ժողովրդի հավատը իր լուսավոր ապագայի հանդեպ, աղատ, երջանիկ ապագայի հանդեպ։

Հայաստանի մեծագույն մասը ամայացավ, ժողովուրդը տասանորդվեց, կոտորվեց, բայց չայլասերվեց, հոգեպես չայլանդակվեց. մնաց որպես մի ուրույն ազգություն իր ոճով, իր մելոսով և էպոսով և իր ներհատուկ կյանքով։

Հայ ժողովրդի պայքարը հանուն իր ոգու, հայրենիքի և կուլտուրայի եղավ իր գրականության մշտավառ պաֆոսը, որ թուր-կայծակի պես անցավ բոլոր իր ստեղծագործությունների միջով, բոլոր ժամանակների միջով։

Սիրելի ընկերներ. ես շատ եմ սիրել Շիրակը, իմ ծնած վայրը, իմ

աշխատող ու բանաստեղծող ժողովրդին, մեր ֆոլկլորը, մեր երգն ու պարը։ Սիրել եմ Շիրակը, նրա ցորենի արտերը, ծաղկավառ դաշտերը, կարկաչուն գետակները. չքնաղ Արագածը, զողանջուն ձորերը, Բագրատունիների Շիրակը, ուր ամեն մի քար խոսում է իմ նախահայրերի սիրալի գործերից, ուր դեռ կանգուն են իմ ժողովրդի հանճարեղ խիզախումները՝ ճարտարապետական հոյակապ կոթողները։

Ես երազում էի միշտ ապրել Շիրակում՝ հորս տանը, մորս մոտ, և երգել իմ Շիրակը և նրան իմաստավորող ժողովրդին։ Բայց իմ այդ համեստ երազը չիկենսագործվեց. քաղաքական հանգամանքները և հալածանքները ինձ նետեցին հեռուները...

Թափառեցի աշխարհն-աշխարհ. օտար դռներ, օտար ափեր։ Կարոտում էի իմ հայրենի ծուխին, մեր սրբազան ցորեն հացին, կենդանի խոսքին... հեռվից-հեռու այրվում էի երկրիս բախտով։

Բռնկվեց համաշխարհային աշխարհավեր առաջին պատերազմը։ Արյունոտվում էր իմ սիրտը, լսելով սրտաճմլիկ դեպքերի մասին օսմանյան պետության կատարած, նույնիսկ իրենց՝ օսմանցիների եղեռնաշատ պատմության մեջ աննախադեպ ջարդերի մասին։ Զարհուրելի ջարդեր, որոնք գործադրվեցին հայ ազատաբաղձ ժողովրդի ամբողջական բնաջնջման նպատակով։

Դա աշխարհի մեջ ամենամեծ ոճիրն է, որի անունը գենոցիդիզմ է։ Մի ժողովրդի ամբողջական ոչնչացումը։

Այդ ոճիրը կատարեցին դահիճ Թալիաթն ու Էնվերը և նրանց ոհմակը։ Լուս ցերեկով «քաղաքակիրթ» կոչված Եվրոպայի մեծ պետությունների աչքերի առաջ, որոնք հայի արյունով թուրքերի հետ առևտուր էին անում։

Երկրագնդիս բոլոր բորենիները նախանձելով նախանձում են այդ եղեռնագործություններին...

Եվ ծագեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և բազմաչարչար Հայաստանը առավ իր փրկարար լույսերի մեջ։ Խորտակվեցին ցարական կարգերը։ Հին կայսրությունը բաղադրող ժողովուրդները ստացան ինքնորոշման իրավունք, հայ ժողովուրդն էլ կազմակերպեց իր Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը. հավասար անդամ սովետական եղբայրական հանրապետությունների ընտանիքի։ Նոր էպոխա բացվեց աշխատասեր հայ ժողովրդի համար։ Սկսվեց երկրի շինարարությունը աննախընթաց չափերով և բոլոր ասպարեզներում՝ բարոյական և տնտեսական։ Վերընձուղվեց հայ դասական ճարտարապետությունը, զարգացան արվեստները՝ նկարչություն,

քանդակագործություն, երաժշտություն։ Կուլտուրական մեծ նվաճումներ՝ համալսարան, տեխնիկումներ, բազմաթիվ դպրոցներ ավաններում և գյուղերում, անթիվ գրադարաններ, թանգարաններ, օպերա, թատրոն և այլն, և այլն։

Սակայն ամեն մի ժողովուրդ ունի իր ռեալ ներկան, ռեալ հայրենիքը և բաշի դրանցից նա ունի իր երազանքների, տենչանքների շողշողուն հայրենիքը. նա ուզում է տեսնել հարուստ, ավելի լրիվ հայրենիք, ավելի երջանիկ, իր բաղձանքները կենսագործված հայրենիք. իր երազած ապագան։ Առանց այդ երազի ժողովուրդները, հատկապես քանակով փոքր ժողովուրդները, չեն կարող ապրել։

Սիրելի բարեկամներ, ես արդեն երկու ոտքով ծերության մեջ եմ, բայց տակավին միտքս առողջ է, կարողանում եմ խորհել, երևակայել։ երազել։ Ես տակավին կարող եմ գրել։

Իմաստուն Հնդկաստանում մի սովորույթ կա. նրանց գաղափարով կյանքի սահմանը 70 տարին է։ Այդքան տարի ապրելը ամեն մարդու արդեն իրավունքն է՝ բնությունից տրված։ Ավելին ապրելու համար պետք է գնել այդ շնորհը. տվյալ մարդն իր մարմնի ծանրությամբ պիտի մի շոշափելի բան տա համայնքին։ Նա նստում է կշեռքի մի նժարի վրա, մյուս նժարին դնում է հավասարակշռող փոխարժեքը. հարուստը դնում է ոսկի, արծաթ, կերպաս, քիչ ունևորը՝ պտուղ, միրգ, բրինձ... այսպիսով նա գնեց իր ապրելիք ժամանակը։

Ես նույնը կանեմ իմ դրությամբ։

Ուրեմն կարող եմ ապրել։

Սիրելի բարեկամներ, ծերությունը բյուրեղացնում է։ Նրա մեջ ամբողջ աշխարհը, մարդը և բոլոր իրերը գտված են, մաքրված, բյուրեղացած, անաչառ կերպով գնահատված, ատուգված, հասած ճշմարտությունը, էությանը...

Եվ դա իրավունք է տալիս, արտոնում է ծերունուն ասել իր բաղձանքները։

Ես կցանկանայի, որ հայ ժողովուրդը լիներ ինքնավստահ, բարձր պահեր ազգային արժանապատվությունը։

Կցանկանայի, որ նա մայրենի լեզվի պաշտամունքն ունենար։ Ավելի գիտակից կառչեր հայրենի հողին։

Կցանկանայի, որ նա խնամքով պահեր իր հինավուրց կուլտուրայի կոթողները և դրանցով հպարտանար։

Կցանկանայի, որ մեր արվեստը և գրականությունը ազգային կոլորիտի և ձևերի միջով արտահայտեին համամարդկային զգացմունքներ ու մտքեր, կերտեին արժեքավոր գործեր և կերպարներ։

Կցանկանայի անցյալի հին, հրակայուն և ամուր խարիսխների վրա բարձրանար հայ ժողովուրդը, նորոգվելով և վերանորոգվելով առաջանար և հետ չմնար արդիական գիտությունների և կուլտուրայի պրոգրեսի առաջամարտիկների շարքից։

Կցանկանայի, որ Մեծ Միությունը կազմող հանրապետությունները ավելի սերտ կապվեն միմյանց հետ, ավելի սիրեն և օգնեն միմյանց։ Միահամուռ ջանքերով աշխատեն Մեծ Միության առաջադիմության և հզորացման համար. բոլորը միասին պայքարեն մեր ամենօրյա հացը ստեղծող աշխատավորության աղատագրման համար շահագործումից։

Հայրենասիրության դրոշի տակ՝ անդուլ և անձնազոհ պայքար սոցիալիստական արդարության, ժողովուրդների եղբայրության համար, հումանիզմի և համաշխարհային խաղաղության համար՝ բովանդակ մարդկությանը փրկելու կործանումից և վայրենացումից։

Կեցցե՞ Սովետական Մեծ Միությունը։

Կեցցե՞ Սովետական Հայաստանը։

Կեցցե՞ հայ գրականությունը։

1955

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

Շիրակի բնությունը խիստ է և դաժան: Նա չունի հոդտուտ գեղեր ու սավերախիտ անտառներ, գահավիժող անդունդներ ու բարձր լեռներ, սակայն հիասքանչ է Շիրակի երկինքը: Դա երևում է առավել չափով գիշերը, երբ կարծես վերանում է երկրի ու երկնքի անջրպետը, և մարդը զարմանալիորեն հաղորդակից է դառնում տիեզերքին:

Ավետիք Իսահակյանի պոեզիան հայ գրականության յուրօրինակ «Շիրակի երկինքն է»:

Արարչագործ աստղի առաջ
Վրշտան սիրտս բացեցի,
Հավերժության աչքի առաջ
Անհույս ու խոր լացեցի...

Ավետիք Սահակի Իսահակյանը ծնվել է 1875 թվականի նոյեմբերի 30-ին (17) Ալեքսանդրապոլ քաղաքում: Ճիշտ է նրա պապը՝ Նիկողայոս Իսահակյանը, ծագումով պատմական Հայաստանի Բայազետ քաղաքից էր, (փոխադրվել են իրենց տոհմով 1828 թվականին Գյումրի) սակայն հայրը՝ Սահակը, արդեն Գյումրիի ծնունդ էր, իսկ մայրը՝ Աչմասա Ղլոնջյանը Ղարսից էր հարս բերված, այնպես որ ինքը՝ բանաստեղծը, իրեն միշտ համարել է բնիկ գյումրեցի, ավելի ճիշտ՝ «Անի քաղաքացի»:

Այս նշումը էական նշանակություն ունի, որովհետև սոսկ աշխարհագրական անուն չէ հայրենի գյուղը, քաղաքը կամ գավառը, սա այն վայրն է, ուր հիմք է դրվում ազգային մտածողության, մարդկային բնավորության բնույթի, որը ծնում է իր սովորույթներն և ավանդները:

«Սիրելագույն Շիրակն ինձ համար տիեզերքի կենտրոնն է եղել,— գրել է մեծ հայրենասերը,— որովհետև այստեղ է, ուր սկսել է բարախել իմ սիրտը: Այստեղ եմ զգացել աշխարհը: Այս կենտրոնումն է սկիզբ առել իմ աշխարհանանաչումը: Այստեղ եմ լսել և սովորել մեր հոյակապ մայրենի լեզուն:

... Հայկական անցյալի փառավոր կուլտուրայի այս վայրում՝ նվիրական Շիրակումն եմ հյուսել իմ շքեղ երազները՝ նրա գմբուխտ Մանթաշում, Ալագյազի ազամանդե կատարի վրա, բյուրեղ աղբյուրների զրնգոցի մեջ, Արփաչայի ափերում և Անիի ներշնչող պարիսպների ու աստվածաշաղ բուրգերի տակ, (V, 184—185)[1]: Այսօր ոչ մի տեղ այնպես չեմ կարող առնել Խաչատուրյանի կարոտը, ինչպես հին Գյումրիի քաղաքամասերում: Գահպանվել է այն տունը, ուր ծնվել է մեծ բանաստեղծը, այն եկեղեցին, ուր կնքվել է նա, այն դպրոցը, ուր հանախել է մինչև Հարիճավանք ուսման գնալը, այն վայրը, ուր տեղի է ունեցել նրա և Շուշիկի առաջին հանդիպումը:

Հին Գյումրին նվիրական զգացմունքների մի ամբողջ աշխարհ է զարթեցնում Խաչատուրյանների մոտ, սա այն քաղաքն է, ուր անցել են նրա կյանքի ամենաերջանիկ տարիները՝ մանկությունը, ուր ծնվել են նրա պոեզիայի առաջին տողերը, ուր սկիզբ է առել նրա մեծ սիրո տխուր պատմությունը, ուր առաջին անգամ գիտակցվել է հայրենիքի ազատագրմանը զինվորագրվելու անհրաժեշտությունը, ուր ծագրվել են բազում ռոմանտիկ երազներ՝ կապված Հայաստանի անկախության հարցի հետ...

Հին Գյումրին... դա ոչ այնքան Խաչատուրյանի հերոսների, ինչպես իր քաղաքն է, բանքի ռոմանտիկ պոեզիայի հիմնական հերոսը դա հենց հեղինակն է: Հայկական ոչ մի քաղաքի հետ հայ մեծ գրող այնքան կապված չի եղել, որքան Աբովյանի Խաչատուրյանը Գյումրիի հետ: Կյանքի վերջին տարիներին նա կվերադառնա իր բնօրրանը, կկանգնի հարազատ տան բակերառաջ շեմին, ուր այր տասնամյակ առաջ աշխարհ եկավ և նրա երդիկից առաջին անգամ տեսավ Շիրակի երկինքը:

* * *

Յուրաքանչյուր մեծ բանաստեղծի կյանքը մի յուրահատուկ ստեղծագործություն է: Խաչատուրյանի կյանքը՝ նույնպես:

Նրա կյանքը անցել է բազում օտար երկնքների տակ: Նա եղել է այն առանցքը, որի շուրջը համախմբվել, կենտրոնացել է հայոց հոգեկան կյանքը թե՛ դրսում, թե՛ ներսում: Խաչատուրյանը նշանավորել է բուն հայկականը թե՛ արվեստում, թե՛ քաղաքական դրսևորումներում, դարձել ազգի խորհրդանիշ, որն արտահայտվեց մեկ բառով՝ Վարպետ: Եվ միաժամանակ հարկ է ասել, որ Խաչատուրյանի կյանքը դա ռոմանտիկ բանաստեղծի կյանքի դասական օրինակ է: Ընթացք, ինքնիշխան անհատի, որը դեռևս 16 տարեկանից մասնակցում է էջմիածնի նեմատանի ուսանողական խռովություններին, ապա 18 տարեկանից միայնակ թափառումներ՝ Գերմանիա, Ավստրիա, գործուն մասնակցություն ազգային ազատագրական շարժմանը, և 21 տարին չբոլորած առաջին բանաստեղծությունը Երևանի բերդում, ապա ամառն Օդեսա՝ 1898 թ.: Վտարանդիություն հայրենիքից (շուրջ 20 տարի օտարության մեջ), բնդկզում հասարակության դեմ, քաղաքական իդեալի տատապալից ու մշտական ուռնումներ, հուսախաբությունններ ու հաղթանակներ, կուռումներ ու ձեռքբերումներ, և անընդհատ հանդգնաբար ստեղծագործական աշխատանք, մահառում հակառակորդի դեմ...

Երբ լույս տեսան «Երգերն ու վերքերը», Խաչատուրյանը ընդամենը քսաներկու տարեկան էր: Գրքի և ընդհանրապես Խաչատուրյանի ստեղծագործության առաջին մեկնաբանը՝ Նիկոլ Աղբալյանը գրում է, որ Խաչատուրյանը «կարոտանում է ժողովրդի պես զգալ, նրա սրտով ապրել: Իսկ ի՞նչ է նշանակում ժողովրդի պես զգալ. այդ նշանակում է համանման հոգեկան դրություններում զգալ այն, ինչ կզգար ժողովրդի մարդը. սիրում եմ դուք, թե տառում, վիշտ կա ձեր սրտում, թե ուրախություն, կորցրած սերն եմ ողբում, թե խանդաղատանքով եմ լցված, եթե դուք զգում եմ այն, ինչ կզգար ժողովրդի մարդը, ապա դուք ժողովրդի պես եք զգում և ուրեմն ձեր երգերը ժողովրդական են՝ ձերը մնալով» («Մուրճ», 1898, № 6, էջ 839—855):

Այս ոգեշունչ խոսքերը նա էին հասել քննադատին, երբ «Երգեր ու

Մեջբերումները տրված են Ավ. Խաչատրյան, Երկերի ժողովածու 6 հատորով, Երևան, 1973—1979 թթ. հրատարակությունից. հռոմեական թվերով նշվում է հատորը, արաբականով՝ էջը: «Հ» տառով նշվում է գիրքը, և ապա էջը՝ «Հիշատակարան» գրքից, «Հ» տառով նշվում է գիրքը, և ապա էջը՝

վերքերը» արդեն փնտրված գիրք էր, ուսանողական-երիտասարդության շրջաններում թեածում էին գրքի բազում ձեռագիր օրինակները:

Ժողովածուի «Պարկյուն աշուղի խաղերից ու բայաթիներից» շարքից, «Պարդս լացեք, սարի սմբուլ...», «Սև աչերեն շատ վախեցիր» բանաստեղծությունները անմիջապես երգի վերածվեցին և մինչև այսօր մեր ժողովրդի ամենասիրելի երգերից են: Իսկ «Մանկալ ես, բեզարած ես...» երգը հիրավի դարձավ մեր պոեզիայի դեմոկրատայնության ու ժողովրդայնության խորհրդանիշ:

Հին է հայկական պոեզիան, իմաստուն է նրա խոսքը, նրա հանճարներին հավասարվելը տրված է միայն ասածու բնույթին: Եվ անա «Երգեր ու վերքերի» խաներկուամյա հեղինակը հավակնում է մտնել այդ հանճարների շարքը: Դրանք սովորական խաներկու տարիներ չէին, և ոչ էլ կախարդական փայտիկի օգնությամբ էր ստեղծվել «Երգեր ու վերքեր» գիրքը: Նրանց հեղինակը առանց չափազանցնելու կարելի է ասել ուներ շուրջ 10 տարվա գրական փորձ: Տասը-տասներկու տարեկան հասակից նա սկսել էր գրել բանաստեղծություններ, պոետական առանձին շարքեր՝ «Թիթեռ-մտքեր», «Mozaik», «Յոր օր ապատում, Յոր գիշեր անապատում...», «Հուրի փերի», «Թերթիկներ», «Մասսա Մանուկ» վիպերգը, «Սիրելի քույր Ն. Մ.-ին» քնարական բանաստեղծությունների շարքը, «Հիշատակարանից» հատվածներ, հարյուրավոր արձակ մանրապատումներ ու խատագումներ (թվարկածս երկերի մի մասը պահպանվել է): Նա իր եռևում ուներ լայպցիգյան համալսարանի ինստիտուտ ուսուցման տարիները, մի երջանիկ շրջան՝ առաջինից մինչև վերջին օրը իմաստավորված գիտության ու համաշխարհային գրականության ընկալման տենչով: Երբ կարդես տենդի մեջ կլանվում էին գերմանական դասական բանաստեղծների ու փիլիսոփաների երկերը, երբ տառապալից խորհում էր իր բանաստեղծական կոչման մասին, և արդեն իսկ զգում էր իր մեջ ուռճացող բանաստեղծ-մարգարեի ուժը.

Կենսական ծովի հոյզերի միջին
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր.
Կայծակն է զարկում իմ վես նակատին,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր:

Հոգմ ու փոթորիկ շուրջս են հածում,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր:
Դառ ալիքները կուրծքս են ծեծում,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր...

Այո, ամբողջ զորությամբ է զգացել Խաչակյանը բնությունից իրեն բաժին ընկած «ուժեղ անհատի», կամ ինչպես ինքն է ասում հենիի (հանճարի) հակատագիրը: Իսկ նման անհատի համար ծառայել հայրենիքին, դա չէր նշանակում ծառայել սոսկ ստեղծագործությամբ, որովհետև բստ նրա հավատամքի լինել բանաստեղծ դեռևս քիչ էր: Նույն լայպցիգում, քսան տարեկան հասակում նա գրում է. «Հենին, հերոսը մի ազգի դիսիպլինա եղած կրիստալն է, նրա մեջ արտացոլվում են այդ ազգի ամեն հատկությունները՝ ավելի խորացած, նույնիսկ նրա մոլորությունները: Մի հերոսը, մի հենին մի ողջ ազգ է, մի ազգի գլուխ է, հենց այդ հիման վրա նա պիտի իշխե և ղեկավարե իր ազգը դեպի իր որոշած իդեալը...» (Հ. 178):

Ազգային երգիչ լինելու ունակությունը իսկապես որ տրված էր Խաչակյանին ի վերուստ: Եվ, բնականաբար, նման խառնվածքի անհատի համար ծառայել ժողովրդին, նշանակում էր ծառայել ոչ միայն այդ ժողովրդի գրականությանը: Նա ուներ իր իդեալը, ավելին, ինչպես ինքն էր խոստովանում, նա պիտի տաներ ազգը «դեպի իր որոշած իդեալը...» (Հ. 178): Ո՞րն էր այն: Հակիրճ ասած՝ Հայրենիքի ազատությունն ու միասնությունը: Այն իդեալը, որ Հայաստանի պատմական անկախությունը կորցրած օրից հանգիստ չի թողել ազգի լավագույն զավակների միտքն ու հոգին: Այս իմաստով Խաչակյանը ժառանգորդն էր ոչ միայն միջնադարի հայ տաղերգուների, այլև բռնության դեմ պայքարող հայ ժողովրդի հերոսների՝ Վարդան Մամիկոնյանից մինչև Աղբյուր Սերոբը: Ժառանգորդն էր ոչ միայն ազատության պայքարի խոսքի, այլև գործի: Գերմանիայից վերադառնալուց հետո մինչև «Երգեր ու վերքերի» հրատարակումը, ընկած էր երկու տարի, մեկը այդ տարիներից նա անցկացրեց Երևանի բանտում: Խաչակյանին ձերբակալել էին 1896 թվի մայիսին, Արևմտահայաստանի ազատագրական խմբերի համար գաղտնի դրամական միջոցներ հայթայթելու, գենք գնելու և երկիր ուղարկելու համար:

Կայսերական ժանդարմերիայի ղեկավարները կարծում էին, թե ձերբակալելով և բանտարկելով իրենց կհաջողվեր անաբեկել ազգային-ազատագրության պայքարին զինվորագրված բանաստեղծին: Բայց ապարդյուն:

Խաչակյանի կյանքի միակ նշմարիտ, երջանիկ տարիները եղել են այն ժամանակները, երբ զգացել է, որ իր գործունեությանը իրական օգուտ է բերել հայրենիքի ազատագրմանը: Այս գիտակցության կնդրին նսեմանում էին բանտն ու ամսորը: Նա գիտակցում էր, որ այն ժամին,

Ե՛ք ինքը զինվորագրվեց հայրենիքի անկախության պայքարին, տերն էր իր նակատագրի և պատրաստ է լիովին ընդունելու բախտ վիճակված տառապանքներն ու զրկանքները:

1897 թվի ապրիլին, Երևանի բանտից դուրս գալուց հետո, ընդամենը մեկ տարի է նա ազատ մնում, 1898 թվի ապրիլին Պետերբուրգի արդարադատության դեպարտամենտի որոշմամբ աքսորվում է Օդեսա:

* * *

20-րդ դարի առաջին տասնամյակը հայ ժողովրդի համար եղավ հույսի և հավատի ժամանակաշրջան: Հույս կար, որ կհաղթանակի ռուսական առաջին հեղափոխությունը, Արևելահայաստանում կբացվի նոր կյանքի արևածագը, որի շողերը կհասնեն և Արևմտյան Հայաստան, հույս կար, որ կանցկացվեն սահմանադրական վերափոխումներ, կգա առաջադիմության և դեմոկրատիայի ալիքը, որ Եվրոպան կպարտադրի Թուրքիային ճանաչելու հայկական ինքնավարությունը և այլն, և այլն: Կար հավատ մարդու հանդեպ, արդարության, և նշմարության հանդեպ: Իսկ որտեղ հույսն ու հավատը, այնտեղ և երազներն ու անուրջները, լուսավոր ծրագրերն ու խանդավառությունը՝ ստեղծագործական երկունքը:

Այդ տարիները (1900—1910 թթ.) հիրավի եղան և Խաչատրյանի մուսայի ամենաարգասաբեր տարիները: Նա հրատարակում է բանաստեղծական երեք նոր ժողովածուներ՝ «Հին-նոր երգեր ու վերքերից» (1902 թ., Բաքու), «Բանաստեղծություններ» (1903 թ., Բաքու), «Երգեր ու վերքեր» (1908 թ., Թիֆլիս), հիմնական ավարտում է քնարական մարգարիտների «Սլագյալի մանիներ» շարքը, դառնում է «Մուրճ» ամսագրի՝ հայ գրական մտքի յուրահատուկ առաջատարի ամենասիրված հեղինակը, բանաստեղծական շարքեր է տպագրում Կովկասի հայկական թերթերում ամսագրերում և թերթերում: Անընդհատ շրջագայում է, լինում Մոսկվայում, Պետերբուրգում, Նոր-Նախիջևանում, Բաքվում, Կովկասի բազում հայաշատ գյուղերում ու շրջաններում: 1900 թվի աշնանը մոտ մեկ տարով մինչև 1901-ի սեպտեմբերը մեկնում է Եվրոպա, պարապում Ցյուրիխի, Ժենևի և ապա Վիեննայի կրթական կենտրոններում, գրադարաններում, ունկնդրում տեղի հանճարաբանների նշանավոր գիտնականների դասախոսությունները: 1901 թ. ամռանը երկար ժամանակ անց է կացնում Վենետիկի Մխիթարյան միաբանների մոտ, աշխատելով տեղի հայագիտական նշանավոր գրադարանում և ձեռագրատանը: Այստեղ է ծանոթանում հայության պաշտելի նահապետի՝ Լևոնդ Ալիշանի հետ, որը էական ազդեցություն ունեցավ բանաստեղծի հայրենասիրական ծրագրերի վրա:

1900—1910 թթ. եղան կովկասահայ մտավորականության համախմբման տարիներ, հենց այդ ժամանակաշրջանում ստեղծվեց և գործեց «Վերնատուն» գրական խմբակը՝ հայ գրողների միության նախասկիզբը, Թիֆլիսի հայ հոգևոր կյանքի կենտրոնը: «Վերնատանը»՝ Բենեդիկտյան փաղոցի՝ Հովհ. Թումանյանի տան հինգերորդ հարկում, «վարվրուն բոխարիկի շուրջը» հավաքվում էին Ղազարոս Աղայանը, Պերճ Պռոշյանը, Մուրացանը, Վրթանես Փափազյանը, Գեորգ Բաշինջաղյանը, Լեոն, Շանթը, Նիկոլ Աղբալյանը, Ավետիս Ահարոնյանը, Պերենիկ Դեմիրճյանը, Վահան Տեր-յանը, տանտերը՝ Թումանյանը, և Խաչատրյանը, մարդիկ, որոնք գծագրեցին 20-րդ դարի Հայաստանի քաղաքական նկարագիրը, որոնք ապրեցին հանուն հայրենիքի ազատագրման վեհ գաղափարի, ստեղծեցին, տառապեցին, հաղթահարեցին և պարտվեցին, երազեցին և հավատացին... «Վերնատունը» ժամանակակից մշակույթին և գրականությանը ազգային գիտակցության շունչ հաղորդեց, ծրագրային ուղղություն տվեց:

«Վերնատան» տարիները եղան Կովկասում Խաչատրյանի կյանքի ամենաերջանիկ ժամանակաշրջանը: Այն՝ նշանավորվեց Խաչատրյանի ստեղծագործության մեջ «Հայդուկի երգեր» շարքի ստեղծմամբ: Այդ շարքի գործերը Խաչատրյանը ստորագրում էր «Հայ-գուսան» կեղծանվամբ, որի ընտրությունը երկակի իմաստ ուներ, նախ, որ Պաճնորդական բաժինը չիմանար, թե ո՞վ է այդ երկերի հեղինակը, և երկրորդ, այդ շարքին իր իմաստով ու ձևով շատ տեղին էր այդ ստորագրությունը:

«Հայդուկի երգերից» շարքը եղավ ազգային ազատագրության հեղափոխական գաղափարներով ոգորված 20-րդ դարի հայ քաղաքացիական քնարերգության առաջնեկը: Այն՝ Խաչատրյանի հայրենասիրական պոեզիայի սկիզբն էր: Հարկ է ասել, որ մինչև այդ շարքի երկերի ծնունդ տպագրվելը, հայրենասեր երիտասարդները քաղցնում էին ձեռագրերը և տարածում ժողովրդի մեջ:

Ազատ հայրենիքի գաղափարը հայ ժողովրդի երազն էր: Եվ այդ երազը ժողովրդին պատմեց Խաչատրյանը մի ժամանակաշրջանում, երբ հայ մարդուն ամենից առավել հույս ու հավատ էր հարկավոր, պայքարելու ու մարտնչելու, ապրելու ու հարատևելու կամք: Նման երազ, նման իրա-

վինակում (պանթուրքական և գոլիցինյան հակահայկական այլանսի շրջանում) կարող էր ունենալ միայն մոլեգին հայրենասեր, նակատագրի դեմ մարտողը, հույսի դրոշակիրը, այսինքն այն ընտրյալը, որ պիտի հայությանը մղեր դեպի ազգային-ազատագրական պայքար՝ որպես միակ նշմարիտ ուղի գոյատևելու համար: Ժողովուրդը ծարավ էր ոգեվորող, հուսաբեր, խանդավառող ու ավետարեր խոսքի և դա ազգային ռոմանտիզմի պոեզիան էր: «Հայդուկի երգերից» մինչև «Աբու-Լալա Մահարի» (1899—1910 թթ.) ահա Խաչակյանի ռոմանտիզմի (թե ընդհանրապես պոետական արվեստի ասպարային ժամանակը): Եվ սակայն ի՜նչ դրամատիկ բնաշրջում ապրեց նրա ռոմանտիզմը այդ տասնամյակում, ի՜նչ կրակներ երևացին նրա ճանապարհին, որ հետզհետե վերածվեցին միրաժների, ի՜նչ հույսեր մոխրացան: Այդ տարիները եղան բանաստեղծի թե՛ ստեղծագործական մաքառումների, թե՛ կյանքային իրավիճակների ամենահագեցված ու դրամատիկ տարիները:

Ստեղծվեցին մոտ երկու հարյուր դասական բանաստեղծություններ, «Աբու-Լալա Մահարի» պոեմը: Հրատարակվեցին երեք ժողովածուներ, որոնցից մեկը՝ 1908 թ. Թիֆլիսում հրատարակված «Երգեր ու վերերը», եղավ մինչհեղափոխական շրջանի Խաչակյանի պոեզիայի լավագույն հրատարակությունը, յուրովի հանրագումարը շուրջ քսան տարիների նրա ստեղծածի:

Գրքի լույս տեսնելուց հետո հայ պարբերական մամուլում հրատարակվեցին բազում հոդվածներ, ուր բարձր գնահատական էր տրվում երիտասարդ «ժողովրդական բանաստեղծին»: Թիֆլիսի հայկական գրախանութներում վաճառքի հանվեցին Խաչակյանի դիմանկարով և քարտեզներով փոստային քարտեր: Պարբերականները մրցում էին առաջինը տպագրելու նրա նոր գործերը: Հայկական ակումբներում, անկախ նրանց կուսակցական քեֆումից, հույն ոգևորությամբ արտասանում էին «Ազատության Զանգը» և «Ես ձեզ ասում եմ՝ կրգա Ոգու սովը...»: Թիֆլիսի ու Բաքվի, Նոր-Նախիջևանի և Մոսկվայի հայկական համայնքների սիրված ու սպասված հյուրն էր Խաչակյանը:

Իսկ մյուս կողմից, բանաստեղծին ահա արդեն տասը տարուց ավելի կրնկակոխ հետևում էր ցարական ոստիկանության Պանթուրքական բաժինը: Ինչքան ժողովուրդը ավելի էր սիրում Խաչակյանին, այնքան ավելի էր ուռճանում բյուրոկրատա-չինովնիկական ապարատի ատելությունը նրա հանդեպ: Այդպես է եղել միշտ, և ոչ միայն Հայաստանում, այլև՝ աշխարհի ամեն անկյունում, ուր իշխում էր սուտն ու կեղծիքը, բռնությունն ու տգիտությունը:

Մարտահրավերի ձեռնոցը բանաստեղծը վաղուց էր նետել: Դեռևս 1903 թվին նա գրել էր «Ազատության Զանգը»՝ կովկասյան ժողովուրդների պայքարի առնական կոչը:

Երբեք այդպես կայծակաբեր ու ամպարոտ չէր եղել ռուսական միապետության երկինքը, ինչպես 1900-ական թվականներին: Խաչակյանը լավ էր գիտակցում, որ եթե համաժողովրդական ընդվզումը հաջողության հասնի, անխուսափելիորեն կբացվեն և իր ժողովրդի ազգային-ազատության հորիզոնները: Օրակարգում դրված էր ազգային ինքնության խնդիրը, հայերի հայածանքների դադարեցումը, արևմտահայությանը ռեալ օգնություն բերելը: Հույսերը մեծ էին, սպասումները շատ: Այդ ժամանակաշրջանում առավել ակտիվացել էին հայ մտավորականության հայրենասիրական գործողությունները: Թիֆլիսում և Բաքվում, Երևանում և Ալեքսանդրապոլում, Հայաստանի գյուղական շրջաններում անց էին կացվում գաղտնի հավաքներ, հանդիպումներ, դասախոսություններ, ժողովրդի լայն խավերին բացատրվում էր քաղաքական իրադրության սուր վիճակը, կոչ էր արվում պատրաստվել համաժողովրդական ելույթի և օգնության ձեռք մեկնելու Թուրքիայի լծի տակ տառապող արևմտահայությանը: Այս նպատակով կազմակերպվում էին երկիր մեկնող ընդհատակյա կամավորական ջոկատներ, դրամական միջոցներ էին հայթայթվում Արևմտյան Հայաստան զենք փոխադրելու համար և այլն:

Խաչակյանը, որ մեծ հարգանք էր վայելում ազգային շրջաններում, ամենաեռանդուն մասնակցություն բերեց ազատագրական շարժման գործին: Բանաստեղծի հայրենասիրական գործունեությունը նիանալի հայտնի էր Թիֆլիսի նահանգական ցարական ժանդարմերիային, որը դեռևս շատ վաղուց, սկսած երևանյան բանտարկության և Օդեսայի սմսորի շրջանից կրնկակոխ հետևում էր Խաչակյանի յուրաքանչյուր քայլին, հարմար առիթ էր սպասում նրան ձերբակալելու համար: Եվ ահա 1908 թվի դեկտեմբերին, Թիֆլիսում, ի թիվս 160 հայ հայրենասեր մտավորականների, Խաչակյանը ձերբակալվեց: Բանաստեղծի հայրենասիրական գործունեությունից ոչինչ չէր մոռացվել և ոչինչ չէր անտեսվել:

Վրաստանի պետական կենտրոնական պատմական արխիվում (ֆոնդ 94) պահպանվում է Խաչակյանի և հայ այլ մտավորականների այսպես կոչված «դատական գործը»: Այն՝ փաստերի լեզվով պատմում է, թե ինչ երկար ու անդուլ պայքար է գնացել Խաչակյանի, ինչպես և նույն դատական գործով անցնող Հովհ. Թումանյանի և ոստիկանության

Գանեարդական բաժնի միջև, (Խաչակյանը ժանդարմերիայում հիշատակվում էր «Մոլոտ», իսկ Թումանյանը՝ «Ժոկեյ» կեղծանվամբ): Բանաստեղծի գործը պարունակում է ցարական լրտեսների գաղտնի զեկուցագրեր, Թիֆլիսի նրա ապրած տանը, Ալեքսանդրապոլում և Ղազարապատ գյուղում կատարված խուզարկությունների արձանագրություններ, բռնագրված գրքերի ցուցակներ և այլն:

«Մեղադրանք» հարուցելու ապացույցներ կային, թեև բոլորին հայտնի էր, որ Խաչակյանին ձերբակալելու հիմնական պատճառը՝ ազգային ազատագրական շարժման մեջ մեծ հեղինակություն վայելող գործչի մեկուսացումն էր: Եվ այսպիսով, բանաստեղծը նորից բանտում է: Բանտն ու բանաստեղծը, ինարկե, անհամատեղելի հասկացություններ են, սակայն լինում են ժամանակներ, երբ ազնիվ մարդու համար ավելի պատվաբեր է բանտարկությունը, քան, այսպես կոչված, ազատությունը: Այդ ժամանակներում, երբ խեղաթյուրվում են հասարակության բարոյական սկզբունքները, երբ չկա նշմարտություն, երբ սին է իդեալը և կեղծ՝ նպատակը: Եվ ինչպես ցույց է տալիս պատմությունը, նման ժամանակներում ավյալ պետությունը մոռանում է իր անկմանն ու փլուզմանը: Այնպես, որ բարոյական հաղթանակը կրկին բանաստեղծի կողմն էր: Արդեն Մեսեխի բանտում Խաչակյանին հայտնի է դառնում, որ 160-ի դատական պրոցեսից հետո իրեն սպասվում է երկարատև ամսոր Սիբիր:

Ձերբակալման լուրը մեծ աղմուկ է բարձրացնում հայկական շրջաններում: Այնպես որ, վեցամսյա բանտարկությունից հետո իշխանությունները ստիպված են լինում և՛ Թումանյանին, և՛ Խաչակյանին խաղաղ գրավականով բանտից արձակել, մինչև խմբի դատավարության սկիզբը:

1900-ական թվականների վերջերից ավելի ու ավելի ուժեղանում էր Խաչակյանի պոեզիայի փիլիսոփայական երանգը: Ապրելով հոգեկան դրամա, որը կապված էր ազգային անկախության ծրագրի երազների ու փլուզման հետ, Խաչակյանի հայացքը ուղղվեց դեպի գերմանական փիլիսոփա Ֆրիդրիխ Նիցշեի քարոզած գերմարդու գաղափարը: Հենց այդ շրջանում նա հասավ իր ստեղծագործության գագաթնակետին՝ «Աբու-Լալա Մահարի» պոեմին, հասավ իր ապրած տառապանքների ու մահացումների գնով, հասավ թե՛ իր նակատագրի խորհրդով, թե՛ իր ողջ ստեղծագործության տրամաբանությամբ:

«Աբու-Լալա Մահարին» ստեղծվեց պոետի կյանքի նակատագրական ճամփաբաժնին: Այն գրվել է հայրենի Ղազարապատում, պապենական շրջացին կից Ֆոլիկում, երեք օրում՝ 1909 թվականի օգոստոսի 30-ից մինչև սեպտեմբերի 2-ը: Ընդամենը երկու ամիս առաջ էր բանաստեղծը ելել մետեխյան բանտից, տրված ազատությունը իշխանությունների մահանույթի հարցն էր, դիմացը անհիմն ու անարդար դատական պրոցեսն էր, պայքարը մի հասարակարգի դեմ, որն իրեն սպառել էր բոլոր մարդկային ու իրավական սկզբունքներով: Հայրենիքի մյուս հատվածից գալիս էին դաժան ու անարգնաչունչ լուրեր, Ֆրիսոնյա պնդումները օգնության ձեռք չէին մեկնում ասածու առյանի առաջ իրենց երդայր նանաչած հայ ազգին, առավել, ցարական սատրապը օֆիցերի համազգեստ հագած կրակ էր բացում երկիր անցնող ամեն հայի վրա: Այնտեղ ջարդ, արյուն, այստեղ ազգուրացություն, «ոգու սով», ահավոր անտարբերություն սրի քաշվող մի ողջ ժողովրդի հանդեպ, ազատագրական յուրահանչյուր քայլի արգելք ու հետապնդում:

«Աբու-Լալա Մահարին», ինարկե, ոչ թե կոչ էր փախուստի, այլ՝ աշխարհի վերակառուցման, վերածնավորման: Նրա քարավանը ոչ թե Բաղդադից դուրս եկավ արաբական անապատ, այլ՝ իր դարն ապրած մարդկային հասարակության մի ֆորմացիայից դեպի նորը, որը դեռևս անորոշ ուրվագծվում էր արևի այրող հառագայթների ներքո...

Նրա քարավանապետը ոչ թե 10-րդ դարում ապրած արաբ հանճարեղ բանաստեղծն էր, այլ 20-րդ դարի հայ բանաստեղծը՝ Սասունի ու Կիլիկիայի ջարդերի ժամանակակիցը, մի ճնշված ու փոքր ազգի զավակը, որը սակայն իր մաշկի վրա զգացել էր ասածու «խորթ զավակ» ժողովրդին բաժին ընկած բոլոր զրկանքները: Մի ազգի զավակ, որի հույսը քսան դարից երկար էր, համբերանքը աշխարհի պես հին էր, սակայն ապրելու և հարատևելու կամքը հավիտյան երիտասարդ ու անխորտակելի: Նրա հեղինակը խտացումն էր բոլոր ժամանակների ապրած լույսի ու արդարության ծարավ բանաստեղծների, կեղծիքի և ստի, ոսկու ու գանի դեմ ընդվզած ստեղծագործողների, մեծ մխիթարների, որոնց դեմ միշտ առաջինն է ուղղված լինում, «այս աշխարհի զորեղների» սուրը:

Ուրեմն մի կողմից «Աբու-Լալա Մահարին» պես ստեղծագործական հաղթանակ և այնպիսի բախտորոշ երեույթ պոետի կյանքում, ինչպես նրա ամուսնությունը Ղարաբաղի նշանավոր տոհմերից մեկի շառավղի՝ Սոֆյա Մանասի Քոչարյանցի հետ (պսակադրության հանդեսը բանաստեղծի որոշմամբ տեղի է ունենում Անիի Մայր տաճարում) մյուս կողմից՝ օրըստօրե ուժգնացող ոստիկանական հետապնդումները:

Մոտենում է դատավարության ժամկետը: Խաչակյանի կնոջը հաջողվում է տեսակցություն ունենալ այդ շրջանում Թիֆլիսի նահանգի

կայսերական դատապարտման Ա. Կերենսկու հետ (նույն ինքը՝ Ռուսաստանի ժամանակավոր կառավարության ապագա նախագահը): Կերենսկին չի բացնում դատավարությունից հետո Խահակյանին սպասվող վճիռը՝ 10 տարով աքսոր Սիբիր: 1911 թվի փետրվարի 11-ին Թիֆլիսի պանդուղական բանտի պետը նոր կարգադրություն է անում իր ենթականերին, «պահել Խահակյանին աչալուրջ և մշտական հսկողության տակ»: Ինչ էր մնում անել բանաստեղծին նման իրադրությունում, ապասել կեղծ ու անհիմն դատավարությանը, և ապա աքսորվել Սիբիր: Պարզ է, որ դրանից ոչ գործը կշահեր, ոչ պոեզիան: Միակ ելքը քաղաքական վտարանդիությունն էր՝ Կովկասից և առհասարակ Ռուսաստանից հեռանալը: Սակայն հեռանալը կրկնակի ծանր էր, լքել հայրենիքը, ընկերներին այնպիսի մի ժամանակ, երբ գենիքում էր բանաստեղծական տաղանդը, հեռանալ մի շարժումից, որին նվիրել էր կյանքի լավագույն տարիները, ուժն ու եռանդը: Կարվել մայրենի հողից, պաշտելի մորից (որին ավաղ ինքը այլևս չէր տեսնելու) կնոջից, նորածին որդուց, և այնքան սիրելի ընկերներից: Դանր էր հրաժեշտը...

Տարիներ անց նա կգրի այդ հրաժեշտի վերջին պահերի մասին. Վահան Տերյանի հետ. «թոչող տրոյկայի միջից ձայնեց.— «Ավո ջա՛ն, խոստումդ կատարիր, ձմեռը Մոսկվա եկ: Սպասում ենք» (V, 119): Հովհաննես Թումանյանի. «Թիֆլիսից դուրս եկա հունիսի վերջին, Ղազարոս Աղայանի թաղման օրը: Թաղումից հետո Թումանյանի հետ գնացինք իրենց մոտ: Տխուր, սգավոր օր էր: Հավիտյան զրկվեցինք մեր սիրելի Նահապետից, ես էլ պիտի թողնեի հայրենիքս և, թերևս, անդարձ: Աննկարագրելի են այդ հրաժեշտի ծանր վայրկյանները:

Արդեն ուշ գիշեր էր:

Վերջին անգամ մենք գրկեցինք իրար. երկուսս էլ լուռ էինք. ո՛չ մի խոսք...» (V, 63—64):

Կարսի կայարանում 1911 թվի հուլիսի 12-ին նա վերջին անգամ պիտի տեսներ ցարական մունդիր հագած վախմիստրին, և նրա հայացքը վերջին անգամ պիտի հառեր ռուսական կայսրության հողերի սահմանը խորհրդանշող ճերմակապատավուն այանը:

Հավատարիմ ընկերների օգնությամբ Խահակյանը սահմանն անցավ այն հագվածով, որով ինքը մի ժամանակ գենք էր փոխադրում Երկիր: Նա հետը տանում էր սոսկ մի ինքնագիր՝ «Աբու-Լալա Մահարի» պոեմի ամբողջական ձեռագիրը: Ավարտվում էր նրա կյանքի հիրավի ամենաերջանիկ հատվածը՝ ստեղծագործական հաղթանակներով, սերերով ու ազգային-ազատագրական պայքարի ռոմանտիկայով հագեցած հատվածը, ավարտվում էր մի շրջան, որ այլևս չկրկնվեց՝ նույնի ու նվաստի շրջանը: Նա պիտի գնար մի աշխարհից, իսկ գար մյուսը՝ բացարձակ նորը, անծանոթն ու անսպասելին...

Եվ փոխվելու էր ոչ միայն պատմական իրադրությունը, այլև՝ ինքը, մեկնում էր Ավետիք Խահակյանը, պիտի վերադառնար Վարպետը...

* * *

Պանդխտության ցույցը հավիտյան ուղեկիցն է ռոմանտիկ բանաստեղծների: Կարծես ռոմանտիկական պոեզիան ինքն է ենթադրում իր երգիչների հակատագիրը՝ վտարանդիություն հայրենիքից, թափառումներ օտար երկնքի տակ, մենություն, հայրենիքի անհագուրդ կարոտ՝ նոստալգիա — այդ «բախտը» վիճակվել էր և՛ Բայրոնին, և՛ Հայնեին, Պուշկինին և Լերմոնտովին, Միցկևիչին և Պետֆիին...

Վիճակվեց և Խահակյանին: Խահակյանի պանդխտությունը կամավոր չէր: Եվ հակատագիրը բերեց նրան տարագրության առաջին երկիրը՝ օսմանական Թուրքիա՝ Կոնստանդնուպոլիս, որտեղ ինչպես մրդնավանջային տեղի մեջ պատվում էր հայկական կյանքի անիվը. դեռ հնչում էր զանգը հայկական դպրոցներում, հրատարակվում էին հայերեն գրքերն ու ամսագրերը, հնչում էր հայոց լեզուն թատերական բեմերից, համերգասրահներից, հնչում էր աղոթքն ու երգը... և սովորականի պես ծագում էր արևը ու մայր մտնում երկուս ու կես միլիոն հայության համար: Դեռ կանգնած էր հայրենի տունը իր պատմական հողի վրա, անտեղյակ իր հակատագրին, անտեղյակ քաղցկեղի պես իր հիրանները մեկնած պանթուրքական կիսալուսնի բանդագուշանքին:

Դժվար է այսօր ասել, թե քանի ալեքսանդրապոլցի Խահակյանին առաջինը ինչը հավատ չներշնչեց Թուրքիայի թվացյալ անդորրում, ինչը վերափոխեց նրա նախնական ծրագիրը՝ զբաղվելու մանկավարժությամբ Արևմտահայաստանի կրթական օջախներից մեկում, ինչպես նրան առաջարկել էին Տրապիզոնում կամ Սամսոնում, սակայն նա սոսկ իրեն, գերզգայուն բանաստեղծին հատուկ մարգարեությամբ զգաց շրջապատի կեղծիքն ու նենգությունը, թվացյալ անդորրի մահասարսուռ նովերը:

Պատահական չէ, որ հենց այնտեղ՝ Կ. Պոլսում, նա գրեց իր նշանավոր «Ողբում եմ» (առաջին անգամ տպագրվում է «Ազատամարտ» 1912, 1 հունվարի) տաղը, ուր այսպիսի սթափեցնող ու անհագանգող տողեր կային ուղղված իր ժողովրդին. «Վե՛ր կաց, ոտքի՛ ել, փոքրիկ-

ներից տենված կաղնի դո՛ւ գերմարդկային, դո՛ւ գերբնական տառապանքների երկաթե ոգի, դու պե՛տք է ապրես, դու կուզե՛ս ապրել:

Եվ վերջ պոկիր, տո՛ւր ինձ, սիրելիս, և գոտեպնդվիր և խրոխտ ու վեհ կոչնակդ հնչե՛, թող եղբայրության, և իրավունքի, և ազատության զանգը որոտա քո երկաթեղեն լեռներիդ վրա ...

Ձա՛յն տուր քո ընտիր, քաջ որդիներին, որ մոնչում են շղթաների տակ, կուր զնդաններում, անապատներում, սառցե դաշտերում, ձա՛յն տուր, և նրանք՝ խորտակած կապանք՝ դեպի քեզ կուգան:

Ձա՛յն տուր քո վսեմ, վեհ որդիներին, որոնք ընկած են կովի դաշտերում, կախաղանների, կացինների տակ, և՛ զնդակահար, և՛ արախողխող, ձա՛յն տուր, և նրանք կկենդանան և կրակի պես կալանան, կուգան...» (III, 20—21): Բանաստեղծը առաջիններից մեկը գիտակցեց, որ վտանգված է հայ մարդու գոյությունը Թուրքիայում:

Խաչակյանը շարունակեց աշխատել: Հենց Թուրքիայում (Իզմիրում) է նա ավարտում իր «Ուստա Կարո» մեծածավալ վեպի առաջին տարբերակը: Այդ վեպի ստեղծմանը Խաչակյանը ձեռնամուխ էր եղել անմիջապես «Արու-Վալա Մահարի» պոեմի ավարտից հետո: Բանաստեղծի մտահղացմամբ այդ վեպը պիտի լիներ հայ ազատագրական պայքարի յուրօրինակ դյուցազնավեպը, 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայ ֆեդայական կյանքի համայնապատկերը: Վեպի գաղափարը շատ էր ոգևորել Խաչակյանին, Վիկտորյա Աբովյանին ուղղված նամակում նա գրում էր. «Ամբողջ օրը պարապում եմ, օրական 14 ժամ սեղանիս առաջ եմ... գրում եմ շա՜տ ոգեղեն, հազիվ զսպում եմ ձեռքս, որ չվագե...» (VI, 95—96):

Վեպն ունեցավ դժվարին ճակատագիր, թեպետ նրա առաջին տարբերակը 1912 թվի գարնանը ավարտվեց, սակայն, ֆեդայական իրադարձությունների հետագա ընթացքը վերափոխեցին բանաստեղծի ծրագրերը, նա հետամուտ եղավ դեպի երկրորդ ընդարձակ տարբերակին, որն այդպես էլ չավարտվեց: Թեպետ արված էր ճակատագրական աշխատանք՝ գրված էր հազար էջից ավել: «Ուստա Կարոն» եղավ Խաչակյանի հետագա ստեղծագործական կյանքի մշտական ուղեկիցը, նրա գլխավոր երկը, որը նրա ստեղծագործական աշխատանքի «ճանապարհ» էր: Վեպի ավարտին սպասում էր ժողովուրդը, նրա առաջին գլուխների լույս տեսնման օրից (1913 թ.) մինչև Վարպետի կյանքի արևամուտը: «... «Ուստա Կարոն» կավարտվի այն օրը, երբ որ լուծվի հայկական հարցը»,— ասում էր մեծ հայրենասեր բանաստեղծը:

Հենց Գոլոսում Խաչակյանը գրում է իր քնարերգության լավագույն երկերից մեկը՝ «Կրտսենեմ անա,— լուռ երեկոյին...» բանաստեղծությունը, ուր հայ մոր աղոթքը բացառիկ հոմանիստական խմաստ է կրում: Բանաստեղծի մայրը, որը հայ մոր նավմական կերպարն է, իր աղոթքում հիրավի, լավագույն կերպով արտացոլում է մեր ժողովրդի մարդասիրական էությունը, գթասրտությունն ու համբերատարությունը: Ասածոն դիմելիս անգամ Ապլան նախ ոգորմածություն է խնդրում ամեն թշվառի ու տառապյալի, և վերջում միայն իր որդու համար: Դա է հենց համապատասխանում հրիատնեության բուն ոգուն: Այդպես էր մտածում Ապլան, այդպես էր մտածում ու ապրում մի ամբողջ ժողովուրդ: Մինչդեռ պատմական ճակատագիրը ամենից անողոք եղավ հենց Քրիստոսի ճեզ զավակի՝ հայ ժողովրդի հանդեպ:

1912 թվականի հուլիսի 5-ին Խաչակյանը մեկընդմիշտ հեռացավ Թուրքիայից: Ենթադրելով, որ նրա վիճակում պանիսլամական վտանգը կարող է զսպել միայն Թուրքիայի մեծ բարեկամը՝ կայզերական Գերմանիան, բանաստեղծը ի թիվս մի քանի ընկերների և հայ ժողովրդի մշակույթի ու պատմության նվիրյալ մի շարք գերմանացի մտավորականների ձեռնամուխ է լինում ստեղծելու «Հայագերման ընկերությունը»: Այդ նպատակով նա 1914 թ. մարտին Ժնևից (ուր մինչ այդ ժամանել էին նրա կինն ու որդին) տեղափոխվում է Բեռլին: Նորաստեղծ «Հայագերման ընկերության» նախագահն էր հայ ժողովրդի ազնիվ բարեկամ, գերմանացի գիտնական Յոհաննես Լեփսիուսը, փոխնախագահներն էին պատմաբան Պաուլ Ռոհրբախը և ծագումով հայ անգլիական իրավաբան Ջեյմս Գրենֆիլը, ընկերության քարտուղարն էր Ավետիք Խաչակյանը: Նա միաժամանակ խմբագիրն էր ընկերության տպագիր պարբերականի՝ «Մեսրոպ» ամսագրի (ունեցավ ընդամենը մեկ համար): Ընկերության ծրագրերը և նպատակները թերևս լավագույն կերպով լուսաբանել է ինքը՝ Խաչակյանը, Ալեքսանդր Ծատուրյանին գրած իր նամակում (1914, մայիսի 31-ին, Բեռլինից) «... հայկական հարցի վերազարթումի օրից Բեռլինում հիմնվեց մի հայկական կոմիտե, որ, շնորհիվ Գերմանիայում ունեցած իր նշանավոր անձանց կապերի, կարող եղավ գերման դիվանագիտության հակառակությունը՝ ռուսական հայանպաստ ձեռնարկների դեմ՝ այնքան մեղմել, որ վերջ ի վերջո հաջողվեց ռեֆորմների շուրջը համաձայնություն ստեղծել Հայաստանով շահագրգռված այդ երկու պետությունների միջև:

... Հայ-գերմանական ընկերությունը... կարող պիտի լինի գերման հասարակության ամենալայն խավերը մոտեցնել և հետաքրքրել մեր ազ-

գի վիճակով: Ավելորդ չլինի ասելը, որ թե՛ ընկերությունը, և թե՛ թերթը կուսակցականապես և քաղաքականապես չեզոք հողի վրա են կանգնած, և Բեռլինի ռուս դեսպանի հանությունը ընդունած» (VI, 151—152): Այսպես էր գրում Խահակյանը, հիրավի ուտոպիական երազներ փայփայում, դեռ ինչ-որ չափով քաղաքակրթությանն ու մարդկային բարոյականությանը: Բայց կարճատև եղավ թե՛ «Հայազերման ընկերության», թե՛ նրա պարբերականի՝ «Մեսրոպի», թե՛ Խահակյանի փայփայած հույսերի կյանքը:

Վրա հասած առաջին համաշխարհային պատերազմը տակնուվրա արեց բանաստեղծի ծրագրերն ու սպասումները: Հիրավի առաջին անգամ նա ամենայն անագնությամբ զգաց պատմության ընթացքի անգիջողությունը, մեծ պետությունների քաղաքական նենգությունն ու դիվանագիտական պոռնկությունը: Առաջին համաշխարհային պատերազմը հատկապես կործանարար եղավ Արևմտյան Հայաստանի համար: Թուրքիան չեղյալ հայտարարելով Ռուսաստանի հետ 1914 թ. հունվարին կնքած պայմանագիրը, ներգրավվեց աշխարհամարտի մեջ որպես Գերմանիայի դաշնակից և, օգտվելով ռազմական իրավիճակից, անցավ իր դարավոր երազանքի իրագործմանը՝ հայ ժողովրդի արևմտյան հատվածի բնաջնջմանը: Գերմանիան հրահրում էր Թուրքիայի հայաջինջ ծրագրերը՝ համարելով հայերին Ռուսաստանի «բնական դաշնակից» և միջին արևելքում գերմանաթուրքական ռազմական առաջընթացը խոչընդոտող ուժ: Նրանց պետք էր Արևմտյան Հայաստանն՝ առանց հայերի: Եվ իրագործվեց մարդկության նորագույն պատմության մեծագույն ոճրագործությունը՝ հայ ժողովրդի Եղեռնը:

Անա ի՞նչ կգրի Խահակյանը (1916 թվ. ապրիլի 2-ին). «Նզովված, հազար անգամ նզովված Գերմանիան դարերի քաղաքակրթությունը կործանեց. օ՜, ի՜նչ սարսափելի օրեր եմ անցրել և անցնում եմ. այս ի՜նչ արյունոտ խելագարություն է.— սպանություն, սպանություն, արյո՛ւն, արյո՛ւն, արյո՛ւն. Հայաստան այլևս չկա, բառացի ասած՝ Թուրքիայի հայերը ոչնչացան. ե՜րբ պիտի նույն օրին ընկնի գազան Գերմանիան, որ մարդկությունը ազատվի մարդակեր Վիլհելմից, Հոհենցոլերների տան ձեռից, սրիկա, բոբենի Կրոնպրինցից:

... Ամբողջ հոգով ու սրտով ռուս քաջ զինվորների հետ եմ հայոց լեռներում. նրանք մեր վրեժը լուծում են. դարերի ընթացքում ռուսն է թուրքի գլուխը ջարդել և ազգեր ազատել — Հունաստան, Ռումինիա, Սերբիա, Բալգարիա. այսօր հերթը հայերիս հասավ» (VI, 156):

Եղեռնը բանաստեղծին պարզ դարձրեց մի ճշմարտություն, որ հայ ժողովրդի մնացյալ հատվածի միակ փրկությունը Ռուսաստանի հետ միավորումն է, միայն Ռուսաստանի ներկայությունն ու նրա զորությունը կարող է կասեցնել թուրք ենիչերիների և նրանց գերմանացի հովանավորների հայաջինջ ծրագրի վերջնական իրագործումը:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Խահակյանի ստեղծագործության հիմնական բովանդակությունը դարձավ հայ ժողովրդի ողբերգական ճակատագիրը և նրա հերոսական ազատամարտի ներբողումը: Նա ձեռնամուխ է լինում ստեղծելու հայոց ցեղասպանության մեղադրական «Սպիտակ գիրքը», որը պիտի հանդիսանար մեր ժողովրդի ապրած վշտի ու տառապանքների մի ժամանակակից «Մատյան ողբերգություն»-ը: Այն պետք է դաժան իրականության, դեպքերի ու ականատեսների պատմածի հիման վրա վերստեղծեր էջեր հայ հերոսապատումից, բերեր դրվագներ հայ ֆիդայիների կյանքից ու սխրանքներից:

«Սպիտակ գրքի» համար Խահակյանը վիքիլարի նյութ հավաքեց և չնայած որ այդ գիրքը մինչև օրս հրատարակված չէ, նա իր պատշաճ տեղը կգտնի Խահակյանի երկերի ակադեմիական հրատարակությունում:

«Սպիտակ գրքի» մի զգալի մասը արտացոլվեց Խահակյանի մտորումների, ապրումների և ստեղծագործական մտահղացումների մի յուրօրինակ խոստովանագրքում՝ «Հիշատակարանում»: Բանաստեղծի «Հիշատակարանի» 1918—1924 թթ. գրառումները լի են տխուր ու տագնապալի խոհերով: Դրանք հիշեցնում էին ռազմաճակատային ամփոփագրեր, որոնց սեղմ ու ժլատ տողերի տակ գծագրվում էր Հայաստանի դառն ու օրհասական վիճակը, բայց և երբեմ չէր խամրում բանաստեղծի հավատը հայրենիքի վերածնության հանդեպ:

Հարկ է ասել, որ Ավետիք Խահակյանը տարագրության առաջին իսկ օրից ուզել է վերադառնալ հայրենիք, սկզբում նա պարզապես իրավունք չուներ գալու, որովհետև համարվում էր քաղաքական վտարանդի մինչև 1915 թվականի աշունը, երբ հայտնի դարձավ Ավ. Խահակյանի և նրա համախոհ ընկերների խմբի ներման փաստը՝ այսպես կոչված «Բարձրագույն նեռումը», Պետերբուրգի արդարադատության դեպարտամենտի կողմից (այդ մասին տես «Հորիզոն», 1915, 31 հոկտեմբեր): Ապա, հաջորդող տարիներին՝ պատերազմական իրավիճակի պատճառով նա հնարավորություն չուներ Ռուսաստան վերադառնալ, այն էլ իր ընտանիքի հետ: Այդ մասին է նա գրում իր բազում նամակներում 1916—1917 թթ. (Տես՝ երկերի VI հատորը):

Չեկավ Խաչակյանը և 1918—1920 թթ.: Չեկավ, չնայած Թումանյանի աղջկան՝ Նվարդ Թումանյանին, գրել էր 1919 թվականի ձմռանը. «Ես, եթե ճակատագիրը ուզենա, մարտ ամսին հայրենիքում կլինեմ — ազա՜տ, ապահով Հայրենիքում, որի համար բնկան, մարեցին մեր ամենալավ ասպետներն ու ծաղիկները. անուններ չեմ ուզում տալ... Մեր շրջումները պիտի մոռանան նրանց անունները, բայց մեր հոգիները միշտ պիտի այրվեն նրանց վշտով, կսկիծով ու կարոտով...» (VI, 177): Անհիմն չէր և բանաստեղծի տագնապը ազգային հանրապետության ապագայի վերաբերյալ. իր ճամակներից մեկում՝ Արշակ Չոպանյանին (1918, դեկտեմբերի 13). «Շա՜տ եմ վախենում, և հիմա ունիմ վախենալու, թե միգուցե Հայաստանի մոտակա ազատությունը ծագի մեր ժողովրդի համատարած զերեզմանոցի վրա» (VI, 173): Ավելի հիմնավոր նա շարադրել է իր տեսակետը Հովհ. Թումանյանին (1921 թվ. հուլիսի 1) գրած նամակում, երբ Հայաստանում արդեն հաստատված էին սովետական կարգերը, և մեր ժողովուրդը վերստին իր նակատագիրը կապել էր Ռուսաստանի հետ (1921, հուլիսի 1). «Ես ինքս ազգային բացարձակ անիսխության ոչ կուսակից էի, ոչ նավատացող, և ոչ էլ համոզված. մենք մեր ուժերով չէինք կարող անկախ լինել և պահել անկախությունը. Եվրոպան ո՛չ միայն չի օգնի մեզ, այլև թշնամի է և հրճվում է հայկական բնաջնջումով. սրան համոզված եմ փաստերի վրա, ինձ համար Անգլիան և Ֆրանսիան այնքան դաժան գտնվեցան, ինչքան Գերմանիան. հրամանություն, քաղաքակրթություն, մարդասիրություն, դատարկ հնչյուններ են եվրոպացու աչքում. պետք է երես դարձնել այդ ավազակներից և մոտենալ Ռուսաստանին... Ըստ իս, Հայաստանը և հայ ժողովուրդը կարող է միայն ապրել Ռուսաստանի հետ, կամ բնավ չի կարող ապրել: Մնացածը հիմարությունից վեր մի բան է» (VI, 180—181):

Ազգային բանաստեղծի այս կանխատեսումն էլ իսկապես որ մարգարեական եղավ:

Եվ կարևորն այն է, որ նա հակվեց դեպի Սովետական Հայաստանը, դեռևս մինչ իր վերադարձը, մինչև 1926 թվականը: Ասածիս լավագույն հաստատումն է նրա հետևյալ տողերն ուղղված Մարտիրոս Սարյանին (1924, նոյեմբերի 12). «Ռուսական մի կարմիր գինվորի ներկայությունը հայոց երկրի սահմանների վրա, արժե 1000 Վիլսոն ու Ազգերի լիգա, 1000 Մակդոնալդ ու Հերիո, սա բացարձակ նշմարություն է» (VI, 199):

Բանաստեղծի ստեղծագործության այս շրջանը ողողված էր Հայրենիքի վերածնության ոգով: Նախ «Սասմա Մհեր» պոեմը (1919 թ., «Վերջերգը»՝ 1937 թ.) — մեր հանճարեղ էպոսի թերևս ամենադեմոկրատական (և ըստ ամենայնի Խաչակյանին ամենամոտ) ճյուղի մշակումը: Իր ուսումնասիրություններից մեկում Խաչակյանը այսպես էր բնութագրել Մհերի առասպելը. «... «Մհերի դուռը», որի ետևը փակված է դյուցազնը, սիմվոլիկ իմաստով նայում է «Սուրբ արևին»: Այրի մեջ, Մհերի գլխի վերևը, օր ու գիշեր վառվում է մի անշեջ ճրագ՝ խորհրդանիշը արեգակնային Մհերի. այդ ճրագից, ըստ մեր էպոսի, կրակ է վերցնում ժողովուրդը, երբ հանգչում է իրենց տան ճրագը: Եվ «Մհերի դուռը» դարերի ընթացքում, մինչև մեր օրերը, եղավ արքայար, ուր ժողովուրդը ոխտ էր գնում, խունկ ծխում՝ հավատալով Մհերի փրկչական մեսիային:

... Եվ կերտելով Մհերի վսեմ, մարգարեական, մեսիական կերպարը, մեր վեպը ազգային շրջանակից ելնելով, ընդունում է համամարդկային որակ և դառնում է աշխարհահեղաշրջման և աշխարհավերակառուցման պատգամախոս» (V, 169—170): Այս խոսքերում է ձևակերպված պոեմի գաղափարական կոնցեպցիան: Համառձակ կերպով կարող ենք ասել, որ «Սասմա Մհեր» պոեմի մեջ յուրօրինակ ձևով առասնայվեց հեղափոխության խաչակյանական ընկալումը: «Սասմա Մհերը» իր ողջ էությամբ զարմանալի համահունչ դարձավ «աշխարհավերակառուցման» պատմական պրոցեսի շեմին կանգնած հայ մտավորականին, հայ գյուղացուն ու աշխատավորին:

1921 թվականի ապրիլից Խաչակյանը ընտանիքով Ժենևից (ուր նա ապրում էր սկսած 1915 թ. օգոստոսը) տեղափոխվեց Վենետիկ: Բանաստեղծը ընդամենը 45 տարեկան էր: Կորցրածը շատ էր, գտածը՝ քիչ: Դարձյալ օտարի հող, դարձյալ թափառականի կյանք, դարձյալ նյութական անբարենպաստություն: Եվ սակայն այս ամենին զուգահեռ մշուշի միջից սկսում էին երևալ հույսի կրակները, Արարատյան հայությունը փրկված էր, «... գոնե հիմա դրությունը կայուն է, այլևս կռիվ չկա... ռուսական ուժի ներկայությունը կսանձե թշնամու ախորժակները» (VI, 180), ավարտված էր «Սասմա Մհերը», բանաստեղծը բուռն մտադրություն ուներ ամբողջապես վերանայելու ու ավարտելու «Ուստա Կարոն», ինչի համար կային բազում բարենպաստ պայմաններ և առաջին ներքին Վենետիկի սուրբ Ղազար կղզում գտնվող Մխիթարյան միաբանությունը՝ իր հարուստ գրադարանով ու ձեռագրատնով, և վերջապես Վենետիկում նա հնար կունենար իր միակ զավակին կրթության տալու միաբանության հայկական Մուրադ-Ռաֆայելյան վարժարանը:

Վենետիկը ինքը բանաստեղծություն էր, հավիտյան առինքնող, կախարդող, ամեն մի արվեստագետի համար մի «երազային ափ»:

Բայց և հենց Վենետիկում ավելի ու ավելի ուժեղացավ նրա կարոտը առ հայրենի եզերքը. «Ա՜խ, մի գլուխս ձգեի Շիրակ, փովեի հայրենի հողի վրա և լայի, և լայի... Եթե մի սրբություն կա, որի համար ապրում եմ՝ դա հայ որբն է, հայ չարքաշ ժողովուրդը»,— գրում է նա իր ընկերոջը՝ գրականագետ Սիմոն Հակոբյանին (1920, 5-ը սեպտեմբերի):

Վենետիկը վտարանդի բանաստեղծի դեգերումների վերջին կայանն էր: Ճիշտ է ժնևյան, վենետիկյան տարիները ստեղծագործական իմաստով ապարդյուն չանցան Խաչակյանի համար: Հիշենք, որ Վենետիկում և Վիեննայում նա հրատարակել է երկու գիրք՝ «Սասմա Մահեր» (Վիեննա, 1922), և «Աշնան ծաղիկներ» (Վենետիկ, 1922): Վերջին գրքի վերնագիրը խորապես հատկանշական էր այդ շրջանի Խաչակյանի երկերի ընդհանուր «պայծառ բախծի» տրամադրությանը: Սակայն այդ շրջանում բանաստեղծին ամբողջապես կլանել էր Հայաստանի նակատագիրը, զոր ու գիշեր նրա մտահոգությունների, ապրումների, խոսակցությունների ու վեճերի թեման Հայաստանն էր: «Հիշատակարանի» 1916—1924 թթ. բոլոր գրառումներն անխտիր կապված են հայկական հարցի, մեր ժողովրդի նակատագրի հետ: Նա տանջվում էր հայրենիքի կարոտից, միակ միխիթարությունը Սուրբ Ղազար կղզու Մխիթարյան Միաբանությունն էր, ուր բանաստեղծն ասես զգում էր Հայաստանի հոգևոր ներկայությունը: Նույնպես Վենետիկում 1924 և 1925 թթ. նա պիտի հանդիպեր հայրենիքից եկած իր վաղեմի ընկերոջը՝ Մարտիրոս Սարյանին, իսկ մեկ տարի անց Եղիշե Չարենցին: Նրանց հետ անցկացրած օրերը բանաստեղծի տարեգրության շրջանի հազվադեպ երջանիկ օրերից եղան: Բանաստեղծը զգում էր, որ ոչ միայն ինքն անկարող է ապրել առանց հայրենիքի, նա զգում էր նաև, որ իր՝ հայրենիքի հավատարիմ մարտիկի կյանքը պետք է իր ժողովրդին: Անա ինչ է գրում նա իր նամակներից մեկում վերադարձի նախաշեմին: (1925, 12 դեկտեմբերի). «... ամբողջ հոգով ձգտում եմ Հայաստան: Նա միայն կարող է ինձ կենդանացնել, ժողովրդի հետ, նրա մեծ շնչով շնչել: 15 տարի եղավ, որ պանդուխտ եմ, 15 դար... Բավակա՛ն է»:

1926-ի սեպտեմբերին Խաչակյանը Վենետիկից իտալական նավով մեկնում է Կոստանդնապոլիս, այնտեղից էլ՝ Բաքում:

Հոկտեմբերի 10-ին բանաստեղծը Երևանում էր: Նա եկավ մի ժամանակ, որ երկիրը վիթխարի քանքեր էր գործադրում վերականգնելու, վերստեղծելու իր դարավոր հայրենիքը: Ավերածը ասրսափելի էր, սակայն հայ մարդը չէր վհատվել: Կնոջը և որդուն գրած իր առաջին իսկ նամակում նա ասում է. (1926, հոկտեմբերի 12) «Երևանը շա՜տ է փոխված, հուզեց, կենդանի, բազմամարդ: Անվերջ քանդում են ու շինում. մեծ աշխատանք են թափում: Զարմանալի ժողովուրդ է հայը. ապրելու ընդունակ. լալիս է, բայց նորից շինում ու ստեղծում, քարից հաց հանում» (VI, 233):

Ճիշտ է, վիթխարի էր և կորցրածը: Այժմ նա իր հայրենի Ղազարապատ գյուղի սահմանագծից կարող էր տեսնել իր այնքան սենչած երկրի գերված ափի ուրվագծերը միայն կամ Անիի ավերակները: Ժողովրդի բանաստեղծի համար հայրենի հողի մի թիզ կորուստն անգամ ողբերգություն էր, ուր մնաց այն իրական կորուստը, որի հետ երբեք չհաշտվեց Խաչակյանը, և մինչև իր կյանքի վերջին օրը: Նա ասաց իմաստնաբար. «Անին մենք մեր ետևում չունենք, այլ միշտ մեր առաջը: Որքան տարիները հեռանում են, այնքան մենք մոտենում ենք նրան»:

... Չկային մայրը, քույրը, եղբայրները, Խաչիկը, Թումանյանը, Տերյանը, Մյասնիկյանը, իր հարյուրավոր ընկերները՝ մեր ազատամարտի հերոս զոհերը, սակայն կար Արարատյան հայությունը, կանգնած էին Երևանն ու Լենինական-Գյումրին, պատմական Զանգեզուրն ու Լոռին: Կային այնպիսի սիրելի դեմքեր ու ընկերներ, ինչպիսին Դեմիրճյանն ու Չարենցը, Շիրվանզադեն ու Հովհ. Հովհաննիսյանը, Սարյանն ու Փանոս Թերլեմեզյանը, Թամանյանն ու Թորամանյանը, Սպենդիարյանն ու Ռոմանոս Մելիքյանը, և նրանց կողքին նոր անուններ՝ Բակունցը, Սա. Զորյանը, Թոքվենցը, Ալազանը, Կոչոյանը, Աշոտ Հովհաննիսյանը: Երևանն իրոք վերածվում էր հայոց մայրաքաղաքի, հոգևոր ազգային կյանքի կենտրոնի:

1926—1930 թվականներին, չորս տարի ապրելով Խորհրդային Հայաստանում, բանաստեղծը մասնակից է դառնում երկրի շինարարական, հոգևոր, վերելքի աննախադեպ ընթացքին: Հայրենիքի զարթոնքը, ասես երիտասարդացնում է Խաչակյանին, համակում նրա էությունը նոր հույսով ու հավատով երկրի ապագայի հանդեպ: Եվ հենց այդ շրջանում է երգվյալ հայրենասերը գրում.

Այնքա՜ն ժամանակ, որ պիտի հերկե
Սևահողդ հին՝ քո կարին որդին,
Եվ զուսանդ վառ՝ սերդ պիտ երգե,
Դու պիտի ծաղկի՛ս, երկի՛ր հայրական,
Քո ոգով, ոճով և բարձրագլուխ,
Դու պիտի հնչե՛ս, հնչես հաղթական,
Իմ հին հայ լեզու՝ քա՛ջդ ու սրտաբո՛ւխ:

1930 թվականին Խաչատրյանը նորից մեկնեց Եվրոպա՝ Փարիզ: Անհրաժեշտ էր ի մի բերել մեծ արխիվն ու գրադարանը, ավարտել մի շարք կիսատ թողած գործեր: Եվրոպա գալով Խաչատրյանը հաստատվում է Փարիզում, ուր նախօրոք տեղափոխվել էին նրա կինն ու որդին:

1930—1936 թթ. Փարիզը Եվրոպայի արվեստների մայրաքաղաքն էր, այնտեղ էին հավաքվել Ամերիկայից, Եվրոպայի այլ վայրերից եկած սենվանի գրողներ, երաժիշտներ, նկարիչներ: Փարիզը դառնում էր նաև Եվրոպայի ամենահայաշատ քաղաքը: Փարիզահայությունը Խաչատրյանին ընտրում է Հայաստանի օգնության կոմիտեի Փարիզի մասնաճյուղի նախագահ, 1933—1935 թվականներին նա խմբագրում է կոմիտեի «ՀՕԿ» ամսագիրը: Այդ գործը նա կատարում է մինչև հայրենիք վերադառնալը, զոհաբերելով արվեստագետի թանկ ժամանակը: Խաչատրյանի հետ էին գաղութանայության բոլոր առաջադեմ շրջանները, երիտասարդ հայրենասեր գրողներն ու արվեստի գործիչները, նրանք հավաքվել էին Խաչատրյանի շուրջը, հավատում էին նրան, հետևում նրա պատգամներին: Դրանց թվում էին Միսակ Մաճուրյանը, Լուիզա Ասլանյանը (Կաս) և Սեման՝ հայ տաղանդավոր գրողներ, որոնք գերմանական օկուպացիայի տարիներին դարձան ֆրանսիական դիմադրության շարժման անվանի գործիչներ և իրենց կյանքը նվիրաբերեցին ֆաշիզմի դեմ պայքարին:

Երեսնական թվականներին ապրելով Արևմտյան Եվրոպայի սրտում, Խաչատրյանը բանաստեղծին հատուկ կանխազգացողությամբ զուշակում էր ֆաշիզմի սպառնացող վտանգը: Նա մասնակցում է 1935 թվականին Փարիզում անցկացվող գրականության և մշակույթի գործիչների հակաֆաշիստական միջազգային կոնգրեսին:

Բանաստեղծի այդ շրջանի զգացումները թերևս լավ են արտահայտվել Փարիզում գրած «Նրանք դրոշակ ունին» պատմվածքում:

1936 թ. օգոստոսին բանաստեղծը բռնում է տունդարձի նավփան: Մինչև մուտքի անձնագրեր ստանալը, 1936 թ. սեպտեմբեր-հոկտեմբերը Խաչատրյանը անց է կացնում Վենետիկում: Այդ շրջանը բանաստեղծի հրաժեշտի աշունն էր Եվրոպայում:

***

1936 թ. դեկտեմբերի 5-ին բանաստեղծը հասավ հայրենիք, որը դարձավ նրա հավիտենական կանգառը: Հենց 1937 թվականին Խաչատրյանը ավարտում է «Սասմա Մեր» պոեմի հիմնական խմբագրումը, ավելացնում նրա «Վերջերգը»:

Պատերազմներով ու արհավիրքներով լեցուն 20-րդ դարը նոր փարձության առաջ կանգնեցրեց հայ ժողովրդին: Եվ եթե առաջին աշխարհամարտին մեր ժողովուրդը միայնակ էր, ապա այս երկրորդ աշխարհամարտը նա դիմավորեց՝ կանգնած ռուս մեծ ժողովրդի կողքին: Եվ «Հույսի ու խավարի» այս անհնխատեպ գրամարտին իր մասնակցությունը բերեց, պաշտպանելով վերաստեղծ հայրենիքը և միաժամանակ հնարավորին չափ հատուցելով իր հին պարտքը հայկական եղեռնի մեղսակից Կայզերական Գերմանիայի և իթթիհատական Թուրքիայի հոգևոր հետնորդին՝ գերմանական ֆաշիզմին: Պատերազմի հենց առաջին օրերին 1941 թվականի հունիսի 26-ին Խաչատրյանը գրում է իր հայրենասիրական բնույթի լավագույն երկերից մեկը՝ «Մեզմակոչը» և ապա չորս տարի անընդմեջ հանդես գալիս մարտական ոգով գրված հայրենասիրական հոդվածներով: Հայ գինվորները հիշում են, թե ռազմի դաշտում ինչպես էին իրենց ոգևորում Խաչատրյանի հոդվածներն ու բանաստեղծությունները, իսկ նրա նշանավոր «Ռուսկան ախպերը» ռազմանակատի հայ գինվորների համար յուրովի նշանաբան էր դարձել:

Պատերազմի ամենածանր օրերին՝ 1942 թ. հունվար-փետրվարին, Խաչատրյանը ուղևորվում է Մոսկվա, տեսնելու ժողովրդի հերոսամարտը, տեսնելու Մոսկվան, Ստալինգրադը: Ամեն ինչ անցնում էր բանաստեղծի սրտով, մարտիկների արիությունը, անձնազոհ մահառումը թիկունքում, ժողովրդի վերքն ու տառապանքը:

Շատ են գրվել բանաստեղծություններ, մեծ Հայրենականի տարիներին, բայց եզակի է «Մեծ հաղթանակի օրը», եզակի թե՛ «Մեր սուրբ փառքով դրեցինք պատյան» մարգարեական տողով, թե՛ զոհված մարտիկների հիշատակը հավերժացնող խորհրդով:

Խաչատրյանի կյանքի մայրամուտը անցավ հարազատ ժողովրդի կողքին այնպես, ինչպես ինքն էր երազել: Ժողովուրդը ուժ էր տալիս նրան, ապրելու ավյուն և եռանդ: Ինքն էլ իր հերթին, ժողովրդի հոգևոր սնունդն էր՝ իր բարությամբ ու մաքրությամբ, իր հայրենասիրությամբ ու հայրենապաշտությամբ, իր վեհությամբ ու իմաստությամբ:

Քանի՞ սերունդ հայ գրողների համար նա նշմարտության փարոս է եղել, դաստիարակել է նրանց հայրենասիրության, ժողովրդասիրության ոգով, սովորեցրել հավատարիմ մնալ ազգային արվեստի ակունքներին:

Հայության բոլոր վշտերն ու երազանքները խտացված էին նրա մեջ: Նրա աչքի առաջ ուժ ու զորություն էր առնում իր ժողովուրդը՝ իր ազգային ակադեմիայով, համալսարանով, պետական լեզվով: Դա ապրեց-

նում էր նրան: Բայց և նրա աչքի առաջ կործանվում էր Սևանը, ապականվում նորաստեղծ մայրամարմի օդային ավազանը: Բանաստեղծը առաջինը տագնապ բարձրացրեց Սևանի ապագայի վերաբերյալ, գրելով «Կապուտաչյա դիցուհին» բանաստեղծությունը, բազմիցս հանդես գալով Գիտությունների Ակադեմիայում, ինչպես նաև անհանդուրժողական էր Երևանում այնպիսի գործարաններ կառուցելուն, ինչպիսիք են «Կանազը» և «Կաուչուկի գործարանը» (գրում ենք ժամանակին օգտագործված անուններով): Եվ այդ ամենը հյուծում էին նրա սիրտը: Նա ասել էր հավատով և կսկիծով. «Ապրեի՝ Անին տեսնեի, մեռնեի՝ Սևանը չորացած չտեսնեի»:

Կյանքի վերջին տարիներին նա սիրում էր գնալ հեռավոր գյուղերը, լինել գյուղական դպրոցներում, դիտել, թե ինչպես են վաղ առավոտյան դպրոց գնում երեխաները կամ թե սերտում այբ-բեն-գիմը (իր խոսքերով ասած «ազգային երգը»), և նրանց հետ էր կապում նա իր հույսն ու հավատը:

Բանաստեղծի արևամուտը... ժամանակին նա ասել էր. «Երնեկ ունենամ հազար ու մի կյանք, Հազա՛ր էլ սրտանց քեզ մատաղ անեմ»: Մեր ժողովուրդը կարող է վկայել, որ դա այդպես էլ եղավ: Բայց նա խնդրել էր նաև.«Մենակ մի կյանքը թո՛ղ ինձի պահեմ,— է՛ն էլ քու փառքի գովքը երգելուն»: Եվ բանաստեղծի այս «մի կյանքը» անհատնում եղավ, որովհետև նրա երգը կապրի այնքան ժամանակ, ինչքան որ կապրի հայ ժողովուրդը: Իսկ հայ ժողովուրդը անմահ է...

ԱՎԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ցաված սիրտս երգեր հյուսեց... 3
Ամեն գիշեր իմ պարտեզում... 4
Արևն իջավ սարի գլխուն... 4
Անհուն երթերից, աստղի՛կ լուսափայլ... 5
Թե՛ դեպի կյանքը, թե՛ դեպի մարդիկ... 5
Ա՜խ, ուռենի, վշտիս ընկե՛ր... 6
Հոգի կուտամ, հոգի տո՛ւր ինձ... 6
Ծաղիկ էի նորաբողբոջ... 6
Բալիս ունի հնդու-մաթա... 7
Օխտը սարով հեռո՜ւ քեզնից... 8
Ես ծերացա... մի՛ զարմանար... 8
Սի՛րտ իմ, սպասի՛ր, գուցե արշալույս... 9
Մի՞թե պիտի թոռմին, թոշնին... 9
Հոգնած եմ, անտա՛ռ, հոգնա՛ծ, ուժասպառ... 10
Շուշան աղջի՛կ, քու գերին եմ... 11
Իմ փերին (Նիրակի ավանդավեպ) 11
Կուզե՞ս լինիմ վշտի ցողեր... 12
Ցուրտ է օրը — բո՛ւք ու խավա՛ր... 13
Գարզրկա գիշե՛ր... 13
Անտուն գիշերնե՛ր... 14

Քնքուշ հովի՛կ, իմ նազելուց... 14
Գիշերն եկավ, աստղերն ելան... 15
Սի՛րտս երկինք է... 15
Ես երդիլ եմ — երկնի թիթեռ... 16
Ընկե՛ր. միշտ հառա՛ջ... 16
Մութը պրկած գետ ու գետին... 17
Բինգյոլ (Շընկշընկալով հովն է փրշում) 17
Հովերն առան սա՛ր ու զարե՛ր... 18
Մենակ, անընկեր ձեր գիրկն եմ ընկել... 19
Տիեզերքի պերճ հյուսվածքն եմ... 20
Դա՛ղրս լացեք, սարի սըմբուլ... 21
Էս ճամփեն ոլոր-մոլոր... 21
Մայրիկիս 22
Մանկալ ես, բեզարած ես... 23
Գիշերն եկավ, գով-հովն ընկավ... 23
Կենսական ծովի հույզերի միջին... 24
Ցարում եմ մենակ, մարդկանց մեջ օտար... 24
Մայրս տեսավ ինձ շա՜տ տխուր... 25
Երազ տեսա — ձեր տան առաջ... 25
Փշե-պսակը ճակտիս կըդնեմ... 26
Անհուն երկնում աստղերն անշեջ... 26
Լուռ գիշերին հեռու տեղից... 27
Նայում են ցոլուն աստղերը անշեջ... 27
Եզարշ-ամպերն երկինքն առան... 28
Թափվեցին տերևներն աշնան ծառերից... 28
Քնքուշ լուսնի շուշան փոշին... 29
Հեռո՛ւ ափերում միտքս թափառեց... 29
Վառ արևի շողքը խաղաց... 30
Մռայլ քանտիս նեղ լուսանցքից... 30
Ամպի մովը ընկավ ծովը... 31
Քանտիս բացե՛ք, ազատ թըռնեմ... 31
Քանտիս վերա, սըրտիս վերա... 32

Սոսիները կըսոսափին... 33
Մութ անտառով լուռ ման կուգամ... 33
Անհա՛յտ, սնորո՛շ, անձնա՛ տենչերով... 34
Արտուտն՝ ուսին, վարդը՝ սրտին... 34
Աշնան օղտո՛ր, պղտո՛ր ամպեն... 34
Կրոունկները շարա՛ն-շարա՛ն... 35
Պա՛ղ-պա՛ղ փրչեց աշնան քամին... 36
Սև միդարբս ճոճք եմ արեր... 36
Ամպի փեշով մեկ հավք անցավ... 37
Շարա՛ն-շարա՛ն ամպերն եկան... 38
Ա՜խ, ալ-վարդի, սիրտ վարդի... 39
Ա՜խ, իմ սիրտքս, վա՜խ, իմ սիրտքս... 39
Ա՜խ, իմ ճամփես մոլոր գընաց... 39
Տարբա նատել վանքի դրան... 40
Եղնիկները լուսաբացին... 40
Սև աչերեն շա՛տ վախեցի՛ր... 41
Սուր սարերը ձունն է պատեր... 41
Թե՛ մարդ, թե՛ հավք ընկեր ունի... 42
Շառաչելով մի վառ աստղիկ... 42
Էդ ի՞նչ կըրակ կանես, մերի՛կ... 43
Էս քարփի տակ խորունկ փորեմ... 43
Ո՞ւր եք կորեր, գարնան օրեր... 44
Լուսինն ինչպես քընհատ կարապ... 44
Ծովի ծոցից վայրի մի բադ... 45
Դուման գառավ ծովը բոլոր... 45
Դարդը հետս է, հետքս կուգա... 46
Ա՜խ, մեր սիրտը լիքը դարդ, ցավ... 46
Դարդը սրտիս ճամփա ընկա... 47
Երազիս մեջ ծովը տեսա... 47
Ինչպե՞ս կուզեմ սիրտս թաղեմ... 48
Լավ օրերիս երգը մոռացած... 48
Ծովն ալեկոծ, սանձակոտոր... 49

Հոգնած ծովը՝ փրփուր բերնին... 49
Սիրեցի, յարը տարան... 50
Սիրո՛ւն աղջի՛կ, երկիր լինիմ... 50
Մատաղ սիրտս խաս-բաղի պես... 51
Սև-մութ ամպեր ճակտիդ դիպվան... 51
Ես որ մեռնիմ՝ ինձ կթաղեք... 52
Ես որ մեռնիմ ու իմ վերքից... 53
Քեզ չըտեսնել՝ ուխտել էի... 53
Լուռ գիշերին մտքիս դիմաց... 53
Ընկերներքս վաղ են մեռել... 54
Գիտե՛մ, երկիրը շա՜տ դարեր հետո... 54
Գերեզմանքս անհայտ լինի... 55
Արևելքից մի հավք եկավ... 55
Դու նրխշուն նուռ՝ գառը վրադ... 56
Այս ուռու տակ մենք երդեցինք... 56
Այն վառ աստղերը, որ շինչ երկնքից... 56
Աղբյուրի մեջ մի մարալ... 57
Ա՜խ, ես սիրու ճամփի ափում... 57
Ա՜խ, անհուն սեր ես ունեի սրտիս մեջ... 58
Կուզեի լինել գարնան արեգակ... 58
Ա՜խ, մի սիրտ լիներ մաքուր սիրով լի... 59
Ի՞նչ օրի հասա, սև օրի հասա... 59
Հոգնած նայում եմ քեզ, մելամաղձոտ... 60
Մայրի՛կ նայիր, արևն ի՞նչպես... 60
Կյանքս գալար ու լալագար... 61
Տիեզերական զանգ 62
Տարիներ հետո քեզ տեսա նորից... 63
Սրտեղ սիրուն կին կտեսնեմ... 64
Այսօր ձեր տուն մեծ խնջույք կա... 64
Բարև կուտամ, չես առնի... 65
Դու գնացիր,— ես մնացի... 65
Է՛յ դու մահվան անմահ աշխարհ... 66

Է՛յ, ջան-հայրենիք, ինչքա՞ն սիրուն ես... 66
Ժողովրդական բայաթիներ 67
Իրիկունն եկավ, տենե-տուն մտավ... 68
Ձայնքս հնչում է խավարի խորքից... 68
Օրքս տրտում, սև է անցնում... 69
Սալնո ձորերում, կրովի ձորերում... 72
Իմ այրող վշտից սիրտքս է մաշվել... 72
Տխո՛ւր, գլխակո՛ր, սիրտս գարդի ծով... 73
Արագին 73
Ժեռ, սև քարը սրտիս վրա... 74
Երազիս տեսա, որ ծովի ափին... 75
Դեպի անապատ հոգիս կըսուրա... 76
...Եվ ո՛ւշ գիշերին հոգնած մի ալիք... 76
Ցամերդ հյուսել... 77
Կյանքի ժխորից մտա անապատ... 77
Անտուն թռչնակս, իմ խեղճ, տխուր երգ... 77
Եվ ճամփեքի մեջ, ամայի դաշտում... 78
Սարի հովի պես ամպերի փեշով... 78
Ձմեռն անցավ, եկավ գարուն... 79
Էս ի՞նչն է ամպում գլխ թևին կուտա... 79
Է՛յ կանանչ ախպեր, դու բարով եկար... 80
Ներկա եղա սիրեկանիս պսակին... 81
Եվ վաղո՛ւց, վաղո՛ւց խո՞ր քուն է մըտած... 81
Արագի ափին բոստանս լինի... 82
Թափ կուտամ թևերս և կըսավառնեմ... 82
Հոգիս մըռայլ էր մըրրկի նըման... 82
Էս շինչ աղբյուրն է՝ ուրախ, կարկաչուն... 83
Վառ երկինքը լուռ գիշերով... 84
Սրսկան ախպեր, սարեն կուգաս... 84
Անդարձ գնացած... 85
Ես գիտե՛մ, գիտե՛մ, որ կյանքիս շեմքից... 86
Է՛լ ինչո՞ւ երգեմ.— այսպես օրերում... 86

Լրսում եմ դողանքն տիեզերական... 87
Մնացի կարոտ իմ հայրենիքին... 87
Մշուշն եկավ, թևը փռեց... 88
Լազուր երկնքով ամպեր են անցնում... 88
Ես ձեզ ասում եմ՝ կրգա Ոգու սով... 89
Ընկերիս հիշատակին 89
Ի՞նչ ես գազազում, ի՛մ վիրավոր սիրտ... 90
Այս ջինջ գիշերիս անո՛ւշ կրխրշյան... 91
Աղատության զանգ 91
Իմ աղոթքը 92
Եվ սերըդ սիրտըս կարիեր խոցեց... 93
Նորից եկան գարնան անո՛ւշ օրերը... 93
Ա՜խ, սիրտս անմեր ու սիրտս անմեր... 95
Էն ամպի նման խուլ որոտումով... 95
Օտա՜ր, ամայի՜ համփեքի վրա... 96
Երուշիկի հիշատակին 97
Մենակ մանկության օրերն են անո՛ւշ... 97
Անուն քամու պես փակ դուրդ, գիտե՞ս... 98
Շատ մի՛ տխրիր, շատ մի՛ խնդար, սիրելիս... 99
Հին երգերից 99
Լեռները՝ դալար, հպարտ հորձանքով... 100
Վարդի շրթունքդդ, աղջի՛կ ալագեղ... 100
Ա՜խ, իմ սիրուս վառ զարունը թոշնեցավ... 101
Մեկը չեղավ, որ իմանար վշտերս... 101
Թաղած վարդը թրփին ետ չի գա նորից... 102
Հատակդ՝ սոս, քայլվածքդ՝ սեգ... 102
Նման գայլերի խրմբին ամեհի... 103
Արարչագործ աստղի առաջ... 103
Դե՛ւ անցորդի պես քեզ միայն ըզգա՜... 104
Թեչպես ուշ աշնան... 105
Գիշերն երազով, զօրը կարոտով... 105
Ջմրուխտյա երգեր, երազներ շքեղ... 105

Մոայլ ամպերից, հրզոր կայծակով... 106
Եվ անապատից, հեռո՜ւ ծովերից... 107
Երկինքն հիասքանչ, շքեղ, լուսալից... 107
Նրանք իմ կյանքը երազ դարձուցին... 108
Քո՛ւյր իմ նազելի, նայիր քո դիմաց... 108
Անապատում, միրաժի մեջ մի բեղվին... 108
Հիմա հեռավոր, վեհ Հիմալայան... 109
Բաղերը վայրի թռան շվարած... 109
Կյանքի կովում ամենքը դեմ ամենքին... 110
Քնքո՛ւշ տատրակս, դու անծանոթի... 110
Լուռ պարտեզում սրբատաշրոփ, սիրատենչ... 111
Իմ հոգին տարագիր մի թռչուն... 111
Միշտ զգում եմ ես, որ մի հեռավո՛ր... 112
Եղբայրության կամ թե սիրո... 112
Եվ արծիվ մի սև իջավ սրբարշավ... 113
Ես կուզեի արևավառ... 113
Կնոջն ուզեցի հավատալ նորից... 114
Առավոտուն ծով հաճանչում... 114
Անհուն վրեժի և ատելության 115
Է՛յ դու, ջահել, հպարտ հատակ... 115
Թռած սիրո զառ թևերով... 116
Իմ սիրտն այնտեղ է — հայրենի հզոր... 116
Գագաթներին մով սարերի... 117
Հովը բարակ կըշրնկշրնկա՜... 117
Ագռավների գորշ թևերով... 118
Հացի երգը 118
Լեռների լանջում, ծաները հոգի տակ... 120
Յա՜ր, աչերդդ արեգական... 120
Ա՜խ, սար ու ձոր կարմիր-կանանչ... 121
Արծի՛վ սևաթևը, արծի՛վ լեռների... 121
Մեղքի և զղջման երգեր 122
Ապրած իմ կյանքից... 124

Ո՞ւմ սիրտն է հեծում մրգաբեր գիշերին... 124
Շափա՞ղ կուտաս բաղի միջին... 125
Ծաղկից հյուսված դու երազ... 125
Անմահ արևի վառ գգվանքի տակ... 126
Ո՛չ իշխանություն, ո՛չ կռիվ, ո՛չ կին... 127
Լուսնակ գիշեր, լույս-ուրու... 127
Դու մերժեցիր ինձ, չընկալեցիր ետ... 127
Գարունն եկավ կարմիր-կանանչ... 128
Դու չես հասկանա 128
Երազիս տեսա, որ մայրս՝ թշվառ... 129
Լա՛ց, իմ նազելիս, լա՛ց դա՛ռն ու անհո՛ն... 130
Մահը 131
Երազիս տեսա՝ օրո՞ր ու շորո՞ր... 131
Հեռավոր ծովի լռիկ ափերում... 132
Ես աշխարհի մեջ երազն եմ սիրել... 132
Անհայտ ծովերի լազվարթ ափերում... 133
Մշուշը ծածկեց դաշտերը անծիր... 133
Որտե՞ղ է ընկած... 134
Անգիր, և՛ անհայտ, և՛ անհիշատակ... 134
Վայում է քամին՝ ցուրտ, ձմեռնամուտ... 134
Վտարված եմ ես... 135
Չգիտեմ, թե ո՞ւր... 136
Ո՞ւմ հետ եմ անհույս... 136
Փրփուր բաշերով ծովը ամեհի... 137
Ամեն գարունքին... 137
Կեռասենին ծաղկեց կրկին... 138
Կրտեսնեմ ահա,— լուռ երեկոյին... 138
Դուրս ափ առած՝ կրծենն քամին... 139
Հայրենի գետի զմրուխտ ափերին... 139
Քո ունքերդ, իմ սիրեկան... 140
Մեղմիկ քայլում է երեկոն քնքուշ... 140
Ոսկի թիթեռնե՛ր — ոսկեհուր ասողնե՛ր... 141

Որտե՞ղ պիտի հանգչի մի օր... 141
Ծաղկունքը գարնան... 142
Բախտը ինձնից թռավ, գնաց... 142
Կարծես՝ երեկ էր... 143
Ձյուն է գալիս, ու թախծալիր... 143
Հայրենի աղբյո՛ւր... 144
Աշո՛ւն է, քամի... 144
Ամեն գարունքին վառ ծաղկունանց հետ... 145
Լորինների տակ... 145
Առավոտ պահին... 146
Գիշեր է, քամի... 146
Ծառիս վրա մի գորշ թռչուն... 147
Գատերազմ ահեղ... 149
Երազ 150
Օրերն հալվում են օրերի նման... 150
Դառն ու տրտում... 151
Գետակի վրա... 152
Քո կարոտած հայրենիքի... 152
Ամեն անգամ, երբ նայում եմ... 153
Նա մի փոքրիկ աղջիկ է... 154
Երկու թռչուն 154
Ցերեկվա ոսկի լույսերը մեռան... 155
Կտակ 156
Հայոց գեղջուկի ծավալուն արտե՛ր... 156
Ձյունն է եկել ծածկել հիմա... 157
Ա՜խ, ասացին ինձ, թե մեռել ես դու... 158
Թռչուններն ուրախ... 158
Քայլում եմ մենակ անտառի խորքում... 159
Մի թռչուն եկավ... 159
Ուրիշների ջրերն ընկած՝ գնացի... 160
Առաջին արցունքները 160
Լուռ է ու խավար... 161

Ահա նորեն գարուն եկավ... 161
Հայրենիքից հեռու, մի օր... 162
Ես հովիկ լինեի... 162
Զորահավաք էր։ Շտապ ուսն եկավ... 163
Գրկիր ինձ մեղմիկ... 163
Այցի եմ գալիս քեզ մոտ ես հաճախ... 164
Մարգարիտնե՞ր վզդիդ շուրջ... 165
Նոր տարու գիշերը 165
Աչքան ծաղիկնե՞ր 166
Սիրածներիս կորուստի հետ... 166
Հարեանիս որդին մեռավ... 167
Հայաստանին 167
Թարթիչներդ շուք կտան... 169
Ցառերի վրա աշունը դալուկ... 169
Մեղեդիներով գարունն է փթթել... 170
Գոմպլի մեջ 170
Ասում են, թե՝ դու այնպես... 171
Լուսնյակ գիշերին քայլում եմ մենակ... 172
Կուզենայի, երբ կրկին... 172
Ո՜վ, էկան աղջեր և քո շառաչին... 173
Մի մրահոն աղջիկ տեսա... 173
Անի 174
Հայրենիքիս («Ակուռներից հին հայրենի...») 175
Հայրենիքիս («Գիտի փարվիմ չքնաղ լանջիդ...») 176
Բավենայում 176
Ոտք եմ դնում հայրենական հարկը հին... 177
Ինչո՞ւ, ինչո՞ւ հիմա այսպես... 178
Հայրենի ծուխը 179
Աչերդ՝ սև-հուր... 180
Վերջին հորձա՞նք իմ ցնորքը... 180
Ի՞նչ ես լալիս, անգի՛ն ընկեր... 181
Վերջալույսին ոսկեշող... 181

Հեռու անտառում ծաղկում է հսկաթա... 182
Երկու մանուկ՝ ոգաբաղդիկ... 182
Ցազկավառ ուղին գնում է կրկին... 183
Հայրենիքիս («Ցորենի ծրփուն արտերի եզրին...») 183
Մանկություն 184
Տիեզերքն այս անսահման... 185
Աբեի տակ սոսկ մի օր է լինելու... 185
Ի՞նչ պիտ լինեմ կյանքից հետո... 185
Երազիս մեջ Անին տեսա... 185
Սավառնում ես ցնծությամբ վառ... 186
Ա՜խ, երանի լրծնվեի... 187
Երբ մանուկ էի, ընկերներիս հետ... 187
Սֆինքս 188
Մեր պատմիչները և մեր զուսանները 188
Ա՜խ, մի անգամ ոսկետերև աշունքին... 189
Նոր տարվա առավոտյան 189
Ողջույն ամենքին 191
Մի երեխա քնից զարթնել... 192
Ամառվա կապույտ, անդորր գիշերին... 193
Բինգյոլ («Երբ բաց եղան զարնան կանաչ դռները...») 193
Բազմակոչ 194
Թռչունների երգը 195
Երբ որ մահս գա... 197
Ես դառնար հիմա հասակը մատաղ... 197
Ծիրանի հերոս Ս. Գ. Զաքիյանի անմահ հիշատակին 198
Հայ հարատևապահություն 198
Ժողովրդի երգը 200
Քայլերգ 200
Թամարայի երգը 201
Գայանեի երգը 202
Գեղուհու երգը 203
Մեծ հազթանակի օրը 203

Իմ Նիրվանան 204
Ավիկին 205
Մեր կյանքի ամեն վայրկյանը անցնող... 206
Շա՜տ եմ տանջվել այս աշխարհում... 206
Տիեզերքի սահմաններից դուրս դայլ... 206
Ա՜խ, ինչքա՜ն, ինչքա՜ն կուզեի լինել... 206
Դուրսը բուք է խիստ, գիշեր, ցուրտ ձմեռ... 207
Շոպենի թաղման քայլերգը 207
Մարդու տենչանքն է՝ հավիտյան ապրել... 208

ՊՈԵՄՆԵՐ

Ալագյազի մանիներ 209
Աբու-Լալա Մահարի 232
Սասմա Մհեր 257

ԼԵԳԵՆԴՆԵՐ ԵՎ ԲԱԼԼԱԴՆԵՐ

Իրիցկնկա աղբյուրը 284
Թրիթ Սարդար 286
Գանգուխտ որդին 288
Արտաքսի ծնունդը 289
Մայրը 291
Սիրո վեպը 293
Լեյլի ու Մեջնում 295
Հավերժական սերը 298
Մեր նախահայրերը 302
Ասպետի սերը 304
Մոր սիրտը 306
Հայրենի հողը 307
Որդիական սեր 312
Աքիլլան և իր սուրը 313
Ավգուստինոսի տեսիլքը 317
Սիրահար Նադոն 317

Հրեական առասպել 320
Ցահվեի վրեժը 321
Սոկրատեսը 322
Ժողովրդի քարը 323
Հոան ու հովիվը 326
Հայաստանը 327

ԱՌԱԿՆԵՐ

Առակ (Աստվածաշնչից) 329
Մոլլան ու մանուկները 330
Հաճույքն ու մահը 331
Գայլն ու սոխակը 332
Մի հարցում 333
Առակ Աղվեսագրքից 334
Վարազն ու աղվեսը 334
Կյանքից թանկ բանը 335
Արջն ու օձը 336
Կաքավն ու աղվեսը 337
Էշն ու գյուղացին 338
Աղքատն ու քարավանը 340
Աղքատ մարդն ու աստված 341
Գարծենկոտը 342
Մարդն ու տարերքը 343
Մի մկան պատմությունն 343
Թագավորից փախչողը 346
Աքլորների վեճը 347
Առակ (Ըստ Լոխմանի) 348
Այծն ու գայլը 349
Գայլն ու եղնիկը 349
Ազրայիլ, մահվան հրեշտակ 350
Արևելյան խոսք 351

Ծատանան ու իր աղջիկները 351
Խմաստուն Գոհա 352

ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊՈԵՄՆԵՐ

Ոգբում եմ 353
Սիրահար քամին 355
Եղնիկը 357
Երջանկության իմաստը 359
Ոգավոր արագիլը 361
Մի սոխակի մահը 363
Հավերժություն 364
Ծառերի վերջին գարունը 372
Լի-Թայի-Պո 376
Ջինական մեծ պարսպի երգը 384

ԼԵԳԵՆԴՆԵՐ ԵՎ ԶՐՈՒՅՑՆԵՐ

Հին ամրոցը 389
Շիդ-ուրը 393
Եվ Հուանգ-Տի Բողդիխանը 396
Ջինգիզ-խանը 399
Բուդդհան 405
Անանդան և մահը 410
«Ձեր խնդրածը իմ ստեղծի տակն է» 419
Օմար Խայամի վեճը Աստծու հետ 422
Աստարգան 423
Լիլիթ 426
Ռշինարա 445
Վիկինգների կյանքից 447
Բուդդհան՝ թռչուն 450
Ով է ապրում 453
Ջինական մի հին զրույց 456

ԱՌԱԿՆԵՐ

Ահմեդի ուղտը 460
Ճշխարհի դատությունը 462
Մեծ հշմարտությունը 462
«Այդ ոչինչը ես եմ» 464

ՀԵՔԻԱԹՆԵՐ

Ամենապիտանի բանը 466
Արևի մոտ 468
Աղա Նազարը 470
Նուկիմ քաղաքի խելոքները 481

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Շաքրո Վալիշվիլի 485
Գարիբալդիականը 489
Քուրդ Ամոն 495
Հոբս դուքանը 500
Ազգային երգը 501
Ցաքիհ սուլթան Մեհմեդ 504
Անպարտելի ոգին 508
Հասան աղան 510
Բայրամ Ալին 517
«Համբերանքի չիբուխը» 521
Ծառա Սիմոնը 532
Հայրենի հուշեր 533
Տեր Մլեհը 538
Գարբին Գեորգը 553
Գյումրեցի Կապիտան Ղազարը («Ուստա Կարո» վեպից) 557

«ՀԻՕԱՏԱԿԱՐԱՆ»

Հատվածներ 582

«ԻՄ ՀՈՒՇԵՐԻՑ»

Զևոնդ Ալիշան 707
Խրիմյան Հայրիկ 713
Պերճ Պռոշյան 720
Զաքարիա Սրվանձտյան 726
Հովհաննես Հովհաննիսյան 731
Հովհաննես Թումանյան 736
Կոմիտասի անմահ հիշատակին 749
Ճարտարապետ Թորոս Թորամանյան 751
Վահան Տեր-յան 759
Սարյանն ամբողջ աշխարհինն է 766
Զարենցի հետ Վենետիկում 768

ՆԱՄԱԿՆԵՐ

Շուշանիկ Մատակյանին <1893> մարտի 28 770
Ստեփան Լիսիցյանին <18>93 նոյեմբերի 20 772
Արշակ Չոպանյանին <18>99 ապրիլի 9 773
<Հայ ուսանողական ընկերությանը> <1899> 776
Զավահիր Ներսիսյանին 1900 դեկտեմ<բերի> 2 778
Զավահիր Ներսիսյանին 1901 մարտի 11 779
Զավահիր Ներսիսյանին 1901 հունիսի 6 781
Հովհաննես Թումանյանին 1902 հուլիսի 21 783
Շուշանիկ Մատակյանին <1904> 784
Եվգինե <Թիթրյանին> <1904> օգոստոսի 15 787
Աննա Մատակյանին 1904 նոյեմբերի 9 789
Աբիստակես Տերտերյանին 1905 փետրվարի 4 791
Աննա Մատակյանին <1905> 793
Ալեքսանդր Սատուրյանին 1910 ապրիլի 20 796
Վիկտորիա Աբովյանին 1911 նոյեմբերի 24 797
Վիկտորիա Աբովյանին 1912 ապրիլի 24 799
Հովհաննես Թումանյանին 1912 մայիսի 28 802
Հովհաննես Թումանյանին <1912> հունիսի 4 804
Հովհաննես Հովհաննիսյանին 1913 ապրիլի 30 805
Վիկտորիա Աբովյանին 1913 դեկտեմբերի 31 806
Սիամանթոյին <1914> ապրիլի 21 808
Գարեգին Լեոնյանին <1916> ապրիլի 2 809
Հարազատներին 1916 ապրիլի 6 811
Կարեն Միքայելյանին 1917 մարտի 18 812
Գարեգին Լեոնյանին 1917 մարտի 28 813
Վահան Զաքարյանին 19<19> նոյեմբերի 26 815
Հովհաննես Թումանյանին 1921 հուլիսի 1 816
Հովհաննես Թումանյանին 1921 նոյեմբերի 8 817
Արշակ Չոպանյանին 1921 դեկտեմբերի 26 818
Մարտիրոս Սարյանին 1924 նոյեմբերի 12 819
Մարտիրոս Սարյանին 1925 ապրիլի 22 821
Երվանդ Քոչարին 1925 հուլիս 823
Հովհաննես Ավագյանին 1926 հունվարի 31 824
Սոֆյա և Վիկեն Խաչիկյաններին 1926 հոկտեմբերի 12 828
Սոֆյա և Վիգեն Խաչիկյաններին 1927 սեպտեմբերի 3 830
Արմենուհի և Աբաս Խաչիկյաններին 1934 ապրիլի 25 833
Վահան Զաքարյանին 1934 հունիսի 6 835
Կարեն Միքայելյանին 1934 հունիսի 6 837
Սաքո Սուքիասյանին 1934 օգոստոսի 30 839
Սարիկ Սարյանին 1940 դեկտեմբերի 9 841
Տ. Ալեքսանյանին 1947 օգոստոսի 29 843
Խաչերես Փորքչյանին 1952 մայիսի 26 844
Ամերիկահայ հայրենակիցներին 1956 հունվարի 12 846
Խոսք՝ իր ծննդյան 80-ամյակի հոբելյանական հանդեսին 847
Ավետիք Խաչիկյան 853

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ
Ավետիք Իսահակյան
ԵՐԿԵՐ

БИБЛИОТЕКА АРМЯНСКОЙ КЛАСИКИ
Аветик Исаакян
СОЧИНЕНИЯ
(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван, 1987

Խմբագիր՝ Հ. Մ. Կարապետյան
Նկարիչ՝ Մ. Ռ. Ասոյան
Գեղ. խմբագիր՝ Հ. Ս. Մալխասյան
Տեխն. խմբագիր՝ Վ. Գ. Ավագյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ն. Գ. Զարիբյան

ՀԲ 5943

Հանձնված է շարվածքի 16.06.87 թ.։ Ստորագրված է տպագրության 18.11.87 թ.։ Չափսը 60×84 1/16։ Թուղթ՝ տպագր. № 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 52,08 պայմ. տպ. մամ., 52,42 պայմ. ներկ. թերթ. 40,9 հրատ. մամ.։ Տպաքանակ՝ 51000։ Պատվեր՝ 1871։ Գինը՝ 3 ռ. 80 կոպ.։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох», Ереван—9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ։

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9, ул. Теряна, 91.